# ՆԱՐԵԿ ԱՂՕԹԻՑ

ՀԱՄԱՌՕՏ ԵՒ ԶԳՈՒՇԱՒՈՐ ԼՈՒԾՄԱՄԲՔ
ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ ՄԻԱՆԳԱՄ
ԵՒ ԱՅԺՄ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎ

ԱՇԽԱՏՍԻՐՈՒԹԵԱՄԲ ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ Հ. ԳԱԲՐԻԷԼԻ
ԱՒԵՏԻՔԵԱՆ ԱԹՈՌԱԿԱԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Հրամանաւ Արհիապատիւ Տն Սուքիասայ Սոմալեան
Արքեպիսկոպոսի և Ընդհանրական Աբբայի:

[illegible]
[illegible]

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1827. ամին

ՀՍՍՌ ԳԱ

# ԲԱՆ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

ԱՍՏՈՒԱԾԱՅՆԱՄ տեսչութեան արդեամբ՝ ընդ դարս եւ բա-
զանցեալ բազմօրինակ երեւեալ 'ի բարեգործութիւն հայկազեա-
ծննդոցս, մեզ զան շնորհակալու քննողաց՝ ոչ միայն շնորհաւորութե
աղէ աղէ պարգեւացն գետել հաստատէար, այլ թէ յորո՛ց
յետոն պարգեւի՝ ճանաչել յարգանօք, եւ ընդունել համեմարեւ։
Ընդ թէ երկնային պարգեւաց գրեայն արդարադէս եւ աղօ-
թանաւէր մատեան գերերջանիկ հօրս մերոյ նարեկացւոյն Գրի-
գորի. գո՛րծ արդարեւ, որում ըստ գահաստատ չեւ ես գտեալ
յայլ աղգս՝ պանծայ բարձր 'ի գլուխ. եւ ըզգուշութեն պատի ո՛չ
միայն յառաջին պատճառ անդր 'ի վեր յիշեցուցանէ, այլեւ
զերկրորդն պատճառ՝ ըմպատակաւոր գրչութեն՝ գերապատճան
քառօք 'ի նախակրօնեցն նմանութե վերահաւեալ բանի։
Նո՛ր ինչ երեւեալ Մովսէս, 'ի նարեկեան բարձրապատւոյ մենա-
րանէն առաջբերելով 'ի հայս պատկառանս աղօթից, որպէս նախնեան
այն՝ զօրինակն առ խորայել 'ի սինեական առանձնութեն։ Պա-
տէթ հոգեւոր հայաստանեայս եկեղեցւոյ, իմանալի քնարօքն
պարագլուխ անջեալ առաջի քաղեան տապանակին, ո՛չ մարմնա-
պէս հոլանեալ 'ի կաքաւս ցնծութե, այլ զհոգւոյն մերկացեալ
զծածուկս միղանաց՝ 'ի տեսիլ աշխարհի, հրեշտակաց եւ մարդ-
կան. սէզբնապա՛ր աղաղխարողաց, երգս խոստովանութե արքա-
նագրեալ յաւուրս ըզՉայելոց. ո՛չ զօրաւորացն ոչէս առնուլ 'ի
բերան, իբր զաւառաղայն կամ զաբեններայ. (Ա. Թագ. Բ. 18.
Գ. 54.) այլ զանձանցն մեղեղութեան յերգ արկանել 'ի լսելիս
ալ՝ յարութեն յառաջ։

Նա՝ զի՞նչ այլ յաւելու ինչ ընդունի՝ քան 'ի նախնին իմ զսա
հաւաք նշանել՝ եւ՛ անուանս եւ՛ պաշտամամբ. նո՛ր Լուսաւորչին
երկրո՛րդ Գրիգորիոս, առանդեալ մեզ զաղօթից սահման, իբր
առաջինն՝ զհաստատոյն. Յովսէփեան նահապետին՝ յուղէ՛ք ցանկա-

նէ, ուղղելոյն հոգւով ներանձին · յաճախապատում վարդապե-
տին՝ աշակերտ ամենարուեստ, որ 'ի դոյզն յայս մատեան ամ-
փոփեաց զբանականն արուեստ՝ ընդ ա̅ծայնոյն, զա̅ծաբանութե̅ն տե-
սական՝ ընդ խորհրդականին, զպատմողական ասած ս̅բ գրոց՝ ընդ
մեկնողականին, զաղօթից հոգէ՝ ընդ բանաստեղծականին, զերկեւղ՝
ընդ սիրոյ, զյոյս՝ ընդ զզջումն, զա̅յ բարեաւն՝ ընդ մարդոյն շա-
րիս. և 'ի մի բան՝ զա̅ծ ընդ մարդոյ. եղեալ արդարև դպիր աջ-
ղակ արքայութե̅ նորոյ, արտաբերելով 'ի սրտին գանձարանէ զմեղր
նորագործ ստեղծաբանութե̅, և զհին գինի ա̅ծեղէն սիրոյն:
Մ՛է այլ յունապատն՝ մ՛ բնաւ ընչազդարձ ձոխագոյն յետոյն որ-
ճեռս կամ 'ի հոմերոս, և մ՛ խօսեա՝ 'ի Վիրգիլիոս կամ յՈվի-
դիոս. զի վէհ քան զնոսա առ հայաստանեայս ծագեաց եր-
նաշնորհն Գրիգորիոս, որ գեղեաց զպատառամբ հոգին բանաստեղ-
ծութե̅ հնազանդել ընդ լծով ա̅ծայնոյ հոգւոյն. և զայն՝ որ
ընդ երկնաւոր Թեթ ձախուեր, յախորժանս մարդկան զնուագն
յարմարելով, համարձակեաց վերաթռչել 'ի բոլոր իւր երկինս, անդ
քաղցրացուցանել նուագս անսրթալոյս 'ի լսելիս ա̅յ և հրեշ-
տակաց:

## Պիտանութ՟ի լուծմանց։

Բայց սակայն գոյ մեզ 'ի կարգ այսց գովեստից՝ ոչ փոքր պարտաւանս զմերոյ հեղգամտութ՟եսս խոստովանել, իբր յետնելոց յարժանաւոր ընդունելութենէ պարգևացս, և զապերախտութ՟ե ինչ առ 'ի նոյն բերելով կարծիս՝ անձանաչողութեանն մասամբ. վասն զի թէպէտ և յառաջնոց անտի ժամանակաց մինչև 'ի մեզս՝ ամենեցուն փարելի է մատեանս, և մատենագրողն՝ բարեհամբաւեալ, սակայն ոչ ումեք յառաջնոցն, և սակաւուց ոմանց 'ի յետնոցն խնամ ցուցաւ՝ զանյայտութիւն որ 'ի նմա, արժանապէս բացայայտութ՟ք ածել 'ի տեսութ՟ի. որով աղօթաւորացն անձինք անճաշակք յարբմանէ իմաստոյն մնացեալք, աղօթեն հոգւով, այլ սակաւք մտօք. վկայեն զսա թանգարան լինել ականց պատուականաց, բայց անտեսք փայլման լուսոյ երևասցն։

Ուր յայլ ազգս՝ միոյ խրթնածածուկ մատենի յոլով տեսանեմք կացեալ մեկնաբանս հինս և նորս, մի զմիով 'ի նախանձ բացայայտութ՟են ձեպեալք հայրասէր բարոյիւք. և զառ 'ի յառաջնոյն զթողեալն, զզեղչեալն, և զծածկեալն՝ յետինքն փութան լնուլ, ընդարձակել, և յերևան ածել. որով մատեանն գլխովին զընտաւորն տայ լոյս. մատենագրողին յարգ և վաստակք բարեհռչակին. մեկնաբանք իբր համավաստակք գովլին. ընթերցողք գնան իբր 'ի տունջեան անսայթաքելի։ Առաւելագունի իմն փութոյ պէտք էին 'ի Նարեկեան մատենին բացայայտութ՟ի, յորում առ ամենայն գլուխ համատարած սփռեալ տեսանեմք զանյայտութ՟են ծածկոյթ. գողանալով զիմաստիցն տեսութ՟ի բաղում ուրեք 'ի սրատեսացն իսկ՝ թող թէ 'ի թերատեսաց։

Այլ արդ՝ թէև զկանուխ երկասիրութ՟եան ոչ աւանդեցին մեզ առաջինքն, յանպարապութ՟է թերևս արգելեալք, կամ յայլ ինչ պատճառաց, սակայն զանազանն արդեօք ջանացան երևեցուցանել ոմանք 'ի յետնոց. և գովութ՟ե գտան վերընդունակք յօժարութ՟են մասամբ, իբր կամակարք 'ի լնուլ զառ 'ի նախնեացն զպարտս. զի և հատուցումն անագան՝ հուպ է 'ի գովելին։ Նա արդարև կատարելագունի ևս գովութեան էին ժառանգաւորք, եթէ զոյգ յօժարութ՟են՝ և արդիւնք իւրացն 'ի գլուխ ելանէին ստուգագէտ քննութ՟բ, և հարազատ բացայայտութ՟բ։ Սակայն առ այսուիկ իւիք իւիք թերակատար գտեալք, յապա եկելոցս թողին պատճառս աշխատսիրութ՟ե, նորոգ քննութ՟ի 'ի մէջ առնուլ, և զբաւականն տալ բացայայտութիւն, թէ՛ և ոչ զամենակատարն, որ 'ի մարդկային երկասիրութ՟ես 'ի բաղձալեացն է՝ այլ ոչ 'ի հասանելեացն։

Բայց աստանօր մինչև մեր 'ի բուն մատեանն ձեռնարկեալ,

*

զանյայտութիւնս որ 'ի նմա' հասարակ բանիւ 'ի համար բերել պատշաճ վարկանիմ. և թէ ոմք ոմանք յեղելոցն նախ քան զմեզ, կամ որով օրինակաւ աշխատ եղեն 'ի նորայն բացայայտութի. դարձեալ և որ այժմու մերս է բացայայտութի՝ զորս կարգ ընթացից և հանդամանս պայմանեալ ունիցի ։

ԽՈՐՀՈՒՐԴ ՆԱՐԵԿԻՆ ։

Օանյայտութի գրոց՝ ԱՆՀԱՍԱՏՈՒԹԵԱՆ անուամբ կրկին ասէ դաւիթ փիլիսոփայ. ('ի մեկն. պորփ. պր. Է.) այսինքն է՝ բառից, և տեսութեանց ։ Բայց առ մերս մտածութի՝ երեքկին ասել որոշագոյն կարծեմ. այսինքն է՝ բառից, բանից, և տեսութեանց կամ խմաստից ։ Երրակի այս անյայտութիք պարածածկեալ իմն տեսանի նարեկեան մատեանս բովանդակ, իբր երկիր 'ի նախաստեղծ լինելութեն աներևոյթ գոլով, և խաւար 'ի վերայ անդնդոց խորխմաց ասացուածոցն. (ծննդ. ա. ա ։) և նա ինքն երջանիկ մատենագրողն թուի ինձ ըստ դաւթայ օրինակին՝ 'ի մաւայլ լերինն 'ի մթին երկրին ամրացեալ յահէ սաստից արդարութեանն այ ։ (ա. թագ. իէ. 14 ։)

Անյայտութիւն բառից տեսանի ոչ միայն 'ի բառսն խրթինս և անընտելս. որպէս ԹԱՂԱՆԴ, ԽՆՁԻՂ, ԱՆԴՈՒԺԵԼԻ, եւն, այլ և որք անսովոր նշանակութի են եդեալ. որպէս ԱՆԴՈՐՓ, փոխանակ բառիս՝ անյաղթելի. ԼՐՈՒԹԻ, փոխանակ լսելութեան. ՆՈՒՆՈՒԹԻ, փոխանակ խորամանկութե եւն ։ Թող զայլաբանեալ ձայնսն, այլ ինչ 'ի վերին երեսս՝ և այլ ըստ ղիտաւորութեն նշանակելով ։ Այս առաջին անյայտութի թէպէտ առաւելապէս յաճախեալ 'ի մատենիս՝ բայց դիւրավաստակ ես 'ի մեկնել. զի միոյ կամ երկուց բառից յայտնութի 'ի վեր եղանէ բանն, որում և բառագիրքն ինքնին նպաստեն ։

Երկրորդ անյայտութի՝ որ բանիցն է, 'ի քերթողական շարիցն ունի զմթութի. իբր զի թէպէտ և ընդելական իցեն բառքն, սակայն ըստ ոչ սովորութե բերելով զիւրեանցն շարամանութի յոյժ գերապանծ, մաւայլ 'ի բանսն արկանեն ։ Եւ այս դարձեալ յաճախագոյն երևեալ 'ի բազմարուեստ մատենիս, բայց ոչ դժուարապատում առ իմնայ՝ որոց կիրթքն են 'ի քերթողական մարզս ։

Բայց երրորդն՝ անյայտութի խմաստից՝ կարի տաժանական և տագնապիչ մտաց այն է, ուր 'ի բառսն ընտելս և 'ի պարզ շարագրածս իսկ՝ խմաստք յոլովակի զանխլանան. անյայտեալ թաքչի յարմարումն յաջորդ բանին ընդ անցելոցն, հետևութի պատճառին առ խնդիրն, միաբանութի օրինակին առ օրինակեալն. մանաւանդ թէ պատերազմօղ ևս կարծի բազում ուրեք բան ընդ բանի, պատճառ ընդ խնդրոյ, օրինակ ընդ օրինակելոյ. մինչև յերկար խուզմամբն գայցէ յերևան որ 'ի խորս անդ գեղեցիկ համաշտութին ։ Եւ՛ ուրեք դարձեալ, զի կարծէ որ ընթեռնուն՝ թէ ըմբռնեաց զիմաստսն, այլ ոչ ըստ գրողին

մուաց . և ուրեք յառաւելապատում են իմաստքն , այլ պատճառ ստուգութեն անյայտ . և այլ ուրեք՝ արտաքին կերպարանք բանին յայտնական , բայց ոչ ողջամիտ , վասն որոյ և ուղիղն խնդրելի :

Այս ազգ անյայտութե զմթաբանութին կոչէ իւր օժանդակ , և զընդարձակ հմտութիւն ածային դրոց , հարցն առաջնոց , վաղնջուց սովորութեց , ազգային պատմութեց , և որ այլ ևս դպրութեց են պարապմունք , և 'ի վերայ այսոցիկ՝ զերկայնամիտ խուզողութի առաջի եդելոց բանիցն : Բայց շատևս այն է՝ զի յետ խուզողական քննութեն վաստակաբեկ լեալ գործի մտացն անհասութե , անկանի սուզանի ընդ խորութեամբ բանին , և առ ելսն անկարանայ՝ բայց եթէ եղիսէական փայտիւն՝ աղօթից ձեռնտուութե սբյ վարդապետին . ( Դ . Թագ . Զ . 6 : ) զոր փորձն քաջայայտ՝ տայ մտադիւր խոստովանել :

## Մեկնիչք , կամ յօրինօղք լուծմանց :

Արդ՝ այսքանեաց անյայտութեց վերբերիչ դիտելով զաղօթական մատեանս , ժամ է արդ տեսանել՝ ոյք ոմանք 'ի բարեխնդրացն հոգ յանձին կալան քննութե լուսաբանել զնոյն :

Ամենեցունց գրասիրաց ականերև կայ ընդարձակ մատեանն , զոր 'ի մերում դարու երևեցոյց Յակոբ պատրիարգն նալեան տպագրութե 'ի կոստանդնուպօլիս յամին 1745 . յորում բաց յաղօթական բանիցն՝ և զճառս սբյ վարդապետին առնու 'ի բացայայտուի : Արդարև աշխատուի բազում յանձն առեալ 'ի դրել , որպէս և երևի , բայց ընդարձակութբն յայլ խօսս վարդապետականս , կամ բանասիրականս՝ ոչ ժամանեալ տալ զճշգրիտ տեղեկութի առաջի եդելոց բանիցն :

Սա ինքն 'ի բանս իւր յիշատակէ լուծմունս յանուն Սարգսի քաջաբան մեկնչի կաթուղիկեայց . այլև յիւրում յառաջաբանին ասէ 'ի լրոյ , թէ Լամբրօնացւոյն ևս արարեալ իցէ լուծմունս , թէպէտ և իւր տեսեալ չէր : Ապաքէն բարերաստիկք ոմանք լինիցիմք , եթէ երկոքին ջանքս բազմապայծառ Սարգիս և Լամբրօնացի՝ գգեղեցիկ նշոյլսն արձակեալ իցեն 'ի մթին երկիր Նարեկայ . և ուխտիւք իսկ ախորժեմ այնպէս հաւանել առ 'ի մխոս , իբրև քաջք պատահեալ քաջի : Այլ զի մի 'ի հաւ բաւոյ խիթէ ըմբռնիցիմք անքննաբար , որպէս առ բազումս 'ի դրոց տեսեալ եղև , յայտ առնեմք՝ թէ յիշատակեալ լուծմունքն ոչ սարգսի է մեկնչին , և ոչ լամբրօնացւոյն : Վասն զի գտաւ առ մեզ ամբողջ օրինակ այնց լուծմանց , գրեալ բոլորագիր 'ի մեր թուին իբր պծե . ( յամի տն 1406 . ) յորում բանքն են նոյն՝ զորս Յակոբ պատրիարգն 'ի մէջ առնու յիւրում մեկնութեն յանուն սարգսի . և սակայն մեր օրինակս 'ի ճակատի անդ այլով նոր գրչաւ դնէ . Արարեալ Լամբրօնացւոյն . և ոչ մի ինչ յայտարարութի նշանակի 'ի կարգի լուծմանցն կամ 'ի յիշատակարանին , թէ սարգսի իցէ արարեալ : Այլ

Թէ այնոցիկ լուծմանց որ հանգամանք իցեն, կամ ո՞ւմ ումեք ընծայել արժան իցէ, ահա քեզ պատկեր կերպարանացն 'ի համառօտն ստուերագրեալ, յորմէ և մատենագրէն յարգ և ժամանակ իմանի:

Ապաքէն երևի 'ի լուծանօղ անդր՝ ջան պարզելոյ զգաղտնիս մատենին, այլ ոչ հաւասար ջանին հմտութիւն կարևորացն 'ի նոյն. վասն որոյ բազում ուրեք զբանսն խրթնածածուկս՝ կամ լուծէ պատուէ, կամ վէր 'ի վերոյ բանիւք թողու յանյայտութեան, կամ անյարմար իմաստս արտայայտէ. որպէս և 'ի կարգ մերոց լուծմանցս տեսցի: Այսմ հակառակ՝ յոլովակի զբառս կամ զբանս դիւրիմացս՝ ինքն բացատրէ անհեղգաբար՝ ոչ միանգամ և ոչ երկիցս. որպէս, դծնդաճ, ճորհաջիր, անխարդախ, դաշդաանել, Բշդաաառւ, ևն: Եւ զայն՝ ուրեք բազմաբանութ. եւս. որպէս 'ի սկզբան մատենին, Զայն հառաչանաց, սկսանի 'ի թիւարկանել զազգս ձայնից՝ զյօդեալն և զանյօդն, զնշանականն և զաննշան, և օրինակօք զիւրաքանչիւր բացատրել յումպէտս: Նմանօրինակ և զասացեալն անդ, 'ի խորոց սրտի ըզդայռւ-Բէց, նիւթ առնու ընդարձակութեան բանից, աւանդեալ զբաժանումն զգայութեց և կարողութեց հոգւոյ, և զիւրաքանչիւր նոցա առ միմեանս բաղդատութիւն. զոր ոչ մի ինչ հարկ տեղւոյն պահանջէր: Է՛ տեսանել 'ի նմա այլ ընդ այլոյ կոչմունս, զմիոյ գրոյ բան այլում տալով. որպէս 'ի բան ա. 2. զասացեալն, Մէրձ է օր տն, որ է յոյելոյ գ. 14. լուծանօղն ընծայէ ովսեայ, ուր չէր: Զայսպիսիս և այլուր առնէ:

Բազում ուրեք 'ի կիր առնու վայրապար զբառս և զոճ ռամկական, որպէս, ղուդուղ, Բալան էդաա, խաանէ հաարճանէմ, խմէլ, ծէծաաայ: Զէնինէճ լաա դէա, որ Գիդէնաա Բէ ինչ հաա աւէ ոէօ ոյ: Հայոց. (այսինքն այնպէս.) Գըլաախ ժաշէայ. Գոդէյնէա. յահէա որ հաավախէմ. հէճէպով. Վըլն ճաաճ է. մշաաշ: Արժանի էմ այաար և այլ ղադոց. ծախլըժ. էնց շինչ ջաարն 'ի մաշէն Բաճի: Մուխըջըար: Հմայէկնայն է որ 'ի դշայոց շընիան հապէն, աա պահապանժ աէն. ըստ այսմ և այլն:

Եւ ոչ այս միայն, այլ յոլով ուրեք իբր ընտանեբար վարէ անխտիր զայլազգական ձայնս՝ զթուրքին, և զարաբացւոյն, և զայլոց. որպէս 'ի մեկնել զողջակէզն՝ դնէ որ էնաախդ ոյ: Բաա, այսինքն ըմպանակ: աայաԲ, փոխանակ՝ միջակայնոց: շադալայ, փոխանակ մուրհակի: լաշ, այաինժն շաղիղ: Բէհ, ըաշնէ, այսինքն առհաւատչեայ, գրաւ: ամանաԲ, այսինքն աւանդ. ղաաշ, այսինքն դաշն: դաաէժար, այսինքն դատախազ: Վնայ, այսինքն նաւահանգիստ: նշաշէլ, այսինքն նկարել: ղաադ անէլ, այսինքն ընդդէմ թագաւորի մեղանչել: ճայէչ, այսինքն սուրհանդակ: հաշէնայ, այսինքն գանձարան: Բաախ, ալամ, այսինքն դրօշ: սադօն, այսինքն օճառ: ըէդաադ, այսինքն. բորոտ, առեալ 'ի լատինէն՝ ըէֆաա:

Արդ՝ զայսոսիկ զհանգամանս լուծմանցդ կշռելով, ո՞ ոք լսել անգամ ախորժեսցէ՝ թո՛ղ թէ պնդել բանիւ, Սարգսի մնկչի

լինել արարուած, կամ Լամբրոնացւոյն Ներսեսի. որոց ընտ-
րութիւն բանից, զգուշութիւն խօսից, ոճն ընտանի յամենայն
գիրս իւրեանց աշխարհատես փայլէ։ Առ Սարգսի ոչինչ օտա-
րոտի բառից կիրառութիւն է տեսանել. իսկ առ Լամբրոնացւոյն՝
դուն ուրեք 'ի պատարագամեկնիչն կամ 'ի թուղթս իւր 'ի
հարկէ բանիցն հարեւանցի յիշատակեալ. քանզի չեւ ևս առ
նոցա ժամանակօք սովորեալ էր 'ի վարդապետական գիրս՝ ըղ-
ռամկական և գայլազգական խօսս վարել անխտիր. այլ առ
վերջին Կիլիկեցւովքն տեսանեմք զայդ սովորութիւն. որպէս 'ի
գրութիւնս Վարդանայ, 'ի մեկնութեան Մարկոսի, և յայլս։ Վասն
որոյ իմ կարծիք այսն յօժարեալ են, թէ առաջնորդ լուծ-
մանցդ՝ մի յայնց Կելիկեցւոց իցէ իբր 'ի չորեքտասաներորդ
դարուն, որպէս բաց յասացեալ նշանացդ՝ զայն ևս նկատեմք
'ի լուծմունս անդ, զի յածաբանական բանս ուրեք 'ի կիր առ-
նու զորոշմունս բացատրութե, որ 'ի լատինական գրոցն թարգ-
մանելոց առ այնու ժամանակօք ընկալեալ է։ Եւ թերևս այն
լուծանօղ՝ անուանակից գոլով Սարգսի, կմ քաղաքակից Լամբ-
րոնացւոյն, համբաւն ընկալաւ և տարածեաց նոյն լինել ընդ
նոսա. որպէս սակս նոցին պատճառաց՝ յայլ բազումս տեսա-
նեմք լեալ խառնակութիս անձանց և գրութեանց նոցա։ Մա-
նաւանդ՝ այլ ևս պատճառ գուցէ եւ ոմանց՝ Լամբրոնացւոյն
Ներսեսի կարծել զսա գործ. իբր զի լուծիչն 'ի բանն Ը. 1. 'ի
մեկնել զասացեալն. ԱՆՊԱՐՓԱԿԵԼԻ ԾԱՒԱԼԵՑԵԱԼ ԱԼԻՔ. կամ ԱՂԱ-
ՂԱՆԻՍ Խճ. 'ի կիր առնու զբուն բանս սբյ Լամբրոնացւոյն՝
որ 'ի մեկնութեան ոխնայ. Է. 9. 11. կամ, զի զերկու աղօթս
հոգւոյն սբյ, որ 'ի բանն ԼԴ, բացայայտելով Լամբրոնացւոյն 'ի
պատարագի գիրսն, համբաւն անեցոյց հոչակել, թէ զնարեկն
ողջոյն պարզաբանեալ իցէ։

'Ի լրումն բանիցս՝ զայն ևս ազդ առնել կարեւոր է, զի կայ և
այլ օրինակ լուծմանց՝ ընտրութե համառօտեալ յամբողջ օրի-
նակէն՝ զոր ասասցուք. և 'ի համառօտելոյ ասոր՝ կրճատութե
արարեալ այլ օրինակ լուծմանց, որ և այն իսկ է՝ որ 'ի տպա-
գիր Նարեկոն կայր 'ի վերջոյ արձանացուցեալ, իբր ծրար առ-
կայծեալ աղօտաճաճանչ՝ միջամուխ արշաւել նովաւ 'ի մթա-
գգած վայրս։ Եւ այսպէս երից եղելոց օրինակաց լուծմանցն՝
աղբիւր նոցա այն է, զորմէ կանխեցաք տալ տեղեկութիւն.
զոր և 'ի մեր լուծմունս յիշատակեմք, նշանակեալ հին լուծ.
կամ հլ։

## Հանգամանք նորոգ լուծմանցս։

Այլ արդ՝ եթէ ըստ նախ ասացելոցս, մեկնողական գրու-
թիւք այլոց 'ի Նարեկեան մատեանն՝ բաւական էին տալ անմո-
լորապէս զցոյցս բանիցն, մեզ ոչինչ աշխատութիւն էր բովան-
դակին լինել յուղախնդիր, այլ զթերին եւեթ լցուցիչ. զի ոչ
եթէ արհամարհօղք ինչ կամ պարսաւադէտք այլոցն վաստա-

կոց յառնել յօժարիմք, որ ընդ իմաստութեան բնաւ ոչ հաղորդի. բայց ընդ ազգասէր բարոյից՝ և զիրաւասէրն լծորդել խրատիմք։ Վասն որոյ 'ի դոյն խորհուրդ կամակար տուեալ զանձն 'ի հանդէս նորոգ լուծմանցս, այնպիսի ջանացաք պահել կարգ, զի յամենայնի ըստ կարի հարազատութիւն իմաստից խնդրեսցի, և ընդ հարազատութեան՝ բացայայտութիւն, և յերկոսեան՝ զհամառօտութիւն պատուեալ։

Առ 'ի գիւտ հարազատ իմաստից գրոց՝ հարազատութիւն բնագրին է առաջին խնդրելի. նմին իրի 'ի լուծումն առնումք զբնագիր մատենիս ըստ օրինակին՝ որ 'ի բազմապատիկ սխալմանց սրբեալ տպագրեցաւ 'ի կոստանդնուպօլիս, և 'ի մէնջ. Բայց և առ այնու 'ի ձեռագիր օրինակս՝ որ առ մեզ, դարձեալ հետաքննեցաք. մանաւանդ որ ընտրելագոյնն է՝ գրեալ 'ի մեր թուին չէդ, և յետ այնր համեմատեալ ևս ընդ այլ օրինակի մխիթարայ ուրումն վարդապետի. առ որ յիշատակագիր համառօտ յաւելեալ ազդ առնէ՝ կարի վստահանալ 'ի նոյն։ Յօրինակէ աստի բազում ուրեք յիշատակեմք 'ի կարգի լուծմանցս զտարբերութիւնս որ 'ի տպագրելումն այլազգ եղեալ կան, նշանակելով, 'ի լաւ օրինակն, կամ 'ի մեր օրին։

Այսպիսաբար յապահովացեալք 'ի բնագիր անդր, զիւրաքանչիւր տեղի կարօտ մեկնութեան՝ ոչ ըստ կամի կամ փայրապար խօսիւք անցանել հաւանեցաք, այլ եթէ քերթողականք իցեն, եթէ ճարտասանականք, եթէ իմաստասիրականք և կամ պատմականք, զամենայնն 'ի բուն սկզբանց անտի հաւաստել հոգացաք. և միանգամայն 'ի բնագրի անդ ընդ անցելոց բանիցն և ընդ յաջորդացն համեմատել. զի պատահէ բազում անգամ իմաստից ինչ ինքնին առանձինն լինել ճշմարիտ, բայց կարգի հիւսուածոց բանիցն ոչ անկաւոր։ Այլ թէ ուրեք երբէք բառ ինչ կամ բան յետ զգուշաւոր քննութեան ոչ եկն 'ի հաւաստի գիտնաւորութիւն, զհաւանականն նշանակեցաք, կամ երկբայականօք վարեցաք գիմօք. լաւ համարեալ արդարախօս երևել, քան բանադէտ։

Զընթացս լուծմանցս ջանացաք յոյժ բացայայտ յարմարել, որպէս մեկնչաց է սովորութիւն. զի ինքնին ընդարձակ փայլչութիւն իմաստիցն ջահաւորեսցի՝ անկարօտ պաճուճանաց բանից։ Յիւրաքանչիւր տեղի՝ ուր ոլոր բանիցն է, զայն նշանակեմք կրճատ, և զլուծումն 'ի վերայ բերեալ լրացուցանեմք զիմաստսն, թողեալ ընթերցողին՝ ամբողջ աչօք ողջունել զբնագիրն, զի մի թերակատար կամ այլ ընդ այլոյ իմաստքն կարծեսցին։ 'Ի դիւրութիւն այնոցիկ՝ որք չեն քաջավարժ 'ի բարբառ գրոց, ուրեք 'ի կարգի լուծմանցս, և բազում ևս 'ի կատարածին մեկնեցաք զբառսն աշխարհիկ և այլազգի բարբառով ըստ նշանակութեանցն որով վարին 'ի մատենիս։

Բայց քանզի 'ի մերում խորհրդեան չափաւոր համառօտութիւն կայր առաջի նպատակ, խնամով հրաժեշտ կալաք յամենայնէ որ ինչ անկարևոր երկարութեան է պատճառ։ Վասն որոյ ըն-

վկայութիւնս ս̃բ գրոց՝ զորս յաճախութ̃բ ՚ի կիր առնու երջանիկ վարդապետն, ոչ զամենայն որոց և ուստի ենն՝ նշանակեցաք, զի մի յանչափն ձգիցիմք. այլ միայն զանծանօթսն ըստ տեղւոյ կամ ըստ իմաստից, կամ յորս կայր ինչ գիտելոյ արժանի, ծանուցանել ջանացաք:

Զգուշացաք առաւելապէս, մի անյագութ̃բ արտաքոյ վազել յօտար գրոյցս, կամ անժուժաբար խնդիրս յուզել ՚ի հանդէս վիճաբանութ̃ե. զի ոչ գրանոցս իմն՝ և ոչ մարտկոցս կառուցանել աստանօր յանձն առեալ եմք, որով կամ բանաքաղ երևիցիմք, և կամ բանամարտք. այդպիսիկ այլոց գրոց թողցէն. իսկ յառաջիկայս՝ լուծմանց է գիրս, ՚ի քննել հաւաստութ̃բ զմիտս բանիցն, և ՚ի լսել ճշմարտախնդիր աշակերտութեամբ: Կամիմք՝ զի ինքն ս̃բ վարդապետն զիւրսն խօսեսցի. մեք խօսելեացն որոնօղք լինիցիմք՝ առնուլ և տալ զճաշակս բանին. այլ ոչ եթէ ՚ի բերանոյ նորա ՚ի մեզ կորզեալ զվարդապետութիւն, ճոխաբան լինել ՚ի մեր դէմս. զի մի աղօթական ձևոյն ըղձականութիւն փոխեալ ՚ի վարդապետական, կորուսցէ զիւրն համեղութիւն:

Եւ արդ՝ այսպիսեաւ երկիւղածութ̃ե զօտւով պնդեալ զմիտս, և մաղթանաց ձեռն առ նոյն ինքն երջանիկ աղօթարարս մեր ամբարձեալ, զհետ պնտեցուք դժուարամատոյց նորայն բանից. եթէ հասանիցեմք ինչ, այս շնորհք, և եթէ անհասութ̃բ յետնիցիմք, մեզ չէ ինչ անծանօթ չափաւորութիւն մեր. այլոց արագամտաց տացի ասպարէզ:

Բայց ՚ի քննել մեր զիմաստս աղօթական բանիցս, զիղձս հայցման նոցա՝ և՛ մեք և՛ ընթերցօղք յածուստ անտի ուսցուք և հայցեսցուք. վասն զի այս ոչ ընդ քննութ̃բ գայ, և ոչ բանիւ կերպարանի. որպէս հաստատութ̃բ արտայայտեաց ճաշակօղն աղօթից՝ Հրեշտակն Լամբրօնեան, բացատրեալ ՚ի պատարագի գիրսն զաղօթս հոգւոյն սբ̃յ՝ որ ՚ի բանն լգ̃. ասէ. * Անմարթ և անհնար է ուրուք զաղօթից բան մեկնել. զի նա իւր ծածկից և աղհամբերութեան ունի շինչ պրծման փոխարման հոգւոյն առողին, որում քաղցրանայ յաւէտ. Եւ զայն բանիւ մարմնացուցանել՝ չէք հնար. և զայս առանց նորին որոնել՝ ունայն է ... Բայց թէ խորհի ոք ընդ ձեռն նորին անցեալ, ծանիցէ: ‖ Եւ զկնի դարձեալ. * Զոր ՚ի բան ձգել և պատմել՝ անարգութիւն է շնորհին. և ուսմամբ զայն ծանուցել՝ անհարթութիւն է լսողին ... Մի հարկեա գիտել բնաւ կամ ուսանել յօտարաց, մինչև ՚ի քէն է սորին փեղկութեան բղխեալ. և յորժամ ուսանիս, ապա հաստատես յանձն՝ թէ ոչ գիտես: ‖

Եւ արդարև ինձ վարձս քրտանց՝ և հանգիստ վաստակոց զայն շատ համարիմ, եթէ ՚ի տեղեկանալ իմաստից աղօթիցս՝ և ըղձիցն տեղեկութեան զչափ յանձին առնուցում. և ՚ի դոյն են կամք ըղձանաց իմոց վասն անձինս կարօտելոյ՝ և որք իբրև զիս են. և ոչ անյոյս յընդունելութենէն. զի թէ իւրոցն չարաբարաց բարեխնդիր եղև յերկրի ա̃ծարեալ վարդապետս, (՚ի բանն ծե. ծէ. ձգ.) յերկինս զարժանի փափագումն իւրոց աշխատաւորաց՝ անտես զիարդ առնիցէ:

## Որ ինչ յայժմս յերկրորդ տպագրութեան գիտելի ։

Զհետ հանրական տեղեկութեցն որ յաղագս Նարեկեան աղօթից մատենի տուան յառաջնումն տպագրութեն, և որ այժմ երկրորդեցան սակս միշտ կարևորն լինելոյ 'ի գիտել և յուշի ունել, կարճառօտ իմն յաղագս երկրորդ տպագրութեաս ասել ունիմք, ոչինչ այլ փոփոխումն արարեալ մեր յայսմ՝ բայց զի վերստին խնամով 'ի դրչագիր օրինակս մեր հետաքննեցաք զտարբերութիւնս, և զերևելիսն նշանակեալ ծանուցաք ։ Այլ առաւել ևս քան զդոյն, յաւելուածս արարաք 'ի լուծմունս անդ՝ ուր ուրեք յառաջնումն համառօտիւք ևեթ տուեալ էր մեր տեսութիւն, և կամ զանց ևս արարեալ ։ Թէպէտ և այսքանեօք ևս ոչ եթէ զարժանն կամ զբովանդակն համարիմք նշանակեալ զբացայայտութի. քանզի սքանչելարուեստ մատենիս բարձրութիւն և կամ խորութի գերազանցէ միշտ քան զմեր չափողի ։

# Դ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

## ՅՈԳՆԱԹԱԽԱՆՁ ԲԱՆԻՑ ՕԳՏԱԿԱՐԱՑ ԱՊԱՇԱՒԱՆԱՑ, ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏՈՒՑ

*Անձին ստգտանաց, զղջականաց կանոնաց կենաց, կամաւորութեամբ յանձնառութեանց, աներևութից յայտնութեանց, մեղանաց խոստովանութեանց, ցուցմունք գաղտնեաց, տարածմունք ծածկեցելոց, յանդիմանութիւնք թագուցելոց:*

*Սպեղանիք զօրաւորք՝ վէրաց անբժշկականաց. դեղք աղդողականք՝ ցաւոց անտեսականաց. հնարաւորութիւնք բազմամասնեայ երկանց վտանգից:*

Ի ԴԻՄԱՑ ԿԱՐԵԱՑ ԱՄԵՆԻՑ ԲՆՈՒԹԵԱՆՑ ԱՌԻԹՔ ԱՐՏԱՍՈՒԱՑ, ՊԱՏՃԱՌՔ ԱՂՕԹԻՑ:

'Ի ԽՆԴՐՈՅ ՀԱՅՑՄԱՆՑ ՀԱՐՑ ՄԻԱՆՁԱՆՑ ԵՒ ԲԱԶՄԱՑ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԱՑ ԱՍԱՑԵԱԼ ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

Գ Ր Ի Գ Ո Ր Ի

ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱՀԱՅՐԻ

ՀՍՍՌ ԳԱ
ՀՆԺՑԻԳ ԻՎ ՀՐԱ
ՖՈՆԴԵՐԵՆՅԵՆ



Արթնոյն Գրեգորի՝ ազդէ տիրուհի,
մատչել յիւր որդի՝ ի յԱռտէր կղզի։

# Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ

## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ.

### ԲԱՆ. Ա.

ՁԱՅՆ ՀԱՌԱՉԱՆԱՑ 1 հե-
ծութեան սրտի՝ ողբոց աղաղակի քեզ
վերընծայեմ տեսողդ գաղտնեաց. և մա-
տուցեալ եդեալ 'ի հուր Թախծութեան
անձին տոչորման՝ զպտուղ ըղձից ձենձերոյ սասա-
նեալ մտացս, բուրվառաւ կամացս առաքել առ
քեզ: Այլ հոտոտեսցիս հայեսցիս գթած, 2 քան 'ի
պատարագն բոլորապտուղ մատուցեալ ծխոյն բար-
դութե: Ընկալ զսակաւամասնեայ բանիցս յօդուած
քեզ 'ի հաճութի, և մի՛ 'ի բարկութի. ելցէ 'ի խո-
րոց աստի զգայութեց խորհրդակիր սենեկիս՝ վաղ-
վաղակի ժամանել առ քեզ՝ կամաւորական նուէր
բանական զոհիս, ողջակիզեալ զօրութբ ձարպոյ՝ որ
յիմն է պարարտութի: Նու 3 'ի դնելս իմ ընդ քեզ
դատ՝ խառնեալ աղերսիւ հզօր, մի՛ իբրև զհամբար-
ձումն ձեռաց ամբարշտեալն յակոբու ըստ բողոքե-
լոյն եսայեայ, և զանխրատութին բաբելոնի՝ տաղտկա-
լի քեզ երևեսցի. զոր առակ եօթանասներորդի երկ-
րորդի սաղմոսին աղդէ. 4 այլ իբր զբուրեալ խունկն
հաճոյական 'ի խորանին սելովայ, զոր դաւիթն
կանգնեալ նորոգեաց տապանակին հանգստեան 'ի
դերութենէն դարձելոյ, որ 'ի վերստին դիւտ կո-

րուսեալս հոգւոյ առակին, ընդունելի կամաց քոց լիցի ։

Է. Բայց քանզի [5] ձայնդ ահաւոր դատաստանիդ հատուցման՝ [6] ուժգինս հնչեցեալ 'ի ձորն վրէժխնդրութե, կրկինս ինձ երկնէ մարտից յարուցմունս ։ այժմէն գուշակեալ շարժմունս յուզմանց ներհակականաց, որ յիմում անձին ցուցանի, խռովութիւն ամբոխից ։ հարեալք ընդ միմեանս զէն առ սուսեր՝ խորհրդոցն հոյլք, չարեացն՝ ընդ բարիսն, և գերեալ զիս 'ի մահ ըստ հին դիպուածոյն՝ որ նախ քան զշնորհին ժամանել առ իս ։ զոր ընտրեալն առաքելականացն դասուց պօղոս՝ առօրինակեալ զմովսէս, զքի փրկութիւն յաղթօղ ցուցանէ ։ Վասն զի թէ [7] մերձ է որ տն, որպէս գիր ասէ, 'ի հովիտն անձուկ ասպարիսին յովսափաթու և հեղեղատին կեդրոնի, փոքր հանդիսարանացն իրաւանց ժամադրութեց, որ կենցաղականաւ այսր յաւիտենիւ զհանդերձելոցն ինձ կերպարանեն, ապա և՛ս յաւէտ մերձեցաւ 'ի վերայ իմ արքայութիւն այ՝ [8] մարմին եղելոյ, մեծապէս գտեալ զիս առիթ փխասու՝ բազմաց տոկոսեաց՝ զանազան մասանց յանդիմանողաց ճշմարտապատմից, քան զձեռին նորին վերակացուին անդ ուրեմն երբեմն 'ի հարուածս եգովմայեցւոց և փղշտացւոց, և այլոց բարբարոս ազգաց ։ Քանզի [9] այն ընտրութիւն ամօք չափեցաւ, իսկ պատուհաս իմում պարտուց՝ աւանց աւարտման ունի զսահման ։ Տէր, դու և որոգայթ անձողորմելի, ըստ մարգարէին և առակողին, տագնապաւ մեծաւ առ դուրս ինձ հասեալ՝ զամօթն մշտնջենաւոր ատեն գծագրել ։ Ով որ միայն քո է հրաշագործել պտուղս դեղոյ 'ի հնարս կենաց՝ ամենավարան տարակուսանաց հոգւոց վտանգից, քաւել ամենայնի՝ գովեալ 'ի փառս անձառս անսահմանելի բարձրութե, յաւիտեանս յաւիտենից ։

---

(1) Հեծութե՛ որդի՝ ողբոց աղաղակի ։ Ցոյց օրինակ, հեծութեան ողբոց որդւոց աղաղակի ։ Սկսուած աղօթիցս զայսպիսի իմաստս ունի ։ Զձայն հառաչանաց սրտիս հանդերձ աղաղակաւ ողբոց քեզ վերընծայեմ տէ՛ր տեսողդ գաղտնեաց սրտի ։ Թէպէտ և դու ոչ կարօտիս իմանալ ձայնի՝

ծածկագէտ գոլով։ Եւ 'ի հուր սաստկէղ տրտմութեան արկանելով զնղձս հոգւոյս իբրև խունկ վառելի, կամօքս իբր բուրվառաւ մատուցանեմ առ քեզ։ Զի մինչ իմ անդադար շարժելով 'ի մտածութիւն չարեաց իմոց, և բարեաց քոց, շարժէ զկամքս իբր բուրվառ՝ առ քեզ վերառաքել զցաւալից կնիս հոգւոյս։

'Ի սկզբան աղօթիցս նկատել արժան է, զի սբ վրդպտն ընդ ներգործութեանց հոգևոր փոփոխման կարգէ զբանն։ Քանզի յորժամ սկսանի միտք առանձնանալ 'ի մարմնական զբաղմանց, և հոգին ամփոփի 'ի ներքս 'ի սիրտ իւր, 'ի լուսոյ շնորհացն այ նախ առաջին տեսանէ զգարշութեն մեղաց իւրոց, և զապերախտութիւն առ ած։ Այս յիշելով զահեղ դատաստանն այ՝ սպառնացեալ 'ի գրոց, շարժի 'ի նմա երկիւղ դատապարտութեն, և յերկիւղէն՝ տրտմութեն սաստիկ, և 'ի տրտմութենէն՝ հառաչումն և ողբ։ Վս որոյ իբրև խօսել սկսանի, բնաւորաբար նախ հառաչանք ծնանին խառն ընդ արտասուաց, և ապա պատճառք տրտմութեն և երկիւղին յայտնին։ Ահա զայսոսիկ ներգործութիւնս դնէ սբ վրդպտն յայսմ առաջին բանի։ 'Ի շարժմանց անտի տրտմութեն և երկիւղին՝ սկսանի միտք զղջանալ յանձն իւր, կշտամբել զիւր հեղգութիւն, զանմտութիւն և զանկարութիւն. և խոստովան յուսահատեալ յանձնէ, ապաստանի յած՝ հայցելով 'ի նմանէ զնորոգութիւն հոգւոյն։ Եւ զայսոսիկ դնէ սբ վրդպտն յերկրորդում բանին։ Իսկ իբրև այսպէս քաջալերի հոգին յուսով թողութեն, փարատելով տրտմութեն և երկիւղին, զուարթանայ այնուհետև 'ի խոկումն բարութեն և գթութեն այ. և փոխանակ հառաչական ձայնից՝ 'ի գովութիւն այ պատրաստի անյագաբար։ Եւ զայս ներգործութիւն յայտնէ սբ վրդպտն յերրորդում բանին։ Այսպիսի կարգաւորութեն ըղձից տեսանի յընթացս աղօթիցս, ուրեք զմաքրողական ներգործութիւնս դնելով, ուրեք՝ զլուսաւորութեն, և ուրեք՝ զմիաւորութեն ընդ այ։

(2) Քան 'ի պատարագն։ Քան յողջակէզ հին օրինացն՝ որ բոլորովին այրեցեալ, թանձր ծխով մատուցեալ լինէր, առաւել հայեցեալ յայս իմ բանաւոր պատարագս։ Զանխուլ բանքս աղօթից՝ զոր գրով կաղմեմ, և ոչ լոկ ձայնիւ կամ բերանով, ընկալցիս հաճութեամբ, և մի 'ի բարկութեն. իբր յանդգնութեն համարեալ գրով աղօթելս. քանզի բաղձամ և ջանամ զի եղիցի ըղձական զոհ և ընծայ 'ի խորոց սրտի խորհրդակիր ոճնելեօ, որ մտացս կմ հոգւոյս՝ յորում խորհուրդք և մտածութիւնք ամբարեալ կային։ Եւ այս ընծայ կամաւորական՝ ճողճողի, պարարագոյն ևս ժամանեսցէ առ քեզ քան զբազում բերանոյս, և քան զգիրկ ձեռինս, բոլորովին կիզեալ վառեալ պարարտութե ճարպոյ, որ ընդ վառման ճարպոյ, կամ զորէն ճարպոյ։ Օրինակ ինչ, ճենճերոյ։ Վառեսցի որպէս ճարպ, կմ եռասցի որպէս ճենճեր որ չէ այն պարարտութեանն. այլ օրին. պարարտութե։ 'Ի նուիրել աղօթիցս՝ թէ և գրով, այլ ընդ ըղձականութե սրտիս փափագեմ, զի պարարտութիւն որ չիք եթէ մարմնոյ, հալեսցի առ ճարպ, և եթէ հոգւոյ առատութիւն վառեսցի, բորբոքեսցի, և այսպէս ընծայ աղօթիցս նուիրեսցի քեզ՝ և՛ միօք, և՛ բերանով, և՛ ձեռամբ։

(3) Եւ 'ի տանէս իմ։ 'Ի վարել իմ դատ կմ 'ի դատախազելս առաջի քո ընդդէմ մեղացս և ապստամբ մարմնոյս և հակառակ զաւաճանող դիւին։ Կամ, 'ի խոստովանելն զմեղս իմ առաջի քո, որ է դատախազութիւն զինէն։ Կամ, յորժամ իբր դատ վարել թուիմ առ քեզ ասելով, ընդէ՞ր մերժես զիս, վս է՞ր թողեր զիս, է՞ր վս փորձիմ, տկարանամ եւն։ Այսպիսի դատախազութե իմ՝ թէ և պաղատանօք արարեալ, մի՛ տաղտկալի, զզուելի եղիցի քեզ իբրև ըմբերանութիւն Յոբայ յակոբեանցն

կամ խռովելոցն, որոց առէր Եսայեաւ (ա. 15.) * Յորժամ համբառնայցէք զձեռս ձեր, դարձուցից զերեսս իմ. || զի որպէս զաղօթել նոցա մերժէր՝ վն ունելոյ նոցա զձեռս լցեալ արեամբ, նոյնպէս և զիմ աղօթելս կարես արհամարհել վասն կամաւ և յանհոգութէ յանցանելոյս: ԵՍ ԶԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆ ԲԱԲԵԼՈՆԻ, այ. և մի՛ իբրև զանօրէնութիւն բաբելացւոց ատելի երևեսցի քեզ իմ աղօթելս: Թուի հայել 'ի բանն Դանիէլի. գլ. ժդ. ուր վն չարագործ դատաւորացն ասի, թէ խօսեցաւ տր՝ ել անօրէնութի 'ի բաբելոնէ 'ի ծերոց դատաւորացն: Քանզի գործ նոցա երևէր արդարութի և ուղիղ առաջնորդութի ժողովրդեանն. ուր ըհկառակն՝ առաջի Այ անօրէնութի էր: ԶՈՐ ԱՌԱԿ. զոր և առակաւոր բան հր սաղմոսին ծանուցանէ 'ի դ տուն. * Եղեն որդ 'ի ճարտարաց անիրաւութիւնք նոցա. || այ անիրաւութիւնք նոցա որպէս նուէր ճարտարաց ձևանան, երևին իբրև զոհ պարարտ, որ ըստ էրին անիրաւութիւն է:

Արդ՝ մի՛ այսպէս համարեսցի և իմ աղօթելս:

(4) ԱՅԼ ԻԲՐ ԸՆԿԱԼԵԱԼ: Այս իմ նուէր աղօթից ընդունելի լիցի քեզ իբրև զպճնեալն խունկն բուրեալ 'ի ԽՈՐԱՆԻՆ ՍԵԼՈՎԱՅ, զոր Դաւիթն կանգնեաց: Դերանունդ ՈՐ ցուցանէ զխորանն. և յեղանակ բանին այնպէս կարծեցուցանէ, թէ զմովսիսակերտ խորանն՝ որ կայր երբեմն 'ի սելով, եբարձ դաւիթ և կանգնեաց 'ի քաղաքի իւրում 'ի սիոն: (բ. թագ. զ. 17.) բայց ըստ մեկնչաց՝ նոր խորան շինեաց դաւիթ, իսկ առաջինն 'ի մովսէսէ՝ կայր 'ի բամոյ գաբաւոնի. որպ գրի (ա. մնաց. իա, 29:) որում պաշտօնեայն կարգեալ էր սադովկ քահանայ. (անդ. ժզ. 59:) վն որոյ զառաջեալն սբյ վրդպտս այսպէս մտօք է իմանալ: Աղօթքս իմ ընդունելի քեզ լիցի իբրև զխունկն մատուցեալ 'ի խորանին սելովայ, ըստ, այ զորպիսի և դաւիթ կանգնեալ ՆՈՐՈԳԵԱՑ, այ նորակերտեաց վն հանգստեան տապանակին՝ 'ի ԳԵՐՈՒԹԵՆԷ ԴԱՐՁԵԼՈՅ. զի թէպէտ յետ գերութեն ամս քսան եկաց 'ի տան ամինադաբայ. (ա. թագ. է. 2:) և յետ այնր ամիս երիս 'ի տան աբեդդարայ. (բ. թագ. զ. 11.) բայց քանզի կայր առանց խորանի որպէս անցաւոր, վասն այսորիկ իբրև նոր դարձեալ 'ի գերութէն՝ հանդիսիւ ածեր զայն դաւիթ. որ և առէ 'ի դարձ կորուսեալ հոգւոյս ԱՌԱԿԻՒ, օրինակի:

(5) ԶԱՅՆԺ ԱՀԱՒՈՐ: 'ի բովանդակ բանիս յառաջ առնու զբանն (յովէլ. գ. 2.) * Ժողովեցից զնոսա 'ի ձորն յովսափաթու *. են: Հին լուծմունքն ըստ կարծելոյ բարբանեաց ոմանց՝ իմանայ ըստ ճառին զկոտորածէ այլազգեացն յաւուրս յովսափաթայ արքային յուդայ. (բ. մնաց. ի. 22.) բայց անյարմար է. զի 'ի բանն յովէլայ՝ ՅՈՎՍԱՓԱԹ ոչ է անուն արքային, այլ տեղւոյ. թէպէտ և մեկնիչք անմիաբան են՝ թէ զոր տեղի նշանակիցէ. Թող զայն՝ զի յովէլ յետոյ է ժամանակաւ քան զյովսափաթ արքայ. և այս մարգարէութիւնն նր հայի յապագայ կոտորած հեթանոսաց. (տես 'ի բովանդակ գլուխն.) վն որոյ ըստ քաջ մեկնչաց՝ յովէլական բանս ակնարկէ զհարուածս հեթանոսաց՝ որ առ մակաբեացւովք: տես և զնիւ 'ի լուծ. դ: Իսկ առ 'ի միտս՝ այն հարուած և վրէժխնդրութի հեթանոսաց օրինակէ զօր ըհանուր դատաստանին: Ուստի այս ձայն առէ՝ ԿՐԿԻՆ ԲՆՋ ԵՐԿՆԷ, երկու խառնութիւն կի՛ շփոթմունս ծնանի, մի՝ որ 'ի մտացս խղճէ հարկանիմ, և միւս՝ որ յահաւորութէ դատաստանին: Կամ, ԿՐԿԻՆ, այ այլեայլ պատերազմունս հակառակ միմեանց. ԱՅԺՄՆ ԳՈՒՇԱԿԵԱՒ. այ ցուցեալ յանձն իմ յուզմունս խորհրդոց հակառակաց: ՀԱՐԻՆԱՒՆ ԱՌ ՔԺԱՆՈ ՎԷՆ ԱՌ ՈՒՈՒԵՐ: Որպէս 'ի մարմնական պատերազմին բազում անգամ խառնութի արկանէր ած 'ի մէջ հեթանոսաց, և զմիմեանս սատակէին. (ըստ բ. մնաց. ի. 22.) այսպէս և առ իս անհուխ այլեայլ խորհրդոցս ըստ միմեանս մարտնչին, և կոտորին

զանձն իմ · ըսրեադն ընտ բարբօ · մտածութիւն չար գործոց՝ ընդ մտածութեան բարեացն որ յիմ · եթէ զի ես չարիս յանձնեցի, և ոչ զբարիս իմ առատացուցանէր : Կամ, պատերազմ չար յօժարութեան մարմնոյ՝ ընդ բարի կամս հոգւոյս · զի յաղթէ դատաստանին զարթնոյր բարի կամք հոգւոյս, որում ըղձեմ կացեալ կամք մարմնոյս, յաղթահարեր և գերեր զիս 'ի մահ մեղաց ըսթ հէն տէգուածօյն, քի ըստ հնին օրինացն մովսեսի, որ զպատուհաս մահու 'ի վր. ածեր յանցուցելոցն : կա՛մ, ըստ առաջին մեղացն և ապականութեան՝ որ յադամայ լինձ գիլարս · յորում կայի նախթան ղընորհէն վիրաւութեան և նոր օրինացն ճամանէն ... : Զոր, քի որում շնորհի պօղոս առօրենաքէսալ ... , 'ի մի օրին. և ըստ հնին ըստ. օրէնաք առէալ, քի բաղդատելով զմովսէս կամ զհնին օրէնս, զքրի էրքէսէթի յաղթօղ ջուջանէ, յաղթող յորդորացուցանելն · ըստ այնմ (գործոց. ժգ. 38.) * Յամէ յորմէ ոչ կարացէք օրինօքն մովսեսի արդարանալ, սովաւ ամ որ հաւատայ՝ արդարանայ: * (տես և հռոմ. ը. 2. 3:) Սոյնպէս յաղթող 'ի դատելն. ըստ բանին (եբրայ. ժ. 28. 29:) * Արհամարհեալ ուրուք զօրէնսն մովսէսի, առ երկուք կամ երիւք վկայիւք մեռանէր : Իսկ որչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն՝ որ զորդին այ առ ոտն եհար * ևն : Արդ՝ այսմ շնորհի յանցաւոր գոլով ես, որչափ պատուհաս հաս լինձ :

(6) Ուծգինս հնչէշտալ: Կաւ օրինակն այլազգ ունի. ուծգինս հնչէտալ. հրքինս ինջ յէրինէ մարտից յօրուջմանս ալթմ էն գօուշաքէտալ · չարծմանս յուղմանց ներհաքաքանաց որ յիմաս անքին ջուջանի, խառուտիւ ամէնից հարեալ ընտ մեմանս, ղէն աս սասուէր խորհրդոցն, հոյլբ ըսրեադն ընտ բարբօն : Եւ պարզելի է · ձայնք ահաւոր դատաստանին յերկնից անսի հնչեցեալք սաստիկ, արդէն գուշակեալ են կամ ծանուցեալ զկրկին պատերազմ, քի չարժմունս ներհական ամբոխմանց որք լինին 'ի հոգւի իմ. և խառնեալք ընդ միմեանս հարկանին խորհուրդք մտացս՝ իբրև զէն առ առներ, մի խորհուրդն մարանչի ը մւսոյն · մի խորհուրդն իբրև սուսեր վիրաւորել կամի, միւսն իբրև վահան կամ զրահ պաշտպանել հնարի · այսպէս մարանչին հոյլք կամ բազմութիւնք չարեացն ընդ բարեաց ևն:

(7) Մէրջ է օր տն · (ըստ յովէլ · գ · 14 ·) 'ի փոքր հավկան յոհանութեան, որ թարգմանի՝ դատաստանի այն, և հեղէղարին քեդրոնի, որ ըստ ոմանց ախորհաքրաց՝ անցանէր ընդ այն հովիտ · և էր տեղի կատարման դատաստանի և պատուհասից · որոյ այրելոյ զկուռս, ընկենլոյ անդր զպղծութիւնս տաճարին, ևն: (գ · թագ · ժե · 13 : բ · մնաց · իթ · 16 · լ · 14 :) Ուստի գոլով տեղիք մահաւոր պատուհասիցն այ, եղեն մօք հանդիսարան, տեսարանք, իրամանց ճամադրութէց, լուացի հատուցմանց՝ ըստ ժամանակին սահմանելոյ յայ · և ասին մօք, համեմատեալ առ հոգևոր պատուհասն, և առ ընդհանուր դատաստանն · զի այն մարմնաւոր պատուհասք և մահաւոր դատաստանքն՝ որ 'ի կենցաղական յաւիտենիս, զհանդերձեալսն քէրդարանէն, ձևացուցանէին: 3 օրին · քէրդարարէն : Արդ ասէ, եթէ առ յանցուցեալս 'ի հեթանոսաց սատանայ մարդարքն՝ մերձ լինել աւուր վրէժխնդրութեան, ագա նա յաւէթ մէրքէջա 'ի ղր. իմ, որ ընդ շնորհօքն մեղայ, դատողական արքայութեն այ, (ըստ բանին ղուկայ. ժ. 11.) մարմն եղէնւս, քի մերձեցելոյ կա՛մ քրի · Մեծագէս գրեալ ղիս ամէթ, գործող յանցանաց, և պարտաւոր բազում տոկոսէաց, որ 'ի շահեցմանէ պարգևացն այ · որք են զանազան մասունք ճշմարտապէս կշռամիտք՝ թան ղշէ ան նաւթն ջէրաքաջուած · քի պարգևքն այ առ իս՝ առաւել պարտաւորեն զիս քան զպահպանութիւն ձեռինն այ՝ որ առ ինէլացիս, յորժամ 'ի հարկանելն յայլևայլ ժամանակս զեղծանեցիս և զայլ հեթանոսս՝ զխորտակեալցիս պահպանէր, և նոքա ապերախտ լինէին: Կամ, մե-

ծաղկես պատժապարտ դատնիմ ես քան զվերահասութիւն պատժողական ձեռինն ածոյ 'ի հարուածս եղովմայեցւոց: Քան զի այն ընթերցուածք. վերամարմնաւոր պատուհասից նոցա, առօք լափեցաւ, ուժամանակեայ էր, այսչափ կամ այնչափ ամս. իսկ իմ պատուհաս՝ յաւիտենական է:

(8) Մարմին եղելոյ: Լաւ օրինակն, և հին լուծ. գնեն. մերձեցաւ 'ի նէ իմ արքայութեան ածոյ, մարմին եղելոյ մեծապէս. այս 'ի վէր իմ մեծապէս մարմին եղելոյս գործովք մեղաց:

(9) Այն ընթերցուածք: 'Ի լաւ օրին. այն՝ ընթերցուած առօք լափեցաւ. այս, այն պատուհաս նոցա՝ որոշեալ կամ սահմանեալ ամօք չափեցաւ:

Սերտին յաւելուած երկրին հեծութեանն՝ նորին հոգւոյ, առ նոյն տիրոջ մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ածոյ:

# ԲԱՆ. Բ.

ա. Եւ արդ՝ քանզի առ բարձրեալն ած [1] յօդաւորական շրթամբք կարդաս, որ գործովք միայն գրաւի, և ոչ ստեղծաբանութբ կաշառի, որ յեգիպտոս միշտ ունիս զսրտիդ զդարձն, զինչ օրինակ առ այս քեզ նմանագոյն և յարմարական աստանօր եդից՝ անձն իմ պարտաւոր: [2] Պատժակից կործանեցելոյն սոդոմայ. ըմբերանեալ դատախազս նինուէի. անարի բարբարոսս քան զտիկինն հարաւային. վատթարագոյնս քան զքանան. յամառեցեալս քան զամաղէկ. [3] անբժշկականս քաղաք դրօշելոց. նշմար մնացեալ ապստամբութե հինն իսրայէլի. յիշատակարան պահեալ՝ ուխտազանցութեանն յուդայ: Աշտամբեալս գեր քան զծուր. տարամերժեալս քան զծայդան. խորթաբարոյս քան զգալիլեա. աններելիս քան զանհաւանն կափառնաում. պարսաւեցեալս իբր զքորազին. բամբասեցեալս ընդ բեթսայիթայ. [4] անպարկեշտ ծաղկեցեալ այլքս եփրեմի: Ոգու աղաւնիս միշտ յիմարութբ՝ այլ ոչ հանդարտութբ. [5] 'ի կորեանց առիւծուց՝ անձնական օձս եղեռնային. կերպս ձուոց քարբից՝ լցեալ ժանտութբ. պատկերս վերջին հարուածոցն երուսաղէմի, ըստ բանին տէրունի՝ և տեսանողացն ձայնի: Տաղաւարս մերժեալ՝ հասեալ 'ի կործանումն. խորտակեալ [6] դրացս վտահարան, և կրկին ծրրդեալ շինուածս խօսուն. Թողեալ ժառանգութիս

յարմարական. մուացեալ տունս ածակերտ, ըստ
բանից նախագրեցելոցն՝ մովսեսի, դաւթայ և ե֊
րեմիայի: Յարկս բանական՝ [7] ունօղս բոլորտութե,
հարուածեալ խրատու քերմանն, օրինիւ կազդու֊
րեալ, օծեալ կաւոճն՝ ողոքական հեզութեն. անձա֊
րակ գտեալ յելս հնարից, քակտեալ վերստին ձե֊
ւամբ շինողին. արտաքս ընկեցեալ իրաւացի հա֊
տուցմամբ հրամանաւ հզօրին 'ի տեղի անսուրբ.
հերքեալ տարագրեալ խորոցաւ մեծաւ՝ ամենայնիւ
աւանց խնայելոյ: Ուածկեալ դրամս [8] յերկրի չա֊
րեօք, ըստ աւանդակորոյս ժխտողին՝ որ յաւետա֊
րանին ցուցանի:

Է. ԱՐԴ դու ած, [9] ածդ հոգւոց և ամենայն մար֊
մնոց, ըստ դաւանելոյ ածաշնորհին, երկայնամիտ և
բազումողորմ, ըստ մեծին յովնանու ձայնին, շնորհեա
կատարել 'ի քոյդ հաճունի օրհնեալդ կամաց՝ զսկզ֊
բնաւորեալ մատեան մաղթանաց այսր ողբերգու֊
թե: Եւ ընդ լալոյ սերմանել բանիս [10] 'ի նախըն֊
թաց չուս աստիճանաց՝ օթևանացս պատրաստութե,
'ի կատարածն ժամանելոյ հաւաքման հնձոցն, դար֊
ձայց բերկրեցեալ լրութք քաւութե՝ պտղոյն երա֊
նութե որայիցն բարութե: Մի տացես ինձ արգանդ
սրտի անորդի՝ իբր խորայելի, և ստինս աչաց ցամա֊
քեալս՝ ով ամենագութ: Լուր բանական մաղթո֊
ղիս՝ հզօր և ողորմած, [11] նախ քան երկնի, և եր֊
կին՝ երկրի, և նա՝ ցորենոյ և գինւոյ և ձիթոյ, և
նոքա՝ խորայելի: Եւ երկնաւորացն ազերս որ առ
քեզ՝ հոգւոյս ազդեսցէ, քան թէ տարերաց ապա֊
կանացուաց: Դու ստեղծիչ՝ և ես կաւ, բայց տարա֊
կուսելոյս 'ի մուտս մաղթանաց այսր հեծութե՝ կամս
քաղցրութեան՝ զօրանալ ասէն. զի մի 'ի բանալ
վերնայինն երկնի՝ [12] անընտիր գտեալ կրթութեան
փայելման լուսոյ, իբր զնիւթ մոմոյ սպառեցայց ջըն֊
ջեալ 'ի միջոյ: Այլ զրկելոյս, ըստ մաղթանաց գոչ֊
ման սողին, և ոյժ թալկացելոյս, և [13] կեանք մա֊
շելոյս՝ մոացս խղճիւ, այլ ոչ տաժանմամբ կրից՝
աշխատութք զքեզ խնդրելոյ. առ զաւանդ մաղթա֊
նացս, և տուր զողորմութի քո շնորհացդ. ընկալ
զփոքրս 'ի սկարես, և շնորհեա զմեծդ առ 'ի հզօ֊

րեդ. զօրացո՛ զբանս զղջման, առաքեալ 'ի մեզ հոգի 'ի բարձանց՝ մեծաշունչ պատգամօքս [14] 'ի սմա եդելոցս: Պարգևեա՛ բարերար՝ [15] զաւանդն եսայեայ լուսաւորեալ առ ճշմարտութիւն, մատուցանելով մահու արժանոյս՝ ընդ պղնձոյս գոյի անարգս ձայնի՝ [16] զոսկի քո շնորհի, ընդ անպարգաւէ երկաթոյս՝ սևութեան գունոյս՝ պղինձ պճնելի, ցոյց առաքինութեան, հրաշէկ լիբանանու: Ընդէր [17] կարծրացուցանես ըզսիրտ եղկելոյս՝ չերկնչել 'ի քէն, անճառ և ահաւոր: Մի՛ եղէց անպտուղ 'ի փոքր վաստակոյս՝ իբր ապաջան սերմանօղ անբերրի երկրի: Մի՛ լիցի ինձ [18] երկնել, և ոչ ծնանել. ողբալ, և ոչ արտասուել. խորհել, և ոչ հառաչել. ամպել, և ոչ անձրևել. ընթանալ, և ոչ հասանել. ինձ ձայնել, և քեզ ոչ լսել. պաղատիլ, և անտես մնալ. կողկողել, և ոչ ողորմել. աղաչել, և ոչ ինչ օգտել. [19] զոհել, և ոչ ճենճերել. [20] զքեզ տեսանել, և դատարկ ելանել: Լո՛ւր ինձ նախ քան զկարդալս իմ առ քեզ միայնդ հզօր. [21] մի՛ զանվճար տանջանացն տոյժս՝ ընդ թուով աւուրց մեղօք կեցելոյս չարագործիս ինձ հատուցանէր: Կեցո՛ զիս գթած. լո՛ւր ինձ ողորմած. մարդասիրեա՛ ներօղ. խնայեա՛ երկայնամիտ. պաշտպանեա՛ ապաւէն. բարերարեա՛ հզօր. ազատեա՛ ամենակալ. կենագործեա՛ նորոգօղ. վերականգնեա՛ ահաւոր. լուսաւորեա՛ երկնային. բժշկեա՛ հնարաւոր. քաւեա՛ անքննին. պարգևատրեա՛ առատ. շնորհազարդեա՛ աննախանձ. [22] հաշտեա՛ անախտակիր. ընկա՛լ անոխակալ. սրբեա՛ 'ի պարտուց օրհնեալ: Եթէ յաւեցից զաչս իմ, նայեցեալ [23] 'ի հայեցուած երկուց վտանգից յաւուր թշուառութեան, զքոյդ տեսից փըրկութիւն յոյս և խնամակալ. եթէ նկատեալ դիտեցից 'ի վեր [24] յամենագրաւ ուղին սոսկալի, հրեշտակ քո խաղաղութեան քաղցրութեամբ ինձ պատահեսցէ: Ցո՛յց ինձ տէր 'ի յելիցն աւուր շնչոյս արձակման՝ մաքրութեան ոգի, լուսով ամբարձեալ 'ի յերկնաւորացն երջանկաց՝ պարգևօք սիրոյ քոյ եկեալ հասեալ: 'Ի յարդարոցն կատարելոց՝ կարեաց ինձ կըցո՛րդ ժամանեցուցես. [25] զանակնկալն բարի՝ չարիս 'ի յուսահատութեան աւուր շնորհեսցես: Բա՛ւ լիցի

քեզ բարեբանեալ՝ որ փրկութիւն ես ամենայնի, եթէ ախտացեալս քո ոչխարի՝ գազան դժնդակ տացես ու-ղեկից. մեզօք մեռելոյս՝ անախտ կեանք. կործանե-լոյս պարտեօք՝ փրկութի։

Դ. Արդեօք մոռասցե՞ս [26] զբարերարելդ՝ ակնկալու-լութի. անտեսեսցե՞ս զգթասիրելդ՝ խնամօղ. այ-լայլեսցե՞ս զմարդասիրելդ՝ անփոփոխ. նհանջեսցե՞ս զկենագործելդ՝ անվախճան. թողուցո՞ւս զողոր-մութիդ՝ երջանիկ պտուղ։ Աղաւաղեսցե՞ս զքաղցրու-թեդ բարեշնորհ ծաղկդ. անպատուեսցե՞ս զնիւթ պանծանաց քումդ ճոխութե. յեղանակեսցե՞ս զփառս հերաց քումդ բարձրութե. ո՞չ պահեսցես զվայելչա-կան զարդ պայծառութե քումդ պսակի։ Եթէ [27] ողորմածացն է երանութի, իսկ դու ընաւ իսկ ար-քայութի լցեալ փափաքմամբ, ո՞չ զբոլորն պարգեւես-ցես փրկութի. ո՞չ մատուցանիցես դեղ վիրացս. ո՞չ ապեղանիս՝ խոցուածոյս. ո՞չ դարման՝ տկարութես. ո՞չ ծագեսցես լոյս 'ի խաւարի՝ յուսացելոյս 'ի քո զօ-րութիդ՝ կենաց պարգեւդ տխեղերաց։ Որ միայնդ ունիս փառս [28] ինքնութեամբ իսկութբ և յարակայ մշտնջենաւորութբ. վկայեալ 'ի բնաւից. օրհնեալ և փառաւորեալ յերկս յաւիտեանս, և անդր քան զպայման սահմանի իմանալեայն յաւիտենից. ամէն։

---

(1) Յօդաւորական շրթամբք։ Թ՛ մարմնական շրթամբք կը՛ բերանով միայն դոչես առ Ած. (Ե՛ Եսայ. ԻԹ. 13։) * Ճողոմլութդս այս շրթամբք պա-տուէ զիս։ * Իսկ Ած բարի գործովք միայն փառաւորի, շահեցեալ լինի, կը՛ հաշտի, և ո՛չ աւելորդաբանութբ, որպէսզի բանիւք ճարտարութե կաշա-ռի իբրև զմարդկային դատաւորս կը՛ իշխանս. Ե՛ այնմ, (Ա. Կորն. Դ. 20.) * Ո՛չ եթէ բանիւք է արքայութի Այ, այլ զօրութբ։ * Արդ՝ որովհետև դու այսպէս բանիւք միայն կարդաս առ Ած, զխրատ ունելով յեղխա-ռոս աշխարհի, զի՞ր յարմար նմանութիւն եղից են։

(2) Պատճառակից հրաժարեցելոյն։ Որպէս կինն Ղովտայ՝ թէ և ելեալ 'ի սա-դումից, սակայն եղև հաղորդ պատուհասի սոդոմայեցւոց՝ վասն յետս հայելոյն, այսպէս և ես ելեալ յաշխարհէ, բայց 'ի սէր աշխարհային դառնալով, դատիմ պատժակից աշխարհականաց։ Ըմբերանեալ պապա-խան։ Դատապարտ լինիմ չարագործաց, որպէս եղև Յովնան նինուէա-ցւոց, զարժանահաս կործանումն նոցա գուշակելով, և 'ի չպատուհա-սել զնոսա Այ, զարմանալով խնն ոչ թէ զչարէր. բայց լուեալ յԱյ զկրաւունս ներողուէն, լռեաց, և անդէն կնքեաց զդէր մարգարէութե իւրոյ։ Այսպէս և ես՝ սաէ, ընդէմ չարագործաց անպատուհաս մնա-ցելոց վրէժխնդիր լինիմ, բայց յանդիմանեալ պապանձիմ։ Անարի բար-բարոս. երկչոտ, անճարակ. կամ բիրտ, վայրենի օտարազգիս, որ ան-

համարձակ եմ 'ի դժուարին գործս , կի՛ 'ի լսել զբանն ա՛յ ․ ուր ակնկալեն սարսափ յանձն առ զդժուարութիւն Ճանապարհաց 'ի լսել զխստութիւն սրտմտին , և եցոյց զաշխատակամութիւն բարուց :

(3) Անբժշկելի վէրք : Հին լուծ ․ խնամոց զբաղմանց՝ յորս եղեն զօրութիւնք Քո՛ի , և ոչ հաւատացին : Սակայն զայնոսիկ ասորէ առանձինն յիշէ ո՛ր վրդովեն , զգայլէս , զկափառնաում , ևն : Դարձեալ , խնամոց զեկեմ , որում ա՛ծ էր պահապան , և հրեշտ զպատկերս կռոց զլոջէին 'ի պարիսպն : Բայց սաստ է և այս ․ այլ խնամի ասա բարկութ ա՛յ բանին ( երեմ ․ ծա ․ թ ․ ) * Բժշկեցաք զբաբելոն , և ոչ բժշկեցաւ :|| 'ի նմա էին գրոշեալք չաստուածոց ․ իսկ 'ի յիս՝ մեղք և արիւնք : Նշմար հագեալ : Ձբան երեմ ․ ( դ ․ 11 ․ ) * Արդարացոյց զանձն իւր ապստամբութեն իէլի || ևն յարմարելով յանձն իւր ասէ : Հինն իէլ ապստամբեալն յա՛յ պատուհասեցաւ , ջնջեցաւ ․ իսկ ես մնացի նշմար , կի՛ շոշորդ նորա ապստամբութեն , սատարանելով 'ի քէն : Նոյնպէս ուխտազանցութե յուդայի եղէ յիշատակարան ․ ես խմով գործովք ցուցի թէ որքա՛ն լինի ապստամբել յա՛յ , և ուխտազանց գտանիլ , նոքա իէլեանք և յուդայեանք 'ի յիս երեւին այժմ իբրև 'ի մնացուած իւրեանց և ժառանգ չարութեն ․ ես գրեալս 'ի նոր իէլ՝ եղէ հնոյն իէլի հետեւող և նախանձաւոր , 'ի նոցա պատուհասիցն ոչ խրատեալ :

(4) Անդարմանս ծաղկեցեաւ : 'ի մի օրին ․ և 'ի հին լուծ ․ անդարմանս ․ և մարթ է առնուլ իբրև մակբայ՝ անպարկեշտաբար , կի՛ անամօթութբ ծաղկեալ ակերս մօրուաց կի՛ գլխոյ : Ըստ բան ովսեայ ․ ( է ․ թ ․ ) 'ի յանգիտութիւն եփրեմայ կի՛ իէլի ․ որ ծերացաւ 'ի գիտութե օրինաց , յամպարշտութե , և 'ի վայելուչս բազմապատիկ խնամոցն ա՛յ ․ և սակայն անամօթեալ զգործ մանկութեն առնէր՝ կռապաշտութբ և արհամարհութբ բարեացն ա՛յ : Այսպէս և ես ասէ՝ հնացեալ յամպարշտութե և 'ի վայելուչս շնորհաց , գտանեմ 'ի չար կամս անձին անամօթաբար : Ովսեայ բան է և յաջորդն , Աղբն աղաւնի ․ իբ մեղմաբարոյ աղաւնի , բայց յանզգայութէ , և ոչ 'ի բանաւոր հանդարտութէ :

(5) 'ի կորեանց աշխարհաց : 'ի ո՛ր և յաւուրքնի որանց ելի ես անմիաբան , բանական օձս էշխանայն , յոյժ չար և մնասակար : Յարմարէ զբանն ( եսայ ․ Է ․ 6 ․ ) * Կորիւն աւխծու , և 'ի նոցանէն իժք : * որ ո՛ր դրոյն յայլ մեռ հայի : Սոյնպէս յաջորդն , կերպս հարց : ( եսայ ․ ծթ ․ 5 ․ ) նմանութե ձուոց քարբից , որ արտաքուստ ուտելի կարծիմ , և 'ի ներքս լի եմ ժանտ թունով մեղաց :

(6) Դրոշմ կնքահարան : փականք , և այլ ամրութիւնք դրան : դուռն 'ի մեղ զգայութիւնքն ․ և փականք՝ երկիւղն ա՛յ , զոր խորտակեցի ասէ : Կրկին ծրարեալ ․ յետ առաջին որբութեն՝ վերստին ներկեալ կամ աղտորեալ մեղօք չնուածս բանական :

(7) Ոսկեղէն բաժակաւորէ : Յանձն առակէ զգրեալն ( ղևտ ․ ժդ ․ 34 ․ ) յաղագս բորոտութեան տան ․ որ ո՛ր քաջ մեկնչաց՝ էր մաշումն և ապականութիւն որմոց և քարանց՝ ներգործեալ 'ի խոնաւութե և յորդանց կերողաց ․ զորս ո՛ր օրինաց սպառ էր քերել , և այլ քարինս դնել , և այլ հողով կամ կաւով ծեփել ․ և եթէ դարձեալ երևեսցի , 'ի հիմանց քակել զտունն , և արկանել 'ի տեղի անո՛ր : Սոյնպէս ես ասէ՝ բանական տունս՝ բորոտեալ մեղօք , քերեցայ խրատու ապաշխարութե , հաստատեցայ օրինիւ աւետարանին , ծեփեցայ հեզ վարդապետութբ իբրև կաւով ․ և սակայն անբժշկելի մնացեալ , ընկենլոց եմ ը՛ անապաշխարս 'ի դժոխս : Հին լծ ․ զասելն՝ կասոս ողոքական , մեկնէ՝ թէ քահանայն որտասուօք կաւ առնէր , և այնու օծանէր զորմն : Հրէական զրոյց է անհիմն ․

(8) **Ցէրէկէ ււրէօփ** . 3 օրին . **ււրէւոյ** : Եղէ՝ ասէ , իբրև զուարճացն տուէլ 'ի մնէ սպախտաւոր ծառային . զի փոխանակ յարգելոյ զնա 'ի շահս բարեգործութե , ծածկեցի թաքուցի յերկրաւոր իրս չար գործովք . կամ ծածկեցի յերկրի ախտից և մոլութեց . Նմանեալ **ււււնտււկւրւյս ծէփււէն** , որ որում յաւետարանին ցուցանի առակաւ : ( Մատ . իե . 48 . 24 : ) Յանդուգն և անկիրթ թշնամանք նորա՝ որով զՏր իւր կոչեաց խիստ և պահանջօղ , էր արդարև ժխտել , ուրանալ զքաղցրութիւն Տն . ուստի արժանի եղև կորուսանել ոչ միայն զշահն , այլև զաւանդեալ տաղանդն :

(9) **ԱՀՏր Հոգւոյ** : Բանն մոլեկնի , ( Թուոց . ժէ . 22 : ) **Լււ Տււււ նէլոյ ամծաշնորհէն** , այլ օրին . և հին լուծ , **ււււնէլոյ** , որ ոչ թափուղիղ : ամծաշնորհ ասի մոլեկս , իր ամծային շնորհօք պայծառացեալ , կամ բառ հին լուծ . ամծ կարգեալ փարատնի : որ **ււէյն յււէււււ** , մի օրին . **յււհււն նււււ** . զոր և գնէ հին լուծ . և բերէ զաւանդութիւնն՝ թէ ոչն յոլհաննէս աղօթեաց զյաջողել հոգւոյն սէր 'ի դրել զաւետարանն : Այնպէս և սրբ խնդրէ ասէ՝ զկատարումն դրոցս որ կամացն էր : Սակայն առ **յււէււււ** ասելն ուղիղ է . զի յիշատակի այս վն բանին , **Էրկւյնւմփ Ն Բււ ււււււււ** , որ է ձայն յոյժանու . գ . 2 . Յետ խստովանելոյ զողորմելի վիճակ անձինն , գայ 'ի յուսադրական բանս : Ես արդարև այնպէս անպիտանացայ ասէ , յանցեայ , մերժելի գտայ : Բայց դու միշտ նոյն Ած ես , արարիչ հոգւոց և մարմնոց . չկամիս կորուսանել զոր արարեր : Ուստի երկայնամիտ լինիս առ դարձ մեր . և զբազում ողորմութիւնդ ցուցանես 'ի ներել յանցաւորաց : Վասն որոյ աղաչեմ , շնորհեա 'ի հաճոյս քո կատարել զսկսեալ գիրս աղօթից . գոնէ ողբերգութե իմ ընդունելի քեզ լիցի . որովհետև ոչ լոկ մելանաւ կամ սևակաւ գրեմ զմաղթանքս , այլև լալով սերմանեմ զնս :

(10) **'Ի Նււխրնէււյ ււււ** : Զղջմամբ սերմանելով զբանս՝ յառաջին գրնոցս աղօթիցս , որ որս իբրև ընդ առաջնակ եղանելով մտանելոց եմ յօթեանս անախտութե , 'ի քաղելն զպտուղ աղօթիցս՝ դարձեայց բերկրեալ **ւրււէֆ փււււէֆ** , լսելով զքաւութիւն մեղացս , կամ կատարեալ քաւութբ . մի օրին . **Ււււէֆ** : Հայի 'ի բան սաղմ . ճիե . 6 :

(11) **Նււխ տւն Էրկնի** : Ի բանն ոսկեայ . ( բ . 21 . ) ուր որ ճառին ասելն ' Լուայց ես երկնից , ' խմնի՝ քաղցր արարից զազդեցութիւն երկնից՝ անպտուղ և անձրևօք և ջերմութբ . որով երկինք բարւոք ներգործեսցեն յերկիր . և երկիր արդիւնաբեր լիցի , և արդիւնք առատութբ հաճեցուսցեն զկարօտեալ : Այսու օրինակաւ բնական պահանջումն և կարօտութիւն իւրաքանչիւր իրացդ՝ համարի իբր խնդրուածք . զի մարդ ցանկայ առատ արմտեաց . և արմտիք՝ պարարտութե երկրի . և երկիր՝ բարեխառնութե օդոց . և օդք կամ երկինք՝ քաղցր մատակարարութե այ : Այսմ նման է զաքար , բ . 12 . ' Այլ ցուցից խաղաղութի . այգի տացէ զպտուղ իւր . և երկիր տացէ զարմտիս իւր . և երկինք տացեն զցօղ իւրեանց . և ժառանգեցուցից || են : Այդ՝ նախ ինձ բանական մաղթողս ընդ ասէ , որ վն հոգևոր կարօտութեանս հայցեմ , քան թէ տարերացդ 'ի պէտս մարմնոյս : 'Ի բանն ոսկեայ գնի **յէււրւյէււէ** . որ գոլով ալեքսանդրոս թագաւորացն ինքն , խմնի փոխանակ համօրէն հրէական ազգին . վն այն և սրբ գնէ՝ **Էււրւյէււէ** : Թող զի և օրինակ ինչ եօթանասնից 'ի բնագրին ոսկեայ գնէ **ԷէււԷ** : **Եււ Էրկնււււրւյն ււէրււ** : Ոմանք խմացան զբան ( զաքար . ա . 12 : ) ' Մինչև յերբ ոչ ողորմեսցիս 'ի վն եհմ : Բայց ըստ կարգի բանիս հայի առ ոսկեակն , ուր զասելն՝ Լուայց ես երկնից՝ խորհրդաբար խմնայ նր վրդպսա , ( որ նաև կիւրեղ և օգոստինոս , ) 'ի վն հրեշտակաց մատակարարաց աշխարհի , որք զերկրի շինու-

թիւն խնդրեն . վն որոյ նոցա խնդրուածք տուէ՝ առաւել ինձ օգտեսցեն, քան թէ ապականացու տարերաց :

(12) [illegible] : Խոտան եղեալ 'ի տացուածն երկնային լուսոյն . կամ, անընտրօղ, անծանօթ 'ի վարժուածն հոգևոր լուսոյն : Կամ [illegible], խմանի անփորձ, ոչ ընտրեալ հրով . և թուի առնուլ ըսելեայն զնմանութիւն կաւոյն, զի որում նախ առաջ, թէ դու առեղծիչ կամ ձևացուցիչ իմ ես՝ իբրև կաւոյ . զօրացո այնուհետև զիս իբրև կաւ թրծեալ . զի մի դուցէ 'ի յայանիկքս անփորձ լինելով, և ոչ առկալով ծագման լուսոյն, հալեցիմ լուծանեցիմ իբրև զմոմ, որպէս անթուրծ կաւն լուծանի և քայքայի :

(13) [illegible] : Դու կեանք ես մաշեցելոյս ինձ, որ մաշեալս եմ 'ի մտացս խղճէ, [illegible], և ոչ եթէ 'ի ստամանելի աշխատութէ խնդրելոյս զքեզ : Հին լծ . խմանայ, և ոչ մեծաւ ստաժանմամբ կարեմ թողութիւն գտանել : Բայց ոչ յարմարի ոչ յանցեալ բառն, և ոչ յընթացս բանիցս, ուր մանաւանդ գլխաւորութիւն իւր կրկնէ : [illegible], ընկալ զընծայ մաղթանացս, և տուր զողորմութիւն [illegible], զձրի պարգև շնորհացդ . կամ փոխադրութեամբ հոլովոյ, զի զշնորհս ողորմութե քո : Արդարև մատուցանեմ քեզ տուէ՝ զընծայ աղօթիցս, բայց այսու ոչ իբրև պարտապան տաս ինձ փոխարէն . այլ 'ի քումն առատութէդ ձրի տաս ողորմելով . քանզի և հաճոյական մաղթանքս 'ի քէն աւանդեալ է ինձ, և իբր քև մատուցեալ՝ ընդունելի քեզ լինի . ուստի շնորհ է ինձ մաղթելս, շնորհ է ընդունելդ, և շնորհ փոխանակ շնորհի է՝ կատարելդ զհայցուածս իմ :

(14) [illegible] : ածական է բառին [illegible], փոխանակ ասելոյ՝ [illegible], որպէս և 'ի բանն ժԳ . 2 . տուն, " Ո՛չ մատանիքն տատանելոց . " զի տատանելովք : ունի վասն այսր յընդարձակ Վերական . երես 373 : Կամ . թերևս սեռական յատկացուցիչ խմանայցէ աք, զի պատգամօք 'ի սմա եղելոց կամ յիշատակելոց արանց մարգարէից և առաքելոց : Արդ տուէ . զօրացո, զի աղդ՛ց սրա զբանքս զղջման, ապաւորելով 'ի նո և 'ի մեզ շնոգի վերին շնորհացդ 'ի ձեռն ածաշունչ բանիցն՝ զորս աստանօր յիշատակեցի :

(15) [illegible] : Հին լուծ . հայելով 'ի բառն՝ [illegible], կարծէ յիշել զբանն, ( 'ի գլ . Կ . 1 . ) " Լուսաւորեա լուսաւորեա Եմ : " Բայց հեռի է . զի այն բառք նշանակեն, 'ի ճշմարտին կամ 'ի բուն իրն փոխելով ճշմարտեա՛ զատակւոր և զօրինակական բանն եսայեայ, ( 'ի նոյն գլ . 17 . ) " Փոխանակ պղնձոյն բերից քեզ զոսկի, " եւն . մատուցանելով փոխանակ ձայնի աղօթիցս՝ որ անարգ է իբրև զպղինձ, զոսկի շնորհիդ . և փոխանակ երկաթանման սեւութեան ախտից՝ տալով զառաքինութիւնս . որոց ցոյցք կամ օրինակ է փայլուն պղինձն, [illegible], հրադոյն, կամ ըստ հին լծ . 'ի հուր շիկացեալ և կարմրացեալ : Իսկ [illegible] ասելն՝ կամ ըստ նշանակուէն դնի, զի պայծառ, փայլուն . զի այնպէս թարգմանի . և կամ զի 'ի լիբանանէ ելանէր պղինձ ազնիւ, զի բանին ( Բ . օրինաց . Ը . 9 . ) " 'Ի լերանց նորա հատանիցես պղինձ . " զոր մեկնիչք խմանան զլերանց լիբանանու : Հոմերոս՝ վն սիդոնի որ մերձ է 'ի լիբանան, տուէ՝ առատացեալ պղնձով : Այս սիդոն վիճակեցաւ ցեղին ասերայ, որում յօրհնութիւնն տուէ մովսէս . ( Բ . օրին . ԼԲ . 25 . ) " Երկաթ և պղինձ եղիցին կօշիկք նորա : " Հին լուծ . զասելն՝ [illegible], խմանայ, 'ի նմանութե առաքինեաց վառեալ զծուլութիւնս իմ իբրև զպղինձ . բայց մեր եղեալս է ըստ կարգի բանին :

(16) [illegible] : 2 օրին . [illegible] :

(17) Կարծրացուցանէ սիրտ ։ Եսայ. ԾԳ. 17 ։ Կարծրացուցանել կամ խստացուցանել զսիրտ մարդոյ՝ իմանի չտալ զլոյս մտաց և զփղձուկ սրտի առ 'ի զղջանալ և խորշել 'ի չարէ մեղաց և պատժոյն ։ կամ, իմանի արգելուլ զշնորհսն՝ որք հարկաւորք են 'ի լուծանել զխստութն սրտի ։

(18) Երկնելն ուղղութեան ։ Յայտնի բանս այլևայլ օրինակաւ զմի ինչ յայտ առնէ, որ թէ 'ի գրելս իմ և յաղօթել զղջական բանքս՝ որք են սկիզբն դարձի և ուղղութեան իմոյ, մի՛ եղէց զուրկ 'ի կատարմանէն ։ Ինչ ձայնել, և գեղ ուղել . իմա՛ զձայնելն բերանով միայն և անպտուղ յօժարութբ ։ Այս թէ ոչ՝ ճշմարիտ սրտիւ ձայնելն, աղաչելն, կոչկոճելն՝ ոչ երբէք անսես լինին յԱյ . մանաւանդ թէ այնպիսւոյն յառաջքան զձայնելն լսէ Տր . որպէս ասի Եսայ, ԿԵ . 24 . ամն առաջի քր վաղվաղա իսկ ասէ, Լուր ինչ նախ քան զկարդալդ իմ, ևն ։

(19) Զահել, և ուշնչեղել ։ Հայի 'ի բանն Տն, Թագաւ . Բ . 15 . 16 . ուր ցուցանի անկատար լինել զոհին առանց ձենձերելոյ . յորմէ եղև առ վլութիւն ասել . ձենձերեսցի զոհ քո . ( Տ . Թագա . ԻԶ . 19 . ) որ կատարեալ և ընդունելի լիցի ։

(20) Զգեղ փեսանէլ, 'ի խորհուրդ պատարագին, 'ի ձև խաչին, և 'ի պատկերս . կամ, զաչօք տեսանելն զՔս ասէ . զորմէ տես 'ի բանն ԻԷ . լուծ . 16 ։

(21) Ար է զանգմար քանչանայն ։ Աի զգաւառնական պատուհասն հատուցանէր ժամանակաւ մեղուցելոյս, որ թէպէտ և արդար է առ ծանրութիւն մեղացս, բայց և դառն է 'ի կրել . զի սաստիկ է, և ոչ վճարէ ։

(22) Հայրենի անոխակալէր ։ որ անբարկացող, անոխակալ . Արքեա 'ի դարձ քայ ։ 2 օրին . 'ի դարպեայ ։

(23) 'Ի հայեցուածս երկուց կորստեայ ։ որ մահուան մարմնոյ, և դատապարտութեան հոգւոյ ։ կամ, պատժոյ վնասուն, որ է զրկումն յամէ բարեաց՝ և մանաւանդ յԱյ, և պատժոյ զգայութեան, որ է տանջումն ամէ չարեաց գեհենին ։

(24) Յանձնագրեալ ուղին ։ Հին լուծ . իմանայ զՃանապարհ մահուն . բայց այն ոչ ասի՝ 'ի վեր ։ Այլ իմանալի է օդն, Է որ ամենեցուն հոգին անցանեն, և յօդային այսոց պատերազմեալ լինին . ամ ցուցաւ Տր հօրն մերոյ անտոնի, և տեսաւ յարքայն մարկոս, և յայլս ։ Արդ՝ Է այս Ճանապարհ ասէ՝ որ զամենեցուն հոգիս գրաւէ, փոխանակ դիւաց՝ հրեշտակ խաղաղութեն ինձ պատահեսցէ ։ 'Ի սոյն միտս և յաջորդն, Ցոյց ինչ, յաւուր մահուան իմոյ առաջնորդ զհոգի Տր կամ մաքուր, լուսով և ոչ բարկուէ առաքեցեալ յերկնաւորացն հրեշտակաց, և զպարգևս սիրոյ՝ զաւետիս փրկութե բերելով առիս ։

(25) Զանախնկան բարի, զփրկութիւնն, զարքայութիւնն՝ որում 'ի գործոց իմոց ոչ ակնունիմ, ինձ չարիս շնորհեսցես 'ի յատահաքան տար . 'ի ժամ մահուն, կամ 'ի դատաստանին՝ յորժամ չէք յոյս յանձնէ իմմէ ։

(26) Մատուցին զբարերարէսս ։ Այս և 'ի հետևեալն եղանակաւ հարցուածոյ պաղատելն ոչ եթէ զտարակոյս ինչ կամ զերկբայութիւն նշանակէ, որպէս թէ հնար իցէ մոռանալ Այ զբարերարելն, այլայլել կամ անտեսել զմարդասիրելն ևն . այլ մանաւանդ զանհնարութիւն իրին յայտ առնէ, և այնու Թախանձէ՝ զգութն Տծային ժուժելով . իբրև ասել . գիտեմ Տէր, զի անհնար է քեզ մոռանալ զբարերարելն ևն ։ Ընանջէլ . խափանել կամ դադարեցուցանել զկենդարծելդ ։ Անգաղէլ, ոչ խանգարես, ոչ Թառամեցուցանես զքաղցրութիւնդ, որիբր ծաղիկ գեղեցիկ անուշահոտ՝ զարդ է քեզ, և զմայլեցուցիչ ոգւոց մերոց . ոչ անպատիւ առնես զգթութիւնդ՝ որ է պարծանք քոյոյ մեծութե ։ Ու յեղանակէս, ոչ փոփոխես զգեստ հերաց, հերք կամ վարսք՝ փառք են գլխոյ,

և ալիք՝ դիմաց․ այսպէս Այ փառք՝ ողորմութիւնն, երկայնմտութին և հայրախնամ տեսչութիւնն ։ 'Ի սոյն խորհուրդ՝ գլուխ նորա և հերք իբր ասր սպիտակ երևէին 'ի տեսլեան Յովհաննու․ ա․ 14 ։

(27) ԵԹԷ ՈՂՈՐՄԱԾԱՅՆ Է ։ Աղէրս է առ Այ՝ կարի բանադատիչ ըստ օրինակի քանանացւոյն, նովին իսկ Քրիստոսի բանիւ զնա ժուժկալ ։ Դու որ հրամայեցեր՝ երանի տալով ողորմածաց․ և ես աղա քոյովդ զքեզ թախանձեմ, և խօսիմ իրաւունս ։ Եթէ չափաւոր ողորմածն երանելի է, եթէ փոքր ողորմութիւնն է ցոյց և արդիւն երջանիկ հոգւոյ, ապա դու որ բուն իսկ երանութիւն ես և երանացուցիչ, որչափ ևս ունիս առատանալ յողորմութիւն․ զի՞ որ բոլոր երանութիւն, ապա և բոլոր ողորմութիւն․ դու արքայութիւն լի զմայլմամբ՝ ցանկաս տակաւին, զի մարդ առ մարդ ողորմած լինիցի, կարօտեալ առ կարօտեալ ։ Ապա անկարօտ դու՝ զիա՞րդ ոչ աղբերացուցանես զքո զողորմութիւն ։

(28) ԻՆՔՆՈՒԹԲ ԷՈՒԹԲ ։ Դու միայն ունիս փառս 'ի քէն, ինքնին 'ի քո բնութէ, ճշմարտութբ, անկարօտ արտաքին ստացական և աւերելոյթ փառաց․ և այն՝ անփոփոխման ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ։ 2 օրին․ ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐԱԲԱՐ․ և մարթ է պարզել, 'ի յարակայ մշտնջենաւորութիւն, որ յանփոփոխման յաւիտեան ։ Փառք քո ո՛չ յայլմէ սկսանին, ո՛չ ինքնին նուազին բնաւ, ոչ ժամանակաւ չափին ։ Այսպէս վկայեալ ես յամենեցունց՝ որք դաւանեն զքեզ Այ ճշմարիտ․ այսպէս ամ արարածք՝ թէև անցաւորք, վկայեն թէ դու մշտնջենաւոր ես, փառաւորեալ ՅԵՐԿՐԻ ՅԱՒԻՏԵԱՆՍ․ ըստ յանցեալ ժամանակին, 'ի ներկայս և յապառնին ։ ԵՒ ԱՆԴՐ ՆԱ ՏԱՆ ԸՂՁԱՅՄԱՆ, յետոյ ևս քան զմշտնջենաւորութիւնն, որ է յաւիտեան իմանալեացն հոգեղինաց․ կամ անդր ևս քան զսահման հանդերձեալ յաւիտենին, որ է հոգևոր և իմանալի ։ Աստ կամի, համօրէն արարածք յիրաքանչիւր կարգի և 'ի տեղութե՝ անբանքն փառաւորեն զքեզ վկայելովք բնութե․ և խօսականքն՝ բանիւ ևս, թէ մեք անցաւորք եմք, և դու մշտակայ․ մեք թէ և յարատևակք լիցիմք, բայց կարեմք դառնալ յանգոյութիւն․ իսկ քեզ նուազել անհնար է․ դու կաս և մնաս, թէպէտև երկինք և երկիր անցանիցեն․ որպէս և էիրդ իսկ՝ մինչ նոքա ոչ գոյին ։

---

ՄԵՐՈՅԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԷՆ ՀԵԾԱՒԷ՝ ՆՈՐԷՆ ՀԱՒՃՈՊԷ, ԱՌ ՆՈՅՆ ԱՂԷՐՍ ՄԱՂԲԱՆՈՑ ԲԱՆԷ ։

'Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ՝ ԸՆԴ ԱՅ ։

# Բ․ Մ․Ն․ Գ․

ա․ Տէր իմ տէր, տուիչ պարգևաց․ ինքնաբուն բարի,[1] ամենից տիրող հաւասարապէս․ միայն արարիչ զէնաւս յոչէից․ փառաւորեալ․ անքննին․ ահեղ․ ահարկու․ սոսկալի․ հզօր․ սաստիկ․ անտանելի․ անմերձենալի․ անըմբռնելի․ անիմանալի․ անճառելի․ անտեսանելի․ անզննելի․ անշօշափելի․ անորոնելի․ անսկիզբն․ անժամանակ ։ 2 Անշամանդաղ գիտութի․ աներկևան տեսութի․ Ճշմարիտ եակա-

նութի · բարձր՝ և խոնարհ · ³ օրհնաբանեալ գոյու-
թի · անստուեր ծագումն · ամենափայլ ճառագայթ · ⁴
խոստովանեալ լոյս · անտարակոյս վստահութի · ան-
տարտամ հանգիստ · ⁵ անյեղլի կնիք · անսահմանե-
լի տեսիլ · ⁶ վկայեալ անուն · ճաշակ քաղցրութե ·
բաժակ բերկրութե · հաստիչ հոգւոց հաց · ⁷ օտար
մթութեց սէր · աներկբայ խոստումն · ծածկոյթ ցան-
կալի · զգեստ անկապուտ · օթոց բաղձալի · զարդ
փառաց · ձեռընկալու մեծ · ապաւէն գովեալ · ան-
նուազելի շնորհ · անպակասելի գանձ · անապական
անձրև · ⁸ արփիացնցուղ ցօղ · ⁹ ամենատեղաց դեղ · ձրի
բժշկութի · կրկնաձիր առողջութի · վեհագոյն խրա-
խոյս · ¹⁰ անպատիր կոչումն · համօրէն աւետիս · սրբ-
կամեծար թագաւոր · աղքատասէր պաշտպան · միշ-
տահարուստ տուիչ · ¹¹ անխափան դիմեցումն · աննա-
հանջելի հրաման · ¹² անհամառօտ յոյս · երկար տե-
սողութի · անզղջական տուր · ամենաբաշխ աջ · ար-
դարակշիռ ձեռն · անաչառատես ակն ։ Մխիթարու-
թե ձայն · սփոփանաց լուր · բերկրութե բերումն · ¹³
անուն կենդանի · նախախնամօղ մատն · անգայթագ-
ղելի ելք · անխարդախ ընթացք · կենդանարար
կամք · ¹⁴ աննենգելի խրատ · աննախանձ պատիւ · ¹⁵
լայնական հնարք · անձկական պայման · անդատանելի
հետք · աներևոյթ շաւիղ · ¹⁶ անչափագիր պատկեր ·
որքանութի անսահման · աննմանական տիպ · անզու-
գական գութ · ողորմութի բազմազեղ · ¹⁷ խոնարհու-
թի տօնելի · համբոյր փրկական ։ Եւ ես քան զայս ¹⁸
ազդմունք վայելչականք՝ ածութեդ նուիրելիք · օրհ-
նեալ · գովեալ · բարեբանեալ · քարոզեալ · աւետա-
րանեալ · հռչակեալ · հնչեցեալ · պատմեալ · ¹⁹ անխա-
բելի կամօք աղաչեալ · և որ ինչ առ մեզ բերին առ
'ի քէն՝ հոսմունք քաղցրութե, զոր հանդերձելոցն ճա-
ւից լուսաբանեն կերպաւորութիք · որով զուարթ
ցուցանիս 'ի փրկութին իմ՝ երանութի, իբր 'ի պա-
րարտութենէ իմքէ՝ ախորժ տենչանօք լցեալ · զի
ոչ իմիք ինչ մնոտիապատուաստ փառատրիս եր-
գով, այլ զի պատճառ ինն առցես գթոյդ աւելի՝
մեծիդ փրկանաց ։

Է · Եւ քանզի առ ամ հասակ տնկեցեալ յերկրի

ազգ բանականաց՝ այս պատուէր նկարագրական նորոգ մատենի ողբոց նուագի, որ զամենեցունց ունի զկիրս պատահմանց՝ նշաւակեալ յիւրում պատկերի, [20] իբր կցորդ մեծգիտակական կարեաց համայնից, առ բոլոր գումարս բազմահոլով տիեզերակոյտ քրիստոնէից ։ Առ նախնի ժամն ժամանողաց, և առ երկրորդ կոչեցեալ չափու արբունն․ առ որ ՚ի կատարած աւուրն կալեալ՝ սակաւաձեռն ծերութեն․ առ պարտաւորս, և արդարս․ [21] առ ինքնարդոյ բարձրայօնն, և սխալեալ անձնադատ գտեալն․ առ բարիմն, և եղեռնագործս․ առ նկունս, և առ արիս․ առ սորուկս և ներքոյանկեալս, առ սեպուհս և դերաշխարհիկս ։ [22] Միջակայնոց՝ և պայազատաց․ շինականաց՝ և տոհմականաց․ արուաց և իգաց․ հրամայողաց և հնազանդելոց․ դեր ելոց և նուաստից․ վեհից և փոքունց․ պատուականաց և ռամկաց․ ձիավարժից և սոսկականաց․ քաղաքականաց և գեղջկաց․ արքայից գոռոզութեց՝ ՚ի սանձս ահաւորին ըմբռնեցելոց ։ Միայնացելոց՝ վերնականացն խօսակցաց․ մաքրականաց [23] տիրանուէր զգաստուեց․ քահանայական՝ երջանկակրօն ընտրութեց․ այցելութեց՝ բարեզգեստից դիտողութեց․ աթոռակալուեց նախագահից՝ սրբանուէր տեսողուեց․ որոց ոմանց աղերս աղաչանաց, և ոմանց խրատ բարեաց՝ առ դէմս աղօթից այսու մատենիւ մատակարարեցի, ձեռնարկեալ հոգւոյդ զօրութեամբ՝ կարգել ինձ մաղթանս բազմադիմիս, և ամենեցուն սոցին խնդրուածս՝ գրթութեան մեծիդ յանդիման լինել սովաւ համապաղ ։

Է․ Եւ արասցես զսոյն ընթերցողայն ՚ի սիրտս յուտակս՝ բժշկութի հոգւոց, և մաքրութի յանցանաց․ թողութի պարտուց, և արձակուրդ մեղաց կապանաց ։ Եղիցի բղխումն արտասուաց՝ սովաւ վարժելոցն, և պարգևեալ տացի ՚ի ձեռն սորին ապաշաւըղձից ։ Ընորհեսցի տէր և ինձ ը նսօսին առ ՚ի քէն՝ զղջումն կամաց․ և նոցա իմսվս ձայնիւ [24] շունչս բարեհամբոյրս․ նուիրեսցի վասն իմ այսու մատենիւ պաղատանք նոցին, և բանիւս այսու [25] հեծուեք նոցին ընդ իմ ինկեցըին ։ [26] Ընդ համբոյր Ճաշակման

այսր ողբերգուե̃, շնորհ լուսոյ քոյ մտեալ բնակես-
ցէ. 27 Եթէ ելցեն ինձ բարեպարիշտք ընծայիւ սո-
վաւ, ընկալ կենդանեօքն վ̃ քո դրթած եւ զիս ընդ-
նոսին. Եթէ 28 ախտս ինչ սրբանուէրս կաթուածոց
աչաց սովլիմբ բերիցի, եղիցի 'ի քեն խնամակալ՝ եւ
յիս անձրեւեալ. 29 Եթէ գրեսցի եւ 'ի փրկութի̃ կար-
գեսցի՝ հաղորդելոցն յայս կիրս կենաց, արասցես կա-
մաւ քո օրհնեալ՝ եւ ինձ համարեալ. Եթէ հեծութի̃ս
ա̃ծահաճոյս 'ի ձեռն այսր բանի՝ 'ի գաղտնեաց ու-
րուք յառաջ եկեսցէ, օգտեցայց քեւ բարձրեալ՝ եւ 30
ես ընդ նմին 31. Եթէ ձեռն մաքուր՝ խնկով հանդեր-
ձեալ առ քեզ համբարձցի, հասցէ միասցի ընդ իմս
ձայնի եւ աղաչողայն աղերս՝ յառաջ մատուցեալ.
Եթէ պաղատանս 32 բազմադիմիս ընդ իմս երկնես-
ցի, լիցի եւ ինձ քեւ՝ եւ վասն սորին կրկին նուիրեալ.
Եթէ յարգեսցի 33 այս անձին բանի պատարագ՝ քեզ
'ի հաճու̃թ, նախայլոցն ընդ իս քեւ ընծայեսցի. Եթէ
'ի տխրանաց ինչ ձանձրութէ̃ ոք նուաղեսցի, կանգ-
նեսցի վերստին հաստարանաւ այս հառաչանաց՝ 'ի
քեզ յուսացեալ. 34 Եթէ համբարտակն վստահութե̃
մեղօք յատակի, այսու արձանօք պատկանեցելովք
աջով քո պաշտպան՝ դարձեալ կառուցի: Եթէ 35
յուսոյն ձգարան՝ սուսերբն յանցանաց հատեալ
կտրեսցի, կցեսցի դարձեալ միասանգամ կամօք ա-
մենակալիդ՝ բարուք պատուաստեալ. Եթէ վտանգ-
մահու՝ 36 անձնական ցաւոյ՝ զոք պաշարեսցէ, գտցէ
փրկութի̃ սովաւ առ 'ի յոյս կենաց՝ յաղօթեն առ
քեզ կեցուցիչ. Եթէ տագնապաւ ոք տարակուսի՝ 'ի
սիրտ խոցիցի, քաղցրութե̃բ քո՝ սովաւ ապրեալ ող-
ջասցի: Եթէ 37 անքաւելի կորստեամբ պարտեաց՝
յանդունդս ոք խորոց իջէ ընկլուզեալ, եկեսցէ 'ի
լոյս՝ կարթիւ այս հնարից՝ քեւ պատսպարեալ. Եթէ 38
թմբրութե̃բ խաբից՝ խաւարին գործոց՝ իջէ ոք վնա-
սեալ, զօրասցի անդրէն վասն քո միայն ապաւէն՝ 'ի
քեզ ապաստան եղեալ: Եթէ 39 պահպանակն վստա-
հութե̃ զանձն ուրուք լքցէ, ընկալցի այսու միջնոր-
դիւ ձեռն քո զնա՝ ամփոփեալ 'ի նոյն հաստատու-
թե̃. Եթէ 40 ամայի 'ի զգուշութե̃ պահողացն ոք դե-
գերեսցի, սպասեսցէ սովիմբ՝ առ 'ի նոյն դարձ նոր-

գողիդ ։ Եթէ [41] սարսուռ դիւային ջերման՝ դողութիւ ինչ զոք խռովեսցէ, սթափեսցի 'ի սոյն յայս նըշան խոստովանեալ և երկրպագեալ խաչիդ խորհըրդոյ ․ եթէ [42] անօրէնութիւն մրրիկ խորտակիչ հողմոյ՝ յանկարծ բախեսցէ զհաստատեալս մարմնոյ՝ շինուածոյ մարդոյ՝ յերկրային ծովուս, հանդարտեսցի անդրէն՝ ղեկաւ այս թևոց 'ի քեզ պատկանեալ ։

Դ. Նոյն արասցես լինել դեղ կենաց՝ առ հնարս ցաւոց հոգւոց և մարմնոց՝ քոց ստեղծուածոց, զայս կարգեալ սահման ողբոց մատենի սկզբնեցելոյ յանուն քո՝ բարձրեալ ։ Զսկսեալս իմ դու կատարեա ․ եղիցի հոգի քո խառնեալ 'ի սա ․ շունչ զօրութե մեծիդ միասցի 'ի քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիս ․ զի դու տաս զօրութիւն վհատեալ սրտից, և ընդունիս փառս յաւիտենիցունց ․ ամէն ։

---

(1) Ամենայն տիրող ։ Ըստ արարչական զօրութեան, և ըստ հանրական տեսչութեան ամենեցուն հաստատապէս տիրէ Ած, հոգեղինաց և մարմնականաց, մեծաց և փոքունց, բարեաց և չարաց ։ Բայց ըստ մասնաւոր տեսչութեան՝ պէսպէս օրինակաւ տիրէ իւրաքանչիւրոց ։ Միայն արարիչ ։ Դու միայնակ առանց գործակցութեան այլոյ արարեր զամ յոչնչէ ։ Կամ, դու միայն կարող առնել յոչնչից ․ ուր յայլ գործս նախախնամութեան կարէ արարածն լինել սատար Այ ․ բայց 'ի ստեղծագործութեան՝ ոչ ոք ընաւ ։

(2) Անշամանդաղ գեղեցկութիւն ։ Պայծառ, վճիտ գիտուն, ըստ որում զամ յստակ և յայտնի ճանաչէ Ած, և ոչ աղօտանայ մռայլմամբ, հակառակ մարդկային գիտութեան՝ որ 'ի բազում իրս մթութիւն ունի, և ը մոռացմամբ անկանի ։ Աներկեան տեսութիւն ։ Որ զամ տեսանէ առանց երկբայելոյ, հաստատուն 'ի ճանաչման ։ Ճշմարիտ էակութիւն ։ Իսկական, անպակասելի էութիւն, ճշմարիտ 'ի գոլն իւր, որով և ճշմարիտ 'ի ճանաչելն, անվրիպելի 'ի գիտութեան ։ Բարձր և խոնարհ ։ Բարձր ըստ ներկայութեան յերկինս 'ի վեր, և խոնարհ 'ի բուն խորս երկրի, ըստ սաղմ. ՃԼԸ ․ 8 ․ * Թէ ելանեմ յերկինս, դու անդ ես ․ և թէ իջանեմ 'ի դժոխս, և անդր մօտ ես || ։ Կամ, բարձր յէութեան, և խոնարհ 'ի խնամս ամ արարածոց՝ նաև նուաստից ։ Կամ, բարձր անհասութբ վերոյ քան զամ միտս, և խոնարհ՝ ճանաչելի գոլով նաև 'ի մանկունս արարածոց ։

(3) Օրհնաբանեալ ։ մի օրին ․ օրհնաբանելի ։ այլ օր ․ օրհնաբանեալ 'ի գովեստ ։

(4) Խոստովանեալ լոյս ։ Լոյս ես հաւատովք միայն խոստովանելի, և ոչ աչաց տեսանելի իբրև զմարմնական լոյսն ։ Կամ, լոյս թէ և ինքնին ոչ երևելի, բայց յամ զգալեաց խոստովանեալ ըստ ներգործութեան ․ զի և նա ինքն լոյսն զգալի խոստովանի՝ թէ ես ոչ էի, այլ Այ ասելովն՝ եղիցի լոյս, ես եղէ ․ և որպէս լոյս և տիւ, նոյնպէս խաւար և գիշեր խոստովանին և օրհնեն զնա ։

(5) Անշէջ լոյս ։ Անփոփոխելի 'ի բնութեան, և 'ի հետս զոր դրոշմեաց յարարածս ։ Կամ, անպղտորելի 'ի վճիտս իւր, 'ի բանս և 'ի խոստմունս, որք առ մարդիկ կնքեալ հաստատին ։

(6) Վկայեալ անուն ։ Այս անուն վկայեալ է ո՛չ միայն առ ծածկապաշտս, այլև առ հեթանոսս 'ի վկայութենէ բնական արարածոց. ըստ այնմ. (գործ. ժդ. 16.) * Ո՛չ եթէ առանց վկայութեան զինքն եթող՝ բարերարութեամբ տալ յերկնից ձեզ անձրևս || ևն ։ Կամ, Ինքն Ած վկայեաց անուան իւրում ասելով, Ես եմ Ած, այս է անուն իմ ։ (Եսայ. խբ. 8 ։)

(7) Օտար մտաւորաց ։ Օտար 'ի մթութեց, որ անաղօտ՝ անպակասելի սէր ։ Կամ, որ 'ի սիրելն ոչ մթագնի յախտէ ինչ. որպէս 'ի մարդկային սէրն խառնի բազում անգամ անձնասիրութիւն, ակնառութիւն, անկարգ վրէժ֊խնդրութիւն, ևն, որով խաւարին միտքն ։ Հին ըծ. Լ մնայ, օտարացելոյն յոյ և խաւարելոց միտող, սպասելով դարձի նոցա ։

(8) Արփիափայլ ցող ։ 'Ի ծագման արևու լինել ցող. որ յոյժ պայծառացուցիչ և զուարթացուցիչ բուսոց ։ Կամ, լուսաւոր ցող ։ Ըստ հին ըծ. լուսոյ փայլակ ։

(9) Ամենաբուժաց դեղ ։ Որ մանանայ դեղ ամ ցաւոց, որ տեղաց վն ամ իւրն, և ը ամ բանակ նոցա ։ Կամ, մանանայ իջեալ և ցօղեալ ո՛չ 'ի մի կողմն երկրի, ո՛չ միայն յանապատի որպէս առ իսրայելեանսն, ո՛չ առ մի ազգ և եթ, այլ ը ամ երկիր, առ բոլոր ազգս մարդկան ։ Մարթ է ևս իմանալ ընդհանուր 'ի վերայ բնական դեղոց՝ զոր 'ի բոյսս և յարմատս պարգևէ Ած տեղացմամբ անձրևաց ը ամ երկիր, որովք և յիւր բժշկութի շնորհէ ախտացելոց ։ Եւս, Երկնային առողջարարն, որ զմարմնաւոր և զհոգևոր առողջութիւն շնորհէ, ո՛չ միայն մարմնոյ նիւթական դեղովք, այլև հոգւոյ՝ կրիւք հիւանդութեց. կամ, յորժամ սքանչելեօք առողջացուցանէ զմարմին, զոյգ և զհոգի բժշկէ ։

(10) Անպատիր կոչումն ։ Կոչումն որով զմարդիկ հրաւիրէ 'ի հաւատս կամ յապաշխարութիւն կամ յերկնային փառս, ոչ է պատրելի կամ վրիպելի յիւրմէ կողմանէ, ճշմարտապէս կոչէ զամենեսին ։ Կամ, յորժամ մարդ կարդայ առ Ած, և կոչէ յօգնութիւն, ոչ պատրի, ոչ խաբի, ոչ 'ի դերև ելանէ ։ Կամ, զո՛ր կոչումն և զանուն ընծայեմք Այ ըստ գրոց, ամն ճշմարտեալ է, ո՛չ պատրանօք կամ սուտ կոչի. որպէս բազումք 'ի մարդկանէ սուտ թը կոչին յայս կամ յայն անուն. և որպէս հեթանոսք սուտ անուանս տային չաստուածոց իւրեանց ։ Հին ըծ. մեկնէ, անսուտ է զոր ասեմ վասն քո ։

(11) Անխափան դիմումն ։ Ըստ հին ըծ. անարգել կամ մերձ յամենեսին՝ որ դիմեն առ նա ։ Կամ, որ բառնայ զխափանս դիմելոյ առ ինքն ։ Կմ, որոյ տեսչութիւն շարժումն ո՛չ յումեքէ, և ո՛չ իւիք խափանի ։

(12) Անհամառօտ յոյս ։ այսինքն տևողական, երկայնամիտ յոյս. զի ամ միշտ սպասէ դարձին մեր ։ Կմ, յերկար յուսացուցիչ. զի տայ արդարոց ակնունել խնամոյն իւր, և ոչ յուսահատիլ ։ Կամ ըստ հին ըծ. անդրդուելի խոստումն ։ Յայս գլուխ զբաղումն յանուանցդ իմն ընծայեալ իւր ներգործաբար, որ ըստ որում ծածկէ, զգեցուցանէ, առողջացուցանէ, յուսացուցանէ, մխիթարէ, ևն ։ Երկար տևողութեան, 'ի յաւիտենից տեսող ամի, յորմէ ոչ ծածկին հեռաւորքն ժամանակաւ և տեղեաւ ։ Կմ, յառաջախնամ տեսչութիւն, կանխաւ տեսող ամի ։

(13) Անուն կենդանի ։ Ածդ անուն միշտ կենդանութիւն նշանակէ, հակառակ անկենդանի աստուածոց. և է կենդանարար ամի որ կարդայ ճշմարտութբ ։ Անգայթակղելի էջ ։ Եւք իմանին թէ սկիզբն, և թէ կատարած գործոց. 'ի գործս Այ յամի՝ 'ի սկսանել և 'ի կատարել՝ չիք բնաւ վրիպումն. որպէս սկսանի, նոյնպէս 'ի գլուխ տանի զամ անարգելաբար ։ Նման այսմ յաջորդն, Անխափան ընթացք. որ անխափան յընթացս նախախնամութե իւրոյ, ոչ խարդախելի յումեքէ ։ Կմ ըստ հին ըծ. յաւակ, առանց նենգութե, առ ամենեսին պարզ ընթանայ, և շուտ հասանէ ։

(14) ԱՆՆԵՆԳԵԼԻ ԽՐԱՏ : Խրատ ԱԾ, ուսումն կամ առաջնորդութիւն վարուց՝ է միշտ ուղիղ, անվրիպ, և ոչ երբէք զմարդկան խրատս՝ 'ի կատարումն բերել. և ո՛չ երբէք զպատգամս կարոյ, յորս միշտ խաբէութի է : ԱՆՆԱԽԱՆՁ ՊԱՐԳԵՒ. պատիւ կի՛ մեծարանք զոր ընծայեմք ԱԾ, ոչ դրդէ 'ի նախանձ. ո՛չոք կարէ նախանձել ը̄ փառս ԱԾ՝ բայց սատանայ միայն : Կամ, 'ի պատուել և 'ի մեծացուցանել ԱԾ զմարդիկ՝ ոչ նախանձի ը̄ փառս նց, այլ խնդայ, հակառակ աշխարհական իշխանաց՝ որք 'ի փառաւորել զոք է երբէք՝ զի ը̄ ակամբ հային, և թիւր կասկածանօք նախանձին ը̄ նա, ոպ̄ ՍԱՒՈՒՂ փեսայացուցել իւր զդաւիթ, հերձանէր ը̄ յաջողուածս նորա :

(15) ԼԱՅՆԱԿԱՆ ՀՆԱՐՔ : Ընդարձակ կի՛ ճարտար 'ի գտանել հնարս, ամե հնարաւոր, բայց և անչափական պայման, ը̄ ձիրդ 'ի կարգել և 'ի պատրաստել զպայման իւրաքանչիւր իրաց. զի թէպէտ և ամենահնար է, այլ ո՛չ կամի վայրապար փոփոխել զպայման բնութեանց : Հին ըծ. անչափական և մանաց՝ անձկալի, փափաքելի. այլ ո՛չ յորմարի դիմաբաժանեալ բաուին լայնական : ԱՆԳՏԱՆԵԼԻ ՀԵՏՔ : յամ̄ արարածս կան հետք ԱԾ ըստ նախախնամութեն և ը̄ զօրութեն, բայց միտք չկարեն գտանել մի ը̄ միջէ : ԱՆԵՐԵՒՈՅԹ ՇԱՒԻՂ : Ճանապարհ ԱԾ 'ի բնականս և 'ի գերբնականս՝ ո՛չ միայն աչաց չերևի, այլ ո՛չ և մտաց ոպ̄ արժանն է. մինչ զի ոմանց այլազգ եւս խորհել երբեմն, և ասել ոչ ուղիղ է ճանապարհ տն̄ :

(16) ԱՆՇԱՐԱԳԻՐ ՊԱՏԿԵՐ : Պատկեր է ած̄ և սաւ, ո՛չ գծիւք չափելի երբէք ընկարեն պատկերս զգալիս : Նոյնպէս ՈՐՔԱՆՈՒԹԻՒՆ ԱՆՍԱՀՄԱՆ. քանակութի կի՛ մեծութի ո՛չ սահմանաւ կի՛ կողպայու փակեալ, նման նիւթական քանակութե : ԱՆՆՄԱՆԱԿԱՆ ՁԵՒ. կերպարան կի՛ ձև՝ որոյ նման ոչ գոյ, հակառակ զգալի ձևոյ՝ որոյ նման գտանի միշտ : Նոյնպէս ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ԳՈՒԹ, գութ կի՛ ողորմութի՝ որոյ հաւասար ոչ է գտանել : Յայտնիկ ցուցանել կամի, թէ բազում անուանք և իրք այսպիսիք ընծային ԱԾ, բայց մեծաւ անջրպետութը յարարածոց :

(17) ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ ՓԱՌԵԼԻ : Խոնարհութի ընծայել ԱԾ ոչ ը̄ ցածութն համարմանն խմանի՝ զոր մարդ պարտի ունել զանձնէ և նուաստանալ, այլ սա 'ի զիջումն նորա և քաղցրութեն 'ի խնամել զնուաստս, և յանձնս առնել զոր 'ի մէնջն առ նա արհամարհանս. զի ո՛չ 'ի մերմէ նուաստութէ խորշի, և ո՛չ իւրոց արհամարհանացն լինի անհաշտ վրէժխնդիր : Վն այսորիկ յիրաւի ՓԱՌԵԼԻ է, փառաւորելի ամ̄ հիացմամբ, ոպ̄ անհասն այն բարձրութի զայսքան զիջումն յանձն առնու : ՀԱՄԲՈՅՐ ՏՐԵԽԱՆ : Երբէք բարեկամ սիրելի՝ համբուրիւ ընտանութե միանայ ը̄ մարդիկ. և այն է նշանակ ը̄ունելոյ զնս 'ի փրկութին յաւիտենից :

(18) ԱՆՈՒԱՆՔ ՎԱՅԵԼՉԱԿԱՆՔ : Բազում այլ եւս քան զայսոսիկ անուանք կի՛ ձայնք վայելուչք են քեզ, և ընծայելիք ածութեն, որովք օրհնեալ ես, գովեալ ես : ԱՂԳՈՒՄՆ սաէ զանուանս կի՛ զկոչմունս վերագրեալս ԱԾ. Վն զի այն ամ̄ ոչ ը̄ էութե նր ասին, այլ ը̄ ազդեցութեցն զոր ներգործէ 'ի մարդիկ և յամ̄ արարածս. կի՛ են ձայնք յարմարեալք 'ի գործոց նց և 'ի բազմազեղ խնամոցն, այլև 'ի կատարելութեցն զոր յարարածս տեսանեմք. ուստի են ձայնք յայտնիչք անկատար ճանաչմանն զոր ունիմք զԱԾ, և լինին ազդողք կի՛ ծանուցօղք մեզ ածային կատարելութեցն : Այս է զոր և 'ի լուծ. 12 ասացաք, թէ բազումք յանուանց ընծային ԱԾ ըստ ներգործութեանցն զոր առնէ առ մարդիկ և առ այլ արարածս :

(19) ԱՆԽԱԲԵԼԻ ԿԱՄՔ : Անվրէպ բաղձանօք և հայցուածովք 'ի մէնջ աղաչեցեալ : կամ, որոյ կամքդ անսուտ է 'ի կատարումն աղաչանաց մերոց. Թողում և զայլ սաստութիւս քաղցրութեն քո 'ի մեզ. ՂՈՐ ՀԱՆԴԵՐ-

Յեւրոպն ։ զպէսպէս առատութիւն քաղցրութեան քո՝ որով բազմապատիկ ան֊ուանց և կոչմանց արժանանաս, յօրինուածք առաջինկայ ձեռնիցս կամ աղօթից յայտնաբանեն ։ Որով, զի սոլին յայտնի խոստովանութիւն քաղցրու֊թեան քո՝ զուարթանաս 'ի փրկել զիս, իբրև 'ի համեղ կերակրոյ ինչ ախոր֊ժանօք ճաշակեալ. ոչ եթէ խնով ունայնախօս ձայնիւ նոր փառս քեզ առանալով, այլ զի զփոքր աղաչանս իմ առցես պատճառս փրկութեան և պարգևաց մեծաց այ ։

(20). Իւր Նօրէտ ։ Այս աւանդ և կարգաւորութիւն ոլորական աղօթից յօրինեալ է վասն նոր համակի մարդկան, և ըստ աստիճանի բոլոր քրիս֊տոնէից. իբր հաղորդ Ռեծգէփաչաջան, քաջ անուղեակ կարեաց ամենեցուն, որ իբր 'ի պատկերի յանդիմանեալ երևեցուցանէ զկիրս բոլորեցուն ։ Այն նոր կարեաց կցորդ եմ ես, այլև մասանս՝ իբրև համարակից բերան և թարգման ։ Ա— Նախնի ծածկ ծանանոցայ. պարզելի է, առ ժա֊մանօղն 'ի նախնի ժամուն, զի առ նուիրեալն յանդպաշտութիւն 'ի մեն֊կութեան համակի ։ և առ Էրէրօրտ Նուէօէալ. առ կոչեցեալն յերկրորդ ժա֊մուն ըաֆառ արբաան, չափաւոր համակն պատմութեան կամ երխատար֊դութ ։ 1 օրին, և հին լծ. ըաֆաճար բաան, ուր եթէ չիցէ վրիպակ, մարթ է իմանալ՝ 'ի չափն իւր վարեալ կմ համեալ բունն, առաւն ։ այլ օրին. ըաֆառ արբաաֆ, յայտնի վրիպակ ։ Զաւեղն Էրէրօրտ կոչեցեալ, մարթ է պարզել ևս, երկրորդ համակ կոչեցեալն ։ Ա— որ 'Է Նաբարած, առ այն որ 'ի կատարածի աւուրն՝ յերեկոյին, զի 'ի ծերութեն Նուէալ 'ի մշակու֊թեն այ ։ 2 օրին. և հին լծ. ընՆաւէաւ ։ Այսպէս առ իւրաքանչիւր համ֊ակ կարգեալ են բանք աղօթիցս՝ առ մանկունս, առ երիտասարդս, առ ծերացեալս, յայտնելով զիւրաքանչիւր համակի զկիրս և զպէտս ։ Եւ 'ի յաջորդ բանին չարադասին այլևայլ աստիճանք աշխարհական և ե֊կեղեցական կարգի ։

(21) Ա— Բնտնարգոյ ։ Այն որ ինքն զանձն յարդէ, առ անձնահաճ ամ֊բարտաւանն, որպիսի փարիսեցին էր ։ 2 օրին. և հին լծ. Բնտնագոյ, բարձրամտեալ յիւր առաքինութի. ոչ թէ ինքն միայն դոյ, կմ յինքե֊նէ ունիցի զնմ ։ Եւ Սխալէալ անյնադաա. որ զխաբէն ձանաչելով դառն զանձն, որպէս մաքսաւորն ։ մի օրին. և հին լծ. առ Սխալէալ ։ Ա— Սէ֊դաահա, առ աղաաս. և Գէրաշխարհէիւ, առ երևելիս աշխարհաւ և գաւառաւ ։

(22) Միջազգայնոյ ։ Աստանօր 'ի վերջահոլով ոլորական փոխին բառքդ, ուր յանցեալն եդան 'ի նախդրիւ ոլորական ։ Միջազգայինք, որք են 'ի չա֊փաւոր աստիճանի ըստ ազգի, ըստ իշխանութեան, կմ ըստ հարստութեան ։ և դայազաաաց, իշխանաւորաց՝ ամենակալեաց ըստ ազգի և ըստ իշխա֊նութեան. Հէնաջանաց, որք ազգաւ և ծննդեամբ գեղջկանք են ։ և Քա֊ջաղաաց. որք տամբ և ծննդեամբ քաղաքացիք ։ Գիէր Էրօ, այսինքն վեհ կամ 'ի բարձր պատուի եղելոց ։ 2 օրին. Գէրէօէրօ, որ չյայտնարի առ ուրիշս. զի այս բառ դիմադրի Նաաաաբէօ. իսկ Էրօ՝ ըստ համանելի քննութեան է յոքնակի սեռական նոյն նշանակութեան Էն բային. զի եալ, եղեալ, եալք, եղոց, և նշանակէ՝ եղելոց, այնոցիկ որք են գերադասք են ։ Յեաճարծէօ, եղելոց 'ի կարգ ձիաւորաց կմ հեծելոց, որք և պատուա֊ւորք են, և առ եւրոպացիս Գաւալիէր ասին ։ և Սաաջաջաաց. այնոցիկ որք չեն գրեալ յազնուական զինուորական, զոր յունարէն Եփէօտա ասեն, և այնր թարգմանութի է Սաաջաաջան բառն, զի ռամիկ, հասարակ ժողովր֊դական. և ա յունականին գիմբաժանի առ պատուաւոր կամ պաշտօ֊նեայ ։ Քաղաքաջաաաց. որք բնակութե 'ի քաղաքս կան, և պարապին 'ի քաղաքային արհեստս ։ և Գեղջկաց, որ յագարակս բնակեն և մնանին, և 'ի վաստակս ագարակային առաժանին ։ Արտաէօ Գաաաղաէօ, դառն

կամ խորոխտ Թագաւորաց, որք հոխանան 'ի վերայ մարդկան, այլ ներքոյ անկեալ են կարեաց, և կարօտք են աղօթից իբրև զայլ մարդիկ, որք և 'ի սանձս Ա[ստուծո]յ ընկրկեալք են, ըստ որում վասն Նաբուգոդոնոսորայ ասացեալ է. արկից կարթ 'ի քիթս քո եւն. (Դ. Թագ. ԺԹ. 24.) Ձիոյ սանձ 'ի բերան դնի. այլ Թագաւորաց 'ի սիրտ արկանէ Ա[ստուա]ծ. ըստ բանին. առակ. * Սիրտ Թագաւորի 'ի ձեռս Ա[ստուծո]յ||: Մինչև յայս զաշխարհիկանս աշխարհական կարգի յիշատակեաց Աղօթաւորն. զհետ այսր գայ եկեղեցականն:

(23) Տիրանուէր ղգաթաուբէս : Ի՞ սարկաւագաց, որոց գործ է զգաստութիւն պաշտել 'ի պատարագի : այցելուբէս, եպիսկոպոսաց՝ որք այցելու և դէտք են եկեղեցւոյ. Բարէղգէսպէս, զարդարեալք 'ի վարս սրբութե, որում ցոյցք են արտաքին զարդք զգեստուն : աբտայխալուէս, պատրիարգաց՝ որք նախագահք են յեկեղեցւոջ, ուրբանուէր, զարդուն շնորհաց և ձեռնադրութեան բաշխօղք, կամ նուիրօղք ըստ զաղօթս նրա 'ի պաշտամունն հօտին իւրեանց : Զկարգ եկեղեցական դասուն յիշատակէ բանիւս՝ սկսեալ 'ի վայրագունէն. որք են միայնացեալք կամ միանձունք, սարկաւագ, քահանայ, եպիսկոպոս, և պատրիարգ : Որոց ամանց, ամենեցուն տացէ 'ի ձև աղօթից մատակարարեցի զմատեանս, ամանց՝ աղէրս աղաչանաց, ի՞ արդարոց կամ գլխոց՝ զի աղօթեսցեն վա իմ, կամ զի ունիցին առ ձեռն զխնդրուածս աղօթից: Եւ ամանց խրաթ, մեղուցելոց և տգիտաց, զի ունցին զեղանակ աղօթելոյ : Զայսպիսի ձեռնարկ ոչ եթէ յիս սպասաւորեալ արարի սաէ, այլ հոգւոյս դըրուբէ, վառահացեալ 'ի զօրութե հոգւոյդ սէր, դիմեալով վա իմ նախ կարգել մաղթանս սէս սէս, և ապա վա այլոց ամենեցուն: Լուսէայն զեկուցումն կայ 'ի բանիս, իբր ասել՝ ոչ եթէ նոր սահման աղօթից կամի ուսանել, այլ թէ յաղօթել մերում զոր իղձս, զոր պաղատանս արժան է զարթուցանել 'ի սրտի. քանզի նաև յաղօթելն լոկ զաւէրունական զՀայր մերն՝ կարօղ է ոք, և պարտ իսկ զնոյն զղանազան իղձս բղխել 'ի սրտէ :

(24) Ըռուտ բարէհամբոյր : Խմով աղօթիւք տացի նա շունչ կամ հոգի աղօթից, կամ հառաչումն սրտի՝ հածելի և ախորժելի քեզ:

(25) Հէծանութեք նոյին : Նոցա հառաչանքն՝ ընդ իմ, ընդ իս, կամ ըստ իմ աղօթիցս քեզ խնդրոյին, մատուսցին իբրև խունկ անուշից :

(26) Ընդ համբոյր : Յորժամ ախորժանօք 'ի բերան առեալ մատուցանէ ոք պայս ողբական բանքս, ընդհ լռւայ փա, շնորհ լուսաւորութե մնաց հանգիցէ, բնակեսցէ 'ի մատուցօղն, քաղցրասցին աղօթքս 'ի միտս աղօթաւորին, և ոչ լոկ 'ի շրթունսն :

(27) Եթէ էւդէն բեյ : Եթէ դիպեսցին յետ իմ բարեպաշտք մաղթել առ քեզ այս աղօթիւք, ընկալ ... յընդունելդ զայն կենդանիս՝ ընկալ և զիս զմեռեալս ընդ նոսին :

(28) Աղթա բուլ ուրբանուէրս : Եթէ ցաւագին արտասուք սրբութե նուիրեալք բղխեսցեն յաչաց աղօթողացն, յիս ևս ցօղեսցին :

(29) Եթէ գըրէօյէ : Եթէ աղօթական բանս հաճոյ լիցի, և օգտեսցէ 'ի փրկութե հաղորդեցելոցն այսոցիկ կրից զղջման, ինձ ևս համարեսցի :

(30) Ե... ես ընդ նմին : Մի օրին . ընդ նմա . այլ ընդ նմին :

(31) Եթէ յէան մաքուր : Յորժամ մաքուր ձեռն պաշտօնէից եկեղեցւոյ խունկս մատուցանէ քեզ 'ի պատարագի կամ 'ի ժամակարգութե, միասցի ընդ այն նաև իմ ձայնս, և խնդրուածք այլոց. քանզի և խնկարկութիւն նշանակ է ընծայման աղօթից. ըստ բանին (Յայտն. Ե. 8.) բուրվառ լի խնկով, որ է աղօթք սրբոց :

(32) Պաղապանս բաղմադիմս : 2 օրին. բաղմադիմս : Եթէ այլևս բազմաղան իղձք յադդմանէ շնորհաց քոց ծնանիցին յայլս, աղաչեմ զի և ինձ լիցի այն պարգևս : Հաս ուրին . մի օրին . նորին :

(33) ԱՂՕ. ԱՆՁԻՆ ԲԱՆԻ: Եթէ այս անձնաւոր և բանական պատարագս արգոյ կա՛մ հաճոյ լիցի քեզ, կամ հաճոյից պիտանի առնել, ՆԱԽԱՅՐԻՆ, այլոց նախնեացն եւս պատարագ կից խնումս, կա՛մ փոխանակ խոր ընծայեացի քեզ: Ասել կամի. այս բանաւոր պատարագ թէ և հաճոյասցի քեզ, բայց միայնակ տկար է և դուզնաքեայ. ուստի աղաչեմ խառնել միացուցանել ընդ այսմ և զպատարագ արդարոցն առաջնոց, կա՛մ որք նախ քան զիս ընկալան պարգեւս աղօթից:

(34) ԵՐԷ ՀԱՄԲԱՐՓԱԿԻ: Եթէ աշտարակն վստահութեան կա՛մ ապաւինութեան որ 'ի ձեռն բարեգործութեանց, կործանեսցի մեղօք, այսու ԱՐՋԱՆՕՔ, աղօթիւքս իբրեւ քարամբք յարմարելովք աջով քո՝ նորոգեսցի միւսանգամ:

(35) ՑԱՆԱՅՆ ՋԳԱՐԱՆ: Եթէ լար յուսոյն ե՛ այնմ որ հայի 'ի բարի գործս մեր, կորեսցի սուսերաւ մեղաց, վերստին կցեսցի զղջական աղօթիւքս:

(36) ԱՆՁՆԱԿԱՆ ՇԱՐԱՅ: Եթէ մահաբեր հոգեկան ախտ ինչ կա՛մ չար ունակութեան պաշարեսցէ զոք, տուեալ 'ի յոյս կենաց զօրասցի:

(37) ԱՆՓՈՒԷԼԻ ՎՐԻՊԵԱՄԲ: Եթէ ոք կորստեամբ անքաւելի պարտեաց կա՛մ մեղաց՝ լիցէ իբր այժմէն ընկղմեալ յանդունդս դժոխոց, այսու աղօթիւք իբրեւ կարթիւ ելցէ 'ի լոյս յուսով քաւութեան:

(38) ԹՄԲՐՈՒԹԵ ԽԱԲԻՑ, ՚ի խաբէութեանց: մի օրին . և հին լծ. ՀԱՂԲԻՑ, ՚ի որոգայթից: Եթէ ոք գաղտնի գործովք մեղաց թմրեալ կայ պատրանօք, և իբր յորոգայթի պաշարեալ, զօրասցի դարձեալ յողորմութեան քո ապաւինեալ:

(39) ՊԱՀՊԱՆԱԿՆ ՀԱՒԱՏՈՅ: Եթէ ամրութեան կա՛մ պատսպարանն ապաւինութեան թուլանայցէ, որով խմանի երկիւղին այ, կա՛մ հաւատք հաստատուն, կա՛մ ջանք բարեգործութեան, ձեռն քո Տէր՝ հաստատեսցէ զնա դարձեալ աղօթիւս նպաստիւք:

(40) ԱՄԱՅԻ 'Ի ԱԳՐՈՒՆՈՒԹԷ: Եթէ ոք վն՛ իւրոյ անհոգութեան կա՛մ տռաճանութեան զուրկ և թողեալ մնայցէ 'ի զգուշութէ պահպանող հրեշտակացն: Կամ, եթէ ոք անխնամ անտես թողեալ կայ 'ի տեսչութէ առաջնորդաց և հովուաց վերակացուաց, թափառեալ իբրեւ ոչխար՝ որոյ ոչ գոյ հովիւ, այնպիսին ամենակալի դառնալոյ քաջ հովուին, և առ 'ի քէն պահպանութեան:

(41) ՄԱՐՄՆՈՅ ՏԿԱՐԻՆ: Եթէ մարմնական ախտ տենդի, լուսնոտութեան, և նմանեաց, խռովեսցէ զոք: Կամ, տագնապ խղճմտութեան, թերահաւատութեան, կա՛մ հայհոյութեան նեղեսցէ զոք, զգաստասցի կա՛մ զօրասցի նշանաւ աղօթիցս՝ դաւանելով զզօրութեան սբ խաչին:

(42) ԱՆՕՐԷՆՈՒԹԷ ՄՐՐԻԿ: Եթէ արտաքին փորձանք մարմնոյ, հալածանաց են. հարկանեն զմարդ յերկրային ծովուս, ղեկաւ աղօթիցս 'ի քեզ առ բասցի. ով յորժամ 'ի ծովուն դալկեալ յարեաւ յանկարծակի մրրիկ, և զնաւակ աշակերտացն տագնապէր. և նոքա 'ի քեզ աղօթիւք ապաստանեալ հանդարտեցան: Զոր ինչ մաղթէ սբ վարդապետն յայս գլուխ յաղագս զօրութեան աղօթիցս, տեսանեմք ընդունելի եղեալ առ Այ 'ի բազմապատիկ ներգործութեանցն որովք դարման գտանեն բարեպաշտօնքն յախտս մարմնականս և կամ հոգեկանս: Սակայն արժան է աղօթականին՝ մի առ այլս եւեթ հայեցուցանել զխնդիրսն, որպէս թէ այլք իցեն ըմբռնեալ յայս կա՛մ յայն կարիս, այլ առաւել յանձն նկատել՝ և իւր վն՛ հայցել նախ զբժշկութիւն ախտիցն, որով ապա և վն՛ այլոցն լսելի եղիցի:

Սրտին յաւելուած հրէին հեծութե՟ն՝ նորին հօծողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա՟յ ։

## ԲԱՆ. Գ.

ա. Եւ քանզի սկիզբն կալայ խօսել ընդ քեզ՝ որ 'ի ձեռին ունիս զշունչ կենդանութե՟ն հողւոյս բազմամեղի, յիրաւի սարսեալ դողացեալ տագնապաւ մեծաւ՝ յաւէտ երկնչիմ. վասն զի ահաւոր և անտանելի, և [1] 'ի սահմանէ բանի փախչելի, յիշատակ անձողոպրելի՝ անաչառ քո ատենի՝ 'ի կշտամբու՟ն իմ պարտաւորի՝ արարիչ երկնի և երկրի։ Նա զի՝ և [2] չիք իսկ բժշկութ՟ի բազմավտանգ սաստկութ՟ե վիրացս անողջանալի, խայթմանց խածուածոց մահաբերին բերանոյ ժանեաց՝ որսողին զանձն իմ 'ի կորուստ։ Մանաւանդ զի [3] ոչ գոյ պատասխանի, ըստ առակողին, յաւուր պատերազմի. և ոչ բանիւ հրաւանալի, և ոչ վերարկուաւ պատսպարելի, և ոչ դիմակօք կեղծաւորելի. ոչ առ երեսս բանիւք մատչելի, և ոչ կերպարանօք երբեք խաբելի. ոչ յօդուածովք բանից ստելի. ոչ արագամամբ ոտից փախչելի. ոչ թիկանց դարձուցանելի. [4] ոչ դիմաց ընդ երկիր մածուցանելի. ոչ բերանով ընդ հող հաստելի. ոչ 'ի խորս երկրի ղօղելի։ Զանզի մերկ են քեզ ծածկեալքն, և հրապարակեալ են աներևոյթքն. արդարութ՟ի իմ նուաղեցան և խսպառ ունայնացան. մեղանքն յայտնեցան և յաւէտ առաւելեցան. չարիքն իմ մնացական, և ես կորստական. [5] իրաւանցն կշիռ պակասեցան և անիրաւութ՟ն խսկոյն զօրացան. բարեացն բերք հալեցան, և սխալմունքն արձանացան. աւանդն կորուսան, և դատակնիքն այժմէն դտան. մահուն մուրհակ գծեցան, և աւետեացն կտակ եղծեցան։ [6] Բարերարն տխրեցան, և բանսարկուն ուրախացեալ. հրեշտակաց գունդն թաղծեցան, և սատանայ [7] խնծղիւք պարեցան. վերնական զօրքն ողբացան, և ստորնայինքն բերկրեցեալ. սպանողին մթերք լցեալ, և պահողին գանձն կապտեալ. օտարին կողմն կանգնեալ և ստացողին պարգև մատ-

նեալ. հաստողին ձիր մոռացեալ, և կորուսչին հաղ-
քըն պահեալ. [8] երախտիք փրկչին հեգնեալ, և բե-
լիար զուարթացեալ. կենացն աղբիւր փակեալ, և [9]
գոռողին ժանգ՝ ժանգիս ժամանեալ:

Ը. Եւ արդ՝ ոչ ապաքէն [10] ըղձալի էր, ըստ գրոյն
կանխութե նախաձայնելոյ՝ ոչ ստեղծանիլն երբէք
յարգանդի, և ոչ նկարիլն ՚ի յորովայնի. ոչ ՚ի ծնունդ
յառաջագայիլ. և ոչ ՚ի լոյս կենաց հասանել. ոչ ՚ի
թիւս մարդկան գրիլ, և ոչ ՚ի հասակ աճման ամ-
բառնալ. ոչ ՚ի պատկեր գեղոյ զարդարիլ, և ոչ բա-
նիւ հանդերձաւորիլ, քան է այսպիսեաց սաստկա-
գունից և սարսափելեաց ըմբռնիլ պարտուց, զոր և
ոչ վիմաց կարծրութի բերէ, թող թէ մարմնոց լու-
ծականութի:

Թ. Եւ արդ [11] տուր բարեգութ՝ աղաչեմ զքեզ,
տուր ինձ ողորմութի, որ զայսոսիկ դու ինքնին քե-
զէն քոյովդ բանիւ մեզ սահմանեցեր ասելով, թէ
տուք զայդ նուէր յանուն փրկութե ձերոյ՝ այ, և
սուրբ եղերուք. զի զողորմութի կամիմ, և ոչ զպա-
տարագ: Ահա բարձրացիր վերստին խնկեալ այսր
յիշատակաւ, որ ունիս զամենայն. և ՚ի քէն է ամ, և
քեզ փառք յամենեցունց. ամէն:

---

(1) ՚Ի ՍԱՀՄԱՆԷ ԲԱՆԻ : Փախչել ՚ի սահմանէ բանի, զի անցանէ քան զբան, անասելի է յիշատակ անզերծանելի դատաստանիդ, յորում իմ պարտիքս կշռամբելոցք են:

(2) ՉԻՔ ԻՆՁ ԲԺՇԿՈՒԹԵ : Եթէ յիշատակ ահագին դատաստանիդ ինքնին սարսափելի է, ևս առաւել այնու զի և խմոց սաստիկ վիրաց հոգւոյս՝ զոր ՚ի խածմանէ կորուսիչ դիւին ընկալայ, չիք բժշկութի բնաւորապէս, կամ ըստ հասարակ կարգի:

(3) ՈՒ ԳՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԻ : Ժողովողին է բանս (Ը. 8.) ուր դնի ՊԱՏԳԱՄԱՒՈ-ՐՈՒԹԵ, զի բան հաշտութե կամ ազատութե. և աստ առեալ է փոխանակ արդարացուցիչ պատասխանւոյ, կամ անմեղադիր լինելոյ: Մանաւանդ այնու առաւել սարսափելի է ասէ՝ դատաստանիդ ժամանակ, զի նաև ՚ի մարմնական պատերազմի յորժամ յետ բանագնաց լինելոյ երկուց կողմանց ոչ յաջողէ հաշտութի, և ՚ի մարտ դարձեալ ձեռն արկանեն, չիք այնուհետև ընդունել պատգամաւորութի: Սոյնպէս ՚ի հասանել քոյդ դատողութե՝ որք միանգամ չեն նախ հաշտեալ ապաշխարութբ, ոչ այլ գտանեն ժամ պատասխանւոյ: Եւ ոչ ԲԱՆԻ, թէ և լինէր նոյ ժամանակ, բայց չունին բան արդարանալոյ, պապանձեալ մնան: Ոչ վերարկուաւ իւիք գոյ ծածկիլ. ոչ ԴԻՄԱԿՕՔ, պատրուակօք երեսաց այլակերպիլ: 2 օրին. ԴԻՄՕՔ:

(4) ՈՒ ԴԻՄԱՑ ԸՆԴ ԵՐԿԻՐ : 2 օրին. չիք ԴԻՄԱՑ : ոչ է հնար զդէմս յերկիր մածուցանել. և ոչ զբերան ՚ի հող տալ ան:

(5) **Իրաւանցն կշիռ**: Կշիռ կամ չափ իրաւանց զոր պարտ էր հատուցանել ԱՅ, կամ իրաւանց արդար գործոցն՝ պակասեալ է: Ակնարկէ 'ի գրուած ձեռինն երեւեալ բաղտասարայ արքայի, զոր և ընթերցաւ Դանիէլ մարգարէ. (Ե, 27.) * Կշռեցաւ 'ի կշիռս, և գտաւ պակասեալ||: Նոյնպէս առ իս պակասեցաւ ասէ՝ կողմն արդար գործոց կամ բարեգործութե. և հակառակ կողմն անիրաւ գործոց զօրացաւ, ծանրացաւ: **Բարեացն բերք**. եթէ ունէի սակաւ արդիւնս բարեաց գործոց, հալեցաւ, ունայնացաւ. և փոխանակ՝ սխալական գործք իմ կամ վրիպանք պնդեցան, հաստատեցան:

(6) **Բարերարն տխրեցաւ**: Այս եղանակ ասացուածոյ առեալ է 'ի բանից գրոց, որովք ասի՝ զղջանալ ԱՅ, հոգալ ևն: Այպա թէ ոչ՝ ստամուն ընծայել այ և հրեշտակաց սրբց՝ որք յերանութե են, խմանի անյատակապէս ըն պատճառին ևեթ, իբր է՝ զի մեղք և կորուստ մարդկան պատճառս տան այ և հրեշտակաց տրտմելոյ, ողբալոյ՝ եթէ հնար էր: Սոյնպէս ըն պատճառին խմանի ուրախութի սատանայի և դիւաց. որոց՝ կորուսեամբ մարդկան ընծայի նիւթ ուրախութե, այլ ոչ ուրախութի յատուկ, կալով նց 'ի դատապարտութե: տե՛ս և կ. ըծ. 30:

(7) **Խնծղիւք պարեաւ**: Մեկնի՝ խնդութիւնք, հրճուանօք: 2 օրին. և հին ըծ. **խնձոյիւք**. և այլուր ոռնելի է **խնծիղք**:

(8) **Երախտիք փրկչին**: 'Ի պատճառս անարժան վարուց քրիստոնէից՝ անհամար երախտիք փրկչին լինին իբր 'ի ծաղր. որպ թէ բէլիարն զուարթացեալ ըն խուրոցն պաշտօնէից, 'ի կատականս առնու զվաստակս Քի փրկչին, ասելով. զարիւն քո հեղեր 'ի փրկանս մարդոյն, և նա ոչ փրկեցաւ, այլ ինձ առաւել ծառայեաց՝ որ ծառայս էի արեան նորա: Այսպէս՝ մեղաւոր քրիստոնեայ խայտառակէ զՔն փրկիչ յիւրն կողմանէ. և զինչ քան զայս առաւել սարսափելի և ողբալի:

(9) **Գառաղին ժանգ**: Փոխանակ կենաց աղբերն՝ ժանդն սատանայի. իբր թոյնն հասեալ է առ իս: 2 օրին. և հին ըծ. **ժառանգ**, և մեկնի՝ ժառանգութի գառաղին սատանայի, որ է հուր գեհենին: Սակայն ժանգ ասէ՝ յարմար ևս է դիմադրեալ բառին **աղբեւր**. և թուի ակնարկել 'ի բանն Յայսն. (Ժէ. 15.) ուր ասի՝ վիշապին սատանայի հեղուլ 'ի բերանոյ իւրմէ ջուր հեղձուցիչ, որ խմանի թունաւոր չարութի նր: Անդ ոչ կարաց հասանել թոյն նր զհետ կնոջն, բայց առ իս ժամանեաց ասէ:

(10) **Ըղձալի էր չէր գոյն**: Բազում են ասացուածք 'ի գիրս՝ անիծանել զօր ծննդեան, կամ ընտրելի ասել զչ ծնանելն ևն: (Յոբ. Գ. 1: Ժողով. Գ. 3. Դ. 3. 4: Երեմ. Ի. 14:) զոր և 'ի կնր առնու նր վարդապետս, ոչ եթէ պարզաբար անիծանելով կամ ապախտ առնելով զմարդկային կեանս սակս մարմնական թշուառութեց, այլ ըն որում աղտեղանայ մեղօք, և արժանի կորստեան լինի. զի լաւ է ոչ գոլ բնաւ, քան չարաչար գոլ հակառակ ԱՅ. որպ և տէրն ասաց վն յուդայի, (մատ. ԻԶ. 24:) և աստ ասի զկնի՝ թէ լաւ էր ոչ գալ յաշխարհ, քան պարտաւոր լինել այնպիսի սաստիկ տանջանաց, զոր և ոչ կարծր վէմք կարեն տանել, թող թէ տկար մարմինք: Այսու մօք լաւ ևս էր ոչ 'ի ծնունդ յառաջագայիլ ասէ, և ո՛չ 'ի **հասոյ ատեան**. ասա փոխադրութի է հոլովոյ, և գնելի էր՝ յաճումն հասակի ամբառնալ. որպ և յաջորդն, ու՛ 'ի **պատկեր գեղոյ**, փոխանակ, ոչ 'ի գեղ պատկերի կամ դիմաց զարդարիլ: և ոչ **բանիւ հանդերձաւորիլ**. ոչ ելանել 'ի լեզու, ոչ 'ի խօսս զարդանալ:

(11) **Տուր ինձ ողորմութիւն**: Դու [լինքնին] ասացեր, տուք ողորմութի, և ամ ինչ ձեր իր է: Ահա քոյին բանիւ զքեզ աղաչեմ և թախանձեմ, տուր ինձ զողորմութի քո, որպէս զի ամ ինչ զոր 'ի քէն ունիմ՝ իր եղի-

ցի 'ի մեզ. քո երախտիք, քո անուն, քո փառք որ 'ի վերայ մեր հասեալ են, որ եղիցին, մաքրեսցի յանձինս մեր ամ̃ զոր մեք մերովքս յանցանօք աղտեղեցաք: Արդ՝ Բարերարէր Վերադին նորոգ ողորմութ̃բ, որպէս և յառաջնումն բարձրացեալ ես. կամ վերստին խնկեալ, օրհնաբանեալ, գովեալ այսր ընդարձակ, յիշատակաւ քոյոյ բանից և ողորմութեանց, ամ̃ և ասացեր, զողորմութիւն կամիմ քան թէ զպատարագ: Եթէ 'ի մէնջ յաղքատաց և 'ի չարակամաց զողորմելն պահանջեցեր, որչափ ևս առաւելլիս դու յողորմութեան. որ զամենայն ունիս. զամ̃ պարգևս ունիս, և զամ̃ տեսակ ողորմելոյ՝ ոչ միայն արժանաւորաց, այլև անարժանից. և 'ի քէն է ամենայն, 'ի քումդ բարութէ ելանէ ամ̃ բարի. մինչզի եթէ դու փակեսցես զդուռն ողորմութեան, յայլմէ գտանել զայն՝ ոչ գոյ:

Սէրտէն յառեալ հրէէն հեծութէ՝ Նորին հոգոյն, առ Նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ:

## ԲԱՆ. Ա:

Ա. Եւ արդ՝ ես երկրածինս մարդ՝ կենցաղականաւ [1] անկայուն գոյիւ զբաղեալ, և յիմարութ̃բ պատրողականաւ գինեաւս յիմարեալ, որ ամենայնիւ ստեմ, և ոչ միով իւիք ճշմարտեմ: Քանզի [2] որո՞վք դիմօք վերագրեցելովք նշանակօք աղարտեցելովք՝ յանդգնեցայց լինել յանդիման քում դատաստանիդ, ո՛վ իրաւադատ ահաւոր անճառ, անպատում, հզօր ա̃ծ բոլորից: Քանզի դասեալ աստրստին 'ի սոյն՝ զապերախտութ̃ի մեղուցեալ անձինս առ քումդ երախտիս, ցուցից զիրաւունս քո միշտ զօրացեա̃լ, և զանիրաւութիւնս իմ յաւէտ պարտաւորեա̃լ: Որ արարեր 'ի քո պատկեր պանծալի՝ 'ի ձեռն վեհիդ տպաւորութ̃ե, զտկարս օժանդակելով:

Բ. Զարդարեցեր բանիւ. փայլեցուցեր փչմամբ. մտօք ճոխացուցեր. իմաստիւք աճեցուցեր. հանճարով հաստատեցեր. 'ի չնչականացն որոշեցեր. հոգւով իմանալեաւ խառնեցեր. [3] իշխանականին գոյիւ պճնեցեր: Ոնար հայրաբար. սնուցեր դայեկաբ̃. տածեր ստացողաբ̃: Տնկեցեր զամբարիշտս 'ի քումդ գաւթի. ջրովն կենաց ոռոգեցեր. աւազանին ցօղով մաքրեցեր. կենացն վտակաւ արմատացուցեր. հացիւդ երկնայնով ջամբեցեր. ա̃ծային արեամբդ արբուցեր. անհպելիցն և անհասանելեացն ընտանեցու-

ցեր. 4 զաչս երկրեղէն 'ի քեզ համարձակեցեր. լու-
սովդ փառաց վերածածկեցեր. զհողանիւթ մա-
տունս անմաքուր ձեռացս' 'ի քեզ մատուցեր. զմո-
խիրս անարգ մահացու' իբր զնշոյլ լուսոյ յարգե-
ցեր. 5 զհայր քո հզօր ահաւոր օրհնեալ' մարդասիրա-
պէս և անարժանիս իմոյ անձին կնքեցեր: Ո՛չ կիզեր
զբերանս լցեալ նանրութբ' 'ի ժառանգակիցն կար-
դալ զքեզ. ոչ կշտամբեցեր զյանդգնեալս' 'ի քո
կցորդութի. ոչ ստուերացուցեր զտեսիլ աչացս' 'ի
քումդ ակնարկութի. ոչ արգելանաւ կապանաց' ը
մահապարտացն տարագրեցեր. ոչ խորտակեցեր ըզ-
դաստակ բազկիս, որ անմաքրապէս առ քեզ համ-
բառնայր. ոչ մանրեցեր զոստս իմոց մատանցս' 'ի
շօշափելն զբանդ կենաց. 6 ոչ պատեցին զինև մա-
ռախուղք' 'ի ծօնելն զքեզ ա՛հաւոր. ոչ փշրեցեր ըզ-
պարս ատամանցս' յըմբոշխնելն զքեզ անսահմա-
նելի. ոչ գնացեր բարկութեամբ խոտորնակ' 7 խո-
տորնակի ընդ քեզ հետևօղս, իբր ընդ վրիպեալ
տունն իսրայելի: Ո՛չ խայտառակեցեր 'ի հարսնա-
րանիդ' զանարժանս քումդ պարերգուէ. ոչ 'ի գձուձ
հանդերձին տեսիլ' զանօրինեալս յանդիմանեցեր.
ոչ կապանօք ձեռացս և ոտիցս' յարտաքին խաւարն
հալածեցեր:

Է. Զայս ամենայն մասունս բարեաց' և զներելոյդ
երկայնմտութի ընկալեալ 'ի քէն' բարերար, օրհնեալ
և յամենայնի միշտ երկայնամիտ, 8 փոխադրեցի զվնա-
սակարս պարտեաց' անթիւս և բազմօրինակ անօրէ-
նութիս, մարմնականաց և անձնականաց' ամենակիր
բազմածուփ խորհրդոց յուզմանց երկրաքարշութեց:
Զայսոսիկ քեզ' ած իմ և տր, ընդ այսքանեաց բա-
րեաց փոխաբերեցի. զայս քեզ' յինձէն հատուցի չա-
րիս, ըստ մոլորեան յանդիմանութեն առակի, մո-
ռացեալ զիմաստութի և սիրօղս յիմարութէ: Զայսց
բարեաց 9 երախտեաց կաճառս' ընդունայնութէ գնա-
ցիւք' չարաչար ունայնացուցի. զայս լուսաւորութի
շնորհաց անճառից' 'ի բարձրելոյդ խնամոց բարդե-
ցեալ' մրրկաւն խելագարութէ ցնդեցի: Իբր թէպէտ
բազում անգամ ծանուցար' կարկառմամբ ձեռին
քո այցելութէ ձգել զիս առ քեզ, ոչ հաւանեցայ

ըստ մարգարէին որ զիսրայելէ ամբաստանութեան. և թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյանալ, և ոչ ընդ այսմ սահմանաւ ուխտիւ փակեցայ, այլ դարձեալ զնոյն նիւթեցի չարիս, անդստին [10] յոճն առաջին մատեայ, փշոյն մեղաց հերկեցի զանդաստան սրտիս՝ յորոմանն արդիւնաւորութի։ [11] Ո՞ւ իս ելանեն առածք ծածարեալ ՚ը մարգարէիցն. քանզի մնացեր յինէն խաղողոյ. և ես ընդ այնորիկ փուշ շաւաւիղեցի. դարձայ յանախորժ դառնութի պտղոյ՝ այգիս օտարացեալ. բուսան հարի զանհաստատ հողմոյ, որովք միշտ տատանեալ՝ այսր անդր տարաբերիմ. ըստ ձայնի երանելոյն յոբայ՝ ընդ ճանապարհ իմն անդարձ գնացի. ՚ի վերայ աւազոյ՝ շինուածս յիմարութե կառուցի։ [12] Այնատարր հետովք խաբեցայ՝ կենացն անձկալեաց հասանել. փակեցի ինձէն զելիցն ուղւորութի. բացի կամաւ զկորստեան խորխորատն։ Եսյլ զպատուհան լսելեացս իմոյ՝ առ բանից կենաց ընդունելութի. կափուցի զաչաց հոգւոյս հայեցուած՝ առ ՚ի զկենայն դեղ նկատել։ Ո՛չ ընդոստեայ ՚ի թմբրութենց լքմանէ մտացս՝ ՚ի պատգամ փողոյդ ահաւորութե. ոչ զգաստացայ ՚ի բողոք գուժի՝ հրափորձական աւուրն ընտրութե. ոչ երբեք զարթեայ ՚ի նիրհմանէ քնոյն մահացուի, որ ՚ի կորուստն կարապետէ [13]։ Ո՛չ ետու հանգիստ քոյ հոգւոյդ՝ ՚ի մարմնեղէնս տաղաւարի. ոչ ըե բնութի չնչոյս խառնեցի զմասն շնորհաց քումդ պարգևի. իմոյս ձեռօք կոչեցի կորուստ, զի առակողին, զհոգիս կենդանի մահացուցանել։

Դ. Եւ զի՞նչ է ինձ սակաւս և նուաղադոյնս յօդել՝ [14] սահմանս կսկծելիս չափաբերականս, մինչ անցեալ է ըստ քանակութի, և վրիպեալ ըստ բժշկութի։ Արդ՝ քո՛ է ընձեռել կեանս՝ հոգւով մեռելոյս, և անոխակալութբ մատչել առ այցելութի դատապարտելոյս՝ որդի այ կենդանւոյ. քեզ փառք յաւիտ. ամէն։

---

(1) Անկայուն գոյն։ Գոլով ես մարդ երկրածին, ոչ միայն անհաստատ իրօք աշխարհի զբաղիմ, այլև յիմարութբ իբրև արբեցուցիչ գինւով մտաթափ եղեալ, ամենայնիւ ոգւով. յորժամ զի յիմարութենն խօսիմ կամ գտանիմ, միշտ սուտ և սխալեմ. որպէսզի մօտ՝ ոչ երբեք առ ճշմա-

րեան, ուր ընդհակառակն՝ մարմնով արքայն խօսի բազում անգամ զճշ֊
մարիտն, թէպէտ առանց զգալոյ և անընդդիմաբար : Այսպէս ը՟ յի֊
մարութեան խմանի առելն միշտ . այլ ոչ եթէ առհասարակ յամ բանս .
ապա թէ ոչ՝ նաև յասելն զայս բան՝ սուտխօս լինէր :

(2) ՈՐԴԻ ՏԻԵԶՕՔ : Սակայն ահա զգաստացեալ այժմ քո շնորհօք 'ի թմրու֊
թենէս, ճանաչեմ և խոստովան լինիմ, թէ որպիսի դիմօք, որով երեսօք
ունելով ես զվերոգրեալ նշանակս կամ ցոյցս պարսաւելիս, յանդիման
լինել իշխիցեմ քում դատաստանիդ . մանաւանդ յորժամ զիմ ապե֊
րախտութիւնս դնիցեմ հանդէպ անբաւ երախտեաց քոց : Քանզի արա֊
րեր զիս ը՟ պանծալի պատկերիդ քո 'ի ՅԷՌՆ ՎԷՀԻՏ ՓԴԱՌՈՐՈՒԷ . ը՟ զնմա֊
նութիւ մեծիդ ԱՅ պատուորելով յիս . կամ դու վեհդ, ամենարուեստդ
քեզէն գծագրելով, և ոչ հրեշտակաց ձեռօք . ՂՈՋԱՐՈ ՕԺԱՆԴԱՔԷՐԴԼ . ը՟
զիս զընաւ անկարօղս՝ զանյարմարս 'ի քոյ նմանութիւ, դու քեզէն յար֊
մարելով : Իսկ թէ իւ արարաւ մարդ 'ի պատկեր ԱՅ, թէ՛ բնութբ,
և թէ ը՟ շնորհի, բացայայտի յաջորդօքն :

(3) ԻՒԽԱՆԱՔԱՆԷՆ ԳՈՅԷ : Անձնիշխան կարողութբ զարդարեցեր, որով
մարդ՝ տէր է գործոց իւրոց :

(4) ԶՕՐԸ ԵՐԿՐԵՂԷՆ : Զերկրաւոր աչս իմ համարձակեցուցեր հայել
'ի քեզ 'ի խորհրդեան սեղանոյ : մի օրին . ՂՈՋ, ը՟ զաջ ձեռն իմ : Զօ֊
ԽԻՐՈՒ ԱՆԱՐԳ : Թուի յանձն իւր յարմարել զգրեալն (ը՟. մակ. ա. 20.)
ուր պատմի յաղագս հրոյ տաճարին՝ թէ քահանայք նախ քան զկործա֊
նումն թագուցին յանջուր ջրհորի, և յետ ժամանակաց հանաւ այն
իբրև ջուր դանդաղամած, և արկեալ 'ի վերայ ողջակիզացն անդէն բոր֊
բոքեցաւ : Արդ՝ որպ այն հուր իբր 'ի մոխիր դարձեալ էր, այլ յետոյ
հրակերպ վառեցաւ, նոյնպէս զիս աւէ՝ որ անարգ մոխիր էի, նաև մա֊
սակար եւս, դու 'ի լոյս նշուլադեղ փոխեցեր :

(5) ԶՀԱՅՐ ՔՈ ՀՕՐ : Որպիսի անարգամեծար բարերարութի է այս, զի զա֊
հաւոր զՀայր քո ը՟ ածութբ՝ սահմանեցեր լինել նաև ինձ անարժանիս
հայր . դու քեզէն՝ քո կամաւ և վճռով աւանդեցեր՝ զնա Հայր մեր
կարդալ : Եւ ես զարմանամ, զիարդ ոչ այրեալ տոչորի բերան իմ 'ի կար֊
դալն զքեզ ժառանգակից և եղբայր :

(6) ՈՒ ԴՊՐԵՑԻՆ ՂԷՆԷ : Ցրնծայեալն զքեզ կամ 'ի մատուցանելն 'ի ՍԲ սե֊
ղանին, ոչ պատեաց զինև մառախուղ 'ի քումմէ ահաւորութեէդ . զոր
օրինակ եղև 'ի տաճարին սողոմոնի, յորժամ քահանայքն հանգուցին
զտապանակ ուխտին 'ի սրբութիս անդր . և յանկարծակի ամպ ելից զտե֊
ղին, մինչև չկարէին քահանայքն կալ 'ի սպասու . առ որ երգեաց և սո֊
ղոմոն . Տէր ասաց հովանի լինել միգով : ( ը՟ . թագ . ը՟ . 10 . 11 . 12 ) :
Սոյնպէս, ոչ փշրեցեր աւէ՝ զատամունս իմ, ՅԸՄԲՈՒԽՆԷՆ ԴԷՆԴ, 'ի ծամ֊
քելն, 'ի ծամելն զքեզ ընդ տեսակօք հացի 'ի խորհուրդ ՍԲ հաղորդու֊
թե : տես և խէ . լծ . 9 :

(7) ԽՈՍՏՈՎԱՆԻՔ ԸՆԴ ՔԵՂ : Ոչ վարեցար խոտորնակ ընդ գնացօղս ը՟ քեզ
խոտորնակի . որպ առ սուրն իէլի : ( Եզեկ . ժը՟ 5 . 36 . ) այսպէս նախա֊
դրութիւն ԸՆԴ կրկնելի է զօրութբ . ը՟ ոչ գնացեր խոտորնակի ը՟ հեռեօղս
խոտորնակի ը՟ քեզ . ոչ ածեր 'ի վերայ իմ զհակառական ինձ, որ զհա֊
կառակն կամաց քոց գործեցի :

(8) ՓՈԽԱՏՐԷՔԻ : մի օրին . ԺՈԽԱՐՀԷՔԻ : Փոխանակ բազմապատիկ երախ֊
տեացն և երկայնմտութեանդ՝ ես պարտաւորս հատուցի քեզ անթիւ
անօրէնութիս մարմնական և հոգևոր մեղաց . ԱՊԵՐԱԽՏ, զոմ ապերախ֊
տութիս կրող խորհրդոց . ԵՐԿՐԱՔԱՐՇԱՒՈՐԷՑ . երկրաւէր յօժարութեց : Զայս֊
պիսի գարշանս մեղաց հատուցի քեզ, եղեալ յիմար ժողովուրդ՝ ը՟ յան֊
դիմանութեն մովսեսի : (ը՟. օրին . լը՟ . 6 ) :

(9) Երախտեաց խաճառ : 2 օրին . Երախտիս, գուցէ փոխանակ Երախտից . Զայսքան բարերարութեց ժողովս կամ յաճախութիւնս ունայնացուցի . անգործ արարի, 'ի մնոտի գործ պարապելով :

(10) Յաճն առաջին : Ակնարկէ 'ի բանն (Երեմ . Դ . 9 .) * Կորնչին քո ոտք կթող՝ յոճ խոր || . որ 'ի տունն որթոյն՝ յորմէ կթեաց : Այսպէս և ես 'ի մեղսն յորմէ որբեցայ, վերստին դարձ արարի :

(11) Առ խո ինչն : Յիս կատարին, առ խս յարմարին բանք և օրինակք մարգարէից, զոր 'ի վեր և 'ի վայր յիշատակեմ :

(12) Լայնատարր հեռուն : Յոյժ լայն և ընդարձակ ճանապարհաւ կործեցի համանել ցանկալի կենաց այգեստանն, հակառակ տէրունական վճռոյն : (Մատ . Է . 13) :

(13) Ու էտա հանգիստ : Հայի յառաջեալն (Ծննդ . Ը . 3 .) * Մի մնասցէ ոգի իմ 'ի մարդիկդ վասն լինելոյ դոցա մարմին || . որպէս և աղաւնին նշանակ հոգւոյն՝ ոչ եգիտ հանգիստ 'ի մեռեալ մարմինն . (անդ Ը . 9 :) Առ որ և բանն խմատ . (ա . 4 .) * Հոգին որ ոչ բնակէ 'ի մարմնի վարեցելոյ մեղօք ||: Այսոցիկ բացատրութի է յաջորդն, ընդ Բնաւ ... Ը շնչաւոր կամ զգայական հոգիս ոչ խառնեցի, այլ ոչ հաղորդեցի, ոչ միաւորեցի զմամն շնորհաց հոգւոյն սրբոյ՝ զիմաստութիւն կամ զհանճար կիմ զմաքրութի . զի շնչաւոր մարդ ոչ ընդունի զհոգւոյն այ . ( ա . կոր . Ը . 14 : ) Այսպէս հոգիս իմ բանական մնալով Ը շնչաւորին՝ անմասն 'ի հոգւոյն շնորհաց, ես ինձէն կորուստ անձինս գործեցի :

(14) Սահման խնծինն : Զի՞նչ օգուտ ինձ առէ՝ շարել կիմ հիւսել զպատնէշ տակաւ բանքս կակծեցուցիչս . և կիմ էր մի յառաջ բերեմ . ընդ Բերախտա, շափաւորս, ամփոփեալս, կիմ որք շափով հատուածոց յարմարեալ են . զի՞նչ այսոքիկ առ խմն մեղապարտութի, որ անցեալ է ընդ տանջանաց, քան զչափ . և Հրեղէն ընդ Բոցեղենաց, 'ի վեր քան զբծշկութի, անյոյս առ 'ի բժշկիլ : 2 օրին . ըստ Բոցեղենաց : Արդ՝ առ ի՞նչ այսքան յինէն առացեալք, մինչ ոչ զչափ չարեացս կարեմ ճանաչել և առել, և ո՛չ բժշկութի ինքնին գտանել, կիմ այնմ լինել արժանի, բայց զի զքոյդ ողորմութի շարժեցից՝ կեանս շնորհել, ևն :

Ս Երբորէն յաւելուած երկին հեծութ՝ նորին հոխողի, առ նոյն աղէրս նաղնանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

# ԲԱՆ . Ջ .

ա . Եսկ արդ՝ [1] զի՞նչ բարւոք դոյ առ այս, կամ ո՞ր օգուտ ինձ առ սոյն սահման ընթացից ձայնիս հեծութե՝ լքանել, և ո՛չ զամբարեալ չարաւ մահացու վիրիս՝ խարանաւ բանիս արտաքս հերքել . և կիմ զծանրութի սրտիս՝ մթերեալ ցաւոյս՝ հոգեկան խիթոյս, իբր տաղտկացուցանողական հնարաւորութե, մատնամուխ զզուանօք փսխել :

բ . Ու քանզի [2] ո՛չ գտայ արժանի պարծելոյ 'ի փառս ընդ սրբոյն դաս, որոց լի են բերանք նոցա ծաղու, և

շրթունք իւրեանց ցնծութե՜, ո՜ առակողին և սաղ-
մոսողին, 'ի կարգն երկրորդ դիմեցից՝ զնմանիսն իմ
յիշատակել համայն աստանօր. Թէպէտ առ իմում
Թերութե բարուց անբարեաց՝ և նոքա յաղթականք
իցեն, իբր ապաշաւեալն քան զանապաշխարն: Տօ-
նելի եղև մանասէ, առ իմոց պարտուցս առաւելու-
թի. պատուեցաւ և փարիսեցին, առ դժնէիս ամ-
բարշտութի. գովեցաւ անառակ որդին, առ անդար-
ձիս ուխտազանցութի. յիշատակեցաւ [3] կեղծաւո-
րութի որդւոյն ամասեայ, առ անշնորհութի ապախ-
տաւորիս. օրհնաբանեալ եղև աւազակն, որ դատա-
խազն է անհաւատից. պատուեցաւ [4] կինն պոռնիկ՝
սկզբնամայրն ապաշաւողաց: Ո՛չ պակաս քան զփա-
րաւոն՝ զտեղծուած սրտիս իմ խստացուցի. ըստ օ-
րինակի խռովութե մրրկաց ծովու ծփեցայ. ո՛չ այն-
քան սարսեցի և պատկառեցի 'ի սաստկութե քումդ
հրամանի, որքան ալիք ծովուն՝ յեզերացն: Ընդ
Թիւս չափուց կշռուէ առ իմս գործոյ՝ և [5] աւազոյն
կոյտ սահմանեցաւ. պակասեաց անբաւիցն շիղջք,
առ համբարս իմոցս անօրէնութեց:

Գ. Ով թէպէտ և յոյժ բազում են մանունքն՝ 'ի
յափունս ջրոյն համահաւաքեալք, այլ [6] ուրոյնք և
առանձնականք 'ի ծննդոց աճելուէ. իսկ մեղանք [7] ի-
մոյս յանցանաց՝ անթիւք, զորս անհնար է առնուլ 'ի
միտ: Ոմն՝ և ծնունդք իւր. ոմն՝ և շառաւիղք իւր.
ոմն՝ և բիծք իւր. ոմն՝ և արկածք իւր. ոմն՝ և փուշք
իւր. ոմն՝ և արմատք իւր. ոմն՝ և հաստուածք իւր. ոմն՝
և պտուղք իւր. ոմն՝ և նշխարք իւր. ոմն՝ և ձիւղք
իւր. ոմն՝ և ոստք իւր. [8] ոմն՝ և արմկունք իւր. ոմն
և ձիրանք իւր. ոմն՝ և մատունք իւր. ոմն՝ և խլրտ-
մունք իւր. ոմն՝ և զօրութիւնք իւր. ոմն՝ և ազդմունք
իւր. ոմն՝ և նշմարանք իւր. ոմն՝ և տիպք իւր. ոմն՝ և
մնացուածք իւր. ոմն՝ և ստուերք իւր. ոմն՝ և մթու-
թիւնք իւր. ոմն՝ և յարձակմունք իւր. ոմն՝ և հնարք
իւր. ոմն՝ և պատիրք իւր. ոմն՝ և դիտմունք իւր. ոմն՝
և դիմեցմունք իւր. [9] ոմն՝ և չափք իւր. [10] ոմն՝ և խորք
իւր. ոմն՝ և դարշունք իւր. ոմն՝ և կայծակունք իւր.
ոմն՝ և կիրք իւր. ոմն՝ և մթերք իւր. ոմն՝ և գանձք
իւր. [11] ոմն՝ և ցնցուղք իւր. ոմն՝ և աղբերք իւր. ոմն՝

և գիտք իւր․ ոմն՝ և շանթք իւր․ ոմն՝ և հրդեհմունք իւր․ ոմն՝ և պատկառանք իւր․ ոմն՝ և վիհք իւր․ ոմն՝ և անդունդք իւր․ ոմն՝ և բորբոքմունք իւր․ [12] ոմն՝ և աղջութիք իւր․ ոմն՝ և ամպրոպք իւր․ ոմն՝ և կայլակք իւր․ ոմն՝ և հոսմունք իւր․ ոմն՝ և հեղեղք իւր․ ոմն՝ և սառնամանիք իւր․ ոմն՝ և գըրունք իւր․ ոմն՝ և շաւիղք իւր․ Հնոցն՝ և տապ իւր․ հրատն՝ և գոլորշիք իւր․ [13] հալոցն ճարպին՝ և ճէնճերմունք իւր․ օշինդրն՝ և դառնութի իւր․ կործանիչն և հնազանդեալք իւր․ բռնաւորն և յեղուզակք իւր․ գոռոզն՝ և սպառազէնք իւր․ աւազակապետն՝ և գումարտակք իւր․ գազանն՝ և կորիւնք իւր․ խածանողն՝ և ծակոտուածք իւր․ [14] ապականագործն՝ և նմանիք իւր։

Է․ Արդ՝ այսոքիկ [15] պետք են գլխաւորութեց՝ ապականողաց ոգւոց համայնից, դասեալք ըստ ինքեամբք նուաճուցիք մասանց՝ իւրաքանչիւրոք ՚ի սոցանէ բիւրք բիւրուց՝ և հազարք հազարաց․ իսկ զհամայնիցս թիւնա միայն զօրէ իմանալ, որ զառ ՚ի մէնջ չէութիւնն գրեալ՝ իբր զէութի գործոց տեսանէ։ Իսկ արդ՝ եթէ ոք զանձն ոչ խաբեսցէ, և առ երեսս ոչ կերպարանեսցի, և կեղծաւորաբար [16] ոչ անհաւատեսցէ, և մարդ զինքն ծանիցէ, և հասարակաց բնութե վարեսցի, և երկրածին զանձն դիտեսցէ, և ՚ի չափու իւրում կանոնին կացցէ, իմասցի ծանիցէ զնախաթիւ մասունս արկածիցդ վերագրելոց, թէ ոչ ընդունայն ինչ գրեցի, և կմ զընաւ խոկունն սահմանեցի, որ ՚ի մերս բնութե պտուտկի ազգի ազգի վրիպականութի․ այլ ՚ի բիւրուցն արդասեաց չարեաց՝ չափ մի երևեցուցի, զի նոքօք և զայլսն իմաստասիրեսջիք, թէպէտ և ոչ բաւանդակապէս։

---

(1) ԶԻՆՉ ԲԱՐՒՈՅ ԳՈՅ։ Զինչ բարի գոյ կմ ծնանի յայսմանէ, կմ զինչ օգուտ ՚ի բանս հեծութե մեռանել թուլանալով, վհատելով, եթէ ոչ ՊԱՏԵՐԱԶՄԵԼ ՔԱՋԱՊԷՍ, զլցեալ թաշախ մահաբեր վիրացս արտաքս հանել ԽՈՀԱՆՈՒ այրեցող երկաթով յանդիմանական բանիւ․ և զծանրութի առամդքացս՝ որ տայ զհոգևոր ԽՆԴ, ապաքինացուցիչ հնարիւք, ըստ մասին մխելով ՚ի փողն՝ և շարժելով զսիրտն՝ արտաքս փախել։

(2) ՈՒ ԳՈՅ ԱՐԺԱՆԻ։ Վասն իմոյ մեղաց չէ ինչ արժանի պարծել փառօք ընդ դասս Սրբց, ըստ բանի սաղմոսին (Ճխթ. 5.) որոց բերանք լի են խըն-

գուժ ը տառապելին. (Յոբ. Է. 21.) ուստի չկարելով խնդալ ը Արդա-
րոց անմեղաց, որք յառաջնում կարգի են, միայն լինի գիտել 'ի կարգն
երկրորդ, որ ապաշխարելոցն է, մեղուցելոց իբրև զիս. Թէպէտ և ա-
խմամ Բերդուէ, համեմատեալ առ թերութեն իմ, կշռելով զապաշխարա-
ւորիկ պակասութեն իմ, վերագոյն են և նոքա, որչափ ապաշխարօղն քան
զանապաշխարն. վա զի մանաւանդ խառն ապաշխարելոցն՝ հաշուելի եղև
բաղդատեալ ծանրութե պարտուց խոց: Եւ փարխեցին ունելով զբա-
րի գործս ինչ, պատուելի եղև քան զիս, որ անբարշտութեն միայն ու-
նիմ, ևն:

(3) Կեղծաւորութե որդւոյն ամաւնայ: Յիշատակելի եղև կեղծել ճծպաշ-
տութեն ողևոյ կին ազարիայ արքայի. (Գ. Թագ. ԺԴ. 21. Է. Մնաց. ԻԲ.
21:) Ձի կամելովն ծածկել 'ի սաՃարին, կարծէր աւելի լինել առնել 'ի
պատահս ոյ. որով զխորհրդակալու կանս եցոյց, ուր ես ապաշխարհ եմ:

(4) Կենդանի թաղել: Մագդաղենացին մարխամ կարծեցեալ. բայց հաւա-
նելի ևս՝ կլինի այն յայանի մեղաւոր 'ի տան սիմոնի բորոտի. որ և յօրհ-
նաբանեալ բերանոյն ԲՆի պատուեցաւ: Եւ սա մայր կի առաջին առի
ոչ միայն պոռնկաց ապաշխարողաց, այլև զի 'ի գիրս՝ առաջին ապաշխա-
րող 'ի հաւատացեալ կանանց՝ նա յիշատակի. Թող զսախաբ՝ որ չէր 'ի
հաւատացելոց:

(5) Աւաղոյն հոյզ: Համեմատութբ չափու չար գործոց՝ կոյտ աւազոյ
առհմանեցաւ, չափելի եղև. և անբաւ իրաց ընդէմ, դեղքն պակաս գտան
քան զանօրէնութիս իմ.

(6) Որբոյն և առանձնականն: Թէպէտ Թուով բաղում են մանր իրք՝
աւազ, խիճք, և այլք ժողովեալք յափն ծովու, բայց հեռի և զուրկ
են 'ի ծնանելոյ. իսկ իմ չարիքն՝ ինքեանք անթիւք են, և զայլս ևս ծնա-
նին: Այս 'ի յաջորդադ կարգեալ դնէ զբաղումն՝ Թուով վխթարեն և
երկար, զորս մի առ մի մեկնել՝ երկար լինի, մանաւանդ և դժուարին.
զի բազումք 'ի բառից այլաբանեալք գոլով, 'ի զանազան մեղս կամ
յախտս յարմարին: Զայս միայն ասել շատ լիցի, զի զգլխաւոր մեղսն
կամ զախտս եզակի դնելով ոճ, զերկրորդն միշտ բազմաւոր դնէ, յայտ
առնել Թէ միոյ չար ախտի բազում են ծնունդք չարք:

(7) Խմոյս յանցանաց: 3 օրինի. Խմոց յանցանացս:

(8) Ոճ և արմատոյ էր: Արմատն՝ (արմատ) որով լինի հարկանել կի
մեծ զայլս: Այսպէս բարկութեան արմատք են կռիւ, նախատինք,
և այլն:

(9) Ոճ, և լաթոյ էր: Մեղքն՝ որք սահման ունին, որք են արտաքին
մարմնական մեղք՝ շնայլութե, արբեցութե, ևն, որոց 'ի պակասել նիւ-
թոյն՝ թէպէտ և կայցէ կամք մեղացն, այլ գործն ոչ յաջողէ, որով և
անհնարին առնէ:

(10) Ոճ, և խարոյ էր: Մեղքն՝ որք ընդհակառակն վերագրելոցդ՝ 'ի խորս
ծգլին. ոմք են հոգևոր մեղք հպարտութե, նախանձու, ևն:

(11) Ոճ, և ցնցոտւոյ էր: Ց ցայտմունք. ոմք գայթակղութե մեղքն, որոց
ցայտմունք են մեղք գայթակղելոցն, կամ վատանունութիւն ծնողաց,
տանն, ազգին, ևն:

(12) Ոճ, և աղջամղջի էր: Մթութիւնք, խաւարք. որպէս արբեցու-
թին՝ որ ածէ խաւար 'ի միտս և յաչս:

(13) Հալոցն ճարպին: 'Ի լաւ օրինակ այս հատուած յետոյ դնի քան
զհետևեալն, օչինտրն՝ Ն գառնութե էր: Հալոց է կաթսայն կամ սանն՝
յորում հալի ճարպն, և զճենճերն 'ի վեր տայ. և խմանի սիրտ մեղա-
ւորին՝ որ 'ի հուր տանջանաց կի անձկութե սրտին մաշէ զփափկութիւն,
յորս վայելեաց յաշխարհի:

(14) Ապաշխանագործն՝ և նմանէ էր : Զնք յերկս օրին :
(15) Պէտք էն գլխաւորութեց : Վերաձառեալ մեղքս են իբրև իշխանք և գլխաւորք, ի՞ որովք կան այլ մեղք իբրև նուաճութեք, հպատակք. և զամենեցուն թիւն ած միայն գիտէ, որ զոչէ կարծեցեալն 'ի մէնջ իբրև փեղեալս տեսանէ :
(16) Ու անհաստատեւոյէ. այլ օրին. ու անհաստատայէ : Եթէ ոք առանց խաբէլոյ զանձն և կեղծաւորելոյ ոչ երկմտեսցի, այլ մարդ ճանաչելով զանձն՝ զհաստատակաց բնութեն կիրս զգայցէ, և խմանայցէ զինքն հողածին գոլ, և 'ի չափու տկարութե խորոյ ինայցէ սրտիւ, յայտնի ծանիցէ այնմխուն՝ թէ զնախատեալ մտաւս պատահմանց բնութեա ոչ աւելորդ գրեցի, և ոչ խակ զբովանդակ չափն ծանուցի զանազան սխալմանց՝ որք յապականոյ բնութեաս շարժին, այլ 'ի բիւր գործոց չարեաց սակաւս ինչ յայտնեցի, որովք և զայլս կարիցէք իմանալ, թէպէտ առ կաւին ոչ բովանդակապէս : Վասն զի նկատելով զհանրական ապականութի բնութեա, իմանամք թէ ամենակարօղ է մարդ 'ի չարիս՝ թէ ոչ յամենակալէն ած ուղղեսցի 'ի բարին :

---

Մեռատեն յաւելուած հրէէն հեծութե՝ նորէն հոգոց, առ նոյն աղէրս հաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ած :

## ԲԱՆ. Ե.

ա. Ա՛ս զի մի զփրկութեն վստահութի խայտառ կարեցից, և ապաղէն եղեալ՝ մատնեցայց այսքանեաց աներևութից ընդդիմամարտից, որք ոչ այլ ինչ են՝ քան թէ ընտանիք թշնամիք ինքնածին բուսեալք, զոր վերագրեալքդ սահմանեցին՝[1] զորքանութի պատկերին ձեռյ եղեալ ահարկուս : Յուցից առ սմին բազմաբոյլ բանութե[2] մարտկացդ՝ զօրեղ ախոյեանս ածականս՝ ամենայաղթօղս և անպարտելիս,[3] թէ և կսկծելիս կիրս՝ և դժուարակութ պտուղս ծառոց անհասանելեաց, և անկոխ ճանապարհաց երկք և տաժանմունք : Քանզի զայն ած գունդս չարութե բանսարկուին զօրաց՝ սակաւ մի արտօսր կաթուածոց աչաց՝ իբր զճճիս զեռունս բազմատանկս[4] խխայթից երկրի տկար խլրտմանց՝ անկեալ 'ի վերայ ծորումն ձիթոյ, կամ դոյզն դեղ ինչ սատակչական, ցամաքեցուցանէ. և դոյզն մի հառաչումն սրտի հեծութե եղեալ 'ի յոգւոյ, իբր շնչումն հարաւային ջերմութե՝ խառնեալ յարևու, զսառնամանեաց սաստկութի հալէ. քանզի[5] ըստ միումե

նմանութեան հեշտածինք են. և ըստ միսումդ դիմա-
դրութեան դիւրամեռք։

Գ. Այլ ես ո՛չ երբէք կասեցից դատել զդատա-
պարտեալս՝ բանից կսկծմամբ, [6] պարսել զպարտա-
ւորեալս՝ լիբր զխաստակար անփրկանաւոր անհա-
մոզելի. վասն զի զոմանս սատակեալ 'ի յիմոց նեղ-
չայն, ոմանց զօրութիւն տամ կենդանանալ՝ առ հող-
ւոյս կորուստ։ Տունկս դառնոստեան, որ զդարշու-
թիւն անառակ վարուց ծաղկեցի. բարունակս ապա-
կանաբեր և մահողկուզեան, որ զկորստեան զէնին
երկնեցի. քանանու զաւակս՝ և ո՛չ յուդայի, զի ասից
մեծին դանիելի. որդիս գեհենին, և ո՛չ արքայութեան.
ժառանգս դժոխոց, և ո՛չ փառացն փափաքելեաց.
նիւթս տանջանացն, և ո՛չ հանգստեան։ Ապերախ-
տըս առ երախտաւորդ. ապաշնորհս առ բազմա-
պարգևդ. միշտ մեղուցեալս առ երկայնամիտդ. դառ-
նացուցիչս քաղցրութեան բարերարիդ։ Ոռայս չար
և վատ, զի տէրունեան յանդիմանութեանն. իմաստունս
զչարիս գործել ըստ եսայեայ նախասացութեանն.
ժիրս առ ժանդագործութիւնս զազրութեան։ Փոյթս առ
'ի բարկացուցանել զՏէրն. մշտաշարժս առ գլուտս
սատանայականս. հանապազորդեան [7] միշտս ստաց-
ղին։ Թոյլս առ բարեացն թռիչս. [8] ծոյլս առ երա-
նութիւն ընտրութեան. դանդաղս առ դիտմունս խոս-
տացելոցն. անարիս առ կարիս պիտանեացն և օգ-
տակարացն. պաշտօնեայս տիրադրուժ երախտամո-
ռաց։

Դ. Վա՜յ անձինս մեղաւորի, զի զարարիչն իմ բար-
կացուցի. վա՜յ որդւոյս կորստեան, որ զկենդանութեանն
ձիր մոռացայ։ Վա՜յ պարտապանիս անհամար [9] բիւ-
րուց քանքարաց, որ ո՛չ գոյ հատուցանել։ Վա՜յ բեռ-
նակրիս ծանրութեան մեղաց դժնէից, որ չունիմ դառ-
նալ [10] առ հանգստարարն. վա՜յ խաստակարիս տէրու-
նեան պարտուցն, որ [11] չիք հնար յանդիման լինել
հզօրին։ Վա՜յ եղեգնախառն կիզանողականս նիւթոյ,
որ տոչորելոց եմ 'ի գեհենին. վա՜յ ինձ առ այս յի-
շատակ, զի [12] նետք բարկութեան Աստուծոյ՝ այրեցելովք են
գործեալ. վա՜յ յիմարութեանս, որ ո՛չ մտառեցի [13] ըղ-
ծածկեցելոցն յայտնութեան հանդէս։ Վա՜յ ամբարշտիս,

զի միշտ անդադար [14] ոստայնս չարեաց կկեցի. վա՜յ զմարմինս պարարողի՝ կերակուր որդանցն անմահից, կատողացն Թունաւորաց զիա՞րդ համբերեցից. վա՜յ ինձ առ արբումն մահուն բաժակի, որպէս զյաւիտենականն տուժեցայց. վա՜յ ինձ առ ելս անարժան հոգւոյս՝ յեղկելի մարմնոյս, ե՞րբ դատաւորին Ճշմարտի յանդիմանեցայց. վա՜յ ինձ առ նուաղութե՟ն իւղոյն լապտերաց, զի անարծարծելի է աղօտանալն. վա՜յ ինձ առ Ճեպ տագնապի [15] ահ՟ին պակուցման, յորժամ առագաստին մուտն փակեսցի. վա՜յ ինձ առ ձայնին ահաւորութե՟ն դողացուցչաց և սարսափելեացն բանից՝ երկնաւոր Թագաւորին վՃռաւ կնքելոյն, Թէ ո՛չ գիտեմ զքեզ:

---

(1) Զօրտանաբէ պաթկերէն յետոյ էտէալ ահարկուա : Ցուցէ առ ամն ևն. 2 օրին. այսպէս ունին. Սահմանեցին զօրտանաբէ պաթկերէն յետոյ : Ետէալ ահարկուա ցուցէ առ ամն, ևն:

(2) Մարթկայտ : 2 օրին. մարթակցայտ :

(3) Թուէն խոկծէլեա : մի օրին. Բեղկեան խոկծէլէ: Իմաստք սկսուածոյ ա զօթիցս են : Զայսքան աներևոյթ պատերազմօղս՝ որք են իսկ ընտանի Թշնամիք ծնեալք յախտաւոր բնութենէս, 'ի համար արկի՝ իբրև պատկեր ինչ ահարկու բանակի ձևացուցանելով: Բայց զի մի՛ վհատեալ պասու՝ իբրև անզէն մատնեցայց 'ի ձեռս նոցա, ցուցից ընդդէմ այդչափ բուռն պատերազմողաց՝ ախոյեանս զօրեղս, զխնկալս ամենայաղթօղս, ը՟ զգործս ապաշխարութե՟, զպահս, զաղօթս, զողջս ևն. Թէպէտ և այսօրինակ Թուին կսկծեցուցիչ գործք, իբր դժուարակթելի պտուղք իցեն բարձր ծառոց, կամ անկոխ անհարթ ճանապարհաց աշխատութիւնք. զի այսպէս երևին՝ իբրև հակառակք ապականեալ բնութե՟, և սովորութե՟ն 'ի մեղս: Սակայն ը՟ լիացն ներգործութե՟ կարի դիւրինք են. զի բաւական է սակաւ մի արտօսր, դոյզն ինչ հառաչումն ևն:

(4) Խխոայեհ էրկրէ : որդանց կամ Թրթրոյ՝ որք 'ի փտութենէ ծնանին 'ի հող, թկար խուրթմանց, և անզօր շարժմամբ սողին 'ի հող:

(5) Ըսթ մըսատ նմանաբէ : Մեղքն ը՟ օրինակի ճճեաց դիւրաւ ծնանին 'ի մեզ փոքր մոածութե՟ և հեշտութե՟. որպէս ճճիքն 'ի դոյզն ջերմութէ: Բայց և ըստ մըսատ տիմատրաբէ, ըստ հակառակ դեղոյն՝ դիւրաւ մեռանին, ճճիքն ձիթով կամ փոշւով, մեղքն՝ սակաւ արտասուօք:

(6) Պարաէլ զզարթաարէալ : Ոչ կասեցից սաէ, ը՟ կասեցայց, ոչ դադարեցից հարկանել կշտամբութե՟ և Թշնամանօք զպարտաւոր անձն իմ. վասն զի ապաշխարութե՟ առաւել զամմս 'ի մեղաց իմոց, և յետոյ ծուլութե՟ս զօրութի տամ այլոց մեղաց կենդանանալ. զոր օրինակ, ապաշխարեմ զբարկութիւն, և կենդանացուցանեմ զհպարտութիւն, ևն:

(7) Վիհար օթայօղէն : ը՟ արարողին ոյ, կի՟ ծնողին զմեզ աւազանաւն. զի առնելով զանհաճոյսն ոյ՝ վշտացուցանեմք զնա:

(8) Ծայր առ էրանաբէն ընթրաբէ : ը՟ առ երանելի վիՃակ ընտրութեն 'ի փառս, կի՟ առ երանութի ընտրելոյն: Հին լուծ. ըստ այլ օրինակաց

զնէ՛ առ երջանկութեն ընտանութեն, և առնու 'ի վերայ իւրն երանութեանց՝ որով ասէ՝ 'ի բնութենս մերմէ ընտանենամք այ : Գանդաղ . հեղգ, ծանրաշարժ 'ի հայեցուած կիր 'ի նպաստ խոստացեալ բարեացն : անարի, երկչոտ, անձարակ 'ի կարևոր գործս՝ պիտանիս իւրն և ընկերաց :

(9) Բերևոց գանդաղոց : 2 օրին . բերևոց գանդաղոց :

(10) Առ հանգստարանն : մի օրին . առ հանգստարանն : Վա՜յ ինձ ասէ՝ որ ծանրաբեռնեալ եմ դժնդակ մեղօք, և ոչ իշխեմ դառնալ առ հանգուցիչն . որ կոչէր զիս ասելով, եկա՛յք աշխատեալք և բեռնաւորք . զի այլ անգամ թեթևացոյց զիս 'ի մեղաց, և ես դարձեալ բեռնաւորեցայ :

(11) Զէր հնար յանդիման լինել : 3 օրին . չէր յանդիման լինել :

(12) Նեղեալ բարկութեն : մի օրին . զնեղեալ բարկութեն : Վա՜յ ինձ ասէ՝ 'ի յետ շատակեր զայս, թէ նեղք բարկութեն այ գործեալ են այրեցելովք . զի յայրեցեալ նիւթս, կա՛մ մխեալք 'ի կրակ :

(13) Զծածկեցելոյն յայտնութե հանդէս : 3 օրին : զծածկելոյն հանդէս : Վա՜յ յիմարութե իմում, որով 'ի միտ ոչ առի թէ ծածկեալ յանցանք իմ, ամօթալի մեղքն հանդերձ և քննութ յայտնելոց են 'ի տիեզերական ատենին :

(14) Ոստայն լարեալ կկեցի : Զթելս չար գործոց կկոցաւ գործեցի . զի զմեղս 'ի մեղս յարեցի : Անուանէ 'ի բանն (Եսայ . ԾԹ . 5 .) *Զոստայն սարդից անկանեն :

(15) Ահեղ պակուցման : 2 օրին . ահագին պակուցմանն : Յայս երկու յետին բանքս ՃԷ առակի յիմար կուսանացն յարմարէ զաղէտս հոգւոյն . յորժամ իւղ ողորմութեն պակասէ 'ի հանդերձեալն, և աղ աղաչեցուցէ տադնապէ ընդ փակել առագաստին երկնից . ուր սարսափելի ձայնն լուի թագաւորին, ոչ գիտեմ զքեզ : Այսպէս կնքէ զաղօթքս, մռնացեալ գտցես առ սաստիկ պակուցմանն, կամ ոչ իշխեալ 'ի փառաւորութե աւարտել . որում ոչ ուշ եղեալ ընթերցող ոք՝ չգիտեմ ո՞րպիսի շատախօս, կարծելով ճշուլ զթերին՝ յաւելու տասնօր խօսս յերկարս զղջական՝ անյարմարագիրս՝ յօրինակ ինչ գրեալ 'ի թուին պԺԴ, 1365 : Բայց նկատել արժան է՝ զի ոչ այս բան միայն, այլև ՃԻ և ՃԷ . առանց փառաւորութե աւարտի, պատուղեալ գլխովն 'ի կշտամբութեն մեղապարտ անձինն . մինչև ապա 'ի բանն Թ մ'ձարեալ զկշտամբանսն, զբժշկութն առ 'ի յայ մեծացուցանէ, և 'ի փառս կնքէ :

---

Մեղաւոր յանդիմանեալ երկին հեծութե՝ նորին հայցողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

## ԲԱՆ Բ :

Ա . Եւ արդ՝ զի՞նչ գործեսցես անձն իմ կորուսեալ, կամ ու՞ր թաքիցես, կամ զիա՞րդ ապրեսցիս, կամ ո՞րպէս ¹ ելցես 'ի մեղաց բանդէ : *Քանզի բազում են պարտիքդ, և անթիւ հատուցմունքն. սաստիկ կշտամբանքն, և անվախճան նախատինքն .

անողորմ են հրեշտակքն, և անկաշառ դատաւորն․
հզօր ատեանն, և անաչառ բեմն․ քստմնելի սպառ-
նալիքն, և անողորմ հատուցմունքն․ ահարկու հրա-
մանն, և մերկապարանոց յանդիմանութիւնքն․ հրե-
ղէն են գետքն, և անանցանելի են վտակքն․ Թանձ-
րամած խաւարն, և [2] արտաքոյ այցելութեան մառա-
խուղն․ ապականութեան է գուբն, և մշտնջենաւոր է
տագնապն․ ամենագրաւ տարտարոսն, և անշերձ
սառնամանիքն։ Իսկ արդ՝ արդարև քեզ են գան-
ձեալ դառինքս այսոքիկ դժնդակք, և տարժանելի
օթևանք՝ անըմբերելեաց պատուհասից, ո՜վ անար-
ժան անձն իմ մեղաւոր, չարագործ, [3] պոռնիկ, բազ-
մաբիծ, և սահման անդաստանի բնաւին անմաքրու-
թեան։ Ահա զարդիւնս գործոց ձեռաց քոց ժա-
ռանգեցես՝ թիւրեալդ 'ի յուղղութեանց, և զա-
ռածեալդ 'ի մաքրութեանց․ տարագրեալդ յար-
դարութենէ, և 'ի կարգաց պարկեշտութեանց․ ու-
նայնդ 'ի լնութեանց՝ հոգևպարգև հարստութենէ․ [4]
նախանձարկու բարերարին, և ամենակալ Թագա-
ւորին։

Ե․ Իսկ քանզի կառուցեր քեզ անել արգելան և
անփախչելի որոգայթ, [5] խոստովանեալ քեզէն զան-
բժշկականդ քո վէր, և զանօրինակդ հարուած,
վկայելով զանձինդ զպարտականդ մահու՝ զանբու-
ժելիդ բեկութիւն, ո՜վ չարդ 'ի բարեաց․ [6] ո՜վ դառ-
նութիւնդ 'ի քաղցրութենէ․ ո՜վ խաւարդ 'ի լուսաւոր-
մից․ ո՜վ կապտեալդ 'ի պճնելոց․ ո՜վ դսրովեալդ 'ի
գովելոց․ ո՜վ անբարիշտդ 'ի բարեպաշտից․ ո՜վ շըն-
չականդ 'ի բանականաց․ ո՜վ անմիտդ 'ի մտաւորաց․
ո՜վ անհանճարդ յիմաստնոց․ ո՜վ անմաքուրդ յընտ-
րելոց․ ո՜վ մահացուդ 'ի կենդանեաց․ [7] ո՜վ խոտերա-
կանդ 'ի սրբոց․ ո՜վ արբշիռդ 'ի պարկեշտից․ ո՜վ
կեղծաւորդ յարդարոց․ ո՜վ անպիտանդ 'ի պիտա-
նեաց․ ո՜վ անարգդ 'ի փառաւորաց․ [8] ո՜վ նուաղդ
յառաւելութեանց․ ո՜վ գերիդ 'ի գերագունից․ ո՜վ
նուաստագոյնդ 'ի վեհից․ ո՜վ աղքատդ յընչեղաց․ [9]
ո՜վ անարժանդ 'ի փրկութենէ․ ո՜վ տնանկդ 'ի բարձ-
րութենէ, և 'ի հոգևոր հարստութենէ․ և հատուա-
ծեալդ յօրհնելոց։

(1) Եւ եթէ ՚ի մեղաց բանտէ : 2 օրին. Եւ անէ թէ ՚ի մեղանաց բանտէ : Որպէս թէ արտաքոյ առագաստին անկեալ, զի որում ողբայր ՚ի նախնեդեալ աղօթմն, լի տարակուսանօք խօսի, ո՛ւր արդեօք թաքիցէ, ո՛ւր փախիցի, կամ հնարս գտանիցէ ՚ի բանտէ մեղացն զերծանելոյ։

(2) Արփափոյ այցելութէ : Զուրկ յայցելութէ կամ ՚ի հնարից է մատախուղն, այսինքն անփարատելի. կմ̄, այնպիսի մութ սաստիկ՝ ուր ոչ լինի այցելութիւն կամ օգնութիւն։

(3) Պատնէշ : Խմն նմանութե, ըստ որում փոխանակ անախտ սիրոյն այ՝ յախտաւոր սէր աշխարհի հեշտացեալ։

(4) Նախանձարկու բարերարին : Դրդօղ ՚ի նախանձ բարկութե, ըստ բանին ա. կոր. ժա. 22. ՚Եթէ զնախանձ ինչ արկանիցեմք տն։ ||

(5) Խոստովանեալ քեզէն : Դու ինքնին ասէ՝ խոստովանելով զանբժշկելի վէրս մեղացդ, և վկայելով զկորուսումն մահապարտ անձինդ, շինեցեր քեզ անելանելի արգելան։ Վասն զի թէպէտ անկեղծ խոստովանութիւնն ազատէ զմարդ յարատոյ և ՚ի պարտեաց մեղացն, սակայն միանգամայն իբրև ձեռնագրով հաստատէ զպարտաւորութիւն իւր, այնու զի ոչ ևս բնաւ կարէ ժխտել կամ անպարտ ցուցանել զանձն։

(6) Ո՜հ դառնացեալ ՚ի քաղցրութեց. Խմն իբր թանձրացեալ. այսինքն ո՛վ դառնդ ՚ի քաղցունց. ո՛վ և հետևեալքն ՚ի թանձրացեալն զնին։

(7) Ո՜հ խոհերականդ : Պղծեալդ կամ զազիրդ ՚ի մեղքրոց։

(8) Ո՜հ նուաղդ յառաւելութեց : Նուաղեալդ կամ կարօտդ ՚ի լիացելոց, կամ ՚ի լիութեանց։

(9) Ո՜հ անարժանդ ՚ի փրկութեանց : Այսինքն ՚ի փրկելոց։ Զայսոսիկ ձևս բանից խմն ընդհանրապէս, ո՛վ չարդ ՚ի մէջ բարեաց, ո՛վ դառնութիւնդ ՚ի մէջ քաղցրութեց, ո՛վ խաւարդ ՚ի մէջ լուսազգեցից ևն : Արէշէտ, զինեմոլդ ՚ի մէջ ժուժկալից : հարուածեալդ, անիծեալդ, բանադրեալդ ՚ի մէջ օրհնելոց։

---

Սերտին յառելուած նորին հեծութե՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի :

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

## ԲԱՆ. Թ.

Ա. Եւ արդ՝ զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բանբասանս շարադրեցից ՚ի [1] կտակ մաղթանաց մատենի այսր ողբերգութեան, ո՛վ անձն իմ թշուառ ամենապատկառ, և առ պատասխանիս բանից անբարբառ, անպիտան այ և մերձն մահակցութեան։ Զի եթէ զլիճ մի ծովուց՝ ՚ի [2] յորակութե դեղոյ յեղեղեցից, և զդաշտս ասպարիսօք բազմօք սահմանեալ՝ ՚ի տարածումն լայնութե քարտենի չափեցից, և զպուրակս յոքունց անտառաց՝ շամբից եղեգանց՝ ՚ի հատուածս գոյութե գրչաց կազմեցից, և ոչ զթիւ մի ՚ի բարդելոցն անօրէնութեց զօրեցից ընդ-

գրով սահմանի գրաւել։ Նա զի՝ թէ զմայրս լիբա-
նանու 'ի մի լուծ կշռոց զօդեսցիս, և կամ զլեառն
արարատեան 'ի կէտ ամբարձման [3] նժարի միոյ ար-
դարութե՟ միջնորդ կացուսցիս, ոչ հաւասարէ այնր
հարթութե՟ համագուգակցել։

Է․ Ուառս [4] ամբարձուղէշ՝ ստուարաստեղն՝ տերե-
ւալից՝ ունայն 'ի պտղոց, նմանակից յաւէտ հարա-
զատ այնր թզենւոյ՝ զոր տ՟րն գօսացոյց․ քանզի սա-
ղարթօք վարսից, այս է՝ արտաքին դիմօք բարեշուք
կերպից՝ իբր պսակաւ խմբք պաճուճեալ, [5] բացակա-
նացն դոս բաղձալի․ իսկ եթէ մերձեսցի անկօղն՝
խուզել զխնդրելին, գտցէ զքեզ ունայն 'ի բարեաց,
և դարշելի 'ի գեղեցկութե՟ց, ծաղր տեսողաց, և
նշաւակութի՟ք նախատողաց ։ [6] Ով եթէ ապաժա-
ման յանդգնոյշ ժամուն՝ հերապանծ տունկն պտղա-
կորոյս անկենդան, որ դոյզն պատկերն է անպատ-
րաստից, եկն ընդ անիծիւք․ և կամ երկիր ոռո-
գեալ ցօղով, [7] և ոչ բազմապատիկ զաւանդս արգա-
սեաց երկրագործութեան՝ տածողացն մատուցանէ,
լքեալ մոռանի․ իսկ դու՝ ո՛վ անձն իմ եղկելի, սահ-
ման բանաւոր և տունկ կենդանի՝ և ոչ 'ի ժամու
իւրում պտղաւոր, իբր ոչ զնոյն կրեսցես պատիժ
նախնում առակիդ ։ Վասն զի [8] զհամայնն ընկալար
'ի քեզ՝ անպակաս յառաւելութե՟ց, սկզբնաւորեալ
'ի մարդն առաջին՝ և մինչև 'ի սպառումն ծննդոց
նորին՝ զբերս գործոց նանրութե՟ց, և զգիւտս նորոգ՝
ատելիս և անախորժելիս հաստողին զքեզ տ՟յ։

Ը․ Եւ վասն զի եղի զքեզ նպատակ հանդէպ երե-
սաց տեսութե՟ մտացս՝ անձն իմ անպիտան, վիմօք
ձգելոց արձանաց բանից՝ իբր զանընդել գազան վայ-
րենի՝ անողորմաբար զքեզ քարկոծել։ Որ թէպէտ
և [9] ոչ պատահիմ անուանիլ արդար, սակայն յառաջ-
նումն պատասխանւոյն՝ իբր ընդ ոսոխի ումեմն՝ ընդ
անձին յօժարամիտ կամօք ոգորիմ, ըստ իմաստունն
բանի․ և զյոյզս մտաց խորհրդոցս գաղտնեաց [10] իբր
զգլխաւորեալ յանդաւորութե՟ չարութե՟ գործոց խոս-
տովանեալ, քեզ տարածեցից՝ ա՟ծ իմ և տ՟ր ։ Ով
որով չափով չափեցիս զանձինս ստգտանք, 'ի քոյդ
աննուաղ գթութե՟ց՝ [11] այսրէն չափեսցայց․ ընկալեալ

զշնորհդ յաճախագոյնս՝ ը[12] մեծագունիցս պարտեաց։ Այս որքան վիրացն հարուածք՝ անբժշկականք և անհնարաւորք ճարակեցին, այնքանեօք չափովք կրկին առ սմին՝ և իմաստք արուեստից բարձրեալ բժշկիդ բարեհաչակեալ լուսաւորեցին. և [13] 'ի պարտուցն առաւելութիւն, նոյնքան փոխատուիդ առատութ՟ե բարեբանեալ միշտ պսակեսցի, ըստ խնկաւորդ քում առակի։ Ո՛վ քո՛ է փրկութիւն. և 'ի քէն է քաւութ՟ի. և աջով քո՛ նորոգութ՟ի. և մատամբ քո՛ զօրեղութ՟ի. և 'ի հրամանաց քոց՝ արդարութ՟ի. և յողորմութ՟եց քոց՝ ազատութիւն. և յերեսաց քոց՝ լուսաւորութ՟ի. և 'ի դիմաց քոց՝ զուարճութ՟ի. և հոգւովդ քո՛ բարութ՟ի. և օծմամբ իւղոյ քոյ՝ սփոփութ՟ի. և ցօղով շնորհի քոյ՝ զուարթութ՟ի. և գութաս մխիթարութ՟ի, և մոռացուցանես զվհատութ՟ի. և բառնաս զխաւար վշտաց, և զհեծութ՟ի ողբոց 'ի ծաղր փոխես։ Այս քեզ վայել է օրհնութ՟ի գովութ՟ե հանդերձ՝ յերկինս, [14] և յազգս հարցն՝ և 'ի ծնունդս նոցա, և յաւիտենից յաւիտեանս. ամէն։

---

(1) 'Ի ԿՏԱԿ ԺԱՌԱՆԳԱՑ։ Կտակ կոչել յայտ առնէ, թէ զայս մատեան ողբոց գրելով վասն իմ, և վասն ինձ նման մեղաւորաց, կամիմ յայտնել 'ի սմա իբրև 'ի կտակի՝ թէ ո՛վ եմ ես, զի՛նչ էի, զի՛նչ եղէ, և զի՛նչ կարեմ լինել այժմ և զկնի մահու, և ցանկամ զի որպէս կտակ՝ հաստատուն և հաւատարիմ մնասցէ։

(2) 'Ի ՅՈՐԴԱՆՈՒԹԻ ՏԵՂՒՈՅ։ Եթէ զլիճ մի փոխեցից 'ի գոյն սեւակի, և զդաշտս ԱՊԱՌԱԺՈՏ ԲԱՂՁՈՔ, բազում ընդարձակութ՟բ արարից իբրև տարածեալ թուղթ, և [illegible], զխորձունս անտառաց եղեգանց կազմեցից ինձ գրիչս, ոչ կարեմ զամփոփն 'ի բարդեալ մեղացս 'ի գիր անցուցանել։

(3) ՆԺԱՐԻ ՄԻՈՅ ԱՐԴԱՐՈՒԹԻ։ Ուղիղ կամ հաւասար թաթի միոյ. եթէ ասէ՝ համագէտ մեղացս 'ի մի կշիռ եդից զմիւսն ընդդիմանու, կէս զերանն արդարութեան՝ այսինքն զմասն, ոչ հաւասարին միով չափով կշռոցիւ։

(4) ԾՈՎԱՆ ԱՆՇԱՐԺՈՂԷՆ, ունող բարձր ուղեշս կամ շաւաւիղս. ԱՊԱՌԱԲԱՔԷՆ, հաստ ամեղամիք, կամ ստուղք։ Ասամեր յայլ եղանակ փոխէ զնշանակեան. իբրև զի կարող էր ոք խորհել և ասել առ այսթուոյս մեր, ապաքէն կան 'ի քեզ նաև բանք բարիք և գովելիք. և զնորդ զայնցանէ լռեալ, զմեղադրելին միայն յեղեղես։ Առ որ ասէ. դո՛յն իսկ յաճախէ ինձ պարտաւանս. զի թէ և կրօնաւորութ՟բ, և քահանայական կարգաւ և վարդապետութ՟ե եւեթ իբրև ծառ բարձրացեալ, ամբոցեալ ստուղք, սերեալից, բայց ո՞չ են պտուղքն. նման եմ անխծապտղ թզենւոյն են։ Զայս յանդիմանութիւն ասասկացուցանէ 'ի կարգիդ։

(5) ԲԱՐՁՐԱՑԵԱԼ ԾԱՌ։ Հեռակայիցն բաղձալի ես վասն երկայն և կա-

խնամ տերևոցն, այսինքն առաքելին բարեպաշտական նշանօք, որովք իբր պսակաւ զարդարի : Բայց յորժամ անկօղն ա̃ծ մերձենայ առ քեզ՝ զպտուղն խնդրելով, գտցէ զքեզ դատարկ 'ի բարեաց, և Գործեսցէ 'Ի Գեղեցկութենէ, այսինքն զրկելի 'ի նոյն իսկ գեղեցկութէ տերևոցն վն անպտղութեանդ. կմ, 'ի մէջ գեղեցկաց դարշելի :

(6) Զի Եթէ ապաժաման : Եթէ յանդէպ ժամանակին, յանդիպոյն Ժամուն, յանկարծելի ժամու առաւօտին տերևազարդ թզենին անպտղոյ՝ որ փոքր օրինակ է անպտուղ կամ հեղգ անձանց, անէծս ընկալաւ. իսկ դու գոլով առանձ բանաւոր՝ որում միշտ է ժամանակ բարեգործութե, առկայն և ոչ գտնէ 'ի կարևոր ժամուն, կամ և ոչ երբեմն առնելով պտուղ, Իբր, զիարդ ոչ նոյնպէս պատժեսցիս ըստ նախատացեալ օրինակիդ :

(7) Եւ ուր բազմապատիկ . . . . մատուցանէ, ընթեալ մատանի : մի օրին. և բազմապատիկ . . . . ու մատուցանէ, ընթեալ մատանոյ :

(8) Զհամայնն ընթացեալ 'ի քեզ : Զամենայն չարիս՝ որք են բերք նանրութե և առելիք ա̃յ, կամ զմեղս ամենեցուն 'ի քեզ ընկալար, անպակաս յառաջելոբէս, լինել, առաւելապէս, սկսեալ յառաջին մարդոյն մինչև 'ի վերջին ծննդն նորա : Զայս կամ ըստ նմանութե՛ն առէ, իբրև թէ նման ա̃մ մեղուցելոց՝ որ եղեն և լինելոց են, մեղայ. և կամ զի վասն ա̃մ մարդկան՝ որ գալոց են, կարդէ զաղօթս յ̃ս առելոյն 'ի բանն, գ. 2. վն այն մինչև 'ի վերջին մեղուցեալն յարմարէ զբանն :

(9) Ու պատահիմ անասանիլ : Թէպէտ և չեմ արժանի կոչիլ արդար, բայց զգործ արդարոյ արարից, այսինքն զամբաստանութիւն անձինս, ըստ բանի իմաստնոյն. ( առակ. ժը. 17. ) * Արդարն անձին իւրում չարախօսէ 'ի սկզբան բանից իւրոց : *

(10) Իբր դժնդաբարեալ յանգատարութե : Զգաղանի խորհրդոց մատնութիւնս՝ իբրև զլրացեալ կատարումն չար գործոց խոստովանելով :

(11) Այսրէն ընդհեդայց : Որպէս զի որչափ ես մեղադրեմ զանձն իմ, փոխարէն ընկալայց զչափ ներողութեանն յանպակասելի գթութեց քոց :

(12) Ըստ Թեթագոնիոյն պարքետց : Այսինքն, փոխանակ առաւելագոյն պարտեաց. յայլ տարադրեալս կայր, ըստ Թեթագոնիոյդ. բայց այժմու եդեալս ըստ լաւ օրինակին՝ առաւել յարմար է :

(13) 'Ի պարտուցն առանելոբէ : 'Ի շատութէ պարտուցն առաւել ես գոլի առաւ թողութիւն փոխատուիդ, ըստ քում առակին, թէ մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոյ, և 'ի չկարելն հատուցանել՝ զա̃մն շնորհեաց : ( մատթ. ժը. 24. 27 : )

(14) Եւ յաղթս հարցն : Քեզ վայել է օրհնութիւն ոչ այժմ միայն, կամ զոր այժմ կարեմք մատուցանել, այլև ա̃մ օրհնութիւն որ լինէր յառաջնոց հարցն, կամ 'ի ժամանակս նախահարցն, և որ յետ այսր լինելոց 'ի ծննդոց նոցա : Լաւագոյն յայս առնէ, թէ որպէս զխոստովանս մեղացն յառաջին մարդոյն մինչև 'ի յետինն յարմարեաց յանձն իւր, ըստ ըծ. 8. նոյնպէս ցանկայ զամենեցուն օրհնութիւնն ընծայել Այ̃. որպէս յամբաստանելն զանձնէ՝ զա̃մ մեղուցելոց կերպարանս զգեցաւ զանձամբ՝ թէպէտև բազում ամօթով, նոյնպէս յարդարացուցանել և 'ի մեծացուցանել զԱ̃ծ՝ առաւելագոյն յօժարութե̃ յինքն առնու զբերան և զսիրտ ա̃մ արդարոց՝ որ յերկինս, և որ յերկիր :

Մերոպէն յաւելուած հրէէն հեծութեան՝ Նորին հաչողի, առ Նոյն աղերս ծաղկանոց բանի։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. Ժ.

Ա. Եւ արդ՝ քանզի միապէս մատնէ կորստեան՝ եւ [1] զզղջումնն ուժգնապէս, եւ մեղանչելն մոլեգնաբար. զի թէ եւ օտարացեղ իմն են ՚ի միմեանց այլայլութիւք նմանութեցն, սակայն զկերպարանս երկաքանչիւրոցն առ միմեանս եդեալ, զմի եւ զնոյն վհատութեան ծնունդս արտադրեն։ Զի մինն զհզօրին ձեռն՝ իբր ապիկար թերահաւատէ. իսկ միւսն՝ ըստ նմանութեան քառոտանեաց պաճարեղինաց՝ յանզգայս եղեալ, զյուսոյն առասան խզէ. վս որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ՝ հանապազ խնդայ սատանայ. իսկ երկրորդաւն՝ ըստ նմանութե լափլիզող դժոխորովայն գազանի, իբր կերակրով արեամբ պարարի։

Բ. Եւ արդ՝ [2] իբր զգանեալ բազմահարուածեան հեծանաւ, եւ յափն մահու ժամանեալ՝ դոյզն ինչ դարձումն շնչոյ ընկալեալ, եւ յոգի կենդանի եկեալ կազդուրեցայց, պատսպարեցայց, կանգնեցայց, յարեայց յանկենդանական կորստենէ, օժանդակեալ քոյ ձեռամբդ՝ որ գթածն է յամենայնի. ՚Ի բարեբար յերկնաւոր հօրէն՝ փրկութեան եւ բժշկութեան պտուղ ընձեռեալ ինձ [3] մեղուցելոյս, ախտացելոյս եւ մահացելոյս։ Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց՝ զհաւատոցն շինուած կառուցից. քանզի եւ [4] ոմն ՚ի նախնեացն սրբիմբք զինեալ, փոխեցաւ իսկոյն յանմահական վիճակ վերին. զապաշխարութեն դեղ ընկալեալ, ապաշաւանաց թօշակաւն ըղգրաւականն անեղծութե ատէն ժառանգեաց։ ՚Ի վեր քան՝ զորոց առաքեալ ընդ նմին ցուցանէ, որք զհանդէսն մրցանակին յերկրի կատարեալ, ապագայիցն եւ երկնաւորացն յուսոյ հաւատացին, եւ անտեսիցն ճոխութեամբ փարթամացան։ Իսկ [5] զխրախոյս տէրունի պաշտելի բանին՝ յիշեալ առ սմին,

զի ամենայն ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայն ։ [6]
Եւ զի և զչափն ընտրականաց բարեմասնութե̃ ա̃յ
հաճելեացն՝ զննեալ աստանօր, զայս պատկեր բանի
ընկալայք նախնի գահերէց, առ 'ի սրբութեանցն մուտ
տովիմք հանդերձել. առանց որոյ և ոչ տ̃րն փառաց՝
զխուրմն առ մեզ հրաշագործեաց զօրութիւնս, եթէ
ոչ նախ՝ լծակից խնդրեաց բարերարութե̃ն խորոյ
զհաւատոյն մեր. ուստի և [7] կեանս ընձեռել զօրէ
ինքնիշխան բաւականութե̃՝ առընթեր գոլով ա̃յ.
քանզի հաւատք քո կեցուցին զքեզ՝ օրհնաբանեալն
ա̃յ բերան վկայեաց ։ Քանզի արդարև [8] սեռն տե-
սութե̃, և կատարեալ իմաստութե̃, և առ ա̃ծ ըն-
տանութե̃, և բարձրելոյն ծանօթութե̃՝ հաւատոց
մասն՝ երջանիկ և ընտրեալ անուն, որ [9] յարաձգեալ
մնայ անվթար և անփակելի, պատուակից գոլով սի-
րոյ և յուսոյ ։ Ով եթէ [10] փոքու սերմանի գոյի
հատի մանանխոյ չափոյ նուաստի հաւատք՝ զլերանց
մեծութե̃ փոխէ զօրեղապէս 'ի սիրտս ծովու, ապա
յիրաւի ընկալայք զսոյն սկզբնաշաւիղ առաջնորդ կե-
նաց՝ աներկմիտ պաշտօնի առ ա̃ծ. [11] որ զապառնիսն
և զծածկեալսն՝ առանց երկբայութե̃ 'ի հոգւոյն աչս
տեսանէ, [12] երրորդութեանն փառատրելի անուամբն
պատուեալս հաւատք՝ ընդ սիրոյն դասեալ և յուսոյ։
Ով թէ՝ և զերկին հատուածս առանձնաւորականս
'ի մի և 'ի նոյն խորհուրդ դիտեսցես, յաւէտ մե-
ծասցիս նովօք 'ի յա̃ծ. քանզի թէ հաւատաս 'ի նա,
և սիրես. որով և յուսաս աներևութից պարգևաց
նորին ։ Նմա փառք յաւիտեանս. ամէն ։

---

(1) Զղջման ուժգնալէս ։ Զղջումն քան զչափն աւելի, այսինքն յուսա-
հատութե̃, միօրինակ 'ի կորուստ մատնէ իբրև զեղանըն նուգնաբար,
այսինքն կատաղութ̃ և անսանձ. զի թէպէտ կարի տարբերք և անհամանք
են միմեանց, սակայն բաղդատելով ըստ գործոյն՝ մինոյն անյուսութիւն
ներգործեն ։ Զի մին, անչափ զղջումն՝ զձեռն ա̃յ թերահաւատութ̃
տկար համարի 'ի ներել նաև զղջացելոյն և ապաշխարողին ։ Իսկ մին,
անսանձ մեղանչելն՝ իբր անատուն անզգայ առնելով 'ի չարիսն, Նշաւակ
տառապեալ, զսոյս գարշամանն բարոյ, կամ զկապ յուսոյն առ ա̃ծ՝ խզէ.
վասն զի կամ յանդգնաբար վստահի յողորմութիւնն ա̃յ, և կամ իբր-
տասրտութե̃ հրաժարէ 'ի փրկութէ ։ Վասն որոյ ընդ տառապելոց, ընդ
անչափ զղջումն ծաղրածուն, շողոքորթելով կա̃մ խանդաղատելով խնդայ
սատանայ. զի բարի կործեցուցանելով զայնպիսի զղջումն, դիւրաւ խա-

բէ զմարդ ։ Իսկ Երկրորդան , աներկիւղ մեղանչելովն , իբրև զազան լափ-լիզօղ , այսինքն ինձ արիւնախանձ՝ լինելով լափէ զարիւն ․ և դժոխոր-ձայն , որոյ որովայնն անյագ է իբրև զդժոխս ․ կմ՛ բուն իսկ դժոխքն են որովայն սատանայի ․ այսու տայ մարդոյ յայտնապէս մեղանչել , և նորա մեղօքն պարարեալ հեշտանայ ։

(2) Իբր զփանեալբաղմահարուածեան ։ Իբրև զծեծեալ , և 'ի բազում տե-ղիս մարմնոյն հարուածեալ կամ ջարդեալ ․ հէծանա ․ հատ գաւազա-նաւ կամ բրով ։ Մարթ է և ս խմնալ ․ բաղմահարուածեան հէծանա ․ թ՛ սաստիկ հարկանող գաւազանաւ ։ յաքն Տահա , 'ի դուռն մահու հասեալ , փոքր մի ոգի առեալ , և զօրացեալ կանգնեցայց , են ։

(3) Մեղաօշեղայ ։ 2 օրին ․ Մեղաւորիս ։

(4) Ոն 'ի Նախնեաց , ենովք , [illegible] զհնեալ ․ այլ օրին ․ [illegible] , այս-ինքն հաւատովքն զօրացեալ բառ առաքելոյ , ( եբրայ ․ ժա ․ 5 ․ ) որ-պէս մահկանացու կենաց փոխեցաւ ․ [illegible] դեղ ընկալեալ , հաւատոյն զօրութե՟ն ապաշխարելով 'ի կեանս յայս , այնու իբրև թռչա-կաւ զառհաւատչեայն անեղծութե ժառանգեաց առաջին , այսինքն յա-ռաջ քան զմեռանելն ։ 'Ի սոյն յարելի է և որ զկնին ․ 'Ի հեր դառն ․ այսինքն ենովք զանեղծութիւնն ժառանգեաց առաւել քան զնոսա , զորս առաքեալն յիշէ ընդ նմա , այսինքն քան զաբէլ , քան զաբրահամ , են ․ զի ենովք իբր երբեք ժառանգեաց յառաջ քան զմահն ․ իսկ այլքն [illegible] և երկնաւորացն յուսոյ հատուցին ․ այսինքն թէպէտև զհան-դէս վճարյն յաղագս Ա.Յ բովանդակ կատարեցին յերկրի , բայց առա-գայ երկնաւոր հատուցմանցն յուսով ակնունէին յետ մահուն ․ կամ 'ի յոյս հանդերձեալ երկնաւոր բարեացն՝ հաւատովք կացին մնային , ա-ռանց մտաւոր ինչ գտնէ ժառանգելոյ ստանոր ։ Վասն ապաշխարու-թեն ենովքայ տես զկնի ․ ժա ․ ըծ ․ 9 ։

(5) Զխորախոյս փրկանի ․ զյորդոր հաւատոյն յիշեցից զորունակսնն , թէ ամ ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայ ։

(6) Ե՛ղէ և զլաքն ։ Ե՛ և այս , զի եթէ զչափ համեմատութե ընծիր և ածահաձոյ առաքինութեցն քննեսցուք , զբանն հաւատոյ գտանեմք նախնե գահերէց , առաջին և գլխաւոր քան զայլս ․ իբր զի հաւատոյ դաւանու-թե՟ պտղաբերեմք առ 'Ի արբաութեցն Տէր , առ 'ի մտանել 'ի արքութիւնս եկեղեցւոյ միութեն ․ որով շնորհազարդեալք՝ այլ բարեգործութիւնքն հաճոյ լինին այ ։

(7) Կեանս ընծեալ զբէ ։ Կեանս հոգևոր և մարմնաւոր զօրէ տալ հա-ւատքն միայն իւրով զօրութե՟ առանց օժանդակութե պահոց , ողորմու-թե , ճգնութեց , և այլ բարի գործոց՝ որք ոչ հային անմիջաբար յած ․ իսկ հաւատք առընթեր գոլով այ , անմիջաբար յած հայելով , ունի զայն զօրութիւն ․ ուստի և քո հաւատոյն տայր զբժշկութիւնն ։

(8) Սեան փեսաթ ։ Հաւատքն է յատակ կամ պայծառ տեսութիւն խմանալեացն և ածայնոց ․ զի թէպէտ բառ ինքեան նսեմ է , բայց համե-մատեալ առ բնական լոյս մտաց , առաւել պայծառ տայ գիտել զածայ-նսն , զոր բնական լուսով ընդ աղօտ միայն , և կամ կարծեօք ճանա-չեմք ։ Կապարեալ խմապաթ , իբրև հաստատեալ յանսուտ վկայութիւնն այ , քան պատճառական խմաստութեն հաստատեալ 'ի վրիպելի լոյս մտաց ։ Ա ած ընդդէմ ․ զի հաւատոյն ճանաչմամբ առաւել մօտիմք առ ած , և նմանիմք ածեղէն մտացն ։ Բարձրեալ ծանօթեաթ , այսինքն այ իբրև գերբնական պարգևի և վախճանի ։ Երջանիկ և ընդբեալ անան ․ այնչափ ընտրեալ և աղնուական՝ որ ամենեցուն միայն կոչեցաւ , և ընծիր ածա-պաշտքն 'ի նմանէ անուանադրեցան՝ հաւատացեալ ։ Եւս , ընծիր անուն առ հաւատ ը՟ աստուածաբանութե ․ իբրև թէ ոչ ունող զհաւ կամ սկիզբն ,

առանց հաւելոյ կամ սկսանելոյ. քանզի յորմէ հետէ եղև մարդն, եղեն և հաւատք. ոչ 'ի յետագայ դարս յայտնեցան հաւատք, այլ 'ի սկզբանէ հաւատովք իմանամք զյաւիտեանսն հաստատեալ. ըստ եբրայ. ժա. 3:

(9) Յարատեւեալ ծայ: Որպէս առանց սկսանելոյ են հաւատք, նոյնպէս միշտ տևողական, գոլով ևս նման ձայնին՝ յաւէտ, կամ յաւիտեան: Այլ բարեգործութիւնք իւր աղաւաք, կամ ըստ արտաքին պարագայս կապեալք, ոչ միշտ՝ և ոչ յամենեցունց գործին. իսկ հաւատքն իբրև կարևոր և անկարօտ արտաքին իրաց՝ միշտ անեալ մնայ 'ի կեանս յայս, անընդհատ և անփոփոխ, անվրէպ և անխափան՝ ըստ յուսոյ և սիրոյ: Կամ, 'ի սկզբանէ աշխարհի մինչ 'ի կատարած՝ յամ վիճակ կենաց ձգեցաւ հաւատքն. մինչ զի նաև յանախտ վիճակ անմեղութեան կայր և կարևոր էր՝ որպէս յոյսն և սէրն: Աստի իմանամք, զի զվերադրեալ առաւելութիւնս ընծայէ հաւատոյ ՟որ վարդապետս՝ ոչ համեմատութեամբ յուսոյ և սիրոյ, այլ՝ բարոյական առաքինութեանց: Եւ զասելն՝ յարատեւեալ ծայ, մի՛ զհանդերձելոյն իմանար. զի անդ 'ի դէմյանդիման տեսութեան ոչ խափանին հաւատք՝ որպէս և յոյսն, ոչ միայն ըստ ներգործութեան, այլ և ըստ ունակութեան. զի զոր յայտնի և անկորուստ տեսանելով ժառանգէ ոք, ոչ միայն չհաւատայ զայն և չյուսայ, այլ և ոչ կարէ հաւատալ և յուսալ այնուհետև: Բայց եթէ իմանայցեմք մնալ ՟ը գործոյն ևեթ, այսինքն ըստ երանութեան՝ որ վարձք է հաւատոյ:

(10) Փոքր սերմանի գոյն: Հաւատքն ՟ը չափու փոքր սերմնական կա՛մ սերմանելի իրի, որ է հատն մանանխոյ, զօրաւոր է, ևն: ըստ սերմանի՝ ածանցական է աստ, ի մանկանէ 'ի սեռականէ բառին սերմն. որպէս 'ի բառէն կենդան ածանցի կենդանի. ըստ այսմ աւելք Ամարանի, Գառնանի, Անձրևանի. այսինքն անձրևոյթ, ևն: Եթէ ասէ՝ այնչափ փոքր հաւատք կարօղ է զլերինս խախտել և 'ի ծով ընկենուլ, ապա յիրաւի զայն հաւատս ընկալաք սկզբնաշաւիղ, յառաջընթաց առաջնորդ 'ի կեանս հոգւոյ և մարմնոյ, կամ 'ի կեանս շնորհաց և փառաց. այլև ընկալաք աներկմիտ պաշտօն, անվրէպ և միշտ հաճելի պաշտօն ա՟յ, ստոյգ ա՟ծպաշտութիւն՝ դիմադրեալ արտաքին պաշտամանց, յորս մարթ է երբեմն սպրդել երկմտելի իրիք, կա՛մ կեղծաւորեալ, կա՛մ աւելորդ: Զկապակցութիւն բանիս մարթ է պարզել և այսպէս. ապա յիրաւի զայն սկզբնաշաւիղ առաջնորդ կենաց ընկալաք աներկմիտ պաշտօն ա՟յ. զի առանց հաւատոյ անհնար է պաշտել զա՟ծ:

(11) Որ [illegible], զլինելոյն կա՛մ զհանդերձեալսն, այլև զաներևոյթս աներկբայաբար 'ի հոգւոյն աչս [illegible], տայ տեսանել. զի հաւատքն է յանդիմանութիւն որոց ոչն երևին. ըստ եբրայ. ժա. 1:

(12) Երրորդութեան խորհրդի անուամբն: Երրորդութիւն կամ զերրորդութիւն ասէ, որ է անուն խորհրդաւոր և սքանչելի, և կամ զա՟ծային անձինս ասէ. զի որպէս զնոցանէ դաւանեմք՝ թէ երեք անձինք են յա՟ծ, նոյնպէս զհաւատոյն և զծակեցոյն՝ նմին անուամբ ասէ առաքեալն. (ա. կոր. ժգ. 13.) * Մնան հաւատք՝ յոյս՝ սէր, սոքա երեքեան: || Դարձեալ, այլապէս երրորդութեան անուամբն պատուէ հաւատս. զի որպէս անունս Երրորդութեան՝ յերկոտասան գրոց կազմի, նոյնպէս հաւատն ըստ իւր ըմբռնման դասեալ, զերկոտասան թիւ կազմէ. այսինքն. 5. հաւատ. 4. յոյս. 3. սէր: Զի ԲԷ՝ և զերեսին հաւատոյ առանձնաբանս. զերիս որոշմունս զանազանելոց: զայս կամ զերից առաքինութեանցն ասէ. այսինքն. եթէ զհաւատ՝ զյոյս և զսէր՝ որք որոշեալ և զանազանեալ են բնութեամբ, 'ի մի և 'ի նոյն խորհուրդ դիմեցեն, այսինքն յա՟ծ զերեսինն միացուցեն իբրև յառարկայ և 'ի վախճան, նոքօք մեծանաս 'ի

յած · զի թէ հաւատաս 'ի նա իբր յանհուն բարի և 'ի բարերար, սիրես եւ զնա · և սիրելովդ՝ յաւելուս վայելել յաներևոյթ պարգևս նորա ։ Այսմ քաջ միաբանի ասացեալն սբյն յակոբայ մծբնայ հայրապետին · ճառ. ա̄ · յաղագս հաւատոյ ։ *Նախ յառաջագոյն հաւատայ մարդ · և իբ-րև հաւատայ, սիրէ · և իբրև սիրէ, յուսայ · և իբրև յուսայ, արդա-րանայ · և իբրև արդարանայ, լինի · և իբրև լինի, վերանայ ||։ Եւ այս է մեծամեծն 'ի յած, զոր ասաց սբն գրիգոր ։ Կամ դարձեալ՝ ըստ իւր հա-տուածն զածային անձանց ասէ, որք որոշին անձնաւորութբ · որպէս կո-չէ և 'ի բանն խդ · 1 · զորս եթէ 'ի մի խորհուրդ դիտեսցես ասէ՝ ը̄ ե-րից առաքինութեցն, այսինքն զհաւատն՝ հօր նմանեցուցանելով, զյոյսն որդւոյ, և զսէրն՝ հոգւոյն սբյ, այսու յորդորեալ 'ի բարիս՝ մեծանաս յած · քանզի 'ի միտ առնուս՝ թէ որպէս ոչ է հայր միայնակ առանց որդւոյ և հոգւոյ, սոյնպէս ոչ է հաւատք հաճոյական առանց յուսոյ և սիրոյ · ուստի յորժամ հաւատաս 'ի նա, ջանաս եւ սիրել և յուսալ ։ Կամ իմա այսպէս, որպէս զիր անձն ածային կարգեսցես հաւատով, ը̄ նմա և զայլ անձինն դասանես վասն համագոյութեն, սոյնպէս զերն յե-րից ածաբանական առաքինութեցս սրտի մաօք յանձին ունիցիս, ստա-նաս և զայլսն՝ որք ընդ միմեանս կապեալ կան · և սոյնպէս մեծանաս նո-քօք յած լնութբ արժանի գործոց և փառաց յերկինս ։

---

Մերտին յառեղուած հրէին հեծութեան՝ նորին հոհողէ, առ նոյն աշէրս ճաշԲանոց Բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ած ։

## ԲԱՆ · ԺԱ ·

Ա · Եւ արդ՝ ես յետինս դաւանողաց՝ ունայն 'ի բարեաց, նայեցեալ խորհրդով մտացս [1] 'ի սկզբնաւորն իմ եղելութեն 'ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանէից, յուսով հաւատամ յոյ քոյ՝ առնել զոր կամի ։ Քանզի հաւատացի, վասն որոյ և խօսե-ցայ խրատեալ պօղոսիւ, ուսեալ 'ի դաւթայ, թէ և արդ կենդանի մաղթանք նոցա այց ինձ արասցէ · որ-պէս հաւատովք ճանաչել զնա, և զզօրութի յարու-թեն նորա, ըստ առաքելոյ, և զհաղորդութի չարչա-րանաց նորա, և որ զկնի բերին ասացեալքն ։ Արդ է սմին և յոյժ նմանատիպ՝ հաւատալն իսկապէս և 'ի նորոգս այս փոխադրութի, որ 'ի մեղացն 'ի քա-ւութիւն, և [2] 'ի չարագործութե յարդարութի, և յանմաքրութե 'ի սրբութի, և յանքաւելեացս պար-տեաց [3] մահու յանցանաց՝ յանդատապարտն երանու-թի, և 'ի ծառայական կապանացս՝ յերկնաւորն ա-զատութի ։ Քանզի [4] զիարդ ոչ արդեօք չքնաղ քան

ղեան՝ և 'ի մթութէ երկևմանութե խաւարի գտեալ՝ և
աստուծով օժանդակեալ և օգնեալ սիրտ մեղաւորի ,
որ է մարմնապէս ծիծաղելն՝ առ նմին հեծէ հոգևոյս :
Որ թէպէտ և յամբարձմանէ բարձրութե գերագու-
նիցն կայից՝ ստորասուզեալ ծանրութբ յանդնդային
վհին խորխորատ գբոյն կործանման , [5] նորագիւտ մե-
ղօքն անջրելեօք , ունի և նշխար նշուլից՝ փրկութե
կենաց հպաւոր , [6] իբր կայծակն լուսոյ պահեցեալ 'ի
միտս և յոգի . որպէս զհուրն նշանաւոր և զարմանա-
ւոր թանձրամած՝ հրաշիւք մակարդեալ վեհին հրա-
մանի [7] 'ի յատակս ներքինս նիրհեալ ջրհորոյն : Սա-
տի և մեղուցելոյն իսպառ թաղծելոյ , և ակնկալու-
թի բարւոյն բարձելոյ , և համարձակութի շնորհին
լքելոյ , յուսալ վերստին անդրէն միւսանգամ նա-
խապարգևիցն փառազարդութեց դարձեալ հասա-
նել . քանզի և յածուստ անդուստ հանդերձի և այս՝
ներգործիլ առ սոյնս . վասն զի սա զտուողին զօրու-
թի ամենահնար աւետարանէ : Զոր խունկ հաճու-
թե մեծապէս հոտոտի ած , քան յամենայն բուրումն
անուշից , և քան 'ի խառնեալն երբեմն աղացմամբ
'ի սպաս խորանին , որ է կերպարան անձանց խոնար-
հից զիջեալ բեկութբ՝ առ 'ի միութի նոյն նմանու-
թե : Ըստ որում հարցեալ փրկչին ամենից՝ յումանս
ախտացեալս տեսանելեօք , հաւատայք ասելով՝ առ
այդ թէ կարող եմ առնել ձեզ զայդ . ո՛չ պարգևեաց
աչաց նոցա լոյս , եթէ ոչ նախ զհաւատոցն գրաւ ըն-
կալաւ : Քանզի զի՞նչ քան զմեռելութի քառօրեայն
դիոյ՝ առ կենդանութի մեզ անյուսագոյն , [8] առ որ
կանանցն ժամանելոց 'ի յոտս արարչին՝ հաւատոցն
հանդերձանօք , անյապաղաբար զփառացն այ տեսին
զհանդէս՝ 'ի յեղբօրն կենդանութի :

Է . Իսկ [9] աստստին անկապուտ շնորհին մնացելոյ
զկնի մեղանացն՝ հզօրագոյն են վկայք : Նախ՝ Ենովք .
զկնի ահարոն . յետ նոցա դաւիթ . դարձեալ և պե-
տրոս . ընդ որս և փոքրն եղիազար , որ 'ի մեծէն այ
ողորմեալ՝ մեծագունիցն վկայեցաւ : Աւելորդ է առ
այս և բանն առակի անառակ որդւոյն . Թողում
զպոռնիկն՝ որ 'ի տնէ գովեցաւ . և զմաքսաւորն՝ որ
'ի բարեգործէն յիշատակեցաւ . և զաւազակն երջա-

նիկ՝ որ յարձակումն վերջին շնչոյն հաւատովքն պսա-
կեցաւ. և [10] զոր անքաւելին են պարտիք՝ զհաղոր-
դեալքն սպանման մահու արարչին. առ որս և գլխա-
ւորն ընտրելոյ պօղոս, որ երբեմն նախնին էր անօ-
րինաց: Յորոց ոմանք ծանօթութք օրինին գլորեալք,
անդրէն կանգնեցան բիւրապատկեան գերազանցու-
թբ [11] քան զնախակրօնիցն առաւելութի: Իսկ [12] որ
նախ քան զօրինակին տուչութի՝ զաւանդն պահեալ
հայրենի, մերձաւորագոյն գոլ պատուիրանի սկզբնա-
հօրն դաւանութե, որ և զնախնւոյն պարտիս ինքեան
վարկուցեալ, զնորայսն՝ խիւրովքն տուժեաց կրից
տաժանմամբ, ոչ քաւեցաւ միայն ծածկեալ 'ի յերկրի,
այլ չարչարելեաւն մարմնով բանականաց բնութե
կենաց կարապետ՝ յաղթօղ զօրապէս բռնութեան
մահու փոխեցաւ: [13] Իսկ ոմանք 'ի բուսոյ տհաս հա-
սակին չարութեամբն յերկարաձգեալ 'ի կատարեալ
տիս ժամանակին ոչ 'ի բարձրութեանն կայից հո-
սեցան, քան թէ 'ի ստորնականաց թշուառութեանց
դժնէից կենացս 'ի կամարն երկնից համբարձան: [14] Իսկ
թէ այն ժամանեաց կանխաւ՝ զօրացեալ 'ի չարեացն
դարձ, որ մինչև յոսկեղէն նիւթ յեղանակեալ հօ-
ղոյս գոյութե, և պատկերն արքունի՝ 'ի պատիւ կեր-
պիս մերոյ՝ նկարեալ արքունականն քանդակուածով,
անկորուստ և անփոփոխադիր և յաղթօղ դաւաճա-
նութեան զմերս ենթադրեալ բնութի, ապա առա-
ւել յուսալի է այժմ մերկապարանոց լուսաւորու-
թի անքօղ և անմերարկու՝ տերամբք քոյ ուխտեալ.
որով և միշտ հաստատեալ պահի 'ի մեզ բանն Տրու-
նի, ըստ մարգարէին ձայնի, ուխտ խաղաղութե և
կնիք հաստատութե՝ առ հաշտարարն միջնորդ՝ երկ-
նային անմահ կենդանի և մշտնջենաւոր բարեխօս:
Ապա ուրեմն ըստ այսու կանոնի ճշմարտադունի, և
անփոփոխադրելի սահմանի, և ալարչաւանդ պայմա-
նի, [15] համբուրեմ հաւատոց շրթամբք զպատկեր բա-
նիս, և ակնունիմ փառացն շնորհի. քանզի արդարև
յարդարացուցանելն զմեզ Այ՝ ոչ ոք զօրէ դատա-
պարտ առնել, ըստ առաքելական բանիս սահ-
մանի:

Դ. Այլ [16] յայս անստուերագիր վստահութե ապաս-

տան, կամ կործանեալս՝ կանգուն. թշուառացեալս՝
յաղթօղ. վրիպեալս՝ 'ի դարձն կենդանական. ամե-
նաթշուառ չարագործս՝ 'ի յոյսն. մահու մատնեցեալս՝
'ի կեանսն. ընդ ապականութ. վաճառեալս՝ 'ի ձիրն.
դժոխային գործովք գրաւեալս՝ 'ի լոյսն. ստորնա-
սէր անասնակենցաղս՝ յերկինս. կրկին դայթակ-
ղեալս՝ 'ի վերստին փրկութին. մեղօք կապեցեալս՝
'ի հանգստեանն խոստումն. անբժշկական վիրօք վա-
րանեալս՝ 'ի դեղն անմահացուցիչ. ստամբակեալս
վայրագութ՝ 'ի սանձսն հանդարտութե. սրացեալս
վարատականս՝ 'ի կոչումն. ապառում դժնդակս՝ 'ի
հեզութին. ընդդիմաբան լուտայօղս՝ 'ի ներումն: 17
'Ի քս յս, և 'ի հայր նորին հզօր և աչաւոր, յանուն
և 'ի կամս բարերարութե հոգւոյն Ճշմարտի. օրհնա-
բանեալ խոկութեանն և մի ածութեն՝ զօրութիւն և
արքայութի, մեծութիւն և փառք յաւիտեանս.
ամէն:

---

(1) 'Ի [illegible]: Յառաջին եղանութիւնն իմ. 'ի [illegible]. զայս ունիմք ը հինգ. խմանամ՝ 'ի ձեռն քնի, որ է ձեռն հօր: Բայց ստոյգ է. այլ խմանի՝ ձեռամբ կամ զօրութ. ստեղծողին խմոյ յօրինչէ. զի սը վարդապետս սովոր է այլուր և ս զբանն 'ի [illegible]՝ դնել փոխանակ գործիական մասնկան. որպէս աստ և 'ի բանն ժը. 2. * 'Ի ձեռն ձեռինդ ամենակալի. * ը ամենակալ ձեռամբդ: այնպէս պատմ. Աղաբանից. * Սա 'ի ձեռն ձեռին մեծութեն ածութեանն. * ը ձեռամբ մեծութե, են: Արդ՝ առել կամի բանիւս. նայեցեալ մօքս յառաջին եղանութիւնն՝ որով զօրութ. արարչին խմոյ 'ի չգոյէ 'ի գոյ ածայ, հաստատամ և յաստամ և զայլ ամ անհնարինս գործել. ուստի և 'ի մեղաց նորոգել զիս, են: Վասն զի որպէս հաւատացի ամ բանիցն՝ զոր դաւանեմ, ըստ դաւթի և առաքելոյն, նոյնպէս հաւատացի թէ նաև այժմ կենդանի խնդրուածք նորա օգնեսցեն ինձ առ 'ի կենդանի հաւատովք ճանաչել ոչ միայն զնա, այլև զզօրութիւն յարութեն և զհաղորդութի չարչարանացն. զի այսմ դաւանութե կից է, կամ զհետ գայ հաւատալն փոխութե 'ի մեղաց յարդարութիւն, և այլն:

(2) 'Ի [illegible]: 2. օրին. 'Ի [illegible]:

(3) Ս[illegible]: 2. օրին. [illegible]: և նոյն խմաստք են. այսինքն 'ի պարտեաց մահապեր մեղացս՝ որ առ իս անքաւելի են, անպարժան թողութե, փոխադրել յերանութիւնն երկնաւոր՝ յորմէ չէք անկանել երբէք:

(4) [illegible]: Ոչ ապաքէն զարմանալի և 'ի վեր է քան զբանն՝ ախտն մեղաւորի, որոյ միտք զանել 'ի խաւարէ երկբայութե յուղարմութեն այ, և յայ օգնել, ը ծիծաղելն մտրմոլ հոգւոյն հասանէ զղջմամբ: Ոչ թէպէտ և 'ի բարձրագոյն սրբութ. անկեալ լիցէ 'ի խոր՝ նոր մեղօք [illegible], գժուարաւ քաւելեօք, սակայն ունի և [illegible] [illegible], զմնայուածս լուսոյ փրկութե՝ զհաւատս և զյոյս յո-

զօրութիւնն այ. որ ոչ է 'ի մեղսամակարդ հոգի նորա, երբեւ զհրաշալի հուր տաճարին, Տաճարանաւ, թանձրացեալ 'ի հրամանէն այ երբեւ տիղմ 'ի յատակս ներհեւու, անշէջ ջրհորոյն, որ և խորոյն կոչեցաւ: (Բ. Մակաբ. Ա. 19. 20:) Սուրբ և Ճշմարիտ, որ բոլորովին որոմեալ է, և անկողմութիւն բարուոյն բարձեալ 'ի նմանէ, և վստահութիւն ընդունելոյ զշնորհն թուլացեալ, մնայ սակաւին յուսալ՝ վերստին հասանելոյ նախապարգեւեալ բարերարութեանց, յառաջագոյն պարգեւեալ շնորհացն և առաքինութեանց՝ որք փառաւորդեն զհոգին: Կայծն և յանձնուոյ. այս կայծակն հաւատոյ և յուսոյ՝ որ ներգործէ 'ի սիրտ մեղաւորին, յայ պատրաստի 'ի նմա. զի զզօրութիւն արդարացուցանողին ցուցցէ լինել ամենակարող: Կամ, յայ անօրէնն այս, զի թողլ տալով նորա անկցի մարդ 'ի մեղս. զի յետոյ կանգնելով զնա 'ի մեղաց՝ երեւեսցի ամենազօրութիւնն այ: Յոր խունկ: յայս հաւատք զղջմանն տուեալ հաճի ած, քան 'ի ծխանելիս հին օրինաց խառնեալս 'ի զանազան խնկոց աղացելոյ, որ էր օրինակ անձանց բեկելոց զղջմամբ. առ 'ի փոքր նոյն նմանութեան, այսինքն առ 'ի ունել զնոյն նմանութիւն. զի որպէս այն խունկք մանրեալք և 'ի հուր արկեալ վառէին առ 'ի պատիւ այ, նոյնպէս սիրտ մեղաւորի զղջմամբն և ապաշխարութբ խորտակեալ վառեսցի 'ի սէր այ.

(5) Նորոգեաց մեղօքն անդրէնօք: Այս չէք յօրինակս ինչ:

(6) Իբր կայծակն լուսոյ: 2. օրին. Իբր կայծական լուսոյ:

(7) 'Ի յատակս ներքինս ներհեւու ջրհորոյն: Այսպէս ունին մեր օրինակքն. համաձայն բնագրի (Բ. Մակաբ. Ա. 19.) ուր այլ ապագրեալ գտնէր եղանի. ներքին ներհեւու ջրհորոյն:

(8) Առ որ կանանցն: Քան զմեռելութիւն չորեքօրեայ վախճանելոյ չէք ինչ անյուսալի առ 'ի կենդանանալ. և սակայն վասն այնր կանանցն, այսինքն քերցն ղազարու ժամանելով յոտս քնի հաւատովք, ետեսին զփառսն այ 'ի կենդանանալ եղբօր իւրեանց:

(9) Առաջին անկարգաց շնորհքն: Իսկ թէ այսպէս, կամ դարձեալ անկորուստ մնայ շնորհն յետ մեղաց, բազում են վկայք: Նախ՝ Էնովք, որ ապաշխարելով ընդ մեղս նախահօրն, կամ ընդ իւր մեղսն, վայելեաց ըստ մասին զանմահութիւնն՝ զոր կորոյս ադամ: Կարծիք ապաշխարութեանն ենովքայ՝ թուի ապածեալ 'ի փիլոնէ իմաստասիրէ. զի սա 'ի լուծմունս ծննդոց. (բան ա. համար 82.) յասելոյն թէ ենովք յետ ծնանելոյն զմաթուսաղա՝ հաճոյ եղեւ այ, մեկնաբերէ՝ թէ յառաջն մեղուցեալ, յետոյ ապաշխարեաց: Եւ ահարոն՝ յետ մեղաց որթագործութեն ոչ կորոյս զքահանայութիւնն: Ընդ որս և փոքրն Եղիազար: Այս եղիազար ոչ է աւարեանն. (ա. մակաբ. բ. 5.) ոչ եղիազարոս ծերն՝ որ նահատակեցաւ: (բ. մակ. զ. 18:) և ոչ միւս եղիազար քահանայ, որ պատմի (գ. մակաբ. զ. 1.) Զի զոցանէ ոչ պատմեն գիրք՝ մեղուցեալ ինչ և ապաշխարեալ: Ոմանք ըստ հին լծ. իմանան զեղիազար որդի ահարոնի՝ փոքր քան զնաբադ և զաբիուդ. երբեւ թէ յանցուցեալ իցէ չկամելով ճաշակել զվասն մեղացն: (ղեւտ. Ժ. 16:) Սակայն յայտ ոչ մեղաւ նա, և ոչ ապաշխարութիւն եցոյց. ուստի և մովսէս լուեալ յահարոնէ զպատճառ չուտելոյն՝ հաւանեցաւ: Այլ մնայ իմանալ զեղիազար կրսեր որդի մովսէսի. (ելից. ԺԸ. 4:) որ անթլփատ գոլով ընդդէմ հրամանին այ, մինչդեռ դառնայր մովսէս յեգիպտոս, հրեշտակ ան կամէր սպանանել զնա, այսինքն կամ զմովսէս, և կամ ստուեր զմանուկն վասն անթլփատութեն. և 'ի թլփատել զնա մօրն՝ ներեաց հրեշտակն: (ելից. դ. 25:) Արդ՝ այն հեղումն արեան եղեւ եղիազարու գործ ապաշխարութե. որով ազատեցաւ 'ի մահուանէն.

ուստի 'ի Դծէն ոյ բերանով հրեշտակին՝ որոշմեալ վկայեցաւ Դծագու-
նէյն · այսինքն մովսէսի՝ և կնոջ նորա, և բովանդակ իէլացւոց ։ Կամ
այսպէս խմմ · փոքրն այն մանուկ որոշմութիւն գտեալ 'ի մեծէն այ,
այլոց մեծագունիցն հասակաւ վկայ եղև՝ թողութիւն գտանել ապաշ-
խարութբ ։ Եւ զայս եղխաղար ծօծր ասէ՝ ոչ միայն վասն մանկական հա-
սակին, այլև համեմատութբ եղխաղարու ահարոնեան · զի ահարոն ե-
րէց գոլով քան զմովսէս ծննդեամբ և ամուսնութբ, յառաջագոյն
ծնեալ էր զեւրն եղխաղար քան զմովսէսին ։

(10) Եւ ըր անօթաւէլին էն ։ Թողում յիշել նհազըրդէալն, այսինքն
զհաղորդեալսն սպանման քմի արարչին, որ անքաւելի պարտիք են՝ վասն
անհնարին չարութեանն · և սակայն բազումք 'ի նոցանէ հաւատովք ա-
պաշխարեալ արդարացան ։ կմ նհազըրդէալն խմմ փոխանակ սեռակա-
նի · այսինքն թողում յառաջ բերել զանքաւելի պարտիս զհաղորդելոցն
մահուն քմի ։ Ա օրս, այսինքն ընդ որոց թողում և զգլխաւորն ըն-
տրելոց պօղոս · կամ, բաց յորոց և գլխաւորն ընտրելոց պօղոս վկայ
է այսմ, որ երբեմն գլուխ էր մեղաւորաց ։

(11) Բան ընախակրծնիցն սատաւելութե ։ Ամենք 'ի մեղուցելոցն ը օրինօք՝
յապաշխարելն առաւել գերազանցեցին սրբութբ քան զեղեալսն 'ի նախ-
կին կրօնին, այսինքն 'ի բնական օրէնս ։ Կամ, այնպիսի ապաշխարօղք
առաւել սբք եղեն քան զմնացեալսն 'ի կրօնի ածպաշտութե՝ զոր նախ
ընկալան, այսինքն քան զանմեղ մնացեալսն · զի բազմաց՝ անկումն
պատճառք լինի յորդորագոյնս ընթանալ յառաքինութիւնս՝ քան զոչ
անկեալսն · և այս է գործ կարգաւորութեն այ, և ոչ 'ի գլխաւորաէ
կամաց մեղուցելոցն ։

(12) Որ նախ տան զօրէնակէն ։ Ընովք՝ որ նախ քան զգրաւոր օրէնսն՝
զաւանդ բնական օրինացն պահելով, առաւել մերձաւոր և նմանօղ
գտաւ զաքարէրանի ախըբնահօրն դաւանութե, այսինքն աբրահամու, որ
ակզբնահայրն էր հաւատոց և ճշմարիտ ածպաշտութե · և ընախնոյն զա-
գամաց զպարտիս խրոսմ անձինն համարելով, ընոքայն, զնորա պատու-
հասն տուժեաց, վճարեաց ծորոցին կրէշ թաժամամէ, փոխանակ ասելոյ՝
տաժանմամբ կամ աշխատութբ կրից խոցոյ · ( Թերևս ոչ ուսելով
բնաւ պատուղ, որպէս աւանդութիւն է ոմանց ) ։ Այսու ոչ լոկ 'ի մե-
ղաց քաւեցաւ, և յետոյ ըն այլոց ապաշխարողաց՝ մեծեալ ծածկեցաւ
յերկրի, այլ չարչարելի մարմնովն իբրև յաղթող մահու՝ և կապողեա
կենդանութե բնութեան՝ փոխեցաւ կենդանւոյն ։

(13) Խոչ ոմանք 'ի բաւայ ։ Ամենք 'ի դարձելոցն հեթանոսաց, որք ոչ եր-
բէք 'ի բարձրութե շնորհաց եղեն, այլ 'ի մանկութե՝ չարօտնէն յերկարա-
ցեալ · չարեօք կեալով ընդ երկար, ապա հաւատովք արդարացեալք, 'ի
թշուառութե չարաչար վարուց յերկինս վերացան, որպէս բախաբ, հր-
ռութ, և այլք ։ Յայլ տպագիր եդեալ էր՝ չարտնէն · բայց ուղիղ ես
է չարտնէն, ըստ մեր օրին ։

(14) Եւ թէ այն ժամանէայ խանխա ։ Եթէ կամիսաւ 'ի բնական և 'ի գրա-
ւոր օրէնս զօրացան հաւատք ապաշխարութեն՝ դարձուցանել 'ի չա-
րեաց, և այնչափ սրբել, մինչև յաւէտէն նէմ, իբրև ոսկի մաքուր առնել
զհողեղէն ապականութիւնս մեր · և զպատկերն աչքոյն ածային շնոր-
հաց նկարել 'ի հոգիս մեր, և զմեր բնութիւն առնել անշարժ 'ի բարին՝
և յաղթօղ պատրանաց սատանայի, ապա ևս առաւել այժմ յօրէնս
շնորհաց յուսալի է պայծառ լուսաւորութիւն հաւատոյ և շնորհաց,
յորում քն է հաշտութիւն, են ։ Կամ, եթէ կամիսաւ այնչափ արդա-
րացոյց հաւատքն, մինչև մարդեղութն քնի ոսկիացեալ էր բնութիւնս
մեր, և դադէլոն արտառի, ածային բնութիւնն չև էր միաւորեալ ընդ

կերպիս մերոյ, անկորուստ և անպղծելի մնալով, և լինելով յաղթօղ պատրանացն սատանայի, ապա այժմ յետ լինելոյ այսր ամի՝ առաւել եւս յուսալի է և այլն ։

(15) Համբերօղ . . . զպատկեր բանին ։ Ընդունիմ հաւատով զծննդութիւն բանին ․ և ակնունիմ փառացն շնորհի, շնորհի արդարութեան՝ որ է սերմն փառացն երկնայնոց, կամ, շնորհին՝ որ է փառք հոգւոյ ։

(16) Յայս անպատուերագիր ։ Յայսչափ յայտնի գրեալ, կամ յանընկճելի յուսադրութիւն ապաստանեալ, կործանեալս մեղօք՝ կանգնեմ կամ հաւատով ։ Վրիպելոց ․ սխալելոց, կամ մոլորելոց՝ 'ի ճշդէն, այսինքն կամ, հաստատիմ 'ի դարձն, 'ի յոյսն, 'ի կեանսն, ևն ։ Արաշելոց վարատականաց ․ փախուցելոց և թափառականաց դիմեմ 'ի կոչումն իմ ։ Ապստամբ ․ խիստ, յամառ՝ հաստատիմ 'ի հեզութիւնն ։ Հայհոյօղս ․ չարաբանս, անիծանօղս հաստատիմ 'ի ներումն նախատողաց իմոց, ևն ։

(17) 'Ի քս յս ։ Այս վստահութիւն իմ հաստատի կամ յաջողի զօրութեամբ քի, և հօր նորա, և անուամբ և կամօք հոգւոյն սբյ, որոց օրհնաբանեալ խնկութեան՝ է կամեցելի զօրութիւն, արքայութիւն ևն ։

---

Սերտին յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հաճոյի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

# ԲԱՆ. ԺԲ.

ա. Եւ արդ՝ քանզի յաւէտ [1] յառաջնում զղջմանն յուսահատութեան բանիւ լքայ, և տարակուսանաց հեծանաւն 'ի մահ ձաղկեցայ, առտանօր 'ի յուսոյն կերպարան փոխեալ՝ յարդահատել համարձակեցայց, զերրորդութեն 'ը կարդալով յօգնականութիւն ինձ մեղաւորիս ։ Որ և անդստին իսկ յօրհնաբանելն և 'ի դաւանելն զկենդանարարն բնաւից ած, խսկոյն և կոչումն ընտանի ձայնի ահաւորութե անուան շնորհածիրն բարերարի՝ մահացելոյս է կենդանութի, ըստ մարգարէին նախաձայնութե, թէ [2] որ կարդայ զանուն տն, նա կեցցէ ։ Իսկ ես ոչ միայն կարդամ, այլ նաև հաւատամ մեծութե նորին ․ [3] ոչ եթէ վասն պարգեւաց նորա մատուցեալ յողոք դեգերիմ, այլ իբր զկենդանութի իսկապէս, և զշնչոյ տուրեւառութի հաւատի, առանց որոյ ոչ է շարժողութի կամ ընթացուն ․ զի ոչ այնքան յուսոյն հանդուցիւ, որքան սիրոյն կապանօք բերիմ ։ Ոչ 'ի տուրսն, այլ 'ի տուօղն յաւէտ կարօտիմ ․ ոչ փառքն են ինձ անձկալի, այլ փառաւո-

բեալն է համբուրելի. ոչ կենացն փափագանօք, այլ կենարարին յիշատակաւն միշտ ճենճերիմ.[4] ոչ վայելիցն տարփանօք հեծեմ, այլ հանդերձողին տենչանօք՝ յերկկամանց աստի կակամնիմ. ոչ զհանգիստն խնդրեմ, այլ [5] զհանգուցչին զերեսս աղաչեմ. ոչ հարսնարանին խնձոյիւք, այլ փեսային անձկութբ մաշիմ: ՚Ի ձեռն որոյ զօրութե վստահապէս ակնկալութբ [6] վերադրեցեալդ յանցանօք բեռանց՝ աներկմիտ յուսով հաւատամ ՚ի կարողին ձեռն [7] ապաստանեալ, ոչ քաւութե միայն հասանել, այլ զնոյն ինքն տեսանել՝ յողորմութիւն և ՚ի գթութի և յերկնիցն ժառանգութիւն. թէպէտ և յոյժ եմ տարագրելի:

Է. Եւ արդ՝ բազում պատկառանօք ամաչեցելոց դիմաց կորացեալ, [8] զմիջնորդ ազդման կափուցմանց երկակի շրթանցս՝ արժանափակ աղխիւ կարկելոց՝ առ անհամարձակ լեզուիս շարժութի, նորոգեցից ՚ի յերգ հառաչման պաղատանաց յեղանակութեանցս աղիողորմ հեծեծանաց՝ ՚ի բարձունս աղաղակելոյ:

### Մաղթանք զօրաւորք արհաւրաց Գէորգեայնոյ:

Ը. Ընկալ բաղձրութբ տր ած հզօր՝ զդառնացողիս զաղաչանս. մատիր գթութբ առ պատկառեալս դիմօք. փարատեա ամենապարգև՝ զամօթական տխրութիս. բարձ յինէն ողորմած՝ [9] զանբերելի ծանրութիս. անջրպետեա հնարաւոր՝ զմահացու կրթութիս. աւարեա միշտ յաղթօղ՝ զխաբողին հաճութիւնս. բացադրեա վերնային՝ զմոլելոյն մառախուղ. կնքեա կենցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս. ցրուեա ծածկատես՝ զըմբռնողին չար գրտմունս. խորտակեա անքնին՝ զմարտողին դիմեցմունս: Տեառնագրեա քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ յարկիս. պարփակեա քո ձեռամբդ՝ զառաստաղ տաճարիս. գծագրեա քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս. կերպացո զքո նշանդ՝ ՚ի հետս ելից մաղթողիս. ամրացո քո աջովդ՝ զհանգստեանս խշտի. մաքրեսցես ՚ի հաղբից՝ զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ՝ [10] զտառապեալ անձն ոգւոյս. անխարդախ ա-

րասցես՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս․ կացուսցես շրջափակ՝ զպար զօրուդ երկնային․ կարգեսցես 'ի դիմի՝ ընդդէմ դիւացն դասու։ Տուր հանգիստ բերկրութե՟ն մահահանգոյնս նիրհման 'ի խորութե՟ն գիշերիս, բարեխօսութբ՟ հայցուածոց սբ՟յ ածածնիդ՝ և ամենայն ընտրելոց։ Ամփոփեալ [11] պարուրեա զպատուհան տեսութեց՝ զգայարանացս իմաստից՝ անշարժուրելի զետեղմամբ՝ 'ի ծփական խռովութեց, կենցաղական զբաղմանց․ անրջական երազոց, [12] խօլականաց ցնորից․ յիշատակաւ քո յուսոյդ՝ անմխասելի պաշտպանեալ։ Եւ ընթափեալ վերստին 'ի ննջմանէ ծանրութե՟ն ամենազգաստ արթնութբ՟, հոգենոր զուարթութբ՟ 'ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոց՝ [13] քեզ ամենօրհնեալ թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել։ Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

---

(1) Յառաջնուած ողջմանն։ 'ի բանս Դ․ Է․ Ը․ հայելով 'ի բազմապատիկ անօրէնութիւնս իմ և յարդար դատաստանն Այ՟ յուսահատութե՟ն բանիւ զիս պարտաւորեցի․ և սաստիկ տարակուսանօք իբրև հեծանաւ, հասա դաւաղանաւ հարուածեցայ մինչև 'ի մահ․ այս է՝ խմով բանիւ խոստովանեցայ գոլ որդի կորստեան, և ոչ փրկութե՟ն՝ ցուցակ կան յիս անօրէնութիւնք։ Բայց այժմ զկերպ յուսոյն յանձն իմ ընկալեալ, հայելով 'ի զօրութիւնն Այ՟՝ իշխեցից աղաչել, պաղատիլ, յողորմութիւն ինձ կոչելով զՍբ՟ Երրորդութիւնն, որ կարէ և կամի զիս արդարացուցանել։

(2) Որ և անդադրն։ Անչափ յուսալի է ողորմութիւնն Այ՟, և արագահաս օգնականութիւն նորա, մինչև անդէն 'ի դաւանելն զնա սրտիւ, խակոյն յորդորիմք բերանով ևս իբր ընտանեբար կոչել զանուն նորա, թէև ինքնին աչաւոր է․ և այն կարգաւն կամ կոչելն կեանս տայ մեռելոյս, բառ մարգարէին, որ կարդայ զանուն Տն՟՝ կեցցէ։ Որ կարդայ զանուն Տն՟։ Այսպէս գնի 'ի լաւ օրինակս առաւել համեմատ բնագրին յովելեայ․ (Բ․ 32։ և Հռովմ․ Ժ․ 13․) այլ և յարմար նախընթաց բանին, յորում ասէ՝ կոչումն ընտանի ձայնի անուան բարերարին՝ մահացելոյս է կենդանութիւն։ Իսկ յայլ տպագրեալս գնի, որ կարդայ զՏր։

(3) Իսկ ես ոչ միայն։ Ես ոչ լոկ բերանով կարդամ զնա, ոչ սոսկաբար 'ի յուսոյ շարժեալ, օգնութիւն ևեթ հայցեմ 'ի կարիս իմ, այլ սրտիւ նախ հաւատամ մեծութեան նորա։ Ո՛չ եւեթ վասն պարգևաց նորա։ Ո՛չ վասն բնական և գերբնական պարգևաց նորա աղաչեմ, այլ զնոյն ինքն պարգևատուն համարիմ ինձ ճշմարիտ կենդանութիւն, և շունչ հոգւոյս և մարմնոյս․ զի ըստ գերբնական կենդանութե՟ն՝ որ 'ի ձեռն սրբարար շնորհաց, Տծ միայն է պատճառ․ և ըստ բնական կենդանութե՟ն՝ սնուցիչ միայն Տծ է, և նա ինքն ընդհանուր պահպանիչ, և կատարիչ պահ-

պանութեն երկրորդ պատճառաց ։ Ա՛յսու բանիւ ոչ խնանի՝ թէ զպարգևան ինչ չիցէ պարտ խնդրել կամ սիրել, կամ ոչ վասն հատուցման վարձուց ծառայել ինչ․ քան զի է և այս 'ի գովութեն մասին, և աւանդեալ 'ի սբ գրոց․ այլ նշանակէ՝ թէ չէ պարտ 'ի պարգևսն անդ զսէրն առնուլ, կամ վասն պարգևացն միայն խնդրել զած․ զի այս վարձկանին է, և յոյս՝ 'ի սիրոյ անձին՝ քան ինչ․ վասն այն յարէ․ [illegible] հան[illegible]։ Իսկ օրինակ ածսիրութեն է՝ առանել զած սիրել քան զպարգևս նորա, և զայնս սիրել վասն ինչ և յած ։ Ա՛յլ գերազանց եղծ սիրոյ է՝ զած միայն սիրել 'ի պարգևս իւր, ոչ զի մեզ պարգևէ, այլ զի յինքեան է պարգևատու․ որով պարգևքն և պարգևատուն լինին միայն նիւթ սիրոյ, իսկ ած և բարութիւն նորա լինի բուն առարկայ և շարժիչ սիրոյ ։ Զայս եղծ կամի յայտնել սբ վարդապետս յայս բան, և 'ի յաջորդսն ։

(4) [illegible] ։ Ո՛չ հանդերձեալ վայելմանցն ցանկութբ հառաչեմ, այլ [illegible], զնոյնս պատրաստողին բաղձանօքն [illegible], 'ի ներքին խորոց սրտիս կականս բարձեալ ողբամ։

(5) [illegible]։ Ա՛յսինքն խնդրեմ, որոնեմ։

(6) [illegible] ։ Ա՛յսինքն բեւռմբք վերոգրեալ յանցանացդ ։ Թէպէտև առէ՝ պարտաւոր եմ նախասացեալ մեղօքն, բայց 'ի զօրութիւն փրկչին իմոյ վստահացեալ, աներկբայ հաւատամ ոչ միայն քաւութիւն գտանել, այլ և զնա ինքն յիւր բնութեն տեսանել, [illegible], ողորմութբ և գթութբ նորա, և [illegible], հանդերձ ժառանգութբ երկնից ։

(7) [illegible]։ 2․ օրէն․ [illegible]։

(8) [illegible]։ Թէպէտ և վստահութիւն այսպիսի ունիմ յողորմութիւնն Ա՛յ, բայց միշտ լի եմ պատկառանօք, և ամօթ երեսաց իմոց ոչ թողու 'ի վեր հայել․ այլ միայն զմիջնորդ, այսինքն զաղօթելս որ է միջնորդ ազդելոյ 'ի պապանձումն շրթանցս արժանապէս փակելոց վասն մեղացս, որպէս զի անհամարձակ լեզուս շարժեսցի, դարձուցից 'ի յերգ հառաչանաց, [illegible], այսինքն զանազան պաղատանաց․ կամ 'ի փոփոխումն խնդրուածոց ։ Կամ, [illegible], այսինքն զգիրս՝ որ է գործի ազդելոյ կամ խօսելոյ պապանձեալ շրթանցս․ զի գիրն է նշանակ խօսից․ և հանր բերանոյ՝ ձեռն է գործի խօսելոյ նշանացն, կամ գրով։ [illegible], կամ ասիւ․ արժանապէս փակող կամ լռեցուցի փականօք ։ 'Ի մի օրէն, [illegible], այսինքն ցաւով կծ ամօթով մեղաց պապանձեալ շրթանցս ։ Հին լուծ․ [illegible] իմանայ զմիտս, որ ազդէ հոգւոյն և մարմնոյն ։ Բայց անյարմար է կարգի բանին ։

(9) [illegible] ։ Բարձ յինէն զանտանելի ծանրութիւն մեղաց, կամ տրտմութեց սրտիս։ [illegible], 'ի բաց տար, հեռացո զծա[illegible] ։ ( օրէն․ ինչ՝ [illegible] ) զմահաբեր տխրութիւնս մեղաց, կամ զմահաբեր գլորմունս, և զախթս մեղաց։ [illegible], այլ օրէն․ [illegible]։ այսինքն ցրուեա կամ եղծեա [illegible], զհեշտութիւնս կամ զհրապոյրս խաբողին սատանայի ։ [illegible], հեռացո, կամ յայտնեա զմառախուղ [illegible], կատաղեալ գլխին, որ մթացուցանէ զաչս մտացս՝ առ 'ի չտեսանել զպատրանսն։ [illegible], արգել, խափանեա զկորուսչին սատանայի ընթացմունս 'ի վերայ իմ, կամ, զխորհուրդս և զջանս նորա ընդդէմ իմ ։

(10) [illegible]։ Ըստ որում խորշելացուցն հրամայեցեր յեգիպտոս՝ օծանել զսեամս տանց իւրեանց արեամբ զառակաց գառինն, որպէս զի մի մերձենայցէ սատակիչն 'ի տունս նոցա, և առա-

ւել ես ինքն հայցեմ, քով ա̃ծային արեամբ նշմարեսցես զմաւոս սե-
նեկիս . այլ և զմոացս, զի մի մերձենայցէ սատանայ ։ Կերպարք, ձևոյն
զնշան խաչիդ 'ի շաւիղս ելից և մտից իմոց, զի մի օձն դարանակալ
խայթիցէ ։ Պահպանեա՛ զհանգստեանս խաչի, զանկողինս յոր հանգ-
չիմ ։ Մաքրեսցես 'ի հաղբից, 'ի վտանգաւոր երազ՝ որք եբր որոգայթ
կարեն լինել 'ի ծածկարանի անկողնոյն՝ կամ դիպուածով, կամ 'ի չա-
րութէ մարդկան և դիւաց ։ Պահեսցես զպատուհաս անձն իմոյ ։ Եթէ
անձն առցի փոփոխակ մարմնոյ, որպէս և 'ի բանսն ըա . 2 . լբ . 2 . կթ .
2 . բացատրի, անմնաս պահել զաշխատեալ մարմինն՝ որ է հոգւոյն
եբր բնակարան ։ Իսկ անձն առեալ փոփոխակ հոգւոյ, ըստ որում
յաճախ նշանակէ, բացատրի՝ պահեսցես զատուապեալ անձնս՝ որ է հո-
գիս, և համարի բացայայտիչն եդեալ 'ի սեռական հոլով, ըստ անսո-
վոր ոճոյն, զորմէ յընդարձակ քերականն . հմր 845 ։ Անխարդախ, ան-
մխասելի արասցես զշունչ կամ զկենդանութիւն մարմնոյս՝ զոր դու
շնորհեցեր ։

(11) Պարապերմ զպարսպահան ։ Պատնեա կամ պահպանեա զաշս իմ, որ է
գլխաւոր զգայարան՝ ծանուցող խմասից մտաց, զոր ամփոփեսցես աներ-
կիւղ դադարմամբ կամ հանգստեամբ քնոյ ։

(12) Խուլանկանաց ցնորից ։ այլ օրին . խառնակական . խառնիխուռն երևա-
կայմանց կամ երևութից՝ որք 'ի խելառութէ լինին ։

(13) Բնեղ անձնօրհնեալ . Օրինակք ինչ այսր աւարտեն, բեղ անձնօրհնեալ
Բագաւոր քաւաց անձանց յերկինս առաքել . անձն ։ այլքն պակասին ։
Զայս զօրաւոր մաղթանք Ընկալ բաղցրաբէ, ոմն 'ի հայկազնեաց՝ անուն
Յովսէփ սարկաւագ յոլհաննիսեան, տեղեակ ռուսաց բարբառոյ՝
Թարգմանեալ է 'ի նյ լեզու, և ընծայեալ Աղեքսանդրի կայսեր նոյա
եբր ուղերձ հաճոյական ։

---

Մերովին յաւելուած կրկին հեծութէ՝ նորին հայրաղէ, առ նոյն
աղերս Տաղբանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ ։

## ԲԱՆ. ԺԳ.

ա̃ . Ա̃ծ բարերար հզօր ահաւոր, [1] հայրդ բարի
ողորմութեանց շնորհի, որոյ անունդ իսկ
մեծիդ գթութիւն և ընտանութի աւետարանէ,
քաղցր դժնէից և անգոհացողաց ։ Ընդ քեզ և [2] որ-
դիդ քո՝ իբրև զքեզ, զօրաւոր ձեռն իբրև զքոյդ,
անժամանակ տէրութբ ահեղ, ընդ արարչութեանդ
քում բարձրացեալ ։ Եւ հոգիդ ճշմարտութէ՝
բղխեալ առ 'ի քէն անսպառութբ, [3] կատարեալ խա-
կութի գոյի, էութիւն միտնջենաւոր, հաւասար քո
ա̃մփւ, փառակից որդւոյ քո տէրութբ ։ Երրեակ
անձնաւորութի՝ համայն անքնին, [4] տրոհեալ 'ի դի-
մաց՝ ուրոյն զատուցմամբ . իսկ [5] միաւորեալ համա-

զուգութե՟, նոյնագոյ բնութե՟ տիրապէս, անշփոթ և անանջրպետ՝ միով կամօք և կցորդութե՟. ոչ երկցութի՟ ումեմն 'ի յումեմն, և ոչ քթթել մի ական առ-նուազութի՟ միոյն ժամանեալ, քան թէ պատճառ-սիրոյ երկնայնոյ անստուեր լուսոյ՝ որ առ մերն է ծա-նօթութի՟, միով պսակաւ սրբասացուէ անսկզբնա-բար ա՟ծաբանեալ: Քանզի արդարև վերաձայնեալս այս խոստովանութիւն[6] երեքփառատրեանդ դաւա-նուէ՝ զվէմն հաւատոյ պետրոս երանեաց. իսկ զդա-տապարտելոյս անձն մեղօք՝[7] բարեհրաման քո ակ-նարկուէ՟, ով խնդրողդ գերելոյս՝ հրաշանորոգ ար-դարացուսցէ: Քանզի թէպէտ և քո՛ իցեն պարգևք, և քո՛ ողորմութի՟ք, այլ ոչ 'ի պարգևսն ես այնքան հաշակեալ, որքան յողորմութեն. զի երկրորդն՝ ըղ-ձոյդ յաճախէ զփառս, իսկ առաջինն՝ զճգնաւո-րացն յայտնէ զգործս. զի պարգևք՝ վաստակոցն են փոխատրութի՟ք, իսկ ողորմութի՟ք՝ մեղուցելոյս բա-րերարութի՟ք:

է. Եւ արդ՝[8] մի՛ զօրասցին մարդկայինս գործք ա-ռաջի քոյոցդ շնորհաց՝ ա՟ծ գթութեյ, թէ և անդր խսկ իցեն[9] քան զօրէնս հասարակաց՝ բնաւորականս հոսմանց. այլ յաղթօղ եղեալ քոյդ երկայնմտուէ, նուազ եղիցի առ քումդ մասին ընթացք երկրա-ծնաց: Քանզի և որ[10] մաքրուե՟ն պերճանային օրէ-նականացն վստահութի՟ք, 'ի լուսաւորել քոյդ ար-դարութե՟ զուշակ ներկայիս, ամենանուազ անձկու-թեամբ լքեալ հրէութի՟ն՝ յետնեալ, և յաւէտ ընդ-տարագրական ողորմելոյն, առաւել նոքա զտան կա-րօտեալ մարդասիրութե՟: Եւ քանզի ամենայն ինչ հնարաւոր է քեզ՝ բարերար, լո՛ւր պաղատանաց գոչ-ման հեծութեանս՝ որ կարդամս առ քեզ. ողորմեա՛ կեցո՛, և մարդասիրեա՛: Զի քո՛ է երկայնմտուի՟, քաղցրութի՟, փրկութի՟, քաւութի՟, և փառք[11] յա-մենեցունց՝ յաւիտեանց ազգաց. ամէն:

---

(1) ՀԱ՛ՅՐ ՄԵՐ: Ո՛չ միայն ա՟ծ ես մեր՝ այլև հայր բարերար. ՈՂՈՐ-ՄՈՒԹԵԱՆՑ ՇՆՈՐՀԻ, 'ի շնորհաց ողորմութեն՟դ հայր ես մեր՝ և ոչ բնութեամբ. որոյ և հայրական անուանդ զընտանութիւն ցուցանէ մեզ, քաղցր գոլով ժամուց, և ԱՆԳՈՀԱՑՈՂԱՑ: այսինքն ապերախտից: մի օրէն. ԱՆՀՈԳԱ-ՑՈՂԱՑ:

(2) Որդիդ քո ։ Ա՜ռ քեզ և ընդ քեզ է միշտ որդիդ, նման քեզ յամի, զօրաւոր ձեռն նորա կամ կարողութիւնն իբրև զքոյդ, անժամանակ և աչաւոր ը՛ տէրութեան. ընդ արարչաբանդ, ընդ արարչական բնութեանդ բարձրացեալ։ Այնպէս որդի է քո, զի ոչ էլէք և ոչ երբէք 'ի քէն պակասի։

(3) Կատարեալ ինքնաբուն ։ Նոյնպէս և հոգիդ որ յառաջ եկեալ առանց սպառելոյ, ամիւ նման քեզ՝ կատարեալ բնութիւն, կամ անձն գոյող, ոչ անկատար զօրութիւն ինչ՝ ը՛ մոլորութեն հոգեմարտից։

(4) Տրոհեալ 'ի դէմս, բաժանեալ, զանազանեալ ը՛ դիմաց կամ ը՛ անձանց, առանձին զատուցմամբ, որոշ տարբերութբ 'ի ձեռն անձնական յատկութեց, որք 'ի միմեանց խրապէս զանազանին, և զանազանեն զանձինսն։ Վարդապետք յունաց և հայոց, այլև հնագոյնք 'ի լատինացւոց՝ առեալ 'ի կէր առնուն զածային անձանց զբառս՝ բաժանեալ, զատեալ, որոշեալ, անջատեալ, ևն. առ 'ի ցուցանել միայն զդիմաւորական և զանշփոթելի զանազանութիւն նոցա ընդդէմ սաբէլի և այլոց աղանդաւորաց, որք պատահական զանազանութիւն ինչ ևեթ դնէին 'ի նոսա։ Այլ զի այսպիսի բառք կարեն ևս նշանակել զբաժանումն 'ի մասունս, կամ զայլևայլութիւն բնութեան, ը՛ այսմ՝ անբաժանելի, անանջատ ասէին զածային անձինսն. որպէս և աստ զինի ասէ, անշփոթ և անանջրպետք։ Վասն որոյ ըստ այլևայլ մասանց զպատշաճ բառս ուրեք ընծայէին ածային անձանց, և ուրեք ոչ։ Ըստ որում և շնորհալին 'ի ա. թղթ. առ մանուէլ կայսր գրէ։ * Եւ ոչ դարձեալ հրէականին հետևողի սաբէլի լիբէացւոյ ձայնակցելով, զերիսն 'ի մի հաւաքել անձնաւորութիւն, այլ բաժանեմք անբաժանաբար, և միաւորեմք որոշմամբ՝ ըստ ուղղափառ հարցն դաւանութեան ||։ Յայսպիսի իրս քաջայայտ գոլով ողջմտութիւն և մեծ զգուշութիւն հարցն, յանդգնութիւն է ստգտանել զկիրառութիւն նոցա։

(5) Միաւորեալ համագոյաբար ։ Նոյն ածային անձինք՝ որք ը՛ յատկութեանցն զանազանին, միաւորեալ են միաւնաբար մի և նոյն անհատ բնութբ փերադէս, այսինքն յատկապէս, իսկապէս, և ոչ անյատկաբար որպէս զբաղում մարդիկ, որք մի բնութիւն ասին միայն ըստ տեսակին։ Անանջրպետք, անորոշելի 'ի միմեանց՝ փոխանակ հաղորդութեան, և ներգործութբ, գործակցութբ 'ի խնամս արարածոց։ Որով իմանի՝ թէ անորոշելի են ոչ միայն առ 'ի ներքս բնութբ և այլ բացարձակօքն, այլ և առ արտաքս 'ի տնտեսութիւն արարածոց։ Ո՛չ երիցագոյն առաջին 'ի յաջորդն. ոչ մեծութիւն կամ աւելութիւն միոյն քան զմիւսն. կամ, ոչ իշխանութիւն միոյն 'ի վերայ միւսոյն։ Եւ ոչ ստորել մի այլոյ, և ոչ վայրկեան մի առ նուազութեն միոյ ժամանեալ, մինն 'ի նոցանէ նուազեալ կամ պակասեալ 'ի գոլոյ, որով իմանի գոյակցութիւն նոցա։ Կամ, և ոչ սակաւ մի՝ մինն առ կարօտութիւն միւսոյն ժամանեալ յօգնել, որով իմանի համազօրութիւնն։ Կամ, և ոչ փոքու ինն միոյն առ նուազութիւն ժամանեալ, այսինքն նուազ կամ թերի գտեալ քան զմիւսն. որով իմանի հաւասարութիւնն։ Քան զԲէ պատճառ միոյ երկոցունց։ Կրկնակի յարի այս ընդ նախասաց բանիդ. մի՝ իբրև նմանութիւն առեալ յարեգակնէ. այսինքն որպէս պայծառ լոյս արեգական պատճառ է ջերմութեան, և երեքին համանգամայն են, արեգակն՝ լոյս և ջերմութիւն, այսպէս յերից անձանց մին քան զմիւսն և ոչ փոքու ինն նուազեալ է կամ յետին. քան զԲէ, այսինքն որպէս թէ, կամ իբրև պատճառ գոլով մին հայր՝ միոյ երկոցունց, հոգւոյն սր̄յ, և անապական ծննդեան՝ որդւոյն։ Որ առ մերն է ծանօթութեան. այս օրինակ բացատրութեան ը՛ մերում ճանաչման ասի. կամ որչափ 'ի մեր կողմանէ ճանաչել կարող եմք։ Ուր 2. օրին. ևս

հնն լծ․ զնեն․ որ մէրն է ծանօթութեան ։ Երկրորդ՝ իմանի այսպ․ ամենայն անձինք հաւասար են, և չիք ՚ի նոսա մեծ և փոքր, առաջին և յետին․ տան բէ, այսինքն բայց եթէ ՚ի պատճառս երկնային սիրոյն, որով անըստուեր լոյս որդին մարդացաւ․ և եկն ՚ի մեր ծանօթութիւն, որով փոքր և յետին առաւ քան զհայր ։ Այս համագոյ երրորդութիւն մոյն պոսիսորէասոյոսբէ, երեք սրբերգութիւն, որ ՚ի որէոյ սկսեալ՝ ՚ի ասոբէ աւարտի բոլորակաձև իբրև զպսակ, անոյզբնաբար ածաբանեալ, որպէս անսկիզբն օրհնաբանեալ ՚ի հրեշտակաց․ կամ, ՚ի սկզբանէ, միշտ, ըստ որում ոչ գոյ ՚ի գլուխ՝ թէ երբ սկսան այսպէս օրհնել զնա ։

(6) Երէ+ֆոստափըէանտ տասանուբէ ։ մի օրին․ տասանուբէ ։ և առի երեքփառատրեան, զի ըռելեայն զերիս անձինն դաւանեաց պետրոս․ զհայր և զորդի՝ յասելն, Դու ես որդի այ․ և զհոգին այ յասելն, կենդանւոյ․ այսինքն ունողի զկենդանի հոգին․ զի որպէս ասէ ՚ի բանն ըղ․ 7․ * Ոչ գոլով ընդ նմա հոգւոյն, անհաղորդ ոմն և անկենդան, և առ նմ հրաման նուազեալ ։ || Այս փոխանակ բային՝ էրանէաց, օրինակ մի զնէ անոասնէաց․ իբրև թէ զկնին հաւատոյ անուանեաց կամ կոչեաց պետրոս ։

(7) Բարէհրամն +ո ափնարկուբէ ։ Խոստովանութիւն երրեակ ամենութեղ ասէ՝ զվեմոյս զարդարին արժանի երանութեան արար․ իսկ զանձն դատապարտելոյս մեղօք՝ քո բարերար հաճութեդ գտնէ արդարացուցէ, որ առաւել հրաշալի է քան զվեմոյսի երանութիւնն․ զի այն իբրև վարձք հաւատոյ նորա շնորհեցաւ ։ Վասն զի թէպէտ երկոքին ևս ՚ի քէն են, այսինքն թէ պարգև, որ է յաղթանակ կամ հատուցումն վաստակոց բարեաց, և թէ ողորմութեան, որ է ձրի բարերարութիւն անարժանս, բայց երկրորդս առաւել յաճախէ զփառս քո՝ քան թէ առաջինն՝ պարգևքն, որ իբրև վարձք՝ յայտնէ միանգամայն զարժանաւոր գործս ձգնաւորաց, այսինքն առաքինեաց, ճգնելոյն՝ աշխատելոյն ՚ի գործս բարիս ։

(8) ՄԻ ւօրաոյին մարտկայինս գործ+ ։ Մարթ է իմանալ ՚ի վերայ բարի գործոց, և ՚ի վերայ չարեաց ։ Եթէ ասէ՝ միայն ընդ բարեգործութեց մարդկան կշռես զպարգևսդ, երևի՝ թէ մարդկային գործք զօրանան՝ բռնադատելով զքեզ ՚ի պարգևատրել․ արդ՝ մի՛ այսպ զօրասցին մարդկայինս գործք, բէ ն անտր իոլ իշէն, թէ և գերազանց լիցին և ՚ի վեր քան զկարողութիւն մեր հասանելու բնութեանս ։ Իսկ ՚ի վերայ չար գործոց իմանի․ եթէ մեղաւորացս ոչ շնորհես զողորմութիւնդ, երևի թէ մեղքն՝ որ է միայն գործ մարդկան, զօրանայ քան զքո ողորմութիւնդ՝ խափանելով զնա ։ Արդ՝ մի՛ զօրասցին, թէպէտ և յոյժ մեծամեծք իցեն և անցեալ քան զսովորական մեղս՝ որք ՚ի բնական տկարութենէ և յապականութէ գործին ։ Այլ յանձն քո երկայնմտութիւնդ յաղթօղ եղեալ, պակաս երևեսցին առ +ոսմա մարէն, համեմատեալ առ քեզ, ըն-բայ+ էրէրածնոց, այսինքն գործքն եթէ բարիք, և թէ չարք ։

(9) Քան ւօրէնս հասարակաց ։ 2 օրին․ +ան ւօրէնս բնութէ հասարակաց ։

(10) Որ մաքրութին պէրձանայէն ։ Ո՛չ միայն ՚ի մեղանչելն ասէ՝ կարօտիմք ողորմութեանդ, այլ և յարդարագործութիւնս․ քանզի և որք սրբութբն պարծէին օրէնականաց ղփահութե+․ այլ․ ղփահուբէ+, հին օրինաց արդարութիւնքն, կամ այնց օրինապահաց երկիւղածութիւնքն ։ 2, օրին․ օրէնակաց ։ այսինքն ստուերական օրինացն ։ Սակայն ՚ի յայտնել նոցա քոյդ արդարութե, +ոաշան Ներէկայէս, որ ծանուցանէր նոցա զարդարութիւն նոր օրինացս, գտանէին զինքեանս կարօտեալ ողորմութե իբրև զհեղձեալ հեթանոսան ։ Ըստ այսմ ասէր ած եսայեաւ․ (ա․ 12․) զպատարագս ձեր, զշաբաթ, զամսագլուխս, զպահս և զդատարկութիւնս ոչ ընդունիմ․ որպէս և (՚ի կդ․ 6․) ասէ․ * Իբրև զհանդերձ

ապարահից ամ արդարութիւն մեր ։ || Զոր և տէրն կնքեաց . ( մատթ . Ե . 20 . ) * Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց , ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից ։ ||
(11) Յաւիտենիցն՝ յաւիտենից ազգաց ։ Քեզ փառք յամ դարուց ազգաց , կամ յամ նախնի ազգաց ։

---

Սերոբէն յաւելուած երգեն հեծութեան՝ նորին հոգւոյ , առ նոյն ողբերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԲԱՆ . ԺԴ .

ա . Պաղատիմ առ քեզ լուսոյ ճառագայթ , արքայ երկնաւոր , գովեալ անպատում , որդի անճառ մեծիդ այ . խոնարհեցո զունկն քո՝ բարձրեալ բարեգութ , կենաց ապաւէն , նորոգ մերձեցեալ կրկին աստանօր 'ի հառաչումն նուաղս ձայնի վիրաւորելոյս ։

բ . Ոչ ցուցեալ է երբէք , եթէ աղաչեաց զքեզ 'ի ձեռն աւազակացն սրոյ խողխողեալն , քանզի կարկամեալ էր . ոչ ձայն պաղատանաց զկնի արձակեաց , քանզի [1] անշունչ էր . ոչ մատամբքն տատանելոց զաղէտ վտանգին յայտնեաց տեսողիդ , քանզի խորտակեալ էր . ոչ աչս կողկողագինս արտասուօք ողբոց՝ բարբառելոյ յանդիման կացոյց , քանզի վնասապարտ էր . ոչ 'ի պատգամ բանից միջնորդի՝ զողորմածիդ կամս հաճեցոյց , զի [2] անայցելու էր . ոչ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն արիւներանգ ներկուածով ձորձոյ՝ զգթածիդ զսիրտ ճմլեցոյց , վասն զի անյոյս էր . նա և [3] ոչ ծնգովքն հաստատուն իբր գարշապարաւ ոտին վարեցաւ , այն զի անյարիր էր . քանզի կիսամեռն ասել կենդանւոյն՝ սակաւ ինչ նուազ է 'ի մեռելութէ ։ Մանաւանդ զի [4] 'ի քոյոց խրատեալ բանից , և բարբառեալ [5] քոյդ ողորմութբ , և փառօք քո լուսազարդեալ , ոչ միայն զի ոչ վերջացաւ 'ի հակառակն քո ընթացից , այլ ստահակեալ ապստամբութբ , յիւր թշնամեացն թիւ յաւելաւ . ընդ նոսին դաշնաւորեցաւ , միաբանեաց ատելեացն քոց ։

գ . Իսկ դու՝ բազմապարգև , բարերար , անոխա-

կալ, ամենակեցոյց, ոչ միայն զի ոչ պահեցեր զչարագործին մեղաց յիշատակ, այլ և ոչ բանիւ յանդիմանեցեր. ոչ ստն հարեր անկելոյն, այլ կարեկցաբար մատուցեալ՝ զծայրագոյն ցուցեր զխնամս։ Ո՛չ քահանայապէս ըստ ահարոնեան [6] տկար օրինին՝ զօրաւոր առ մահուն պաշտօն՝ դատապարտիչն անիծիւք և բռնալիր քարանցն ձգմամբ 'ի խորտակումն խոցելոյն արագեալ մատեար. և [7] ոչ որպէս ղևտականն կարապետային անկատարագործ՝ 'ի յերկուցն միջի բաժանեալ խորոց, հնոյն լրումն՝ և նորոյս սկիզբն, ունայն 'ի հոգւոյ յապաշխարանն հանդիսացեալ՝ զվիրաւորելոյն տեսեր զվտանգ, զի մի սատակիչն օրինակութ տապարաւն արմատակտրաւ՝ զմահուն պաշտօն 'ի քեզ նկատեալ, յառաջ քան զփորձ առակայիցն սատակեսցի. այլ հեթանոսացն պահպան անուն ասորեստանեայցն, որք 'ի հրէիցն ընկալեալ զօրէնս՝ ամբողջ պահեցին, զոր նոքա մոռացան, նոցին կցորդեալ մարմնոյդ վերարկուաւ՝ մերակերպարան խառնութբ, զազատարարն գծագրեցեր զաւետիս առ օտարազգիսն. և ածաբարդ ներգործութբ անապականաւ՝ ձեռն կարկառեալ, յարուցեր զմարդն նախնի՝ մեռուցեալ 'ի մահ իւրովքն ծննդովք։ Զտրտմեցելոյն սիրտ բերկրեցուցեր, և զվհատեալն հաստատեցեր, և [8] զթշուառացեալն միանգամ՝ կրկին զուարթացուցեր։ Աւազանին կենարար օծմամբն և բաժակաւն լուսոյ լցեր. հացիւդ երկնայնով արարչականդ քոյին մարմնով նոր յեղանակեցեր։ Վերակացութբ [9] երջանկացն ազանց ընտրելոց՝ յանձանձեցեր, գրգեցեր, և խնամարկեցեր։ [10] Հանդարտընթաց գրաստուն տածողութբ անզզուելի պահեցեր, մինչև յարկն լուսոյ ածեր։ 'Ի ձեռն [11] երկաքանչիւրոց միջնորդաց՝ նախնեաց և երկրորդաց՝ տուչութե կտակաց կենդանականացն, մարդասիրապէս դարմանատրեցեր։ Եւ որպէս երբեմն ընդ մովսեսի՝ թեւս տարածեալ արծուոյն օրինակաւ ընկալար զնա, և 'ի հանգիստ հանդարտութե երկրին բարութեան առաջնորդեցեր. և զբանին կերակուր ջամբել հրամանատրեցեր վարդապետութեց։

Դ. Եւ արդ՝ որ [12] զբնաւն ծայրագունին բարութե

լուսոյ՝ յամենայնի բովանդակապէս հրաշագործեցեր, զօգտողին զգանձ քեզ սեպհականեալ՝ զքո ստացուածն առ քեզ դարձուցեր, կեցո և զիս մաքրեալ 'ի մեղաց պարտեաց, որ ձրի պարգևես և անպատրաստից. ընդ որոց և ինձ տացես քաւութիւն և բժշկութիւն՝ բարեգութ, զօրեղ, անքննին, անեղծ, անհաւոր, օրհնեալ միշտ յաւիտենից յաւիտեանս. ամէն:

---

(1) Անկարօղ էր : Ոչ կարէր կանգնել, անբարբառ էր : Մտաւորքն փակեալ էին : այսինքն տառապեցելովք : Պաղատիմ առ քեզ ասէ, թէ և նուազ ձայնիւ վասն վիրաւորեալ գոլոյս հոգւով. բայց մի՛ մերժեր զաղաչեմ, որ առ անկեալն 'ի ձեռս աւազակացն գու խնքնին մերձեցար գթութբ. որ ոչ ձայնիւ աղաչեաց. ոչ մտաւորք զաղէտսն եցոյց. ոչ արտասուօք կողկողեցաւ. ոչ բարեխօս ունէր նա:

(2) Անայցելու էր : Անօգնական. անխնամածու էր. ուստի ոչ կարէր բարեխօսութբ միջնորդի ուրուք հաճեցուցանել զկամս քո: ոչ հայեցեալ մտօք. ոչ գթածութբ կամ ողորմական ցուցմամբ ջախջախեալ մարմնոյն, և արիւնաթաթախ զգեստուն, եւն:

(3) Ուժգնագոյն հարուածովք : Ոչ հասարակութբ կամ զօրութբ ծընգացն՝ իբրև ոտիւք վարեցաւ գալ առ քեզ. ամենայն անդամբք էր, այսու զի, կամ վասն զի անկանգնելի էր, չկարէր 'ի վեր կալ : Բառս անդամբք բաղադրի 'ի բայէն՝ յանդէմ. յարեալ. ուստի ոչ նշանակէ անյարմար, այլ անկանգնելի:

(4) 'Ի փոյթոյ խոտեալ էին յօրինաց : Անկեալն 'ի ձեռս աւազակաց առ Երի-նել յեղէմէ յերկրով. (ղուկ. Ժ. 30.) և եղեւ գոլով անթու օրինաց և նծգխուճե. (եսայ. Ա. 3.) վասն այն խելանել յեղէմէ՝ նշանակէ թէ խոտեալ էր նա յօրինացն. յորմէ օտարացեալ, գնայր 'ի ճանապարհ մեղաց, որ երկրաւան նշանակի:

(5) Քայլ ողորմութբ : 2 օրէն. ողորմութբ:

(6) Տկար օրինին : Հին օրինացն՝ որ տկար էր առ արդարացուցանել, և զօրաւոր առ մահուան պաշտօն, 'ի սպանանել զյանցաւորս նզովիւք և քարկոծմամբ. (Բ. կոր. Գ. 7. 9:) Արտաքսեալ մահուար. մի օրէն. մահներ. այսինքն հին օրէնն:

(7) Ո՛չ ... ղեւտացին : Եւ ոչ իբրև զղեւտացւոյն նմանեալ կարապետն յովհաննէս, (որ և էր խսկ 'ի ցեղէն ղեւեայ,) որ միջնորդ գոլով հին և նոր օրինաց՝ անկատար գործով տայր միայն զմկրտութիւն ապաշխարութե առանց հոգւոյ շնորհաց : Այդ՝ ոչ իբրև զայս ղեւտացի հայեցար 'ի վտանգ վիրաւորելոյն. զի մի՛ սատակչական օրինակաւ արմատահատ տապարին՝ զոր յովհաննէս սպառնայր, (մատ. Գ. 10.) ըմահուան պաշտօն, զատակութիւն հին օրինաց 'ի քեզ տեսանելով վիրաւորեալն, անյուսութբ մեռցի յառաջ քան ... առաքելոյն, նախ քան զփորձ կամ զկիրս վերահաս պատուհասին: այլ օրէն. ես հին եմ. առաջնորդեցն. որ և 'ի մէջ յովհաննու առնու զայս, իբրև թէ առանց փորձելոյ՝ զմեղուցեալն տապարաւ հատանել ասէր. բայց անյարմար է: Այլ սամարացւոյն նմանեցար, որ էր 'ի հեթանոսաց պահպան անուան սամարեփանեայց. սամարիա՝ պահապան թարգմանի. և 'ի տեղւոյն սամարացի կոչեցան բնակիչքն՝ որք յասորեստանեաց եկին անդր, և ընկալան զօրէնս հրէից, և

պաշտեցին մինչև 'ի քո. (Գ. Թագ. ԺԷ, 24:) ՆՈՅՆ, այսինքն սամարացւոցն հաղորդեցար՝ զգեցեալ զմեր մարմինս, և զաստուածութիւն ամենին ծանուցեր առ ՕՏԱՐԱԶԳԻՆ, առ ազգս մարդկան՝ որք 'ի քէն օտար էին: Կին, զայն ամենին ասէ՝ զոր ես կնոջն սամարացւոյ. (Յովհ. Դ. 23:) Եւ ԾԱԾԿԱԲԵՐԴ, ծածկեալն քո ներգործութիւն անապականն, որ զանեղծութիւն կամ զառողջութիւն տայ, ձեռն կարկառեալ յարուցեր զԱդամ բովանդակ բնութեամբ. որում օրինակ էր անկեալն 'ի ձեռս աւազակաց: Տարբերութիւն կայ յօրինակսն. զի մի օրին. գնէ. ոչ ղևտական կարապետայն անկատար գործ: ԱՅԼ օրին.* Եւ ոչ ղևտական կարապետաւն անկատար գործ... ուռոյն 'ի հոգւոյ առաքելականն հանդիպացեալ, զվիրաւորեալոյն տեսեալ զվանդ... յառաջ քան զփոքր առակացն: || Միւս օրինակն և ս նախ գրէ ԱՒԱԶԱԿԱՅՆ. ապա արարեալ ԱՒԱԶԱԿԱՅՆ. յետոյ այլով դիմաւ, ԱՒԱԶԱԿԱՅԵՆ: Ուր զաւելն՝ յառաջ քան զփոքր աւազակացն, մարթ է սպրդել, նախ քան թէ առակ հատող տապարին արդեամբք կատարէր. և կազմին խմառքն. Եւ ո՛չ ղևտականն կարապետոյն յոգնանու, կամ ո՛չ ղևտացի կարապետաւն անկատար գործ ցուցեր, զվանդն ևեթ սպառնալով, և մխրութիւն տալով առանց հոգւոյ, այլ հեթանոսաց սամարացի անուամբ սարեսանեալց կցորդեցար մարմնոյ զգեցմամբ: ուր ՆՈՅՆ, է կրկնումն ԾՈՐԽԱՓԱԿԵԱՅՆ:

(8) ԶՈՒՂՈՒԱՆԱՅԵԱՆ ԺԱՄԱԳԱՄ: Զեղկելի բնութիւնս՝ որ միանգամ յագամ թշուառացաւ, կրկնապատիկ զուարթացուցեր. ըստ այնմ* Եւ ո՛չ որպէս յանցանքն, նոյնպէս և շնորհքն: || (Հռովմ. Ե. 15:) Կամ, զագամ զոր նախ 'ի դրախտին՝ վերստին յեկեղեցւոջ զուարթացուցեր:

(9) ԵՐՋԱՆԿԱՅՆ ԱՂԱՆՑ: Հրեշտակաց, կամ առաքելոց, զորս 'ի գովեստ նոցա կոչէ * Ծածապարդ աղինք գնդից: ||

(10) ՀԱՆԳԱՐԳՐԵԱՅ ԳՐԱԳԱՆ: Դարմանօք կամ առաջնորդութեամբ քաղցր և թեթև օրինաց, ԱՆՂՈՒԱԵԼԻ, անվիշտ կամ առանց տառապանաց պահեցեր: Հին ըծ. գրատ խմանց զորուանական մարմնն, որ Է խաչին երարձ յուս իւր զմեղուցեալ բնութիւնս:

(11) ԵՐԿԱՓԱՆՈՒԹԻՒՐԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՅ: Դարմանատրեցեր տուչութե երկաքանչիւր կենդանի կտակացն՝ առաջնոյն կամ հնոյն, և երկրորդին կամ նորոյն, որոց օրինակ էին երկու դահեկանքն տուեալք 'ի սամարացւոյն: Եւ որպէս երբեմն ընդ ՄՈՎՍԵՍԻ, այսինքն ընդ ձեռամբ մովսէսի իբրև արծուի 'ի վերայ թևոց առեալ զնէլ, (ըստ Է օրին. ԼԲ. 11.) 'ի հանգիստ երկրին բարութեան առաջնորդեցեր. և զկերակուր բանի օրինացն ջամբել նմա՝ հրամայեցեր ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱՅՆ, առաջնորդաց ուսուցչաց:

(12) ՈՐ ՂԲՆԱՆ: Դու որ զնմ գործս ծայրագոյն բարութե բովանդակապէս հրաշալի օրինակաւ կատարեցեր առ կորուսեալ բնութիւնս մեր. մինչ յիրաւի ասել, զի՞նչ էինչ առնել էր, և ոչ արարի: և ՂՈՂՈՎԻՆ, զցրուեալն սատանայի զգողացեալ դանձն, որ են հոգիք մարդկան, յափշտակեալ 'ի նմանէ առ քեզ դարձուցեր, կեցո և զիս ևն:

Սերտին յաւելուած ներքին հեծութ՝ նորին հոգւոյ, առ նոյն ողբոց մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. ԽԱ.

Ա. Իսկ [1] դարձեալ աստուստ վերստին առ նոյն հեծութի սրտիս վտանգի ինձէն մատուցեալ, սովին նուագաւ 'ի նոյն ոճ բանի՝ զամենապարգեւդ արգահատեցից, տագնապեալ ոգւոյս վտանգիւ խապառ. [2] իբր մեռեալ կենդանւոյ անմահիդ մաղթեմ Այ, խոստովանեալ [3] ընդ փառացդ քո՝ զիմս անարգութի, և առ չարեօքս իմովք՝ զքոյդ բարութիւն. որովք յաղթեալ գտայ՝ քան թէ բժշկեալ, և ամաչեցեալ՝ քան թէ համարձակեալ, ուխտակորոյս աւանդամուաց։

Բ. Իսկ [4] կրկին աւակն որ առ իս՝ որ ոչխարին տրուպն տարագուցիւ, որ յետին [5] անզգայութեանն եր մատնեցեալ՝ մոլորեալ, և 'ի լերինն՝ ուր ոչ է այցելութի, [6] ընդ գազանականացն դիւաց՝ և կուոցն վայրենութե թափառեալ, ոչ մերձաւոր գոլ սակաւ մի հօտին. ոչ բան ունէի, որով և զցաւոցն աղէտ պատմէի. ոչ ձեռն ձգողական, որ համերցն է ազգուղական։ Իսկ դու միայն գովեալդ [7] յսկզբանցն յաւիտեանից և յարգի ծնելոցս, գտեալ ըստ մաղթանաց գուշման երգողին՝ զիս զմեղուցեալս յաննշոյլն մոլորութե, խնամողորէն տեսչութբ կամաց՝ հովիւ կոչեցար. և ոչ միայն հոգացար, այլ և խնդրեցեր. և ոչ գտեր միայն՝ հրաշագործ, այլ անձառելիդ բարերարութբ սիրոյ՝ 'ի կենդանարարդ քո յուս բարձեր, և ընդ երկնային զօրուն դասեցեր՝ 'ի հայրենիդ քո ժառանգութիւն։ Իսկ արդ՝ դու հզօր կենարար օրհնեալ այցելու գթածդ յողորմութե, եթէ [8] զնոսա ընկալար զապաքանեալսն աղերսանաց, որ մինն 'ի միջոց մահու սահմանի եր չարչարեցեալ, իսկ միւսն ըստ անբանիցն անզգայութե՝ վտարանդի բացամերժութբ յանընական վայրի վարանեալ, 'ի բառաչ ձայնի բարբառոյ, որ անկերպաւոր աննշանական, Ածային բարեխնամութբդ անտեսեցեր զտխեղերա-

հրաշն խնամողուն առ կորուսելոյն մեծ թշուառութեն, յայտնեաց վերստին և արդ գթութեցդ խորք և բարերարութեցդ հոսանք՝ առ անօրինեալս առաւելութե[9] վերագրելոցդ օրինակութե ։ Ո՛ր բազմօրինակ մահու պարտականս,[10] առ որ 'ի բարութեց խառնից քաղցրութեց յատուկ՝ համ չար․ առ անդամս մարմնոյ՝ արժանաւորս հատման․ առ համաձարակ ամենաբոլոր ախտացեալ հոգիս վիրաւոր․ առ հաւասարեալս անզգայութեց անասնոց․ առ օտարացեալս յընտանութէ իմաստնոց․ առ աննմանս հանգունակից բանաւորութեց ։ Որ եթէ տարացոյց գոյր, ես առէի․ թէ նմանակից գոյր իմ, պատմէի․ թէ հանգունակից գոյր, ես ճառէի․ թէ հաւասար գոյր, ես գրէի․ թէ զուգագործ գոյր, ցուցանէի․ թէ օրինակ գոյր, ես ազդէի․ թէ[11] յանցեալսն, հայթայթէի․ թէ 'ի ներկայումս աստ, ես յուսայի ։ Բայց քանզի անցեալ է ըստ օրինակ, և հրաժարեալ[12] ը̃ նմանութե, զոր միայն քո՛ է քաւել, բժշկել և[13] կենագործել՝ կենդանարար համայն մեռելոց, նորոգութեդ տիեզերաց ։

Գ․ Ոչ եթէ միայն սրտի տեսութե երջանկին ղաւթայ՝ անօրէնութի չարեաց բարձրացեալ առի քան զգլուխ, և ըստ ծանրութեց բեռանց դժուարակրելոց՝ յանցմունք մեղաց․ իսկ որ առ իս կրին սխալմունք[14] գերազանցեն քան զհեղեղին ջրակուտակ տիեզերասոյզ ամենապատ ծովուն յորդութի, և գլխոց լերանց վերադրէ ։ Ո՞վ չնչեսցէ օդ քո քաղցրութե իբր առ նոյին, և որ զլերինս հալէ զօրութի, ցամաքեցուցանել զչիղջս ջրակոյտս բազմակոհակս՝ և երկրակործան իմոցս պարտեաց և լեռնակարկառ բարձրութե մեղացս ամբարձելոց ։ Ի՛ւ[15] համառօտեալ զբան քո հզօր՝ ամենակար հնարաւորութե հակիրճ հատուցմամբ, որպէս ահա ելս քաւութե, ըստ մարգարէին, առ երկարաձիգս անօրէնութիւն․ և ներելով իմս յամառութե ո՛վ երկայնամիտ ողորմած օրհնեալ, թողցես միանգամայն, բարեգործեացես իսկապէս, հատցես բոլորովին զանվճարելի պարտուցս զարժանահատոյց տոկոսեացս տոյժս տարժանակիրս ։ Նա զի՝ և չի՛ք իսկ առ քեզ ցասումն սրտի,

և կամ բորբոքումն բարկութե՛, որպէս [16] ո՛չ կրին նենգութի՛ւք, և կամ նշմարանք մթութեան. քանզի կեանք են 'ի կամաց քոց և լոյս. և ոչ արարեր զմահ և ո՛չ խնդաս ընդ կորուստ մարդոյ ըստ դաւթի և սողոմոնի:

Դ. Եթէ [17] մարդկան կարգեցեր զայս կէտ սահմանի մեծի պայմանի՝ 'ի բարեվիճակդ քո կանոնաց՝ ո՛չ փոխատրել անդրէն չարի չար, այլ եօթանասնիցս եօթն թողուլ անդուստ 'ի յաւուր զիւրաքանչիւր մեղանաց զպարտս. և այդ բան առ մեզ, որ միշտ 'ի բնութե ունիմք [18] բնաւորաբար ուղերձեալ զբիծս չարեաց՝ անհամար բիւրուց նորոգ յայտնելոց, որք օրինաւորին երևին յանդաստան սահմանի ամենաբոյս փշածին բնութեաս, ըստ անսուտ քո վկայութե, որ թէ միտք մարդոյ 'ի խնամս չարի են արձանացեալ 'ի մանկութէ: Զի որ զկատարեալ մաքրութի՛ն ունէր աւետարանիչն կենացդ բանի՝ յովհաննէս, և զինքն ը՛ հասարակաց բնութե լծակցեալ, հաստատեաց զճշմարտութի քո՝ առ իմս ստուե՛ յոյժ արդարացեալ. թէ ասեմք ասէ, մեղս ինչ մեք չունել, սուտ առնեմք զնա: Իսկ արդ՝ [19] կատարեալ է բան քո խնկեալ, և 'ի գլուխ ելեալ անպակաս 'ի ստուգութէ՝ առ իմս մոլորութի և դժնդակ անխրատութիւն: Վասն որոյ խնայեա՛ յիս ողորմութեամբ, քաղցրութե ճաշակմց աղբիւր, միայն օրհնեալդ յամենայն յաւիտենից. ամէն:

---

(1) Դարձեալ [illegible]: Օրինակք չորք խորհ բայ առնուն զդարձեալն, և զայն նախադրեալ յարեն 'ի յաջորդն, այսինքն դառնալով վերստին առ նոյն հեծութիւն, մատուցեալ ամէն նուագս 'ի նոյն ոճ բանի, ևն:

(2) [illegible]: Մի օրինակ ընթեռնու, [illegible] կենդանւոյն՝ անմահից մաղթեմ. ըստ որում ասի, կենդանւոյն մեռեալ է. (ա. տիմ. ե. 6:) և առանց նուի ես մարթ է խմնալ, նման մեռեալ կենդանւոյ՝ քեզ անմահից մաղթեմ:

(3) Խոստովանեալ: մի օրին. խոստովանել: Խոստովանելով վասն փառաց քոց զիմ անարգութիւնս. կամ, համեմատութեամբ, հանդէպ փառաց քոց: Եւ [illegible]. համեմատութեամբ չար գործոց իմոց՝ զբարութիւն քո: [illegible], այսինքն չարեօքս՝ 'ի խորհել իմում յաղթեալ գտայ 'ի պարտաւորութիւն, քան թէ բժշկեցայ 'ի նոցանէ: Կամ, բարութեամբք քո յաղթեալ պարտաւորեցայ, քան թէ բժշկեցայ նոքօք: 'Ի խոստովանելն զփառս քո և զմեծութիւն՝ խոստովանիմ զանարգութիւնս իմ, հանդէպ չարեաց իմ դնեմ զքո բա-

րութիւնդ • առաւել մեծամեծ փառօք քո, և բարութիւնդ գերահրաշա-կի յորժամ զանարգութիւնս յիշատակեմ և զչարիս • որով փոխանակ համարձակելոյ 'ի քումդ բարութեանդ, ամաչեցի յաւէտ, ամօթերես գտայ, գոլով ուխտազանց և կորուսիչ ինձ աւանդեալ պարգևացդ :

(4) Կրկին առակն : Յետ առակի անկելոյն 'ի ձեռս աւազակաց՝ երկ-րորդ առակն՝ որ է մոլորեալ ոչխարին : փրկչին փարախին, անաւրգ օ-
րինակաւն :

(5) Անդրանկայոյն էր նախանձեցեալ : Այլ օրին • նախանձեալ 'ի կրսերն որդ • 2 •
օրին • 'ի կրսերն :

(6) Ընդ գազանաջանացն : Ընդ գազանաբարոյ դիւացն 'ի գործ մեղաց, և 'ի վայրենի կրօնս կատարածուն դեգերեալ, հեռի գոլով 'ի փրկչին հօտէն ածապաշտից : ոչ բան ունէի խոստովանութեան՝ առ 'ի պատմել զաղէտ մեղացն • ոչ ձեռն ձգողական, բարի գործոց, որ համբերն է աղբ-ղական • 2 օրին • աղբողական • գործի աղցելոյ կամ խօսելոյ : Համր էի առ 'ի խոստովանութիւն, և ոչ ունէի զձեռն բնական գործս բարիս, որ տայ նշան և յոյս՝ երբեմն դառնալոյ և խոստովանելոյ • որպէս առաց հայրն պիղծն վասն պոռնիկ կնոջն, որ առնէր գործս ողորմութեան :

( վարք հարց • եր • 280 : )

(7) Յովհաննու յանխնանց : Գոլեալ դու 'ի սկզբանէ ժամանակաց, կամ յառաջին աղգաց և յայժմու ծնելոցս, գտանելով զիս զանկեալս 'ի խաւարային Ճանապարհ մեղաց, նման մոլորեալ ոչխարին, ըստ բա-րեխնամ անսչութեանդ հովիւ կոչեցար, յանձն առեր կոչիլ հովիւ, կա-տարելով զհայցուած սաղմ. ճիը • մոլորեցայ ես որպէս ոչխար կորու-սեալ, խնդրեա զիս : Ոչ լոկ հոգացար փրկութեան իմում խնամելով ևեթ, այլև անձամբ խնդրեցեր, որոնեցեր, ընթացար յամ տեղիս առ 'ի գտանել : Եւ ոչ միայն բազում վշտօք գտէր յաննկարջն նախանձելէ, ըստ ե-ղեկիելի • լդ • 11 • 12 • 'ի միգի խնդրելով, այլև անձամբ գթովք սի-րոյ բարձեր յուս քո ընդ խաչին, և դասակից արարեալ երկնաւոր հօ-տին, ժառանգ հօր քո կարգեցեր • և այնպէս որ նախ մոլորեալ ոչխարին էի, եղէ որդի սիրելի : Իսկ էր կորուսան, դու զայն քեզ համարեցար • ինձ վիճակեաց գիւտն՝ հայր առանալով զանաահմանն Այծ • իսկ դու իբր գիւտի հանդիպեալ զուարճացար՝ եղբայր քեզ առանալով և ժառանգա-կից : Ով անճառելի բարերարութիւն, արդարև նորահրաշ, վայելուչ
քեզ միայն՝ որ հրաշագործ ես :

(8) Զնոյն ընկալեր, այսինքն զանկեալն 'ի ձեռս աւազակաց, և զոչ-խարն մոլորեալ • զապաբանեալն աղերսանօք • զպապանձեալն առ 'ի ա-ղերսել : որոց մինն 'ի միջոյ նահատ • մի օրին • 'ի միջոյ • այսինքն 'ի մէջ առհմանի մահու : այլ • 'ի միջոյ : Իսկ միւսն ոչխարն՝ տարագնաց հեռա-ցեալ յանբնական վայրի • մի օրին • յանբնականն, յանբնակ լերին տառա-նեալ : մի օրին • յանբնականն • 2 օր • յանբնաւն : Այսպէս մարդն օտարա-ցեալ 'ի շնորհաց և 'ի դրախտէն, յայս աշխարհ անխծից՝ և 'ի Ճանապարհ մեղաց վարանեալ, որ ուղիղ բնութեանն և նախնի վիճակին շնորհաց ընդդէմ էր : Ընդ 'ի մեղսն իբրև զոչխար բառաչելով անմշան ձայնիւ զաղէտսն ցուցանէր • զի խիղճ մտացն նաև 'ի հեթանոսս վկայէր զանկար-գութիւն մեղացն, սակայն առանց գիտելոյ՝ թէ յումմէ է այն ձայն,
և զիարդ լինիցի արդարանալ :

(9) Վերադարձեալ օրինականն : Այլ յետ ունիլն մեր օրինակս երեք և հին ըծ • յարմարագոյն ես • զի կամի առել, ըստ օրինակի անկելոյն 'ի ձեռս
աւազակաց, և մոլորեալ ոչխարին :

(10) Այն որ 'ի բարձրեանց : Երևեցիր գթութ առ իս առ չար համ, որ 'ի խառնութենէ ածային բարութեանցն մնամ յափշտ, այսինքն զա-

տեալ, որոշեալ, զուրկ և անման 'ի քաղցր նիւթոց ։ Կամ, առ ի՞ս որ զուտ չար կամ դառն համ եմ ։ Մասին գթութեամբ առ աննման հանգամանաց բանաւորութեանց, ի բանաւորաց, որ բնութբ և կերպարանօք նմանակից եմ բանաւորաց, այլ գործովք անբանից հաւասարիմ ։

(11) Թէ յանցեալն ։ Ա յլ և այլ բառիւք զմի միտս յայտ առնէ, յետ առելոյն թէ աննման եմ բնութիւնակից բանաւոր մարդոց ։ Եթէ արդարև գոյր ոք ինձ օրինակ, կամ հաւասար, կամ նմանագործ 'ի մեղանչելն, ոչ լուէի, առանց ամաչելոյ ցուցանել ։ Եթէ յանցեալսն, յառաջին մարդիկն, կամ որ յառաջ քան զիս եղեն, գտանէի զոք ինձ նման յանցաւոր, հայեաթէ, մխիթարեալ լինէի՝ թէ չեմ ես միայնակ ։ Թէ 'ի ներկայումս, եթէ յայսմ ժամանակի տեսանէի զոք նման ինձ մեղուցեալ և ապաշխարեալ, ես յոյսայի այնպէս լինել ։ Բայց քանզի խմ 'ի վեր է քան զօրինակ, քո միայն է ան ։

(12) Ըստ նմանութեան ։ 3. օրին. ըստ նմանութեան ։

(13) Կենագործել ։ 3. օրին. հրաշագործել ։

(14) Գեղաւանդ ։ 3. օրին. գեղաւանդ է ։ Իմ սխալուՙմս առաւելու քան զյորդութիւն չրհեղեղին. որ ծածկեալ ծածկեաց զբովանդակ երեսս երկրի, և զնմ զգամաքային ապականեաց ։ և գեղոյ միրանց վերոպրէ. վերացեալ անցանէ բարձրանց քան զգլուխս լերանց. կամ որպէս թէ 'ի վերայ գլխոց լերանց առեալ ընկենու՝ իբրև զտապան Նոյի ։ Բայց առկայն լուսոյ որպէս առ Նոյիւն, չհեսցէ հոգւոյ ոչ սրամտութեան, այլ ապաշխարութեան քո. այս է՝ չհեսցէ, աղցեսցէ այն ողորմութիւն, որ զԼերինս հարթէ, կործանէ, ըստ ասացելումն առ եղիա մարգարէ. (Գ. թագ. ԺԹ. 11.) որ և ցամաքեցուսցէ զկոյտս պղտորաց և մեղաց իմոց ։

(15) Համառօտեալ զհան զո ։ 'ի գործ դնելով զհամառօտ բան քո՝ որ հզօրն է իբրև հուրն ուժգին, և ամենակար 'ի հնարս քաւութե, կարճ վճարումն ընդունելով քաւեսցես, ի մարգարէին որով ասէիր, ասա դու նախ զանօրէնութիւնս քո զի արդարասցիս. (եսայ. խԳ. 26.) թէպէտ իմ անօրէնութիւնքս երկայն են՝ ըստ նոյն մարգարէի. (Ե. 18.) բայց այսու կարճ բանիւ ցուցեր ես կամ հնարս քաւութեան. և միանգամայն համառօտ բանիւդ՝ թէ թողեալ լիցին քեզ մեղք քո, հատցես զպարտիս իմ ան ։

(16) Ու ինքն ներգութեան ։ Դիւրին է քեզ մի երկայնամիտ արագ թողուլ զյանցանս իմ. զի ոչ խափանեն զքեզ՝ որպէս 'ի մեզ կիրք բարկութեան. ոչ գոյ 'ի քեզ ոխս ունել 'ի սրտի. ոչ ներմարամբ, մնացուած պղտորութեան մտաց. այլ ընդհակառակն՝ կեանք են 'ի կամաց քոց ըստ ասելոյ դաւթի. (սաղմ. ԻԹ. 6.) և ընդ կորուստ մարդոյ ոչ խնդաս ըստ ասելոյ սողոմոնի. (իմաստ. Ա. 13 ։) Յանուն սողոմոնի յիշատակէ զգիրն իմաստութեան՝ ըստ սովորական յորջորջմանն ։

(17) Երէ մարդկան ։ Եթէ յաւիտենականն կանոնաքո զայս բան սահմանի կարգեցեր մեզ, մի հատուցանել չար փոխանակ չարի, այլ ներել իւրաքանչիւր եղբօր եօթանասնիցս եօթն, և այսպիսի պատուէր առ մեզ ասացեալ՝ ոչք 'ի բնէ ախտաւորք եմք, որչափ ևս դու ներեսցես ան ։

Ա յս հետևումն կայ յասելն, զան որոյ խնայեա ։

(18) Բնաւորական ռուղերձեալ ։ Բնական ախտաւորութբ՝ որ 'ի մեղացն ադամայ, ունիմք մատուցեալ կամ յառաջբերեալ 'ի մեզ զպարտս մեղաց կամ չար յօժարութեց, որք օրինաւորին երևին, ոչք ըստ օրինաց մարմնոյ ծնանին և երևին 'ի փչարեր բնութեանս ։ կամ ոչք ի իւրաքանչիւր հասակի և վիճակի իբրև օրինօք 'ի վեր երևին, որպէս յանդստանի ըստ զանազան եղանակաց և օգոյ՝ այլ և այլ են բոյսք ։ Ա յսպէս այլ ախտք

են 'ի մանկութեան, այլ՝ 'ի պատանութեան, այլ՝ յերիտասարդութե՛, կամ 'ի ծերութեան ։ Այնպէս զանազանութիւն է ախտից ըստ այլ և այլ վիճակի և դիպուածոյ. այլով ախտանամք 'ի հարստութե՛, և այլով յաղքատութեան, այլով աշխարհականն, և այլով եկեղեցականն, այլով այրք, և այլով կանայք, այլով իմաստունք, այլով տգէտք, ըստ այսմ և յայլս ։ Հին լուծ. զբաւն օրէնաւորէն, մեկնէ իբրև անուն, այսինքն ունօղ զօրէնս, որովք երևին 'ի մեզ ախտք բնութեան ըստ առաջելոյն հռովմայ. է. 7. 8. բայց իբր բայ մեկնել՝ առաւել ընտրելի է ։

(19) Կոփարէաւէ բան ես ։ Այսինքն բանն որով ասացեր, մինչ մարդոյ 'ի խնամս չարին հատուածեալ. և 'ի գլուխ ելեալ երևի մինչ փորձով առանց սխալելոյ եւեթ, տու ես ծնողութեն, այսինքն առ 'ի ցոյց իմոյ մոլորութեան և խիստ անխրատութեանս. կամ, այն բան քո անվրէպ կատարեցաւ յիմում մոլորութեան ։ Վասն որոյ այսչափ դիւրասահ և չարասէր գոլով ապականեալ բնութեամբս, առաւել ևս կարօտ է խնայելոյ, և այլն ։

---

Սէրոտին յաւելուած երկին հեծութե՛ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ԺԶ.

Ա. Եւ արդ՝ դու միայն Ած երկնաւոր՝ բարձրեալ, բարեգործ. քո է զօրութի, քո ներողութի, քո բժշկութի, քո առատութի, քո են պարգևք, քո միայնոյ են [1] ձիրք ձրի, քո քաւութի, քո պաշտպանութի, քո հնարք անխափանալիք, քո արուեստք անգտանելիք, քո չափք անչափելիք. դու սկիզբն և դու կատարած ։ Բ. Քանզի ոչ երբէք ստուերացուցանէ զլոյս ողորմութե՛ քո՝ խաւար սրտմտութե՛. վասն զի ոչ ես գրաւեալ ընդ մասամբք ախտից՝ 'ի վերդ քան զբան ։ [2] Պատկեր անպարագիր՝ անդր քան զորքանութի կշռութե՛. անչափ լայնութի փառաց. անտարրափակ ընդարձակութի՝ հաստոյ զօրութե՛. անամփոփելի առաւելութի բացարձակութե՛. անտկարանալի բարերարութիւն գթութե՛ ։ Գ. Դու դարձուցանես՝ ըստ մարգարէին, յայգ՝ զստուերս մահու. որ իջեր կամաւ 'ի տարտարոսն ներքին [3] արգելականացն բանտի, յորում և մաղթանացն դուռն էր աղխեալ. և գերեալ անտի զմթերեյն կապուտ՝ վտարանդելոցն հոգւոց սուսերբ հրամանի յաղթական բանիդ՝ զկապ սատակման մահուն խզեցեր, և զմեղացն կար-

ծիս ցրուեցեր : Դարձ առ իս՝ որ[4] զընդամ զընդանաւ վհիս՝ տղմասից գբոյս՝ յերկաթս մեղաց, վիճառորեալ խոցմամբ սլաքաց՝ բանսարկուին նետից :

ե. Այլ դու յամենայնի տէրդ բարերար, լոյսդ 'ի մէջ խաւարի, օրհնութեամբ գանձ, ողորմած, գթած, մարդասէր, կարօղ, զօրաւոր, անպատում, անքննին, անճառ. [5] բաւական՝ ես սէրն յակոբայ. անհնարինդ ամենից՝ դիւրապատրաստ հնարաւորուն. հուր ծախիչ զխռխիւս մեղաց. [6] Ճաճանչ կիզանող ընդհանրական թափանցանցութե խորհրդոյ մեծի. [7] յիշեա զիս յողորմութե քո՝ օրհնեալ, և մի յիրաւունս քո. 'ի ներողութե քո, և մի 'ի հատուցման. յերկայնմտութե, քան 'ի հաւաստութե : Ոչ թէ կշռեսցես զմեղանաց իմոց ծանրութի, ընդ քաղցրութե քո՝ և մի ընդ արդարութե. զի առ սակ նախնումն՝ յոյժ է նուազեալ, իսկ 'ի ներհակ վերջնոյս՝ յաւէտ ծանրակիր :

զ. Արդ՝ մատիր առ իս բարութի, որպէս յունականն բժշկուհի՝ հակառակ քո համբարձելոյն. բարձ 'ի մեղուցելոյս զհողմ մահու խռովութեն, զի հանգիցէ յիս ամենակալ հոգիդ խաղաղութեան : Եւ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս յաւիտենից. ամէն :

---

(1) Զէրթ յէր : մի օրին . յէրթ յէրեօ :

(2) Պատկեր անպարագիծ : Պատկեր՝ որ գծովք ոչ ամփոփի, և պատաքոյ մասս կամ ուրվանութե կերպութե, զի քան զամ համեմատութե ձևոյ և գծի : Զայս, և զհեռանկարն առ որդին ասէ, բայց ըստ հասարակ բանի ածութե, և ոչ ես որում անձն եղեալ. ուստի հօր և հոգւոյ ես պատշաճին : Անպարագիծ ընդարձակութի, ընդարձակութիւն աստուծոյ կամ առանձին զօրութե, որ ոչ փակի 'ի սահմանի տարերացս. կամ ոչ կապի 'ի բնական ազդեցութիւն տարերացս : Անփոփոխելի անսահմանելի բնագրականութե. առանձնութիւն հեռաւորութեան, որ տեղեաւ կամ չափու ոչ ամփոփի :

(3) Արգելականաց բանից : Յետ փրկական քո մահուան իջեր դժոխս, իշխանական կամօքդ՝ և ոչ 'ի բռնութէ կամ ըստ պարտեաց 'ի ներքին տարտարոսն արդարոցն՝ որք ըստ պարտեացն ադամայ արգելեալ կային 'ի դժոխս. յորում և դուռն մաղթանաց փակեալ էր, զի ոչ զօրէր աղաչանք. զի ոչ ողորմութե էր տեղի. ուստի և ոչ անարդարոցն լինէր աղաւթի. զի եթէ լոկ մաղթանաց չկայր տեղի, զնարդ անապաշաւ մեղաց և դատապարտութե լինէր թողութիւն : Եւ փերեալ անտի, զյափշտակեալ հոգիսն՝ զորս վասն յանցանացն ադամայ իբրև իւր կալուած մթե

րեալ ունէր սատանայ ՟Է՟ խրով իշխանութ՟, յաղթող բանիւ իբրեւ սրով խզեցեր զարգելս մահուն պարտաւորութեան. ( Լուս զպքար. Թ. 11.) * Արձակեցեր զկապեալս քո յանջրդի գբոյ || : Եւ զՆեղոյն կործես ջրոցեզեր. Ի փարատեցեր յարգարոյն զտագնապս եւ զարհաւիրս՝ որ 'ի մեղաց: Կամ, արձակելով զկապեալսն 'ի սատանայէ, բարձեր զկարծիս հրէից՝ որք համարէին զքեզ չարագործ եւ մահապարտ, այլեւ զկարծիս գիւացն՝ որք կարծէին զքեզ իբրեւ զայլ մարդիկ մեռեալ 'ի պատիժ մեղաց :

(4) Զընդդամ ընդդանաս: Տառապիմ, չարչարիմ 'ի զընդդանի վէրս, ... անկ գետոյս, Թանձր ամպով լցեալ գետոյս, որով խմանին գարշութիւնք մե– ղաց: Նման երեւմիոյ ընկեցելոյ 'ի գուբ տղմոյ, զոր չարախօսք նորա իբրեւ նետովք խոցոտէին:

(5) Բառապան ըստ ... յանդգնայ: Կարօղ յամի՝ ըստ որում ասացաւ առ յակոբ նահապետ. ( Ծննդոց. ԼԵ. 11:) մի օրին. ... :

(6) Ծածանւ կենդանոց: Արեցող իբրեւ զՃառագայթս արեգական, ընդ– հանրական թափանցանցութբ. Ի Ճաճանչ առ հասարակ յամ ինչ Թափան– ցող: Խորհրդոյ ... . որ ունի զմեծ խորհուրդ, կամ զաղմնածածուկ. զի լոյս ածայնին մտացն անցանէ մինչեւ ցորոշումն շնչոյ եւ ոգւոյ, եւ քննիչ է մտաց եւ խորհրդոց սրտից. ( Եբրայ. Դ. 12.) եւ այսու Թա– փանցութբ զամենս կիզանէ մաքրելով, զայլս՝ սպառելով, ոմանց բարի կարծեցեալ խորհուրդքն եւ խիղճ՝ ցուցանին լինել չար. յայլս աղէ– մուտք զարմանալիք ներգործին, եւն: Թուի ակնարկել զբան իմաստ. Է. 24. 25. * Ընդմտանէ ընդ ամ վասն յստակութեան. քանզի Ճաճանչ է այ զօրութեանն եւն ||:

(7) Յետքամ ... ողորմութբ քով, եւ մի խրատամբք արդա– րութեան. երկայնմտութբ, ... 'ի ..., ... անաչառ քննութբ: Զմեզս իմ կշռեա ընդ քաղցրութեան քո, եւ մի ընդ արդա– րութեան. ... 2 օրին. ..., առ չափ ողորմութեան մեղք իմ թեթեւանան. ... 'ի ..., համեմատ արդարութեան ծանրանան:

---

Սերովբէին յառեղեալ երէցն հեծութբ՝ նորէն հոգւոյն, առ նոյն աղերս հաղորդութեան բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ. ԺԼ.

ա. Արդ՝ աղաչեմ զխնամակալդ վտանգաւորաց տաժանելեաց կրից թաղծութեանց հոգւոց վշտացելոց: [1] Մի յաւելուր հեծութեանս ցաւ. մի խոցեր զվիրաւորեալս. մի դատապարտեր զպատժեալս. մի տանջեր զչարչարեալս. մի գաներ զհարուածեալս. մի գլորեր զանկեալս. մի կործաներ զգայթագղեալս. մի մերժեր զհեռացեալս. մի տարագրեր զհալածեալս. մի ամաչեցուցաներ զպատկառեալս. մի կշտամբեր [2] զհարթուցեալս. մի խորտակեր զբեկեալս.

մի՛ խաւարեցուցանէր զամբոխեալս · մի՛ ալէկոծէր 3
զըքացեալս · մի՛ սասանեցուցանէր զդղրդեալս · մի՛
շփոթէր զմրրկեալս · 4 մի՛ կեղեքէր զգիշատեալս · մի՛
ջաղջախէր զբեկեալս · 5 մի՛ գոչէր զմորմոքեալս · մի՛
կուրացուցանէր զխաւարեալս · մի՛ զարհուրեցուցա-
նէր զապշեալս · մի՛ խորովէր զխարշատեալս · մի՛ մա-
հացուցանէր զհիւանդս · մի՛ բեռանց ծանրութե՟ մատ-
նէր զտկարս ։ Մի՛ անուր յաւելուր կարկամեալ թի-
կանցս · մի՛ կրկնակի ողբումն՝ դառն հեծութե՟ս · մի՛
ուժգնապէս վարեսցիս առ հողս · մի՛ սաստկապէս՝
առ մոխիրս · մի՛ անաչառապէս՝ առ ստեղծուածս ·
մի՛ ահարկութեամբ առ փոշիս ։ Մի՛ ընդ հարկանիր
խստութ՟բ մեծդ՝ ընդ փոքուս · լոյսդ՝ ընդ ստորնա-
կանիս · բնութեամբ բարիդ՝ 6 ընդ ՚ի բնէ չարիս · ող-
կոյզդ օրհնութ՟ե ընդ պտղոյս անիծից · քաղցրութ՟իդ
խնկապէս՝ ընդ համայն դառնութ՟ես · փառաւորեալդ
անփոփոխ՝ ընդ ամենեւին անարգիս · կենացդ նշխար՝
ընդ կաւոյս զանգուածոյ · տէրդ տերանց՝ ընդ տղմիս
երկրայնոյ · անմուաղ լիութ՟իդ՝ ընդ չքաւոր ստրկիս ·
անկապուտ ճոխութ՟իդ՝ ընդ անպատսպար տառա-
պելոյս · անկարօտ բարութ՟իդ՝ ընդ ամենաթշուառ
աղքատիս ։ Քանզի ո՞վ ոք հասեալ յառաւօտ, եւ 7
՚ի ծագման լուսոյն խիթայ մթանալ · եւ կամ ընթե-
րակաց կենաց, մահանալ · կամ ազատութ՟ե, եւ պար-
տաւորիլ · կամ շնորհաց, եւ դատապարտիլ · կամ
փրկութ՟ե, եւ մատնիլ · կամ նորոգման, եւ եղծա-
նիլ · կամ օրհնութ՟ե, եւ տարագրիլ · կամ բժշկու-
թ՟ե, եւ վիրաւորիլ · կամ լիութ՟ե, եւ նուաղիլ · կամ
յաճախութ՟ե հացի, եւ քաղցնուլ · կամ գետոց հոսա-
նաց, եւ պապակիլ · կ՟մ մայրենի գթոց, եւ նենգիլ · կամ
խնամոց ա՟ծեան աջոյդ, եւ զզուիլ ։

Է · Եւ արդ՝ ընդ ախտացելոյն սաստկապէս մարմ-
նոյն բորբոքումբ հոգւոյս վտանգաւ եւ ես պաղատիմ,
տէ՛ր՝ եթէ կամիս, կարող ես զիս սրբել ։ Ընդ 8 աչա-
ցուացն նեղելոց մշտագիշերն խարխափանօք՝ մեծա-
կական ձայնիւ հառաչեմ · ո՛չ որդի անուանեմ դաւ-
թի, այլ ծնունդ էիդ ա՟յ դաւանեմ · 9 ո՛չ միայն ռաբ-
բի կոչեմ, որ վարդապետացն է պատիւ՝ կարծողա-
կան զիսկն գիտելոյ, այլ տէր երկնի եւ երկրի հաւա-

տամ։ Ո՛չ ձեռինդ միայն ձգմամբ հզաւորութեան, ով բարեգութ ա՟ծ մերձաւոր, այլ 'ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ՝ ակնունիմ զօրել քո բանիդ առ իմ բժշկութի։ Ո՛չ թէ ինչ խորոց կասկածանաց միջոցի բանի, որ երկմտութեն կարծի նշանակ՝ 'ի մէջ արկանեմ [10] կամելոյն և ողորմութե, այլ կամիս որպէս բարեգութ, և կարես որպէս զարարիչ. ասա բանիւդ, և բժշկեցայց։ Ընդ հարիւրապետին հաւատոց [11] և ես լծակցեմ. ո՛չ մինչ անձուկ միայն բացակայութբ հեռի լինելով խորան 'ի խորանէ, հաւատամ ազդել քոյ կարողութեդ առ յարուի և բժըշկուի, այլ 'ի վերինն երկնի բազմելով, և 'ի ստորինս երկրի բովանդակ առ հրաշիցն սքանչելութի ո՛չ ունիմ հատուցանել։

Դ. Շնորհեա ինձ, որպէս դատաւինիք բանին քո վճռեաց առ պոռնկին ընդունելութի [12] հնգից հարիւրոց դենարաց պարտուց շնորհաբաշխութի ա՟ծ բարութեց և տէր երանութեց. որ յաճախս ընձեռել՝ բազում փառաւորիս, և 'ի շատն մատուցանել՝ նուիրն չափ սիրես. և յաւելն ողորմել՝ կրկին բարգաւաճիս. և յոյժքան բարիս՝ իրաւամբք գովիս. և [13] ա՟մի տէր գոլով հաւասարորդ ճանաչիս. և որ զբոլորն ունիս՝ ընդ մերում կշռիս. և անճառելեաւդ ծրիւ՝ մերայնովքս վճարիս. և ընդ երկրաւորիս՝ զանվախճանն պարտ վարկանիս. և մեծագրեալ քո ըզմերն՝ վէհս գոհաբանիս. և 'ի սակաւուն տուչութի դոյզն փառաւորիլ ո՛չ ամբարտաւանիս։ Արա՛ և ինձ զնոյն գթութի՝ ունողիս զգործս անհամար պարտուց. զի և 'ի ճաւս երախտեաց քումդ պարգևաց՝ [14] նորին իսկ սակով սիրելն կարգեսցի. և քեզ փառք յամենայնի. ամէն։

---

(1) Մէ յօ–ելօ–ր ։ Մի լքանելով զիս 'ի քո յուսոյդ և 'ի մխիթարութեդ, 'ի վերայ հեծութեա առաւելցի ցաւ հոգւոյս։ Յայս հայլն բովանդակ յաջորդ բանքն պէսպէս նմանութեք. յորս ասելն առ Աճ, մի խոցեր, մի գլորեր, մի կուրացուցաներ ևն, իմանի՝ մի թոյլ տար խոցել, գլորիլ, կուրանալ։

(2) Զհարբօօշեալս ։ Զխրտուցեալս, կամ զանկորեալս 'ի խղճէ մուացս՝ մի կշտամբեր։

(3) Զէ+օշեալս ։ Զհարեալս 'ի բքոյ, զհողմակոծեալս մի տար ալէկոծիլ։

(4) Մի հեշտեր ըգիշտեւու : Մի աղճատեր կամ ծռատեր զվատառեալս :

(5) Մի գօշէր ըմորմոտեւու : Մի խածաներ զկսկծեալս :

(6) Ընդ 'ի բնէ չարիս : Ընդ իս՝ որ բնութբ չար եմ վասն լինելոյս յոչընչէ, որ ըստ նիւթեան չար է, կամ վասն սկզբնական մեղացն, որ 'ի ծննդենէ ըստ բնութենէ առաջեալ լինի : Կենացդ Նշխար . սկիզբնդ կենաց՝ մի՛ հարկանիր ըստ անկենդան կաւոյս :

(7) 'Ի ծագման լուսոյն իբրև, կանխածի՛ երկնչի միանալ, խաւարիլ : Կամ ընթերակաց կենաց, մերձ գոլով կենացն՝ երկնչի մահանալ :

(8) Աչութսոյն Նեշէլոց : 2 օրին . աչութսոյն նեշէշէլոց :

(9) Ուժոյն տաբբի : Իբրև զկոյրսն ոչ լոկ ռաբբի կոչեմ զքեզ, որ է ուղղական պատիւ վարդապետական, կոծողական շնոյն գիտելոյ . ըստ որ ըստ կարծեօք Թովմա գիտել զնկն կիր զբուն անձն, թէ ո՛ և որպիսի՛ ոք է . զի կոյրքն և հրեայք վարդապետ միայն կոչելով զքեզ, ոչ ցուցանէին զաներութիւն քո և զնծութիւն . վասն որոյ ես տէր Էրնի և Էրէլէ հատ տամ : Ոմանք զմերոցրեալ բանդ այսպէս իմացան . վարդապետական ա-նուն առեալ լինի յուսուցանելոյ . և ցուցանէ զգիտութիւն խնութե օրինաց . և վարդապետք հրէից ռաբբի անուն ընունելով, կարծեցուցա-նէին գիտել զնկն օրինաց, և ոչ գիտէին : Բայց այս գիտաւորութիւն ոչ յարմարի բովանդակ բանին :

(10) Կամելոյն և ողորմութեանն : Ոչ եթէ իբրև զբորոտն (մատ . ըստ . 2 .) որոշումն ինչ կասկածական բանի 'ի մէջ ձգեմ կամելոյդ և ողորմու-թեանդ, ասելով, եթէ կամիս կարող ես զիս սրբել . որ զերկմտութիւն ինչ ցուցանէ կամելոյն, այլ ես հաւատամ անկասկած՝ թէ իբրև ողոր-մած՝ կամիս, և իբրև արարիչ՝ կարող ես : Այս են միայ բանիս . սա-կայն հայելով յամբողջ պարբերութիւնն, վերկապ երևի 'ի բառն կամե-լոյն, փոխանակ գրելոյ կարելոյն . ապա թէ ոչ՝ աստանօր կամելն և ողորմութիւնն կամ ողորմելն՝ զնոյն նշանակութիւն բերեն . ըստ որում և 'ի բացատրելն ասէ, կամս ողջոյ բարեգութ . ուստի ոչ յար-մարէր խորոց արկանել 'ի մէջ կամելոյն և ողորմութեանն . այլ և 'ի բա-նի բորոտին Եւէ մանիկն խորոց գնի 'ի մէջ կամելոյն և կարելոյն . զոր և սբ վարդապետս մեկնելով, զատաբար յիշէ զկամելն և զկարելն :

(11) Ես էս ընտկէմ : 2 օրին . ընտկէմ : ըստ կցորդիմ հաղորդիմ ընդ հա-ւատոց հարկաւորաց : ոչ թէ սակաւ հեռաւորութբ խորան 'ի խորանէ, առն 'ի տանէ՝ հաւատամ զօրել կարողութեանդ 'ի յարուցանել կամ 'ի բժշկել միայն, այլ 'ի վերին երկնիս բազմելով քո, և 'ի ստորին երկ-րիս բոլանդակ, ամբողջ գոլով, կիր բովանդակապէս ոչ կարեմ առ զար-մանագործութի անբաւ հրաշից քոց հաւատանէլ, այսինքն բանիւ վճա-րել կամ պատմել : Հին լուծ . զբաղդատութիւնն այսպէս իմանոյ . 'ի բժշկութեան հարկաւորաց սակաւ միջոցաւ հեռի էիր, իսկ ես և ոչ սակաւ միջոց հաւատամ, այլ անընդմիջելի մերձ : Յոյժ հեռի ձգի 'ի գիտաւորութենէ սբյ վարդապետիս, որ յայտնապէս ասէ՝ թէ նաև 'ի բարձրութեան երկնից հաւատամ զօրել կարողութեանդ, և ոչ թէ լոկ սակաւ բացակայութբ :

(12) Հնգից հարիւրոց դենարոց : Որ (ղուկ . է . 41 .) գնի դահեկան . իսկ սբ վարդապետս դենար ասէ, զի երկու բառքս փոխան միմեանց գնին . որպէս (մարկ . ժդ . 5 .) ուր դահեկան ասի, նոյնն (յովհան . ժբ . 5 .) դենար գնի :

(13) Աջնայնի տէր գուղ : 2 օրին . որպէս և հին լուծ . ամենայն գուղ . այսինքն դու ես ինչ գոլով, համապարդ ձանուին . իբրև հաւատար մեզ 'ի դաշն մաանես, խոստմամբք սպառ առնես զքեզ՝ ըստ վասակոց վոր-

ձրս չափել: Զիմ ինչ ունելով, ըստ Պերսոսի Կղոխ· զքեզ տես 'ի փոխարէն գործոց մերոց : կամ, ամենայնիւ հարուստ ձոխ գոլով, տակաւին այնու փոքունքն զոր մեք ունիմք, պնդանիս իբրեւ կարօտ, կամ զառաւել ինչ տացեալ համարելով: Եւ փոխանակ անձառելի ձրիցդ՝ մերայնոցէս Հճարէս· զմեր գործս վճար առնուս և շատանաս: Եւ զայն մեծ համարելով, Հէհս Գոհաբանէս· մեծապէս փառաւորիս : կամ, բաղում գոհութիւնս ընդունելոյ արժանի ես· այնու զի զմեր չնչին գործս համարիս իբրեւ մեծամեծ վաստակս : Եւ յորժամ 'ի փոքր գործոց մերոց քեզ սակաւ փառք լինին, ոչ Անէարգաանէս· ոչ դժուարիս՝ անվայելուչ համարելով քում մեծութեանդ զփոքր տուրս մեր : Ֆաստաւորէլ· այլ օրին· Ֆաստաւորէլ:

(14) Նորին Բոկ աւիոլ: Նոյնն չափով· Է թէ երախտեաց քոց՝ նոյնն չափով կարգեսցի սիրելն քո զիս, և իմ զքեզ : Կամ, ըստ պայմանի սիրոյ պոռնկին կարգեսցի և իմ սիրելն· որում տացեր՝ թողուլ զբաղում մեղսն վա յոյժ սիրելոյն : Կամ, նոյն իսկ սիրելն զքեզ՝ լինիցի մեծ երախտիք քո· զի յորժամ վասն բաղում թողութեանց առաւել սիրեցից զքեզ՝ իբրեւ զապաշխարող պոռնիկն, նոյն իսկ մեծ երախտիք են քո :

---

Մի Երրորդին յաւելուած նըշէին հեծուէ՝ նորին հոկողէ, առ նոյն աղէրս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

# ԲԱՆ. ԺԲ:

ա. Արդ՝ ես ծնունդս մեղաց, որդիս մահացու երկանց, արդարեւ անսահման [1] բիւրուց քանքարաց տուժից գոլ հատուցանող 'ի միում աւուր։ Այլ [2] ոչ թէ առ փոքրկունս մարդկայինն մտաց հայցեմ ներութիւն, այլ առ աննուազ լիութիւն փրկչիդ-յ̅ի ք̅ի պաղատիմ մարդասիրութեն· որ չէի երբեմն, և ստեղծեր· չմաղթեցի, և դու արարեր· չև ես եկեալ 'ի լոյս, և տեսեր· ոչ յայտնեցեալ իմ, և գթացար· ոչ կարդացեալ, և խնամարկեցեր· ոչ համբարձեալ ձեռն, և նայեցար· ոչ պաղատեալ, և ողորմեցար· ոչ կերպացեալ ձայնիս, և լուար· ոչ հեծեծեալ, և ունկնդրեցեր· [3] գիտելով զարդեանն դիպուածոյս, և չանտեսեցեր· նախահայեցող աչօք նկատեալ զպատժապարտիս չարագործութիւն, և յօրինեցեր : Եւ արդ՝ զքո արարեալս, և զքեւ փրկեալս, և զայսքանեաց խնամոց յանձնանձեալս՝ մի իսպառ կորուսցէ մեղացն հարուած՝ գիւտք բանսարկուին· մի յաղթեսցէ յամառութիւն իմոյ մոռախուղ՝ ներողութեան քո լուսոյ· մի սրտիս կարծրութիւն եր-

կայնամիտ բարութեդ. մի՛ մահացու մեղիս՝ ամե-
նակատարդ լրութե. մի՛ տկարութիւն նիւթոյ՝ անպար-
տելիդ բարձրութե։

Է. Ո՜հ կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս
յանուն քո՝ հզօր, արասցես ողջ իբրև զառաջինն [4]
մինչ 'ի դրախտին փափկութե զպտուղն կենաց կթելի։
Կաշկանդեալ զօսացեալ 'ի կոր կործանմամբ ընդ-
կնոջն տագնապելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուա-
ռութի, ընդ երկիր պշուցեալ [5] մեղացն կքմամբ՝ սա-
տանայական բուռն կապանօք, զի մի՛ զերկնայնոյդ
ընկալցի զողջոյն. խոնարհեա՛ց առ իս՝ միա՛յն ողոր-
մած, զի բարձրացուսցես զփայտս խոնարհ բանաւոր
անկեալ, և զչորացեալս ծաղկեցուսցես [6] 'ի բարի
կրօնս վայելչութե, ըստ ա՟ծաբանութե ս՟ր մարգա-
րէին։ Որպէս զի ծնէ կոյրն անլուսաւոր՝ չունիմ
տեսարան, որով զստեղծչիդ նկատեմ զկերպ մաղթե-
ցից՝ հզօր բարեգութ, միայն դու պաշտպան ակնար-
կեալ խնամովք անճառ քոյ սիրոյ՝ 'ի հնչական խօ-
սուն քո անօթս, յանեից [7] գոյաւորութիւն լուսոյ
հաստեսցես։ Ընդ երկոտասանամեայ չարեօք չարչա-
րեալ վշտագին կնոջն տանջեցելոյ՝ գետովք մեղա-
նաց արեան հեղեղիմ. հայեա՛ց 'ի բարձանց անմա-
տոյց լուսովդ պարածածկեալ, [8] ուր ո՛չ է քղանցք
ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ, այլ տարա-
ծումն հրաշից ամենայն ուրեք զօրացեալ։ Ո՛չ օծու-
թեամբ իւղոյ պատժապարտս ընդ մեղաւորին մա-
տուցեալ առ կենդանաձիր ոտից զարշապարդ՝ զկա-
թիլս աչացս վարսիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ
զամբիծ հաւատս՝ ամբարձմամբ բազկացս՝ ստոյգ դա-
ւանմամբ հոգւոյ ողջունիւ՝ շրթանց կափուցմամբ
զերկիր համբուրեմ. խառնեալ հեծութիւն [9] աղ-
բերցս արտասուաց, բժշկութի հոգւոյս աղերսեմ։
Առնեալ մեղանօք [10] հոգւոյս գոյութիւն լուծեալ
մեղկութեամբ, և յերկուց կայից միայնակողմամբ
անհաստատ հետովք, զընթացից գործին՝ նահանջ-
մամբ չարին՝ զհետևականն բարձողութի շինուածոյ
մարմնոյս՝ առ ելս ծառոյն կենսաւիթ պտղոյն խա-
փանեցելոյ, պատսպարեսցես անդրէն վերստին միայն
հնարաւորդ առ 'ի փրկութի։ Ո՜ փառաբանարան [11]

հաստուածոյ կերպիս 'ի քէն եղելոյ՝ ամրափակ խըցմամբ համրայոյց արգել հողմն բանսարկուին. հոգիդ քո ազդեալ մեծդ ողորմութբ, ըստ յաւետարանին բժշկեցելոյ, հրաշափառապէս բարեգործեցեր բանդ-կենդանի՝ ինձ խօսողութի անսայթաքելի : Ընկեալ կամ չարեօք 'ի մահիճս ախտից ընկողնոց մեղաց՝ դի կենդանի և խօսուն մեռեալ, կարեկցեալ իմուն թշուառութեան՝ [12] ողբականօք քքուանայ ձայնից, ով բարերար որդի Աստուծոյ, օրհնաբանեալ աչայդ ցօղով վերականգնեցես 'ի կենդանութի, իբր զսիրելին 'ի յանշնչական մեռելութէ : [13] Նոյդ դառնացօղս 'ի դբի մեղաց կամ տարակուսեալ, ձեռն մատուցեալ՝ արա՛ անստուեր որդի բարձրելոյ, հանցես զիս 'ի լոյս քումդ նշուլից : Ընդ աղխողորմ թշուառութե կականման ձայնի՝ այրւոյն 'ի նայինն՝ մօր միամօրին, [14] տատանմամբ մատանցն, կոծմամբ կրծիցն, հոսմամբ արտասուացն, տուայտանօք տխրութե դիմացն՝ և ես պաղատիմ վերջին հեծութբս, տուր յուսահատելոյս զքաջալերութի մխիթարութե գթած քո բանիդ, ասելով և ինձ գովեալդ բարի ստեղծիչ աշխարհի, թէ մի լար գերի՝ բազմաց ողբալի. որով ընդ պատանւոյն կենդանացելոյ՝ 'ի վշտացելոյ ծնողին սփոփանս՝ զամենապարտ ոգիս ընկալայց 'ի քէն ընդ նմին կրկին նորոգեալ : Ընդ [15] այսակիր անզգայելոցն՝ դիւալլուկ և քարակոշկոծ հեղձամղձուկ եղկելի անձանցն, քստմնելի դիսախուիւ հերացն, վայրենեբեւս բանդագուշելոցն՝ 'ի քէն ողորմեալ փրկիչ բոլորից, իբրև զնոսին առ քեզ դիմեցից. հերքեալ մերժեսցես զզունդս չարացն ապականողաց՝ 'ի քո խորանէս, զի ժամանեալ հոգիդ քո բարի՝ այսրէն հանգիցէ. լցեալ զմարմինս մաքրութբ շնչոյս՝ զգեցմամբ անդամոցս, զգաստ արասցես զխելագարեալս ամենաթշուառ : Ընդ գերեցեալ դժոխաբնակաց [16] վտարանդելոցն հոգւոց՝ արգելեալ կամ 'ի վտանգի. զճառագայթ ողորմութե փառաց քոց ծագեալ՝ լոյդ իմ անձկութե, 'ի կապանաց օցտողին զերծեալ զիս ապրեցուսցես : [17] Պաղտնորոգայթ աներևութերակ վրիպակ արահետ դարշութբ մեղացս ջրդողեցեալ ոգւոյս կերպարան, կայ 'ի տագնապի. զծածկեցեալն

'ի տեսողութեանց՝ զչարագործին [18] Նիւթիցն այտուց-մունս, քո ինքնաւորդ զօրեղութե՛ որդի՛ այ, զթա-ծաբար առողջացուցես: Զ բազմազան տարազս ցեղիցն զանազանից ախտաւորութեանց [19] մահացուցա-նողաց՝ խուրախնօք կորստեան բերկուք՝ դժնդակար-մատն շառաւեղօք հաստատեցելովք 'ի յանդաստա-նի անօրէն մարմնոյս, տարակորզեցես 'ի ձեռն ձե-ռինդ ամենակալի. որ արօրադրեալ միշտ՝ և մշակես զսահմանս հոգւոյ առ բանիդ կենաց արդիւնա-տրութիւն:

Է. Եւ քանզի անցաւ ըստ նմանութե օրինակութեանց յանցուածոցս մեր, [20] ըստ Ճարակօղն քաղցկեղի, առ ընաւ անդամս մասնաւորեալ զախտին տարա-ծումն, չէք սպեղանի ինչ խորայէլի առ անչափութե խարանացն մատուցանել. 'ի խարսխաց բարձից մինչև ցափն կառուցման լրութե անդամոցս չէ առող-ջութի, այլ ամենևին անբժշկութի: Իսկ դու՝ ողոր-մած բարերար օրհնեալ, և երկայնամիտ Թագաւոր անմահ, լո՛ւր պաղատանացս արդահատութե սրտիս վտանգի, որ կարդամ առ քեզ տէր 'ի նեղութեան:

---

(1) [illegible]: 3 օրին. [illegible]: Բիւր քանքարաց կորստեան պարտապան եմ 'ի հատուցանել 'ի միում աւուր: բիւր աւելի զանթիւ բազմութիւն յայտնելով. որ վասն անհամարն առէ:

(2) [illegible]: Ո՛չ ըստ փոքրկութեան մարդկային մտաց հայցեմ թողութիւն, այլ ըստ անսպառ լրութեան փրկչիդ պարգևին, հայցեմ զմարդասիրութի: մի օրին, [illegible]. զի եթէ մարդ-կային չափով խորհէի, ոչ համարձակէի բնաւ հայցել ներումն:

(3) [illegible]: այսինքն զայժմու գիպուածոյս: Հոլով անուանդ՝ կամ իբր պատմական դնի, և կամ է սեռական յառա-կացուցիչ՝ ըստ եբրայեցւոց ունելով զայլ անուն հայցական, այսինքն զՃշմարիտ արդեան գիպուածոյս, և կամ զայլ սոյնպիսի: Համառօտ գիտելով քո առէ՝ զայժմու անարժան պատահմունս մեղացս և զպարտիս, ոչ անուանս արարեր. Նախահայեցող քո Ճանաչմանց տեսեր՝ ո՛րչափ չարիս գործելոց էի, և 'ի վերայ այսր տակաւին յօրինեցեր զիս արարած վայելուչ:

(4) [illegible]: Առողջացմ առէ՝ զբազմաւոր հոգւոյս՝ զմիտս և զկամս իբրև զառաջնոյն յանձեղ մեծանալն, յորում եթէ կացեալ էաք, կթէի զպտուղն կենաց: Կամ, զոր յայնժամ կթէի միջնորդութե ադա-մայ. զի որպէս նորա արտաքսումն 'ի դրախտէն համարեալ լինի և մեզ, նոյնպէս կոչն և վայելել նորա անմահօր: Կամ, իբրև զառաջնոյն յանձե-ղութե առաջինին, յորժամ 'ի տե եկեղեցւոյ կթէի [illegible], զոր հաղորդութիւնն:

(5) [illegible]: այսինքն կծկման, կարկամութե, իբրև զկարկա-մեալ կինն 'ի վայր կորացեալ, անուղղելի կայ հոգիս. կարկամութե մե-

զայն երբեւ կապով սատանայի Ը՟ երկիր կցեալ, չկարեմ զերկնաւոր ողջոյնդ ընդունել ։

(6) 'Ի ԲԱՐՁՐ ԿՐՕՆՍ ՃԱՇԵԼՈՒԹԵ ։ մի օրին ․ 'Ի ԲԱՐՁՐԿՐՕՆՍ ՃԱՇԵԼՈՒԹԵ ․ այսինքն 'ի բարեկարգ գեղեցկութե ։ ըստ ԾԱՌԱՅՈՒԹԵ, ըստ ածային պատգամին Եզեկիելի (ԺԷ ․ 24 ․) ' Բարձրացուցանեմ զփայտ խոնարհեալ . . . և զաղարացուցանեմ զփայտ գոռացեալ || ։

(7) ԳՈՅԱՑՈՒՑՈՒԹԵ ԼՈՒՍՈՅ ՀԱՒԱՏՈՅՆ ։ 4 օրին ․ ՀԱՒԱՏԱՏՈՅՆ ։ Որպ 'ի ծնէ կուրին ասէ՝ որ չունէր բնաւ գործարան աչաց, Նորոգ աչս կազմեցեր, այսպէս ինձ ծնելոյս 'ի մեղս՝ զուրկ 'ի լուսոյ շնորհաց և ածգիտութե, Նորոգ լոյս շնորհաց գոյացուցես ։

(8) ՈՐ Ի՛Լ Է ՔՂԱՆՑՔ ։ Յերկինս՝ ուր անմատոյց լուսովդ ծածկեալ ես, ո՛չ գոն 'ի քեզ քղանցք ձեռագործ վերարկուի, զի 'ի նոյնս մերձենալով բժշկեսցայց երբեւ զկինն առաւտես ․ ԹԱՓՈՒՐԱԾԱՐԻ ՀՐԱՒԻՐ, սքանչելի գործոց յիմանալեան և 'ի զգալիս առ հասարակ ներգործեալ ․ որք եթէ համգերձ ծածկեն զխկութիւնդ, բայց և ցուցանեն զմեծութիւնդ և զզօրութիւնդ ․ և ես յայս սքանչելեաց տեսութիւնս մերձենամ երբեւ 'ի քղանցս համգերձի քո, զի զատուցան միայն սքանչելի զօրութեդ ճանաչեմ, և ո՛չ զբովանդակն ։

(9) ԱՂԲԵՐՑ ԱՐՓԱՑՈՒՑԻ ։ մի օրին ․ ԸՆԴ ԱՂԲԵՐՑ ԱՐՓԱՑՈՒՑԻ ։ այլ, ԸՆԴ ԱՂԲԵՐԱՑՆ ։ Ո՛չ օծմամբ իւղոյ, կամ իւղով օծանելով ես պատժապարտ, մատուցեալ ընդ մեղաւոր կնոջն առ կենդանարար ոտից զարշապարացդ զարտասուս իմ հերովք գլխոյս քեզ ընծայեմ, այլ ԶԱՄԲԻԾ ՀԱՒԱՏՍ ընծայեմ եւ ։ կամ, այլ զամբիծ հաւատս ՍՓՈՅՔ ՏԱՌԱՊԱՆՔ, այսինքն զամբիծ հաւատս ճշմարտութե դաւանելով, եւ ։

(10) ՀՈԳՒՈՅՍ ԳՈՅԱՑԵԱԼ ։ Ցրուեալ մեզք հոգւոյս կազմուած ․ զի ըղձականն ապստամբեցաւ 'ի բանէն, և կամքն՝ յառաջնորդուէ մտաց ․ Եւ ՅԵՐԿՈՒՑ ԿՈՂՄԱՆ, յերկուց ոտից հոգւոյն, որք են կամք բանին, և կամք մարմնոյն, ՓԱՅՆԱՅԿԱԼՄԱՄԲ, միով կողմանքն կամաց և յօժարութեց մարմնոյն գնալով անհաստատ առ բարին ։ Արդ՝ դու շնորհատուրդ 'ի փրկել, ՈՒՂՂԱՓԱՌ ՓՈՐԾԵԱՆ, զկամս բանին՝ որ զծանրութիւն մարմնոյս բառնայր, և ուղղէր 'ի ճանապարհ կենաց ծառայն, և խափանեցաւ արգելմամբ չարին, վերստին զօրացո ։

(11) ՀԱՒԱՏՈՎՔ ՆԵՐՔԻՆ ։ Զեղուն՝ որ է գործի փառաբանութե 'ի շինուածի մարմնոյս, համրացոյց շունչն սատանայի ։ Դո՛ւ բանդ կենդանի հոգւովդ քով ազդեալ ԲԱՐԵԽՕՍԵԼՈՅ, շնորհեսցես ինձ խօսողութիւն համարձակ, ուղիղ ։

(12) ՈՂԲԱԿԱՆ ՔՔՈՒԱՆԱՑ ՁԱՅՆԻՑ ։ Ողբական խմնցեալ փոխանակ լալական, ասէ կամի ․ կարեկցելով իմ թշուառութեանս լալականօք՝ որք գեղքուանաց ձայնս արձակեն ։ Իսկ խմնցեալ երբեւ ածական ՁԱՅՆԻՑ, նշանակէ, ողբական ձայնիւք գեղքուանաց, կի՛ ողբովք ձայնից ։ բառն ՔՔՈՒԱՆՔ 'ի բառէն ՔՈՒՔ նշանակէ՝ հարկանելով կոծելն ․ ( ծեծկռուելով լալ ։ ) բայց 2 օրին ․ ՔՔՈՒԱՑ ։ Իմաստք ամբողջ բանիս են ․ Նման Ղազարու ննջեալ կամ ես յանկողին ո՛չ մարմնական հիւանդութե, այլ մեղաց ․ որով թէև կենդանի երևիմ, այլ հոգւով մեռեալ դիակն եմ ։ Բայց կարեկցելով թշուառութես իմում, ո՛րպ յայնժամ բազումք եկեալ ցաւակից լինէին քերցն Ղազարու, ընդ նմա կենարար արտասուօքդ կանգնեա զիս ։

(13) ՍՓՈՅՔ ՏԱՌԱՊԱՆՔ ։ Անկարիկ զննկեցուածն երեմիայի 'ի գուբ տղմին ․ նա ասէ՝ վասն չարեացն այլոց դառնացեալ էր ․ (ողբոց ․ Գ ․ 20 ․) իսկ ես սոյնդ և յիրաւի 'ի խղճէ մտացս դառնացեալ, կամ 'ի գբի մեղացս ։ Դու որդի ած՝ հան զիս 'ի լոյս, ո՛րպ զերեմիա եհան արդեմելէք եթեով-

պացի. (Երեմ. ԼԸ. 7:) Անդ արդեւմէլէք եցոյց զայնպիսի խնամս, որ Թարգմանի՝ ծառայ Թագաւորի. իսկ դու որդի ես Ած. նա՝ եթովպա-
ցի Թխամորթ. և դու՝ արի անապատէր :

(14) Տապանմանէ մապանցն: 2 օրին. պապանման, իբրև թէ Ը ստոմանման:
պատապանօք պխրատէ: Նուաղմանք կամ հիւծմանք ոսկոմնութե :

(15) Այատէր անդպայէլոցն: Գիւաչար անդղային: Տիմասրատ, 'ի դի-
ւէն տանջեալ. Տարախողիծ. քարամբք կոծեալ և բրտացեալ: Հեղձամղ-
ջատ, 'ի տանջմանէն խեղդեալ: Տապինէլի և Գիմախախա հէրացն, զար-
հուրելի, և նման խառւոյ խառնափնդոր և ցրուեալ հերացն: Հայրէնէ-
րէա Բանդապատէլոցն, այլանդակ դիմօք խելագարելոցն: Այսպիսի
անուամբք ձևացուցանելով զողորմելի հանդամանս դիւահարացն՝ զորոց
գրեն (մատթ. Ը. 28: մարկ. Ե. 2: ղուկ. Ը. 26:) Ը օրինակի նոցա
սաէ՝ և ես գոլից 'ի քեն ողորմութիւն. զի մերժեսցես 'ի մարմնոյ իմմէ՝
որ է խորան քո, զդիւական ախտս. և հոգիդ քո՝ սպարէն, մերատին՝ կամ
սատ 'ի մարմինս հանդիցէ, մաքրելով զհոգիս իմ, և զգեցուցանելով
զմարմինս պարկեշտութը :

(16) Վպարանտէլոցն հոգւոց: Իմա զհոգիս սուաջին արդարոցն՝ արգելե-
լոց 'ի դժոխս ներքինս վասն պարտեացն ադամայ. առ որս լոյս ծագե-
ցաւ քո յետ խաչելութեն: Ըստ այնոցիկ հոգւոց սաէ՝ արգելեալ կամ
և ես մեղօք 'ի վտանգ կորստեան. լուսով ողորմութեդ ապրեցո զիս 'ի
կապանաց սատանայի :

(17) Գաղտնորոգայթ՝ անէրեատէրալ: Զմեղս նմանեցուցանէ չրդողու,
որ է գարշութիւն գաղտնորոգայթ, 'ի ծածուկ կամ անյայտ պատճառա-
նենգող զմարմինն. անէրեատէրալ, Ը անյայտ երակս կամ ճանապարհս
մարմնոյն ընթացող. Հրէպալ, փխպեալ կամ խոտորեալ 'ի բնական խա-
ղավակաց հիւթոյն. արահէպ, յամ մասունս և 'ի հիւթս մարմնոյն տա-
րածեալ: Այսպէս մեղքն գաղտնի որոգայթիւ դիւին՝ ընդ անյայտ ճա-
նապարհս զգայութեց մտեալ ընդդէմ ուղիղ բանին և օրինաց, տարա-
ծեցաւ յամ մասունս հոգւոյս, և յամ շարժմունս նորա :

(18) Նիւբիցն այպասմատա: 4 օրին. Բիանիցն կամ Բանիցն: Պա բնդ-
նարտ, այսինքն քոյով զօրութը որ անկարօտ ես դեղոց, արմատոց,
առողջացո :

(19) Մահացուցանողաց: 2 օրին. Մահացուցողաց: Եւ զի մի զամ տեսակս
ախտից մի մի յիշատակեցից, զայլ ևս բազմազան ազգս ցաւոց ոյք սպա-
նանեն զոգիս՝ իւրեանց կորուսիչ պտղովքն, ըստ որում դժնդակաբոյս
շառաւեղօք յառաջագային յախտաւոր մարմինս, դու տէր 'ի բաց
կորզեսցես, խլեսցես ամենակալ ձեռամբդ, զի քո է խնամով մշակել
զանձման հոգւոց մերոց՝ առ 'ի պտղաբերել զբանդ կենաց :

(20) Ըստ ճարախօղն պաղջէղի: Ըստ նմանութե կերող կամ ապառող
քաղցկեղի. (որ է կերցաւ. չէրխինջէ.) առ բնա անդամ, առ ամ ան-
դամս հաղորդեալ զապաժումն ախտին. ուստի և ոչ բաւէ ապեղանի
առ անչափ տարածութիւն կամ բազմութիւն խարանացն, բացեալ և
այրեցեալ վերայն: 'Ի խարախաց, յորոց մինչև ցգլուխ չիք առողջութիւն,
այլ բոլորովին անբժշկաբին, անբժշկելի ախտ կամ ցաւ ըստ եսայեայ.
(Ա. 6:) Իսկ դու ով ամենազօրդ Թագաւոր՝ մի ընդ անարժանու-
թիւն իմ հայեցիր, այլ 'ի կողկողագին պաղատանս սրտիս վշտագնելոյ :

Մէրտին յաւելուած հրէին հեծութեան՝ նորին հանգոյն, առ նոյն
աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

## Բ Ա Ն · Ժ Թ ·

ա. Նայեա՛ց ամենահայեաց տեսութ՟ն կենաց բարութ՟է յուսոյ, 'ի մեծաբարբառ աղաղակ ցաւագնեալ անձինս հեծեծանաց ։ Անհա՛ս մեծութ՟ի · անո՛ւն ահաւոր · բարբա՛ռ կենդանի · լո՛ւր ցանկալի · ճաշա՛կ ախորժելի · կոչումն պաշտելի · բարութ՟ի խոստովանելի · ազդումն խնկելի · իսկութ՟ի դաւանելի · էութ՟ի փառաւորելի · գոյութ՟ի օրհնաբանելի, տէր Յս ընդ Հօր քում գովեալ և երկրպագեալ, և ընդ Հոգւոյդ սբյ բարձրացեալ և վերանձնեալ ։ Որ միայն [2] մարմնացար վասն մեր ըստ մեզ, զի արասցես զմեզ վասն քո՝ ըստ քեզ · լոյս ամենայնի, յամենայնի ողորմած, հզօր, երկնային ։ Եւ այժմ զլուծեալ և զխորտակեալ հողանիւթ անօթս՝ ա՟ծօրէն հրաշակերտութ՟ք, աղաչեմ գթած, նորոգ հաստատեա ։ Զքոյին պատկերս մեղօք հնացեալս՝ [3] 'ի քրայս հալոցաց կայծակամբ բանիդ, պաղատիմ առ քեզ, վերստին ձուլեա ։ Զխախտեալ շինուածս քումդ հանգստեան [4] խորանի մարմնոյս՝ պահպանաւ հոգւոյս, մաղթեմ բարերար, 'ի բնակութիւն քեզ մաքրագործեա ։ Մի՛ հատուցաներ չարեացն իմ գործոց՝ զնոյն փոխատրութ՟ի ։ [5] Արբեալ եմ ըստ մարգարէին բանի՝ և ո՛չ 'ի գինւոյ · Թափեա զմրուրս անօրէնութ՟է թմբրութ՟է մահու բաժակիս՝ ազատարար հրամանաւդ՝ ամենակեցոյց, զի մի՛ զքոյդ քամեցից 'ի վերջին աւուր յետնում հատուցմանն ։

բ. Արդար ես յիրաւունս քո, և յաղթօղ 'ի դատաստանի · եթէ մահու մատնես, ճշմարիտ են գործք քո · եթէ դատապարտես՝ աստուստ սկսեալ զտանջողականն կշտամբութ՟ի, ստոյգ են հատուցմունք քո · եթէ յանդունդս խորոց սուզեսցես, թէ զկենդանութ՟ի շարժմանս բարձցես, թէ զբանիս զօրութ՟ի ունայնացուսցես, թէ զաչացս պատուհանս ստուերացուսցես, [6] թէ զկենացն ճաշակ 'ի քեզ ինքն ամփոփես-

ցես, թէ զհասարակաց կերակրոյս դարմանս բարձ-
ցես, թէ 7 զաւուրցս հարստութի համառօտեսցես,
թէ ընդ խղճման քաղցրութե ցօղոյ՝ և հուր տեղա-
ցես, թէ 8 'ի լրութէ բանի քոյ սովեցուսցես, թէ
զականջացս դրունս խցցես, թէ զշնորհիդ ձիր կորեա-
ցես, թէ զգետին յատակի ոտիցս 9 սասանեցուսցես,
թէ յանձկալի երեսաց լուսոյդ քոյ հանցես, թէ 'ի
համօրէն աշխարհէ աստի հերքեսցես, թէ փայլա-
տակմամբք հրոյ պակուսցես, թէ անբժշկական ցա-
ւօք դատեսցես, թէ դիւաց չարաց մատնեսցես, թէ
գազանաց ժանեօք մանրեսցես, թէ հողմով ցա-
ման հոսեսցես, և թէ այլ ինչ նորոգ արարած տան-
ջանարանաց կազմեսցես՝ չար քան զտարտարոսն, և
սաստիկ քան զգեհենն, թունաւորագոյն քան զոր-
դունսն, տարակուսելի քան զխաւարն, երկիւղագին
քան զխորխորատն, ողորմելի քան զմերկութին, վը-
կայեմ անձամբ անձին՝ յոյժ 10 պարտապան գոլ
սոցա։

Գ. Եւ քանզի յաւէտ տպաւորագոյն են 11 նմանու-
թիւք փոխատրութեցն՝ առ ազգակցութի մեղանացս՝
իբր պատկերակիցք միատեսակք զուգաշաւիղք՝ նշա-
նակիցք այսր խորհրդոյ, արդ կարևոր է խոստովա-
նել և յանդիմանել զերեսացն ծածկոյթս՝ առ ծա-
նօթուն խնդրողին։ Որպէս՝ զի ոչ ջերմն սիրով առ
ընկերին կարիս մատուցայ, 12 յիրաւի 'ի նախնումն
վտանգին տառապեալ սառնում։ Եւ զի ոչ 13 զցան-
կականն խրոխտականուն սանձեցի, յարժանի կրեմ
եղկելիս՝ զանզովանալի զկիզումն։ Եւ քանզի ոչ սի-
րեցի զլուսոյդ աւետիս, արդար հատուցմամբ 'ի մը-
թութի ըմբռնողական միգին կորստեան վրիպեալ
դանդաչեմ։ Եւ զի ոչ խտրեցի զմանունս փոքունցն
յանցանաց, իբրև անվնասակարք վարկանելով, պատ-
կանապէս 'ի խածանողականացն զազիրն զեռնոց
խթեալ խոցոտիմ։ Եւ զի ոչ ձեռն կարկառի առ
կիրս վտանգաւորին՝ այց առնել նմին, 'ի դէպ իսկ 14
ըստ գծագրութե այսր օրինակի, ապականութեն զբոյ
նուիրեալ մատնիմ։

Դ. Եւ արդ՝ 15 ոչ յո̃ծուստ ամենաբարի գանձուցդ՝
չըրիս, և ոչ 'ի լուսոյդ նշուլից՝ խաւար, և ոչ յա-

պաշտօնութենդ՝ զայթագղումն, այլ ես ինձէն կորու-
սեան որդիս գտի զայսոսիկ. Մեղանք անօրէնութեան
իմոյ զանձեցին նուաթեցին զայսքանեաց բարկութեան
մթերս. [16] Հոգւոյ իշխանին մոլորութեան հնազանդեալ,
թողի զուղի քո՝ Նորա, ըստ գրոյն խրատու յանդի-
մանութեան։ Իսկ քանզի յայտնեցաւ յետուստ գաղտ-
նեաց առականաց [17] մարմնոյս անդամոց, և արկաւ
զերեսօք կերպիս՝ անվայելուչ ստուեր ամօթոյս, ըստ
մարգարէին առակի, տգեղս ցուցեալ զիս ամենեցին՝
իբր մերկացեալ խայտառակեցելոյ պոռնկի, ծագեա՛
յիս զլոյս քաւութեան՝ արքայ երկնաւոր. զի [18] Թօթա-
փեալ զմեղաց փոշիս, ըստ աւետեաց ձայնին դարձե-
լոցն 'ի բաբելոնէ, նստայց վերստին կանգնեալ 'ի
հողոյ, և 'ի հաստատութի յուսոյդ հիմնացեալ ան-
սասանելի, ըստ եսայեան բանին, զգեցեալ զզօրու-
թի բազկի կարութեան նախնում մաքրութեան, վասն
մեծութեան փառաց քաղցրութեան ամենապարգև քոյ
մեծութենդ. օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

(1) Ընդունակ բնիկէ. մի ազդեցութիւն կամ զօրութիւն օրհնելի։ Բնակա-
նէ պատուելի. խոկութիւն կամ զինչ էդ՝ է միայն գաւանելի, հաւատա-
լի, և ոչ հասանելի. որպէս և էութիւն, գոյութիւն՝ գերագոյնէ է.
2 օրին. գերազանցէ. օրհնաբանելի՝ քան թէ քննելի։ Իսկ ես, յարա-
բածական իբրու՝ խոկութիւն նոցա, կամ էութիւն և գոյութիւն ոչ են
ինքնին պարզաբար նկատեալ՝ ոչ ենթակայ ներգործութեց, և ոչ սկիզբն,
զօրօրինակ մարդոյ խոկութիւն կամ էութիւն մտածեալ յինքեան՝ ոչ
արարեալ ար, և ոչ արարօղ, այլ իբրև անհատ կամ անձնաւորեալ։
Ընդհակառակն՝ յԱԾ խոկութիւն նորա և գոյութիւն ինքեամբ է փա-
ռաւորեալ և փառաւորիչ. նոյնպէս ինքնին է արարօղ, պահպանիչ
և այլն։

(2) Մարդացար ձայն ձեր։ Վասն մերոյ փրկութե, ըստ ձեզ, ըստ բնութե
մերում, եղեալ իբրև զմեզ մարդ։ Զի արասցես զմեզ ձայն քո, մի փա-
ռաց քոց, վասն արժանեաց քոց, ըստ քեզ, իբրև զքեզ որ, և որդի ած՝
շնորհօք։

(3) 'Ի փրկչի հալոցոյ։ Զքո պատկերս հնացեալ մեղօք՝ վերստին ձուլեա
'ի հալոցական բովոյս, (այսինքն 'ի կրակարանի կամ 'ի սանի արծա-
թագործաց.) կոյծահալք բանիդ, հրով վարդապետութե քո, կամ զօ-
րութե հրամանիդ։

(4) Խորանի մարմնոյս։ Զմարմինս՝ որ կազմեցաւ խորան հանգստեան քո,
և մեղօք խախտեցաւ, մաքրագործեա՛ պահպանեա հոգւոյս, այսինքն հան-
դերձ հոգւովս, որ է պահապան մարմնոյս։

(5) Արբեցեալ եմ։ Յախտաւոր կրից հոգւոյ, և ոչ թէ 'ի բնական գինւոյ
արբեցեալ եմ, ըստ մարգարէին եսայ. (իծ. 9. ծա. 21.) որ չար ես
է քան զմարմնոյ արբեցութիւն։ Այլ դու բարերար՝ Բանէդ պերճ,
մաքրեա յինէն զապառաժ ճանապարհս մեղաց իմոց, որք են իբր մուր

գինւոյ, և մահաբեր թմրութիւն ածեն 'ի վերայ. զի մի՛ յետոյ դժոյժ տա-
ժեսցէ, զբաժակ բարկութեան և վրէժխնդրութեան իսպառ արբից, ճաշակե-
ցից բովանդակ 'ի հանդերձեալ տանջանսն. ըստ բանին երեմ. (ԻԵ. 15.
16:) Հին ըծ. Տրուր խմանոյ զհանդերձեալ տանջանսն, և գինի՛ զատոր
պատուհասն. և համարի՛ թէ աղաչէ սի՛րտ այժմէն թափել 'ի վերայ իւր
զպատուհաս անտի տանջանացն: Բայց ո՛չ յարմարի այս կարգի բա-
նիցն:

(6) Թէ ըչէնայն ճաղաք: Զկենդանական շունչս, կամ զհոգիս, 'ի տէր
ինքն ամփոփէյայէա, յետս ածցես:

(7) Զաաարյա հարապաաբէ: Զբաղմութիւն աւուրցս կամ ամաց կար-
ճեսցես:

(8) 'Ի ըրաաբէ բանի տայ: 'Ի լսելութէ բանիդ քաղցեալ Թողուցուս, ը՛
բանին՝ տաց ձեզ սով լսելոյ զբանն Տ՛ն: (ամովս. Ը. 11:)

(9) Սաանէյաայէա: մի օրին. սաանէյայէա:

(10) Պարպապան գուլ: 2 օրին. պարպալան:

(11) Նշանաբէք բախաբրաաէյն: Յորժ յարմար են համեմատութիւնք հա-
տուցմանցն կամ պատժոցն՝ որ ընտն լինձ աստ կամ 'ի հանդերձեալսն,
առ նմանութիւն մեղացս. որք իբր պատկերակիցք՝ են նշանակիւք այր
խորհրդոյ. այսինքն այսր համեմատութեան պատժոց: մի օրին. նշանակէյք:
Արդ՝ զայս կարեւոր է ասել՝ խոստովանել, և բանալ ըչէրէայն ծածկոյթ,
զպատրուակ բանին, զի ծանիցէ ինդրօղն. զոր և 'ի կարգին բացայայտէ:

(12) 'Ի նախնաաճ վարանգին: 'Ի պատահել առաջին վանդին կամ փոր-
ձանաց՝ յիւրաքի սաստուալ կարօտութը, այնու զի սասուցեալ դայս 'ի
կարիս ընկերին: փաաադէալ. 4 օրին. փագնադէալ:

(13) Զյանճաճանն խրախտաճանաբէ: մի օրին. խրախտաբէ:

(14) Ըստ գծագրաբէ: Փոխանակ զի անկելոյն 'ի գուբ կամ 'ի բանտ՝
ոչ մատուցի ձեռն, պատշաճապէս ըստ նշանակութե այսր օրինակի՝
մատնիմ 'ի գուբ դժոխոց:

(15) Ույածաաք: Ուռկենու անհնար է յանծայլին ամենաբարի գան-
ձուցդ յառաջ գալ չարի ինչ, որպէս ո՛չ 'ի լուսոյ խաւար, և ո՛չ յա-
մուր աղբատանէ գթել կամ գայթակղել, յայտ է թէ ես կորստեան
որդիս հնարեցի, մեղք իմ գանձեցին ըսյտանէաջ բարէաբէ մրէրա. զայս
քան նիւթս, պատճառս բարկութե ք՛յ 'ի պատուհասել զիս. ուր այս-
տանէաջ առեալ իբրև ածական բարէաբէ, լինքն յոքնակի եղեալ է, զի
նաև բարկութեն ըսէլւոյն բաղմաւորական խմանի: Իսկ առեալ ածա-
կան բառին մրէրա, սեռական եղեալ է իբրև յատկացուցիչ՝ ըստ անսովոր
ոճոյ: տես Քերակ. համար 924:

(16) Հօգաայ իչխանին: Յայլ ոճով եղեալ էր մրէրա հօգաայ, ըստ այլև-
այլ դրչագրաց: Սակայն ոչ միայն ըստ խմաստիցն չյարմարի ասել՝
մրէրա հօգաայ, ուր յիշատակեալ պատուհասքն պատշաճին և մարմնոյ,
այլ առաւել ևս՝ զի այլ օրինակք ընթեռնուն՝ հոգւոյ իշխանին. և սոյն
իսկ գայ 'ի դէպ բանի ժողովողին: " Եթէ հոգի իշխանին ելցէ 'ի վերայ
քո, մի՛ թողուր զտեղի քո ||: (Ժ. 4.) Ըստ ճառին զայլ միտս ունի
բանդ. բայց յարմարական մեկնութը սա է, հոգի իշխանին ծուշրաաբէ. 2
օրին. ծուշաբէ՝ այսինքն նենգութիւն կամ կատաղութիւն գիւին շարժե-
ցաւ 'ի վերայ իմ, և ես հնազանդեալ կամաց նորա, թուլացայ, թողի
նմա զեղս իմ" որ տեղի քո է. զայր իշխանն նախամեծար արարի քան
զքեզ. ըստ գրոյն խրատու, որ խրատէրն չթողուլ զտեղին, յանդիմա-
նէ զթողիչն:

(17) Մարճայա անդամոց: Խայտառակութիւն մարմնական գործոցս, որք
ասին անդամք մարմնոյ: (կողոս. Գ. 5:) Իսկ յիշատակեալ առակա-

ւոր բանն բովանդակ՝ է Նաւումայ. (գ. 5. 6.) * Յայտնեցից զետոյս քո, և ցուցից ազգաց զամօթ քո ||: Որք հենք ըծ. անյարմարապէս ը մասին զեսայեայ բանն կարծէ. (խէ. 2. 3.) * Բաց զպռունս քո... յայտնեսցի ամօթ քո ||. և ըստ մասին յեզեկիէլէ բերէ առել: Զապաւառ անասնոց ձերոց յերեսս ձեր դարձուցից: որ չէք յեզեկիէլ, այլ մաղաք. բ. 3. ասի. * Ցանեցից զապականն ը երեսս ձեր՝ զապականն տօնից ձերոց ||:

(18) Թօթափեալ պճղպջ հողոյ. Հայի 'ի բանն եսայ. ծբ. 2. * Թօթափեա զփոշիդ, յոտն կաց և նիստ եղէմ||. Են. որ ակնարկէ 'ի դարձեալն 'ի գերութէն բաբելոնացւոց. ոտ և զկնի յայտնէ: Սոյնպէս առեն. զգեցեալ զզօրութե. է բանն եսայ. (անդ. համար. 1.) զգեցիր զօրութե. այսինքն կարողութե: Խմաստք բանիս են. որովհետև ահա խոստովանութբս յայտնեցի զամօթանս մեղաց իմոց, ծաղեա յիս զլոյս քաւութե՝ որով ծածկեսցի խայտառակութիւն իմ. և մաքրեալ 'ի մեղաց՝ հաստատեցայց յանսասանելի յոյս, զգեցեալ զկարողութիւն ըստ առաջին մաքրութե աւազանին. և զայս հայցեմ վասն մեծանալոյ փառաց քոց, զի քաղցր ես նաև առ անարժանս:

Մերասէին յաւելուած երկին հեծութե՝ նորին հոգւոյն ; առ նոյն աղերս Շնորհաւոյ բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

# ԲԱ՟Ն. Ի.

ա. Տէր տէր՝ անոխակալ և երկայնամիտ, ներող, բարեգութ, հզօր, ողորմած. ահա ճշմարտութբ են գործք քո, և խոստովանեալ դատաստանք քո. վկայեալ են ընտրողութիւք քո՝ տեսօղդ ծածկութից: Ընդ երից երջանկաց մանկանցն՝ որք կիզանողական բոցովն փորձեցան, և ոչ վնասեցան 'ի բաբելոնին, զնոցա թախծութե զերգն հառաչեմ, մեղայ, անօրինեցայ, յանցեայ, ապստամբեցայ, և պատուիրանաց քոց ոչ անսացի: Նաւ քանզի մաքուր գոլով 'ի վնասուց նոքա, և զայս խոստովանութիւն գուշէին, իսկ ես ընդ նոցայն՝ նովին աղերսիւ ձայնակցեալ սմին ողբոց երգութե, և այլ յաւելից՝ ամենապարտս մահու: Ընդ դանիէլի երանեալ և նբ մեծ մարգարէի, որ 'ի քում հարազատութե ազգականութե տանն յուդայի՝ շառաւիղ ընտրեալ, զնորայն առեալ ընդունական և նուիրական բանից պաղատանս, իմովս պատժականութե գուժամբ հեծութեսս՝ և այլ կրկնեցից: 'Ի մէջ գիտութեսս՝ անպատշաճականս գնացի, զարտուղի սխալեալ դժնդակա-

պէս. այս է՝ ամենայնիւ ամենայն իրօք մեղանչելն:
Ըստ սահման կշռութեան կամաց քոյ արտաքս վարե-
ցի. որ է հաւատի կերպարան բասիր անօրէնութեան:
Ընդգիտիցն չափոց՝ չարութեան գործոց լրումն յաճա-
խութեան նիւթեցի. որ է ճշգրիտ պատկեր յանցաւո-
րութեան: Ապառնացար, և ոչ զարհուրեցայ. արգա-
հատեցեր, և ոչ երբէք լուայ. որ է ապստամբութեան
յայտնի նշանակ: Քեզ արդարութիւն հանդերձեցեր
բարերար, և ինձ ամօթ և պատկառանս պատրաս-
տեցեր. քեզ փառս վայելչականս, և ինձ նախատինս
յարմարաւորս. քեզ քաղցրութեան յիշատակ, և ինձ
[2] մաղձ քացախեալ 'ի կատարածի. քեզ բարեբանու-
թիւն անլռելի, և ինձ ձայնս ողբոց աղաղակի. քեզ
օրհնութիւնս երգոց խնկելի, և ինձ մերժումն տարա-
գրութեան [3] անյուսալի. քեզ իրաւունս բազմարժանիս,
և ինձ պատասխանատուութիւնս ամենավարանս. քեզ
բարձրութիւնս անճառ գովեստից, և ինձ զաձիւն լը-
զելոյ՝ [4] պատիժ ձաղանաց:

ե. Եւ արդ [5] ընկալար դու բարեաց ընտրութեանց
անկշիռ սահման՝ զքոյոցդ ախորժականաց կնդրկաց
պտղոց վերառեալ ըստ քեզ, և ես զիմոյս ատէն առ-
մին պարսաւանս յօգունս՝ կրկնակի բարդեալ ինձ
ըստ իս: Իսկ եթէ անարատիցն մաղթանաց այս էր
յանձնառուն, իսկ ինձ զո՞րս հիւսեցից չարս և տաղս
բանից զորովականաց, որ քան զամենայն դժնեայս՝
յաւէտ վրիպեցայ: Մոլորեցայ [6] անառակ ընթա-
ցիւք՝ 'ի միտս վայրենիս. յանդգնեցայ շրթամբք խօ-
սից՝ 'ի բանս երկրաւորս. զակատեցայ անկասելի՝ 'ի
պատկառելեացն գործոց: Փքացայ, վերացայ, որ
յետ սակաւ մի ժամանակի 'ի հող մահու եմ իջա-
նելոց. գոռոզացայ, բարձրացայ, որ [7] և ոչ զպրա-
ւական հոգւոյս տուրևառութեան շնչոյս՝ ունիմ 'ի ձե-
ռին: Ըմբարտաւանեցայ փոշիս շնչաւոր. ամպար-
հաւաճեցայ կաւս ձայնաւոր. հպարտացայ հողս ա-
նարգութեան. 'ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի. [8]
բազուկ կառուցի բաժակս մանրելի: Տարածեցայ
առաւել իբր վէհ, և դարձեալ իբր զհերքեալ առ
իս ինքն ամփոփեցայ: Ըարկութեան բոյով ցոլացայ
տխղմ բանաւոր. իբր զանմեռ ոք մեծամտեցի, որ

ընդ քառատանեաց մահու եմ փակեալ։ Գիրկս ար-
կի կենցաղոյս սիրոյ, և 'ի քեզ թիկունս՝ փոխանակ
դիմաց դարձուցի. 'ի թուիչս մտաց՝ ընդ խաւար
խորհրդոց սլացայ. զանարատ հոգիս՝ մարմնոյս փակ-
կութբ յաւէտ վտտեցի. զզօրութի աջական կողմանս՝
տկար արարի, [9] ահեկանացս կայից ուժգնութի տա-
լով յաղթեցի։ Օ՜ քեզ իսկ [10] տեսի հոգացեալ վասն
իմ, զոր չէ՛ աստ գրելի, և ոչ պատկառեցի. իբրև
զհաւ վայրենի սրացայ, ըստ ովսէեան բանին առ-
եփրեմ, 'ի նախնին իմ սովորութի։ [11] Յաղօթարանն
վայրի՝ ընդ պատաղմունս այսր կենցաղոյս շրջանա-
կեցայ. ոչ կացուցի յատին [12] զերիվար մտացս՝ երա-
սանաւ բանին։ [13] Ընդ հին չարութեցն՝ նորոգ ինք-
նաստեղծութիս գտի. անուրս ըստ յոբայ, ծանուցս
և անտանելիս՝ ինձէն ինձ սաստկացուցի. [14] առիգած
անկարկատելի, ըստ երեմիայի, զանձն իմ արարի. [15]
իբր զվիժած անգրելի կոչման, ըստ առակարկութին,
'ի մարդկանէ համարոյ եղծայ. իբր զհանդերձս ինչ [16]
ապարահից, ըստ եսայեան բանին, զազրացայ. որ-
պէս զթրծեալ աման խեցեղէն՝ փշրեցայ անար-
ծարծելի. ըստ բամբասանացն եզովմայ 'ի մարգա-
րէէն, զչորրորդ չափն անօրէնութեան սատակման՝
ինձ պատրաստեցի։ [17] Եւ զինչ սուտթի առ այս՝ և
զայս յաւելուլ ընդ այս. քանզի զվրանն իսկ դիւա-
նուէր մողոքայ առի ինձ այսրէն՝ առ դժոխոցն ժա-
ռանգութի, լքեալ զերկնայինն յեղանակաւ իմ օրի-
նակի [18] նմանակիր ձևակերպութեան, որպէս առակ
պատկերի աստեղն ռեփանայ բաբելականի՝ յիսրայէ-
լէ պատուեցեալ ցուցաւ 'ի սինայ։

Գ. Իսկ արդ՝ զի 'ի նախնի շնորհին համարձակու-
թէ դարձեալ՝ փոխեցայ, զրկեցայ, ելայ, հեռացայ,
բաժանեցայ, և անպատուաստելի կորեցայ, [19] արդ
ընկալ զիս տէր վերստին կերպարանեալ 'ի պատկեր
հոգւոյ, զանարժանս կենաց՝ իբր զմահապարտ. իբր
զչարագործ. իբր զպատկառեալ. իբր զկոխան եղեալ
բանսարկուին. որպէս զհասեալ յատակս մահու.
որպէս զգարշեցեալ. որպէս զխոտան գտեալ քո կոչ-
մանդ. որպէս միանգամայն 'ի կորուստ վարեալ. որ-
պէս դեգերեալ. որպէս վանեցեալ. որպէս տարա-

կուսեալ. որպէս թշուառացեալ. որպէս վհատեալ. որպէս կործանեալ. որպէս խորտակեալ. որպէս բեկեալ. որպէս զթախծեալ. որպէս յոգի տրտմեցեալ. որպէս թշնամանեալ։ Իսկ դարձեալ ակնարկելով քո՝ գթած, մարդասէր, հզօր, 'ի յաղերս բանիս՝ որպէս զղջացեալ. որպէս խոստովանեալ. որպէս 'ի յոտս քո դիմեցեալ. որպէս զապաշխարեալ։ Որ կշռես, գրես և մեծ համարիս զհառաչ հոգւոյ, և զազդումն շնչոյ հեծութեան, զկսկիծ շրթանց, զպասքել լեզուի, և զտխրականութիւն երեսաց, զկամս խորհրդոց, և զյօժարութիւն խորութեան սրտից։ Որ փրկութիւն ես անձանց, և տեսող ոչ գործեցելոց, և ստեղծիչ բոլորից, և բժիշկ վիրաց աներևութից, պաշտպան յուսացելոց, և բարեխնամօղ տէր ամենեցուն։ Եւ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս. ամէն։

---

(1) Ըստ Դանիէլի։ 'Ի վերայ աղօթիցն Դանիէլի. որ 'ի Դն. Թ. 4. 5. յարմարէ զյաջորդ բանսն։ Խնդիր պատճառականութեան. խնդիր հեծողական գոչմանց պատճառաբանութեան՝ յաւելից 'ի բանս Դանիէլի։ 'Ի Դէջ Գիտութեան. գիտութեան օրինաց քոց՝ անկարգաբար վարեցայ, և խոտորեցայ չարաչար. որ է Ամ Իրօք Մեղանչելն. այսինքն գիտութեան և չարութեան։ Ըստ Օրհնման. արտաքոյ ուղղութեան կամաց քոց եղի, որ է խակութիւն կամ բուն համագամանք Չարիք Անօրէնութեան. այսինքն դարձելի անօրէնութեան։ Անգիտութեամբ, անգիտելի չափոց կամ բազմութեան չար գործոցս՝ զկատարումն յանձնութեան գործեցի, որ է բուն Նշանակ Յանցաւորութեան, կամ անխրատութեան։ Մեղանչեցաք, և ոչ երկեայ. ապաշխեցեր, և ոչ լուայ. որ է Ապատամբութեան Նշանակ։ Յայս չորեսին հաստատեալ ընդարձակէ զչորեսին խօսս Դանիէլի և երից մանկանց. այսինքն Մեղաք, Անօրինեցաք, Անիրաւեցաք, Ապստամբեցաք։ Այլ՝ եթէ Նոքա անմեղք և բարեգործք այսպէս խոստովանութիւն յանձն առնուին զմեղուցելոց, պարտ է առ՝ աւելի ևս քան զնոցայն ամբաստան լինել զանձն մեղանաց։

(2) Մաղթ Փոխարէնաւ։ Որպէս յետ աւելորդութեան՝ քացախման ատամանց, և մաղձն դառնանայ, այսպէս Լնձ դառնութիւն սրտի և խղճի մտաց լինի 'ի Խոստովանելն, յետ կատարման մեղացն, կամ 'ի մահուանն։

(3). Անյուսութիւն։ Չիք 'ի Կ օրինակ։ Իբր Սրտանց։ Ըստ անձնառ երախտեաց քոց տուցար քեզ խրատուն 'ի վերայ իմ յոյժ արդարացեալ, իսկ Լնձ ապերախտիս մնայ պատասխանի լի տարակուսանօք. Եւ կարծեմ 'ի չքմեղս լինել. թէ ջատագովել կամիցիմ, անդէն պապանձիմ։

(4) Պատիժ Յանցանաց։ Լնձ արժանի է պատիժ խայտառակութեան, այս է՝ պատիժ զմոխիր լիզելոյ։

(5) Ընկալեր Տէր։ 'Ի փոխարէն բարերարութեան որ առիս, ընկալար դու զանկշռելի Օրհնման, կամ չափ Բարեաց Ընդունելեաց, այսինքն զանազան գովելի անուանց՝ զորս յիշատակեցի, այս է՝ արդարութեան, փառաց, քաղցրութեան, օրհնութեան, խրատանց, գովեստից, եւն. որք են իբր կնդրուկ

խնկելի, և պտուղ ձեռնտուական յարարածոց՝ ըստ Պէղ, որպէս վայել է քեզ 'ի հատուցումն պարգևաց քոց ։ Իսկ ես Ը՟Հակառակն 'ի հատուցումն մեղաց իմոց ընկալայ աստէն բազմապատիկ պարսաւանս, ըստ Իս, որպէս վայել է ինձ ։ Մարթ է և ս զբաւան անկշիռ առհման մեկնել իբր կոչական ․ Ո․ ընկալեալ դու ով անկշռելի առհմն բարի և ընտրական կատարելութեց՝ զհատուցումն արժանի պատուոյ գովութե ։

(6) Ընտանի ընդունիր ։ Անամօթ կամ անկարգ ընթացիւք մոլորեցայ 'ի ճշմ ճշմարտին, 'ի խորհուրդս օտարս, կամ աղտամերձականս ։ Յանդգնեցայ ընդդէմ խորհրդ, փոխանակ սաելոյ՝ խօսիւք չրթանց ։ Զանխափ անխափանելի, մոլեգնեցայ, խոտորեցայ առանց կանելոյ կամ գաղարելոյ 'ի պատկառելի գործոց ։ Յայտնիկ բանս կարգաւ խստովանի զմեղս խորհրդոյ, բանի և գործոյ ։

(7) Եւ ոչ զգրաւական ։ Զունիմ յիմում իշխանութե և ոչ զամբոււն կմ զպահպանութի հոգւոյս, որ է տուրևառութի շնչոյ ։ Մի օրին ․ գրէ, և ոչ զգրաւական ընդոյս փառաբանութե ։ այլ օրին ․ և ոչ զգրաւական հոգւոյս փառաբանութե ընդոյս ։ այլ օր ․ և ոչ զգրաւական ընդոյս փառաբանութե ։

(8) Բաղդատ խառնակի ։ Զբաղումս ընդդէմ քեզ վերացուցի մանրելի բաժակս ․ որ գիւրաբեկ անօթս եմ իբր խեցեղէն կամ ապակի ։ Թուի ակնարկել յասացեալն վասն բաբելոնի, բաժակ ոսկի 'ի ձեռին տն ․ բայց զի ընդդէմ դարձաւ ԱՅ, փշրեցաւ խաղաղ ։ (Երեմ ․ ծա․ գ․ ծ ․ 24․ 29 ։) կմ, ըստ ըստ րստ օրինակ առնու զարբեալ ոք, որ 'ի զայրացման ունելով 'ի ձեռին զբաժակն նովաւ հանդերձ ձգէ զբաղում ընդդէմ այլոց, և անդէն մանրի բաժակն ։

(9) Անհնարակ խոյս ։ Զախոյ կողմանս, այսինքն յոժարու մարմնոյ և սատանայի ուժգնութի տալով, յաղթեցի ․ յաղթահարեցի, կմ նուաճեցի զաջակողմն բարեաց ․ կամ, յաղթ արարի, ա մեծացուցի և յաղթօղ արարի զձախակողմս 'ի վերայ աջակողմանս ։

(10) Տեսի հաջողեալ ։ Այսու կամ զտեսիլն ասէ՝ որ տեսանդի, թէ ետես զյն մանուկ 'ի գիրկս տծամօրն, զոր և աստ չէ արժան գրել ասէ՝ վասն ամօթոյն կամ խոնարհութե ։ Եւ կամ զհոգւոյն քո 'ի պարտէզին ասէ ․ աչօք հաւատոյ տեսի զքեզ հոգացեալ և տրտմեալ վասն մեղաց իմոց ․ զոր չէ արժ գրել ․ Ա զոր զանց առնեմ աստ գրել, այլ թողեալ ․ կամ զոր ամաչեմ յիշել աստ ։

(11) Յանցաւորաց հանել ։ 'Ի տեղւոջ աղօթելոյ կմ աղօթից յաշխարհական զբաղմունս պատառեցայ ։

(12) Զերծեալ ստանց ։ Զմիտս իմ որ անկեալ էր 'ի ճանապարհ կամ 'ի տիղմ մեղաց, ոչ 'ի վեր կանգնեցի Երանութեան բանիւն, հրամանաւ և իշխանութե կամաց, կամ մտածութե բանիցն այդ ։

(13) Ըստ հին առաւօտեցն ։ 'Ի վերայ նախկին ախտից առաւելեալ բնութես, կմ 'ի վերայ չարութեց առաջին մեղաւորացն՝ ես նորանոր չարիս յինէն առեղծի ։

(14) Ախտազնի ։ Սփածանելի, կմ կատու առ 'ի զգածիլ մարմնոյ ․ որոյ սաստն՝ զոր կանայք արկանեն զանձամբ ։

(15) Իբր զնծօղ ։ Իբրև զանցուցեալ տղայն, անդրէն խօսիլ, որոյ անունն ոչ գրի, կամ ջնջեալ 'ի համարոյ մարդկան ․ (ըստ ժողովողին ․ զ․ 3 ․ 4 ։)

(16) Ապարահնով ։ Այսր զնի ոչ միայն յօրինակս, այլև 'ի բանն եսայեայ (կզ ․ 6 ․) ըստ ձեռագրաց ․ նաև 'ի մեկնութեն գէորգայ վարդապետի, և յայլ բազում գիրս գտանեմք գրեալ ապարահ, իբր առաւել ընտրելի ․ թէպէտ և գոյ ևս գրեալ ապահար ։ նշանակէ գաշտան ․ (ամտակալը բնած կլն ։) ըստ Բոմբանացն Երգոմայ ։ Նման յանդգնութե

մարգարէին ամոսայ (ա. 3.) արարեալ առ եդոմայեցիս, որպէս և առ այլս հեթանոսաց՝ լցի և ես զբոլորոյն չափ մեղաց նոցա, որում զհետ գայ վրէժխնդրութիւն այ:

(17) [illegible]: Չիք ասէ ստութիւն ինչ, եթէ 'ի վերայ-գրեալ յաւելից և զայս, իբրև [illegible]: որպէս խրատելոցն փոխանակ այ աւելի զկամին մարդկայ. (ըստ ամոսայ. Ե. 25.) յորում լինէին նուիրմունք դիւաց, այսպէս և ես աւելի զախտս մարմնոյ՝ և զսէր արարածոց. [illegible], որով զգծովս չհեցայ, թողեալ զերկնային ժառանգութիւն. որպէս և խրատելոցն վասն կռապաշտութեան՝ փոխանակ երկրին աւետեաց՝ զանապատն ժառանգեցին տեղի ոսկերաց իւրեանց: Եւ այս եղև յոր և նման այնմ, որ-[illegible], որպէս օրինակն պատկերի աստեղն աստուծոյ հռեմփայ պատուեցաւ յիսրայէլացւոց 'ի սինայ՝ 'ի սրբազան տեղւոջ ածգի-տութե. այսպէս և ես՝ զախտս մարմնոյ՝ զկամս սատանայի պաշտեցի յեկեղեցւոջ, 'ի կրօնաւորութեան, ևն: Ըստ հաւանականագոյն կարծեաց մեկնչաց՝ [illegible], զոր այսու անուամբ պաշտէին ամմոնացիք, էր սերապիս եգիպտացւոց, զորոյ արձանն կազմէին 'ի ձև որթու կամ ցլու, և 'ի ճակատ նր պատկեր արեգական, և 'ի կողմանս նորա լուսին պակասեալ: Իսկ [illegible]՝ ըստ ոմանց է նոյն ինքն սերապիս եգիպտացւոց. ըստ այլոց՝ է արուսեակն, զոր 'ի ձև աստեղ պաշտէին եգիպտացիք, փիւնիկեցիք, և սարակինոսք: Եւ ոչ վարդապետս փոխանակ աստղոյ [illegible]՝ դնէ [illegible]. զի այսպէս դնեն լաւ օրինակք եօթանասնից 'ի բանն ամոսայ: Արդ՝ ասէ թէ զաստղն ռեփանայ պատուեցին իսրայէլացիք 'ի սինա. զոր եթէ նոյն համարեսցուք ը մոլոքայ կամ սերապեայ, յայնժամ խմանի որթն՝ զոր արարին նոքա յանապատն սինայ. (ելից. ԼԲ. 4:) Իսկ եթէ այլ համարեսցուք 'ի սերապեայ, տակաւին ճշմարիտ՝ թէ 'ի սինայ պատուեցին իսրայէլացիք. զի յեգիպտոս ուսեալ էին. և յելանելն անտի՝ զպատկերն ունէին ը իւրեանս 'ի ծածուկ. վասն որոյ յորժամ հանգիստ կանգնեցաւ պաշտօն որթուն, համարձակեցաւ և զայլ կուռս պաշտամունս յայտնել կատարել ժողովուրդն: Այսպէս դնեն հաւատարի մեկնիչք. որպէս և նշանակի այս յեզեկիէլի (ի. 7. 8.) և զբանն ամովսայ (ե. 26.) այլև զբն ստեփաննոսի. (գործոց. է. 43.) խմանան 'ի վերայ կռապաշտութեան՝ զոր արարին իսրայէլացիք յանապատին: Իսկ զի ասէ [illegible], ոչ եթէ 'ի բաբելացւոց աւելի զպաշտօն ռեփանայ, այլ զի և բաբելացիք պաշտէին զայն:

(18) [illegible]: 4 օրին. [illegible]: այլև հետևեալն այսպէս դնի, [illegible] 'ի [illegible]:

(19) [illegible], վերստին նորոգելով 'ի [illegible], 'ի հաղորդութիւն հոգւոյդ մէջ, կմ 'ի կերպարանս բանականի. զի մարմնոյս ծառայելով 'ի մարմին գործոյ իբր անբան: Ընկալ զիս ասեմ զանարժանս կենաց՝ [illegible], ևն, հայելով 'ի չար գործս իմ: Իսկ [illegible], բայց նայելով [illegible], ընկալ զիս [illegible], և այլն:

(20) [illegible]: 3 օրին. [illegible]:

Մերտէն յաւելուած Յունգին Հեծութեան՝ նորին հոկոյն, առ նոյն
ողերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

# ԲԱՆ ԻԱ:

ա. Եւ քանզի ես ինձէն անձամբ իմով [1] ինքնա-
գրաւ 'ի մահ՝ ոչ կացի երբէք 'ի յոտս մար-
դոյ, և ոչ սիրտ բանականի ստացայ, ըստ գրոյն:
Եւ քանզի ոչ փոփոխեցայ 'ի նախակարգելոցդ, և
ոչ ընդ բարւոք ուղին ընթացայ, ընդէր ոչ զխոտոր-
նական հետոցն խաւարայնոց զդէմս ցուցից 'ի սահ-
ման կարգի այսր ընթերցուածոյ: Առ որս ածեալ
յարմարեալ առ սոյն՝ զկերպարան տեսակի բանից-
երեսաց, ըստ վերագոյնդ նշանակելոյ՝ անփոխադրե-
լի պահելով, խոստովանեցայց վերստին դարձեալ
աստանօր զմնացեալ չարութեցն զբիծս, զոր յաջոր-
դաւդ է իմանալի:

բ. Օտար ժամտագործս արժանապատիժս՝ անձե-
ցուն արարի [2] գնացիւք անսաստութե զգունդն բե-
լիարայ: Կաքաւս կայթից և ցոյցս վազից խաղա-
կացն դիւաց գարշելեաց Ճարտար խաբողաց՝ ծուլու-
թիւս իմով շնորհեցի: Պանս գաղտնիս՝ և խոցուածս
անյայտս 'ի կործանեցելոցն դաւաճաց ընկալայ: Ո՛չ
հերքեցի զվանեալսն խաչիւն քոյ, քան թէ անդրէն
առաւել կրկին իսկ զօրացուցի: Վասն իմոյ հիքոյս
անօրէնութե անուանդ Յի հայհոյի [3] 'ի մէջ այսականաց,
որպէս վասն իսրայէլի 'ի մէջ հեթանոսաց: Յարուածս
հարուածոյ՝ փաստակարս ապականութեց [4] ժանդոյ
և թրթրոյ և այլոց կերչաց վատնողաց զծաղիկ հոգ-
ւոյս, ըստ սքեյն յօվելեայ հրաշական ողբոցն, որ 'ի
ցոյցս երկրի վասն իսրայէլի՝ յառակս հինից և չա-
րաց հոգւոց, յիս ինքն տնկեցի. ստեղծանել զնոսա
պատրաստեցայ, քան թէ սատակել: Բիւրս կու-
տեալ հաւաքեցի անձին իմում մարտիկս մահաբերս.
կշտամբիչս ինձ գոյացուցի՝ անխրաւս և անպատկա-
ռելիս. ներհակս ինձ զօրացուցի՝ ապառումն և ան-
կռուելիս. [5] դառնիս ինձ առի մասունս՝ ընդ քաղց-
րաւենեացն ճաշակաց. առ ստացօղն՝ միշտ նենգա-

ւորս, և առ բանսարկուն՝ յաւէտ հաւատարիմ։ Տեառն աղէտիս, [6] վիշտ վտանգիս, խաւար ամօթոյս, մութ պատկառանացս. [7] զխա՞րդ և առ բանիս յանդիմանութիւն համարձակեցայց. մեծ է ձայնս դուժի, և անբերելի բողոքս աղաղակի։ Քանզի թէ զհոգիս էր զիմ՝ տեսանել, [8] տգեղս և նուաղս և ամենևին ներգևեալս, ցաւովք հեծուէս 'ի վերջինս վարեալ վարանումն, և մրձոտեալ աղտեղեալ գունով զաղբութեան՝ իբրև զպաշտօնատար մեհենի. վասն զի նոյն է սպաս տանել ձուլեալ պատկերի, և մեղաց ախտի։ Արդ՝ ես գնացի ընդ այս ճանապարհ կորստեան հետոց խաւարի. ետու [9] զբաժինն քո ցանկալի՝ յանապատ անկոխ, ըստ մարգարէին՝ որ առ քահանայսն իսրայէլի ամբաստանութեան։

Դ. Ու զխա՞րդ ասացից անձին իմում մարդ՝ գրեալս ընդ անմարդիս. և իբր անուանեցայց բանական՝ անբանիցն յիմարութեան կցորդեալ. և որպէս կոչեցայց տեսանողական՝ մթացուցեալ զլոյսս որ յիս. և ընդէ՞ր համբաւեցայց զգայական՝ զիմաստից դրունս փակեալ. կամ որո՞վք ցուցայց [10] տպաւորութի նկարագրութեան անեղծին շնորհի՝ անձամբ ինձէն յոգի մահացեալ. նաև ո՛չ շարժողական և կամ շնչական ունիմ անուանել, թո՛ղ թէ հոգեկան, կամ [11] մտաց ընդունական. անպիտանս 'ի թիւս անօթոց. անարգս 'ի քարինս որմոց. արհամարհեալս 'ի կարգս կոչեցելոց. վատթարս 'ի յազգս հրաւիրելոց. արհաւրօք մահու պակուցեալս, [12] անխրախուսելի 'ի բոլորեցունց՝ ցաւովք և տանջանօքն երուսաղեմի, ըստ երեմիայի բանին խրատեցեալ. պակասեալ աւուրցս 'ի հեծութէ, և ընթացք ամացս՝ 'ի հառաչմանէ, ըստ նուագարանաց երգողին։ Իբր ասուի 'ի ցեցոյ՝ և փայտ 'ի յորդանէ, ըստ իմաստնոյն բանի, 'ի խիթմանէ սրտիս հալեցայ. իբր զոստայն սարդից մաշեցայ, ըստ սաղմոսողին, և խոտան գտայ. իբր զամպ առաւօտեայ և զցօղ վաղորդայնի, ըստ մարգարէութեան ձայնի, սպառեցայ։ Այլ ո՛չ 'ի մարդ ոք ունիմ զյոյս եթէ [13] անխծեալ 'ի տեսանողէն՝ անյուսադրելի վհատիմ. այլ 'ի քեզ՝ տէր իմ ողեսէր, որ ընկղմեալ 'ի քոյդ գթութենց բարեաց անբաւից, և

'ի բևեռելոյն ժամու 'ի խաչին [14] մաղթեցեր մեծդ ողորմութե՛ առ Հայր քո բարձրեալ՝ քո չարչարողացն։ Որդ՝ շնորհեա՛ ինձ յոյս քաւութե՛, կեանք և ապաւէն. և 'ի [15] տուր շնչոյս թշուառի՝ առից զոգիդ քո բարի։ Եւ քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով՝ զօրութիւն, յաղթութիւն, մեծութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

---

(1) Ինքնագրաւ 'ի մահ։ Ես ինքնին կամաւ դրաւեալ կամ մատնեալ 'ի մահ մեղաց և դժոխոց, ոչ կացի յոյս ճարտրոյ։ Զտեսիլ գազանին՝ որ ցուցաւ Դանիէլի (է. 4.) յինքն յարմարէ. ոչ կացի ասէ՝ ուղղորդ, գլուխ 'ի վեր, և ոտք 'ի վայր, որպէս է ձևն մարդոյ. այլ անասնաբար բովանդակ յերկիր խոնարհեցայ. և ոչ սիրտ բանականի ստացայ, բանիւ վարելով 'ի գործս իմ։

(2) [illegible]։ Գործովք անհնազանդութե՛ և ստահակութե՛ աճեցուցի զպտուղն սատանայի, ըստ որում և ես յաւելայ 'ի թիւ նոցա, և չար օրինակաւ զայլս բազումս գթեցուցի։

(3) 'Ի մէջ այսոց։ Վասն իմոյ անօրէնութե՛, հեքոյս՝ յետին անպիտանիս՝ սքանչելի անուն փրկչիդ իմոյ հայհոյի 'ի մէջ այսոց կամ դիւաց։ Զբառդ այսոց իբր գոյական 'ի կիր առնու նաև 'ի բանն ղա. 1։

(4) Ժանգոյ և Թրթռոյ։ Զակէսպէս պատահարս, [illegible], մխասիչս յապականել, գործօղս ապականութե՛, խանգարիչս. Ժանգոյ, (որ է ոջիլ բուսոց.) և այլոց ապականիչ ճճեաց, զորս Յովէլ յիշատակէ (ա. 4.) վասն երկրին Իէլի, յօրինակ հինից և այլոց թշնամեաց ապականչաց երկրի նոցա, ես զնոյնս յանձն իմ կրեցի զանազան մեղօք։

(5) [illegible]։ Անի, ճաշակեցի դառն իմս խորհրդոց և գործոց, [illegible], փոխանակ քաղցր ճաշակոց ծառայութե՛, կամ առաքինութե՛։ Կամ, 'ի միասին ընդ ծայլին քաղցր պարգևաց՝ խառնեցի զդառն կիրս, զչար գիտաւորութի՛, զախտաւոր շարժմունս։ Այսու ամենայնիւ, [illegible], առ արարիչ և փրկիչ և պահպանիչ՝ միշտ եղէ նենգաւոր, անհաւատարիմ, իսկ առ անհաշտ թշնամին սատանայ՝ միշտ հաւատարիմ։ Որչափ ողբալի է այս վիճակ, որչափ ամօթալի. և զոր մանաւանդ իսկ՝ զիարդ համարձակիմ ես ինքնին յանդիմանել զայս։

(6) [illegible]։ Այսորիկ են եղանակք աւաղական միջարկութե՛, փոխանակ ասելոյ, վա՜յ վշտացս վտանգի, վա՜յ խաւարի ամօթոյս, ևն։ Կամ իբրև բացագանչական ցուցանէ զսաստկութի՛ վշտին, խաւարին, ևն, իբր ասել։ Որպիսի վիշտ. որպիսի խաւար, ևն.

(7) Զիարդ [illegible]։ Որպէս համարձակեցից 'ի յայտնել կամ 'ի հրատարակել զողորմելի բանս իմ. կամ, զիարդ իշխիցեմ երևել այլոց, յորժամ բանքս իմ յայտնեսցին, և ամենեքին ծանիցեն զամօթալի սահման անձին իմոյ։ Սաստիկ է բօթալից ձայնս, և անտանելի մեծաբարբառ բողոքումս զանձնէ իմմէ։

(8) Տգէտ [illegible]։ Աստանօր զօրութե՛ կրկնելի է բայն [illegible] իբր ասել. Քանզի եթէ հնար էր տեսանել զհոգիս իմ, [illegible] զայն [illegible] և նուաղեալ. և ամենևին [illegible], ոսկարացեալ, թուլացեալ. և 'ի ցաւոց հեծութե՛ խղճի մտացն [illegible], 'ի յետին տարակուսանս անկեալ։

(9) [illegible]։ Բաժին ոյ տիրապէս՝ հոգի մարդոյն է. զի մարմին և այլ մարմնական ստացածք՝ երկրի են, և յերկիր գնան, իսկ հոգին առ

Ած դառնայ ։ Զայս բաժին քո առէ՝ Եփր. յանապատ, առալի որպէս անապատ, զուրկ 'ի պտղաբեր բարեաց, և ախտից գազանաց եղեալ կոխան և բնակութի, որպէս յանդիմանէր երեմիաս. ԺԲ. 10 ։

(10) Տգեղութիւն նկարագրութեան ։ Որպէս երևեցայց պատկեր կամ նմանութի անեղծին Էութեան, անմահին այ ըստ շնորհաց արարչութե, կամ ը̅ որբարար շնորհաց, որ անձամբ սպանի զհոգի իմ մեղօք ։ Զբան պատկերին առ Ած՝ ըստ անմահութեն եւ առնուն վարդապետք, 'ի բանէ անտի (իմաստ. Բ. 23.) * Ած հաստատեաց զմարդ յանեղծութե, և 'ի պատկեր իւրոյ բարերարութեն արար զնա ‖ ։ Ուստի առէ, ո՞րպէս ձևամ ես պատկեր այ, որ անձամբ զանձն մահացուցի ։

(11) Մտաց ընդունական ։ Է մասն սահմանի մարդոյն՝ ըստ աւանդելոյ նախնեաց, որք սահմանէին զմարդ, կենդանի բանաւոր, մահու և հանճարոյ ընդունական. այսինքն ունօղ կամ ընդունօղ մտաւորութեց իմաստից ։ Մեղօք խելք կորուսի առէ՝ որ ինչ է յիս բանական կամ զգայական. անբանից յիմարութե նմանեցայ, տեսանելեօք խաւարեալ, զգայութիւնք իմ ապշեալ. և ոչ շարժողական կամ շնչական կոչելոյ արժանի եմ. զի առ բարիսն անշարժ եմ, և շունչ իմ յանզգայութի փոխեալ ։

(12) Անխրախուսելի 'ի բարերարութենէ ։ Այսպէս ընթեռնուլ ը̅ լաւ օրինակաց ուղիղ եւս է, քան թէ 'ի բարերարութենէ ։ Անմխիթարելի եմ առէ՝ յամենեցունց՝ նման ցաւոց և տանջանացն երուսաղէմի. զորմէ ողբայ երեմիաս, ո՞ մխիթարեսցէ զքեզ, ևն ։

(13) Անծնեալ 'ի քեռանոզէն ։ Զայս իմ առէ՝ ոչ եմ եղեալ 'ի մարդ ոք, որով արժանի անիծից լինելով ըստ երեմիայի, (ԺԷ. 5.) յուսահատութե լքանիցիմ ։ Այլ յուսացեալ եմ 'ի տէրդ իմ ոգեկէր, որ ընկղմեալ 'ի ծով գթութեց, որ 'ի զեղմանէ անբաւ գթութեց քոց ոչ թէ ընկղմեցի, բոլորովին ըմբռնեալ, և անտես արարեալ զպղծութիւն ցաւոց խաչին, անդէն մինչ բևեռեալն կայիր՝ վասն չարչարողացդ աղօթէիր ։ Ով անսահման գթութենն ։

(14) Մաղթեցէք Ծծտ ողորմութե ։ Մաղթեցեր զմեծ ողորմութիւն 'ի հօրէ վասն քոց չարչարողացն ։ Կմ, մաղթեցեր դու՝ որ մեծդ ես ողորմութբ, կմ յողորմութե, ըստ առաքելոյն (եփես. Բ. 4 ։)

(15) Եւ 'ի տօւր հոգւոյ ։ Յաւանդելն զթշուառ հոգիս իմ, առից զհոգի քո բարի ։ Կամ, հայի 'ի բան սաղմ. ԾԺԲ. 131. * Զբերան իմ բացի և առի զհոգի ‖ ։ Յորժամ խոստովանութբ բանամ զբերան իմ, ընկալայց զհոգի շնորհացդ ։ Վասն այսորիկ Դարձեալ այլաբանեցից. (ԻԲ) զյանդիմանութի անձինս նկարագրեցից պէսպէս նմանութբք. զի այս լիցի խոստովանութի գաղտնի չար գործոյս ։

---

Սերովբէն յաւելուած հրէէն հեծութէ՝ Նորին հոգւոյ, առ նոյն աղէրս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԲԱՆ. ԻԲ.

Ա. Դարձեալ այլաբանեցից՝ 'ի նոյն շարունակ բարդեալ զկշտամբանացս եղանակ՝ զորովեալ անձինս, ածեալ մատուցեալ՝ կրկին կացու֊

ցեալ նովին պատկերաւ 'ի նոյն պայմանի. Թերեւս գրեսցէ ինձ ամենագէտն՝ զայս յանդիմանութե՛ դատակնիք կսկծեցուցանողականս բանի՝ ճշմարիտ խոստովանութի՛ համայնից գործոց՝ գաղտնութե՛ց չարեաց:

Ե. Ա՛յլ ո՜հ [1] ձիս խօսնական՝ կարծրերախ սանձակոտոր արձակերասան. յովանակս անհամբոյր՝ վայրենական և անկրթական. [2] երինջս աւողական անուղղական և անվարժական: Մ՛արդս մոլեգնական տարագրական և կորստական. մանուկս մեղանչական անխրատական և վարատական. տնտեսս մահապարտական՝ տարտամական և անգործական. [3] բանականս անասնական՝ գազանական և անմաքրական: Զինենիս ամայական՝ անպտղական և կործանական. [4] մարմինս հոգւոյս իմ Թախծողական՝ դատողական և տանջողական. խոցեալս անբժշկական անխնամական և անկանգնական: Ո՛սկի շարս կայսերական՝ [5] արգւլատնական և անգտական. ծառայս սխալական՝ փախստական և Թշուառական:

Զ. Ա՛հա ես ինքն ինձէն կամաւորապէս [6] անձնամատն և մարմնակործան, հոգեկորոյս և միշտ մոտախաբ, կամակոր իսկ՝ և սրտաբեկ, ուշամոռաց և հանճարազրաւ, զգայազիրկ և իմաստասպառ, յայրատատես և եղեռնալուր: Ե՛ս աստուստ և անդուստ բնաւիւք բորբոքմամբք մահաբեր երկամբք փասեալ, ո՛չ միով իւիք տեսութեամբ 'ի գործ ընտրութե քեզ պիտանացուս տէրդ բոլորից, ողբամ զորովայնն որ երկնեացն զիս. աշխարեմ զստինսն, որ դիեցուցին. ընդէր ո՛չ մաղձ մակարդեալ ընդ կաթինն ձգեցի, և զիա՛րդ ո՛չ դառնութի ինձ ընդ քաղցրութե ջամբեալ մատուցաւ: Օ՜ի եթէ ես ինձէն անձին իմում դժնեայ դատախազ համբարձայ այսքանեօք բանիւք, և ունիմ տակաւին զսուր բարկութես անխոնարհելի, [7] ո՛վ ոք 'ի յերկրածնաց աստի զիս ողորքեսցէ. զո՛մ խայտառակեցից. զբնաւ էութիւնս դատեալ տուժեցից. զհամօրէն զվնասակարացն ըղձունդ դանեցից. զխոցողացն զինուորութեց դատախազեցից. զզայականացն գլխաւորութիս կշտամբեցից: Մ՛եղայ ամենայնիւ յամենայնի, ողորմեա ըզ-

թած. ո՛չ նոր ինչ գտեալ յիս զյանցանացս պարտեաց մառախուղ, այլ նոյն եմ յաւէտ նովին [8] պատահմամբ պարտաւորութե՛, անկցելի ձործով սխալեալ առաջի քո՝ անփոփոխելի, և դու միայն իսկապէս գթած օրհնեալ մարդասէր, ընդ աջմէ իմոյս փրկութե՛ կանխեալ ներութբ՛ անսայլայելի ։

Դ. Արդ՝ մատո՛ խնամակալ հզօր երկնաւոր բարի՝ ամենից հաստիչ յոչէից՝ զբանիւ զօրութե՛ [9] իմաստից կայծակն 'ի գործի աղդման լեզուիս շարժութե՛, առիթ մաքրութե՛ յամենուստ զգայականաց գոյաւորութեց յիս մատնաւորելոյ՝ քո ձեռակերտից. սուքօք առ 'ի քէն եղելովք և բժշկելովք, կրկին հանդերձանօք, անպակաս ձայնիւ, անհատ բարբառով, քեզ վերընծայել գոհաբանութի՛ 'ի փառս մեծութե՛ հօրդ քոյ ՚այ մերոյ, յաւիտեանս. ամէն ։

---

(1) Զէօ խօռաքան : Ածանցեալ 'ի բառէն խօռուռ. սեռ. խօռիոյ. որ և 'ի բառէն շուրթուռ, կազմի շուրթնաքոյն : Խօսումն եմ, բանական ընութբ՛, այլ բարուք չարծրէրախ, ունօղ զկարծր բերան, այսինքն դժուարասանձ: Յանբանից օրինակելով զպարսաւանս անձինն, ասել կամի. ահա 'ի մարդկային 'ի գովելի կարգաց օտարացայ. բայց և ո՛չ զանբանից զկատարելութիւնն գոնէ ցուցանեմ, այլ զթերութիւնս նոցա կրեմ:

(2) Երէնչօ տաղական : իբր հեծօղ, որ դժուարի ընդ լծով, (որբացօղ. ախուվախ ընօղ.) Թուի կազմեալ 'ի բառէն տաղ, տաղէմ, փոխանակ ասելոյ՝ աւաղողական : Ակնարկէ 'ի պատմութիւնն (Ա. Թագ. Զ. 12.) յորում երինջքն անդրանկածինք զատուցեալք յորթուց իւրեանց՝ իբր հեծելով ձգէին քարշէին զսայլն յոր եդեալ կայր տապանակն ԱԾ. և [illegible] սակայն գնային ուղիղ անխոտոր ընդ ճանապարհ իւրեանց, և մնային ՟ը լծով: Իսկ ես ասէ՝ հեծեմ ընդ բեռամբ ՚այ, այլ ոչ ուղղիմ, ոչ կրթիմ 'ի բարիս :

(3) Բանաքանօ անասնաքան : Բնութբ՛ բանական գոլով, ունիմ ՟ը բարուց զանասնութիւն անասնոց, Գազանաքան, ունիմ զկատաղութիւն գազանի, անմատրաքան, ունիմ զանմտութիւն անասուն կենդանեաց ։

(4) Մարմնօ հոգւոյ եմ : Ողբալի սահման, մարմինս որ տուն է հոգւոյս, և սմին ծառայ լինելոց էր, եղև նմա տրտմեցուցիչ, դաւիչ, և չարչարօղ :

(5) Աւրտաւանաքան : Որ խեր ոսկի շար կազմեցոյ յ՚այ, այժմ վատնեալ և ցրուեալ եղէ :

(6) Անյիմանաք : Այսու, և յաջորդ բառիւքն զբովանդակ մարդոյն մասունս 'ի Թիւ արկանէ. զբոլոր անձնս ասէ մատնեցի 'ի մեղս և 'ի տանջանս. զմարմինս կործանեցի 'ի մարմնական մեղս և յայրումն, և 'ի կըծումն որդանց. զհոգիս կորուսի հոգևոր մեղօք. մտօք խաբեալ 'ի դիւէն. կամօքս կորուսեալ խառութբ՛. սիրտս բեկեալ լքմամբ կամ անյօժարութբ՛ առ բարին. ուշ յիշողականիս մոռացկոտ. հանճար խոհականիս սպառեալ. յառողջութէ՛ ներքին զգայութեցս զրկեալ, և արթնութի՛ նոցա

կամ հմտութիւն նուաղեալ. աչքս յաղօթելս նկատեալ. ականջքս 'ի լուր չարութեց պարապեալ: Եւ արտաքոյ և ներքոյ, այսինքն յա̃մ կողմանց՝ ներքոյ և արտաքոյ, ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ա̃մ բոլորքմամբք մեղաց մխեալ, ողջամ զորովայնն. այս, և հետևեալքն հայցին միայն 'ի վիճակ սկզբնական մեղացն՝ յորում մարդն յղանի և ծնանի, և յետոյ դարձեալ 'ի ներգործական մեղս անկանի: Ընդէր ոչ հալչ. վասն էր ոչ ծծեցի խառն ընդ կաթին, կամ փոխանակ կաթին զմաղձ, կամ զմաղձային դառն ըմպելի, որով կարճեալ 'ի կենաց, ազատ մնայի 'ի պարտեաց մեղաց:

(7) Ո՛չ ոք 'ի յերկրածնաց: Եթէ ես յետ այսչափ ամբաստանութե զմեծն՝ ամկուսին զսուր բարկութեն ա̃յ տեսանեմ բարձրացեալ 'ի վերայ իմ, ա̃մ ոք 'ի մարդկանէ կարիցէ մեղմացուցանել զնա յողբոց սաստ, կամ 'ի կշտամբութեց: Ամ ղեկն չունի, զհոգիս և զմարմինս, և զզգայութիւնս դառնալ պատժեցից: Զգայականաց գլխաւորութիւն, զգլխաւորս՝ի զգայութեց յանդիմանեցից, կամ զկատարումն չար ներգործութեանց նոցա պատժեցից. զաչս՝ վասն արատ հայեցմանն յանդիմանեցից անկիրթութբ, արտասուօք կամ 'ի խաւարի կալով. զականջս՝ վասն անարժան լսողութեանց՝ յանդիմանեցից ձայնիւ ողբոց, միակեցութբ, ունկնդրութբ ա̃ծային բանին. զլեզու՝ վասն անարժան խօսիցն յանդիմանեցից լռութբ, անճաշակութբ, մեղայասացութբ, ևն:

(8) Նոյնն զպարհամբ: Հոգւոյն գունով կամ արատով պարտաւորութե միշտ երևիմ: Անյօելէ յօրյօղ, անկարկառելի, պատառատոռն հանդերձիւ յանցաւոր առաջի քո: Եւ դու ողորմութբ կաս ընդ աջմէ իմմէ 'ի փրկել զիս ևն: Թուի ակնարկել 'ի տեսիլ զաքարիայ, (զ. 2. 3.) յորում տեսաւ Յեսու քահանայ 'ի հանդերձս աղտեղիս առաջի ա̃ն, և այլն:

(9) Իմաստից խոյծանի: Որպէս սերովբէն մատոյց զկայծակն 'ի բերան եսայեայ, սրբելով այս սրբեսցէ զմեղս քո 'ի քէն, (եսայ. զ. 7.) այսպէս նաև զկիմանալի կայծակն զօրութե քո 'ի լեզու իմ. առեր հաւրաներ, զի լինիցի պատճառ մաքրութեան յա̃մ արատոյ, զգայականաց գործարանաց, զգայութեանց քո ձեռամբդ յիս բաշխելոց կամ զանազանելոց. զի լեզու խոստովանութբ լինի գործի մաքրելոյ զմեղս այլոց զգայութեանց: Որպէս զի ..., զգայութիքս՝ որք 'ի քէն եղեն, և քև բժշկին, ... վասն առնելոյդ՝ և բժշկելոյդ՝ անդադար օրհնեցից զքեզ:

Սերովբէն յաւելեալ նշէն հեծութեն՝ նորին հեշտութ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ:

## ԲԱՆ. ԻԳ.

ա. Տէր ա̃ծ ամենայնի, զօրաւոր յամենայնի. անպարագիր և անվայրափակ [1] տեղի ամենեցուն. բոլոր խկութբ հուպ յամենեսին. [2] անուրեք վայրեց, և չիք սահման առանց քո: Ո՛չ երևեալ երբէք, ո՛չ տեսականութի առանց քո ծագման լու-

սաւոր։ Փառք ահաւորութե. ³ անուն անհասութե.
կոչումն մեծութե. ձայն անբաւութե. խոկումն անքննու-
թե ։ ⁴ Անմատչելի հեռաւոր, և անընդմիջելի մեր-
ձաւոր ։ Տեսող հեծութե. նկատիչ թշուառութե.
մօտակաց թախծութե. ⁵ ամենաբոյժ հնար անձա-
րութե. հայր գթութեց. ծագող ողորմութե. ած
մխիթարութե ։

Ժ. Նայեաց տէր ողորմութե 'ի պատկեր վշտաց դառ-
նութե բազմավտանգ կրիցս կարեաց, զոր հանդէպ քո
տարածանեմ. կցորդակից լեր բժշկապէս, և մի 'ի
խոյզ ընտրութե կոչէր դատաւորաբար ։ Արդարև
մեծ է վտանգ տարակուսանաց ցաւոց այսր վարան-
ման, յորժամ իցէ մարմինն մեղօք գրաւեալ, և
անձն' 'ի գործոց չարեաց ոչ մեկուսացեալ. ⁶ գործ-
նականացն գործի' սովորութբն կարեաց կապեալ. ⁷
զանգուածն հանդերձանաց' մահացու կրիւք շաղա-
խեալ. զգայութի սրտին իմաստից' խեթիւ խոցո-
տեալ. ակնկալութի բարեացն' բնաւին բարձեալ.
և 'ի բանականութենն' ընդ անասունս դասակարգեալ.
և ⁸ զազիր գարշութի' ընդ գոյութենն շարամանեալ.
և ⁹ տեսականացն ողջ ելոյն' իմանալիքն վիրաւորեալ։
Եւ 'ի սաստկութե ¹⁰ յանցանացն յիշատակի' յաւէտ
յուսահատեալ. և տագնապաւ նախագործելոյն'
միշտ տարակուսեալ. և յստակութի աղերսին' խապա-
պղտորեալ. և խղճիւ մտացն յուզմանց' կրկին ձեռ-
ձերեալ։ ¹¹ Եւ ձեռն 'ի մաճի գործոյն' զյետնոցն
հետադարձեալ. և կերպ 'ի յառաջ դիմեալ' ոտք 'ի
վերջ կոյս յետահարեալ։ Եւ ¹² գիտութե էիցն' 'ի
չէիցն միշտ խաբեցեալ. և ¹³ 'ի մտացն մարտ' 'ի փո-
քունցն յաղթահարեալ։ Եւ ¹⁴ 'ի թառանչ սրտին'
հագագին դուռն հրդեհեալ. և խոնաւ զօրութիւն
քմացն' ամենայն ուրեք տոչորեալ, և անարև մի-
գով յամենայն մասանց պարփակեալ։ Եւ լոյսնու
ակնկալութենն' ամենևին խապառ ամփոփեալ. և ¹⁵
անբերբերեացն տոյժ' 'ի զգալիմն տպաւորեալ. և եղ-
կութի կորստեանն' 'ի յուշ անդ եկեալ. և դատակ-
նիք հատուցմանն 'ի դիւանի մտացն գրեցեալ։ Եւ
բարեբարին ակն' 'ի ցասումն իմն երևեցեալ. և լոյսն
բնութե' զմնկուածոյ հոգւոյս զայրացեալ. և ահաւո-

րութի՟ էին՝ ընդ փոքրկութի՟ բնութե՟ս ընդհարեալ,
և միշտ որոտմամբ բանից՝ բանաւոր մոխրոյս բարկա-
ցեալ, և իրաւանցն վիմօք՝ զարժանիս մահու կոչկո-
ճեալ։ Այլ որ ինձ է տաղանդ՝ յանառակս ասուէն
կորուսեալ. և պատուական իրին ստացուած՝ իբրև
անարգ յերկրի թաղեալ. և [16] տաժանմանցն արգա-
սիք՝ ծուլութե՟ն մթով ծածկեալ, և իբրև զ՚ի բաց
բարձեալ նշմարան ճրագի՝ չերևեալ։ Այլ [17] պա-
տասխանարան լեզուիս՝ յիրաւանցն օտար՝ կարկե-
ցեալ. և անհամբոյր շրթանցս դրութիւն՝ օրինաւոր
դատմամբ պապանձեալ։ Այլ [18] յուզմունք մտացս՝
'ի զանազան մասունս ցնդեալ. և զկեալն 'ի վերայ
օգտին՝ ոչ ինչ գիտացեալ. և 'ի կշռութիւն բարւոյն
ընտրութե՟ յիմար երևեալ. և ընթացք ելիցն՝ նը-
հանջմամբ չարին խափանեալ. և վառարան իւղոյն՝
աճխինովս հնոցի լցեալ։ Այլ անուանս գիր՝ 'ի կենաց
մատենէն եղծեալ, և կշտամբանք ընդ երանութեան՝
անդ արձանացեալ։

Գ. Եթէ զինուոր տեսանեմ, մահու ակն ունիմ. [19]
եթէ պատգամաւոր, խստութե՟. եթէ մատենագէտ,
մուրհակի կորստեան. եթէ օրինաւոր, անիծից. եթէ
աւետարանական, փոշւոյ ոտիցն թօթափման. եթէ
բարեկրօն, յանդիմանութեան. եթէ ապառում,
կսկծման։ [20] Եթէ ջրովս ընտրութե՟ փորձիմ, խոր-
տակիմ. եթէ դեղ ինչ դատման ձգեմ, սատակիմ։
Եթէ [21] բերս նկատեմ բարութե՟, 'ի կարծեաց չա-
րեացս փախնում. եթէ ձեռն համբարձեալ, կորա-
նամ. [22] եթէ փոքր ինչ խրտուիլ, սարսեմ. եթէ սա-
կաւ մի թնդիւն, ընդոստիմ։ Եթէ 'ի խրախճանս
ըմպելեաց հրաւիրիմ, դողամ. եթէ մեծից յանդի-
ման լինիմ, սարսափեմ. եթէ 'ի հարցումն բանի կո-
չիմ, կարկիմ. եթէ իրաւամբք քննիմ, համրանամ։
Արդ՝ այսքան ամենաթշուառ և ողորմագին տարա-
կուսանացս՝ 'ի վերայ միմեանց բարդելոց, [23] որք
զտորև զգայականաց սրտիս գոյութե՟ 'ի ներքուստ
անտուստ անբժշկական ցաւօք՝ աներևակի նետիւք
խոցոտեալ, անարտաքերելի մշտակիր յարամնաց
հանապազամուխ բևեռեալ աստուստ ընդ հոգւոյս,
լցեալ շարաւով կրկին հարուածով, վտանգ սատակ-

մահ մահու գուշակեն ։ [24] Թարախ մթերից պատեալ զերկաթով գաղտնեացս ծածուկք ազդեն ինձ տագնապս՝ վերս պահեալս անխնամարկելիս ընդ ելս շնչոյս տուրեւառութեան․ յորոց նեղունեց չարաչար ճնշեալ աղաղակ ձայնիս, խառնեալ արտասուօք՝ կողկողագին թախծանօք հոգւոյ, բարեգործիդ հնարաւորութեան յերկրաստեղծիցս նահատակաց ընդ իմ մաղթողաց, վերջին հեծութեամբս և ես ընդ նոսին արտասուօք ողբոց ամենեքումբք նուիրողօք՝ զաղերսանս ըղձիցս՝ 'ի ստորնայնոցս աստի [25] յերկինս առաքեմ։ Շնորհեա տէր անդորրութիւն կենաց հանգստեան՝ ողորմելի վաստակեցելոյս 'ի յընդունայն երկրագործութիս, համայնդ յամենայնում․ ամենայնիւ ստացեալ քեզ փառս ։

(1) Տեղի ամենեցուն ։ ԱԾ սա է տեղի ամենեցուն, մի՛ զաղափարաւ, ի որում զամ իրաց իսկութիւնս յիւր միտս ամփոփեալ ունի ։ Երկրորդ, արարողաբար․ զի զամենեցուն զգոյն կրէ 'ի զօրութ իւրում ։ Երրորդ՝ պատճառաբար․ զի ամ տեղեաց ինքն տայ զզօրութիւնն զետեղիչ կամ պարագրիչ այլ մարմնոց ։ 2․ օրէն․ այսպէս որոշեն, Տեղի ամենեցուն բոլոր էակաց, հուպ յամենեսին ։

(2) Անուրեք վայրիս ։ Ոչ բովանդակեալ 'ի վայրս ուրեք․ և սակայն չէք սահման կամ տեղի առանց քո ։ Ոչ երևեալ․ ոչ երևիս բնաւ աչաց․ և սակայն ոչ թաքուցեալ․ ոչինչ երևելութիւն լինի յայտնի առանց ծագման քո․ զի զլոյս երևեցուցիչ ամի՝ ած ծագէ․ կամ, ոչինչ տեսողութիւն աչաց է պայծառ և ընդունօղ լուսոյ՝ առանց ծագելոյ քո զլոյս ։

(3) Անուն անհասանելի ։ Անուն նշանակիչ բնութեան ԱՅ չէ բնաւ գիտելի ։ Յակոբ հարցանէր ցերևեալն՝ զի՞նչ անուն է քո, և լուաւ պատասխանի, զի՞ հարցանես ։ ( Ծննդ․ ԼԲ․ 29 ։ ) Նոյնպէս հարցանէր և Մանուէ հայր Սամփսոնի․ և լուաւ, սքանչելի է ։ ( Դատաւ․ ԺԳ․ 18 ։ ) Քայն անբաւութիւն, ԱԾն անուն անբաւ կատարելութեան է յայտնիչ․ Խոկալոյ անքննութիւն, էութիւն ունօղ անքննութեան, կամ անքննելի ։ Զայսոսիկ կոչմունս մարթ է առնուլ և այսպէս, անուանս անհաս, անբաւ, անքննելի, ԱԾ միայն տիրապէս սա է, և ոչ բնաւ ումեք յարարածոց․ բուն անհասութիւն, անբաւութիւն, և անքննութիւն ոչ գտանի արտաքոյ ԱՅ․ այսպիսի անհաս և անբաւ և անքնին՝ կամ ԱԾ միայն է, և կամ բնաւ իսկ ոչ գոյ իրօք ։

(4) Անմատչելի հեռաւոր ։ Անմերձենալի 'ի գովել և 'ի ճանաչել․ զի ոչ խակական հաղորդութեամբ բնութեան, և ոչ սրութեամբ մտաց հնար է մերձենալ․ և անընդմիջելի մերձաւոր․ և սակայն գոյացութեամբ այնչափ մերձ ես յիւրաքանչիւրս, զի ոչ գոյ միջոց կամ խտրոց 'ի մէջ քո և նոցա․ զի ած 'ի գոյութիւն իւրաքանչիւր առեղծուածոյ ընդմիանէ ։

(5) Ամենաբոյժ ։ Ամենայնի բժշկօղ․ այսպէս ուղիղ գրի 'ի լաւ օրին․ իսկ յայլս՝ ամենաբոյծ ։

(6) Գործնականացն գործի ։ Հին լուծ․ զլար գործուն խմնոյ այսու ։ Բայց ստոյգ է․ այլ իմանալի է կարողութիւնն՝ որ պատճառ է գործե-

ըեայն. և այսպիսի է նախ՝ կամքն, որ առաջին շարժիչ է 'ի գործելն, կամ 'ի կատարումն ծանուցեալ բարւոյն. դարձեալ և այլ զգայարանք, և մանաւանդ ձեռն, որք արբանեկեն 'ի գործել: Այս գործի առէ՝ ա-ՀԶՕՐՈՒԹԵՆ ԿԱՐԵԱՑ, սովորութը ախտից, կամ բուռն ունակութը մեղաց իբր երկաթով կապեալ է: Յայսմ բանէ մինչ 'ի կատարած այսր հա-մարոյ նկարագրէ զաղխողորմ վիճակ մարդոյ, որ 'ի մեղս ունակացեալ, և զդառնութիւն մեղացն ճաշակեալ, ոչ զղջանալ կամի և ապաշխարել, և ոչ 'ի մեղանչելն հանգչի. այլ մարմնով և հոգւով և համայն զգայա-րանօք 'ի յոյզս խռովութեաց տագնապի անմխիթար:

(7) ԶԱՆԳՈՒԱԾՆ ՀԱՆԴԵՐՁԱՆԱՑ: Յօրինուած բնութեան՝ մահացու խառ-նութք սկզբնական և ներգործական մեղաց շաղախեալ իբրև զթունաւոր կերակուր:

(8) ԶԱՒԷՐ ԳԱՐՇՈՒԹԵՆ: Զզուելի ապառողութեն ընդ գոյութեան բնու-թեանս կամ ընդ մարմնոյս միաւորեալ. որպէս գարշ տիղմ 'ի մարմնի խողի:

(9) ՏԵՍԱՆԵԼԵԱՑՆ ՈՒՂԷ ԷՒԷ: Երևելիքս կամ արտաքինք իմ առողջ գոլով, հոգևորքն կամ աներևոյթք իմ վիրաւորեալ են. այսինքն արտաքուստ մարմնով առողջ, և յերևս արդար և երկիւղած երևիմ, բայց հոգւով վիրաւորեալ մեղօք և խղճիւ:

(10) ՅԱՆՑԱՆԱՑՆ: 2 օրէն. յանցմանցն: 'Ի սաստիկ կամ յազդոյ յիշատա-կէ մեղացն յուսահատ լինիմ. և թէ և այժմ ոչ նոյնպէս մեղանչիցեմ, բայց տագնապ ՆԱԽԱԳՈՐԾԵԼՈՑՆ, յառաջագոյն գործեալ մեղացն միշտ զերկիւղ բերէ, զաղօթսն պղտորէ, և զխիղճ մնայուն զայրացուցանէ:

(11) 'Ի ՄԱՃԻ ԳՈՐԾՈՅՆ: Զձեռքս 'ի մաճի երկրագործութեն, կամ գործ-ւոյն, որ աւօրոյն. առել կամի. ուխտիւ հրաժարեալ յաշխարհէ, ձեռն-արկի 'ի միաբանութեն հոգւոյս իմ և այլոց. և սակայն ըղձիւ ՈՒՆԵՓՆՈՑՆ ՀԵ-ՏԱԴԱՐՁԵԱՆ, զաշխարհական իրս խնդրեմ, որ բանին տն. (Ղուկ. Թ. 62:) 'Ի սոյն հայի և յաջորդն, ՆԵՐԴ 'Ի ՅԱՌԱՋ, ևն:

(12) ԳԻՏՈՒԹԵ ԷԷԶՆ: Գիտելով զբուն զանանց բարիս երկնից, 'Ի ՃԷԶՆ, յունայն յանցաւոր իրաց խաբեցայ: Կամ, գիտելով թէ զինչ են երկ-րաւոր բարիքս, խաբեցայ 'ի նոցանէ այնու երևութիւ որով ոչ են. զի անցաւորք գոլով և վշտագնիւ, իբրև անանց և հանգուցիչ ձևանան:

(13) 'Ի ՄՓԱՑՆ ՄԱՐՏ: Ես որ հոգևոր գոլով մտօք ը մեղս խորհրդոյ պար-տէի մարտնչել իբրև կիրթ և զօրաւոր, 'Ի ՓՈՓԱՆԱՑՆ, 'ի փոքր և 'ի դիւրին պատերազմաց մարմնոյ յաղթեցայ: Կմ, 'ի մտաւոր պատերազմի յաղ-թեցայ նաև 'ի փոքր փորձութեց խորհրդոյ: Կամ, 'ի խռովել մտացս խղճմտութը, նաև 'ի փոքր և 'ի նեբելի մեղաց յաղթեցայ վհատութը և սրտաբեկութը:

(14) 'Ի ԲԱԶՄԱՆՑ ՈՐԴԻՆ: 'Ի հառաչանաց սրտին՝ կոկորդն ջերմացեալ, և բնական խոնաւ հիւթ քմացն սպառեալ: Ի ՅՈՅՍՈՒԹԵ, ընդարձակութն որով կարող էի ունել յոյս մեծ, խաղաղ արգելաւ:

(15) ԱՆԲԵՐԵԼԵԱՑՆ ՓՈՅԺ: Անտանելի տառապանք հոգւոյս, կամ հան-դերձեալ տանջանք դժոխոց՝ 'Ի ՂՓԱՐԻՍ ՓՂԱՍՐԷԱՆ, 'ի դէմս երևեալ արտմութեն. կմ 'ի զգալի իրս տեսանեմ զհանդերձեալ վրէժխնդրու-թեն. զի արարածք սատակման 'ի տանջանս անկրաւոյ: (Իմաստ. Ե. 21. Ժզ. 24:) Այսպէս կայեն 'ի խղճէ մտացն տագնապեալ, զամենայն, սին իբրև գահիճ ինքեան տեսանէր (Ծննդ. Դ. 14:) Եւ ինքն ոչս առէ զինի: Եթէ զինուոր տեսանեմ, մահու ակնունիմ, ևն:

(16) ՏԱՃԱՆՄԱՆՑՆ ԱՐԳԱՍԻՔ: Պտուղք կմ արդիւնք աշխատութեանցն՝ զորս շահէի 'ի կլրատութեն տալանդին տն, ծուլութը ծածկեցան, և իբրև աղօտ լոյս ճրագի պակասեալ անյայտեցան:

(17) Պօփօռխանէրան ճըղըխը ։ Նեղուա՝ որ է գործի պատասխանելոյ . յէ- րաանդն օփար , զուրկ յիրաւանց՝ ինքնին պապանձեալ կայ . Ու անհամբոյր ըրբանդը , դիրք կամ ձև աներրաստ և գարշելի շրթանց՝ արդար դատաս- տանաւ փակեալ լռութբ ։

(18) Յօղմօնք մօզը ։ Այլախոհեալ խորհուրդք մնացս 'ի զանազան կող- մանս տարուբերեն զխ . մերթ 'ի կողմն յուսահատութե , մերթ 'ի զղջմն . ապաշխարել կամիմ , և վարանիմ թէ զո՞ր ապաշխարութի յանձն առից , կմ երբ . առ այլ որ բժիշկ գիմել՝ ոչ թողու ամօթն . ինքնին զանձնս բժշկել՝ ոչ է կարելի . արդեօք յանապատ առանձնանալ լաւ իցէ , թէ 'ի միաբանութե կալ . և ասա՝ զարտաքին ապաշխարութի առնել , թէ զներքին միայն 'ի ծածուկ՝ առ 'ի չդայթակղեցուցանել զայլս . միթէ հրաժարել 'ի վարդապետութէ , և զանձնս միայն հոգալ , կամ արդեօք յետ ապաշխարելոյս՝ իցէ թէ դարձեալ անկանիցիմ , և յո՞ր պատճա- ռաց արդեօք ։ Այսպէս խռովեալ , ըչէօն'ի չէրօյ օփօխ , թէ ո՞ր իցէ օգտակար ինձ և այլոց՝ ոչ գիտացի . և յընտրել զբարին՝ յիմարութբ ան- կարող գտայ . որով և ընծօյք էլէյն , ելանելոյն 'ի մեղաց՝ արդելմամբ գիւլին խափանեցաւ . Ու հօօրան խըղօյն , կանթեղ մնացս՝ ածխանօքն հն- ցի , մնացուածովք մեղացս , ( որ աճիւնն է մնացուած կրակի , ) լցեալ խաւարեցաւ ։

(19) Եբէ պօփգօմօօր ։ Եթէ տեսանեմ զոք պատգամաբեր , ակնու- նիմ խօփօօբէ , աստից , սպառնալեաց ։ Եբէ մօփընօգէփ , թէ տեսանեմ զգայիր առենի , կամ որ պաշտօնեայ է դատաւորական դիւանի , ակնու- նիմ մօրհօյէ , պարտուց , կամ կորստեան տացուածոց ։ Եբէ օրխօօր , օրինագէտ տեսանեմ , սպասեմ անէծս լսել ։ Եբէ օւէփօրօնօխն , աւե- տարանիչ կամ քարոզիչ , սպասեմ թօթափել զփոշի ոտիցն . փոխանակ բօբօփմօն՝ 4 . օրին . բօբօփէլոյ ։ Եբէ օպօօօմ , դժնէաբարոյ , մնամ ծօծզմօն , կսկծեցուցիչ բանից ։ 3 օրին . յօպօօմ ։

(20) Եբէ ջըօէ ընփըօօբէ ։ Եթէ ջրոյն այնուիկ՝ որով յս օրինացն մով- սեսի փորձեալ լինէր կնոջն շնացող , ( թուոց . ե . 17 . ) փորձիցիմ և ես , խորտակիմ . որպէս յայնժամ եթէ ճշմարտիւ շնացեալ էր կինն , յոլ- ալեն զջուրն՝ ուռնոյր որովայն նորա , և բարձք նորա խորտակէին ։ Եբէ ըէղ խօւ ըօփմօն . յս դեղ ինչ քննութե , ապաշխարութե , կամ ուղղու- թե առնում , փոխանակ առողջանալոյ ստակիմ ։

(21) Բէրօ նըօփէմ ։ Եթէ տեսանեմ յումեքէ բարեաց ինչ բաշխումն , ես 'ի կարծեաց չարեացս փախչիմ , ոչ համարձակիմ մօտենալ՝ գիտելով զանարժանութիւն իմ ։

(22) Եբէ ժօփր խօւ խըփօօխւ ։ Եթէ տեսանեմ զփոքրիկ խրտուիլակ , ( խուճչակ , գօրգուլուք . ) սարսեմ իբրև զերկչոտ թռչունս 'ի պար- տեզս ։

(23) Որփ ըօփօրխ ։ Այս իմ ողորմելի տարակուսանքս՝ զխորս զգայուե արտս 'ի ներքուստ աներևոյթ նեախք խոցոտեն . որք ծօրփօբէրէւէ , անհնար առ 'ի արտաքս հանել , մինչ մնան մնեալ և բնեռեալ 'ի հո- գիս . և բազմադակ թարախով լցեալ , ըըէփ հօրօօծօղ խոցմամբն և թարախեցուցանելովն՝ ըշարաչար մահ իմ ցուցանեն ։ Գօղփնէօյօ ծօ- ծօօէփ , գաղանի փտութիւք հոգւոյս՝ իբրև բօրօխ մըբէըէց , փոխադրութե հոլովոյ է , փոխանակ ասելոյ՝ մթերք թարախոյ , յս թարախ ժողովեալ 'ի ներքս , պօփէօւ ըէրխօբօղ բժշկին , զոր 'ի զննելն զվէրսն՝ 'ի ներքս մխէ . և յորժամ թարախոտ տեսանէ զերկաթն , խմանայ անբժշկելի գոլ զվէրսն . այսպէս ներքին փտութի իմ երևեալ խիստ կանոնօքն ապաշ- խարութե , ցուցանէն ինձ զվէրս անդարմանելիս պահեալ ըօփ էօ ըօւօյօ , 'ի շնչափողս , կամ 'ի թոքս հոգւոյս . յորմէ և աղաղակ զղջմանս նուա-

զեալ Ճ՚ նշէ : փոխանակ բառին աճիւնաւան մի օրինակ դնէ՝ աճիւնաւոր : Բայց եւ ընդ նուաղ ձայնիս խառնեալ զպատառս աչայս, եւ զորմնութիւն հոգւոյս, քո հնարաւոր զօրութեդ նուիրեմ կալերանս յերկրպագութեան նահապետաց, ընդ սրբոյն, կամ ընդ ջերմեռանդն աղօթողաց ընդ իմ ձայնիւ, ընդ իմ կամ վասն իմ մաղթողաց :

(24) Թարախ մեղաց : Յայլ օրինակ փոքր ինչ այլազգ է · Բարախ մեղաց պատեալ աճիւնաւոր գաղտնեաց ծածուկ · եւ մարթ է իմանալ, մեղաւոր թարախք կամ փտուելք հոգւոյս պատեալ ՚ի ծածուկ զկարծրութեան սրտիս :

(25) Յերկինս առաքեմ : Յերկս օրինակս կրկին դնի այս · մի յերկինս առաքեմ վերջին հեծութեամբս : եւ զկնի · ՚ի տարբնայնոյս տանի յերկինս առաքեմ :

---

Մերսէն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս ձայնականաց բանի :

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

# ԲԱՆ · ԻԴ ·

ա · Եւ արդ՝ որո՞ց խնդրոց արժանաւոր վարկանելով զիս, մատչիմ աղերսել · արքայութեա՞նն յորմէ վրիպեցայ, եթէ փառացդ վայելչութե՞ն յորմէ զրկեցայ · թէ կենացդ անմահականաց յորմէ հերքեցայ · թէ ընդ հրեշտակաց պարակցութե՞ն յորմէ տրոհեցայ · թէ ընդ արդարոց մասնակցութե՞ն յորոց ճեղքեցայ · [1] թէ ուռ որթոյն կենդանւոյ յորմէ քանցեցայ · թէ ոստ տնկոյն բերկրութե՞ն յորմէ գօսացայ · թէ ծաղիկ փառացն շնորհի յորմէ թափեցայ · թէ սահմանացն ժառանգաւոր յորմէ կորացայ · թէ հայրենի ծոցոյն հարազատ յորմէ ընկեցայ · եթէ զգեստուն լուսոյ պարծիմ յորմէ մերկացայ · եթէ ՚ի ստացօղ դարձին յուսացայց յորմէ խորթացայ · եթէ ՚ի լուսոյն իղձս դիմեցից յորմէ մեկնեցայ · [2] եթէ Յիսուսի յօսկերօն յօդիմ՝ յորմէ մերժեցայ · եթէ ՚ի թեւս նորա մերձիմ՝ յորմէ օտարացայ · եթէ յապաւէննն ապաստանեցայց՝ [3] յորմէ խեթացայ · եթէ ՚ի փրկութենն նորոգումն յորմէ մահացայ · [4] եթէ ՚ի զգաստութենն զուարթութեան յորմէ ես լքայ · եթէ ՚ի կանոնն կենացն ուխտի՝ յորմէ փոխեցայ · [5] եթէ ՚ի սահմանն հաստադրական՝ յորմէ սահեցայ · եթէ յանշարժ վիմին անդրդութե՞ն յորմէ սասանեցայ · եթէ [6] ՚ի չորս գումարտա-

կին՝ յորմէ հոսեցայ. եթէ 'ի քաղաքն անդրանկաց
շինիմ՝ յորմէ գերեցայ. եթէ հանապազորդեան հա-
ցին աղօթեմ՝ զոր ոչ վաստակեցայ. [7] եթէ փոխա-
դրութի երկանցն խնդրեմ՝ յոր ոչ քրտնեցայ. թէ
պարգեւօքն պսակեցայց՝ յոր չհանդիսացայ. թէ ար-
ձան ինձ կենաց գրեցից՝ յորմէ ջնջեցայ. թէ զերախ-
տեացդ ձիր յիշեցից՝ զոր միշտ մոռացայ:

Է. Կամ հատաւ և կամ [8] խզեցաւ լար կենաց յու-
սոյն. տիրեցայ 'ի բորոտութեանցն գարշութէ, հա-
մայն ախտացեալ՝ ամենայնիւ [9] սպառեալ մարմինս,
ապականութին շրջապատեալ մեռոյց ա՟յ: [10] Դոյզն
պալար փայլունակ տգեղ լմնացեալ, մնացուած ինչ
պահեալ նախունակ երկդիմի կերպին, որ զկերկին
անմաքրութին նշանակէ. պարծանացն նշոյլ ամենեւին
ինձ շիջաւ. փրկութին մատնեցաւ. բարին ստուե-
րացաւ. ելք կենացն բնաւին փակեցաւ. մխիթա-
րութին բարձաւ. դատաստանին ատեան մերձեցաւ.
թոյնք մահուն ինձ արծարծեցաւ. սպանեալն կրկին
ինձ կենդանացաւ. [11] լաստին դադարք վիմօք լցաւ.
շաւիղն յուսոյն [12] կուրացաւ. շնորհին ծածկոյթ յի-
նէն մերկացաւ. փառացն վայելչութի ստուերացաւ.
հանճարն առաջնորդական խափանեցաւ. կշտամբա-
նացն փուշ բազմացաւ. անօրէնութէն ուղէշ ծաղ-
կեցաւ. բոց գեհեննին ինձ բորբոքեցաւ. ծառայու-
թէն լուծ սաստկացաւ. ստրկութէն կապ զօրացաւ. [13]
ունօղն յարկին կառուցման ահա անկաւ. [14] բարձ-
րութէն վստահարան կործանեցաւ. ընտանութէն
միաւորութի անջրպետեցաւ. սրբութէն սիրօղ հո-
գին ա՟յ տրտմեցաւ:

Ը. Եւ քանզի զվերջինն համբուրեցի դառնութի,
տանջանս՝ խէթս՝ տխրութիս, վիշտս հոգեկանս, ցաւս
անխնամարկելիս, տարակոյսս անյուսադրելիս, ամօ-
թանս անպարուրելիս, խայտառականս անվերարկե-
լիս, պատկառանս անհամարձակելիս, փախուստս ան-
դառնալիս, հալածանս անմարդասիրելիս, [15] երկայն
ուղեւորութէ ապաձեռն անթօշակութիս. իսկ դու
փրկութի զօրութի և օգնութի, ողորմութի լուսա-
ւորութի քաւութի և անմահութի տէր յ՟ի ք՟ի, որ-
դի ա՟յ կենդանւոյ, արարիչ երկնի և երկրի. որ ըն-

ձեւես ջուր պասքելոյն՝ 'ի ծարաւուտ վայրս անապատի, օրհնեալ, բարեգութ, հզօր, մարդասէր, երկայնամիտ, խնամակալ, հնարաւոր, այցելու, պաշտպան աննախանձ, պահապան յաղթող, կեանք անկորուստ, միջնորդ երկնային, լիութի աննուազ, երանութի տօնելի, ձեռն ձգեալ սիրոյ՝ ողորմութե քոյ աջոյ՝ ընկալ և մատո քաւեալ և սրբեալ զիս զամենապարտս՝ բանդ կենդանի՝ առ հաւասարապատիւ քո հոգի, զի քև վերստին հաշտեալ՝ յիս դարձցի: Եւ 'ի ձեռն քո՝ խուրմն կամօք մաքուր նուիրեալ, [16] զօրեղն ինքնութբ զիս հօր ընծայեալ, անդէն առ նմին նովիմբ միշտ 'ի քեզ հնչոյս ողջունիւ կապեալ ընդ շնորհիդ՝ 'ի քեզ միանալ անբաժանելի: Սամն որոյ քեզ ընդ հօր քում հոգւոյդ սրբոյ երրեակ անձնաւորութեդ, 'ի միում բնութե և 'ի մի ածութե փառք, և 'ի ստեղծականաց էից՝ գոհաբանութի, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

(1) [illegible]: Եթէ աղաչիցեմ իբրև սուրբ որթոյն կենդանւոյ՝ քնի: Այսպէս 'ի հետեւեալն զօրութ խնամ զբասս [illegible], զի իբրև մոա, իբրև ծաղիկ, ևն: 'Ի [illegible], եթէ յընդունիօղ դարձին յաւասացայց, յորմէ սատարացայ իբրև զանառակ որդին:

(2) Եթէ [illegible]: Միթէ 'ի քո միաւորիցիմ իբրև սիրելի, յորմէ աանելութեն կորեցայ: Կամ, 'ի որան՝ որք մարմին են քնի յերկինս:

(3) [illegible]: Յորմէ խեթիւ կի խռովելով հեռացայ. կամ ընդ որում խռովեցայ, թշնամեցայ:

(4) Եթէ 'ի [illegible]: 'Ի զգաստութի հաւատարիմ և արթուն ծառային, և իմաստուն կուսանացն վառահացայց, յորմէ ես թուլացայ: Եթէ 'ի [illegible], յօրէնս աւետարանին, յորմէ փոխեցայ յօրէնս հին մարդոյն:

(5) Եթէ 'ի [illegible]: Յուխտ մկրտութեն և կրօնաւորութեն, յորմէ գլորեցայ:

(6) 'Ի [illegible]: Ժողովոյ կամ խմբի վանականաց, յորմէ վտարուքս հանեցայ, անկայ, արտաքոյ մնացի: Կի, եթէ [illegible] խմացի ականակապ զարդ պսակնոցի, (ոպէս դնի եղիշ. է. 136.) ը այսմ նշանակէ՝ 'ի կարգս սրբ, որք են զարդ եկեղեցւոյ:

(7) Եթէ [illegible]: Միթէ խնդրիցեմ բառնալ յինէն զերկուսն աշխատութեն, զոր ած օրինադրեաց ադամայ, եա՝ որ ոչ քրտնեցայ: Կի, միթէ խնդրիցեմ փոխադրել զերկուսն սաստի կենաց 'ի հանդերձեալ հանդիսան՝ ուր վասն ոչ քրտնեցայ. կամ, միթէ խնդրիցեմ հատուցումն աշխատութեց՝ որովք ոչ քրտնեցայ: [illegible]. յաղթանակաւ վարձուց պսակիցեմ յայն լինչ գործ, կամ վասն այնր, [illegible], յորում ոչ ճգնեցայ, ոչ ընտիր գտայ: [illegible]. եթէ գիր հաստատուն, կամ գրութի կենաց կարծիցեմ ունել, յորմէ մանաւանդ ջնջեցայ:

(8) Խուքշաալար : Յետ ասելոյն՝ հապաա, յաւելուլն՝ և հաւ խուքշաա, լուելեայն նշանակէ՝ մանաւանդ, զի, ահա լոյս յուսոյն հատաւ, կորեաւ, մանաւանդ թէ բոլորովին խզեցաւ, բարձաւ գլխովին շնորհն՝ որ է լոյս հոգևոր կենաց՝ շաղկապիչ ընդ ած. և չէ յուսալի՝ թէ միւսոյ յես կեանք հոգևոր: Կամ, եթէ իմասցի զհանդերձեալ կենաց և զյուսոյ փրկութե, նշանակէ՝ բարձաւ համարձակութիւն կամ վստահութիւն փրկութե վասն մեղացս և անարժանութեաս:

(9) Սդաաէաւ: 4. օրինակք գնեն, ադաաէաւ վմարժիա ադաջնաաբենա :

(10) Դոյչը դաւար : Յանձն այլաբանէ զախտ բորոտութե ըստ գրելոյն (ղևտ. ժգ :) Եւ ասացեալ վերադոյն՝ թէ փիրէշայ 'ի բորփաաէշը գաւրաաէ, որ տարածեալ սպառէ զմարմինն, զայս առնու յօրինակ սկզբնական մեղաց, որ զբովանդակ բնութիւն ապականեալ, Ջաոյշ աշ: Եւ թէպէտ յայս ապականութէ բժշկեցայ ասէ մկրտութը, սակայն վերստին ներգործական մեղքն երևեցան յիս իբրև դոյչը դաւար, փոքր ուռոյց փայլուն՝ բայց ապեղ, ընաշէաւ, իբրև զլուսն եղեալ, զի սպիտակ բիծ. որ է սկիզբն և նշան բորոտութե. որպէս և ներգործական մեղքն սկզբնականին, որ և է ճաշաւած ինւ դահէաւ նախաանաւ էրէդիմ հէրդին : 2 օրին. և հին լուծ. ճաշաւած ինյ : Որպէս պալարն փայլուն և ընացեալ յառաջ քան զտարածանիլ բորոտուէ 'ի բովանդակ մարմինն՝ կրկին տեսիլ արկանէ 'ի մարմինն. մի՝ սպիտակութի 'ի մաղն, և զնստադոյն տեղի. և միւս՝ բնական գոյն և դիրք առողջ մասանց մարմնոյն. (ղևտ. ժգ. 3. 7:): Եւ 'ի տարածիլ բորոտութեն 'ի բոլոր մարմինն, համակ միագոյն սպիտակ լինի. (անդ. համար 13:) Իսկ եթէ յետ այնր երևեսցի 'ի տեղիս ինչ առողջ գոյն, կամ կենդանի մարմին, պխտակ լեալ՝ համարի մնացուած առաջին երկդիմի տեսլեանն, և բորոտութի չար. (անդ. համար 14. 15:) Այսպէս անձնական մեղքն ադամայ՝ 'ի նմա իբրև պալար ընացեալ, ըստ մասին հոգւոյն ապականեաց զնա. և ըստ մասին մարմնոյն եթող այն՝ առողջ, բայց պարտաւոր և դիւրախնասելի. և այն մեղք նորա տարածեալ 'ի ծնունդսն՝ զբովանդակ բնութիւն արար որդի բարկութե: Իսկ յետ սրբելոյ մեր 'ի նորա մեղացն, յորժամ դարձեալ երևին 'ի մեզ անձնական մեղք ներգործականք, այս համարի մնացուած առաջին մեղացն ադամայ. իբր զի ըստ նմանութե յանցուածոյն ադամայ հոգւով սպանանէ, և ըստ մարմնոյ թէպէտ առողջ թողու, բայց պարտաւոր և տկարացեալ. վասն այն յարէ, որ դիրէին անմաթրաաբէ նշանակէ. զի զհոգւոյն և զմարմնոյն, կամ զառաջինն և զերկրորդն: Ըստ որում և դաւծանոյն նշոյն որով քննադատեալք լինելով մկրտութը, պարծիմք 'ի քս, ամինաին ինյ շիջաա 'ի ձեռն յետադայ ներգործական մեղացն:

(11) Լաաթին տատարթ : Նաւլին հանդստարանն, կամ նաւահանգիստն մեծամեծ քարամբք լցաւ:

(12) Կոորաշաա : Ճանապարհ յուսոյն փակեցաւ:

(13) Ոանօզը յաւրէին : Վերամբարձողն շինուածոյ յարկին, (որպիսի է սիւնն, կամ գերանն, կամ հեծանաձգութիւնք,) անկաւ. և հոգևորապէս իմա, երկիւղն որդիական առ ած՝ բարձաւ, որ 'ի վեր ունի զշինուած առաքինութե, ըստ սիրաքայ, իէ. 4 : Հին լուծ. իմանայ զհոգին՝ բարձող մարմնոյ:

(14) Բաւրյրաաբէն վափահարան : Նեցուկն կամ մոյթ բարձր շինուածոյ. որ է համարձակութի յուսոյն:

(15) Երէնայն աաղնաորաաբէ : Գնալոյն 'ի հանդերձեալ աշխարհ, որ յաւիտենական է և անդառնալի. զոր և տէրն ասէ՝ գնալ յաշխարհ հեռի. (ղուկ. ժթ. 12:) Այսմ երկայն ճանապարհի ասէ՝ պատրաստեցի ադաջէան անբուշանաաբէա, ունայնաձեռն պակասութի թօշակի կամ պաշա

րի, փոխանակ առնելոյ, ոչ արարի բնաւ պաշար ։

(16) Զօրէնն ինքնութբ ։ զի հոգին սբ՝ որ զօրէնն է բնութբ, կմ զօրութ- ինքնիշխանութբ զիս հօր ընծայեսցէ, անդէն առ նմին, միանգամայն նու- վէն հոգւոյն 'ի տեղւոյս ողջունիւ, սիրատարփ ըղձանօք առ քեզ, կմ գրկախառն համբուրիւ ընդ քեզ, խաղեալ ընդ ընդհէտ, այսինքն ընդ սի- րելութեդ, ընդ բարեշնորհ գթոյդ, ընդ քեզ միանալ առանց բաժա- նելոյ ։

Գուցէ ոչ յար և պատշաճ թուիցի ումանց՝ կատարած աղօթիցս ընդ ան- ցելոցն բանից․ իբրև թէ յետ խապառ յուսահատելոյն 'ի կենաց Այ, անդէն փաղփաղուկի զամենեւին ընտանութեան ընդ Այ յուսացեալ խնդրիցէ, զանբաժանելի առ նա զմիանալն ։ Սակայն արթուն Աղօթաւորս մեր երկոքումբ աչօք վարի յաղաչանս իւր․ միով յանձին մեղանան հայեցեալ և 'ի չարժանութիւն, լինի յուսակտուր խապառ․ իսկ միւսով յառեալ յանբաւ գթութիւն և 'ի զօրութիւն Այ, և 'ի փրկանս Քի, յուսա- պատար քաջալերեալ զօրանայ․ ուստի թէ առաջնումն իբր սանդարամե- տական զանձն խոստովանի, երկրորդաւն ոչինչ երկբայի լինել երկնաքա- ղաքացի ։ Եւ ահա ի՛ այսոցիկ հայեցուածոց, խոստովանեալ նախ՝ թէ ընփանուէն մտաւորուն անշրջելէպէշոյ, ո՛ բարձր հեռացաւ․ և թէ հոգին Այ փրփրեցոյ, և թէ այսուհետև զվերջին դատնութիւն և տանջանս և ամօ- թանս ինձ պատրաստեցի, յանձն առի, դառնայ ապա զՔի թախանձել, զի ըստ ամենահնար իւրումն փրկագործութե՝ ձեռն սիրոյ ձգեալ ըն- կալցի զինքն, և սրբեալ մատուսցէ առ համապատիւ Հոգին սբ․ և նորա եւս հաշտեալ, երկոքին Որդի և Հոգի միակամ համութբ ընծայեսցեն երկնաւոր Հօրն․ որպէս զի հոգւոյն աղօթող զօրութբն, և որդւոյն հա- մահամբոյր սիրոյն սնդութբ կապեալ միանայցէ անբաժանելի ։

---

Մերոյին յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս ճողոպրանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ․ ԻԶ․

ա․ Բայց քանզի 'ի վերայ այսքանեաց գերութեանց ամենաթշուառ վտանգաւորիս՝ [1] մի զմիով եղ և ելս առնելոյ, զոր զկերպարանս անցիցն՝ 'ի մասնէ վերաձայնեալքդ նախագրեցին․ ուստի և փո- խեալ զեղանակ բանիս՝ այլ ոչ զեղկութիւն աղե- տիս ։

բ․ Ան զի [2] ծով է ինձ ծփանաց կենցաղոյս բեր- մունք յոյժ նմանագոյն․ յորում կոհակօք բազմօք անթիւ դիմեցմանց՝ տատանեալ հոգիս 'ի յայսմ աշխարհի՝ մարմնոյս շինուածով իբր 'ի նաւակի ։ [3] Օ որ եսայիաս մարգարէ զյանկարծադէպ կատա- րածն, որ 'ի պարսկականն հինից՝ երուսաղէմի և սա- մարիայ կործանմանն, նմանութբ այսր օրինակի կեր-

պաւորեցոյց․ որ և առ իմս հոգևորական խորտա-
կումն զուգաձայնել՝ ոչ է սխալական։ Քանզի 4 մինչ-
դեռ չուէի ես յանհոգութեան անտարակոյսն վտա-
հութեան, դոյզն կասկած արկածից 'ի միտ բերելով
առ խորոց փոքր միջոցին, որ 'ի մէջ հանգստեանն
և աշխատութեան, իբր այն թէ հասեալ իցէ ձմեռն
յամարայնի, բքաբեր հողմով ժամանեալ՝ երեքա-
լեանն դիմակցութեան, ամբոխեաց զհանդարտութիւն։ 5
Աստինաւն 'ի բախմանէ վայրենի ալեացն՝ խորտա-
կեցաւ։ 6 Ուևոցն ձեռնարկուէ քայքայեցաւ․ 7 կայմն
ամբարձման՝ 'ի կայից իւրոց խլեցաւ․ առագաստին
թուչարան՝ յանկարկատելի ծուէնս պատառեցաւ․
շինուածոյն շուք՝ անզարդեցաւ․ 8 առասանք ձգողա-
կանացն՝ խզեցաւ․ 9 տեսարան գլխոյն դիտակի՝ խո-
նարհեցաւ․ 10 ապաւանդակին պարան՝ կտրեցաւ․ 11 ա-
պաւինուէ խարսխին լուծաւ․ 12 լուծք ստուարք ամո-
լիցն կցորդութեան՝ բաժանեցան․ 13 սամիք ուղղչացն
հետոց՝ գալարեցան․ 14 լաստ հիմանն հաստարանի՝
ընկղմեցաւ․ 15 ղեկացն կառուցմունք՝ անդրէն սու-
զան․ չըւոցն յարմարութեան՝ պակասեցան․ 16 ողնա-
փայտին պատսպարան՝ իսկոյն բեկաւ․ 17 կապարանք
ղըստին հաստուածոյ՝ յօշատեցաւ․ 18 գոգք ամփոփ-
ման ծոցոյն կազմածոյ՝ անարգեցան․ 19 խելք շըր-
թանցն եզերաց՝ խախտեալ ոստեաւ․ 20 պաղպաջունք
բազմականացն՝ անկեալ բարձաւ․ 21 վանդակապա-
տին վայելչուէ՝ յատակեցաւ․ 22 դահաւորակին հան-
գստարանն՝ չփոթեցաւ․ 23 մածմունք տախտակա-
շարք՝ 'ի միաբանութեանց միմեանց անջատեցան․ 24 հե-
ղոյք պնդման բևեռացն՝ քարշեցան։ 25 Արդասիք
իւրին՝ յիշատակարան ողբոց ինձ նմանեցաւ։ Նաւու-
ղիղն հանդէպ նաւին դեգերեալ ողբայ, ձեռն 'ի
ծնօտի եդեալ՝ արտասուաց գետս իջուցանէ։ Նշ-
մարք սակաւ մնացուածոց՝ 'ի ծայրից ծփմանց ալ-
դելոյ ծովուն, իբր խողխողեալ բանաւոր՝ ողորմա-
գին թախծանօք հեծէ։ Վասն զի թէ զբարի նաւա-
պետն երկնաւորօքն զօրօք՝ յաշխարհիս ծովու առ
'ի զխորտակեալս իմ տապան իմանալի գոյութեանս՝ առ-
ցէ աշխարհել բանիս յարմարութեան, ոչ ինչ վրիպես-
ցէ 'ի ստուգուէ։ Քանզի արդարև ելայ բարեգութն

տէր՝ յառակ մարդկութեան՝ զթաղեալ ազգակիցն. ելաց առ նմին և զերուսաղէմ մոլեալ, և զյուդաս մոլեգնեալ. յորոց երկուցն կորեաւ վստահութիւն՝ յօրինակ նմանութեան աղարտեալ նաւի. իսկ միւսն հասեալ յատակս անդնդոց, առասան յուսոյն՝ ձեռամբ ունողին՝ յանքոյթն արտաքերեաց խաղաղութիւն:

Գ. Արդ՝ [26] իցէ թէ յաւելից հայել զբազմախորտակելի տապանակ մարմնոյս իմոյ նորոգեալ: Իցէ արդեօք տեսանել զփշրեալս նաւ ողբալի հոգւոյս ողջացեալ: Իցէ արդեօք տեսանել զբաժանեցեալս միջոցաւ մեծաւ՝ վերստին կցեալ: Իցէ արդեօք տեսանել զյոգնաթախիծ սիրտ վշտացելոյս՝ բերկրեցեալ: Արդ՝ իցէ ակնունել նայել զյաւէտ [27] խաթարեալ կերպարան բնութեան՝ կրկին հանդերձեալ: Իցէ արդեօք թէ տեսից զքակտեալ տաղաւար թշուառացելումս՝ միւսանգամ կանգնեցեալ: Իցէ արդեօք յուսալի նայել զտարամերժեալ գերիս՝ ազատեալ: Ապաքէն գուցէ ակնունել՝ զանկեալս 'ի շնորհէդ լուսոյ՝ դարձեալ կազդուրեալ: Արդեօք տեսից զվայելչութիւն ընտանիդ քո պայծառութեան՝ յողորմութիւն ինձ երևեցեալ: Եթէ տեսից երբեք զամենատխուր կերպարան հոգւոյս իմոյ՝ ժպտեցեալ: Արդեօք լուայց ընդ ձայնի գուժիս՝ աւետեաց համբաւ ինձ առաքեցեալ: Արդեօք տեսից զխուրակործան փխասեցեալս անօթ՝ կազմեցեալ: Իցէ թէ տեսցեն [28] պատուհանք աչացս իմաստից ըզմուրհակ պարտուցս իմոց՝ պատառեալ: Եթէ յայտնեսցի [29] օրն իմ անձկութեան՝ շնորհին քաւութեան՝ բարւոք ինձ ծագեալ: Արդեօք մտից 'ի խրախճանութի խորանին լուսոյ՝ քև առաջնորդեալ: Իցէ թէ կենդանի լինիցին ոսկերքս, ըստ եզեկիելի, ցամաքեալքս 'ի կենդանութեանց՝ եկաւորութեամբ ազդողական շնչոյս զօրացեալ: Իցէ թէ յաւելից հայել 'ի տաճար սբ քո, աղաղակաւն մարգարէին 'ի պորտոյ կիտին, հերքեալս 'ի լուսոյ՝ որ կամ առաջի քո ամաչեցեալ: Եթէ լինիցի խաւարամուտդս մթացելոյ՝ ծագումն առաւօտ: Եթէ հասցէ տեսանել զտագնապեալս մշտասասոյց՝ յեղանակս գարնանն

մօտ ։ Եթէ տեսից զցօղ անձրեւոյն 30 կանաչացուցա-
նօղն հոգւոյ՝ լինի արօտ ։ Եթէ 31 իցէ արդեօք նկա-
տել զգազանաբեկ հերքելի ոչխարս՝ վերստին կամաց
գթութեան քո հօտ ։

Դ · Եւ քանզի ըստ բանին յոբայ, շուրջ պատեալ
են չարեացն հնարք՝ ընդ որ ոչ կարացից անցանել ·
իսկ եթէ լոյս ողորմութեան բարերար կամաց քոց
ցուցցի · գթութեան քոյ դուռն բացցի · Ճառագայթ
փառաց քոց ծաւալեսցի · խնամք ձեռին քոյ յայտ-
նեսցի · արեգականդ կենաց օր տարածեսցի · առա-
ւօտիդ ըղձալի տեսիլ մերկասցի · առատութի քաղ-
ցրութեան քոյ աղբերասցի · վտակ արարչիդ կողից
հոսեսցի · ծորումն անապակ սիրոյ քոյ հեղցի · ծա-
գումն աւետեաց շնորհի քոյ երեւեսցի · պարգեւիդ քո
ծառ ծաղկեսցի · 32 մասունք օրհնեալ մարմնոյդ բաշ-
խեսցի · համառօտեալն ակնկալութի հանդիպեսցի ·
հատուածեալ ձայն ողջունի քոյ տր՝ լուիցի · հեռա-
ցեալդ խաղաղութի մերձեսցի ։ 33 Յայսոսիկ յաւէտ
սահմանաւ երանականաւ՝ հաւատ ընկալեալ յուսոյ
հաստատնոյ, ապաւինեալ 'ի հոգիդ քո տր, որ ընդ
հօր քում պաշտի ձայնիւ քաղցրութեան՝ ընդ քեզ
փառաւորեալ 'ի լոյս անմատոյց, որով կեանք եւ ե-
րանութի քաւութե հանդերձ ընծայեալ ինձ մեղա-
պարտիս ։ Յաւանդ անկորուստ ընդ իս պահելով
առհաւատչեայ Ճշմարիտ յիշատակի, 'ի ձիր անեղ-
ծութե անուամբդ անճառելեաւ ահաւորութեան
հզօրի ոքէ միայնոյ եւ անքննելի տէրութեան՝ երրեակ
անձնաւորութեդ · որ եսդ յիսկութե յէութե եւ
յարակայութե բարձրութե՝ քաղցրութե ողորմու-
թեամբ եւ մարդասիրութե պսակեալ հանդերձեալ
եւ թագաւորեալ ։ Եւ յա առ ամենեսին ամենայնիւ
յամենայնի կարող ես՝ գթած · եւ քեզ վայել է
փառք յայժմ յաւիտենի, եւ 'ի հանդերձեալ մշտն-
ջենաւորութիւն յայտնութե աւուրն մեծի, յաւի-
տեանս · ամէն ։

---

(1) Մէ ուժով ։ Որովհետեւ թշուառութիւնք հոգւոյս մի քան զմի առա-
ւելեալք չարչարեն զիս, իսկ զեղանակ մխաստւց նոյա 'ի ձայնէ, ըստ մա-
ւոյն եւեթ, կամ սակաւ ինչ ծանուցին վերոյասացեալ բանքդ, վա այսո.

րնկ փոխելով միայն զձև բանին՝ այլ ոչ զողջական ձայնս, կամ զեղուկ-տալն, [illegible], որ յայն դարձուցից զբանս առակս, զի [illegible] են: Ըստ այսմ 3. օրինակք առանց գլխագրի գնեն զայս հատուած, երբ յառաջնագեալ բանն յարելով: Կայ և այլ տարբերութիւն. զի փոխանակ 'ի [illegible], 3 օրինակք գնեն, 'ի [illegible]. որպէս թէ նախ քան զայս վերաձառեալքն: այլ որ. [illegible]: 'Ի սկզբան աղօթիցս [illegible] առեալ՝ նշանակէ զմտանել հոգւոյն ընդ բռնութ(եամբ) մեղաց, ախտից և գտանն խղճմտութեան դիւաց: Այլև շարագրութիւնս պարզելի է. 'ի վերայ կամ յաղագս այսքան գերութեանց՝ ոչք մի զլխով ելևելս առնեն, կամ մի քան զմի զօրանան, [illegible], որ զորոյ զհանգամանս պատահմանցն փոքու խնն ծանուցին նախաձառեալքդ, [illegible] են. և ըստ այսմ [illegible] մնայ թարմատար:

(2) [illegible]: 4 օրին. [illegible]: Յայս դլուխ զկեանս աշխարհի 'ի ծով առակէ, և զախտաւոր շարժմունս մեղաց՝ ալեօք նշանակէ. յորոց հոգին երբև ուղևոր 'ի նաւի մարմնոյն չարաչար խորտակի:

[illegible]: 2 օրին. [illegible] կամ [illegible]:

(3) [illegible]: Ակնարկէ 'ի բանն. (Ե. 30.) * Աղաղակ արասցէ վասն նոցա տէր յաւուր յայնմիկ երբև զձայն ծովու ամբոխելոյ ալեօք || . ուր 'ի նախընթացսն խօսի զհարուածոց տանն Իսրայէլի՝ առակելոյ յայգի փշաբեր. (համար 25. 26:) Եւ [illegible] ասէ՝ վասն բանին. * Վաղվաղակի արագս ընթացցին || են: Իսկ 'ի [illegible], հայելով 'ի բանն, * Յաղագս հեռաւորս, և ածցէ զնոսա 'ի ծագաց երկրի ||. են: Որ [illegible]. զոր և խնուն հոգևոր խորտակման յարմարել՝ ոչ է ընդդէմ, կամ անպատշաճ: մի օրին. [illegible], որ բարձրաձայն ասել:

(4) [illegible]: Յորժամ 'ի մանկութե, կամ 'ի ծագել բանաւորութեան՝ յառաջ քան զշարժել ախտից բնութե, գնայի հանդարտութբ երբև զնաւ 'ի խաղաղ ծովի, [illegible], սակաւ ինչ երկնեալ դժուարութե կամ փորձանաց զգալով 'ի շարժել ցանկութե, (որպէս զհողմն՝ որ յառաջէ քան զալէկոծութիւն,) [illegible] 'ի մէջ [illegible]. զայս փոքր երկնեալ ունելով յաղագս սակաւ միջոցին՝ որ 'ի մէջ անախտ հանդարտութեան մանկութեանն, և 'ի մէջ պատերազմի ախտաւոր շարժմանցն. զի մանկունն սակաւ ժամանակս վայելէ յանխռովութեան ախտից. և երբև սկսանի ճանաչել զխրատսն նոցա և զանկարգութիւնն, երկնեալ աշխատութեան ծնանի 'ի սիրան, և խորշումն յածպաշտութէ: Կամ, զայս երկնեալ կրելով 'ի վերայ սակաւ միջոցի դժուարութեանն՝ որ 'ի մէջ աշխատութե պատերազմին՝ և 'ի մէջ հանգստեան հոգւոյն. զի դժուարութիւն նուաճելոյ զախտս՝ 'ի սկզբանն է. և սակաւուկ մի կրթեալ, հանգչի հոգին 'ի բռնութէ ախտից, և դիւրանայ առաքինութն. որպ և որ վարդապետս ասէ. (մեկն. երգ. 80:) * Դառն է 'ի սկսման առաքինութիւնն, և յետոյ քաղցր ||: Կամ, զայս երկնեալ ունելով յաղագս սակաւ միջոցի ժամանակին՝ որ 'ի մէջ աշխատութեան սատ կենաց, և հանգստեան հանդերձելոյն: Արդ՝ ասէ յայսմ երկնեալէ զարհուրեալ, որպէս թէ յամրայնի ձմեռն հասեալ էղէ, երբև ձինախառն հողմով, [illegible], հողմով որ յարուցանէ զերրադարձ ալիս խռովեալս. այսպէս շարժմունք ախտիցս խռովեցան և խորտակեցին զնաւ հոգւոյս մեղօք: [illegible] ասի՝ յորժամ ալիքն մի զկնի միոյ երիցս դիզանան. և [illegible], կամ զբաղխումն ասէ՝ որով ալիք հարկանեն զնաւն, և կմ զառ միմեանս դիպումն նոյն իսկ ալեացն՝ յորժամ հակառակ հողմով փոթորկեալք, կամ յափն ծովու և 'ի ժայռս բաղխելով միմեանց ը

ռաջ եղանեն ։ Իսկ 'ի մարդն այսպիսի երեքպատիկ յուղմունք են փոր-ձութիւնք աշխարհի, մարմնոյ, և սատանայի. կմ զոր առէ յովհաննէս ( ա. Թղթ. բ. 16.) ցանկութիւն մարմնոյ, ցանկութիւն աչաց, և ամբար-տաւանութիւն աստի կենաց ։ Այսպէսն, Էբր այն ըն հաւէալէջէ յմեան, են, յերիս օրինակս այսպէս դնի. Էբր այն ըն հաւէալէջէն, յմեան յամար-նի . . . ամբոխեաց շնանպարփոունին ։ Եւ ը այսմ ընթերցուածի այլևայլ յարմարին իմաստքն. ա, մինչդեռ 'ի կեանս աշխարհի և կրօնաւորու-թեանս աներկեւղաբար և վստահ սրտիւ գնայի, թեթև կասկած ևեթ կրելով 'ի մտի ընդ ձախորդ պատահումն ինչ, եթէ զի այնչափ փոքր է միջոցն ը աշխատութիւն և ը հանգիստ, մինչև թուէր ինձ թէ արդէն հասեալ իցեմ 'ի հանգիստն. ուստի յայսչափ սակաւ միջոցի ոչ կարծէի հանդիպել վտանգաց ինչ, այլ վստահութը գնայի, զոր օրինակ խաղա-ղիկ օդով որ մերձ իցէ 'ի նաւահանգիստ ։ Այլ ահա որպէս թէ ձմեռն յանկարծակի գործիցի յամարանի, յուղումն սաստից ամբոխեաց շնան-դարութեն հոգւոյս, և մատնեցայ 'ի վտանգս. Ուփ նուն են ։ Այս

իմաստք առաւել ըստ կարգի երևին ։

(5) Ուփ նուն ։ Հոգին՝ որ կազմեցաւ յայ ը բնական և ըստ ձրիական կատարելութեանցն եթէ զնաւ բարեյարդար, խորտակեցաւ յալեաց մե-ղաց. խորտակումն՝ մարթ է իմանալ զկորուստ անմեղութեան ստացա-նին ։ Ծանիր, զի 'ի յաջորդն սորագրէ զմասունս նաւին ըստ կազմու-թեանն որ լինէր յայնմ ժամանակի. վասն որոյ ուրեք ուրեք աղօտ երե-ւին մեզ, այլազգ դոլով քան զաւորուն այժմու ժամանակիս ։ Այլև յիւրաքանչիւր բանսն չէ գիւրին որոշակի նշանակել զյարմարութիւնն առ մասունս հոգւոյ, կամ առ իւրաքանչիւր մասս մեղաց. զի ինչ ինչ դնի միայն առ 'ի սատակացուցանել զթշուառութիւն խորտակմանն՝ թէ նաւին, և թէ հոգւոյն ։ Սակայն առ հասարակ զայս իմանութե իմա-ցուք 'ի մէջ նաւին և հոգւոյն. զի ներքին կամ ստորին կողմն նաւին նշանակէ զզգայական մասն հոգւոյն, վերին կողմն՝ զբանական մասն. իսկ այլ շարժական կազմած նաւին ցուցանէ զբնական և զգերբնական ձիրս ։ 'Ի հեռևեալսդ համառօտիւ զմի կամ զերկուս 'ի յարմարութեցն

նշանակեմք ։

(6) Թւոցն յէնարկութէ ։ Ըստ ոմանց իմանի թիակաց տեղին. բայց լա-ւս իմանին փայտք առագաստից. ( էյրի, կմ էկրի. ) որք եթէ ձեռն կամ բազուկ՝ կալեալ և տարածեալ ունին զառագաստն՝ որպէս թևս նաւին ։ Հոգևորապէս իմն զբարձումն ձեռնկալութեն այ, և զանդորձ

ձմանն զգեցութեան հոգւոյն սը ։

(7) Կայտ ամբարձման ։ Մեջին բարձր գերան կամ սիւն նաւին. ( օրթա տիրէկի.) իմեցաւ 'ի կայէր Էուրոյ, 'ի տեղւոյն յորում հաստատեալ կայր ։ Ուստի առագաստն Բոչարան, մեծ առագաստն՝ որ կախեալ կայր 'ի կայմն, պատառեցաւ յանկարկատելի ծուէնս, մասունս, կտորս ։ Ըստ հոգևորին՝ կործանեցաւ յոյսն. և ջանք առաքինութեան որք հաստա-

տեին 'ի յոյսն, ցրուեցան ։

(8) Ասասան յփողակնաց ։ Չուանք՝ որք ձգեն զառագաստս և զայլ փայտս կամ զձողս նաւին, խզեցան ։ Ըստ հոգևորին՝ խրատք առաջ-նորդաց դատարկացան. կամ սիրութե հոգւոյ թուլացաւ. կմ երկիւղն

այ բարձաւ ։

(9) Տէարան փղխոյն ։ 'Ի վայր անկաւ տեղին շինեալ 'ի գլուխ նաւին՝ առ 'ի դիտել զՃանապարհ ծովուն, կամ զգալուստ այլ նաւուց, կամ զաստղն առաջնորդական 'ի գիշերի ։ Մնաց խնցան զդրօշակն. ( ա ըդ-պայքարին. ) բայց ոչ 'ի դէպ ։ Հոգևորապէս, արթնութիւն մտաց և

խոհեմութիւնն կորեաւ ։

(10) Աղաւանդակին պարան : Հաստ պարանն՝ կապեալ 'ի վերուստ կայմին մինչև 'ի վայր 'ի շրթունս նաւին, յոր հաստատեալ կան այլ չուանք, զորս սպասանդակ կոչէ : Հոգևորապէս, օրէնքն՝ յոր հաստատեալ կանոնք վարուց, 'ի մոռացումն եղեն :

(11) Աղաւանդակէ խարխին : Հաստ պարանն (հալածն) յոր կախեալ կայ խարիսխ կամ երկաթ նաւին. կամ, խմմնի առուար կոճղն, յոր մրկի ծայր պարանի խարսխին : Ըստ հոգևորին՝ համբերութիւնն սպառեցաւ, որ բանայր զծանրութիւն աշխատութեան :

(12) Լոսծք ափուարք : Երկոքին հաստ գերանքն՝ որք 'ի գլխոյ կողմն նաւին կցորդին ընդ միմեանս՝ երբև լուծք 'ի պարանոցի : Ըստ հոգևորին, խաղաղ միաբանութիւն հոգւոյն և մարմնոյն քակեցաւ :

(13) Սամք ուղղչացն : Փայտն անցուցեալ 'ի գլուխ ղեկին՝ առ 'ի դարձուցանել զայն. (տիւմէնի գլուխ.) կամ, ցցուեալ փայտքն՝ յորս անցուցանին թիակք նաւին. (տրապատն.) զի ղեկօք և թիակօք ուղղին հետք նաւին. և սոքա փշրեցան, այսինքն ծուեցան 'ի բռնութենէ ծովուն : Հոգևորապէս, բարոյական ուսմունք՝ որք շարժեն զղեկ մտաց, կամ զթի լեզուի և ձեռաց, թիւրեցան 'ի մոլար ուսմունս աշխարհի :

(14) Լոսփ հիմանն : Յատակ նաւին ընկղմեցաւ, որ է հիմն և հաստատութի բոլոր շինուածոյն : (նաւու թէքնէ :) Ըստ հոգևորին, զգայական ծանուցումն և բաղձանքն՝ որք 'ի մարդն հիմն են բանական ծանուցման և բաղձանաց, ընկղմեցան 'ի մարմնականս :

(15) Ղէկացն կառուցմանց : Կազմած ղեկին. (տիւմէնին չէնքը.) անդրէն, այսինքն անդէն կամ խկոյն առղան, ընկղմեցան. ուստի և ըղձոյն յարմարութեան, ուղղութիւն ընթացից նաւին խանգարեցաւ : Ըստ հոգևորին, միտքն 'ի մարմնականս ընկղմեցաւ զհետ զգայութեանց. որով գնացք մարդկային կենաց խոտորեցան յուղիղ ճանապարհէն :

(16) Ողնափայտին պատպատարան : Ողնափայտ է հաստ գերանն յատակի նաւուն՝ երկայնեալ 'ի խելաց մինչև 'ի գլուխն, յոր ոտնդին կողք նաւին. (նաւի օմուրղա :) իսկ պատպատարան՝ կամ զնոյն իսկ ողնափայտն առէ, երբ զի ամրութիւն է կողից և տախտակաց յատակին, և կամ զհաստ բևեռն՝ որովք ողնափայտն ոտնդի ընդ այլսն : Ըստ հոգևորին, ցանկական մասն՝ որ կայ 'ի միջնոյն մարդոյ, խորտակեցաւ յանպատշաճ ցանկութիւնս :

(17) Կապարանք ղըրկին : Կողքն՝ որք կապեն զտախտակս յատակի նաւուն, (զաղուռղա.) յօղափէղա, քակտեցան : Ըստ հոգևորին, ջիլք և կողք՝ որք կապեն և պատեն զկուրծս և զթիկունս մարդոյ, յանչափ ցանկութենէն թուլացան, և անպիտանացան առ բարի ցանկութիւնս :

(18) Գոգք ամփոփման : Մէջն, կամ ներքին դատարկութիւն նաւին, (ամպար.) յորում ամփոփին բեռինք, անպիտան եղև քայքայմամբ կողից և տախտակաց : կաղմածոյ : այլ օրին. կաղմաւածոյ : Ըստ հոգևորին, ընդունակութիւն ցանկականին առ հոգևոր շարժմունս կամ իղձ կորեաւ. զի շնչաւոր մարդ ոչ ընդունի զհոգւոյն այ. (Ա. Կոր. Բ. 14:)

(19) Խելք շրթանցն եղերաց : Յետին կողմն նաւին՝ ուր շրթունքն եղերին, (իչին քիւփէշթէնկերը.) խախտեալ 'ի բաց անկաւ : Ըստ հոգևորին, բանք ածայինք՝ որք են շնորհ շրթանց, պակասեցան 'ի մտաց :

(20) Պաղպաջուանք բաղձականացն : Զարդարուն նաւարանք՝ որք 'ի խելաց կողմն շինին. (օթուրախի տեղուանք.) կամ մանաւանդ, վրանաձև կամ կամարայարկ հովանոցք պատրաստեալ 'ի կառուց կամ 'ի տախտակէ 'ի խելս նաւին՝ հովանի առնել յարևէ և յանձրևոյ. որպէս երևի 'ի ցըռ-

կանաւս : Ըստ հոգևորին , խաղաղութիւն հոգւոյն , կամ մխիթարութիւն 'ի վիշտս՝ բարձաւ :

(21) [illegible] [illegible] : Վանդակաշէն յօրինուածոյն գեղեցկութիւնն՝ որ յարտաքին երես խելացն , ( կամ ղամարային , ) [illegible] , էջ 'ի յատակ ծովու , կամ հարթեալ հաւասարեցաւ : Ըստ հոգևորին , զարդք առաքինութեանց կամ արհեստից՝ 'ի բանական մասին անչքացան , և անպտուղ եղեն :

(22) [illegible] [illegible] : Փառաւոր նաւարանն՝ յոր հանգչի նաւապետն , կամ իշխան նաւուց . ( Թաւհտրավան : ) Ըստ հոգևորին , խելապատակն՝ յոր ելք յաթոռ առաւելապէս հանգչի հոգին , չփոթեցաւ պէսպէս ցնորիւք երևակայութեան :

(23) [illegible] [illegible] : Տախտակամած նաւին , (կէօվէրթէ .) 'ի կապակցութենէ միմեանց բաժանեցան : Ըստ հոգևորին , 'ի խռովութենէ կամ 'ի խանգարմանէ երևակայութեան՝ կարգաւոր խորհուրդք մտաց , և փոխադարձ համաձայնութիւն ներգործութեանց կամաց պառակտեցան . մինչև զոր միտքն բարի ճանաչէ , կամքն չհաճի . և ընդ որ կամքն հաճի , երևակայութեն խափանէ . և այնպէս պատերազմունք և կռիւք են 'ի մարդն : ( յակոբ . դ . 1 : )

(24) [illegible] [illegible] : Բևեռք՝ որք պինդ ունին զտախտակս [illegible] , եղին 'ի տեղւոջէ իւրեանց : Ըստ հոգևորին , երկիւղն այ , արդարութիւն օրինաց , յիշատակ մահու , մտածութիւն ունայնութե աշխարհի , ևն , որք պինդ ունին զմիտս և զկամս 'ի բարի միաբանութեան իւրեանց , բարձան 'ի սրտէ : Եւ վասն այսր ամի թշուառութեանց

(25) [illegible] [illegible] : Հանդիպումն գործոյն՝ որ 'ի խորտակման նաւին և հոգւոյս , յիշատակարան ողբոց լինի եղև : Եւ զոր օրինակ [illegible] , նաւապետն առաջի խորտակեալ նաւուն կալով , և զձեռն 'ի ծնօտին դնելով ողբայ դառնապէս զկորուստ նաւին , մանաւանդ 'ի տեսանելն զմնացորդս նաւին՝ որք 'ի ծփմանէ ալեաց ծովուն իբրև զխողխողեալ մարդ ոք աղաղակեն ողորմելի ձայնիւ , այսպէս ոչինչ օտար է 'ի ճշմարտութենէ՝ համարել թէ կազմօղն և ուղղիչ հոգւոյս քս հանդերձ հրեշտակօք ողբայ զմեղօք խորտակելոյն հոգւոյս : Որպէս և ելաց [illegible] [illegible] , յօրինակ մարդկային բնութեանս , [illegible] [illegible] , զղազարոս . զոր ազգակից ասէ՝ կամ մեզ , ըստ որում մարդ էր , և կամ քսի , ըստ որում հրէայ՝ և սիրելութեանն կապով ընտանի . ելաց և [illegible] մանկիչ . այս չէք յայտնապէս 'ի գիրս . այլ կամ իմմայ զալն 'ի մանուութեան գիշերին . (եբրայ . ե . 7 .) և կամ զաւաղելն ան ասէ . * Վայ յոյր ձեռն որդի մարդոյ մատնեսցի || . ( մատ . իզ . 24 : ) Սակայն 'ի լալոյն քսի ոչինչ շահեցան եղէմ և յուդաս իբրև զնաւ եղծեալ բոլորովին : Իսկ ղազարոս հաւեալ [illegible] [illegible] , մարմնովն 'ի գերեզմանն , և հոգւովն յարգելանս նախահարցն , [illegible] [illegible] քերցն , [illegible] [illegible] , ըմբռնողին քսի , [illegible] , եհան արտաքս յանքոյթ խաղաղութիւն կենդանութեանն :

(26) [illegible] [illegible] : Արդեօք տեսից նորոգեալ զմարմինս , որ խորտակեցաւ ըստ զգայական մասին : [illegible] [illegible] [illegible] ողջացեալ զհոգիս , որ փշրեցաւ ըստ բանական մասին : [illegible] [illegible] [illegible] վերստին միաւորեալ ընդ այ զհոգիս՝ որ բաժանեցաւ կորստեամբ գերբնական շնորհին :

(27) [illegible] : Եղծեալ , աւերեալ :

(28) [illegible] [illegible] [illegible] , իմանալի աչաց մտաց : Եւ եթէ ըզմտրինդ աչս իմացուք , կոչին աչք [illegible] , այսինքն իմաստութեան կամ հմտութե , զի աչօք զբազում իրաց առնումք տեղեկութիւն :

(29) Օրն իմ անցանէ : Արդեօք որ նեղութեան իմս, այսինքն մահուան, յայտնեսցի՛ ինձ օր ընդհէն ժամանէ :

(30) Կանխաւ յայտնութիւն հոգւոյ : Որ կանխաչայցուցանէ ինձ զարտ հոգւոյ : կամ, արդեօք տեսի՞ց զկանխաչայցուցիչ հոգւոյ զանձրևն՝ ինձ 'ի յարտ. այսինքն 'ի ճաշակումն, կամ յարբումն :

(31) Իշէ՞ արդեօք : 2 օրին. Իշէ՞ երբէք : Մինթէ՞ իցէ՞ կարելի, զի ես նմանեալս գազանաբեկ ոչխարի՝ որ ըստ օրինաց պիղծ է և անպատուագելի, վերստին սրբեալ՝ խառնիցիմ 'ի հօտն Քրիստոսի, 'ի դասս հաճելի պատարագաց :

(32) Մաքրեալ օրհնեալ : Եթէ այնչափ սրբեալ մաքրիցիմ, մինչև արժանաւոր լինել յընդունելութիւն սո՞յ խորհրդոյդ : Եթէ համառօտեալ անկանելաբեր. պակասեալ կամ հատեալ անկատարութիւնն հանդիպեսցի : հարազատեալ, լռեալ կամ դադարեալ ողջոյնդ խաղաղութեան :

(33) Յաւիտենի յաւէտ : Սկսեալ 'ի բանէն՝ իւր Էրէ լոյս ողորմութեան, ևն, մինչև ցվերջ գլխոյս կապեալ է պարբերութիւն բանիցս : Եթէ առէ՞ լոյս ողորմութեան քո ցուցցի, եթէ դուռն գթութեան քո բացցի, ևն, յաւէտ, այսքինք առաւելապէս կամ միշտ երանելի վիճակաւ հաւատ ընկալեալ հաստատուն յուսով, և վառահացեալ 'ի քո փառակից հոգւոյդ, ոչ միայն քաւութիւն գտից, այլ կեանք և երանութիւն : Յաւիտենս անվախճանաբար : զայս հաւատ և վստահութիւն իբր անկորուստ աւանդ առ իս պահելով, առհաւատչեայ, ապացոյց կամ գրաւական ճշմարիտ յիշատակի բարերարութեան քո, 'ի յէր անեղծութեան, իբր պարգև անմահութեանն՝ որ լինելոց է անճառելի անուամբք կամ զօրութեամբ : Որ և փառաւորեալ ես 'ի բուն էութեանդ, և 'ի մշտնջենաւոր բարձրութեան. բայց և 'ի մէնջ միշտ վայել են քեզ փառք յայսմ յաւիտենի աշխարհիս, այլ և 'ի հանդերձեալ մշտնջենաւորութիւն յաւիտենէ, այսինքն 'ի հանդերձեալ մեծի աւուրն յետնում որով յայտնելոց ես, և այն օր է մշտնջենաւոր, զի ոչ ունի երեկոյ և կամ գիշեր :

---

Մերոպէն յաւելուած հրէին հեծութէ՝ նորին հոնոկէ, առ նոյն ամբողջամաց բանի :
'ի խորոց սրտից խօսք՝ ընդ քեզ :

## ԲԱՆ. ԻԶ.

ա̅. Ես սիրտ՝[1] ստուգապէս և իրաւաբար, ընդ որս որք ըստ ձայնից կողկողանացն՝ և զբանիցն յարմարութեան հանդերձեն, և 'ի նոյն գիր բերեալ զաւարտմունս տանցն, որովք առաւել սաստիկ մորմոքեալ ճմլեցուցանէն զաղէտս կարեացն սրտին ըղձից առ արտասուացն ըղխմունս. ուստի և բազմեալ իմ 'ի գլուխս պարու ակմբից դասու այնր երախանաց՝ որք զլալեացն յեղանակեն բանաստեղծութիւ, և ես ընդ նոսին՝ նոցին հեծութիւ՝ աւաղական ձայնարկութեամբ՝ զանձինս տարածանեմ զվըշ-

տակրութի ։ Որ [2] ոչ բնաւին մեռեալ աշխարհի, և
ոչ իսկապէս կենդանի էր . ոչ ջերմ սոսկ, և ոչ
ցուրտ յատուկ, ըստ առակի աւետարանչին՝ գրեալ
'ի յայտնութեն . երիցս ատելի՝ երրեակ տէրութեն,
և ամենատես արարչութեանն ։ Եւ այս են պատկա֊
նեալ [3] Թախծականացն կերպագրութիք, կրկին ո֊
ղորմելի այսու երևեցեալ, որ 'ի մի գիծ սահմանեալ
կացուցանեն զԹշուառութեցն զօրինակ, այսպիսի
կցորդութեամբ շաղկապեալ ։

Ժ. Պարտուցն [4] ժխտեալ տաղանդացն՝ ձեպով մե֊
ծաւ 'ի տուժի . ես ապիկար մատնեալ՝ անարժան
գործովքս յիրաւի . վատնիչ արքունի գանձուց՝ [5]
կրկնագատ և անթափելի . պատասխանատու մեծին՝
ըմբռնեալ անհրաժարելի . բիւր քանքարոց խնդիր՝
ես չունիմ [6] կշիռ մի ունկի ։ Աներարեխօս կապեալ
'ի պահեստ՝ դառն արգելանի, հեծութ և վաստակ
ցաւոց՝ ճաշակեալ յանհնչոյլ բանտի, անապաւէն
տանջեալ անթոշակ՝ կամ ողորմելի . [7] այլ յեղանակ
ինձ ողբականաց՝ աստուստ կնքեցի, փոխատրեցի սա֊
վին բարբառով՝ կոծ կսկծելի, կարգագրեցի շրջա֊
բերութեամբ՝ 'ի նոյն պայմանի, [8] անհատական Թիւ
խորհրդական՝ երկեակ տասնեկի ։ Աղքատութեանն
հնոց՝ յամենուստ մասանց մրրկի . անպատսպար
Թշուառ [9] վտանգեալ սրտիւ 'ի դրաւի . տարակու֊
սեալ հոգւով՝ ապաշնորհ այր 'ի վրիպակի . [10] անխը֊
նամելի հայցմամբ՝ դատաստանն յինէն պահանջի ։
Մեղաց և մահու զինուք [11] զգայարան զաղտնեացս
խոցի . անփրկելի մատնեալ բռնութե չարեացս գե֊
րի . սուր սուսերաւ սաստից՝ գոյութի բնութեանս
յօշատի ։ Յիշատակաւ բեմին՝ [12] ատոստին 'ի դա֊
տաստանի, անծագելի մռայլ՝ չարատես աչացս երևի .
անձեռնկալ՝ կապեալ՝ եղկելիս 'ի տարակուսի, ա֊
հարկուն դիմաց՝ պատկերի վերնոյն տեսանի ։ Յոյժ
անարև՝ և անվերարկու 'ի տարտարոսի . անապաւէն
մոլար՝ մրմռքեալ 'ի հուր գեհենի . անյայտնելի կո֊
րուստ՝ կործանեալ 'ի մեղաց վհի ։ Ահա զոր ունիմ
[13] արծաթ անպիտան՝ ոչ երբեք յարգի, և ոչ ընդու֊
նի և կամ համբարի՝ 'ի գանձ տէրունի . հայցուած
պղտոր և ձեռն անմաքուր՝ աննուիրելի ։ Ալբե֊

կեալ սրտիւ մատանց տատանմամբ՝ յոյս առեալ
դարձի, [14] զդէմս 'ի յերկիր եդեալ պաղատիմ մօրդ-
յոյ. բարեխօսեա մաղթեա քաւութի՝ ինձ մեղաւո-
րի. դու զօրաւոր [15] փրկանակ կենաց՝ խիկուհի եր-
կնի. [16] քեզ օրհնութիք ձայնից՝ և բուրմունք խըն-
կոց 'ի յերկրէ, և անուշից իւղոց մատուցու՝ մըն յա-
մենայնի:

Է. Քերդ՝ յասացեալ ողբոցս հիւսուած՝ այլ մասն յա-
ւելի. բարերարին շնորհաց արտասուաց պտուղ մա-
տուցի. զկորստեան խորս չափելով՝ զորքանն երբէք
ոչ գտի. [17] մամնաւորօք բանիւք՝ 'ի հանդէս նորին
ջանացի. զմտացս արադեալ զԹեւս՝ [18] յերեւոյթ իւրն
ոչ հասի. զուշին պարտութի յանվթարելեացն՝ բա-
ժակ բարկութե 'ի ձեռն իմ առի. զտարտամութի
տարակուսանացն՝ իբր ճաշակումըն մահու արբի:
Իսկ այժմ զյանցիցն յաճախութի՝ ողորմելի ձայնիւ
յերգ արկի. աներեւոյթ կրակարան տապոյ՝ բորբոք-
մամբ մեծաւ անզովանալի. անտեսական իմն քրայս
հալոցաց՝ սաստիկ եռացմամբ անշիջանելի. [19] սլաքս
նետից պատկանեալ դեղովք՝ 'ի շտեմարան խորուէ
սրտի. խիթք ցաւոց խոցոտման մահու՝ 'ի գնացս ե-
րակաց զդյութե լերդի. կիրք երկանց [20] անճարակ
ճեպոյ՝ 'ի պատուած աղեացս անելանելի. [21] անզօ-
րելի դեղոց ջերմութի՝ 'ի յերիկամանց մասունս եր-
կակլի. անհնարաւոր դառնութի մաղձի՝ [22] 'ի նախա-
դուռն իմոյս կոկորդի: Յաւաղս ձայնից լքուցան-
ղաց՝ 'ի փողս շնչոյս խոշորս հնչի. [23] բազմահատուած
էութի ընութես՝ ներհակք միմեանց 'ի պատերազմի.
երկշոտութբ կարծեաց վարանեալ՝ ամենայնիւ կայ
'ի վտանգի. հարազատայ դաւաճանութի՝ անհաշ-
տելի 'ի կոտորուածի. ոչ մեռեալ և ոչ կենդանի՝
Թաղեալ 'ի մեղաց դարշութե տղմի. կասկածաւոր
պատժապարտութբ՝ վերակնարկելով քեզ բարերա-
րի, յանակնկալս կենաց վհէ՝ արտաքերել 'ի լոյս
անձկալի:

Է. Սոյն ինքն [24] որ զայս՝ բան տպաւորեաց, ընդ եր-
ջանկա՝ ցըն պսակեսցի. ակնարկելով քո ողորմութե,
անարատ՝ ցըն հաղորդեսցի. վասն զէնման ոյ բա-
նիդ, բարեգործեալ՝ քև կենդանասցի. [25] օրհնու-

Թի՝ գովեալ քո շրթանց՝ 'ի գլուխ բաշխողի՝ այսր մատենի. Հաստատեսցի ըղձականութի՝ սողոմոնեան բանիս առակի. Նկարագրեա՛ հոգւով քո՝ բարձրեալ, 'ի նորոգումն անեղծանելի ։ Օ՛ի դու միայն ես երկայնամիտ, Ներօղ՝ քեզ փառք յաւիտեանս. ամէն ։

---

(1) [illegible] ։ Արժանապէս և յիրաւի՝ ընդ այնոսիկ որք ըստ ողբական ձայնից կազմեն և գյարմարումն կամ զյօրինուած բանին, 'ի նոյն գիր դարձուցանելով [illegible], զվերջաւորութիւն չիւր տանն. ( մի օրին. [illegible], որ վերջակ թուի ։ ) որով առաւել մարմաջիչ լինին բանքն, և յարատեւս շարժեն, [illegible] և խմ 'ի գլուխ այնպիսի դասու լսողականաց, ևն ։ Այսպէս բայս [illegible] յարելի է ընդ յարաբերականին՝ [illegible]. և առեալ՝ [illegible] թարմատար է. սոյնպէս յաջորդն, և [illegible], բացայայտիչ կրկնութիւն է ։ [illegible]. ժողովոյ դասուն, [illegible], այնր խմբի լսողականաց ։ այլ օրինակ գնէ, [illegible]. այսինքն պարաւոր խմբից, որք պար կամ դաս կազմեն ։ Եւ զկնի, [illegible]. 3 օրին. [illegible] ։ Այսու սկսուածով բացայայտէ ո՛ր վարդապետս զհանգամանս և զդիտաւորութիւն ողբերգակ կամ եղերական բանաստեղծութեան. եւր զի ո՛չ միայն եղանակ ձայնին ողորմագին լինելոց է, այլև քերթուածք տրտմական բանիցն կազմին տոնաւոր չափով և նման յանգիւ. որպէս զի կրկնութե՛ նոյն ձայնի աղէտք սրտին առաւել գրգռեսցին ։ Վասն զի բնական յօժարութիւն է մարդոյ՝ յամ կիրս ուրախականս կամ 'ի տրտմականս՝ միշտ 'ի նոյն դարձուցանել զխօսսն. և որպէս առակն ասէ, ուր ցաւս կրէ ոք, անդր արկանէ զձեռն ։

(2) [illegible] ։ Թէպէտ մկրտութե՛ և ուխտիւ կրօնաւորութե՛ և քահանայութեան մեռեալ եմ աշխարհի, բայց սրտիւ և գործովք վարիմ ըստ ցանկութեան աշխարհի. ուստի և ո՛չ [illegible], որ զսիրտ և զգործ խնդրէ ։ [illegible], ո՛չ կատարեալ ջերմ և եռացեալ յամ, և [illegible], զուտ ցրտացեալ, կամ օտարացեալ 'ի հաւատոց և 'ի կրօնաւորութենէ, այլ գաղջ, ( ըստ յովհան. յայտն. գ. 15. 16 ։ ) վասն որոյ [illegible], այսինքն յոյժ առելի և զզուելի՝ արժանի փսխելոյ ։ Հին լուծ. մեկնէ՝ երկցս, այսինքն հոգւովս, մարմնովս, մոգքս ։

(3) [illegible] ։ այլ օրին. [illegible] ։ Տրտմական բանիցն կազմութիւնք. [illegible]. այլ օրին. [illegible] ։ կրկնակի կամ առաւել ողբագին լինելով այսու, որ 'ի մի գիծ, 'ի մի տառ աւարտեն զձև աղէտի թշուառութեանցն ։ Յաղագս չափաբանեալ աղօթից ծանիր, զի բովանդակն է նոյնայանգ, աւարտելով 'ի տառս ի. բայց խորքանչիւր անգամն կէտ տողն ոչ է զուգավանկ. զի յերկրորդ համարն, [illegible], ոմանք 'ի 14, և այլք 'ի 15 վանկից բաղկանան ։ յերրորդ համարն, [illegible], ոմանք բաղկանան 'ի 14 վանկից, և բազումք 'ի 19, կամ 18, կամ 20 վանկից ։ Իսկ 'ի չորրորդ համարն, [illegible], ամենեքին բաղկանան 'ի 18 վանկից ։

(4) [illegible] ։ Զպարտս տաղանդաց շնորհաց ուրանալով, [illegible], մեծաւ տագնապաւ և փութայմամբ պարտիմ տուժել ։ 3. օրին. [illegible] 'ի [illegible] ։ որոյ թէ. զպարտս տաղանդաց ժխտելով միայն ծառայն՝ նա մեծաւ տագնապաւ

'ի տուժի միոյ. իսկ Էւ-ապիխար մաթնէաւ, Նաև անպարժան գործովք վասնիչ գանձուն, եւն :

(5) Կըրնէ-փարա : Կըկին դատաստանի պարտաւոր. մի՝ վասն չշահեցուցանելոյս զգանձն արքունի. և միւս՝ վասն կորուսանելոյս, կամ զի ապերախտ գտայ առ Ներօղն ած, և անողորմ առ պարտապան եղբօրն : Ն ան-Բոֆէւէ, անզերծանելի 'ի ձեռն ջատագովութեան, կամ միջնորդաւ, կամ փախչելով :

(6) Կըշէա ֆ ունկի : Բառս ունկի ըստ հին լուծ. կարծիս սեռականն ունկ կամ ունգ բառին, այսինքն մղեղ, (յարդի մանրուք) : Բայց նորա սեռականն լինի ընգոյ, և զի տատանօր բանն է 'ի վերայ չափոց, ուստի ուղիղ ևս իմանի ըստ յունական բառն՝ ունգիա, կամ ունծայ, որ է ծանրութիւն 8 կամ 12 դրամոց. և ասել կամի. յինէն լինի պահանջումն բիւր տաղանդոյ, որ առնէ բազում հազարաւոր հօխայս. իսկ ես չունիմ գինէ չափ մի 8 կամ 12 դրամ փողոյ առ 'ի վճարել : Ցայլ տպ. եղեալ էր տաղանդոյ. որպէս և յաջորդն, ... . բայց ըստ լաւ օրինակաց եդաք, տաղանդոյ, եւ :

(7) Աւաղ ... : Ոմանք ըստ հին լուծ. զայն իբրև ածական անուն իմացեալ, մեկնեն՝ տարբեր կամ զանազան եղանակ. կամ թէ այս ողբական ձև տարբեր է յայլ ողօթից : Բայց լաւ ևս իմանի իբրև շաղկապ, որպէս թէ ասել. ես յանձնայլ բանի կամ անօգնական և անպաշար, այլ միայն յեղանակ լալականաց ինձ մնաց տառէն :

(8) Անհատական Բի. անհատանելի կամ անբաժանելի թիւ. զոր ոմանք իմացան 'ի վերայ վանկից իւրաքանչիւր տողի. իբրև թէ 13 վանկ գոլով, կոճատ թիւ է, որ չբաժանի 'ի հաւասար մասունս : Այլք իմացան ըստ հին լծ. զհաւասարութէ տողիցն, համարեալ թէ իւրաքանչիւր տողք միաչափ են 'ի վանկն և 'ի հեգն, և ոչ հատանի տուն 'ի տանէ : Բայց և ոչ մի 'ի մեկնութեցդ ունի զտեղի, զի անհաւասար են տողքն՝ ըստ տացելումն 'ի լծ. 3 : Այս այլազգ իմանալի է. եթէ զյաջորդ բառն Երկոտասան տասնէկք, իմացուք՝ երկոտասան, որպէս այլք իմանան, և մեկնեն 'ի վերայ երկոտասան տողիցն՝ սկսեալ 'ի Պարտուցն ծխոծեալ տանէն մինչև ցայս առաջիկայ տունս, ըստ այսմ երկոտասան թիւն ասի անհատական, այսինքն աննուազելի կամ անպակասելի. իբր զի խորհրդական գոլով այս թիւ, ած միշտ զպակասումն նորա լնոյր և ամբողջ պահէր. որպէս փոխանակ յուդայի լնորեաց զմատաթիա՝ 'ի լրումն երկոտասան առաքելոց. և 'ի լրումն երկոտասան ազգաց ժառանգութեան՝ յերկուս բաժանեաց զցեղն յովսեփայ. (ծննդ. խը. 5 : բ. օրին. լգ. 17 :) Սակայն հարազատ իմաստս բառիցն Երկոտասան տասնէկք, իմանալի է՝ երկկիցս տասն, այսինքն քսան. և յայս առնէ զտառն ի, յոր աւարտի տառնաւորն, և ասի անհատական, զի մի անհատ ձայնաւոր գիր է. Ն Բի խորհրդական. զի նշանակէ զքսան, որ յայսմ բանի խորհուրդ ունի. զի վերագոյն զաւակ քանքարացն յիշեաց. իսկ այն առակ 'ի ղուկ. (ժթ. 13.) անուանէ մնասի գնի, և ասի՝ թէ առաջնոյն եա տասն մնաս, և նա յարգելով զայն՝ շահեցաւ այլ ևս տասն. և եղև ընդ ամէնն քսան. (անդ. 16 :) Արդ՝ ո՞ր վարդապետս ծանուցանէ, թէ վասն այն զտառնաւորս ի գրով աւարտեցի, զի ցուցից զիս պարտաւոր քսան մնասուցն ևս. զի բազմապատիկ շնորհացն՝ զորս ընկալայ յայ, այլ և նոցին համեմատեալ բարեացն՝ զորս շահել կարող էի, և հեղգութեամբ կորուսի զառեալն և զանելին : Զայս միտս յայտ առնէ ասելն յառաջագոյն, Կարգադրեցի ուղղաբերութի 'ի նոյն պայմանի, այսինքն կարգեցի զտառնաւորս դարձուցանելով 'ի նոյն կերպ աւարտման 'ի գիրն ի. յոր 'ի վերայ բերելով թէ անհատական Բի, եւն, տայ իմանալ. որ է անհատ թիւ նշանակիչ

քանի ։ Ոմանք իմանալով զայս 'ի վերայ ամաց իւրաքանչիւր տան, այսպէս բացատրեն․ կազմեցի զտանաւորս այնպիսի թուով, որ 'ի ներքոյ երկու տասին անհատանելի է 'ի հաւասար կէս ։ Այսպէս համառօտն Պարտուղն ծիրէալ մինչև յերկրորդ համարն ըստ մեծի մասին բաղկանայ 'ի 14 վանկից․ որոյ կէս է 7․ որ 'ի ներքոյ տասին ոչ բաժանի 'ի հաւասար մասն ։ Իսկ յերրորդ համարէն մինչև 'ի վերջն բաղկանայ ըստ մեծի մասին 'ի 18 վանկից․ որոյ կէս է 9, որ և 'ի ներքոյ տասին ոչ հատանի 'ի հաւասար կէս ։

(9) Վարդենաւորդին 'ի գրոյն ։ Որովհետև աղքատութեն կամ չքաւորութիւն հոգևոր բարեաց՝ իբրև հնոց բորբոքեալ այրէ զիս չուրջանակի, և պարտաւորին գրաւեալ ունի զայլ ամենայն ինչ զիմ փոխանակ պարտուց, աչա վանդեալ կամ սրտիւ 'ի հոգս անմխիթարս․ զի ես թըշուառս անպատսպար՝ անձեռնատու եմ գլխովին․ չունիմ ուստեք յոյս զերծուցանելոյ զգրաւն ։ Եւս առաւել տարակուսեալ եմ հոգւով, զի խմոլ յանցմանց աղաչնորհ եմ առ պարտատէրն 'ի հրեշտակի, բազում սխալմանց ։

(10) Անխնամելի հայրենիք ։ Անզգամ քննութե․ կամ պահանջի յինէն զատաստանն, որում չիք հնար հայցմանց կամ աղաչանօք ։

(11) Զգայարան գաղտնեաց ։ Սիրտս իմ հոգիս՝ որ զգացանիս իմ զգայս, զննուք մեղայս և մահու, դատապարտութեան՝ խիղճս ։

(12) Աշտարին 'ի դրախտին ։ Յիշատակս աչեղ ատենին ատեն իսկ, կամ այժմէն իբրև 'ի դատաստանի անկեալ խաւար երևի չարգեա ալլու, այսինքն պղտորեալ կամ խռովեալ աչացս․ որպէս աչք երկչոտաց 'ի մթան արհաւիրս տեսանեն ։

(13) Արծաթ անգիտան ։ Է բանն երեմ․ ( Ղ․ 30 ։ ) բարի գործք իմ զոր ունէի առէ՝ նախ քան զմեղանչելն, և կամ զոր 'ի մեղս գոլով առ բարի վարդապետութե, ձգնութ, ևն, իբրև ուսս արծաթ ոչ արժէն, և ոչ մտանեն 'ի գանձն այ ։

(14) Զփէժ 'ի յերկիր ։ Արտաքին երկրպագութիւն մարմնոյ՝ կարէ ընծայել նաև առեղծուածոյ, որպէս թագաւորաց լինի, և նահապետք բազում անգամ առնէին այլ մարդոց, կամ հրեշտակաց ։

(15) Փրկանաց կենաց ։ Այսուէն կենացն շնորհաց և փառաց․ կամ գործի փրկութե կենաց․ այսպիսի է սբ կոյսն ոչ միայն բարեխօսութեամբն, այլև ծնանելովն զփրկիչն և զկենդանատուն, և չարչարակցութեամբն արբանեկելովն ընդ նմա 'ի գործ փրկութե ։ Խոնարհ երկին․ խնկապէս կամ ձշմարիտ թագուհի երկնից ։

(16) Բեղ օրհնութեան յայնից ։ Օրհնութիւնն ըստ որում է խոստովանութիւն և բարեբանութիւն սկզբնապատճառին այ բարեաց, է գործ կրօնի, ուստի տիրապէս այ միայն վայելչական ։ Բայց ըստ որում գովեստ գերազանցութե ուրուք, կամ ընծայումն շնորհակալութեան, է գործ յարգանաց, կամ երախտագիտութե, և պատշաճի նաև առեղծուածոյ, յորս առաւելապէս սբ Աստուածածին ։ Իսկ Խոստովանող խոնարհ, և Խաղաղ ծառայութե, են տիրապէս գործք կրօնի և ծառայելութիւնք․ վասն որոյ սբյն յիշատակէ՝ այ միայն ընծայէն ։ Յետ յոբելավորան բանիցն՝ ապաւինելն 'ի պաղատանս առ սբ Տիրամայրն՝ զայն յայտ առնէ թէ ամենայն անյուսից պաշտպան և հզօր խնամակալ նա միայն է ։ Սորին վասն և զ ձ բանն կազմելով մաղթանս առ նոյն Տիրամայրն, խորհրդով սկսանի, Եւ արդ 'ի վերայ այսպիսեաց յասահմանութեանց ևն ։

(17) Մանաւորս բանից ։ Համառօտ կամ սակաւ բանիւք, 'ի հանդէս, 'ի յայտնութիւն կամ 'ի ցուցումն կորստեանս ջանայի ։

(18) Յերկնային երկին ։ 'Ի անսութիւն կամ 'ի բուռն որդիութիւն իլին

ոչ հասի մտօքս . վասն որոյ զուարթն պարտաւորէ, զյաղթիլ մտացս, յան֊վրդովելւոյն, յանսպառելի և յանչափելի խորոյն մեղաց՝ առ ինքն նկատ զայրացման ընդդէմ անձինս . որպէս որ անտարակուսելի առանց զբաղում պարտս, յետոյ ընդ անձինն պատերազմի, տեսանելով զբազմութիւն պար֊տուցն՝ զոր չկարէ վճարել :

(19) Սուր նետից : Վասն մեղաց իմոց՝ իբրև սուր երկաթք նետից, պատ֊ճառեալ տեղոյն, այսինքն սաստիկ մխեալք կամ թխանալք՝ թափանցեն 'ի սիրտ իմ :

(20) Անճարակ ձեռայ : Անդարմանելի բանութեան խիթք ( խոստուկ ) յայլս իմ պատոյսին առանց ելանելոյ արտաքս :

(21) Անզօրելի դեղոց : Անդարմանելի կամ անյաղթելի 'ի դեղոց :

(22) 'Ի նախատանաց : 'Ի գաւիթ կոկորդին, այսինքն 'ի բերանն, կամ 'ի քիմսն :

(23) Բազմահոգութեան ցաւովին : Ցաւթիւն մարմնոյս՝ որ 'ի ներհակ տա֊րերաց կազմեալ, և բոլոր ցնութիւն՝ որ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ բաղ֊կացեալ . և ամենեքին հակառակամարտք, տարերքն ընդ միմեանս, և մարմինս ընդ հոգւոյս, այժմ երկիւղիւ մեղացս և դատաստանին՝ ամե֊նայնիւ ցաւ 'ի վտանգի . առ հասարակ տագնապի մարմինս և հոգիս : հա֊րաւարայ տառապանութիւն, հարաւատք զօրով միմեանց՝ զմիմեանս դաւա֊ճանեցին . և այժմ անհաշտելի են 'ի յարձակման, 'ի կատարել զկրկարս դառն խածուածոյք խղճի մտաց : ուժգնակ . կիսակենդան կալով իմ 'ի գործ տղմի մեղաց, երկիւղալի պատժապարտութեամբ՝ զոր ճանաչեմ և խոստովանիմ, առ քեզ բարեբարդ ամենանամ զաղս իմ, և պաղատիմ հանել 'ի լոյս ցանկալի 'ի վէհէ, 'ի գրոյս՝ որ անակնկալ է կենաց, յորում մնալով, լոյս կենդանութեան ոչ գոյ :

(24) Որ զայս բան : 'Ի բերան աղօթողացն դնէ աղաչել վասն իւր : Կամ մարթ է ասել, թէ որովհետև որ վարդապետս 'ի յիշատակարանի անդ գործակից իւր առէ զեղբայր իւր յովհաննէս, գուցէ նա ինքն արար զայս յաւելուած՝ աղօթել վասն երանելի նարեկացւոյն : Այսմ նման կայ և 'ի բանն ԽԸ . 4 :

(25) Օրհնութիւն փոխելու զն : Օրհնութիւն քո Տէր հանգիցէ 'ի գլուխ բաշխողի, յօրինողի և տուողի խրատանչիւրոց զբանս զգիշման այսր մա֊տենի . որով կատարեցի մաղթանք աղաւնեան բանիս . ( առակաց . ԺԱ . 26 . ) * Օրհնութիւն Տն 'ի գլուխ սփռողաց : ||

---

Մերտին յաւելուած խրխին հեծութեան՝ նորին հոկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

## ԲԱՆ. ԻԸ :

Ա . Եւ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղ֊ծութեանց վերընծայելոց [1] գդրուն թուղթս յարմարեցի՝ կական և հեծութի, հառաչանք կող֊կողագինք, դառնութեն լալումն և արտասուաց երգ, դարձեալ սկսայց զճառ պաղատանացս՝ խոստովա֊նորէն զղջականաբար՝ զգաղտնածածուկն յայտնա֊

բարբառ. զի անդրադարձութեամբ սկզբնմբն՝ և
վերջաւորօքն բանիւք, զնոյն համաձեւութիւն 'ի մի
թախանձ նմին մաղթանաց հոգեկեցոյցն խոնարհութեան
աստանօր եդից։

Է. Մեղայ մեծիդ բարերարութեան, անմրգս մեղայ.
մեղայ ծաղկմանդ ճառագայթից, խաւարս մեղայ.
մեղայ շնորհացդ անբաւ երախտեաց, արդարեւ մե-
ղայ. մեղայ սիրոյդ վերնում գթութեան, յայտնա-
պէս մեղայ. մեղայ ստացողիդ յոչէութեան, ստուգա-
պէս մեղայ. մեղայ գերունակ գոգոյդ գրկանաց, ան-
բաւս մեղայ. մեղայ աննուազ լուսոյդ վայելման,
նենգօղս մեղայ. մեղայ ճաշակման անճառդ կենաց,
բազումս մեղայ. մեղայ անհաս պարգեւացդ ձրից,
հանապազ մեղայ. մեղայ գովեալ մարմնոյդ ա̃յ, մա-
հուչափ մեղայ. մեղայ պաշտելի արեան արարչիդ,
իսկապէս մեղայ։ Ահա արդարեւ օրհնեալ է հա-
տուած բանի՝ յուսադրական սրտի՝ այսր մեղայի.
սոյն սա՝ պատուելի աւանդ, անմոռաց պատուէր, 2
հայրենեաց տուր, նախահարցն օրէն, համայնից
թօշակ, 3 անհերքելի բան, զօրաւոր պատասխանի,
կենդանութեան կամուրջ, ախորժելի վերնոյն, սիրելի
սրբոց, անխզելի կապ, հրաշալի բարբառ, անշրջելի
պատճառ, բաղձալի աղերս, փափաքելի սեղան, սրտ-
աբեկ հնչումն, անհնարից ճարակ, կարծրութեան
վանիչ, 4 ամենապաշտից սահման, հեթանոսաց գիրք,
վաղնջուց կանոն, քրիստոնէից հարազատ, արարչու-
թեան յաղթօղ, 5 անջրպետ հզօր, խորոց ահաւոր, 6
արուեստ բարձրութեան, խորութիւն անչափ, հիացման
տեսիլ, 7 խորհուրդ կնքեալ, ընդ որ չի՛ք ումեք ան-
ցանել, եթէ ոչ անըմբռնելի մտաց արագման զսա
ծանիցէ։ Զայն բարեպատեհ հրաշաւորական, որ
ոչ յիշատակեցաւ 8 'ի վերջին դատակնիք դասուն
լքելոյ. զուցէ առ նմին խզեալ համառօտ զվրի-
ժակն իրաւանց մահուն հասելոյ, յորմէ ընտրութիւն
ապագործ եղեալ, զսահմանն յաւիտենական քակ-
տեսցէ։ 9 Օ արդ փառաց մեծութեան, որով նոյն ինքն
ամենութիւն՝ պսակեալ բարգաւաճի։ Քանզի ո՞վ ոք
դիմեալ կալաւ զեղջերաց սեղանոյ այսր սրբութեան,
և ոչ առժամայն պրծեալ 'ի պատժոց՝ անարատ գտաւ։

Իսկ եթէ [10] աքար զարմեան, և սաւուղ կիսեան, և
յուդա սիմոնեան՝ ասելով զոյն ոչ արդարացան, և
ես մկայեմ՝ իրաւամբք խոստովանեալ զայս պայման
բանի. զի ակամայից բռնադատելոց՝ ոչ է կատա-
րեալ սէր, ուստի և ոչ բովանդակապէս փրկութի՛:
Իսկ ես կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զեր-
ջանիկ բանիդ [11] զմկրտութե՛ հարազատս:
Գ. Մեղայ երախտեացդ մոռացութեան, վերստի՛ն
մեղայ. [12] մեղա՛յ մարմնոյ ձեռն յոգի հարեալ, յիմա՛րս
մեղայ. մեղա՛յ առ կեանսդ դժրողութե՛, [13] իսկ և իսկ
մեղայ. մեղա՛յ բանիդ ապախտ առնելոյ, չարաչա՛ր
մեղայ. մեղա՛յ 'ի յօր սատակման ինձէն ստիպեալ,
վատթա՛րս մեղայ. մեղա՛յ պարտականս անկենդան
մահուն, ձաղելի՛ս մեղայ. մեղա՛յ անպատկառս քո
բարձրութե՛, տաղտկալի՛ս մեղայ: Մերժի՛ն ինձ [14]
կրկին աշխար հոգևոր, զի 'ի կորուստ և 'ի կործա-
նումն ինձ երևեցայ. զի անդարձս վարատեցայ. զի
որդիս՝ թշնամի գրեցայ. զի 'ի բարձանցն երկնից ըն-
կեցայ. զի փուշս վարուց դիզի: Նաւ ես առ սմին
ողբք աղաղակի, զի անձամբ զանձն անարգեցի. զի
բազին կորուսչին գտայ: Նաև իմն կսկիծ դժնդակ
սրտի, զի [15] զիս ունին՝ առ որ չեմ, զարտաքնայար-
դար բաժակս անմաքուր, զռեալ որմս զարշունակ,
զսին պարծանօք պաճուճեալս, զլոյս՝ 'ի մուայլ
շրջեալ, զգերանակիր ակնս՝ թշուառացեալ, զջահս
փառաց՝ շիջեալ, զամենայնիւս յամենայնի ամենայն
իրօք վնասակարս, [16] առ տնօրինականմն տէրունա-
կանս, առ յայտնութեան ծայրինս, առ երևմունմն
արարչագիրս, առ խոնարհութեան սարսափելիս, առ
այն՝ զոր տեսի աչօք իսկ իմովք: Նա որ մեծ է պա-
տասխանատուութիս, քան առ համօրէն աւետարա-
նին՝ զարմանս, հիացմունս, հոգս հալողականս, [17]
անդաձմունս անհնարաւորս, թուականութիս՝ մտաց
անբարդելիս, ելմունս անկատարս, իջմունս անհաս-
տատս, յուսահատութիս յարմարականս, յանդի-
մանութիս պատշաճականս, ձաղանս պատեհագոյնս,
նզովս իրաւացիս, անէծս արժանահատոյցս: Որդ՝
այսոքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիք, և ինքնա-
հարուած տանջանաւորութի:

Է. Ո՜ւ քանզի կարող ես զայս ա̄մ զպարտս թո֊
ղուլ, և զխայթուածս մահու բժշկել, տ̄ր ողորմու֊
թե̄ց, ա̄ծ բոլորից, ք̄ս թագաւոր՝ բարձրեալ հօր
որդի, ստեղծիչ՝ գթած՝ բարերար, օրհնեալ՝ առատ՝
հարուստ, ահաւոր՝ հզօր՝ ողորմած, տեսուչ՝ ձեռն֊
կալ՝ հաստիչ, ապրեցուցիչ՝ դարմանիչ՝ կեցուցիչ,
երկայնամիտ՝ անոխակալ՝ ապաւէն, բժիշկ՝ գովեալ՝
երկնաւոր, անձառ՝ լոյս՝ կեանք, յարութի̄՝ նորո֊
գութի̄՝ քաւութի̄. եթէ հայեսցես մարդասիրութե̄,
ըստ որում քոյդ են սովորութի̄ք, նայեցեալ 'ի քեզ՝
կողկողիմ և ես: Եթէ լուիցես, հառաչեմ. եթէ
ունկն մատուցանիցես, պաղատիմ. եթէ անսայցես,
աղերսեմ. եթէ ներեսցես, աղաչեմ. եթէ առ իս
դառնայցես, գոչեմ: Ապա եթէ անտես առնիցես,
կործանիմ. իսկ եթէ առ ոտն հարկանիցես, լամ.
եթէ զոգեպահն ոչ ընծայեսցես, մեռանիմ. ապա
եթէ ահարկու դէմս ցուցանիցես, սատակիմ. իսկ
եթէ սաստեսցես, դողամ. եթէ խեթիւ տեսանես,
սոսկամ. ապա եթէ սաստկանաս, սարսափեմ. եթէ
հալածես, հեծեմ. [18] իսկ եթէ ընդ վայր հարկանի֊
ցես, հերքիմ. եթէ զբոց վհատութե̄ս ոչ առցես,
տագնապիմ. եթէ խստանաս, փախնում. ապա եթէ
սպառնաս, ընկճիմ: Իսկ եթէ քննես, քարկոծիմ.
ապա եթէ ուժգինս ակնարկես, սուզանիմ. եթէ ոչ
անխայեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես, խիթամ.
իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տա֊
ցես, երկնչիմ: Օ՜ բարեացն պարգև մատնեալ. զե֊
րանութի̄ն թողեալ. զշնորհն լքեալ. զուխտն ցրեալ.
զաւանդն կենաց մոռացեալ. զհամարձակութեանն
վստահութի̄ կորուսեալ. զստեղծիչդ ելցս բարկա֊
ցուցեալ. զանձառութի̄ շնորհին ընդոտնեալ. զպատ֊
ուոյն պատկեր այլայլեալ: Իսկ եթէ առ այս խեղդ֊
մահու հեծութե̄ ցաւոյ մարդասիրեալ՝ առ իս ժա֊
մանեցուսցես՝ տ̄ր յ̄ս ք̄ս [19] զազդեալն գիր ընանիլ 'ի
յիս, եթէ բժշկութի̄ դադարեցուցանէ զմեղս մեծա֊
մեծս. որով ամենառատ քաղցրութեամբ պատուաս֊
տեալ 'ի քեզ, զքոյդ կերպարան լուսոյ նկարեալ
յոգի՝ վերստին գտեալ պնդեցայց քաւեալ, և [20]

տեղծեալ կրկին 'ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց . և քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս . ամէն :

---

(1) [illegible] : Զկարգութիւն Թուաւոր բանից Նախադրելոց յարմարեալ ըստ բանաստեղծական ոճոյ լեզուականաց : Դարձեալ սկսայց զսպառատանս [illegible] , ( մի օրին . [illegible] ) խոստովանելով զզջմամբ, [illegible] , զգաստանիս իմ յայտնի բարբառով : կամ հայցականն՝ [illegible] հայի առ բայն [illegible] : [illegible] . զի կրկնութբ նոյն բառին 'ի սկզբան և 'ի վերջն հատուածոյն ( որ է ձև Ճարտասանական՝ յունարէն ասացեալ [illegible] , այսինքն բաղհիւսութն . և ըստ . [illegible] . այսինքն օձաձև : ) [illegible] , զնոյն եղանակ տրամական մաղթանաց եղից առաջնոր : Վասն զի զնոյն բառ կրկնելով 'ի սկիզբն և 'ի վերջ բանին , իբրև թէ մի և նոյն ձայն ողբոց լսի անընդհատ , և լինի մին իբրև արձագանգ միւսոյն , որ և կարի թախանձեցուցիչ է և ժառաթեան եղանակ : 'Ի մի օրին . փոխանակ [illegible] , գրի [illegible] . և փոխանակ [illegible] , գնի [illegible] , ոչ թուի հաւաստ , բայց կարէ ունել զայն իմաստ , թէ սակս զնոյն բան կրկնել և թախանձել՝ համարձակութեան ցոյցք են : Գոյ և այլ տարբերութն յօրինակս . զի մի օրին , գնէ [illegible] : այլ օրին . [illegible] : այլ, [illegible] և [illegible] :

(2) [illegible] : 'Ի հայրենին մեր 'ի դրախտն տուաւ յոյժ մեղայն, ներելովն և սպասելով լսել 'ի նախատեղծիցն : Իւ ծանիր , զի զոր ինչ աստ առաջնոր յաղագս [illegible] , իմանի 'ի վերայ ներգործութե զղջման կամ խոստովանուե՝ զոր այս ձայն նշանակէ : [illegible] . թէ նախատեղծիցն , և թէ այլոց նահապետաց եդաւ օրէն զղջմամբ արդարանալ . և նոքա զայս օրէնս յեանոյն աւանդեցին իբրև ամենեցուն հարկաւոր . վասն որոյ յարէ . [illegible] . այսինքն պաշար : Այս հնդեակ բանիւք ցուցանել կամի, թէ օրէն զղջման ոչ իբրև զայլ գրական օրէնս յետոյ եդաւ , և կամ վասն ումանց՝ և առ ժամանակ մի տևական , այլ 'ի սկզբանէ մինչև 'ի կատարած վասն ամենայն մեղուցելոց :

(3) [illegible] : Ըստ որում ոչ մերժէ ած զմեղայն Ճշմարիտ խոստովանութե : [illegible] : Ընդ ծով մեղաց , ընդհատանս փորձութեց՝ մեղայիւն անցանեն մարդիկ և այլքն : [illegible] . անլուծանելի կամ անդիմադարձ փաստ . զի առոյգ խոստովանութե մեղաց վճարէ զդատաստան : [illegible] . անհնարին կամ դժուարաքաւելի մեղաց դեղ և դարման, կամ անհնարին պատժոցն հանդերձելոց հնարք : [illegible] , խառութե սրտի կակղիչ :

(4) [illegible] : Այսինքն կանոն . զի արդարք 'ի մեղայէն սկսանին զաղօթսն . որպ դանիէլ, երեք մանկունք , ևն . տես 'ի բանն Թ. լուծ . 8 : [illegible] : հաւատացեալ հեթանոսք՝ որք զայլ օրէնս ոչ ունէին , զմեղայն օրէնն գիտէին և ընթեռնուին 'ի սիրտս իւրեանց : Սոյնպէս անհաւատ հեթանոսք լոկ բնական լուսով ճանաչէին զուսումն բնական զղջման : Կամ, հեթանոսաց դարձելոց 'ի հաւատս՝ առաջին գիրք տուեալ լինի մեղայն նախ քան զմկրտութիւն , և այն է [illegible] , 'ի սկզբան եկեղեցւոյ կանոնաւ աւանդեալ : [illegible] : Թէպէտ և ծանուցեալ է հեթանոսաց , սակայն ճշմարիտ մե-

ղայն՝ որ 'ի շնորհացն իւր՝ այլ և խորհրդականն , միայն.քրիստոնէից է յա֊
տուկ : Արարչութեան յաղթող : ըստ որում արգելու զբարկութիւն իւր .
որպէս դաւիթ այսու մեղայիւ խափանեաց զպատուհասն իւր՝ որ 'ի բե֊
րանոյն նաթանայ . ( բ . թագ . ժբ . 13 : ) Այնպէս այսու մեղայիւ ար֊
գել զսուր հրեշտակին . ( անդ . իդ . 17 : )

(5) Աներևոյթ հուր : Ըստ որում նաչանջէ զբնութիւն սատանայի : և
խորհուրդ ահաւոր , ըստ որում խափ արկանէ 'ի մէջ կենաց և մահու , ար֊
դարոց և մեղաւորաց . ըստ այնմ ( ղուկ . ժզ . 26 . ) ՝ Վիհ մեծ է ընդ
մեզ և ընդ ձեզ|| :

(6) Արուեստ բարերարութեան : Հնարք ամբառնալոյ 'ի բարձրութիւն շնորհաց ,
կամ յերկինս . որ և խորութիւն անհուն , զի որում յանկարծակի խորս մեղաց
և դատապարտութեան ժամանեալ 'ի վեր առնու զհոգին . ուստի և է հնա֊
րաւոր. այսինքն պքանչելի ուսիլ , յորժամ զանդարամետականն
առնէ երկնաքաղաքացի : Արդ է և խնամոց , արուեստ կամ հնարք
բարձր և գերազանց , զի որում իւծ է զղջման հեղինակ և ուսուցիչ , և
նովաւ միայն հնար է հաշտիլ ընդ իւր : և խորութիւն անհուն , անքննելի խորք
գաղտնեաց ամբարեալ 'ի նմա . որպէս և յաջորդ ասէ :

(7) Խորհուրդ կնքեալ : Ոչ միայն ըստ որում 'ի նոր օրէնս՝ զղջումն և
խոստովանութիւն են մասն խորհրդոյ ապաշխարութեան՝ ընդ կնքով փակեալ ,
այլ և վասն բազում գաղտնութեանցն՝ որ 'ի նմա : Մին զի 'ի կատարեալ
զղջման բազում գաղտնի ներգործութիւն առնէ իւծ 'ի սիրտ մեղաւորին :
Երկրորդ , զի անցումն 'ի մեղաց յարդարութիւն է մի 'ի մեծամեծ սքան֊
չելեացն իւր՝ գերագոյն քան զարարչագործութիւն . իբր զի մեղքն առա֊
ւել հեռի են յիւր , քան ոչէն յէակէ . և զի առեղծմանցն բնական բա֊
րեացն իւր լինիմք բաժանորդ . իսկ արդարանալովն՝ գերբնական բա֊
րեացն , և նմին իսկ բնութեան իւր հաղորդիմք շնորհօք : Երրորդ գաղտ֊
նութիւն է 'ի զղջման , զի զճշմարիտ զղջումն որոշել 'ի սուտն՝ իւր միայն է
կարողութիւն : Ահա ընդ այսուիկ և ընդ այլ գաղտնութիւն անյանէլ՝
անքննելի մնաց ասէ :

(8) 'Ի վերջին դատաստանի : Ոմանք զի հին լուծ . զգիւաց խնացան զայս .
սակայն բանն հայի 'ի վերջին դատաստանն ահաւորմեան դատուն մե֊
ղաւորաց , որք լքանիլն յիւր լսելով . երթայք յինէն , են : Յայնմ դա֊
տաստանի ասէ՝ ոչ յիշատակեսցաւ հրաշալի ձայն մեղային , յորժամ
դատաւորն յանդիմանէր զմեղաւորն վասն չկերակրելոյն զինքն , վասն
չարբուցանելոյն . են . ( մատթ . իե . 42 . ) այլ փոխանակ մեղայի ար֊
դարացուցանել կամէին զանձինս . զի եթէ ասացեալ էին մեղայ , գործէ
առ նմին , թերևս խնդոյն խղճէր Ծերունոյ , զվրէժխնդրութիւն
արդարութեան իւր , կմ զիրաւացի վճիռ դատապարտութեան նոցա . յորժ
և ընդունելին , որոշումն արդարոց և մեղաւորաց , կամ յաւիտենական
բացորոշութիւն իւր անգործ եղեալ , զյաւիտենական դատաստանն լու֊
ծանէր : Այսու ծանուցանել կամի , թէ այնչափ է զօրութ մեղայասաց
զղջման , մինչև 'ի վերջին յայնմ պահու ապաւէր 'ի դատապարտութէ
զմեղաւորն , եթէ լինէր 'ի նոսա այնպիսի զղջումն ճշմարիտ : Հին լծ .
ընդունելի խնամոց և շնորհօքդ մարդեղութե . որպէս թէ՝ եթէ 'ի ձա֊
խակողմեան դասն ասացեալ լինէր մեղայ , վճիռ կամ սահման մարդե֊
ղութեն ոչ 'ի գործ դնիւր : Բայց այս անյարմար է՝ ոչ միայն կարգի բա֊
նիս , այլ և ուղիղ վարդապետութե . զի որպէս յայլ զղջացեալս՝ զղջումն ,
սրբութիւն 'ի մեղաց , ապատութիւն 'ի դժոխոց՝ եղեն յարդեանց չարչա֊
րանացն քոց , նոյնպէս 'ի ձախակողմեանն յարդեանց քոց լինելոց էին
այսուքիկ՝ եթէ արդարև զղջանային , և մեղայ գոչէին :

(9) Զօրէ տէր : Զմեղայն կոչէ զօրդ և սպառ փառաց իւրոյն . զե֊

ղեցին նմանեցուցանելով զԱծ՝ սեղանոյն սրբութե, և զՔղայն իբրև եղջեւր այնր սեղանոյ. զորմէ բուռն հարեալ յանցաւորքն յիսրայելացւոց՝ անպատիժ արձակէին: Այս զոր օրինակ եղջեւրն՝ զարդ էր և պսակ սեղանոյն, սոյնպէս Քղայն՝ այ. և որպէս Ած ողորմութբ և գթութբ պսակէ զմեզ, նոյնպէս մեք զղջմամբ պսակեմք զԱծ, 'ի նա դարձուցանելով զթագաւորութի հոգւոց մերոց՝ և զփառսն, զորս մեղօքն բարձաք 'ի նմանէ: Թող զի 'ի ներել այ և 'ի թողուլ զղջացելոց՝ պայծառանայ ամենակարողութիւն այ, ողորմութիւն, անյիշաչարութիւն, ևն. որով և առաւել փառաւորի. մինչ զի նա ինքն Ած՝ զարդ իւր անձինն համարելով, ասէր պարծանօք, ես եմ որ ջնջեմ զանօրէնութիս. ո՞վ է իբրև զիս՝ որ թողում զմեղս ևն:

(10) Աքար Զարայեան: Աստանօր վրիպակ սպրդեալ է յօրինակն. զի Աքար որդի էր Քարմեայ, Թոռն Զամբրեայ, և Թոռնիս Զարայի. (Յեսու. Է. 1. 18.) որ և 'ի իբ. 20. Զարայեան ասի. ուստի թուի թէ ուղիղ եւս է գրել Աքար Զարայեան: Արդ՝ նոքա երեքին՝ Աքար, Սաւուղ, Յուդաս ասելոյն Քղայ, ոչ արդարացան, ոչ զերծան յարժանի պատժոյն. վասն զի Ախամայէին Բանադրեալս. նոցա որք ակամայ բանադրատեալ գործենն յերկիւղէ կամ յամօթոյ, կամ 'ի գործս յակամայս բանադրատեալս, ո՞չ է Խաաշաւաէր. իմա զկատարեալ սէրն ոչ իբր դիմաբաժանեալ անկատար սիրոյ և զղջման, որ կարէ լինել արդարացուցիչ, այլ դիմաբաժանեալ կեղծ սիրոյ կամ երկիւղի. իբր ասել, ոչ է ճշմարիտ սէր, այլ լոկ երկիւղ կամ այլ կիրք. որպիսի էր յիշատակեալ արանցդ: Զի Աքար 'ի յանդիմանիլ գողութն՝ ասաց մեղայ. (Յեսու. Է. 18. 20:) և Սաւուղ՝ զի մեծարեսցի առաջի ժողովրդեանն: (Ա. Թագաւ. ԺԵ. 30:) և Յուդաս յետ պարտաւորելոյն քնի 'ի յուսահատ ամօթոյն բանադրատեալ մեղայ գոչեաց, և խեղդեաց զանձն: Բայց ես ասէ՝ իմով կամաւ և սիրով ընդունիմ և կրկնեմ զերջանիկ մեղայս. ուր ասելն՝ Ուբջանին Բանետ, թերևս ուղիղ եւս գրելի էր՝ Բանդ. այսինքն կրկնեմ զերջանիկ բանդ զմեղայ: Կամ թէ կայցէ փոխադրութի հոլովոյ՝ իբր յատկացուցիչ 'ի սեռական հոլով դնելով զստացականին՝ ըստ շրջման ոճոյ. քանզի յասելն, կրկնելով Զպրդաւրէ հարաղտ, բացայայտելի էր՝ որ է այն, այսինքն երջանիկ բանն կամ մեղայն:

(11) Զպրդաւրէ հարաղտ: Ընկեր կամ եղբայր մկրտութե ասէ զմեղայն. զի 'ի մկրտիլն՝ մանաւանդ չափահասից, լինի խոստովանութի և մեղայատացութիւն. այլ և ըստ գործոյն միաբանին, զի մկրտութն կարգեալ է 'ի բառնալ զսկզբնական մեղս, և խոստովանութիւն՝ զներգործականն. ուստի ապաշխարութիւնն կոչի երկրորդ Մկրտութիւն, և Աւազան:

(12) Մեղայ՝ նարհայ չէան յոգի հարէաւ: Մարմնական գործովք զհոգիս սպանանելով. կամ, մարմնական ձեռօք, այսինքն անմաքրապէս 'ի հագւոյս մերձենալով. կամ այսպէս զատանել կետիւ. մեղայ մարմնոյ՝ ձեռնարկելով 'ի շնչաւ հոգւոյս. քանզի մեղքն ոչ միայն հոգւոյն շնչանէ, այլև մարմնոյ: Եբրին լուծ. յաւելու և զայս միտս, ձեռօք կամ բռամբ զկուրծս հարկանելով, հարկանեմ զհոգիս: Բայց այդ ոչ է եղանակ ինչ մեղաց, զորս աստանօր ընդարձակէ ոբ վարդապետս, այլ լոկ արտաքին նշան զղջման. ուստի անյարմար է:

(13) Իսկապէս Քղայ: Իսկապէս կամ ճշմարտապէս մեղայ:

(14) Կրկին աշխար: Այս է ինձ ասէ՝ յետին և կրկնապատիկ աշխարհին Թշուառութիւն, զի ես ինձէն զանձն 'ի կորուստ և 'ի կործանումն մատնեցի: Բայց աստ փոխանակ բային Էբնէշայ, 4. օրին. դնեն Էբնէշաա. և ըստ այսմ տէր բային իմանի Քղայն. որպէս թէ ասել, մեղայն

որ մի միայն հնարք է փրկութեան, ինձ 'ի կորուստ երևեցաւ կամ գտաւ, այնու զի թէ և սաստ մեղայ, բայց առանց գտանելոյ․ զի [illegible] [illegible], առանց գտանելոյ առ հայրն՝ հեռացայ, կամ որոշեցայ․ զի որ-գիս՝ թշնամի համարեցայ, կամ եղէ։ զի փոխս չար գործոց [illegible], գի-զեցի, բարդեցի։ է կատարեալն [illegible] բայն․ բայց 3 օրին․ [illegible]։

(15) Զի․ [illegible] [illegible]։ Զիս համարին այնպիսի, որպիսի չեմ․ համարին զիս արդար, իմաստուն, եւն, որ մեղաւոր եմ և անմիտ․ [illegible], զրպարտութեամբ յարդարեալ և սրբեալ բաժակս, որ ներքոյ անմաքուր եմ։

(16) Զ[illegible], բոլորովին, [illegible], յամ ժամանակի և 'ի գործ [illegible], առ ամ իս վնասակարս և յանցաւորս։ Ա[illegible] [illegible]։ Վնասակար և յանցաւոր գտայ առ անօրէնութիւս քո, կամ առ խորհուրդս մարդեղութեան։ [illegible], առ ծանօթութիւս ամենայն գաղտնեաց՝ սրբոյ Երրորդութեան, առեղծման, նախախնամութեան, նախասահմանութեան, դատաստանի, յարութեան, եւն։ [illegible] առ երևմունս յոյ գրեալս, կամ արարչին վայելուչս․ որպէս 'ի դրախտին, 'ի լեառն քորեբ, 'ի սինա, 'ի թաբոր, եւն։ [illegible], առ զեխմունս ոյ 'ի մեր ակարութիւ, կամ առ խոնարհական գործս որդւոյն ոյ, որք սքանչելի են մեզ։ [illegible]՝ [illegible], Այսու յայտնապէս ծանուցանէ զանսաներ իւր մարմնոյ աչօք զքո․ որով և հաստատի անմնդութեան՝ որ կայ յազգի մերում․ ասել թէ ոչ՝ մեկնելն 'ի վերայ տեսութեան 'ի պատարագի, կամ 'ի վերայ տեսանելոյ առաքելոյ, որով իբրև մեզ ևս երևեալ համարի, և կամ այլ եղանակաւ մեկնելն, ամենայնն վերաբերի առ տեսութիւն հաւատոյ աչօք․ որով մարթ էր տեսեալ ասել նաև զանօրէնութիւս քո, զյայտնութեան և զերևմունսն․ և սակայն նոր վարդապետս յայտնապէս խօսի զնէ ընդ առաջինսն՝ և ընդ վերջինս, ասելովն, [illegible], և ոչ սատարին․ այլև յաջորդաւն։ Ա[illegible] որ [illegible] է [illegible]․ 2 օրին․ [illegible]․ այսինքն առ այս տեսութիւն, [illegible]․ այսինքն քան յաղագս բոլոր աւետարանական սքանչելեաց և վարդապետութեց․ զի այս հաստատակաց է պարզև․ իսկ դէմանդիման երևելն՝ է առանձին շնորհ իբրև յառուկ սիրելոյ և բարեկամի․ որով առաւել պարտական կացուցանէ 'ի սիրել։ Եւս, զի աւետարանն 'ի լոյս ականջաց ծանօթանայ․ իսկ յայտնապէս երևելն՝ աչաց է ներգործութեան, որ ազդողագոյն ևս շարժէ․ որպէս առաքեալն թովմաս՝ որ 'ի լուր յարութեան քո դժուարէր 'ի հաւանութիւ, 'ի տեսանելն զյարուցեալն՝ աղաղակաւ դաւանեցաւ։ Այս առաւել անպատասխանի լինիմ ասէ՝ զի յետ տեսանելոյս զքեզ աչօք՝ տակաւին 'ի մեղս դարձայ․ ուստի մեծ է պատասխանատուութիւս, մեծ է [illegible], մեծ է [illegible]․ եւն։

(17) Ա[illegible] [illegible]։ Մտածմունս, կամ հոգարկութիւնս, որում չիք հնար կամ ճար։ Թ[illegible]։ թիւ կամ բազմութիւ հոգոցս և թշուառութեցս՝ անթուելի 'ի մասս։ Ե[illegible] [illegible], կամս եղանելոյ յառաջին մաքրութիւն՝ բայց անգործ։ կամ, եղմունս 'ի պաշտօն ոյ, 'ի քարոզութիւ, եւն, բայց առանց սիրոյ, անյօժար։ Ի[illegible] [illegible]։ խոնարհութիւս 'ի գործ ճգնութեան, ապաշխարութեան, օգնելոյ կարօտելոց, եւն, բայց անհաստատ։

(18) Ի[illegible] [illegible] [illegible] [illegible]։ մի օրին․ [illegible]։ և զկնի, [illegible]։ 3 օրին․ և հին լուծ․ [illegible] որ յարմար ևս թուի։

(19) Զ[illegible] [illegible]․ է բանն ժողովող․ (Ժ․ կ․) * Ողբումն դարձու-

ցանէ զմեղս մեծամեծս || ։ զոր ոչ վարդապետս գնէ . բժշկութե դադարե-
ցուցանէ , յայլ Թարգմանութեց առեալ . զի այսպէս ունի եբրայականն ,
յոյնն , ասորին և լատինն ։ Եթէ առէ՝ 'ի գութ շարժեալ ընդ հեղձու-
ցիչ ցաւս հառաչանաց իմոց , առ ի ծանուցանելոյ , յաջողեսցես յիս
կատարել բանին գրոց՝ բժշկութե բանից զմեղս , արդարև այսու ամե-
նառատ քաղցրութե միանամ յարիմ 'ի քեզ տէր Յս , 'ի քոյդ կերպա-
րան վերստին ձևացեալ հոգւով ։

(20 Սուղծեալ երկին ։ Յետ առաջին սահղծմանն 'ի բնական կեանս՝ վե-
րստին սահղծեալ 'ի կեանս շնորհաց և փառաց անմահ յաւիտ թե ։

---

Սերափին յաւելուած երկին հեծութեան՝ նորին հոծողի , առ նոյն
աղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ԺԲ ։

Ա . Եւ արդ՝ զո՞րս յայտնեցից , և յաղագս ո՞յց նշա-
նակեցից , և վասն ո՞րպիսեաց Խոռեցից , և
զո՞րքան ծածկեալս մերկացուցից , և կամ վասն որո՞ց
խոստովանեցայց , Զ ներկայի՞ցս՝ զոր արդէն ունիմ ,
թէ զանցելոցն՝ զոր մԹերեցի . զապագայի՞ցն՝ յորոց
կասկածեմ , թէ [1] զբազմասահ շարժութեցն՝ յորոց գլո-
րեցայ . զփո՞քրն ինձ համարեալ՝ որ է Այ մեծ գրեցեալ ,
թէ [2] զանկերպագրելի՞ն չյիշատակելի . զնուա՞զն՝ որ
է առաւել , թէ զթեթևագոյնսն՝ որ են ծանունք ։
Զ հոգեկանա՞ցն կրից կորուսչաց , թէ զմարմնականաց
ախտից սպանողաց . [3] զառդրունս հեշտականա՞ցն , թէ
զծայրակոտոր վնասակարութեց . զաներևութի՞ցն ,
թէ զտեսականացն . [4] զառձեռն հպաւորութի՞ւն , թէ
զառ նոյն ինքն շունչ հեռաւորութիւն ։ [5] Զ լայնա-
կա՞նն դիւրին խածմունս , թէ զերկարաւո՞րն նետա-
ձգութի . զխորութեա՞նն զանչափութի , թէ զամե-
նածախն յայտնատեսիլ . [6] զյօժնագլո՞ւխն պոռնկու-
թի , թէ զառողջութեն անբժշկութի . զպարարո՞ւմն
չարին մարմնով , թէ զոգւո՞յն բարւոյն հոգւով . [7]
զխնամո՞ցն հանդիսանալ յոչ ախորժելի՞ն Այ , թէ
զբռնադատութեն տռամբ ձգի՞լն 'ի նոյն մոլեգնու-
թի . [8] զառ 'ի մա՞հն մեղաց , թէ զընդունայնութեն
կարծեաց ։

Բ . Արդարև որպէս կամաւ խելագար [9] զերծեալ 'ի
ձորձոյ , զառականացս տեսիլ յանդիմանեցի , զընդ-

դիմմն գործեալ իմաստնոյն, որ՝ թէ հանճարեղքն վերարկեսցեն զամօթս իւրեանց. օտարացեալս 'ի կրօնից. հեռացեալս 'ի կարգաց. 'ի սրբութենէ անսուրբ. 'ի կուսութենէ անմաքուր. յարդարութենէ ամբարիշտ. 'ի բարեպաշտութենէ վնասապարտ. բերանովս մերձ առ ստացօղն, և հեռի երիկամամբք. շրթամբքս պատուամատոյց, ըստ մարգարէին, այլ ոչ եթէ սրտիւս: Իսկ եթէ պարտ է զքստմնելիսն ասել աստանօր, [10] չար քան զտանջանսն յանդգնութեն, իբր զուր իմն պաշտօնատարս ա̃յ, 'ի միտս անկայունս երկեակ ճանապարհաւ մահու վարանեալս՝ ջանամ, և ոչինչ օգտիմ. պնդիմ, և ոչ հասանեմ. փութամ, և ոչ ժամանեմ. անձկամ, և ոչ տեսանեմ. փափաքեմ, և ոչ հանդիպիմ. կարօտիմ, և ոչ պատահիմ. [11] ունիմ զա̃մ երկրի, և եմ պատգամաւոր աղօթանուէր ա̃մ աշխարհի: Այլ թո՛ղ զբազումս զայսոսիկ՝ բա՛րերար, և մի՛ ունիցիս. դիւրինք են քեզ զսոսին եղծանել, քան ինձ տաժանաւորս աջով նկարել. վասն այնորիկ գրեցի առանց խնայելոյ, զի դու առատապէս ջնջեսցես՝ օրհնեալ: Որ վասն մեր մեղաւորացս երկայնամիտ անուանեցար, ըստ մաղթանաց բանի՝ հեծութենէ սրտի՝ եզրի երջանկի. [12] յոյժ նեղեալ անձն և ձանձրացեալ ոգի՝ բանիւն յիշատակաւ, որ զսոյն պատմէ. յա̃մ կրից մահացուցանողաց վտանգեալ, անկեալ 'ի վիհ գարշութենէ մեղաց՝ անդնդականաց ապականութենց. քանզի չհաւատամ, թէ լսես իսկ ինձ, ըստ յոբայ ձայնին: Արդ՝ ես ինձէն ինքնադատով անձնադատ գերի՝ կամաւորապէս [13] մասն եղեալ բնութենս, արգելի փակեցի կնքեցի առ յինէն՝ յամենայն մասանց՝ զկենացն հնար, զի 'ի փրկութե̃ մեզօք կապելոյս՝ կըրկին մեծացցիս գովեալ:

Դ. Իսկ քանզի [14] 'ի մարգարէէն բարւոք խրատեալ փորձ գտցուք, մաղթել ընդ նմին հոգւով քո երգեալ՝ յուսով հաստատնով 'ի քեզ ապաստանեալ, առէք ընդ ձեզ բանս, ասէ ովսէէ, և դարձարո՛ւք առ տէր ա̃ծ ձեր, և ասացէք ցնա, կարո՛ղ ես թողուլ զմեղս. զի ընդունիցիք զբարիս, և վայելեսցեն 'ի բարութե̃ անձինք ձեր: Ահա՛ ա̃ծ խօսեցաւ, և ո՞վ է

որ ոչ լուիցէ. նոյն ինքն վկայեաց, և ո՞վ է որ ոչ
հաւատասցէ։ Որդ՝ այսօրիկ[15] վճիռ պաշտելի, նուի-
րեալ պայման, սահման նոյնագոյ, կենաց աւետիս,
կէտ տէրունի, դուռն բարութեան, սփոփանաց հրա-
ւէր, ճշգրիտ պատկեր, անստգիւտ գանձ, անմոռաց
յիշատակ։ Յայսու առ սոյն և ես հաւատ ընկալեալ,
սատուստ վկայեմ սմին՝ ընդ մարգարէին, կարօղ
ես յամենայնի թողուլ զմեղանս բազմաբեղունս. և
ես զօրասցիս կրկին բարձրացեալ՝ առ ամենաթշուառ
կործանեալ հոգիս։ Զամենայնի իշխես. ամենայնի
բաւես. ո՞մ ուրեք հասանես. ամենից բռնութեց
յաղթես. և զո՞մ կարծրութի՞ փշրես. զո՞մ ընդդի-
մահար վանես. զո՞մ խստութի՞ վատնես.[16] զո՞մ սրա-
ցեալ ընդոտնես. զո՞մ դառինս անուշես. զո՞մ դը-
ժուարամաքելիս քաղցրացուցանես. զո՞մ զպարտս
շնորհես. զո՞մ յանցանս թողուս։ Կարօղ ես՝ զօրա-
ւոր հզօր հնարաւոր ամենարուեստ՝ զամենեցուն ըզ-
մեղս ընկղմել՝ և չքացուցանել բառնալ 'ի միջոյ,
իբր զճաճանչ փոքու կայծական[17] սահմանեալ 'ի չափ
ոչէից՝ անկեալ ընկլուզեալ կորուսեալ 'ի տիեզերա-
տարածն ծովու։

Դ. Որդ՝[18] բանիւ մաղթանաց վերծանողացն այսմ
մատենի, ողորմեա՛ վասն խաչի և չարչարանաց մա-
հու որդւոյ քո՝ հա՛յր գթութեան։[19] Սկիզբն առաքը-
ղի՝ ողբերգութեան ձայնի՝ այսմ արտօսրածին նուա-
գի, որ զայս դեղ փրկութեան կենաց՝ մեզ յարմարե-
ցոյց, եղիցի բժշկեալ յանուն քո հզօր։ Որ հետս
ելից խոստովանութեան մեզ նկատեցոյց այսու պայմա-
նաւ պատշաճականաւ, լիցի անարատ յիւրոցն պար-
տեաց։ Որ զհպարտութեան թևս հարթել մեզ վար-
դապետեաց՝[20] 'ի սոյն կանոնի կենաց պատգամի, ե-
ղիցի զերծեալ 'ի չար կապանաց մահու արկածից
սկզբնականաց՝ վերջնոց և միջնոց, երրորդութեդ
բարեգործեալ, 'ի նորոգութի լուսաւորութեան.
ընդ որում և մեք գրեսցուք՝ երջանիկ գտեալ ընդ
սմին։

21 Ընդդէմամարտ դիւաց այս նուագ աղօթից, և դիւաառութ-
ջերմապատճառ ախտաւորութեանց առողջարար փարատիչ:

Ե. Որդ՝ այսքանեացս անբաւից հրաշից հանդեր-
ձից հայր ամենաստեղծ՝ անունդ ահաւոր,
ձայն սարսափելի, 22 կոչումն ընտանի, բան համբու-
րելի, ազդումն սքանչելի, հրաման սոսկալի, էութիւն
անքննելի, գոյութիւն անճառելի, իսկութիւն անբաւե-
լի, զօրութիւն անզննելի, կամք ամենաբարի, տէրու-
թիւն անսահմանելի, մեծութիւն անչափելի, բարձրութիւն
անբովանդակելի, որքանութիւն անկշռելի, առաւե-
լութիւն անհասանելի, 23 պատճառ որդւոյ հայրութիւն,
այլ ոչ նախադրութիւն. քև և 'ի ձեռն քոյդ անպա-
րագիր զօրութեանդ՝ սաստեալ տագնապօղ և դիւա-
կան տենդիս ջերմութեան, որ ազրդեալ մուծաւ ընդ
մեղաց՝ զի փախիցէ 'ի մարդոյս, 24 զարհուրեալ 'ի
սիրալի և յանբաւելի արեան վտակի՝ գառինդ երկ-
նաւորի. որով սրսկեալ միանգամ 'ի մշտնջենաւորս՝
համայն մաքրեցաք:

Զ. Նաեւ արդ՝ յայս պատկառելի խոնարհուէ արար-
չակերտս խորհրդոյ, ամաչեսցէ սատանայ 'ի գործս
չարեաց իւրոյն հրեշտակաց. տանջեսցի և հալածես-
ցի, հեռացեալ և արտաքս առաքեալ 'ի շինուածոյ
25 խորանէ քումդ բնակութեան՝ յարտաքին խաւարն:
Նաեւ ջնջեալ մաքրեա զարտասուս ողբոցս 'ի դիմաց
մերոց, և զհառաչումն ձայնիս հեծութեան 'ի սրտից
մերոց: Նաեւ յիշատակաւ հարման հեղուսիդ՝ 26 քստ-
մնափուշ տաժանատեսիլ ոգեպահանջից, որով պըն-
դեցաւ միածինդ քո յաշտարակ խաչին, ցաւեսցի
չարին. Նաեւ 'ի կողահերձ սայրասուր 27 սլաքէ ուժ-
գին բախմանէ, որով զվէրն մեծ ընկալաւ, խոպա-
սատակեսցի սկզբնարար մահուն: Նաեւ զի խոնարհե-
ցոյց զգովեալն գլուխ՝ յաւանդել զոգին 'ի ծոց քո՝
բարձրեալ, ապստամբութիւն անբարի բարուցն բե-
լիարայ՝ 'ի կոր կործանեսցի, ամիւ հերքեալ 'ի կո-
րուստ: Նաեւ զի ղօղեալ ծածկեցաւ 28 անմահն խա-
կուն յորովայնի երկրի, այսու ամբարձեալն հպար-
տութիւն կարծեալ զառողին՝ 'ի յատակս մահու դժո-

խոց մթին ստուերին՝ յառեալ դիտեսցէ . և յիշեա-
ցէ զառաջին հարուածն անբժշկական, որով մահա-
ցաւ գիմամարտութի՛ թիւնից վիշապին՝ կենարարն
կրիւք ամենազօրին : 29 Վասն զի 'ի փառս քո՝ հայր
ողորմութե՛, իբր 'ի գովեստ որդւոյ քո՝ հոգւովդ
սրբով զայս խոստովանիմ . քանզի ո՛չ պիտակ ինչ
սոսկ զօրութե՛ն ունի զմիւսմէն՝ առ մի խորհրդականն
խորութե՛, այլ զանսկիզբն բանդ անձնաւոր՝ ընդ-
անժամանակդ հօր փառաւորեմք : Նու քեզ միայնոյ
՛ոբ երրորդութեդ, հաւասարապատիւ տէրութեդ,
համաբուն անբաժին ինքնութեդ՝ օրհնաբանութի՛,
գոհութի՛, զօրեղութի՛, և անճառ վայելչութի՛ մե-
ծութե՛, բարեվիճակ հարթութե՛, զուգակշիռ հա-
ւասարութե՛ յաւիտեանս ամէն :

---

(1) Զբաղմանց շարժութենէն : Կամիմ դարձեալ զիջական աղօթս մա-տուցանել, խոստովանելով զյանցուածս իմ և զպակասութիւնս : Այլ տարակուսեալ եմ թէ զինչ յայնմանեցից, վասն որոյ խոստովանեցայց, որդեօք զներկայ մեղս իմ զոր ունիմ . որդեօք զանցեալն զոր ինձ պատ-ճառեցի . որդեօք զապագայն յորս անկանել կասկածիմ : Միթէ ըզ-գիտաստահելի շարժմանն՝ որք սահել և յանձանս շարժին յանձն իմ, և սան գըլորել 'ի բազում յանցանս . որպէս են շարժմունք բարկութե, լե-զուի, աչաց են :

(2) Զանհերաստերելին սեղատահէկէ : մի օրին . զանհերաստերեւ ինչ չէշատա-հէկէ : Մանք ու հին ըծ, խմանան՝ ոչ արժանի նկարագրելոյ և յիշա-տակելոյ . և մեկնեն զմարմնական աղտեղի մեղաց : Բայց զայնմանէ տարեւ խօսի . Իսկ աստ բառ կարգի զթեթև կարծեցեալ մեղաց խմանի բանս . զի ասէ Իսկ, որդեօք զփոքրն յիշատակեցից, զնուաղն, զթե-թևն : Ապա անհերաստերելի ասէ՝ զայն խորհուրդս և զշարժմունս մտաց, որք արագ և իբր անզգայաբար կրին 'ի մեզ . զորս և չկարեմք երևակայել և մի ու միոջէ յիշատակել . ուստի կամ մեղս չհամարիմք, և կամ փոքր . սակայն բազում անգամ յանհոգութէ եղեալ 'ի ծանր նիւթս, յան-ցանեմք . այսպիսի են շարժմունք հպարտութե, թիւր դատողութեան, տրտնջման, երկրպութե 'ի հաւատոյն, են :

(3) Զառ դրանն : Որք դրանց զգայութեց հեշտալիք են . և սակայն յետոյ ծայրահեղ մտաց գործեն . այսինքն ծայրագոյնս կամ չարաչար կատարեն զհոգին . կամ զծայրագոյն բարին շնորհաց ապականեն : Կամ լաւ ևս . զորն յայսմանեցից, զառ դրանն, այսինքն 'ի սկզբան հեշտացու-ցիչսն, թէ զծայրահեղ, 'ի ծայրն կամ 'ի կատարման առնելոյ մտա-կարան . զի բազումք 'ի մեղաց նախ հեշտացուցանեն, և ապա 'ի կատա-րածին տանջեն խղճիւ մտացն, կորանեանք հանճարոյն, կարօտութե ըն-չից, ցաւագարութե, են . որպէս արբեցութի, անառակութի, բղջա-խոհութի, են :

(4) Զանձեան հրաժարելոյն : Զձեռամբ մերձենալն 'ի հրաժարելեաց, ԲԷ զառ նոյն ինքն զանն, թէ նաև շնչով հեռի կալն 'ի յանձնառականաց : Ասել կամի . թէ հրաժարեցայց մերձենալ 'ի չարն, որպէս յորդորեալ

ծառն, և ես ձեռամբս շօշափեցի զայն. հրամայեաց ընդգրկել զբարին, ես և ոչ շնչով կամ յօժարութե բերանոյ մերձեցայ 'ի նա։ Մարթ է ևս իմանալ զմեղս՝ որ ձեռօք գործին, որպէս գողութիւն, սպանումն, եւն. և զմեղս՝ որ 'ի հեռուստ կատարին շնչով բերանոյ, կամ լեզուաւ. որպէս հայհոյանք, բամբասանք, ստախօսութիւն, եւն։

(5) Զլայնութեանն տիարին։ Ասէն զհանգամանս մեղաց բացատրէ բառ չորից տեսակաց դրից, այսինքն լայնութե, երկայնութե, խորութե, և բարձրութե. զի ոմանք լեռւ լայն կամ ընդարձակ՝ հեշտացուցանելով խածանեն. որպէս արբեցութիւն։ Զերկարութեան նեղութեն։ ոմանք յեր կար լեռւ նեռսե խոցանեն. որպէս նախանձ, հակառակութիւն, եւն։ Զխորութեն զանցանելն։ ոմանք կայն 'ի խորս արմատանան. որպէս հպարտութիւն, ատելութիւն, եւն։ Զամենածախն յայտնապէսն։ ոմանք զմտս բարձրանալ զմտածականս ծախեն, վասնեն, և ամենեցուն յայտնի լինին խայտառակութիւնն, լեռւ կացեալն 'ի բարձր տեղւոջ. որպէս են անառակութիւնք, խաղք նարդից, աղտամբութիւնք, եւն։

(6) Զյօգնագլխեան դառնութեն։ Ըստ որում պտուղն անխափ լինի ընդ բազում ալս, որ գլուխ են կնոջ։ կամ, զի բազում մեղս յղացեալ ծնանին՝ լեռւ զբազմագլուխ վիշապ։ Եւ զառաջնորդութեան անբժշկութեն։ զի որում սովորութիւն պտղոյութե անբժշկելի է յառաջնման. կամ զի ապաշխարել կասկածանս ոչ ևս ամբողջման։

(7) Զխառնուածս հանդիսանալ։ Զկամաւորապէս ջանալն 'ի գործս անառակեալս իմ, թէ զբանադատութեն տառապէ, 'ի բանադատութեն չար ունակութե ձգելն 'ի նոյն սովորեալ մեղս. կիւ, զձգելն թախանձանօք, հրապուրանօք և սպառնալեօք այլոց 'ի մեղս՝ լեռւ շուն տուամբ վարեալ զբանին առակաց։ (է. 22։)

(8) Զառ 'ի մահն մեղաց։ Զմեղաց՝ որ անխթողլի գոլով և դժուարաբուժելն մինչ 'ի մահ տանեն, Եւ զընդունայնութեն խորհրդոց. զընդունայն կարծեացն՝ թէ մեղանչեմ, և յետոյ ապաշխարեմ։

(9) Զերծեալ 'ի յորդոյ։ Լեռւ խեղդամար ոք՝ մերկ 'ի հանդերձէ՝ զամօթալի տեսիլ հոգւոյս երևեցուցի բանիւքս. զընդդէմն գործեալ խմագանոյն, (2 օրին. ըստ խմագրոյն.) այնմ բանի սողոմոնի. որ ասէ՝ Եւ համարեցան Երբորդութեան. (առակաց. ժբ. 16.) * Ծածկէ զանարգանս իւր այր խորագէտ‖։

(10) Զոր ըստ դառնաջանան յանդգնութե։ Յանդգնութիւն՝ որ չար կամ դժնդակ է քան զպատիժս իմ. իսկ յանդգնութիւն այս է, զի Եւր ըստ Եմ պաշտօնատարս իմ. լեռւ սուտ պաշտօնեայ իմ, կամ լեռւ ընդունայնագործ և զրաջան պաշտօնեայ եղէիմ, անհաստատ մօք, Երկնաւոր մանապարհաւ ոտիւք, լեռւ զխորայելացիս յերկուս հետս կաղալով. (գ. թագ. ժը. 21.) մերթ զնոյն պաշտեալ, մերթ զդևն։ կիւ առաւելազանցութե վարելով 'ի բարին կամ 'ի չարն, և նուազութե միշտ 'ի բարին. որ երկոքին ևս մեղք և մահաբերք են. և սակայն յայժմ ամենայնի լեռւ իմ պաշտօնեայ ձևանամ նման փարիսեցւոց. որ է մեծ յանդգնութիւն և անամօթութիւն։ Ապաքէս ձևացութե ևեթ պաշտօնեայ Ած լինելով, ջանամ յարտաքին գործս, և ունելով օգտին հոգւոյն։

(11) Սանիմ զամ երկիր։ Սնոյն զամ մարդոյ ախտս, կամ զմեղս և բաշխարհս. կամ ունիմ զամ որ երկիր է, այսինքն երկրաւոր և շնչաւոր մարդկան. և սակայն Եմ պատգամաւոր, եմ լոյսք, ձևանամ լեռւ պատգամաւոր իմ առ մարդ, և աղօթող առ Ած վասն ամենայն աշխարհի։

(12) Յոյժ նեղեալ անձն։ Զերը ասէ յոյժ նեղեալ, բանին յիշատակաւ, յիշատակաւ մեղացն խոցեալ. որ և զոյն ինքն պատմէ. (Մ. երդ. Է. 72. Թ. 2։) Սոյնպէս և ես ասէ՝ նեղեալ և ձանձրացեալ եմ յիշատա-

կաւ մեղացս. և յետ մաշաբեր ախտից վտանգեալ, անկեալ կամ 'ի խորս գարշութեան մեղաց, որք են դժոխային ապականութիւնք. մինչ զի դժուարին է հաւատալն՝ թէ լսես ինձ առ 'ի հանել 'ի խորոց մեղացս :

(13) ՄԱՀՆ ԵՂԵԱԼ ԲՆՈՒԹԵԱՆ : Մասնելով զիմ անձնս, կամ զապականեալ բնութիւն՝ ինքնաբանական խոստովանութեա, յայտնեցի յետ կողմանց լինել մահապարտ և անհնարաւոր առ 'ի կեալ. որպէս զի փրկելովդ զիս՝ առաւել մեծանայցես, փառաւորեսցիս, կամ հրէին, վասն առաւելն փրկութեան, և վասն երկրորդիս :

(14) 'Ի ՃԱՐՏԱՐԷԷՆ ԲԱՐՍԵՂԷ ԽՐԱՏԷԱԼ : այլ օրէն. 'Ի ՃԱՐՏԱՐԷԷՆ ԲԱՐՍԵՂԷ Է ԽՐԱՏԷԱԼ, ՀՕՐՆ ԳՐԻԳՈՐԻ ՃԱՂԲԵՆ ԸՍՏ ՆՄԻՆ են :

(15) ՎՃԻՌ ՊԱՏՃԷՆԻ : Այսպիսի բանք ածաշունչք՝ որք տան յոյս թողութեան մեղաց, են վճիռ յարգելի, օրհնելի, ըստ որում են ածայինք : ՆՈՒԻՐԵԱԼ ՊԱՅՄԱՆ, սրբազան օրէնք, կամ կանոն : ԱՆՀՄԱՆ ՆՈՅՆԱԳՈՅ. կարգ կամ որոշումն անփոփոխելի : ՀԷՔ ՔԵՐՈՎԲԷ. վճիռ կամ նշան ածապարգև : ՃՇԳՐԻՏ ՊԱՏԿԵՐ. ըստ որում որոշաբար երևեցուցանէ զկամս այ, և զհանգամանս թողութեան մեղաց, այսինքն հաւատալ թէ կարէ և կամի ած ներել, և այնպէս գտանել առ նա սրտիւ զղջացելով : ԱՆՍԱՍԳԻՐ, անխարդախելի, կամ անջնջելի գանձ, յորմէ զեղանին շնորհք քաւութեան : Վասն որոյ և ես այսու բանիւք հաւատս ընկալեալ, եմ :

(16) ԶԱՄԵՆԱՅՆ ԱՐԱՐԵԱԼ : Զամենայն սուր ցցուեալս՝ ընդ ոտիւք ջարդես :

(17) ՍԱՀՄԱՆԵԱԼ 'Ի ՆՈՐ ԱՒԷՏԻՍ : Իբրև զնուաղ լոյս փոքր կայծի, որ իբր անգոյ կամ աներևելի համարի :

(18) ԲԱՆԻՒ ՃԱՂԲԱՆԱՑ : Ասաց մինչ 'ի վերջին 'ի բերան աղօթողացն բանս զնէ աղաչել վասն իւր, որպէս ասաց և 'ի բանին իղ. 4 : տես անդ. լծ. 24 :

(19) ՍԻՐԵԼԻ ԱՌԱՔԵԼԻ : Պատճառն յօրինողի այս գրչական բանիցս, եղիցի բժշկեալ. են : Եւ այն պատճառ խնամին ծնողք կամ վարժապետ սէրն, կամ որք յորդորեցին յօրինել զայն : Կամ խնամ այսպէս, սկիզբն առաջօղ, այսինքն յօրինող ողբերգութեան : Իսկ եթէ դք կոչական ասցէ, ով սկիզբն են. խնամի : Ո՛վ տէր՝ պատճառ յօրինողի ողբոցս, նա՝ որ զայս գեղ փրկութեան մեզ կազմեաց, եղիցի բժշկեալ են :

(20) 'Ի ՍՈՅՆ ՀԱՆԳԷ : Նա որ 'ի սոյն աղօթական մատենի՝ խոնարհական զղջմամբ ուսոյց խոստովանել զթևս հպարտութեան, աղաւաղեցի 'ի չար կամաց ՃԱՀԱ ԱՐԿԱԾԻՑ, մաշաբեր գործոց կամ մեղաց, ԱՆՂԲԱՋԱՆԱՑ, առաջնոցն՝ գործելոց 'ի մանկութեան, ՀԵՐՁՈՒԱՑ, գործելոց 'ի ծերութեան, և ՄԻՋՆՈՑ, գործելոց յերիտասարդութեան : Կամ, աղաւաղեցի 'ի պարտեաց սկզբնական մեղաց, և 'ի վերջին պատժոց հանդերձելոյն, և 'ի միջին ներկայ պատուհասից :

(21) ԸՆԴԴԻՄԱՄԱՐՏ ԴԻԱՑ : Յաղագս մակագրիս չէ յայտ՝ անդէօք սէր վարդապետին իցէ, թէ այլոյ ուրուք : Եւ է աղօթք առ հոգին ած վասն լուսոտաց. որք թէպէտ և 'ի բնական պատճառաց ախտանան, սակայն ազդեցութեամբ դիւաց խառնի բազում անգամ 'ի սաստկացանել, և 'ի բորբոքել զցաւ ալեացն :

(22) ԿՈՒՍԱԾԻՆ ԸՆԹԱՆԻ : Անուն քո իբրև Ած՝ մեծ է և ահաւոր. բայց իբրև Հայր՝ ընտանի է, նշանակիչ ծնողական գթոյ. ուստի և ՔԱՆ ՀԱՆՔԱՐԵԼԻ, քաղցր 'ի բերան առնուլ : Կամ, անուն քո ահաւոր և սարսափելի է առ դևս, առ խոտանս, առ ածուրացս. բայց ընտանի և ախորժալուր առ հաւատացեալս, առ ածապաշտս :

(23) ՊԱՏՃԱՌ ԱՐԴԱՐ : Սկիզբն որդւոյ ծննդեանն, կամ իբրև հայր Ճշմարիտ արարչութեան, որ անլինչունակ գոլով միշտ գոյակից իւր ու-

նի զորդի , այլ ՈՒՂՂ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ · ոչ նախնութիւն ժամանակի · որպէս յարարածս ծնօղն յառաջ է ժամանակաւ քան զծնեալն : Կամ, ոչ ըստ նախ դասելով անուանցն , որպէս հայհոյէր սաբէլ , որ մի անձն համարելով զհայր և զորդի , ընդ նմին դնէր՝ թէ հայր նախ դնի քան զորդի
կոչմամբ միայն , և ոչ ստորադրութիւն :

Յաղագս ՊԱՏՃԱՌ բառիս յայտնի է ուսանողաց ածաբանութե , զի վարդապետք յունաց սովորաբար 'ի կիր առնուն յածայինս, կոչելով զհայր՝ պատճառ որդւոյ , կամ հոգւոյն սրբոյ · որով խնամոն զաշխարհս և զերական սրտագրիչ սկիզբն անձին որդւոյ , կամ հոգւոյն՝ առանց զանազանութե էութե , և առանց կախման · և զայն կիրառութիւն յինքեանս ընկալան վարդապետք հայոց , գիտելով զուղիղ իմաստ բառին , և զողջմտութիւն լսողացն , և միանգամայն ոչ անգիտանալով զայլ նշանակութիւ այնր բառի , ըստ որոյ ոչ պատշաճի ածային անձանց · զի պատճառ 'ի սաեղծուածս զայնպիսի ասի սովորաբար , յորս գոյ զանազանութի բնութե , և կախումն միոյն զմիւսմէ · և ըստ այսմ մտաց՝ ԱՆՊԱՏՃԱՌ ասեն վարդապետք հայոց զորդին և զհոգին սբ · որպէս ներսէսն ասէ 'ի Յն որդին , 'ի բանն յաղագս Երրորդութե · * Հայր է պատճառ՝ անպատճառից , որդւոյ ծննդեամբ՝ հոգւոյն բղխմամբ : Զի ածյ՝ չէ ինչ պատճառ , ինք՝ պատճառաւ՝ գոյից պատճառ || : Զսոյն ասէ 'ի շարականն հոգւոյ գալստեան, 'ի կանոնն · դ · 'ի հարցն · Որ բոլորից ես պատճառ , ևն : Սոյնպէս և յառաջին թղթին առ մանուէլ կայսր · * Հայր պատճառ , և որդի և հոգին 'ի պատճառէն անժամանակաբար , և առանց պատճառի || : Իսկ վարդապետք լատինացւոց սովորաբար 'ի կիր առնուն զբառն ՍԿԻԶԲՆ , և յառաջնոյն՝ երբեմն նաև զբառն ՊԱՏՃԱՌ · որպէս Իլարիոս · ( գիրք ժա : և ժբ : ) Օգոստինոս · ( գիրք ձդ · խնդրոց · ժդ · ) Վինկենդիոս Լիրինեցի · ( գիրք ա · ընդդէմ արիոսի : ) Անսելմոս : ( գիրք յաղագս բղխման հոգւոյն սբյ : Ռիքարդոս Վիկտորեան · ( գիրք Ե · յաղագս Երրորդութե · գլ · է · ) Իսկ յետ երկոտասաներորդ դարուն խափանեցաւ առ լատինս կիրառութիւն այսր բառի , թէպէտ առանց մերժելոյ զսովորութի այլոց ազգաց · որպէս ասէ նա ինքն սբ Թովմաս ագուինացի , 'ի Ժ · խնդ · յաղագս կարողութե · յօդ · ա · առ 8 · * Յոյնք ընդարձակագոյն վարին անուամբ պատճառին , զծագումն ևեթ այնու նշանակելով . . . վասն զի ոչ ըստ պատշաճի ասի ինչ 'ի լատին լեզու , զոր վասն հանգամանաց լեզուին մարթ է ըստ պատշաճի ասել 'ի լեզուսոյն : Սակայն յընդունել մեր զանուն պատճառին յածայինս ըստ յունաց , չէ պարտ յայն միտս իմանալ , որպէս յորժամ զսաեղծուածոց ասի || : Վասն այսորիկ 'ի Փլորենտեան ժողովն՝ 'ի միաբանութիս անդ յոյնքն անդադար 'ի կիր առնուին զբառն ՊԱՏՃԱՌ · և երբեմն նաև լատինքն ըստ մտաց յունաց · մինչ զի նաև 'ի սահմանն հաւատոյ ասացին : * Որդին ևս է՝ ըստ յունաց պատճառ , և ըստ լատինացւոց՝ սկիզբն են-
թակայութե հոգւոյն սբյ , որպէս և հայր || :

(24) ԶԱՐՀՈՒՐԵԱԼ 'Ի ՍԽՐԱԼԻ ԱՐԵԱՆ ՀՈՍԻՑ : այ զարհուրեալ 'ի վսեմէ սխրալի կամ սքանչելի արեան երկնաւոր գառինն · որ և ԱՆՃԱՌԵԼԻ է , այ ոչ գոյ բան կամ չափ զօրութե նորա · մինչ զի թէև միանգամ հեղեալ կամ սրսկեալ , մաքրեաց զհամայնս ընդ ամ յաւիտեանս : Աստանօր յատկացեալն 'Ի ՀՈՍԻՑ՝ եդեալ է 'ի սեռական հոլով նման յատկացուցչին՝ ԱՐԵԱՆ , ներհակաբար այնմ օձոյ՝ որով յատկացուցիչն դնի 'ի հոլով յատկացելոյն · տես զկնի ըծ · 25 · 27 : Արդ՝ աղաչէ , զի տեառն դիտական , և մանաւանդ ինքն դեն փախիցէ 'ի տեռնդելոյն , զարհուրեալ 'ի հեղմանէ արեան Քի փրկչին , որ միանգամ հեղեալ , 'ի մշտնջենաւորս
ունի զզօրութիւն :

(25) Յայս պատկառելի խոնարհութիւն : 'Ի 4 օրինակս դնի յայսոյ, որ լու-
սեայն ցուցանէ զկիշտս քնական խոնարհութեն, և զայն բազմապատկանէ,
իբրև թէ 'ի պատկառելի խոնարհութենէ յայտնանէ խորհրդոյ մարդ-
կութեն, ամաչեսցէ սատանայ. հեռացեալ մերժեսցի 'ի շինուածոյ խո-
րանէ, այ 'ի շինուածոյ խոցանի՝ 'ի մարմնոյ ջերմնոտին կամ լուսնոտին,
յորում դու նիքն բնակես :

(26) Բոպճափուշ. Բամինեյուցիչ. (փուշ փուշ ընող.) բոծանաբե-
ռեր. դժնդակ կիր ցաւեցուցիչ ձեռին : ագեղահանչէս. այ մեծ և սուսար
բևեռացն քնի, որք զոգին հանէին սաստիկ ցաւոցն, և քամինեյուցա-
նէին զոսկրս և զլոգս բևեռմանն : Արդ՝ յիշատակաւ բևեռացն այ-
նոցիկ տանջեսցի ցաւովք չարի սատանայ՝ փոխանակ ըլլելոյն զըստա-
նոյն :

(27) Սպաք ամիգին բախման : 'Ի սաստիկ բախմանէ կողահերձ և սուր
սլաքին կամ տիգին՝ որով ընկալաւ փրկիչն զմեծ և զգերմանացեալ վէրն,
սասանեսցի սատանայ՝ առաջին գոլիչ և պատճառ մահուն : Վէր կողի
փրկչին մեծ եղև՝ ոչ միայն առ այլ վէրսն որ 'ի գանիցն և 'ի բևեռացն,
որ և նիքնին մահացուցիչ էր, այլև զի անարգութեն և զի յանդգնու-
թեան տիգողին. զի ոչ խնայեաց նա և ոչ 'ի մեռեալ մարմին խաչե-
լոյն :

(28) Անմահն խոլորիկ : Փոխանակ թանձրացելոյ դնի. զի անմահն մեծ
մահկանացու մարմնոյն ծածկեցաւ 'ի գերեզմանի : Այսու թաղմամբ
փրկչին՝ հայրապետութեն խոծէանգոտոլին, կարծեցեալ իշխանին սատա-
նայի՝ 'ի յատակս խաւարային դժոխոց տեսցէ զնիքն : Իւր յիշեսցէ զա-
ռաջին հպարտածն որով 'ի փրկագործ կոյս խաչեցելոյն թնդք սատա-
նայի անհետացան խաւար :

(29) Վասն էր 'ի փառս քո հայր : Զամենայն զփրկագործ կիրս որդւոյ
քո, և զխոնարհութեն սատանայի՝ այնպէս խոստովանիմ 'ի փառս քո
ամ հայր ողորմութեն, զի լիցի միանգամայն էէր 'ի փառս որդւոյ քոյ՝ հոգ-
ւոյն սրբոյ, այ 'ի փառաւորելս զքեզ՝ զկամել փառաւորել և զորդին և
զհոգին՝ իբրև հաւասարապատիւ զանազանեալս 'ի քեն : Բանզի ու դէ-
պս ինչ սոսկ զօրութեն : Այսուհետ պէտքն խնդրի գոյական 'ի դէպ բանէն,
ոմ դասակ, երանակ, 'ի բանիցս՝ դաս, երան, և նշանակէ՝ պէտք, կարօտու-
թիւն. ուստի և խնդրում է, վասն զի մին յաւիտեալ անձնից ոչ պէտս
ինչ կամ կարօտութիւն լոկ զօրութեն ունի 'ի միւսմէն, այս մի խորհրդականն
խորհուրդ, 'ի միում անհասանելի ծնութեն. որպէս հայհոյելին արիանոսք
և հոգեմարտք, զորդի և զհոգի իբրև կարօտեալ զօրութեն ինչ առեալ հօր.
այլ զանակիրզն բանդ անյոասար՝ փառաւորեմք ընդ անժամանակ հօրդ,
ընդ նմին խմն և զհոգին : Այսպ էմաստք պատճառին այս են. եթէ ես
զորդին և զհոգին համարեի իբր լոկ զօրութիւն ինչ զքեն կախեալս, որ-
պէս աղանդաւորքն կարծէին, ոչ զխոէի 'ի փառաւորելս զքեզ՝ փա-
ռաւորել և զնոսա. բայց քանզի դաւանեմք զնոսա անձնաւոր էութիւն
զուգապատիւս քեզ, վասն այն 'ի փառաւորելն զքեզ՝ փառաւորեմք
և զնոսա. ընծայեալ քեզ գոհութիւն, կարողութիւն, անձնա վայելչութիւն,
անձառելի վայելչութիւն, կամ արժանաւորութիւն մեծութե, և միաբան հա-
ւասարութեն են :

Սերտին յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

## ԲԱՆ ԻԹ ։

Ա . Եւ արդ՝ դու միայն սկիզբն բարեաց, գթու-
թեան անճառ՝ որդի բարձրեալ միոյդ Այ, որ
զողջոյն զօրն՝ թողութեան ցուցեր փրկարան, և ոչ
կորստեան դատապարտարան, [1] յեղանակեալ ինձ
զաւուրն չար՝ առ մեծ աւետիս ակնկալութեան ։ Բժիշկ
ախտացելոյս . հովիւ մոլորեալ ոչխարիս . տէր՝ ա-
պականեալ ծառայիս . գինի անապակ՝ մեծ տրտմե-
ցելոյս . սպեղանեաց դեղ՝ վիրաւորեցելոյս . ազա-
տութիւն մեղօք գրաւելոյս . օրհնութիւն բարեաց՝ մերժե-
լոյս . [2] կնիք շնորհաց՝ խոտելոյս . օծումն կոչման՝ կապ-
տելոյս . կանգնումն վերստին՝ կործանելոյս . պատսպա-
րան հզօր՝ գլորեցելոյս . օժանդակ վէհ՝ գայթակղե-
ցելոյս . դուռն բարձրութեան տարակուսելոյս . սանդուխք
երանութեան՝ եղկելոյս . ճանապարհ շաւղաց՝ մոլորե-
լոյս . թագաւոր ներող՝ պարտելոյս . քաղցր յուսա-
դրութիւն՝ լքելոյս . ձեռնկալ կենաց՝ հերքելոյս ։
Մեծդ [3] միայն՝ և ամենառատ, որ զլիութիւն բարեաց
սահմանեալ, հեղուս անչափ յաճախութեամբ քան զոր
խնդրեմք և իմանամք, ըստ պօղոսի գոհաբանութեան ։
Վասնզի իննուց յիսնից՝ և թուոց՝ երից և չորեակ
տասանց՝ ՚ի վաղորդայնէ տունջեանն՝ առ մուտս
արեւուն, անդուստ առ նմին յաւէտ կարկառմամբ
իսկ և իսկ ՚ի սոյն՝ անարգել սրտիւ, ՚ի վեր է քան
զաղերսանաց ակնկալութիւն մարդկան, բարեգործել
միմեանց շնորհատրութիւն . իսկ առ իմս թշուառութեան
և անարգութեան զքոյդ եդեալ փառս՝ ամենակարօղ
զօրութիւն ահեղ, բոլորից Այ՝ օրհնեալ տէր Քս, որումք
սահմանեցի կշռութեամբ չափոյ՝ հաստողիդ ընդ հողոյս
հաւասարութիւն կցորդեալ ։ Վասնզի մնաս յայտնի
անբաւ և անհետազօտելի, ամենեւին բարի՝ անմասն
բարկութեան խաւարի . ուստի յոյժ նուազ են քում
մեծութեան աստեղայն թիւք, զորս գոյացուցեալ յոչ
էից, յորջորջմամբ անուանց կնքեցեր . և կամ հիւթ

երկրի 'ի յօդս հեղեալ, զոր [4] 'ի չգոյից հաստեալ,
տարածումն յատակի կառուցեր, քան ինձ նախա-
գրեալ համարդ սակաւութե՟, որովք քեզ նմանիլ
վարդապետեցեր ։
Է. Ահա՛ ծածկեցաւ և [5] ընկղմեցաւ 'ի քոյդ լոյս կա-
մաց երկայնմտութե՟ հանուրց չարութի՟, իբր դոյզն
մռայլ՝ 'ի տապ արեւու. և որպէս աստուստ իսկ կիրք
բնութե՟ց զհասարակաց բարուց ցուցանէ ։ Քանզի
ո՛վ ոք 'ի մարդկանէ մեղաւ, և ո՛չ զղջացաւ. ո՛վ ոք
զազրացաւ, և ո՛չ ամաչեաց. [6] ո՛վ ոք գարշեցաւ, և
ո՛չ պատկառեաց. ո՛վ ոք սխալեաց, և ո՛չ ապաշա-
ւեաց. ո՛վ ոք կործանեցաւ, և ո՛չ հեծեծեաց. ո՛վ ոք
գայթակղեցաւ, և ո՛չ սորջացաւ. ո՛վ ոք պարտե-
ցաւ, և ո՛չ ինքեամբ ըմբերանեցաւ. ո՛վ ոք պատրե-
ցաւ, և ո՛չ յոգւոց ելաւ. ո՛վ ոք ճաշակեաց լեղի,
և ո՛չ դառնացաւ ։ Ո՛վ ոք անկաւ 'ի բարձրութ՟է,
և ո՛չ ընդոստեաւ. ո՛վ ոք կորոյս մեծութիւն, և ո՛չ
աշխարեաց. ո՛վ ոք զրկեցաւ յերանութ՟է, և ո՛չ ելաց.
ո՛վ ոք կապտեցաւ 'ի շնորհէ փառաց, և ո՛չ ողբաց.
ո՛վ ոք գտաւ ինքեան վնասակար, և ո՛չ ստգտաւ. ո՛վ
ոք մերժեցաւ յերեսացն ա՟յ, և ո՛չ հառաչեաց. ո՛վ
ոք լուաւ զա՟յ սպառնալիսն, և ո՛չ սոսկացաւ ։ Ո՛վ
ոք [7] ընդ մի չարեացն՝ հազարս չաւաղեաց. ո՛վ ոք
մերկացեալ յաւուրս ձմերայնոյ, և ո՛չ զոփացաւ.
ո՛վ ոք անօրինեցաւ, և ո՛չ քարամբք զմիտսն կոծեաց.
ո՛վ ոք ետես զստրուկն յիւրում մեծութե՟, և ո՛չ զկծե-
ցաւ. ո՛վ ոք կատարեաց չարիս, և ո՛չ զինքն իսկ նզո-
վեաց. ո՛վ ոք ախտացաւ, և ո՛չ զանձն դսրովեաց.
ո՛վ ոք յամօթալեացն գործեաց, և ո՛չ զիւրն մարմին
ձաղեաց. ո՛վ ոք 'ի պատկառելիսն հպեցաւ, և ո՛չ
զօրն իւր անիծեաց ։ Ո՛վ ոք զգործեցեալսն յիշեաց,
և ո՛չ տապացաւ. ո՛վ ոք զգաղտնիսն մտաբերեաց,
և ո՛չ խորովեցաւ. ո՛վ ոք զծածուկսն նկատեաց, և ո՛չ
մահ կորստեան խնդրեաց. ո՛վ ոք զաներեւոյթսն կեր-
պաւորեաց, և ո՛չ կրկին յերկիր կորացաւ. ո՛վ ոք
ընդ մեղացն հեշտութե՟ բոց անշէջ հնոցի ո՛չ խառ-
նեաց. [8] ո՛վ ոք զվնասակարսն բնութե՟ն, և ո՛չ պա-
պակեցաւ. ո՛վ ոք զկամաւ ներգործեալսն, և ո՛չ սա-
տակման ինքեան աղօթեաց. [9] ո՛վ ոք զանճառելիսն,

և ո՛չ խռովեցաւ. 10 ո՛վ որ զանկրելիսն էութեան, և ո՛չ թախծեցաւ. ո՛վ որ զմեծամեծսն, և ո՛չ մաշեցաւ. ո՛վ որ զանբծութեան ապականարարսն, և ո՛չ տոչորեցաւ. ո՛վ որ զտարագրութեան պատճառ յանցմունս, և ո՛չ տագնապեցաւ. ո՛վ որ զերեսացն աղտեղի տեսիլ, և ո՛չ բարկութեան վերնոյն զանձն պարտ վարկաւ. ո՛վ որ 11 զմի 'ի կարևորացն մեղաց յաչս կերպացոյց, և ո՛չ զլինուք մահու խոցեցաւ. ո՛վ որ զխայտառականացն, և ո՛չ վայս վհատութեան ընդ հեծութիւնս ձայնին հիւսեաց: Ո՛վ որ յարքայական գահոյիցն տնանկացաւ, և ո՛չ կարկամեալ 'ի վայր գլորեցաւ. ո՛վ որ ընդ պսակին պերճութեան՝ հող 'ի գլուխ եղեալ, և ո՛չ կրկին չարչարեալ յոգի մահացաւ. ո՛վ որ ընդ պայծառ պատմուճանին՝ քրձազգած եղեալ, և ո՛չ տխրեցաւ: Ո՛վ որ զկեանս իւր կորոյս, և ո՛չ արեան արտասուս երկնեաց. ո՛վ որ ընդ արկանելեաց լուսոյ խաւար զգեցաւ, և ո՛չ նուաղեցաւ. ո՛վ որ 'ի վերայ սգոյ սիրելւոյ ո՛չ թառամեցաւ: Ահա այս կերպարանք ճշգրտագոյնք՝ պարտաւորիս յանդիմանութեան, տխուր դէմ. 12 քաղեալ ճաճանչ. ցամաքեալ խոնաւութիւն. 13 երիթացեալ շուրթն. անշքեալ տիպ. տրտմեցեալ ոգի. այլայլեալ ձայն. կրկնեալ պարանոյ: Եւ զի 14 թէ որ զխոկութիւնն իսկ նշանակեսցէ, ո՛չ անօրինէ, անամբարտաւան միտ. անհրպարտ սիրտ. անխնդրող պարգևի՝ թշուառ. անաղերսալի պասքեալ. ինքնակշտամբելի դեգերեալ. իրաւամերժ սովեալ. արդարալուկ քաղցեալ. պատշաճադատ հարուածեալ. ինքնավկայ մահապարտեալ. արժանապէս հանեալ. անձնանէծ եղկելի: Եւ զայս թարգմանեալ ցուցանէ արդարագործ փարիսեցին կշտամբեալ, և մեղապարտ մաքսաւորն բարեհամբաւեալ:

Գ. Եւ արդ՝ 15 եթէ զչարիսն՝ հնարաւորութեամբ բանսարկուին գտողին զմեզ գայթակղեալս, զիւրսն 'ի մեզ սերմանիս առ օրն համարեսցի, զիա՞րդ ո՛չ զբարիսն տնկեալս 'ի մեզ հոգւոյ արութիւնս՝ 'ի խնամակալութեան կամաց կեցուցչին՝ օնևօն գրեսցես՝ տէր բարեգութ, հզօր և յաղթօղ. քաւիչ մեղուցելոց. կարօղ յամենայնի՝ առ ամենայն փրկութիւն: Եթէ

զանգունգս առ երկինս փոխես, և կամ զխաւար մթութեան[16] 'ի լոյս հաստատես, եթէ զդառնութիւն լեղւոյ՝ 'ի մանանայի քաղցրութիւն կազմես, և կամ զկոծ սաստկութեան վշտաց՝ 'ի պարս դասու բերկրութեան հարսանեաց կարգես, դիւրինք և հնարաւորք են քեզ այսքիկ։ Եւ ևս քան զսոսին բաւես առ նոսին՝ տիրեալ համայնից աճաւորապէս. և քեզ փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն։

---

(1) ՅԵՂԱՆԱԿԵԱԼ ԻՆՉ։ Զոր դուդ ասացեր՝ թէ գոյ աւուրն չար իւր. (մատթ. Զ. 34.) կամ, զոր առաքեալն ասէր. (առակ. իդ. 16.) թէ եօթն անգամ անկցի արդարն, իմացեալ զանկմանէ 'ի մեղս բազում անգամ յաւուրն։ Դու զայս չար աւուրն փոխեցեր յաւէտից յաւուր, հրամայելով թողուլ եղբօր եօթն անգամ մեղուցելոյ 'ի միում աւուր. ծանուցանելով այսու՝ թէ զօրն ողջոյն մարթ է արդարանալ և վրիպել, և ոչ թէ մնալով 'ի չարին՝ կորնչել։ Այն որ 'ի մերս ղուկ. ժէ. 4. գնի.* Եթէ եօթն անգամ մեղիցէ || են, 'ի յոյնն և 'ի լատինն յաւելուածով ասի, յաւուրն։

(2) ԿՆԻՔ ՇՆՈՐՀԱՑ։ Այսու, և յաջորդաւն յայտ առնէ զներգործութիւն մկրտութեան, և օծմանն, որ 'ի նմա. իբր զի քո շնորհօքն և վաստակօք իւր է կնքիչ հոգւոյ մկրտելոյն, և օծանող՝ 'ի կոչելն առ ինքն զկողոպտեալս 'ի զարդուց հոգևորաց։ Կամ օծութեան կնքման, խմա՛ օծանող ըստ քնական անուան իւրոյ։ Իսկ եթէ զայսոսիկ՝ ասացուք ոչ ըստ ժամանակի մկրտութեան՝ այլ ապաշխարութեան, նոյն իմասցուք յարմարելն. իբր զի և ապաշխարութիւն է երկրորդ մկրտութիւն։

(3) ՄԵԾԴ ՁԱՅՆ։ Դու միայն Քրիստոս հարուստ և ձոխ, ամենառատ ես միանգամայն 'ի պարգևել անխափ. որ զլիութիւն բարեաց ամենա-նեալ ունելով, այսինքն բովանդակեալ ունելով 'ի քեզ, հեղուս 'ի մեզ անպակաս առատութեամբ, առաւել քան զոր խնդրեմքն են. կամ, ըստ այլ օրին. ամենայնեալ հեղուս. այսինքն զլիութիւն բարեաց բաշխեալ ըստ իւրաքանչիւր չափու՝ առատութեամբ հեղուս են։ Քանզի ԻՆՆԱՑ ԶԻՆԵՑ։ 'Ի լաւ օրին. և 'ի հին լուծ. ՅԱՆԵՑ, կամ ՅԼԱՆԵՑ։ Աստանօր յառաջ բերէ զասացեալն Տն առ պետրոս՝ 'ի միում աւուր ներել եղբօրն մեղուցելոյ եօթանասնեկի եօթն, որ առնէ 490։ Այսչափ անգամ ասէ՝ յաւաւելէ մինչև 'ի մտանել արևու, [illegible], այսինքն մերձ միմեանց, կամ հետ զհետէ 'ի նմին աւուր [illegible], յօժարաբար, կամ զեղջանելով 'ի [illegible] ներումն եղբօրն անարգել սրտիւ, [illegible] միմեանց, բարեբարել առ միմեանս ներողութեամբ, կամ շնորհել միմեանց, 'ի ջեր է, առաւել է քան զայս խնդրելոյ մարդկան։ Արդ՝ խմա՛ անարգ թշուառուե օրինադրեցեր այսչափ ներողամիտ լինել առ ընկերն, որում համեմատեալ զքո մեծութիւդ՝ զկարգ չարեացն հաւասարութիւն հողոյ ընդ արարչիդ, որ անբաւդ ես և ամենաբարի, և անմահն 'ի բարկութե. վասն որոյ առաջի մեծութեան քո առաւել սակաւ են թիւք տասանց, և փոքր երկրի յոգս ցնդեալք, քան թէ ինձ եօթանասնեկի եօթն թիւդ, որովք ուսուցեր ներել քեզ՝ 'ի թողուլ եղբօր մեղուցելոյ։ Բաղդատական ձեռնարկութիւն է բանս, իբր ասել. եթէ խմա՛ տկարութեանս հրամայեցեր՝ եօթանասնեկի եօթն անգամ ներել յանցուցելոյ եղբօրն,

մրջամ ևս յաճախութե՛ ներեսցես դու մեզ, որ անբաղդատ առաւելուս քան զմեզ, և որում ատեղացն Թիւք, ('ի բո՛մ օրին. Բ Ի.) և փոչեաց երկրի՝ սակաւաԹիւք են ։

Զթիւն եօթանասնեկի եօթն, այսինքն 490. բացատրէ նը վարդապետս այլովք մանաւոր թուովք. ուստի ասէ. Բննւոյ ղինից, այսինքն լինն անգամ քառան, որ լինի 450 ։ Ւ Բւոյ՝ Էրէց Ւ ըրէաջ փաւոց ։ (մի օրին. ըրէ+) Առաջին ապագրօղքն Նարեկին 'ի բաց թողեալ էին զբառսն Բւոյ Էրէց, եւր սխալ և աւելորդ համարելով. վասն զի ըրէաջ փաւոցն բովանդակեալ ընդր զթիւն 490 ։ Սակայն յետ գրչագիր օրինակս և 'ի հին լուծմունս գտն այն բառք. վասն որոյ 'ի վերջին ապագիրս եդան 'ի տեղի իւրեանց ։ Իսկ իմաստ բանին գիւրաւ 'ի յայտ գայ՝ եթէ կիտագրութիւնն լինիցի որպէս եդաք մեք, այսինքն Ւ Բւոյ՝ Էրէց Ւ ըրէաջ փաւոց. որով բառն փաւոց անկանի 'ի վերայ Էրէցն և ըրէաջին. իբր ասել, և այլ թուոց՝ երեք և չորք տասանց. որ առնէ 40. և յաւելեալ 'ի 450 ն բովանդակի թիւն 490 ։

Այս եղանակ որոշման թուոց՝ է ըստ բնական կարգի շարագրութեն, առեալ 'ի սովորական ոճոյ մարդկան՝ որով ասեմք, երկու և երեք անգամ, երեք և չորս զոյգ, ևն, և իմանի ընդ ամենն՝ երեք անգամ, չորս զոյգ ։ Սոյնպէս 'ի սովորութե գրոց ասի, (Եզեկ Ի. 5.) * Յերիս և 'ի չորս ազգս, || այսինքն ընդ ամենն՝ չորք ազգ. որպէս մեկնէ և սբն Եփրեմ յասելն. (հատ. ա. երես 221.) * Եթէ ոչ ապաշխարեսցեն, զպատուհասն հանցէ 'ի գլուխ չորրորդին ։ || Յար և նման այսմ է ամովսայ ասելն. * 'Ի վերայ երից անօրէնութեց գամասկեայ՝ և 'ի վերայ չորիցն ոչ գարձայց 'ի նմանէ. || զոր և ութ անգամ կրկնէ անդ. (ա. 3. 6. 9. 11. 13. բ. 1. 4. 6.) յորս իմանի. 'ի վերայ չորրորդ անօրէնութեանն, ևն ։ Այսպս ըստ այսոցիկ օրինակաց՝ ասելն աստանօր, Էրէց Ւ ըրէաջ փաւոց, նշանակէ՝ երից տասանց, և չորրորդ տասին, որ լինի ընդ ամենն 40 ։ Այսմ նման բացատրէ և հին լուծմունքն ։ Իսկ եթէ զբառն Էրէց՝ յարեսցուք 'ի բառն Բւոյ, ասելով, Ւ Բւոյ Էրէց, կարի դժուարին լինի իմաստն և անսովոր, և անհամեմատ կարգի շարագրութեն ։ Վասն զի եթէ իմանամք այսպէս, և թուոց երից, այսինքն 'ի վերայ երկուց թուոցն՝ յինն յիսնից, յաւել և զչորրորդ թիւն, այսինքն զչորեակ տասն ։ կամ այսպէս, յաւելեալ 'ի վերայ ինն յիսնից՝ զերիս ևս թիւս, որ է չորեակ տասն, յորոց գումարի 40. և այնպէս գտանին երեք թիւք, այսինքն չորս, տասն. և արտադրեալն ի սոցանէ՝ քառասուն ։ Եթէ առեմ այսպիսի՝ և այլևս իմաստիւք ջանասցի ոք մեկնել, բռնի և ըստ հաճոյից ձգէ զբանն. որպէս յայտնի է մանր քննողաց. և թէև չկայր այլ ընդդիմութե, գոնէ աւելորդ և ոճնատումնայր շաղկապն Ւ յաւելեալ 'ի վերայ ըրէաջ փաւոց. զի ըստ այդոցիկ մտաց բառքն ըրէաջ փաւոց լինելին բացայայտիչ բառիցն Բւոյ Էրէց. վասն որոյ անյարմար էր զՒն խառնել 'ի մէջի գնել երկոցունցն ։

Ուշինչ պակաս ըստ հաճոյից է և այն իմաստ, զոր 'ի վերայ առաջնոյն յաւելու հին լուծ. ասելով. զ40 երկու կտոր արա, այսինքն 26. և 14 և այսպէս լինելին երեք թիւք, այսինքն 450, 26, և 14 ։ Եւ ոչ այսուշատացեալ, 'ի բարոյական միտս շրջէ զբանն, ասելով. առանց երից՝ հաւատոյ, յուսոյ, և սիրոյ ոչ լինի թողութե մեղաց. և ամ խորհուրդ՝ անուանէ երրորդութե կատարի ։ Քա՛ջ տեսանէ ընթերցօղն՝ մրջամ 'ի հեռաւորս ձգի բանն ։

(4) 'Ի Էփոյէց հաաթէաւ ։ 2 օրին. հաաաթէաւ ։ Զհնութ երկրի՝ իմանալով և զջուր և զօդ, յորինչէ հաստատեցեր ասէ, յայտ առնել թէ ոչ՛ այլ գոյացութիք են տարերքս արարչատեղծք՝ որիշ յերկնայնին լուսաւորաց, զո-

րոց եւ ասէ՝ սահղձմամբ յուշից գոյացուցեալ : Իսկ զասահղս յուշուղձամբ անուանց կնքել, (ըստ սաղմ. ձխէ. 4.) ո՛չ եթէ նշանակէ՝ միում միում 'ի նոցանէ յատուկ անուանս եդեալ ԱԾ, որպէս այժմու աստեղաբանք կոչեն նոցա անուանս ըստ իւրեանց հաճոյս. այլ իմանի՝ ճանաչել ԱԾ հաւաստաբար զիւրաքանչիւր աստեղաց զբնութիւն եւ զզօրութիւն եւ զորոշումն, եւ միանգամայն ընդ իւրով իշխանութեամբ վարել զամենայն յոր գործ եւ կամիցի, եւ նոցա անվրէպ հնազանդիլ, իբր այն թէ յանուանէ կոչեցեալք էին. քանզի յայս իսկ սահմանի առ մարդիկ անուանադրութեանն պայման, ճանաչել որոշողաբար, եւ ընդ իշխանութեամբ ունել զիրն՝ զոր անուանէ :

(5) Ընկղմեցաւ 'ի լոյս լուսոյ : Յետ ասելոյն թէ անբաւ է քո մեծութիւդ 'ի ներել, հետեւեցուցանէ. Ահա ծածկեցաւ, այսինքն. ապա յիրաւի ծածկեցաւ 'ի լոյս երկայնամիտ կամաց քոց՝ չարութիւն ամենեցուն, որպէս սակաւ մութն 'ի լոյս արեւու : Եւ որպէս [illegible] : Զայս յաւելու իբրեւ երկրորդ պատճառ դիւրաւ ներելոյն Այ. զի որպէս 'ի կողմանէ Այ գոյ առատ ներողամտութիւն, նոյնպէս 'ի կողմանէ մարդոյն գոյ մեծ վրիպականութիւն, եւ դիւրութիւն ապաշաւելոյ. որպէս եւ ինքնին իսկ բնաւորական կիրք կամ ցաւն՝ զոր զգամք յետ մեղաց, դժուարակիր ... , ցուցանէ զհաստատական բարս մարդոյն՝ զվրիպականութեանն, եւ զզղջականութիւն, ուստի եւ զկարօտիլն ներողութեան : Քանզի ո՛վ որք 'ի մարդկանէ մեղաւ, եւ ոչ զղջացաւ՝ գտանէ բնական զղջմամբ իբրեւ ընդչար ինչ եւ վնասակար բնութեան :

(6) Ո՞հ որ գարշեցայ : Այսինքն գարշացաւ, աղտեղացաւ :

(7) Ընդ մի շարեալ : Ո՞վ որք վասն միոյ եւեթ չարի մեղաց՝ 'ի ճանաչելն զխաս նորա, հալածեալ չարաչարեալ. ոչ հաղարեցա աւաղ եւ վայ կարդաց անձինն : Ո՞հ որ մերկացեալ : Զայս կամ իբր նմանութիւն այլոց ասացելոյն 'ի մէջ արկանէ, այսինքն թէ զոր օրինակ մերկացեալն 'ի ժամանակի ձմերայնի՝ անհնար է թէ ոչ սարսռեսցի, սոյնպէս զրկեալն մեղօք 'ի զգեստէ շնորհաց՝ անհնար է թէ չդողասցի, չամաչեսցէ, եւն : Եւ կամ փոխաբերութբ իմանալի է մերկանալն, եւ ձմեռն, այսինքն ո՛վ որք մերկացեալ 'ի ծածկութից շնորհաց 'ի ձմերային կեանս աշխարհի՝ [illegible], ոչ սարսռացաւ, ոչ դողացաւ : Աստանօր ծանիր, զի 'ի յիշատակելն զանազան կիրս կամ յուզմունս՝ որ վասն մեղաց լինին 'ի մեղուցելոյս, ո՛չ դիտէ զամն ցուցանել իբրեւ օրինաւոր եւ հետեւելի, որպէս անխնանել զանձն կամ զօրն, կամ զմահ անձինն խնդրել, եւն, այլ թէ այսպիսի կիրք՝ որք յոմանս լինին, յայտնի ցուցանեն զապաշխարօղ բարս մարդոյ :

(8) Ո՞հ որ զչարաչարսն բարձեալ : Ասէ մինչեւ 'ի բանն ոհ որ զերեւոյթ աղտեղի թէսի, եւն, զորութբ իմանալի է բայն [illegible], այսինքն 'ի միտսն նկարեաց, յիշատակեաց, խորհեցաւ, եւն : Ո՞վ որք ասէ՝ տեսանելով գործեալ զայնպիսի չարիս՝ որք նմին իսկ բնութեն մարմնոյ վնաս ածեն, ոչ պապակեցաւ, ոչ տագնապեցաւ 'ի ցաւոց սրտին : Ո՞վ որք ընդ մեղաց, 'ի հեշտութեան անդ մեղացն ոչ զգաց յանձին զայլումն խղճի իբր ճաշակ իմն անշէջ բոցոյն դժոխոց :

(9) Ո՞հ որ զանճառելին : Զանասելի մեղսն ամօթալիս գործեաց, կամ յիշեաց, եւ ոչ խռովեցաւ :

(10) Ո՞հ որ զանկրելին, այսինքն զանտանելիան բնութեան մերոյ, զզժնդակս, կամ զայն մեղս՝ որ յոյժ օտար են, որպէս անգթութիւն, ապականութիւն, եւն :

(11) Զմ 'ի խառնուածոյն մեղաց : Այսինքն զմի յայնց մեղաց՝ որք 'ի կարեաց բնութեն գործին. այսինքն 'ի տգիտութէ, 'ի տկարութէ, կամ

պատճառաւ քնոյ, կերակրոյ, հանդերձից, են: Իսկ 'ի բանէն՝ մը օք յարքայախան, մինչև մը օք 'ի վէրայ օգայ են. են իւր օրինակք մարդոյ անկելոյ 'ի շնորհաց մեղօք. իբրև թէ զոր օրինակ անհնար է չտագնապիլ մարդոյ զրկելոյ 'ի թագաւորութէ, 'ի պսակէ, 'ի փառաւոր հանդերձից, 'ի սասցուածոց, 'ի սիրելեաց, նոյնպէս մարդոյ մերկացելոյ 'ի շնորհաց: Ո՛վ ոք ըէտխ, զասացուածն զկարևորս կենացն կորոյս, և ոչ սիրեն իջոյց յաչացն:

(12) Քաշէալ ճաճանը: Այսինքն ամփոփեալ, նուաղեալ լոյս աչաց:
(13) Երիթմաշէալ շարբն: Այսինքն ցամաքեալ, չորացեալ:
(14) Թիէ օք ղէօխօտթէանն: Եթէ զուղիղն կամ զճշմարիտն կամիցի յայտնել, ոչ սխալէ ասել, թէ առ ամօթոյ մեղացն միտքն ոչ կարէ ամբարտաւանիլ (անանէարքարան մք, այլ օրին. անամէարքարան. մի օրին. մքք:) մի՛ միտն հպարտանալ. Թշուառ գոլով ո՛չ իշխէ պարգևս խնդրել, են: Զայս իմ ասէ՝ առ 'ի հաստատել զնախասացեալն իւր, թէ խիղճ մեղաց բնականաբար ամաչեցուցանէ զմարդ, և խոնարհեցուցանէ, որպէս և ցուցանի 'ի մեղապարտ մաքսաւորն:

(15) Երէ ղըմրէան հնարաարունէ: 2 օրին. հնարաարունէ: Եթէ զմեղսն՝ որք հնոյք և գիտք են սատանայի, և իւր զիւր սերմանիս ցանէ 'ի մեզ: Կամ, եթէ զմեղսն՝ խորամանկ նենգաւորութի սատանայի իւր զիւր սերմանիս, աա օրն համարէօյ, առ օրին կամ 'ի միում աւուր գտանէ բազմապատիկ արդիւնացեալ, կամ 'ի միում աւուր այնչափ բազում թուով համարէ, այսինքն եօթանասնեկի եօթն: կամ, առ օրն համարեսցի, այսինքն յայն օրն դատաստանին 'ի համար բերիցէ, ճշգիւ հաշուեսցէ են: Այս ո՞րչափ և ո՞րդ բարեգութ՝ զառ 'ի քէն անկեալ բարիսն 'ի մեզ հօգաոյ արօօնէօ, զօրութի զզիմն, ամօթոյ, երկիւղի, խոնարհութե, են, քով խնամակալութբդ ծն և ծն գրէօյէօ, հաստատուն և արդիւնաւոր արասցես, կամ մի ըստ միոջէ նշանակեսցես, և ընդունելի համարիցիս:

(16) 'Ի լոյօ հաօփափէօ: Այսպէս 'ի ներկայ ժամանակ գնեն բազում օրինակք համեմատ այլոց բայիցն, ծօխէօ, խաշէօ, խարգէօ: յայլ տպագիր գնիւր, հաօփէօյէօ: Եթէ ասէ՝ ի գործս բնուէ կամ պքանչելեօք՝ ղանդաանդօ աա էրխէնօ, զխորս ծովու բարձրացուցանես յերկինս ալեօք և ուռուցմամբ, կամ որպէս առ Ջրհեղեղաւ: ղխաաար մէօօնէ, որ ըստ օրէ զխաւար գիշերի 'ի լոյս առաւօտու դարձուցանես, և զմեգ՝ 'ի պայծառութիւն. կամ առ խորայեղացելովքն յեգիպտոս և յանապատին: ղդաանօօնէ չէղօօյ, զգաւն հիւթս՝ քաղցունս կազմես 'ի ատենկան, կամ որպէս զջուր մեռայլն: Զէօծ օօօփէօօնէ, զառաւիկ կոծս արամութե՝ յուրախութիւն հարսանեաց կարգես. որպէս առ այրն միամօր՝ կեցուցանելով զորդի նորա, կամ 'ի տան յայրոս իշխանին: Այս ամենայն քեզ դիւրին են և կարելի. և առաւել քան զայսոսիկ կարող ես, որ գոլով ամենայնի, են:

Երրորդին յաւելուած կրկին հեծուածէ՝ նորին հանգոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. Ա ։

ա. Եւ արդ՝ ճշմարտեսցի՛ բան քո ո՛ղորմած, բո-
լորից Ած, ներօղ և օրհնեալ, [1] 'ի բազմա-
գթելին դարձաւորութե̃ աւուրն պատկերի զղջման
մեղաւորին, թէ և առ յետին իսկ շունչն իցէ ըն-
տրութե̃, և կամ 'ի մէջ չարութե̃ն փոխադրութե̃ ։
Մանաւանդ զի դժնեայ [2] կցորդս այս անձնիշխանա-
կան՝ [3] միշտ մարտիկ, խաբօղ շողոքորթ, յարեալ
'ի ստուերի, ըստ առակողին, արածօղ հողմոց դժուար-
ունելի, հաստողին փախչօղ, դերեալ որսողին, մո-
լեկան մարմնոյս՝ ներհակ մնկակից, յոգնապատճա-
ռեան ամենավարան. զոր քո՛ է գիտել զքանեացն
յաճախութիւն ։ Եւ զկնի մեղանացն, ողորմագինս
իմն ողբարկութիւս վհատականս՝ տաժանակոծս՝ բազ-
մաւաղելիս, քո՛ առաջի ածեր գթարկութիւս՝ գրեալս
արտասուօք, թառանչս թշուառութեց կարդելոց՝
անբաւս չար վտանգից մեղսատագնապ պատկառե-
ցելոյն ։

բ. Եւ զի մի՛ կրկնաբանութիւս 'ի շատխօսութիւն
կրթեսցի, առաւել քան զսոյն այսու ողբալի. քան-
զի ո՛չ երբէք համարձակի խնդրել իւր զարքայութի̃,
այլ զտանջանացն թեթեւութի̃. [4] ո՛չ ընդ կենդանեացն
'ի լոյս, քան թէ ընդ գերեզմանականացն՝ զգայա-
կան շնչոյն 'ի խաւար. ո՛չ ընդ ամբարձեալսն, այլ
ընդ բեկեալսն և ընդ խորտակեալսն ։ 'Ի հանդերձ-
եան իւրում վաստակեալ. 'ի խրախութե̃՝ ինքեան
տրտմեցեալ. դիմօք ժպտեալ, և մտօք խոցեալ.
կերպ 'ի ծաղր, և աչք 'ի յողբումն. երեսք զփո-
փանս ձեւացուցանէ, և արտասուքն զգառնութիւն
սրտին ճշմարտէ ։ [5] Ի մկանակք երկու՝ յերկոսին ձե-
ւին, մինն արեամբ և միւսն կաթամբ ։ Երկու [6] բու-

բանոյք կայծակնաւորք , մինն խնկով և միւսն ձեն-
ձերիւ ։ Սկաւառակք [7] կրկին կրաւորականք համոց ,
մինն քաղցու և միւսն դառնութ ։ Բաժակք զոյգ՝ [8]
առ երկուս բերմունս , մինն արտօսր և միւսն ծծումբ ։
[9] Տաշտք կրեցեալք 'ի ծայրս մատանց , մինն գինի և
միւսն լեղի ։ [10] Կրունք տեսանելեաց ներհակաց ,
մինն 'ի լաց և միւսն 'ի վրխպումն ։ [11] Խանութք հա-
լոցականաց հակառակութեց , մինն արծարծէ և միւսն
շիջուցանէ ։ Հայեցուածք [12] դիմաց երկուց , մինն
դոյզն ողոքանօք և միւսն անանխայելի բարկութ ։
Համբարձումն [13] երկակի բազկաց , մին 'ի հարուածս
և մին 'ի մերժումն ։ [14] Կնիք կրկնակի կերպից , մինն
տխրեալ և միւսն ցասուցեալ ։ Աշտամբանք՝ ընդ միոյ
երկու , մինն ատեացս և միւսն ապառնեացն ։ [15] Ապա-
ւինունք կարծողականք , մինն գոնէ և միւսն Թերեւս ։
'Ի մի բերան երկակի բարբառ , [16] մինն եղկութի և
միւսն խռովութ ։ Երկուս ազդմունս 'ի միում սրտի ,
[17] մինն կեղակարծ յուսոյ և միւսն Ճշգրիտ կորստեան ։
[18] Ամպլրթագոյն ահագնատեսիլ՝ կրկին տեղացմանց ,
մինն նետս և միւսն քարինս ։ Որոտումն ահեղ՝ եր-
կոցունց բերմանց , մինն կարկուտ և [19] միւսն հրա-
ցան ։ Զոյգ ցաւագին՝ երկուց վտանգից , [20] մինն լա-
լոյ և միւսն մահու ։ [21] Առաւօտ սգոյ՝ երկուց բողոք-
մանց , մինն սաստից և միւսն սպառնալեաց ։ [22] Արե-
գակունք երկու՝ 'ի յերկուց ծայրից , մինն խաւարի
և միւսն կիզման ։

Գ . Եթէ հարուածոց աջ կառուցանի , ինքեան վար-
կանի . և թէ ձեռն պարգևաձիր , ոչ իւր ակնունի ։
'Ի պարծանս ուրուք՝ կորանայ . յամբարձումն գլխոյ՝
ընկճի . 'ի չարեացն յիշատակ՝ հեծէ . [23] 'ի Ճառս
մաքրոց՝ պատկառէ . 'ի պատմութիւնս հանդեր-
ձելոցն՝ երերի ։ Եթէ օրհնի յումեքէ յայտնի ,
'ի ծածուկ զանձն անիծանէ . եթէ գովեստ յումեքէ
լսէ , պարսաւանօք զինքն կշտամբէ ։ Եթէ դսրովես-
ցի սաստկապէս , ինքեամբ ինքեան վկայէ . եթէ ձա-
ղեսցի ուժգին , սակաւ հատուցումն՝ առաւել պար-
տուցն գրեսցէ . եթէ ըղձումն մահու ինքեան լսիցէ ,
այն ասէ , և դարձեալ կրկնէ ։ Եթէ [24] որոգայթ մա-
հու ձայթեսցէ յերկնէ , հայլիւ զդէմսն համբառ-

նայցէ ։ Ուրոց իրաւանցն մատեան խփեալ. զպա-
տասխանատուութեան յոյս՝ լքուցեալ. զհամարձակութեան
ընթացս՝ փակեալ ։ Եւ [25] եթէ ոչ էր անփրկանաւոր
կորուստ գերելոյն, զիւրովին երթալ ոչ լինէր դան-
դաղէր ։ Արդարև [26] վայ մեղաւորին՝ որ տարակու-
սեալ կայցէ ՚ի վերայ երկուց ճանապարհաց, ըստ հո-
գելից բանի իմաստնոյն ։

Դ. Եւ արդ՝ զի՞նչ ոչ ողորմեցիս՝ բարեգութ,
այսքանեացս ձայնարկութեանց՝ կողկողագինս հեծե-
ծանաց, որ անուամբս այսու մեծացար, թէ ողոր-
մած ես տէր ։ Ահա առ չարութիւն գերելոյս, բա-
րութիւն քո. առ մահապարտիս դառնութիւն, քաղցրութիւն
քո. առ կորուսելոյս յայտնութիւն, ճառագայթ քո.
[27] առ յանդգնելոյս մոլութիւն, ողորմութիւն քո. առ
խակութիւն վնասակարիս, հեզութիւն քո. առ կործա-
նելոյս այցելութիւն, աջ քո. առ ընկղմելոյս վերբե-
րութիւն, ձեռն քո. առ բժշկութիւն անողջանալի խո-
ցուածոյս, մատն քո. առ պակուցելոյս պաշտպա-
նութիւն, ոգի քո. առ ապախտաւորիս իմ վստահու-
թիւն, երկայնմտութիւն քո. առ օծութիւն ամենադժնէիս,
զօրութիւն քո. առ մեղաւորիս քաւութիւն, հրաման
քո. առ փախուցելոյս ապաւինութիւն, ոտք քո. [28] առ
սրացելոյս պատսպարութիւն, բազուկ քո. առ վրիպե-
լոյս առաջնորդութիւն, լոյս քո. առ տարակուսելոյս
հնարաւորութիւն, հանճար քո. առ անիծելոյս կրկին
ստացութեան, օրհնութիւն քո. առ վհատելոյս քաջալե-
րութիւն, խրախոյս քո. առ վշտագնելոյս մխիթարու-
թիւն, բաժակ քո. առ նեղելոյս ընդարձակութիւն, կամք
քո. առ ատեցելոյս կոչութեան, սէր քո. առ հաստութեան
սասանեցելոյս, բան քո. [29] առ հոգւով վիրաւորե-
լոյս, կաթուած արեան քո. առ աներևոյթ մթերս
ցաւոցս, ակնարկութիւն քո. առ յուսահատելոյս ան-
դրէն ընտրութիւն, իշխանութիւն քո. առ պատուա-
տութեան կորեցելոյս, կցորդութիւն քո. առ խաւարա-
մահու ծածկելոյս, նշոյլ կենաց քոց. առ խռովե-
ցելոյս իմ հանդարտութիւն, խաղաղութիւն քո. առ
վայրագութիւն օտարացելոյս, ողջոյն քո. առ մոլորե-
լոյս դարձաւորութիւն, ձայն քո ։ Ո՛վ դու տիրես ամե-
նայնի գթութեան, և չիք ՚ի քեզ մասն ինչ խաւարի.

և ոչ է բարուն առանց քո. և քեզ վայել է փառք յաւիտեանս. ամէն:

---

(1) 'Ի [illegible] : Ծննդարանացն բանքս՝ որ յաղագս եօթնասնեկի եօթն մեղուցելոյն դարձի և զղջմանն, [illegible], այսինքն 'ի միում աւուր. թէ և 'ի յետին շունչ կենացն իբր յերեկոյի [illegible], դարձն կամ ընտրելն զբարին. և կամ 'ի [illegible], 'ի գործելն անդ զչար՝ հասցէ նմա փոխումն 'ի կենաց, կամ 'ի մեղաց յարդարութիւն: [illegible], ունելով մարդս ընկեր ինքեան միշտ խաւարայ, և յայլ կողմանէ՝ յետ մեղանչելոյն ցաւ և սաստկապ և ողբս, երկոքին այս են պատճառք՝ որք ներելի ողորմութեան ցուցանեն զմարդն:

(2) [illegible] : Ոմանք զմարմինն իմացին. բայց յաջորդքն ամենայն ոչ յարմարին նմա, որպէս և ոչ կամաց միայն, կամ բանական հոգւոյն: Այլ իմանի զգայութիւն, կամ զգայական մասն, որ [illegible], այսինքն ինքնազգուխ, ապաստանք 'ի բանէն. հանապազ մարտնչի ընդ հոգւոյն, խաբէ, յարի 'ի սուտ յընդունայն զգալի իրս, որոց իբրև դժուարունելի հոգւոյս զնեա սինդի, ոչ յագեցեալ զգալեօքս: [illegible] յարարչէն կամ յայլ փոխչի: [illegible], ախտաւէր մարմնոյս, [illegible], 'ի մարմինն անկեալ է և հարազատ, բայց իբր թշնամի մնաց նմա, ցաւս՝ հիւանդութիւն և աշխատութիւն տալով նմա: [illegible], 'ի բազում պատճառաց զգալի հեշտալեաց չարժի. կամ, բազում պատճառանս հնարէ 'ի կատարումն հաճոյից իւրոց. և [illegible], յամենայն զգալիս վարանեալ թափառի. կամ 'ի խնդիր լինի նորա, և 'ի չհասանելն՝ տրտմի, տարակուսի. և թէ քանի են այս ողորմելի հանդամանք բնութեան, դու միայն գիտես: Արդ՝ իբրև այսպէս խաբոլի հեռացելով հոգին՝ մեղանչէ, այնուհետև է անանել 'ի նմա ողբս վշտալիցս, [illegible], համաչափս յաղագս թշուառութեանցն, ևն:

(3) [illegible] : 'Ի մի լաւ օրինակ այս տեղի կայ այսպէս. * Մինչ մարմնիկ խաբող, շողոքորթ յարեալ 'ի սուտն, լաւ առակողին՝ արածող հոգւոյս, դժուարունելի հատաղին փոխչող, դերեալ որտողին մոլեկան մարմնոյս, ներհակ անկանիցս ‖ : Յայլ օրինակս ևս բառն [illegible] դնի առ [illegible]. և իմանի. փոխչողին՝ զգայական մասն այնչափ սաստկեալ է, մինչև արարչէն ևս դժուարպրնելի է, խոյս տալ յօրինաց նորա և 'ի հրամանաց:

(4) [illegible] : Ո՛չ համարձակի կամ յուսայ ընդ կենդանեացն 'ի լոյս բնակել, քան թէ ընդ մեռելոցն՝ [illegible], ողջ կամ կենդանւոյն 'ի խաւարի կալ: [illegible], յերկրի փառօք, իշխանութեամբ, մեծութեամբ, կամ յերկրիս երանութեամբ. այլ ընդ [illegible], ընդ խոնարհեալսն աղքատութեամբ, արհամարհանօք:

(5) [illegible] : Երկուս բաժանս ունի յերկոսին ձեռս՝ լցեալս [illegible], բարկութեամբ իւր, և [illegible], քաղցր յուսով զղջման: Այսու, և յաջորդ նմանութեամբք գիտէ ցուցանել զմեղաւորին 'ի մէջ երկուց կրից, այսինքն յուսոյ և երկիւղի, ուրախութեան և տրտմութեան:

(6) [illegible] : մի օրին. [illegible]. այսինքն բուրվառք կամ անօթք բուրմանց լցեալք կրակաւ, մին ծխէ զխունկ յուսոյ, և միւսն զձենձեր անձկութեան սրտի:

(7) Կրէին հրաարաջանէ : Կրկին համից կրօղք, կամ ունօղք, այսինքն ղեկալը և ղղաւն :

(8) Ա— Էրիաա Բէրմաէս : Բղխմունս կամ հոսմունս : Քնն արփօր զղջ-ման. և Քան ծծամէ վհատութեան :

(9) Տաշտ հրէշէալ. մի օրին. Գրէշէալ :

(10) Գրանէ փէաանէլէաշ : Աչք ներհակակիրք միմեանց. Քնն 'ի լաշ, վասն մեղացն. և Քան 'ի Հրիպան, 'ի զրկումն 'ի տեսութէն այ և սէր : կամ ըստ միոյ կողման ողբայ զչարն, և միւսովն հակեալ կայ 'ի Նախկին սխալմանն :

(11) Խանաանէ հալաշաջանաշ. կրպակք կամ բուկք կրկին հաղցակման հակառակ ներգործութէց. ըստ որում մին ջերմացուցանէ, այսինքն յոյսն զսիրտն. և միւսն չիջուցանէ, երկիւղն զանկարութէն :

(12) Գիմաշ Էրիաշ : Այսինքն մին քմի կամ սէր, որ քաղցրութիւն ինչ ցուցանեն. և միւսն՝ գիւլն, որ անանխայէլէ, անողորմ բարկութը հայի : 3 օրին. և հին ըծ. անխայէլէ. փոխանակ անխնայելի. կամ, նոյն իսկ դէմք այ կրկնակի երևին. ըստ որում յուսովն հայիմք իբր 'ի փրկիչ՝ քաղցր երևի. ըստ որում երկիւղիւ իբր 'ի դատաւոր, զայրացեալ տե-սանի :

(13) Երիաշի Բաղջաշ. մին գլուխն, որ իբր գահիճ ամբառնայ 'ի հարաածա. և միւսն այ, որ իբր դատաւոր ձգի 'ի Քերծանն :

(14) Գիմէ հրինաշի : Մին պահապան հրեշտակին՝ Փխրէալ, տրամեալ. և միւսն՝ այ ջաաաշէալ, բարկացեալ :

(15) Աղաաբնաանբինէ հարծաղաջանէ, Ակնկալութիւք երկրայականք, զօ-րութեամբ խմն Էրիաա, Քնն Գանէ. այսինքն գանէ առ միայն պատժե-ցոյց, գանէ յայամ հետէ մի մեղայց, են : և Քան ԲԷրեաս. այսինքն թերևս զառաջին անմեղութէն գոնց. թերևս տացի ժամ ապաշխա-րութեան, են :

(16) Մինն Էղիաանբինէ : 'Ի մի բերան երբեմն լսի եղուկ և վայ ան-ձինն. և երբեմն խաաղաաբինէ, ընդդէմ գլուխն և այլ պատճառաց մեղաց :

(17) Մինն հեղաջարծ յաաաաշ. երկրայական յուսոյ : Յոյսն ըստ որում հայի 'ի խոստումն այ և 'ի զօրութիւն նորա, ոչ պարտի լինել երկրայու-թը, բայց լինի՝ ըստ որում հայի 'ի գործակցութի մարդոյն, և 'ի չափ մեղաց նորա. յոր հայեցեալ մեղաւորն՝ զգայ 'ի սրտի զաղդումն առոյգ կորատեան :

(18) Ամդ ւրԲադոյն : մի օրին. ւրԲնադոյն : Այսինքն մԹադոյն, խա-ւարային. որ կրկին ինչ տեղայ. Քնն Նէփա, այսինքն կայծակունս. որք են ցաւք հոգւոյ՝ իբր նետ Թափանցեալ 'ի սիրտն. և Քան Փարինա. որ-պէս երբեմն լինի բնականապար. և որպէս առ յեսուաւ արար ած. (յեսու. Ժ. 11 : ) և 'ի մարդն Նշանակեն զպատահարս և զցաւս մարմնոյ :

(19) Մինան հրաշան : Այրեցողական նետք, զորս երբեմն խառն ընդ-կարկուտ առաքէր ած : (Ելից. Թ. 24 : Իմաստ. ԺԶ. 16 :)

(20) Մինն լաւաշ : Մինն գիշեր լալոյ վասն մեղացն. ըստ այնմ (Սաղմ. Զ. 2.) * Լուացից 'ի գիշերի : || և այս գիշեր Թէպէտ և ջաաագին, բայց փրկարար : (Բ. կորն. Է. 10 :) և Քան Մահաա. յուսահատ զղջման. ըստ առաքելոյն (անդ.) * Աշխարհի տրտմութի՝ մահ գոր-ծէ : || որպէս և Բ. 7. * զի մի՛ յաւուէլ տրտմութենէն ընկղ-մեսցի : ||

(21) Ա—աաօփ աԳաշ : Որ է ժամքննութեան և դատաստանի. յորում կրկին Բողրփաան. ահաւոր ձայն կամ գոյժ լսի. Քնն սաափիշ, կշտամբա-

նաց և յանդիմանութեան վասն յանցանացն. Ի մեան ագառնամէաց, պատժոց:

(22) Արեգականն երեկոյ. միայքն և ած. կամ նոյն ինքն ած կրկին օրհնակաւ ցուցեալ: 'Ի յերկուց ծայրից. երկուց հակառակ գործոց երևեցուցիչ, կամ յերկուս ծայրս աշխարհի՝ յարևմուտս և յարևելս: Մինչ խաւարէ. միայքն՝ խաւարեալ մեղօքն. կամ ած յարևմուտս երևեալ, ըստ որում զլոյս ողորմութե ամփոփեալ է. (իմաստ. Ե. 6:) Ի մեան ջերման. ած յարևելս, ըստ որում մտանէ 'ի հուր գեհենին: Այսու կրկին մօք, այսինքն ըստ որում զլոյս ողորմութե ոչ ծագէ, և մտանէ 'ի հուր տանջողական, իմանի ևս բարոյապէս նաւին ոյ յարևելս և յարևմուտս: (սաղմ. կէ. 5. 34:) Նկատել արժան է, զի յիշելով զերկս ժամանակին, զլոյս կամ զգիշեր, զառաւօտ և զարեգակն կամ զուխ, զայն յայտ առնէ՝ թէ առն զղջականի ըմբռնեցելոյ 'ի խայթս խղճի մեղաց չէք հանգիստ ոչ զուխ, և ոչ զգիշեր. յերրորդական ժամանակ ոչ զգիւրութի գտանէ, այլ զտագնապ:

(23) 'Ի ճառս ճակատուց: 'Ի լսել կամ յընթեռնուլ զվարս սրբոց և արդարոց՝ ամաչէ, հակառակ նոցա տեսանելով զիւր վարս:

(24) Որոգայթ մահու. կայծակն կամ շանթ՝ որ յանկարծ հարեալ սպանանէ, ճայթեալ, շառաչմամբ արձակեալ յամպոց:

(25) Եթէ ոչ էր անօրինաւոր: Եթէ կորուստ կամաւ գերեալն զինքն 'ի մահ, այսինքն անձնասպանին՝ ոչ էր անդարմանելի, այսպիսի տագնապեալն խղճիւ մեղաց՝ ոչ դանդաղէր սպանանել զինքն:

(26) Վայ մեղաւորին: Ակնարկէ 'ի բանն սիրաքայ. ԲԲ. 14. որ ըստ դլոյն իմանի 'ի վերայ երկակենցաղ մարդոյ, որ կամի ծառայել այ և դիւին. բայց ոք վարդապետս գեղեցիկ յարմարէ մեղաւորին, որ 'ի խղճէ մտացն խռովեալ կայ 'ի մէջ յուսոյ և յուսահատութե, որ վտանգաւոր է յոյժ և աւաղելի: Զայս բան՝ Հոգելից ասէ, որ սովորաբար ածաշունչ բանից պատշաճի. յորմէ մարթ է ձեռնարկել, թէ ընդ ածաշունչ գիրս դասէ զսիրաքայ իմաստութիւն՝ համաձայն սրևմտեան վարդապետաց, ոչ հայեցեալ յերկբայութի այլոց սրևելեան վարդապետաց. քանզի և 'ի պարտաւոյ ժողովն պարեալ 'ի սխոն կեղկաէ՝ 'ի մեր թուին մէէ. 768. յօրինակ ինչ, 'ի 25 կանոնին՝ թէպէտ Ը այլ ոք գիրս ոչ դասի, բայց օրինադրի ընթեռնուլ առ 'ի յուսումն մանկանց: Այլև յընթերցուածս տօնի Սոկեբերանին Ճաշոցգիրն առնու 'ի Սիրաքայ ԳԼ. ԼԹ: Ս. վարդապետս յիշէ դարձեալ զսիրաք 'ի բանն Հ. 3. անուամբ Խմաստոնոյ Երգանէլի:

(27) Առ յանդգնելոյ մոլորութե: այլ օրէն. մոլորութե:

(28) Առ որոշելոյ: Փախուցելոյս 'ի ձեռաց դիւին, կամ ուժգին թափով անկելոյս:

(29) Առ հոգւոյ հրաւիրելոյ: Խմ, առ հոգւով վիրաւորեալս. որպէս և զմեան, առ խաւարաւ մահու ծածկելոյ, այսինքն առ ծածկեալս:

Մերձումն յաւելուած երկրին հեծութեն՝ նորին հաջողէ, առ նոյն
աղերս մաղթանաց բանի։
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. ԼԱ։

ա. Եւ արդ՝ քանզի բազմացուցի պայմանաւ բանիս՝ զաղէտ տագնապի հեծութե ձայնիս մեծ հառաչանացս՝ անսփոփելի իմոյս վտանգի. զի դու՝ ողորմած [1] սկզբնահայրդ խոստովանութե անյայտ ծածկութեանց՝ որդի Այ կենդանւոյ տէր յս քս, քաղցրութբ նայեսցիս քաւել։ Արդարև կարօղ ես. Ճշմարտապէս բաւական ես. եթէ կամիս, հնարաւոր ես. [2] կամիս առաւելապէս, որպէս և կարես։ [3] Հարստանաս մեծապէս ընդ տալն, քան եթէ ընդ առնուլն. բազմանան քեզ գանձք 'ի ցրուելն, քան 'ի ժողովելն. յաճախեն ստացուածք քո 'ի սփռելն, քան 'ի Ճշդելն. կուտին քեզ համբարք 'ի տարածանելն, քան 'ի շտեմարանելն։ Հաւատամ [4] այսմ ամենայնի՝ տէր, գտանել քև ելք փրկութե. հաւատամ անարգս՝ ընդ պատուականին. յուսամ ընդ աբրահամու, և ընդ աննայի. զի մինն բանիւդ քո հաւատաց, և միւսն քահանայապետին բարբառոյ անսաց։ Սան որոյ և ոմն 'ի խորին ծերութե անհամար որդւոց հայր հաստատեցաւ. [5] զառանցեալն և զամուլն արգանդ սառայի՝ անդաստան պտղածին արդեան օրհնութե բազում ժողովրդոց՝ մարգարէից սրբց՝ և թագաւորաց ընտրելոց՝ հայել յուսացաւ։ Իսկ միւսն՝ զանհանդերձելի երկիր որովայնին սենեկի՝ եօթնեակ զաւակօք բարգաւաճեցոյց. [6] որ է թիւ մի անբաւութե, զբնաւն նշանակելոյ զէութի, ածութեն յարակայութե սահման անհետազօտելի, և աւազանին նորածին որդւոց՝ անհատ յորդութի։ Այս թիւ պանծալի՝ որում ոչ է կէտ կցորդի, և ոչ սպառուած վախճանի. այլ կոյս ոմն է՝ ուրոյն ընտրութբ նուիրեալ՝ յաւէտ անճառ վիճակաւ համայն յաւիտենիւ, դժուարաթարգմանելի մերոց իմաստից։

բ. Արդ՝ համարեա՛ յարդարումն անյուսալի փրկու-

թէ հոգւոյս՝ զամենավարան ձայն կողկողանաց սրտիս
հեծութե, ընդ նախագրելոյն երջանկաց եդեալ և
դասեալ զայս դաւանութի փոքր հաւատոցիմոյս խըն-
դրուածոց. զի կեցից և ես առ նոքօք՝ բերկրեալ
ընդ նոսին, բուռն հարեալ քան զիմոց գործոց ըղ-
քոյդ շնորհաց ։ 7 Մանաւանդ զի՝ կրկին բարձունք
են և փառաւորք՝ և քան զչափ կշռութե բանի գե-
րագոյնք, խռուռ խռովութե հաշտարանք, և հզօրա-
պէս քաւարանք, և կարծեաց թերութե մնաց սլա-
ցեալք ։ Ընդ արեան քո աչաւորի՝ և ըստ մարմնոյ
ծնօղդ քո խնկելի ։ Պարք առաքելոցն, դասք մար-
գարէիցն, գունդք մարտիրոսացն, 8 ձիաւորեալքն
հետևակ՝ սպառազէն արիութբ՝ մերկամարտիկն
մրցութբ. գումարք միանձանց, 9 բոյլք բանականաց
ընտրելոց, ժողովք բարեկրօնից. 10 հոյլք հոգեղի-
նաց՝ յերկրէ երկնաւորաց, զկնուորութիք վերնա-
կանաց՝ ընդ մեզ կցորդելոց ։ 11 Նւանդք երախայ-
րեաց, մատուցմունք զուարակաց, լուցմունք ղամ-
բարաց, բուրմունք խնկոց՝ իւղոց հանդերձանօք,
յաղթանակք փրկական նշանաց, կառուցմունք խո-
րանաց ածարնակաց, ձեռք քահանայից՝ շնորհիւ կա-
տարելոց ։ 12 Նա շարժումն անձին յիշատակ այ, առ
փոփոխումն զարշապարի. առ կարկառումն աջոյ, և
ամբարձումն բազկի, առ բարխ՝ գոհութ, և առ գթել՝
աղաչանք, առ բանս ընտանիս, առ խօսս հասարակաց,
առ ձայնս բնաւորականս, առ գործոց յաջողուածս,
առ առաքինութե ջերմութիս, որ 'ի տունջեան և
'ի գիշերի՝ ընթացմունս օգտակարաց հոգևորաց՝ քե
առաջնորդեալք. 'ի նիրհել և 'ի զարթնուլ, 'ի պա-
տերազմի ազգաց, 'ի մարտս դիւաց, 'ի հակառակու-
թիս հերձուածողաց, առ փոքունս, առ մեծամեծս,
առ ձգումն ըմպելեաց և ճաշակումն կերակրոց, և
որ ինչ միանգամ 'ի կիրս մեր կերպանան, եթէ հեշ-
տականս՝ եթէ տատամնելիս. վասն ոմանց աղօթս
մնալ 'ի նոսին, և յաղագս ոմանց՝ զի զերծ արասցես
սքանչելապէս հնարիւք անճառիւք. հաւատացեալ
յամենեցունց, թէ 13 բաւական ես ամենայնի, կաթ-
նաբոյծ հասակաց, տիոց պատանեաց, 14 մնաց վայ-
րենեաց, ստամբակաց գռողաց. մինչ զի առ թա-

տերս տեսարանաց, և առ կոյտս խառնիճաղանճ բազմութեց, և կամ առ կաքաւս կայթից անախորժականաց կամաց հզօրիդ՝ ոչ ես մոռացեալ։

Դ. Տէրդ՝ դու [15] ստացար զամենեսեան, և քո են ամենեքեան, և ողորմեսցիս ամենեցուն՝ միայն բարեգութ. զի թէ և մեղիցեն, քո են. վասն զի 'ի քում համարի են. քանզի գիտեն զզօրութիւն քո, ըստ առակողին մաղթանաց։ Որում և ես կցորդիմ թշուառս բանիւ վկայեալ սորին յանցաւորապէս. յանդգնիմ ասել, թէ որ կարդայ զքեզ գովեստիւ, ծանուցեալ զքեզ թէ իցես, [16] թէ և եօթեամբք իցէ վարակեալ կրկնապատիկ պատժաւորութեամբք, [17] առ այս օրինակ կիրթ ձեռնարկութեան, զիա՞րդ ոչ քո իցէ։ [18] Յորս է տեսանել 'ի մէջ արջնատես ագռաւուց՝ սպիտականիշ երամս աղաւնեաց. 'ի մէջ խրոխտականաց ձիոց անմաքրից՝ որոջս հանդարտաբարս. 'ի թիւ շանց գազանականաց գառինս նուիրելիս։ Հեզութիւն 'ի խստութենէ. կատարելութիւն 'ի թերութենէ. խոնարհութիւն յամբարհաւաճութենէ. ճշմարտութիւն 'ի ստութենէ. [19] միամտութիւն 'ի մանկութենէ. անբծութիւն յայլամտութենէ. բարօրութիւն 'ի չարութենէ. պարկեշտութիւն 'ի լկտութենէ. ողորմութիւն յանգթութենէ. ապաշաւանք յանյուսութենէ. քաղցրութիւն 'ի բարկութենէ. հաշտութիւն 'ի թշնամութենէ. անոխութիւն 'ի խածանողութենէ. քաջալերութիւն 'ի լլկութենէ. [20] օրհնութիւն 'ի նետաձգութենէ։ Յոր [21] ոչ բաւականացայ երբեք 'ի դատել ճշգրտապէս, թէ ո՞վ յերկրածնաց ասոր կանխեսցէ ժառանգել զքեզ. որ միայն անաչառաբար կշտամբես իրաւամբք զարդարութիւն՝ առ ամբարիշտ մաքուրն, և առ պոռնիկ զղջացեալն. առ ամենեսին բարեգործ՝ միայն թագաւոր օրհնեալ 'ի բարձունս, և յամենայն յաւիտեանս. ամէն։

---

(1) Սէշենոհայրդ խոստովանութեան. առաջին գոհէ և տուիչ խոստովանութեան մեղաց։ Առյապէս անուանէ զքեզ, նախ՝ զի իբրև տէր 'ի սկզբանէ աւանդեաց մարդկան՝ խոստովանութիւն արդարանալ 'ի մեղաց, ըստ եսայ. (Ա. 18.) Եկա՛յք խօսեսցուք ընդ միմեանս. || և (ԽԳ. 26.) * Ընդ միմեանս դատեսցուք, ասա դու նախ զանօրէնութիւնս քո՝ զի արդարասցիս ||, որ և գիտ և հնարք այդ միայն է, զի

մարդն գտակ մեղաց՝ ինքնին անճարակ էր 'ի գտանել զայս, և 'ի յուսալ: Երկրորդ, զի Քս Տրն անձամբ սահմանիչ եղև խորհրդոյ ապաշխարութեան. այլև զբազմաց զանյայտ մեղսն ած 'ի խոստովանութիւն. որպէս զանդամալուծին, և զփարիսեցւոյն ամբաստանողաց զշնացեալ կնոջէն. զորոց զմեղս գրելով մատամբն յերկրի՝ հրատարակեաց նոցա: Դարձեալ, զի և 'ի խորհրդական խոստովանութեան՝ առաջին ունկնդիրն և արձակիչն՝ ինքն Քս է. որում պաշտօնեայ է քահանայն: Արդ ասէ, վասն այն բազմացուցի զբանս ամբաստանութեան մեղաց իմոց, և զողորմելի վիճակի անձինս, որպէս զի դու որ տեսիչ և յորդորիչդ ես խոստովանութեան, առաւել ևս շարժեսցիս 'ի քաւել, և ոչ թէ 'ի դատապարտել. կամիմ՝ զի խոստովանութեամբ իմով ես ծանիցես զթշուառութիւնս իմ, և ոչ եթէ դու յինէն ունիս ճանաչել զայն. այլ քեզ զներելն պահեցեր:

(2) Կամօք առատապէս: Այսինքն առատապէս կամիս, որպէս և առատապէս կարէս: Կարողութիւնդ քո ոչ նուազ է քան զբարեխնամ կամսդ. որպէս առ մարդիկ պատահէ զի կամին ինչ, այլ չկարեն. իսկ դու ըստ առատ կամելոյդ՝ առատ և անսպառ ունիս զկարելն: Իսկ եթէ խնամամբ զբանս յայս միտս, որպէս առատ է կարելդ, նոյնպէս և կամելդ, ըստ այսմ լինի բաղդատութեան կարգաւոր կարողութեան Այ ընդ կամելոյ նորա. զի ըստ այսմ միայն հաւասարապէս անդրադարձին. այսինքն զոր կամի՝ կարէ, և զոր կարէ՝ կամի. և սովին ոճով կան բազում ասցուածք առ նախնի վարդապետս. զորս յառաջ բերէ ածաբանն Պետավիոս. Հատ. ա. գիրք ե. գլ. է: Այլ սակայն պարզապէս առեալ զկարողութիւնն Այ, ընդարձակ է քան զկամելն. զի բազում ինչ կարէ Ած, զոր առնել չկամի:

(3) Հարստանաս ձրապէս: Այս, և յաջորդքն ոչ այնպէս իմանին, որպէս թէ Ած նորոգ հարստանայ 'ի տալն, կամ իրք նոր ինչ առնու, կամ ժողովէ, են. այլ ընդ հակառակն սովորութեան մարդկան ձևացուցանէ զբանն, որք յաւելուլ տալն նուազին յինչից, և ճոխանան 'ի ժողովելն, 'ի շտեմարանելն, 'ի խնայելով պահելն: Իսկ Ած այնպէս յօժարութեամբ տայ, որպէս թէ տալովն հարստանայր, կամ չտալովն աղքատանայր. ինքն յորդորէ զմարդիկ խնդրել և առնուլ զբարիս իւր, և խնդրողին՝ առաւել քան զոր խնդրեացն տայ. և ընդ անխնդրօղին կամ ընդ երկմտօղին չհաճի, զայրանայ իսկ ընդ անգոհիչս առատութեան իւրոյ: Եւ դարձեալ, առ մեզս ծանօթութեամբ՝ յառաւել շնորհելն մեծապէս ևս հարստութիւն Այ բացերևի. առաւելապէս պայծառացաւ մեծութիւն Այ 'ի փրկագործելն քան յարարչագործելն, և առաւել 'ի փառաւորելն քան 'ի շնորհազարդելն զմարդիկ. առաւել հարուստ երևի Ած յերկրի բաշխելով զիւր բարիս, քան յերկինս ինքեան միայն վայելելովն: Վասն այսորիկ յիրաւի ասաց և 'ի բանն Է. 1. մշտահարուստ տուիչ:

(4) Այսմ ամենայնի Տէր: Յ. օրին. չիք Տէր:

(5) Զառանցեալն, զանցեալն 'ի ժամանակէ կամ 'ի կարողութենէ ծնանելոյ արգանդ սառայի՝ յուսացաւ տեսանել իբրև պտղաբեր անդաստան արդեան օրհնութեն, օրհնեալ արգեանց կամ արմանեաց, այսինքն մարգարէից և ՟ը թագաւորաց:

(6) Որ է Բնո ի անբաւութենէ: Զէօթնեակ թիւն ասէ նշանակիչ անբաւութեան, թէ ըստ իմաստասիրաց, յորս պիթագորեանք զէօթնեակն կոչէին՝ կատարելութիւն ամենայն մասանց, և իբր վախճան իւրաքանչիւր իրաց. և թէ ըստ ՟ը գրոց, որ զէօթն թիւն առնու փոխանակ յոքնաթիւ բազմութեան. որպէս (առակ. իզ. 25.) * Եօթն չարիք կան 'ի սրտի

նորա ։ || և ( ղուկ . ժէ . դ . ) * Եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ . ||Եւ
ի̅ այամ ծննդ . գ . 15 . Եւ ։ բնական նշանակելոյ ըչէոյ . այսու կամ զէու-
թիւն արարածոցս խմնոյ , երբ զի ըստ պիթագորեանց՝ եօթնեակն
ամենայն իրաց կատարումն է և վախճան . և կամ զէութին և զգոյու-
թի̅ ածութեան խմնոյ , որպէս թէ եօթնեակն նշանակէ զբովանդակ
տեւողութի յօրաչյաւքէ ոյ , որ է սահման անհետաղօտելի . այսինքն յաւ-
իտենականութեն ։ Կամ , ըստ 2 օրին , որ վերջակետիւ ոչոչեն զայս , և
գլխագրով սկսանին , Սահման անհետաղօտելի , խմնի եօթնեակ թիւն ,
զոր առոլե կոչէ անսկիզբն և անվախճան ։ Այամ յորմարի և յաջորդն .
և տասղանին նորածին որդւոց անհատ յորդորեն ։ Այսինքն եօթնեակ
թիւն՝ որովամբն անհա ասի ծնեալ զզաւակս , նշանակէ զանսպառ ա-
ռատութի որդւոց աւազանին մկրտութե̅ . որով եկեղեցի հեթանոսաց
ամուլն և անծնունդն՝ բարգաւաճեցաւ ։ Որոնք ուէ կէտ նօրդի . եօթ-
նեակն ոչ ունի 'ի ներքոյ տասնեկին զայլ թիւ , որոյ կցորդութեանն
սկսանիցի . և ոչ զբաղեալ վախճանի . մի օրին . ոգտասբ , և ոչ զայլ
թիւ 'ի ներքոյ տասնեկին՝ յոր աւարտեսցի . այլ խոյս ոմն է . յիմաստա-
սիրաց նմանութե̅ կոյս ասի եօթնեակն , զի ընդ տասնեկաւն ոչ ծնանի
զայլ թիւ . վասն այսորիկ պիթագորեանք կոչեին Աթենայր կոյս . զի է̅
տասնեկաւն չունի զայլ թիւ ծնօղ կամ ծնեալ ։ Այլ ասէին՝ 'ի հզօր
հօրէ ծնեալ , այսինքն 'ի միութե̅ . և յայս միտս Աթենաս անուանեին
զնա , զի և զաթենասայ առասպելեին ծնունդ գոլ ուղղոյն արամազդայ՝
առանց մօր ։ Որոյն ընտրա̅ նախրեալ . եօթնեակն առանձինն նուիրեալ
էր՝ թէ̅ ըստ հեթանոսաց , որք աթենասայ չա̅ծոյն նուիրեալ էին զայն .
ուստի և պիթագորեանք առաւել պատշաճօղ ասէին արքայն իրաց .
և թէ յա̅ծապաշտից 'ի հին և 'ի նոր օրէնս . որպէս և յայտ է ։ յաւէտ
անձառ վէճակա համայն յաւիտենին ։ այսինքն եօթն թիւդ գերազանց ըն-
տրութե̅ նուիրական է յամ ազգս և 'ի դարս . կամ նուիրեալ է 'ի նշա-
նակել զեօթն յաւիտեանս աշխարհի , և կամ զբուն յաւիտեանն համ-
դերձելոյն , ըստ որում անսկիզբն և անվախճան ։ Գիտաւորաբարգծանելի
մերոց եմաստից ։ Այս ամենայն վերոգրեալ առաւելութիք եօթն թուոյն
բազում խորհուրդս ունին՝ դժուարին 'ի մեկնել . զի նշանակէ զամենայն
իրաց զկատարելութիւն , զկուսական ծնունդ աւազանին , և զանթիւ
բազմութի ծնելոյն , զանսկզբնութի և զանվախճանութին ա̅յ , և 'ի վե-
րայ այսոցիկ՝ զբանն ա̅ծ՝ որ անմայր ծնեալ յաւիտենից 'ի հօրէ՝ ոչ ծնա-
նի զայլ որդի յա̅ծութեան անդ ։ Զոր առացաք յաղագս եօթն թուոյն՝
յիշեն և այլ մատենագիրք մեր . որպէս Դաւիթ փիլիսոփայ . ( սահմա-
նաց . գլ . ժդ ։ ) Գրիգոր մագիստրոս . ( թղթ . առ ապրահամ ամիրայ ։ )
Այլև Գրիգոր արշարունի . ( 'ի մեկն . ընթերց . գլ . է̅ . ) ասէ .
* Եօթն թիւն 'ի տասնեկին անծնունդ ասի և անկատար , || այսինքն
աներգ ։ Այլպէս Լամբրոնացին ( 'ի մեկն . սղմ̅ հէ̅ . ) * Զեօթն թիւդ՝
որք թուականութեն եղեն հմուտք արհեստից , յաւիտենի առայն նշա-
նակ , զոլով անկատար և կոյս ։ || և ( ճժէ̅ . ) * Կոյս անուանեն զնա ,
և անծին , նուիրեալ և տէրունի ։ || Ոմանք ըստ հին լուծ . զմեկնեալ
բանքս խմնան 'ի վերայ Ն գրոյն , որ զեօթն թիւն ցուցանէ 'ի մեզ . և
գոլով գիր անփակ ըստ քերականաց՝ նշանակէ զա̅ծ և զանսահման անե-
ղութիւն նորա ։ Այս խորհրդածութիւն յարմարի է գրոյն , սակայն
բնագիր ս̅ե̅յ վարդապետիս յայն ոչ հայի , այլ յեօթնեակ թիւն ։
(7) Մանաւանդ ըՒ կըկէն բարշաւեաւ ։ Յայն ասխս առաւել զքո շնորհացդ
կախիմ քան ըէնոց գործոց , վասն զի շնորհք քո ինքնին առաւել գերա-
զանց են քան զիմ գործս . և շնորհքն թողութե̅՝ զոր այժմս խնդրեմ ,
կրկին բարձր է քան զառաջին շնորհս անմեղութեան . զի այս տուա-

տանից արժանաւորութեա. իսկ չորրդք Թողութեան մատուցմանն ընդ-դէմ արժանաւորութեա, ապերախտ գոլով առ առաջինն. ուստի ա-ռաւել ՓԱՌԱՒՈՐՔ են, զքո փառս յաւէտ մեծացուցանելով, և գերա-գոյն քան զհասունս մտաց: Խոյ թշնամունս ՀԱՇՏԱՐԱՐՔ. 1 օր. ՀԱՇՏԱ-ՐԱՐՔ, հաշտեցուցիչք. և ՔԱՒԱՐԱՐՔ, քաւիչք մեղաց և պատժոց, և ՆԵՐ-ԾՆԵԱՑ ԲԵՐՈՂՔ, 'ի վեր քան զկամակ կամ զկարծիս մտաց, աներկ-բայելիք: Այսմ շնորհաց միջնորդ լինիցի ահաւոր ապինքո, և ամա-մայրդ, և ամենայն ոչք քո ըստ կարգի:

(8) ՁԻԱՒՈՐԵԱՑՆ ՀԵՏԵՒԱԿՔ: Ծնունդք կին անապատաւորք, որք հոգեւո-րապէս ձիաւորեալք են, և մարմնով հետեւակք. արիութբ զինեալք. և մերկ յամ լրոց մարմնոյն:

(9) ԲՈՅԼՔ ԲԱՆԱԿԱՑ: Գունդք վարդապետաց. մի օրին. և հին լուծ. ԲԱՆԱԿԱՑ. և մեկնի վանականաց, միաբանակեցաց, բայց առաջինն յար-մար է. զի ըստ կարգի զիւրաքանչիւր դաս ոչ յիշելով, պարտ է զվար-դապետացն դնել. իսկ զմիանձանցն զատ յիշեաց: Այլուրես ԲԱՆԱԿԱՆ, կամ ԲԱՆԱՒՈՐ ՆՇԱՆԱԿԷ զպարապեալն 'ի բան վարդապետութե:

(10) ՀՈՅՔ ՀՈԳԵՂԻՆԱՑ: այսինքն կուսանաց, որք հրեշտակային կուսու-թբն հոգեղինացեալք են, և յերկրէ գոլով իբր երկնաւորք կենցաղեցան:

(11) ԱՆԹԻՒ ԵՐԱՆԵԼԵԱՑ: Ընդ միջնորդութիւ ոչ՛ց ասէ՝ Նպաստեցեն խնձ և բարեպաշտութեք հաւատացելոց. այսինքն ընծայք առաջին պտղոց: ՏԱՓԱՌԱՏԱՆՔ ՂԱՌԱՐԱՆԱՑ, որք զենեալ լինին 'ի կերակուր աղքա-տաց, և 'ի հանգիստ ննջեցելոց: ՅԱՂԹԱՆԱԿ ՔՐԻՍՏՈՍԻ ՆՇԱՆԱՑ, նուիրեալ փրկական նշանք. որպէս խաչք, աւետարանք, սկի, զանգակ, ևն: ՁԵՌՔ ՔԱՀԱՆԱՅԻՑ. օրհնեցեն զխ, կամ օծնեցեն ձեռք քահանայից՝ ՇՆՈՐՀԻՒ 'ի ձեռն մեռոնին նուիրելոց:

(12) ԱՅՍ ՇԱՐԺՈՒՆ ԱՆՁԻՆ: Զայս ոմանք յարեն 'ի նախընթաց բանն. իբրև թէ ձեռք քահանայից օծեալք են առ 'ի զարթուցանել զհոգին 'ի յիշատակ ոց ոչ պատարագաւն. ըստ այսմ վերաբերեն և զյաջորդսն: Բայց այլազգ լաւ ևս խմանի ըստ կարգի յաջորդ բանիցն, այլ և ըստ լաւ օրինակին, որ վերջակետիւ զատանէ, և գլխագրով սկսանի, ԱՅՍ ՇԱՐ-ԺՈՒՆ ԱՆՁԻՆ: Ուստի այն ամ բանք կախին ընդ հետագայ բայն՝ ՔՆ Ա-ՌԱՋՆՈՐԴԵԱՑ. իբր ասել. բարեխօսութբ ոչ՛ց քոց, և բարեպաշտութեք հաւատացելոց՝ քև առաջնորդեսցի 'ի յիշատակ ոց՝ 'ի շարժման մարմ-նոյ, ԱՆ ՔՈՔԱԽՈՒՆ ԳԱՐՇԱՊԱՐԻ. 'ի քայլելն, 'ի ձգել զձեռն, 'ի վերա-ցուցանել զբազուկն, ևն: ԱՆ ԲԱՐԻՍ ԳՈՀՈՒԹԵ. 'ի բարեգործելն՝ 'ի գո-հութե առաջնորդեսցի. և ԱՆ ԳԹԵՆ ԱՂԱՒՆԻ. և 'ի մեղանչելն՝ յաղա-չանս: Ըստ այսմ յընտանի զոյգս, յանեղնական խօսս. ԱՆ ՅՈՅԺՍ ԲԺՇ-ԿԱՐԱՆԱՑ. որք զընտանեկան կիրս ծանուցանեն. որպէս լալ, հառաչանք, ծիծաղ, ևն: Հին լուծ. խմանոյ՝ որք բնութբ քաղցրաձայնք են, կամ ոչ նոյնպիսիք: ՈՐ Ի ՏՈՒՆՋԵԱՆ ԵՒ Ի ԳԻՇԵՐԻ ԸՆԹԱՑԱՆՍ. 'ի գնալն 'ի տուէ և 'ի գիշերի: ՕԳՏԱԿԱՐԱՑ ՀՈԳՆԱՐԱՑ. յօգտակար հոգւոյ քև ա-ռաջնորդեսցի. ըստ այսմ խմն և զհետեւեալսն: ԵՒ ՈՐ ԻՆՉ ՄԻՆԴԱՄ 'Ի ՆԵՐՍ ՄԵՐ. 'ի բնական կարիս և 'ի պէտս մեր հանդիպին, թէ հաճելիք, և թէ վնասակարք՝ դու առաջնորդեա, ևն:

(13) ԲԱՒԱԿԱՆ ԵՍ ԱՄԵՆԱՅՆԻ: 3 օրին. յամենայնի:

(14) ՄԻԱՅ ՀԱՅՐԵՆԵԱՑ: Թուի զերիտասարդական հասակն ասել, յո-րում է բռնութի ախտից. որոյ վասն անոն ժամանակ կոչէ զայն սար-գիս մեկնիչ. (տե. պետր. ժա. 480:) Կամ, խմանոյ զպարբերոսս և զթանձրամիտս: ՍՓԱՄԵԼԱՑ ԳՈՌՈՂԱՑ. բռնաւոր իշխանաց: ՄԻՆՉ ՆԻ ԱՌ ԲԱՐԵՐ: այնչափ զօրաւոր ես, մինչ զի նաև 'ի անսարմա խաղուց, և յանխոխ ռամկաց, և 'ի մէջ կռքաւաց ոչ ես մնացեալ. զի կամ 'ի

հանդիսականաց ատենի, և կամ 'ի նոյն խել խաղալեաց ամանք յիշէն զքեզ, և զզջանան. որպէս տայսս պատնէկն՝ որ յանարժան տեղւոջն յիշելով զԱծ՝ դարձաւ առ նա. (փոքր հարց. 107:) Նոյնպէս պա- րասըելի, որ յանսուաւի պարուցն ձգեցաւ առ Ած: (անդ. 111.)

(15) Սփայր ղոմինեյեան : այլ օրին. ղոմինեաին :

(16) Թուէ և էօխամէր : Թէ և բազմապատիկ պարտաւորութիւք լցեալ իցէ ըստ կայենի եօթն վրէժուցն : (ծննդ. դ. 24:) Իսկ էրնապաքին կամ սաստկացուցիչ է, և կամ ցուցանէ զպարտաւորութիւն մեղաց և պատժոց, կամ զաստեացս և զհանդերձելոյն պատժս :

(17) Աբ այս օրէնակ : Ըստ այսմ յիշատակեալ օրինակի, էիրք յէանար- խոաբէ, այսինքն հնոյ կամ զօրաւոր վճռոյ խմաստնոյն. (խմաստ. ժե. 2. Թէ 'ի մեղանչելն՝ 'ի քում համարի եմք.) Նէմէր ու փօ էջէ : Բառն յէանարխոաբէ այլուր ևս փոխանակ վճռոյ կամ բանի դնի. որպէս 'ի բանն ձե. 2. այլև (Խորէն. բ. 86:) Այսր տեղւոյ ամբողջ խմաստքն են : Որով հետև դու ես, տառացօղ ամենեցուն ես արարչութե և փըր- կագործութե, և յողորմելն՝ ամենայորդոր, վասն այնորիկ թէ և մեղ- ցեն ամանք յանցաւորութե, ոչ եթէ այնու դադարեն 'ի լինելոյ քո. այլ Ճանաչելով զզօրութիւն քո 'ի կեցուցանել, մնան 'ի քում համարի, որպէս խմաստունն աղօթելով ասէ. որում և ես յանցաւորս վկայելով համա- ձայնիմ ասել, թէ այնպիսին թէպէտև իցէ բազմապատիկ մեղօք պար- տաւոր, միայն թէ կարդասցէ առ քեզ իբր առ իւր արարօղ, գիտեմ ոչ լինիցի քո անդէն վաղվաղակի՝ ըստ անդրժելի վճռոյ խմաստնոյն :

(18) Յորս է փէսանէլ: 'Ի մէջ զանազան մեղաւորաց կամ մեղաց՝ քո զօրութիւն տեսանի, զի կամ ընդ մեղաւորս խառն գտանին արդարք, և կամ 'ի նոյն խել մեղաւորաց յանկարծ արդարք լինին : Այնպէս 'ի խըռ- տութե միոյն՝ գտանի հեզութի 'ի միւսն. և կամ թէ նոյնն 'ի խստութե դառնայ 'ի հեզութիւն : Ըստ այսմ խմն զբովանդակն. արքուփէս, սևադոյն :

(19) Մէնագոաբէ 'ի մանկոաբէ : Այսինքն 'ի խորամանկութե. զի դիմա- դրութե բառիցն զայս միտս պահանջէ. և ածանցի 'ի մանկ բառէն, և ոչ 'ի մանուկ : Անէծոաբէ յայլանգոաբէ, անկեղծութե 'ի կեղծաւորու- թե, կամ 'ի խարդախութե : Բարօրոաբէ 'ի ըարոաբէ, բարութե, կմ բարերարութիւն :

(20) Անօխոաբէ 'ի խածանողոաբէ : Ոչ պահելն ոխս՝ յորժամ այլ ոք խա- ծանէ բանիւ, կամ այլով իմաստ : Քաղցրոաբէ 'ի ըլէոաէ. ոգի առնուլ կամ սփոփիլ 'ի մէջ վշտաց, կամ յոյս ունել 'ի մեծ վտանգս : Օրհնոա- բէ 'ի նէփայփոաբէ : օրհնութե 'ի ձգելն այլոց զնեսս անիծանաց. կամ գոհութիւն առ Ած վասն ձախորդութեց՝ յորժամ այլք ձգեն զնեաս տրանջման. կամ գոհութե՝ յորժամ Ած զնեաս թշուառութեանց ար- ձակէ, ըստ յոբայ (Է. 13.) *Նետիւք իւրովք խոցոտեաց զիս : ||

(21) Ուէտոախնալու : Տեսանելով զի 'ի մեղաւորս խառն գտանին ար- դարք, և 'ի մեղաց յանկարծ արդարանայ մարդ, ոչ կարացի գիտել հաւաստեաւ, թէ ո՛վ 'ի մարդկանէ ժառանգելոց է զքեզ. այլ դու միայն ուղիղ դատես, և էշփամէէս էրաամէր ղորդաբոաէ. ցուցանես զար- դար դատաստան քո առ ամբարիշտ մաքուրն, առ այն ամբարիշտն՝ որ մա- քրի, կամ մաքուր կարծի. որպէս փարիսեցին, և առ պատնէկ ղղջացեալն. որ պատնէկ կարծի, կամ է իրօք, և սակայն զղջացեալ է : Յայսմիտի բանս ասելն՝ ոչ բաւականացայ, կամ չկարացի գիտել, խմնի՝ անհնար է գիտել, թէ և 'ի քննել յանդգնիցի ոք : Զի եթէ 'ի մէջ իւրաքանչիւր կարգի մեղուցելոց՝ գտանի և անմեղ, կամ մի և նոյն մեղուցեալ շար- ժելով 'ի շնորհաց Այ դառնայ և արդարանայ, ո՞վ կարիցէ ընտրել ո՞

յանհամար մարդկանէ անմեղ իցէ, և կամ 'ի մեղուցելոյն ո՞ր ոք ար-դարանալ ունիցի: Բայց միայն սրտագիտին Այ է զայդ գիտել, և նմին ևեթ վայելուչ գիտել առ 'ի յարդար դատողութիւն: Եթէ իւրաքանչիւր հաւատացելոց չէ տուեալ գիտել անգամ և զանձնէ հաւատի՝ եթէ ընտանի՞ արդեօք գտանիցի, կի՞ խոտան, այլոց օտարաց որպէս ընտրօղ լինիցի, կամ յումմէ՞ առեալ իշխանութիւն:

---

Սրբոյն յաւելուած երգեն հեծութեան՝ նորին հանողի, առ նոյն ողբոց մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ. ԼԲ.

ա. Եւ արդ՝ ես յետնեալս 'ի նախադրութեանց արժանաւորաց գրեալ ինձէն ընդ պարտաւորսն պատժոց, հայցեմ զողորմութի ընդ ամենեցուն մաղթանաց: Ընդ նկունս և անհամարձակս, ընդ տկարսն և փոքրկունս, ընդ ընկեցիկսն և արհամարհեալս, ընդ տարագրեալսն և առ քեզ դարձեալս, [2] ընդ երկուացեալսն և ճշմարտեալս, ընդ կործանեալսն և յարուցեալս, ընդ ընկղմեալսն և հաստատեալս, ընդ գլորեալսն և կանգնեցեալս, ընդ մերժեալսն և ընկալեալս, ընդ ատեցեալսն և կոչեցեալս, [3] ընդ ապշեալսն և զգաստացեալս, ընդ անառակեալսն և զսպեալս, ընդ հեռացեալսն և մերձեցեալս, ընդ հերքեալսն և սիրեցեալս, ընդ պատկառեալսն և զուարթացեալս, ընդ ամաչեցեալսն և խնդամտեալս: [4] Նաև ես պատմեմ աստանօր դարձեալ՝ ոչ զմեղսն երուսաղէմի, ըստ մարգարէին հրամանաւուէն, որ [5] առ ժողովուրդն նախկի, և կամ տանն յակոբու զանօրէնութիս նորա, այլ իմոյս ժամանեցից յայտնութէ. քանզի աւաղ ընդ աղէտս մահու յարելով, ըստ մարգարէին, յանդիմանեցից զիս ինքն ինձէն իմովս ձայնիւ, ըստ սաղմոսողին. որպէս զի յանձնաւորական յայսմ համայնապատում խոստովանութեանս՝ [6] ոչ կարօտացեալ կրկնակին, միանգամայն իսպառ սրբեցայց՝ օրհնեալ հրամանաւ էիդ:

բ. Եւ արդ՝ կրկնելով ծունր բարեբարիդ քաղցրութեան, տարածեալ զանձն իմ առաջի, զի մահ

դլորմանն ցուցից կերպարան. որ 'ի հող խոնարհեալ մածայ ընդ երկրի. և ընդ անցաւորս այս կենցաղ կորստեան՝ անասնական գետնաքարշութե սողնոյ սահեցմամբ՝ կամօք բևեռեցայ։ Այլ 'ի քեզ տէր յեցեալ՝ իբր 'ի հաստարան կենաց գաւազան՝ 'ի յարմատոյն դաւթի ընձիւղեալ մարմնով անձառ շաղկապմամբ յանեղ ածութիդ, կանգնեցայց անդրէն կիսայար՝ պատկառեալ 'ի քոցդ երախտեաց՝ 'ի վայր կորացեալ դիմօք, աչք 'ի բարձունս յառեալ ողորմագին տեսութբ 'ի քեզ՝ [8] մերձ 'ի հեծութի, բնաւին ողորմութի, բոլորովին քաղցրութի, զլիձ չուսոյս արտասուօք լցեալ՝ պաղատանս յուսոյ առաջի մեծիդ վերընծայեցից։ Լուր ամենառատ աննուազ երկայնմտութբ՝ քո դառնացուցչիս, միայն դու 'ի յամենայնի սահման փրկութե, ած բոլորից, անձառ մեծութի, անբովանդակելի բնութի, անքննելի իսկութի, հզօր զօրութի, կարօղ բարերարութի, անպակաս լրութի, անձառ ժառանգութի, [9] վայելչական վիճակ, առատ պատրաստութի, անստուեր իմաստութի, տենչալի տուրք, անձկալի ձիր, բաղձալի բերկրութի, անտխուր հանգիստ, անտարակոյս գիւտ, անկապուտ կեանք, անծախելի ստացուած, անփոխանորդելի բարձրութի, ամենարուեստ բժիշկ, անսասանելի հաստատութի։ Դարձուցիչ մոլորելոց, գտիչ կորուսելոց, յոյս ապաւինելոց, լոյս խաւարելոց, քաւիչ մեղուցելոց, ծածկարանդ փախուցելոց, անդորրիչ խռովեցելոց, փրկութիդ մահացելոց, արձակիչդ կապելոց, ազատիչդ մատնելոց, պատսպարանդ սահեցելոց, վշտակիցդ դայթագղելոց, երկայնմտութի տարակուսելոց։ Լուսոյ տեսակ, ցնծութե ցոյցք, օրհնութե անձրև, հոգի երեսաց, զօրութի դիմաց, հովանի գլխոյ, շարժարան շրթանց, [10] աղդումն բանի, կառավար անձին, բարձումն բազկի, ձգումն ձեռին, երասանակալդ սրտի։ Ընտանի անուն, մերձաւոր ձայն, կցորդութի հարազատ, խնամածութի հայրենի, խոստովանեալ անուն, պաշտեցեալ պատկեր, անպարագիր տիպ, երկրպագեալ տէրութի, բարեբանեալ յիշատակ, խնդութե մուտք, անվրէպ շաւիղ, փառաց դուռն, Ճշմարտութե Ճա-

նապարհ, երկնաձեմ սանդուղք ։ Եւ այլ բազմու-
թի բանից գովեստից [11] անհամար կարգաց՝ և տանց
անբաւից, զոր ոչ բերէ բերան երկրածին, և ոչ տա-
նի գործի մարմնեղէն, և ոչ կշռեն իղձք հոգե-
ղէնք ։

Փ. Որ քեզ հայի ամ ակն տեսողի՝ ածդ ամենայ-
նի ․ նայեա՛ 'ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց
ծառայից, և թէ յաղախնեաց ոք աղաչեսցէ ։ Եւ
ընկա՛լ զցօղ ողբերգութե լալոյ արտասուաց աչացս
ցանկասիրի՝ յանարատ ոտս մարդեղութե քոյ՝ քս,
և [12] օրինակաւ խորհրդոյ հերաց կնոջն յանցաւորի՝
զառ քեզ դարձն և զդաւանութի ․ և համբուրիւ
շրթանցս առ ճաշակ փրկութե կենացդ հաղորդութե՝
համաշնչապէս զանքակ միութի ․ և զնոյն գթութի
նորին ողորմութե ընկալեալ 'ի քէն՝ բա՛րերար, [13]
գրաւականեսցես զմեզդ պարգեւ՝ ընդ փոքու հաւա-
տոցս ․ և 'ի ձեռն գթութե սիրոյ քոյ [14] առ քո անձ-
կալի անունդ խոստովանեալ ծառայիս, դարձցին
ձմեռունք հողմոյն խստութե՝ 'ի յօդ հանդարտութե ․
և մրկին սաստկութի՝ 'ի սիկ ախորժութե ․ և կար-
ծիք երկիւղին՝ 'ի մեծ վստահութի ․ և պատուհաս
պատժոցն՝ յերանութեան պատահումն ․ և վտանգք
թախծանացն՝ 'ի հոգեւոր խրախճանութի ․ և ալէկո-
ծութի ծփանացն՝ 'ի խոր խաղաղութի ․ և [15] ղեկայն
թեւարկմունք՝ յանքոյթ նաւահանգիստն ․ և բերք
բեռանցս մեղաց՝ փոխարկեսցի 'ի թօշակ շնորհաց ։
Եւ յայսքանեացս ամենից բիւրուց բարութեցս 'ի
քէն եղելոց՝ մեծասցի անուն հզօրիդ խնկեալ և խոս-
տովանեալ ․ ամաչեսցէ բանսարկուն չարեաց՝ հեր-
քեալ և հալածեցեալ ․ ունայնասցին մուրհակք մե-
ղացս ․ [16] խզեսցին խաղքն ․ որոշեսցին որոգայթքն ․
կապտեսցին կապանքն ․ վանեսցի վիհն ․ վերասցին
վնասքն ․ պարսեսցին պատրանքն ․ ջրեսցին մեղքն ․
պատառեսցին պարտիքն ․ խորտակեսցի լուծն ․ [17]
քակտեսցին քեղիքն ։ Եւ ընդ մռայլ մթութե չա-
րեացն յանցանաց, և դիւացն բանակաց պաշարո-
ղաց՝ [18] արև փառաց քոց ժամանեսցէ՝ կեցուցանել
փրկել և լուսաւորել, յաջմէ և յահեկէ, 'ի դիմաց
և 'ի թիկանց ․ և եղիցի նշոյլ առաւօտու հոգւոյ

դարնայնոյ ընդ ակնկալութեան սպասողացն քումդ
երևման ։ Զի դու ես բարերար առ ամենեսին, և
հնարաւոր են քեզ ամենայնք . և ամենեցուն զկեանս
կամիս, և զփրկութիւն բաղձաս ։

Դ . Ո՜վ ամենապարգև ձեռն Յսի Քսի, և առ իս
դարձցիս կարկառմամբ շնորհի աջոյդ քոյ յիս բնա-
կեալ միացեալ, և ոչ հեռացեալ յանձկութե սրտէ
սիրոյ սենեկիս . և 19 անեղծական քո նկարագիր՝ որչ-
խար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւէտ կոչ-
ման՝ ընդ իս պահեսցի, միջնորդեալ ընդ քեզ 'ի
մատեան յաւիտեան՝ կտակաւդ կենաց՝ հոգւոյդ-
աւետեաց՝ երկնից յօրինողիդ ։ Եւ 20 քեզ միայնոյ
պատճառիդ, և միոյդ 'ի միոյ պատճառէ, և ունո-
ղիդ զպատճառ միոյ, երրեակ անձնաւորութեան և
միոյ էութեանդ վայել են փառք յերկնաւորացն
վեհից, 'ի սրբոցն դասուց, յաւիտեանս յաւիտե-
նից . ամէն ։

---

(1) 'Ի [illegible] ։ Ես յետնեալս 'ի նախ եդեալ արժա-
նաւոր և գովելի կարգաց . այսինքն 'ի հեզութենէ . 'ի խոնարհութէ ,
'ի ճշմարտութէ , ևն . զորս նախ դասեաց քան զիւրաքանչիւր ներհա-
կսն ։ Կամ, յետնեալս յառաւելութեց անձանց՝ զորս կոչեաց աղա-
նի, որոշ, և դառն ։ Յայտնեաց յետնեալ զօրով առէ, և անձամբ
ընդ պատժապարտն համարեալ, հայցեմ զողորմութին ընդ աղօթից ա-
մենեցուն նոցա, կամ ըստ օրինակի աղօթից նոցա ։ Ընդ [illegible], ընդ
երկչոտն, ընդ տկարս, ընդ արհամարհեալս . Ընդ [illegible], ընդ
այնոսիկ որք նախ մեզօք օտարացան 'ի քէն, և ապա զղջմամբ դարձան ։
Ըստ այսմ խմանին և յաջորդքն մինչև 'ի Ա[illegible] ։

(2) Ընդ [illegible], և [illegible] ։ Ընդ տարակուսեալսն նախ 'ի
փրկութէ, կամ 'ի սինդութէ հաւատոյ, և ապա աներկբայացեալսն
յուսով, կամ հաւատով ։

(3) Ընդ [illegible] ։ 3 օրին . Ընդ [illegible], բայց առաջինն պահէ
զգխմագրութի բանին . այսինքն ընդ թմբրեալսն և զգաստացեալս, ընդ
անզգայացեալսն մեղօք կմ ազխուութե ։ [illegible], այլ օրին . [illegible] ։

(4) Ա[illegible] ։ 2 օրին . Ա[illegible] ։

(5) Ա[illegible] ։ 4 օրին . [illegible] ։

(6) Ո[illegible] ։ Այժմէն կամաւ [illegible]
[illegible] առնեմ, զի մի կարօտացայց երկրորդ անգամ խոստովանել 'ի սեն-
զերական առեննին ։

(7) 'Ի [illegible] ։ Ես իբր անասուն գետնաքարշ՝ յերկրաւոր
ախտս և 'ի մեղս անկեալ մածեալ կամ ։ Բայց աչս 'ի քեզ իբրև 'ի գա-
ւազան կենաց հաստատիչ յեցեալ ամրանամ, որ յարմատոյն յեսսեայ
բղխեալ, այլ յանճառ էութէդ շաղկապեալ, տուիչ ես կենաց, ուս-
տի սինդեալ 'ի քեզ՝ լամ և հայցեմ կանգնել անդրէն [illegible], կիսով
մարմնոյն 'ի վեր ուղղեալ . այսինքն կորացեալ գլխոց առ ամօթոյ, լոյց

զաչս միայն 'ի վեր ձգեալ կամ, կիսով ևեթ . եթէ զի եթէ ոչ եմ բոլորովին անմեղ, եղէց գոնէ ապաշխարութեամբ մաքրեալ :

(8) Մէրէյ 'ի հէծուոբէ : 4 օրին . Մէրէյ : Աչք իմ աւէ՝ ցաւագին հայեցմամբ 'ի վեր նկատեն առ քեզ՝ որ մերձ ես 'ի հառաչանս մեղաւորաց : Ջ ւէճ ւուայս . զնոյն աչս իմ յոր ժողովի լոյսն, որպէս ջուրք 'ի լճակ, ես արտասուօք լցեալ, աղօթս յուսով հանդերձ վերընծայեմ, են :

(9) Վայէլլաքան Հիճազ : Ըստ որում Ած է անձառ ժառանգութիւն մեր, նոյն և բաժին հոգւոց՝ մի միայն վայելուչ բանաւորբնութեան ըստ սմին . Տէր բաժին ժառանգութեան իմոյ :

(10) Աղտուսն բանի : Ներգործիչ խօսից, շարժիչ լեզուի : ... ջին, այսինքն նրանց կամ մարմնոյ . զի բովանդակ զանդամս մարմնոյ թուէ՝ զգէմս, զգլուխ, զըրթունս, են . ուստի ... ոչ նշանակէ աստ հոգի :

(11) Ահամար ջարթաց : Կարգեալ կամ յարմարական անուանց . և ... անբանից, ուրոյն կամ որոշեալ բանից . զի աստ ... ըստ քերթողաց իմանի : Ահամար անուանիք աստ՝ և զանազան կատարելութիւնք պատշաճին քեզ . զոր ոչ կարէ բերան ճառել . և ոչ ձեռն գրել, և ոչ կշիռք մտի չափել :

(12) Օրէնակա խորհրդոյ : Ընկալ զզօղ արտասուացս՝ որովք լամ և ողբամ հատանօղքս՝ յանարատ ոտս մարդացելոյդ վասն իմ . որպէս կինն յանցաւոր լայր առ ոտս քո, և ըստ նմանութեան հերաց նորա՝ որովք ջնջէր զոտս քո, և այնու նշանակէր զխոստովանութիւն մեղաց՝ որք 'ի ըղձայութիւն մեր բուսանին իբրև զհերս, ընկալ զառ քեզ դարձն իմ : Եւ 'ի համբուրելն շրթամբք զճաշակ կենացդ 'ի տէր հաղորդութեան, համբուրելոյ ..., որով մի շունչ, մի հոգի լինիմ, ընկալ ... զանբաժանելի միութիւն իմ ընդ քեզ, ըստ այնմ, որ մերձենայ 'ի տէր, մի հոգի է :

(13) Գրաւականեացն : Իբրև գրաւական հանդերձեալ երանութեանդ տացես զմեծ պարգևդ թողութեան : կամ հատուսցես զայն փոխանակ փոքր հատուցմս :

(14) Առ քո անձկալի անուանդ : Վասն սիրոյն զոր ունիս առ բաղձալի անունդ Յս՝ խոստովանեալ 'ի ծառայէս քումմէ, կամ ըստ ոմանց՝ առ սիրելի անունն՝ որով ես ծառայ քո կոչիմ քրիստոնեայ : Արդ՝ 'ի փառս և 'ի զօրութիւն այսր անուան՝ ..., ձմեռնային սաստկաշունչ հողմք փորձութեանց փոխեսցին 'ի ..., 'ի յօդ քաղցր և ախորժելի : ..., շարժմունք և առաջնորդութիւն ղեկացն յաջողեսցեն ժամանել անվնաս 'ի նաւահանգիստ :

(15) Խաչէայն խաղբք : 4 օրին . և հին ըծ . ... . և նշանակութիւնն մի է, այսինքն լարեալ որոգայթք, զի հ, և խ, ըծորդ տառք են . և աստ խելև գնի վասն ... բային, որպէս և յաջորդ հատուածքն նոյնատառ բառիւք ձևանան, ..., ..., ... են :

(16) ... : մի օրին . ... : Հին ըսծ . ... խմանոց զձողն՝ որ յառագաստին գլուխն է : Սակայն 'ի գիրս Փիլոնի և յայլ տեղիս քննեալ, տեսանի՝ զի այս բառ նշանակէ զղեկ նաւի, կամ ըղգլուխ ղեկին՝ որով այսր անդր ուղղի : Ուստի աստ ես իմանալի է, քակտեսցին ղեկք, կամ փայտն՝ որով ղեկն շարժի . այսինքն հրապոյրք սատանայի, նենգութիւնք նորա, ցնորք մտաց, որովք գեն տատանեցուցանէ զնաւ հոգւոյն, և արկանէ 'ի վտանգ կորստեան :

(17) Ա... : Փոխանակ խաւարի և մթութեան մեղաց՝ և բանակայն գիւաց՝ լոյս փառաց քոց հասցէ յամենայն կողմանց 'ի լուսաւո-

բել և 'ի փրկել զիս, և եղիցի ինձ ծագումն առաւօտու՝ հոգւոյ գոր-
ծոյնոյ, այսինքն բերող զարմանալին օդոյ կամ եղանակի. ընդ ծնընդեա-
բէ, տալով ինձ զլոյսն՝ որով սիրեցից քո սպասել քեզ :

(18) Եւ առ ես դարձես : Ո՞վ ամենայն պարգևաց տուօղ Աստուած փրկչիդ, դարձի՛ր և առ իս առաւելութեամբ շնորհացդ իբրև հզօր աջով, որով ընդ իս միանայցես առանց հեռանալոյ : և անեղծական զօ նկարագիր, անեղծանե-լի կենաց մկրտութեան ապաւորեալ, որ նմանութիւն քո է, և միացուած քրիստոնէական դաւանութեամբ, եղիցի միջնորդ գրելոյ անուանս 'ի նա-հատակ 'ի յաւիտենական դպրութեան, կարկառ կենաց, հոգւովդ սիրով զոր խոստ մանկերը կատակ թողեր 'ի վերանալդ քում, և զնոյն դարձեալ շնորհես 'ի խորհուրդ ոք դրոշմին :

(19) Բէղ մայնոյ պատճառիդ : Զաւարտ աղօթիցս առ ոք երրորդութեան դարձուցանէ. և փոխանակ անուան խոստովանէր անձին՝ զկարևանց յատկութեան կամ զծանօթութեան դնէ. վասն որոյ զհայրն ած ասէ՝ մայն պատճառ. զի այս է նմա յատուկ՝ լինել պատճառ այլոց անձանց, և ինքն ոչ պատճառեալ յայլմէ : Եւ մայտ 'ի մայ պատճառէ. այսինքն որդւոյդ, որ է միածին, 'ի միոյ անձնէ 'ի հօրէ յառաջ եկեալ. և այս է յատուկ որդւոյ : Եւ ունողիդ ըղպատճառ մայ. այսինքն հոգւոյդ սրբոյ. զոր ասէ ունել զպատճառ միոյ անձին. խակ այս պատճառ ոչ կարէ ի-մանել հայրն. զի հայր է պատճառ երկուց անձանց. և զի ունելն միայն զհայր պատճառ՝ ոչ ցուցանէ ինչ յատուկ հոգւոյն. զի որդւոյ ևս պատ-ճառն այդ : Այլա այն պատճառ միոյ անձին՝ իմանի որդին. ուստի ա-սելն զհոգին՝ ունօղ զպատճառ միոյ անձին՝ հարկաւ նշանակէ պատճա-ռեալ կամ ելեալ 'ի յորդւոյ. և զի որդին զայս պատճառելս 'ի հօրէ ունի, որպէս և զայլն ամ, նմին իրի զօրութ իմանի ելեալ նաև 'ի հօրէ, և աչա այս լինի յատուկ հոգւոյն սրբոյ. այսինքն ելանել 'ի հօրէ և յորդ-ւոյ : Այս այն բան է՝ որով բացատրեն ամ արեան վարդապետք զկարգ ամ այլին ելմանց. զոր և յիշէ սամեւացին. (Հարցմանց. երես. 105.) իբր զի 'ի ներքս յամ՝ հայր պատճառ մայն է. Որդին՝ 'ի պատճառէ, և պատճառ. Հոգին՝ 'ի պատճառէ, և ոչ պատճառ : Եւ զայս բան ոք հայքն այլովք բացայայտ բառիւք աւանդեն. ընդ որս և մեր Լուսաւո-րիչն : (Ագաթանգեղ. եր. 153.) ասելով. " Հայր յանձնէ, Որդի 'ի հօրէ, Հոգին 'ի նոցունց՝ 'ի նոսին : || Ոմանք լսա հին լուծ. զասելն՝ ունողիդ ըղպատճառ մայ, այլայլութը դնելով մեկնեն՝ ունողիդ ըղ պատ-ճառ. այսինքն զհայր : Սակայն թող զայն՝ զի ունելն զհայր միայն պատ-ճառ՝ ոչ լինէր յատուկ հոգւոյն, այլ և զի յասելն զհոգին 'ի հօրէ և յորդւոյ, առակաւին մի պատճառ իմանին հայր և որդի, ունելով զմի և զնոյն յառաջածնիչ զօրութի : Թողեալ ասեմ զայսոսիկ, և կալով միայն 'ի վերայ բանի ոք վարդապետիս, կարի այլազանք են 'ի միմեանց ասելն՝ մի պատճառ, և ասելն՝ պատճառ մայ. վասն զի առաջինն յայտ առնէ զմիութի պատճառին. խակ երկրորդն՝ զմիութի պատճառեցելոյն. մինչ զի 'ի վերայ նոյն իրի մին ճշմարիտ, և միւսն սուտ. զոր օրինակ ճշմարիտ է ասելն. Ած է մի պատճառ արարածոց. բայց սուտ է ասելն. է պատ-ճառ մայ : Եւ ընդ հակառակն՝ Արարածք են պատճառեալք մայ, բայց ոչ մի պատճառեալ : Այսպէս ինձ զանազանութիւնն 'ի մէջ ա-սելոյն՝ ունողիդ ըղ պատճառ, և ասելոյն՝ ըղպատճառ մայ : Տես և 'ի բանն խը. լծ. 51: Ցաւագս բանին՝ պատճառ տես 'ի բանն խը. լծ. 23:

Սերովբէին յաւելուած հրէին հեծութեն՝ նորին հանճարի, առ նոյն աղերս մաղթանաց բանի :

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ՟ :

## ԲԱՆ. ԼԳ. :

ա. Արդ՝ զյարմարութի՟ պաշտաման բանիս՝ [1] ՚ի խայրեաց հոգւոյս քեզ նուիրելոյ՝ օրհնեալ բարեգութ, կցորդելով ընդ խնկազգեստեցն զուգամասնապէս՝ խառնեսցես ՚ի յանուշութի՟ կազմութե՟ իւղոյն մարիամու՝ կնոջ բարեպաշտի : Յոր հաւասարեալ նոյնութ՟ ընդ երջանիկ պոռնկացն՝ ՚ի քէն ընկալելոցն՝ յաւէտահրաշ յարգանօք, պարարեսցես մեծապէս իմովս բանիւ նուաստիւ, ընկալեալ յանհաս և ՚ի բարեբանեալդ գլուխ բարձրելոյդ, անկշտամբելի ՚ի բամբասանաց սաղմոսին, մի օծցէ զտերև սստոց գագաթան՝ իւղ մեղաւորին : Այլ արասցես զօրանալ կրկին յաճախութ՟՝ բուրման խոստովանութե՟ այսր մատենի՝ ՚ի բազումս ազդեալ, համասփիւռ ամենատարած և աշխարհալիր տանն տեսակաւ, ըստ օրինակի համեմատութե՟ նոցայն յիշատակի . քանզի դու նոյն տէր զգաստացուցիչ՝ նախնի չարախորհից կանանց մեղաւորաց : [2] Որոց առակեալ զմարգարէին կերպարան՝ քումդ ճշմարտատիպ պատկերի յեղանակեցեր, անտուստ առ սոսին անձառ ներգործութ՟՝ ՚ի յիս վերաբերեալ զծայրագոյն շնորհին կատարումն : Ընդ անսանական գարւոյն կերակրոյ, զբազմահամբոյր պտուղ ցորենոյդ՝ կենացդ հացի . ընդ ապականացու արծաթոյն, զարքունականդ պատկեր . ընդ յիմարարար թմբրութե՟ գինւոյն, զբաժակդ արեան արարչիդ . ընդ իւղոյն առելոյ ՚ի յայրատ կնոջէն հնոյ ժողովրդեանն, զօծումն շնորհին առ իս դարձելոյ . ընդ զերծման գլխաշուք կտաւոյն, զանապականութե՟ վերարկուն . [3] ապարանջանին պճնութ՟, զթուիչս բարեմասնութե՟, օրինին և աւետարանաւն՝ հանդերձ գործնական առաքինութե՟ն . [4] ընդ ունկանն գնդի՝ վայելչականն զարդու, զանստուեր յիշատակ տէրունականդ ձայնի . [5] ընդ քայուս պերճութեան լանջացն, զյուշնա-

հաւաք աւանդս ուղղութե՟ քոյինակրօն լծոյդ քաղց-
րութե՟ ։

Է. Բայց զի՞ է յայտնի ինձ պարծել, և ոչ վերբա-
տին 'ի սոյն պատկառել։ Այլ յայլ օրինակ փո-
խեալ զմատեան մաղթանաց այսր ողբերգութե՟, որ
ինչ ինձ է յարմարաւոր, ամենայնիւ հատուցից ըղ-
պատիժ պարտուցս իմոց մեղանաց, [6] 'ի մարգարէիցն
տաւից բերեալ համառօտս՝ 'ի սոյն յարկ մուծից
սաստիկ դատախազ. ընդ ողբոց նոցին լծակցեալ,
քան թէ ընդ բերկրութե՟ նոցա պարել. յորս հառա-
չանս, ձայնս հեծութե՟, բողոքս բարկութե՟, նախա-
տինս խորտակման, լալումն կարեւոր։ Այլ մեծիդ
ա՟յ գթութե՟ ամենաժամանն՝ կանուխ ազդեցաւ յիմ
յուսատրութե՟. առ որս՝ զղջմունս, խոստովանու-
թե՟ս, աւետիս, պարգեւս, լուսոյ երեւմունս, խրա-
խոյս ա՟ծայինս, փառաց ժառանգութե՟ս, հրաշից
յայտնութե՟ս, սքանչելեաց տեսութե՟ս։ Յորոց ոմանք
յոյս ընձեռեն, և ոմանք վհատութե՟ս բազում մա-
տուցանեն. յորս ես կամաւ կործանեալ՝ կորստեանն
վիճակեցայ։ Ո՛վ եթէ [7] զգեստ ա՟յ զվարագուրին
պատրուակ ասաց եզեկիէլ, յորում արար ժողո-
վուրդն կուռս կարկատունս, որով պոռնկել աւէ՝ 'ի
նոսա. իսկ ո՞րքան պատիժ անմաքրութե՟ս եղիցի՝ զա՟ծ
զգեցողիս ներքոյ և արտաքոյ։ Ո՜ արմանամ, թէ
զիա՞րդ ոչ կիզում. հիանամ, թէ ընդէ՞ր ոչ այրիմ.
ափշիմ, թէ ո՞րպէս չյափշտակիմ՝ տանջեալ, լքեալ,
չարչարեալ, ջախեալ, մանրեալ, խորտակեալ, կլտ-
րեալ, բաժանեալ [8] 'ի յօրինակէ ժանեաց կորուս-
չին, ըստ գրոյն։ Այլ այս միայն է պահեցեալ ինձ
նշոյլ յիշատակի՝ փրկութե՟ յուսոյ, զի ք՟եան աւե-
տարանն՝ կեանս է ամենեցին, [9] 'ի կերպարանաց պատ-
կերի բանին ծանուցեալ։ Որով առ մեղանման դարձն.
առ պարտիսն՝ շնորհն. առ եղծումն՝ նորոգութե՟ն.
առ անօրէնութե՟ն՝ քաւութե՟ն. առ վէրն՝ բժշկու-
թե՟ն. առ վտանգն՝ անդորրութե՟ն. առ պատիժն՝
ներումն. [10] առ պատերազմն՝ հանդարտանալն. [11]
առ հուրն՝ անձրեւն. առ պատուհասն՝ պարգեւն. [12]
առ ակնկալութե՟ սատակմանն՝ ձիրն. [13] առ գործա-
բան մահուն՝ կենացն ազատութե՟ ։

Դ. Եւ զինչ է ինձ [14] զայսքանեաց յիշմանց 'ի թիւ-
արկանել, և ոչ զանճառելեացն աստանօր դասել:
Յիշատակաւ հօրն բարձրելոյ՝ յորդին կցորդութի.
յանուն միածնին՝ առ հայրն ընտանութիւն. սոցին
ակնարկութբ՝ ընդ հոգւոյն հաղորդութի: Խաչին
փրկանք. բանին սփոփուի. [15] բարւոք վարձ կամացս՝
առ կշռուի գիտողին. աւազանն կենդանարար՝ հաշ-
տութեն միջնորդուի: Եւ այլք ամենայնք անթիւք
բարիք 'ի բարերարէն բարդեցեալք, [16] ազատք 'ի
հարկէ, արձակք 'ի լծոյ, իշխանականք՝ և ոչ իշխե-
ցեալք: Ղ. յոքնիկ են՝ որ ինձ 'ի մէջ դառնութեա
մահու՝ կեանս անտարակոյս աւետարանեն. քանզի
եթէ ոչ զայսոսիկ ունէի, կանխաւ արդեօք կորու-
սեալ էի իսկ և իսկ ըստ բանի երգողին: [17] Ո՛չ փոքր-
կութբ ոգւոյս՝ զհայր փառաւորեմ, ոչ նուաստուբ
հոգւոյս՝ զորդի նախադասեմ. համափառ ունիմ զե-
րեսեան՝ և նոյն արարչութբ: Վասնզի և 'ի դէմս
հոգւոյն սբյ՝ այս են աղաչանք, նախընծայ սկզբան
պատարագին՝ յորում պաւնդ երկնաւոր զենանի,
զայս աղօթեցի:

Աղօթք, որ նախ քան զպատարագն [18] մատուցանի:

Դ. Ամենակալ բարերար մարդասէր ած բոլորից,
յօրինօղ երևութից և աներևութից, փրկ-
կօղ և հաստատօղ, խնամօղ և խաղաղարար, հօր
հզօր հոգի, հայցեմք բաղկատարած մաղթանաց գոչ-
մամբ հեծութե՝ յանդիման եղեալ քեզ ահաւորիդ:
Մատչիմք մեծաւ դողութբ սաստիկ երկիւղիւ՝ մա-
տուցանել նախ զբանականս զայս պատարագ՝ քում
անզննին զօրութեդ, իբր աթոռակցի փառակցի և
արարչակցի՝ հայրենի անկապուտ պատուոյդ, և քննո-
ղի ծածկութե խորոց խորհրդոց ամենակատար կա-
մաց հօրդ եմմանուելի՝ զքեզ առաքչի, փրկչի և կեն-
դանատուի և արարչի ամենայնի: [19] Ի ձեռն քո ծա-
նուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն միաստական
ածութեդ, յորոց մի և դու ճանաչիս անհաս: Վ. և,
և 'ի ձեռն քո առաքինքն նահապետական տոհմին

շառաւիղք՝ տեսանօղք անուանակոչեալք, զան-
ցեալսն և զգալոյսն, զեղեալսն և զոչ գոյացեալսն
[20] անստուերաբար բարբառով բանի վերապատմե-
ցին։ Ոգի ա̃յ քարոզեալ զքեզ մովսէսի, [21] որ 'ի
գնալն քո 'ի վերայ ջրոյն՝ անպարագիր զօրութիւն,
ահեղ շրջարկութ̃բ տածողականաւ՝ թևապարփակ
պաշտպանողօրէն՝ զթասիրեալ 'ի ծնունդս նորոգս՝
զաւազանին խորհուրդ ծանուցեր։ [22] Յոր կերպա-
րան օրինակութե̃ նախ քան զկառուցանել զլոյծդ
մածուած վերջնում վարագուրիդ՝ յօրինեցեր կա-
րօղ տիրապէս զբովանդակ բնութիս ամենից բնա-
ւից բոլորից գոյից ամենայն էից՝ յանէից։ Եւ ստեղ-
ծանելն [23] 'ի նորոգու̃ յարութե̃ ամենայն եղեալքս
առ 'ի քէն յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ
կենցաղի, և օր առաջին՝ երկրին կենդանեաց։ [24]
Քեզ հնազանդեցաւ միութ̃ք կամացն որպէս հօրն
խւրում, ազգակիցն քո՝ էակիցն հօր՝ անդրանիկն որ-
դի՝ մերովս կերպիւ. զքեզ աւետարանեաց ճշմարիտ
ա̃ծ՝ հաւասար և համագոյ հօր իւր հզօրի, և զառ
'ի քեզ հայհոյութիւն անքաւելի քարոզեաց, և [25] իբր
զա̃ծամարտիցն զքո հեստելոցն՝ չարաբանական բե-
րանս կարկեաց, և [26] զիւրն շնորհեաց՝ արդարն և
անարատն՝ գտիչն ամենայնի. որ վասն մեղաց մերոց
մատնեցաւ. և յարեաւ վասն զմեզ արդարացուցա-
նելոյ։ Սմա փառք 'ի ձեռն քո, և քեզ բարեբանու-
թի̃ ընդ հօր ամենակալի, յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

Դարձեալ կրկնեսցի 'ի նոյն կարգ բանի, [27] մինչև վարդապետութ̃
լուսոյ հրաշալեօ յայտնեսցի աղբեալ, առևտրանել վերստին
ընդ կէն խաղաղութ̃։

Է. Մաղթեմք և աղերսեմք [28] արտասուալից հա-
ռաչմամբ յամենայն անձնէ՝ [29] զփառաւո-
րեալ արարչութիւդ՝ անեղծ և անստեղծ՝ անժամա-
նակ հոգւոյդ գթածի. [30] որ բարեխօսդ ես վասն մեր
յանմռունչ հեծութիս առ ողորմածդ հայր. որ ըղ-
սուրբսն պահես, և զմեղուցեալսն մաքրես՝ և տա-
ճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձ-

ըեալդ հօր ։ Արդ՝ աղաչեմ զմեզ յիմ՛ անմաքուր գործոց, որ ո՛չ է հաճոյ քումդ բնակութեան. և մի՛ շիջցէս առ 'ի մէնջ՝ լուսոյդ շնորհաց փայլմունք՝ 'ի տեսականացս աչաց իմաստից. վասն զի [31] զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց ։ Այլ քանզի մինդ յերրորդութեդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ. իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթեւանս պատուականս [32] ամենայն պատրաստութեբ 'ի վայելումն ճաշակման երկնաւոր դառինդ, առանց պատժոց դատապարտութեան ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան ։ Այլ հալեսցի 'ի հրոյս յայսմանէ զայթագղութիս մեր, [33] որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն 'ի ձեռն ունելեացն մատուցման. զի յամենայնի քոյդ քարոզեսցի գթութի, որպէս որդւոյդ ո՛յ՝ հօր քաղցրութի. որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութին, և զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային արքայութին՝ արդարոցն երանութեան ։ Այո՛ այո՛ և ես մի եմ 'ի նոցանէ. և զիս ընկա՛լ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ քո՛ւ ստացեալս ։ Ո՛ի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո ա՛ծութիդ՝ ընդ հօրփառաւորեալ համապատուաբար 'ի մի կամս, և 'ի մի իշխանութի գովութե. զի քո՛ է գթութի, և կարողութի, և մարդասիրութի, զօրութի, և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

(1) 'Ի [illegible] ։ 'Ի պտղոյ հոգւոյս ։ Զ յօրինուած զզջական բանիցս առէ՝ զոր յըղձից հոգւոյս քեզ նուիրեցի, [illegible], հաւասարապէս հալորդելով ընդ նուէրս իւղաբերիցն, [illegible] յանուշ իւղն [illegible], մարխանու կղեռվայ, կամ մագդաղենացւոյն, որ յառաջն մեղաւոր գոլով յետոյ զքեզ պաշտէր ։ Յոր [illegible], որով հաւասարեալ և ես [illegible], նոքին նմանութեամբ ընդ երջանիկ [illegible], մագդաղենացւոյն և շնացեալ կնոջն, որք զդ[illegible] երջանիկք եղեն ։ Իսկ զի որպէս զնոցա անուշից օծումն հաճութեամբ ընկալար, նոյնպէս իմս նուաստ աղօթիւք զուարճասցիս. և ո՛չ յանգիմանեսցես բանիւ սալոմոնին, թէ իւղ մեղաւորի մի՛ օծցէ [illegible], զհերս գլխոյ իմոյ ։ Այլ արասցես և զիմ աղօթից բուրումն [illegible] և [illegible] առ ամենեսին, [illegible], լցուցանելով զաշխարհ, [illegible]. որպէս տունն՝ որ օրինակ էր աշխարհի, լի եղև 'ի հոտոյ

իւղոյն . ( յովհան . ժբ . 3 : ) և որպէս զնորա յիշատակն հրամայեցեր քարոզել ընդ աշխարհ , նոյնպէս և զիմ խոստովանութիւնս արասցես : Բանալի դրան նոյն էր . վասն զի դու նոյն տէր ես . որ զգաստացուցեր և յարդարեցեր զառաջին չարագործ կանայսն՝ զԹամար , զՌախաբ , և զայլսն . վասն որոյ և զիս կարող ես զգաստացուցանել , և 'ի յարգի առնել զխոստովանութիւնս իմ :

(2) Որոց առաջնեալ մարգարէին կերպարան : Այնց զղջացեալ մեղաւոր կանանց օրինակ եւտուր զովսեայ մարգարէին զգործն , որ հրամանաւն այ էառ իւր կին զպոռնիկն . ( ա . 2 . ) և զայլ միւս շնացեալ կին 'ի վարձու կալաւ , զի մի՛ շնասցի . ( գ . 1 . 2 : ) մի օրինակ դնէ՝ մարգարէից . Թերևս իմանալով և զեզեկիէլ , զորոյ զբանն ստորև բերէ : Բանդ ճշմարտապէս . զայն գործս ովսեայ՝ քեզ ճշգրիտ պատկեր և օրինակ կարգեցեր . անփոփոխ առ ոստին : զի 'ի շնորհացն՝ որ առ այն զղջացեալ կանայսն եղեն , զծայրագոյն կատարումն շնորհին առ իս ցուցեր . Իբր զի դու անձամբ միաւորեցար ընդ պոռնկացեալ բնութեան մարդկան առ 'ի սրբել զնա . որպէս ովսէէ ընդ պոռնիկն՝ առ 'ի ողջախոհ առնել զնա . և գարշելոյն 'ի շնութէ ոչ եւտուր գալ՝ անսահման կերակուր , և արծաթ ապականացու , և գինի արբեցուցիչ , որպէս ետ ովսէէ . ( գ . 2 . 3 . ) այլ եւտուր զմարմին քո և զարիւն , և զգինիս շնորհաց քոց : Ընդ իւղոյն [illegible] . փոխանակ իւղոյն՝ որով օծեր 'ի մեղաւոր կնոջէն , որ օրինակ էր հնոյ ժողովրդեան , եւտուր զօծումն մկրտութեն : Կամ հայի առ բանն եզեկիէլի , ( ժզ . 9 . ) իբրև թէ փոխանակ իւղոյն՝ զոր էառ մեղաւոր կինն՝ հին ժողովուրդն : Ընդ [illegible] , փոխանակ մերկանալոյ մեղաւոր կնոջն՝ զքողարկն , զծածկոյթ գլխոյն զկտաւն , զի կարասցէ հերովքն ջնջել զոտս քո , եւտուր զանապականութեն ծածկոյթն : Կամ հայելով 'ի բանն եզեկիէլի . ( անդ . 7 . ) փոխանակ մերկութեն գլխոյն մազովք լցելոյ՝ եդեր պսակ պարծանաց 'ի գլուխ նորա : ( անդ . 12 : )

(3) Ապարանջանին : Ասէ 'ի վայր հայի 'ի բանս եզեկիէլի . ( անդ . 11 . 12 . ) փոխանակ զարդարանաց ապարանջանին , ( պիլէզիկ . ) որ դնի 'ի դաստակ մարդոյ , եւտուր զբազկս բարեմասնութեն . զշարժմունս բարի գործոց՝ հին օրինօքն , աւետարանաւն , և գործնական առաքինութիւքն . ձեռք մարդոյ՝ իբրև թևք , և գործք ձեռաց՝ իբրև թռիչք են :

(4) Ընդ օղանն գնդի : 2 օրին . ընդ օղինականն . փոխանակ գնդի՝ որ է օղ ականջաց , եւտուր զանմոռաց յիշատակ ածային բանից քոց :

(5) Ընդ տապան : 2 օրին . և ս հին լծ . ընդ տապա . ( թր կէրտանլըխ , կամ լէօֆ . ) փոխանակ այսր՝ որ է զարդ լանջաց կամ պարանոցի՝ եւտուր զբազմապատիկ խրատս առաքինութեան 'ի բառնալ զքաղցր լուծդ :

(6) 'Ի մարգարէիցն պատից : 'Ի գրութեց մարգարէիցն յիշատակեալ համառօտ , համառօտիւ , կամ զհամառօտ բանս , 'Ի այն յարէ , 'ի սոյն ճառ աղօթից մաւծից՝ իբրև յանդիմանիչ ինձ . ողբոց նոցին հաղորդելով , քան թէ ուրախութեն ընդ աւետիսն այ : յորս , յոլովս նոցա տեսանեմ հառաչանս , ասէ : Բայց 'ի վերայ այնր ամենայնի՝ մեծիդ այ գթութե ամենատարած , որ յիմ իրս , և 'ի տեղիս , և 'ի ժամանակս , և առ ամենեսին ժամանէ , կանխաւ ծանուցաւ բանիւք մարգարէից , և օրինակօք զղջացեալ մեղաւորաց , առ 'ի տալ ինձ յոյս փրկութեան : Առա , այսինքն որովք ազդեցեր զղջմունս , ասէ : յորոց ամանդ , զղջմունքն , խոստովանութիք , աւետիքն . ասէ , յոյս տան ինձ . և ամանդ , երևմունքն , սքանչելիքն , կամ ապերախտութիքն առ ընկալեալ պարգևս այ , վկայութիս տան ինձ :

(7) Զգենուն այ : Հայի 'ի բանն եզեկ . ( ժզ . 16 : ) ըստ սորին թարգ-

մանութՆ, յորում ասի. * Աւեր 'ի հանդերձից խմոց. || զոր ոք վարդապետս մեկնէ 'ի վերայ վարդապետի տաճարին, կամ վարդապետի սրբութեցն, որով մծ իբրև զգեստով ծածկեալ լինէր: Եւ եթէ առէ՝ զայն վարդապետ կամ ընդ այնու վարդապետաւ առնելով խորհելոցն կուսս կարկատոնս, կամ 'ի հանդերձս կւոց, այսու ասոնելով ասի. ապա քանի պատիժ կայցէ անմաքրութեա խմոյ, որ ոգէորշէս ներքոյ, 'ի ձեռն մկրտութեն. և արտաքոյ, 'ի ձեռն հաղորդութեն. կամ ներքոյ՝ ուխտն կրօնաւորութեն, և արտաքոյ՝ կրօնաւորական զգեստովս:

(8) 'Ի յօրինակէ ծանեաց կորուսելին: 'Ի նմանութէ ծանեաց կամ յօրինակական ծանեաց ստացմանն, որք են բանութիք նորա. ըստ գրոյն. ( Բ. օրին. ԼԲ. 24. ) * Ճանկս գազանաց առաքեցից: ||

(9) 'Ի ճերպարանաց պարագէրէ: 'Ի հանդամանաց կամ յանուանէ բանս առեալ առ. ճանաչել՝ թէ զի աւետարանն խնձ կեանք է. որով առ մեղաւ՝ դարձն. որով աւետարանաւ խոստացեալ լինի 'ի մեղանչելն՝ դարձն, ևն:

(10) Առ պարերազն. որով ցուցանի յետ պատերազմին զինուց կամ աշխարհի՝ հանդարտութեն լինել: կամ դադարելն 'ի պատերազմէ և 'ի հակառակութէ. որպէս 'ի գիշերի մառնութեան՝ յորժամ պետրոս պատերազմիլ կամէր, քն հանդարտեցոյց:

(11) Առ հաւրն անջրեան: Առ հուրն փորձանաց՝ անձրև այցելութե: կամ փոխանակ հրոյ՝ անձրև. որպէս որդիքն զեբեդեայ հուր յերկնից իջուցանել ասէին, և քս զանձրև ներողութե իջոյց:

(12) Առ ... օտարական՝ ձեռն: Որպէս յոմեռնելն զքս՝ փոխանակ սատակմանն, որում արժանի էին ըմբռնօղքն, ձիր բժշկութե եցոյց յականջն մաղքոսի:

(13) Առ գործարան մահուն. որպէս աւազակին 'ի խաչի անդ զարքայութիւնն խոստացաւ:

(14) Ջրոյ ... ընծայից: Ընդէ՞ր զմանաւոր հոգևորական բարիսն ած յիշատակելով 'ի թիւ բերեմ. և ոչ զայլ անճառելիսն՝ զգերազանցս և զմծայլիս գնեմ ստամոք. որք են, ... հօրն, հայր մեր կոչելոյն զմծ՝ կցորդ լինել որդւոյն միածնի: յանուն ..., որդի ած կամ քրիստոնեայ անուանելոյն մեր՝ առ հայրն ընտանի գոլ: ... , հաճութի հօր և որդւոյն՝ մասնակից գոլ հոգւոյն: Եւ 'ի վերայ այսոցիկ՝ խաչին փրկագործութին. ... , աւետարանին և ամենայն մծայլին բանից սփոփանքն և մխիթարութին. ևն:

(15) Բարուք ...: Մի յանճառելի գործոյն ած այս է, զի բարի հատուցումն առնէ յօժարութե կամաց, թէ և գործով ոչ կարիցէ կատարել, կամ գործն փոքր իցէ: կամ թէ այնպիսի կամաց վարձս տայ՝ որ արդէն իսկ պարտական էր ած. և զայս առնէ ած ըստ գատման իւրոյ, որ գիտէ զսիրտս:

(16) Առ ... 'Ի հորէն: Անճառելի պարգևքն ած ազատութի շնորհին մեզ, և ոչ բանադատի ած 'ի տալ, կամ ընդունօղքն՝ յառնուլ: ... 'Ի ... . ազատք 'ի լծոյ պարտեաց. զի այն բարիք՝ ոչ ընդհանուր մարդկութեա, և ոչ իւրաքանչիւրոց առանձինն պարտականք են: ... . գերբնականք են, գերագոյն քան զպայման բնութե. կամ, իշխանութի առեալք երբ և զիարդ և ում կամի. և ոչ ... . 'Ի ներքոյ կարողութեան բնութե, կամ ժամանակի, և տեղւոյ և եղանակի:

(17) Ո՛ւ ...: Զայս յաւելու 'ի նախադրեալ բանսն, իբր ասացումն ինչ, կամ յառաջարան վասն յաջորդ աղօթիցն՝ որ առ հոգին ած. որպէս թէ ասէ. յայլ աղօթս առ հայր աղօթելով, և կամ առ

որդին, ոչ եթէ զորդին՝ կրսեր առ հայրն դնեմ, և կամ առ հոգին ոչ աղօթելով, զնա նուաստ քան զորդի համարիմ. այլ զերեսեանն համապատիւ դաւանեմ։ ԲԱՆԻՒ Ն 'Ի ՏԷՐ ՀՈԳՒՈՅՆ, 'ի նշանակ հաւասարութե հոգւոյն Է հօր և որդւոյն՝ զյաջորդ աղաչանս մատուցանեմ։ ՆԱԽԸՆԾԱՅ ԽՆԿԵԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ։ Ոմանք իմանան, թէ որ վարդապետս 'ի քահանայանալն՝ առաջին ընծայ պարբեալ լիցէ զյաջորդ աղօթս. և զայս մակաբերեն յաւելոյն՝ ԱՂՕԹԵՑԻ։ Բայց այդ երկբայելի է. քանզի և 'ի յաջորդ բանն Լ՟Գ. 1. և 2. վասն աղօթից և դաւանութեանն ասէ. ՆՈՒԻՐԵՑԻ, ՀԱՐՏԱՊԵՏԵՑԻ. դուցէ ասիցեն՝ թէ և զայսափիկ յառաջագոյն պարբեալ էր. բայց չունին ցուցանել։ Այլ հարազատ իմաստ բանիս այն է, թէ առաջին նուէր կամ պատարագութե սկզբան պատարագին զայս աղօթս յօրինեցի. որպէս և յառաջ երթեալ ասէ. մատչիմք մատուցանել նախ զբանականս զայս պատարագ։ Զոր և հայրապետք ազգիս ընկալեալ կարգեցին 'ի պատարագի աղօթսն. որպէս և սբն Ներսէս Լամբրոնացի բացատրէ զայն Է այլ աղօթս. և ասէ. * Զայս անկեալ 'ի վերայ երեսաց մատուցանէ, զայն յայտ առնելով, թէ մինչ դեռ չև եմք 'ի քեն զօրացեալ, կորացլուխ եմ և անհամարձակ ընդ ած խօսելոյ.... վասն այսորիկ 'ի վերայ երեսաց անկեալ, զայս աղաչանք անմռունչ ձայնիւ 'ի սկզբանէ մինչև 'ի կատար աւարտէ։ || Որ և ցուցանէ Լամբրօնացին, թէ քահանայն ասէ զաղօթս. թէպէտ այժմ եպիսկոպոսաց միայն պահեալ է ասել 'ի հանդիսի պատարագին. իսկ եթէ քահանայն ևս կամիցի ասել առանձինն, կարի գովելի է։

(18) ՄԱՏՈՅԱՆԻ։ այլ օրին. ՆՈՒԷՐ։

(19) 'Ի ՅԷՏՆ ՔՈ ԾԱՌԱՅՈՒՍ։ Զխորհուրդ Երրորդութեն հոգին յայտնեաց առաքելոց, և նոքօք աշխարհի, ասէ Լամբրօնացին։ կամ, զի երևմամբ հոգւոյն աղաւնակերպ 'ի յորդանան, և անպաձև 'ի Թաբօր՝ ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն։

(20) ԱՆՊԱՏՄԵԼԻ ԵՒ ԱՆՔՆՆԵԼԻ։ Մարգարէքն պարզ բանիւ և առանց մանուածոց գրեցին զյայտնութիւն, թէպէտ և բազում գաղտնութիւն իմաստից և խորհրդոց գտանի 'ի նոսա։

(21) 'Ի ԳՆԱԼՆ ՔՈ 'Ի ՎԵՐԱՅ ՋՐՈՑ։ Զբան մովսէսի որ հարք իմանան 'ի վերայ հոգւոյն սբյ։ Իսկ այլ մեկնիչք ըստ ձայնին իմանան զհողմ ուժգին՝ ոչ 'ի բնական պատճառաց, այլ 'ի զօրութեն այ զարթուցեալ 'ի զանդուած ջուրց, որ առ 'ի միոս՝ օրինակէր զհոգին սբ։ ԹԵՒԱՐԿԵԱԼ ՊԱՀՊԱՆՕՐԷՆ։ Թուի ձևացուցանել զբանս ըստ եբրայական բնագրին. որ փոխանակ բառին ՇՐՋԷՐ, ասէ՝ ԹԵՒԱԾԷՐ, կամ ԹԵՒԱՐԿԷՐ, որպէս հաւ 'ի թռուցանել զձագս իւր։ Այսպէս և հոգին սբ գթասիրեալ 'ի ծնունդս աւազանին։

(22) ՅՈՐ ՆԿԱՐԱՆ։ Յօրինակ ծննդեան զորդիս աւազանաւ մկրտութե, յօրինեցեր 'ի չգոյէ զոմանդակ բնութիս տարերաց, յորոց գոյացան բոլոր գոյակքս. ՆԱԽ ՔԱՆ ԶԵՌԱՑՈՒՑԱՆԵԼ, նախ քան զբաժանել ջուրցն, և 'ի վեր առնուլ զմասն ինչ նոցա. որովք շինեցեր ՇՈՅԾՔ ՄԱԾՈՒԱԾ, ըղհեղուկ թանձրութիւն ՎԵՐՋՆՈՅՆ ՎԱՐԱԳՈՒՐԻՒ։ Ըստ կարծեաց բազում հարց, որք համարին՝ թէ վերացուցեալ ջուրքն մածոյց ած զբուն աստղալից երկինս, վերջին վարագուրաւ իմանի նոյն աստղալից երկինքն. որ 'ի ստորէ յերկրէ նկատելով, համարի իբրև ծածկոյթ կամ անջրպետ արքայութե, կամ այ։ Իսկ ըստ կարծեաց բազում մեկնչաց՝ որք զվերացուցեալ ջուրսն ասեն զեռեղեալ 'ի կամարն օդոյ՝ գոլորշիք և ամպովք, վերջին վարագուրաւն իմանի այս ջրեղէն կամար. և ասի վերջին՝ նկատելով 'ի վերուստ յերկնից։ Արդ՝ ասէ որ վարդապետս, թէ տեղծումն տարերաց նախ քան զբաժանումն և զվերացումն ջուրց՝ նշանա-

կէր զհոգևոր ծնունդս աւազանին · մի՛ զի որպէս ընդ ջրովքն ծածկեալ կային Թանձր տարերք , և սերմանք տարրական բաղադրելոց , նոյնպէս ընդ ջրով մկրտութե՛ հոգևոր ծնունդքն : Երկրորդ , զի որպէս կարաց հոգին սբ սանդածանել զայն բնութիւնս յոչնչէ , այսպէս և զհոգևոր ծնունդս՝ յանծնունդ ջրոյն :

(23) 'Ի Նորոգութե յարութե : Հայի 'ի բանն ( սաղմ · ճգ · 30 · ) * Առաքեա զոգի քո · և Նորոգեա զերեսս երկրի : || քև Նորոգին աւէ՝ յարութ ած ելեալս · մարդիկ՝ յառնելով , խկ երկինք և երկիր մաքրելով , 'ի վերջին աւուր կենդաղոյս , որ է օր առաջին [illegible] · զի անմահ յարուցելոց աշխարհն՝ յայնմ աւուր սկսանի · և այնպէս է օր առաջին , զի ոչ ունի զերկրորդ և զերրորդ · այլ միշտ միայ օր մի :

(24) [illegible] : Որդին ած քեզ հնազանդ եղև , [illegible] , միաբանութբ կամացն՝ այնպէս որպէս հօրն լուռում , [illegible] · զայս հնազանդութե արար մերով բնութեամբս · զի յատուկ հնազանդութեն պահանջէ զանազանութի բնութե և կամաց , և զներքոյ անկումն միոյն առ միւսն · խկ որդին որ ածութեն ունելով զնոյն բնութիւն և զնոյն կամս ը հօրն , անմարթ է ասել ըստ ածային կամացն հնազանդեալ հօրն , բայց եթէ կարի անյատկաբար՝ խմացեալ զնկ հաճութեն 'ի նոյն գործ : Զայս տեղի այսպէս պարտ է որոշել կիտիւ , և ոչ յարել 'ի յաջորդն ասելով · [illegible] · զի ոչ միայն յարմարութիւն բանին զառաջինն պահանջէ , այլև լաւ օրինակն այնպէս զատանէ , և նոյնպէս գնէ և մեկնէ Լամբրոնացին 'ի պատարագի անդ : Իսկ [illegible] ասել զորդի առ հօրն՝ նշանակէ բնութենակից , կամ զի երկոքին 'ի նոյն հօրէ յառաջ գան , Թէպէտ այլ և այլ օրինակաւ :

(25) [illegible] : 2 օրին · [illegible] , կամ [illegible] · խկ յօրինակ լամբրոնացւոյն , [illegible] : Զհաբախօս բերանս ապստամբելոցն 'ի քէն՝ պապանձեցոյց բազում բանիւք , ցուցանելով զնոսա ածամարտս լինել · զի ընդդէմ յայտնի սքանչելեաց ոգւոյ հակառակէին , և սատանայի զօրութեն ընծայէին : (մատթ · ժբ · 25 ·)

(26) [illegible] : Ամենք մեկնեն՝ զիւր բարիսն շնորհեաց · բայց այս օտար է 'ի կարգէ բանին · այլ խմանի , Թէ զառ 'ի քեզ հայհոյութիւնն անԹողլի ասաց , խկ զառ Նիքն հայհոյութեն՝ Ներեաց :

(27) [illegible] : Յօրինակն լամբրոնացւոյն գնի · [illegible] : Իմաստ բանիս է · դարձեալ կրկնեցից զկարգ աղօթիցս , որ մինչև ցարդ օրհնութիւն էր և բարեբանութե , փոխելով զայն 'ի խնդրուածս · մինչև ծագումն լուսոյ հօգւոյն սբյ աղգեացի 'ի միտս իմ որպէս զպաւլն լուսն յառաւօտուն ժամու : Կամ ըստ լամբրոնացւոյն , մինչև լոյս զօրութեդ՝ զոր 'ի վեր բացակայ յինէն տեսանեմ , առ իս ձգեսցի : Որով աւետարանեսցի 'ի հոգիս կրկին խաղաղութեն՝ զոր ետ քս աշակերտացն 'ի վերնատանն , և ապա շնորհեաց նոցա փչմամբ զհոգին : (յովհան · ի · 19 · 20 · 21 · 22 :) Իսկ եթէ [illegible] գնիցի , խմանի · մինչև համարձակութի տացի լուսոյ մտացս · զի որպէս աչք համարձակ տեսանեն 'ի պայծառ լոյսն , այսպէս միտքն 'ի յայտնիլ հոգւոյն սբյ :

(28) [illegible] : մի օրին · [illegible] :

(29) [illegible] : այսինքն արարիչ : մի օրին · [illegible] : յօրինակ Լամբրոնացւոյն , և յայլ , [illegible] :

(30) Որ բարեխօս ես : Պատճառաբար խմանի այս , այսինքն որ ուսուցանես բարիք աղօթել առ հայր՝ ըղձիւք սրտին , որ անմռունչ հեծութեն աւի : Այսպէս բացատրէ նա ինքն սբ վարդապետս յառաջաբանի երգոյ · ( երես 19 · ) * 'Ի հեծութեն աղօթելն քո՝ հոգին սբ ուսուցէ

քեզ զլանս օրհնութեն՝ անպարպառ անմռունչ ։ || Իսկ յասելն՝ առ ողոր-մածդ հայր, դիմորոշականաւդ ոչ դնի փոխանակ ստացական դերանուան, որպէս թէ՝ առ հայր քո ․ այլ փոխանակ ցուցականի՝ որ զմերձաւորն բողոքն ցուցանէ, որպէս թէ՝ առ այդ հայրդ ․ յայս միտս բազում ուրեք դնէ ո՛ք վարդապետս ․ որպէս և աստ ասորև ․ Բարձրեալդ հօր ․ ․ ․ ․ Մնդ յերրորդութենէդ, և միոյդ ։ Սոյնպէս լգ ․ 2 ․ առ նոյն հոգի խօսելով դնէ ․ սրբոյդ միածնի ․ այսինքն այդ որդւոյ՝ որ քեզ մերձ է, ևն ։

(31) Զեղեղատօք մանուլ ։ 'Ի բազում բանից ո՛չ գրոց ուսայք միանալ ընդ քեզ աղօթիւք և մաքուր վարուք ․ որպէս և այն ․ * Որ մերձենայ 'ի տր, մի հոգի են ։ || ( ա ․ կորնթ ․ զ ․ 17 ։ )

(32) Ամենայն պատարագութեան ։ մի օրին ․ ամենապատարագութեան ։

(33) Որդւոց հարազատին ։ Որպէս անմաքրութիւն շրթանցն եսայեայ սրբեցաւ ջերմանախորոյն կայծակամբ, կայծակամբ՝ որ զկենդանի շրթունս նորա այրեաց ․ կամ այնպէս այրեաց՝ որ զկենդանութիւն շրթանցն սպա-նեաց ։ Նոյնպէս սխալումն մեր 'ի մեզ՝ հալեալ սրբեսցի հրով ո՛ք սեղա-նոյն, կամ մարմնովն քո ։ Այո՛ այո՛ ։ Արդարև մի եմ և ես 'ի յան-ցաւորաց անտի, և առաւել քան զնոսա կարօտեալ ողորմութեն մեծի ․ ընկալ և զիս ․ զի յայսմ ամենայնի, յայս ամենայն պարգևս, յամենայնի ․ յամենայն ժամ, միշտ, կամ բովանդակապէս հաշտեալ փառաւորես-ցի քո ածութիւնդ ևն ։

---

Սերտային յաւելուած նրէէն հեծութեան՝ նորին հանդերձ, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

# ԲԱՆ․ ԼԳ․

ա ․ Արդ՝ [1] առ այսոքիւք թշուառացեալ հնչոյս իմոյ իղձք, և առ քեզ դաւանութիւք յարմա-րականք, որ բովանդակես բանիւ զամենայն՝ ա՛ծ, զոր 'ի նախնին ձառեալ՝ և յերկրորդումս ցուցից ։ Իսկ [2] յանդիմանութիս գրաբանականս՝ 'ի կոյս բազ-մութեն ազգաց, և թարգմանութիս ժողովրդոց, զայս արդահատութիս մաղթողականս նուիրեցի, զոր ներբ-նաշարեալքդ սահմանադրեն գոհաբանութիւք ։

'Ի հանդիսարանս խօսից աւետեաց՝ բանս մաղթանաց, որով հոգին այ [3] հաշտեալ հասանէ յօգնականութեն ։

բ ․ Աղաչեմ զանփոփոխելի տէրութի ամենազօր հզօրի հոգւոյդ, առաքեա զցօղ քաղցրութե քո, և [4] բարեգործեա 'ի յանձին՝ և յիշխանական ազդման զգայութե զամենալից շնորհս բազմապարգև քո ողորմութե ։ Եւ հերկեա զբանական անդաս-

տան մարմնեղէն կարծրացեալ սրտիս՝ յընդունակութի արգասեաց հոգևոր սերմանդ: Ո՛վ ամենիմաստ էութեդ խոստովանիմք զամենայն պարգևս 'ի մեզ ծաղկեալ և աճեցեալ. որ ձեռնադրես առաքեալս. լցուցանես մարգարէս. ուսուցանես վարդապետս. բարբառեցուցանես համրս, և բանաս զփակեալ ականջս խլից. որպէս ազգակիցն քո՝ էակիցն հօր՝ անդրանիկն որդի՝ քոյին գործակցութբ ներգործելով զայս ամենայն, քարոզեաց զքեզ՝ ած հաւասարակից իսկութեդ հօր: Շնորհեա՛ և ինձ մեղաւորիս խօսել համարձակութբ զկենդանարար խորհուրդ աւետեաց աւետարանիդ, հետևել առագաթուիչ ընթացիւք մտաց՝[5] ընդ անհուն ասպարէզս քոյինաշունչ կտակարանաց: Եւ 'ի մատչել իմ 'ի գլուխ հանդիսի՝ մեկնութե բանի՝ նախաժամանեացէ՛ առ իս գթութի քո, խօսելով յիս զարժանն և զպիտանիսն և զհաճոյսն քո՝ 'ի ժամանակի, 'ի փառս և 'ի գովեստ ածութեդ քո, և 'ի լրութի շինութե կաթուղիկէ եկեղեցւոյ: Եւ կարկառեա՛ 'ի վերայ իմ զամենամերձ աջ քո. և զօրացո՛ զիս շնորհօք գթութեդ քո: Փարատեա՛ 'ի մտաց իմոց զմէգ մթութե մոռացութե, ապաքինեալ ընդ նմին զխաւար մեղաց, ամբառնալ ուշիւ իմաստիցս՝ 'ի կենցաղոյս երկրէ 'ի բարձունս: Լուսաւորեա[6] 'ի յիս վերստին զծագումն անստուեր ճրաշից գիտութե ածութե քոյ՝ հզօր, արժանի լինել՝ առնել և ուսուցանել յօրինակ բարեաց ածասէր լսողաց: Եւ քեզ ամենայն փառք՝ յամենայնի, ընդ հօր ամենակալի, և ընդ որդւոյդ միածնի և բարերարի, այժմ և յանվախճան յաւիտեանս. ամէն: Իսկ զհաւատոյ սահման բանի՝ ընտրութե շնորհի՝ կենաց կանոնի[7] առ համագոյ սբ երրորդութեն՝ զայս վարդապետեցի, զոր շաւիղ կարգիդ վերանկարէ:

* Երրորդութեան անպայմանան նորոգ ստեղծաբանութեան, աղբեալ յայ, յոր էնք 'ի Նիկիայն սահմանեցաւ հաւատ։

Գ. Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և
երկրպագեմք զղուգափառ միութիւն ամե-
նայն Երրորդութեան։ Էութիւն անճառ, միշտ բա-
րի, նոյնագոյ, հաւասարապատիւ, անհաս իմաստից
թևոց սլացման, 'ի վեր քան զօրինակ և անդր քան
զնմանութիւ, գերազանց գոլով սահմանի՝ անպարա-
գիր բացարձակութք, 9 յառաջ քան զհիմն յաւի-
տեանցս անտարրափակ էութեց, ստեղծականացս
կարգաց, օրհնաբանութք անթարգմանելեաւ՝ ամե-
նահարուստ մեծութք՝ յաւէտ պսակեալ. հաստիչ
ժամանակաց՝ և որ 'ի ժամանակի են կերպաւորեալք.
Ինքն պատճառ հանդերձից՝ և յարմարապէս յօրի-
նիչ՝ տեսականաց և աներևութից։ Ո՛չ անուամբ չա-
փեալ, և ո՛չ յորջորջմամբ նշանակեալ. ո՛չ որակու-
թք նմանեալ, և ոչ քանակութք կշռեցեալ. ո՛չ օրի-
նակաւ ձևացեալ, և ո՛չ որպիսութք ծանուցեալ. 10
ո՛չ 'ի թերութէ տարածեալ, և ո՛չ 'ի լրմանէ ամփո-
փեալ. ո՛չ ուրեք երբէքի գրաւեալ, և ո՛չ 'ի տեղւոջ
վայրի երևեալ։

Դ. Հայր գթութեց՝ ունող ամենայնի, և ած հա-
նուրց՝ որ յերկնի և որ յերկրի, 11 բաց 'ի բանէն
միայնոյ՝ որով զամենայն ինչ ունի։ Ստեղծիչ և տուիչ
շնչոց ամենից, 12 բաց 'ի հոգւոյն իսկակցէ՝ որով զհա-
մայնն կազմեաց։

Ե. Մինն յերջանկափառ համազօր ահաւորութէ
երիցն անձնաւորութեց 13 խոնարհեալ 'ի վերուստ՝
աստուստ 'ի ստորինս. որ էրն իսկ 'ի բնէ անբաժ
'ի ներքնոցս՝ անկապուտ մնալով փառացն աթո-
ռոյ, և անկարօտ դիմացն 14 ծնողին իւրոյ։ Մտեալ
'ի սենեակ կուսին արգանդի 15 պարզաբար, և ե-
լեալ անտի յօդաւորաբար մարմին էապէս՝ անորո-
շելի, անթերի մարդկութեամբն, և անպակաս
ածութեամբն։ Մի որդի հօրն միայնոյ, և միա-
ծին անդրանիկ՝ ածամայր տիրածին կուսին, 16 արա-
րիչն՝ յեղականութմ մարդ ելով ճշմարիտ սկզբնա-

ծին․ ահա ոչ զկնի եղելոց երկրաստեղծից նմանու-
թե, այլ նոր և չքնաղ, թագաւորաց վեհափառ,
որ ոչ ցուցաւ 'ի դարս, և ոչ գոյացաւ 'ի ժամա-
նակս, անդրանիկ՝ ըստ սաղմոսողին, քան զամենայն
թագաւորս երկրի․ 17 անապական խառնութբ կեր-
պացեալ զմերս 'ի մարմնի, ըստ օրինի հոգւոյ ընդ
մարմնոյ, և ոսկւոյ ընդ հրոյ, և կամ յայտնապէս
իսկ ասել՝ լուսոյ ընդ օդոյ, ոչ փոփոխեալ և ոչ ան-
ջատեալ։ Նոյն ինքն եկեալ կամաւորութբ 'ի խաչն
մահու, իբր զգառն անարատ՝ 'ի սպանդ վարեցաւ,
և հանդերձեաց զօրէն ինքնիշխանութբ զարարա-
ծոց իւրոց փրկութի․ 18 չարչարեալ իսկութբ կեն-
դանեօք՝ եդաւ 'ի շիրմի անորոշելի յա̃ծուէն․ եւօ-
րեայ թաղմամբն՝ 'ի դժոխս սանդարամետականացն
19 վհատելոցն բանտարգելիցն՝ քարոզեալ ցուցաւ նո-
րոգումն և լոյս։ Նա և աւարտեալ 20 զտնօրինակա-
նացն զփրկանաւորն զտնտեսութի, ա̃ծապէս վերա-
կենդանեաց․ և կառավարեալ 'ի թևս հողմոց՝ ելեալ
'ի քրովբէս ամպով անքննութե ծածկեցաւ․ համ-
բարձեալ գեր 'ի վերոյ ա̃մ երկնի, նստաւ Ճոխու-
թբ յաթոռն իւրական սկզբնաժառանգ հօրն հա-
ւասարութե, յորմէ և ընաւ իսկ ոչ մեկուսացաւ,
անկորուստ առեցելովն, և աննուազ սեպհականօքն։
Որով և եկեսցէ 'ի դատաստան հատուցման, քննել
զծածկեալսն կշռութբ չափոյ՝ արդար իրաւանց․
որում սպասեմք, և յոր աղօթեմք, հաւատացեալք
յա̃մի՝ ա̃միւ ամենակալ տէրութն նորա․ 21 որ արդարև
մինն է միայն 'ի միայնոյն՝ 'ի միոյն փառակցութ յա-
ւիտեան երկրպագեալ։

Է․ Բարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ որդւոյ և
ընդ հօր՝ և 22 զհոգի էութե նոցին, ամենազօր, Ճշմա-
րիտ, կատարեալ և ա̃բ․ որ յանէից գոյացոյց զբո-
լոր եղեալքս ամենայն․ ինքնագործ համիշխան եր-
կուցն ևս ընդ նմին՝ անեղծ և անսահման թագաւո-
րութե․ որ ինչ պատՃառն առաջին, և բանն ահա-
ւոր նորին ինքնութե, նոյն ինքն և հոգին բարձրա-
ցեալ։ 23 Բարի ինքնակալ, ամենից բաշխիչ զհօրն
պարգևս՝ 'ի գովեստ անուան փառաց միածնին․ որ
ազդեաց յօրէնսն․ շնչեաց 'ի մարգարէսն․ 24 փչմամբ

ազգակցին տպաւորեցաւ յառաքելսն. [25] կերպիւ
աղաւնւոյ ցուցաւ 'ի յորդանան՝ 'ի մեծութ փառաց
եկեղոյն. փայլեաց [26] 'ի գիրս աւանդականաց. արար
հանճարեղս. զօրացոյց իմաստունս. լցոյց վարդա-
պետս. [27] օծ արքայութիս. օժանդակեաց թագաւորս.
եւ մերակացուս. հրամանատրեաց փրկութիս. շնոր-
հեաց ձիրս. հանդերձաւորեաց քաւութիս. զմկըր-
տեալս 'ի մահն քի՝ 'ի բնակութի իւր մաքրազար-
դեաց. զոր հայր եւ որդի, զնոյն եւ հոգին ներգոր-
ծեաց. եւ ինքն է ա͞ծ խնկեալ տիրապէս՝ ամենայն յա-
մենայնի:

Է. Քանզի [28] ոչ նախաթուելովն յերրորդութեն՝
ոք մեծ ինչ քան զմիւսն. եւ կամ զկնի անուանիլն՝
նուաստագոյն առ նմանն. եւ կամ 'ի մինն ասելով
խառնակութի գոլ դիմացն. եւ կամ յերիցն տրո-
հումն՝ ուրոյնութի եւ կամացն: Քանզի անմեծար
հայր ամենայնիւ, եթէ ոչ զբանն ունիցի ինքեան
զօրութի. որպէս ոչ գոլով ընդ նմա հոգւոյն՝ անհա-
գագ ումն եւ անկենդան՝ եւ առ ամենայն հրաման
նուազեալ: Իսկ բանն՝ եթէ ոչ անուամբ հօրն ծա-
նիցի, որբ ումն՝ եւ կամ լքեալ, եւ կամ [29] 'ի մահա-
ցուէ ումեմնէ ոչէի: Որպէս եւ հոգին՝ եթէ ոչ 'ի
պատճառէն նշանակեսցի, [30] ապաշուք ումն թափա-
ռեալ՝ իբր զշունչ ինչ անդասելի: Նաեւ եթէ ոք
հակաճառական բանիւ՝ [31] յաւակնի կապտել զհայր
'ի յիւրմէ բանէն, որ թէ էր երբեմն՝ յորժամ եւ
չէր, եւ անբանութեն բամբասանօք պատուել վար-
կանի զմեհին մեծութի, եւ կամ ստրկութիւն տացէ
բղխողին՝ ոչ բնաւորաբար գոլով հոգւոր, որով
այլ իմն գոյութիւն օտար մուծանել, եւ կամ ամբո-
խումն ինչ այլայլական՝ յանարատ պատիւ միութե
սրբ երրորդութեն, զայնպիսին՝ քարամբք պարսից՝
հաւատոյ բանից, իբր զդժնդակ դեւս դիմամարտիկս
գաղանականս՝ հերքեալ 'ի միջոյ՝ 'ի բաց հալածեմք.
եդեալ 'ի նզովս զնոյնս ընդ նոսին, փակեմք ընդդէմ
նոցին զկենացն մուտ եկեղեցականս գաւթի: Աւս-
տի զսրբ երրորդութին փառաւորելով 'ի նոյն տէրու-
թի միակցորդ հաւասարութե, զուգաձայն սրբաբա-
նութբ, հանգունատիպ հարթութբ, օրհնեալ եւ

փառաւորեալ յերկինս և յերկրի, 'ի ժողովս անդրանկացն, և յազգս երկրածնացս բանականաց, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ը. Որդ՝ զայս [32] գոչումն ծածուկ խորհրդոց կերպաւորելոց յայսմ մատենի՝ ամենալուր ականջաց մեծիդ այ ընծայեցուցի. սովիմբ սպառազինեալ, և ապա մտի 'ի հանդէսն։ Այլ ոչ եթէ կարօտեալ իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս, որ մինչև ստեղծեալ էր քո զամենայնն՝ նախ քան զլինելն երկնի, [33] փառաբանչօքն անմահից՝ և երկրաստեղծս բանաւորօք, դու քեզէն 'ի քումդ լրութէ՝ փառաւորեալ իսկ էիր. այլ զի զմերժեալս զիս յարդեսցես՝ անճառ-քաղցրութի, ճաշակել զքեզ բանիս հաղորդութե։ Իսկ զինչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ՝ կենաց կանոնիդ՝ ասել ադոնայի տէր, և զհրամայեալ պատուէրդ ոչ առնել. որ ինձէն իսկ զիս [34] զոսկեղէն տախտակս խօսուն՝ նուիրեալ քումդ պատգամի, զգրեալս մատամբդ այ՝ եղծի, որ և խորտակելն է իրաւացի. և ես տխրատեսակ մտօք զերկրորդն նմանութի առեալ հայթայթեմ։ Այլ արդ՝ քանզի [35] բազմօք պաղատեցայ դրուակօք խանդաղատականօք, որ ոչ է գրեալ 'ի յայս կարգ ձայնի, լուր բարեգութ, ըստ սովին բանի՝ այնմ ամենայնի։ Եղիցի և այս աղերս բարբառոյ հայցման աղօթից՝ յօդեալ ընդ նոսին. թերևս 'ի մտքրոց և 'ի կամարարից այս նուէր հացի՝ [36] պանից բաղարջոյ՝ իւղով զանգելոց՝ 'ի սեղան փառացդ քոց մատիցէ։

Թ. Այլ դու բարերար և յամենայնի մարդասէր, քոդ մի՝ այ միոյ, հզօր և ամենակալ. որ յաղթես գթութե խնամոց քաղցրութե քո, [37] ոչ հասարականաց միայն մարդկութես՝ իմոց գոյակցաց, առ որս յաւէտ է ամբոխութի և բիւրամասնեայ հակառակութի, այլ և հրեշտակացն անախտականութե. նաև և ես քան զայս՝ սրբամնելոյն անարատութե, յորոց մի էր և հեղլիաս. որոյ ցոյցք խստութեն՝ 'ի քորեբ լերինն նշանակեցաւ յերիս օրինակս, 'ի շարժումն մեծ, 'ի հողմն ուժգին, 'ի հուրն կիզանողական. իսկ քոյդ հեզութի երկայնմտութե՝ 'ի հանդարտու-

թիւն մեղմութեան օդոյն քաղցրութեան. քանզի [38] կամաց ողորմութեանց՝ դու միայն ես, ըստ գրեցելումն։ Վասն զի թէ և համօյք գտան մերասերքս՝ առաքինութեամբն յեղանակեալ յայլ նմանութիւն վերնային, սակայն երկրածինք են և նոքա, ընտրեալք 'ի մարդկանէ. իսկ դու ոչ ունիս չարանալ՝ իսկութեամբ բարիդ. յամենայնի օրհնեալդ. ամենևին փրկութիդ. ամենայնիւ հանգիստդ. համայնից անդորրութիդ. համօրէն ախտացելոց՝ դեղ առողջութեան. աղբիւր ջրոյ կենդանւոյ, ըստ երեմիայ։ Դարձ առ իս և ողորմեա ինձ. որ այնքան ծարաւես պասքիս անկարօտդ Աստուած իմում փրկութեան, մինչ զի զուարթնոցն երկնից անմահից օրհնաբանողաց [39] բան իմն ընծայեցեր մարդկօրէն փրկական քահանայապէս և քաւչապետաբար՝ անեղծական յարակայութեամբ՝ մշտնջենաւոր պաղատանս օրհնեալդ քո գթութեան 'ի մերոց դիմաց կենցաղականաց՝ վասն իմ լքելոյս հաշտութեան մաղթել, ողորմեա երուսաղեմի. որ է լուսաւոր խորհուրդ յայց ելանելոյ մեծիդ յայտնութեան, առ հրեշտակականն թափուր տեղի ստորանկելոց, 'ի ձեռն մարդկան՝ քո կցորդութեամբ՝ աւետարանեալ առակաւ այսր օրինակականս երուսաղեմի։

Ժ. Արդարև լուար՝ բարեգութ. անսացեր թագաւոր. ունկնդրեցեր կեանք և յոյս. 'ի միտ առեր երկնաւոր. յարգեցեր հզօր. նկատեցեր ծածկագէտ. տեսեր խնամակալ. կարեկցեցեր անպատում. խոնարհեցար՝ միշտ բարձրեալ. նուաստացար անհաւոր. յայտնեցար անճառ. ամփոփեցար անսահման. քանակեցար անքնին. [40] մածար ճառագայթ. մարդացար անմարմին. շօշափեցար անքանակ. կերպաւորեցար անորակ. լցեր իսկապէս [41] զաղաչողացն բաղձանս։ Դու իսկ եղեր թշուառացելոյս ինձ՝ ձայնիւ զուարթնոցն՝ բարի բարեխօս, միջնորդ կենդանի, պատարագ անմահ, սպանդ անվախճան, նուէր մաքրութեան, ողջակէզ անծախ, բաժակ անսպառ։ Ահա ողորմած, մարդասէր, օրհնեալ, միշտ կատարեցես [42] առ մեղուցելոյս զբարեբաստութիւն կամաց քոյ կենդանատուաց, գովեալ երկայնամիտ. և քեզ վայել է փառք յաւիտեանս. ամէն։

(1) Առ այսոքիկ ։ Առ այսոսիկ են իղձք կամ յօժարութիւնք թշուառս հոգւոյս. և առ քեզ դաւանութիւնք յարմարականք, խոստովանութիւնք մտաւոր, կամ յատուկ քեզ վայելչականք. զոր թէ և բովանդակ տեսանես դու և գիտես, բայց ես որպէս 'ի Նախնին, նախ քան զայս յանցեալ աղօթման ծանուցի, զնոյն և յերկրորդումս ցուցեալ կրկնեցից ։

(2) Յանդիմանութիւն գրաբանական ։ 'Ի բացայայտութիւն, կամ 'ի հրապարակական բանս՝ որ 'ի սբ գրոց. կամ գրաբանական ասէ՝ թերևս զի 'ի գիր անցուցեալ զբանն՝ այնպէս խօսէր յատենի ըստ սովորութեան առաջնոյն. որպէս և Շնորհալին արար զատենական խօսսն առ ժողով Հայրապետացն. և ասէր.* Զլսելիս մատուցանել դուզնաքեայ այսոցիկ բանից, որ ոչ 'ի լսելիս հպեալ, միանգամայն և յօդս ցնդեալ. այլ արձանացուցեալ գրով ըստ գերակատար իմաստնոցն օրինի || ։ Արդ՝ վա այնպիսի ատենական վարդապետութեց, զայս յաջորդ արգահատութիւն, աղաչանս նուիրեցի. զոր ներքոյ եդեալ աղօթական բանքդ ցուցանեն ։

(3) Հաշտեաւ ։ 'Ի միում, հաշտեաւ, յայլ, հաշտեցեաւ, որ և այս յարմարի. Իբրև թէ՝ որով հոգին սբ հայցեալ, աղօթիւք կամ պաշտամամբ պատուեալ. վասն զի բառքս՝ պաշտօն և պաշտել, բազում անգամ դնին փոխանակ բանաւոր կամ ձայնաւոր աղօթից և օրհնութե ։

(4) Բարեգործեա ։ Շնորհեա կամ յօրինեա զամենալից շնորհս քո՝ 'ի յանձին, 'ի հոգւոջս, և յիշխանական ազդման զգայութիւն, 'ի լեզուս՝ որ իշխան և ազդարար է զգայութեց. կամ, 'ի միտս՝ որ իշխանաբար վարէ զգայութեց, որ տիրապէս զգայ և ազդէ զիմաստս գրոց ։

(5) Ընդ անհուն առաջարկաւ ։ Անցանել կամ գնալ արագ ընթացմամբ մտաց ընդ անանցանելի ընդարձակութիս ծծաշունչ գրոց ։ Առաջնոց վարդապետաց սովորութի էր՝ զատենական ճառս կամ զքարոզս իւրեանց յօրինել 'ի վերայ բանից սբ գրոց, մեկնաբանելով զնոյնս, որպէս առնեն ոսկեբերան, եփրեմ, և այլք. վասն այն ատորև Մեկնութիւն կոչէ զայն ։

(6) 'Ի յիս վերստին ։ Ծագեա յիս վերստին զծագյին գիտութիւն քո, որպէս միանգամ ծագեցեր 'ի լուսաւորութե մկրտութեա. յայնժամ ծագեցեր առ 'ի ուսանել ինձ, այժմ ծագեա առ 'ի ուսուցանել այլոց ։ Կամ, վերստին ասէ պայծառացուցանել զհոգևոր գիտութին, որպէս 'ի սկզբան յառաջեալն ։

(7) Առ համագոյ սբ Երրորդութիւն ։ Զսահման դաւանութե հաւատոյ որ առ սբ Երրորդութին, զայս՝ կամ այսու օրինակաւ աւանդեցի, յօրինեցի, ըստ որում յաջորդ բանդ երևեցուցանէ ։ Զայս դաւանութի յայն սակս դնէ սբ վարդապետս, զի օրէն է քարոզչաց բանին՝ նախ զուղիղ հաւատոյ հիմն արկանել ։

(8) Երրորդութիւն անայլայլական ։ Այսինքն դաւանութի Երրորդութե, կամ ճառ և բան յաղագս սբյ Երրորդութե ։ Զի սովորութի է զմակագրութիս գրոց կամ ճառից 'ի նիւթոյն առնուլ, որպէս գիրք մովսեսի կոչին՝ Արարածք, Ելք, Թիւք, ևն. զի են բանք զլինելութէ արարածոց, զելից իսրայէլի յեգիպտոսէ, և զթուոյ նոցա. այնպէս գիրք առակաց Զգօնութն կոչի. զի են խրատք իմաստութե ։ Նմանապէս յարտաքնոցն՝ Իլիաս ասի բանաստեղծութին հոմերոսի՝ յորում խօսի զեղիոնական պատերազմէ. և Ոդիսեա կոչի միւս ևս բանաստեղծութի նորա, յորում զոդիսեայ ճառէ. ըստ այսմ և այլք բազումք ։ Կամ, եթէ կամիցի ոք, Երրորդութիւն իմանալ՝ երրորդումն, այսինքն երրորդ անգամ կրկնումն դաւանութե հանգանակին. զի նախ՝ յառաջելոց աւանդեցաւ. երկրորդ անգամ 'ի ժողովս Նիկիոյ և կոստանդնուպօլսոյ բացայայտեցաւ. իսկ երրորդ անգամ ինքն աւանդէ ևս ընդարձակէ աստ ։

Զայս դաւանութիւն երրորդութեան [illegible] աւէ՝ ըստ ճշմարտութեան բանիցն և ըստ մտաց հաւատոյ. զի մի՛ 'ի ոգւոյս ոք կարծիցէ՝ թէ յաւելմամբ կամ պակասութեամբ բանիցն փոփոխէ զիմաստ, և բազմացուցանէ զհաւատալիսն ։ [illegible], ըստ բացայայտութեանն նորոգ եղանակաւ ընդարձակ յօրինեալ ։ [illegible], այս դաւանութիւն աղփեցաւ յոյժ ըստ հաւատոյն կամ ըստ հանգամանակին, որ 'ի ժողովն Նիկիոյ աւանդեցաւ, որպէս և 'ի յաջորդան զմտաւնս Նիկիական հանգանակին ընդարձակ ձևացուցանէ ։

(9) [illegible] ։ Որմնք զհրեշտակաց խմանան. բայց լաւ ևս իմանի՝ յառաջքան զնկիզբն ստեղծեալ ժամանակացս, [illegible]. յորում էութիւք ստեղծեալ իրացս ոչ էին փակեալ ընդ տարերօքս, այլ ծածկեալ 'ի միտս նոյ, նա անճառելի օրհնութեամբ իւրոյ ամենահզօրուստ մեծութեան պակեալ էր. իբրև թէ՝ անկարօտ էր արարածոցս փառաբանութեան. զի յառաջքան զնոցայն լինելութիւն՝ նորա մեծութիւն է փառք իւր, որպէս զինի աւէ 'ի համարն ը. տես լծ. 33 ։ Կամ, [illegible] էութիւնք իմանելին անմարմին բնութիւնք՝ որք ոչ փակին ընդ տարերօք. իսկ [illegible] կարգ են այլ ամենայն մարմնականք ։ Յառաջքան զհիմնարկութիւն ժամանակացն աւէ՝ յորում եղեն անմարմին և մարմնական բնութիւնք, օրհնաբանեալ է Աստուծոյ՝ ոչ յայլմէ, զի ոչ կայր ինչ. այլ յինքենէ, և այս է [illegible]. զիարդ ոք յաւրմէն օրհնեսցի, փառաւորեսցի. բայց եթէ զի ինքնագոյ ամենայնի մեծութիւն նորա է փառք իւր ։

(10) [illegible] ։ Ո՛չ յառաջն թերի և անկատար գոլով, անձեցաւ 'ի կատարելութիւն. [illegible], 'ի կատարելութէ նուազեալ կամ պակասեալ ։ [illegible]. ո՛չ ընդ ժամանակաւ երբեք փակեալ, և ո՛չ 'ի տեղւոջ պարփակեալ ։ 'Ի կարգի բանիս զաստնեակ աստուածութիւնն արտասանելական 'ի բաց առնի յԱՆ. զի թէ և էակ է ծայրագոյն՝ ամենուրեք, բայց ո՛չ իբր գոյացութիւն առնումի ձևաւորել կամ որոշի. ո՛չ քանակ 'ի նմա, ո՛չ որակ, ո՛չ առ ինչ նմանական, ո՛չ կրել, ո՛չ երբ ժամանակի, ո՛չ ուր տեղւոյ ։

(11) [illegible] ։ Հայր՝ է ած ամենեցուն, բայց միայն բանին կամ որդւոյն ոչ է ած ըստ ածութեան, թէպէտ և է նորա ած ըստ մարդկային բնութեան ։ Որմնք 'ի հարց նաև ըստ ածութեան մեկնեցին զասելն քրի (յոհան. ի. 17.) առ ածն իմ ։ Որպէս որմն կիւրեղ, (կոչ. ընծայ. գլ. ժա. համար. 21. ) աւէ. * Աւլըորդ իմ, որդիութեան, բնութեամբ և միածնութեան ։ Ո 'Ի այն միտս խօսի և այն իլարիոս. ( գիրք. բ. յաղագս երրորդութեան. համար 11. 12. և գիրք դ. համար 53 ։) Բայց այս մեկնութիւն ոչ է հասարակ և հարազատ ։

(12) [illegible] ։ Հայր է ստեղծօղ և կենդանացուցիչ ամ ենայնորաց, բայց միայն հոգւոյն սբյ ոչ է, որ էութեամբ ընդ հօր ունի զկենդանութիւն, և ընդ նմա կենդանացուցանէ զամ ։

(13) [illegible] ։ մի օրէն. [illegible] ։ այսինքն 'ի վերուստ անտի, կամ յերկնից ։ [illegible]. այսինքն բնութեամբ կամ յառաջնմէ իսկ անըմբռնելի 'ի ներքնոցս ։

(14) [illegible] ։ 'Ի չորս օրէն. [illegible]. և իմանի, այնմ որ ծնօղ է անախտ և անայլայլական եղանակաւ, որպէս սէրն անախտաբար ծնանի ։ Կամ, այնպիսի ծնօղ՝ որ ախորժաբար ծնանի՝ և ո՛չ ըստ բնաւոր ազդմամբ, և կամ 'ի դիպաց ինչ ։

(15) [illegible] ։ Իբրև պարզ և անմարմին, կամ պարզ բնութեան. և եղեալ անտի [illegible], յօդաւոր կամ բաղադրեալ մարմնովն և հոգ-

ռով, Տորքն էադէս, մարմին խոկուԹբ, Ճշմարտապէս և ոչ կարծեօք, ամբողջ մարդկայնովն, որ անբաժանելի էր յԱծուԹէն :

(16) Արարիչ ցեղակաութ : Բանն Աստուած արարիչ՝ յեղական կամ՝ ի ստեղծեալ միայն լինելով մարդ Ճշմարիտ. «ինքնածին». այսինքն առաջին ծնունդ կամ անդրանիկ մօրն, կամ առաջին ծնեալ 'ի կոյս մօրէ : Աչ-ուդնի. ոչ համեմատ կամ ըստ նմանութեան այլ մարդկան յերկրէ եղելոց, այլ նոր և սքանչելի, Թէ ըստ ծնեցելոյն, և Թէ ըստ եղանակի ծննդեանն : Բառն՝ ուդնի յայլ գիրս ևս երբեմն նշանակէ՝ համեմատ, կամ ըստ. որպէս Լամբրոն. ( Ճառ յաղագս ատենի. եկեղեց.) * Ամենայն օրէնքն այս գիր է, և զնի բնուԹեա : || այսինքն համեմատ բնուԹեան մերոյ. զոյն դնէ և ('ի մեկն. սաղմ. ժզ:) Բարձրագոյն գերափառ քան զծնունդ Թագաւորաց, որք ամենևին բնուԹենակից եղեանց մօրն ծնանին, և երբեմն զայլ աղքատս առանց իշխանուԹեան, այլ և բռնանալով զկուսուԹի ծնողացն : Իսկ բանն Աստուած կուսածինն՝ ամե անդրանիկ ըստ ուդնի քան զամենայն Թագաւորս. (սաղմ. ձը. 28:) Որ 'ի միջոցին կայ բառս՝ բարձր, այսինքն բարձր քան զամենայն Թագաւորս : Բայց ՚Ոբ վարդապետս հայեցուցանէ զոյն և առ բառն անդրանիկ. իմանալով՝ առաջին քան զամենայն Թագաւորս ոչ միայն իշխանուԹբ, այլև ծննդեամբ ըստ մարդկուԹեն. վասն զի միայն քս ծնաւ Թագաւոր, իսկ այլք ոչ ծնանին Թագաւոր, այլ 'ի մարդկանէ կարգին, Թէպէտև ծիրանածինք կոչին, Թագաւորազն. ևն :

(17) Անշփոթ խառնուԹբ : Անշփոթ և անայլայլելի խառնուԹեամբ, այսինքն ներքին սերտ միաւորուԹբ. ներգործեալ ձեռն 'ի մարմնի. յինքն առեալ զմեր բնուԹիւ մարմնով, կամ՝ զմերս հոգի 'ի մարմնի անդ : ըստ օրէնի հոգւոյ, ևն : Այս օրինակք հոգւոյ, հրոյ, և լուսոյ՝ այնչափ միայն ունին յարմարուԹի, զի որպէս անշփոԹ և գոյացաբար միաւորի հոգի ընդ մարմնոյ, և հուր ընդ ոսկւոյ, և լոյս ընդ օդոյ, այսպէս անշփոԹ և 'ի ներքուստ իւրովէն միաւորի ԱծուԹիւն ընդ մարդկուԹեան 'ի մի քս : Որ և յաղագս տարայոյցի լուսոյ յաւելուլն, կամ յայտնագէս իւր առել, նշանակէ՝ առաւել յայտնի կամ երևելի օրինակ տալ միաւորուԹեն քսի. զի լուսոյ ընդ օդոյ միաւորուԹի առաւել զգալի է մեզ և ազգողական՝ քան զհոգւոյ և զհրոյ : Զբառն խառնուԹիւն անուանիմանակ անշփոԹ միաւորուԹեն յայտնի է ոչ միայն յայլ գրոց, այլև 'ի կիրառուԹէ սբյ վարդապետիս, որ 'ի բանն ժբ. 2. առ Աձ ասէ, միանալ ընդ լուսոյդ կենաց խառնուԹբ :

(18) Զուգաւորեալ խոհուԹբ : Զուգակցեալ Ճշմարտապէս, կենդանեօք, այսինքն 'ի կենդանուԹեն միայն, և ոչ յետ մահուան, որպէս ոմանք հայհոյեցին՝ Թէ հոգին քսի 'ի գժոխս տանջեցաւ, որք և տժոխակիր անուանեցան : Կամ, կենդանեօք իմն այսպէս. Ճշմարտապէս չարչարեցաւ 'ի մահ մարմնովն, կենդանի և անմահ մնալով ԱծուԹբն :

(19) Վհաքելութ բարձրագելիծ : Մեզ՝ որք 'ի բանսի նախահարցն արգելեալ կայաք, և յերկար անկարուԹբ փրկելոյ վհատեալք էաք, այսինքն հաշեալ և վատԹարեալ : Կամ, եԹէ վհատեալ իմացիս յուսահատեալ, արդարև յուսահատք էաք իւրեանց զօրուԹբ, կամ այլոց բարեխօսուԹբ զերծանիլ անտի : Իսկ եԹէ ոք յաղագս մեղաւորացն առցէ զբանս, առաքէն և նոցա քս բարձրագելից ... , և այլ, ոչ զի իւքեանք նորոգեսցին և լուսաւորեսցին յայնժամ, այլ զի ծանիցեն՝ Թէ ոչ հաւատալովն 'ի նա, և 'ի չարի մեռանելովն՝ զրկեցան 'ի նմանէ : Բայց զայս պատուԹիւն յայտնապէս ասէ ՙՈբ վարդապետս 'ի բանն խզ. 5 : տես անդ :

(20) Զարհուրելի ... : Կատարելովն քսի մահուանն զմարդկուԹեան

խաղոյ զմրկաշարժ խորհրդոյն, ամպաւէս յարեալ. և գնալով 'ի Բե- հողմոյ. ըստ սաղմ. ( ԺԷ. 11. ) որով նշանակի արագութի վերելոյն յերկինս, նստեալ 'ի քրովբէական կառս՝ ծածկեցաւ ամպով ամենուրէ. ըստ բանին գործոց. ( Ա. 9. ) զի ամպով ծածկելն յաչաց առաքելոց նշանակէր զանհասութի փառաց և մեծութեն քի։ Այսու օրինակաւ համբարձեալ յերկինս, նստաւ փառօք յաթոռն սեպհական՝ աթոռակցա- բանք հօրն համապատուաբէ։ Այս է մեկնութի ասելոյն՝ ընդ աջմէ հօր. զի հաւասար հօր ըստ էութեն՝ իբրև բուն և առաջին ժառանգ նորա. յորմէ ոչ բնաւ մեկնեցաւ, այսինքն հեռացաւ։ Անկորուստ առնելով, պահելով զառեալ զմարդկայինսն, և անպակաս ..., ըստ ամայն յաւուրս փառացն։

(21) Որ ... է։ մի որդին 'ի միայնոյ հօրէ, 'ի միոյ հոգւոյն փառակցութի։ Խոնարհելովն քնի 'ի տնօրինականսն ներգործութիս, ոչ եթէ ինքն փոփոխեցաւ կամ նուաստացաւ. այլ մնաց նոյն միակ որդի միայնոյ Այ Հօր, և նովին փառակցութեամբ ընդ Հոգւոյն սբյ։ Այսպէս հաւատամք զխոնարհին տէրութեան նորա. և փառաւոր գա- լստեանն սպասեմք ցանկանալով։

(22) Ջհոգի էսսբէ։ Օրհնաբանեմք զէ հօր և որդւոյ և զհոգւոյն սբ, որ էակից է նոցա, հոգի նեղքին և էութբ միացեալ, ոչ արտաքին իբրև զարարած հոգիսն։ ..., որ ինքնին իւրով զօրութբ գործէ, և իշխանակից է հօր և որդւոյ, որք ընդ նմա են միշտ, մի և նոյն անըն- դատ թագաւորութբ։ Որ ..., այսինքն Հայր ած, և որ ինչ է Բանն ած էակից, նոյն է Հոգին սբ ըստ էութեանն և ըստ կատարելութեց։ Այսպէս ըստ էականացն իմանի բանս ...՝ ... իսկ յատուկքն ... ասելի. և այսմ յարմարէ բանն Լոմբար- դեան Պետրոսի վարդապետ վճռոյ ասացեալ. * Հայր ծնաւ զորդի, որ է այն ինչ՝ որ ինչ Հայր է. քանզի որ ինչ Հայրն է, և Որդի այն է. բայց ոչ որ Հայրն է, և Որդի նա է։ ||

(23) Բարի ...։ Ինքեամբ կամ ինքնաբուն բարի, և ոչ առացմամբ։ Ոմանք կրկին զատանեն՝ բարի, ... բայց լաւ ևս է միայար ըն- թեռնուլ ըստ ընտիր օրինակաց։

(24) Փայլման ...։ Փայլմամբ որդւոյն այ՝ որ աղգակից ասի վասն բնութենակից գոլոյն, որպէս ասացաւ ( բան. ԼԳ. լծ. 24։ ) Ոմանք յայսմ բառէ կամեցան ձեռնարկել, թէ որդին ոչ է բղխօղ հոգւոյն սբյ. ապա թէ ոչ՝ ոչ ասիւր աղգակից. որպէս ասեն՝ հայրն ած գոլով յառաջածօղ որդւոյն և հոգւոյն՝ ոչ ասի նոցա աղգակից։ Սակայն եթէ քննութեամբ խուզեն զայս, գտանեն նոյին իսկ սբյ վարդապետին՝ զերիս անձինսն ևս ... ասացեալ ( 'ի գով. առաք. ) ուր գրէ. * Հայր՝ Որդի՝ Հոգի՝ 'ի մի շար դասեալ, զթիւն սատուցեալ և օրհնաբա- նեալ ...՝ երկրպագման վերանկարէ։ || Ապա ուրեմն նաև յառաջածօղ և յառաջածեալ անձինքն ասին միմեանց աղգակից։ Սոյն- պէս 'ի բանն հե. 7. ասէ. Ա... ...։

(25) Կ... ...։ Հոգին սբ 'ի նմանութի աղաւնոյ հանգեաւ 'ի վերայ քնի 'ի մկրտել նորա. և այս տնօրինեցաւ յԱյ առ 'ի մեծացու- ցանել զփառս ... 'ի մկրտութե, զի մի նման այլոցն կարծիցի կա- րօտ մաքրութե. այլ թէ ինքն իսկ մաքրագործ է, 'ի մաքրել եկեալ, տուիչ հոգւոյն շնորհաց։ Այսպէս 'ի խոնարհիլ քնի կերպարանօք մե- ղաւորի, փառաւորեաց զնա Հոգին սբ՝ սրբարար ամենեցուն վկայե- լով։ Զաղաւնոյն երևելոյ կարծիք է 'ի վարդապետս. ոմանք ասեն՝ թէ էր ըղի երևոյթ աղաւնւոյ, այլք՝ թէ էր ճշմարիտ և զգայուն ա- ղաւնի. և զայս կարծիս նախնեաց յիշէ կիւրեղ եղիմայ. (կոչ. ընծայ.

գլ. ԺԸ. համար 8 : ) և ընդունի մեծն օգոստինոս, և ընդ նմա Թովմաս ագուինացի. (Գ. մասն. խնդ. ԼԹ. այր. Է. այլ և 'ի մեկն. յովհան. գլ. Ա. ընթերց. ԺԳ.) իբրև առաւել հաւանական ընդունելով. Թէպէտ և յառաջն զմիւս կարծիսն եղեալ էր, ('ի Ա. գիրս վճռոց, ԺԶ. խնդ. Գ. առ 3 :) Սակայն այսու ոչ բնաւ համարեցան նոքա, թէ հոգին սբ անձնաւորաբար միաւորեցաւ 'ի բնութիւն աղաւնւոյ, և ոչ իսկ ասաց ագուինացին, թէ էառ զճշմարիտ աղաւնոյ բնութիւն. այլ ընդ հակառակն ասէ. * Թէպէտ ոչ էառ զայն 'ի միութիւն անձինն : || Եւ ոչ իսկ ճշմարիտ աղաւնի ասելն՝ հակառակ ինչ է աւետարանչաց. զի նոքա ասեն՝ թէ հոգին սբ իբրև աղաւնի երևեցաւ, և ոչ ասեն՝ թէ երևեալ աղաւնին էր իբրև աղաւնի : Որպէս յասել՝ թէ 'ի նմանութիւն ամպոյ յայտնեցաւ 'ի Թաբոր, կամ նման հողմոյ էջ 'ի վերնատունն, ոչ իմանի՝ թէ ամպն և հողմն ոչ էին ճշմարիտ ամպ և հողմ : Եւ ոչ անտեղի ինչ է՝ 'ի կիր առնուլ Ա.Ծ յայտնախօս զբուն զերական կենդանիս՝ 'ի նշանակ կամաց իւրոց, կամ յայլ պէտս. որպէս 'ի կերակրել զեղիաս՝ 'ի գործ արկ զագռաւ, որ յանմարդոց իսկ էր, և չիք հարկ ասել թէ երևոյթ էր այն ագռաւոյ :

(26) 'Ի Գիրս աստուածայնոց : Ասյինքն աւետարանչաց, և այլոց առաքելոց, որք զաւանդեալսն 'ի Քէ ընդ գրով արկին : Այս իմաստ է առաւել հարազատ, քան թէ զմարգարէից իմանալ. զի նախ ասաց՝ աղօթեալ յօրէնսն, չնչեալ 'ի մարգարէսն. ուստի մնայր դնել զխօսելն յաւետարանսն, ըստ կարգի բացատրութեան մերս հանգանակի :

(27) Օծ արքայութեան : Ասյինքն արքայս, որպէս զդաւիթ, զմեծն կոստանդիանոս, զմերս տրդատ, ևն : օծանողաց, զօրացոյց, յաղթող առար զթագաւորս : հրամանատրեաց [illegible] . իշխանութեամբ պարգևեաց, կամ հրամայեաց տալ պատուութիւն 'ի մարմնական և 'ի հոգեկան փորձութեանց : [illegible], ներգործեաց քաւութիւն մեղաց և պատուհասից. կամ, կարգեաց քաւչարար նպաստս յեկեղեցի :

(28) Ո՛չ նախաթուելոց : Ցերրորդութեան յորժամ մի անձն նախ թուի քան զմիւսն, ոչ եթէ այսու զնախաթուեալն համարիմք կատարելութեամբ մեծ, և զերկրորդն փոքր և նուաստ. այլ միայն զկարգ ծագմանն յառաջագայութեան ցուցանեմք : և յամ 'ի մին առնուլ. յասելն մի զերիս անձինսն, այսու ոչ զանձինսն շփոթեմք : և յամ յերիսն [illegible], և կամ յերիս զանազանելոյն [illegible] էլ, որոշումն կամ տարբերութիւն գոլ կամաց նոցա, ընդ նմին և բնութեան : Այլ այնչափ անբաժան և հաւասար դաւանեմք զնոսա, մինչև [illegible], անպատիւ կամ անզօր լինէր, եթէ ոչ ունէր զիւր բանն անձնաւոր. որպէս ոչ ունելով զհոգին սբ, [illegible], անշունչ ոմն և անկենդան լինէր :

(29) 'Ի մահկանացուէ : Ասանց հօր ոչ ծննդեալ զբանն, երևէր 'ի մահկանացու հօրէ ումեմնէ ոչ գոյողէ ծնեալ. մի օրինակ. և յամ մահկանացուէ ասէ [illegible]. այսինքն երևէր՝ թէ մահկանացու որդի է ումեմն մեռելոյ :

(30) Անպարագիծ [illegible] : Եթէ զհոգին սբ առանց բոլորովին իմացուք, լինէր անարգ ինչ հողմ տարածեալ, զոր ոչ գիտեմ՝ ուստի գայ, կամ յո երթայ. և ոչ դասի 'ի թիւ անձնաւոր գոյացութեանց. որպէս և անմիտքն խորհէին ասել թէ ոգին սփռի իբրև զօդ թոյլ. և ոչ դասի ընդ կենդանիս : ( Իմաստ. Բ. 3 : )

(31) Ցանդգնի [illegible] : Ցանդգնի զոկել զհայր յիւրմէ բանէն. և [illegible]. ( մի օրին. [illegible] ) [illegible], անարգանօքն՝ որով անբան առնէ զհայր, կարծէ պատուել զմեծութիւն հօրն, և կամ նուաստութիւն տայէ բոլորովին, [illegible]. այսինքն ոչ բնութեամբ ունելով զհոգին՝ այլ տուայական իբրև օտար էութիւն ինչ, զայն-

ակնին թարամբք պարանց, ալպատակաց, այսինքն բանիւք հաւատոյ հեր-քեալք և ՚նզովեալք: Այս է բանն ՚նիկիոյ ժողովոյն՝ եդեալ զկնի հանգա-նակին, Իսկ որք ասեն էր երբեմն, ևն: Որպէս և յաջորդն. Սոսկի շնչէ երրորդութեան թշնամանօղին, է բանն մերոյ Լուսաւորչին. Իսկ մեք փառա-ւորեսցուք ևն: Աստանօր դադարեցուցանէ ՚նբ վարդապետս զբան դա-ւանութեան, ոչ խօսելով ինչ զսբյ եկեղեցւոյ. զորմէ չեք յիշատակութեն ՚ի բուն ՚նիկիական հանգանակին: տես վասն այսր ՚ի բանն ՀԵ. լուծ. 1:

(32) Գուշակ ծածուկ խորհրդոց: Զայսանի խոստովանութեն գաղտնի խորհրդոց ածութեդ, կերպարանելոց, բացայայտելոց յայսմ ճառի դա-ւանութեն, քեզ ընծայեցի. որով զինեալ մնի 'ի հանդէսն ատենախօսու-թեան:

(33) Փառաբանչօքն անմահից: Այսինքն անմահ փառաբանչօք, կամ հրեշտակօք: Մինչև սատեղծեալ էիր զերկինս և զերկիր՝ հանդերձ հրեշ-տակօք և մարդկամբ, դու արդէն փառաւորեալ էիր 'ի թագն լուսոյն. (Յ. օրին. լուսոյն,) 'ի քո սեպհական լուսէդ. զի սատեղծմամբ բանաւորացս ոչ յաւելու քեզ ՚նոր կատարելութի, ուստի և ո՛չ ՚նոր փառք ՚նելքին. վասն որոյ խնով խոստովանողական դաւանութեամբս ո՛չ իբր կարօտեալ մեծանաս 'ի քեզ, այլ զի հաճեցար յարգել զիս, ընդունելով զքեզ բանիս հաւատոյ, կցորդութեամբ բանիս հաւատոյ՝ որով առ քեզ գոչեցի:

(34) Զանձեղէն պախպախս: Զհոգիս իմ, յորում 'ի մկրտութն մասամբ քո շնորհացդ՝ և ո՛չ խնով աշխատութեամբ գրեցեր զպատգամս օրինացդ, եղծի մեղօք. և ես այժմ պերպերեալ ծրով, մելանաւ արտասուաց և ճգնութն զերկրորդ տախտակն ապաշխարութեան հայրայրեմ, ջանամ կազմել: Թէպէտև սաէ՝ հաւատոյ խոստովանութեամբ դաւանեմ զքեզ Տէր Տէր. այլ զի՞նչ օգուտ՝ յորժամ ոչ առնեմ միանգամայն զպա-տուէրս քո կենաց. ուր ես ինքնին 'ի ծննդենէ ՚նուիրեալ քումդ օրինաց, ո՛չ իբր տախտակ քարեղէն անկենդան, այլ իբր ոսկեղէն և խօսուն գրե-ցայ շնորհօք հոգւոյդ. բայց գործովք եղծի, որոյ վասն արժանի եղէ խորտակելոյ. և ահա յինէ բազում աշխատութեամբ ՚նորոգել ևն:

(35) Բազմօք պաղատեցայ: Յառաջագոյն բազում ողոքական բանիւք պաղատեցայ, որ ոչ են գրեալ 'ի ձայնս դաւանութես: Յայսմանէ յայտնի է, թէ զայս դաւանութի յետոյ քան զայլ աղօթսն յօրինեալ է: Կամ, թերևս ակնարկէ յայլ աղօթս՝ զոր ձայնիւ առանց գրոյ մատուցեալ էր առ ած:

(36) Պանիր բաղարջոյ: Բաղարջ կամ անխմոր պանից, այսինքն զնսա-կաց հացի. (սօմուն:) Բառն բաղարջ բազում անգամ իբրև ածական՝ ՚նշանակէ անխմոր. (որպէս ելից. ժբ. 39: իթ. 2: Ղևտացւոց. ՚ւ. 20:) ևն: Իմաստք այսր տեղւոյ: 'Ի դաւանութն բանքս ոչ յաճախե-ցի հայցուածս, բայց դու բարերար՝ ընկա՛լ ը՟ այսմ և զոր յառաջին պա-ղատանս յինէն արարեալս. և ցանկամ զի այս ամենայն խնդրուածք մա-տուսցին առաջի քո 'ի մաքուր անձանց կամարարաց քոց՝ իբրև զբաղարջ պանս ճշդով զանգեալս ը՟ օրինաց, այսինքն իբրև խոստովանութի անխառն 'ի խմորոյ հերձուածոց:

(37) Ո՛չ հասարակական մայն: Գթութը քո յաղթես ո՛չ միայն հասա-րակ մարդկան կամ առհասարակ ամենայն մարդոյ, որք իբր ընդ-թնակեցք՝ բնաւորապէս պարտին գթաեքը առ միմեանս լինել, և սա-կայն բազում անգամ ամբոխմամբ կրից և հակառակութեամբ անգթա-նան առ իրեարս: Այլև հրեշտակաց անախտականութէ, հրեշտակաց ա-նախտ բնութեն՝ որով բարեսէրք են, գերազանցես գթութեամբ. իբր զի ՚նոքա բազում անգամ աններող լեալ չարութե մարդկան՝ պատու-

հասէին, թէ ոչ արգելուիր. որպէս ցուցաւ ('ի ը. Թագ. ժը. 16: Նման նմա տան զայս որբանոցն: ոչ միայն հրեշտակաց գթութեն յաղթես, այլ առաւել քան զայս՝ նաև անախտութե սրբացելոցն 'ի քէն, աբրահամու, դաւթի, եղիայի, և այլոց, որք շնորհօք առաւել հաղորդեցան գթութեն քոյ, քան թէ հրեշտակք խուրեանց բնութեամբ, որոց և գործովք ներողութեն ուսոյց ած, թէ պարտ է արդարոյն լինել մարդասէր: (իմաստ. ժբ. 19:)

(38) Կամաց ողորմութեց: Հայի 'ի բանն (միքի. է. 18.) * Զի կամեցող ողորմութե է: || կամ լաւ ևս ասել, 'ի բանն. * Զողորմութիւն կամիմ, և ոչ զոհ. || դու միայն ես աստ՝ ունօղ կամաց ողորմութեան. քան զի բնութեամբ յողորմելն ես յօժարեալ. մինչ զի նաև 'ի պատուհասելդ՝ զողորմութի կամիս: Զի և որք 'ի մարդկանէ առաքինութբն երկնաւորք եղեն, բնութեամբ երկրաւոր գոլով՝ երբեմն նուազեցան յողորմութե. իսկ դու ող ամենի լցաւոր, ոչ կարես խոստանալ բնութեամբ բարիդ: Տես և բան յհ. լծ. 14:

(39) Բան յիմ ընծայեցեր: Այնքան ծարաւիս խնամ փրկութեան անկարօտդ Աստծ, մինչ զի զհրեշտակսն՝ կարգեալս 'ի քոյդ օրհնաբանութե՝ ոչ միայն արգելուս 'ի պատուհասելոյ զմարդիկ զյանցաւորս, այլ և իբրև միջնորդ զնոսա կացուցանելով առ փրկութի մարդկան, և քահանայս և քաւիչս, սահմանեցեր աղօթել անլռելի առ գթութիւն քո ասելով, ողորմեա երուսաղէմի. որ է աղօթքն հրեշտակին. (Զաքար. ա. 12:) Եւ զայս՝ անեղծական յարակայութեամբ. այսինքն միշտ 'ի նոյն պաշտօն խնդրուածոց պարապելով, իբր քահանայս միջնորդեանս՝ և ոչ առժամանակեայս որպէս զմարդիկ: Զայնպիսի պաղատանս ետուր նոցա 'ի ձեռաց դիմաց ընթացականաց. այսինքն մաղթել 'ի մեր դիմաց որ կենցաղականքս եմք և մահկանացուք, զերկնայինսն կարգելով միջնորդս երկրաւորացս, ուր օրինակաւ երկրաւորն երուսաղէմի հայցեն այց առնել երկնաւորին երուսաղէմի, լցուցանելով զտեղի անկելոց հրեշտակաց փրկութեամբ մարդկան: Փոխանակ տառապելոց. 3 օրին. եդակի գնեն՝ տառապելեաց կամ տառապելոյ: և փոխանակ օրհնաբանեա, 4 օրին. գնեն օրհնաբանեալ. այսինքն հրէական երուսաղէմի:

(40) Մարմնացեալ ճառագայթ: Թանձրացար 'ի մարմնի անօսր բնութիդ:

(41) Զաղաչանս հրեշտակաց: Կատարեցեր զբաղձանս հրեշտակաց, (զոր վերագոյն յիշեաց:) Եւ նոցա աղաչանօքն Լուսաւորեցեր ինձ: 2 օրին. ինձ, եղկելւոյս ինձ եղեր բարի բարեխօս՝ մարդանալովդ, ևն:

(42) Առ մեղուցելոյս: Միշտ կատարեցես 'ի վերայ մեղուցելոյս, կամ առ մեղուցեալս՝ զբարի պարգևս կամ զյաջողուածս կենդանարար կամաց քոց: Զկատարած աղօթիցս յայն կնքէ, թէ զաղաչանս հրեշտակացն միջնորդաց ընկալար, կատարեցեր առ մեզ. բայց այնպիսի օրինակաւ՝ զի դու ինքն եղեր թշուառացելոյս ինձ արդար բարեխօս և միջնորդ. յայնժամ զուարթնոցն, այն աղաչանք զոր 'ի զուարթունսն ադեցեր, էին իբր 'ի քո բերանոյդ. դու եղեր աղաչաւոր և կատարիչ, և 'ի կատարել զայն՝ ոչ այլ ինչ առնես, բայց լինել 'ի գլուխ առնել զբարեխնամ կամս քո:

Սերատէն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն
աղերս մաղթանաց բանի։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

# ԲԱՆ ԼԵ։

Ա. Եւ արդ՝ տէր զօրութեանց, մեծութիւն ահեղ,
անտարակոյս տեսանողութիւն, կամք ամեն-
ընդարձակ, առատութիւն անպակաս. ո՛վ որ զօրեսցէ
տօնել հանդիսիւ [2] պարերգութեամբ՝ ՚ի միոյ կաթուա-
ծոյ ցօղոյ քումդ բարութեան, որ ցանկ դեգերիս պատ-
րաստել պատճառս հնարից՝ իմում փրկութեան։ Եւ
զոր մեծն է գրեցից՝ պատմել յապառնին. քանզի
3 ոչ անուանեցար հրեշտակասէր, և որ զպետութիւն
նոցունց հաստատեցեր. այլ և զերկինս զամբարօք
նոցին՝ զմատանց քոց գործ, ոչ գրեցեր երբեք սի-
րել զնոսա. այլ առեր ՚ի պատիւ մեծաց գովեստից՝
առաջին դասեալ զմարդասիրութիւն։ Վասն որոյ կըր-
կին մեծացուցեր քեզ անուն անճառ ՚ի խորհուրդս
սոսկալիս. [4] զերկնայինս լուսակերպիցն կոչեցեր ըզ-
նոսին սպասաւորս և գլխաւորս յատուկ մատակա-
րարութեանց. իսկ զստորնային ծնունդս մահկանա-
ցուաց՝ տիրական և ածական պաշտելի անուամբ ըզ-
պերճացուցեր։ Լնցեալ վերստին ըստ սահման կըշ-
ռութեան չափոյ, լնեցեր քեզ կտակս գրոց՝ ճառից
անբաւից՝ զանապակ ծորմանն ծայրագունին վեր-
նում բարութեան։ Եւս և ՚ի մարդանալդ քո [5] միդ-
յէութեն, ոմանց վասն լինքեանց, և կիսոց վասն այ-
լոց՝ զեղեր առատութեամբ զտուրս կենաց, արուեստս
բազմօրինակս, սքանչելիս ածագործս, նշանս ճշմար-
տատեսիլս։ Որպէս զի թէ անդամալուծին պակա-
սելոյն ՚ի հաւատոյն, [6] հոգաբարձացն առաջարկութեամբ
զցոյց յուսոյն՝ գթացեալ ողորմեցար, և ո՛րչափ զօ-
րեսցէ առաւել բան քո ամենակար՝ առ ախտալից
մարմնոյս մաքրութիւն աղաղակողիս հառաչման. քան-
զի արդարև մեծ են չափք հրաշից՝ [7] քան զանմա-
քրեալս հոգի՝ որ հաստել, զլուացեալս պատկեր՝ ան-
տիրելի աղտոյ ներգործել. նա զի և երկրորդս ա-

ռաւելուք յաւազանին շնորհ յաճախեալ՝ զփառսն
հայրենի բարձրացուցանէ ։

Ը. Դու ես տէր որ սրբես զմեզ, որպէս ընտրեցելոյն քո [8] նախատպաւորեցեր մովսէսի. դու ես, որ 'ի մեղս և յանօրէնութիս՝ վերակացու եղեր տոհմին յակոբայ, մինչ յեգիպտացւոյն երկրի [9] ընդ խաւարն հեթանոսաց ընտանենային։ Դու ես, որ օրէնսգէտ առնես զմեղաւորսն 'ի ճանապարհի, ըստ բանի երգողին դաւթայ. դու ես, որ [10] փոխատրես զքարեղէն սրտից կարծրութիւն՝ 'ի լոյծ կակղութեան մարմնոյ գոյութեան՝ բանի ընդունելութեան ։ Դու ես, որ բաւես ընձեռել սիրտ այլ, և ճանապարհ մի՝ երկնչել 'ի քէն զբովանդակ կենացն սահման. դու ես, որ տաս զերկիւղ քո 'ի միտս խստութեան՝ առ քեզ ուշ ունել հաւատովք, ըստ մարգարէիցն ձայնի ։

Թ. Օրհնեալ քո շրթանցդ [11] զաշխարհաստեղծ բերանոյդ՝ զնծեղէն անձրևացդ զկեցուցանօղդ կաթուած՝ մատն լսելեաց դրանց բացարան, որով զօձին խորամանկութ̃ բանսարկուին թիւնից՝ բարձցես և բժշկեսցես։ Ամենակալդ ձեռօք՝ զխօսնականացս շարժողական գործի ըմբռնեալ՝ ազդեա զօրութիւն ձայնի, որ տաս բնաւից ընտրութ̃ի բանի. [12] զի դաստիարակեալ զպատշաճականն՝ մի յանդգնաբար խօսելով իբր զնախնին՝ լքայց 'ի յուսոյդ, և անբանութ̃է մատնեցայց վանեալ յորսողէն ։ Լուսաւորեա վերստին զխաւարեցեալ հոգւոյս աչս՝ կենդանաբաշխ աջոյդ կարկառմամբ, զի մի համարձակութ̃են շիջեալ լապտեր հնչմամբ վիշապին՝ 'ի ներքոյ գրուանին ստորածածկեսցայց։ Բարձ զանօրէնութիս իմ տէր, և ընկեա 'ի խորս ծովու. [13] որ է փոքր առակ մեծութ̃է քումդ անբաւութ̃է, ըստ մարգարէին, զիմ ընկղմել չարութիւն ։ Կանգնեա կործանեալս անձին՝ [14] նշան վստահութ̃է, զի մի յուսահատութ̃են կոթող կառուցեալ՝ զծածկեցելոցն բողոքեսցէ։ Բաց հզօր և գթած՝ [15] զբժշկարանիդ կենաց վարդապետարան, զի զառ 'ի ներքոյսն մշակութ̃է կորուսչին սերմանց՝ մանկաղաւ կամացդ՝ հուպ առ արմատ խուզեալ հնձեսցես։ Դէմ եդեալ հետևել առ

քեզ բոլորիցդ ած՝ պետրոսեան օրինակութեամբն,
'ի կենցաղիս ծովու մեղանացս ալեաց՝ ընկլուզեալ . 16
մատո՛ ժամանեա՛ զաջդ կեցուցիչ՝ յօգնականութի̃ ինձ
սասանեցելոյս ։ Ընդ քանանուհւոյն ձայնի՝ 'ի խորոց
սրտիս աղաղակիմ, սովեցելոյս 17 ասպականաստապա
կաղկանձողական ամենաթշուառ վտանգաւորիս ,
ապրուստ կերակրոյ փշրանաց հացի՝ 'ի բազմազեղդ
քո սեղանոյ մասնաւորեսցես ։ Նրա՛ փրկութի̃ 18 Նիւ-
թոյ խորանիս՝ որդւոյս դառնութե̃ , որ եկիր խնդրել
և կեցուցանել զիս զկորուսեալս ։ Զի քո՛ է մեծու-
թի̃, յաղթութի̃ և զօրութի̃ . և դու ես քաւութի̃
և բժշկութի̃, նորոգութի̃ և երանութի̃ . և քեզ վայել
է փառք և երկրպագութի̃ յաւիտեանս . ամէն ։

---

(1) [illegible] ։ Աներկբայ ստուգութի̃ կիր ճանաչումն . կամ, աներկբայելի ստուգութի̃, խնամակալութի̃ ։ Կամ [illegible] . ( 2 օրին . [illegible] .) կամք ընդարձակեալ յամ բարիս , առ ամենե- ւին և յամ ժամանակի, ունելով և [illegible] անսպառելի . ոչ միայն կամիս և կարես զամ բարիս , այլ և արդեամբք առատացուցանես ա- ռանց նուազելոյ ։

(2) [illegible] ։ այլ օրին . [illegible] ։ Ո՞վ կարասցէ յայտնի գո- վութբ հռչակել 'ի [illegible] , զփոքրիկ մասն ինչ 'ի միոյ կաթուա- ծոյ բարութե̃ քո , որ միշտ պատրաստիս պատրաստել հնարս փրկութեան իմոյ ։

(3) Ո՛չ [illegible] ։ Թէպէտ և զհրեշտակս սիրէ ած , որք և զերկինս [illegible] , սատեղծք , և զամ արարածս ըստ իւրաքան- չիւր արժանութե̃ , սակայն ոչ ասացաւ 'ի գիրս յայտնապէս սիրել զնո- սա , կամ 'ի սիրելւոյն զնոսա ոչ առաւ ած անուն մականդրական . այլ վս̃ մարդոյ բազում ուրեք ասացաւ սիրել ած , և 'ի սիրոյ անտի անուանե- ցաւ . ուստի մեծ փառս համարի իւր [illegible] ։ Որով և կրկին մեծացոյց իւր [illegible] . զի 'ի վերայ Ած անուանն՝ որ արարչութե̃ն է , ընկալաւ և [illegible] , որ անճառելի անուն է , նշանակիչ առակալի խորհրդոց սիրոյ նորա . զի Ած անուամբն տէր ճանաչի . իսկ մարդասէր կոչմամբն՝ իբր հաւատարիմ և բարեկամ մարդկան ։ Եւ ահա զայս որ մեծն է՝ [illegible] առէ , ոչ եթէ զնոր ինչ և զանծանօթ յայտնելով , այլ [illegible] . որպէս զի միշտ յիշատակեսցի յամենեցունց այսպի- սի անհամեմատ գթութի̃ ։

(4) [illegible] ։ փոխանակ ասելոյ՝ զերկնային լուսա- կերպս , զհրեշտակս՝ որք լուսակերպ և հրանիւթ ասին վասն անմարմ- նութե̃ն և մաքրութե̃ն , և վասն զմեզ լուսաւորելոյն , կոչեսցէր պաշտօ- նեայս և [illegible] , իշխանս , վերակացուս [illegible] , մա- նաւանդ գործոց նախախնամութե̃դ և փրկագործութե̃դ ։ Իսկ զմահկա- նացու մարդիկ՝ մեծացուցեր [illegible] . ասելով նո- ցա , տիրել ամ երկրի . և զմն կոչելով ած փարաւոնի , և զայլս՝ թէ ածք էք ։ Այս գթութի̃ քո անցեալ քան զաշխարհ հասողութեան մտաց , [illegible] . ընդարձակեցեր մարդկան՝ արձանացուցա-

նել անթիւ Ճառս զանխառն և զծայրագոյն հեղմանէ ածային բա-րութեդ ։

(5) ՄԻՏ ՅԱԾՈՒԹԵՆ ։ իբ միտ յածութե. սոյնպէս խմ, և 'ի բանն խդ. 2 ։ 'ի մարդանալդ քո մէլ բանդ ած՝ մի յածութենէն, առատութեամբ հեղեր, պարգևեցեր, ոմանց ՎԱՍՆ ԲՆՈՒԹԵԱՆՑ, ժողովրդեան և իւրաքանչիւր կարօտելոյ՝ յօգուտ նոցա. ԵՒ ՀԻՒԱՆԴ ՎԱՍՆ ԱՅԼՈՑ, ապաքինելոյ և այլոց պաշ-տօնէից՝ յօգուտ այլոց. շնորհեցեր առեալ ասուրս կենաց, արուեստս, սքանչելիս են ։

(6) ՀՈԳԵԲԱՐՁԻՑՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ ։ Եթէ անդամալուծին՝ որ ոչ ինքեամբ պաղատեցաւ, կամ ոչ ինքնին եցոյց զհաւատս, այլ միայն հոգաբար-ձուք նորա առաջի արկին զցոյց կամ զնշանակս յուսոյ նորա, ողորմե-ցար, որչափ առաւել զօրեսցէ բան քո 'ի մաքրութիւն ախտալից մեղաց ապականեալ մարմնոյս, ԱՂԱՂԱԿՈՂԻՍ ՀԱՌԱՉԱՆԱՑ, այսինքն մարմնոյս կամ անձինս՝ որ ինձէն աղաղակեմ հառաչմամբ, կամ գոչեմ զբանս հե-ծութեան ։

(7) ԲԱՆ ԶԱՆՄԱՔՐԵԱԼ ։ Բան զանմաքուր հոգիս սրբել՝ առաւել մեծ սքանչելիք են զօրդէն մաքրեալն անաղտ պահել. վասն զի նախկինն է գործ առաջին շնորհաց. իսկ երկրորդս ենթադրելով զառաջին շնորհն՝ պահանջէ և զհանապազորդ նպաստ զօրաւոր ընդդէմ պատերազմաց մարմնոյ և գիւին ։ ԶԱ ՎԻ ԵՒ ԵՐԿՐՈՐԴՍ, անաղտութեան շնորհաց՝ առաւե-լապէս ՅԱՌԱՋԱՆԻ ՇՆՈՐՀ ՅԱՒԵԼԵԱԼ, 'ի վերայ շնորհաց մկրտութեան յաւե-լեալ, կամ գերազանցեալ քան զառաջինն շնորհ. բստ որում զի այն 'ի մանկութե առանց մեր կամաց և գործակցութե ընկալեալ, իսկ անաղտ մնալն 'ի շնորհս՝ մերով կամօք և գործակցութը. որով ԶՓԱՌՍ ՀԱՅՐԵՆԻ առաւել բարձրացուցանէ, այսինքն թէ զայն փառսն՝ որով ինքն ած փառաւորի, և թէ զայն՝ որով մեք փառաւորիմք յած երանութիւն ։ Արդ յաւելուածով բանիս զայն ցուցանել կամի, թէ զմեծն հրաշից՝ այսինքն զանաղտ մնալն 'ի շնորհս պարգևեցեր բազմաց. առաւ ասա իւր և զփոքրն՝ զկուրին, զորբեան յաղօթս մեղաց ։

(8) ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑԵՐ ՄԱՔՐԵԱԼ ։ Այսու կամ զայն իմանալ, որ ասա-ցաւ (Ելից լդ. 7.) * Բառնալ զանօրէնութիւն և զանիրաւութիւն || ։ և կամ իմանալ զսրբել ձեռաց մովսէսի 'ի բորոտութէ, յօրինակ մաքրու-թե 'ի մեղաց ։ (Ելից. դ. 7 ։)

(9) ԸՆԴ ԽՈՐԱՆՆ ՀԵԹԱՆՈՍԱՑ ։ Եբրայեցիք յեգիպտոս կալով, ոչ միայն զհեթանոսական պաշտամունս ուսան, այլ և բազումք հաղորդեցան 'ի նոյն պաշտամունս, որպէս յետ յանդիմանէ զնոսա ։ (Յդ. 14.) * 'ի բաց արարէք զածս օտարոտիս, զորս պաշտեցին հարք ձեր յայնկոյս գետոյն, և յեգիպտոս || ։ Արդ ասէ, ընդ խորան կռամոլութեան հե-թանոսացն ընտանեացն եբրայեցիք, որ ընդ օտար էր յաբրահամեան տոհմէ. քանզի որպէս ընտանութի եղին զատան 'ի հայրենեացն, նոյնպէս 'ի կռամոլութէ նոցա ։

(10) ՓՈԽԱՐԷՆ . . . 'Ի ԼՈՅԾ ԿԱԿՂՈՒԹԵ ։ փոխես 'ի լուծուն կակղութե, կամ 'ի լոյծ կակղութի ։ Զխստացեալ սիրտս փոխես 'ի կակղութի մարմ-նեղէն՝ առ 'ի ընդունել զսերմն ածային բանից ։ ԲԱՐԵԱՒ ԸՆԾԱՅԵԱԼ, կա-րող ես առնել զսիրտ նոր, և զճանապարհ բարի՝ առ 'ի երկնչել 'ի քէն զամենայն ժամանակս կենաց ։

(11) ԶԱՇԽԱՐՀԱՍՏԵՂԾ ԲԵՐԱՆՈՅԴ ։ Բերանոյ՝ որ աշխարհաստեղծն է. այսինքն քո այդ. զի որպէս մարմնին՝ այ ասի՝ վասն միաւորութեանն յանձն բանին այ, սոյնպէս մատունք մարմնոյն՝ և ած մարմնոյն այ ասին ։ Սոյնպէս ՄԱՏԵՆԻՆ ՀՆՉԻՒՆ ասի Թուքն, այսինքն այ, կամ առ ած բանն վերաբերեալ ։ Ըստ այսմ և զինի ասի՝ ԱՄԵՆԱԿԱԼ ՁԵՌՆ. և այլուր,

արարչագործ ձեռն , բազուկ ; ևն . այսինքն ամենակալին ձեռն , արարչագործին բազուկ : Այդ զնծային զԹուքն կաԹեցուցեալ սաէ , օծցես այնու զականջս հոգւոյս . որպէս զի բացցին 'ի լսել զկենդանարար բանս քո , և այնու բարձցես , բժշկեսցես զխորամանկուԹի օձին , որ են Թէւնք բանսարկուին սատանայի : Թէպէտ 'ի նմանուԹի առնու զզօրուԹիւն մարդկային Թքոյ , որ օրհնեալ սուէն 'ի բերան օձի՝ սպանանէ զնա :

(12) Ջի տաաֆարաֆեալ ղղաաֆըղաճաֆանն : Անձային ձեռօքդ կազմեալ զիզու իմ , շխօսնաֆանաց գործի , որ է գործի բանաւորացս կամ խօսելոյ . Կ օրէն . շխօսաֆանաց , կամ նաղս . ) առ'ի նմա զօրուԹի ձայնի . որպէս զի ասեալ զպատշաճ խօս , և մի՛ յանդգնուԹբ խօսելով իբր անախնեն ազամ , անկցց 'ի յուսոյդ . և անբանաւոբէ մատնեցայց , անպատասխանի եղէց , 2 օրէն . անբառաբէ , և մարԹ է խմանալ , անբաւ վշտաց և տանջանաց :

(13) Որ է ծոծր աաաֆ : Ծոծի է փոքր օրինակ քո անբաւ մեծուԹեդ :

(14) Նշան Վըփահաոբէ : Արձան , կամ ամրուԹի յուսոյ . զի մի՛ յուսահատուԹեն խոբող , քար կանգնեալ . ( ոսկեղի Թաշ . ) ցի՝ զի մի՛ յուսահատուԹեն իբրև կոԹող կանգնեալ 'ի սրտի իմում , զծածուկ մեզս իմ հրատարակեսցէ :

(15) Ջէծշխարանեդ կեռաց : Բաց զմտաւան ուսմանց , կամ զխորդապետուԹի հոգևոր բժշկուԹեդ . որով զաա 'ն ներթոյն , զնեղքին բողբոջս սերմանց սատանայի՝ մանդաղաւ քո հրամանիդ յարմատոց անտի խուզեալ կորեսցես . վասն զի սերմնիք ածային բանիցն զուարԹուԹբ ընկալեալք՝ 'ի բաց հանէն զբոյս սատանայական սերմանց :

(16) Մաքա ժամանեա ղաշը : Կամելով առ քեզ գալ ըստ օրինակին պետրոսի 'ի ծովու աշխարհիս , եղէ 'ի վտանգ ընկղմելոյ . այլ ժամանեամ հաս , մատո մերձեցո զաջդ ապաւէն , զոր օրինակ պետրոսի արարեր :

(17) Աղաղաֆանաաղաա : Հին ըծ . սաէ՝ լաւին է , զոր տան շանն . և ըստ այսմ ասենք խմանամ՝ շան կերակրոյ սպասօղ : ԵԹէ զբառն աաղաֆանի խմասցուք շուն որսական , ըստ այսմ աաղաֆանաաղաա նշանակէ՝ իբրև զշուն սպասօղ կերակրոյ կամ փշրանաց : Սակայն Ճշգիւ քննեալ , աղաղանի 'ի պարսիկ բառէն աաղ կամ եաղ , ցի ձի , նշանակէ ձիաւոր որսորդ . վասն զի 'ի գիրս փիլոնի . ( ծննդ . բան գ . համար ՃԿԷ . ) եսաւ կոչի աաղաֆանի , փոխանակ ասելոյ՝ հմուտ որսոյ . և սոյն մեկնեալ եսաւ . * Այսպիսանին ընդ շունս և ընդ գաղանս առնէ զկեր զգեգերուԹի վարուց || : ցի որսորդն շունս ընդ իւր շրջեցուցանելով , յանչէն և 'ի գազանաբնակ անտառս դեգերի : Յայս միտս հայի և 'ի գիրս Պիտ . Թ . 5 , առէնի յաղագս որսորդուԹ . * Հետամնացեալ զասպականեացն հոյլս || : ցի զբազմուԹի որսորդայն : Արդ՝ ըստ այսմ աաղաֆանաաղաա նշանակէ սպասաւոր կի՛ ծառայօղ որսորդի . որպէս է շանն որսական : Իսկ կաղկանձաղաֆան՝ նշանակէ ( վընկվընկացօղ . ) Յանձն առնում և ես սաէ , ընդ քանանացի կնոջն զանարգ կոչումն շան . միայն զի և ինձ մանաւորեսցես 'ի փշրանաց կենարար հացիդ :

(18) Նէ-Բաղ խաբանեա : ցի , ով 'ի ձեռաց բաբելացւոց , և առ մակաբայեցւոցն 'ի ձեռաց հեԹանոսաց փրկեցեր զպաշտ խորանին և սաՃարին , նոյնպէս փրկեա 'ի ձեռաց դիւաց զանձն իմ , որ նիւԹ եմ խորանի քո եկեղեցւոյ՝ հաւատովքս , այլ և կրօնաւորուԹեամբ և քահանայուԹեամբ :

Մերձաւորին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա՟յ :

# ԲԱՆ. ԼԶ :

ա. Եւ քանզի անթիւ են յաճախեցեալ եւ դե-
րազանցութեամբ միշտ առաւելեալ փըր-
կանաւորդ արգասիք շնորհաց՝ [1] առ պարտուցս իմոց
առաւելութ՟ի, չարչարանացդ հանդէս եւ յանձնա-
ռութ՟ի : [2] Զափդ ամփոփիչ ամենից հոգւոց՝ գոյից
արարիչ՝ 'ի գործարանի մահուն նշանի խաչին հե-
ղուսեր, զի զձեռնարկութ՟ի իմ ընդդիմութ՟ե կամաց
քոց՝ լքցես : [3] Զընթացողականդ լծակցութ՟ի եր-
կոցունց ոտիցդ կեցուցանողաց՝ յանարգելութեանս
պատճառ՝ 'ի պատժարանի փայտին մածուցեր, զի
զփախուցեալս վայրապութ՟ի թշուառացելոյս զրա-
ւականեսցես գթածաբար :

բ. Որ զօսանալ [4] ձեռաց կռփողացն հրամայեցեր՝
օրհնեալ գագաթանդ, որ զթզենւոյն տունկ առժա-
մայն չորացուցեր, զի եւ զառ իս ներելոյդ օրինակ
կանխաւ աւետարանեսցես : Որ զանողացն ապիրա-
տութ՟ե [5] զխոստովանեալդ Ա՟ծ՝ սպառնացար, որ զա-
րուսեակն մթացուցեր, զի մահացելոյս անձին՝ բա-
րութ՟ի հանդստեամբ հանդերձ գործեսցես : Որ ըղ-
հայհոյչացն [6] հնարաւոր չարաբանութ՟ի կապտեցեր,
որ զլուսնին պատկեր երանգաւ արեան գունեցեր,
զի զանհամարձակ լեզուս 'ի գովեստ քեզ զօրացու-
ցես : [7] Որ նախատողացն մոլեգնութ՟ե սաստեցեր,
որ զտարերս սասանեցեր, զի զթշուառացեալս գլուխ՝
գթութ՟եդ օծմամբ իւղեսցես : Որ 'ի մոլորեցուցիչն
կարդալ զքեզ ա՟ծասպանիցն՝ զօգուած ծնօտիցն
բաժանեցեր՝ քակտեալ 'ի միմեանց, որ զկարծրու-
թ՟ի վիմացն հերձեր, զի զանունակս բարեաց հոգիս՝
'ի բերմանէ ընդունայնութ՟ե ողորմութ՟բ հանդար-
տեցուսցես : Որ զպահապանացն սուրս՝ [8] ընդերաց
իւրեանց մատուցեր, որ զորովայն օձին սահեցման
հողոյ մատնեցեր, զի զտառապեալս մարմնոյ ոսկերս՝
իբր 'ի գանձարանի պահեալ, կենաց յարութ՟ե ար-

ժամանացուսցես ։ Որ 'ի կնքելն զշիրմին փականս[9] կեն-
դանակիր քո գերեզմանին՝ անդրէն յորսայսեալս
զնոսին յանդունդս երկրի սուզեցեր , զի 'ի տապա-
նակի անձինս զնշխար լուսոյդ հանգուսցես ։ Որ 'ի
համբաւելն զքեզ կորուսեալ , և [10] իբր զերկրաւոր
մարմին գողացեալ , համայնաջինջ և ամենասպառ՝
զսերմն ծննդոցն կրճատեցեր , զի զիս զանարժանս
յիշատակի ընտրութե բարեաց՝ անկորուստ և անմխա-
սելի՝ ընդ փրկեցելոցն հաղորդեսցես ։ Որ յարծա-
թոյն [11] կրկնակապէն կաշառաձգութի , որ 'ի գան-
ձարանէ հօր քում նուիրաց քեզ գրաւ մատնութե
և անարգութե մամնաւորեցին՝ զուրացողացն մոլեգ-
նելոց , ըստ հին հարուածոց համոյն մովաբու՝ 'ի
յարձան քարի յեղանակեցեր , զի զիս զվրիպեալս 'ի
հաստատութենց՝ և ընդ իշխանութբ մահու վաճա-
ռեալս՝ արեամբ քո փրկեալ , 'ի հաստատուն վիմդ
կառուսցես ։ Օրհնեալ կրկին , օրհնեալ վերստին ,
յամի միշտ օրհնաբանեալ՝ յաւիտեանս յաւիտենից .
ամէն ։

---

(1) [illegible] ։ Փրկաւէտ գործք շնորհաց քոց միշտ գերա-
զանցութբ առաւելան առ իս , որով և իմ պարտիքս առաւելուն առ
քեզ . և 'ի մէջ այնչափ կարի հրաշալիք եղեն հանդէպք չարչարանացն՝
զոր կամաւ յանձն առեր ։ 'Ի կարգ արկանէ սպա զմասունս ինչ տէրու-
նական չարչարանացն , յարելով զայս աղօթս առ անցեալն՝ վասն աւար-
մանն որով ասաց , եկիր խնդրել և կեցուցանել զկորուսեալս . զի ցու-
ցանիցէ՝ զխմրդ և իւ կեցոյց քն ։

(2) [illegible] ։ Ի զակդ անկոփոգնդ կամ ժողովողնդ ամ հոգւոց ,
և արարողնդ ամ գոյացելոց ։ Հայի 'ի բանն յորայ . ( Ժ . 8 . ) * Ձեռք
քո արարին զիս || . և ( ԺԲ . 10 . ) * Ո՞չ 'ի ձեռին նորա իցէ շունչ ամ
կենդանեաց , և ոգի ամ մարդոյ || ։ Զայդ ակիմի ասէ՝ 'ի խաչին հե-
[illegible] , բևեռեցեր , յանձն առեր զի բևեռեսցին . որպէս զի [illegible]
[illegible] . ( 3 օրին . [illegible] . ) այսինքն զյանդգնութի իմ ընդ-
դիմանալոյ կամաց քոց [illegible] , [illegible] , [illegible] , [illegible]
[illegible] ։

(3) [illegible] ։ Զերկոցունց ոտից կեցուցիչդ զհամին-
թաց զօրութիւն , [illegible] , վասն իմոյ անարգելութեա և
անզգուշութեա յընթացս պատուիրանաց քոց , 'ի պատժարանի խաչին
[illegible] , յանձն առեր անդապէս արգելուլ . որպէս զի [illegible]
[illegible] , զփախչող անհրաժանգութիւս , զստահակութիւս իմ [illegible]
[illegible] . ( մի օրին . [illegible] ) [illegible] , զալեցես , ըմ-
բռնեսցես , 'ի կապ արկանիցես ։ Բայց լաւ օրինակն այլազդ ընթեռ-
նու , [illegible] ` [illegible]
[illegible] . և խմանի , զկեցուցանող

տոս քո անդեցեր 'ի պատուական փայտին՝ որ պատճառ կեր գործի եղե-
խոյ անարգել անհնազանդութեան 'ի նախաստեղծն, յորժամ հուպ
մերձեցան 'ի ծառն արգելեալ: Խմաստքն անբաւ են. ես ինքնին և կեր
'ի նախաստեղծն անարգել գնացի ոտիւք մարմնոյ, և կամ բաղձանօք
զգայականօք, խոյս տուեալ 'ի ճանապարհաց քոց, և յօտար շաւիղս
ընթանալով. վասն այն զկենդանարար զքո զոտս 'ի պատուականի խա-
չին անդեալ յանձն առեր, որով զայլեւս և զկնդ ոտիցս զանարգել
ընթացս իմ:

(4) Ձեռաց կոփողացն: Ոչ հրամայեցեր գամանալ, չորանալ ձեռաց
հարկանողացն օրհնեալ գագաթանդ, որ հարկանողաց զօրհնեալ գա-
գաթնդ. որ բանիւ եւեթ չորացուցեր զանբոյժ տունկ թզենւոյն՝ ըն-
թանալին և զկոյս. զինչ դժուարին էր քեզ նոյնպէս զմեղէն ձեռն
չորացուցանել վաղվաղակի, այլ զի ծանուցանիցես զառ խ ներելոյդ
օրինակն:

(5) Զխոստովանեալն ԱԾ: Ոչ սպառնացար, ոչ սաստեցեր չարութեան
գանողացն զխոստովանեալն ԱԾ, այնոցիկ որք կամ ճանաչէին զքեզ
ԱԾ, և կեր յայլոց լուեալ էին, և սակայն տակաւին զյետին չարու-
թին կատարէին գանահարութբ. Իսկ դու Տէր՝ որ զարմանալին, զարեգակն
մթացուցեր, խաւարեցուցեր, լռեցեր առ գանիչսն՝ սակս խոյ հանդըր-
տեան: Լաւ օրէն. սովորաբար դրէ առագաստ. և զայս բառ փոխանակ
արեգական առնու որ վարդապետս նախ 'ի Յիշատակարանին, այլև 'ի
գովեստ Առաքելոց, և մծբնայ և 'ի պատմ. Ապարանից խաչին:

(6) Հնարաւոր կապուտանութ: Զննդաւոր չարախօսութի հայհոյչացն ոչ
կապուտեցեր, ոչ պապանձեցուցեր. ոչ լռեցուցեր, ոչ կարճեցեր 'ի բե-
րանոյ նոցա իբրուսցի բանիւք, ոչ 'ի բաց առեր զպատրուակ ատութեան
նոցա: Բայց թուի թէ մարթ է ստամոք կապուտեցեր առնուլ 'ի կապոյտ
բառէն, այսինքն կապուտակել, իբրև թէ զննդաւոր լեզուս կեր զչըր-
թունս հայհոյչացն ոչ կապուտակեցեր, առ 'ի պատիժ ստաեցուցանե-
լով զարկանն. (որ և ռամկ. ասի՝ մօմօռ ընել:) Զայն միտս անհար-
կէ առնուլ զկնի, զոր՝ որ զերեսս լուսնին փոխեցեր, ներկեցեր 'ի գոյն
արեան մթագին, ևս առաւել կարող էիր զփոքրիկ անդամ լեզուի ներ-
կել 'ի կապոյտ՝ սատուցմամբ և այտուցմամբ: Սակայն ոչ արարեր զայդ-
առ նոսա, այլ դու ինքն լռեցեր՝ տալով խմբամ լեզուի համարձակու-
թի վարերան հնչել զօրհնութիւն քո փոխանակ հայհոյանաց նոցա:

(7) Ու նախատողացն: Ոչ սաստեցեր կատաղի յանդգնութե այնոցիկ՝
որք փչէին պտական նախատեցին զքեզ իբրև սուտ թագաւոր, կարօղ
գոլով զգլուխս նոցա խլել 'ի ներքուստ՝ դու որ զերկին և զերկիր ստա-
ամնեցուցեր. այլ տարար համբերութբ այնպիսի նախատանաց. որպէս
զի օծմամբ շնորհաց քոց զգլուխ եկեղեցւոյս զարդարեսցես:

(8) Ընդերաց խորեանց: Զոտս զնոտարացն պահպանողաց ոչ յալիս
նոցա մխեցեր, ոչ ընդ սուսեր իւրեանց հաներ զնոսա, զոր օրինակ զո-
րովայն օձից ընդ հող տապալեցեր. որպէս զի քոյով յանձնառութբ
ինքնին պահապան լինիցիս տառապեալ մարմնոյս ոտիցս առ անմահն
կենդանութի:

(9) Կենդանակիր առ գերեզմանին: 'Ի կնքել հրէից զդուռն գերեզմանին՝
որ կրէր կամ ունէր յինքեան զմարմինդ կենդանարար, կամ որ կեն-
դանի էր ամծութբն միաւորելով, ոչ յորդորեցեր, յերկիր կործանեալս
զնոսա յանդունդս ընկղմեցեր. որպէս զի 'ի փառաւորին, 'ի գերեզմանի
մարմնոյս հանգուցես, պահեսցես մշտնջենաւոր, զմեղացուածս օծ-
ման քահանայութե, կեր զնշխար որ մարմնոյ քո, իբրև ճրագ կամ կան-
թեղ՝ նշանակ յարութե. որպէս և սովորութ էր առաջնոցն՝ դնել կան-

թեղ 'ի գերեզմանի ննջեցելոց, և ոմանց նաև զմտոն 'ի նը խորհրդոյն :

(10) Իբր ւըրկրատար մարմն : Յորժամ սուտ թէ՛ համբաւեցին հրեայք վասն քո՝ գողացեալ յաշակերտացն իւրոց զհասարակ մարմին այլ մարդկան, որ անխնամ և անպահապան թողեալ, դիւրին է առ 'ի գողանալ, դու ոչ յանդիմանեցեր զսուտ նոցա խայտառ ջնջելով զծնունդս նոցա իբրև չեղեալս կամ կորուսեալս. զի խնայելովդ առ նոսա յայտ առնիցես՝ թէ առաւել ես զիս՝ թէև անարժան յիշատակի՝ անկորուստ պահես ինձ :

(11) Կրկնակաղէն : Կապէնք ասին վարձք հնացելոց կամ պոռնկաց, և նմանութը՛ որ և լցէ վարձ անարժան : Կրկին անգամ առէ՝ արծաթ վարձս անխրատութեան իւրոց կաշառ, 'ի գանձարանէ հօր քո նուիրաց, 'ի լաւ օրին. նուիրանաց, այսինքն 'ի գանձարանէ տաճարին առեալ մաղաքսորէսին, բաշխեցին, տէղ վասն քո, գրամ մարգարէն, իւրոց հաստատունս մասնութեան յուդայի, և աշակերտութէ, վասն անուան կամ սուտ վկայութե զինուորացն : Արդ այսպէս յանխրատել նոյն կրկին անգամ 'ի գանձարան տաճարին, ոչ յարձան քարի չեղանակեցեր, փոխարկեցեր զուրացողաց մուրհնելոյ, առ ըւելեալ խնանի հոգացեալ անուն լինչ, այսինքն, զգաս կամ զժողով մոլեգնեալ հրէից՝ քահանայից. ըստ հին պատուհասի հանոյն մոլաբոռ, կնոջն ղովտայ, որ եղև հան, այսինքն մեծ մայր, մահ մոլորեցելոց : (Ծննդ. ժթ. 37 :) Զոր օրինակ երբեմն 'ի կամել Հեղիոդորոյ իշխանին ձեռն արկանել յաւանդս տաճարին, պատուհասեցաւ անդէն՝ անզգայ, թմրեալ և անբարբառ, (Բ. մակաբ. Գ. 27. 28.) նոյնպէս կարօղ էիր առէ՝ զժողով կաշառակեր քահանայիցն 'ի քար անզգայ փոխել նման կնոջն ղովտայ՝ իբրև անխրատելոյ 'ի քարինս տաճարին : Բայց անտես արարեր, կամելով զիս զանհատ փրկել արեամբ քո յիշխանութէ մահու, և յանսասանելի վէմդ հաստատել : Բառն հանոյն՝ այսպէս գրի 'ի լաւ օրինակս եթէ՝ Նարեկին, և եթէ Բ. տիմոթ, ա. 5. խաղ հանոյն գրել՝ ասորութե է գրչաց ոմանց, որք լինին գրեն զայսպիսի անուանս, որպէս մարդւոյն, արծաթւոյն, գլխերւոյն են. տես և խր. լծ. 8 : Աստի կարծիք եղեն թէ ուղղականն լցէ հանոյ, և այն եմուտ ես 'ի բառագիրս և 'ի կերպուութե. սակայն 'ի քննութէ մատենագրաց ոչ գտաւ հանոյ, այլ հան, հանոյ :

---

Աերտուէն յառնելուած հրէէն հեծութեն՝ նորին հոգւոյ, առ նոյն աղէրս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

## ԲԱՆ. ԼԱ.

ա. Արդ՝՝ այդ գումարտակ վերադասեցեալ բարեշնորհութեան քոյդ պարգևաց առ իմս երախտիս, ո՜վ ամենագութ բարերար գոլեալ և ամենազօր, թէ և սակաւք շարադրեցան աստանօր եղեալ, այլ անքայագոյնք են, և իշխանականք նիւնակալութեանց, որդիք զօրութեանց, ծնունդք վէհից,

մեծափառք, լուսանորոգք, և հրաշապատիւք։ Յաղ-
թողական վերամբարձութբ՝ դրօշիւք հռչակեալք
ըստ գլխոց գլխոց՝ պսակապաճոյճ գեղազարդելոց, 2
բերեալ ընդ ինքեանս անթիւ պետութիւս օրհնաբա-
նողաց, համբոյրս՝ հեզս՝ երջանիկս և խաղաղականս
ածային հարազատութեց՝ այնոցիկ նահանգաց, զո-
րոց մարգարէն մաղթեաց ասելով, զարթո տէր զզօ-
րութիս քո, և եկ կեցուցանել զմեզ. [3] որք յոյժ զօ-
րէն հալածել զմեզս, և զանյուսութէն կարկուտ հա-
լել և փախուցանել, քան թէ նախամարտիկն զի-
նուորութի երկնային պարուն՝ զգիշերավարն խա-
ւարասէր սկզբնաներհակ՝ բարւոյն այ։ Քանզի և
զընաւն այսքանեաց ձրից որ 'ի բարձրելոյն ինձ
անձրևեցաւ՝ տկարիս, թշնամւոյս՝ և ապախտաւոր
ծառայիս, անճառ է ասել. իսկ եթէ համարձակեսցի
ոք զօրել խօսել, զսակաւս 'ի բազմացն՝ քան թէ 4
զիսկութի համանգամայնիցն. առ այսոսիկ՝ զառա-
ջին նիւթն յիշելով յորմէ հատեցաւն, իբր ըղ-
տկար ոք նկուն՝ [5] 'ի զօրութէ մեծէ հերքեալ պար-
տեսցի։

Բ. Այլ [6] թէպէտ և այսպէս գրեցի, և դարձեալ
զնոյն վկայեմ առ թերի խակութիւն հողոյս՝ և կա-
տարելութիւն հաստողին, և առ բարիսն իմ չար-
ժանութի, սակայն ամենալոյս աննախանձ և բազմա-
զեղուն գովեալ արարչութեդ զօրեղութե վանեալ
էն կարծրութիք արտաբերութ սրտի բանսարկուին.
որ քարին աւակաւ՝ յուսահատն վհատութ, սպառ-
նամբ խոպանացման աղբերացս երկուց, որ 'ի զգայա-
կանս եդեմայ բղխել պատրաստեաց տնկօղն, զի
ոռոգեալ ծաղկեսցի նոյնաւ՝ որ 'ի յիս բարեգործու-
թե կենսատունկն դրախտ, ահա մի ցամաքութ ար-
տասուացս՝ աղանդահնար պատրանօք՝ չարաչար խո-
րամանկեսցէ վերստին հանել 'ի փափկութէ նախ-
նում վիճակին։ Իսկ [7] յորժամ կացցէ ած՝ համբար-
ձեալ հրաշիւք արուեստից 'ի մէջ աստուածոց հաշ-
տարանացն խաղաղութբ, բարձեալ ընդ ինքեան
զշնորհացն կտակ, առ որ ամենայն վնասակարութիք
խարդախութեց և կարճմտութիւնք սրտնեղութեց՝
իբր ընդ վիմեղէն լերին սնդուե բաղխեցեալ ցնդին,

ջրոյ օրինակաւ սակաւու հեղեալ, և կամ հողոյ խոր-
տակմամբ փշրեալ:

Գ. Արդ՝ չև իմ կշտամբանքս՝ ըստ ձայնին յոբայ՝
'ի մարդկանէ իցեն, այլ յամենատես աչաց վերին
հրամանիդ մտեալ ընդ խղճիս տագնապ երկիւղիս,
8 սոսկմամբ սասանեալ յոյժ կարծեաց, ապաւինիմ
և արդ անձամբ բեկելով 'ի յոյսդ հաստատութեան
կենդանի անեղծ. զի ողորմութ՟բ նայեցեալ 'ի յիս
իբր 'ի պարտաւոր կորստեան պատժոց, առաջի բա-
րերարութե՟ երկնայնոյդ յանդիման եղեալ՝ 9 ապա-
ձեռն անթօշակութ՟բ, զքոյդ երախտիս անպատում
փառաց բերելով ընդ իս՝ յուշ քեզ արկանեմ. որ
ոչ մոռացմամբ զեղծեալ նիրհես, և ոչ թարթափ-
մամբ աչաց ընդմիջեալ՝ զհեծութի՟ կրից անտեսես:
Մերացո՛ յինէն աղաչեմ զքեզ, խաչիւդ լուսոյ՝ 10
զնեղդ վտանգիս. հոգարկութ՟բ տրտմութեդ՝ զտա-
րակուսելի տխրութի՟ս. փշանիւթ պսակաւն՝ զեղ-
բոջ մեղացս. զարկուածով գանին՝ զհարուած մա-
հուս. ապտակին յիշմամբ՝ զկարիս ամօթոյս. թըշ-
նամանօք թքոյն՝ զանդոսնելի գարշութի՟ս. լեղւոյն
ճաշակմամբ՝ զհոգւոյս դառնութի՟: Ահա՛ քո են այս
ամ՟ բարութի՟ք անբովանդակելիք՝ ա՟յ միոյ միածին
որդի. առ որովք զչարութի՟ս իմ յիշատակեալ՝ զա-
մենօրհնեալ անուն քո կարդամ բարձր աղաղակաւ
11 իմանալեացս պաղատանօք: Տե՛ս 'ի խոստովանութի՟
զղջման պարտութեան ամաչեցելոյս, և տուր ողոր-
մութի՟ որդւոյս սատակման մահուն անմահի. զի 'ի
բազմութե՟ իմոցս մեղաց՝ վերստին կրկնեալ նովին
աճեցմամբ առաւելութ՟բ՝ քո ողորմութի՟դ աւետա-
րանեսցի, հռչակեալ հնչմամբ ահաւորութե՟ յերկ-
նի և յերկրի: Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով
փառք յաւիտեանս. ամէն:

---

(1) Այս գունդարփակ: Խումբ, կամ կարգեալ բազմութի՟ վերոգրեալ քոց պարգևացդ, առ քոն երախտիս, առ 'ի բարերարել նմա: Աստանօր ն՟ք վարդապետս զանազան մասունս և զպտուղս չարչարանաց փրկչին՝ օրինակէ 'ի բանակ աղատագունդ զօրաց՝ որոշելոց պէսպէս դրօշակօք յաղթողականօք առ 'ի պատերազմիլ ընդդէմ մեղաց և սատանայի: Աստի առէ՝ թէպէտ և սակաւս եդի, այլ արտայայտական են, եւն. վասն զի ք՟ի արքային են կիրք, և նորա խնդրակալութեն գործք. ոչ նահա-

պետաց վաստակք, ոչ սէր միջնորդութիւնք, ոչ հրեշտակաց պաշտօնութիւնք, զի այսոքիկ ծառայից են, և ծառայականք: Դարձեալ. ոչ կրկզմովսիսական օրէնս՝ տեսանք, այլ [illegible], զօրութք առ ամենայն բարեգործութիւս մեր. [illegible], յամենայն Երրորդութիւն անսեւեալք. զի հայր մանուկ, որդին կրեաց, հոգին հաստատեցաց: Որով [illegible] են քան զերախտիս արարչագործութե. [illegible], նոր լուսով ածայնի սիրոյն փայլատակեալք, և [illegible] [illegible]. հրաշալի պատուով պայծառացեալք, յաղթող բարձրանալով 'ի վերայ մահու և դժոխոց և սատանայի. և որ սիրալին է՝ յաղթելով չարութե և խաւարութե մարդկան. զի որոց ոչ յաղթեաց զօրութիւն և մեռուցանելոյն, յաղթեաց սիրոյն և մեռանելոյն: Որպէս և ինքնին ասէր առ հրեշտակս. (եսայի. կգ. 3.) * Ծննեցի զնոսա բարկութբ, և իջուցի յերկիր, և զնմ հանդերձս իմ թաթաւեցի || . ընթերցիր անդ և զայլ յաջորդսն, որք զնմ վերադրեալդ հաստատեցութեանն. և ասա առ 'ի բերան և 'ի սիրտ քո զայն միասնայեալն մարդարէին. (անդ. համար. 7.) * Զողորմութի տն յիշեցից, զգովութիւն տն յուշ արարից. յամենայնի զոր հատուցանէ մեզ տէր, || են: [illegible], զանազան դրօշմք ծանուցեալք ըստ պէսպէս մասանցն՝ գեղեցիկ պատկառ զարդարելոց. զի այլ դրօշ է նախատանաց և հայհոյութեց փրկչին. այլ դրօշ զոպարտութեն. այլ դրօշ ինքնադրոծ նեղութեն, և այլ դրօշ՝ յօտարացն կրելոց: Դարձեալ, այլ դրօշ վշտաց հոգւոյն, և այլ՝ ցաւոց մարմնոյն, այլ՝ խոնարհութեն, այլ՝ հնազանդութեն, ըստ այսմ և յայլսն:

(2) [illegible]: Այս հանդէպք չարչարանաց փրկչին ունին ընդ ինքեանս 'ի զինին զպետութիս հրեշտակաց [illegible]. որք օրհնեն զզօրութի, զսէր և զյաղթութի չարչարեցելոյն, և ոչ թէ օգնեն նմա: [illegible], ունին զպետութիս հանդերձս, այսինքն քաղցունս, հեղուեն: Եւ այս պետութիւնք են [illegible], յանծայլին ընտանեացն, կամ 'ի ներքին պաշտօնէից նդ, [illegible], այնոցիկ դասուց երկնից, զորոց մարգարէն գուշէր խնդրէր, (սաղմ. հթ. 3:) [illegible]. զզօրս քո զհրեշտակս զօրէն 'ի գովեստ և 'ի զարմացումն սիրոյ քո առ մարդիկ, [illegible] միայն 'ի կեցուցանել զմեզ:

(3) [illegible]: Այս [illegible] ոչ ցուցանէ զհրեշտակս, այլ զհանդէս չարչարանաց փրկչին, որք իւրեանց զօրութ և մեր յիշատակելովս՝ առաւել կարեն հալածել զմեզս և զյուսահատութի, [illegible], յառաջամարտիկ զինուորն, կամ զօրապետն երկնային զորաց միքայէլ՝ [illegible], զարուեստն սատանայ, որ առաջին ներհակ կանգնեցաւ բարւոյն նդ:

(4) [illegible]: Զբուն չափ բովանդակ պարգևացն քնի ոչ կարէ խօսել, այլ զամփոփ 'ի բազմացն: Սակայն և [illegible], 'ի վերայ սակաւուց ճանաչմանն, յիշելով [illegible] զհողն՝ յորմէ կազմեցաւ, ընդ նմին և զտկարութի իւր, յաղթի՝ տեսանելով զինքն անկարող 'ի ճանաչել և 'ի բացայայտել զայն սակաւն:

(5) 'ի [illegible]: 2 օրին. 'ի [illegible]:

(6) [illegible]: Թնկպէս և ասացի, թէ վասն հոլածին սկսբութե մերոյ ոչ կարեմք հասու լինել նաև սակաւ պարգևաց քոց, և դարձեալ զնոյն խոստովանիմ [illegible], վասն ծանուցանելոյ զանկատարութի կամ զանյարմարութի հոլեղէն բնութեն, և զկատարելութի արարչին, [illegible], և վասն ծանուցանելոյ զանարժանութի իմ առ բարիս սակս մեղաց իմոց, սակայն ամենա-

զօր և աննախանձ արարչին՝ Հաննէալ էն հործրութէ. այսինքն յաղթելի են նաև խստասրտութիւք սատանայի, վասն որոյ ոչ կարէ նա արտաքս բերել զզղջումն. այլ մինչդեռ ևս յաղթելի է տկարութեն հողոյս՝ առ 'ի ձանձրանալ և յընդունել զպարգևս քո: որ փորին ստախա. այսինքն որ և սատանայից ըստ նմանութե կարծր քարի՝ յուսահատութբ ջանայ խառացուցանել զմիտս իմ, ցամաքեցուցանելով զերկուս աղբիւրս աչացս, զորս եդ ած 'ի բնութեն՝ առ 'ի ոռոգանել զպտղագործութե դրախտն: Այսպէս զօրութբ բոյ խնամոյն է 'ի բանիս առ աւերողն տալոյ զնմանն. ցո ջանայ խառացուցանել, են: խոկ սանձն. Այսա մի ցամաքոր, խմանի. վս որոյ մի ցամաքեցուցանելով զարտասուս, աղանդաւոր պատրանօք, 'ի ձեռն մոլորեցուցիչ խաբէութե՝ հնարեալն զրկել զիս 'ի փափկութենէ անմեղութեան վիճակին: Բառն, բաղմաղէղան, 'ի մի օրին. և 'ի հին լուծ. զնի բաղմաբեղան: Այնպէս խոզանազման, 4 օրին. խոզանման կամ խոզանմամբ:

(7) Յործամ կայծէ: Յորժամ քո ած կայծէ յուսոյ դատաստանի՝ բարձրացեալ հրաշիւք արտաքոց, սքանչելի գործեօք խնամութե իւրոյ, 'ի մէջ արարածոց, 'ի մէջ առաքելոց և մարգարեից (ըստ սաղմոսին. ձա. 1:) հաշտարանաց խաղաղութբ. ոյք հաշտեցուցիչք եղեն մարդկան ընդ այ՝ զխաղաղութին այ քարոզելով, յայնժամ բարձեալ ունի ընդ խոհեան զշնորհացն կապ, յանդիման առնէ զշնորհս փրկագործութե իւրոյ. յորմէ ամենայն ներգունէք սատանայի, և յուսահատութ մարդկան ցնդին՝ իբրև ջուր բախեալ ընդ վիմեղէն լեառն:

(8) Սովամբ տառանէալ: 2 օրին. տոխամ: Թէպէտ և 'ի մարդկանէ ոչ կշտամբեցիմ ես, սակայն առ ամենատես գիտութե դատողական քննութեդ տագնապեալ 'ի խիղճ մտացս, տոկամ սասանիմ ած երկիւղիւ: Բայց 'ի վերայ այսր ապաւինեալ ցաւագին անձամբ յանսասանելի յոյդ, Թախանձեմ զողորմութիդ քո:

(9) Աղաչեմ անտօսալութէ: Յանդիման եղեալ երկնաւոր բարերարիդ՝ դատարկաձեռն, և ոչ ունելով Թոշակ կամ պաշար, միայն զքո երախտիսդ բերեալ յուշ արկանեմ, Թէպէտև ոչ մտանանս բնաւ, և ոչ անտես առնես զհառաչանս ներքին ցաւոց մերոց: Յետ այսր 'ի կարգ արկանէ զերախտիս փրկչին, յարմարելով առ իւրաքանչիւր զնմանութեանն:

(10) Զխեղդ վտանգիս: Բարձ յինէն լուսափայլ խաչիդ զյուսահատութին, զոր իբրև խեղդ վտանգաւոր արկանէ սատանայ 'ի միտս իմ:

(11) Խոնարհաբար պաղատանօք: Այժմ առ այսպիսի անբովանդակելի երախտիս քո յիշատակեալ զչարութիս իմ, զքո երկրպագելի անունդ՝ զզօրաւորն և զփրկագործ կարդամ ինձ 'ի փրկութի բարձր գոչմամբ, այս է՝ մտացս և հոգւոյս պաղատանօք, և ոչ եթէ զգալի ձայնիւ: Եթէ իմն չարութի աղաղակէ յերկինս իբրև զարդանացոյն և զինուէացւոց, ահա և ես զաղաղակ փրկագործ կոչից քոց, որոյ հեղումն արեանդ առաւել խօսի քան զաբելին, յերկինս վերամբառնամ արտախ զղջմամբ: Տէր, հայեաց 'ի խոստովանութի սրտիս զղջացելոյ և պատուեցելոյ անօթով, և ողորմեա ինձ որդւոյս արժանացելոյ մահուան անմահն, յաւիտենից դատապարտութենէ, որ է մահ իբր զրկումն յանծայրին կենաց, և անմահ միշտ կեալով 'ի տանջանս: Զի 'ի բաղմաբէն. որպէս զի ըստ բաղմութե մեղաց իմոց՝ նոյնպէս առաւել յաճախութբ քարոզեսցի ողորմութի քո՝ յերկինս և յերկրի հնչմամբ ահաարութէ. հրեշտակք և մարդիկ ահաւոր զարմացմամբ հռչակեալ փառաւորեսցեն զողորմութիդ. տեսանելով Թէ մրջամի անհնարին խնամն չարութե յաղթօղ գտայ՝ ոչ դատելով, այլ ներելով և 'ի քո շնորհս զիս ընդունելով. և այսու կրկնապատիկ ևս մեծարեալ քարոզեսցի քո ողորմութիւն՝ քան արդարութիւն:

Մերատին յաւելուած կրկին հեծութեն՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

# ԲԱՆ. ԼԲ.

ա. Բայց արդ՝ որպէս երբեմն յայլ ընթերցուածի [1] որ 'ի սկզբնաւորականացն կարգի՝ զմեղանացն զխաւարային ծնունդս գլխաւորացն օրինացն՝ մարմնականացն անդամոց՝ գրեցի, յորոց տիրեցայ ժառանգս մահու, նոյնպէս և յայսմ սահման ընտրութե բանի՝ զլուսածնելոյն զազատարարին օրէնս հոգւոյն կենաց որ 'ի տէր յս՝ յիշատակեցից նուագս յոգունց, իբր յանբաւ բազմութեց ծովու կաթիլ մի առեալ :

բ. Զանզի են արդարև [2] կայսերականք ոմանք 'ի բարձրութեն գահի բազմեալք, թոշակաւն շնորհաց լցեալք և հաստատեալք : [3] Թագաւորն՝ և սիրեցեալք իւր. արքայն՝ և պատուաւորք իւր. պսակեալն՝ և իշխանականք իւր. բարեհաճակեալն՝ և հնչմունք իւր. յաղթողականն՝ և փողք իւր. զօրաւորն՝ և մարտիկք իւր. գովեցեալն՝ և փառք իւր. փեսայն՝ և պարաւորք իւր. [4] դշխոյն՝ և օրիորդք իւր. [5] փեսաւէրն, և հանդերձանք իւր. [6] ազատութին՝ և շնորհք իւր. այցելուին՝ և ձեռն իւր. խոստումն՝ և քաւութի իւր. պահպանուին՝ և աջ իւր. պարգևն՝ և զարդ իւր. նշանն կենաց՝ և ամրութի իւր. կնիքն՝ և նկարագիր իւր. ամպն և հովանի իւր. արուեստն՝ և հրաշք իւր. հոգին՝ և անեղծութիւն իւր. բանն՝ և կատարած իւր. ուխտադրութին՝ և լրումն իւր. զօրութին՝ և հրամանք իւր. լուսարանն՝ և սքանչելիք իւր. մանանայն՝ և անապականութի իւր. վէմն կենդանի՝ և վտակք իւր. սիւնն հրոյ՝ և ճառագայթ իւր. որոտումն՝ և ազդմունք իւր. յոյսն վերին՝ և փրկութի իւր. ծառն օրհնութե՝ և պտուղք իւր. բարունակն՝ և բարունք իւր :

Եւ զի [7] մի զբնաւն ասելով՝ յամենայնսն վրիպեցայց, իբր յարեգակնէ այլայլեալ աչաց տկարութ, 'ի շատն

ասել լռեցից՝ և 'ի սակաւն ժամանեցից, բաւակա-
նացեալ ամենապիկար կարիւ ։

Է. Բայց աւա՜ղ յաւէտ աստանօր՝ թշուառացելոյս
եղկելի անձինս. քանզի կարգ բանիս բերէ ինձ խառ-
նել ընդ ձայն աւետեացս՝ բողոք դուժիս. վասն զի
ընդ այսոսիկ առընթեր սոցին գայ, արդարութիւն՝
և կշիռքն. վճիռն՝ և հատուցմունքն. քննութիւն՝ և
լոյսն. [8] յանդիմանութիւն՝ և ղամբարքն. մերկութիւն՝ և
պատկառանքն. յայտնութիւն՝ և ամօթն. ամբիծն՝ և
վաստակքն. թիւրեալն՝ և պատիժքն ։

Ը. Բարձեալ վերստին աշխար՝ կրկին եղկելոյս.
քանզի գայ հասանէ [9] առ հասկ հասակիս անհնա-
րին բարկութ, մանգաղն՝ առ հունձսն. դատաւորն՝
առ ատեանն. հզօրն՝ առ բեմն. սպառնացեալն՝ առ
կորուստն. բազուկն՝ առ դատաստանն. գաւազան
խրատուն՝ առ հարուածն. սպառազինութիւն՝ առ
նախանձն. հուրն՝ առ ընտրութիւն ։ Քանզի բանն
զոր խօսեցար ընդ իս, նա դատի զդատապարտեալս
'ի վերջնումն աւուր հատուցմանն ։ Այլ կանխեա՛
բարերարութ, [10] նախընծայ քաղցրութբ՝ առ նուաղ
հեծութի վարանական երկիւղիս. և զօրութի ընձե-
ռեա՛ ձեռամբդ օրհնութե՝ 'ի յետին տագնապիս՝
առաջինդ քո օգնութբ մխիթարել բժշկել, քաւել
և կենագործել ։ Եւ քեզ փառք յամի՝ յաւիտեանս
յաւիտենից. ամէն ։

---

(1) Որ 'ի սկզբնաւորականացն ։ Որպէս յայլում բանի՝ որ 'ի կարգի առաջ-
նոյն, այսինքն 'ի բանն Դ. գրեցի զծնունդս գլխաւոր մեղացն, որք են
օրէնք և անդամք մարմնոյ (Ես առաքելոյ. Հռովմ. Է. 23. Ը. 2 ։) նոյն-
պէս յայսմ որոշեալ բանի մասնաւորաբար յիշատակեցից նախադաս յաջորդս,
առկաւս 'ի բազմացն՝ զազատարար օրինաց Հոգւոյն սբյ՝ որ Քրիստոսի շնոր-
հեցաւ, ըստ յաջորդութեանցն, որ զօրէնս որ աղաւնի է մկրտելոց, հաւատացե-
լոց ։ Կամ, որպէս վերագոյն նախադասին ծնունդս ասէ զմեղացն, նոյնպէս
աստ յաջորդութեանց՝ խնմ զօրէնս լուսաւոր գործոց, կամ զօրէնս որ լուսա-
ւոր ծնունդս գործէ ։ Եւ ապա 'ի կարգ արկեալ յիշէ զերախտիս նոյ,
և զգործս զօրութե նորա ։

(2) Կայսերական մանուկ ։ Երախտիք փրկագործութեն համեմատութբ
այլ երախտեաց՝ են իբր կայսերականք, յեւս բարձրագոյն կարգի գոլով,
ըստ որում լեալ են թռչակաւ շնորհաց ։

(3) Թագաւորն՝ և մերձեցեալ իւր ։ Ասաի մինչև ցայն, ճեմայն՝ և պար-
տաւորք իւր, հայլին յաճ կամ 'ի քն ընդ անուամբ թագաւորի, յաղթա-
կանի, զօրագլխի, ևն. և առ իւրաքանչիւրսն ըստ համեմատութե ասին.

թէր գնէ կամ զպէս, և կամ զմեծութիւն ինչ ոչ. որովք յայտ առնել կամի, թէ նոյն ինքն ած ամ օրինակաւ, և համօրէն սէք նորա պատաղեցան բովանդակ յերախտս մարդկան :

(4) Գահոյն՝ և օթևանք իւր : Մր Ածածին, և կուսանք հետևօղք նորա, և կամ հրեշտակք :

(5) Փեսաւէրն : Յովհաննէս մկրտիչ, և հանդերձանք իւր, քարոզութիւն նորա, և մկրտութիւն ապաշխարութեան, որով հանդերձէր ճանապարհս տն. քն :

(6) Աւետութիւն : Փրկագործութիւն ժամանակին, և ընծայք իւր, զանազան պարգևք ձրիականք : Առաջնութիւն, այս տանելն մարդեղութեան, կմ քարոզութեան, և յեսան իւր, բարերարութիւն, կամ յաջողումն սքանչելիս գործոց : Խոստումն թողութեան մեղաց, և տառութիւն իւր, սրբելն զմեղս և զպարտիս : Դահդանութիւն, խնամք պահպանութեան, և ով իւր, անվրէպ զօրութի նորա : Պարգևն, համուցմունք բարեաց, կամ պարգևք հոգւոյն սբյ, և պարտ իւր, վայելչութիւնք պարգևաց, կամ զանազան ձիրք պտղաբերելոց, լեզուախօսութեան, ևն, որք իբր զարդ են 'ի վերայ եօթն պարգևաց հոգւոյն : Նշանն կենաց, որ խաչն, և ամրութիւն իւր. պահպանողութիւն իւր յամ փորձանաց : Կնիքն մկրտութեան, և նկարագիր իւր, նմանութիւն որդւոյն այ 'ի մեզ, ըստ գաղատ. (գ. 27.) * Որ միանգամ 'ի քն մկրտեցարուք, զքն զգեցեալ էք || : Անգն, և հովանի իւր, ամպն հովանաւոր յայլակերպմն քի, որ նշանակէր զհովանաւորութիւն իւր 'ի վերայ մկրտելոց : Արուեստն, սքանչելագործ զօրութիւն, և հրաշք իւր, հրաշալի գործք նորա : Հոգին որ տուեալ հաւատացելոց, և անեղծութիւն իւր, մաքրութիւն, սրբութիւն նորա, կամ անեղծ պահելն զընդունօղս : Բանն քի, մարգարէից, և առաքելոց. և կատարած իւր, անվրէպ կատարումն նորա : Ոսկեպատրութիւն. ըստ այնմ, (ղուկ. իբ. 29.) * Ես ես ուխտեմ ձեզ՝ որպէս և հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն || : Զօրութիւն, տէրական իշխանութիւն քի, և հրամանք իւր, պատուէրքն. օրէնքն : Լուսաւորանն, աւազանն մկրտութեան, և օծանելիք իւր, սքանչելի գործք նորա : Բայց մարթ է լուսաւորան առնուլ ստտ զապաշխարութեան աւազանն. զի զմկրտութիւն խմացաք 'ի բանն կնիք. և զի ստտ անմիջաբար գնի խորհուրդ որ հաղորդութեան, որ տուեալ լինի լուացելոյն ապաշխարութեամբ : Մանանայն, անեղծ մնացեալ 'ի սափորին, նշանակ մարմնոյն քի, որ անապական առնէ զճաշակօղն. որպէս և կենաց կենդանի, քն, և կերակուր իւր, արիւնն անմահական : Զայսոսիկ այլաբանութեամբ առնու 'ի մանանայէն և 'ի վիմէն՝ որ առ խորայելացւովք, որպէս և զհետևեալսն, որպէս հրաշ, արքայութիւն, ևն, որովք 'ի նորա խնամքն հոգին որ, և ձայնն հայրական 'ի վերայ քի 'ի յորդանան : Յայտ կերպն, հանդերձեալ կենաց անխաւութիւնն, և հերկութիւն իւր. կատարումն յուսոյն՝ առաջնմե կենացն : Ճառն օրհնութեան, սծ, կամ քն անկեալ 'ի դրախտի արքայութեան, (ըստ բանի յայտնութեան. իբ. 2. 14. 19.) և պտուղք իւր, վայելումն այ և քի. Խորանակն, երանութիւն այ՝ որ յայ շառաւիղեալ, և խորանէք իւր, բարիք երանութեան :

(7) Մի նենգեալ առնուլ : Զի մի կամելով զամ երախտս այ առել, յամենայնէն զրկեսցի, և ոչ զմինն պայծառ ճանաչելով. որպէս որ կամիցի զբովանդակ պայծառութիւն արեգական նկատել, մթանալով աչացն՝ և ոչ զամակաւ լոյս նորա և կամ զայլ ինչ յստակ կարէ տեսանել. վն որոյ լուսյեց 'ի շաւն առէլ, 'ի բաղումս առելոյն, շառացեալ ամենևին ակարկարողութեամբ ճանաչմանս :

(8) Յանդիմանութիւն : Հրապարակութիւն գաղտնի գործոց, և ձայնարկն, վկայութիւն խղճի մտաց, և հրեշտակաց, և դիւաց : Ամբէծն, արդարն,

և Հրապարակին. վարձուց արժանի գործքն. որք և Բնութեանն, մեղաւորն, և դատելոյն:

(9) Առ հաւէ հատուածոյս: Հասանէ առ կեանս մարմնոյս՝ Մանկան մահու առ 'ի հնձել, և յետ մահուն դատաստան քո առ ապէանն առանձնական: Ապատահաչէայն, սպառնացօղն՝ առ խորհուրդն, առ 'ի դատապարտել, են: Ապատաղինութիւն՝ առ նախանձն: Ըստ բան իմաստ. Է. 18. ամբանալն հոգւոյ արդարութեան առ 'ի խնդրելոյ զվրէժ մեղաց: Քանզի բանն քո դատի զայնցանոյս 'ի Հերձուածն առաւր, թէ իւրաքանչիւր կենաց, և թէ ընդհանուր աշխարհի:

(10) Նախընծայ ողորմութիւն: Այլ դու ողորմած, մի յայն յետին օր թողուր զդատ եղկելւոյս, այլ կանխեա զթութիւն կամ ներողութիւն որ ընծայեալ ինձ նախ քան զհասանել մահուն: Ըստ զօրացն զիս օրհնեալ ձեռամբդ 'ի յետին տագնապիս, որ այժմ, և որ 'ի ժամ մահուն. առաջին նա օգնութիւն. որով նախ առաջին 'ի ծննդեանս օգնեցեր շնորհօք մկրտութեան. կամ, որով յառաջն 'ի կենդանութեանս ողորմեցար:

---

Մերատին յաւելուած երկէին հեծութէ՝ Նորին հանդիտ, առ Նոյն աղերս Ճաղթանաց Բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ ԼԹ.

ա. Եւ քանզի[1] զկերպարանն առաջին լքի 'ի վնասակարին թելադրութենէ՝ իմով ծուլութեամբ կորուսեալ խոպան, ցուցից արդ այժմուս զՆորին յիս տեսակ. ողորմելի հեծութեամբ թախծեալ 'ի հոգի, անաչառ խայտառականօք հրապարակաւ՝ 'ի յեկեղեցիս բազմութեան ազգաց՝ վերապատմեցից բարձր ձայնիւ, բարբառով մեծաւ աղաղակելով:

բ. Մատեանս ընչական՝ բարդեալ 'ի յինքեան[2] ներքոյ և արտաքոյ ողբս և վայս և ձայնս, ըստ տումարի տեսլեանն եզեկիելի. քաղաքս անպատուար և անմահարձան. յարկս ունայն 'ի դռնափակաց ամրութեանց.[3] աղս տեսակաւ, այլ ոչ համեղութեամբ. ջուրս աղտաղտին՝ անախորժելի ծարաւեաց արբման. գետինս՝ անօգուտ հերկագործութեան. սահմանս լքեալ՝ հեղեղավայրս կնիւնոյ. խոպանացեալ և տատասկաբեր անդաստանս. գ. ծախնամ երկիրս անձնաւոր, որ բանսարկուին պատրանաց մշակեցայ.[4] եւղինծիւղ փայտս պտղակորոյս. հատանելի ծառս ունայնաբոյս.[5] կրկնամեռ՝ խօսուն տունկս անյոյս. ամենաչէն ձրագարանս անլոյս: Որդ՝ վերատին առ սոյն

բերելով զայս [6] նմանութիւն աւաղականաց, բազմօք կրկնեցից. որ ամօթոյն դառն պատուհաս՝ պահեալ կայ հեքոյս, կրճուռմն ատամանց, և անկէտ լալումն աչաց եղկելոյս. հայրական [7] ցասումն անսպուժելի՝ դառնութեան որդւոյս. ապականութեան աննորոգելի՝ մեղուցեալ մարմնոյս: Նոր կշտամբութիւն գտողիս չարեաց՝ ախտացեալ հոգւոյս. [8] տարտամ տագնապի տարակուսանաց՝ ելից գերելոյս, զոր երկնային զօրքն մատուցանեն թշուառացելոյս. 'ի խրձուռնս որոմանցն վկայելով՝ վտանկեցելոյս. 'ի ձայն ահարկու՝ զանբժշկութեան ազդել լքելոյս:

Է. Ահա՛ արդարև երգս կատակերգութեան [9] ջնարահար պոռնկի, յածեալ և կոծեալ քաջ հնչեցուցեալ ողբս ողորմելիս և զկծեցուցիչս, ըստ առակաւոր բանին Եսայեայ՝ որ 'ի պատգամին տիւրոսի: Օ՜ի թէ նա՛ զդիպուածն փոքր անցից ապառնեացն՝ 'ի մօտոյ իմն տպաւորեալ, բողոքեր դիմակս դիմակս՝ կերպից կերպից աւաղականաց, ըստ կոծողացն կաքաւելոյ, իսկ առ իս ո՞րչափս և ո՞րպիսիս ձայնս մինչեցից վհատեցուցիչս. որ դալստեանն տեառն սպասեալ առանց վրիպանաց, մնացի անպատրաստ և անհանդերձելի: Արդ՝ եթէ զդատաստանացն ահաւորութիւն կրկնեցից, բազմացուցից ինձ աշխար. [10] ապա եթէ զփորձն խկուք ցուցից, յաճախէ ինձ երկիւղ. իսկ եթէ զկերպարանացն տեսիլ գրեցից, առաւելուն ինձ հատուցմունք, զի կանխաւ նկատեալ զսոյնս՝ և ո՛չ անազան ապաշաւեցի: Այլ խնայեա՛ յիս՝ գթած, մարդասէր, հզօր, բարերար, ամենապարգև քրիստոս թագաւոր, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) Զկերպարանն առաջին : Որովհետև զառաջնոյ անմեղութեան գեղեցկութիւն 'ի բաց թողեալ կորուսի յորդորմամբ սատանայի, ցուցից այժմ պէսպէս նմանութիւնք զոգեղ կերպարան հնոյն մարդոյ ադամայ, զդալի օրինակօք յայտնապէս հրապարակեցից զխայտառակութիւն իմ ազգաց բազմաց ձայնիւ գրոցս : Քանզի եմ Մաքեան ընչաւոր, լի վայիւք եմ : Հին լուծ. կերպարան հնոյն իմանայ 'ի վերայ խարշելոցւոյ և գերուն նոյա. այլ չյարմարի տեղւոյս :

(2) Ներքոյ և արտաքոյ : Ըստ օրինակի տեսլեանն եզեկիելի մատեան եմ կենդանի, (Բ. Թ.) 'ի սրտի կամ 'ի միտս, և 'ի բերանի լցեալ ունելով ողբս. կամ, ներքոյ՝ առաջի այ, և արտաքոյ՝ առաջի մարդկան. կամ, ներքոյ՝ վասն մեղաց խորհրդոյ, և արտաքոյ՝ վասն մեղաց մարմնոյ :

(3) Ալը փէօակօ : Արտաքին տեսլեամբ աղ երեւի, բայց ոչ է ընու-
թե համեղացուցիչ, այլ մանաւանդ վնասակար. զի դոն մրուրք կամ
գերտք հեղանիւթոց, այլեւ մանրք բուսոց՝ նմանեալք աղի, և համով
դառանք և վնասիչք : Հէլէհէլէյըրս, ջրոտ տեղի՝ յորում բուսանի
կնիւն. (սաղ.) և ոչ բանջար պիտանի : Հին լծ. ասէ վասն կնիւնոյ թէ
ձղեմն է, որ 'ի հեղեղատս բուսանի, մանրաբոլոր ձիլն : Ածախնամ.
ածայլն խնամօք յառաջն գործեալ երկիր բանաւոր. և սակայն յետոյ
սատանայի պատրանացն անսալով, զնորա զշար մշակութեան ընկալաւ :

(4) Եւղըմյէւղ փայփս : Զիթենիս կորուսօղ զպտուղ իւր : հափանէլէ.
կորեալ ծառս [illegible], որ բերեն միայն ձիթս անպիտանս և տերեւս
առանց պտղոց :

(5) Կըրխամճա փառնկս : Կրկնակի մեռեալ, յառաջն սկզբնական մեղօք,
և ապա անձնական մեղօք. կամ. յետ միանգամ կենդանանալոյն 'ի մե-
ղաց՝ վերստին մեռեալ. որով և [illegible], և ոչ յոյս մնայ անդրէն նոք-
նին նորոգելոյ : [illegible], ծրագարան եմ կազմեալ բազում աւեղամբք
և բերանովք, բայց ամենայնն շիջեալ է, որով ընաւ [illegible] եղէ :

(6) Նմանաւըէ [illegible] : Դարձեալ կրկնեցից զեղանակ աւաղական
բանից՝ ըստ նմանութեան լալականաց, 'ի նման վերջ աւարտելով զբանն,
այսինքն 'ի [illegible], որպէս ողբարկուքն առնեն : տես 'ի բանն իզ:

(7) Ցասան [illegible] : մի օրին. [illegible], և այլ 2 օրին. [illegible]
ծէլէ : Ահա պահեալ կայ ինձ բարկութիւնն հօր՝ անողոքելի, անհրա-
ժեշտ, ինձ որ հակառակ քաղցրութե նորա եղէ որդի դառնացեալ, առա-
հակ : [illegible], ոչ իմանի աստ փառթի, քայքայումն մարմնոյ, որ
յարութեան բարձեալ լինի, այլ նշանակէ զդառնութի և զալեկոծութի,
որ և մնայ 'ի յարուցեալ մարմինս անզեղջ մեղաւորաց :

(8) Տարպամ փափնամէ : Վարանումն տագնապից, [illegible], եղանե-
լոյս 'ի մարմնոյ, կամ ժամու մահուանս. զայս տագնապ մատուցանեն
ինձ հրեշտակքն, օրինակաւ որոմանցն վկայելով զայրումն, և ազդե-
լով զանըմշկելի գոլն իմ յայնմ ժամու : Այս վկայութի հրեշտակաց
է ինձ նոր [illegible], 'ի վերայ այլոց բազում սպառնալեաց Այ :

(9) Ջնարահար պռանկէ : Քնարահար պոռնիկ կնոջ, ըստ նմանական բա-
նին եսայեայ. (իգ. 15.) ուր ասէ զտիւրոսէ, թէ յետ եօթանասուն
ամաց աւերածոյն, " Եղիցի իբրեւ երգ պոռնկի միոջ||. զոր ըստ ձայնին
իմանան մեկնիչք զվերստին շինութէ նորա, և զմեծագանձ վաճառա-
շահութէն, որով զայլոց տեղեաց վաճառականս առ ինքն ունէր ժողո-
վել, ըստ օրինակի յայտնի պոռնկաց : Բայց Նը վարդապետս այլազգ
յարմարէ իւրում բանին. իբրեւ թէ՝ որպէս պոռնիկքն 'ի կործանիլ տիւ-
րոսի՝ քնարօք զողբս իւրեանց և զողբս հնչեցուցանէին վասն կորու-
սանելոյն զանարժան շահս իւրեանց, այսպէս և ես զիրաւացի ողբս իմ
հնչեցուցանեմ վասն կորստեան հոգւոյս, և եկեալ հասեալ դատա-
պարտութես : Ջի բէ նա, եթէ եսայի զպատահար եօթանասնամեայ
գալոց կործանմանն տիւրոսի՝ որ յոյժ փոքր է առ յաւիտենական դա-
տապարտութն, իբր մերձաւոր ձեւացուցանելով, գուշակէր [illegible]
[illegible], զանազան աւաղելի նմանութեանց,
ապա վասն իմ որպիսի տարակուսելի ձայնս [illegible], լալեայն ողբեր-
գեցից. թէպէտ և զբանն ապաշաւանաց բարձրաձայն ասեմ յուսով
թողութե, բայց զտարակուսելեան լալիկ ասեմ, որ անվրէպ և մշտահաս
դատաստան տն սպասելով, տակաւին անպատրաստ մնացի :

(10) Ալա [illegible]. եթէ զխորձ կամ զահաւաշէայ դատաստա-
նին, [illegible], մանաւորաբար կամ ճշգրտիւ ցուցից, խորհելով և յա-
ռաջ բերելով զզանազան սաստս բարկութեն այ, զոր ընդ ժամանակս

ժամանակս եցոյց , որպէս առ Ջրհեղեղաւն , առ սոդոմայիւս , առ քանա-նացիս , և առ այլս : Եթէ զայսոսիկ մի ըստ միոջէ եդից առաջի , առա-ւելու երկիւղ իմ , և մեծ ևս պատուհաս ինձ հասանէ . որովհետև գի-տելով զայս ամ , և ոչ գոնէ անգամ ապաշխարեցի : Ես այսպէս տագ-նապիմ . այլ դու տէր խնայեա ինձ :

---

Սրտագին յաւելուած հինին հեծութեան՝ նորին հոգւոյ , առ նոյն աղերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

## ԲԱՆ. Խ :

ա. Ամենակալդ ած բարերար ստեղծիչ բոլորից՝ լուր հառաչանաց ձայնիս վտանգի , և յերկիւղէ տագնապի ապագայիցն կարծեաց՝ փրկեա կարօղ զօրութբ զերծեալ 'ի պարտեաց . քանզի բաւական ես յամենայնի՝ առ ամենայն հնարս զօրանալ անբաւ մեծութբ և իմաստութբ անսահմանելեաւ :

բ. Եւ քանզի ուշիւ մտացս տեսեալ 'ի հեռուստ զհանդերձելոցն հանդէս ահաւորափայլ , նկատեմ ինձէն աստանօր կանխաւ[1] զտիւն լուսոյ՝ որբոցն յուսոյ , զօրն խաւարի՝ պատժապարտիս պատուհասի . ուստի ոչ զօրէ ոք յելցս՝ առ պատսպարան փախըստեան : Ոչ[2] անդունդք խորոց . ոչ վիհք վհից . ոչ բարձրութիւնք լերանց . ոչ անձաւք քարանց . ոչ կարծրութիւնք արձանաց . ոչ ծերպք ծակաց . ոչ փապարք փոսից . ոչ սորք հեղեղաց . ոչ բաւիղք խորշից . ոչ շտեմարանք յարկաց . ոչ ծածկութիւնք սենեկաց . ոչ եմակք հովտաց . ոչ ծործորք դժուարաց . ոչ վերադրութիւնք բլրոց . ոչ արձակմունք ընչոց . ոչ անբաւութիւնք ծովուց . ոչ սահանք յորձանաց . ոչ հեռաւորութիւնք եզերաց . ոչ ողբմունք ձայնից . ոչ հեղեղք արտասուաց . ոչ տատանմունք մատանց . ոչ համբարձմունք ձեռաց . ոչ պաղատանք շըրթանց :

գ. Այսոցիկ[3] սաստկութեանց մասանց անձողոպրելեաց՝ դու ես տէր քո՝ հնարք և դադարք դիւրութեան և անդորրութեան փրկութեան ամենամեղս հոգւոյ . արդ՝ հայեա 'ի յանդերձ վտանգիս շրջադրութեան՝ միայնդ

քաղցր առ ամենեսեան ։ Խզեա՛ սուսերաւ յաղթական[4] կենաղէն խաչիդ՝ զցանցս վարմիս, որ յամենայն կայից պաշարեն 'ի մահ զգերիս . և հա՛ն 'ի յանդորր՝ զոտս սասանեալ թիւր ընթացողիս ։ Բժշկեա՛ զհրատապ ջերմնական տոչորումն՝ մղձկեալ սրտիս . մերժեա՛ զդիւային[5] չարահնարութեան շշուկ՝ քո պարտաւորիս . հալածեա՛ զյուսահատ անձկութե հոգւոյս մթութի՝ չարի կենակցիս . ցրուեա՛ զծխամած թանձրութի[6] բռնութե մեղացս երևոյթ՝ մտելոյս 'ի յիս . կորո՛ զզաղիր թխատիպ կրիցս՝ ապականութեան կարիս ։ Նորոգեա՛ զպատկեր լուսոյ՝ պաշտեցեալ փառաց մեծութե անուան հզօրիդ՝ յոգիս . զօրացո՛ ըղձնորհիդ փայլումն՝ 'ի գեղ դիմացս, և 'ի կերպարան տեսութե մտացս հողեղինիս . յարմար յերկիրմամբ կացո՛ յարդարեալ՝ որ զքոյդ բերէ նկատումն՝ նշուլազարդ մաքրութբ զտեալ զնմայլս մեղաւորիս, ա̃ծային կենդանի՝ անեղծ՝ երկնաւոր լուսով քո ծածկեալ՝[7] յօրինակս երիս ։ Զի դու միայն ես օրհնեալ ընդ հօր՝ 'ի գովեստ հոգւոյդ սրբոյ՝ յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

---

(1) Զտիւն լուսոյ ։ Հայեցեալ 'ի հանդէս դատաստանիդ՝ տեսանեմ զայն օրն՝ լինել սրբոց տիւ լուսոյ, իսկ մեղաւորիս՝ օր խաւարի . որպէս յեգիպտոս իսրայէլացւոցն լոյս էր, և եգիպտացւոց՝ խաւար . ( Իմաստ . ժէ . 19 . 20 ։ ժը . 1 ։) Եւ յայնժամ ոչինչ յեղելոցս կարէ լինել պատսպարան փախչելոյ ։

(2) Անդնդախորոց . իմ̃ յոյժ խոր անդունդք . ըստ այսմ 'ի հետևեալսն՝ յորս նոյն բառ, կամ հոմանշական բառ կրկնի, սաստկացուցանէ միայն . որպէս Վիհս վիհից . այսինքն յոյժ խորին վիհք ։ Ծերպք ծակուց . այսինքն յոյժ ներքագոյն ծակք, ևն ։ Սորք հեղեղաց . խորին փոք գործեալք 'ի հեղեղաց ։ Քարանձաւ խորշից . քուաւոր ծածկոյթք խորշից . ( սաչափ , ) որք աներևոյթ առնեն զեղեալն 'ի ներքս ։ Ծմակք հովտաց . խոնարհագոյն կողմանք կամ ծոցք հովտաց ։ Ծործորք քարածերպաց . լեռնային խոռոչք ապառաժուտ վայրաց ։ Վերատարութիւնք բլրոց , 'ի վերայ անկումն բլրոյ . կամ, խիտ առ խիտ բազմութիւնք բլրոց բարձրացելոց, ուր դիւրին է 'ի միոյ բլրոյ 'ի միւսն փախչել ։ Արշաւանք հողմոց . ուժգին յարուցմունք հողմոց, կամ ելմունք թանձր փոշւոց ։ Սահանք յորձանաց . գահավէժ հոսանք յորձանաց . ( տաճկ . կիրտափ ։ )

(3) Սաստկութեանց [illegible] ։ եթէ այսպիսի սաստիկ պատահարաց և խրոց՝ յորոց մերով զօրութբ չկարեմք ապրել, դու միայն ես հնարք, ապա որչափ ևս ահաւոր քո դատաստանիդ՝ զերծանելոյ հնարք 'ի քէն միայն լինի, վասն որոյ հայեաց յանզերծանելի վտանգից պաշարութե, պաշարումն , որք շուրջ զինև եղեալ են ։

(4) Կենաղէն խաչիդ ։ Խաչիդ՝ որ է զէն կենաց կամ ապրանաց ։ 2 օրին.

ԽԱՉԻՒԴ: Խզեա առէ՝ սուսերաւ խաչիդ զկապս տառամայի, որ լիր վարմ 'ի մահ ըմբռնեն զիս զգերիս : Դիմեմ, զի առոլ մինչ 'ի բանն՝ յօրինակ երէս, պահէ զձև նմանոյանն՝ 'ի Խո :

(5) Զօրահնարութեա շղան : Դիւական նենգութե ամբոխումն, խռո-վութիւն :

(6) Բռնութե դեղոյ էրնոյթ : Ցրուեա զթանձր ծուխն կամ մուխն, որ է երևոյթ կամ կերպարան տխրացեալ մեղացս, որ մնեալ է 'ի ներքս յիս :

(7) Յօրինակ երէս : Ըստ հին լուծ· 'ի մարմին, 'ի շունչ, և յոգի· Ե այլոց՝ 'ի միտս՝ 'ի բանն՝ և յիշողականն, որք օրինակք են առաջինն՝ Հօր, երկրորդն՝ որդւոյ, երրորդն՝ հոգւոյն սրբոյ : Բայց լաւ ևս պարզի բուն բանիւք սրբոյ վարդապետին· որ հայցէ մաքրելով զմթութ մեղացն՝ վերստին յինքն տպաւորել զնմանութիւն այ ասելով, Նորոգեա զպատկեր· ևն: Եւ զայս նախ՝ յոգին, 'ի հոգին՝ որ օրինակ է Հօր· գոլով հոգին արմատ ամ յառաջութեց և կատարելութեց մարդոյ, որպէս և Հայր՝ ամ ածայնոյն: Երկրորդ, 'ի ԳԷՂ ՏԻՄՈՅ, շնորհօք մաքրութեան զգայարանացն· դէմքն՝ օրինակ որդւոյ, որ կերպարան է Հօր· և զի մարդեղութեամբն երևելի եղև մեզ: Երրորդ, 'ի ՆԵՐՔԱՐԱՆ ՓԵՏՈՒԹԵ ՄՏԱՑ, ուղիղ և պայծառ ճանաչելով զածայինսն· և ըստ այսմ միտքն՝ օրինակ հոգւոյն սրբոյ, որ քննէ զամ, և զխորս այ: Դարձեալ, յօրինակ երէս, խմանի երրեակ եղանակ կամ նմանութ պատկերին այ· այսինքն բնականն՝ 'ի ձեռն խմացականութե, գերբնականն՝ 'ի ձեռն սրբարար շնորհաց, և երանականն՝ 'ի ձեռն պայծառ տեսութեն այ 'ի հանդերձեալն· զոր և յայտ առնէ վերջին բանիւքն· ԱԾԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻ՝ ԱՆԵՂԾ՝ ԵՐԿՆԱՒՈՐ ԼՈՒՍՈՎ ԾԱԾԿԵԱԼ· այն է լոյս փառաքելի երեսացն այ, որով 'ի նոյն պատկեր նորոգիմք փառաց 'ի փառս: (Բ. Կորնթ. Գ. 18:)

---

Մէրովին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հոգւոյն, առ նոյն աշխար ճառնարնաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

## ԲԱՆ. ԽԱ.

Ա. Որդի այ կենդանւոյ օրհնեալ յաւիտենին, հօրդ ահաւորի անքննին ծնունդ· որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ: Որ [1] 'ի ծագել անստուեր նշուլից՝ ողորմութե քոյ փառաց, հալին մեղք· հալածին դևք· ջնջին յանցանք· [2] խզին կապանք· խորտակին շղթայք· կենդանածնին մահացեալք· բժշկին հարուածք· ողջանան վէրք· բառնին ապականութիւնք· տեղի տան տխրութիւնք· նահանջին հեծութիւնք· փախնու խաւարն· մեկնի մէգն· մերժի մառախուղն· փարատի մռայլն· սպառի աղջամուղջն· վերանայ մութն· գնայ գիշերն· տարագրի տագնապն· չքանան չարիքն· հալածին յուսահատու-

թիքն. և թագաւորէ ձեռն քո ամենակալ, քաւիչդ ամենայնի։

Է. Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիսն իմ՝ բազում ողորմութեամբդ. զի դու միայն ես[3] յերկնի անճառ, և յերկրի անքննին. [4] 'ի տարր գոյի, և յեզրս ծագաց աշխարհի. սկիզբն ամի, և յամի ամենայն լրմամբ, օրհնեալ 'ի բարձունս. և քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք՝ յաւիտեանս. ամէն։

---

(1) 'Ի ԾԱԳԵԼ ԱՌԱՒՕՏՈՒ։ Յորժամ ծագեցես 'ի մեզ զանստուեր, զանմթանալի քո լոյսդ, որ է լոյս ողորմութեան և խաղաղութեան, որ ցուցանէ միանգամայն զփառս քո և զողորմութիւնդ։ Քանզի ըստ որում առանց նուազելոյ ծագէ 'ի քէն, ցուցանէ զփառս քո. իսկ ծագելովդ առ անարժան խաւարեալքս կամաւ, յայտնէ զողորմութիւն քո։ Այլև 'ի մեծամեծ գործոց անտի՝ որ և առօրեայ շարադասեալ յիշատակին, ցուցանէ զկարողութիւնդ 'ի փառս քո. և զի անաչառապէս շնորհես ամենեցուն, զբազմազեղ գթութիւնդ ծանուցանէ։

(2) ԽՈՒԼԻՆ ԿԱՂԱՆԻ։ Այս, և յաջորդքն՝ կամ մարմնաւորապէս իմանին, ըստ որում աստուածային զօրութբ եղոյծ ք՛ս զկապեալս բազմաց, ով զպետրոսին զպօղոսին և զշիղայի. կենդանացոյց զմեռեալս, առողջացոյց զհարուածեալս, ևն։ Եւ կամ իմանին հոգևորապէս 'ի վերայ իմանալի կաղանաց, ցաւոց, ևն։

(3) ՅԵՐԿՆԻ ԱՆՃԱՌ։ Դու միայն յամի որ յերկինս ես՝ անճառելի ես, և դու միայն ՅԵՐԿՐԻ ԱՆՔՆՆԻՆ, յամ երկրաւորս անքննելի մնաս։ Կամ, դու միայն յերկնաւորաց հրեշտակաց անճառելի ես, և յերկրաւորաց անհասանելի։ Կմ, դու միայն գոլով ներկայ յերկինս և յերկրի միանգամայն, անճառելի ես լեզուի, և անհաս մտաց, թէ զիարդ խկութբ կաս 'ի ներքս յամի՝ առանց բաժանելոյ 'ի քէն, և առանց հեռանալոյ 'ի նոցանէ։

(4) 'Ի ՏԱՐՐ ԳՈՅԻ։ 'Ի բնութի կամ յիսկութի գոյացելոց 'ի ներքս կաս, այլև արտաքոյ նոցա ՅԵԶՐՍ ԾԱԳԱՑ ԱՇԽԱՐՀԻ։ Կմ լաւ ևս, 'Ի ՏԱՐՐ, այսինքն 'ի սկիզբն լինելոյ գոյացելոց, ըստ որում բառս տարր նշանակէ և սկիզբն կամ առաջին յիրս. և այսմ համեմատ գայ յաջորդն, ՅԵԶՐՍ ԾԱԳԱՑ. այսինքն որպէս կաս 'ի սկիզբն նոցա, նոյնպէս 'ի ծայրս ամ նոցա աշխարհի։ ԱՄԵՆԱՅՆ ԼՐՄԱՄԲ. այս լաւ ևս յարի յանցեալն, ՍԿԻԶԲՆ ԱՄԻ. և ՅԱՄԻ ԱՄ ԼՐՄԱՄԲ, քան թէ ընդ յաջորդին, ԱՄ ԼՐՄԱՄԲ ՕՐՀՆԵԱԼ ևն։ Ք թէպէտ և կաս 'ի սկիզբն նոցա, այլ և 'ի ծայրսն և 'ի կատարածն, սակայն ոչ բաժանիս, ոչ մասն ինչ աստ կաս, և մասն ինչ անդ. այլ ամբողջ լութբ բովանդակապէս կաս 'ի սկիզբն և 'ի կատարած նոցա. այնպէս զի նոքա միայն են հեռի 'ի միմեանց, իսկ դու նոյն և բոլոր յամի, մնաս յամենեսին. քեզ մի է սկիզբն և ծայր նոցա։ Այսպէս օրհնեալ և ծանուցեալ ես յերկինս 'ի բարձունս առ 'ի սրբց. և մեք այսպէս դաւանելով յերկրի, փառս տամք ևն։

Սրտէն յառաջուած ներքին հեծութեան՝ նորին հօնողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

# ԲԱՆ. ԽԲ.

ա. Տէր ած գթութեան, փրկութեան և ողորմութեան, քաւութեան, և նորոգութեան, բժշկութեան և առողջութեան, լուսաւորութեան և կենդանութեան, յարութեան և անմահութեան, յիշեա՛ զիս յորժամ գայցես արքայութբ քո՝ ահաւոր, հզօր, բարերար և ամենաստեղծ, կենդանի՝ գոլեալ՝ ամենակատար, մերձ 'ի հեծութիւն[1] համայն եղելոց : Ընդ խաչեցելոյն ընդ քեզ՝ պաղատիմ, որ ոչ ըմբռնեալ վասն քո՝ և ոչ կապեցեալ, ոչ կախեալ՝ և ոչ բեւեռեալ, ոչ կափեալ յանուն մեծիդ՝ և ոչ անարգեալ, ոչ լլկեալ՝ և ոչ նշկահեալ, ոչ խորտակեալ՝ և ոչ մահացեալ, և արքայութեանն արդարոց՝ մասին[2] անձկալեաց լուսոյ՝ արժանի ցուցեալ, իրաւամբք ուխտի երդմնականաւ ամենիւն ազդեալ զանփոփոխութիւն բարեացն տուելոյն, փառաւորեցեր առ յոյս փրկութեան իսպառ լքելոյս :

բ. Օրհնեա՛լ օրհնեա՛լ, և դարձեալ օրհնեալ, և զիս ընկալեալ նովին հաւատովք, կանգնեա՛ 'ի կործանմանէս՝ բարերար. բժշկեա՛ 'ի հիւանդութենէս ախտից՝ ողորմած. յեղերաց մահուս դարձո՛ զիս 'ի կեանս՝ կենդանութիւն. քո՛ եմ և ես, կեցո՛ ընդ նմին՝ ապաւինունի. անձամբ մեռելոյս՝ կենդանական շնչով ընծայեցո՛ յարութիւն կեանք անմահունի. անպակաս բարութիւն, անսպառ շնորհ, անփոփոխ ներողութիւն,[3] ա՛ջ ամենազօր, ձեռն ամենիշխան, միտն ամենամերձ : Կամեցա՛ տէր՝ և փրկեցայց. ակնարկեա՛ միայն գթութբ՝ և արդարացայց. ասա՛ բանիւ՝ և վաղվաղակի անարատ գտայց. մոռացի՛ր զթիւս չարեացն՝ և անդստին համարձակեցայց. առատաձեռնեա՛՝ և արդէն 'ի քեզ իսկ պատուաստեցայց. փառաւորեալդ յամենայնի յաւիտեանս. ամէն :

(1) Հանգոյն եղելոց : Մերձ ես 'ի հառաչանս ամ̃ մարդկան :
(2) Ընկերակցաց լուսոյ : Աւազակն որ վասն իւր յանցանաց՝ և ոչ վասն քո մեռանիցի 'ի խաչ, իւրովք հաւատովքն արժանի ցուցաւ արքայութեան արդարոց, որ է մասն կամ բաժին փափաքելի երանութեանն լուսոյ, այսինքն երկնային երանութեանն : Որում իբր ուխտիւ Երգիծաբանն անգղիական, ամէն աւելորդ, որ է եղանակ երգման, աղօթէալ ղանփոփոխաբին, ծանուցանելով զանփոփոխութիւն խոստման քո, և արքայութեան՝ զոր ետուր նմա, հաստատէր զնոյն իսկ աւազակն 'ի խաչի անդ անարգութե. որով լինէ մերժեցելոյս և յուսահատելոյս ետուր յոյս փրկութե : Զերջանիկ աւազակն ասէ՝ ոչ անարգեալ կմ̃ ընկեալ վասն Քրի. քանզի թէպէտ 'ի խոստովանել նորա զՔն անպարտ ամփու, և Ճշմարիտ Թագաւոր, յայտ է թէ հրեշտակք մամանեալ կատարեցան ընդդէմ նմա, բայց ոչ վասն այնր դաւանութեան եղև խաչիլ նորա և խորտակիլն. քանզի և ընկեր նորա, որ հայհոյիչ եղև Քրի, խորտակեցաւ 'ի բարձն :
(3) Աջ ամենազօր : Զօրութիւն այ օրինակի յաջ կամ 'ի բազուկ աջոյ, յորժամ երևի 'ի գործս մեծամեծս արտաքոյ կարգի. զոր օրինակ զազատութիւն Իսրայէլացւոց յԵգիպտոսէ՝ ասէր Այ՝ առնել բարձր բազկաւ : Յորժամ կատարէ զամենակալ նախախնամութե գործս, ձեռն կոչի. իսկ յամ̃ մանր խնամս, կամ 'ի գեղեցիկ յօրինուած արարածոց՝ մատն ասի. զի արհեստք մատամբ վճարին : Իսկ ասէ ամենիշխան, ամենատէր, զի յամ̃ 'ի մանր և 'ի փոքրագոյն գործս՝ զօրութիւնն այ մերձ կայ, և առանց այնր չլինի ինչ : Արդ՝ այսպիսի գոլով քո՝ ամենազօր, ձեռագէր ասէ, անտես արա զպարտս չարիս իմ, որք քեզ միայն թուելի են. և ամենագէտ, անգէն վաղվաղակի առից համարձակութե. որպէս զաւազակին անտես արարեր խառա, իբր այն թէ բնաւ գործեալ ինչ ապիրատ ոչ էր. նոյնպէս և ես՝ թէ առատաձեռնես ողորմութե, այժմէն 'ի քեզ միացայց, ըստ որում և զաւազակն բնակակից քեզ ընկալար 'ի դրախտին :

---

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս ճառընտրութեան բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

# ԲԱՆ. ԽԳ.

Ա. Բժշկական կրթականութեան[1] ամենափորձ հնարաւորութիւն՝ պատճառ կենաց անախտականաց, թագաւոր զօրաւոր երկնաւոր՝ տէր Յս Քս. ամենեցուն, իմանալեաց և տեսականաց. [2] ահա դու 'ի յիս, ըստ մարգարէին՝ որ ընդ ասելոյն՝ նոր կցորդութե. առ ոչ բարեզարդ դաշամբ այս բանի ընդ քեզ միութեան, լուսաւորեցայց կրկին ողջացեալ հոգւով և մարմնով, ամենայնիւ կարող և անվանելի :

Բ. Որ ոչ կարօտանաս օգնականաց, առ պատրաս-

տութի պատանաց՝ հոգեկան վիրաց . ոչ ժամանակի . ոչ միջնորդի . ոչ աւուրց երկարաձգութե . ոչ [3] փոփոխս մատուցանելոյ . ոչ հատման . ոչ խարման . ոչ սրագործութե , ըստ երկրաւորս դեղատուութե , [4] առ որս միշտ է վրիպութի և ամենասխալ տարակուսութի : Այլ քեզ արարչիդ հոգւոց և մարմնոց , ամ՟ ինչ՝ լուսաւորեալ է . ամենայն ինչ առաջի է . ամ՟ ինչ գրեալ է . ամենայն ինչ դիւրին է . համայնն՝ հնարաւոր է . [5] իմաստն՝ գլխաւորեալ է . խոստումն՝ լցեալ է . կամելն՝ կատարեալ է . քո կտակն՝ աւետարան է . քո վճիռն՝ ազատութի է . քո մատեանն՝ շնորհ է : Ոչ փակեալ ես ընդ օրինօք . ոչ պարունակեալ ես ընդ կանոնաւ . ոչ արգելեալ ընդ նուաղութբ . ոչ խոնարհեալ ընդ հնազանդութբ . ոչ պարագրեալ ընդ փոքրկութբ . ոչ չափեալ ես ընդ սահմանաւ . [6] ոչ վրիպեալ 'ի բարկութէ . ոչ այլայլեալ ինչ 'ի ցասմանէ . ոչ սխալեալ 'ի խստութէ . ոչ ամբոխեալ 'ի խռովութէ . ոչ դղրդեալ յանգիտութէ . ոչ փոփոխեալ յողորմութէ . ոչ պակասեալ 'ի բարձրութէ . ոչ լքեալ յայցելութէ . ոչ տկարացեալ 'ի փրկութէ : Դու սկիզբն՝ և լրումն ամենայնի . և 'ի քէն է ամենայն . և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս . ամէն :

---

(1) Ամենափրկիչ հնարաւորութբ : Ամենեւին անտեղեակ ճարտարութբ բժշկական կրթականութէ , բժշկական հմտութե կամ արհեստի , պատճառ ես անախտ կենաց : Թուի ըստ ելեւոյն զեկուցանել , թէ բաց յամենայնէ իմաստութէ և յազգս կարողութէ՝ որով ճանաչես և բառնաս կարող ես զամ՟ ցաւս , ունիս և զհամայն ցաւոց զփորձն և զտեղեկութի՝ յորմէհետէ ախտացան մարդիկ 'ի սկզբանէ աշխարհի : Այսպէս բժիշկ ճարտար այն համարի առ մեզ՝ որոյ բազում իցէ փորձ . և զի՞նչ կարծիւր՝ եթէ ոք լինէր անտեղեակ անձամբ համօրէն ցաւոց պատահելոց 'ի սկզբանէ անտի :

(2) Ահա դու 'ի յես : Վաղվաղակի լեր դու 'ի յիս . ըստ . . . նոր կցորդութբ , մերձաւորութեն՝ խոստացելոյ 'ի ձեռն մարգարէին , թէ ըստ առ[illegible] մերձ գոլոյ . որ է բանն եսայ . ( ծը . 9 . ) * Մինչդեռ խօսեսցիս , ասասցէ՝ թէ ահաւասիկ հասեալ կամ || : Որով գուշակէ այսր բանի միանալոյ ընդ քեզ , [illegible] . որպէս և ասէր . ( անդ . 8 . ) * Յայնժամ ծագեսցի կանուխ լոյս քո || : Կրկին ողջացեալ հոգւով և մարմնով , որպ՟ և ասէր : * Բժշկութի քեզ վաղվաղակի հասցէ || :

(3) Ոչ կարօտանաս : Զմարդկային բժշկացն զանազան կարօտութիս 'ի Թիւ արկեալ , ցուցանէ զերկնաւոր բժշկին զանկարօտ զօրութին 'ի բժշ-

կել: Դու առէ, ոչ միայն ամենայնութեան ճարտարութիւն պատճառ կամ նորոգործող ես կատարեալ կենաց, այլև ինքնին քո միանալովդ բժշկես անվրէպ: Առաւի ոչ կարօտիս ԴԵՂԱՐԱՆԻ, 'ի կիր առնուլ ադեղանիս, (մեհ-լեմ,) և պատրաստել զայնս առ 'ի պատելոյ զվէրս հոգւոյ: Ոչ կարօ-տիս ԺԱՄԱՆԱԿԻ, որպէս մարդ բժիշկ չկարէ երբ և կամիցի՝ տալ դեղ, այլ ընտրէ զժամ ցրտոյն և ջերմոյն. և եթէ զպալար ինչ գարմանէ, սպասէ հասունանալոյ նր: Ոչ կարօտիս ՄԻՋՆՈՐԴԻ, այսինքն օգնականի, գործակցի, ծառայողի. կամ, ոչ ինքս բարեխօսի և աղաչաւորի՝ առ 'ի գարման առնել հիւանդին, որպէս ոմանք 'ի մարդոց բժշկաց հազիւ բա-զում աղաչանօք շարժին 'ի տեսչութիւն հիւանդին: Ոչ կարօտիս ԱՌԱՒՕՏ ԵՐԵԿՈՐԵԱՅՑԱՆԵԼՈՅ, որ յորէ ձգելոյ զգարմանն. զի ոչ կարէ մարդն փարա-տել զախտն 'ի միում ժամանակի, այլ մեղմով, սակաւ սակաւ: Ոչ կարօտիս ԽՈԽՈՒԽ ՍԱՓՈՐՁԱՆԵԼՈՅ, այլևայլ դեղս տալոյ առ 'ի փորձել, կամ զնոյն դեղ սակս կրկնելոյ կամ զտեղին փոփոխելոյ, մերթ 'ի գլուխ դնել, մերթ 'ի կուրծս, մերթ 'ի բազուկսն նր: Ոչ ՀԱՏՄԱՆ, հատանե-լոյ զվէրսն, կամ զխոխոյթ, կամ զաւելորդ խուլ ինչ: Ոչ ԽԱՐԱՆԻ, ջերմացեալ երկաթով խարելոյ զմիս փտեալ, կամ զարմատս ուռուցից: Ոչ ՍՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ, կտրելոյ սրով զանդամ փտեալ, կամ սուր դանակաւ և ածելեաւ խզզատելոյ զմարմին: Ոչ կարօտանաս այսպիսի հնարից ԵՒ երկրաւորս ՏԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ, գարմանատրութեան դեղոց և բուժմանց. ԱՌ ՈՐՍ ՄԻՋ, 'ի գարմանս մարդկային բժշկաց՝ թէպէտ և բազումս և զանա-զանս 'ի կիր առնուն, սակաւին ՄԻՋ, այսինքն յաճախ սխալումն լինի՝ կամ 'ի չճանաչելոյ զպատճառս ախտին, կամ տալով դեղ անյարմար, կամ չտալով 'ի դէպ ժամու, և ԱՆՆԱԽԱՏԵՍ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՄԲ, տարակուսա-նօք գործեն, յամի կասկածելով սխալել. և 'ի մատուցանելն գարմանս նեղքին անյայտ ախտից, զրեթէ միշտ 'ի փորձ վարին՝ տեսանել օգտիցէ, և կամ ոչ:

(4) ԱՅՍ ՏԵՂ ԱՐԱՐԵԱԼ. Դու քանզի արարիչ ես հոգւոյ և մարմնոյ, ամ ինչ քեզ ԾԱՆՕԹԱՑԵԱԼ է, պայծառ, յայտնի է: Այս և յանջրդքն խմանին ընդհանուր առ ամ իրս. բայց առանձինն թերևս ըստ բժշկա-կան նորգործութեց յարմար ես է առնուլ. այսինքն որ ինչ առ բժշկու-թեն սխալ է, ամն քեզ յայտնի է, պատճառ հիւանդութեն, դեղն, ժամանակն. ամն առաջի քո առձեռն է. ամն ԳՐԵԱԼ է, իբրև գրով բա-ցատրեալ է. որպէս և բժիշկք գրեն վասն հիւանդութեանն և վասն դեղոցն. ամն ՏԻԱՐԻՆ է, հնարաւոր, դիւրագործ և կարելի. և ոչ ոք որ 'ի մէնջ բժշկացս, որոց ոչ միշտ դիւրին է գտանել զդեղն զոր խնդ-րեն: ԻՄԱՍՏՆ, ճանաչումն քո, մտածութիւն, կարգաւորութիւն գործոցք վճարեալ է. ԽՈՐՀՈՒՐԴՆ լցեալ է, կատարես զխոստացեալդ. որպէս ա-սէիր, ես եկից և բժշկեցից: ԿԱՄՔՆ կատարեալ է. որպէս յասելդ, կամիմ սրբեաց, և վաղվաղակի սրբեցաւ բորոտն: Բ. ԿԵՐՊՆ. այն զոր մարմնաւոր բժիշկք աղդ առնեն հիւանդին վասն զկատակն յօրինելոյ, մինչու դուշակ է. իսկ դու յորժամ կամս առնել հրամայես, աւետիս կենաց է յայնմ. որպէս եղեկիայ արքայի ծանուցաւ բերանով եսայեայ՝ հրաման տալ վասն տանն. սակայն ընդ այնու աւետիս կենաց էր ծած-կեալ: Բ. ՀՃԻՆ, յորժամ վճիռ տաս՝ ասես, ոչ մեռանիցի՝ այլ կեց-ցէ, այն իսկ ազատութիւն է. որպէս յաղագս Ղազարու ասացեալն, այն հիւանդութիւն չէ 'ի մահ, առաւել եղև յարութեն նորա: Բ. ՏՓԵԱՆՆ. ըստ մարմնոյ բժիշկն մատեան համարոյ մատուցանելով առ հիւանդն և կամ առ ընտանիս նորա, ծանուցանէ զծախս դեղոցն, և զվարձս բժշկութեն և զծառայողացն. բայց դու առէ՝ առաջի դնես հիւան-դին զնորհսն զոր արարեր, առելով աշխատանս ողջոյն, այլ մի մե-

զմնչեր. կամ, ահա որդի քո կենդանի է. կամ. լուծէք և թողէք երթալ, կամ, տուք նմա ուտել :

Զվերջին երիս բանսն, կեաց, հնիա, մաքէան, ընդհանրապէս եթէ խմանամք, մեկնելի են. քո նոր կտակդ ոչ իբրև զկտակն հնին՝ անէծս և թշուառութիւս գուշակէ, այլ օրհնութիւս, բարութիւս աւետարանէ : Քո վճիռն արարեալ այժմ ոչ իբրև զմարդկան վճիռս՝ պատուհաս հրամայէ 'ի բանտ, 'ի տուգանս, 'ի մահ, այլ ազատութի շնորհէ 'ի մեղաց և 'ի պարտեաց : Քո մատեանն որով կանոնս աւանդես, ոչ իբրև զմարդկան դատաստանագիրս իւրաքանչիւր յանցմանց և յանցուցելոց պատիժ սահմանէ, այլ ներողութի, թողութի, երախտիս, յորդոր 'ի զղջումն. և եթէ սպառնալիք ևս կայցեն, առ 'ի ներել է. այլ և զոր գործելն հրամայէ, յաջողէ շնորհօք. և ոչ իբրև զհին օրէնսդրութիւն՝ տայ միայն զպատուիրանն առանց ձեռնտու օգնականութե :

(5) Ու Հրեղէաւ: Ոչ գոյ 'ի քեզ բարկութի, որով սխալիցիս. ոչ ցասումն, որով պղպղիցիս. ոչ խռովութի, որով յանդգնութի խոտորիցիս. ոչ խաղաղութի, որով աղմկիցիս. ոչ տգիտութի, որով շփոթեալ տարակուսիցիս : Այլ հակառակ այսոցիկ՝ անփոփոխելի ողորմութի, բարձրութիւն են :

---

Մերոպէն յաւելուած նրնէն հեծուածէ՝ նորէն հոգւոյ, առ նոյն աղերս ճաղքանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա̃յ :

# ԲԱՆ. ԽԳ.

Ա̃. Ա̃ծ անսահման, ծնունդ Ա̃յ հարազատ անթարգմանելի. արարիչ բնաւին եղելոց, ք̃ս թագաւոր. լոյս 'ի լուսաւորի սրտից մթացելոց. [1] ընդ մեզ լրմամբ, և ընդ առաքչին իսկութ̃բ. մերայնովս զքոյինսդ ծանուցանող հրաշապէս : Հայր քո օրհնեալ երկնաւոր անձառ՝ որ առաքեացդ զքեզ 'ի վերուստ, [2] ում փառակիցդ ես արարչութ̃բ, այնքան հոգացաւ փրկութ̃ե իմոյ տարագրեալ գերւոյ, մինչև զքեզ իսկ մատնեաց մարդկան : Իսկ դու կարող գոլով 'ի վեր քան զվիշտս՝ զտնտեսութ̃ն աւարտեալ խորհուրդ, համձեյար ընդ պարտեցելումս զմահուն ճաշակել բաժակ՝ անթերի մարդկութ̃բ, և անպական Ա̃ծութ̃բ : Նաև հոգիդ Ս̃բ կենդանարար՝ որպէս քո, և հօր քոյ իսկակից, և համապատիւ էութ̃բ ծնողիդ՝ և ծնիցելոյդ : Ս՛ի երրորդութ̃ի կատարեալ 'ի դիմաց երից անորոշելի հաստուածոյ. անըսկիզբն և անժամանակ. բնաւին բարերար. համայն

կենդանարար. բոլորից խաղաղարար. ստեղծիչ գոյից, և յօրինիչ ամենից. անքակութբ և միով բնութբ

փառաւորեալ ։

Է. Իսկ [3] եթէ հայրն գթած երկնաւոր հզօր՝ մին յէութէ՝ վասն մահապարտիս յանցանաց մատոյց զմիայնակ ծնունդդ յանքնին ծոցոյն, ոչ անխայեալ յորդիդ 'ի համապատիւդ և 'ի սիրելիդ, այլ կամաւ նուիրեաց մահու՝ չարչարողացն զինու, ըստ մարգարէութեն զաքարիայ. վասն զի զարթնուլ սրոյն 'ի վերայ հովուին, և հարկանիլ նոյն ինքն հօտապետին, և ցրուիլ ոչխարացն հօտին, որպէս օրինակն [4] նուրբ նախագրին՝ և ուխտագրութիւն խորանին՝ և նուիրումն արեան սպանդին՝ և առակ խորհրդոյ աբրահամեան պատարագին, զփրկութի թշուառացելոյս՝ 'ի կամաց կեցուցչիդ յառաջագոյն նկարագրեր. և արդ հիմ տրտմիս անձն իմ կործանեալ՝ ոչ յա՟ծուստ հնարաւորութէց, այլ 'ի քումդ ինքնագործ հակամիտութէց. կամ ընդէր զիս խռովես՝ յուսահատութբ ստանայականաւ զմիտս հարեալ. յուսա՛ յա՟ծ, խոստովան լեր նմա, և նա հոգայ վասն քո, ըստ դաւթեան սաղմոսին, և [5] այլ մարգարէի

կենսախրախոյս բանի ։

Ը. Իսկ [6] յեղանակ խնամարկելոյ հաստոցին՝ 'ի վեր է քան զսահման կշռուե մտաց հրեշտակաց և երկրականաց. և եթէ բիւրս կրկնեսցի, ոչ լինի չափեալ. քանզի անբովանդակելոյն՝ և բարերարէն է անձառելի ։ Նա զի [7] ոմն օրհնեալ՝ զոմն օրհնաբանեալ յեւրորդական համագոյուէն առաքեաց. իսկ նա 'ի հաձութի կամաց առաքչին մեռաւ. և միւսն ահաւոր՝ 'ի յերկուցն հաւանութի՝ մեծաջան բաղձանօք մաղթէ ։ Իսկ [8] համաբարբոյ միակամութեն ցուցակ՝ առ 'ի զնոյն բարի ներգործել, որպէս հոգին՝ կենդանւոյն, և բանն՝ բանականին, պայծառութի փառացն, և կերպարան՝ էութեանն ։ Նո կեանսն փոյթ. առ ողորմութիւն սթափ. առ ձեռնկալութին պատրաստ. առ փրկութիւնն կազմ. առ առատութին յորդ. առ յաձախութին զեղուն. առ անբաւութին լի. առ աննուազութին փարթամ. առ երկայնմտութին ձոխ. առ անհասութին բարձրեալ.

մի երրորդութիւն կատարեալ 'ի յանձանց երից. օրհ-նեալ յաւիտեանս. ամէն :

---

(1) Ընդ Մեզ Լինել : Ընդ մեզ ես կատարելապէս մարդեղութեամբ. և ը̃ առաքելոց հօր Խոսքով, իսկապէս բնութեամբ Աստուածութեան : Մերայնով, մերով մարդկային բնութեամբս զքոյին աստուածայնութեանն ծանուցանող հրաշալի օրինակաւ :

(2) Ամ Բարձրելոյ : 2 օրին. Որով : Հայրն քո երկնաւոր՝ առ 'ի փրկել զիս առէ՝ զգերեալս 'ի սատանայէ, անչափ հոգողութեամբ զքեզ զմիածինդ մատնեաց վասն մեր. իսկ դու որպէս արարչութեամբ փառակից ես նմա, նոյնպէս գթութեամբ նմանօղ եղեալ, մինչ կարօղն էիր 'ի ... առանց իրիք վնասու կատարել զգործ անմեղութեան, հաճեցար ընդ ... փոխանակ պարտաւորիս՝ յանձն առնուլ զմահ դժնդակ, զոլովդ մարդ կատարեալ, որպէս և Ած կատարեալ : 'Ի նոյն կամակից և Հոգւոյն ոչ, որպէս և էակից երկոցունց, բովանդակ ոչ երրորդութեանդ հոգացաւ առ իմ փրկութի : Եւ էր վասն այսչափ հոգք 'ի վերայ իմ. մի թէ իմում փրկութե կարօտ լինէր, նա որ անժամանակն և անսկիզբն, բոլոր բարերար, յինքեան էապէս փառաւորեալ. ևն : Աւելի ասա, և կրկնելի 'ի կատարածին, ... իմանի՝ յերից անզա-տանելի առանձնաւորութեանց կատարեալ ես՝ եթէ ըստ միութեն, և եթէ ըստ երրորդութեան. այսինքն ծայրագոյն ունելով միութի ըստ էութեան, և ծայրագոյն զանազանութի ըստ անձանց. ոչ նոյնութի էութեան միա-ցուցանէ զանձինսն, և ոչ որոշումն անձանց բաժանայ զմիութի էութեան. որպէս խոկութ մի, որ երրորդութե չխափանի. և որպէս կատա-րեալ երրեակ, որ միութե չքակէ : Դարձեալ, այլևայլութի անձանց ոչ անկատար կացուցանէ զմի անձն քան զմիւսն : Յայն երրորդական թիւ բովանդակի ամենայն կատարելութի. լինել միոյ Աստուածութե յերիս անձինս՝ զերծումն է ծայրագոյն կատարելութե. և է յատուկ ծայրա-գունի բարւոյն ևեթ : Զայս ամ մեօք իմաստս աստուածաբանութեան փակէ յինքեան այս բան կարճառօտ :

(3) Իսկ Ընդ Հայր : Իսկ արդ՝ եթէ Հայրն երկնաւոր այնքան հոգացաւ 'ի փրկութի իմ, ապա ... , ընդէ՞ր ասիս ընդ անձն իմ կործա-նեալ ոչ ... , ոչ յաստուածային հարուածոց, այլ 'ի քո կամաւ գործեալ ..., այսինքն 'ի յօժարութեանց կամ 'ի դի-մեցմանց առ չարն : Այսպէս կապակցելի է բանս, իսկ այլքն են ընդ մէջ անկեալ բացատրութիւնք փրկագործ կամացն Հօր : Ոչ մատնեաց ասէ՝ 'ի սիրելիդ, այլ կամաւ նուիրեաց ... . այս-ինքն նուիրեաց կամ մատնեաց զինու կամ գործարանի չարչարողացն մահուանս, կամ առ 'ի մահ : Եւ այնպիսի կամաւորական նուիրումն, զի և կանխաւ 'ի հին ժամանակաց մարգարէիւք յայտնեաց, և օրինա-կօք նախատպաւորեաց ևն : Այս ընդէ՞ր խոտես զիս անձն իմ, ... , որ 'ի սատանայէ չարժեալ, կամ որ յատուկ է սատանայի վասն անզգամութեան :

(4) Նոր Նախագրէն : Որպէս օրինակն գառինն նախատպին, այսինքն հաբէլի. որ անպարտ սպանեալ, առաջին ... եղև քոյն զենմանն. կա՛մ, ըստ հին լուծ. օրինակն մոլեալ՝ որ բաղկատարածութե եղև օրինակ քոյ խաչելութեան. և ըստ այսմ Նախագիր իմանի առաջին գրօղն : ... , զորով ցանեաց մովսէս զարիւն ուխտին այն : (Եբր. Թ. 20. 21 :)

(5) Եւ այլ ճարտարէ։ Բազում են առ մարգարէս այսմ նման բանք. որպ Եսայ. խ. 31։ Ողբ. գ. 24. 25։ Նաւում. ա. 7. ևն։ բայց թուի իմա-նալ և զօլեկելի բանն առ յովսափատ արքայ յուդայ. (Բ. մնաց. ի. 15,)

*Ո՛չ է ձեր պատերազմդ, այլ այ||։

(6) Յեղանակ խնամարկելոյ։ Իսկ յեղանակ խնամարկելոյն Այ ոչ կարէ կշռել մտօք՝ ոչ միայն մարդկան երկրաւորաց, այլև ոչ հրեշտակաց ան-գամ. և եթէ բիւրիցս կրկնին կշռեսցեն, չափ ոչ գտանի. քանզի Այ որ անբովանդակելի է բնութբ և զօրութբ, նաև բարերարելն է անպատ-մելի։ Եղանակ խնամարկելոյն այն է՝ զոր նախ ասաց, և զկնի ասէ դար-ձեալ. այսինքն Այ ինքնագործ գթովք հոգալ զփրկութն մարդկան, ոչ արժանաւորաց և հաւատարմոց, այլ ապաշխարողաց և թշնամեաց. և զայն հոգալ միածնաւն, և այն՝ մահուամբ նորա, և զայն՝ կանխաւ հաստատելով մարգարէիւք և օրինակօք. և այն՝ ՚ի նոյն կարգաւորելով զամենայն դարս անցեալս. և յայսպիսի խնամս բովանդակ ոք երկրորդու-թիւնն պարապեալ։ Բայց. ո՞ր միոք չափել կարիցեն զխորութիւն սիրոյն Այ։

(7) Որ օրհնեալ, Հայր ած, որ օրհնաբանեալ, զՈրդին միածին առա-քեաց. և միւսն ահաւոր, Հոգին ԹՔ ՚ի յերկնային հաւանութե, ՚ի համութե հօր և որդւոյ միջնորդեան բաղձանօք մաղթէ, ամենայն կամօք միաբանի. ուստի երեքին անձինք եւս պատարեալ են ՚ի խնամս քո անձն իմ պար-տաւոր։

(8) Համահաւասար։ Եթէ խնդրես ասէ՝ ցուցակ կամ օրինակ այսր համա-շունչ միակամութե երից անձանցն առ ՚ի միոյն բարի ներգործել, այն-պէս իմա, որպէս հոգին կենդանւոյն. որպէս կենդանին ոչ կայ և ոչ գոր-ծէ առանց հոգւոյ. և ոչ բանականն առանց բանին կամ մտաց. և ոչ փառքն արտաքին առանց պայծառութեան. և կերպարան էութեն, և ոչ էութն իւրաց առանց կերպարանի կամ տեսակի նոցա։ Այսպէս ոչ է, և ոչ գործէ հայր առանց որդւոյ և հոգւոյ։ Ուստի երեքին համօրի-նակ են առ կենդանի ձայն, ևն։ Ա— անբաժանելին. անբաւութբն լի են. ամենազօրութբն փառաւոր են. անհասութեամբն բարձրեալ են։ Բառն՝ համահաւասար ոչ է սեռական, այլ ուղղական, և նոյն իսկ համաբարբ բառն՝ իննի գրեալ ըստ սովորութե բազում ձեռագրաց. զի և յայլ բառս առնեն. որպէս գիշերւոյ, մարդւոյ, Թքւոյն, վայրենաբար-ւոյ. ևն։

Մերոյին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հեծելի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։

՚Ի խորոց սրտից խօսք ընդ այ։

# ԲԱՆ. ԽԸ։

Ա. Եւ արդ՝ յոյս բարեաց տնկեալ ՚ի սրտի անձն իմ կործանեալ, և գտեալ հաւա-տոց պնդեալ զերկիմանցդ երկակի մասունս՝ [1] ըն-կրկնապատիկ խորհրդոցդ զցանկականիդ գործա-րան, խոստովանն լեր բարերարին այ։ Օ մտացդ՝ իբրև զգործոց. զխորհրդոցդ՝ իբրև զլուսեց. զան-

տեսլեանն՝ իբրեւ զյայտնեցելոց. զսրտիդ ծածկութեանց՝
իբրեւ զբարբառուն ձայնից. [2] զակնարկութեանցն՝ իբրեւ
զորդինականաց մեղանաց. [3] զազդել շրթանցդ՝
իբրեւ 'ի գլուխ ելելոց չարեաց. զոտիցդ հետոց՝ իբրեւ
զպատուիրանաւն ոչ վազողաց. [4] զձեռացդ ձգումն
առ ցասումն՝ իբրեւ 'ի հեղումն արեան գործողի. [5]
զծխծաղելն բնաւին՝ իբրեւ զկամաւորական լքումն
շնորհի. [6] զերդմնականն, որ թէ 'ի հանդէպս՝ թէ 'ի
տարադէպս՝ իբր զգործակցութիւն խաբողին: Զամ-
բարտաւանութիւնն՝ իբր զհին կործանիչ նախաստեղ-
ծին բարձրութեան. զսրտին նեղութիւն՝ իբրեւ զթերու-
թիւն հաւատոյ. [7] զմեղկութիւնն՝ իբրեւ զպարտութիւն զօ-
րաւորին պնդութեան. զտրտունջն առ վտանկս կրիցն՝
իբր զուրացութիւն ուխտին, որ առ տէրն. [8] զապա-
րասանութիւնն՝ իբր զթուն իմն անդթութեան. զամ-
բարհաւաճութիւնն՝ [9] իբր ոչէիւք առ վեհսն գոռո-
զութիւն. զհպարտութիւնն՝ [10] իբր զկամաւոր հարազատ
գտողին չարեաց: Զակամայիցն՝ ընդ կամաւորացն.
[11] զբռնացելոցն՝ ընդ հաւանականացն. զեկամտիցն՝
ընդ բնաւորականացն. զանօրէնութիւնս՝ ընդ ապա-
տուածութեան. զփոքունսն՝ ընդ սաստկագունիցն.
զնուազունսն՝ ընդ յոլովիցն: Զանճառիցն իմոց՝
իբր զճառելեաց գիտողին. զանգրելոց վնասուցն՝
իբր զնկարելոց տեսողին 'ի յարձան [12] մագնեստիս
վիմի. զթեթեւագունիցն [13] առ խտիր մտաց՝ իբր զլու-
տուար ծանրութիւն բեռանց. [14] զխնդիր չափոյ ծած-
կելոցն՝ իբր զճշդով պահանջումն սատերն սակի՝ 'ի
բերանոյ կիտին կորիւնի՝ չորեքդրամեան կշռութեան. [15]
զանդնդականացն գործոց՝ իբր 'ի յականջս ոչ արագ-
ժամանելոց: Զայսոսիկ յաճախեալ կուտեալ կրկին
յանձնառութեամբ, վերստին պատմեալ աստանօր
մեծաւ հեծութեամբ [16] զչէոցն՝ իբր զեղելոց, ընծայեալ
ոչ զպարտութիւն վանեցեալ անձինդ. զի ընկալցիս 'ի
փոխատուէն զշնորհօք թողութիւն [17] պարտուց մեղա-
ւորին. զոր տէրն արդարացոյց, եւ հրաշափառապէս
հռչակեաց, ամենապատիկ ներբողիւ կրկնեալ զգօ-
վեստ զզղջմանն՝ քան զպարսաւանս մեղացն:

Ը. Բարդեալ եւ դիզեալ անձինդ մեղապարտի՝ բամ-
բասանս յոքունս, զքոյսն [18] խոհերս բազմամամանեայս՝

անձն իմ կշտամբեալ յոքնախթանդ բանիւ։ Ո՜ չա-
րութիւն, զանօրէնութիւն, զվրիպութիւն, 19 զառ 'ի մար-
տին հանդիսէ փախուստ. զպարտութիւն, զմոլեգնու-
թիւն, զամբարշտութիւն, զապշութիւն, զթմբրութիւն,
20 զքունն արթնական, զառ 'ի յընթացմն՝ զնիր-
հումն, զխորհուրդն օտարոտի, զբանիցն նանրուն,
զզազրութեան հաճութիւն, զյամենալն 'ի նմին, զփա-
փագելն՝ ոչ ատելեացն, զանէրկիւղութիւն, զանսաս-
տութիւն, 21 զանհարթութիւն, զթերութիւն. զթիւրու-
թիւն, զլուծութիւն, զճչդութիւն, զանկապ արձակումն։
Ո՜ ծիծաղականսն, զվրնջողականսն, զկատակերգա-
կանսն, զգայթագղականսն, զպատրողականսն, 22 զան-
դէպ քաջութիւնս, զանյարմար մարտսն, զառանց
օրինի արիութիւնս, 23 զխեղդմունս հոգւոյն, զտա-
տանողականսն զերկչոտութիւնս, զբազմաստեղնեան
ձիւղսն զրահետականս, 24 զանպատկառ փարաք-
մունսն, զգժտութիւնս, զգժդմութիւնս, 25 զանդատ
ատելութիւնսն, զմարմանջմունսն դիւրըմբռնողա-
կանս, զփոքունցն զանկշռութիւնս, զխոստմանցն դժրո-
ղութիւնս, զուխտիցն մոռացութիւնս, 26 զնմանեացն այլա-
կերպութիւն, զկեղծեացն քողարկութիւն, զփառամո-
լութեան մերոսութիւն, 27 զյօնիցն յաւակնութիւն, զա-
պիրատութիւնս, զինքնասիրութիւնս, զնախագահիցն
տենչութիւն, 28 զհատուցանելն եղեռնականացն, զնո-
ցինսն՝ զանշահ աղճատանսն, զվայրապար բերմունսն,
զընթացակցութիւնս խորամանկութեան բանսարկուին։
Ո՜ բանիւն 29 սերմնակաթութիւն, զվաճառումն կե-
նացն՝ ընդ գնոց սատակմանն, զկորուստ աւանդիցն,
զհայրենեացն ծախս, 30 զկապարանն ձգողական՝ զփո-
կով լծոյ երնջոց անխզելի ըմբռնմամբ՝ զանօրէնու-
թիւնս, 31 զյարաթաթաւ տղմբնակութիւնս, զլքումն
լաւացն, 32 զընթադրութիւնս անկարծիցն, զկնի դար-
ձին՝ առ նոյն դարձ դաժանական. 33 Ո՜ նորոգ մտացն,
զօտար խորհրդոյն, զանկայուն կամացն, զհաչման
հագագլին, զէութիւն չնչոյն, 34 զևսն քան զսահման կա-
նոնացն դրութեան՝ զիշխանականին զամենասփիւռ բա-
ցարձակութիւն. և զոր չէ ճառելի, և կամ գրելի, և
կամ պատմելի, և կամ յերես դիմաց բերելի։

Գ. Եւ արդ՝ զիա՞րդ բժշկեսցիս՝ անձն իմ եղկելի,

'ի յայսքանեաց տեգաց խոցոտեալ, բարձեալ թողեալ այր մի [35] տարագիր անողջանալի, ըստ մարգարէին. քանզի մի 'ի վերագրելոցդ՝ բաւականապէս զօրէ սատակման, թող թէ այսքան դասք սպանողաց՝ դժնէից դահճաց՝ շուրջ պաշարողաց: Մանաւանդ զի [36] ոչ այսու և եթ նմանագրութեամբ կշռի տարացոյց տարժանեցելոյս. այլ զոր օրինակ անթիւ բազմութի կայտառաց կարճաց խայթողականաց՝ 'ի ստորին մասունս ծայրից տտնոյն զօրհասական թոյնս բերելոց, և յաման մաշկեղէն արկեալ՝ ամփոփէ զեռեցն շաւիղ՝ կապարանին շրջափակութեամբ. ցուցանի արտաքուստ բարիոք, իսկ 'ի ներքուստ համբարք չարի, և պահեստ կորստեան, և կոյտ կսկծման, և գործօնեայք սատակման, և մշակք մահու: Արդ՝ [37] այսոքիկ են ամբարեալքն քո՝ անօրէնութե տաժանեաց թշուառաքիրտն թոշակք՝ [38] անձն պարտական կրկին սատակման. որ կամաւորաբար ընկալար 'ի քեզ, զոր թշնամին սերմանեաց 'ի վերայ ցորենոյն՝ յագարակի աշխարհիս. ո՛վ այր անմաքուր՝ ամբարիշտ և ծոյլ, բնաւին ատեցեալ, սիրօղդ մտացդ ախորժմամբ զլցեալսն ամ անառակութբ. և զոր առաքեալ ցուցանէ զթիւս բանիցն՝ սարսափելեացն կշտամբողաց, աստուստ սկսեալ մինչև 'ի կատար կանոնի այնր պայմանի, և որ հասեալ են առ՝ յոյ իրաւանցն վերայ, եթէ որք զայսպիսիսն գործեն, և կամ կամակից են, արժանի են մահու: Արդ՝ ես ինձէն զիս ինքն պարտ վարկայ կրկին հատուցման՝ կորստեան սատակման 'ի մահ դատապարտութե. այլ [39] անխայեա՛ յիս ողորմութեամբ՝ բա՛րեգութ, կենդանի, հզօր, կա՛մարար, կա՛րօղ, հնա՛րաւոր, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

(1) ԶԵՐԻԿԱՄՈՒՆՍ ԽՈՐՀՐԴՈՅՍ, Զկրկին մասունս երիկամանցդ որ է գործարան ցանկականին կրկին պղտորիչ խորհրդոց, այսինքն ախորժութե առ հեշտալիսն կամ առ չարս, և անախորժութե առ որոմալիսն կամ առ բարիսն. կամ զի կրկին կիրք ծնանին 'ի ցանկականն, այսինքն ցանկութի յախորժելին, և փախուստ յանախորժիցն: Արդ՝ պնդեալ առ է հաւատովք զմէջս ցանկականիդ, խոստովան լեր ԲԱՐԵԲԱՐԻՆ ած, որում ամ ինչ յայտնի է, զնոյն մեղսն երբև զգործոյ, զաներևոյթն երբև զտեսեալ, ևն: Այ այսպէս խոստովան լեր. իսկ քահանայն՝ այնպէս

որպէս և խօսք եղեալ է․ այսինքն զմտացն իբրև մտաց, զաչացն իբրև աչաց են ։

(2) [illegible] ։ Զհայեցուածոցն․ այլ օրին․ [illegible], որ համաձայն է այլ հասուածոց, [illegible]․ իբրև արգեամբք կամ արտաքին գործովք եղեալ մեղաց ։

(3) [illegible] ։ Զխօսելն կամ զբանս բերանոյ խոստովանեալ [illegible], իբրև գործովք վճարեալ չար ։ 3 օրին․ [illegible] ։

(4) [illegible] ։ զբարկութ՟ շարժումն ձեռին խոստովանեալ [illegible], աշխատողի կամ գործողի 'ի հեղումն արեան, կամ, գործողի զհեղումն արեան ։

(5) [illegible]։ Զհամարձակ և զանխտիր ծիծաղելն, [illegible]․ իբրև զկամաւ թուլանալ 'ի շնորհէ համեստութե և զզգօնութե սրտի․ զի անժամ ծաղր՝ նշան է թուլացելոյ 'ի բարեկրօնութէ․ որպէս ասաց հայրն մակար ։ ( Վարք հարց․ 23 ։ )

(6) [illegible] ։ Զերդնուլն առանց հարկի, թէպէտ և '[illegible], 'ի պատշաճ իրս իցէ, և թէ 'ի [illegible], յանդէպ իրս․ զի երդումն թէ և ճշմարիտ իցէ, սակայն առանց հարկի արարեալ անխոհր, անպատուութի է անուանն այ, և վտանգ ստորելոյ յանարժան և 'ի սուտ երդմունս ։ Արդ՝ զայնպիսի երդմնական բանս խոստովանեալ իբրև զգործակցութիւն [illegible] սատանայի, կամ իբրև զնման գործ խաբեբայ մարդոյ ։

(7) [illegible], զթուլանալն 'ի գործս առաքինութե [illegible], իբրև զյաղթել զօրաւոր առաքինեաց․ կամ, իբրև զյաղթել և անկանել զօրեղ պնդութե և արիութե․ կամ որպէս թէ յաղթեալ իցէ զօրաւորն մեր քն․ զի լքումն զինուորին՝ համարի լքումն զօրագլխին, որպէս ասի զքաջն յուդայէ մակաբէան․ (ա․ մակ․ Թ․ 7․) թէ 'ի վատասրտել զօրաց իւրոյ՝ լուծաւ, լքաւ, անկաւ ։

(8) [illegible] ։ Զանհնազանդութիւն, զգլխապարձութիւն խոստովանեալ [illegible], իբրև զծնունդ անօրինութե․ զի անհնազանդութիւն մեծ վնաս հասուցանէ բարի հրամայողին․ կամ զի յանհնազանդութէ առ իշխանն՝ բազում վնասք ծնանին 'ի քաղաքն և 'ի ժողովուրդն ։

(9) [illegible] ։ Զլոկ ամբարհաւաճելն խոստովանեալ իբրև ունայն և մնոտի խօսք գոռոզանալ հակառակ վեհից կամ իշխանաց ։ 2 օրին․ [illegible] ։ կամ իբրև համեմատել զանձն առ գերազանցեալսն 'ի մարդկանէ ։

(10) [illegible] ։ Զհպարտութիւն խոստովանեալ էր իբրև զկամաւոր ծնունդ հպարտ սատանայի գտողին չարեաց ։ Առաջին մեղք յաշխարհի հպարտութիւն եղև, իբրև անդրանիկ և յոյժ սիրելի ծնունդ սատանայի կամացն ։ Բայց 3 օրինակք գտնին, իբրև [illegible] հպարտ, ա՟ այնպիսի հպարտ՝ որ ոչ կամի բնաւ ստորանալ 'ի սատանայէ, ոչ բնաւ կամի ուղղիլ, խոնարհիլ ։

(11) [illegible] ։ Զմեղացն գործելոյ 'ի բռնութէ կամ յերկիւղէ՝ խոստովանեալ ընդ [illegible], ընդ մեղացն որք գործին ինքնայօժար կամօք ։ [illegible], զառացական մեղացն, կամ զոր չար օրինակաւ և խրատու այլոց գործեմք, խոստովանեալ ընդ [illegible], ընդ մեղացն որք գործին 'ի բնական կարիս կերակրոյ, ըմպելեաց, քնոյ, ևն․ կամ ընդ մեղացն որք յապականութէ բնութե ինքնին ծնանին․ որպէս եկամուտ է հայհոյութի, գողութի, սպանութի, ևն․ իսկ բնաւորական՝ ծուլութի, անժուժկալութի, զանձն արդարացուցանել, ևն ։ Յայսպիսի բանս նախադրութիւն ընդ, կամ իմանի հանդերձ, այսինքն զակամայն խոս-

տովանեաւ հանդերձ կամաւորօք են, և կամ խմանի փոխանակ, իբր ասել, զակամայ մեղսն խոստովանեաւ փոխանակ կամաւորի, զեկամուտն փոխանակ բնականաց, զփոքունսն փոխանակ մեծաց, են: Զանօրէն գործսն խոստովանեաւ ընդ ապաշխարութեն, փոխանակ անածունէ, կմ իբրև ուրացութիւն ծյ. զի անզգամն ասէ 'ի սրտի իւրում, թէ ոչ գոյ ած:
(սաղմ. ծբ. 1:)

(12) Մագնէսարիա Հին. ծո մագնիսեայ, յոյժ կարծր քարի: Զայն մեղսն որք յինէն ոչ անցանեն 'ի գիր, խոստովանեաց Աշ իբրև նկարեալս առաջի նորա 'ի կարծր վիմի անջնջելի, ըստ այնմ. * Մեղք յուդայ գրեալ են գրչաւ երկաթեաւ ||: (երեմ. ժէ. 1:)

(13) Աւ խաէր մաոյ: Զմեղս թեթև կարծեցեալս ըստ դատման կամ համարման մտաց՝ խոստովանեաւ իբրև զծանրութեն բեռանց մեղաց:

(14) Զխնդիր ըմպոյ: Զքննութեն որքանութեան մեղացն ծածկելոց 'ի սրտի, որպէս ճշգրիտ պահանջեաց զչափ սատերին ծածկելոյ 'ի փոր ձկանն: (մատթ. ժէ. 26:) Սատեր, բառ յունական՝ ստատեր. որ ուղղական է, այլ ատա իբր սեռական գնի փոխանակ ասելոյ սատերի: Նշանակէ զդրամ ինչ լրէտրդամեան կշռոյթ, չորս դրամ ծանրութե. որոյ արծաթին ըստ աժէիցն էր իբր մի զօլոթայ:

(15) Զանդնդականացն: Զ'ի խորս սրտի եղեալ մեղացդ խոստովանեաւ իբրև յերկինս ժամանելոց:

(16) Զչէոյն: 2 օրին. Ղչէոյն. որ առաւել սովորական հոլով է. բայց գոյ և առաջինն. որպէս ('ի կոչ. ընծայ. ժգ. համար 7:) * Իցէ ած եօյն ||: Արդ՝ ասէ, զեղելոյն կամ զուչգործեալ մեղացդ պատմեաւ իբրև զեղելոյ, ոչ սատութե, այլ ճշմարտութե. այնու զի թէ ոչ աէր պահէր զքեզ, անկանէիր 'ի նոյն մեղս, յօժար գոլով 'ի չարն, և անդադար գրգռեալ 'ի դիւէն. ուստի վասն նոցա ևս պարտապան եմ ծյ իբրև պահպանողի: կամ, Ղչէոյն, խմա զթողեալ մեղաց, որք թէպէտ և ոչ գոն այժմ, բայց դու խոստովանեաւ իբր թէ իցեն: ընծայեալ ծյ. խոստովանեալ ծյ զյաղթիլ քո, կամ զպարտաւորիլդ:

(17) Պարտուց մեղաւորին: Այս մեղաւոր՝ խմանի կինն պոռնիկ, զոր արդարացոյց Քս. (Ղուկ. է. 44:) 2 օրին. Մեղանաց. մի օրին. պարտեաց. այսինքն շնորհօք թողութե պարտուց մեղացն՝ զոր աէրն քաւեաց, կամ յորմէ արդարացոյց: Արդ ասէ. զոչ գործեցեալ մեղդ և կամ զթողեալսն խոստովանելով Աշ իբրև թէ գոն այժմ, ընծայեաւ նմա զքո պարտաւորիլն. որպէս զի ընկալցիս զձիրի թողութե պարտուց մեղաւոր կնոջն, կամ պարտուց մեղացդ. ոչ լոկ արդարանալով, այլև գովութե, որպէս զմեղաւոր կինն զարմանալի օրինակաւ հաչակեաց Քս, մեծաւ գովեստիւ կրկին անձնացուցանելով զզղջումն նորա քան զպարսաւանս մեղացն: Քանզի պարսաւեցաւ նա ծածկապէս 'ի փարիսեցւոյն՝ խորհելով թէ մեղաւոր է նա. բայց Քս զգործս զղջման նորա մի առ մի թուելով, զօծումն գլխոյն, զլուացումն և զհամբոյրս ոտիցն, և զսրբել հերացն, ասաց թէ՝ վասն զի յոյժ սիրեաց, թողեալ լիցին նմա բազում մեղքն: Եւ յետոյ կրկին ասաց՝ թողեալ լիցին քեզ. և ապա երրորդ անգամ, հաւատք քո կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութե: Տեսանես, որչափ առաւելաւ գովեստ նորա քան զպարսաւանսն: Եւ եթէ այս կին և օծումն նորա նոյն համարիցի ընդ պատմեցելոյն 'ի մատթ. իզ. 7. որպէս երևի կարծեալ սէյ վարդապետաց 'ի բանն ըգ. 1. առաւել ևս հաչակեցաւ գովեստ զղջման նորա քան զպարսաւանս մեղացն, այնու զի լինելն նր մեղաւոր՝ ծանուցեալ էր 'ի միում քաղաքի ևեթ. (ղուկ. է. 37.) իսկ զղջումն նորա և դարձն եղև քարոզելի ընդ ամ աշխարհ ըստ տն բանի: (մատ. իզ. 13):

(18) ԽՈՀԷՐ ԲԱԶՄԱՄԱՆԷԱՅՍ : Թուեալէսւ փոխատուն ԱԾ բազմապատիկ քան զպարտուն անձեցոյց զգոլեաւ զզջացելոյ կնոջն , բայց դու անձն իմ՝ մի՛ ապաւէր այնպիսում գոլութե . մի՛ զի ոչ զոյգ այնմ մեղաւորի ունիս զզջումն . և միւս՝ զի թէ և ունէիր , քեզ անկ է միշտ զարխոդ- յիշել : Վասն որոյ ԲԱՐԴԵԱ՛ ԴԻԶԵԱ՛ , յաճախեա՛ , բե՛ր յառաջ ոչ զո- վեստս քեզ , այլ ԲԱՄԲԱՍԱՆՍ բազումս , զքո ունդն կամ զգարշութիւնս բազմազանս , ՅՈՒՆԱԽԲԱՆԴ ԲԱՆԻՒ , յոյժ խթող և կսկծեցուցիչ բանիւ :

(19) ԶՍԱ 'Ի ՄԱՐՏԻՆ ՀԱՆԴԻՍԷ : Զփախչելն 'ի հոգևոր պատերազմէ . ը , 'ի նեղութէ , յաշխատութեց , ևն :

(20) ԶՏԵՍԱՆՆ ԱՐԹՆԱՑԱՆ : Զննջելն յարթնութե ժամանակի , զանհոգու- թեն 'ի ժամ գործոյ :

(21) ԶԱՆՀԱՐԹՈՒԹԻՆ : Զբրտութեն , զանմարդութեն : կամ զանհաւա- սարութեն և զփոփոխական լինելն 'ի բարին : ԱՃՇԴՈՒԹԻՆ , զկարի խնայումն ընչից , մարմնոյ , ևն : որպէս ընդ հակառակն , ԱՆԽՆԱՅ ԱՌԱՏՈՒԹԻՆ , զան- զուսպ կամ զանչափ ընդարձակութեն յուտել , 'ի խօսել , 'ի մխել , ևն : ԱՆԸՆԴՈՒՆԱԿԱՆ , զցանկական շարժմունսն :

(22) ԶԱՆԴԷՊ ՔԱՋՈՒԹԻՆ : Զանկարգ քաջութիւնն . որպէս արկանել զանձն 'ի վտանգ , ձեռնարկել 'ի գործ քան զկար , մեծաբանել 'ի գի- տութիւն , ևն : ԱՆՅԱՐՄԱՐ ՄԱՐԴԱՆ . զխառն կի՛ր անպատշաճ եղանակա- ւ մարմնչելն . որպէս թէ ընդդէմ որկորամոլութե մարմնչել լաւութ , և ոչ նուազութ կերակրոյ . ընդդէմ բարկութե հակելով , ևն : կամ անո- րոշաբար մարմնչել ընդդէմ մեղաց , և մոլութեց , ոչ հայեցեալ 'ի գլխա- ւորսն . 'ի փոքունսն առաւել խղձելով քան 'ի մեծամեծսն . կամ ոչ ընտրելով թէ կայ մեղք և մոլութի՝ որում յաղթելի է փախչելով . որպ հեշտասիրութեն . և է՝ որում յաղթելի է 'ի վերայ յարձակելով . որպէս անհամբերութե , ևն : ԶԱՆՑ ՕՐԷՆԻ ԱՐԻՈՒԹԻՆ . առանց կանոնի 'ի դժուարինս ձեռնարկել . որպէս անառաջնորդ և ինքնագլուխ վարել յառաքինութիս , առանց աշակերտութե վարդապետանալ . մինչև ան- ցեալ ընդ մաքրական ճանապարհն , զմիաւորութիւնն ընդ այ խնդ- րել , ևն :

(23) ԶԽԵՂԴՄԱՆՍ ՀՈԳՒՈՅՆ , որ յանկարգ ուտմութէ : ԱՊԱՓԱՆՈՂԱՑԱՆՆ ԱՆՀԱՇՏՈՒԹԻՆ : յայլ օրին . կխոխ զառին . այսինքն զտարակուսանս և զերկչոտութիս 'ի ձեռնարկութ հոգևոր վարուց , կամ 'ի վերայ թողու- թե մեղաց , ևն : ԱՆՀԱՄԱՊԷՆԷԱՆ . զբազում առեղանք շառաւիղեալ ճիւղս ԱՆՀԱՍՏԱՑԱՆՍ , անպտուղս , անգործս . այսինքն զանգործ մտա- ծութիս :

(24) ԶԱՆՊԱՏՃԱՌ ՇԱՐԱԴՐՈՒՄՆ : Զայս բառ իմացան ոմանք Թ հին լուծ . այլ և այլ , կամ պէսպիսութիւն , որ ոչ յարմարի բանիս : Այլ թուի ելանել 'ի պարզ բառէն ԱՊԱՐԴ . այսինքն շուն . որ 'ի գիրս եղիշէի . ( երես . 207 .) գրի բարակ , և յայլ հին ժողոված բառից գրի՝ ՇԱՐԱԴ . ուստի և ՇԱՐԱԴՈՒՄՆ նշանակէ զանպատկառ գործ շան . որով մարթ է իմանալ թէ զշնական ուփանս , և թէ զընդմիմեանս կատաղումն շանց , որով անպատկառաբար զմիմեանս խածանեն . և այս իմաստ համեմատ գայ այլոց մեղաց՝ զոր զկնի դնէ . այսինքն ԱՏԵԼՈՒԹԻՆ , ՆԱԽԱՆՁՈՒԹԻՆ , ևն . զի ոք վարդապետս սովորաբար զնմանսն առ միմեանս մերձ դնէ :

(25) ԶԱՆԴԱՐԴ ԱՐԷՆՈՒԹԻՆ : Զառանց քննութե եղեալ , կամ զանիրաւ ատելութիւն և զխորշումն յայլոց : ԱՆԱՐԺԱՆ ԴԻՒՐԸՄԲՌՆՈՂԱՑՆ : յայլ օրին . և հին . Լծ . ԱՆԱՐԺԱՆԱՑՆ . որ ուղիղ ևս է : Սովորաբար մեկնի՝ եւացումն ցանկութե , որ դիւրաւ ընբռնէ զզգայութիս : Սա- կայն զցանկութեցն յառաջագոյն ասաց . վասն որոյ թուի իմանալ զընդ- դէմն նախընթաց բանին , այսինքն անգատ ատելութեցն . որոյ հակա-

ռակն է՝ անբան և անձնահաճոյ սէրն առ այլս • որով դիւրաւ ըմբռնի որ 'ի բանս այնպիսի սիրելեաց, համեմատ բանի առաքելոյն, ( Բ • տիմ • Դ • 3 • ) * Կուտեսցեն իւրեանց վարդապետս ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց : || [illegible] , ոչ կշռելն , կամ ոչինչ համարելն զփոքր բանս , կամ զթեթև մեղս :

(26) [illegible] : 'Ի նմանակցաց օտարաբար ձևանալն • որպէս 'ի կարգակից կրօնաւորաց այլակերպ վարելն 'ի հանդերձս, 'ի կերակուր , 'ի բնակութե , ևն : կամ , նման գործովք բարեաց՝ այլակերպ լինելն 'ի սրտի : Յորմէ և [illegible] • առ ս բարեպաշտութե իբր քողով ծածկելն : Բայց զերկումն զայս մարթ է այլազգ ևս իմանալ • այսինքն զնման չար գործս այլակերպ համարելն , որպէս զանկարգ վրէժխնդրութիւն , որ է գործ բարկութե , համարել իբր ճշմարիտ նախանձ բարւոյ • և առ 'ի հաւանեցուցանել զայս՝ առնուլ պատրուակ զսուտ պատճառս կամ խրատուս :

(27) [illegible] : Զյօնսն բարձրացուցանելն , որ է գործ ամբարտաւանութե և գոռոզութե :

(28) [illegible] : Զչար հատուցանելն չարարարաց : [illegible] , զնոյա զանչափ [illegible] , չարաբանութիւն՝ թէ զոր դու առնես զնոյանէ , և թէ նոցա պատճառ լինիս առնելոյ :

(29) [illegible] • ( մի օրին • [illegible] : ) զմոռացումն ծածկելն բանին , կամ զխոստախոստմն , և զերդումն թուլութե յանձն խոստ : Բայց առաջինն յարմար է յաջորդ բանիցն , [illegible] , այսինքն զհօգևոր կենսաբեր պարգևս վաճառել ընդ ժամանակաւոր իրաց՝ որք են գին սստակման • կամ զերկնային կեանսն վաճառել ընդ մեղաց : [illegible] , ընդհանուր մկրտութե , և այլ պարգևաց : [illegible] , զվաստակս բարեացն իւր :

(30) [illegible] : 'Ի լաւ օրինակն կետևս զատանէ սյս 'ի յաջորդէն • բայց երկոքեան ևս հայեն 'ի բանն եսայ • ( Ե • 18 • ) և նշանակեն զչար սովորութիւն՝ որք իբր կապ բանի ձգեն 'ի մեղս :

(31) [illegible] : Մխալ թաթաւել , կամ շաղախել : մի օրին • [illegible] , պղծաշաղախ , պղծալից : [illegible] • զթողուլն լաւացն կամ առաքինեաց • որ կրկին իմանի , թէ կրաւորաբար , այսինքն • թողեալ լինելն կամ լքանիլն 'ի բարի սրտից իբր անուղղելի • և թէ ներգործաբար , այսինքն թողուլն զբարի սրտ՝ հեռանալով 'ի նոցանէ :

(32) [illegible] : Զներքոյ անկանիլն անկարծելի թշուառութեց և մեղաց : Բայց մի օրին • դնէ [illegible] • և իմանի առ ոսն հարկանելն կամ արհամարհելն զնուաստս և զանարգս , կամ զանկեալսն 'ի մեղս : Մարթ է նաև զբառն [illegible]՝ ըստ այսմ մտաց առնուլ • զի այսպէս նշանակէ ( 'ի մեկն • ոսկեբեր • Բ • 4 • ) * Ոսամբ ծնանիցին իբրս այս • • • բայց եթէ յանկարծ՝ 'ի վամթար սրտից || : Այս երկրորդ իմաստ առաւել համեմատ է նախընթաց բանին • որպէս թէ առել • զլաւսն և զառաքինիսն թողլ • իսկ զանարգսն կամ զմեղուցեալսն արհամարհեցլ : [illegible] • յետ գտանելոյն 'ի մեղաց՝ վերստին առ նոյն մեղս գտանալն , որ առաւել չար է և գարշելի :

(33) [illegible] : Խոստովանեսմ զանկարգութիւս մտածութեանցն՝ որք միշտ նորանոր ծնանին առանց գործոյ՝ զանկարգութիւս [illegible] • որք հակառակ են աւետարանին • կամ կրօնաւորական յանձնառութե • զանկարգութիւս [illegible] , անհաստատ յօժարութեց 'ի բարին • զանկարգութիւս [illegible] , վայրապար խօսից , կամ աղաղակաւ խօսելոյն : [illegible] , զեւացուցանելն զինչ աւոր մտոն , իբ ոխրացուցանել զզգայական , իբր մեծ ինչ դնել զայն , նմա անուլ և

ծառայել ։ կամ, զմարմինն որ մեռեալ էր աւազանաւ, վերստին կացուցանել կամ կենդանացուցանել ։

(34) Զնոյն բան զուհձման . սրտաքսյ սահմանի օրինաց, ... , զկամաց կամ զբանական մասին՝ ... , յամենայն իրս ընդարձակելն, կամ կարի յոյժ հեռանալն և օտարանալն ։ Եւ ... ։ Գոյ և այլ ինչ բազում զոր չկարեմ կամ ամաչեմ յայտնել, գրել, բերանով պատմել, կամ այլ օրինակաւ յիշեցուցանել ։

(35) Տարագիր ըստ ... ։ Երեմ. (ԻԲ. 28. 30.) * Գրեա զայրդ զայդ՝ այր տարագիր ։ ||

(36) Ո՛չ ... ։ Այսոքիւք վերապրեալ օրինակօք մեղաց ոչ չափի որպիսութեն աշխատելոյս 'ի չարիս . այլ են իբրև զբազմութեն կարծաց . են, որք ... , զմաշտպեր թոյնս ունին . զոր այս զեռուն 'ի տանն իբրև յաման մաշկեղէն արկեալ, փակէ ... , զծայր տանն ընդ որ թոյնն արտաքս ելանէ, ... , շուրջանակի գնտակերպ կապելով զխայթոյն ։

(37) Ա... ։ Որպէս կարիճն արտաքուստ բարւոք երևի, բայց ներքոյ 'ի տանն ամբարեալ ունի զթոյնս կորուսիչս և կսկծեցուցիչս, որք պատճառք են սատակման, այսպէս և ես արտաքուստ բարեկրօն երևեալ, բայց ներքոյ լցեալ կամ տացեալ չարեօքս, որք են անօրէնութեն վատակից ... , այսինքն վարձք տացեալք ... թշուառութեն, կամ թշուառացուցիչք ։

(38) Ա... : 2. օրին. ... : Վասն այսքանեաց անօրէն գործոց արժանի եմ կրկին սատակման, կամ որպէս 'ի վայր առէ, ... , թող թէ գովութեն ։ Զի զոր թշնամին տանիս ցանեաց զորոմն մեղաց 'ի վերայ բարի ցորենոյն, դու փոխանակ խլելոյ զայն՝ կամաւորաբար ընկալար, պահեցեր և գործովք պտղաբերեցեր զ... բանի առաքելոյն զլցեալն ամենայն անառակութբ, ( Հռովմ. Ա. ) ուր և 'ի կատարածի եդեալն կանոն առ խ ելանէ, թէ գիտէին զիրաւունն Այ՝ զի մահու արժանի են ոչ միայն գործօղք չարեաց, այլև կամակիցքն ։ Իսկ ես ոչ լոկ կամակից այլոց լինելովս, այլև անձամբ գործելով կատարեցի զչարիսն Ամ ։ Վասն որոյ զիս ինքն ... , պարտաւոր գտանեցայ կրկին հատուցման պատուհասին ։

(39) Ա... ։ 2. օրին. ... ։ Ես անձնապատ լինիմ առէ, այլ դու բարեգութ՝ գոնէ խնայեա ողորմութեամբ. զի չեմ արժանի լսել գովութեն ։

---

Սերովբէն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հօրոզէ, առ նոյն ... բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ԽԶ.

Ա. Որդ՝ վրիպելոյս ես յաւէտ ամենապատիժ, միշտ դժնեայ վայրենաբարոյ՝ անձամբ անձին՝ մահու կշտամբիչ. արածօղս զերամակս զազիրս՝ վայրագասունս խոզից արօտականաց՝ գարշութեան մեղաց, ² նախատ վարձկանութեց ։ Հովիւս տածա-

ղական [3] զհօրանս ուլուցն ամայաբնակաց՝ 'ի վրանս հովուացն, ըստ երգոյն երգոց առ իս առակին. որ ո՛չ իսկ ծանեայ զիս երբէք գիտել, թէ յո՛վ, և յո՛յր պատկեր, և վասն ո՞յր գոյացայ։

Է. Ահա 'ի յոտս տանողականս կրողաց երկուց՝ միակցորդ խորհրդականաց, [4] ըստ ձևոյ հրեշտակի կառուցար, իբր 'ի Թուխս Թևոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց՝ յաշխարհն հայրենական հայելով յիմար, զի՞րդ քեզէն կորացար յերկիր, զաստեացս միշտ հոգացեալ դիպուածս, ընդ ցիռս անապատականս համարեցար։ Իբր զՃրագ բազմաբերանեան՝ 'ի յաշտանակի մարմնիդ հաստեցաւ [5] գըլխոյդ բոլորութի, զի և այսու 'ի յօրինակէն շնորհէ մի օտարասցիս զած տեսանել, և զմնացականացն իմաստասիրել։ Բանականութեն յարգանօք՝ [6] կրկին Ճոխացար, զի զյաղթանակ բարեմասնութեն՝ որ առ քեզ եղեն, անարգել լեզուով խօսեսցիս։ Ձեռինդ հաստմամբ՝ [7] յարմարոստեան մատանցդ շառաւեղօք՝ զգործնականացն տնօրինել զտնտեսութի, իբր կցորդ համացեղութե ամենաբաշխ աջոյն այ՝ ած կոչեցար։ [8] Երից հարիւրոց՝ և տասանց վեցից յօդիւք շաղկապեցար, յարեալ 'ի քեզ ընդ նոսին 'ի նոյն՝ և պատշաՃական մասունս չափոց ազդողականաց՝ հինգ ըզգայութեց, զի մի և երևելիդ նիւթականութի քումդ տեսութե մնացդ դիտման անդատ եղիցի. զի ոմանք ստուարք են և զօրաւորք. և այլք փոքունք են և պնտանիք. կէսք կարծրակերտք՝ և ազդողականք. են և [9] գողտրականք՝ և պատուականագոյնք. դարձեալ կարևորք և պատկառելիք։ Իսկ [10] Թարգմանութիք սոցին տեսութե 'ի քեզ են նկարեալ իբր յարձանի անջնջականի՝ անձն իմ եղկելի. որպէս զի և տարր ժամանակաց՝ և շարունակ հետևման աւուրցն առպսակ ամին, իբր կանոնաւ իւիք սահմանեալ մասամբքդ՝ անսխալ և անայլայլելի պահեսցի։

Ը. Դարձեալ [11] այլ օրինակ հոգևորական, որ զսիրոյն յօդուած շաղկապէ 'ի մի առ եկեղեցի, քո խորհրդածի. իբր զի առանց բնաւից զուգամասնութե կապակցել ըծով հաւանականաւ զկէհն ընդ փոքուն, փնասեալ է հաստուածոյն անարատութի՝ յա-

նուն քոի ժողովելոյն. որպէս 'ի հատուածս և 'ի նուա-
զուի միոյ յանդամոցս անարգացս պատուաստելոյս
'ի մարմնի, կրճատեալ իմն է յօրինուած կազմուե [12]
մարմնոյ քում սենեկի զգայականի, և շրջեալ է ըն-
տանութե պատկերին յանարգ փոփոխութի։ Այլ արդ՝
այսպիսեօք, և ես բազմօք անզուգական հրաշակեր-
տութբ [13] եղական պատկեր այ՝ կշտամբեալ իսպառ
ոգի իմ գերի. և Թէպէտ յառաջին նմանութեն կո-
ղոպտեալ գտար պատուիրանին յանցաւորութբ՝ 'ի
դրախտին կենաց, այլ աւազանին լուսազարդ շնոր-
հիւն զհոգւոյն փչումն առեալ, և նմանութի ես կեր-
պարանին. և արդ ընդէր կորուսեր զփառսն երկնա-
ւորս, իբր նախաստեղծն երբեմն [14] զվիճակն երկրա-
ւոր՝ յադին դարաստանի. ընդէր փակեցեր քեզէն
քեզ զերկին, և զվերելից դուռն աղխեցեր. ընդէր
խառնեցեր ընդ ջրոյն մաքրութե զախտ արտասուացդ-
տարժանութե. ընդէր զլուացեալ զձորձ վերարկուին՝
գարշելի գործովք զաղրացուցեր. հիմ զեղեալ հան-
դերձին մեղաց պատմուճան՝ անառակութե վարուք
քեզ արկեր. ընդէր զտանողացդ ոտից սրբութի ճա-
նապարհաւն ժանդից աղտեղեր. ընդէր կրկնեցեր
իրաւադատին՝ զուխտազանցութի հին պատուիրա-
նին։ Ընդէր մերժեցար 'ի պտղոյն շնորհաց, իբր զա-
դամ 'ի ծառոյն կենաց. ընդէր [15] նենգեցեր քեզէն
քո կամաւ՝ զանստուեր յուսոյն յարակայութիւն.
ընդէր [16] պատկառանք անհամարձակելիք քոյին դի-
մացդ նպաստեցեր. ընդէր զլինեցար ընդդէմ քո ներ-
հակ, ով ընդունարան խելագարութե. ընդէր որսա-
ցար [17] 'ի ծուղակ մահու՝ Թողեալ զարահետն վստա-
հութե. ընդէր [18] կարԹիւ պատրանաց ածար՝ հա-
ղորդդ մարմնոյ կենդանարարին։ Այլ վերստին յու-
սացեալ 'ի նա՝ կարդամ նմա, [19] ապաւէն և լոյս, քա-
ւիչ՝ նորոգիչ՝ փրկիչ՝ կեցուցիչ՝ և կենդանարար.
ողորմած խնամօղ մարդասէր և անոխակալ բազմա-
գուԹ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

(1) Մահու կշտամբէն։ Ես ինքն խղճմտութբս կշտամբեմ զմահ մեղացս. կամ, 'ի մահ կշտամբիչ, այսինքն պարտաւորիչ։

(2) Նախատ վարձկանութեց։ Նախատելի, անարգ վարձկանութեանց, կամ ծառայութեանց։

(3) Ջհօրանօ ռուըռսոն ։ Հովիտ դարմանոց զերամակս վայրենի ձագուց այծից, այսինքն գազանութեանց մեղաց. և այս վասն այնորիկ՝ վասն զի ո՛չ Խոլ ծանէայ դէօ Էրէէէ, ո՛չ զմտաւածի զարժանաւորութիւն իմ ըստ բնութեան և ըստ շնորհաց. վասն այն յանարգ ծառայութեան մեղաց դարձայ ։ Եւ այս է բան երգոց. (Ա. Գ.) * Եթէ ոչ ծանիցես զանձն քո գեղեցիկդ ՚ի կանայս, ելեր դու զհետ գարշապարացն || եան ։ և յայս միտս մեկնէ զայն ո՛ր վարդապետս ՚ի բան մեկնութեան. (Երես 31 ։) Գէօէլ Բէ յօհ, յինչ գոյացոյ ըստ մարմնոյ, և ըստ հոգւոյ, և ըստ խորաքանչիւր կարողութեան նոցա. և յայր նմանութեան, և վասն որոյ պատճառի, զոյս և ՚ի յաջորդն բացատրէ ։

(4) Ըոսյնոյ հրէշտակի ։ Ո՛չ եթէ մարմնոյ կերպարան ընծայէ հրեշտակի, այլ զի մարդս երկու ոտիւք միայն հպելով յերկիր, և երկու բազկօքն իբր երկու թևօք վերամբարձ կանգուն կայ դէպ յերկինս, այսու ձևով յայտ առնէ՝ թէ ո՛չ է երկրաքարշ, այլ երկնաթռիչ պարտի լինել իբրև զհրեշտակ, և հայել յերկինս իբրև ՚ի հայրենիս ։ Այս՛ ՚ի ձև մարմնոյս նմանութեան հրեշտակի, և փոխանակն՝ երկնից փափագել ։ Իսկ դու սաէ՝ իբր քառատանի անստուն՝ զերկրաւորս միայն հոգայցար, և համարեցար ընդ չէօօ, ընդ վայրի էշս ։ Ասէին ՚ի յօօօ օօնօղօլծնօ հրօղօյ Էրէօօյ Մօլյօրօ Խօրհրօօլնօյ, մթուն ունի վասն չղջուն ոձոյն. զի բառն Խօրհրօօլնն՝ գոլով բացայայտիչ տրականին ՚ի յօօ. գնելի էր ՚ի տրական հոլով, բայց փոխադրութեամբ գնի սեռական, և այնմ համաձայնեալ ածականացն՝ հրօղօյ Էրէօօյ. ուստի պարզելի է, ՚ի յոտս տարօղս, երկուս միաբան խորհրդականս. այսինքն ՚ի միասին չարժեալս ։

(5) Գուէօյտ Բօըրօօբէ. Գլխոյդ բոլորակութիւն զանազան զգայութեանցն համառօտեալ իբր ծրագ բազմալոյս ՚ի վերայ մարմնոյդ. զի և այսու ՚ի յօրէնօլէն ըօրհէ, ՚ի վայելչութեան կամ ՚ի յարմարութեանէ օրինակին մի՛ ստարացցես ։ օրէնօլ՝ կամ զծրագն սաէ, զի որպէս ծրագի լուսով տեսանեմք ՚ի գիշերի, այսպէս լուսով զգայութեացս տեսանելով զարարածս, ՚ի նոսա աղօտաբար տեսանեմք զարարիչն իբրև ՚ի մթան. և կամ օրինակ սաէ՝ զնոյն իսկ արարածս, որք իբր հետք են արարչին այ. ուստի սաէ՝ որպէս զգայութեամբդ տեսանես զարարածս, նոյնպէս մի՛ ստարասցես նոքօք տեսանել զած՝ որպէս զխարդ երևի ՚ի նոսա ։ Կամ դարձեալ, օրէնօլ մարթ է առնուլ զաշտանակ սաճարին. իբրև թէ որպէս այն աշտանակ միշտ վառեալ կայր ՚ի ցոյցս ներկայութեան Այ, այսպէս և զմարմինդ կազմեացԱծ դնելով ՚ի նմա զգլուխդ իբրև ծրագ բազմալոյս, զի այնու տեսանիցես զած ։

(6) Կրէէն ձօխօյօր ։ ՚Ի վերայ զգայութեանցդ յաւելաւ և բանականութիւն, կամ խօսողական զօրութիւն, զի զգօլութեան հաղորդութեան բարեացն որ յայ, քարոզեսցես ։ Կամ, Կրէէն ձոխանալ խմանի համեմատութեամբ առ անասունս. զի նոքա թէպէտ ունին նման մարդոյ զգայարանս գլխոյն, այլ ո՛չ զխօսնական զօրութիւն, որ յատուկ մարդոյ է ։

(7) Յօրմօրօօբէօն մօօօնօօ ։ մի օրինի. յօրմօրօօօօն մօօօնօօ ։ Զձևսդ համդերձ մասամբքդ հասեալ այծ, զօօրծնօլօնօյն, զարհեստական գործոց իբր վճարել. որով նման լինելով արարչական աջոյն այ, այծ խօնօօր, այսինքն ստեղծիչ՝ յօրինող արհեստական իրաց, որպէս նա՝ բնականացն ։

(8) Երէօ հօրէօրօօ ։ Երեք հարիւր և վաթսուն մասամբք կազմեցար, յաւելեալ ՚ի նոյնս և զյարմար թիւ ըէօօ օղօօղօլնօյ, զգայուն մասանց հինգ զգայութեանց. որով ընդ ամենն լինի 365 ։ զէ Փ և Էրէէէլէօ Նէօբօլնօօբէ, զզգայութիւնդ տուան, զի մի՛ արտաքին ներթական կաղմութեան մարմնոյդ՝ տեսութեան մնացդ օօօօ Էղէօյ, անծանօթ կամ

անկայտ մնացէ. այլ տեսանելով և քննելով զզանազանութիւն, զզօրութիւն և զգործ իւրաքանչիւր ոսկերաց և յօդից, անտի ծանիցես զզօրութիւն և զիմաստութիւն արարչին. և 'ի միտ առցես՝ թէ է մարդս իբրև փոքր աշխարհ՝ բովանդակի 365 մասամբք, որպէս ընդհանուր աշխարհիս ժամանակն պատկի 365 աւուրբք: Զյիշատակեալ թիւդ ոչ է մարթ իմանալ 'ի վերայ ոսկերացն միայն. զի նոքին ըստ երևելի անդամանցն՝ ոչ անցանեն քան զ304, ատամամբքն հանդերձ. առանց որոց ոմանք գտնեն 249, այլք՝ այլազգ: Այլև զի որ վարդապետս զկնի առէ՝ ոմանց լինել փափուկ և աղտողական, և ոմանց կարևոր և պատկառելի, որ ոչ պատշաճի ոսկերաց: Աստի երևի թուել զամենայն ոսկերս հանդերձ անդամօք և այլ մասամբք մարմնոյ ըստ հաշուելոյ բժշկաց այնր ժամանակի:

(9) Գողտրաջանէ: փափուկք, կակուղք, որպէս լեզու, թոքք, սիրտ, և այլն:

(10) Թարգմանութիւնէ: Բացայայտութիւք կամ խորհուրդք այսպիսի կազմութեան մարմնոյդ նկարեալ են 'ի թիւ մասանց մարմնոյդ. որպէս ... , երբ զի և սկիզբն կիսանի փոքր մասն ժամանակաց, և ... հետևանն, և հետ զհետէ տևողութեան յաջորդութեան աւուրցն. առ ... , մինչև 'ի կատարումն տարւոյն, երբ ... իւիք, երբ կանոնաւ համեմատութեան ընդ 365 թուոյ մասանց մարմնոյ, և աւուրց տարւոյն՝ ամբողջ պահեսցի: Բացայայտ իմաստքն են. մասունք մարմնոյդ, և աւուրք տարւոյ զուգաւթիւ սահմանեցան, առ 'ի նշանակել քեզ թէ որպէս փոքրիկ մասն մարմնոյ պիտանի է և կարգեալ առ յայ, նոյնպէս և փոքր մասն ժամանակի՝ պիտանացու 'ի գործ արդարութեան. կորուստ մասին ինչ ժամանակի այնպէս ընդ դատապարտանաւ է, որպէս և մասին մարմնոյ:

(11) Ասւօրէնայ: 'Ի միաւորութեան և 'ի կարգի մասանց մարմնոյն՝ խորհրդածէ դարձեալ զարտաքին միաւորութիւն անդամոց եկեղեցւոյ. երբ զի որպէս 'ի հատանել միոյ անդամոյ՝ ոչ մնայ ամբողջութիւն մարմնոյ, այսպէս առանց հաղորդակցութեան իւրաքանչիւր հաւատացելոյ՝ հատանելով վայրագունից առ մեծն, մնասի ամբողջութիւն մարմնոյ եկեղեցւոյ:

(12) Մարճոյ փուճ պէնէկի: 4. օրին. Մարդոյ փուճ: 'Ի հատանել կամ 'ի պակասել միումն ևեթ յանդամոց մարմնոյս՝ որ է սեննակ մարդոյս, թերանայ կազմածն ողջոյն. և ընդանութէ պատկերին, հարազատ և բուն կերպարանք մարմնոյն փոխարկին յանարգ ձև և 'ի տեսիլ:

(13) Եղաջան պատկեր ոյ: Սաեղծեալ կամ արարեալ պատկեր ոյ: Իսկ զնմանութիւն պատկերին՝ յայս գլուխ բաղմանեայ բացատրէ, այսինքն ըստ մարմնոյ մասին. ըստ որում ուղիղ ձևով մարմնոյն՝ ցուցանէ զերկինս լինել իւր հայրենիք, որպէս ոյ սեպհական տեղի սաին երկինք. նոյնպէս ձեռակերտօք ցուցանի լինել արարիչ արհեստականաց, որպէս ած՝ բնականացն. մասամբք մարմնոյն բովանդակէ յինքեան զշրջանս ժամանակաց, որպէս և ած յիւրում յաւիտենականութեան: Իսկ զնմանութիւն պատկերին 'ի կողմանէ հոգւոյն և շնորհաց՝ տատանօր հարևանցի յիշէ աստանօր. և Նա Բաղմօփ անղուգաջան հրաշակերտութէ, այսինքն, բաց յասացելոցս՝ առաւել ևս բաղում անհամեմատ և հրաշալի կազմութէ հոգւոյդ և օծմամբ շնորհաց՝ հաղորդեալ պատկեր ոյ:

(14) Զինձակի երկրաւոր: Դու անձն իմ՝ որ մկրտութեն վերստին եղեր նմանութիւն ոյ՝ շնորհօք, ընդէր դարձեալ կորուսեր զերկնային փառսն, որպէս ադամ կորոյս զերկրաւոր վիճակն, այսինքն զանմահութիւն մարմնոյն, զանցաւութիւն, զանտրտում զուարճութիւն, յայդն դրախտին,

յեդեմական դրախտին ։ Վասն էր փակեցեր զերկին . և Շէրէւէթ , ըղ-
ձուսն ելանելոյ 'ի վե՛ր յերկինս՝ իբրև ձռնափակօք անդեցեր ։ Ճէտ Ճէրոյն .
ընդ ջուր մաքուր աւազանին մկրտութեն խառնեցեր զցաւալից արտա-
սուս ապաշխարութեն ։ Ճէրէյ . զհանդերձ մարմնոյդ՝ որ մկրտութեամբ
լուացաւ , գարշելի գործովք աղտեղեցեր ։ Ճէտէւս զզգեստ պատմուճա-
նին մեղաց՝ զոր 'ի բաց եդեալ էիր , վերստին արկեր զանձամբ , անառա-
կութէ . ( 3 օրին . անառակ ) Հարօտ ։

(15) Նէնգէշէր ։ Խարդախութբ՝ ապականեցեր զանդաւէր յուսոյն յարա-
կայութէ , զհաստատութեն անմոռանալի յուսոյն առ Քծ ։

(16) Պափլաւանք անհամարձակելիք ։ Անմոթ՝ որովք ոչ համարձակի
երևիլ , 'ի դէմս քո նզովեցեր , արկեր իբրև նպաստ և ծածկոյթ գար-
շութեան քո ։

(17) 'Ի ծողակ ։ Ականջ օրին . 'ի ծողակ ։ Ընդէ՞ր անկար կամաւ որս յո-
րոգայթ մահաբեր , թողեալ զորակէտն հոգևորէ , զհաստատեաց անկը-
տանգ ճանապարհն՝ զոր ԱԾ հորդեաց ։

(18) Կարեխ ածար ։ Ըմբռնեցար պատրողական կերով դա՛ւ որ հաղորդ-
եղեր կենարար մարմնոյն քնի ։

(19) Աղաւէն և լոյս , քաւել ։ 3 օրին . աղաւնեկոյս քաւել ։

---

Մէրտին յաւէլեալ հրէին հեծութէ՝ նորին հոգւոյ , առ նոյն
ողբոյս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# Բ Ա Ն . Խ Ա ։

Ա . Եւ արդ՝ զի՞նչ գոյ ասել ամաչեցելոյս յերե-
սաց մեծիդ աչաւորութե , բայց եթէ համ-
բանալ , և հող 'ի բերան եղեալ լռել 'ի սրտի , [1] ըստ
մարգարէութեն խրատու , աչս 'ի բարւոյն կարկա-
ռեալ 'ի յոյս ։ Իսկ եթէ զփականս շարժողութեան
շրթանցս բացից բռնադատեցից՝ խօսել կամեցեալ ,
դարձեալ զնոյն ձայն կրկնական եղերերգուե լա-
լեաց բազմուե [2] խէթ մտացս յառաջադրէ ։
Բ . Եւ արդ՝ ողբակից մեծ մեղաւորին անօրինելոյ
կամաւ առ 'ի մահ՝ զնորին դոչումն երկրորդեցից և
ես ընդ նմին . մեղայ տէր՝ մեղայ , և անօրէնութեց
իմոց ինձէն վկայեմ ։ Հիւսեալ ընդ նմին զբանս յխ-
ներորդի սաղմոսին , անթիւս գրեմ [3] զպարտուցս սակ
անձինս մեղանաց՝ [4] քան զհիւղ երկրի հողմահոս փոշ-
ւոյ՝ ընդ օդս ամենայն տարածեցելոյ ։
Գ . Մեղայ յերկինս և առաջի քո , ընդ անառակ
որդւոյն պատկառեցելոյ՝ հայրենի գթոյդ վերստին
դարձեալ՝ Թախանձ արկանեմ . զողորմելին ձայն ա-

ղերսանաց՝ արտօսրածին ողբոյք գոչման՝ 'ի տխուր դէմս մատուցեալ առաջի քոյ տարածանեմ՝ Հայր գթութեանց, Աստուած բոլորից, [5] չեմ արժանի կոչել, և ոչ ընտանին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլ և անպիտան ապաբան վարձկան։ Ընկալ զստուեալս տարագրական, պարտական վտասուց. և զցաւ քաղցոյս՝ ըլկանաց [6] նեղոյս նուաղեցելոյս՝ կենաց քո հացիւդ բժշկեսցես։ Լեր ընդ առաջ քո ողորմութեդ՝ [7] 'ի սկզբնաւորս ապաւինութե. զդեղս գթած և անախակալ՝ անօրհնեալս մեղապարտի՝ զնախակապուտ հանդերձին ծածկոյթ. աւանդակորոյս ձեռացս աղտեղեալ մեզօք՝ զկնիք մատանւոյն համարձակութե ամենառատ կամօք մատուսցես. զզարշապարացս թշուառութե մերկութե ոտիցս՝ պատսպարութբ աւետարանական [8] ամրավերարկու օդիցս կօշկաց՝ 'ի յօձին թիւնից միշտ ամրացուսցես։ Ո զուարակդ պարարակի եզլինդ երկնայնոյ, որ է միածին որդիդ քո օրհնեալ խոկապէս մարդասիրութբ՝ կարօտելոյս բաբեաց՝ նուիրեա. որ մատուցեալ միշտ՝ և անպակաս մնայ 'ի լրութե, [9] յարակայ զենեալ 'ի սպանդարանի անթիւ սեղանոց անսպառութբ, բոլոր յամենեսին՝ և բնաւ յամենայնում, էութբ յերկինս՝ և խակութբ 'ի ստորինս, աննուազ մարդկութեամբ՝ և անթերի Աստուածութբ. փշրեալ՝ և բաշխի 'ի մասունս անհատս, զի զհամայնն հաւաքեսցէ առ 'ի նոյն մարմին իւրում գլխոյ. քեզ փառք ընդ նմին՝ Հայր ողորմութե յաւիտեանս. ամէն։

(1) Ըստ Մարգարէութեն։ Բազում են 'ի մարգարէս այսպիսի բանք. բայց զոր Աստ վարդապետս ածէ՝ երեմիային է. (Ողբոց. Գ. 28.) * Նստցի միայն լռիկ 'ի տան իւրում. || այսինքն, 'ի սրտի։ և 29. * Տացէ հողոյ զբերան իւր. վասն զի կայ յոյս։ || Եւ յոյս հայի հեռաւորդ բանին. ահա 'ի Ծարաւոյն խորխորատէ 'ի յոյս. այսինքն լռեսցիս 'ի սրտի, հաստատելով կամ փառաւորելով 'ի յոյս ողորմութեն այ։

(2) Խելք մտաց։ Եթէ համարձակեցայց շարժել զշրթունս իմ 'ի խօսել, ոչ եթէ զօրհնութիւնս քո երգել կարեմ ըստ դաւթայ, այլ խոկոյն խիղճ կամ հարուած մտացս թելադրէ զնոյն ողբական ձայնս երկրորդել։ Ուստի ողբակից լինելով Մծ մեղաւորին; Մանասէի թագաւորին, որ կամաւ և ոչ անգիտութբ կամ 'ի տկարութե անօրինեցաւ, զմահ և զկորուստ իւր խնդրելով, զնորա գոչումն երկրորդեմ ես։

(3) Զպարտուցս ասէ։ Զհաշիւ կամ զթիւ պարտուցս, անձին մեղաւոյ, 3 օրին. մեղաց։ Ընդ ողբական ձայնս մանասէի կցորդեմ և զիմ սաղմ.

Ողորմեա՛ ինձ ԱԾ. և տուսէլ անհամար խոստովանիմ զհաշիւ պարտուց մեղացս քան զփոշի են :

(4) Քան ղհնող : այսինքն քան զփոշի : 2 օրինն . թան ղհող :

(5) Չէմ արժանի [illegible] 'ի քէն սիրողապէս, և ոչ [illegible] յայլոց [illegible] որդի քո. կամ, չեմ արժանի կոչել որդի քո, և ոչ ընաւ [illegible], բայց յայսմանէ, կամ 'ի վերայ այսր՝ անուանիլ վարձկան քո :

(6) [illegible] : Նեղութե՛ նուաղելոյս, կամ թուլացելոյս 'ի քաղցոյ :

(7) 'Ի [illegible] . 'ի նախկին կամ 'ի նախընծայ ապաւինութենս . որպէս զանառակն տեսանելով նախ առ քեզ դիմեալ, ընդ առաջ փութացեր նմա :

(8) Ա[illegible] : Ամբութիւն կէ՛ սնդադոյն ծածկող . [illegible], արտանելեաց ոտից, որպէս կօշիկ, սանդալ : Զմերկութիւն ոտիցն ոտիցս՝ զգայութեանց՝ պահպանեսցես 'ի թիւնից սատանայի պատսպարութբ ամրապահ կօշկաց աւետարանին, ըստ բանին եփեսաց . Զ . 15 :

(9) Զ[illegible] : Պարգեւ է շարադրութիւն . գլխաւորակդ՝ այն է երկնային եղն պարարակ, որ է միածին որդին քո, [illegible], որ միշտ մատչի պատարագ, և անպակաս միայ : Յ[illegible] : Մինչ մինչև 'ի կատարած աշխարհի զենեալ քս խորհրդաբար, 'ի [illegible], 'ի տեղւոջ՝ ուր սպանդք կամ ուտելի անասունք զենեալ լինին . և նմանութեամբ իմանի նը սեղան պատարագին : [illegible], բոլոր քս յամենայն սեղանս և 'ի Ճաշակօղս . [illegible] . և ամբողջ քս յամենայն մասն նշխարին, կամ բաժակին : [illegible] . գոյացութեամբ մարդկութեանն յերկինս, [illegible] 'ի [illegible], և նոյնն Ճշմարտապէս յերկրի 'ի նը խորհուրդն՝ բովանդակ մարդկութբն և անթերի ածութբն : [illegible] տեսակաց հացին, [illegible] ընդ տեսակօք հացին և գինւոյն, 'ի [illegible], բաշխի 'ի ներքոյ անթիւ մասանց նշխարին կամ գինւոյն՝ որք բաւական լինին պահել զտեսակս իւրաքանչիւր նոցա . կամ [illegible], իբր մակբայ՝ անհատաբար, առանց հատանելոյ կամ բաժանելոյ . այսինքն քս ըստ մասանց հացին կամ գինւոյն բաշխի բոլորն առանց բաժանելոյ իւրոյ : Զբաժանումն խորհրդական տեսակաց հացին և գինւոյն՝ ընծայել քսի 'ի խորհրդեան անդ, սովորական ոճ է վարդապետաց . յորոյ վերայ և ոսկեբերան ասէ ( Ճառ. իԴ . 'ի մեկն . Ա . կորնթ . Ժ . 16 . ) 'ի բանն, Հացն զոր բեկանեմք . * Բեկանի մարմինն քսի 'ի հաղորդութե՛, որ 'ի խաչին ոչ եղև, այլ ընդ հակառակն ասացաւ, ոսկր նորա մի՛ փշրեսցի . և այնպէս զոր ոչն կրեաց 'ի խաչին, կրէ վասն քո 'ի պատարագին, մանրելով առ 'ի լնուլ զամենեսին : || Զայն իմաստս դնէ և մեր վարդապետս ( 'ի մեկն . երգ . երգ . 165 : ) Զի [illegible] . զի զբովանդակ եկեղեցի Ճաշակողաց, միաւորեսցէ 'ի մի մարմին [illegible], այսինքն գլխոյն եկեղեցւոյ որ է ինքն քս . կամ [illegible] իմանի՝ քսի, այսինքն զի միաւորեսցէ զամենեսին 'ի բարոյական մարմինն այ հօր, որ է գլուխ քսի : Եւ բացայայտ իմաստ բանիս է, թէ քս ամբողջ բաշխի իւրաքանչիւր հաւատացելոց, զի ամենեքին միով հոգւոր կերակրով սնեալք, շնորհօք միաւորեսցին յայծ՝ իբրև մի մարմին խորհրդական : Յայս համառօտ բան աւանդէ նը վարդապետս զամենայն ուղղափառ Ճշմարտութիւն խորհրդոյ հաղորդութե՛ն ընդդէմ նորաձայն աղանդոց լուտերականաց և կալվինականաց . զի դաւանի՝ թէ Ճշմարիտ զոհ է պատարագն քսի, յորում ինքն իրապէս գոյացութբն գտանի . և ինքն բոլոր բաշխի հաւատացելոց, և ոչ թէ գոյացուն հացին կամ գինւոյն . և 'ի Ճաշակօղսն ներգործէ իւրովզօրութբ զշնորհ միաւորութե՛ ընդ այ :

Մերոյին յուսեցուած նշխէն հեծութեան՝ նորէն հանգոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ ԽԲ.

ա. Բարձրեալ, հզօր, անսկիզբն, անեղ, անբովանդակելի՛, աննիրհելի՛ ակնդ նկատող, ծնող անքննին փառաց միածնիդ. 2 իրաւացուսցես զիմս ողորմութ՟ի հերքեցելոյս ընդունելութեան՝ առ երկնայինս և առ երկրաւորս ։ Տօնեա՛ զկեալս կորուսելոյս՝ վերնականացն պարերգութ՟բ. աւետարանեա՛ բանիւդ օրհնութ՟բ զկենդանութ՟ի իմ մահացելոյս. 3 զբարեբաստութ՟ի կամացդ յայտնեա՛ գովեալ՝ բոլորից գոյից եղելոց. ստացի՛ր անուն քեզ՝ անճառ, և ինձ թշուառիս՝ նորոգ փրկութիւն. կորուսցես զգիր մուրհակի մեղուցելոյս ամբաստանութ՟ե. զվճիռ հոգւոյս մահու՝ ջնջեսցես կայլակօք արեան որդւոյդ սիրելւոյ. վստահութ՟ի փրկութ՟ե բարեաց՝ արեամբ քո՟ի քո նկարեսցես. ցո՛յց զսքանչելիս քո բարեգթութ՟եդ՝ ՚ի ձայն հարսանեաց քում հարազատի ։ Մի՛ փակեսցես դիմելոյս առ քեզ զառագաստ սրահի կենացդ յարկի. մի՛ տրոհեսցես ՚ի բազմականացդ, և ՚ի բարեացդ քո զրկեսցես. մի՛ պահեսցես ՚ի գանձարանիդ զնիւթեալ իմ պարտուցս անօրէնութ՟ի. մի՛ կնքեսցես ՚ի քսակ բարեացդ՝ զզաղրութ՟եց իմոց դարշութ՟ի. 4 մի՛ երկարս ինձ զվէր մեղացս՝ ՚ի յախտալից մարմինս ծածկեսցես. 5 մի՛ զփտութ՟ի նեխութ՟ե ցաւոցս՝ ինձ տնկակից մահու մնացուսցես. այլ բարձ բանիւ քոյդ ողորմութ՟ե 6 զժանտութ՟ին ապականարար, որպէս զի զատեալ ՚ի հիւծմանց ախտից՝ առողջութ՟են պատրաստեցայց. հնարաւորեա՛ գթութեա՛նցդ հայր մեծ խոցուածոյս՝ զօրեղ սպեղանիս, 7 կարեւոր կործանմանս՝ բարի այցելութ՟իս ։ Զի քո՛ եմ տէր ոգեսէր, 8 թէև առ մի նուագ բիւրս մեղիցեմ, բայց ո՛չ գրեցայց համայն մեղուցեալ՝ տուիչ կենաց իմոց բարերար՝ ՚ի շնորհ պարգևաց կենաց քոյ ապաւինեալ. զի ճանաչելդ զքեզ՝ բովանդակ արդարութ՟ի է, և գիտել զզօրու-

Թ՟իդ քո՝ արմատ անմահութե՟, որպէս և կանխաւ
իսկ գրեաց իմաստունն. և դարձեալ՝ տիրելդ քո
առէ՝ ամենեցուն, խնայել տայ քեզ յա՟մ. և դար-
ձեալ՝ մօտ է քեզ յորժամ և կամիս, կարող գտա-
նել։

Ը. Այս սողոմոնի յուսոյ աղերսանք՝ իմոյս առեալ
տիպ. քանզի ո՛չ այլ ոք բազմամեղ՝ [9] որ քան զնա՝
ինձ զուգաշաւիղ։ Երբեմն որդի, ապա ատելի. եր-
բեմն միջնորդ խաղաղութե՟ ա՟յ ժողովրդեանն, և յե-
տոյ խորոց որոշման՝ բազում խռովութե՟. երբեմն
օրէնք կենաց կացեալ, և յետոյ մուրհակ մահու
հաստատեալ. զերկնաւորին պաշտօն ընդոտնեալ, և
զօտարին անուն ծանուցեալ։ Անպատճառ օցտող. [10]
անկարօտ զրկող. անսովելի գող. գրգեալ տրտնջող.
փափկացեալ փախստական. [11] սեղանանենգ սարտու-
ցեալ. անպատասխանի մ՟սապարտ. քաղցրանոյց
հայհոյիչ. զաւակ հայրատեաց. [12] կտակարանացն
մատնիչ. մովսէսի չարախօս. մոռացօղ երախտեացն.
իմաստուն սխալական. ամենագէտ յանցաւոր. ամօ-
թապարտ զղջացեալ. [13] տարակուսեալ աշխատող. [14]
աղաչաւոր կռապաշտեալ. [15] յամբային դարձաւոր.
կաղակարծ ընկալեալ. կասկածաւոր հաշտութի. յա-
պայս յիշատակ. յերկբայս փրկութի. չաւատալի
գիւտ. [16] 'ի մանէ՟ մնացուած. խարդաւանեալ գերի.
[17] կիսակտուր պրծեալ. կամաւոր անձնամատն. տր-
մարդի յղփացեալ. բազմավրէպ հանճարեղ։ Ի
յընթացս բանից [18] երկեակ որոշմանց՝ ամենայն ու-
րեք բանս արկեալ ողբոց և ձաղանաց, մեծ պարսաւ՝
և փոքր գովեստ՝ իբր 'ի վերայ ինքնագրաւ կորստա-
կանի, երգիծանութի խառնեալ ընդ աշխար. բան
նորա՝ թելադիր բարդաւաճութե՟ ամենայն հասա-
կի, և խոստորումն նորին՝ 'ի շրթունս բնաւից թա-
ռանչ թախծութե՟ ողորմելիս իմն ազդեալ։

Թ. Զարմանամ, վհատիմ՝ տարակուսեալ ապշու-
թեամբ. զի թէ նա այնքան գթեաց, ինձ զի՞նչ պա-
տահեսցէ. զիա՞րդ անկաւ ամբարձեալն. զիա՞րդ սա-
սանեցաւ հաստատեալն. զիա՞րդ կործանեցաւ կա-
ռուցեալն. իբր օտարացաւ ծանուցեալն. զիա՞րդ [19]
զակատեցաւ զաւակն ընտրութե՟. զիա՞րդ [20] օրացաւ

մերձաւորն․ զի՞րդ աղօտացաւ փայլեցեալն․ զի՞րդ
պատանդեցաւ ազատեալն․ զի՞րդ անօրինեցաւ ու-
սուցիչն․ զի՞րդ նուաղեցաւ հռչակեալն․ զի՞րդ 21
անարգեցաւ փառաւորն․ զի՞րդ փոքրկացաւ մեծա-
տունն․ զի՞րդ ամբարշտեցաւ բարեպաշտն․ զի՞րդ
ամբարհաւաճեցաւ ընտրօղն․ զի՞րդ ունայնացաւ
պատարունն․ զի՞րդ կորեաց զուխտն՝ որ ընդ
բարձրելոյն։ Պատկառեմ ասել, թէ՝ և ընդ սան-
դարամետականին կապեցաւ․ զի՞ կայր նորա՝ և
կռոց․ ուստի՞ սէրն ընդ պատկերաց․ 22 վասն է՞ր
կամքն ընդ խորանաց։ Զի՞րդ ոչ յիշեցաւ յան-
դիմանութին սամուելի՝ առ սաւուղ եղեալ․ հմայք
ասէ՝ մեղք են, և ցաւս և աշխատութի ածէ թե-
րափ 'ի վերայ։ Զի՞րդ ոչ հայրենի յանդիմանու-
թին, կուռք ասէ՝ հեթանոսաց՝ դեք և անշունչք
են, և նման նոցա լիցին պաշտօնեայք նոցա։ Տէր
միայն ածէր զնոսա, մովսէս նախագրեալ յառաջա-
ձայն ձաղանօք՝ սաստիկս իմն ամբաստանէ, ոչ էր
ընդ նոսա ասէ՝ ածս օտարոտիս, զոր ոչ ճանաչէին
հարք նոցա։ Ո՞ւր է մահամատոյց այլազնեայ 23 ար-
ձանն փագովրայ․ ո՞ւր տգեղն և 24 անպանծալին սի-
դոնացւոց՝ իգական ամենանզով ձուլածոյն․ ո՞ւր
կանացի կերպին անգրելին խայտառակութի զազիր
տեսակին, որով ամօթոյ մարգարէքն զանամօրէն
դիմեցումն անխտրաբար, յանուն չարուե անժուժ-
կալ դիւին՝ անմծաբար ձօնեալ մոլէին։ 25 Տարա-
զէութի բարեբաստուէն՝ որ զնախնին որսաց 'ի կո-
րուստ․ յաղթեաց մեծութին՝ իմաստիցն առաւե-
լութե․ գերեաց գոռոզութին․ յիմարեցոյց փափ-
կութին․ վանեաց արծաթն ծառայեցուցիչ․ 26 յոգի
դատեցաւ զայրն տօնելի՝ հին զէնն կործանողին․ 'ի
գրկացն այ հանեալ՝ 'ի յոտս ստամբակին գթեցոյց․
մեռոյց մեղկութին․ թմբրեցոյց ծուլութին․ արբե-
ցոյց շուայտութին։ Ո՜վ դիւրապատիր մարմին երկ-
րածին, որո՞վք ձայնարկութեամբք զքեզ աւաղեցից․
քանզի ոչ տիրապէս առ նա հանդիպի ընդդիմաբա-
նութիս, այլ ամենից սխալողաց՝ կամաւ վրիպելոց․
վասն զի նուաստ է իմանալ, թէ 27 անիրաւ է պարծել
յիմաստս մարմնոյ, եթէ ոչ աստուծով դատեալ ըն-

տրեսցի․ որ զի թէ առ այս պայմանի՝ յիմար ոք իցէ,
և ՚ի հաստչին կամս յուսասցի, ո՛չ ևս ՚ի նորայոց ան-
տի ինչ կրեսցէ։

Դ․ ԱՅԼ քանզի սաստիկս և քստմնելիս ունի սողո-
մոն զդարձին իւրոյ յիշատակարան՝ ինքնապարսաւն
կշտամբութեամբ, իբր մռեալ իսկապէս համայն
աշխարհիս անձնասիրութեան․ զոր եթէ զիսկն ոք
նկատեսցէ, [28] Ունայնութիւնքն է իմանալի․ [29] այլ և ՚ի
մատեանս քահանայիցն՝ և ՚ի գիրս աքիայ սիլոնաց-
ւոյ, [30] յորում զփոյթն իւրում ընթացիցն՝ արտա-
սուելիս իմն յեղանակէ։ Ո՛ւր ջան․ անօգուտ վաս-
տակ․ անմիտ հետևումն․ անշահ արշաւանք․ ան-
կայուն երկք․ [31] օտարին իմաստք․ [32] ոչընչից հոլովք․
բամբասելի բերք․ անյարմար վարկածք․ սնոտի սեր-
մանիք․ [33] աւաղափուլ շինուածք․ ապականացու
ստացուածք․ քամահանաց տաժանմունք․ [34] ինքնա-
մարտ կռիւ․ ընդ ոգւոյ իւրում դատ․ [35] ընդունայ-
նաթօզ քիրտն․ վնասակար փափաք․ կորստական
շաւիղ․ վրիպակ ճանապարհ․ կործանական կրթու-
թի․ մոլորապատիր վարժութի․ հանապազասխալ
տեսութի․ [36] ակնայայրատ պչրութի․ պռունկակերպ
կերպարան․ ախտաբորբոք նիւթ․ [37] դժնեատեսիլ
գոյն․ յօքնատխուր գեղ․ [38] յոլովամեղծ ծուխ․ շո-
գի ցնդելի․ [39] վաճառ մերձ ՚ի յառ․ տաղաւար քակ-
տելի․ ընդվայր աղաղակ․ անպատճառաւոր ծաղր․ [40]
արհամարհելի ասպարէզ․ [41] անձնավաճառ գիր․ սա-
տակչական ելք․ անմտ մտածմունք․ ստայօդ ճառ․
զայրացուցանօղ զրոյցք․ [42] եպերանաց խծբիծ․ խե-
լագարութե խնդիր․ ամօթանաց ցոյցք․ խայտառա-
կանաց յայտնութիք․ առակ ապառնեացն․ ապաշա-
ւանաց գործ․ [43] ըմպահկանաց պատմութի․ հեղգա-
ցելոց օրինակ․ խորխորատ ծածուկ․ որս խաւարային․
մահագուշակ վիհ․ անյատակելի անդունդք․ ուղեկ-
ցութի սպանողաց․ յիմարութեան բարբանջմունք․
դարանակալաց վայր․ խարխուլ յարկ․ շինուած սա-
սանեալ․ կամուրջ խախտեցեալ․ [44] երևոյթ փախչե-
լի․ խաբօղ շողոքորթ․ անոպայ մատնիչ․ ընդդէմ
բարձրելոյն հակառակութի։ Ո՛ այս ամ մասունս
բանից խոստովանական կանոնադրութի, ՚ի սիրտս

ընաւից նախասերմանեաց ժողովոցս՝ կանոնադիր դարձելոց զղջման. որպէս [45] զի մի պարծեսցի ոք 'ի մարդկանէ բամբասաւորօք զինուորեալ նետիւք՝ զանձն և զընկերն խոցոտելով. քանզի կռապարիշտ է քողով ծածկեալն, որ զկերպարանսն միայն ունի, և զոչախորժելիս ստեղծչին կատարէ:

Է. Ու արդ նա՝ որ [46] ոչ այնքան մեղաւ, որքան զղջացաւ, մի իսպառ պախարակեսցի. այլ յիշեսցի այրն այն 'ի բարի, իբրև զհիմն յուսադրութե 'ի տերունի ոտմն դիմելոց, յորժամ հոգւոյն էջ յայցելութի ածութեն անբաժանելեաւ՝ կենագործել զանդ խոստովանեալսն. զոր մեռեալքն՝ ահա կենդանեացս անտարակոյս բերեն աւետիս: [47] Ընդ որում մաղթեալ իմ պարտաւորի՝ իմաստութեն ոչ ժամանելոյ, 'ի մեղանացն մասն կարգեալ, բարեբանեալ մեծիդ պաղատիմ. լի՛ց զնուազդ իմ բանագրութի՝ 'ի յերջանկին համարեղութի. նիւթեսցին ներկայիս հայցմունք՝ 'ի բարդաւաճին յարդաւորութի՝ 'ի գերաշխարան արքային աղերս. այցելութի խնդրոցս դիցի քո ընտրեցեալ վեհ արքայորդւոյն, զոր միածնիդ օրինակեցեր: Յարեանն կցորդութէ՝ զքո փառակիցդ ճաշակեցաք. տուր փրկութի քոյոյ ծառային՝ ամենահնար զօրեղ աջաւոր, 'ի ստեղծողիդ փառս աճեցուցեալ զանքաւելի մեղացն քնքումս: Յիշատակաւ խորհրդոց բարեաց՝ ընդ ողորմելյն նորոգեսցես. որ ամենահամ ախորժաճաշակ բազմապաճոյճ առակագրութ՝ զածութիդ քո քարոզեալ՝ 'ի մատեան լուսազարդ կտակի եկեղեցւոյ, ընծայեաց հետս բարութե՝ խոստովանութե մատչել առ քեզ՝ հայր: Քանզի ոչ հեռի յողորմութենէ առ այս ցոյց բանի է իմանալի, թէ անյուսութեանն կաթուած չէր անկեալ 'ի յեռանդն սրտին ըղձից, որ զճեպ զղջմանն փոքր ինչ կասեաց:

Ը. Արդ [48] 'ի յուշ բերեալ զոր 'ի քեզ անճառելի բարեմասնութիք, զգթութի քո ողջունեսցես. որով զկոչկոճեալն 'ի բազում դարուց՝ բամբասանաց քարանձգութե, երանութե վերարժանացի. որ յոքնահոսան արտասուաց ելիւք՝ զմէջ յատակի յարկին հե-

ղեղեալ ապարանիցն իւր խրախճանութեան սաստկակսկիծն ապաշաւանօք, հօրն կրկին գերազանցեաց ողորմելի ոգւոյն հեծութեամբ. զոր 'ի յաչաց բանիդ քո արտօսր՝ առ որ մերոյս 'ի յիւրն ախտակրեաց, երկայնամիտդ ներողութեամբ միացուցեալ խառնեցես գըթած. և զանյարմարն առ նա կարծեցեալ զաղմասին բարեբանութիւն, 'ի փառս էակցի որդւոյդ՝ կնքելով նովաւ՝ կեցուսցես զնա քաղցրութեամբ՝ ընդ ալքատս ժողովրդոց: Զայս [49] պուետիկոս ոճս բարեշնորհ արգահատէր ընդ Սողոմոնի, ամենայնիւ վարձս վարկուցեալ համակցորդ զուգաձայնութեամբ՝ իբր կենդանեօք նովաւ՝ ընդ նմին վասն նորին աղերսել առ քեզ, զոր յաւելուած կարգիդ տնտեսէ: Քանզի և աւստացւոյն 'ի նմանէ ստեղծեալն՝ բազմահրաշաւորն մարգարէաճառն պատմագրութիւն ածութեան արդարացուցիչ՝ զսողոմոն ողորմեալ կարգէ. որ զի անպարսաւ է աղօթելն, քան չարաբանելն վասն նորին:

Է. Զոր և ես մաղթեմ մեծ վստահութեամբ՝ նմանակից այսր հեծութեան՝ և զիմս ընդ նմին ընծայել գոչումն. զի թէ կորուսցես զմեզ դատեալ ըստ գործոց, ո՛չ պակասին փառք քո, զի իրաւամբք քո ճանաչիս. իսկ եթէ գտցես, [50] ա՛յնքան բարձրանաս, որքան մեծութեդ քում վայել է. քանզի յաւէտ օրհնաբանելի ես դու երկրորդաւս՝ ողորմածութեամբ, քան նախահրաման սաստկութեամբ: Դարձիր տէր՝ դարձիր քաղցրութեամբ 'ի խնամս գթութեան ձրի և ամենառատ պարգևօք սիրոյ՝ մխիթարել յաւէտ [51] զտրտմեալքս համաշաւիղ տագնապաւ տապոյ տօչորման անբժշկականի: Ջեռն եղեալ փրկութեան նորոգեսցես վերստին, քաւեալ և պատսպարեալ 'ի մեղսակործանս խորտակմանէ: Եւ քեզ [52] միայնոյ սկզբանդ և անսկզբանդ, ընդ սկզբանդ, և սկզբնաւորիդ սկըզբանց՝ որք երրորդութեանդ՝ և միում ածութեանդ փառք և իշխանութիւն՝ յաւիտեանս յաւիտենից.

ամէն:

---

(1) Աշխարհէն ... : Այն կամ աչք ես՝ որ ընաւ ոչ նիրհես. և միշտ նկատես, տեսանես զամենայն : Ծնող ... . ծնօղ միածնիդ՝ որ փա-

ռաց է, այսինքն փառաւորեալ, կամ, որ քեզ փառքն է, ըստ այնմ . ' Ես զքեզ փառաւորեցի յերկրի . || (Յով . ԺԷ . 4 :) կամ, անքննելի փառօք ծնօղ միածնիդ :

(2) Իրաւացուսցես զնմա : Իրաւացի ցուցցես կամ հրապարակեսցես զը-զորութիւնդ, որ առ ի՛ս՝ յընդունելն զհերքեալս կամ զմերժեալս : Այնպէս ջատագովեսցես զքո բարեխնամ ընդունելութիւնդ առ հրեշտակս և առ մարդիկ, որպէս զընդունելութիւն անառակին ջատագովեաց հայրն առ երէց որդին և առ ծառայսն, ասելով թէ գիւտ է կորուսելոյն, և կենդանութիւն մեռելոյն :

(3) Զբարեբաստութիւն նմա տաց : Զբարեխնամութիւն կամ զերանելի սահման կամաց քոց յայտնեմ ամենայն արարածոց, ցուցանելով թէ որչափ անախտակալ և ներող կամս ունիս առ անարժան յանցաւորս . զի անառակին ոչ ներեցեր միայն, այլև ընդառաջեցեր և գրկեցեր և համբուրեցեր, և քեզ մեծապէս գիւտ զնա համարեցար : Սաղմոսէր անուան . զի թէ յառաջին ԱԾ կոչէիր, կամ հայր, կամ բարերար, այժմ ցուցանելովդ զայնչափ հայրագութ գորով որպէս թէ նորոգ հայր լինիս և անուանիս : Կամ, քոյով այնպիսի ընդունելութբ՝ անուն նոր վայել է քեզ, թէպէտ և այնպէս ես մնաս տակաւին անճառ . և արդարև սոսցանա ինքն Քս անուն նոր, կոչեցեալ Բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց . այլ նմա ոչ փոյթ ինչ եղև ընդ այն, բայց միայն զի ինձ արասցէ նորոգ փրկութիւն :

(4) Մի երկարեսցես : Այսինքն, մի՛ ընդ երկար ծածկեսցես զկէր մեղացս : մի օրին . մի երկարեսցես : այլ օրին . և հին լուծ . մի երկարեսցես :

(5) Մի նեխութիւն : Զնեխեալ փտութիւն հոգւոր ցաւոցս մի՛ թողացուցես ինձ փոխակից մահու, գործօղ կամ բերօղ մահու :

(6) Զծանրութիւն տաղտկանաց : մի օրին . զծանրութիւն տաղտկանաց : այլ . զծանրութեանն :

(7) Կարեւոր խործանման : այսինքն, սաստիկ կործանմանս : 2 օրին . խործանմանցս :

(8) Թէ և առ մի նուազ : Թէպէտև 'ի միում աւուր բիւր անգամ մեղանչիցեմ, բայց ու գրեթէ, ոչ համարեցայց, կամ եղէց խապառ՝ կամ ըստ ամենայնի մեղուցեալ, ապաւինելով 'ի կենսատու շնորհս քո : Այս, և հնուեալքն՝ են բանն իմաստ . (ԺԵ . 2 . 3 . ԺԶ . 18 :)

(9) Որ տան զնա : այլ օրին . որ տան զնա . այսինքն իբրև զնա . որպէս զաղումն ինձ համանման :

(10) Անխարոփ զրկօղ, զրկելով զնոծ 'ի փառաց իւրոց, կամ դուցէ նաև զժողովուրդն՝ ծանր հարկօք . որպէս տրամչեցին առ Ռոբովամ որդի նորա : (Գ . Թագ . ԺԲ . 4 :)

(11) Սեղանանենգ արքայութեան : 'Ի սեղանոյ բարեացն Այ վայելեալ, նենգեաց և 'ի ճղեաց եկաց . կամ, սեղանոյ տաճարին Այ նենգեաց, յանդգնեալ որոյ խոստացաւ պահել զօրէնս Այն :

(12) Կտակարանաց նախնեաց : Զանց առնելով զհրամանս օրինացն, չբազմացուցանել զկանայս յայլազգեաց, և չարել 'ի կուռս նոցա . որով և նախնեաց կտակօ . ըստ որում օրինազանցութբ իւրով իբրև անպիտանաբան ցուցանէր զնոսա :

(13) Տարակուսեալ ապաշխարօղ : տարակուսանօք ապաշխարօղ, թէ հասցէ՞ արդեօք թողութեն մեղացն :

(14) Աղաչաւոր կռապաշտեալ . աղօթաւոր Այ, և յետոյ պաշտօնեայ կռոց . կամ, աղաչանօք կանանցն կռապաշտեալ :

(15) Յանդգնեալ դարձեալ : Անդամն և յետ յանցելոյն 'ի մեղս՝ ապա դարձեալ . ուստի և խաղախառ ընկալեալ, երկրայական՝ ընկալեալ լինելն

լոյ, հաշտութեն, փրկութեն : յաղագս չնշաւոյ · ապագայ ժամանակի եկելոյն՝ յիշատակ երկիւղի, զգուշութե, խոնարհութե, ևն : ըստ ապալէ գէտ, կամ այլ օրէն · ըհաւատալէ · այսինքն դժուարահաւատալի գիւտն հոգւոյ նորա, ոչ 'ի կողմանէ զօրութեն իւր, այլ զի գիտութբ մեղաւ, և յանդիմանեալ լոյ, ոչ զգաստացաւ · և ոչ ՟ր գիրն յայտնի լինչ ասանդեաց զապաշխարութէ նորա · քանզի և զբարձրաւանդակն զորս շինեաց կռոցն, ոչ երարձ, այլ յովսիա արքայ յետոյ քակեաց : ( Դ · Թագ · ԻԳ · 13 :) Այսոքիկ են պատճառքն՝ վասն որոց բազումք 'ի վարդապետաց ասեն զսողոմն անապաշխար մեռեալ · Թէպէտ այլք ևս ասեն ապաշխարեալ · ըստ յերկրորդ մնայ փրկութե նորա : Տես զկնի · լուծ · 28 · և յայլսն :

(16) 'Ի ձանէ ճաշուած : Ըստ մասին միայն մնացուած Թագաւորութեն · զի տասն ցեղքն ապստամբեցան :

(17) Կեռակետոր պրծեալ · կամ ըստ փրկութեն, զի ոչ անմեղութեամբ, այլ ապաշխարութբ ապրեցաւ · և կամ ըստ ՟րութեն յորդին իւր · զի կորեցաւ Թագաւորութիւնն :

(18) Երկեալ որոշմանց : 'Ի խօսս՝ երկու զանազան կամ հակառակ բանից յամ տեղւոջ բանս արկեալ, զոյգ եղեալ զաղօթնէ · այլ օրէն · բանարկեալ · այսինքն նախատեալ, այպանեալ : Իսկ կրկին բանքն են՝ որոց վասն անկման այնպիսւոյ առն · և յաղանաց, դարձանաց վասն գիտութբ և կամաւ և անպատճառ օտարանալոյն լոյ · որով մեծ եղև պարսաւ նորա, և փոքր՝ գովեստ իմաստութեն և առաջին անմեղութեն : Երգեծանութե, մեղադրանք խառնեալ ընդ ածխար, ընդ որոց կամ ցաւակցութե · վարդապետութե նորա Բեղագիր Բարգաւաճութեան, խրատիչ բարեկարգութե ամ մարդկան ըստ խրախճանչիւր հասակի, գրովք Առակացն զմանկահասակս վարժելով, և ժողովողին՝ զ'ի չափ հասեալսն : Իսկ խոստումնն նորա լոյ՝ 'ի բերանս ամենեցուն՝ Բառանց Բախծութե, տրտմագին հառաչանաց նիւթ՝ ողբերգելոյ նմ, ողորմելի օրինակաւ կամ ցաւակցաբար խօսեցեալ :

(19) Զանազանեցաւ ղաւաքն · Թիւրեցաւ, խոտորեցաւ · կամ մոլեգնեցաւ, յիմարեցաւ :

(20) Սրտաքս մերժաւորն · փախեաւ, հեռացաւ :

(21) Անարգելոյն : մի օրէն · անարգելոյն :

(22) Վասն էր յանդգն ընդ Նաբուգոդ · յօժարութեն՝ ընդ կռապաշտ անօրէն պաշտամանս, յորոց խորշէին օրէնքն այ :

(23) Արջանն ժագողրայ : Փեգոր, որ և փագոր և փոգոր, էր կուռք մովաբացւոց, որում զբարձրաւանդակն շինեաց սողոմն, ( Գ · Թագ · ԺԱ · 7 :) ուր անուանի քամովայ դնի · զոր քաջ մեկնիչք նոյն համարին ընդ փեգորայ : Արդ՝ ասի ժահաժապոյն · զի այն կուռք եղև պատճառ կոտորածի որդւոցն իսրայէլի քսան և չորս հազար արանց · ( Թուոց · ԻԵ · 9 :) այլանդակ, այսինքն այլանդակ տեսլեամբ · զի ըստ ոմանց՝ կազմեալ էր 'ի սեաւ քարէ՝ կանացի կերպարանաւ · ըստ այլոց՝ առնաձև կազմեալ էր՝ և անամօթ տեսակաւ : Ոմանց թուեցաւ, թէ այս բառ գրելի իցէ՝ այրագնեալ · բայց այսմ չիք հիմն՝ ոչ յօրինակաց նաւրեկին, և ոչ 'ի հաւաստի ծանօթութենէ մերոցրեալ կռոցն փեգորայ :

(24) Անդանծալէն ոնդանացւոց՝ նգանան : Խմանի աստարտէս չամ սիդոնացւոց · զորոյ բարձրաւանդակն կանգնեաց սողոմն · ( Գ · Թագ · ԺԱ · 5 :) Լուսին էր սա, և արձանն եղջերաւոր կազմեալ, կամ 'ի ճակատ նորա եղջերաձև լուսին եդեալ · նշանակ ձևով խայտառակութեան 'ի դարշութիւս գրգռելով զպաշտօնեայս իւր · ոյք և մերկանդամ ծառայէին՝

ըստ հաճոյից այնպիսի ածուհւոյ : Այս է ասացեալն , որոշամօրեայ մար-
գարէին , եւն :

(25) Տարաղէութի : Եբրայ՚ի սողոմոնէ զատուցեալս երջանկութեան , այսինքն իմաստութեան նորա , ծծպաշութեան , եւն , կլինն՝ որ զադամ որ-
սայոց 'ի կորուստ :

(26) Յոգնի տապեցան : Սպան հոգւով զայլն գովելի , կլինն՝ որ եղև ա-
ռաջին զէն սատանայի :

(27) Ահերան է պարծել : 'Ի սողոմոն ունիմք խմանալ՝ թէ չար և ընդու-
նայն է վստահել 'ի մարմնաւոր իմաստութեան , թէ ոչ ամ պատեալ ըն-
թրեայի , քննեալ զգուշութեան , կամ յայս առաջնորդեալ 'ի գործս : Ոչ դի
թէ . խակ եթէ ըստ այսմ պայմանի , որ ըստ մարմնական իմաստուն ազեա
իցէ ոք , յուսալով 'ի կամս իւր՝ կարէ զերծանել յախտաւոր գործոց սո-
ղոմոնի :

(28) Ոսնայնութեան է խոնարհ : Այսպէս յոքնակի է ըստ մերոց լա-
օրինակաց , այսինքն 'ի գրոց ժողովողին . քանզի յետ մեղացն գրեալ հա-
մարին հրէայք , հերոնիմոս , և բազում մեկնիչք . որպէս և հայ Նա-
խադրութեան գրոցն ժողովողի յայս կարծիս յօժարի . թէպէտ այլ մեկ-
նիչք՝ ոմանք անհաւանելի առեն , և ոմանք անյայտ թողուն : Սոյնպէս
յաղագս գրոցն Առակաց համարեցան ոմանք գրեալ յետ մեղացն . ընդ
որս և հերոնիմոս : Եւ նա ինքն կիւրեղ երուսաղէմացի . ('ի կոչ . ըն-
ծայ . դլ . թ . համար . 14 .) ասելի ցուցանէ զապաշխարութիւն սողո-
մոնի ասելով . * Նաև սողոմոն յանցեաւ . այլ զի՞նչ ասաց յետոյ . յե-
տուստ ուրեմն առէ՝ և ես ապաշխարեցի : || Այս բան գտանի առակաց
իդ . 32 . ըստ օրինակի ինչ եօթանասնից . որ ո՛չ գոյ յայլ թարգմանու-
թիս . այլ և 'ի մերումս այլագ դնի . այսինքն . * Եւ ընկալեալ զնո-
սա , ապաշաւեմ . || կամ ըստ ձեռագրաց . * Եւ յորժամ ընկալայ
զնոսա , ապաշաւեցի : || Արդ՝ ոչ վարդապետս մեր ըստ առաջին
կարծեացն համարելով , թէ զժողովողն յետ մեղացն գրեաց սողոմոն ,
առէ՝ թողեալ զայն յիշատակարան իւրոյ դարձին , անձամբ զանձն պար-
սաւելով և կշտամբելով , իւրև բոլորովին մեռեալ սիրոյ անձին և աշ-
խարհի :

(29) Աւելն 'ի մարգարէաշունչ բանահասերէն : թ . մնաց . թ . 29 . ոչ յիշին մա-
տեանք քահանայից , այլ բանք նաթանայ , և աքիայ սիլոնացւոյ , և յո-
վելայ տեսանողի : Բայց գուցէ ոք վարդապետս 'ի վերայ մատենից քա-
հանայից առնու զասացեալն (գ . թագ . ժա . 41 .) * 'Ի գիրս բանից
սողոմոնի : || Այս գիրք թէպէտ և այժմ չեն 'ի միջի , սակայն ոչ վար-
դապետս , որպէս և այլք ոմանք՝ կարծեն , թէ յայն գիրս գուցէ պատ-
մեալ կայր ապաշխարութեան սողոմոնի :

(30) Յորդոր դիտողին . յարաբերական բառդ յորդոր ո՛չ ցուցանէ զգիրս քա-
հանայից , կամ աքիայ , որք ոչ գոն այժմ , այլ զգիրս ժողովողի , յո-
րում առէ՝ զկիրս իւրոյ անցեալ ընթացից կենացն ցուցելով բացայայտ :
Եւ ապա զլաջորդսն անուն հաւաքէ , որք կամ ի՛ բանիցն , և կամ ի՛ ի-
մաստիցն միայն գտանին 'ի ժողովողն . և երկար լինէր աստ զնուրբսն
չիւրոց տեղեաց նշանակել :

(31) Օտարին խմաստ : Խորհուրդք օտարք 'ի լուսոյ բանին , կամ թիւր
միտք :

(32) Ոճուծոյ հոգւոյ : Ոչինչ , կամ անցանելի իրաց շրջանք , կամ փոփո-
խութիւնք . որպէս և առէ . (ա . 6 .) * Գնայ հողմ , և 'ի շրջանս իւր
դառնայ հողմ : ||

(33) Ապաշաւանաց շնորհաբեր : Վասն առաջոյ հիմանն փլեալ շէնք :

(34) Յուդնամարդ կոխ : սէր աշխարհի և անձին՝ ընդ անձին տայ կռուել .

ըստ բանին. (Բ. 23.) Այժմ աւուրք նորա ցաւոց, և տրտմութեան զբօսանք իւր. ևն: (Եւս Է. 26. 27:)

(35) Ընտանութեանց տէրն: յընդունայն հարուածոց կամ աշխատութեց ծնեալ քնքուշ. կամ ընդունայն չարչարօղ: Կործանական երկուոր: այլ օրին. երկուորն: Նուրբագործ կործանուորն: 3 օրին. կործանուորն: այսինքն վարժմունք կամ ջանք որ 'ի մոլորութիւն արկանեն:

(36) Անկայարար պրոյուրն: Աղաւաղիչ կամ հեշտացուցիչ աչաց անհամեստ զարդք: պատնէշերդ: 3. օրին. պատնէշերն:

(37) Դժնէորէն գոյն: Ընդ հակառակն առաջնոյն՝ իւք աշխարհի որք խորշելիք են և անհաճոյ իբրև զգժնեայ կերպարանս. որպէս խոշորութիւն զգեստու, ցամաքային կերակուր, ևն:

(38) Յուղվածք ծուխ: յոյժ թանձրամած ծուխ:

(39) Վաճառ մերձ 'ի յոռ. այսինքն մերձ 'ի յափշտակութիւն, գիւրաբառնալի. զի իւք աշխարհի արագ յափշտակելին՝ կամ 'ի մարդկանէ, կամ 'ի մահուանէ, կամ 'ի ժամանակէ:

(40) Արհամարհելի տապարէջ: Խոտելի վասն փոքրութեանն, կամ վատնգին. այսպէս խմանի աշխարհս, կամ ընթացք կենաց:

(41) Անխուճաճառ գեր: Յարինն յաշխարհային իրս՝ է իբր ձեռագիր վաճառելոյ զանձն, կամ ստրուկ լինելոյ:

(42) Եղերական խծբծ: Պարաւանաց հետազօտութիւն:

(43) Ընդաձկանաց: Սագաւանաց կամ խոյատակութեան պատմութիւն:

(44) Նորենոյն ծախուէն: առաջօք տեսիլ դիւրանցանելի:

(45) Զի մ պարծեոյն ոտ: Զի մի ոք հայելով թէ ինքն ոչ կռապաշտեցաւ իբրև զաղոմն, կամ որդ զպղ թերահաւատս, պարծեսցի յանձն, բամբասանաց նետս ձգելով յայլս, որով զինքն և զընկերն խոցանէ. Քանզի ըստ վերագրեալ բանից ժողովողին՝ կռապարիշտ է և աշխարհասէրն՝ որ քաղով ծծպաշտութե ծածկեալ 'ի վերին երեսս, զանհաճոյսն այ գործէ:

(46) Ու այնքան մեղաւ: Թէպէտ և մեղք տղոմնի յայտնի են, իսկ զղջումն անյայտ մեզ, սակայն մեղք նորա գործովք միայն եղեն՝ և ոչ վարդապետութբ. իսկ զղջումն ոչ միայն գործովք, այլև վարդապետութբք ժողովողին. որովք ոչ միայն առ մարդիկ իւրոյ ժամանակին արձանացոյց զիւր զղջումն, այլ և ամենեցուն յառաջ եկելոց եցոյց ձառնապարհ զղջման. և այսու մասամբ զղջումն նորա առաւել աւի քան զմեղսն: Վասն որոյ յիշելի է այսն 'ի բարի խրատ գիրս յառաջաբանեան, որպէս զգլխաւոր յուսադրիչ, 'ի տէրունի ոտան տիեզերց. այսինքն ապաշխարողաց և դարձելոց առ այ. կամ այնոցիկ մեղուցելոց՝ որք զղջմամբ մեռեալ յոտս փրկչին դիմեցին. յործամ հոգւոյն բանականաւ՝ յորմէ անբաժանելի էր այծութիւնն, էջ 'ի լիմպոսն՝ նենագործեալ պատ խառնելոյն. փրկել զյառաջուց հաւատացեալս իւր՝ որք անդն կային: Զօր դատարկն. այսինքն մեռեալքն՝ որք յարեան 'ի մահուանն քի, մեղ կենդանեացս եղեն աւետիս ապատութե հոգւոյն արդարոց. զի այն յարութիւն մարմնոյն՝ նշան էր ապատութե հոգւոյ. և որպէս քի մարմնոյն մեռելութբն՝ զմեռեալ զմարմինս կենդանացոյց, նոյնպէս հոգւոյն իջմամբն 'ի ստորինս՝ հոգւոյն արար այցելութիւն. և որպէս 'ի մեռելոցն՝ միայն զսրբոյն մարմինս յարոյց, նոյնպէս յարգելեալ հոգւոյն՝ միայն զարդարան ապատեաց: Եւ ոչ որպէս ոմանք հաստատ վճիռ վարդապետաց համարեցան՝ ասել, թէ յիջանելն քի ապատեցան այնոքիկ՝ որք հաւատային 'ի քս, եթէ յուրեանց ժամանակին եկեալ էր յաշխարհ: Այս ոչ միայն չէ հաստատ վճիռ վարդապետաց, զոր յայտնապէս իսկ

մերժէ Ոսկեբերան. մեկն. մատ. ճռ. ԼԷ. այլ և անհնին. զի իբ այդ պարս էր համարել, թէ նաև տիւրացիք, և սիդոնացիք, և սոդոմացիք ազատեցան 'ի դժոխոց, և ուրախանան այժմ ընդ արդարահամաւ և ընդ խաչակաց. վասն զի ինքն քս̅ վկայէ զնոցանէ՝ թէ ապաշխարէին, եթէ առ Նոսա լեալ էին զօրութիւնք իւր. ուստի և հաւատային 'ի քս̅: (Մատթ. ժա̅. 21. 22. 23:)

(47) Ընդ որում. այսինքն ընդ սողոմոնի, կամ վասն սողոմոնի մաղթեմ ես պարտաւորս, որ իմաստութեան Նորա ոչ ժամանեալ՝ մեղացն հաղորդեցայ: Ընծ ծնուած իմ. խառնեալ զրակաւ բանիւքս իմ 'ի հանճարեղ բանս Երջանկին, փառաւորեցելոյն սողոմոնի: (այլ օրին. 'Ի ջերջանկին հանճարեղութ.) Նիւթեալսն, միայնին առաջնկայ հայցուածք իմ՝ որ վասն յորդութեան Բարգաւաճին, այսինքն Ճոխացելոյն, 'Ի Գերաշխարհ, 'ի յոյժ աշխարհող արքային աղերսանս, կամ 'ի յոյժ զգլխական աղաչանս Նորա: Աշխէուրն, կատարումն կամ ընդունելութիւն, խնդրոյս իմ և Նորա՝ յաջողեցի մեծ արքայորդւոյն. զոր Փոյնիտ օրինակէտէր, օրինակ եասը իմաստութեան, Թագաւորութեան, օրինադրութեանց, շինութեան տաճարին, ևն: Փրկեա զծառայդ քո, 'ի փառս առեղծողիդ բարձրացուցանելով զՋնջումն դժուարին մեղաց Նորա՝ իգասիրութեան և կռապաշտութեան: Յիշատակաւ Խորհրդոյն, խրատուցն բարեաց Նորոգեա զնա ընդ ողորմեալսն. որ անտրժէլի և բազմազան առակօք զնծութիւն քո քարոզեալ 'ի գիրս Առակաց, Ժողովողին, և Երգոցն, աւանդեաց զնոյնս կոսակ եկեղեցւոյ՝ խոստովանութեան մատչել առ քեզ: Քանզի ոչ հետև յողորմութէ. հայելով 'ի ցոյցս բանից սողոմոնի, իմանամք՝ թէ ոչ յերկար ժամանակաւ հեռի մնայր 'ի Ներքողութեան, Ըէ անյուսութէն խոԲուած, եթէ շարժումն ինչ յուսահատութեան ոչ էր եղեալ 'ի սրտի Նորա, որ զփոյթ զզջմանն փոքր ինչ յապաղեցոյց, խորհելով զմեծամեծ արարգեան ոյ եղեալ առ ինքն, և զկրկին զգուշացուցիչ աղդեցութեան ոյ. որոց անսաստեալ, խոտորեցաւ յամբօթալին. յայսպիսի մտածութենէ ծանրութեան մեղաց իւրոց՝ տատանեցաւ սիրտն, և յամեաց 'ի զզջմանէն:

(48) 'Ի յուղ բերեալ: Այլ դու յիշելով զանճառ բարեաց հաղորդութիւնդ, ցոյց զգթութիւն քո 'ի սողոմոն. և զպարտաւորն 'ի բազում ժամանակաց՝ երանութեանդ արժանի արա. կամ փոխանակ բամբասանացն՝ 'ի գովութիւն դարձո զնա, որ բազմադէղ արտասուօք մէջ յափաք յարքին, զբովանդակ յատակ ապարանիցն Քոյոյ: Այս աւանդութիւն է ումանց, և ոչ 'ի գրոց: Որով գերազանցեաց քան զապաշխարութիւն դաւթի հօր իւրոյ. զի Նա 'ի գիշերի զանկողինն միայն Թանայր արտասուօք. իսկ որդին զապարանսն՝ զտեղի խրախճանութեանն Քոյոյ արտասուօք: Զոր խառնեցեա առէ՝ յարտասուս միածնի քո, առ որ Փէոփէ, մերով մարդկային բնութեա, կամ մերով բնական կրիւքս ախտակրեցաւ յիւր ածային անձն: Եւ զանյարմարն առ Նա հարծեցեալ, զսաղմոսն հո̅. որ թէ պէտ և մակադիր ունի, 'ի սողոմոն՝ սաղմոս, սակայն անյարմար կարծի Նմա, կամ զի ոչ Նորա է տուեալ զայն, և կամ զի բանքն առաւել հային 'ի Նորին սողոմոն 'ի քս̅, քան թէ յառաջինն: Այլ դու առէ՝ զայն սաղմոս 'ի փառս որդւոյ քո դարձուցանելով, 'ի մեղուցեալն սողոմոն կատարեա զայն բանն. ' Իրաւ արասցէ աղքատաց ժողովրդեան իւրոյ, և կեցուսցէ զորդիս անանկաց. || (հանր 4. 13.) Իբր առել. թէ ոչ ընդ անմեղսն, գոնէ ընդ ապաշխարողս փրկեսցի:

(49) Պուէթիկոս ունի: Իմաստուն ունի, արգահատէր. հոգայր կամ աղաչէր վասն սողոմոնի, բարեգործութեան համարելով ընդ Նմա լինել ընդ կենդանեաց աղօթակից լինել, և աղերսել վասն Նորա առ քեզ: Ըստ յա-

ւէլոտծ խոր Գէտ, զոր և յաջորդ բանդ ցուցանէ. [illegible].
Թ գիրք կամ պատմութիւն յոբայ մարգարէական հոգւով 'ի սողոմոնէ
շարագրեալ, յորում ծածկեալ նախախնամութիւն արդարացուցանի, ցու-
ցանէ միանգամայն և զսողոմոն ողորմեալ յիշ, կամ այսու՝ զի մարգա-
րէութք արար զնա գրիչ որ գրոց, և կամ նմանութք անցիցն յոբայ.
Իսկ զի որպէս յոբ 'ի մեծութէն անկեալ, յետոյ կրկին ևս մեծացաւ,
նոյնպէս սողոմոն 'ի շնորհացն անկեալ մեղօք՝ ապա զղջմամբն անդրէն
բարձրացաւ 'ի շնորհս: Որ [illegible] է. այսինքն վասն որոյ անմե-
ղադրելի է աղօթելն վասն սողոմոնի՝ յուսալով թէ ապաշխարեաց, քան
թէ անապաշխար համարելով չարաբանել վասն նորա: 'Ի սողոմոնէ
գրեալ զգիրսն յոբայ՝ համարեցան և այլք 'ի վարդապետաց, ընդ որս
դասեն ոմանք և զգրիգոր ածաբանն. Իսկ զի 'ի ճառն Թ. առ յուլիա-
նոս հարկապետ, յիշելով զբանն յոբայ. Գ. 13. կոչէ յանուն սողո-
մոնի: Ոմանք անտի ևս առեալ կարծիս՝ սողոմոնի առնել գրեալ զյոբայն,
զի ժողովն լաւոդիկեայ, այլև մելիտոս սարդիոյ, աթանաս և այլ ևս
հնագիրք յոհնաց՝ 'ի կարգել անդ զկանոնական որ Գիրս՝ զկնի գրոցա-
ծոյ սողոմոնի՝ յիշատակեն զՅոբայն: Իսկ թէ ո՛ լցէ պատեհիկոսն, որ
աղաչէր վասն սողոմոնի, ոմանք զնիւսացին գրիգոր առեն. ամայն 'ի
գործս նորա ոչ գտաւ այնպիսի ինչ. որպէս և ոչ 'ի գործս ածաբանին,
կամ բարսղի, կամ ոսկեբերանին: Ոմանք զեպիփան կարծեցին, ('ի
մեկն. սաղմ. հա:) Այլ ինձ թուի զսկրտք [?] խմանալ. (զոր որ վարդա-
պետս անուամբ խմաստից սովոր է կոչել. տես. Է. 3. ետ:) Այրդ՝
սկրաք (դլ. խէ.) յետ պատմելոյ զմեղս սողոմոնի՝ յաւելու 'ի հա-
մարն 24. * Այլ ած ոչ թողցէ զողորմութի իւր, || ետ. որ արդարև
աղօթական բան է վասն անձինն սողոմոնի, և ոչ վասն որդւոց նորա 'ի
յաջորդութիւն թագաւորութեն. վասն զի 'ի ժամանակս յետուոյ և
որդւոյ նորա սիրաքայ վաղու ևս բարձեալ էր թագաւորութիւն յուդայ:
Այսահիօր ոչ արկաք խնդիր, արդեօք փրկեցաւ սողոմոն, թէ դատա-
պարտեցաւ. քանզի և յառաջնոց հարցն ոմանք զայս առեն, և ոմանք
զայն. և յետ նոցա վարդապետք՝ մեկնիչք և ածաբանք երկուսեաք
քննեալ զպատճառսն՝ վճիռ արտադրեցին, թէ [illegible]: Եւ
աս ինքն սէս գրիգոր մերթ զմին ցուցանէ, և մերթ զմիւսն. զի 'ի հա-
մար Է. առէ. [illegible],
[illegible]: Իսկ 'ի համարն Գ և Ե, 'ի գրոց ժողովողին՝ առա-
կաց և յոբայ ցուցանէ զնա ապաշխարեալ և փրկեալ: Այլ կինք բա-
նից իւրոց զայս դնէ, թէ յառենի եկեղեցւոյ լաւ ևս է զօրութեամբ
յիշատակել զնա, քան պարսաւել. և թէ աղօթելն վասն նորա ընդու-
նելի է քան զանիծանելն: Այլ թէ զիարդ աղօթել վասն նորա արժան
համարի, զի 'ի համարն Է ցուցանէ ապաշխարեալ յիջանելն քնի 'ի բանս
արդեօքեալ հոգւոյն, առելի է նախ՝ վասն զի երկբայութեամբ առէ զայն
ապատութի, և ոչ ստուգութք, վասն այն ինչ տեղի օժանդակիլ աղօ-
թից. զի միայն վասն անապաշխար մեռելոց, կամ վասն յայտնի երանե-
լոյն յերկինս՝ աղօթել չէ օրէն. Իսկ վասն երկբայականացն՝ որչափ և
բազմաժամանակեայ մեռեալ իցեն, չէ անդէպ աղօթել, մանաւանդ
յառանձին աղօթս: Եւ այս 'ի վերայ սողոմոնի առաւել հաստատի,
այնու զի վասն նորա միշտ 'ի միտս հաւատացելոց կայր կասկած ընդ
յուսոյ. մինչև բազ գրելոյն աստիճանեայ մեկնչի՝ յիշում ժամանակին
մեծամեծ քարոզիչ ոմն 'ի հռոմ՝ հրապարակաւ պատմեաց զայլանու-
թն եղեալ առ սրբաէր ոմն, թէ սողոմոն յայնմ ժամանակի զերծեալ
'ի պատժոյ՝ համբարաւ յերկինս: Որ հաստատեն զայլանութիւնս,
այլ այսու զարէյաւութի հաւատացելոց ցուցանել դիմեմք:

Երկրորդ, այս աղօթել վասն սողոմնի՝ է ցոյց գթոյ և սիրոյ առ որժանաւորութեն այնպիսւոյ առն : Այսպէս աղօթեմք կատարման կամացն տն յարարածս, և վասն հաստատութե փառաց սրբյն. Թէպէտ և գիտեմք թէ առանց մեր խնդրոյ՝ կամք տն անվրէպ կատարին, և սրբյն փառք միշտ հաստատուն են :

Երրորդ, այս եղանակ աղօթից՝ բերումն է բանաստեղծական հոգւոյ. որ սովոր է զանշունչսն հոգեւորացուցանել, և զանշարժսն գնացուցանել. այսպէս և զչէռաւորն և զանցեալն առնել մերձաւոր և ներկայ : Այսպէս և զբազմաժամանակեայ մեռեալն զսողոմն՝ ձևացուցանէ իբր կենդանի, և այնու օրինակաւ փրկութեան աղօթէ : Այս եղանակ խնդրուածոյ գտանի և յայլ աղօթս եկեղեցւոյ. զոր և մեք փորձապէս անհարկէ ասել 'ի համարն ԺԻ. ասելով վասն խմասսոյն՝ թէ ԷԷՐ ԿԵՆԴԱՆԵՕՔ ՆՈՀԱՆ ԸՆԴ ՆՈՐԻՆ ՀԱՆ ՆՈՐԻՆ ԱՂԵՐՍԷԼ. այսինքն իբր կենդանի գոլով սողոմնի՝ նովաւ հանդերձ աղերսել :

(50) ԱՆԴԱՆ ԲԱՐՁՐԱՆԱՆ : 'Ի գտանելդ զմեզ 'ի կորստենէ հոգւոյս, այնքան փառաւորիս՝ որչափ վայել է քում անհուն մեծութեանդ. զի ճանաչի՝ թէ անհուն է զօրութիւնդ. անհուն՝ սէրդ, անհուն՝ երկայնմտութիւնդ, եւն :

(51) ԶՈՐԴԵԳՐԵԱԼՍ ՀԱՄԲԱՐՁԵՍ : Մխիթարեա՛ զորոմեալքս վասն մեղաց՝ տագնապաւ, որ նմանակից է անձկութեան սողոմնի :

(52) ՄԻԱՅՆՈՅ ԾՆԵԱԼԴ : Աստանօր առ ամենայնը Երրորդութեան սահմանէ զփառաւորութիւն, և փոխանակ անուան իւրաքանչիւր անձին դնէ զյատկութիւն նոցա. որպէս արար և 'ի բանին ԼԲ : Ուստի վասն անձին հօր դնէ, ԾՆՈՂԻՆ ԵՒ ԱՆԾՆԵԼԻՆ. զի յատուկ է հօր՝ լինել սկիզբն այլոց երկուց անձանց՝ առանց եղանելոյ յայլմէ : ԸՆԴ ԾՆԵԱԼԴ. այսու զորդի խմանայ. զոր եթէ ոք ասիցէ սկիզբն ըստ արարչութեան, այդ ոչ յատուկ է որդւոյ, այլ երից անձանց հասարակ. այլ սկիզբն ասէ զորդի նկատմամբ այլոյ աստուածային անձին. և զի լոկ ԾՆՈՂԻՆ ասաց՝ առանց յաւելլոյ ԱՆԾՆԵԼԻՆ, յայտ արար զորդի լինել այնպէս սկիզբն՝ որ չէ անսկիզբն. և ահա այս է յատուկ որդւոյ միայն : ԵՒ ԾՆԵԱԼԴ ԱՆԲԵՐԵԴ ԾՆՈՂԱՑ. այսու իմանի հոգին սբ. և եթէ մեկնեսցէ ոք, (որպէս ոմանք առնեն) թէ սկիզբն է արարածական սկզբանց, կամ սկզբնաւորող է ընդ հօր և որդւոյ, այդ ոչ յատուկ լինի է հոգւոյն սբյ. զի պատշաճի և հօր և որդւոյ՝ լինել սկիզբն արարածական սկզբանց, և զի նաև հայր է սկզբնաւորող ընդ որդւոյ և ընդ հոգւոյն, որպէս և որդի ընդ հօր և հոգւոյն : Այլ առ 'ի լինել յատուկ հոգւոյն՝ խմանալի է, սկզբնաւորիդ, այսինքն յառաջեկելոյդ 'ի սկզբանց, այս է՝ 'ի հօրէ և յորդւոյ. և յոքնակի ասելն՝ ԾՆՈՂԱՑ, ոչ զբազմութե սկզբանց նշանակէ, այլ զբղխող անձինսն, զորս յառաջին մասունս բանին ԾՆՈՂԻՆ կոչեաց. ուստի առ 'ի ցուցանել թէ յերկուցն ես յառաջ գայ հոգին՝ յոքնական եդ ԾՆՈՂԱՑ. Թէպէտ և մի և նոյն բղխմամբ յառաջ գայ 'ի նոցանէ, որով մի սկիզբն բղխման լինի, և ոչ երկու : Այս է հարազատ խմաստ բանիս՝ աստուածաբանօրէն քննելով : Եւ զնոյն բան և զխմաստ յայտնապէս ընկալեալ է մեր վարդապետս մեր 'ի սրբյն Գրիգորի աստուածաբանէ : Քանզի 'ի ճառին ԼԲ. խօսեցեալ յանդիման սբ ժողովոյն կոստանդնուպօլսոյ, ասէ այսպէս. * Որ անսկիզբն, և սկիզբն, և որ ընդ սկզբանն, մի Աստուած է. || և ապա յանուանէ բացայայտելով ասէ, անսկիզբն՝ Հայր, սկիզբն՝ Որդի, ընդ սկզբանն՝ Հոգի սբ : Այլ զի մի կարծիցի՝ ըստ արարչութեան կամ արարածս ԾՆՈՂԻՆ ասել զորդի, ապա առնէ Աստուածաբանն յաւելուածովս. * Զի ոչ եթէ բնութեանն է լինել սկիզբն. || այսինքն ոչ ըստ աստուածային բնութեան պատշաճի լինել որդւոյ՝ սկիզբն, այլ ըստ անձինն. իսկ լինելն

արարչական սկիզբն՝ պատշաճի ածային բնութեանն՝ հասարակաբար երից ևս ածային անձանց ։ Իսկ որք յայլ միտս շրջել կամին, ասելով թէ որդին ՍԿԻԶԲՆ կոչի Նկատմամբ արարածոց, և հոգին՝ ՍԿԶԲՆԱՒՈՐ ասի, այսինքն սկիզբն կամ սկզբնաւորող այլ արարածական սկզբանց, այսու մեկնութբ ոչ միայն խոտորին 'ի մտաց սբյ վարդապետին, որ գիտէ իւրաքանչիւր անձին զիւր յատուկն ընծայել, որպէս տեսցուք, այլև օտարանան նախ՝ 'ի կարգէ բանին. զի յառաջին մասին յասելն զհայր՝ ՍԿԻԶԲՆ ԱՆՍԿԻԶԲՆ, զբանն սկիզբն՝ իմանան Նկատմամբ որդւոյ և հոգւոյն. Իսկ 'ի հետևեալ մասունս զնոյն ՍԿԻԶԲՆ բառն հայեցուցանեն առ արարածոցսն չունելին և ոչ մի ինչ պատճառս ։ Երկրորդ, օտարանան 'ի յատուկ նշանակութէ բառին ՍԿԶԲՆԱՒՈՐ, որ ոչ նշանակէ սկիզբն, կամ սկզբնաւորող, այլ ունող սկզբան, կամ սկզբնաւորեալ. որպէս և այլ այսպիսի ածանցական անուանք, զոր օրինակ ԼՈՒՍԱՒՈՐ, ՓԱՌԱՒՈՐ, ԳՈՒՆԱՒՈՐ, ևն, ըստ բուն նշանակութե իւրեանց իմանին՝ ունող լուսոյ, փառաց, գունոյ. կամ լուսաւորեալ, փառաւորեալ, գունաւորեալ ։ Ըստ այսմ ասի ( Ագաթանգեղ. երես 162. ) * Զիա՞րդ կարիցեմք քննել... սկզբնաւորք զանսկզբանէն. || այսինքն սկզբնաւորեալքս զանսկիզբն ։ Յայս միտս իմանալով և տաթևացին. ( Հարցմանց. եր. 63. ) հարցանէ. * Յանսկզբնէ՞ն բղխէ հոգին, թէ 'ի սկզբնաւորէն ։ || և յետոյ փոխանակ ՍԿԶԲՆԱՒՈՐ բառին դնէ ՍԿՍԵԱԼ ։ Այս ասելն զհոգին սբ ՍԿԶԲՆԱՒՈՐ ՍԿԶԲԱՆՑ, յայտնապէս նշանակէ՝ սկզբնաւորեալ 'ի սկզբանց. զի յայսպիսի բանս սեռական անուանն զօրութբ բացառական է. որպէս և յայլ բազում տեղիս. ըստ այսմ ասելն ( երեմ. Ժզ. 18. ) * Վիրաւորք սրոյ, || իմանի՝ վիրաւորեալք 'ի սրոյ ։ Որպէս և սբ վարդապետս ասէ ( 'ի գով. մծբն. ) * Այլք կայսերաց հրովարտակաւոր, || այսինքն 'ի կայսերաց ունող զհրովարտակ, կամ պատուամնաւորեալ ։ Այսչափ ինչ համառօտեցաք միայն 'ի ստուգութի մեկնութես. իսկ զընդարձակ հաստատութի այսր խնդրոյ՝ յայլ դիրս հաստուցեալ եմք ։

---

Սերովբէն յաւելուած երկին հեծութեան՝ նորին հանճարոյ, առ նոյն աղերս տաղերանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԲԱՆ. ԽԹ.

ա. Եւ արդ՝ մի տիրեսցեն անօրէնութիւնք [1] քում պատկերիս կայսերականի արքայութեանդ վերնում, ած բոլորից լուսոյ. մի կապտեսցէ գողն ապստամբ զշարդ փչմանդ շնորհի՝ 'ի քո ստեղծեալս կերպէ. մի թագաւորեսցէ մեղքն խափանեալ՝ մարմնոյս մահացուի առ 'ի գրաւել զիս 'ի նոյն ։ Զի՞ք իմ թագաւոր առ իշխել հոգւոյս՝ բաց 'ի քէն քն, որ անբռնադատ հնազանդեցուցանես լծոյն քաղցրութե. որ բառնաս զկարիս մեղաց [2] ամենակատարդ բանիւ. որ արեամբդ քո ստացար, և մարմնովդ կերակրե-

ցեր. որ կարգեալ սահմանեցեր [3] ուխտ կենաց անփոխադրելի. որ յոգի քո կնքեալ կցորդ քեզ գրելով, հօր քում մատուցեր ժառանգակցապես. որ յանուն զենման միշտ յիշատակաւ քո չարչարանաց՝ առ նոյն բարերար աղօթել համարձակեցեր, ստեղծին ամենից և կեանք: Դու ես ած ամենայն հոգւոց, որ մեծացուցեր [4] զայս տուրս շնորհաց՝ քան զամենայն գործոց քո հրաշս. ոչ զերկինս իւրովքն զարդուք և հրեշտակացն պայծառութեք. ոչ զերկիրս և զմարդկութիս, և որ առ սոսա են զարմանութիք. ոչ զսահման լայնութե ծովու, և որ 'ի նմա են եղելութիք. ոչ զանդունդս աղխիւքն հանդերձ, և որ 'ի նմա են անբաւութիք. ոչ բարձրացար յօրինմամբ այսքանեօք վեհիւք, որչափ առ իմս կարեկցութիւն յասելն քո տր մարգարէիւն՝ քաղցրութեց յուսոյ բարութի, ով է ած իբրև զիս կարող, թողուլ միշտ զմեղս և ջնջել զանօրէնութիս: Ահա արդ խնկեալ են բանք քո՝ ողորմած, և խոստովանեալ բարերարութիք. փառաւորեալ խորք խորհրդոյդ, և երկրպագեալ զեղմունք շնորհացդ:

Ը. Արդարև ոչ ոք բաւէ յեկիցս թարգմանել խօսիւք նիւթական լեզուի՝ 'ի մասանց այտի քում գթութեց զոր առ իս ցուցեր՝ յօրինիչ. քանզի և [5] մեծ իսկ է զօրութի զհնացեալն անդրէն նորոգել ըստ առաջնումն պայծառութե, քան յանգոյից ստեղծագործել: Այլ զի ոչ է քո տկարութի, որ զօրութիդ ես ամենայնի, առ որ բան քո միայն ազդեալ՝ զլրութի գործոյն գլխաւորէ, ահա յարեցես փառաւոր լինել՝ բարեգործ, 'ի ստացուածս այս կրկին անյուսալի փրկութես. [6] զի իրաւամբք ուխտի բարձրացի, հաստատուն եղեալ մեծապէս՝ օրհնաբան աւետեաց քո ձայն 'ի քաւելոյդ շնորհ ծանուցեալ, ողորմութե լուսովդ ուղերձեալ, քան 'ի ճանապարհ ստեղծանելոյն: [7] Զի առ մինն՝ արարիչ միայն ճանաչիս. իսկ առ միւսն՝ առաջնով կոչմամբն՝ և երախտաւոր. ընդ կերպացուցանելոյն՝ և քաւիչ. ընդ նորոգելոյն՝ և բարերար. ընդ հաստելոյն՝ և ողորմած. ընդ կազմելոյն՝ և հնարաւոր. ընդ յօրինելոյն՝ և հեզ. ընդ նկարելոյն՝ ամենազօր. ընդ առաջնորդե-

լոյն՝ և լոյս. ընդ տածելոյն՝ հովիւ. ընդ դարմանե-
լոյն՝ խնամիչ. ընդ ողջ պահելոյն՝ բժիշկ. ընդ ձեռն-
կալութեն՝ զօրավար. [8] ընդ անպարտութեն՝ թագա-
ւոր. ընդ արարչութեն՝ քաղցր. ընդ ամենատուր
պարգևացն՝ առատ. ընդ միշտ անսալոյն՝ ներող.
ընդ ոչ բարկանալոյն՝ անոխակալ. ընդ կարեացս
վշտակցելոյ՝ ծածկագէտ. ընդ յանձանձելոյ գթոյն՝
ապաւէն. ընդ գերունակ գոլոյն՝ ած. ընդ ան-
սպառ բարութեն՝ օրհնեալ յամենայնի:

Է. Արդ՝ որպէս ստեղծեր մինչ ոչն իսկ էի, և ծա-
նուցար ինձ գոյացուցիչ, և այժմ զհոգի մաղթողիս
մարմնոյս տաղաւարաւ՝ յարդարեա՛ անդրէն վերըս-
տին յանարատութի մաքուր սրբութե նախնի լինե-
լութեն. զի բազմասցի առաւել աճեցուն եղեալ
յաճախ տուչութի անսահմանելի [9] քոյդ սքանչելեաց՝
նորոգ ներկայիս, քան զանցելոց հնոյն ստուերա-
կանաց: Եւ ընդ ճառելոյս զթիւս մեղացս՝ որքան
մնացս թևս ընթանայ զանբերելիսն յիշատակել,
արդարացայց յանուն քո հզօր. և 'ի պատմելս ին-
ձէն զանձին իմոյ բիծ, և դու թողցես զամբարշտու-
թի բազում մեղանաց խոստովանելոյս՝ հզօր ծած-
կատես ամենափրկիչ. [10] զի մի ծայրագոյն լրութբ ա-
ւետեացս, դարձեալ նախնումն կարօտացայց՝ երա-
նելով սաղմոսիւն զշնորհօք փրկեալսն մկրտութեն.
և փշովք մեղաց յոգի խոցոտեալ, ձեռն քո մխեսցի
յիս առաւելապէս այժմէն վերստին, ծանրս առնե-
լով զբեռն պարտեացս՝ քան զքաղցրութի պարգե-
ւացդ, այլ [11] ազատեա՛ զիս օրհնաբանեալ հոգւովդ
սրբով, աղաչեմ զքեզ՝ տէր ամենայնի, յօրինաց մե-
ղացն և մահու: Քա՛ւ լիցի, թէ անկցի ընդ տկա-
րութբ սահմանաւ ճշմարտութեդ ծագումն՝ իբրև
գգրոյն օրինակ. քանզի ուր քաւութի է թագաւո-
րեալ, վտարեալ են մեղք. և 'ի խրախոյս կենդանի
բանիդ, ոչ է յուսահատութի. և ամբարձեալ քոյոյդ
շնորհաց, հալածեալ են պարտիքն. և մերձ գոլով
ձեռինդ այ՝ ոչ գոյ անհնարութի, այլ ամենևին լու-
սաւորութի, բովանդակապէս զօրութի, անպարտե-
լի կարողութի: Քո՛ է փրկութի, կենդանութիւն,
ողորմութիւն, միանգամայն և քաղցրութիւն, ար-

քայութիւն, անեղծութի՛, և փառք յաւիտեանս . ամէն :

---

(1) [illegible] : Մի՛ տիրեսցեն մեղքն՝ հոգւոյս, որ է Թագաւորական պատկեր կամ նմանութի [illegible], վերին և գերագոյն Թագաւորութեանդ, այսինքն կամ տէրութեանդ 'ի վերայ արարածոց, որում հաղորդ արարեր զմարդս, կացուցանելով 'ի վերայ ամենայն ձեռակերտացդ . և կամ երկնային երանական արքայութեան, որում նմանութիւն է մարդս 'ի ձեռն սրբարար շնորհաց և երկնային փառաց : Արդ այսպիսում Թագաւորական երկնանման պատկերի քանի՞ անվայելուչ է թէ անօրէնութիւնք տիրեսցեն : [illegible], մի՛ յափշտակեսցէ ապստամբն սատանայ [illegible], զփչումն շնորհիդ, որ է զարդ հոգւոյս, զոր օրինակեցեր փչմամբն յերեսս ադամայ :

(2) Ամենակարողդ Տէր : 3 . օրին . ամենակարող :

(3) [illegible] : Սահմանեցեր անփոփոխելի ուխտ կենաց, այսինքն զխորհուրդ ՚ի պատարագին, կամ զբովանդակ խորհուրդս նոր օրինաց . [illegible], մկրտութե՛ն և դրոշմիւ հաղորդ քեզ առնելով, առ հայր քո մատուցեր ինձ որդի ժառանգակից քեզ :

(4) [illegible], փրկագործութեան, սրբարարութեան, կամ խորհրդոյ ՚ի սեղանոյն՝ մեծացուցեր քան զայլ հրաշալի գործս քո : [illegible] . զօրութե՛ իմա՛, այնպէս մեծացուցեր՝ հանդերձ ամենայն զարդուքն, և գեղեցկութե՛ք հրեշտակաց . ո՛չ այնպէս մեծացուցեր զերկիր և զազգ մարդկան, և [illegible], զարմանալի իրք : Ո՛չ [illegible], ոչ այնպէս ընդարձակեցեր զտարածումն լայնածաւալ ծովու, և որ ինչ 'ի նմա [illegible], զանթիւ կենդանեաց գոյացեալ 'ի ծովու : [illegible] . ոչ զանդունդս խորութե ծովու և կամ ցամաքի, [illegible], խառնիւք կամ փայլուք այնպէս աչագինս ցուցեր են : Ոչ բարձրացար կամ փառաւորեցար յօրինմամբ [illegible], այսինքն այսքան գերազանց լուսոց, որչափ կարեկից լինելովդ ինձ 'ի թողուլ զմեղս . ուստի դու ինքնին զայս 'ի վեր քան զայլսն ցուցանելով, ասացեր բերանով մարգարէին, ո՞վ է իբրև զիս կարող թողուլ զմեղս և այլն :

(5) [illegible] : Վասն այնորիկ ո՛չ ոք 'ի բանաւորացս կարող է բացայայտել խօսիւք, նոյն և մտօք իմանալ՝ [illegible], նաև զմասն ինչ գթութեանց քոց՝ թո՛ղ թէ զբովանդակն . վասն զի առաւել մեծ զօրութի երևի՛ զմեղօք հնացեալ ապականեալ հոգիս նորոգել ըստ առաջին սրբութեան, քան թէ յանգոյից առեղծանել զայն . ո՛չ զի այս քեզ դիւրին իցէ քան զնորոգելն . որովհետև ոչ է [illegible] . առ քեզ չիք ակարութի յոր և է գործս, այլ բոլորովին զօրութի ես . և ըստ բան հրամանի քո կատարէ զամենայն : Այլ զի առաւելապէս պայծառանան փառք քո 'ի կատարելդ զիմ անյուսալի փրկութիւն :

(6) [illegible] : Բանիւ այնր ուխտի՝ եսայեան խոստացեալ. ( Լգ . 10 . ) * Արդ յարեայց ասէ Տէր, արդ փառաւորեցայց, արդ բարձրացայց, || հայսա, [illegible], մեծ երևեսցի անյուսալի փրկութի իմ . որովհետև այն աւետաւոր ձայն մեծապէս հաստատուն եղեալ 'ի [illegible], պարգեօք քաւութե մեղացս առաւել ճանաչի, քան 'ի [illegible], քան թէ առեղծագործելովն : Լռելեայն ակնարկէ զառաւելութի փրկելոյն քան զառեղծանելոյն՝ այնու մտօք զի յարարչագործելն ոչ արար Ած ուխտ կամ խոստումն առ 'ի առեղծանել,

բայց առ 'ի փրկել՝ ուխտիւ խոստացաւ քաւել, ներել. և զբաղդատու_թի երկուցս ընդարձակէ յաջորդ բանիւք ։

(7) Զէ ու մնն ։ Առ ստեղծանելն Արարիչ միայն լինիս և Ճանաչիս. իսկ ու մ—ն, առ փրկելն, առ քաւելն, ու—ըն—ղ կ—ըմ—ն, բայց յարար_չական անուանէն՝ Ճանաչիս և անուանիս և Էրախփաւոր, առ սպե_ղախոս, առ յանցաւորս ։ Քանզի փրկելն, քաւելն զմեզս՝ ԱԾ միայն գոլով, ցուցանէ թէ փրկիչն է ԱԾ արարիչ, բայց միանգամայն բարե_խնամօղ առ յանցաւորս ։ Զայսմիկ որոշումնեցոյց ԱԾ առ մարդն մե_ղուցեալ, և ոչ առ հրեշտակսն յանցուցեալս. զի առ նոսա Ճանաչի միայն արարիչ, հատուիչ, յօրինօղ, այլ ոչ քաւիչ, ողորմած, ներօղ էն ։ Եւ 'ի բովանդակ կարգի բանիցս պարտ է խմանալ, թէ 'ի փրկա_գործութե փակի որ ինչ միանգամ արարչական զօրութեն է. այլ ոչ անդրադարձեալ՝ յարարչութեն ցուցանի որ ինչ 'ի փրկագործութե. ուստի որ փրկիչն է, հարկ է զի իցէ և ԱԾ արարիչ. այլ ոչ ըստ ան_դրադարձութե՝ որ արարիչն է, հարկ իցէ և փրկիչ լինել ։ Զայն հետեւումն յայտ առնէ ըը վարդապետս յերկու դիմադրեալ բանքս, ընդ արարչութեն՝ բաղցր, ընդ գերաղանց գորովոյն՝ ան. այսինքն փրկագոր_ծեալն որպէս ցուցանէ զնծ լինել ընդ արարչութեն միանգամայն քաղցր, նոյնպէս ընդ գերաղանց գթոյն լինել ԱԾ միանգամայն ։

(8) Ընդ աղաբաւրէն ։ 'Ի փրկագործելդ քաւելով զմեզս՝ Ճանաչիս և բարձրանաս ոչ միայն իբրև անյաղթ զօրաւոր, այլև թագաւոր իշխե_ցօղ. վասն զի սպառել յամենայն բռնութեց սատանայի, և բովանդակ զպարտիս մեղացն հատուցանել, պահանջէ զանպարտելի զօրութի. ըս այնմ * Փրկեաց զնոսա բազուկ իմ || ( Եսայ. կգ. 5 ։ ) Եւ միանգա_մայն իշխելով փրկելոցն՝ իրաւամբք տիրէ 'ի վերայ նոցա. ըստ այնմ. * Չէք անձանց տէր. քանզի գնոց գնեցայք ։ || (ա. կոր. զ. 20 ։) Ընդ Ճարէարա, 'ի փրկելդ՝ Ճանաչիս իբրև վշտակից իմոց կարեաց, և միանգա_մայն ցուցանիս դիտօղ գաղտնի թշուառութե իմոյ. զի միայն Ճանաչես՝ թէ որք 'ի խնամս չարին հաստատեալ են միտք մարդոյ 'ի մանկութէ, վասն այն ներողամիտ լինիս էն ։

(9) Բայց աբանէլէլայ ։ մի օրէն. բայց ։ Որպէս 'ի ստեղծանելդ զիս ասէ՝ ծանուցար ինձ արարիչ, այժմ քաւելովդ զհոգի և զմարմին իմ նորո_գեալ յանդրադարձութի նախնի լինելութէն, յայն մաքրութեն որ 'ի նա_խասկիզբն վիճակին շնորհեցաւ, կամ 'ի սրբութեն որ նախկին ծնն_դեամբ մկրտութեն պարգեւեցաւ. որպէս զի բազմապատիկ աճեցմամբ պայծառացի առաւել սքանչելի պարգեւաց նորոգ ներկայիս, այժմու նոր օրինացս քան աւելեւոր հնոյն, թէ քան զհին մովսիսական օրինաց, և թէ քան զհին վիճակին ադամայ, որք և երկոքին համեմատեալք առ նոր օրէնս, ստուերականք են ։ Եւ այս առաւելութի քան զմովսիսա_կանն՝ քաջայայտ է. զի անդ ոչ միայն չլինէր մեղաց թողութի նորին զօրութեամբն, այլև օրինական յանցմունք յաճախ էին, իսկ ներողութի կարի սակաւ ։ Այլև քան զդրախտին վիճակ առաւելեալ է այս. զի անդ շնորհք միայն եղեն առանց յաղթութե, շնորհք արարչի՝ և ոչ փրկողի. որ միայն օրինացս նորոյ պահեալ էր ։

(10) Զէ մի ծայրագոյն ։ Զի մի յայտնապէս բազմապատիկ առատութե նորոյ շնորհացս՝ վերստին կարօտացայց առաջնոյն, իբր նորոգ սրբել մկրտութե. որ ոչ գոլով հնարաւոր վասն անկրկնելի լինելոյն, երա_նեցից զայնոսիկ, որ մկրտելոցն սրբին, բանիւ սաղմոսին. ( լա. 1. ) * Երանի ում թողութի եղև մեղաց ։ || Իսկ ես խայթմամբ մեղացս յոգի խոցոտեալ, ձեռն բարկութեան քո մխեցի յիս. և առաւել ևս ծանրեցին պարտիքս քան զպարգեւդ քո. ըստ նոյն սաղմ. 4. * Ծան_

րեալ ձեռն քո 'ի վերայ իմ, դարձայ 'ի թշուառութիւն, զի հարան յիս փուշք, || որպէս և 'ի մխսումն. (Լէ. 3. 5:)

(11) Սաղմոս ԼԱ: Հայր 'ի բանն հռովմ. (Ը. 2:) * Օրէնք հոգւոյն կենաց 'ի քս յս ազատեցին զիս յօրինաց մեղացն և մահու. || վասն որոյ քաւ լիցի, թէ ծագումն ճշմարտութե նոր օրինացդ անկցի ընդ ափերուրթ, իբրև ազգոյն օրինաց, այսինքն իբրև զգիրն հին՝ որ օրինակ էր. զորմէ և ասէ իսկ առաքեալն. * Որ անհնարին էր օրինացն, որով տկարանայր մարմնով: || Այլ 'ի քո նոր օրէնս՝ թողութիւն մեղաց թագաւորեալ է, այսինքն իշխանապէս շնորհեալ, ուստի մեղքն ջնջին, և ոչ եթէ լոկ անուն լինին: և 'ի խրախոյս, քո կենդանի և ազդողական բանիւդ խրախոյս տալով, թէ ապաշխարեցէք, արձակեցէք, ոչ ևս մնայ յուսահատութիւն: և ամբարձեալ բոյսդ. և յորժամ քո շնորհքն զօրանան, առատանան, գերազանցեն քան զյանցուածսն, ոչ ևս մնան պարտիք:

---

Սերտին յառեալ հրճէն հեծութեն՝ նորէն հաճոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

# ԲԱՆ. Ծ:

ա. Այլ արդ՝ քան զի որպէս ոչ է առանց քսի այ՝ ոգւոյ փրկութի, և ոչ [1] առանց տեսեան աչաց՝ առ լոյս զուարճութի, և կամ առանց արուեստին նշուլից՝ արևու երբէք քաղցրութի, այսպէս և ոչ առանց խոստովանութե ծածկութեանց և ստգտանաց անձին՝ քաւութի: Ո՛վ զի՞նչ [2] օգուտ քեզ է մաքրութիդ, եթէ ընդ փարիսեցւոյն դատեսցիս. և կամ զի՞նչ վնասեսցեն զիս պարտիքս, եթէ ընդ մաքսաւորին գովեսցայց. և կամ ո՞ր ասի պարսաւեալ մարգարէն յովէլ, երիցս կրկնելով զանձինն եղկութի. և կամ զի՞ գուցէ [3] սխե՞ն դատաստան՝ առ 'ի յիշատակ աւուրն մեծի. և կամ ե՞րբ արդեօք անմաքուր իմասցի շրթամբք եսայի՝ հեռի 'ի գործոց տանն իսրայելի. և զիա՞րդ ած պարտաւոր պաշտի ադամեան մարմնովն՝ իմյս կարեկցեալ յանցաւորապէս առ հայր աղօթել. և կամ յո՞րս թարգմանի առած առակին, թէ [4] սիրտ իմաստնոյն 'ի տան սգոյ, և սիրտ անմտին՝ 'ի տան ուրախութե: Ո՛վ որ զսխալէն ադամայ՝ անձին իւրում ոչ գրեսցէ, և [5] զմեղս ամենից՝ ինքեան ոչ համարեսցի, իբր երջանիկն արքայից զհարցն, կորոյս զիւրն արդարու-

թ̃ի՝ որպէս անախտակիր գոլ ընութե̃ս. և [6] ոչ բերկ-
րի սիրտ՝ առ զուարթութ̃ի երեսաց աւետեօք յու-
սոյն, ըստ ասացելոյն, եթէ ոչ յառաքելոյն ք̃ի ու-
սեալ՝ ա̃միւ ահա́ ըստ ա̃յ տրտմեցի:

Է̃. Արդ՝ ըղձալի է ինձ յաւէտ աստանօր [7] խրատն
հին՝ նորոգ ընկալեալ՝ հոգևոր հանճարեղին, զոր
տէրն իսկ երկրորդեաց, երթալ նստել՝ ոչ յառա-
ջին բարձին հպարտից ընդ ամբարշտացն նանրա-
խորհուրդ ժողովելոց, ուստի դաւիթ և երեմիա՝
ուխտիւ կանոնի սահմանի հաստատեալ հրաժարեցու-
ցին, այլ ընդ զղջացեալսն սրտիւ պատկառեալսն մե-
ղօք՝ և 'ի դատաստանաց մեծին պակուցեալ ահիւ-
հատուցմանն, յետնոցն հաւասարեալ աստէն 'ի յերկ-
րի կամաւ խոնարհու̃է, ուստի բարձրեալն ա̃ծ պա-
րարեալ բերկրի. որով ընդ նախադասեալսն 'ի բազ-
մականսն երանութե̃ համարձակեցայց, [8] թէ ես՝ և
թէ նա՝ հետևեալ սովիմք: Աւ որ զերծեալ 'ի բամ-
բասանաց բանի մարգարէին, որ 'ի վէսս ոմանս ակ-
նարկի, մի̃ յիս ասէ՝ մերձենար, մաքուր եմ, և ո́վ
զիս տեսանիցէ: Այլ [9] զանկշիռն խոնարհութ̃ի եր-
ջանկին դաւթի՝ ինձ նպաստ առեալ ասել ընդ նմին,
ես իբրև զանասուն համարեցայ, հերքեալ 'ի զգայու-
թ̃է. և հասին չարիք ինձ շուրջանակի. և նեխեցան
և փտեցան վէրք իմ 'ի յանզգամիս անբժշկութ̃ի:
Եւ զայլոց ոմանց [10] ընտրելոց 'ի յասորեստանի՝ ըղ-
կամաւորն կշտամբութ̃ի մեղապարտութե̃՝ անձանցն
անարատից. ընդ որս և զեղրի մեծի քահանայի զա-
սելն՝ ես ինձէն առեալ բարբառիմ, թէ և ոչ զե-
րեսս բաւական իցեմ համբառնալ 'ի վեր առ քեզ՝
ա̃՛ծ:

Ը̃. Արդ՝ ես [11] ճշգրիտ պատկեր ամենայն երկրի՝
զիմս խառնեալ ընդ նոցին պարտիս, և 'ի նոցայոցն
զառ իս դառնութ̃ի կրկին առաւելեալ, նոքօք հե-
ծեծեցից. թէպէտ և չէ ինչ պիտոյ դարշութե̃ գու-
նոյ՝ դարձեալ տգեղութ̃ի: Ահա́ արդ մեղայ՝ զի ան-
մտութե̃ գործեցի զոչ հաճոյսն քո՝ բազմօք սխա-
լեալ յանցաւորութե̃ք. [12] նայեա́ յիս գթած, որ-
պէս երբեմն յուրացութե̃ն ըմբռնեալ պետրոս, զի
յոյժ ունայնացայ: Լուսաւորեա́ ինձ զողորմութե̃դ

քո ճառագայթ՝ ամենևին բարերարութ֟ի, զի ընկա-
լեալ զօրհնութ֟ի քո տէր, արդարացայց կեցից և
մաքուր եղէց [13] յանստեղծիցն քո՝ իմոց լլկողաց։
Չունիմ համարձակութ֟ի զմեղապարտ [14] ձեռինս
հաստուած առ քեզ տարածանել, մինչև մատուս-
ցես զօրհնեալդ քո զաջ՝ 'ի նորոգութ֟ի դատապար-
տելոյս։ Արդ՝ յաղթեա՛ վերստին իմում յամառու-
թ֟ե քոյին հեզութ֟բդ առ իս ժամանեալ մարդասի-
րապէս․ և զամենայնն յամենայնի ամենայնիւ քո
կարողութ֟բդ, [15] զառաջին չարիսն՝ միջնովքն և վերջ-
նականօքն թո՛ղ ինձ հնարաւո՛ր անհասից՝ քո թագա-
ւոր լուսոյն արդարոց։

Դ․ Չեմ արժանի յիշել զանուն քո օրհնեալ, զի
[16] վնասակա՛ր եմ բարեգործիդ՝ մահու հարուածոց։
Առ կնիքն, առ շնորհն, առ փչումն, առ պարգևն,
առ աւանդն, առ ձիրն, առ անունն, առ որդեգրու-
թիւնն, առ պատիւն արքայական, առ պատկերն,
առ դրոշմն, առ օծումն, առ ճոխութիւնն, առ հա-
մարձակութիւնն, առ ընտանութ֟ին, առ կեանսն,
առ լոյսն, առ երանութ֟ին, առ յոյսն, առ փառսն,
առ անխոնարհելի բարձրութ֟ին, առ պսակն անկապ-
տելի, առ խոստմունսն ծածկեցելոյն, որ քև՝ տէր
ք֟ս, բազմօք աւետարանեցաւ ինձ յամառելոյս՝ իժիս
և քարբիս՝ [17] ունկնախից և լսելափակ անլուր ական-
ջացս․ որ միշտ յառաւելութ֟ե քումդ բարութեան՝
յօքնապատիկ յաւէտ քան զսոյն չարիքն իմ յաճա-
խեալ, իսպառ կործանեցին․ մերժեալ 'ի կենաց՝
ընդ մահ կապեցին, ծառայ կարգեալ ապականու-
թ֟ե։ Իսկ արդ՝ դո՛ւ միայն իրաւակշիռ և ճշմարտա-
դատ բարերար՝ օրհնեալդ 'ի գթութ֟ե, մեղայ քեզ՝
անօրինեցայ՝ անիրաւեցայ․ վասն որոյ և եղծայ՝ զեղ-
ծայ՝ յանցեայ՝ ամբարշտեցայ․ և ո՛չ լուայ խոստո-
վանեալ և երկրպագեալ գովեալ քո բանիդ․ որ [18]
դու իսկ երևեցար անճառելեաւ քո սիրովդ, զոր
գրելն իսկ մեծ է, և նշանակելն սարսափելի։ Քեզ
արդարութ֟ի և փառս և մշտնջենաւոր գովութ֟ի, և
ինձ պատկառեցելոյս 'ի քէն խնամակալ, քաւութ֟ի
և ողորմութ֟ի և բժշկութ֟ի, օգնութ֟ի և պահպանու-

Թն սրտի և ոգւոյ · բարեբանեալք յամենայնի յաւ-ւիտեանս · ամէն ։

---

(1) Առանց փեսային լուսոյ ։ Օրինակօքս կամի ցուցանել՝ թէ ոչ գոյ քաւութիւն մեղաց առանց խոնարհ խոստովանութեան և մեղադրելոյ անձին · որպէս ոչ գոյ փրկութիւն հոգւոյ առանց քնի, և ոչ զուարճութիւն լուսոյ առանց տեսողութեան աչաց, և ոչ առանց արտաքինին յառաջընթաց լինելոյ՝ երևի քաղցր ծագումն արևու ։

(2) Օգուտ քեզ է ։ 2 · օրին · օգուտ է քեզ ։ Եթէ դու մաքրութիւն ունիցիս, և յոյն պարծիցիս, զի՞նչ օգուտ է քեզ անտի, յորժամ ընդ փարխեցւոյն պարտաւոր գտանիս ։

(3) Սրբոյն Դաւթայ ։ Մինթէ այս ո՞ր մարգարէ՝ երկցս վայ անձինն տալով, և զուհարկին դատաստանն յիշելով · ( Յովէլ · Ա · 5 · Բ · 11 · ) և կամ այլ անմեղ ոք՝ պարտաւոր դատաստանի կարծիցի, այնու զի ասէպ յիշէ զօրն դատաստանի ։ և կամ Տէր, որպէս անմաքուր չիմացեք համարեսցի եայլ՝ վասն ասելոյն զինքն պղծաշուրթն ։ և զիմէրդ ԹԾ, որդին այ ադամեան մարմնովն խնում տկարութեամբ կարեկցելով, իբր յանցաւոր աղօթէ առ հայր թէ ընդէ՞ր թողեր զիս, որ է եղանակ յանցաւոր աղօթողի · մինթէ այսու իբր պարտաւո՞ր պաշտի կամ ճանաչի վերն ։

(4) Սիրտ իմաստնոյն ։ Բան ժողովողի է · ( Է · 5 ։ ) Այս առած կամ վճիռ սողոմոնեան առակին յորս բարգմանէ · որո՞ց յարմարելի է · կամ յո՞ր միտս հայի ։ Եթէ ըստ մարդկային քաղաքական կենաց ևս խորհելով, իմաստունն զորամանալիս աշխարհի առաւել պարտի յիշատակել վասն զգուշութեան անձին · և անմիտ է՝ որ զուրախալին յիշելով միշտ և 'ի նոյնս ջանալով, անկանի անզգուշաբար 'ի վտանգս և 'ի վիշտս, այլ ևս առաւել ըստ հոգևորական կենաց՝ իմաստնոյ է միշտ զիւր զմեղս և զպակասութիւնս յիշել, վասն ներումն գտանելոյ, և յապայն զգուշանալոյ ։

(5) Զմեղս ամենից ։ Ոչ է բաւական ասէ՝ զոգւանոյ մեղսն գրել, համարել անձին իւրում · քանզի գիտեմք թէ ադամեան ամենեքին մեղաք, և մասնեցաք 'ի կարիս մեղաց ։ Այլ եթէ նաև զայլոց ամենից մեղսն ոչ ինքեան համարեսցի վասն բնութակից գոլոյն և գիւրաստաճ իբրև զայլս, ոչ միայն զայնոցիկ մեղսն որք ներկայք են կամ կենակիցք, որոց գուցէ պատճառ ևս լեալ իցէ չար օրինակօք, այլև զանցելոց մեղուցելոց · իբր երջանիկն մարգարէն Դաւիթ՝ զհարանցն մեղսն, ասելով · * Մեղաք մեք ընդ հարս մեր || ։ ( սաղմ · ՃԵ · 6 ։ ) Արդ՝ որ ոք ոչ այսպէս համարի, այլ ամբարտաւանէ իբրև զփարիսեցին, այնպիսին կորուսանէ զիւր առ-գարութիւն՝ եթէ ունէր · որպէս անախորժելի գոլ, որպէս թէ ինքն 'ի ներքոյ ախտից բնութեան անկեալ ոչ իցէ · կամ իբրև անկարեկից այլոց մեղուցելոց, սխալելոց · փոխանակ զի 'ի տեսանել կամ 'ի լսել զայլոցն սխալումն, խորհել պարտ էր թէ ինքն ևս նման նոցա սխալեալ իցէ, կամ կարէ սխալել ։

(6) Ու բերկրի սիրտ ։ Ըստ ասացելոյն ( Առակ · ԺԵ · 13 · ) * Սրտի բերկրեցելոյ երեսք ծաղկին || · եթէ ոչ ունեալ յառաջելոյն ըստ այ տրտմեսցի վասն մեղացն ։ ( Բ · կորն · Է · 10 ։ ) Եթէ հաւատացեալն յիշատակաւ մեղաց և տկարութեան իւրոյ ոչ տրտմեսցի առ 'ի սիրոյն այ, ոչ կարէ սիրտ նորա ախոյիլ յուսով արքայութեան · և ոչ դէմք նորա բերին զուարթութիւն, այլ դառնութի 'ի սրտի և յերեսս կրէ միշտ ։ Ար-

տասուք ապաշխարութեն զուարթացուցանեն զպատկեր դիմաց ։

(7) Խորան հին ։ Սողոմոնի․ (առակ․ ին․ 6․) * Մի 'ի տեղիս մեծա֊մեծաց մատչիր, և՛ն ||։ զոր և տէրն երկրորդեաց․ (ղուկ․ ժդ․ 8 ։) Զայսմիկ բանս հոգևորապէս իմանայ նա վարդապետս, մի՛ ընդ որ֊գուրս ունել զանձն․ զի է աթոռակից լինել նանրախորհուրդ հպար֊տաց․ յորմէ զգուշացոյց դաւիթ․ (սաղմ․ ա․ 1․ ին․ 4․ 5 ։ և երեմ․ ժե․ 17 ։) Այնպիսի բանիւ դաւիթ և երեմիաս ինքեանց կանոն հաս֊տատելով զգուշանալ 'ի բարձակցութէ հպարտաց, նոյնպէս և զմեզ հրաժարեցուցին ։ Այլ ըղձական սրտիւ և յերկիւղէ դատաստանացն Այ կամաւ հաւատարիլ աստ խոնարհութեն յեփնոյն, նուաստից՝ որք զյետին տեղի ընտրեն, ընդ որ զուարճանայ ած ։

(8) Թէ ես, և թէ նա ։ Թէ ես մեղուցեալս, և թէ նա անմեղն, որ նա֊խադաս է սրբութբ, սովին խոնարհութբ գնալով, համարձակիմք 'ի բազմականս արքայութե ։ Այն որ ըմբռնեալ․ որով ազատիմք 'ի կշտամ֊բութէ մարգարէին, որ [illegible], առ բարձրամիտս հայի, և է բանն եսայ․ (կե․ 5․) * Որք ասեն՝ 'ի բաց կաց յինէն, մի՛ մերձենար յիս․ զի սուրբ եմ ||։

(9) Զանհաւասար խոնարհութեն ։ Զանհամեմատ խոնարհութիւն երանելոյն Պաւղի առնում ինձ առաջնորդ և պաշտպան․ և զիս խոստովանիմ ընդ նմա՝ անարուան եղեալ, անմտացեալ․ և թէ նեխեցան վէրք մեղացս 'ի յանզգամս տրտմութեն, վասն անբժշկելի կամ անուղղելի անզգամու֊թեաս․ զոր սաղմոսն ասէ՝ յերեսաց անզգամութե իմոյ ։ Եթէ այսպիսի խոստովանութե անհամեմատ երևի ընտրեալ անձին դաւթի, և սակայն առանց սոգտանաց ասէր նա ճշմարտութբ, ես առաւել ես բազմամեղս ունիմ ասել առանց մեղադրութե ։

(10) Ընկերաց 'ի յաւուրեւտանն ։ Երից մանկանցն 'ի բաբելոնի, որք 'ի գերութե գոլով ընդ ձեռամբ անօրինաց, ինքեանք ընտրք մնացին յած֊պաշտութե․ և սակայն անարատքն՝ կամաւ զմեղապարտութե հարցն ընկալան յանձինս․ որպէս և եզր քահանայ զերեսս անդամ ոչ համար֊ձակէր ամբառնալ ։ (ա․ եզր․ թ․ 15 ։) Զոր ինչ ցայսվայր աստ նա վար֊դապետս, էր լուծումն տարակուսանաց ընթերցողաց ոմանց, որոց խոս֊տովանողական բանք իւր կարէին երևիլ քան զչափն անցեալ ։

(11) Ծփրիտ պատկեր ։ 2 օրին․ Ճշմարիտ ։ Եւ ասէ՝ գոլով ամենեւին նման պատկեր ամ Երէրի, մեղաւորաց, խառնելով զպարտիս մեղաց իմոց ընդ նոցին պարտիս․ և 'ի Նոցայոցն, 'ի նոցա մեղացն կրկին աճեցուցա֊նելով զդառնութիւն սրտիս, այնպէս հառաչեցից․ Թէպէտ ուր գոյ անարդ գոյն, չէ պիտոյ յաւելուլ այլ տգեղութիւն․ այսպէս 'ի վերայ գարշութե յատուկ մեղացս ոչ է հարկ զայլոց մեղսն 'ի վերայ բարդել ։

(12) Նոյնէն յես ։ Զոր օրինակ յանկանիլ պետրոսի յուրացութե՝ դար֊ձար հայեցար 'ի նա գթութբ առ 'ի զղջացուցանել զնա ։ ( ղուկ․ իբ․ 61 ։ )

(13) Յանապատեցն ․․ ։ Մաքրեալ սրբեցայց 'ի մեղացս՝ որք չեն ստեղ֊ծուածք քո, այլ իմ արարած են, և զիս լլկեն, չարչարեն աստ տագ֊նապաւ խղճի, և անդ աններելի տանջանօք՝ եթէ քաւեալք ոչ իցեն ։

(14) Չեռնի հապաւած ։ Մեղօք կարկամեալ, գօսացեալ է ձեռն իմ, գործնական զօրութե հոգւոյս․ և չեմ կարող համարձակ շարժել, դա֊տէր, օրհնեալ աջովդ բժշկեա՛, որպէս զհաշմեալն ձեռամբ ։

(15) Զառաջին լուսոյն ։ Զմեղսն՝ որք նախ բուսանին 'ի մանկութե, և գործին 'ի տգիտութէ․ Միջոցին, մեղօքն՝ որ 'ի յաճեցեալ հասակի գոր֊ծին՝ և 'ի տկարուէ վասն բնութե ախտիցն․ և յերեկոյին, որք գոր֊ծին 'ի կատարեալ հասակի, և գիտութբ և կամակարութբ, որք և ըստ

չարութեան վերջին են, այսինքն ծանր և դժուարաջնջելի: Թո՛ղ ինձ զայս ամենայն ամենահնար զօրութեամբդ, դու որ Թագաւոր ես լուսոյն արդարոց, այսինքն արդարոց որք 'ի լոյս են, մաքրութեամբ պայծառացեալք, կամ լուսաւորիչ արդարոց:

(16) Վնասակար եմ: Վնասապարտ, կամ պարտաւոր եմ մահապէտ հարուածոց և չարչարանաց բարեգործիդ. կամ լաւ ևս, մահու արժանի յանցաւոր եմ առ բարեգործդ. իբր զի յանցաւոր եմ առ Քոյին մկրտութեան, և յայլսն որ 'ի կարգին յիշատակին, և ամենայնն են արգելք մկրտութեան թէ այժմ, և թէ 'ի հանդերձեալն: առ անուանն քրիստոնէական, որում յանցաւոր լինիմ չար վարուք:

(17) Ունկնախից և ականջախուլ: Խցեալ ունկամբ, և փակեալ առ լսելութի. երկոքին ևս նշանակեն՝ անլուր: Որ Տէր. որչափ քո բարութեանդ առաւելոյր առ իս, այնչափ բազմապատիկ ևս աճէին չարիքն իմ:

(18) Դու ինձ երևեցար: Կամ զմարմնով երևումն յաշխարհ աստ, և կամ զմանաւոր երևումն առ մեզ, որպէս տեսցես 'ի բանն. Ի. ԼԾ. 10. և ԽԷ. ԼԾ. 16:

---

Սրտին յաւելուած հրէին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ԲԱՆ. ԾԱ:

Ա. Եւ արդ՝ առ երկրածի՞ն ոք[1] պաղատեցայց այրս մահացու ամենապատիր,[2] եթէ ըն-դունայն է աղաղակելն. առ մահկանացո՞ւ բանական, եթէ սուտ իցէ փրկութի՞ւն առ յուսոյն վստահու-թի. [3] առ մարդ ոք եղծակա՞ն, եթէ ընդ ակարութե բանի՞ն՝ և նանի՛ր է զօրութի՞ւն. [4] առ իշխա՞նս երկ-րաւոր գահից, եթէ անցաւո՛ր [5] է ընդ ինքեանս և իւ-րեանցն բարութի. առ եղբա՞յր ոք հարազատ, եթէ կարօտ է կամելոյն առ անձինն անդորրութի. առ հա՞յրն իմ երկրաւոր, եթէ պակասեալ են խնամա-կանքն ընդ աւուրց նուազութեա՞ն. առ մա՞յրն իմ որ երկնեաց, եթէ կասեցան գթութի՞ւքն ընդ նահան-ջել կենդանութեա՞ն. առ թագաւորութիս աշխարհի՞ արդեօք, [6] որք զմահացուցանելն միշտ արուեստաւո-րեն, քան զկենագործելն. այլ առ քեզ՝ բա՛րերար ած օրհնեալ 'ի բարձունս, որ կենդանի ես՝ և զկեն-դանութի տաս ամենայնի. որ և յետ վախճանին զօ-րես անեղծապէս նորոգել:

Բ. Որ եթէ փախնումք 'ի քէն, դու զկնի ընթա-

նաս . եթէ տկարանամք, զօրացուցանես . եթէ վրի-
պիմք, շաւիղ դիւրութեան ուղղես . եթէ պատկա-
ռեմք, քաջալերես . եթէ ախտանամք յանձն և 'ի
մարմին, բժշկես . եթէ գարշանամք մեղօք, մաքրես .
[7] եթէ ստեմք, քո ճշմարտութբդ արդարացուցանես .
եթէ յանդունդս ներքինս սուզեալ գլորիցիմք, յեր-
կինս ցուցանես . եթէ 'ի կամաց մերոց ոչ դառնամք,
դու դարձուցանես . [8] եթէ մեղանչեմք, ողբաս . եթէ
արդարանամք, ժպտիս . եթէ օտարանամք, սգաս .
եթէ մերձենամք, տօնես . եթէ տամք, ընդունիս .
եթէ յամրանամք, երկայնամտես . եթէ մեք ժխտեմք,
դու առատապէս շնորհեալ ընձեռես . եթէ լքանիմք,
տրտմիս . եթէ արիանամք, խնդաս :

Դ. Որպէս [9] հարիւրորդ երկրորդ սաղմոսն օրհնաբան հրաշաւորական՝ զվհատելոյս զսիրտ սփոփէ, և մեծ յոյս կենաց աւետարանէ առ փրկութեն հանդէս . որ յաղթականն է դիւաց, և տարակոյս բանսարկուին . որ իբր զխաչին տէրունի նշան բարեբաղդպանծալի սքանչելափառ՝ անխոնարհելի բարձրութբ լուսոյ և անպարտելի վերնոյն զօրութբ՝ կանգնեալ է ախոյեան անվանական և անշարժական՝ ամենայնիւ յաւիտենական՝ ընդդէմ անբարի բարուց բռնութեն բելիարայ . որ ունի յինքեան զանձս հոգևոր օգտից գիտողաց մտաց՝ ընծայեալս զպարտումն մահու և զլուծումն մեղաց, և յոյսս կրկինս՝ յերկուս յաւիտեանս, և զնորոգումն խոստման անեղծութե արդարոյն, կանոնս բարեհրաւէրս և կենդանատուրս՝ գրեալս հոգւոյն այ . որպէս ամենայն իսկ երգ սաղմոսայն՝ մաքուր սրտից է տեսանելի՝ կտակ
կենաց մարդկան նկարեալ :

Ե. Ոչ թէ 'ի նախնումն [10] տկար կերպարանն՝ զայս աւետիս և վստահութի ընդգոգեալ ունէր՝ կործանման մահու նախաժաման մեծ աւետագիր՝ և կեանս երկնակրօնս վերնակենցաղս՝ միշտ անճառելիս . և այն՝ ջնջական գիրն, և յեղանակաւոր օրինակն, և պաշտօնն դատապարտիչ վհատութե յանցաւորացն, և խափանելի կտակն երկրային, և տկար հաշտարարութի միջնորդացն, և թերութիւն բանից մաղթողացն : Որ զի թէ մանասէի փրկութին խոստովանե-

լի է, անտուստ վկայեալ յետ այնքանեաց մեղանաց անբժշկականաց. որ արեամբն արդարոց ելից զնուիրեալն մեծի Թագաւորին հրաշանուն քաղաք հայրենի, ըստ մարգարէագիր անսուտ պատմութե՟ն. որ և [11] զմեծն իսկ տեսանողաց՝ բազմերախտիս ձեռնկալութե՟՝ խնամողօրէնն պաշտպանութե՟ նախնակերտ յարկին տեսչութե՟, մանկավարժ ինքեան և նախնի, մեքենայիւ մահու սղոցեաց. ՚ի յերկուս մասունս խզեալ՝ դժնդակ տանջանօք մաշեաց իբր խորհրդով ապստամբութե՟՝ զյուսոյն փրկանակ կտրեալ: Որով զչար յաւելուածն մոլեգնական՝ [12] գրքական վերնամարտութե՟ն ՚ի բարձրեալն յանդգնութիւն. քանզի ոչ պատկառեաց երբէք զտեղծողին պատիւ և [13] զանունն՝ յիւրաքնակ խորանէն մերժել. հալածեալ զնշ՟յ հոգին, բելիարայ զանձն դաւանեաց: Քանզի զնոյն տաճար տիրական՝ խնկարկութեան հաստողին սահման՝ հռչակաւորն երկրի տեսարան՝ զսարսափելին ազանց սրբարան, ուր տեսիլք հրեշտակականք և ա՟ծայրին հրամանք յաղթողականք՝ լուսաւորապէս յայտնութեամբ ազդեալ երևէին, զայն վայր երկնանման աշտաւոր սքանչելատես՝ [14] քևանայ ումեմն քառադիմակի նախանձարկու պատկերի աւերածոյն անապատի՝ պաշտօնետեղ դարշելի և դիւաձենձեր զոհարան պատրաստել կազմեաց: Արկեալ զարքայն երկնաւոր ՚ի յարքայականն կայից, զամենահզօրուստն՝ ունայն ՚ի ստացուածոց իւրոց, զտանուտէրն՝ անհանգիստ և Թափառական տատանեալ: [15] Նէհեզզեբուղայ ձեռուն նկարեալ, և զանունն ահեղ վտարանդի արարեալ. դերի տարեալ զաւանդդոյլելոյն, ողբալի՝ զողորմածին մասն նուազեցուցեալ. աղուեսուն փոքու ապարանք զորահն լուսոյ կարգեալ, և ընաւից ունողին՝ և ոչ գլխոյն տաղաւար [16] յիւրայնոցն եղեալ. հատեալ զցանկ հզօրին, բախտից հմայից՝ զսեղանն մեծախորհուրդ արեանն սրսկման՝ երևեցուցեալ: Լայնեալ հետս բազում ընԹացելոց ՚ի դայԹակղութի՟. հովիւ կորստեան հօտին սատակման. մոլորութ՟ բուռն վարդապետ. և [17] այն՝ դիտութ՟ կրօնից օրինաց, հայր ունելով զմեծն եղեկիա՝ զնմանակիցն դաւԹի:

Է. Այնքան ստացեալ գտմունս չարեաց, որ և զքո՛յ պատիւն՝ որ զարքայութեն փառս ընծայեաց նմա, հայհոյեալ և թշնամանեալ, և [18] զաղօթկերացն բազմութի սուսերաւ մահու խողխողեալ։ Ընտանի՛ դաւաճան. մերձաւոր վատնիչ. հարազատ՝ սատակիչ. կցորդակից սպանօղ։ Առ ա͞ծ ոչ գոյր դառնալ, զի ուրացեալ էր զնա. զաբրահամ ոչ էր յիշել, զի խորթացեալ էր 'ի նմանէ. իսահակաւ ոչ էր աղօթել, զի նզովեալ էր 'ի նմանէ. իսրայելիւ ոչ էր պարծել, [19] զի տարագիր էր անուան կոչմանն մեծախորհուրդն շնորհի. զդաւթեան երգ ոչ էր նուագել, զի կշտամբիչ էր նորին. [20] 'ի քաւարանն ոչ էր մերձենալ, զի պղծեալ էր զնա. 'ի տապանակն ածագիծ ոչ էր ապաւինել, զի ընդ դարշութե ձուլածուին էր փոխանակեալ. առ մովսէս ոչ էր կարդալ, զի անքաւելի էր պարտիքն որ առ նա. առ ահարոն ոչ գոյր աղաչել, զի վնասապարտ էր առ նա. առ մերձաւոր մարգարէիցն գունդ ոչ էր դիմել, զի սպանօղ էր նոցա։ Եւ նորա քաւութի մեղաց, և արքայութե թագաւորութե վերստին պարգևեալ տուաւ. զի քեզ բարերար՝ բազմացուցես կարգեսցես զովեստս անձառս և անլռելիս 'ի յազգս տոհմից և 'ի դարս ժամանակաց. և զդուռն յուսոյն մեզ անփակելի պահեսցես՝ 'ի փառս քոյդ բարձրութե և 'ի փրկութի դատապարտելոյս, անմահութեց պարգևաց տուիչ ք͞ս, գովեալ յաւիտեանս. ամէն։

---

(1) Պաղատեցայց: Յ օրին. պաղատեցայ. և կարէ յարմարիլ յիմաստս կարգի բանիցս. իւր ասել. Եւ սուրբ մի՛թէ առ երկրածին՛ն դք պաղատեցայ մինչև ցայժմ, մի՛թէ առ մարդ, մի՛թէ առ իշխանս, մի՛թէ առ ծնօղս եմ, ոչ բնաւ. այլ առ քեզ պաղատեցայ բարերար ա͞ծ օրհնեալ եմ։

(2) Երբէ ընդունայն է: 'Ի սպառագրեցելումն նախ քան զայս՝ զշաղկապս Երբէ յարեցաք 'ի վերջ յառաջընթաց բանին, գնելով, առ Երկրածին ու Երբէ, ընդունայն է. առ մահկանացու բանական Երբէ, սուրբ Եղէ Երկնաւորին եմ։ Իւր ասել, եթէ առ երկրածին դք կամ առ մահկանացու պաղատեցայց, ընդունայն է եմ: Այսպէս եդաք յայնժամ ըստ օրինակին տպելոյ 'ի կոստանդնուպօլիս, յամին 1774. ուր և Յառաջաբանին ասդ առնէ՝ նոյնպէս գտեալ յընտիր օրինակս: Սակայն ըստ որում կասկածէաք իսկ յայնժամ, և ակնարկեցաք 'ի լուծմունսն՝ ոչ միայն անսովոր լինել այդմ ձևոյ, այլև զի մեր ընտիր օրինակն կիտիւ զատանէ յանցելոյ բանէն, ընդ յաջորդին յարելով, Երբէ ընդունայն է, Երբէ սուրբ Եղէ եմ: Արդ վասն նորոգ ևս հարցափորձեալ զայլ ևս օրինակս, տեսաք զի բա-

զումք ընդ յաջորդին ընթեռնլով զէԲէն , յաւելուն և նշանն հարցական՝ իբրև 'ի ձև տարակուսութեն · զայն՝ զոր և աստ յետին բանն յայտ առնէ արբէօք շաղկապաւն · աո Բոգաւորութիւնս ուխարհն արբէօք , որք զմահացուցանէն ևն · զնոյն միտս ցուցանէ և վերադրոյն ասելն , Էբէ ասոփ ԽՅէ ճբհնութիւն : Ուստի ըստ այսմ ընթերցուածոյ լինի նոյն ձև բանի՝ զոր և յայլ ալօթս 'ի կիր առնու սբ վարդապետս , որպէս 'ի իզ · 1 · և իը · 1 : Եւ շաղկապն Էբէ իմանի իբր ալոտհական · ռամկ · եօխսամ · իսկ ըստ միւս ընթերցուածին նշանակէ իբր Թէական , ( ռամկ · էկէր : )

(3) Առ Ճերր ոհ : Խնդրելի է որոշումն երից բանիցն՝ յորս ասէ , պաղատել առ Երէրածին ոհ , կամ առ Ճահճանաշու Բանական , կամ առ Ճերր Եղծական : Թուի Երէրածին ընդհանուր կոչել զոր և է ձեռնտու , Թէ մարդ իցէ , Թէ այլ կենդանի զօրաւոր · և սակայն առ այնպիսին ասէ՝ ընդունայն է աղաղակելն , վասն զի կամ չիմանայ զկարիս այլոյ , կամ չունի կարեկցութիւն : Եւ Ճահճանաշու Բանական՝ առանձինն իմանի այր բանաւոր , Ճարտարախօս , բանիբուն · բայց և 'ի սմանէ սուտ է ասէ՝ փրկութիւն , զի ոչ կարէ բանիւքն ապրեցուցանել : Իսկ մարդ Եղծական՝ առնուլ առանձինն զմարդ զօրաւոր , ուժեղ , քաջաձեռն , բայց և նորա զօրութիւն այնպէս սնոտի է ասէ՝ որպէս և բանն սկար : Այս առ ո՞ք յայնպիսեաց պաղատեցայց կամ պաղատիցիմ ասէ · որովհետև կամ անկարելից է , կամ չգիտէ անպարտ արդարացուցանել , կամ չկարէ հանել 'ի փրկութ :

(4) Առ Իշխանս Երկրաւոր : Մինթէ ումեքիմ առ երկրաւոր իշխանս պաղատիլ , որք Թէ և կարօղք իցեն , սակայն որպէս ինքեանք և իւրեանցն իշխանութի անցաւորք են , նոյնպէս և բարերարութի նոցա կամ խնամակալութի անցանէ , դադարէ կամ ժամանակաւ , կամ փոփոխելով կամացն :

(5) Առ Եղբայր ոհ : 'Ի յուշ բերէ զօգնականութիւն՝ որ 'ի մարմնաւոր ընտանեացն յուսալի Թուիցի : Մինթէ ասէ՝ առ հարազատ եղբայր իմ պաղատիցիմ , որ Թէև կամիցի յիս զբարին , բայց կարօտ է գուցէ և նա ջանալ յիւր խաղաղութի սրտի , և յինէն Թերևս կամի գտանել օգնութի : Մինթէ առ հայրն իմ Երկրաւոր պաղատիցիմ , Թէ գուցէ արդեօք խնամական հոգք նորա առ իս՝ պակասեալ իցեն ըստ նուաղելոյ աւուրցն կենաց · կամ միթէ առ մայրն իմ ըստ մարմնոյ , Թէ արդեօք դադարեցան գութք նորա 'ի բառնալ կենաց նորա : Լաւելայն անկարութի կայ 'ի բանիս , զի հօրն զնուաղութի միայն տալով իմանմք և աւուրց , իսկ մօրն՝ զբարձումն գԹոյ և կենաց , Թուի զեկուցանել Թէ 'ի գրել ալօԹիցս վախճանեալ էր մայր նորա , իսկ հայրն տակաւին կենդանի կայր հինաւուրց ծերութբ պակեալ :

(6) Որք զմահացուցանէն մեզ : Մինթէ առ Թագաւորութիւնս աշխարհի պաղատիցիմ ասէ , որք առ յանցաւորս՝ մեզ , այսինքն առօրաբար զուր 'ի կիր արկանեն , պատուհաս մահու տան , քան Թէ ներեն և ջանան 'ի կեանս նոցա : Կամ , ընդհանուր ես ասեալ , Ճշմարիտ է Թէ երկրային Թագաւորն կարէ միայն բառնալ զկեանս՝ մեռուցմամբ , այլ ոչ երբէք կենդադրծել · մահու ունի իշխանութի , այլ ոչ կենաց սորապէս · կարօղ է չսպանանել , այլ ոչ զսպանեալն 'ի կեանս կոչել :

(7) ԵԲէ ոպէնի , ոո Ճշմարտութէդ արդարացուցանէս : Յն զքո Ճշմարտութեդ տալով մեզ , արդարացուցանես 'ի սուտթէն : Այսպէս 'ի սաեղն պետրոսի Թէ ոչ Ճանաչեմ զյն , հայեցաւ 'ի նա յն , և պետրոս դառնապէս լալովն՝ դաւանեցաւ զՃշմարիտն և արդարացաւ : Բայց 2 · օրինակք ասեն , ԷԲէ ոպէնի ոո Ճշմարտութէդ , այսինքն եԹէ սխալեմք 'ի քո Ճշմարտութէդ , դու լուսաւորելով արդարացուցանես · որպէս պօղոսի արար ,

և այլոց ։ ԵԹԷ ՅԱՒԻՏԵԱՆՍ, 'ի խորին անդունդս մեղաց կիմ ծանր ծանր վհատեալ գլորեցաք, ՄԵՐԺԵՍ ՍՈՍԿԱՆՍ · զդէմս մեր և զմիտս յերկինս հայեցուցանես, քաղցրացուցանես յերկինս հայել ։

(8) ԵԹԷ ՄԵՂԱՆՉԵՄՔ՝ ՈՂՈՐՄԵԱ ։ Առ քո խնայեալ ըստ մարդկութեան, որ-դարև յերկրի աստ ողբոց և սգացու զմեղս մեր ։ Բայց քանզի անորո-շաբար առ ած խօսի աղօթքս, այսպիսի նմանութբ նշանակեն զգութն ածային, կամ զասելութիւն առ մեզ · որպէս և ծփուն խմանի հաճու-թեան ած ընդ մեր արդարանալն ։

(9) ՀԱՐԵՒՐԵԱՏ ԵՒ ԵՐԵԱՏ ։ այլ օրէն · ՀԱՐԵՒՐԵԱՏ · որ է սաղմոսն օրհնու-թե · Օրհնեա անձն իմ զտէր, և ամենայն ոսկերք իմ · յորում ցուցա-նելով զհայրական գութն այ առ մարդիկ, զերկայնմտութիւն, զներո-ղութիւն, ևն, մեծ յոյս կենաց ասանդէ մեղուցելոցս · իսկ զհեուց՝ ա-հարկուն է, և մեծ սարակոյս · որ և իբրև զխաչն տէրունական՝ կանգ-նեալ է 'ի մէջ եկեղեցւոյ 'ի գիշերային պաշտամանն՝ անվանելի ախոյեան ընդդէմ հնարից սատանայի · զի մասամբ երգեցողացն ծանուցանէ ՂՈՂՈ-ՔԱՆՍ ՍԱՀԱՆ և ՂՈՂՈԾԱՆՍ ՄԵՂԱՑ · ասելովն · * Ս քաւէ զմեղս քո, բժշկէ զամ հիւանդութիւնս քո || ։ և ՅՈՅՍ ՆԵՐԵԱ, ասելով օգտակար բարեացն և հանդերձելոցն, ասելով, * Ս լնու 'ի բարութէ զցանկութի քո || · և ՂԽՈՅՓՈՒՄՆ ԱՆԵՂԾԱՆԷ ԱՐՏԱՔՈՅՆ, ասելովն · * Նորոգեսցի որպէս արծուոյ մանկութի քո ևն || ։ ՍՐԴԷՍ ԱՄԵՆԱՅՆ ՏՈՒՆ ։ Զի մի կարծիցի թէ ասացեալ առաւելութիւքն պատշաճիցին միայն ՃԸ · սաղմոսին, յաւելու թէ զմի զայս սաղմոս մեծացուցի, սակայն բովանդակ իսկ սաղմոսք եթէ յառակ մոգ նկատեսցին, են արդարև կոակ կենաց՝ գծագրեալ առաջի մարդ-կան, իբրև զնոր կտակս զամ մասունս ածպաշտութե ունելով յինքեան, որպէս և բացատրէ 'ի յաջորդ համարն ։

(10) ՏԷՐ ՆԵՐՈՂԱՐԱՆՆ ։ Հին օրէնքն՝ որ էր տկար օրինակ նոր օրինացս, յինքեան ընդգծեալ, փակեալ ունէր զայս աւետիս և զայս թողութե մեղաց և այլ բարեաց, իբր յառաջընթաց աւետաբեր կործանման մա-հու՝ որ քրիստ լինելոց էր · և այն զի՝ գրաւորն այն օրէնք ջնջելի էր, և ՅԵՂԱՆԱԿԱՒՈՐ, փոփոխելի օրինակն · և խափանելի ՏԱՅՆ ՆԵՐԵԱՅՆ · ըստ որում խոստմունքն և սպառնալիքն, պատարագքն, որբութիւնքն, խորու-թիւքն, և պաշտօնեայքն՝ ամենայնն էին երկրաւոր և մարմնաւոր · թէ-պէտ և վախճան նոցա հոգևոր էր · և տկար էր ՀԱՒԱՏԱՐԱՐՈՒԹԻ, այսինքն բարեխօսութե կամ նուիրագործութե միջնորդացն քահանայից · և ԲԷ-ՐՈՒԹ, անկատար միալ ԲԱՆԻՑ, աղօթից մաղթողացն · ( 2 օրին · ԲՆԱՒՈՅ, ) այսինքն ամ մաղթողաց անկատարութիւն ։ Զայսոսիկ համառօտս հին օրինաց առնու յառաքելոյն · ( եբրայ · Է · Ը · Թ ։ և Ը · կորն · Գ · 7 · 8 · 9 ։ ) Գրեսեա ասասիօր, զի 'ի չորրորդ համարոյ ասաի անկատար ընթա-նան խմաստք բանին մինչ 'ի վախճան գլխոյս · վասն զի կամելով ՈՐ վար-դապետն 'ի թողութէ մեղաց՝ որ 'ի հին օրէնս լինէր, առաւելութբ եղբա-կացուցանել զշնորհաբաշխութեն նորոյս, դնէ միայն զառաջարկութիւն ասելով ։ Զի թէ յառաջինն այն 'ի տկար օրինակն կայր աւետիք թո-ղութե · որ ՂԻ ԲԷ ՍԱՆԱՒԷՆ ՏԸՐԻՈՒԹԻՆ, այսինքն այնչափ զի նաև մանա-ւանդ փրկութիւն խոստովանելի է ըստ անսուտ վկայութե գրոց · թէպէտ և բազմապատիկ յանցեաւ ։ Եւ յերկար ցուցանելով զպէտսպէս մեղս նորա և զդժուարութե թողութեն, 'ի վախճանին ածէ 'ի վերայ, թէ այսպիսի մեղաց ՏՈՒԱՌԻԹ, և ԱՐՏԱՅԱՌԻԹ ԲԱԳԱՒՈՐԱՒԹԷ ԿԱՐԳԵՆԵԱԼ ՏԱՆԱՆ, առ 'ի բազմացուցանել զգովեստ փրկողին ։ Եւ ապա 'ի փառս աստ-ւոյ զլամն՝ առանց դնելոյ զերրակացութիւն, թէ ևս առաւել 'ի նորումս յուսալի է թողութի դժուարաքաւելի մեղաց, ևն ։ Արդ՝ վասն այսր գուցէ թուեսցի ումեք՝ թէ զայն եզրակացութի լռելեայն թողու խմա-

նալ ։ Բայց մեզ առաւել հաւանելի է ասել, թէ 'ի յաջորդ գլուխն ծր․ յառաջ բերէ զայն, ուր զսկսուածն յայս դարձուցանէ, թէ գէր գան ղաձնայն աղինա նախնէայն՝ անաահման աաաևլաւթէ կրկին ընդ մոյ համէ-ջար հեղաւ․․․ 'ի ընորհաբաշխաւթէա նորաամ․ և որ զկնի այլ բանք՝ 'ի սոյն բաղդատութեն հայլին ։

(11) Զեֆծն ևոյ փնօաօղաց ։ Զեսայի մարգարէն, որ բազում երախտեօք ձեռնտու եղև եզեկիայի՝ հօրն մանասէի․ և աղօթիւք պաշտպանեաց՝ նախնաչէրփ յարքին, 'ի նախնեաց նորա չլինեալ աստուածասիրացն և տաճարին․ մանչաչարծ, դաստիարակ մանասէի, և նախնի, ծերագոյն յազգատոհմի նորա․ զի ըստ կարծելոյ ոմանց՝ էր եղբօրորդի ամասիայի արքայի յուդայ, յորմէ հինգերորդ էր մանասէ․ յաւելուն ոմանք ըստ կղեմայ աղեքսանդրացւոյ և ըստ հերոնիմոսի, թէ եսայի աներ էր մանասէի, ամուսնացուցեալ նմա զիւր դուստր ։ Արդ՝ զսա կոչէ ծէ տեսանողաց մարգարէիցն, ոչ միայն վասն յիշատակեալ առաւելութեցդ, այլ և ըստ մարգարէական ընդարձակ գրութեն, և ըստ երևելի յայտնութեց․ զոր մանասէ դժնդակ տանջանօք սղոցեաց սաէ, կոչեալ այնու զայս փրկութե իւրոյ ։

(12) Զփրէաչան ։ 'Ի վերայ այսորիկ չար յաւելուած արար զընդդէմ տէրութե կամ իրաւանցն այ գործեալ վէրնամարփաւթէն, պատերազմն, որ էր զտաճարն այ՝ բնակարան առնել կռոց ։

(13) Զաեաան՝ յիարաբեաչ խարանէն մերժէլ ։ 2 օրին․ ղաեաան խարաբեաչ խարանէն մերժէլ, այսինքն զանուն խորանին կամ տաճարին այ՝ փոխել յանուն կռոց ։

(14) Զբեանայ ոաֆճ ։ Ոմանց թուեցաւ ելանել 'ի յոյն բառէն փէչօ, կամ կէչօ․ որպէս գրի յայսմ․ խա․ 16․ և նշանակէ՝ քառակուսի յամ կողմանց․ զոր հայ բառիւ առեալք՝ խորանարդ, և 'ի գիրս փիլոնի, որպէս և յայլ գիրս սաի՝ փաաէայ, առեալ 'ի յունականէն ։ Եւ ըստ այսմ զյաջորդ բառն՝ փաաադիմաչէ, համարին թարգմանութեն բառին՝ փեանայ, կարծելով թէ կուռք էր չորեքկուսի չինեալ ։ Հին լուծ, ասէ՝ թէ քեան կին էր պոռնիկ, զոր յետ սատակմանն 'ի պաշտօն առեալ, ձուլեաց մանասէ զպատկեր նորա, և կանգնեաց 'ի չորս դէմս տաճարին ։ Անյայտ աւանդութե ։ Վասն որոյ մեկնիչք այլազգ ասեն․ ըստ աչափեաց՝ ոմանք համարին՝ թէ փէչան, է նոյն իսկ եբրայական բառն փիոն, կամ փիճ, որ գնի ամովսայ Ե․ 26․ զոր եօթանասունք եդին՝ ռեփան․ և 'ի մերս, ռէմփա ։ (տես 'ի բանն Ն․ ԼԾ․ 17 ։) Իսկ այլք ասեն, թէ զոր եբրայեցիք քիուն կոչեն, արաբացիք և պարսիկք ասեն քիվան, կամ քէվան ։ Իսկ թէ զինչ կուռք էր, բազումք ասեն զարուսեակն․ իսկ կալմէթ մեկնիչ ասէ, թէ ասորիք՝ արաբացիք և պարսիկք զերևակն կոչէին քէվան, որոյ արձանն՝ (ըստ գրելոյն եւսեբ․ պատրաստ․ աւետ․ գիրք Ա․ համար 10․) ունէր չորս աչս 'ի գլուխն, երկու յառաջոյ, և երկու յետուստ․ և 'ի փակիլ երկուցն՝ այլ երկուքն բաց մնային․ ունէր և երկու զոյգս թևոց 'ի թիկունսն ։ Այլ թողեալ զհեթանոսաց դիցաբանութե առասպելս, իմաստ տեղւոյս միօրինակ ճշմարտի, եթէ փեանա զարուսեակն իմացուք, կամ զերևակն կամ զայլ աստղ․ զի այ զօրութեց երկնից արար մանասէ սեղանս 'ի տաճարին․ (Դ․ թագ․ խա․ 5 ։) Եւ փաաադիմաչ սաի՝ կամ վասն չորից աչացն ըստ եւսեբեայ, կամ զի 'ի քառակուսի խարիսխ հաստատեալ կայր․ և կամ ըստ ոմանց՝ ընդ չորս կողմանս տաճարին կանգնեալ էր ։ Նախանձարչաւ պափչէրէ, այսինքն, 'ի նախանձ բարկութե շարժօղ զած․ և հայի 'ի բանն եզեկիելի․ (Ը․ 3․) որ հոգւովն տարեալ 'ի տաճարն, եսես անդ զայն պատկեր․ զի թէպէտ յոլով երարձ զպղծութիւն 'ի տաճարէն, բայց յաջորդքն վերստին

դարձան 'ի կատարելութիւն մանկանէ · որպէս ասի ( Գ · Թագ · ԺԳ · 32 · 37: ԺԴ · 9 · 18: և Բ · Մնաց · ԼԳ · 22 :) և ցուցանէ երեմիա · ( ԼԲ · 34:) Աստարովթայ անաղարտ · կամ վասն քաղաքին և տաճարին ասէ , զոր վասն կռոցն յանապատ աւերակ դարձոյց ած ըստ բանից մարգարէիցն · և կամ զի զայնպիսի կուռս պաշտեցին խորշելցիք յանապատին · վն

որոյ 'ի բարկութիւն ած աւերեցան մաշուածք :

(15) Բեհեզզեբուղայ : Ճանճիկ ածոյն ակկարոնի , Բեղուն , յարկ բնակութեն ապարեալ զտունն իւր · գեբեղով ղուսուտ գուլլեայն , զպաշտաւ արքունի գանձուց և տաճարին , զոր ժողովեաց գոլեղին եզեկիաս , 'ի պաշտօն կռոցն ծախեաց մանասէ , կամ զորբազան անօթս տաճարին գերելոյ պատճառ եղև : Ողբալի օրինակաւ պակասեցուցեալ զուբուբածին հան , զհասս տաճարին և զգանձին քահանայից իւր · կմ ըստ ոմանց

նուազեցուցեալ զգանձնն իւր զնորայէլ կռապաշտութբ :

(16) Յերբայիոյն Եղեաւ: այլ օրին , յերբայոյն : Զորաձ տաճարին , կամ զնուն տաճարն' աղուեսուն սատանայի ապարանք արար · խկ իւր որ զնմ ունի , և ոչ գլխոյն տեղի եթող յիւր տաճարէն : Հաղթեալ ըզան հզօրին · բարձեալ զկարապետ սրբութեանն , կամ տաճարին , հնայէր 'ի վերոյ սեզանոյ արեանն' որ զնորհուրդ մատուցման արեանն քի նշանակէր :

(17) Եւ այն Գնդաւորքն : յերկս օրինակս անգնդաւորէամբ · որ վրիպակ Թուի · բայց մարթ է և ա մեկնել , այնչափ քաջ վարդապետ եղև մոլորութեան , մինչև անդխոանալ կամ մոռանալ զճշմարիտ կրօնս օրինացն ,

թէպէտ և հայր ունէր զմեծն եզեկիաս զածապաշտն :

(18) Զաղօթքներայն : Զբազմութիւն աղօթականաց , կամ աղօթողաց ·

այսինքն մարգարէից և քահանայից ·

(19) Զի պարագիր էր : Ոչ կարէր ասէ' պարծիլ յիւրայէլ , վասն զի զուրկ և օտարացեալ էր 'ի մեծ խորհրդաւոր շնորհէ այնր անուան , որ

Թարգմանի' ածատես :

(20) 'Ի Քասարանն : 'Ի տաճարն' որ էր տեղի քաւութեան : 'Ի փաղանաքն ածագիծ · որոյ ձև և չափ առ յած տուեալ էր · կմ զի 'ի նմա պահէին ածագիծ տախտակքն · կամ զի տապանակն զԱծ երևեցուցանէր : Ոչ կարէր մնանել մերձենալ ասէ' 'ի տաճարն իւր' առրել ընդ հովանեաւ նորա , վասն զի պղծեալ էր զայն · և ոչ 'ի տապանակն իւր ապաւինիլ երբև զայլ յանցաւորս · զի փոխան նորա զպատկեր կռոց կանգնեալ էր :

---

Մեծարեալն յաւելուած հինին հեծութիւ՝ նորին հոքողի , առ նոյն

աշխու մազրանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ած :

## ԲԱՆ · ԾԲ ·

ած · Օրհնեալ տիրաբար 'ի քումդ էութեն , անսահմանելի և անփոխադրելի · խկապէս բարի , [1] պաշտօն խնկելի , և երջանկութի խոստովանելի ամենայն երկրի · [2] երկայն յուսոյ ամենապատրաստ տեսութիւն · գթած ողորմած , որ ոչ պահես ոխս բազմութե ամաց մեղանաց՝ քթթել մի ական ·

որ հրաշաւորս զարմանալիս՝ գեր քան զամենայն ա֊
զինս նախնեաց՝ անսահման առաւելութբ՝ [3] կրկին
ընդ միոյ հաճեցար հեղուլ զողորմութն վերնահոս
վտակս ամենախնկաւորս 'ի շնորհաբաշխութես նո֊
րում։ Եւ [4] զանտուստ զմուտս լուսարանի պատու֊
հանին անձկութն նշուղից աղօտականաց, չափով
գիտութեցն ըստ սողմանի, և իւր իսկ նմին, և ինձ
ընդ նորին՝ բացեր ընդարձակեցեր Թշուառացելումս
զառագաստն անջրպետարան ելից ողորմութն՝ ձրի
պարգևացն ածականաց. [5] զոր ընդ մէջ իմն մասնա֊
ւորօք աւետաւոր յիշատակաց և 'ի հնութն զայսր
տպաւորութի օրինակաւ նկարագրեր, զդարձարուքն
առ իս, և ես դառնամ առ ձեզ. և յորժամ դարձ֊
ցիս և հառաչեսցես, յայնժամ կեցցես։ Նաղի և [6]
զաղջամղջին սևութի գունոյն՝ փոխարկել 'ի ձեան
պայծառութի, և զարանցն արեամբ ներկելոցն՝ յե֊
ղանակել 'ի պատահումն գեղման, ըստ Եսայեայ և
զաքարիայ. և 'ի մէջ բարկութեն՝ դարձեալ [7] զոյգ
զողորմութի. քանզի անապատանալ քաղաքացն իս֊
րայելի, և [8] դարձեալ բնակիլ. և Ճանապարհացն
ամայի լինել 'ի չգոյէ մարդկան, և [9] անդրէն հետե֊
ւիլ. և լքանիլ 'ի սովոյն ոգւով, և դարձեալ զօրա֊
նալ ձեռամբ. և գնալ այ 'ի տեղի իւր զայրացմամբ,
և դառնալ ողորմութբ. [10] ըստ ներողութն զելմն,
և 'ի մէջ սաստից սպառնալեացն՝ կրկին պաշտպա֊
նութի, և 'ի սրտին խռովութն՝ յուզումն խնամոց
գթութն։ Այս մարգարէից ձայն խնկելի, որ [11] զօրհ֊
նեալդ քո գալստեան զազատարարդ հրաման կան֊
խաւ ազդէին։

Է. Եւ զոր չէ բանիւ նիւթեղէն լեզուի ընդ Թիւ֊
արկանել վասն անբաւութն, փոքունք են և նուա֊
զունք օրինակք և նմանութիք, [12] հինք և ժամանա֊
կաւորք՝ առ աւետեացդ քո յայտնութի, և խաչիդ
փրկագործութիւն։ Որ յամենայն վայրի կառուցեր
զխորանն վկայութն արեան քո ուխտի, որք մեծա֊
բարբառ միշտ աղաղակեն՝ [13] քան զդատակնիք մա֊
հուն հաբելի՝ զյաղթանակ բարեաց քումդ հանդի֊
սի, կեանս կրկինս և անմահականս՝ շնորհաց, մկր֊
տութն, յարութն, նորոգութն, առ քեզ ընտա֊

նութ̃ն, ընդ հոգւոյդ սբ̃յ միութ̃ն, քաւութ̃ն, ազատութ̃ն, լուսաւորութ̃ն, մշտնջենաւոր մաքրութ̃ն, խնկապէս երանութ̃ն, ընդ վերնայնոցն կցորդութ̃ն, անկապուտ փառաց, [14] 'ի շրթունս մեր ձայնիւ բարձրելոյն հաշտեցուցիչ բանից աղաչանք։ Նա զոր ահաւորն է ասել, կարգեմ ատամնօր՝ յիշատակ եդեալ մեծիդ երախտեաց, [15] ա՛ծ իսկ լինել ընտրութ̃ շնորհին, և ընդ հաստողիդ միանալ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ, և ընդ լուսոյդ կենաց խառնութ̃. զոր կատարումն երջանիկ խոստմանն, ըստ պօղոսի բանին, ոչ ունէր օրէնն։ Բայց դու փրկութ̃ի, եկիր հայրենիդ քո հարստութ̃, արարեր և կատարեցեր [16] զյուսոյն յերկարաձգութիւն, որ առ քեզ պահեալ անհամառօտելի՝ քաւիչ ամենայնի։ Նա քեզ փառք ընդ հօր քում 'ի գովեստ բարեբանութ̃ հոգւոյդ քո սբ̃յ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) Պաշտօն խնկելի։ Արժանի պաշտաման խնկոց, այսինքն տէրութ̃ն պաշտելի։ Երջանկաւէտ, երանութ̃ն զոր ամենայն երկիր պարտի խոստովանել. կամ, բարեբաստութ̃ն, լինութ̃ն ա̃մ արարածոց։

(2) Երկայն յաւէտ։ Երկարաժամանակեայ յուսոյն արդարոց՝ ամենապարփակ փառաւորէ, ամենեցուն, կամ ամենեւին պատրաստ և հաստատուն տէրութ̃ն, կամ խնամարկութ̃ն։ Գթած, որ ոչ պահես ոխս բարկութեան, 'ի վերայ բազմամեայ մեղաց մերոց՝ և ոչ [illegible], և ոչ վայրկեան մի. թէպէտև մեղքն բազմութիւք լցեն, և անոք բազմօք գործեալ, այլ գթութ̃ն քո ոչ տանի պահել ոխս. ապաէ ապաշխարութ̃, խրատէ, յորդորէ։ Թուի զատել սաղմոսին, և ոչ յաւիտեան պահէ ոխս, խմանալ՝ ոչ երբէք։

(3) Կրկին ընդ միոյ։ 'Ի նոր շնորհարաշխութեանս՝ փոխանակ միոյ խոստման կամ բարւոյ հին օրինացն՝ կրկին պարգևեցեր. զի այն՝ մարմնաւոր բարիս խոստանայր, կամ լոկ թողութ̃ն մեղաց. իսկ նորս՝ սրբութիւն շնորհաց և երանութ̃ն փառաց, և որ յայտնիկ յարմարեալք պարգևք հրաշաւորք, անբաղդատ առաւելութ̃ քան թէ յառաջին ազգս նահապետաց, զեղեալ յողորմութեն Այ̃ իբրև վտակք երկնաւորք։

(4) [illegible]։ Զայնր հին օրինաց զնեղ լուսամուտն՝ ընդունակս աղօտ ճառագայթից, այսինքն [illegible], չափաւոր և նուազ ծանօթութեց նոր օրինացս, [illegible]։ Այսու խմանան ոմանք ըստ հին լուծ. զբանն ժողովողի ժբ̃. 3. * Խաւարեսցին որք տեսանեն ընդ ծակս։ || Բայց ինձ այլ երկու ինչ թուին աւանդեալք 'ի սաղմոնէ. մին օրինակական. զի 'ի տաճարին արար պատուհանս հայեցիկս ծածուկս. (գ. թագ. զ. 4.) ընդ որս նուազ լոյս մտանէր, և նշանակէր զնուազ ծանօթութ̃ն նոր օրինացս։ Երկրորդն վարդապետական՝ աւանդեալ երգոց. բ. 9. * Յառեալ ընդ պատուհանն. || զոր ոք վարդապետս 'ի մեկն. անդ. (երես 49.) խմանայ 'ի վերայ մարգարէից. և ասէ. * այսինքն թէ յառաջնոցքս զլոյս ա̃ծութեն 'ի մեղ

նշողեաց ։ Այսմ յարմարին յաջորդ բանքն . զի ասէ՝ թէ բանիւք մարգարէից ըստ մասին յայտնելով զշնորհաբաշխութիւն նոր օրինաց, Խուր Խոյ Նվն, ինքեան սողոմնի, և ինձ ընդ նմին՝ բացեր զաւագաստն կամ զպատրուակն անջրպետարան, որ անջրպետէր կամ արգելոյր զելս ողորմութե ածային պարգևացդ ։

(5) Զուր ընդ Ջէջ Խն ։ Զոր միջնորդութբ, կամ 'ի ձեռն մանաւոր աւետաւոր յէղտաձոյ, բանից ։ Խոյ ընդ Ջէջ Խն, այսինքն, կատարեալ մանաւոր բանիւք աւետեաց՝ զնմանութիւն այսր շնորհաց Նխտրաքբէր, նկարագրեցեր, ծանուցեր ասելով ։ Դարձարուք առ իս, ևն ։ ( Զաքար. ա. 3. Մաղաք. գ. 7 ։ ) Եւ թէ Յորժամ դարձցիս, ևն ։ ( Եսայի. Լ. 15 ։ )

(6) Զաղջամղջին ուռաւքն ։ Ըստ եսայ. ( ա. 18 ։ ) և ղարանցն արէամբ, զարիւնահեղլիցն կարմրութիւն, յէղտաձէլ, փոխեցի յասր սպիտակ ։ (Եսայ. անդ ։) Խակ ղտքարէայ ասելն՝ է բանն (գղ. Թ. 7.) ՞ Եւ բարձից զարիւն նոցա 'ի բերանոյ նոցա, և զգարշելիս նոցա 'ի միջոյ ատամանց նոցա . և մնասցեն և նոքա այ մերում ։ ||

(7) Զայփ ղողորմաւքն ։ Զօրութբ խնձ յէղէլ. ( ամբակ. գ. 2 ։ )

(8) Դարյէալ Բնայէլ ։ Լնուլ բնակչօք, չէին լինել ։ ( եսայ. խզ. 26 ։ )

(9) Անտրէն հէտնէլ. այսինքն անցանել ընդ այն անցաւորաց ։

(10) Ըսփ Ներողաւքէ ։ ըստ Թոյլ տալոյն, կամ յետ լքանելոյն՝ զէլն, զշնորս, կամ զօգնականութն ։

(11) Զօրհնէայտ տօ գալտէան ։ Սկսեալ 'ի բանէն, նա ղէ և ղաղջամղջին ուռաւքն, մինչև յայն, Այս նարգարէէցն հայն, զմի կապակցութն ունին, եթէ ասել ։ Այն զի զսևացեալն ապխտակացուցանելն, և զարիւնաներկն յասարադոյն փոխելն, 'ի բարկութե ողորմութիւն յէշելն, անապատանալ քաղաքաց՝ և դարձեալ շէն լինելն, և այլ հետևեալքն, այս ամենայն ձայնք մարգարէից թէպէտ առ տեղեաւ նշանակէին զխնամսն այ առ Իսրայէլ, բայց խորհրդեամբ զքո գալստեան շնորհաբաշխութեն ծանուցանէին ։ Կամ բացատրելով ըստ կարգի շարագրութեն՝ իմանալի է ։ Այս ամենայն է ախորժելի ձայն մարգարէիցն, որք այսորիւք կանխաւ ծանուցանէին զաւետաւոր զօրութե քոյոյ գալստեան յաշխարհ ։ Սակայն այլազգ յարմարին իմաստք տեղւոյս ըստ լաւ օրինակի, որ զասելն, Այս հայն նարգարէէց, 'ի գլխոյ սկսանի, և յարէ 'ի յաջորդն, և ղար ընէ Բանէն, ևն . և իմանի այսպէս ։ Այս ձայնք մարգարէից՝ որք զքոյոյ գալստեան շնորհսն ծանուցանէին, և ղար, այսինքն զոր և զմարդեղութեդ շնորհ չէ հնար բանիւ թուել, Բօտօնտ, փոքունք են այն բանք մարգարէից, օրինակք միայն և նմանութիւնք՝ համեմատեալ առ յայտնութե աւետեաց քոց, և առ փրկագործութե խաչիդ ։ Այս չափք բանիցս առաւել յարմարագոյն թուին մեզ ։

(12) Հէնփ և Ճամանայաւրփ ։ Բանք մարգարէից առ Իսրայէլ՝ հինք են համեմատութբ նոր աւետեացս . և ժամանակաւորք՝ զի զառժամանակեայս խոստանային, և առ ժամանակ մի. զի դարձեալ անապատացան քաղաքք նոցա, և ճանապարհք նոցա անկոխ դարձան, ևն ։

(13) Տեան ղտափանէփ ։ Տեան զողորմութե մահուն հաբէլի՝ առաւել մեծաձայն գոչէն խորանք արեան քո, զորս յամ տեղւոջ ընդ տիեզերս կառուցեր, և ոչ որդւ առ Իսրայէլեանն՝ 'ի միում քաղաքի և եթ. և գոչէն զյաղթանակ բարեաց հանդիսի չարչարանաց քոց ։ Կէանս Խրէնս, գոչէն կամ խնդրէն ոչ մահ կամ պատուհաս, այլ կրկին կեանս շնորհաց և փառաց, կամ մարմնաւոր և հոգևոր, կամ յետ կորուսանելոյն մեղօք զառաջին շնորհսն՝ զկրկին նորոգումն . և այսպէս կեանք են՝ Ընոյհայ, Ճրփաւքէ ևն ։ Շնորհ աստ ընդհանուր իմանի՝ ձրի տուչութե

կամ պարգև, և յաջորդքն են բացատրութիւն իւր մասունք այնր շնոր-
հաց, այսինքն մկրտութեան, յարութեան, որդեգրութեան, ապաշխարութեան
և այլն :

(14) 'Ի ՆԵՐԲՈՂՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ : Եթէ կից առցին երկու բառքս՝ Յիսուս Քրիստոսի, թուի իմանալ զհայր մեր, որ է ձայն աւանդեալ մեզ 'ի Քնէ, աղաչել նովաւ որդիխապէս զմծ հայր, և հաշտեցուցանել ընդ աշխարհի : Իսկ եթէ զբառն՝ Քրիստոսի տացուք բառին հաղորդութիւն, որպէս գրեն 2 օրին. ըստ այսմ առելն, 'Ի ՆԵՐԲՈՂՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ, իմանի ձայնաւոր աղօթքն հասարակաց պաշտամանն : Եւ գիտաւորութիւն բանիս է, թէ այնչափ ընտանեցաք այ, և կցորդք հրեշտակաց եղաք, մինչև որդիխապէս խօսել ընդ մծ, և հրեշտակօրէն միջնորդ հաշտութե լինել՝ թէ յերկրի, և թէ յերկինս՝ բարեխօս լինելով վասն մարդկան : Եւ այս իսկ մի է 'ի գերազանց պարգևացն՝ զորս 'ի շար արկանէր. ուստի ըստ շարագրութեան զառելն՝ բանից ՊԱՐԳԵՒ, 'ի սեռական հոլով իմանա-
լի է՝ ՊԱՐԳԵՒԱՑ, նման այլոց բառիցն :

(15) ԱՌ ԻՍԿ ԸՆԴ : Եթէ ըստ առաքելական բանին (Բ. պետ, Ա. 4.) գերընական պարգևօքն ածեղէն բնութեան լինիմք հաղորդակիցք, առ-
մեզ առէ՝ մեծ ևս և աչաւոր երախտիք են՝ ոչ լոկ կցորդութք շնորհի ածմնալ, այլ իսկապէս իրօրէն ընդ պարզէք միանալ ածբանեան մար-
մնոյն Ճաշակմամբն, և նբ արեամբն 'ի մի խառնեալ ընդ կենդանի բա-
ստւ: ԱՅՍ ՊԱՏԱՐԱԳԻ, զայսպիսի կատարելութիւն և զլրումն խոստացելոց շնորհացն և փառաց ոչ ունէր օրէնն մովսիսական ըստ առաքելոյն :
( Եբրայ. Է. 19: )

(16) ԶՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳՈՒԹԻՒՆ : Զերկայն ակնկալութիւն արդարոցն ա-
ռաջնոց՝ զոր առ քեզ պահեցին ԱՆՊԱՏԱՌՈՂԵԼԻ, այսինքն առանց հատա-
նելոյ կամ թուլանալոյ, կամ զոր դու ինքն պահեցեր հաստատուն, անվրէպ. եկեալ անձամբ արարեր և կատարեցեր ՀԱՅՐԵՆԻ ԽՈՍՏՈՒՄՆ, Ճոխութք, լիութք, կամ հայրական իշխանութք. քանզի առ այսչափ մեծ շնորհաբաշխութիւն պահանջի եթէ Ճոխութիւն, եթէ իշխանութիւն :

---

Մ ՏԵՍԱԿԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ՝ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻ, առ նոյն
աղերս Ճաշակմանց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ.

# Ի. Ս. Ն. Ծ Գ.

Ա. Տէր տէր զօրութեանց, բոլորից գոյից թագա-
ւոր, օրհնաբանեալ ողորմութի, ած ամե-
նեցուն : Որ յաղթես սահմանի լայնատարած ընդ-
արձակութե. [1] ամենայն անբաւութեանց դու ես որ-
քանութի. մինչ զի կարծրն՝ [2] քեզ հոսանուտ է, և
[3] լոյծն՝ քեզ պնդակազմ, և չիք քո իր անհնարաւո-
րական՝ յաղթօղ զօրութի ահեղ. [4] հուրն՝ ցօղ ինձ է
զովական, և [5] անձրևն՝ բոց կիզանողական : [6] Օ քարն
բաւես ցուցանել կերպարան ազդման, և զբանա-
կանն դնես անխօս և անշունչ արձան : Օ պարտա-

ւորն ողոքեալ՝ պատուական առնես, և զկարծե-
ցեալն մաքուր՝ իրաւամբք քննեալ դատիս ։ 7 Զմա-
տուցեալն 'ի մահ՝ բերկրութեամբ բարեաց արձակես, և
զամաչեցեալն՝ զուարթ տեսութեամբ օծեալ՝ դարձու-
ցանես ։ 8 Կանգնես զմատնեալն հաղբից գլորման, և
զսասանեալն՝ 'ի վստահութիւն վիմիդ հաստատես ։ 9
Զախտացեալն բազմահառաչ՝ երջանիկ կարգես, և
զյառաջատեալն՝ դարձեալ անդրէն 'ի յետս նահան-
ջես ։ Եւ յորժամ սպառին առ 'ի մէնջ բարիքն,
զառաւել զարմանալիմն յայնժամ ներգործես. քան-
զի վասն քո գիտես թողուլ զմեղս՝ և ջնջել զանօրէ-
նութիւնս, և քաւիչ լինել անիրաւութեանց՝ և զմեղս մեր
ոչ յիշատակել, ըստ Եսայեայ և Երեմիայ ։

Բ. Իսկ 10 առ շնորհ նորոգ փրկութեանս բազմօք գո-
հաբանութեամբ հետևեալ, 'ի յաճախութիւն անբաւից՝
լռեալ առ սմին իսկոյն կարկեցայ. քանզի կրկնեալ
զլուսոյդ անսպառ բարիսդ, որ 'ի քէն առ իմ 11 յա-
մառս թշուառութիւն, քոյին աղերսիւ առ քեզ մաղ-
թեցից, յարմարեալ դարձեալ 'ի նիւթս բանիս ըդ-
տառ ողբերգութեան այսր մատենի, լցից թախծութեամբք
և հեծեծանօք ։ Իսկ առեալ խառնեցից 'ի տուո-
ղիդ հաճութեան, ընդ ցաւոյն՝ զդեղն, ընդ վհատու-
թեան՝ զխրախոյսն. ընդ յուսահատութեան՝ զյիշատակ-
անուան հաստողիդ, ընդ տխրութեանս՝ զսփոփանսդ,
ընդ խմումն դառնութեան՝ զքաղցրութիւն կենարարիդ, 12
ընդ պատիժ օրինին՝ զշնորհն, ընդ պարտս անիծիցն՝
զազատարար օրհնութիւնդ, ընդ մարմնոյ մահուն՝ զա-
մենայնիւ նորոգութիւնդ ։

Գ. Հաւատամ հզօրիդ բանի, ուստի վկայեմ.
լո՛ւր լռութեան սրտիս՝ տէր իմ, որ հնչումն է առ քեզ
մեծութեան ձայնի երկար գոչելոյ ։ Որ մարմնակից և
պատկերակից մեր եղեալ, և 13 քահանայապետապէս
անօրինակդ՝ զօրինակին խորտակեալ զլուծ, ընդ
զենման մահու անասնոցն՝ բարեբանեալ մարմնոյդ
նուիրմամբ, անմահապէս միշտ մատուցանիս. և ան-
նուազաբար քաւութիւն շնորհես, ոչ սակաւամեղիցն
միայն, այլ և 14 որոց հատեալ է ակնկալութիւն առ
ելս կենաց ։ Զի 15 ո՞րքան զօրէ մարմնոց անդամոց
առ մեզս կենդանութիւն, թէ և բիւրուց ամաց ունի-

ցի յերկարաձգութիւն, յորժամ ա̄ծդ բոլորեցուն մ̄ռ
սորէն կամաւ և յօժարութ զենումն ընկալեալ, մա-
հու համբերես բաշխեալ 'ի քաւութիւն։ Ու ո՛չ եթէ
մաքրութենդ աղխիր՝ պարտական գոյ մահու յօրըստ-
օրէ կատարելն, այլ կամօք քոյք՝ հոգւոյդ գոր-
ծակցութբ, 'ի հաճութիւն հօր՝ և 'ի մեր հաշտութիւ
ցանկ մատուցանիս։ Իսկ եթէ ամենից ա̄ծ անքնին՝
[16] խմոյս վասն իմ առ իմ փրկութիւն, 'ի դէմս իմ,
իբր թէ ընդ քոյդ նութեն ես իցեմ մարմնով պա-
րունակողիդ կցորդ միացեալ. և դու բարերար, յա-
ղագս իմ 'ի յիմս կերպի՝ փոխանակեալ ընդ իմում
պարտեաց, և մահ ընկալեալ անպարտդ՝ զմահա-
պարտիս փխաուց պատուհաս, և 'ի յիմ անուն յան-
ցաւորապէս, որպէս թէ կամաւ ընդ քեզ ես կրի-
ցեմ, բազումս մեռեալ՝ և միաս կենդանի. ոչ ուրացո-
ղացն ձեռօք, այլ դաւանողացն հաւատովք ա̄ծապէս
նուիրեալ և 'ի մասունս անհատս բաշխեալ։

Դ. Աւեր [17] ամ̄ն ողոքաւոր՝ չաւատալեացն պաշտօ-
նատար. մեծ ինձ և անկշռելի առ սմին դատէր՝ ան-
յարմարագիր անձին յուսադիր, հաւատամ զփառս
և զերջանկութիւն, քան թէ մարտիրոսութ իսկ՝ թո՛ղ
թէ ուղղութբ իմս թշուառութեն՝ [18] յանցաւոր մար-
մինս վախճան ընդունել։ Իսկ [19] զանձառութիւն խոր-
հրդոյս՝ այսու դիտեցի. դաւանէր իսկոյն, որ զի և
մաքրոցն անձինք առանց նուիրման այսր յիշատակի՝
չե՛ն են իսկապէս կատարեալք իսպառ, եթէ ոչ ընդ
այս հրաշակերտութիւն մեծութեն հոգւով խառնեա-
ցին։ Ապա թէ [20] մեղաւորիս մասին՝ կրկին մատու-
ցար բաժին առելով յուսայր, իբրև այն թէ ես ինքն
եղէր Ճշմարտիւ, զբաւեալ զիմս դաժանութիւն ընդ
քում համեղութեան, պատարագեալ քոյինանիւթ
զանգուածոյ նշխարաւդ կենաց լուսոյ։ Այսու ամե-
նայնիւ [21] 'ի վերնատանն նախանուէր բարեշնորհու-
թեն անհնարաւոր ախտիցն Ճարակ՝ զմարմին և զա-
րիւն իւր բաշխեաց 'ի քաւութիւն, 'ի վեր կարծեցու-
ցանէր քան զնահատակի վկայեցելոյ արեամբ կա-
տարմամբ. [22] յուսոյս օրինակ յարդարութբ գրել
զիս 'ի փառս, այսմ փրկանօք հաւատալի երևեցու-
ցանէր, քան թէ քաւելոյ և ողորմելոյ և շնորհելոյ,

որչափ ծածկանիդ առ մարդ զօրութիւն . և տիրական ծածխառն մարմնոյն կամաւորական նուիրումն առ անսահման սպանդին մատուցումն . և անմահն առ մահկանացուս . լոյսն աչաւոր՝ առ ստուերայինս . յաւիտենականն՝ քան զանցաւորս . բարձրեալն՝ քան զերկրաւորս . անստեղծն՝ քան զեղականս . բարին խոկութիւն՝ քան զթիւրեալս բնութիւն . մանաւանդ զի իւր է կամելն , և իւր կենագործելն . օրհնութեանն առիթ՝ քան զանիծից պատճառ ։

Է . Արդ՝ [23] տո՛ւր խոցելոյս ՚ի սիրտ և յոգի՝ աղաչեմ զգթած, զառ ՚ի յերկնուստ ընծայեալ զդեղդ կենաց . մատիր քաղցրութիւն առ ախտացեալս մեղօք . բուժեա՛ ՚ի պարտեաց՝ ամենակատար բաւականութիւն ։ Իսկ [24] առ ՚ի յինէն՝ այս է ճշմարիտ և անխաբելի կերպարան բանի , որ զի հաստիչդ ամենից ՚ի մէջ բնակես . և ըստ տարազու սերմանն՝ և հնձելն է իրաւացի , ըստ ճշմարիտ բանին պօղոսի , և աչացաւացն՝ ՚ի տապ արևու ոչ է զօրութիւն ։ Այլ դու բարերար հաստիչ յոչէից՝ յարգես յաւէտ իսկապէս համայն և զդաւանելն զքեզ՝ բաւական առ կենդանութիւն . և ոչ ես ընդ սահմանաւ փակեալ օրինի , այլ յաղթես՝ մանաւանդ թէ խզես զկապ կանոնի , և [25] դո՛ւ միայն մնաս պայման աւետեաց՝ համօրէն յանցաւորաց տարակուսելոց ։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս . ամէն ։

---

(1) ԱՄԵՆԱՅՆ ԱՆԲԱՒՈՒԹԵԱՆՑ ։ Եթէ անբաւութիւն առցի փոխանակ անբաւ կամ անհամար իրաց , իմաստքն են . ամ իրաց՝ որք կամ մեզ անբաւ կարծին , կամ յինքեանս հետ զհետէ կարեն յանբաւս աճել ըստ թուոյ , ըստ մեծութեան և ըստ կատարելութեան , ամի նոցա՝ եթէ եղելոցն , և եթէ լինելեացն՝ դո՛ւ ես ոքքանութիւն , չափ կամ սահման ։ Սակայն զյարմարութիւն յաջորդ բանիցն կշռելով , առաւել ընտրելի է անբաւութեան իմանալ աստանօր՝ անհնարութիւն , անկարծելի կամ անհնարին իրք . որպէս և անբաւ նշանակէ ուրեք՝ անկար , անհնար ։ Վասն զի իբր մեկնաբար ընդարձակելով զբառդ՝ յաւելու , ՄԻՆՉ ԶԻ ԿԱՐԾՐՆ ԴԵՂ ՀԱՍԱՆՈՂ է , կամ լոյծն՝ պինդ , հուրն՝ ցօղ , անձրևն՝ բոց . և չիք քո առ է՝ իր ԱՆՀՆԱՐԱՒՈՐԱԿԱՆ . և թէ պէտքն ԲԱՌԻՍ ցուցանել խոստումն են ։ Այս սոյնպիսեաց անհնարաւորից՝ որոց չէ բաւական արարածական զօրութիւն , դու չափ ես առէ՝ և կանոն ։

(2) ԴԵՂ ՀԱՍԱՆՈՂ ։ Կարծրն՝ քեզ հեղուկ լինի . որպէս ջուրն յապառաժ վիմէն , կամ ամուր պարիսպքն երիքովի ինքնին հոսեալք ։

(3) ԼՈՅԾՆ . որպէս ջուրք կարմիր ծովուն առ մովսեսիւ , կամ յորդանան առ եղիսէիւ ։

(4) Հուրն՝ ցօղ : որպէս 'ի հնոցն բաբելոնի :

(5) Անձրևն՝ բոց : որպէս առ սոդոմացիսն հուր անձրևեաց յերկնից . և առ եգիպտացիս նոյնպէս : ( ելից . ժբ . 17 . 19 : )

(6) Ջուրն բառնայ : զքարին կարես ցուցանել խօսօղ . որպէս 'ի քէն առեր . ( ղուկ . ժթ . 40 : ) և զլռանկան խօսունն առնել անխօս , որպէս զկինն ղովտայ :

(7) Զմահուցեալն 'ի մահ : Զմերձեցեալն 'ի մահ՝ ուրախութբ արձակես . որպէս զշուշան . ( դանի . ժգ . 63 : ) զպետրոս . ( գործ . ժբ . 11 : ) զպօղոս . ( գործ . ժդ . 18 : ) Եւ զմահապարտեալն զուարթերես դարձուցանես , որպէս զառաքեալսն , որք անարգեալք յատենէ հրէից՝ գնային խնդութբ : ( գործ . ե . 41 : )

(8) Կանգնես զմարմնեալն : այս և յաջորդն հային ('ի սաղմ . ճժէ . 13 : լթ . 3 : ղդ . 18 : )

(9) Զանկարօղեալն բաղմահատալ : Որպէս զեզեկիա , զոր վասն արտասուացն առողջացոյց , և առաւել ճոխացոյց . Եւ զյատակեալն , զյառաջացեալն յընթացս իւր զարեգակն՝ յետս դարձոյց վասն նորա : 'Ի վերաստեղծ բանին՝ զմի կամ զերկուս օրինակս միայն յիշեցաք . բայց մարթ է և զայլս յոլովս խմանալ :

(10) Այս ընորհ նորոգ փրկութեան : Նախակարգեալ խնամք քո լինէին և 'ի հնումն . խսկ առ բարիս նոր փրկագործութեան՝ բաղում աղօթիւք յառաջագոյն հեթանոսն , այսինքն 'ի խնդիր եղեալ քննութբ , կրկն անբաւք յաճախեցին՝ լսեալ պատգամնեցոյ . ժամանակ նշանեալ , վասն որոյ այժմ կրկին յիշելով զնոյն բարիսդ , փոյթ աղերսիւ , քո պարգևօքդ զքեզ աղաչեցից : կամ լսա հին լուծ . քո աղօթիւքն՝ որով աստցեր , խնդրեցէք և առնուցուք : Յարմարեալ 'ի նորոգ բանիս , 'ի նիւթս մաղթողական բանիս կարգելով զջշական ողբս արտմութբ և հառաչմօք : Բայց խառնեցից միանգամայն ընդ զղջման զդոյսն , ևն : 'ի փառակից համառօտի . 2 օրին . և 'ի հին լուծ . 'ի փառացին :

(11) Յանտառս Թշուառութեան : այլ օրին . Թշուառութեան :

(12) Ընդ պատիժ օրէնին : ընդ պատժողական պատուհասիւ հին օրինացն խառնեցից զշնորհս , զներողութի նոր օրինաց շնորհաց :

(13) Քահանայապետ անօրինաց : Իբրև քահանայապետ՝ դու որ ես ամենայնիւ անօրինակդ ես , ընդունողն , զհին օրինաց զծանրութի բարձեր , փոխանակ զենման անասնոց՝ տալով զքո մարմինդ , ևն :

(14) Որոյ հաղորդեալ : Այնոցիկ՝ որոց 'ի մեծամեծ չարիս ապրելով , պակասեալ է յոյս թողութե և փրկութե , դու քաւութի շնորհես մարմնոյդ պատարագաւ :

(15) Ո՞րչափ սրբէ : Զինչ զօրեսցէ կամ ընդդիմանիցէ յօժարութի և չարժամն մարմնոյ առ մեզ՝ թէպէտ և հազարաւոր անմ յամեալ իցէ 'ի նոյնս , յորժամ դու նկին ամ քո կամաւ պատարագեալ բաշխես 'ի քաւութի վասն այնպիսեաց : Զի ոչ էրէ իբր պարտական զոլով մահու՝ օրըստօրէ պատարագիս , այլ վասն մերոց հաշտութե :

(16) Իմաստ : Եթէ ամդ բոլորից մատուցանես խմով բնութբս , զառն իմ , վասն օգտի իմոյ՝ և ոչ քո , և այն՝ առ իմ փրկութի , վասն յաւիտենական օգտի փրկութեան , 'ի տէր իմ , 'ի կողմանէ կամ յանձնէ իմմէ , որպէս թէ ես ընդ քո էութեդ միացեալ կցորդ իցեմ մարմնով՝ որ պարունակեդ զնմ . այսու օրինակաւ վասն իմ՝ փոխանակ եղեալ պարտուց իմոց , յանուն իմ իբրև յանցաւոր , որպէս թէ ես ընդ քեզ կամաւ չարչարիցիմ , բաղձանս մտաց , բաղում անգամ պատարագեալ մեռանիս խորհրդաբար , և ծառ կենդանի , իրօք և խսկութեամբ : Այս խորհրդական և անարիւն մահ քո ոչ լինի ոգորողութ կեանք , որպէս զարիւնաւոր մահն

խաչին, այլ ձեռամբ քահանայից դաւանողաց զքեզ: 'Ի Տաճարն անհաւատ տես 'ի բանն խէ. լծ. 9:

(17) Որ ողջունէր: Այս տեղի բովանդակ խրթնութիւն ունի վասն ոչ գիտելոյ մեր հաւատոյն՝ ո՞ր իցէ ողջունողս, և ու՞ր, կամ զինչ իցէ ասացեալ: Այս ինչ հաւաստի թուի, թէ իցէ մի որ 'ի գործելոց հեթանոսաց, 'ի պարսից, կամ յայլ դենէ, որպէս մոգպետքն՝ որք 'ի ժամանակս սրբոյ ղեւոնդեանց գործան 'ի քրիստոնէութիւն, և գրով և անգիր զմեր ճշմարտութիւնս քարոզեցին. (Եղիշ. երես 27. 149.) ուր և յետոյն այն հաղորդեալ 'ի մարմին և յարիւն տն, ասէր. (երես 153.) "Ծաշակումն անմահ խորհրդիս (լիցի) 'ի ժառանգութիւն երկնաւոր որդեգրութեանն:" Այլ քանզի այնպիսի գրութիւնք նոցա անյայտ մնացին, վասն այն չէ մարթ որոշաբար յայտնել զմիտս բանիցս: Բայց նկատել արժան է, զի նր վարդապետս յառաջ բերելով զբանս ինչ նորա, յաւելու 'ի նոյնս զեւր խորհրդածութիւն. և յայսմանէ լինի այլափոխութիւն գիտաց բանին, մերթ յերրորդ դէմս խօսելով, մերթ յերկրորդն, և մերթ յառաջինն: Արդ ըստ կարի պարզեսցուք զխրթնութիւնս:

Ասէր աղօթական ոմն, չարափառեացն պաշտօնեայք, կամ պաշտօնեայ, կամ քուրմ: Եւ թէ զինչ ասէր, յաղագս նր խորհրդոյ պատարագին՝ մեծ և անկշռելի վճիռ տայր ինձ, թէպէտ և քան զչափն անցեալ գոլով, երեւի անյարմարագիր անձին յատուկ. այսինքն յուսադրութիւն ինչ՝ որ նորա անձինն անյարմար էր, ոչ գոլով քաջուսումն յածայինս. կամ անյարմար էր նորա գրեալն, զի թէպէտ և ըստ մասին ինչ ճշմարիտ էր, բայց ըստ այլ մասին ոչ զգուշաւոր. և գուցէ 'ի հեթանոսական կարծեաց յառաջ եկեալ, որք զմատուցումն զոհից առաւել համարէին քան զճնշումն մարմնոյ և քան զայլ գործս առաքինութեց: Արդ թերեւս ըստ այսմ խորհելով այն աղօթաւորն, ասէր՝ թէ ճաշակմամբ նր խորհրդոյն՝ հասարակ ընդունել 'ի վախճանի մարմնոյս զհաւատս և զերջանկութիւն, զոր անպիտան ոք, քան թէ նահատակ լինելով վասն հաւատոյ, ընդ այլոց վկայութիւն ընդ սրբութեան. թող թէ ապաշխարութեն և կրթութեամբ բարի գործոց ուղղելով զախտաւոր կեանս իւր, և բարի կենօք վախճանելով. զի մեծ է մարտիրոսութեամբ մեռանելն, քան թէ ապաշխարութե ճանապարհաւ. և եթէ առանց ճաշակման նր խորհրդոյն ոչ զօրէ մարտիրոսութիւն առ փառս, ապա եւս առաւել չզօրէ ապաշխարութիւն: Արդ՝ նա այսպէս ասելով, այնչափ հզօրաւոր համարէր զներգործութեամբ ճաշակելն 'ի նր խորհրդոյն, մինչեւ առանց այնր զմարտիրոսութին և զբարեգործական կեանսն անբաւական համարէր առ փրկութին. որ չէ՛ ուղիղ. զի եթէ մարտիրոսն, կմ բարեպաշտ քրիստոնեայն 'ի մահ մերձեցեալ, ոչ ժամանիցէ ճաշակել 'ի նր խորհրդոյն, առ 'ի չգոյէ ժամանակի՝ կամ քահանայի՝ կմ հաղորդի, տակաւին զօրութե արդեանցն քնի՝ փառաց հասանէ այնպիսին:

(18) Յանցաւոր Տարփոյ վախճան ընդունել: Կասկածեմ վրիպակ ինչ սպրդեալ աստանօր փոխանակ ասելոյ, յանցաւոր Տարփիւ վախճան՝ ընդունել, զի այսպէս պահանջէ յարմարութիւն բանին. և յարելի է ընդ առաջին հատուածին այսպէս. Հաւատամ զփառս և զերջանկութիւն ընդունել 'ի վախճանի անցաւոր մարմնոյս:

(19) Զանճառութիւն խորհրդոյս: Այս բանն՝ սրբոյ վարդապետին է. վերագրեալ բանին ողջունողին ասէ՝ Տէրտէր, այսինքն նկատեցի, կամ ցուցանել կամեցայ զանճառելի զօրութի խորհրդոյ պատարագին. քանզի թէպէտ ոչ ամբի յարմար էր, սակայն այնու տաւնէր հոգւոյն, թէ հաւատեաւ կամ անվրէպ, թէ նաև մաքուր անձինք մարտիրոսաց և բարեպաշտից՝ առանց նուիրման պատարագին քնի ոչ են ամենեւին կատարեալ.

մինչև յայս հրաշալի գործ զօրութեան իւր գտանէ [illegible] չխառնեսցին : Որով կամի ասել նոր վարդապետս, թէ թէպէտ և փրկուի մարտիրոսաց և այլ բարեպաշտից կարէ լինել առանց ներգործութ 'ի նոր խորհրդոյն հաղորդելոյ, ըստ վերոյասացեալ մտացն, սակայն ոչ առանց նուիրման պատարագին. զի արդիւնք մարտիրոսուե և այլ բարեգործութեց հաստատեալ են յարդիւնս մահուն քնի, որ պատարագեալ հաղորդի 'ի մեզ. և նոյն իսկ մարտիրոսութեան հաճելի է և զօրաւոր առաջի իւր, ըստ որում նմանութի է մահուն քնի, որ 'ի նոր պատարագին խորհրդածի. և զի այս մաքուր անձինք՝ թէ և իրօք ոչ ժամանեսցեն հաղորդել, սակայն յայտնի կամ ըներեայն պարտին բաղձալ այնմ, որ է [illegible] խառնիլն : Դարձեալ, եթէ զփառաց մարտիրոսաց և այլ սրբց խօսցի բանս, ոչ է օտար. վասն զի սրբել պատարագեալ լինի յաւելուած պատահական փառաց նոցա յերկինս. որպէս հաստատեն ածաբանք ընդ սրբյն Թովմայի ագուինացւոյ. ('ի դ. գիրս վճռոց. զանազան. ժբ. այր. ա. խնդրակ. բ : )

(20) [illegible] : Այս բան՝ ողորմելին է. վասն մեղաւորիս ասէ՝ քան թէ վասն արդարոց [illegible]. այսինքն կրկնակի պատարագեցար, կամ վասն կրկին պատճառի, մի՝ վասն թողութեան բազում և մեծամեծ մեղացս. և երկրորդ՝ վասն արժանի լինելոյ երկնային փառաց : Արդ՝ զայս ասելով ողորմելին, [illegible]՝ ասէ նոր վարդապետս, իբրև առ քն խօսելով, [illegible]. այսինքն փոխանակ իմ եղեր. և իբրև ես ինքնս մատուցար պարտական և պարտս՝ 'ի հաշտութի մեղացս և յընդունելութի փառաց. [illegible], առեալ զիմ դառնութիս մեղաց և պատժոց փոխանակ քո քաղցրութեդ. և պատարագեցար [illegible], 'ի քեն նուիրեալ կամ կազմեալ զանգուածով մարմնոյդ, որ է նշխար կենաց լուսոյ :

(21) [illegible] : Այս բան՝ ողորմելին է, և ասել կամի. այսու՝ զի քո յառաջին շնորհապարգևութեն՝ որ 'ի վերնատան, երբ զարման անհնարին ախոլից հոգւոց մերոց բաշխեաց զմարմին և զարիւն իւր, [illegible], ծանոյց՝ թէ գերագոյն է այս խորհուրդ և զօրութիւն նորա, քան զարդիւնս մարտիրոսի :

(22) [illegible] : Այս մասն բանիս առաւել սրբյ վարդապետին է. այսր յուսոյ օրինակաւ ասէ՝ [illegible] ողորմելին, թէ [illegible], այսինքն առաւել մեծարգոյ գրէ զիս քո 'ի փառս 'ի ձեռն այսր փրկանաց պատարագի, [illegible], քան թէ իբր իմով ճգնաբեր քաւեալ, ողորմեալ, և ներումն գտեալ. վասն զի փրկանք և աժէք պատարագին՝ է յանհուն արժանաւորութեն քնի իւյ. իսկ ճգունք ապաշխարութեն՝ ըստ ինքեան են 'ի մարդկային արժանեաց. ուստի առաջինն այնչափ գերագոյն համեմատի առ երկրորդս, [illegible], որչափ ածութեդ զօրուի առ մարդն. և տէրունի ածախառն մարմնոյն նուիրումն՝ առ մատուցումն անբանից. և անմահն առ մահկանացուն, են : [illegible]. մանաւանդ զի ասէ՝ ոչ միայն իբրև պատարագ անհուն մինչև ունի, այլև իբրև քո ընդունող պատարագի՝ իւր է կամելն զմեր փրկութի, և կենագործելն 'ի փառս : [illegible], այս 'ի նախագրեալ օրինակն յարելի է ըստ նոյն բաղդատութեան :

(23) [illegible] : Աստի մինչև 'ի վախճան առ քն խօսի նր վարդապետն :

(24) [illegible] : Եթէ 'ի նախասացեալ բանս ողորմելին կայցէ ասէ՝ թերուե ինչ, յինէն այս է հաւաստի բան. զի դու 'ի որբեալս հոգւով մնակեա. և ըստ սերման բարի գործոյ՝ հնձեմք զարդիւնս խոր-

հրրդոյ ո՛ք պատարագիդ ։ և ընդ հակառակն՝ աշխարհասէրքն, որոց աչք հո-
գւոյն ախտացեալ են ունայնութբ և մեղօք, ոչ զօրեն վայելել 'ի ջերմու-
թեն ծածկեալն մանանոյդ, որ 'ի խորհուրդ պատարագին փակէ ։ Եւ թէպէտ
այս են օրէնք ամենակալն քո նախախնամութեանդ՝ ըստ պատրաստութե
և ըստ վաստակոց մերոց մատուցանել զքո բարիսդ, սակայն դու բարե-
րար՝ արարիչ գոլով յոչէից, բաղում անգամ առանց մեր արժանեաց
ներգործես զքո բարիսդ, և յորժամ, հաճոյիս զգտանելն զքեզ՝ բա-
ւական առ կենդանութի հոգւոց ։ զի ոչ ես փակեալ ընդ կանոնաւ ։ այլ ած
հաճոյից քոց բաղում անգամ յաղթես, և զանց առնես զօրինօքդ 'ի
բնականն և 'ի գերբնականս, և միայն դու միայն քեզ կանոն անփո-
փոխ՝ յաւէտս ամ յանցաւորաց ։

(25) [illegible] մայն ։ յայլ օրին ։ չէք մայն ։

---

Վերջին յաւելուած հրէին հեծութե՝ նորին հոգւոյ, առ նոյն
աղէրս Տաղերգութեանց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ած ։

## Բ.Մ.Ն. ԾԴ։

Ա. Սու արդ՝ յամենայնի առ ամենայն անձկալու-
թե քո է ողորմութի, [1] սկզբնալոյսդ աչաց
տեսանելեաց և սրտի իմաստից Ած ։ քո է բարերա-
րութի, կեանք և անմահութի ։ Դարձ առ իս զթու-
թբ, և համարձակեցես [2] դառնալ ինձ առ քեզ կրկին
բերկրութբ ։ զի առանց քոյ կամաց՝ ո՛չ ունիմ լի-
նել նորոգ փոփոխեալ ։ և եթէ ո՛չ կամք քո զթաս-
ցին, ո՛չ զօրեմ փրկել մահու պարտականս ։ և [3] եթէ
ո՛չ կառավարդ յարդարեսցես պատրաստել ինձ հետս
ճանապարհի՝ որ առ քեզ բերէ, վի՞հ է ինձ խորոց
յաջմէ և յահեկէ ։

Բ. Ահա ո՛չ պարծիմ ամենայն իրօք նախատեալս ։
ո՛չ պանծամ գովեալս ։ ո՛չ խրոխտանամ լքեալս ։
ո՛չ մեծաբանեմ պապանձեալս ։ ո՛չ ըմբոստանամ ձա-
ղեալս ։ [4] ո՛չ երջանկանամ եղկելիս ։ ո՛չ արդարանամ
ամբարիշտս ։ Զի ո՛չ երբէք հարթ ընթանայ երի-
վար՝ առանց սանձակալի ։ և ո՛չ նաւ [5] համբառնայ
հանդէպ՝ առանց ուղղչի ։ և ո՛չ արօր կշխու ինչ գոր-
ծէ՝ առանց մաճակալի ։ և ո՛չ երկուորեակք լծոյն 'ի
ճահ ճեմեսցին՝ առանց եզողի ։ ո՛չ ամպ վերաչու է՝
առանց հողմոյ ։ [6] ո՛չ սատեղք ցնդին և կամ գումա-
րին՝ առանց ժամանակին ։ [7] ո՛չ արեգակն փոխաբե-
րեալ ուր շրջանակի՝ առանց տարրական օդոյ ։ և ո՛չ

ես նորօք հանդերձ, առանց բարեգործիդ հրամանաց ակնարկութե՟։ Ո՛վ դու միայն ես տուիչ կենաց բանականաց, և խնամիչ կարգաց հոլովման արարածոց, և 'ի քէն է ինձ փրկութի՟, ըստ սաղմոսողին. և դու ձայնես բարբառ խնդալից աւետեաց հնչման՝ յականջս լսելութե՟ ամենայն հասակի, եկայք 'ի հանգիստ իմ ընաւին աշխատեալք, և ես մաքրեցից զձեզ 'ի պարտեաց։ Իսկ զինչ օգուտ 'ի լուացմանէն, եթէ կրկնակի զաղրացայց. և կամ ո՞ր օգուտ 'ի ճաշակմանէն, եթէ գեհենին մատնեցայց։ Եւ կամ զիա՞րդ յաբրահամ պարծեցայց՝ խորթացեալս 'ի գործոց նորին. որդիս զարշութե՟ հօր ամովրհացւոյ, և մօր քետացւոյ կամ քանանացւոյ, [8] ըստ մարգարէին որ առ իս՝ յանկաւոր ձայնի. [9] ժառանգս մերժելի եթովպացի՝ և ոչ սենեկին սաւայի, ըստ տեսանողին առ իս առածի. [10] եղբայրս շամրնի՝ և կամ գոմորայ. [11] համբակս անլուաց և անաղէլի՝ խակակութ պորտոյն խակութե՟ ոողայ և ողողիբայ, ըստ եզեկիէլի կրկնախօսն կշտամբութե՟։

Գ. Եւ քանզի [12] 'ի ծուփս բազմավտանգս ալէտանջ հողմոյ սաստկապէս զզուեալ՝ ուժգին ըկանօք խպառ տագնապմամբ 'ի ծովին, փոխեալ ընկեցեալ 'ի վտակն վայրենական ողողիչ. առ որս՝ զմատունս ձեռացս այսր անդր տարաբերեալ, իբր 'ի հօսանաց բռնութենէ գարնանայղայր գետոց, արտաձգեալ յակամայ ընթացս ողորմագին գլորման՝ ջրակուռ ոգեպառ պղտորարբութե՟՝ դաժանահոտ սկախառն մամռարմատ խառնախուխ՝ մահաբեր երկամբք վանեալ, ըստ որոց յուղխիցն հեղեղիցին՝ հեղձուցեալ։ [13] Այսու առակաւ և ես եղկելիս՝ խօսին, և ոչ իմանամ. գոչեն, և ոչինչ լսեմ. բարբառին, և ոչ զարթնանամ. [14] հնչեն, և ոչ փոխադրիմ. փողեն, և ոչ գումարիմ. վիրաւորիմ, և ոչ ևս զգամ, կռոյն զարշուե նմանեալ՝ թափուր յազդմանէ բարեաց իմատից։ Արդարև չար առաւել յաւէտ իսկապէս [15] քան զօրինակդ՝ ճշմարտութիս, ատելի և մեղադրելի, և ատենին քնի արժանապէս մատնելի։

Դ. Եւ քանզի [16] անդառնալի ուղւոյն յիշատակ աւտեացս պարտեաց՝ զայս կտակ թողի որոց ընթեռ-

նուն, խմոյս բանիւ առ ամ կարդալ համապարզորդութե, այս կացցէ սահման 17 յանձնառական խոստովանութե մշտնջենաւոր ձայնարկու առաջի քո՝ ամենակալ. զոր գիրդ ընդ մարմնոյս, և բանդ ընդ հոգւոյս, զանսահմանելիդ միշտ թախանձեսցէ, իբր յանեղծական մաղթողէ ընկալեալ աղերս ՚ի յիմոյս ձայնէ՝ բարեգութ մարդասէր, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) [illegible] : Առաջին լուսաւորողդ աչաց մարմնոյ, և մտաց: Առ յայտես կոչէ զքս թէ՝ ըստ ամծութեանն, որով առեղծ զարեգակն և զայլ լուսաւորս, և միանգամայն նոյն պարգևէ զամ խմաստուն մտաց. եթէ ըստ մարդեղութեանն, յորում նոյն եղև առաջին լուսաւորող զի ծնէ կոյս, և առաջին քարոզ և ուսուցիչ ճշմարտութեան նոր օրինաց:

(2) [illegible] 4 օրին. [illegible] :

(3) [illegible] : Եթէ ոչ դու առաջնորդդ ճանապարհի մեր առ քեզ՝ ուղղեսցես զիս, [illegible]. յայժ խորին վիհ պատահէ ինձ [illegible] բարեգործութե, յորում առանց առաջնորդութե՝ ոչ գնալով, վասնզի կայ հպարտութե, և բազմապատիկ խաբէութեց սատանայի. [illegible] չար գործոց, յորում մնաս թողեալ, անկանիմ ՚ի վիհ յուսահատութե և անզղջութե:

(4) [illegible] : ոչ համարիմ զիս արժանի երանութե, կամ գովութեան: [illegible]. ոչ ձևանամ արդար, ոչ ջատագովեմ զանձն իմ:

(5) [illegible] : ոչ ընթանայ նաւ յառաջկոյս, կամ վերանայ ՚ի վերայ ալեաց՝ առանց ղեկավարի: [illegible], զի ուղիղ, միօրինակ, հաւասար հերկէ. և ոչ զոյգք լծեալ եզանց ՚ի ճահ [illegible], պատշաճ կամ ուղիղ գնայցեն, [illegible]. ըստ ոմանց՝ առանց վարողի եզանց. բայց լաւ ևս, առանց միաւորողի կամ կապողի լծոյ՝ որ է մածակողն. զի բառս [illegible], եղանէ ՚ի բառէն [illegible], այսինքն մի, միակ:

(6) [illegible], հեռանան ՚ի միմեանց, [illegible], հաւաքին և մերձենան առ միմեանս, [illegible], առանց ընդհանուր ժամանակին, որով չափին և բացատրին յատուկ շարժմունք նոցա: Մարթ է խմանալ ևս զայլոց անմոլար աստեղաց, իբր զի երբեմն [illegible], այսինքն ծածկին. և երբեմն [illegible], զի ՚ի յայտ եկեալ տեսանին՝ ըստ գալոյ և գնալոյ արևուն. և առանց այսր տունջենայնի և գիշերային ժամանակի ոչ լինէր յատուկն այդ փոփոխութի:

(7) [illegible], փոխեալ ՚ի տեղւոջէն՝ [illegible], ուր պտղոյն կամ հողմի, այսինքն ՚ի ծիր լուսնակալն, կամ զեփիւռք առանցիւք. [illegible]. այս կամ ըստ կարծեաց նոցա ասի, որք զմիջոցն յերկրէ մինչև ցաստեղս համարին օդով լցեալ, և շարժմամբ այնր օդոյ ասեն շարժիլ արևու, և կամ զաղդեցութի և զուսոյն հաղորդութիւնն ասէ, որ ներգործի ՚ի ստորինս միջնորդութեամբ օդոյ:

(8) [illegible]. ( Եզեկ. ԺԷ. 3. ) ուր ասէ մարգարէն վասն խա-

րայելացւոց՝ ծնեալ յերկրէ քանանու, զի անդ ծնան նահապետք նոցա. և ըստ գործոցն եւս նմանեցան քանանացւոց, ամորհացւոց, և քետացւոց. 'ի սոյն միտս ինքեան յարմարէ Տէր վարդապետս՝ թէ զայս բան, և թէ զյաջորդն:

(9) Ճաւանգը մէրժէլէ. զուակս հագարայ եթէովպացւոց, որ 'ի բաց հանեալ 'ի ժառանգութենէն աբրահամու: ըստ թէսաւողէն, (ամոս. թ. 7.) * Ո՞չ ապաքէն իբրև զորդիս եթէովպացւոց էք դուք ինձ՝ որդիք իսրայէլի: ||

(10) Եշէֆայրը շամրնէ. այսինքն սամարիայ, (ըստ եզեկ. ժզ. 46:)

(11) Համբալը, մանուկս, անըրապ, ոչ լուացեալ, և անաղէլէ, ոչ յաղեալ. խաչաչաթ. այս բառ առաւել 'ի վերայ մանկանն իմանի, և նշանակէ՝ տարաժամ ծնեալ, կամ վիժեալ. իսկ եթէ յարեսցի 'ի յաջորդ բառն՝ պորպոյն, իմանի՝ խակ կէծ մանկահասակ արգանդին ողջոյ և ողջղէֆոյ. այս անուամբք նշանակեաց եզեկիէլ (իգ. 4.) զբաժանեալ ազգն իսրայէլի, առաջնովն՝ զտասն ցեղն, և երկրորդիւ զցեղն յուդայ. որովք կշտամբեաց զկռապաշտութիւն և զայլ անօրէնութիւս իսրայելացւոց. զոր և Տէր վարդապետս ասէ՝ ֆէրնանախաբ կշտամբութիւն. վասն զի 'ի մի յայս բան միացուցանէ զասացեալսն եզեկիէլի 'ի գլ. ժզ. և իգ:

(12) 'Ի ծաւծը բաշմաչրանգը: Նմանեցուցանէ զանձն՝ հեղձուցելոյ ումեք. որ 'ի հողմակոծեալ ալիս անկեալ խեղդիցի, կամ բռնութեամբ առեալ ձգիցի 'ի հոսանաց ծաւնաւաղայր ծէպող, 'ի գարնան տառապեցեալ գետոց, որք ուժգին յորդութեամբ ընթացեալ, զոր գտանեն յընթացսն՝ վարեալ տանին, այսինքն զկաւ կամ զոխոյլ, զմամռուռս քարանց կամ ըղձոց, զխռուխս, ևն. որովք պղտորի ջուրն, և գարշահոտ լինի: Ըստ որոց ասի անկեալն յայնպիսի ուղխս՝ ոլորմելի գլորմամբ ձգեալ, չըապուն, կլանի և կլանէ զջուր, և լինի ոծէպաա, հնչարգել, պղտորաբէնութէ, ըմպելով զպղտոր ջուրն, ոչխաան, խառն տղմով կամ կաւով. մաժառըմաբ, արմատովք մամռոյ և այլոց խոտոց. խաւնախաւխ, խառն խռուովք: Այս բառք կամ իբր մակբայ իմանին, և կամ ածականք են գործիական անուանն՝ էրչամբէ: Եւ ասէ՝ ըստ որոյ, իմանի վասն որոյ, այսինքն վասն այնպիսի մահաբեր վտանգաց՝ յուղխից անտի ձգեալ տարցին հեղձեալք. կամ ըստ որոյ, այսինքն ըստ օրինակի այնոցիկ՝ որք յուղխից հեղձանիցին:

(13) Այոսու տաաչաա. այլ օրին. այս տաաչաա: որպէս հեղձուցեալքն յաղբեաց ծովու, կամ 'ի հոսանաց գետոց՝ 'ի խօսել այլոց՝ ինչ ոչ իմանան, այսպէս և ես ասէ՝ հեղձուցեալ 'ի բազում մեղաց՝ 'ի խօսելն Ածային բանից, ոչ իմանամ. ևն:

(14) Հնչէն, տատասիկ բախմամբ փայտի կամ այլոց գործեաց, և ոչ ծախարծէլ. ոչ շարժիմ 'ի տեղւոջէս:

(15) Վըան պօրէնաչը՝ ճըմարբաութէը: Վըան զպարշութիւն կոյսն, կամ բաղնայն՝ որ է օրինակ իմոյ պարշութեան, առաւել չար է իմ հոգւոր պարշութիւս. զի նոցայն արտաքին է՝ 'ի մորթոյ պաշտողացն. իսկ իմ պարշուիս՝ 'ի կամացս է: Կամ, ծաւ պօրէնաչը. այսինքն քան զօրինակ հեղձուցելոյն 'ի բնութեան գետոց՝ առաւել չար է իմ հոգւոյս հեղձումն. զի նա ցաւելի է և անմեղադրելի, իսկ ես ատելի և մեղադրելի վասն կամաւոր խեղդմանս:

(16) Անդաանալը ոաղոյն: Ճանապարհի մահուն՝ որ անդառնալի է յայժմու կենաց, թէպէտ և դառնալի ըստ նոր կենաց յարութեան: յէշապաչ տաբէացը պարբէապ, յէշտապ վասն առաջիկայ պարտեացս մեղաց՝ թողի զկտակ մատենիս. որպէս զի միշտ աղօթաւոր կայցէ առաջի քո:

ւոր գիրք ընդ մարմնոյս, դրօշուած գրոցս փոխանակ մարմնոյս, և բանք ընդ հոգւոյս, իմաստ բանիցս փոխանակ հոգւոյս՝ միշտ թախանձեսցէ զամենակալն. ած. որով իբրև յանմահ խնդրողէ ընկալցիս զաղաչանս 'ի ձայնէ աղօթիցս :

(17) Յանցանաւորական խոստովանութէ : 2 օրին. խոստովանութեամբ :

---

Սերտին յաւելեալ կրկին հեծութիւն՝ նորին հաճոյի, առ նոյն աղերս ճողոմանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

# ԲԱՆ. ԾԲ :

ա. Եւ վասն զի սլացեալ ոգւոյս թեւօք 'ի թիւս անբաւից ծննդոց մարդկան՝ եդի 'ի կշիռս իմանալեացս մտաց, ո՛չ գտի[1] զոք համեմատ ինձ պարտաւոր. և առ այս[2] զդաւթեան սաղմոսին զբանն 'ի յերգ ինձ առի՝ դառն կշտամբութե՜ գաւազանաւոր գործավար. ո՞վ յարիցէ ընդ իս 'ի չարիս՝ հաւասարել յանօրէնութիս : Եւ քանզի այս ըստ սմին մասին՝ կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այրս մահու, և ես վկայեմ կրկին հաստատեալ.[3] առ այսր իրաւունս գրեմ՝ ինձ միայնոյ զեղծանիլ իսպառ, քան իմոյս բանիւ բազմաց տարագրիլ. թերևս սովիմբ առ այսու արդեօք՝ և ինձ շնորհեսցես, շնորհողիս զպարտիս իմոցն :

բ. Եւ արդ՝ զի՞նչ քեզ աղերս հաճոյական 'ի յայսմ և 'ի սոյն, և[4] ծուխ անուշից ընդունելի խնկոց մատուցից՝ գովեալ թագաւոր երկնաւոր քս, եթէ ոչ զառ 'ի յինէն անիծեալսն՝ օրհնել մաղթեմ. զկապեալսն արձակել. ազատել զդատապարտեալսն.[5] բարեգործել զնզովեալսն. պսակել զթշնամանեալսն. սփոփել զտրտմեցեալսն.[6] դարմանել զխորտակեալսն. խնամել զպարտուցեալսն. պատսպարել զնենգեալսն. զվիրաւորեալսն 'ի մարմին՝ յոգի բժշկել : Եթէ օրհնութե՜ բանիւ առ ոք մատուցայ, լուիցես. իսկ եթէ անիծիւք, մի՛ հայեսցիս ընդունել զըլթած : Ես տառապեալս ամենաթշուառ՝[7] 'ի վերջին սպասաւորութե՜ մաղթանաց այսր մատենի, 'ի բովանդակ մտաց շնորհեցի իմոցն՝[8] փակեալ առ 'ի քէն զանիծիցն դժնդակ ըղձիցն չարաշուք ձայն. և[9] դժնէից նեն֊

գողացն իմոց՝ ընդ բարիսն 'ի բոլոր սրտէ հաշտու-
թե՛ արգահատեցի. վասն որոց և ծունր պաղատա-
նաց կրկնեցի. որչափ դու ինձ ահա յայց ելեալ ա-
ռաւել ողորմեցիս ըստ քոյդ մեծութեան՝ գովեալդ
խնամակալ, կեանքդ՝ մահացուիս, հզօրդ՝ տկարիս,
ամենակարդ՝ վարանելոյս, իմաստութեդ աղբիւր՝
յիմարիս և թմբրեցելոյս: Քանզի յաւետ սխա-
լեալ անկայ [10] իբրև զողողակ մթայինն ոչ ընդելա-
կան՝ 'ի հաղըս մահու անզգայապէս. չիմացայ զկո-
րուստն. չգիտացի զորոգայթն. չտեսի զըմբռնօղ
որսոյն ծածուկ մեքենայս. չկարծեցի զխաբուսն կեր-
պարանաց կեղծաւոր վարմին. չնկատեցի զգայթագ-
ղուլին շուրջանակի. չշօշափեցի [11] զպատանդիչ զցան-
ցարկ կարթին. [12] ժամանեցին ինձ չարիք, և ես ոչ
կարացի ճանաչել, ըստ սաղմոսողին:

Է. Քանզի և որպէս [13] իմաստակի ումեմն արտաք-
նոյ բարւոք թուեցաւ, չար ասել զմահ՝ առ. չիմանա-
լոյն պատճառի, և ես վկայեմ իմովս բանիւ. քան-
զի իբր զանզգայ պաճարս անասնոց մեռանիմք՝ և
ոչ զարհուրիմք. կորնչիմք՝ և ոչ հիանամք. թաղե-
ցեալ լինիմք՝ և ոչ խոնարհիմք. տարագրիմք՝ և ոչ
տագնապիմք. եղծանիմք՝ և ոչ զղջանամք. մաշիմք՝
և ոչ մտառեմք. պակասիմք՝ և ոչ պատրաստիմք.
գնամք՝ և ոչ զգուշանամք. գերիմք՝ և ոչ ևս զգամք:
Իսկ հանդիստ ասել երջանկին յոբայ զվախճան մար-
դոյ, և ես խոստովանիմ զսոյն ընդ մեծին, եթէ ոչ
ունէի զբեռն աշխատութեան մահացու գործոց ըստ-
անձնեալ: Մանաւանդ զի՝ որոգայթն գաղտնի,
և հնարադիրն աներևակի. [14] տարր ժամանակիս յա-
նէլից, անցեալն անյայտ, և ապառնին կարծողական.
ես անհամբեր, և բնութի թերահաւատ. ոտք ան-
հաստատք, և միտք ցնդեալք. կիրք հարկաւորք, և
բարք անժուժկալք. մարմին մեղսամակարդ, և յօ-
ժարութի երկրասէր. դիմամարտութի տնկակից, և
խառնութի ներհակական. բնակութի կաւեղէն, և
անձրևք ուժգնակիք. կարիք անթուելիք, և պատա-
հարք ամենագրաւք. միտք չարախնամք, և տենչմունք
բարխատեացք. կեանք առօրեայք, և [15] զմբաղք սա-
կաւաւորք. խաբմունք յիմարուն, և խաղալիք տղայա-

կանք․ աշխատութիւնք ընդունայնք, և վայելմունք երազականք․ համբարք ոչնչից, և պահեստք հողմոց․ նմանութիւնք ստուերաց, և կերպարանք ծիծաղելիք ։ Քանզի իբրև եկն եհաս պատուիրանն, ըստ պօղոսեան բանին, անպատրաստ գտեալ զիս ինքեան, մեղքն կենդանացան յանդիմանեալ յարդարութեցն, և ես մահացայ կենացն, և կենդանացայ կորստեանն ։

Է․ Գողացան օտարքչարին գումարք՝ զստացուածս սրտիս իմաստից, [16] ըստ գրոյն կանխաբանութե․ որով եկն եհաս իսկոյն աստանօր իմաստութե ինձ նուազանալ, ըստ առակողին, և առաւելուլ ոչ բարուց ցանկութի ։ Ո՛չ [17] յառեցի զակն ոգւոյս 'ի գլուխն իմ կենաց քո, որով ընդ ուղիղն հետևեցայց ։ Քանզի կամելով ուժգինս ընթանալ՝ ընկլայ սաստկապէս․ յանչափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի․ 'ի մեծագոյնն ամբառնալ՝ աստուստ գլորեցայ․ յերկնային ուղւոյն՝ անդնդոց մատնեցայ․ 'ի զգուշանալն առաւել՝ յաւէտ վնասեցայ․ յանարատն պահել՝ մանր խորտակեցայ․ կարծելով ընդ աջեակն մրցիլ՝ յաջն գթեցի․ [18] 'ի զերկրորդն խուզել՝ զնախնին կորուսի․ 'ի խնդիր սակաւուն՝ 'ի կարևորացն զրկեցայ․ 'ի յուխտին պահել՝ դաշինն գժրեցի․ առ սովորութէն կտրիլ՝ կորուսիչս գտի․ 'ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ․ զոր ես ինքն ինձէն ստեղծեալ՝ չարաչար դատախազ անձին կարգեցի ։ Յորոց փրկել զմատնեալ գերիս դու միայն զօրեսցես, կենաց մատուցեալ զընծայեալս մահու՝ զհոգիս․ [19] զի դու միայն՝ տէր յս, Ճանաչիս բարերար, անսահման փառօք՝ ընդ հօր և հոգւոյն սրբոյ օրհնեալ յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

---

(1) Զ[illegible] ։ 2 օրին․ [illegible] ։ Խորհրդով մնացս իբր թեոփք շուրջ եկեալ յամենայն մարդիկ, քննեցի, կշռեցի, և ոչ գտի զոք համեմատ ինձ յանցաւոր և պարտաւոր․ վասն այն յարմար ինձ տեսանեմ զբան սաղմոսին ևն ։ Իսկ թէ որպէս ճշմարտութի ասել կարիցէ զանձն՝ յանցաւոր քան զամ մարդ, տես 'ի մեկնութե բանի առաքելոյն, գլուխ մեղաւորաց ես եմ ։ ( Ա․ տիմոթ․ Ա․ 15 ։ )

(2) Զ[illegible] ։ որ է ( ՂԷ․ 16 ։ ) * Ո՞յ յարիցէ ընդ իս 'ի վերայ չարաց․ || ևն․ որ թէպէտ ըստ գրոյն իմանի յաղագս պատերազմե-

ցոյ ընդ երեւելի կամ ընդ աներեւոյթ թշնամիս . սակայն ոք վարդապետս յարմարէ յանձն իւր , թէ ով կարասցէ համեմատիլ ինձ ըստ բազմու֊ մեղաց : Զայս բան 'ի չէրգ ինչ առ . այսինքն 'ի պարսաւանս ինձ յար֊մարեցի , իբր գաւազանաւոր գործաւոր , վերակացու գործաւորաց , որ գաւազան 'ի ձեռին կայ հանապազ առ 'ի հարկանել զծուլացեալսն :
( տաճկ . մէյմար չուհատարը , կամ մուպաշըր : )

(3) Ան թիւր : Արդարեւ ասէ՝ վերոգրեալ բան սաղմոսին , ըստ որում նո֊րին , ըստ այսմ մտաց ճշմարտեցաւ յանձն իմ . և դարձեալ վկայելով կրկին հաստատեմ . առ թիւր , վասն այսորիկ խրատուն համարիմ ինձ միայն դատապարտիլ , դասիլ բոլորովին , իբր անարժան և պարտաւոր քան զամենեսին մերժիլ , քան թէ [illegible] , անիծանաց , թշնամա֊նաց և վրէժխնդրութե , [illegible] , բազմաց յանցուցելոց առխ՝ մերժիլ յարքայութենէդ . զի թերևս այսու ներողութ և դու ինձ ների֊ցես : Կամ , [illegible] , խմանի՝ խմով դատաստանք և ընտրութեամբ զայս բազումս պարտաւոր համարիլ : Իսկ պատճառ խրատուն համարելոյ զիւրոյ անձինն դասիլ՝ այն է , զի որովհետև ճանաչէ զանձն ոչ միայն նման այլոց մեղուցելոց , այլ և ոչ զոք նման իւր մեղուցեալ , ապա ու֊րեմն խրատունք էն ասէ՝ ոչ միայն զայս չդատապարտել , այլ և զիս ինքն միայն դատել , և զայս թէ և յանցաւոր՝ անպարտ արձակել :

(4) Եւ ծառս [illegible] , . . [illegible] : այսպէս առանց նախդրի գնեն լու֊ օրինակք , համեմատ անցելոյն , [illegible] : յառաջին տպագիրս կայր , և 'ի ծառս , եւն :

(5) Բարեգործելն [illegible] : բարեաց հաղորդ առնել :

(6) [illegible] , որք վասն առ իս յանցանելոյն՝ պատա֊հարք ինչ խորտակեցան յանդամս մարմնոյ : [illegible] . որք մեր֊ժեցան յընտանեաց , կամ 'ի քաղաքէ : [illegible] . որք նենգութիւնս յայլոց կրեցին : [illegible] , որք 'ի թշնամեաց վիրաւորեցան 'ի մարմին :

(7) 'Ի վերջին [illegible] : Վերջին ասէ՝ ոչ ըստ այժմու կարգի ա֊ղօթիցս , զի զհետ այսր գան բազում այլ աղօթք , այլ թերևս 'ի սկզբանն յետոյ քան զայլ աղօթս կարգեալ էր այս 'ի սմին : Նմանք վերջին խմա֊ցան՝ ոչ ըստ կարգին , այլ ըստ ըղձիցն , որպէս թէ զայս աղօթս իբրև յե֊տին կտակ արար ոք վարդապետն , ըստ նմանութեան քնի՝ որ 'ի ժամ խա֊չելութեան անոխակալութ սակս խաչահանուացն աղօթեաց : Հին լուծ . խմանոյ՝ զինքն վերջին ասել ոք վարդապետին . այսինքն ես տառապեալս՝ որ վերջին կամ անարգ եմ յաղաչօղսն այսու մատենիս :

(8) Փակեալ 'ի քէն . արգելեալ 'ի քէն . այսինքն աղաչելով զքեզ՝ զի անգործ արասցես զբանս անիծանացն՝ զորս ետու խմոց չարարարաց :

(9) [illegible] : Դժնդակ մտատողաց խմոց՝ [illegible] , վասն բարեաց նոցա , կամ իբր վասն բարերարաց , [illegible] , աղօթեցի կամ հոգացայ զհաշտութեն :

(10) Իբրև [illegible] : Անկայ յորդայթ իբրև զաղացօղ 'ի ներքոյ ջուրց՝ թէ մարդ իցէ , և թէ ձուկն . [illegible] , որ կայ ընդ մութն խորութեան ջուրցն . [illegible] , անփորձ և անհմուտ : Հին լծ . [illegible] խմանոյ զհեղեղատ փոխե կարեալ , յոր մարդ անկանի 'ի մթագին ժամանակի : Բայց անյարմար է տեղւոյս :

(11) [illegible] , յամ կողմանց պաշարող և ըմբռնօղ . [illegible] , զյանց [illegible] , յորում հաստատեալ է նաև կարթ , այսինքն ճանկ , կեռ ասեղն :

(12) Ժամանեցին ինչ : ( սաղմ. լթ . 13 . ) * Հասին ինձ անօրէնութիւնք իմ , և ես ոչ կարացի տեսանել || . այսինքն խաւարեալ 'ի մեղացս՝ ոչ կա֊

բայց իմանալ զեկեալ հասեալ վիշտս և զպատուհաս մեղաց ։ կամ, հա-
սին ինձ ուրախութք և վտանգք մեղաց , և ես անմոռացեալ չիմացայ ․ և
յայս միտս առնու Տր վարդապետս ։

(13) Իմաստակին ասէ ․ այսինքն փիլիսոփայի ուսեալն ․ զոր ամենք զղջա-
տին ասեն , և ամենք՝ զկեսբրին ․ Ճար առել զմահ , որ է բանն՝ զոր և մեր
եղիշէ բերէ ․ (երես 13 ․ ) * Մահ ոչ իմացեալ՝ մահ է ․ մահ իմացեալ՝
անմահութիւն է ։ || Իսկ չար առել զմահ ․․ ընմանալոյն պատճառի , այս-
ինքն վասն ոչ իմանալոյն , ոչ յայն միտս առեր փիլիսոփայն , եթէ զի ոչ
իմանամք զօր և զժամ մահուն ․ և ոչ Տր վարդապետս առէ զայս վասն
յանկարծադէպ չարեաց , այլ զի ոչ խորհին մարդիկ զպատճառս մա-
հուն՝ թէ ուստի՞ եմուտ , և որպէս յամ հեշտալեաց զլկէ զմարդ ․ և թէ
զկա՞րդ նեխի մարմինն , և հոգին յինչ վիճակ փոխի , եւն ։ Զայսոսիկ ոչ
խորհելով մարդ , անասնօրէն կեայ , և անասնօրէն մեռանի զճշմարիտ
մահն՝ ոչ միայն ըստ մարմնոյ , այլ և ըստ հոգւոյ ․ վասն այսորիկ յարէ
զպատճառն , զի եթէ զանգիտեաց մեռանիմք , և ոչ զարհուրեմք
յապագայ պատժոց ։ Կորնչեմք , անհետ լինիմք բոլորովին յաշխարհէ ,
մինչ զի թէ որոնիցէ ոք զմեզ , ոչ գտանէ , և առկայն ոչ հիանամք ընդ
մարմնաւորութիւն մեր , ոչ զարմանամք ընդ վայրապար հոգսն աւելորդս ,
որպէս թէ անկորուստ լինիմք ։ Թուղթէղէն լինիմք ․ ընդ առնուք ամենե-
յուն 'ի հող արկեալ , և առկայն ոչ խոնարհիմք , այժմ հպարտանամք , ոչ
կամիմք խոնարհիլ առ այլս , վերոյ ամենեցուն լինել ցանկամք ։ Փոշ-
գէմք , մերժիմք հալածիմք յայսմ աշխարհէ , և ոչ պագանեմք , չունիմք
ստացուածս հոգւ՝ թէ յո՞ր աշխարհ անծանօթ գնալոց եմք , յորո՞ւմ վիճա-
կի գտանելոց եմք ։ Եղծանեմք , ապականիմք , քայքայիմք ․ և ոչ զղջանամք
զոնէ ընդ աւելորդ փափկութիւն մարմնոյ ։ Մաշեմք օր ըստ օրէ , և ոչ
Ճգնեմք , ոչ 'ի միտ առնումք զմաշիլ մեր , և ոչ զայն թէ գայցէ օր՝ յո-
րում իսպառ ծախեալ մնամք ։ Պակասեմք , հեռ զհեռէ 'ի զօրութէ ,
յառողջութէ , 'ի կարևոր պիտոյից , նաև բազում անգամ 'ի կատարե-
լութենէ հոգւոյ , և ոչ պարապեմք , առնել պաշար գոնէ վասն հոգւոյ ։
Այսպէս աՀա գնամք յընթացս ճանապարհի կենացս , և ոչ զգուշանամք 'ի
վտանգաց , և 'ի վախճանի գերեմք 'ի մահուանէ , և ոչ ես զգամք , ոչ զգե-
րել մեր , և ոչ զանհնարին վտանգս հանդերձելոց կենացն ։ Այս ուրեմն
խրատաբար ասացաւ , թէ մահ ոչ իմացեալ՝ մահ է ․ իսկ ընդ հակառակն
որք խորհին զայսոսիկ , բանաւոր կեանս վարեն , չափաւորելով զհեշ-
տալիս , ոչ ապաւինելով 'ի մարմին , խոնարհելով յանձին , երկնչելով
'ի հանդերձեալ պատուհասից , զղջանալով 'ի չարեաց , պատրաստելով
զբարիս ․ և այսպէս մահն իմացեալ և խոնարհեալ՝ լինի պատճառք ան-
մահութէ ։ Վասն այսորիկ պղատոն առեալ 'ի պիթագորայ՝ զիմաստա-
սիրութիւն սահմանէր , խոկումն մահու ։ ( Անյաղթ ․ սահմ ․ պր ․ Է ։ )
Եւ աՀա ըստ այսմ արդարացեալ է՝ Հանգիստ առել երջանկին յոբայ
զվախճան մարդոյ ․ քանզի ազատեալ յաշխարհիս վշտաց , փոխի յանաշ-
խատ կեանս առ ած ։ Զայդ և ես խոստովանեմ առէ՝ եթէ մեղօք ծան-
րաբեռնեալ ոչ էի ․ յորոց ոչ ապաշաւելով իմ, մահն ոչ հանգիստ ինձ՝
այլ սկիզբն լինի անհանգիստ տանջանաց ։ Եւ այս առաւել կասկածե-
լի , այնու զի որոգայթ մեղաց գողունի է եւն ։

(14) Տուրք ժամանակի ։ Գոյութիւն ներկայ ժամանակիս , կամ ներկայ
ժամն՝ որ իբր տալը կամ սկիզբն է ապառնի ժամուն , յաւէից , իբր ան-
գոյ կամ ոչինչ է ․ զի միայն անբաժանելի վայրկենիւ ինչ ներկայ է , և
միանգամայն անկայուն , հազիւ թէ ներկայ եղեալ , խոյս անցանէ ․
ուստի չիք վստահել 'ի ներկայ ժամանակս ։ Անցեալ ժամանակն՝
անյայտ է այլևս ․ և ապառնին , գալոց ժամանակն կարծողական է , ալ-

գեղք ունիցիմ զայն, կամ զնմին 'ի կիր արկանելոց եմ: Ոտք, զգայունք իբր ոտք հոգւոյ՝ անհաստատք են: Կիրք, բնական կիրք կամ ախտքն՝ հարկաւորք են, այլ Բարք, ախորժանք անժուժկալ գոլով, զեղծանին նաև 'ի բնաւորական ախտսն: Բնակութիւն, տուն մարմնոյ կաւեղէն. և անդր, փորձանք սատանի, որք դիւրաւ քայքայեն զկաւակերտ մարմինն:

(15) Զմբաղդ ունայնութեան. վայելմունք կամ զուարճութիւնք սակաւք թուով և ունողութեամբ: Համբար ունելոյ. չնչին, անկայուն իրաց համբարք են աշխարհիս իրք. և իբրև պահեստ հողմոյ. որպէս թէ զհողմն ժողովել և պահել կամիցին:

(16) Ըստ Գրոյն. այսինքն յոբայ. (ԺԷ. 2.) զոր նք վարդապետս այլաբանէ 'ի վերայ հոգևոր ստացուածոց շնորհաց և իմաստութեան:

(17) Ու յաւէտ զայն: Հակառակ բանի ժողովողին, (Բ. 14.) * Իմաստնոյն աչք իւր 'ի գլուխ իւրում, և որ անմիտն է՝ ընդ խաւար գնայ. || Եւ ոչ հաստատեցի զակն հոգւոյս 'ի գլուխն իմ Քս, առ ուղիղ գնալոյ 'ի ճանապարհին նր: Իսկ մնացքն աչա ոտքին են. զի կամելով ... ընթանալ, այսինքն առանց ընթրութեան և վաղվաղակի առանց առաքինութեանս, ... ընկղմեցայ 'ի ծանրութեան դժուարին առաքինութեանց. զի ոչ իմ բռնն՝ իմ հասանել առնելի է: 'Ի ... 'ի բարձրագոյն առաքինութեան կամելով վերանալ, ... Գլորեցայ, առաւել ևս 'ի ստորին կամ 'ի դիւրին առաքինութեան ոչ մնացի կանգուն: 'Ի ... անխոհեմութեամբ զգուշանալով, առաւել մնացեցայ. որպէս կամելով ոք պահել զլուսն, նաև 'ի կարևորն լուծցէ: Յանարգան պահել. ողջախոհութեամբ պահելով զմարմինս, ... մանր կիր գաղտնի խորհրդովք սրտի, կամ հայեցուածովք, կամ խօսիւք աղտեղեալ խորտակեցայ: Կամ յարտաքին մեղաց գործոյ անարատ պահելով զիս, ներքին մեղօք սրտի կամ մեղօք զանցաւութեան մնացեցայ: Կործանեցի ..., ընդդէմ մեղաց և ախտից պատերազմիլ, ... 'ի կողմն առաքինութեան կամ բարի գործոց անիմաստութեամբ գթեցի:

(18) 'Ի ... 'Ի խնդրելն զերկրորդ առաքինութեանն, ..., զնախնի առաքինութիւնն՝ որ դեռ անհաստատ էր՝ կորուսի: կամ խնդրելով զաւելաւ հարկաւոր և զօգուտ բարին, զառաջին հարկաւորն և զհրամայեալն կորուսի. որպէս փարիսեցիք 'ի խնդիր տասանորդաց և պատարագաց՝ զանց առնէին զիրաւամբք և զողորմն այ, և զողորմութեամբ ընկերին: 'Ի ... Հոգ տանելով մարմնոյ ախտոյից՝ կերակրոյ, հանդերձի, ևն, 'ի ... հոգևորաց ... աւելորդ հոգովք և զբաղմամբ: 'Ի ... 'ի պահել զխոստումն աղատ բարւոյն՝ որ առ այ, ... որ առ մարդ օրինօք եդեալ, ..., որ է անկարգութիւն մեծ. զի պարտք օրինաւոր դաշինն՝ է 'ի ձիրդ արդարութեան. իսկ պարտք ուխտին՝ 'ի կրօնէ. և երկոքին այս՝ արդարութիւն և կրօն՝ ոչ հակառակին միմեանց. վասն որոյ այնպէս պահելի է ուխտն, զի մի՛ եղծանիցի դաշն: Այսպէս անկարգանայ ոք՝ որ կամելով ընծայել յեկեղեցի զնուէրն՝ զոր ուխտեալն է, ոչ վճարիցէ զպարտս ընկերին: Առ ... առ 'ի բառնալ, կամ փոխանակ բառնալոյ զչար սովորութիւն ինչ, ..., զայլ առաւել մնասակար սովորութիւնս առայի: Այսպէս յուդայ փոխանակ բառնալոյ զչար սովորութիւն ագահութեան, զմատնութիւն փրկչին հնարեաց. և առ 'ի բառնալ զմեղս մատնութեանն՝ զյուսահատութիւն և զանձնասպանութիւն եգիտ:

(19) Զի դու մայն ես յա, ձանալիս բարերար . . . ընդ հօր և հոգւոյդ ։ 2 օրին. Զի դու ես յա, ձանալիս մայն բարերար . . . ընդ հօր և ընդ հոգւոյդ ։

---

Սերոպէն յաւելուած ինչէն հեծուէ՝ նորին հօրողէ, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

# ԲԱ՛Ն. ԾԶ ։

Ա. Ո՛վ [x] զաւխթան մահու դիպուածս՝ դժոխարմատ ծառոյս դառնութե̃ պտուղք, ընտանիք թշնամիք, հարազատք հակառակք, և որդիք դաւաճանօղք, ստորագրեցելովք մասամբքդ նշանակեցից՝ գրեալ յանուանէ, որ են այսոքիկ ։

Բ. Սիրտս նանրախորհուրդ, բերանս չարախօս, ակնս յայրատատես, ականջս վրիպալուր, [2] ձեռնս մահաձիգ, երիկամունքս անփորձ, ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս աներկիւղ, հետք խոտորնակ, [3] շունչք ծխախառն, գնացք խաւարային, գոյութի̃ լերդի վիմական, խորհուրդ ծորեալ, կամք անկայուն, չար անփոփոխ, բարեմասնութի̃ սասանեալ, անձն տարագիր, աւանդ վաճառեալ ։ Գազան վիրաւոր, թռչուն նետահար, փախստական քարավէժ, ըմբռնեցեալ վնասապարտ, աւազակ ծովակուր ։ Զինուոր նենգաւոր, մարտիկ անպատրաստ, սպառազէն անժուժկալ, մշակ հեղգացեալ ։ Ոգօթական անխրախոյս, [4] բեմական ստորնաքարշ, քահանայ անկնդրուկ, օրինական աննուէր ։ Դպիր կշտամբեալ, իմաստակ խելագար, ճարտասան անճոռնի ։ Կերպ անպատկառ, դէմք անամօթ, [5] երեսք լպրշեալ, գոյն անհամբոյր, տիպ տմարդի, գեղ ծանակեալ ։ Խորտիկ խանգարեալ, ճաշակ գարշեցեալ, [6] այգի գաղձնաւոր, որթ որդնահար, պարտէզ փշաբեր, հասկ ուտճահար, մեղր 'ի մկանց ճարակեալ, անպատսպար անկեալ ։ Անապարծ յուսահատ, [7] անհամոզելի նզով, անհաշտական բաժանեալ, ունայնաբան շաղակրատ, պաճարամիտ դուող, անամօրէն ապիրատ, դժոխային ագահ, աներասան յան-

դուզն ։ Ողեգնութ՟ի անա՟ծ, ձեռնաձգութ՟ի սպանող, տատասկացան երկրագործ, երջանկութ՟ի եղկելի, մեծութ՟ի վատթարեալ, վայելչութ՟ի անշքեալ, կարողութ՟ի տկարացեալ, բարձրութ՟ի խոնարհեալ, փառաւորութ՟ի ընդոտնեալ, պատուիրանազանցութ՟ի յարակայ, սխալանք Ինքնակամ ։ Ստակարար կամակոր, խորհրդակից նենգաւոր, բարեկամ հատուածեալ, հազարապետ գողամիտ, մերձաւոր կծծի, բաշխող ժլատ, վերատեսուչ կարկամ, [8] ողի անախտակիր, իղձք անսէր, բարք ատեցող, աղիք անգթականք, գնացք անխոհեմ, աներեւոյթք վնասեալք, ծածուկք անխծեալք, դիպուածք թշնամանեալք ։ Վաճառական վաճառիչ, շահարար շուայտեալ, պաշտօնեայ արբեցող, [9] գանձուց ոստիկան երկմիտ, պատգամաւոր բանսարկու, դռնապան քնեած ։ Աղքատ հպարտ, մեծատուն ժխտող ։ Դիւանապետ անօրէն, պահապան մատնիչ, բնակակից չարախօս, սուրհանդակ անժաման, թղթաբեր պարտաւոր, առաքեալ խռովարար, միջնորդ անիմաստ ։ [10] Արքայ արտալած, թագաւոր թարմատար, կայսր ոգէկործան, իշխան տիրադաւ, զօրավար զրկող, դատաւոր ակնառու, ռամիկ ինքնագործ ։ Նախատողի ծաղր, սիրելոյ աշխար, բանագրի դսրով, յանդիմանչի դատախազութ՟ի ։ Զանզի և [11] 'ի վեհագունիցդ կոչմանց՝ էր ուրեք արդեօք զի էի. իսկ 'ի վատթարականացդ մասանց՝ եկն երբեմն եհաս՝ զի եղէ ։ Արդ՝ այսքան վնասակարութիւնք խարդախութեանց յաճախագունից, յորոց յոմանց խաբեցայ իբրև զյիմար, և յոմանց տիրեցայ իբր զտկար՝ կամաւ մատնեալ զիս

Ինքն մահու ։

Դ. Արդ՝ զո՞րս 'ի վերագրելոցդ մասանց՝ քեզ ատելեաց, և իմ կորուսչաց՝ 'ի սպաս պաշտաման քեզ ընծայեցից. զորպիսիս ապականութ՟ե պարագրեալս՝ ամենասուրբդ քո մեծութ՟ե հանդէպ կացուցից. և կամ որքանեօ՞ք երկայնմտութ՟ք համբերեսցես այսքանեաց պարտուց. ո՞րքան ներես. ո՞րպէս լռեսցես. զի՞արդ իսկ անսայցես. իբր ոչ մատնեսցես հարուածոց գանից զարժանիս սատակման մահու ։ Արդ՝ այսօցիկ աննշոյլ մթութ՟եց՝ հոգւոց խաւարի՝ ողոր-

*մութի լուսոյ քոյ պատահեսցես՝ բժշկել քաւել և կենագործել՝ զօրեղութիւն անվթարելի . և քեզ փառք յաւիտեանս . ամէն ։*

---

(1) Զարթիճն մահու դեղատուն ։ Զյառաջընթաց բանին ասարանաց, ա-սելով զինքն, ընծայեալ մահու . վասն որոյ անուն առնու զակիզն առա-ջնկայ բանիս . ուր որոշ ընծայի խմաստ շարադրութեան, եթէ զբառն՝ մահու դեղատուն ասացուք իբրև բարդ անուն . զի գոն և այլ անուանք 'ի սեռական հոլովոյ բարդեալք . որպէս . Արեգնատու, Բարեացապարտ, Մտացածին են . ուստի միոյ բանին լինի . զպատճառն մահաբերս կմ՛ մահագործս՝ որք են պտուղք դառնութեան ծառոյս, են, յաջորդ բա-նիւքդ նշանակեցից . և են ներքին թշնամիք . հարազատ ինձ, բայց հակա-ռակօղք . որդիք, բայց նենգօղք ։ Եւ սոքա են որդիք նախրախորհրդոյ են ։ Իսկ դժոխարմատ խմանի՝ գժնդակ կամ խառնիխուռն արմատս ու-նօղ, կամ դժուարաւ խլելի, կամ թխնաւոր ։

(2) Չեռնի մահաջիգ ։ այսինքն յօժարեալ 'ի սպանութիւն, կամ ձգեալ յայնպիսի գործս՝ որ մահ բերեն հոգւոյ ։ Երեխամանուկ անփոյթ, այսինքն ոչ փորձեալ, կամ ոչ մաքրեալ յաղտեղի ցանկութեանց ։

(3) Շունչ ծխախառն . այսինքն խառնեալ ծխով բարկութեան ։ Գոյութ մրրոի ։ կապուտութիւն կամ որպխութիւն ; լերդխ իբրև զկէմ խառացեալ ան-գթութ ։ Խորհուրդ ծուրեալ ։ մտածութիւն անհաստատ, կամ անգործ, որ թափի 'ի մտաց մոռացմամբ, կամ անհոգութբ ։ Լար անփոփոխ . այսինքն դժուարաշարժ 'ի բարին ։ Բարեմանութ սառնեալ, բնական կմ՛ գերբնա-կան բարեաց հաղորդութեան՝ անհաստատ ։

(4) Բնմաճան սփռնաթարշ . այսինքն սարկաւագ, որ մարմնով 'ի բեմի կա-ցեալ պաշտէ սեղանոյն, այլ հոգւովն յերկրաւորս ձգի ։

(5) Երեսք շղըշեալ ։ այսինքն անամօթ, լիրբ ։ Գոյն անհամբոյր, այսինքն, անախորժ, զզուելի ։

(6) Աչքն գաղթառար . յորում լցեալ է գաղձն, կմ՛ գայլ խոտ որ զոր-թով պատատի և ցամաքեցուցանէ . են ։ հասն ոսպնահալ . կերեալ և սպա-ռեալ յաւուրն ձձեաց, կամ 'ի ցեցոյ ։

(7) Անհամնղեալն նուն ։ անմիջնորդելի նղովեալ, այսինքն զրկեալ 'ի հա-ղորդութեէ հոգևոր բարեաց ։

(8) Ոտն անախտակէր . սիրտ անցաւ, անկարեկից ։ Անէրնայթ ձեռնեալ ։ խղճք և խորհուրդք սրտի ապականեալք ։ Ծածուկ անծծեալ ։ գաղտնի ներհակութիւք կամ խռովութիւք սրտի՝ անխծիւք ընկալեալք, կամ ա-ռանց համբերութեէ ։ Դեղատուք Բղնամանեալ . սրտաքին պատահարք 'ի մարդոյ կամ յայլ իրաց՝ սրտնջմամբ տարեալք ։

(9) Գանձոց սպիտան . գանձապետ անհաւատարիմ ։

(10) Արքայ արքայուծ . հալածեալ յիշխանութեէ կամ յերկրէ իւրմէ ։ Բագաւոր Բարմապար . անպիտան, կամ լոկ անուամբ ևեթ ։ Խայոր ոգե-խործոն . այնպիսի միաչեծան ակր՝ որ փոխանակ խնամարկելոյ զհնազան-դեալս իւր՝ զօգխ նոցա կործանէ մոլար հրամանօք . կամ, որ իշխանու-թեամբն վերամբարձեալ քան զամենեսին, ոչ ոքն կործանի յանդունդս՝ ներքար զանձնէ խորհելով ։ Ամէն Բնանագործ . այսինքն ինքնագլուխ, անհաւան հրամանի ։ Նախարարն ծաղր . չարախօսի՝ նիւթ ծաղու եղէ ։ Իսկ որերեսոյ՝ աղխար, բարեկամի՝ նիւթ լալոյ ։ Բանագէտ դորն, բանսա-տեղծի կամ ճարտասանի՝ ընդարձակ նիւթ պարսաւանաց . իսկ յանդի-մանութ, որ 'ի սիրոյ կամ յիշխանութե յանդիմանէ զխս առ 'ի ուղղել, ոչ

ընկլուզ՝ եղէ դառնախաղութէ, նիւթ ամբաստանութեան. կամ սատահակեալ եղէ ընդդէմ նմա դատախազ:

(11) 'Ի վերջին գուշակէ խոլման: 'Ի դերագոյն անուանցդ բազումք վկայակեցան ինձ յոյ հոգեւորականս, զի եղէ զլնուոր, աղօթաւոր, քահանայ, մատակարար, գանձապետ, արքայ, եւն: Իսկ 'ի վարդապետութեան. 'ի պարսաւելի անուանցդ բազումք եւ ըստ գործոց իմոց պատշաճեցան ինձ. զի եղէ նենգաւոր, երկչոտ, աննուէր, կամակոր, անհաւատարիմ, արատաւոր. եւն: Արդ պարտ, զի աւա այսքան են չնաշխարհ և բազմապատիկ խաբէութիւնք, կամ պատրողական վնասքն. յորոց ոմանց, այսինքն յայնցանէ որք յառաջ գան 'ի բնաւոր ապականութէ, 'ի տգիտութէ, 'ի պատրանաց դիւին, խաբեցայ իբրև զչիմար. և յոմանց, որ 'ի չար ունակութեց կամ սովորութեանց յաղթեցայ իբրև զտկար: Արդ տէր: 'ի վերոգրեալ բանիցն՝ որք քեզ առեալք են, և ինձ կորուսիչք, զիս ինչ կարեմ ընծայել քեզ. միթէ իշխեցեմ առել թէ 'ի քում պաշտաման եղէ և ես բեմական, քահանայ, գպիր, մատակարար, պատգամաւոր, գանձապետ եւն. որովհետև առ այսոսիկ զոյգ երևին և պարսաւելի անկարգութիւնքն. որոց վասն զարմանամ իսկ՝ որպէս երկայնամտեալ համբերես, և ոչ մատնես 'ի հարուածս: Յայսքան ներողամտութիւն քո ապաստանեալ, աղաչեմ զի խաւարեալ խմբում հոգւոյս ողորմութէ յոյս տո պատահեցես, այսինքն լուսով ողորմութեան քո:

Սկզբն յաւելուած կրկին հեծութ՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս ձաղկանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ. ԾԴ:

ա. Բո̃ ա̃ծ անուն աչաւոր. [1] մեծութեան տեսակ. անքննին բարձրութեան պատկեր. անսահման զօրութիւն. [2] կերպարան փրկութեան լուսոյ. պաշտպան կենաց. դուռն արքայութեան՝ վերնում հանգըստեանն. ճանապարհ հանդարտութեան. ապաւինութիւն նորոգ և անտխրական երանութեան. [3] ամենակալ իշխանութիւն բոլոր էականութեան. օրհնութեան կոչումն. աւետեաց ձայն. բերկրութեան բարբառ. անմահութեան դեղ. որդի անճառ այ միոյ: Որ ինձ անհնարին է, քեզ դիւրին է. որ ինձ անհաս է, քեզ սահմանեալ է. որ ինձ անանցն է, [4] քեզ հպաւոր է. որ եղկելոյս ինձ ծածկեցեալն է, քումդ երանութեան մերձաւոր է. որ ինձ անկարելին է, քեզ կատարեալ է. որ ինձ անկշռելին է, քումդ անճառութեան չափեալ է. [5] որ ինձ յուսահատութեանն է, քեզ սփոփանաց է. որ ինձ անբժշկականն է. քեզ անվտան-

դելի է. [6] որ ինձ հեծութիւն է, քեզ խնդութեան
է. որ ինձ ծանունք են, քեզ թեթեւագոյնք են. որ
ինձ եղծեալն է, քում զօրեղութեան գրեցեալ
է. որ ինձ կորուսեալն է, քեզ ըմբռնեալ է. որ
ինձ անճառն է, քեզ համարեալ է. որ ինձ մռայլն
է, քեզ ճառագայթ է. որ ինձ անթիւն է, օրհ-
նեալդ քում ձեռին բովանդակեալ է. որ ինձ սոս-
կալին է, քեզ հեշտալի է. որ ինձ փախչելին է,
քեզ վանելի է. որ ինձ անմատոյցն է, քեզ դիւրա-
հերքելի է. որ ինձ մահաբերն է, քում եականուէ
զօրութե՛ ընդ ոչգոյսն համարեալ է։

Բ. Այլ դու ողորմած ա͞ծ բոլորից տէր յ͞ս ք͞ս, և [7]
այսմ զօրէս առ ելիցն հնար՝ եթէ գթասցիս. վասն
անուան փառաց մեծութե՛ հօր քոյ օրհնելոյ, վասն
կամաց գթութե՛ ոգւոյդ քոյ ս͞բյ, տէս 'ի տաժանա-
ւորս կրից յանդիմանական յայտնութի, և 'ի խորոց
սրտի ինքնամատոյց դատախազուի. նայեա՛ 'ի բնու-
թե՛ս [8] ամենապատաղ խակութի, և պարգևեա՛ բժըշ-
կութի վիրացս, և հնարաւորուի կորստեանս, զեր-
ծումն բազմամամանեայ մահուս, և շաւիղ կենաց ա-
պականելոյս, նորոգութի եղծմանս, և մուտք յու-
սոյ ամբարշտելոյս։ Եթէ ես [9] զանձնմանն ինձ կամս
ցուցի, որչափ առաւել դու զբնաւորականսդ քո
զընտանի բարերարութիւնդ. եթէ 'ի փշոց պտուղ
ընծայեցաւ քաղցրուէ, որչափ առաւել 'ի ծառոյդ
կենաց՝ ճաշակ անմահուէ. եթէ ես իմոց ատելեաց [10]
ողորմութե՛ մաղթեցի, դու քոյոյս զիա՞րդ ոչ կրկին
մատուսցես հզօր՝ յանհնուազդ առատուէ։

Գ. Արդ՝ տէս 'ի քոյդ մեծութե՛ բարձրեալ, նայե-
ցեալ 'ի յիմս փոքրկութի. ընկա՛լ զսակաւ խոստո-
վանութիս անհամար մեղացս, որ զբնաւն համայն
տեսանես. և որպէս [11] զվիմին գթել՝ ոչ գրեցեր, և
զաւազոյս փոքու սասանել՝ մի՛ համարեսցիս. և [12] իբրև
զդաւթին՝ ընդ մեղայն ասել՝ իսկոյն անցուցեր զպա-
տիժ պարտուցն, և առ իմ ձայնիս հեծութի՝ զնոյն
գործեսցես երկայնմտուի. որ տաս ամենեցուն առա-
տապէս անաչառութե՛ որպէս յաղթօղ բարի բազ-
միմաստ. և ոչ նախատես զյետնեալ ստրուկս՝ որպէս
ողորմած և ամենաստեղծ. տացես վերստին, և [13]

մի՛ կորուսաներ զլուծեալս արեամբ քո, և զնու-ծեալս սուեամբ քո՝ գթած: Զի քո՛ է փրկութի՛, և 'ի քէն է քաւութի, և քեզ վայել է փառք յա-մենայնի յաւիտեանս. ամէն:

---

(1) Մեծութեն քեայ: մեծվայելչութեն հօր երևեցուցիչ. կամ անհուն ճոխութեն և հարստութեն ուժոյ:

(2) Կերպարան ծրլըութե: ցոյց կամ նշանակ ազատութեն 'ի խաւարէ 'ի լոյս, կամ, պատճառք լուսաւոր փրկութենն:

(3) Ամենակալ բնակչութեան. ինքնագոր տէրութի բոլոր էականութեան, բոլոր էից, կամ արարածոց:

(4) Քեզ հպատակ է: մի օրին. քեզ հպատակեալ է: որ լինի անանցանելի է վասն հնաւորութենն, քեզ մօտ է:

(5) Որ ընդ յաւաւակաւորն: որպէս դժուարին պատահարք, ծանր փոր-ձութիւնք, բարձրագոյն առաքինութիւնք, յորս իմ տկարութիւն յուսահա-տի, քեզ ախորժանաց է. դու զուարճանաս՝ յայնպիսի դժուարինս ցու-ցանել զզօրութի քո և զգթութի:

(6) Որ ընդ հեծութեն: որպէս պատերազմ մարմնոյ և դևաց, կամ հի-ւանդութիւնք, որք առն ինձ հեծել, քեզ խնդութիւն է, տեսանելով զյաղ-թութի իմ, կամ զհամբերութի. ըստ բանի առաքելոյն. (Բ. կորն. ժբ. 9:) Ուստի ասէր երանելի նահատակն շամունեան. (Բ. մակաբ. Է. 6.) * Հայի տր ած 'ի ձգնութի պատերազմիս մերոյ, և 'ի ծառայս իւր մխիթարի: ||

(7) Եւ այսմ զօրէս. ընդ այլ գործս կարողութեն քո՝ զորս թուեցի. կա-րօղ ես և այսմ, զի ամ լիցք պարտաւորելոյս հնարս ազատութեն գտա-ցես, եթէ գթութբ կամիցիս:

(8) Ամենապարտապարտ խոխութե: յամ մխատակարս յօժարեալ և պատա-ղեալ անխրատութե:

(9) Զաննման ընդ քեզ: Հին լուծ. խմանոյ զաղօթելն վասն չարար-րայց՝ որ 'ի բանն ծէ: Սակայն աստ սուրբ առանձինն գնէ զայն ՚ի վեր-դարձեալս: Այլ յարմարագոյն խմանալի է, թէ զինքնակամ յայտնու-թի մեղաց՝ և զխոստովանութի անձին՝ ամենայնի հրապարակեցի, որ հակառակ էր բնութեն. զի մարդ 'ի ծածկելն է բնաւորեալ. և հա-զիւ յանձն առնու յայտնել քահանային 'ի ծածուկ: Եւ այս խոստո-վանութի է պատուին ընծայեալ 'ի փոխ. որպէս և սուրբ ասէ. Ընդ ամ զաւակս խոստովանութեն, են:

(10) Որպէսութե մաղթեցի: վասն ողորմութեն իմոյ առեալսյն աղաչեցի: 2 օրին. ողորմութեան:

(11) Զվերջին գթեալ: զվերջին գայթակղելն ուրացութբ՝ ոչ մեծ հա-մարեցար, այլ ինքն անունս տարեր, ներեցեր. այպէս զշրջուիլ իմ, որ առ նորա համեմատութբ լիր առաւ եմ, մի համարիր, անտես արա:

(12) Ի թիրն զգաստին: 2 օրին. Ի թիրն զգաստի: որպէս զգթութի պահեա մեղացն խնդրեն թողեր ընդ առելն մեղաց, նոյնպէս առ հառաչանս աղօ-թից իմոց զնոյն ներողութի արասցես:

(13) Մի կորուսաներ զլուծեալս արեամբ քո, և զնուածեալս սուեամբ քո՝ գթած: 2 օրին. այսքան միայն գնէն. Մի կորուսաներ զլուծեալս արեամբ քո՝ գթած:

Սէրտէն յառեղուած հրէին հեծութէ՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

# ԲԱՆ. ՁԲ.

ա. Օրհնեալ տէր յս ընդ հօր, 'ի կամս հաճութե հոգւոյդ քո սբյ. և [1] օրհնեալք ամենայն առ 'ի յօրհնելոյդ օրհնեցան. օրհնեալ միայն՝ որդի օրհնելոյ. չիք իմ թագաւոր իշխեցօղ հնչոյս բաց 'ի քէն՝ քս։ Այս է օրհնութի յակոբայ՝ ասէ եսայի, յորժամ բարձից զմեղս նորա։

բ. Արդ ողորմեաց ինձ՝ տէր բարեգութ՝ ըստ նախնիդ քո սովորութե, և օրհնեա զանօթս քո բանական, ըստ ձայնին դաւթի և ըստ մովսեսի. զի բանիւդ քո փրկութե ժամանեալ հասից քաւութեան օրհնեալ առ 'ի քէն։ Որպէս ինձ հրաշագործեա ողորմած արքայ երկնաւոր, [2] որպէս անկելոյն 'ի բազմաժամանակեայ մահճացն խշտիս, ժողովելոյն 'ի սրահին բեթհեզդայ։ Յորոց մի էր և [3] կրկին թերահաւատն՝ երից տասանց և [4] ութի միոյ ամօք ախտացեալ յօդիցն լուծմամբ, որում [5] ոչ անխայեցեր զբժշկութեն ձեռնտուութի, իբր գիտելով զանբոյժ չարութիւն՝ որ նիւթեացն քեզ յաւուր մատնութե դառն գիշերին տիրամարտութե՝ երախտաւորիդ, մեծիդ և բարերարիդ։ Որ թէպէտ և կանխաւ ինձ զգուշացուցեր, թէ մի մեղանչեր՝ զի մի կրկնեսցին կրկին քեզ չարիք, ոչինչ վերջացաւ լինել ձեռներեց սկզբնաւոր անհամբուրելի՝ դատողացն զքեզ 'ի խաչին։ Նա դու այնպիսւոյ [6] անյարիր ջատուկ մահուծնգեցեալ չարաշուք առն ողորմեցար, անձնա բարութի, սիրալի մարդասիրութի, սարսափելի ներողութի, սոսկալի երկայնմտութի, անբաւելի քաղցրութի, փառաւորելի հեզութի։ Որ միշտ [7] յաղթիս 'ի գթութե, և ոչ թշնամանիս. պարտիս յողորմութե, և ոչ պարսաւիս. բռնադատիս 'ի մարդասիրութե, և ոչ անգոսնիս. [8] հարկիս 'ի բարութե, և ոչ հայհոյիս. ստիպիս 'ի սիրոյ, և ոչ բամբասիս։ Պա-

ղատիս դարձեալ իմ առ քեզ, և ոչ ձանձրանաս.
որպէս զկնի ապերասանիս, և ոչ լքանիս. ձայնես
չլսողիս, և ոչ սրտմտիս. [9] փութաս մեղկելոյս, և ոչ
խափանիս: Դու չարս՝ ես բարի. առ ամենապարտս՝
ես ներող. առ մեղաւորս՝ ես քաւիչ. առ խաւա-
րեալս՝ ես լոյս. առ մահացեալս՝ ես կեանք:
Դ. Այս [10] են գիրք ամենայն հոգեշունչ օգտակա-
րութեան, որ յաճախս ծնանին երկնաւոր պտուղս
անճառս և զարմանալիս: Սա և [11] ինձ թշուառա-
ցելումս՝ օրհնեալ ամենապարգև, արի առ զմահիճս
խշտայդ մեղաց 'ի վայր կործանմանդ, և հետևեալ
ժամանեա յանդորր հանգիստ անաշխատ կենաց:
Խզեսցես ամենակարող սուսերաւ բանիդ հրամանի՝
[12] զերիզապնդեայ մահազգեստս պարփակութի դը-
ժոխազնեայ կապանացս. և լոյծ ինձ զհանգոյցս խեղ-
դողականս ոգեպահանջ սաստկութեանս, առաքելով
զարժանաւորս մահու՝ յազատութիւն վերին անանց
բերկրութեան, կենսաբեր և ձայնիւն քո բանիւդ:
Մի տակաւ տակաւ ազդեսցես, և մի օր 'ի յօր յեր-
կարաձգեսցես, զի մի ստուար ծանրութի բեռանցս մե-
ղաց՝ տիրեսցէ թիկանցս ազդերաց, և կործանեալ
զիս կորացուսցէ՝ հայել 'ի դժոխս. և ուժգնակի գո-
ռոզ բռնութե՝ [13] անպարապ հոգևորական զինուն
արարեալ, մահու ծառայեցուսցէ: Այլ օգնեա ինձ
բարի վշտակից՝ հեծութեան կարեացս մահու երկանց,
առեալ յինէն [14] զփայտ սատակմանն, որպէս երբեմն
յուսոյ պահակին. որով կառուսցես զվայելչական
յաղթանակի արի զօրութեան, պնդապէս հաւատով
յուսոյն կարծրութեան ընդ քեզ բևեռել անսայթա-
քելի: Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք և
իշխանութիւն յաւիտեանս. ամէն:

---

(1) Օրհնեալ տէր: Ամենեցուն օրհնութեան յերկինս և յերկրի՝ 'ի քեն շնորհեալ տր Յն, որ օրհնեալ միայն ես 'ի քեն, 'ի քումմէ խնկութէ, 'ի քոց արժանեաց, որպէս և հայր քո օրհնեալ. իսկ առ այլ արարածս, մանաւանդ յազգս մարդկան, 'ի քեն իջանէ օրհնութիւն. ըստ այնմ * 'ի զաւակի քում օրհնեսցին ամ ազգք երկրի: || Եւ որպէս դու միայն օրհնիս, նոյնպէս միայն տիրապէս [illegible] հոգւոյս կամ կենացս: Եւ զի ըստ եսայեայ՝ օրհնութիւն յակոբայ է բառնալ զմեղս նորա, Ասէ [illegible] ըստ այսմ օրհնութե, ևն. 'ի բանն եսայեայ, (ծթ. 20.)

փոխանակ օրհնութեան դնի անէծս․ և բոլոր բանն այլով շարադրութեամբ սոսի անդ․ բայց ո՞ր վարդապետս բերէ զայն ըստ բնագրի առաքելոյն․ ( Հռովմ․ Ժ՟Ա․ 27․ ) ՚ Եւ այս նոցա որ յինէն ուխտ՝ յորժամ բարձից զմեղս նոցա ։ ||

(2) Որդեա անէծիցն ։ Այսու ակնարկէ ո՞ր վարդապետս, թէ բազմաց ախտաժետաց՝ 'ի պրոպատիկէ աւազանին բժշկութեն շնորհեաց ք՟ս․ զոր չէ հարկ իմանալ անընդմիջաբար արարեալ 'ի ք՟սէ․ զի յոհաննէս զմիոյ և եթ բժշկութեն պատմէ անդ․ այլ թէ միջնորդութբ հրեշտակի ծածապէս ներգործեաց զառողջութեն բազմաց, յուզելով զջուրս աւազանին ։

(3) Կրէին Բերահաւուփն ։ Անդամալոյծն՝ որ յերեսնևութամեայ հիւանդութէն բժշկեցաւ․ և սա կրկին կամ երկիցս թերահաւատ, նախ՝ զի զծանուցանելն նորա առ քահանայապետսն՝ թէ յս՟ բժշկեաց զնա, ( Յովհ․ Ե․ 15․ ) ոմանք համարին առ չարութեն արարեալ․ երկրորդ, 'ի մատնութեն գիշերին սաեն ապտակեալ զք՟ս, և ըստ այսմ կարծեաց խօսի ո՞ր վարդապետս ։ Սակայն բազում այլ վարդապետք՝ ոսկեբերան, կիւրեղ, օգոստինոս՝ գովութբ յիշատակեն զայրս զայս՝ ազատ 'ի մեղադրեալ կասկածանաց ։

(4) Ութն մոյ ամօթ ։ մի օրին․ ութ մոյ ։ ըստ շարադրութեն խոտորումն է սաէն, Երէք փառաց և ութն մոյ ամօթ, փոխանակ դնելոյ՝ երեք սասամբք և միով ութիւ ամօք․ զի թուական բառքդ են ածականք գործիականին ամօթ, և փոխանակ նովին հոլովով դնելոյ՝ եդեալ է 'ի սեռական․ որպէս և յայլ բանս նշանակեցաք զայսպիսի խոտորումն ։

(5) Ուանիխայէշէր ։ ոչ զլացար նմա զբժշկութեն նպաստուն․ Իէր Գէորէլ․ թէպէտև գիտէիր կանխաւ զանբժշկելի չարութեն նորա, զոր արար ընդ քեզ 'ի մատնութեան գիշերին ։ Եւ թէպէտ յառաջագոյն զգուշացուցեր՝ մի այլ մեղանչել, զի մի կրկնեսցին Իէին Չարէ․ այսինքն զի մի չարագոյն լինիցի քեզ, սակայն ոչ դադարեցաւ լինել առաջին ձեռնարկօղ ընդդէմ քեզ, անխրատ և խիստ 'ի մէջ դատողացն զքեզ, ևն ։

(6) Անշարժ ։ որ ոչ կարէր յառնել և կանգնիլ ։ Ջաթարհ․ առլորաբար իմանամ՝ կախարդ, դիւական դիւթութեց հետևօղ, և զինչ յարմարութեն առ անդամալոյծն թերևս կարծեսցի․ յառաջին կախարդ լեալ, և վասն այն պատժեալ․ կամ թէ 'ի կախարդութէ ինչ ախտացեալ ։ Բայց զի կայ այս բառ և 'ի մեկն․ մատթ․ ոսկեբերանին, ըստ նշանակութեն առեալ փոխանակ կախարդի, այլ կիրառութբն իբրև բառ նախատանաց, նովին մօք իմանի և աստ, այսինքն այր վատթար, անարդ ևն ։ Հին լուծ․ մեկնէ՝ խաբօղ․ իբր զի պատրօղ և կեղծաւոր բանիւ սաէր՝ ոչ զոք ունիմ․ որպէս թէ բարձօղս և բերօղս յաւազանն ունէր, իսկ ընկեցօղս ոչ ունէր ։ Սակայն թէ արդարև առութբ ասացեալ էր նորա զայս, անարժան լինէր բժշկութեն ք՟սի ։ Մահու Ծնգէշէաւ ։ Ողորմելյար այնպիսում չարամիտ առն, որ արդէն իբրև ատրացեալ ունէր յինքն զմահն․ և այնու մաշեալ երևէր․ զի զամս երեսուն և ութ կալ հիւանդ՝ սակաւ ինչ ընդհատ է 'ի մահուանէ․ մինչ զի տարակուսեալ դոդցես հարցանէր ընդ նա Վ՟ս, կամի՞ս ողջ լինել․ զի կարծեալ այնպէս էր թէ զմահ ընդգրկեալ կայր յանհօգս ։

(7) Յաշխարհի գիշերին ։ միշտ գթութեան զօրանայ քան զարդարութիւնդ յայսմ աշխարհի․ և սակայն վասն այսր ուղղութեանն․ , ընդ հակառակն երկրաւոր իշխանաց՝ որոց միշտ գթալն պարսաւելի է․ 'ի սոյն միտս հայլին և յաջորդքն ։

(8) Հարկիս 'ի գիշերին․ 1․ օրին․ 'ի Խաւարարութիւնն ։

(9) Փոթոփ Դեղէլսյ ։ փութաս կամ հոգաս վասն թուլացելոյ ։

(10) Եւ գիրք ամ ։ Յայս յուսադրութեն հայլին, և քարոզէն ամենայն

գիրք աստուածաշունչք և օգտակարք, (Բ. Տիմ. Գ. 16.) որք վարդապետութե և օրինակօք գործոյն այս յաճախ պտուղս երկնաւորս ծնանին 'ի հաւատացեալս : Այսպէս ըստ օրինակի անդամալուծին ասեմ և
ինձ, ևն :

(11) Իսջ Բղաատաջելունս : այլ օրին. Ինչ Բղաատէջելունս :

(12) Զերիղադնտեայ : 2 օրին. զերիղադնտեալ : Խզեա հզօր հրամանագ զմեռելական պատուէն, որով և զազար պնդեալ էր, Դծախաշնեայ, գերեզմանական կապանացս : Զպատանս մեռեալ մարմնոյ կոչէ Ծահաղգեստ. զի է երբ յառնել զգեստ մեռելոց. և նովաւ կապեալ կաշկանդեալ անշարժ մնան 'ի գերեզմանի : Յայսմ իսկ երևեցաւ զօրութիւն ձայնին Քրիստոսի առ Ղազարոս, զի զայնպիսի կաշկանդեալն՝ զկապեալն և ոտօք, և ձեռօք, և ոտիւք՝ ած կացոյց արտաքս : Անդ առ Ղազարու՝ մերձակայից հրամայեաց Քս լուծանել քակել զհանդերձս պնդեալ պատանացն. բայց աստ արձակումն աստ՝ դու միայն զօրես՝ ո ամենակարող. և այնպէս լուծանել, զի զմահու արժանիս յերկնային վայելչապատապար ընդունիցիս՝ նման Ղազարու սեղանակից քեզ բազմեցելոց :

(13) Անդարձ հոգևորական զինուն : անկարող առնելով զիս 'ի պարսիլ կամ 'ի կիր առնուլ զհոգևոր զէնս աղօթից, պահոց, ողորմութեց,
իբրև զկին կարկամեալ որ չկարէր ամենևին 'ի վեր հայել :

(14) Զհայս առաջնորդն : զպարտաւորութի մեղաց բարձցես յինէն, որպէս զփայտ խաչին բարձեր յուսոյ սիմոնի կիւրենացւոյ՝ յեղանել քո 'ի գողգոթա. որովհետև, կանդնեցես, զհայելական յաղթանակ, զայն՝ որ պատշաճի յաղթութե առ զօրաբեն. վասն զի զպլոյց բեռն և զծանրութի բառնալոյն՝ յաղթել թշնամեացն՝ մեծի պրութե և քաջութե գործ է : Այսպէս սամփսոն զդրունս գաղացւոյն բառնալով, նշանակ քաջութե կանգնեաց 'ի գլուխ լերինն : (Դատաւ. ԺԶ. 3 :) Հին լուծ. մեկնէ, կառուցես ինձ զվայելուչ պսակն, որ արփադունից զօրութեցն է պատրաստեալ :

---

Մէջրոպին յաւելուած նորին հեծութե՛ նորին հոգւոյն, առ նոյն
աղէրս Մաղթանաց Բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

# ԲԱՆ. ԾԹ :

Տ. Հաւատամ և վկայեմ մօտաց գիտութե՝ 'ի քեն ազդեցեալ ոգւոյս իմաստիւ ուշիւս տեսման. զի ըղձալի են քեզ բարերար՝ [1] աղաչանք մեղաւորաց քան զխնդրուածս արդարոց : Օ՛ի մինն [2] զպարտութի անձինն յայտնեալ՝ շնորհիդ քո սպասէ. առ որ ծանուցեալ զընուեն չափ, և մեծ կշտամբիչ ասմէն համբարձեալ՝ [3] ինքնոգոր մարտակից նմին իսկ ինքեան, և դառն դսրովիչ և ծածկատես դատախազ : Իսկ միւսն՝ յարդիւնս բարեացն իւրոց նայելով, [4] յանձին հարեալ ձեռն վստահութե, մա-

ռանայ զսահման բնութեն, և պարգևաց՝ քան ողոր-
մութե դիտեալ ակնունի: Վասն որոյ [5] առ մինն՝ ան-
թիւ են ստեղծուածք ձառից, որ զողորմութեցդ-
քո փողով բարբառոյ ազդէ. իսկ առ միւսն՝ լռեալ
են քոյդ՝ անքնին ահաւոր և ամենախնամ. ամաչեմ
ասել, թէ և երկրաւորիս գործոց պատմութի զքոյդ-
յառաջեալ: Արդ՝ արի՛ տէր, և [6] մի՛ զօրասցի քան
զքոյդ՝ աջ հողեղինի. մի՛ կշռեսցին ողորմութիք քո՝
ընդ ջանից մարդկան:

Ե. Եւ արդ՝ առողջքն անդամօք՝ անկարօտք են
բժշկութե. և տեսանողականքն աչօք՝ չունին պէտս
առաջնորդի. և փարթամքն ընչիւք՝ ո՛չ դեգերին առ
դուրս լիոցն. և ամենայնիւ յղփացեալքն ո՛չ սպա-
սեն փշրանաց սեղանոյ հացի. և սբքն վարուք՝ [7] ա-
պէնիազ են ողորմութե. Եւ արդ՝ ինձ գթասցիս
ողորմել՝ բարձրեալդ երկնաւոր հզօր, ամենատխուր
վարանեցելոյս: Քանզի թէ էի իբրև զյոբ, ասէի
զանձն իմ իբրև զնա արդար և անարատ. թէ իբրև
զմովսէս, ասէի վստահութե. զնորայն, ծանիցէ տէր
զայնոսիկ՝ որ իւրն են. եթէ իբրև զդաւիթ, ասէի՝
արարի զիրաւունս և զարդարութի. և դարձեալ՝ [8]
զմեծն քան զբնութի մարմնոյ, զմեղս թէ տեսանէի
'ի սրտի իմում՝ մի՛ լուիցէ ինձ տէր: [9] Թէ էի իբրև
զեղիա, ասէի զանձն իմ այր այ. թէ էի իբրև զերե-
միա, [10] զքոյդ ճշմարտութի յանձն օրինակէի. թէ
էի իբրև զեզեկիա, պարծէի զբարւոքն և զիրաւա-
ցին՝ գնացի առաջի քո արդարութե. [11] Թէ և իբրև
զպօղոս, ասէի զիս բնակարան՝ ազդարան՝ և ընդու-
նարան այ բանին: Այլ ես անօրէնս 'ի մէջ գիտու-
թե օրինացն, ո՛չ միայն չունիմ զանձն իմ քեզ ըն-
ծայել յարգանօք բանից իբրև զնոսա, և զընաւին
չարս՝ որպէս զբարիսն զայնոսիկ առաջի քո յիշա-
տակել, այլ և ո՛չ [12] զամենուստ գոյից զբարեհռչա-
կեալ անունդ հզօր՝ ամբարշտեալս լեզուով գովել:
Իսկ դու առ ամենայն հնարս զօրաւոր՝ մատո՛ ինձ
ոգի փրկութե, աջ պաշտպանութե, ձեռն այցելու-
թե, հրաման բարութե, լոյս ողորմութե, բան նո-
րոգութե, պատճառ քաւութե, գաւազան կենաց
օգնութե: Զի դու ես յոյս ապաւինութե տէր յս

քն, օրհնեալ ընդ Հօր Հոգւովդ սրբով յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

(1) Աղաչանք մեղաւորաց: Առաւել ախորժելի են քեզ Տէր, կամ առաւել լսելի այն աղաչանք մեղաւորաց՝ զոր առնեն վասն Թողութեան մեղաց իւրեանց, կամ զոր յետ ապաշխարելոյն առնեն վասն այլոց պատշաճական բարեաց, քան զխնդրուածս արդարոց, որք վասն այլոց կամ վասն ինքեանց հայցեն բարիս, կամ որք յարդարութի իւրեանց վստահացեալ խնդրեն ինչ: Ցայս միտս իմանալի է բանս, և ոչ եթէ արժակարար և ընդհանրապէս՝ աղաչանք մեղաւորաց քան զարդարոց ընդունելի լինեն առ Ած. Ես առաւել ոչ իմանի 'ի վերայ աղաչանաց զոր 'ի մեղս գոլով առնէ մեղաւորն: Արդ՝ ըստ բացայայտեալ միտս առաւել հաճելի լինել Այ զմեղաւորացն աղաչանս հաւաստամ Տէր՝ և վկայեմ Ներքին գիտակցութբ, և ճանաչմամբ ոգւոյս 'ի քէն ողորմելոյ. կամ զի անձամբ զփորձ առեալ եմ՝ լսել Այ կողկողագին աղաչանաց իւրոց առաւել ևս փութով քան հայցուածոց այլոց ընտիր արանց. և կամ ազդեցեալ Տէր՝ 'ի բանս Սբ գրոց, և 'ի պէսպէս օրինակս Նախագրեալս: Քանզի այսպէս ըղձալի եղեն աղաչանք որդւոյն անառակի առ հայրն գթած քան զխնդրուածս երէց որդւոյն անմեղի: Քանանուհւոյն շնորհեաց Քս զբժշկութի դստերն՝ առաւել առ մօրն Թախանձանաց՝ քան 'ի բարեխօսելոյ աշակերտացն: Բորոտն ինքեան աղաչանօք ընկալաւ անդէն զսրբութին, ուր մինչև վասն բորոտելոյ քեռն Մարիամու՝ ոչ եղև լսելի: Աւազակն 'ի խաչին աղաչէր զյիշելն միայն յարքայութեն, և առ օրին ընկալաւ զբնակակցութի 'ի դրախտին ընդ Քսի. Իսկ Մովսէս պաղատէր տեսանել գէթ զաւետեացն երկիր, և զխնդրելին չընկալաւ: Առ այսպիսիս, ահա քեզ մեծի գթութե այլ ապացոյց առ մեղաւորս, զի կնոջն բազմամեղի առ ոտս իւր կողկողելոյ՝ ոչ լոկ զներումն անդէն և անդ ազդեաց Քս, այլ գովութբ զնա քան զվանատուրն մեծարեաց. Իսկ 'ի կանայ հարսանիսն՝ գինւոյն պակասելոյ աղաչաւոր լինէր մայրն, և սակայն Թուէր թէ 'ի լսել յապաղեցէ Քս: Այսմ տեղեակ գոլով Աչմարիս արդարքն առաջինք, յորժամ արագ ցանկային շարժել զգթութիւն Այ, կերպարան զմեղաւորի զանձամբ առնուին, մեղաք գոչելով, անօրինեցաք, յանցեաք. և թէ՝ ոչ առ արդարութեց մերոց արկանեմք գութ առաջի քո Տր: Ըստ այսոցիկ օրինակաց Տէր՝ ազդեալ 'ի ճանաչումն մեզ, թէ մեղաւորաց աղաչանք ըղձալիք ևս են առ Ած քան զարդարոց: Իսկ զպատճառս այսպիսի տնտեսութե այժմ հաստատեալ 'ի կարգիդ:

(2) Զարդարութիւն անձինն: Մեղաւորն 'ի վչջական բանս իւր՝ զպարծիլ կամ զյաղթիլ իւր 'ի դատաստանէն ոչ խոստովանեալ. կամ ըստ որում ածանցեալ 'ի պարտք բանէն, իմանի՝ զպարտաւորութի անձինն յայտնելով, միայն շնորհաց ողորմութե ակն ունի: առ որ ծանուցեալ, 'ի վերայ այսր, կամ բաց յայսմանէ ճանաչէ զչափ ակար և ապականեալ բնութեն, և սաստիկ յանդիմանօղ և ամբաստան լինի զանձնէ, Տն:

(3) Ինքնագոր: Ինքն ընդ ինքեան հակառակօղ. այսմ նման է և յաջորդն, Մարտնչիս ընդ ինքեան. այսինքն պատերազմօղ ընդ ինքեան, և 'ի սրտին դատախազ:

(4) Յանձին հարեալ քեան: Իսկ արդարն յարդարութիւն անձինն վստահացեալ, Մտանայ զանձն բնութէն, զսկարութիւն կամ զդիւրասահութիւն բնութենն. չյիշէ թէ յառաջագոյն 'ի մեղս ծնեալ էր, և միայն

շնորհօքն այ արդարացեալ , և նովին շնորհօք կացեալ յարդարութեն : դարձեայ՝ քան ողորմութէ , վարձուց՝ քան թէ ազատ շնորհատուութեան ակնունի : Զայսոսիկ եթէ զամբարտաւան և զանձնահաճ կամից խմացուք , յայտ է թէ այնպիսին ոչ ևս է արդար . և ոչ խնդրուածք այնպիսւոյն՝ են խնդրուածք արդարոյ , այլ անընդունելիք այ և մեղանչականք : Իսկ եթէ առանց ամբարտաւանութեան խմասցին այսոքիկ , իբրև թէ արդարն անխիղճ գոլով զանձնէ , և վստահացեալ յանմեղութիւն իւր , 'ի խնդրելն ինչ յայ՝ ոչ իբր մեղանչական ոք մատչի , այլ իբր բարեկամ և վստահաւոր առաջի այ , այս ոչ հակառակի արդարութեան . որպէս և եզեկիաս արքայ՝ զբժշկութի անձինն խնդրելով , յիշեցուցանէր առաջի այ զարդարագործութի իւր . ( դ . թագ . ի . 3 : ) Եւ յայս միտս առաւել հայի բաղդատութիւն սբյ վարդապետիս . զի ցաւագին աղաչանք մեղաւորաց առաւել յողորմ շարժեն զած , քան զպարծանական հայցուածս արդարոց . իբր զի յառաջնումն՝ պատճառ է միայն անհուն ողորմութեն այ . իսկ յերկրորդումն՝ չափաւոր բարեկամութեն արդարոյն ընդ մէջ մտանէ՝ իբր մերձաւոր պատճառ արդիւնաւորիչ :

(5) առ մնն անբխ էն : Առ մեղաւորն , կամ առ ընդունելութեն աղաչանաց մեղաւորին՝ անթիւ են յօրինուածք գովեստից՝ 'ի գիրս կամ 'ի բերան մարդկան , որք զքո ողորմութիւն ամենեցուն ծանուցանեն իբր փոխով : իսկ առ մնան , առ արդարն կամ առ ընդունելութիւն աղօթից արդարոյն , ըշէալ էն քոյդ , ոչ այնչափ քո ողորմութիւնդ քարոզի . այլ մանաւանդ ամաչիմ աէլ, բէ և էրկրաւորխ գործոց պատմութէ , երկրաւոր արդարոյն առաքինութեց պատմութիւն դժոյդ յառաջէալ , քան զքո ողորմութիւն առաւել հռչակի . Վասն զի այս է մարդկան սովորութի , յորժամ տեսանեն զխնդրուածս արդարոց կատարեալ , առաւել արժանեաց խնդրողին ընծայեն , քան զգթութեն տուողին այ . որպէս թէ ած յայնպիսի խնամս իւր՝ առաւել շարժի 'ի բարեկամութէ արդարոց , քան յիւրմէ գթութէն : Վասն այսորիկ ասէր ոզիա իշխանն ցյուդիթ . ( ը . 29 . ) * Աղաչեմ դու խնդրուածովք զած . զի կին արդար ես դու : || Ընդ այսպիսի սովորութիւն մարդկան դժուարեալ սբն պետրոս՝ ասաց առ ժողովուրդն . ( գործ . դ . 12 . ) * Արք իսրայէլացիք , զի՞ զարմացեալ էք 'ի վերայ այսորիկ , կամ ընդ մեզ զի՞ էք պշուցեալ , իբրու թէ անձին զօրութե ինչ , կամ քաջութե արարեալ իցէ գնալդ դմա || : Եւ թէպէտ ճշմարիտ է , զի ած բազում անգամ 'ի սիրոյ և 'ի բարեխօսութէ արդարոց շարժի գթալ 'ի մեզ , սակայն և այս՝ գործ գթութեն նորա է . զի ինքն իւրով ողորմութեն արար և պահէ զնոսա արդարս , և նովին ողորմութե կարգեաց զնոսա միջնորդս և բարեխօսս . այլև յընդունելն զբարեխօսութի նոցա՝ ողորմութե ընդունի , և ոչ բռնադատեալ իբր պարտական . վասն որոյ յամենայնի ներգործէ և զօրանայ գթութիւն այ՝ եթէ առ մեղաւորս , և եթէ առ արդարս . և այն է յամենայնի քարոզելի : Առ յամ 'ի դէպ ասէ մեծն վարդան 'ի մեկն . սաղմոսին , 'ի յառաջաբանին : * Թէպէտ թուին ոմանք խնդրօղք , և կէսք տուօղք , այլ մի Տէրն է՝ որ շարժէ զոմանս 'ի խնդիր , և զկէսս՝ 'ի տուր || :

(6) մի՛ զօրաւոր քան զքոյդ : Մի՛ երևեսցի զօրաւոր քան զքո ողորմութիւն առ հողեղէնն , արդարութի մարդոյն . և մի՛ հզօրագոյն ողորմութէ քո , մի՛ չափեսցին գործք ողորմութեն քո ըստ ձանից մարդկան , ընդ առաքինական վաստակոց արդարոց : Որպէս թէ ասէ . եթէ միայն զարդարոց խնդիրսն կատարեսցես վասն առաքինութեն նոցա , երևի՝ թէ ողորմութի քո ոչ է կարօղ ընդունելի առնել զաղաչանս մեղաւորաց . և եթէ որչափ արդար է ոք , այնչափ առնիցես նմա բարիս , կարծի՝ թէ ողորմութի քո ոչ է աւելի քան զբարութի մարդկան : Ապա զի մի՛ այսպէս կար-

ծիցի, առաւելապէս դթա յաղաչանս իմ քան 'ի հայցուածս ար-
դարոց ։

(7) Աշէնխաւէն ողորմու-է ։ Արդարքն իբր արդար՝ անկարօտք են քաւչական ողորմութեան, թէպէտ և պարգևական ողորմութեան միշտ կարօտ են. զի և 'ի պսակելն՝ ողորմութեամբ պսակէ Այ ։ Բայց իբրև մարդ սխալոտ՝ կարօտին նաև քաւչարար ողորմութեան. որպէս ասէ 'ի բանն Ճ. 3 ։ Եւ աստանօր խակ օրինակօքն ցուցանէ՝ իբրև զարդարոց խօսել. զի առողջքն մարմնով ասէ՝ դեղոյ ոչ կարօտին, և ակամնին ոչ խնդրէ առաջնորդ, և փարթամք ոչ 'ի մուրս շրջին. սոյնպէս արդարոց ոչ է հայցել ներումն ։

(8) Զ-ւծն ֆան ղԲն-ւԲՆ ։ Զքան սաղմ. կէ. 18. ասէ՝ մեծ կամ 'ի վեր լինել քան զընութեն մարմնոյ. քան զի եթէ այնպէս խմանայցեմք զասացեալն, թէ ոչ ճանաչէր կամ ոչ գտանէր 'ի սրտի իւրում զմեղս ինչ, աչա 'ի վեր է այս, և մանաւանդ ընդդէմ բնութեա, ուր ընդհակառակն նոքին արդարքն ասեն՝ ով պարծեսցի սիրտ ԿԲ ունել ։ Իսկ եթէ խմանայցեմք, թէ 'ի տեսանելն մեղս ինչ 'ի սրտի՝ կասկածէր թէ ոչ ևս լսիցէ նմա Այ, կամ թէ խնդրէր զի մի՛ ներիցէ նմա տէր, ըստ այսմ ևս 'ի վեր է բանդ քան զկարօտութեն բնութեա ։

(9) Թուէ էի Խերե ղէղխա ։ այլ օրէն. Բէ Ն Խերե. այսպէս է և 'ի հետևեալսն, Բէ Ն Խեր ղէրէԴա, Բէ Ն Խերե ղէղէկխա ։

(10) Զֆոյտ ծշմաբփաւԲՆ ։ Երեմիա բաղում իրօք եղև օրինակ քնի, զի յարդանդէ նուիրմամբն, կուսութեամբն, մարգարէութեամբ, քահանայութեամբ, առ հեթանոսս քարոզութեամբն, գուշակելով զկործանումն տաճարին և քաղաքին, և յետ կործանման լալովն, որպէս և քն գուշակեաց և եկաց. այլև վիշտս կրելովն յերուսաղէմ ժողովրդենէն վասն անաչառ քարոզութեան. յորոց 'ի գուբ ուղմոյ արկաւ իբրև 'ի գերեզման, ուստի և հանաւ, յօրինակ թաղման և յարութեան փրկչին ։

(11) Իխերե ղղօղա ։ Ասէր զանձնէ երանելին Պօղոս, թէ յիս լցէ Հոգի Այ, 'ՔԻ ինև խօսի կամ աղդէ ԱՆ ։ Արդ՝ եթէ և ես նման պօղոսի էի, կարէի սոյնպէս խօսել՝ ասէ ԴԲ վարդապետս ։ Այլ որ և ես ասեմ, եթէ յայդմ նման պօղոսի չխօսիս, 'ի միւսումն աչա՝ իբրև զնա կոչես զքեզ գլուխ մեղաւորաց ։

(12) Զաւենսաւփ գոյխզ ։ Ես անիրաւեալս և պարտաւոր ոչ միայն չկամիմ իբրև զարդարն զայնոսիկ համարձակիլ առաջի քո, և խօսել պարզերես, այլև ոչ զահաւոր անունդ՝ զոր համօրէն արարածք, ամենայն ուրեք և ամենայն օրինակաւ հռչակեն, մեծացուցանեն, իշխեմ առնուլ յանարժան բերան իմ ։ Եւ զինչ ասա. եթէ կամիս Տէր՝ զի զովեսցից զքեզ, համարձակեալ առաջի քո, պարգևեա ինձ հնարս փրկութեան, պաշտպանութեն ԱՆ ։

Սերտին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն ողբերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

# ԲԱՆ. Կ.

ա. Եւ արդ՝[1] որպէս զի ոչ վայել է օրհնաբանութիւն 'ի բերան մեղաւորի՝ 'ի Ճշմարիտն առակէ կանխաւ իսկ ուսայ, զիա՞րդ յաւելից կրկնել զնոյն գովութիւն աղաչաւորս բազմապատկաւ, որ համապազ ընդունիմ անէծս[2] 'ի սաղմոսիս բարեբաստութեան : Ո՜ ի՞բր երգեցից ինձ վտանգս, և արձանացուցից նախատինս. և 'ի մերկութեանս դրկի՝ փուշս ընդ շուշանաց ժողովեցից : Ո՜ իա՞րդ ընդ դաւթի համարձակեցայց ասել, թէ զատամունս մեղաւորաց փշրեսցես : Ո՜ իա՞րդ դարձեալ, թէ մի՛ անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց : Ո՜ իա՞րդ, թէ դա՛տ արա ինձ տէր[3] ըստ արդարութեան քո, ըստ անբծութեան իմոյ որ յիս : Ո՜ իա՞րդ, թէ կատարեսցին չարիք 'ի վերայ մեղաւորաց : Ո՜ իա՞րդ, թէ խորտակեսցին բազուկք մեղաւորի և չարի, և զայն որ զկնի : Ո՜ իա՞րդ, թէ տեղասցէ 'ի վերայ մեղաւորաց որոգայթ հուր և ծծումբ : Ո՜ իա՞րդ, թէ սատակէ տէր զշրթունս նենգաւորս՝ և զլեզուս մեծաբանս : Ո՜ իա՞րդ, թէ փորձեցեր զսիրտ իմ, և ո՛չ գտեր անիրաւութիւն : Ո՜ իա՞րդ զյաջորդն սմին, թէ ես պահեցի զճանապարհս խիստս : Ո՜ իա՞րդ զևսն, թէ ես արդարութեամբ երևեցայց երեսաց քոց : Ո՜ իա՞րդ, թէ և ես եղէց անբիծ ընդ նմա : Ո՜ իա՞րդ զմիւսն, թէ հատուսցէ ինձ տէր ըստ արդարութեան իմում, և ըստ սրբութեան ձեռաց իմոց : Ո՜ իա՞րդ անձամբ ինձէն զստութիւն իմ ծանակեցից՝ ասել ընդ սմին, թէ լուացայց սրբութեամբ զձեռս իմ : Ո՜ իա՞րդ 'ի մէջ նանրութեան զամբարշտացն աթոռս բամբասեցից : Ո՜ իա՞րդ զերջանկին պարծանս՝ թշուառացելումս կերպաւորեցից, թէ դա՛տ արա ինձ տէր՝ զի ես յանբծութեան իմում գնացի : Ո՜ իա՞րդ օտարս 'ի բարեաց՝ գիտողին դաղտնեաց արդահատեցից, թէ մի՛ համարիր

ընդ ամբարիշտս զանձն իմ։ Օ՜ խո՛րդ ես ինքն գովելով՝ զայլս անիծեցից, թէ տո՛ւր նոցա տէր զգործս նոցա. և 'ի կարգ բանիցն համարձակեցայց։

Ե. Քանզի թէ [4] զյետինս բանիցն՝ առաջնովքն աստանօր եդից, կրկին ծանրանան ինձ ցաւք, և յաճախեսցեն դառնութիք։ Բայց [5] 'ի շեղջեցելոցն արտասուաց՝ դոյզն մի չափեալ, բաւականացայց համապազորդեան յանդիմանութե՟ սաղմոսարանին ընտանի ձայնիւն, որ զպարտաւորեալս միշտ կշտամբէ. առ որս՝ և սպառուած քառասներորդի իններորդի հատուածի բանի յանդիմանողի՝ [6] զիս գարշեցուցեալ, համապազ խայտառակէ. խցեալ զբերանս 'ի փառաբանութէ, եղկելի զանձն իմ ցուցանէ. ա՟ծային ձայնիւն դատախազեալ, յակնկալուէ կենաց լքանէ, միանգամայն և [7] վիրգս մահու ինձ՝ իբր 'ի պատնշէ առաքէ։ Քանզի թէ չար է անէծս առնուլ յօտարէ, ապա [8] անձամբ զանձն անիծանել՝ կրկին չարաչար. իսկ եթէ չառնուլ նախատինք 'ի մերձաւորաց՝ օրէնք են, ապա [9] 'ի տեսողէն հայել զայսոսիկ, կրից արեան տաժանմունք, վիշտք աղէտից, և խէթք մնաց։ Բայց թէ առ խոնարհութե՟ անձին իւրում մատնեսցի, [10] ջնեալ և կշտամբեալ անիծիւք 'ի լեզուէ իւրմէ, 'ի խոստովանեալ և յամենիշխան շրթանց բերանոյ վերնոյն՝ օրհնեսցի. զի ճշգրտեալ թարգմանեաց զդարձն իւր առ նա՝ զհետս կենաց ո՛չ լքանելով. [11] սահմանաւն սիրոյ՝ զպարտեացն արմատ կրճատեաց, ո՛չ տիրեալ 'ի խարդաւանաց չարաբանողաց. ոչխար հօտին քրի գտաւ բժշկեալ՝ դիմելով 'ի յաղն բուժիչ [12] աղեացն արկածից։ Բայց ես անբանական բարոյից է՝ [13] ասուն կենդանեաց 'ի մէջ դալարոց ծաղկածին վայրից՝ կենաձիր բանից՝ թըմբրուե՟ մնաց 'ի յարօտս մահու ճարակել։

Զ. Եւ արդ՝ քանզի [14] իմ է առակս վերջին կշտամբողական, և առ իս ակնարկէ զդիպուածոցն չար պատահմունս. որ ինձէն անձին նիւթեցի միշտ զեղմունս կիզանողականս հրոյ տոչորման, հոսեալ 'ի յերկնուստ զգոյն դագաթանս իմաստնարանի բաղմակիս։ Քանզի զխո՛րդ 'ի յարդիւնս ինձ օգտից սաղման եկեսցէ, յորժամ անպտուղ 'ի բաղմերդու-

թէն լինիցիմ, ոչ նուազել հոգւով, ըստ թեղադրելոյն պօղոսի։ Ո խորհուրդ ընդ մարգարէին ես զտէրունին խառնեցից՝ մեծս մեղաւորաց՝ նկունս պխտանեաց. ասել ընդ սմին, թէ 'ի բայց կացէք յինէն ամենեքին՝ որ գործէք զանօրէնութի։ Ո խորհուրդ ոչ ունելով 'ի բազմացն պատուիրանաց կատարեալ՝ շնորհին և օրինին՝ բարբառեցայց զերջանկին, որ նախ ինքն արար՝ զոր մեզ կանոնեաց, թէ քանզի ծառայս քո պահեցի զայս. և որ զհետն գան ասացեալքն։ Ո խորհուրդ թափուրս 'ի լրութէ իմաստից կենաց՝ ընդ երկխուղածս տն օրհնեցից։ Ո խորհուրդ ընդ մեծին մաղթանաց զիմս յօդեցից, թէ զմին խնդրեցի 'ի տնէ՝ զտեսիլ վայելչութե նորա, և [15] զհրամանատրութի տաճարի նորա։ Ո խորհուրդ 'ի հրաժարելին ինձ ձեռնամխեցից, յորժամ լսեմ, թէ ուղղոց վայել է օրհնութի։ Ո խորհուրդ շրթամբք իմովք զանձն իմ անիծից՝ ասելով զկնի յոլովից առեալն, թէ երեսք տն 'ի վերայ չարագործաց՝ սատակել զյիշատակս նոցա յերկրէ. զխորհուրդ զմիւսն դարձեալ, թէ չարք վաղվաղակի սատակեսցին։ Ո խորհուրդ զկերպարանացն իմ նմանութի, թէ բազումք անբարշտաց խորտակեսցին։ Ո խորհուրդ սատակման ինձ պաղատեցայց, թէ ահա մեղաւորք կորիցեն։ Ո խորհուրդ զբազմայածեան լեզուս [16] 'ի յօրհնեալն բան մխեցից, թէ ասացի պահել զճանապարհս իմ, զի մի մեղայց լեզուաւ իմով։ Ո խորհուրդ փշովք մեղաց հեղձեալս՝ զանարատին պարծեցայց, թէ այլ զիս յանբծութե իմում ընկալար։ Ո խորհուրդ ես մեղաւոր և կրկին պատժաւոր՝ զհանգունակիցսն դսրովեցից ապրել'ինոցունց, թէ 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս ած.

Է. Ո խորհուրդ իբր ոչ կուապաշտեալ անպատկառապէս պերճացայց ունայն պանծանօք ասել ընդ դաւթի, միթէ մոռացեալ իցէ մեր զանուն այ, կամ ձգեալ զձեռս 'ի մաղթանս օտար աստուածոց. քանզի որ 'ի մեղս գարշութե խոնարհեսցի, առաջի կայ նորին կառուցեալ առեալ 'ի պաշտօն [17] յաւմնականացն ախտարծարծիցն պոռնկապատիր պատկերացն կերպարան՝ [18] աստարտայ և քամովսայ և [19] մեղքո-

մայ արուարձանի, և [20] թարահատայ թարմատարի, ընդ զազրոտեացն [21] կանացեաց՝ իշանդամիցն պատկառանք՝ անվերարկու ծանակութք։ Ի՞բր ոչ պատկառեցից սովիմբ ասել ընդ նահատակին, որ զայս [22] դիմագրաւութիւն առ բարին ունէր միշտ, թէ վասն քո մեռանիմք զօրհանապազ, և որ 'ի կարգին է սորին սաղմոս։ Ի՞բր յիմարս յարս և վատթարս՝ ասել ժպրհիմ, թէ բերան իմ պատմեսցէ զիմաստութի, և սիրտս զհանճար. իբր [23] մարդելոյզ կերպարանաւոր՝ զմարդահաճոյիցն ոսկերս ցրուել մաղթեցից։ Ի՞բր [24] զկրկին երկրորդեալսն մեծանունն բարութիս, թէ հաճոյ եղէց առաջի ա՛ն յերկրին կենդանեաց։ Օ՜ խա՛րդ ունօղս անբաւից մեղաց՝ զարդարոյն առեալ կարդացից, թէ ոչ մեղք իմ և ոչ յանցանք. առանց մեղաց ընթացայ, և ուղիղ եղէ։ Օ՜ խա՛րդ զիս ինքն մատնեցից կորստեան՝ յասելն զայս բան, թէ մի՛ ողորմիր գործողացն զանօրէնութի։ Օ՜ խա՛րդ, թէ որպէս հալի մոմ առաջի հրոյ, այնպէս և մեղաւորք յերեսաց ա՛յ։ Օ՜ խա՛րդ գրդեալս ապականացու փափկութե՛՝ սահմանեցից զաննմանն ինձ բան, թէ խոնարհեցուցի պահօք զանձն իմ, և զազգակիցս նորին ընդ նոյն, թէ ես 'ի նեղել նոցա՝ քուրձ զգենուի, և իբրև զսգաւոր և զտրտում խոնարհ առնէի։ Որպէս հանդարտեցից [25] զնմանեացն իմ պատիժ միշտ յիշատակել, թէ սակայն մրուր բարկութե՛ն ա՛յ ոչ սպառեսցի, և արբցեն 'ի նմանէ ամենայն մեղաւորք երկրի. իբրև զևսն առ սմին, թէ զա՛մ եղջիւրս մեղաւորաց փշրեսցես։ Օ՜ խա՛րդ զապերախտութին յակոբայ [26] 'ի ճառ առեալ հենդնեցից, որ ընդ ստուերին զճշմարտութին ընկալեալ, մուացայ ընդ նոսին՝ նոցին թերութե՛ զերախտիսն քո՛ի ա՛ծայնովքն արուեստիւք խաչին փրկանօք, քան նոքա զզօրավարութին մովսէսի՝ ցպոյն սքանչելեօք, որ զօրինակն նկարագրէր տէրունական տնտեսութե՛ն։ Օ՜ խա՛րդ զյարուցելոյն 'ի վերայ՝ դիւաց զաղէտս ցուցից, իբր նոքա զօտարացեղից խուժադուժ ազգացն՝ ասելով, թէ արկին զդիակունս բարեացն որ 'ի մեզ՝ կուր ճնասակարացն թռչնոց, այս է՝ այսոցն օդայնոց. [27] որպէս զանկեալ զսերմն բանին 'ի

ճանապարհին, և զմիաբանեալ զկամս ընդ չարին՝ որ անուանեցից. Երբև զնմանակիցն առ 'ի նոյն շաւիղ չարին պատերազմի՝ դուպար գաղտնամարտ մտացս օգտելոց, զոր ես զօրացուցի՝ գործակցեալ հնարից բանսարկուին։ Նա ոչ ունիմ աղերսել, թէ մի լուեր և մի դադարեր՝ ա՜ծ. և խորհեցայ [28] 'ի վերայ ս͞բց քոց և ասացին, զոր 'ի կարգէ սաղմոսիս է աղօթել։ Քանզի [29] յոյժ պատեհագոյն է առնուլ զայսոսիկ 'ի վերայ բռնութե՜ մոլեկան դիւաց միշտ ճակատելոց՝ առ ներկայիս խռովութի, և ընդ նոսին՝ նոցին մշակաց։

Ե. Յորոց դու տէր ք͞ս՝ որդի բարձրեալ մեծիդ ա͞յ՝ պահեսցես և ամրացուսցես, երկնային զօրուդ շրջափակութե՜՝ յամենայն ընթացից խաբողին հողմոց խաչիւդ լուսոյ զմեզ պաշտպանեալ. որ զի՝ թէ և գտցին յիս անօրէնութի՜ք բազմօրինակք, այլ ոչ հայհոյութիք։ Որ ոչ համդեար 'ի կորուստ նմանեացն իմոց ամբարշտելոց, այլ [30] ամենազօրով թախանձմամբ ընդ եղծման ջրողողն զաղրագործաց՝ կրկին վշտացար, տաղտկալի զմահու նոցա դիպուածն քեզ գրեցեր, ասելով զզարմանալիսն լռողաց բան, ածեալ զմտաւ ոչ ևս յաւելից անիծանել զերկիր վասն գործոց մարդկան։ Նա մխիթարիս մեծ իմն պարարեալ ընդ կեանս անմաքրից և պարտաւորաց սատակման. որ երբեմն առակաւ դդմենւոյն՝ զանխայեն 'ի կործանելիսն ցուցեր՝ ողորմած. և [31] առ այլ ումեմն նեղեցար սաստիկ վտանգեալ, ընդ յամրանալ անձրևին առ ուրացողացն դարման։ Անճառելիս ցուցեր [32] բարութե՜ տեսակս յիշատակաց տօնելիս՝ 'ի վերջին աւուրս. քև 'ի ձեռն առաքելոցն քոց՝ ողջոյն հասարակաց անհամբուրիցն հեռաւորաց քաղցրաճաշակս հրամայեցեր։ Նա և յիս ցօղեա կենդանի զհայրենի գթութեցդ զսէր, զի և ես փրկեցայց քաւեալ ամենառատ քո այցելութե՜դ։ Նա քեզ ընդ հօր՝ հոգւովդ ս͞բով փառք՝ յաւիտեանս. ամէն։

---

(1) Որդէս նի ու հայէլ է։ Ջնջուած աղօթիցս առնու 'ի կատարածէ անցելոյն, յորում ասաց՝ ոչ իշխել 'ի գովութի անուան Ա͞յ անմաքուր բերանով։ Որովհետև ասէ՝ ոչ վայել է օրհնութի 'ի բերան մե-

ղաւորին՝ ուստ 'ի ճշմարիտն առակէ : ոմանց թուեցաւ բան ( սաղմոս . խթ , 16 .) * Սակայն մեղաւորին ասէ Ած , իսկ դու ընդէ՞ր ճառես պատմես զարդարութիւնս իմ : || Սակայն զայս 'ի համար 2 . դնէ ո՛ր վարդապետս իւրև այլ բան յասելն՝ թէ ապաւուած խթ սաղմոսին խնու զբերանս 'ի փառաբանութէ . ուստի աստանօր յիշեալն է բան սիրաքայ . ( ԺԵ . 9 .) * Ո՛չ է գեղեցիկ օրհնութի 'ի բերան մեղաւորի . զի ոչ 'ի Տնէ առաքեցաւ : ||

(2) 'Ի սաղմոսս բարեբանութէ : 'Ի սաղմոսերգութեան՝ որ զբարիս մաղթէ և շնորհէ , ես անէծս ընդունիմ :

(3) Ըստ արդարութէ քո : է ( սաղմ . Ճ . 9 .) բայց անդ դնի , ըստ արդարութէ իմոյ, համեմատ այլոց թարգմանուէց , միայն եթովպացւոցն դնէ , ըստ արդարութէ քոյ :

(4) Զայրացեալ բանիւք . զկեանին տունս իմ սաղմոսին , առաջնոյն , առաջին տամբքն : Զիա՞րդ համարձակեցայց ասել՝ վճարել զկարգ այնր սաղմոսին . վասն զի եթէ զկեանին և զառաջին տունս նորա յիշեցից , յորս սաղմոսերգուն երգէ զայս իւր առ Ած , և զբաւութի՝ որով օրհնութէ արժանի լինի , և 'ի միջին տունսն դնէ զանէծս ամբարշտաց , ես տեսանելով զիս անիծից արժանի՝ և ոչ օրհնութեն , այսու էլէին ծանրանան ինձ չարք :

(5) 'Ի շեղջեալսն արթնութեան : 'Ի բազում կուտակեալ պատուասելի բանից սաղմոսին , զանկասս աստ յիշատակեալ , շատ լիցի ինձ համապարփակեալն յանդիմանութի բովանդակ սաղմոսին , զոր յամ առեալ իբրև ընթանի յայն , իբրև սովորական աղօթս կատարեմ :

(6) Զիս գարշելիասեալ . կատարածն խթ սաղմոսին զիս գարշելի կամ ատելի ցուցեալ , կամ զիս վշտացնեալ :

(7) Վիրգս մահու : քարինս մահացուցիչս 'ի վերայ իմ արձակէ :

(8) Անյամբ զանձն անիծանել: Ծանուցելն զանձն անիծից արժանի , և անիծանել զինքն՝ յոյժ դառն է , քան թէ յանիրաւի անէծս յայլմէ ընդունել :

(9) 'Ի փեառղէն հայել . յԱյ՝ որ զամ տեսանէ , ակնունել նախատանաց՝ արեան ցուլոց արժանի է :

(10) Քնեալ : հարուածեալ , դանեալ . յօրինակս լինչ , Քնքեալ :

(11) Սահմանեան սերոյ : չափով կամ վճարմամբ սիրոյն զպարտն լրով հատոյց . որպէս զմեղաւոր կնոջէն ասաց քս . ( ղուկ . Է . 47 :) ոչ ակրեալ 'ի նենգութէ չարախօսացն դիւաց . որպէս այն կինն ոչ ակնածեաց 'ի չարաբանութենէ փարիսեցւոցն :

(12) Ալեացն արկածից : ախտից կամ հիւանդութե ալեացն , կամ չնառակաց ներկերոցն յաղիս անդր ժողովելոց : Մեղաւորն իբրև ախտացեալ ոչխար Քրի՝ ապաշխարութբ դնէ յայն հօտեար , որով և բժշկի 'ի բաց մերժելով չնառակար ախտից հօտացն :

(13) Արուսն քէնտանեաց 'ի մէջ տաւարոց : 2 օրին . անասուն քէնտանեաց 'ի մէջ տաւարոյ : Առաջինն յարմար եւ է , և խմանի ասել . առաւել անբան բարուց գործ է՝ յորում առուն կամ բանաւոր կենդանիք 'ի մէջ դալարի վայրից Ածային բանիցն՝ անմտութբ զմահաբեր խոտս ճաշակեն . զի և անասունք խորշին յայնպիսեաց , և զօգտակարսն ճարակեն :

(14) Իմէ առակս : Առակդ՝ կամ օրինակդ , զոր 'ի վերջոյ եդի , այսինքն 'ի մէջ կենսաբեր բանից զմահաբերն ճաշակել , ինձ յարմարի . քանզի 'ի հոգենորոգ բանից սաղմոսերգութեն՝ միայն զանիծից և զպատուհասից բանսն գտանեմ ինձ յարմարեալ . և անմտութբ անշահ մնամ յօգտակար բանիցն՝ որ 'ի նմա . վասն այսորիկ այն պատժողական բանքն լինին ինձ իբր կծողական զեղմունք հրոյ , հոռեալ 'ի յերկնաւոր , յերկնային

բանից սաղմոսին , ւգոյի գագաւնա , զկաղմութի գաղաթանս , կամ զգլխովս , որ է բազմաց իմաստութե վասն խելապատակին ։ Վասն զի որպէս 'ի յարդինա ինչ օգոից , օգուտ ինձ գործեսցէ սաղմոսն , յորժամ յաճախ երգելով զայն՝ տակաւին անպատաղ մնամ ։

(15) Զհրամանատրութե ։ այլ օրին . ւհրամանատարութե ։

(16) 'Ի յօրհնեանն բան . . . . ւճանապարհս իմ ։ այլ օրինակ . 'ի յօրհնեանս բան . . . . ւճանապարհս քո ։

(17) Յաւանխանոյն ։ Զայս բառ այսպէս գրեն օրինակք . մեր ընտիր օրինակն նախ գրեալ յաւանխանոյն , յետոյ զգլուխ նունն քերեալ առնէ՝ յաւաախանոյն . և այլ օրինակ դնէ յաւաախանոյն , և այլք յաւանխանոյն , որ և եդաւ յառաջին տպագիրս , իբրև ելեալ 'ի բառէն յաւնք , կամ յօնք . ( այսինքն ընքմն . ) և նշանակել ամբարտաւան աչօք , կամ ակնարկութ գրգռօղ 'ի չարիս ։ Սակայն այժմ քննեալ , հարազատ թուեցաւ յաւանախանոյն դնել , որ եկանէ 'ի բայէն յաւանալ , այսինքն տափել , որպէս մեկնի 'ի հին ժողոված բառից . զի այսպէս դնէ և օրինակն հին լուծմանց , և մեկնէ՝ տրխողաց , առեալ վկայութի 'ի գրոց փիլոնի , թէ երևտաարդք 'ի բուզս յաւանութին ։

(18) Աշտարակայ և դամռնայ ։ զայսպանէ տես 'ի բանն խը . լծ . 23 . 24 ։

(19) Մեղքամայ արուարքանի ։ մեղքամ , որ և մողոք , էր չաստուած ամմանացւոց . զորոյ առնն չլինեալ սողոմոն . ( գ . թագ . ժա . 7 ։ ) Իսկ արուարքանի , ըստ ոմանց նշանակէ յարուակալն արձան ձևացեալ , կամ առն մարդոյ կերպարանաւ ։ Եւ առ 'ի բազմաց , թէ արձան նորա պարեալ էր 'ի պղնձոյ , և հանգուցեալ յաթոռ պղնձի . ըստ որով հուր լուցանէին , և զմանկունս 'ի գիրկս նորա եդեալ այրէին առ 'ի զոհ ։ Յայսմանէ կասկածեմ , թէ այս բառ թերևս գրելի իցէ , արուարքանի , այսինքն յարոյրէ , կամ 'ի փայլուն պղնձոյ կազմեալ արձան ։

(20) Թարահատայ Բարմաքարի ։ այսինքն մնոււոյ , ոչնչի ։ Իսկ թէ զինչ իմանի թարահատ , հին լուծմունքն ասէ անորոշաբար՝ այնպիսի կուռք լինել , որպէս քամոշայն ։ Այլք 'ի սոուգաբանութի բառին հայեցեալ , ասացին լինել կուռս ինչ չինեալ 'ի թարայէ՝ 'ի հօրէն աբրահամու ։ Այսպէքն գիտեմք 'ի գրոց՝ թարայի պաշտեալ զկուռս . ( յեսու . իդ . 2 . ) և վարդապետք առեալ յեբրայական աւանդութեց՝ ասեն զթարա գործօղ կռոց . որպէս գրէ ոսկեբ . ( ճառ . ե . յաղագս ապաշխարութե . ) և եպիփան յայսնագոյն ևս ասէ , թէ թարա եգիտ զտորութի արձանաց , և զկռեալս 'ի հրահալելեաց , 'ի քարէ , և 'ի փայտէ . ըստ որս և մերոյս Եղնիկայ ասէն . * Եւ կռոց դրօշելոյ հանգամանք առ թարայիւ հարբ արրահամու ։ ‖ Եւ յայսմանէ , յունվար . դ . առն՝ 'ի խառան առն կռոց չինեալ թարայի , ևն ։ Սակայն այս ոչ բաւական թուի 'ի բացատրութի այսր տեղւոյ . զի աստ Թարահատայ զմանաւոր կուռս ինչ իմանայ ոք վարդապետն . և ոչ գտանեմք ուրեք զայնպիսի կուռս կոչեցեալ յանուն թարայի ։ Գտանեմք 'ի գիրս խորենացւոյն ( բ . 26 . ) զկուռս ինչ անուանեալ Բարշաբայ ։ Այլ թէ այս իցէ յիշեցեալն աստ վարդապետիս , և կամ այլ կուռք , հաւաստի ասել ոչ ունիմք ։ Թող զոր վարդան վարդապետ ասէ 'ի մեկն . զեա . թէ մեղքամ է թարահատայ ասացեալն ։ Քանզի աստ ուրոյն յիշի մեղքամ , և ուրոյն՝ թարահատ ։

(21) Կանապէտա ։ այլ օրին՝ . կանանչէտա ։ ըստ դարշելի կռոցն կանացի ձևով կազմելոց , որք են աստարտէս և քամոշ , եդեալ կան և ծշանդամին պարփակեալք , արուակին կուռքն մեղքամ և թարահատ , որոց անօթոյ մարմինքն իշոյ նման կազմեալ էին՝ մերկանդամ և առանց ծածկութի . այս է՝ անզգամաբան ծանակոտէ ։ Հին լուծ . զբասն ծշանդամ և

մանայ 'ի վերայ կանացն անդամոյն : Բայց անյարմար է . զի եզեկիել . ին . 20 . զայս բան 'ի վերայ արուաց ասէ . և առաւել ևս նախ յիշէն կանացն կուռքն, և ապա դնի ի յիշատակ վասն առնացն կռոցն : Արդ՝ միտք բոլոր բանին է, թէ որ 'ի մարմնական մեղս աղտեղելս յօժարի, այնպէս է՝ որպէս թէ պաշտիցէ զխառնածարծ կուռս հեթանոսաց, յորս ոմանք կանացն կերպարանաւ կազմեալ էին, և ոմանք առնացն . ուստի որ 'ի կանայս աղտեղանայ, զկանացն կուռս պաշտէ . իսկ որ յարուս անամօթանայ, զարուական կուռս պաշտէ :

(22) Դիւրագրաւութեան առ բարին : զյօժարութիւն կամ զփոյթ առ բարին :

(23) Մարդկային կերպարանաւոր : որ արտաքին կերպարանօք ձևանալով որպէս զմարդիկ :

(24) Զկրկին երկրորդեալն, երկիցս ասացեալ մեծամեծ բարութեանն : Այսու կամ զյաջորդ բանն խնանայ * Հաճոյ եղէց առաջի տն, || ևն . որ երկիցս դնի 'ի սաղմոսի . այսինքն ծե . 13 . և ճժդ . 9 : և կամ զասացեալն 'ի սաղմ . կզ . 13 . * Հաւատացի տեսանել զբարութիւն տն յերկրին կենդանեաց . || ուր և համար 4 . երկիցս հայցէ . * Զմի խնդրեցի 'ի տնէ, և զայն աղաչեմ, բնակել ինձ 'ի տան տն զամենայն աւուրս կենաց իմոց : ||

(25) Զննանեւոյն եմ : յայլ օրին . չեմք եմ :

(26) 'Ի ձեռն առեալ հնագունեցից : Որպէս զապերախտութիւն հրէից 'ի բերան առեալ ծաղր արարից, եա՝ որ ընդ նորոյ օրէնքն . ընդ հին օրինաց ունելով և զճշմարտութիւն նորոյս, մուացայ ընդ հրէիցն նոյին Բերոյեն, թէ նոցա յանցանացն՝ զերախտիս քի՝ որ 'ի ձեռն մեծահրաշ փրկանաց խաչին, քան թէ հրէայք զատաջնորդութիւն մովսեսի՝ որ 'ի ձեռն հրաշալի գաւազանին, որ օրինակն էր միայն քի անուանութեան :

(27) Որպէս զանկեալ : զխորդ զսերմն բանին՝ որ անկաւ 'ի ճանապարհի մուացութե, և զկամս իմ՝ որ եղև ճանապարհ դիւին միաբանելով ընդ նմա, ընդ անօրէնեցից : Այսպէս հարցական խմանալի է բանս, և ոչ ստորասական, որպէս եդեալ էր յայլ օրինակս . նոյնպէս և յաջորդն . Երբեմն զննանկին առ 'ի նոյն շահից . այսինքն որպէս զհետևօղն 'ի նոյն գործ պատերազմին սատանայի՝ ընդ անօրէնեցից, որ զօրութի խմանի : Իսկ ասացեալ նմանակիցն՝ է գողով գողանամբք մտօք . թբ գաղանի պատերազմօղ զօրքն սատանայի մտաց, որք են խորհուրդք և խղճք մտափառութե, նախանձու, ագահութե, ևն . որ խրև թշնամի զօրք խոցոտեն և սպանանեն զսերմն հոգևոր, գործակից լինելով նենգութեց սատանայի :

(28) 'Ի վերայ անց գոյ : ( սաղմ . ձը . 4 . ) այսու ընդ բանիւ այլաբանէ կամ զսերմն ածոյին բանին, և կամ զխեր միտս և զկամս . զոր ես ասէ՝ 'ի ճանապարհ մեղաց արկանելով, և ընդ կամս սատանայի միաբանելով, զխորդ նբ անուանիցեմ, և գանդատիցիմ զդիւաց, թէ խորհեցան 'ի վերայ սէց քոց, ևն :

(29) Յոյժ պատեհագոյն : թէպէտ և վերագրեալ սաղմոսն ձը . բստ ճաւլին խմանի զպատերազմէ այլազգեաց ընդդէմ խարայէլի, սակայն բստ մտացն՝ յոյժ յարմար է ասէ՝ խմանալ 'ի վերայ բռնութե դիւաց, որք միշտ պատրաստեալ են առ ներքնայի խռովութի, ոչ 'ի հակառակութի այժմու ժամանակիս, այլ և խմանալ 'ի վերայ նոյին մշակաց, չարաց մարդկան, և ապստամբ մտաց և կամաց մերոց, որ գործակից լինին և մշակք դիւաց :

(30) Անագորով թախանձմամբ : Յոյժ գոռոզի թախծութբ կամ արտամութբ 'ի վերայ կորստեան Չորողն ղուղարգործոյ, Չրհեղեղաւ հեղձա-

ցեալ չարագործայն : Տրտմութիւն նմանութ ասի զայն , եթէ զի տկարեաց պատժէ զմարդ : Այսպէս Փիլիպպեցիս Դ. ԺԱ , խմանի՝ մեծապէս զուարճանաս է կեալն անմեղքից ապաշխարութ , և որոց արժանի են մահու . որոտ օրինակաւ դդմենւոյն ցուցաւ առ յովնան : Իսկ ասելն՝ երկին Հայրցոր , ի երկիցս անգամ , խմանի միանգամ յասելն : " Արքայացս զի արարի զմարդն || . (ծննդ. Զ. 6.) և երկրորդ անգամ յետ ջրհեղեղին , ոչ ևս ածից ջրհեղեղ ( Ը. 21 : ) Կամ , երկին խմանի կրկնապատիկ , այսինքն առաւել վշտացար 'ի ջնջելն զանօրինեալսն՝ քան եթէ չէիր պատժեալ : Եւ արդարև ղզարմանալին բարեաց կոչէ զբանն , Ածեալ ղփառ ոչ ևս անիծանել ԱՆ : Զխորդ որ ամենասուրբ Նախահայրեաց բնութիւն է՝ արջանայցէ , ապաշաւիցէ , կամ Նորոգ ինչ ածիցէ զմտաւ , որպէս թէ յառաջն խորհեալ չէր , և կամ յայլմէ ուսեալ փղձեալ գործեալ իցէ վրիպակս . և այն զի թէ համայնաջինջ բարձաւ ծնունդ մարդկան , պակասեաց արդեօք ԱՅ ինչ մի 'ի փառացն և 'ի մեծութենէն : Կամ , զինչ պէտք՝ առ մարդ զիւր արդարութիւն յայտնել , եթէ այն թէ տխրութեա առ 'ի նմանէ լսել ունիցի : Արդարև մի բան է ասացեալդ , բայց զորմանալիս յորժամ յինքեան ունի անբարեալ , որ վասն 'ի դէպ իսկ բազմաւորական եղաւ դղորմութեան առ եղականն բան : Եւ զարմանալի բարեաց ասէ , քանզի անդէն 'ի լսելն բարբառ այդպիսի 'ի բերանոյ ԱՅ զորմացումն բնաւորեցաւ զոլ , թող թէ առ մասուր քննիչս , որոց թէ և հաւանելի է ասել՝ թէ մարդկօրէն ձևանայ ԱԾ առ 'ի ցուցանելոյ զիւրն գթութիւն , բայց լաւ անօսր տեսութեան՝ բողոք իմն համարեն զայս ողորմութեան ԱՅ առ իւրն արդարութիւն :

(31) Ա— այլ ——վէճ , առ եղխայն՝ որ զերիս ամս արգել զանձրև , վրէժացար վասն կորի յամելոյն 'ի խնդրել զանձրև . և հրամայեցեր երթալ և երևել աքաաբու , և աղօթել՝ զի եկիցէ անձրև առ ——— տարմա , 'ի դարման և 'ի պէտս պաշտօնեայն զկուռս : (Գ. Թագ. ԺԸ. 1:)

(32) Բ——ԲԷ ——— : 'Ի վերջին աւուրս մարդանալոյ քո՝ ցուցեր անճառելի ազգս ազգս գթութեան 'ի բժշկել զցաւագարս , 'ի կերակրել զսովեալս , 'ի կենդանացուցանել զմեռեալս , յարուցանել զմեղաւորս ԵՆ . զորս և ամենայն յիշատակել արժան է և բարեհաւանել : ——— 'Ի ——— ———— : Տարակուսելի է՝ թէ այս բանք յանցեալն իցեն յարելիք , թէ ընդ յաջորդն . զի գրչագիր օրինակք անմիաբան գտնեն զկէտն . և մի ընտիր օրինակ առանց կէտի թողու անորոշ : Ընդ անցելոյն խմանի . բազում տեսակս գթութեան ցուցեր քո , քով անձամբդ , այլև առաքելովքն առ մերձաւոր ժողովուրդս . իսկ առ հեռաւորսն անարժանս՝ հրամայեցեր տանել ողջոյն խաղաղութեան : Կամ , ——— ընթեռնուլ ընդ անցելոյն , այսինքն քո անձամբ ցուցեր . իսկ 'Ի ——— ———— յարեսցի ընդ յաջորդն , այսինքն հրամայեցեր տալ ողջոյն 'ի ձեռն առաքելոյն : Սակայն լաւ երկուց ևս ընթերցման կրկնելի է ― շաղկապն , որ զանց լեալ է ասել յառաջելոյ ——— լի . և խմանալի է , քո և 'ի ձեռն առաքելոյ : Արդ՝ եթէ այսքան գթասիրեցեր նաև առ անարժան հեռաւորս , միթէ զանայցես ցոյել նաև առ իս զհայրական գթութեդ զքեր , որ ——— ես եթէ 'ի փառս , և եթէ յողորմել . ոչ կարօտիս միջնորդաւ առաքելոյն յայց ելանել ինձ . այլ քո բանդ արտաքսեա ևս է առ իս քան զնոյս ոտիցն ընթացս :

Մէրադէն յաւելուած կրկին հեծութե՝ նորին հօնողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ԲԱ՛Ն. ԿԱ:

ա. Եւ ընդէ՞ր է ինձ[1] բնաւն որ 'ի սաղմոսին այնպիսեաց բանիցն՝ 'ի կիր արկանել. որ 'ի նախատինս՝ միանգամայն և 'ի նշաւակ ինձ յարակային, հանապազ երգել իմոյս տաղօք: Քանզի զիա՞րդ արդեօք զշուք երջանկին ինձ դատապարտելոյս նմանեցուցից՝ ասելով ընդ նմին, թէ ոչ մերձեցաւ առ իս թիւրեալն սրտիւ: Զիա՞րդ[2] զկարգադրութիս տանցն՝ 'ի յայսմանէ զկնի թուելոյն զարհուրեցուցչաց՝ ընդակից կայից կանոնաց օրինաւորին՝ զինուորին և թագաւորին, և մարմնական հրամանատուին, որք և երկնայնոյն են համբուրելիք՝ ասելով, ոչ յուսահատ եղէց 'ի կենաց պատմօղս աւետեացս և նորոյս աշակերտ՝ անմասն յամենուատ բարեկարգութէց: Զիա՞րդ ըստ իրաւախորհ արդարոյն, ընդդէմ մեղաւորացն՝[3] մահու զինեցայց առակաւ առաւօտին 'ի սկիզբն արթնութեն միշտ պատրաստական լինելոյ, որ և ոչ զանգամ մարմնոյս գանեալ խրատեցի. զիա՞րդ մասնակցեալ մեծին արուեն սատակեցից 'ի քաղաքի տն զանօրինեալսն, որ և ոչ զբռուսեալ բիծս հոգւոյս իմոյ մեռուցի: Զիա՞րդ ստեցից գրողին չէ՛ յայտնելոյն, թէ զմոխիր որպէս հաց կերայ. զիա՞րդ, որ ոչ միացուցի յիմոցս կրից կաթիլ մի պղտոր՝ ընդ յստակ արտօսր աղբերց երգողին՝ ասեմ ընդ նմին, թէ զըմպելիս իմ արտասուօք խառնեցի. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի: Զո՞րս[4] ինձ գրեցից մեղօք մահացեալս, յորժամ սիրօղն այ 'ի բոլոր սրտէ՝ զյանցմունս նախնեացն իւր վարկանիցի, թէ մեղաք մեք ընդ հարս մեր՝ անօրինեցաք և յանցեաք, և որ 'ի վախճանն յանդի սաղմոս՝ իրաւամբք առ իս, քան առ իւրայն: Որո՞վք[5] յարգեցայց դասիլ ընդ բարիսն, յորժամ մարդկային հնա-

րից այս դեղ պատուեցաւ՝ որ ոչ յիս գտաւ, 'ի գարշութեան կերակրոց 'ի մահ սովեցեալք՝ և յաճախութեան ճգանց 'ի հոգւոց նուաղեալք, ըստ խոտորութեան ինքնօրէն կրօնից՝ հրէից և հեթանոսաց: Ո՜վ խորհուրդ արդարութեան իմ մնայ յաւիտեանս, զոր ոչ ընաւ իսկ կատարեցի:

Է. Եւ զի մի տաղտկացայց յամեալ 'ի բանս, համառօտել զսոյն փութացայց: Ո՞ր ինչ ունիմ ասել 'ի տեղի բանիցն՝ զոր աստուածաշունչ ձայնն նուագեաց [6] օրհներգոյն դաւթի, թէ բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ. զխորհուրդ ընդ սմին զմեծն քան զայս, թէ յամենայն ճանապարհէ չարեաց արգելի զոտս իմ. Երբ ընդ եղեալս և զայն մատուցից, թէ 'ի սրտի իմում թաքուցի զբանս քո՝ որպէս զի մի մեղայց քեզ: Որպէս [7] զունայնութեանցս իբր զլրութեանց ճառեցից ընդ պարս մաքրոց, թէ 'ի պատուիրանաց քոց իմացեալ, [8] ատեցի զամենայն ճանապարհս չարաց: Ո՜վ խորհուրդ [9] զհեզոյն ճշմարտութիւն իմում ստութեան մշտնջենական երդմնահարութիւն կարգեցից՝ ուխտեալ ընդ հաւատարմին, երդուայ զոր հաստատեցի պահել՝ զդատաստանս արդարութեան քոյ: Ո՜վ խորհուրդ ինձ հրեշտակ մահագոյժ [10] անհրաժեշտ վճռի՝ զբանին պատգամ կրկնեցից, թէ հեռի է 'ի մեղաւորաց փրկութիւն: Ո՜վ խորհուրդ չարս իսկապէս՝ զբարեացն գրեցից՝ որք 'ի տեառնէ առնուն զնոյն հատուցումն՝ զայս տուն յեղյեղել, թէ բարի առնէ տէր ուղղոց սրտից: Ո՜վ խորհուրդ [11] զհամառօտն փոխատրութիւն անաչառութեան՝ վրիպեցելոյս ինձ սահմանեցից, թէ զթիւրեալսն յափշտակութեամբ տանի ընդ այնոսիկ, որ գործեն զանօրէնութիւն: Ո՜վ խորհուրդ զաստուածազգեստին պանծանս՝ ամաչեցելոյս ինձ պատուաստեցից՝ ասել զնորայսն, թէ տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ, և ոչ զբօսան աչք իմ, և որ յետ սորին պատմին ասացեալքն: Ո՜վ խորհուրդ [12] զանճառն քան զմարմին բան՝ 'ի ցոյցս առից քաջալերութեան վհատելոց, ես զանձն գեհենին՝ ասել ընդ օծեալն Աստուծոյ հոգւոյն, թէ յառաջագոյն տեսեր, զի ոչ գոյ նենգութիւն 'ի լեզուի իմում, [13] 'ի սկզբնաւորն նախաձայնեալ սաղմոսին՝ մինչև 'ի լրումն աւարտման բանիս: Ո՜վ խորհուրդ

դասակցութե՟ դժնէից մարդոց համաբան՝ այլս մա-
հու և որդիս սատակման բարբառիմ զբարեհնոր-
հին, ո՛չ ահա զատելիս քո՝ տէր ատեցի. և զթ̃նա-
ցուածն սորին կարգի: Օ խմբդ [14] վստա-
հութբ տօնելի վեհին՝ ա̃նձն իմ և դու աշխար աշ-
խարհի՝ զանդատ քո ոգի յառաջ ընծայեալ՝ մեծա-
ցուցանես ընդ պսակելոյն, թէ փորձեա՛ զիս տէր և
տես, թէ իցեն անօրէնութիւք 'ի ձեռս իմ, և զյա-
ւելուածն որ զհետ սորին: Օ խմբդ [15] ես գոլով և
յայլոց աղօթեմ ապրել՝ յուսացելոցն յա̃ծ ձայնակ-
ցեալ, պահեա՛ զիս տէր 'ի ձեռաց մեղաւորի, և 'ի
մարդոյ չարէ: Օ խմբդ [16] համբարձայց ընդ փառա-
ւորեալն մաղթել ա̃յ, թէ դու ես յոյս և բաժին իմ
յերկրին կենդանեաց: Օ խմբդ [17] իբր հանդիսա-
ցեալ ընդ ձգնաւորին՝ զմրցանակն յաղթանակի թա-
գաւորին մատուցանելով՝ զառաւելեալն քան զօրի-
նակ աղերս աղօթից, թէ [18] ինձ սպասեսցեն արդարք
քո մինչև հատուցես ինձ:

Գ. Բարեբանեալ է և այս իմաստ հոգևոր՝ և [19] տե-
րունի գործոյն նմանի, որ զփորձիչն պատկառեցոյց,
յորժամ զամենայն արհամարհիցէ՝ և զսկզբնապատ-
ճառն եղելոց միայն ընտրիցէ՝ ասելով, թէ [20] երանի
ժողովրդեան, որոյ տէր՝ ա̃ծ է նոցա: Մեծ է և այս
բարձրութի շնորհի՝ և զգուշական համարձակութի
լցեալ երանութբ, թէ ո̃ք քո օրհնեսցեն զքեզ:
Բղձալի է և այս ընտանութի մերձաւորական հոգևոր
հաղորդութե՝ յա̃ծ յուսալ և 'ի նոյն արձանանալ՝
բանիւ սաղմոսին բերկրեալ, թէ զկամս երկիւղա-
ծաց իւրոց առնէ տէր. և զկարգ բանին կատարէ,
մինչև [21] զողբալին և զզուարճալին ազդեսցէ, թէ պա-
հէ տէր զամենեսեան որ սիրեն զնա. և զամենայն
մեղաւորս սատակէ տէր. 'ի գլուխս լման դրոց
նուագարանաց սաղմոսիս՝ իբր թէ զօրինակն իսկ ե-
ցոյց վերջին հատուցման՝ արդարոց և մեղաւորաց:
Օւղակցորդք են միմեանց և զկնի երգեցեալքս.
զի թէ ընդունի զհեզս տէր՝ և խոնարհ առնէ զամ-
բարտաւանս մինչև յերկիր, ապա ինձ ո̃րքան եղկու-
թիւք կան առաջի. իսկ եթէ հաճի տէր ընդ ժողո-
վուրդ ի̃ւր, և բարձր առնէ զհեզս 'ի փրկութե՟, ա-

պա հերքեալս 'ի բարեմասնութենէց ես՝ ո՛ւր հաստա-տեցայց. խսկ եթէ օրհնելի է ա͠ծ 'ի մ͠ջ նորա տիրա-պէս, ապա օտարս ես 'ի մաքրութենէց՝ ընդ ո՛րս դա-սեցայց. խսկ եթէ [22] 'ի կանխերգիցն մերձ այսր եդից յիշատակարան ինձ կշտամբութե, թէ սիրեցէք զտէր մ͠ջ նորա, զի ստուգութի խնդրէ տէր՝ և կրկին հա-տուցանէ ամբարտաւանիցն, ապա յորո՛ւմ գնդի ես գտայց՝ գերեալս 'ի գաղտնեաց գտօղին չարեաց: Քանզի զորօրինակ տատանին տագնապաւ տերևք տնկոց [23] եղևին ծառոց՝ շարժեալք 'ի հողմոց ուժ-գին բախելոց՝ հոսեալք 'ի խոնարհ, այնպէս ջանա-ցաւ ջարդել [24] զընթացից իմոց վերարձակութե քա-ջաբեր ուղէշս՝ զյարմարեալս ձեռամբ անեղ մշա-կիդ: Օ՛ որ հաստատեսցես արմատացուցեալ վերըս-տին դարձեալ՝ նոր պտղաւորութբ անապականաւ, յանդաստան կենաց խնամոց քոց կամացդ՝ ամե-նապարգևն թագաւոր ք͠ս, օրհնեալ յաւիտեանս.

ամէն:

---

(1) Բնաւն որ 'ի սաղմոսն: Զամենայն այսպիսի բանս սաղմոսին յա-ռաջ բերել, ոչք ինձ 'ի նախատինս և յանէծս յօրինեցին, միշտ կան, կամ պատշաճին, հանապազ զնոյնս երգել խոնավ բերանով իբր սաւղօք:

(2) Զկարգաւորութիւն տանցն: Զկարգ հետևեալ առնց հարկաւորդ սաղ-մոսին, ոչք են ընտանիս հայոց, սեպհական կամ սովորական կարգին կե͠ց վարուցն դաւթի, որ օրհնաւոր էր, այսինքն աշակերտ հին օրինաց, միանգամայն զինուոր, թագաւոր, և մարգարէական իշխան՝ զբաղեալ 'ի զանազան հոգս, և սակայն այնպիսի կարգս վկայէ զանձնէ, որք և երկ-նայնոյն հրեշտակաց, կամ երկնաւոր վարուք զարդարելոցն են ախոր-ժելիք: Զի առէ անդ, թէ զգաղտ խօսօղն զընկերէն՝ հալածէի. ընդ ամբարտաւանին և ագահին՝ հաց անգամ ոչ ուտէի. յերկիւղածս ակնածէի. զամբիծն առնուի 'ի պաշտօնեայ, ևն. (տես սաղմ. Ճ. 5. 6:) Արդ՝ ես զայսպիսի բանս առեալ, զիա՞րդ ոչ յուսահատեցայց 'ի կենաց, որ աշակերտ գոլով նոր օրինացն՝ և քարոզիչ, կրօնաւոր և քահանայ, զուրկ եմ յայնց ա͠մ բարեկարգութեց:

(3) Մահու վճռեցայց: Մեռուցից, կամ ապանից, առաջին առաւօտին, նմանութբ առաւօտուն, որ նշանակէ՝ թէ 'ի սկիզբն արթնութե պա-տրաստ լինել պարտ է ընդդէմ մեղաց. որպէս առէր դաւիթ 'ի նոյն սաղմ. Ճ. 8. * Ընդ առաւօտս սպանանէի զա͠մ մեղաւորս երկրի: || Արդ՝ ես զիա՞րդ այսպէս զլինեցայց, որ զիմ մեղանչական մարմինս և ոչ գանիւ խրատեցի, թող թէ սպանանել: Այլև զյաջորդն զիա՞րդ կարեմ առնել. * Սատակեցից 'ի քաղաքի տն զամենեսեան՝ որ գործեն զանօրէնութի. || որ և ոչ զորսոտ հոգւոյս՝ զչար ախտն մեռուցի, թող թէ զայլ անօրինեալսն յուղղութի ածելով սատակել զչարութի նոցա:

(4) Ինչ գրեցից: Զոր յանցանս կամ պարտաւորութիւնս ընծայեցից նմա, յորժամ դաւիթ ածանէրն զյանցմունս նախնեացն իւր անձինն համարելով առէ (առղ. ՃԾ.) Մեղաք ընդ հարս մեր, և որ 'ի վախճանն յանգի, և որ այլ բանք նոյն սաղմոսին մինչև 'ի վախճան, որք առաւել յիս ճշմարտին քան յիւրայել: Փոխանակ բանին յանգի, ՚ի՞ առաջի,
մի օրին. յարգի, 'ի գործ դնի, կատարի:

(5) Յարգեցայց պատիւ: Ի՞ւ պատուեցայց կամ համարձակեցայց դաւել ընդ բարին, յորժամ ոչ գտաւ յիս այն դեղ՝ զոր և մարդկային հնարքն մեծ համարեցան. եթէ զի 'ի գորշութէ կերակրոց, վասն խորշելոյն կամ ժուժկալելոյն 'ի կերակրոց՝ 'ի նահ տկարացեալ. (2. օրին. տկարացեալ,) ՚ի՞ մահուչափ քաղցեալք: Եւ վասն բազմութեան ճգանց, ցրտոյ, ծարաւոյ, ոքնութեան, աշխատութեանց, ևն, 'ի հոգւոց նուաղեալ, յուժոյ և յառողջութէ պակասեալք: Զայսպիսի մարդկային հնարս պատուեցին հրէայք և հեթանոսք խորութբ ինքնօրէն կրօնից, յինքեանց օրինադրեալ կեաց նմանակամ կանոնաց՝ առ 'ի շահել զառաքինութիւնս և զիմաստութին: Իսկ 'ի յիս ոչ գտան այսոքիկ. ապա զիա՞րդ ընդ այնպիսի
բարին պատուեցայց:

(6) Օրհներգոյն դաւթի: այսինքն օրհնութի երգողին, կամ սաղմոսողին: մի օրին. օրհներգոյն: 2 օրին. օրհնելոյն:

(7) Զունայնութեանս: Զիա՞րդ զունայն և զանկատար բաղձանացս՝ իբրև զկատարելոյ գործովք պատմեցից ընդ մերումս, թէ 'ի պատուիրանաց քոց, ևն:

(8) Արեալ զամենայն ճանապարհս լարաց: այլ օրին. առեալ զճանապարհս լարեաց:

(9) Զհեղոյն ճշմարտութեան: Զիա՞րդ զչեղոյն դաւթի զհաւատարմութիւն խոստովանութեան, անհաւատարմութեամբս կարդեցից համարձակորէն սուտ երդմնութիւն, թէ երդուայ և հաստատեցի պահել, և սակայն գործովք ոչ պահեմ:

(10) Անհրաժեշտ վճառ: 2 օրին. վճիռ:

(11) Զհամառօտն խոստովանութեան: Զիա՞րդ զարդ կամ զանվրէպ հաւատացումն անաչառ՝ նմա խոստովանելոյս առհամանեցից, վճռեցից, կամ յարմարեցից:

(12) Զանձառն տան զմարդն: Զբանն որ 'ի վեր է քան զմարդկային բնութի, կամ քան զմարմնական ակարութիւն, զիա՞րդ առից 'ի քաջալերութի տարակուսելոյ՝ ես որ գանձ կամ պահեստ եմ դժոխոց, առել ընդ դաւթի՝ թէ չիք նենգութի 'ի լեզուի իմում: Ոչ առել ընդ նմա, կամ չյանցանել լեզուաւ՝ է դժուարին յառաքինութիւս և գերազանց քան զմարդկային ակարութի. վասն որոյ ասէ արդարք միշտ տարակուսին և երկնչին սատի. և սակայն դաւթի վկայելով զայն զանձնէ, ցուցանէ հնարաւոր լինել, որով առց քաջալերս արդարոց: Բայց ես առէ՝ որով դիմօք բերից զայս 'ի քաջալերութի այլոց:

(13) 'Ի ողջերանութեան նախադասութեան: յառաջին բանէ նախասացեալ սաղմոսիս ՃԼԸ. մինչև 'ի վախճան:

(14) Վստահութբ փորձել: Զիա՞րդ դու անձն իմ որ ողբալի ես աշխարհի, վստահութբ երջանիկ իշխանին դաւթի՝ յառաջ ընծայելով զանդարձ խորհուրդ, զանփորձ, զանքննող քո հոգիդ, պարծիցիս ընդ նմա՝ թէ փորձեա զիս, ևն:

(15) Ես գոլով: Ես նիքն գոլով մեղաւոր և չար, զիա՞րդ աղօթեմ առ ալրել յայլոց մեղաւորաց, ևն:

(16) Համարձակեայց ընդ թագաւորեալն: Զիա՞րդ նշխեցից ընդ փառաւորելոյն դաւթի աղօթելով, ևն:

(17) Իբր հանդիպաջնաւ : Զխորդ ես իբրև հանդիսակից կամ հալորդ ձգանցն դուլթի՝ զյաղթանակ ձգնութեան մատուցանելով իմ, աստեղ զայն ալաչանս՝ որ 'ի վեր է քան զօրինակ, կամ յոյժ գերազանց :

(18) Ինչ ապաստանէն : այլ օրին . Ինչ ապաստէն :

(19) Տէրունի փորձոյն : Յոյժ գովելի է և այն խնամս սաղմոսին՝ յորում զամենայն արարածս արհամարհելով, զած միայն ընտրէ ասելով, երանի ժողովրդեան, ևն : Եւ այս նման է քոյ գործոյն՝ որով յանձն առար զփորձիչն ասելով, * Տն ած քում երկիրպագցես, և զնա միայն պաշտեսցես : || (մատթ . դ . 10 :)

(20) Երանի ժողովրդեան, որոյ : 2 օրին . Երանի է ժողովրդեան, որոյ :

(21) Զաղբիւրն, որ ասէ, զած մեղաւորս ատեակէ . և զգոհարձաւրն, որ ասէ, պահէ տր զամենեսեան՝ որ սիրեն զնա : Որով 'ի վերջ կատարման սաղմոսացն իբրև թէ ծանոյց զօրինակ վերջին հատուցման արդարոց և մեղաւորաց :

(22) 'Ի կանխերգիցն : 'Ի յառաջադոյն երգեալ սաղմոսացն :

(23) Եղեգն ծառոց : Հին լուծ . զեղեգնն մեկնէ, ցոյս է ձանծաղ արմատ, այսինքն սաղէտակն եղեգն ասի, յայգիսն բուսանի, աւել կապեն զնքն : Բայց այսպիսի տունկ զխորդ ունէր փայտ ազնիւ և ամուր, յորմէ շինուածք լինիցին : Որմնք խմնան զնոձին . (սէրվի :) Այլ աստ ոչ յարմարի . զի տերևք նոձոյն մանրիկ և խիտ գոլով, ոչ այնչափ սատանին 'ի հողմոց, և ոչ թօթափին յերկիր . այլ խմանալի է մայր ծառն, (չամ ալաճը,) որոյ տերևք դիւրաշարժք են և թօթափելիք :

(24) Զընթացից խմոց : Զանազան սատանայ ջարդել զմարդկային ընթացից շառաւիղման պարարտ ուղէշս, այսինքն զմարդկային կենաց զօրութիւն՝ զմտաց և զկամաց, և զզգայութեց . զորս ած յարմարեաց 'ի ծառ բնութեա : Բայց մի օրինակ դնէ, զընթացից խմոց հերարձակութե . այլ . բն . այսինքն զշառաւիղս՝ որ արձակին 'ի ծառոյն . և ըստ այսմ հետևեալ բառքն՝ փաղաբէր ուղէշս, լինին բացայայտիչ բառին՝ հերարձակութեանն :

---

Մերովէին յառելուած հրհին հեծութեն՝ նորին հոգւոյն առ նոյն աշէրս մաղթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

## ԲԱՆ. ԿԲ :

ա . ԱՅԼ արդ՝ ընդէ՞ր ոչ [1] 'ի վերագրեցեալն սաղմոս նախաձայնական՝ և յայլ մարգարէիցն մասն ինչ յօդեցից : Քանզի զի՞նչ վայելուչ իցէ կերակրոյն, եթէ անզգայեալ ցաւովք ուտիցեմ . և կամ զո՞ր շահ սաղմոսն ունիցի, եթէ ոչ 'ի միտ առնուցում : Քանզի նզովեմ զիս ինքն 'ի նոսին, և ոչ խմանամ . լուացեալ լինիմ, և ոչ պայծառանամ . արևու ծագեալ, և ոչ լուսաւորիմ . մեղր ճաշակեմ, և ոչ քաղցրանամ . [2] ռետնիւ ընանիմ, և ոչ բժշկիմ . միշտ կանխեմ 'ի նոյն, և դատարկ երևիմ . հանա

պաղ ձաղիմ, և ոչ երբէք խրատիմ. ողբիմ դարձեալ, և ոչ զգաստանամ։

Է. Արդարև՝ մեղք և անօրէնութիւնք իմ յիս, և ես մաշիմ 'ի նոսին, [3] ըստ մարգարէին՝ որ 'ի դիմաց պարտաւորացն՝ բանի. և տէրունական առակին հին տկոցն և նոր գինւոյն։ Վասն զի թէ սատակին անօրէնք և մեղաւորք 'ի միասին, ըստ եսայեայ ձայնին, ապա և ինձ դժնէիս նոյն բաժին հանդերձեալ պահի։ Քանզի ասեմ զսաղմոսն, թէ հատուցանէ այնոցիկ՝ որ առաւել առնեն զամբարտաւանութի. և կցորդեմ սմին զընթերցուածն, թէ օր տն 'ի վերայ հպարտից և ամբարտաւանից. ասեմ, թէ օտար եղեն մեղաւորք 'ի մօրէ, և որ ինչ կարգ սորին յուցանէ. յարեմ առ սմին, թէ կործանեսցին անօրէնք երկրի, և ամբարիշտն բարձցի յերկրէ, և անիրաւք մերժեսցին 'ի նմանէ։ Ողբք ինձ կարդացէք առ ձայնն, թէ զորօրինակ վառի եղէգն 'ի կայծականց հրոյ, այնպէս այրեսցին մեղաւորք 'ի բորբոքեալ բոցոյն. լացէք առ սաղմոսն, թէ արկցես 'ի վերայ նոցա կայծակունս հրոյ. աշխարս պատմեցէք 'ի բանս ածեան վճռին մարգարէին ազդեցեալ, թէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ. կոծեցարուք առ սաղմոսն, թէ մահ հովուեսցէ զնոսա. աղի արտասուս՝ ողորմ հառաչմամբ ընդ հեծութիս իմ յարմարեցէք, յորժամ բարձրեալն ընդ խորայելի և ինձ ասասցէ բանիւ սաղմոսին, թէ ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում. աւաղ կարդացէք թշուառացելոյս, յորժամ այլ մարգարէ զնոյն դիցէ, վայ նոցա՝ զի վաղեցին զինև։ [4] Բարբառ փողեցէք 'ի սիրտ մլձկեալ նոր աղաղակի, յորժամ տեսանողն աստուծով ամաչեցուցեալ զիս կշտամբեսցէ՝ ընդ ապարասան տանն յակոբայ, տեսէք արհամարհօղք՝ զարմացարուք և եղծարուք։

Ը. Այլ դարձուցես և ամփոփեսցես զբարձրացեալ զսուր բարկութե ահաւորիդ սպառնալեաց՝ 'ի սարտուցելոյս յերեսաց մեծիդ. և խնամովք աջոյդ բարեբաշխութե առ իս ժամանեալ, օծումն կենաց պարգևատրեսցես քո աղաչողիս։ Եւ քեզ փառք յերկինս 'ի բարձունս, և 'ի մահացուաց յերկիր 'ի

խոնարհ, 'ի սահմանս բոլոր ազանց, և յամենայն յաւիտեանս. ամէն:

(1) 'Ի վերագրեցեալն աղօթս: Արժան է ասել՝ 'ի յառաջբերեալ բանս սաղմոսաց յաւելուլ և յայլոց մարգարէից սակաւ բանս. զի այնոքիկ են կերակուր և դեղ հոգւոյ. և որ շահ 'ի կերակրոյն՝ յորժամ անգիտակցաբար ոք ուտիցէ, նոյնպէս զինչ օգուտ 'ի սաղմոսէն և յայլոց մարգարէից, յորժամ ոչ 'ի միտ առնուցում:

(2) Ռետնիւ ճանիւ: Ռետին է խէժ ծորեալ 'ի ծառոց, որպէս (չամ սախըզը, Թիրէմէնթին.) ե՛ն. այսու այլաբանէ զոր վարդապետս զծածկեալն բանս 'ի սաղմոսաց և յայլոց մարգարէից. որք դեղք են վիրաց հոգւոյ: Հին լուծ. զռետինն մեկնէ, համօրէն քաղցր դեղոյ անուանէ, զոր շարբաթ ասեն: Վէշպ խաշխէշ, 'ի սաղմոսել, յընթեռնուլ զմարգարէս, և որպէս թէ բնաւ գտանորկ՝ անտեղեակ եմ:

(3) Ըստ մարգարէին: Ըստ բանի մարգարէին եսայեայ (ծԹ. 12.) որ 'ի գլխոց յանցաւորացն ասացեալ. և ըստ տէրունական առակին հին տկոցն. որպէս գինի նոր մաշէ զհին տիկս, այսպէս անօրէնութիք իմ յիս մաշէին զիս:

(4) Բարբառ ձուղելով: Բարբառ նոր աղաղակի իբր փողով հնչեցուցեալ մղձկեալ սրտիւ:

Վերստին յաւելուած հրկին հեծութե՛ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՛յ:

# ԲԱՆ. ԿԳ.

ա. Բարերար և բազմագութ, մարդասէր և երկայնամիտ՝ միայն Թագաւոր, ընդ հօր քում պատուեալ և օրհնաբանեալ տէր ամենայնի, որդի ա՛յ կենդանւոյ: [1] Անպատճառդ միշտ խնամ կորստեան. որ ամենևին անփորձ ես 'ի չարեաց. որ ոչ կամիս զմահ մեղաւորի. որ փրկութի՟ են 'ի քոց կամաց ընծայեցել. որ դարձուցանես զմոլորիկ մեղաց՝ 'ի յօդ քաւութե՟. որ զհուր բարկութե՟՝ յանձրև փոխարկես: Որ [2] զյետնեալ զկինն 'ի բարեաց՝ կրկ-նակի գոյիւ նահանջեր՝ երկեակ բնութի՟ 'ի նոյն արձանի, ոչ խնկապէս ընդ անպարտսն, և ոչ համայն ընդ պատժաւորսն: Որ զլուծունի ծովուն սահմանաց՝ իբր զկարկառս քարանց կառուցեալ յեղանակեցեր: Որ զկարծրանիւթ վէմն անապատին՝ [3] 'ի վե-

ժակս վտակաց հոսեալ բղխեցեր ։ Որ զյորդանմանու ջրոյն սրաշարժ վայրէկութի՟՝ հրաշաւոր անդրադարձութե՟՝ [4] 'ի յետնորդս հեթանոսաց լուացումն աւազանին 'ի թիկունս առաքեցեր ։ Որ զպատուաստեալ պարխայն երկքումբ , յօրինակ կործանմամն բանութե՟ն սատանայի՝ իբր զթեթևութի՟ յարդի ցնդեցեր ։ Որ զմխասակար ջուր նորին [5] 'ի յառակ պլպլուն առ 'ի բարին փոխարկութե՟՝ քանանացւոցն փրկութե՟՝ խորհրդական աղիւն համեմեալ անուշեցեր ։ Որ զմեռային դառնութի՟ , իբր զմոաց անհաւանութի՟ , կենացն փայտիւ 'ի քեզ յարմարեալ՝ պիտանի արարեր ։ Որ [6] զառեալն 'ի գետոյն՝ 'ի գծագրութի՟ անսահմանդ քո հրամանի անորակիդ գունակութե՟՝ 'ի նոր երանգ բոսորային՝ մածեր արիւն 'ի ցամաքի ։ Որ [7] զանկենդան ցուպ գաւազանին , 'ի կերպարութի՟ առ 'ի զքոյդ մերոյս նկարագրիլ , այլ և յօտարազնից ընտրութի՟՝ 'ի տիպն ապաթոյն կերպիւ վիշապի՝ նմանեալ ցուցեր ։ Որ զերջանիկ ձեռն աջոյն մովսիսի , [8] 'ի ցոյցս տեսութե՟ ապագայիցս հրաշից մարդեղութե՟դ քո՝ բարձրեալ , և քե՛ ախտաւոր մարմնոյս մաքուր լինելոյ անփոփոխ փոխատրութե՟՝ կրկին գուշակեցեր ։ Որ [9] յայսքանեացս շրջագրութի՟ , բարեխնամապէս արուեստիւ սիրոյ զանակնկալն գիւտ մեղաւորաց կորստականաց [10] նշանակեցեր՝ օրհնեա՛լ ամենագութ ։

Ե ․ Որ բուսուցանես յերկրէ դալարի [11] զմեռեալն՝ յանչնչականէն ․ որ զանշարժն՝ իբր զընթացօղ կառավարես ․ որ յանարգ արգանդէ՝ կոչես քեզ պատկերակիցս ․ որ տաս պատանեկաց՝ [12] աղօրիս ըմբոշխնելիս ․ որ յայտս մաքուրս՝ հերս ընծայես ․ որ զսաղարթ սևութե՟ վարսից 'ի ձեան կերպարան զարմանագործես ․ ցուցեալ՝ թէ առ ամենայն սահման հեռաւորական՝ յաղթօղ ես հզօր ․ որ փոփոխես [13] զշըրթունս ընաւորականս , ըստ բանին յօբայ , 'ի կամս հաւատարիմս ։ Որ սասանես զերկիր , և [14] զսիւնս նորին 'ի հիմանց , նշանակեալ հաստատածին գոյիւ՝ թէ դու միայն մնաս անկործանելի ․ որ [15] հոլովես զտարերս՝ իբրև զանցաւորս , և դարձեալ 'ի նոյնն կապես՝ իբրև զյարակայս ․ յայտ արարեալ՝ թէ և առ մեղաց բաղ-

մութի՝ դիւրապէս ունել կամ թողուլ՝ դոյնպէս զօ-
րաւոր լիցես ։ Որ 16 զարուեստն անզգայ էութի՝ իբր
երասանաւ իմն դաստիարակես. երևեցուցեալ այնր
իրի կերպիւ, թէ զընութես չար դիմեցումն՝ յորժամ
և կամիս՝ հանդարտ առնիցես։ Որ զանբարբառ բո-
լորակ լուսնին՝ կարգես ունայնս և պատարունս. 17
լուսաւորեալ զպատճառն առ աւետիս տեսողաց՝
թէ 'ի նուազութե բարեաց զպարտաւորս մարմնն՝
դու ածես 'ի լրութի աւաջնաստեղծ հարստութեն։
Որ զպատկերս անխօս աստեղաց՝ 18 իբր զգաստկս
դոյզն հօտից՝ տրոհես և ժողովես. յոյս իմն կենաց
առ այս խորհրդաբերեալ՝ քաղցրահայեաց տեսութի,
թէ և անաղաչաւորաց լեզուաց կարողապէս բաւես
ողորմել։ Որ 19 'ի մէջ մահու և կենաց՝ շաւիղ վստա-
հութե ուղղես 'ի ծովու. վկայութի եդեալ հաւաս-
տի, թէ և յանկասկածաւորն վայրի՝ քև պաշտպա-
նիմք անդայթագղելի. որ իբր զջուր կաթսայից 'ի
հրոյ եռացեալ, որպէս զմեղաց մրրիկ պղտորեալ՝
բանիւ կամաց քոց խափուցանես։ Որ հայիս յերկիր
և տատանես զսա, զի անբանիւն՝ զմտաւորս զգաս-
տացուցանես. որ 20 իբր զակատ մի անձուկ նաւի՝ 'ի
վերայ շարժութե ալեաց՝ զանբաւ թանձրութի գետ-
նոյս դղրդես, որով ծանուցեալ լինիս ամենից հաս-
տուածոց՝ թէ իցես աներկբայելի, որ 'ի բան քո զօ-
րեղ՝ հիմնացեալ ունիս զամենայն։ Որ 21 սերմանես
զարտաշնչացեալ մարմինս յերկրի, և զնոյն անկո-
րուստ պահեալ՝ կրկին կենդանածնես. որ ապակա-
նացուս աւանդեալ՝ աներծս ստանաս. որ ընդ մա-
հացու նիւթոյս՝ զնշխարդ կենաց խառնես. որ հրա-
մանաւ ակնարկութե 22 'ի խուն վայրկենի կազմեցեր՝
պատրաստ կացուցեր զանզարդութի ամենից եղա-
նակաց։ Ո՞ է զօրութի և կարողութի, որ 23 շրջա-
նակես զժամանակս ամաց հոլովման աւուրց՝ յայլ
նմանութի բարեպատեհ տեսողութե։ Որ կարդաս
զանմռունչսն՝ իբրև զկենդանիս. որ ազդես միայն,
և նոքա ընթանան. որ միայն 24 հեռուս անկանես
անճառ արուեստիւ հնարագիտութեամբ՝ մէգ և
առաւօտ։ Որ 25 յետ նախակարգ յօքինուածոյն ա-
ռաջնաստեղծ լինելութեն, արարեր զփառաւորեալսն

մեծամեծս հրաշակերտիցն հանդիսից, ըստ գրոյն եւ-
ջանկութե՟ կանխահիացն զարմացման, այլ իմն գոյա-
ցութ՟ի տօնելի տեսակի՝ անեղծ աշխարհագործու-
թեան եւս քան զսոյն՝ 'ի մարդանալդ քո, որոց ոչ
գոյ թիւ ։

Է • Որ ահա զխնամս մեր՝ քեզ գրեցեր • որ զարդա-
րութիւն քո՝ մեզ շնորհեցեր • որ ընդ քեզ կրեցեր
զհաշտութիւն մերում փրկանակ • որ ոչ երբեք լքա-
նիս յողորմութ՟է • դարձ՟ զամբարշտեալս՝ 'ի պաշ-
տօն բարի երկիւղի • զթմբրեալս՝ 'ի զգաստութ՟ի արթ-
նութ՟ե սրտի • զանմաքուրս՝ 'ի սրբութ՟ի պայծառու-
թ՟ե կերպարանի • զբազմաբիծս՝ յանբծութ՟ի հան-
դարտական ն՟ր պատկերի • զբեկեալս՝ յողջութ՟ի, 26
որ 'ի դիպմանց ոչ խորտակի • զլացեալս՝ 'ի խնդու-
թ՟ի զուարթութ՟ե անտխրելի • զյուսահատեալս՝ 'ի
սէր միաւորիչ անքակտելի • զամաչեցեալս՝ 'ի վստա-
հութ՟ի հաստատութ՟ե անշարժելի • զխաւարեալս՝ 'ի
լոյս երանութեան անմեկնելի • զմահու գերեալս՝ 'ի
կեանս, որ ընդ եղծմամբ ոչ անկանի ։ Օ՜ ի փառա-
ւորեսցի անուն քո՝ յս՟, խոստովանեալ յամենայնի,
ընդ հօր եւ ընդ հոգւոյդ սբ՟յ՝ 'ի բարձունս երկնի եւ 27
'ի ստորեւս երկրի՝ եւ 'ի բնակիչս նոցա, յաւիտեանս
յաւիտենից • ամէն ։

---

(1) Անդափձմուտ Վէլփ ։ Որ ոչ երբեք պատճառ լինիս խմուռ կորստեան, խմն ընդ հակառակն, միշտ արդելուս, խափանես զառիթս կորստեան մարդոյ ։ Անթուրյ Էս 'ի Լուրէադ, ոչ արկանես բնաւ 'ի փորձութիւն մեղաց • 'ի փորձելն զմարդ վշտօք՝ հեռացուցանել զնա կամիս 'ի չար փորձութ՟եց ։ Որ Ֆրէնոսը Էն, յոքնակի դնի բայն, զի եւ Ֆրէնոսը յոքնական խմանի ըստ բանի սաղմոսին, * Կեանք են 'ի կամաց նորա ։ ||

(2) Զյէփնէու Ղէլնն, զոլոայ՝ որ յեանեցաւ 'ի Էփրէադ, այսինքն 'ի կատարմանէ հրամանին այ՟ չդառնալ յետս, կամ յետս մնալ 'ի բարի ընկերացն՝ 'ի զոլոայ եւ 'ի դստերացն, Ղէյնանէ Գոյէ, փոխարկելով զնա 'ի քար եւ յաղ, Նահանջէր, նահանջեցեր, կամ խափանեցեր 'ի դառնա-լոյ 'ի սոդոմ • որով Էրէնան Բնուրէ եղեւ 'ի Նոյն աղյանէ, այսինքն խառն բնութ՟ի քարի եւ աղի ։ Եւ այսու երեւեցաւ 'ի նմա արդարութիւն այ՟, միանգամայն եւ գթութիւն • զի յարձան փոխարկելովն պատժեցաւ վասն անհնազանդութ՟են • եւ խափանելովն դառնալ 'ի սոդոմ, պահեաց զնա այ՟ծ 'ի պղծութ՟է եւ 'ի հարուածոյն սոդոմացւոց ։ Վասն այսորիկ ոչ ընդ անպարտ դստերացն ապրեցաւ, եւ ոչ ընդ կորուսեալ սոդոմա-ցւոցն կորեաւ • զի հայեցն նորա յետս՝ ըստ բազում վարդապետաց՝ էր մեղք ներելի, ներգործեալ յերկիւղէ եւ 'ի կանացի թեթեւամտու-թենէ ։

(3) 'Ի վէժակս։ 'ի հասմունս փառաց։

(4) 'Ի յետնորդս հեթանոսաց։ Զյորդանանու արտաշարժ ընթացսն 'ի վայր՝ հրաշիւք յետս դարձուցանելով, 'ի հոգևոր լուացումն մկրտութեան յետնորդ հեթանոսաց առաքեցեր, կամ յազգազգս լուացումն հեթանոսաց։

(5) 'Ի յառաջ ապականութե։ Զմահատակար ջուր երկրորդ յօրինակ փոխարկութե 'ի բարին, այսինքն փրկութե քանանացւոց հեթանոսաց, անուշեցեր 'ի ձեռն եղիսէի։ ( Դ. Թագ. Բ. 21։ )

(6) Զարեան 'ի գետոյն։ Այս բան ոչ հայի 'ի նշանն՝ զոր արար մովսէս առաջի փարաւոնի. վասն զի անդ զարեանգակ գետն արկանացոյց. (ելց է. 20.) այլ հայի 'ի նշանն արարեալ առանձինն առաջի եբրայեցւոց ըստ հրամանին այ. ( Դ. 9։ ) Զայն ջուր ասէ՝ թանձրացուցեր յարիւն 'ի ցամաքի, որ էր նոր երանգ բաւորայն, այսինքն նոր կամ անբնական գոյն կարմիր, 'ի տիպ կամ յօրինակ ամենազօր հրամանիդ անարժէք գունաւորութե, որով անորակդ գունակեցար։ Ասել կամի. զանգոյն ջուրն նեղոսի դարձուցանելն յարիւն՝ էր օրինակ անմարմին ծնութեդ ընդունելոյ զմարմին և զարիւն մարդկութես։

(7) Զանկենդան ցուպ։ Զանկենդան գաւազանն մովսեսի փոխարկեցեր 'ի կերպարան անթոյն վիշապի 'ի ներկայութեան առ 'ի շնորհ մերոյ նկարագրել. յօրինակ նկարագրելոյ կամ ձևացուցանելոյ զքո բնութիւնդ մերովս բնութեամբ՝ առանց մեղաց. միանգամայն յօժարակամ ընդունութեան, յօրինակ ընտրութեան օտար ազգաց հեթանոսաց, որք էին և ըզգաւազանն անկենդան էին առ ծծգլխութիւն, և փոխեցեր զնոսա յիմաստութիւն այ, առնել նոցա զխորագիտութի օձի առանց չարութե։ Բայց նկարագրել իբր ներգործական իմանալի է, և թերևս 'ի գրչաց մուտեալ է փոխանակ դնելոյ՝ նկարագրել։ Հին ձեռ. օտարագինս խմանաց զգլխութեան՝ առ որս ընտիր եղեց ծծ զմովսէս գաւազանաւն։ Բայց անյարմար է։

(8) 'Ի շոյշ բորոտութե։ Որ 'ի ցուցանել զխոստս հոգևորս, երջանիկ ձեռն աջոյն, այսինքն զաջոյ ձեռն մովսեսի նախ բորոտ առնելով, և ապա բժշկելով, գուշակեցեր, այսինքն եսոր գուշակ, նշանակ, յօրինակ ապագայ բժշկութեան, զոր 'ի մարդեղութեդ արարեր, այլ և յօրինակ մաքրելոյդ զխոտաւոր մարմինս մեր 'ի մեղաց. անփոփոխ փոխադրութե. այսինքն հաստատուն փոփոխմամբ 'ի յառողջութի և յանախտութի։ Իսկ երկրին գուշակեցեր ասելն՝ կամ հայի 'ի բժշկութի ձեռացն մովսեսի, որ միանգամ արարաւ 'ի քորեբ առաջի այ, և երկրորդ անգամ յեգիպտոս առաջի ժողովրդեան. ( ելց. Դ. 6. 7. 30. ) և կամ զերկու լինել գուշակելն ասէ, այսինքն զմարմնաւոր բժշկութեան քոյ առ հրեայսն, և զմեր հոգևոր բժշկութին։

(9) Յայտնեալս շրջադրութե։ Այսքան օրինակաց յառաջերկրութէ կամ ցուցակութէ, կամ շուրջ յածախելով, զգլխոս կորստական մեղաւորացն յայտնեցեր։ Մինչև յայս 'ի սքանչելեաց Այ յառաջաբերեալ զօրինակս գթութե նորա առ մեղաւորս. ուստի ասէ՝ Արուեստիւ գործեալ. վասն զի առանձին բարեխնամութէ արտաքոյ կարգի բնութե ցուցանէր Այ։ Իսկ յետ այսր 'ի բնականաց առնու զօրինակ գթութեն Այ ըստ սովորական կարգի։ 'Ի գործս սքանչելեաց՝ երևի ճարտարութի սիրոյն Այ, իսկ 'ի բնականսն՝ ճարտարութիւն իմաստութեանն։

(10) Նշանակեցեր օրհնեալ ամենագութ։ Որ բազմացանես, են. այսպէս 'ի մեր օրինական կիտադրի. զոր և ընթերցաք համեմատ բովանդակ ընթացից գլխոյս, զիւրաքանչիւր հատուած որ յարաբերականաւ սկսանելով։

Իսկ այլ տպագիրք գնեն ․ Նշանակեցէր ։ Օրհնեալ ամենագութ, որ հա-
տուցանէս ։

(11) Զհետևեան յանընկճելին ։ զսերմն՝ որ 'ի հող արկեալ մեռանի փտու-
թեամբ, կենդանացուցանես յանկենդան հողոյն ։ զանշարժն ․ զանշարժ
ծառսն՝ երբեմն զոտանաւորս կառավարես, զարմատս նոցա ընդ հողով
գնացուցանելով ։

(12) Աշխարհս ըմբռնելեա ․ 3 օրէն ․ աղաւթեա ։ Յանարգ արգանդէ մօր
կազմելով մարդ պատկերակից քեզ, առ սակաւ սակաւ փոփոխմամբ
յաճումն վերաբերես ․ մինչ մանուկ են, 'ի փափուկ լինդս նոցա բու-
սուցանես ատամունս, այսինքն ատամունս ծամօղս ․ 'ի լերկ այտս կամ 'ի
ծնօտս՝ բուսուցանես զհերս։ Իսկ 'ի ծերանալ հասակին, զսպիտակ թո-
թէ, զսեաւ հերս՝ որք երբ սերևք են գլխոյն, զարմանալի օրինակաւ 'ի
սպիտակ դարձուցանես ։ Այսու փոփոխութբ բնութե՝ որով երբ 'ի միոյ
ներհակէ 'ի միւսն անցանեն, ցուցանես՝ թէ կարող ես առ ամենայն
գործ՝ որչափ և հեռի կամ օտար 'ի միմեանց իցեն ։

(13) Զշրթունս Բնաւորականս ։ Բանն յոբայ (Ժբ․ 20․) ասէ․ * Փո-
փոխէ զշրթունս հաւատարմաց ․ || զոր վարդապետք բազմօրինակ մեկ-
նեն ․ այսինքն անգործ առնէ զբանս իմաստնոց, որոց խորհուրդք երբեմն
պատգամ համարեալ էին, որպէս զաքիտոփելայն արար ․ (Բ․ Թագ․
ԺԷ․ 14․) կամ թոյլ տայ՝ զի քաջ խորհուրդք հաւատարիմ խորհրդակա-
նաց՝ չկատարեսցին յօգուտ տէրոջն, կամ առողին ․ կամ ըստ ո-
մանց՝ թոյլ տայ զի լեզուք մարգարէից կամ վարդապետաց երբեմն
սխալեսցին, որպէս եւ մարգարէին ծերոյ՝ որ 'ի բեթէլ ․ (Գ․ Թագ․
ԺԳ․ 18․) կամ լռեցուցանէ զայնոսիկ՝ որք զանձինս Աստուածախօս
կարծեն, կամ ըստ Եւիքրոսի, զբերանս հաւատարմացն 'ի վերայ օրինաց
իւրեանց՝ փոփոխէ 'ի հակառակն ․ որպէս զհրէայսն Չաստուածոյ մովսի-
սական օրինացն՝ փոխեաց 'ի քարոզութիւն աւետարանին, որում նախ
հակառակէին ։ Ըստ այսոցիկ մեկնութեանց իմանի դիտաւորութիւն յոբ-
բայ ․ զի կամի ցուցանել զուժութիւն այ 'ի փոփոխել զխորհուրդս և
զբանս մարդկան ։ Սոյն է և միտք սբյ վարդապետիս, որ փոխանակ
հաւատարիմ բառին՝ դնէ Բնաւորական ․ այսինքն բնաւորեալս կամ սովո-
րեալս 'ի խօսել զուղիղն ․ որ է ասել՝ Ուղղախօսս ։ Եւ ԹԸ այսմ յաջորդն,
'ի կամս հաւատարիմս, հայի առ բառն Բնաւորական ․ որպէս թէ ասել,
զշրթունս բնաւորեալս կամ սովորեալս 'ի կամս հաւատարիմս ։ Իսկ ե-
թէ զայն բառն տացուք բայիս՝ Փոփոխես, որպէս թէ զբնաւորական
շրթունս փոխես 'ի կամս հաւատարիմս, յայնժամ իմաստն լինի, թէ
զպարզ կամ զլոկ բանս շրթանց փոխես 'ի կատարումն գործոյն ։ Որպէս
զհամանայ լոկ բանսն՝ որ վասն փառաւորելոյն արտաշէսի՝ զոր ոք կամի,
դարձոյց 'ի կատարել գործով 'ի վերայ մուրթքէի ․ կամ զլոկ բանսն նե-
քինոյն՝ որ վասն փայտին պատրաստելոյ, եւ կատարել գործով 'ի վե-
րայ համանայ ։ (Եսթեր Է․ 10․ Է․ 9 ։) Սակայն առանց հայելոյ յի-
մաստ բանին յոբայ, և ուշ դնելով միայն կարգի բանից սբյ վարդա-
պետիս, այլ ինչ թուի հարազատ իմաստ տեղւոյս ․ զի 'ի նախագրեալսն
խօսի զփոփոխութէ հասակաց մարդոյն ․ արդ ըստ այնմ կարգի և այս
բան իմանի, թէ զբնաւորական խօսս կամ զեղուս տղայոց որք նախ
առանց ընտրութե լինին խօսեցեալք, ապա և չեն հաւատարիմք, առ
փոքր փոքր փոխես յընտրութիւն կամաց, որով լինին հաւատա-
րիմք ։

(14) Զսիւնս Նորին ։ Սիւնք երկրի իմանին սնդակաց մասունք նորա
'ի խորս, յորս երբ 'ի սիւնս հաստատեալ կան այլ տկար մասունք ․ զորս
և շարժէ այ գետնաշարժիւ, կամ պատառմամբ ․ ցուցեալ հաստատ-

ծին գոյն, համգամանօք կազմուածոյ երկրիս. թէ ած միայն ծնոյ ան-
շարժելի :

(15) Հուրճիւս պարէրս : Հին էջ. խոնաւ գտօղ եղանակս տարւոյ, զա-
մանն յաշուն փոխելով, նոյնպէս և զգարուն : Բայց լաւ ևս խոնաւ չո-
րեքին տարերքն, որք կամ 'ի միմեանս շրջան առնուն, յորժամ ջուրն
անօսրացեալ, կամ հողն մանրեալ դառնան յօդս, և ընդ հակառակն՝
օդն խառնի 'ի ջուր կամ 'ի հող. կամ նոյն տարր՝ յինքն հոլովի. որպէս
ջուր շոգիացեալ վերանայ, և միւսանգամ թանձրացեալ յինքն ժողո-
վի անձրևով. և կամ տարերքն խառնուք 'ի բաղադրեալս՝ և դարձեալ
լուծմամբն՝ հոլովին և կային. կամ դարձեալ, հոլովին տարերք մա-
նաւոր ջրհեղեղօք, որով ջուրն 'ի հող ամբառնայ, և զօդն գրաւէ, և
անդրէն զիջանի. կամ այլուր ընդ հակառակն հողն բացեալ լինի. կամ,
յորժամ հողմով օդ և ծով տարաբերին, և դարձեալ կային հանդար-
տելով : Այսու շրջանաւ երևին տարերքն իբրև պանցառրս, 'ի անդա-
փոխ լինելն և 'ի լուծանիլն. և իբրև նյօրակյօ, 'ի գագարելն 'ի անդ-
ւոյ խռբեանց, կամ խառնուածը 'ի նոր բաղադրեալս : Ես ասյա ցու-
ցանես առ՝ թէ պորտոր իշէ, այսինքն կարօղ 'ի ներել կամ 'ի կալել
զբաղմութի մեղաց : այլ օրին. պօրէսշէ. այլ. պօրտօրէսշէ :

(16) Զորոսէկին անպփայ : Զանկենդան բնութի կամ կազմած արևուն
իբրև երասանաւ զսպես, յորժամ յամրայնի թողուս բարձրանալ 'ի
հիւսիսակողմն, որով տապացուցանէ. և 'ի ձմերայնի 'ի հարաւակողմ
ցածուցանես՝ առ 'ի մեղմել զտապն. ցուցեալ այսու՝ թէ զսոր հակամի-
տութիս բնութե մերոյ հանդարտել կարօղ ես : Սմանք խնդան զայս
նաև 'ի վերայ անբնական ընթացից արևու, որով երբեմն գագարեցոյց
զնա ած, որպէս առ յեսուաւ, կամ յետս դարձոյց, որպէս առ եզե-
կիայիւ : Սակայն առա զբնական ընթացից նորա խօսի բանս :

(17) Լոռառորէալ պպափձառն : Զգունդ լուսնի աճեցուցանելով և
նուազեցուցանելով, յայտ առնես զխորհուրդն առ առէփիս՝ յուրախու-
թե կամ 'ի յոյս անտողոց, թէ կարօղ ես և զմարդ նուազեալ 'ի բա-
րեաց՝ յառաջին հաստատութին դարձուցանել : Լաւ օրինակն գնէ, լոռ-
առորէալ, համեմատ այլոց բայից՝ որք 'ի վեր և 'ի վայր գնեն յանցեալն,
այսինքն յոյփ արարէալ, էրեէյօոյէալ, ևն : Իսկ յայլ ապակիս, լոռ-
առորէլ :

(18) Իբր պտառախս : զանդրան առանցս՝ իբրև զջոկս առկաւ ոչխարաց եր-
բեմն փրոհէս, բաժանես կամ հեռացուցանես 'ի միմեանց. և երբեմն
ծողոլիս, մերձեցուցանես, որ յառակապէս խնամի զմոլորական առանցս:
Այսու յոյս խնի խորհրդաբէրէալ, խորհրդաբար ծանուցեալ ոմ փաղյօր-
հայէայ փէոոբէ, քաղցրագութ խնամակալութի, թէ նաև համի կամ
անլեզու մարդոց ողորմիս: Զբասն փաղյօրհայէայ փէոոբէ մարթ է ևս
յարել 'ի բայն այսպէս. յոյս խնի փրկարար՝ խորհրդեամբ յայտնեալ առ
այս քաղցր գխութի, թէ նաև համերց ողորմիս :

(19) Ի մէջ մահոս : Բոյով անուշութը առա 'ի ծովու շուխց վփահոոբէան
կամ զգուշաւոր լոռ բանի խմաստ. ( ժդ. 3 : ) որով զնան մարդիկ
իբրև 'ի մէջ կենաց և մահու. և այսու առա մեզ վկայութի կամ ապա-
ցոյց՝ թէ նաև յանկասկած անուօջ և 'ի ժամանակի՝ յորժամ վտանգք
զանազանք պատահեն, և մեք անճկառ մնամք, դու նիքն ես պաշտպան:
որ իբր ևջօր, զծով որ խաղլի որպէս ջուր եռացեալ 'ի հրոյ, և դու
քով հրամանաւ ցածուցանես, եռուր օրինակ թէ նմանապէս պէրիչ մե-
ղայ, որ յառնէ յոգիս մեր՝ դու նոփօոյանէս, խափանես, արգելուս,
դադարեցուցանես :

(20) Իբր պայապ մ : 'Ի յոյն բառէն՝ ափտէնշ, նշանակէ՝ մակոյկ, նա-

ւակ ։ Որպէս զկոքր մակոյկ նաւի միոյ 'ի վերայ ալեաց՝ այնպէս շարժես սաէ՝ զբովանդակ Թանձրութիւն գետնոյս. որով ցուցանիս ամենայն արարածոց՝ Թէ դու կաս առանց երկրայութեան. կամ, առանց երկրայութեան դու ես այն՝ որ 'ի բան հրամանի հաստատեալ ունիս զամենայն ։

(21) Սերմանէս ջուրթաշինլուցեալ ծարմինա ։ Ոմանք խմացան զսերմանց բուսոց ։ Բայց ոչ յաջորդ բանիցն յարմարի, և ոչ բառին ջրթաշինլուցեալ, որ նշանակէ՝ հանեալ զշունչն, այսինքն մեռեալ. և զի զբուսոց աստ 'ի սկիզբն է համարոյս ։ Այլ խմանին մեռեալ մարմինք մարդկան. զոր սերմանես սաէ՝ Թաղմամբն և 'ի հող լուծանելովն. բայց և անխորտակ պահելով 'ի գխռութեան քում իւրաքանչիւր մարդոյ զխորն մարմնոյ. զոր դարձեալ կենդանացուցանես՝ ոչ ապականացու իբրև զառաջինն, այլ անապական յարութեամբ. և ընդ ծաղկում, (մի օրինակ. ծաղկաննիխթոյս,) է մանկանացու նիւթոյ մարմնոյն խառնես սաէ գեղխարդ կենաց. մի օրինակ. և 'ի հին լուծ. գեղխարդն կենաց, այսինքն զհոգին բանական. զի 'ի մեռանել մարդոյն՝ հոգին միայն մնայ կենդանի իբր նշխար. խակ գեղխարդ սաէլ խմանի. ըստ որում հոգին բանական՝ է պատկեր և հաղորդութիւն անմահ կենդանութեան նորա ։ Արդ Թէ ևս խմանալ զկենդանական զօրութիւն՝ որ անեղծ պահէ զմարմինն յարուցեալ ։ Ոմանք խմացան 'ի վերայ ակրածնական մարմնոյն՝ որ հաղորդութեամբ խառնի 'ի մեզ ։ Սակայն սաս զյարութեան խօսի նա վարդապետս. յորում սաէ՝ ընդ մանկանացու նիւթոյս, այսինքն մարմնոյս, խառնես զնշխարն կենաց ։

(22) 'Ի խուն ճայրէինի խաղիշեր ։ Եթէ խմացի 'ի միում բնական վայրկենի յօրինեալ զաշխարհս, է կարծիք բազում հայոց, յորոց առեալ սէին օգոստինոս, ընդարձակ մեկնաբանեաց ։ Խակ եթէ համարիմք 'ի վեց աւուրս զանազանս արարեալ նոյ զամենայն, սակաւին ճշմարիտ է՝ 'ի խուն կամ 'ի սակաւ վայրկենի սաէլ. զի ոչ եթէ 'ի բովանդակ աւուրն առ սակաւ սակաւ դանդաղանօք գործէր նա, այլ ընդ հրամանաւ 'ի մի անդրանի վայրկեան իւրաքանչիւր աւուրն վճարէր զգործն. ուստի զբովանդակ ժամանակ սուղ ծամանն 'ի մի հաւաքեալ, հաղև զմի վայրկեան մերոյ ժամանակիս կայուցանէր ։ դաքրաւք խոցուոցեր, այսինքն հանդերձեալ զարդարեցեր զանզարդութեան ամէնայն էղանակաց. այսինքն ամենայն գործոց և արդեանց՝ որք լինին յիւրաքանչիւր եղանակս տարւոյն ։ Զայս բան յարէ յանցեալն, նշանակել Թէ 'ի սակաւ վայրկենի կարող գոլով զարդարել զախեղերական բնութիւնս, նոյնպէս կարող է յական Թօթափել զմեռեալ մարմինն նորոգել ։

(23) Շրջանակէս պծամանակս ։ Կառավարես կամ փոփոխես զշրջան աւուրց տարւոյն յայլ նմանութիւն, 'ի ձմերայնւոյ 'ի գարուն, և 'ի գարնանւոյ յամառն, և յամարայնւոյ յաշուն, և իւրաքանչիւր եղանակս աւնին զկերեանց բարեպատեհ վայելչութիւն և զօգուտ ։ Ոմանք ըստ հին լուծ. խմացան զփոփոխմանէ լուսաւորաց յեա աւուրն դատաստանի. բայց ոչ 'ի դէպ. զի տեղիս խօսի զբնական փոփոխումն նոցա ։

(24) Հէնուա անխանէս ։ Ըստ նմանութեան սառայնի կամ կոտւոյ գործես զմի օրն, ինքնանք արևուն առնելով ջէգ, այսինքն մութն, գիշեր. և եւ մանքն առնելով ....օփ, այսինքն ախւ, ցերեկ. որով մի օրն լինի իբրև երկգոյն կտաւ՝ գործեալ 'ի սևոյ և 'ի սպիտակէ ։ Եւ զայս առնես սաէ՝ անձառ արտաէսթիա. զի զհամեմատութեան տունջեան և գիշերոյ հաղև նշմարին բազմաքննին աշխարհագէտք յիւրաքանչիւր կողման երկրի ։

(25) Յէթ նախաճարգ ։ Յետ նախկին արարչութեանն՝ արարեր զխառաւորան հրաշակերտերն հանդիսից, փոխանակ սաէլոյ՝ զխառաւոր հրաշակերտ հանդէս կամ գործս, ընդ որս կանխաւ խակ հնանայր երջանիկ կամ որբաղան գկին Յովբայ. (Թ. 10) սաէլով. 'Որ առնէ զմեծամեծս և զան

քննիս, և զփառաւորս և զհրաշակերտս, որոց ոչ գոյ թիւ ||: Մարգարէաբար յեղելոց անտի մեծագործութեանց աշխարհի՝ գուշակեաց Յովբ, թէ Ա՛Ծ առնէ, այսինքն առնելոց է զնա հրաշակերտս, որ է այլ ինչ գոյացութիւն, այլ նոր արարած կամ յօրինուած փոխելի էակի, խնդալի կամ օրհնաբանելի վիճակի. և է անեղծ արարչագործութիւն, գերազանցեալ քան զաշխարհական արարչութիւն, յորում միշտ եղծումն գործի, և հուսկ յետոյ վախճան առնուցու, բայց արարչագործութիւնն՝ որ ՚ի Քնի մարդանալոյն՝ անեղծ և անվախճան է, ընդ ամենայն յաւիտեանս տևական, և հրաշալի գործք նորա՝ անթիւք:

(26) Որ ՚ի դիպմանց: ՚Ի հարմանէ, կամ ՚ի պատահարաց ոչ խորտակլի, կամ մի՛ խորտակեսցի:

(27) ՚Ի սփիւռս երկրի: մի օրին. ՚ի սփռեալս:

---

Մերոյին յաւելուած կցկէն հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ ԿԳ:

Ա. Եւ արդ առ ամենայն բան՝ յամենայնի ուղիղ ես՝ Ա՛Ծ. իրաւամբք դատիս. արդարութբ կշռես. ճշմարտութբ չափես. [1] օրհնութբ հետևիս. բարւոք ընթանաս. ստուգութն սիրես. յստակութն կամիս. [2] լուսաւորութն համբուրես. փորձիւ յանդիմանես. երկայնմտութբ քննես: Ոչ ունիս նենգութն՝ և ոչ գոռոզութն, այլ ամենևին հեզութն, հանդարտութն և ողորմութն:

Բ. Արդարացար վերին իմաստութն անայլայլական հօրդ հանճարոյ՝ կրկին վկայեալ անզեղջ գովեստիւ յորդեգրեցելոցն շնորհօք, ըստ բանին սրբութն՝ որ աւետարանաւն կենաց ՚ի քէն ընկալաք. որ [3] ոչ ՚ի կոծելն ողբացի, և ոչ ՚ի փողելն կաքաւեցի: Ասացեր անօրինիս՝ թէ մի՛ անօրինիր, և ես ՚ի նոյն չարիս պնդեցայ. մեղաւորիս՝ թէ մի՛ ամբառնար եղջիւր ՚ի բարձունս, և ես զընդդէմն քեզ գործեցի. և ոչ զգացի երբէք զառածեալս, թէ ՚ի ձեռն քո են եղջիւրք արքայութն հպարտից ամբարձելոց, խոնարհեցուցանել և բարձրացուցանել, ըստ ամբակումայ, դաւթի և զաքարիայ: Օրհնութն ինձ կամեցար՝ ողորմած, և ես անիծեալս՝ մեծ տարագրութբ խոտորեցայ յարժանին ինձ մասն. սիրեցի բարկութն՝

և ոչ բարութեան. շօշափեցի ըստ գրոյն՝ զխաւար և ոչ զլոյս. կենդանի ձայնիւդ քո գթած՝ ապառումն պատասխանեցի։ Զորդն՝ անմահ ասացեր բանիւ եսայեայ, և զհուրն՝ անշէջ, և զկշտամբութիւն՝ անվախճան, և զտեղին՝ յաւիտենից, և զօրինակ նմին՝ սոսկալի, և ես ոչ իմացայ, ըստ սաղմոսողին, և ոչ մտառեցի. այլ 'ի մռայլ մտաւորական կուրութեան գնացի։ Ցուցեր մարգարէիւն, թէ զօրհնութիւն ստացի՝ [4] որ զօրէնս դնէ, և ես համառօտել զնոյն փութացայ։ Արձան հոգևոր վիմի գրեալ մատամբ քո՝ տէր յս քս, [5] զդաւիթ իւրովքն բանիւք կանգնեցեր, աւելորդ ինքեան ընտրութեանն առ սոյն, թէ պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան. անդրադարձութեամբ բանին միջնորդեալ զկրկին հաստատութիւն, թէ և յաւիտեանս յաւիտենից. ընդ որս՝ և զորին նմանիս պարծանաց՝ առ իմս խրախոյս, և ոչ զկծեցայ. Ճեպեցայ [6] 'ի տունս բահաղու, և ոչ այ. 'ի յերկուս [7] հետս երկմտութեան կրկին կաղացի կասեալ 'ի բարեաց, ըստ երգիծանելոյն հեղիու։ Ունիմ զմովսէս իւրովքն օրինակօք՝ եկեալ 'ի մեռելոց, և զտառս մարգարէիցն՝ գրեալ 'ի յոգի, և զմատեանս առաքելոցն՝ ընդ մտացս մատն յեռեալ, և զտէրդ հասարակաց՝ կտակաւն աւետեաց՝ յարուցեալ 'ի թաղմանէ անթիւ ննջեցելովք. և անհաւատագոյն քան զհնգեսին եղբայրակցութիւն այնր մեծատան, որ է առակ իմն յարմարական, նմանեալ զգայականացն մասանց՝ անողորմիցն յղփացելոց, մնացի իբրև զսալ [8] դարբնաց անոստ՝ յամառեալ քարացեալ սրտիւ, որպէս օրինակն է բելիարայ, և ոչ ապաշխարեցի։

Գ. Այլ ազդեմ վերստին առ սոյն կերպարան լքեալ կրկին ողորմութեան բարի, ահաւոր, մարդասէր, խնամակալ, կենդանի, սուրբ, լուսաւոր և անվախճան թագաւոր, զօրութեամբ պանծալի խաչիդ խորհրդոյ, 'ի կարծրացեալս մեղօք անբեր անդաստան՝ երիկամանցս յիմարութեան և անպտուղ սրտիս լքութեան. զի առեալ նպաստ օժանդակութեան 'ի գթութենէ կամաց ամենակալիդ, [9] որոտացէ՛ բղխեսցէ՛ հոգիս, ընծայեալ աչաց վշտացնեցելոյս՝ վտակս արտասուաց

արբուցանողաց՝ ինձ 'ի փրկութիւն և 'ի մաքրութիւն, և քեզ 'ի հաճութիւն ընդունելութեան՝ ամենապարգև տէրդ բոլորից, փառաւորեալդ յաւիտենից. ամէն:

---

(1) Օրհնութիւն հեթանոսաց: 'Ի հեռուստ մեզ, կամ յորժամ զկնի մեր գաս խնամելով և պաշտպանելով, օրհնութիւն ընդունիս. կամ, զհետ փախուցելոյն 'ի քէն՝ օրհնութեամբ գնաս, և ոչ անիծանելով. կամ, 'ի գալդ քո՝ օրհնութիւն բերես:

(2) Լուսաւորութիւն համբառնես: Զյայտնութիւն, կամ զպայծառութիւն մտաց. իմաստութեան, և սրտի ախորժելս: Փորձիւ յանդիմանես. քննելով յանդիմանես, և ոչ անքննաբար:

(3) Ո՛չ 'ի խոժոռ: Յանձն լիր առնու զառակն մանկանց՝ զոր ետուն առաց 'ի յանդիմանութիւն հրէից. (մատթ. ժա. 16:) Զայն առակ իբրև խաղ ինչ սովորական 'ի մէջ հրէից համարին մեկնիչքն՝ կոռնելիոս, մենոքիոս, կալմէթ, և այլք՝ առեալ 'ի Թէոփիլակտոսէ: Այդ՝ ես ասէ, ոչ ընդ ապաշխարողին կոծեցի, և ոչ ընդ արդարոյն խնդակից եղէ. կամ, ոչ 'ի սպառնալն զարհուրեցայ, և ոչ 'ի խոստմունս բարեացն յորդորեցայ: Որաւէ արդար ցուցար իմաստութեան հօր՝ ըստ քո իսկ ասելոյն, 'ի գալեդ զիս. իրքն հրայեալ, յարդարոյն՝ թէ այժմ, և թէ յաւուր դատաստանի. անդէղէ, այսինքն հաստատուն և անփոփոխ գովեստի. կամ իրքն, այսինքն գործով և բանիւ:

(4) Որ զօրէնս տնէ: Ըստ սաղմ. (ճժ. 8.) օրհնութեան արժանի լիցի՝ որ զօրէնս ուղիղս հաստատէ, կամ 'ի գործ դնէ. իսկ ես ջանացայ համառօտել զօրէնս՝ զանցառութեամբ:

(5) Զդաւիթ խորհիս: Իբրև տախտակ օրինաց գրեալ զօրութեամբ քով կանգնեցեր զդաւիթ 'ի ձեռն օրինապահութեան, որպէս և ինքնին վկայէ՝ միշտ պահեալ զօրէնս քո, անդրադարձութեամբ բանին, վերստին դարձուցանելով կամ կրկնելով զնոյն բառ՝ յաւիտեանս յաւիտենից, կրկլին հաստատէր զպահումն օրինացն: ընդ որս, այսինքն ընդ որ բանս և զայլ նման բանս պանծալիս վկայէ, եւն. կամ ընդ որս առեալ իբր եզական, այսինքն ընդ որում, իմանի՝ ընդ դաւթի զնորա նման պատուիրանապահս պանծալիս կանգնեցեր առ 'ի յորդոր ինձ, և ոչ յօժարեցայ, կամ ոչ 'ի սրտի ամաչեցի, եւն:

(6) 'Ի փառս բաշխող: 3. օրին. 'ի փառս, այլ օրին. 'ի դէմս: Առաւել փութացայ 'ի տաճար կամ 'ի հանդէս բաշխող, այսինքն աւխոյց մարմնոյ, 'ի խրախուսս աշխարհի, քան թէ 'ի պաշտօն Այ:

(7) Հեշտ երկմտութեան: Երկմտութիւն ոչ զհաւատոյն ասէ, այլ զգործոյ. կաղայի յերկուս ճանապարհս բարւոյն և չարին անհաստատ գնացի. կամ, 'ի ծառայութիւն Այ խառնեցի և զծառայութիւն դիւին, ըստ երգեծանելոյն, ըստ նախատելոյն կամ մեղադրելոյն եղիայի: (գ. թագ. ժը. 21:)

(8) Դարբնաց անոր: 2. օրին. անընդդատ: Անշարժ մնացի իբրև զսալ դարբնաց, որ հարկանի կռանով՝ և ոչ զգայ, ոչ շարժի. այսպէս և ես անշարժ առ'ի բարին եղէ ըստ նմանութեան սատանայի: Եղո՛ւկ դու անձն իմ. զի խորտակածաղ մեծատունն 'ի դժոխս անդ՝ բաւական համարէր առ 'ի զգաստութիւն հնգեցունց եղբարցն՝ եթէ Ղազարոս եւեթ յարուցեալ գնայր և քարոզէր նոցա: Իսկ ես ունիմ աչս ասէ՝ զնոյն ինքն զՄովսէս եկեալ 'ի մեռելոց յայլակերպութեան տն, և զբանս մարգարէից և զմատեանս առաքելոյն 'ի միտս և 'ի բերանի կրեմ: 'Ի վերայ այ-

տոցիկ և զամենեցուն զՏերդ ունիմ յարուցեալ ընդ բազմաց այլոց։ Սակայն առաւել անհաւան քան զհնդեսին եղբարն գտանիմ, որ են յարմարական օրինակ անուղղայ մնացելոց զդայութեանցս։ Այլ ողորմեա՛, պարգևեա՛, ներգործեա՛ կրկին ողորմութ՝ յայս իմ եղկելի առհմա՛ն. և 'ի քարացեալ սրտես բղխեցո՛ զօրութեան խաչիդ աղբիւրս արտասուաց, որպ մովսեսի պատաղմանէ 'ի վիմէն։

(9) Որոտացէ բղխեցէ հոգին։ Այսպէս եդաք ըստ մերում և ըստ այլ ևս օրինակաց՝ համեմատ իմաստից բանին, իբր ասել. սիրտ դորովել իբր անդաստան կարծրացեալ և անպտուղ, օժանդակեալ 'ի գթութենէ սուրբ հոգւոյդ զօրացէ, և բղխեսցէ զարտասուս իբրև անձրև առ 'ի ոռոգանել զսիրտ իմ։ Իսկ յառաջին տպագիրս եդեալ կայր, որոտացէ, ևն. որ չյարմարի նաև շարակարգութեան բանին՝ յետ առելոյն՝ ըն տանել նպաստ օժանդակութէ ... յարել, որոտացէ, ևն։

---

Սրտին յաւելուած հրէին հեծութեան՝ նորին հոյնորդ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ԲԱՆ. ԿԸ.

Ա. Եւ արդ՝ ես նախնիս ամբարշտաց, գլուխս մեղուցելոց, պետս անիրաւաց, առաջինս պարտաւորաց, պատկերս յանցաւորաց,[1] ատտիկեցիս ըստ վատթարութեան, այլ ոչ ըստ բարեբաստութեան, ահա՛ զանձաւիցն իմոց ձաւեցի. զպատկառելին խայտառակեցի. զգաղտնիսն հրապարակեցի. զծածուկսն յայտնեցի. զթաքուցեալսն ցուցի. զամփոփեալսն տարածեցի. զգառնութեանս մաղձ ժայթքեցի.[2] զգործակցութիւն չարին մատնեցի. զամբարեալ թարախ վիրիս քամեցի. զխորս պարտեաց իմոց ծանուցի. զպատրուակն կեղծեաց առի. զքօղ տգեղութեան վերացուցի. զամօթալեացն զգեստ մերկացուցի. զգարշելին յանդիմանեցի. զմիւռոնն մահու փոխեցի. զպալարս հոգւոյս խածուածոյ՝ քահանայապետիդ քո՛ բացի։ Յանձինս վտանգ ոչ անխայեցի. մարմնոյս սիրով ոչ աչառեցի.[3] զարմատն հնութեան՝ տեսիլ արարի. բնութենս կարեաց ոչ ողորմեցայ. զմիաբանութեան կապ խզեցի. զդղեակ սրտիս քանդեցի. ընդ կամացս որսոյ իբր ընդ դարմանակալի մահու կռուեցայ. զպահեստ անյայտիցն արտաքս հանի. ըղձմթերիցն զանձ՝ մեծին գուշակեցի. զդատախազն՝ դատաւորին հանդէպ կացուցի. զապառնեացն զփորձ

այժմէն իսկ գտի. զդաշն կործանողին կտրեցի. զուխտն խաբողին ցրուեցի. զկատարած մարտին յաղթութե՛ 'ի քեզ տէր յս̄ ապաստանեցի. զպատերազմին խումբ գրգռեցի. զգլխադրուն գլխեցմանն՝ բանիդ ա̄յ յուսացայ. զխաւարասէրացն փաղանգ՝ լուսեզինացն զինուց սադրեցի :

Է. Դու արդ՝ ստեղծիչդ ամենայն եղելոց ք̄ո որդի բարձրելոյդ ա̄յ, զաստէն դսրովելոյ յայսպիսեաց բանից, և զհարուածելոյ յայսքանեաց գանից՝ մի՛ կշտամբեսցես կրկնակի դատել 'ի մեծի աւուրն : Ահա հզօր անքնին անճառ բարերար թագաւոր անմահ, առ այս կերպ պատկառանաց՝ ինքնապարսաւ խոնարհութե, որ յինէն զանձն՝ մեծաւ ձաղանօք յոգի դատեցի, լի՛ց նուագօք այսր մատենի՝ անարգանօք ամօթոյ՝ զդէմսն ստանայի. և զերեսս կերպի պատկառեցելոյս նշանաւ խաչիդ զօրացի : Մխացի կնիքդ լուսոյ 'ի գեղ տեսակիս. ամրութե՛դ նշան հաստատեցի՝ [4] 'ի տիպ դիտակիս. երևակ կենացդ փայտի ձևացի 'ի պատկեր այտիս. արուեստդ հրաշից՝ 'ի ճակատիս շուք նշանակեցի : Մի այլայլեսցի յինէն՝ դրոշմդ լուսապաճոյճ. մի բարձցի 'ի տեսանելեացս բբաց՝ ճաճանչդ օրհնութե. մի մերժեսցի 'ի գլխոյս՝ առհաւատչեայդ վստահութե. մի սասանեսցի 'ի բերանոյս ամրութե սեմոց՝ փառք ա̄ծնագրութեանդ : Պահպանակդ երկրպագելի՝ 'ի զգայարան սրտիս միասցի. չորից նիւթոց իմոյս գոյութե քառաթևիդ նշոյլ ազդեսցէ. ձեռինս կարկառման՝ փրկչիդ իշխանութիւն օժանդակեսցէ. մատուցման հաստուածոյ մատինս՝ խորհրդարանդ համարձակութե բարեգործեսցէ : 'Ի մեկնելս իմում, [5] մի հեռասցի սրբութիւնդ. մի լքցի պատիւս՝ 'ի պատւին պարտաւորիս. մի մերժեսցի 'ի յոգւոյս՝ անդաւաճանելիդ փրկութի. մի ջնջեսցին գիծք կենդանատուիդ՝ 'ի ք̄ո գրեցեալս ընչոյ. մի եղծցի նկարուա̄ծ արեան զօրութե՝ 'ի տիրատիպ խորանէս. [6] ընդ իս բնակեսցէ յիմում գերեզմանին. 'ի ծորել մարմնոյս թշուառի՝ օծումն շնորհիդ առ իս պահեսցի. 'ի նորոգութեն աւուր՝ սովաւ հանդիպեցայց փառաց փեսայիդ. [7] 'ի քոյոց այտի ծանուցայց, քոյովքդ վաստակօք

պճնեցայց, երախտեօք մեծիդ յարգեցայց, աւա-
զանին զգեստիւ պերճացայց՝ քաւեալ ողորմութբ։
Սատո՛ բարեգութ՝ զվերարկուդ անապականութե
տաժանեցեալս մեզօք մարմնոյս. [8] մի յարիցէ ընդ-
քոյս՝ բանսարկուին. հնացուցիչ հոգւոյս՝ վատնես-
ցի. խաւարաբնակացն պատիրք՝ մի ընդ իս վերերևես-
ցին։ Օրհնեսցի անուամբ քո գթած՝ վիհն իմ
հանգստեան. ողորմութբ քո լցցի դուրն իմ դերու-
թե. ընդարձակեսցի քև ինձ՝ տեղին թշուառութե.
անդո՛րր եղիցի խո՛րնամող՝ ինձ բանտն բարկութե. [9]
մնուսցէ զիս առ յաձուսն՝ արգանդն մթութե. յու-
սով քո շտեմարանեսցէ զիս՝ յարկն այն անձկութե.
ձեռամբ քո պահեցայց 'ի խշտին տարտամութեան.
թևօք քո ընկալայց՝ 'ի տունն տագնապի. դու գո-
վեալ ընդ իս՝ 'ի սենեակն վտանգի։ Նաւ՛ս ինձ աս-
տանօր՝ [10] 'ի թիւս հաշարաց, զի երբեմն էի վեր-
նային, և այժմ անդնդային. երբեմն տօնելի, և
այժմ աշխարելի։

Է. Ուլ և արդ [11] կրկին դու օրհնեալ 'ի բոլորից
դոյից՝ յերկնայնոց և 'ի ստորնայնոյ՝ և 'ի սանդարա-
մետականաց մեռելոց՝ անպարտականդ այս տարա-
գրութե։ Ես վրիպեցայ. ես օտարացայ. ես յիմա-
րեցայ, պարտեցայ, և խոտան գտայ. ես լքայ, կա-
մեցայ, և կործանեցայ. ես մոլորեցայ. ես մատնե-
ցայ. ես մերժեցայ. ես խորթացայ, դերեցայ, և
դայթագղեցայ. ես նզովեցայ. ես թշուառացայ,
աղբեցայ, և վատթարացայ. ես ընկլուզայ. ես խա-
բեցայ. ես անօրինեցայ ես ապականեցայ, մահա-
ցայ, և իսպառ եղծայ. չիք քո առ այս՝ ինչ [12] մասն
չարի, որ ես միայն անփոփոխ բարի։ Արդ՝ կամք քո
յիս, և [13] խաւարն ինձ ճառագայթ. ճրագ յուսոյ
քո անդ, և գիշերն վաղորդայն. մարմնոյ քո հաղոր-
դեալ, և յամօթոյն կարծեաց ապրեալ։ Իսկ ես [14]
ոչ դրեմ զանձն իմ կենդանի՝ վասն անփախչելի
վախճանին. դարձեալ՝ զիս ոչ վարկանիմ կորու-
սեալ՝ վասն աներկևան նորոգմանն։ Որ և [15] փա-
կեալ համարիմ ինձ զելս կենացդ՝ վասն անքակե-
լեացն պարտեաց. դարձեալ՝ բացեալ ինձ ըղ-
դրախտն՝ վասն փրկութեն աւետեաց. քանզի ոչ

այնքան վհատութեան զոյժ տագնապէ, որչափ փրկութեանդ քաջալերեալ ձեռն կարկառէ։ Դու՝ տէր տէր՝ տէր ողորմութե, առ ամենայն ձայն գոհաբանեալ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

(1) Ἀττικισμός։ Ատտիկէ էր գաւառ աքայիոյ, կէս եղլադայ, որոյ մայրաքաղաք էր աթէնք՝ աթոռ գիտութեանց և օրինաց և քաղաքականութե. յորմէ ἀττικισμὸς՝ նշանակէ աթենացի. և զի որպէս իմաստութբ անուանի էր այն գաւառ, նոյնպէս չարութբն և մանաւանդ՝ անպատկառութբ. կամ զի յառաջն 'ի շինութե իւրում բարեբաստիկ գոլով, յետոյ կործանմամբն ընաւ անարգեցաւ. վասն այսորիկ ἀττικισμὸς առի առաւելն յերկաքանչիւր ներհական, այսինքն թէ 'ի բարեբաստութե, և թէ 'ի վատթարութե։ Առ յոյժս՝ առել, ատտիկեցի հայեցուած, նշանակէ՝ անպատկառ, լիրբ։ Նոյնպէս, ատտիկեցի պանդուխտ, իմանի անմարդի դրացի։ Եւ ընդ հակառակն՝ ատտիկեցի հաւատարմութի, վկայ, քաղցրաւենիք, եւն, իմանի՝ գերազանց, ընտիր։ Առեալն 'ի սկզբան աղօթիցս [illegible] ἁμαρτωλός, կամ δοῦλος, ἀνάξιος եւն, որ և առաջեալն 'ի բանն հբ. 2. է սովորական խոստովանութի արանց երկիւղածաց. զոր նոքա ճշմարտութբ առեն, քանզի միայն զիւրեանց մեղս և զպակասութիւնս քննեն, և ոչ զայլոց. ուստի որպէս ճանաչեն զինքեանս, այնպէս և խօսին, և բան նոցա գոլով համաձայն ճանաչմանն, ոչ սուտ առի՝ այլ ճշմարիտ. (տե՛ս 'ի մեկն թղթոյ. Փիլիպ. բ. 3։ ա. Տիմոթ. ա. 15։) Բան այսպիսի սուտ է արդարև 'ի բերան այնոցիկ, որք մեղաւոր առեն զանձինս՝ ոչ զի այնպէս ճանաչեն, այլ զի մի՛ յայլոց ծանիցին այնպիսիք։

(2) Συνεργασίας χάριν։ Զիմ գործակից լինելս աստուծոյ՝ [illegible], յայտնեցի։ Θεοῦ συνεργοί. 'ի բաց առի զծածկոյթ ոգւոյս, [illegible] բացի զոգեղութի իմ։

(3) [illegible]։ զհին և զփառաւոր արմատն. այսինքն զախտս հին մարդոյն, կամ ապականեալ բնութեանն՝ որք իբր արմատ 'ի խորս թաքուցեալ կային, [illegible], 'ի վեր հանի 'ի տես ամենեցուն, խայտառակեցի։ [illegible], այսինքն անօթոյ, պատկառանաց ոչ ողորմեցայ։ [illegible], զմիաբանիլ իմ ընդ զգայական կամացս, կամ զդաշն ընդ դիւին՝ խզեցի խոստովանութբս։ [illegible], զերդն, այսինքն զդաշնութի սրտիս, յոր ապաստանեալ կային ախտքն և մեղք, քանդեցի հրապարակելով։ [illegible], ընդ կամաց մարմնոյս՝ որ է որս սատանայի, կամ ընդ խնդրողի զմահ հոգւոյս կռուեցայ, զանհաճոյս նորա գործելով։ [illegible]. զընդդիմանալն յարձակման սատանայի՝ քեզ իմ բանիւ [illegible], այսինքն յօսամ յանձնեցի։ [illegible], զնուաբս դիւացն, [illegible], հրեշտակաց զինուցն կամ զօրութեան [illegible], յանձնեցի կամ մատնեցի, մի օրին. [illegible]. զոր իբր գործիական առեալ իմանի, զինուն հրեշտակաց գրգռեցի զժողով պատերազմող դիւացն. որպէս առ մակաբէիս հրեշտակ մի փառեալ զինու երևեցաւ, և պատրաստէր յարձակիլ. (բ. մակաբ. ժա. 8։)

(4) 'Ի [illegible]։ 'Ի կերպարան երեսացս՝ հաստատեցի նշան խաչին՝ փոխանակ անօթոյս։ [illegible], երևոյթ կմ ձև խաչին տպաւորեցի յայտս իմ, այսինքն յերեսս։ [illegible], հրաշալի արուեստ կամ գործիք փրկութե՝ 'ի պատիւ ճակատու [illegible]։ այլ օրին. [illegible]։ Յայս ամենայն բանս՝ այլ և այլ օրինակաւ զմի ինչ խնդրէ.

այսինքն անպակաս տանել յինքեան և յանդամս իւր զնշան և զզօրու-
թիւն սէր խաչին ։ Խորհրդարանդ , որ խաչդ՝ որ է տունչ կամ աթոռ հա-
մարձակութե առ ած , Բարեգործեալ , օգնեսցէ կամ յաջողեսցէ մա-
տուցման մատինս 'ի յաղօթել, 'ի խաչակնքել, 'ի կատարել զխորհուրդս
եկեղեցւոյ , ևն ։

(5) Մէջ հեռասթ ։ 'Ի բաժանել խնամ յաշխարհէ , կամ 'ի բաժանել
հոգւոյս 'ի մարմնոյ՝ սրբութիւն շնորհացդ մի հեռասցի ։ 'Ի պարէն , յոր-
ժամ պատանօք ամփոփի մարմինս, մի բարձցի պատիւն քրիստոնէական,
կամ պատիւ պարկեշտութեան ։ Գէծ+ հենտանպուէտ , դրօշմածք կամ
նմանութիւնք կենդանացուցչիդ՝ որ 'ի ձեռն խորհրդոց եկեղեցւոյ , և 'ի
ձեռն շնորհաց , մի ջնջեսցին 'ի հոգւոյս՝ զոր դու գրեցեր 'ի քո նմանու-
թիւն . կամ, 'ի հոգւոյս՝ որ քո է գրեալ, այսինքն հաստատեալ ։

(6) Ընդ իմ Բնակեալ ։ Նշան ամենազօր սրեան քո , նմանապէս և օծումն
շնորհիդ՝ ընդ իս մնասցէ և պահեսցի 'ի գերեզմանին ։ Իմանալ պարտ
է ըստ զօրութեան . վասն զի ներգործութիւք խորհրդոց եկեղեցւոյ և շնորհք
ախտապէս 'ի հոգւոջ են՝ որ չմնայ 'ի գերեզմանի . բայց վասն շնորհաց
և արժանաւորութե հոգւոյն պահէ ած զմարմինն կամ զնշխարս մարմ-
նոյ՝ անմերձ 'ի դիւական ներգործութենէ , և յինչ և լցէ անպատուու-
թենէ ։

(7) 'Ի փոյթ տուր ։ 'Ի յառնել խնամ երկեւցայց լինել 'ի ծառայից քոց
և 'ի սիրելեաց ։ Փոյժէր հաղորդոք , զօրութեամբ չարչարանաց քոց զարդա-
րեցայց ։ Առաջանին գդեալի ։ Ոչ զառաջին անմեղութիւն որ 'ի մկրտու-
թեան՝ ունել խնդրէ , այլ զամենևին մաքրութիւն 'ի մեղաց , զոր քաւութեամբ
շնորհել առէ ։

(8) Մէջ յարէշէ ընդ փոյս ։ Ընդ քո բարեքդ կամ պարգևս բնութեան և
շնորհաց , որպիսի է կեանք մկրտութեան , դրօշմ , և քահանայու-
թե , մի յաւնեցէ Բանաւորեալին , այսինքն գործք կամ գեւոք սատանայի,
որք են մեղքն , կամ պարտք մեղաց ։

(9) Մնասցէ ընդ իս ։ Գերեզմանն մթին՝ իբրև արգանդ վերստին ծննդեան՝
պահեսցէ զիս յաճումն յարութե ։ Բնաւ ոչ , աջով պաշտպանութե քո
ընկալայ , այսինքն ընկալեալ եղէց , եդայց 'ի տուն մահու 'ի գերեզմանի ։
Դու գոլով ընդ իս . ըստ խնամոց պահպանութե ընդ ինքեան լինել հայ-
ցէ 'ի գերեզմանին , ըստ որում վասն Յովսեփայ ասի (Իմաստ. Ժ. 13.)
* Ընդ նմա էջ 'ի գուբ ‖ ։

(10) 'Ի Բեւոս հաղարաց ։ այսինքն հազար անգամ աւաղ ինձ . և ըստ չա-
րագրութեան պարզի՝ աւաղ հազար թուով կամ 'ի հազար նուագս . զի
բառն հաղար՝ որ ածական է Բաւսյն , եդեալ է 'ի սեռական հոլով իբրև
յատկացուցիչ , ըստ ոճոյն 'ի բանն ծը . ըծ . 4 ։ Իսկ եթէ հաղարաց զատ
առնուցումք , որպէս թէ հազար անձանց , բացատրի . աւաղ ինձ պատ-
չաճի ընդ այլոց հազարաւոր անձանց . զի խօսի զհասարակաց թշուա-
ռութէ մարդկան ըստ մահկանացու վիճակին , որով այն որ երբեմն Հեր-
նայէն էր , այսինքն շրջօղ 'ի վերայ երկրի , այլև փոնէլի , զուարճալի ,
նիւթ ուրախութե , մահուամբն և թաղմամբ լինի անդնդայէն , 'ի խորս
երկրի ընդ հողով , և աշխարհէլի , ողբալի , նիւթ սգոյ ։

(11) Կրկին տուր օրհնեալ ։ Թէպէտ ինձ հազար աւաղ պատշաճի , բայց
դու կրկին ևս օրհնութե ես արժանի՝ իբր անպարտական այսմ խնոյ տա-
րագրութեամբ մահուամբ . վասն զի Եւ Հրեղէգայ , ևն ։

(12) Մտան լուրէ ։ 3 օրին . նաւն . և խմանի՝ յայս ամենայն միասնապար-
տութիւս իմ չունիս դու և ոչ փոքր գործակցութի ։

(13) Խաւարն ինչ ։ Յորժամ կամք քո լցցին յիս , խաւարն խաւար գե-
րեզմանին լինի ինձ ճառագայթ , ևն ։

(14) Ո՛ւ գիրէն: Այժմ մինչ առողջս եմ, և շունչ իմ յիս է, ոչ համարիմ զանձն իմ կենդանի, վասն անփոխելի վախճանին, վասն անվերծանելի մահուանն. զի որ վճռեալ է մեռանել անվրէպ, իբր արդէն մեռեալ համարի: Բայց օրինակ ինչ դնէ, վասն անշարժելի վախճանին, զոր մարթ է իմանալ զժամանակէ մահուան, զի ոչ գիտեմք զչափ յապաղման նորա: Դաւթեան ՂԹ. 4 օրին. ՂԲ: Այնպէս ոչ համարիմ զիս կորուսեալ մահուամբն՝ վասն աներկեան նորոգմանն, վասն աներկբայ նորոգմանն 'ի ձեռն յարութեն: 'Ի բովանդակ բանիս ասել կամի. ոչ 'ի կենդանութեն իմ վստահիմ, վասն զի մեռանելոց եմ. և ոչ ընդ մահ իմ տրտմիմ, վասն զի յառնելոց եմ:

(15) Փոխեալ համարեմ: Եթէ հայեցեալ յանքաւելի պարտիս իմ, փակեալ ինձ տեսանեմ զճանապարհ կենաց. բայց 'ի խոստումն փրկութեան հայեցեալ, այժմէն զդրախտն բացեալ համարիմ առաջի իմ: Ոչ այնչափ գոյժ կամ երկիւղ յուսահատեցուցիչ խռովէ զիս, որչափ Քրիստոսիւ, այսինքն փրկութիւնդ քաջալերեալ օգնէ. կամ որչափ աւետիք փրկութեան զօրացուցանէ. քանզի նոյն իսկ սպառնալիք պատուհասին առաջնորդէ 'ի փրկութեան ճանապարհ:

---

Սերոպէն յաւելուած հրեղէն հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղէտս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

## ԲԱՆ. ԿԶ.

ա. Արդ՝ որ ոք և առցէ զայս դեղ մաղթանաց այսր [1] մատենի պարկեշտականի պաղատել սովաւ, եթէ 'ի մեղաւորաց իցէ մատուցեալն, եղիցի և ես իմովս բանիւ կցորդեալ նմա. իսկ եթէ յարդարոց գուցէ յառաջեալն, գտայց և ես սովիմբ՝ ընդ նմին ողորմեալ նովաւ: Ապա թէ երջանկացի այնպիսին ինքեամբ՝ ինձ միայնոյ գրեալ զեղկութիւն, և ես ինձէն վկայեմ այսմիկ: Բայց յիշեսցէ նա զսողոմոն և զբանս նորա զհոգեշունչս, թէ [2] ո՛վ ոք վըստահասցի սրտո՞ք ունել, և կամ ո՛վ պարծեսցի մաքուր լինել 'ի մեղաց. և զի ոչ յարեաւ մարդ երկրածին՝ ազատեալ 'ի պատասխանեաց. և ոչ ընտիր՝ ինքնարշաւ վազիւքն, և ոչ՝ թէ և 'ի թռիչս ամբարձման թեւոց բերիցի. առ որ զգոյշ լինիցի [3] կրկին երկուցեալ 'ի վիմին իսկ հաստատութեան՝ ուսեալ 'ի պօղոսէ, գուցէ անկեալ 'ի յերկիր՝ [4] սահմանողի այսմ կանոնի իրաւադատի՝ կշռեալ նմանեսցի: Այլ առցէ զայս կշտամբութի մաքուրն՝ նիւթ պսակաց, առ

'ի չիջանել անընտրողաբար յանձեռնհամ բարձրու-
թե․ պատժապարտն՝ առիթ ազատութե, որով ամ
բարձեալ 'ի կործանմանէ հոգեւորական մահուն՝
ապրեսցի յուսով։ Իսկ ինձ եղիցի պատգամս այս
բանի՝ արձան փորագրեալ՝ ամենեւին անեղծանելի,
որ փոխանակ իմոյ եղկելւոյս անձին մահացուի՝ ան-
դադար հնչմամբ հեծութե լալոյ՝ առանց լռելոյ միշտ
աղաղակէ․ լիցի և ոսկերացս քակտեցելոց [5] 'ի հողա-
պատեան շիրիմ վերարկուին՝ անմռունչ ձայնիւ զայս
խոստովանել․ հասցէ և մարմնոյս 'ի հող լուծելոյ՝
բարբառով իմն անազդելեաւ՝ ծածկատեսիդ զայն
պաղատել։

Է․ Տէր գթութե, աղբիւր ողորմութեց, պարգեւք
բարութեց, որդի բարձրելոյ տէր յո քո, ողորմեա [6]
խնայեա, մարդասիրեա․ նայեա 'ի վտանգս․ ակնար-
կեա 'ի բեկութիս․ խոնարհեա՛ց 'ի թշուառութիս․
տես 'ի տարակոյս [7] անձեռնհաս տագնապիս․ հասի՛ր
հաղորդել կորստականս կարեաց։ Շօշափեա բժըշ-
կապէս՝ զամենաթշուառ ախտաւորութիս․ ո՛ւնկն մա-
տուսցես քաղցրութբ՝ ողորմագին հեծութես․ լո՛ւր
'ի խորոցն անդնդոց մահուն գերեզմանի՝ անմռնչելի
հառաչմանս․ մտցէ յականջս ամենալուր լսելեացդ՝
ձայն պաղատանաց վտանեալ անդամոցս։ Իսկ վասն
զի [8] գրաւական կենդանութես անապական է, անփո-
փոխ լիցի և սիրոյդ քո գթութի․ կցորդ լեր հեզու-
թբ՝ տաժանաւորս տկարութե։ Մեռեալ պատկե-
րիս՝ մի ոխս պահեսցես․ ընդ անշունչ կերպարանիս՝
մի 'ի դատ քննութե մտցես․ մահու տանջեցելոյս՝
մի հարուածս յաւելցես․ ընդ բեկեալ խեցեղէն ա-
նօթոյս՝ մի ուժգնութբ մարտիցես․ վճռաւ կոչկո-
ճելոյս՝ մի բարկութի կրկնեսցես․ կործանեալ շի-
նուածոյս՝ մի պատուհաս մատուսցես․ շանս սպանե-
լոյ՝ մի քարինս արձակեսցես․ լուծս ջախջախելոյ՝ մի
սաստիկս որոտասցես․ հողոյս անպատուելոյ՝ մի իբր
ամբարհաւաճի ուժգինս մռնչեսցես։ Օ մոխիրս մեր-
ժելի՝ մի 'ի դատ ընտրութե կոչեսցես․ զփոշիս ցնդե-
լի՝ մի իբր զքո դիմամարտ գտցես․ զտիղմ տաղտ-
կալի՝ մի իբր զոսոխ վարկանիցիս․ զգարշութիս ան-
գոսնելի՝ մի իբր զռնամարտիկ վանեսցես․ զխէթս

'ի բաց ընկենլի՝ մի՛ նիւթ գեհենին պահեսցես. զայս-
քանեաց բազմապատիկ բանից կշտամբեալս՝ մի՛ վե-
րստին յանդիմանեսցես ։

Դ. Այս ամենաթշուառ և [9] խաւարարդել չիրմին
են ահա սրտաբեկ և յոքնաթախիծ արգահատութիւք.
հաստատեսցէ օրհնեալդ քո բան՝ անփոփոխական
լինել, ըստ սրտի արգահատելոյս. քանզի և այժմ
մինչ կենդանեօքս խօսիմ, մեռեալ եմ անհասիդ.
որպէս 'ի կորուստ մահուն սատակման՝ ամենազօրիդ
հրամանի՝ անեղծ եմ հաւատովքս ։ Արդ՝ աղաչեմ
զքեզ՝ տէր յս քս, հայեաց յիս ողորմութբ, և մի՛
թողացուսցես լինել տնակից ինձ բելիարայ. և ըզ-
մահաղեկոյց տապանին ազդումն անկենդանաւորն
թնդման՝ թշուառն թաղման՝ աղաղակ ձայնի հա-
ռաչման լալեաց՝ քեզ հաշտեցուցչաց՝ յարգեսցես
լսել, միայն բարեգործ, հոգեսէր, հզօր մարդասէր.
և հոգիդ քո բարի բնակեսցէ ընդ իս՝ լոյս առնելով
ինձ 'ի խաւարին ։ Ննասցեն ընդ իս [10] կենարար քո
կրից պաշտեցեալ մասունք. զի իբր զաւանդ գան-
ձու զիս պահեալ 'ի քեզ, կենաց նորոգման ընծայե-
ցուսցեն. օձառք անվատնելի զինուց ինձ պատկա-
նեսցին, ընդ իս յարակայեալ քարինք պարսից՝ հո-
գևոր հնարից՝ զչարին հալածել զգունդ ։ Արտն [11]
որ առ իս՝ քև տէր վանեսցի. զի եթէ յարիցէ 'ի
վերայ իմ պատերազմել, տեսեալ զքաղաքն ունայն
'ի զօրաց՝ և զազդողականացն գործի ապաձայն, ըզ-
քեզ տէր ունիմ մշտնջենաւոր և աններհելի պահա-
պան ։

Ե. Ով եթէ այժմ իսկ կանխաւ արագեալ յա-
ռաջ քան զօրն կատարածի, և անշաւիղ արգելան
ինձ պատրաստեսցէ, առաքեմ [12] զաղօթմն տէրու-
նականս՝ նմին զան մահու. եթէ 'ի վայր զիս հնարի
կործանել, զծնրադրութի արարչին. եթէ [13] 'ի մո-
խիր երկրի թաւալել ձեռն բերիցէ, երեսացն տյ 'ի
նոյն մածուցումն՝ զնա հերքեսցէ. [14] եթէ վաստակս
ինչ ցաւոց նիւթեսցէ, քրտունքն յուռթի արեամբն
զանգեալ փրկչին աշխարհի՝ զնա խուեսցէ. եթէ [15]
յընթացից բարեաց զշունչս իմ պատանդեսցէ, կա-
պանք ամենաստեղծին՝ զիս արձակեսցէ. եթէ [16] յու-

րացութի պարգևաց լուսոյն բռնադատեսցէ, հայ-
հոյութեն համբերութի յանձամարտիցն՝ զնոսին ընդ-
նոյն կարկեսցէ. եթէ հարուածս նետից դաղտնաձիգ-
զինուց՝ ինձ արձակեսցէ, կարթ հնարից աղեղան
փառաց հօրն կապարճից՝ նմին պատահեսցէ։ Եթէ [17]
քօղով լուսոյ խաւարականի՝ մտանել ընդ աչս անա-
մօթեսցի, կափուցմն գլխոյն ձորձով պատեցեալ լոր-
մանն ամենից՝ զնա տանջեսցէ. եթէ մոլեսցի [18] զխտա-
հութի ձեռինս կապել, եղէգն մատուցեալ 'ի յաջ
գոյացուցչին՝ զնա չարչարեալ ըմբերանեսցէ. եթէ
ձաղանօք այպանման՝ զիս կատակեսցէ, տանելն ծա-
ղու ամենազօրին՝ զնա հենգնեսցէ։ Եթէ [19] բժժա-
նօք ինչ յուռթից՝ կախարդել խորամանկեսցէ, ապ-
տակն դիմաց հզօրին այ՝ զնա սաստկապէս ամաչե-
ցուսցէ. եթէ 'ի մուտս գիշերային մթութե խաւա-
րաւ խաբէութե [20] լինել մարտիցէ, 'ի Ճառագայ-
թից լուսոյ երևման քո տէր՝ խայտառակեսցի. եթէ
'ի միջօրէական տապոյ փորձութեցն՝ արեգակնակէզ
վատնիչ խորշակին՝ զիս 'ի յարմատոց խախտել կար-
ծիցէ, 'ի զօրութէ նշանիդ լուսոյ խլեալ գօսասցի։
Եթէ 'ի փչմանն շնորհէ ունայն զիս առնել հնարա-
ւորեսցի, թուքն զոր ընկալաւ տէրն քրովբէից ընդ-
մեղաւորիս՝ զնա պատկառեցուսցէ։ Եթէ ժանիք
խածօղք ինձ ցուցանիցէ, լռութի երկնաւորին բե-
րանոյ՝ զնա պապանձեցուսցէ. եթէ [21] խածմունս ա-
ղուականս հոգւոյս ազդեսցէ, բևեռացն հարմունք
հաստողին ընաւից՝ զնա կսկծեցուսցէ։ Եթէ յըն-
թացս անիրաւութեց խորհրդոց զիս մոլորեցուսցէ,
սևեռք ոտից անհասանելւոյն՝ զնա կապեսցէ. եթէ
հրապոյրս ինձ դժնեայս արբուսցէ, քացախն ընդ-
լեղւոյն խառնեալ 'ի յարբուցմն բարերարին՝ զնա
դառնացուսցէ։ Եթէ [22] առաջին Ճաշակմամբ փայ-
տին զիս գտցէ, սոսկալի խորհրդով խաչին ըմբռ-
նեալ՝ իսպառ պարտաւորեսցի. եթէ ընդվզել ընդ-
դէմ հնազանդութե տն հրամանի զանձն իմ ու-
սուսցէ, բերուցմն պարանոցի անսահմանելւոյն՝ զնա
կործանեսցէ. եթէ 'ի մահ սատակման զիս վանեալ
վիրաւորեսցէ, ստուար տէգ զինու մխելոյն 'ի կող
ստեղծչին ադամայ՝ զնա հերձեսցէ. եթէ երկամբք [23]

վշտաց դժոխականաց զիս պարփակեսցէ, պատա-
նասցն կտաւ՝ Էից ունողին՝ զնա ըմբռնեսցէ. եթէ
յատակս մահու հայել զիս խարդախեսցէ, ընակել
կենդանուոյն 'ի վէմս մահու՝ զնա մեռուսցէ. եթէ
խնդասցէ ընդ մարդկորէնս իմ դայթագղուն, կրկին
կորասցի կարկամեալ կամաւ, յորժամ անմահն ա̃ծ
յարուցեալ փառօք՝ ընդ իւր նորոգեաց զբնաւ մա-
հացեալս: Եթէ ընդ լուծանել փոքր [24] կապանաց հա-
զարամեկից՝ բերկրեսցի, դողասցի կրկնեալ վերստին
խոկոյն ընդ վերջին շղթայս անզերծ տագնապին ըմ-
բռնման սաստկագունի յանվախճան տանջանարա-
նին: Եթէ [25] ընդ առաջին հարուածն դժուարես-
ցի, գոյժ կորստեան յետնում սատակմանն անշէջ
գեհենին՝ որ պատրաստեալն է նորա և նորին հրեշ-
տակաց, նմա պատմեսցի՝ որ յաւուրն մեծի՝ մեծին
ատենի:

Է. Իսկ [26] ինձ ապաւինելոյս 'ի քեզ՝ տէր յ̃ս, միայն
Թագաւոր ինքնակալ զօրեղ՝ արարիչ երկնի և երկ-
րի՝ և ամենայն զարդուն որ 'ի նմա, որ գալստեանդ
քո ակն ունիմ, և ողորմութե̃ փրկչիդ սպասեալ
յուսամ. 'ի յոյս քո անկանիմ, և զդարշապարիդ
հետս համբուրեմ. [27] զպարտուիս խոստովանիմ, և
զմեղանս հրապարակեմ. կշտամբանաց քարամբք կո-
ծիմ, և հառաչանօք սրտիս տապանամ. 'ի խեթ
խղճիս խոցոտիմ, և բոցով ընչոյս ճենճերիմ. աղի
ցօղով արտասուացս այրիմ, և [28] երիկամանցս աղդ-
մամբ կիզանիմ. յուսակտուր օդով ցամաքիմ, և
դառնաշունչ հողմով շիջանիմ. [29] Թախանձանաց
բանիւս երերիմ, և կողկողագին հեծութբ̃ դողամ.
տաժանելի կրիւք տուայտիմ, և տագնապաւ հոգ-
ւոյս տատանիմ. 'ի կոծ մրրկաց ծփիմ, և 'ի բախ-
մանէ ալեաց սասանիմ. [30] 'ի լրուէ համբաւոյն սար-
սեմ, և յիշատակաւ ահին կորնչիմ. կերպարանօք
ատենին հալիմ, և սպառնալեօք մեծիդ մեռանիմ.
ո՛ւր՝ բազմագութ, քաւիչ, մարդասէր և երկայնա-
միտ, քաղցրութի̃ անճառ, օր բարի և տիւ տենչա-
լի: Քանզի կարօ՛ղ ես յամենայնի և առ ելս ընչոյս
իմոյ՝ [31] փրկութե̃ մեծի. և քեզ ընդ հօր հոգւովդ
սբ̃ով փառք՝ յաւիտեանս. ամէն:

(1) Մաքէնէ պարէէշփաչանէ ։ Այսինքն չափաւոր կամ խոնարհական մատենիս ։ Որ ոք միանգամ առէ՝ առցէ զգեղ աղօթական գրոցս , եթէ մեղաւոր իցէ , և ես հաղորդ եղէց բանից նորա ։ Իսկ եթէ յարդարոց գոյցէ յառաջէանս , իցէ յառաջ կացեալն յաղօթել , եղէց և ես ... աղօթիւք՝ ընդ նմին արդարոյն ողորմեալ ..., վասն արդարոյն , կամ միջնորդութեամբ նորա ։ Այլա եթէ ... այնպիսի աղօթօղն , այսինքն երջանիկ կամ անմեղ համարեսցի զանձն , ( տես ծզ . լծ . 4 . ) զիս միայն համարելով եղկելի , վասն իմ վկայեմ ճշմարիտ լինել . բայց վասն իւր՝ յիշեսցէ զաղօթն ։

(2) ՈՂ ... ։ է բան առակաց . Ճ . 9 ։ Եւ յաջորդն , ... , է բան նորին սողոմնի ( զ . թագ . ը . 46 ։ ) Իսկ ասացեալն , ... . այսինքն . և ոչ քաջ կամ յաղթօղ լինի ոք իւրով բնական արդարութեամբ . թուի հայել 'ի բանն ժողով . ( թ . 11 . ) * Ոչ թեթևաց են ընթացք , և ոչ զօրաւորաց պատերազմ ։ ||

(3) ... 'ի ... ։ այսինքն բաց 'ի բանից սողոմնի զգոյշ լինիցի դարձեալ , երկնչելով յորժամ նաև 'ի վիճի հաստատեալ իցէ , որպէս դաւիթ ասէր . ( սաղմ . լը . 3 ։ ) կամ առաւել ես երկիցէ հաստատեալն՝ ըստ խրատուն պօղոսի . ( ա . կորն . ժ . 12 . ) Այս բարդ ... ոչ նշանակէ զնոյն պէտրոս ։ Բայց 2 կամ 3 օրին . ընթեռնուն . ... ։ և մարթ է բացատրել , հաստատութիւն ուսցի 'ի պօղոսէ երկնչելոյն յանկմանէ , և ոչ եթէ անկասկած յանհոգս կալով ։

(4) Սահմանող ... ։ Զի մի՛ անզգուշութեամբ անկեալ , նմանեսցի անկելոյն սողոմնի , որ վճռեաց զայս ճշմարիտ կանոն՝ թէ արդարոյն ևս պարտ է երկնչել , ևն ։ Հին լուծ . ... խմանոյ զնա վարդապետս , իբրև թէ նմանեսցի ինձ սահմանողիս զայս կանոն զգուշման ։

(5) 'Ի ... ։ Համարեա՛ տր , թէ ոսկերքս քակտեալք 'ի ծածկոյթ տապանին հողով պատելոյ , կամ ընդ հողով թաղելոյ՝ այսուձայնիւ աղօթիցս աղաղակեն առ քեզ ։ Եւ մարմինս հոլացեալ բարբառովլինին անզգալեաւ զայս պաղատանս մատուցանէ , թէ Տէր ..., և այլն ։

(6) Խնայէա՛ ... ։ յերիս օրին . չիք ... ։

(7) Անյէանհաա ... ։ ի՛ անդարմանելի կամ անհնարաւոր նեղութեամս ։ Իսկ 'ի վէր առեալն ..., խմանի՝ գերազանց , վսեմական , ևն ։ Հա... ։ այսինքն օգնել կարեաց մահուն ։

(8) Գր... ։ Հոգիս՝ որ է պատճառ կենդանութեան , և առհաւատչեայ յարութեան մարմնոյս ։ Հին լուծ . խմանոյ նաև զմասնեանս . իբր ասել , թէ և ես մեռանիմ , սակայն գիրքս՝ որ անապական մնայ զկնի իմ , է իբր փոխանորդ կենդանութեան ։

(9) Խա... ։ այսինքն գերեզմանին որ արդելու կամ պահէ զիս 'ի խաւարի ։ Վերջացեալ պաղատանքս ասէ՝ են ցաւագին և բազմապատում խնդրուածք , զորս 'ի գերեզմանէն առնեմ առ քեզ . վասն որոյ հաստատեա՛ զխնդրուածքս՝ լինել անփոփոխապէս ընծայեալ առ քեզ ։ Եւ ոչ ընդդէմ ինչ է 'ի մեռելոյն խօսել առնել զայսպիսի խնդրուածս . վասն զի այժմ ևս մինչ ... , կենդանի գոլովխօսիմ , քո անհաս կենացդ համեմատեալ՝ իբր մեռեալ եմ . ուստի որպէս այժմ կարեմ խնդրել , նոյնպէս և 'ի մահուանս ։ Եւ դարձեալ , զի և 'ի մեռելոյն խօսիմ կենդանի եմ հաւատովք յարութեան . այս իբր 'ի կենդանւոյ լուր զնոյն խնդրուածս ։ Վասն որոյ աղաչեմ զքեզ՝ ... , զմահ ծանուցանօղ ձայնն գերեզմանին , կամ

զձայն գերեզմանին՝ որ է նշանակ մահուան , անչէնտանասըն ընտման , զձայն Թնդման գերեզմանին , որ առանց կենդանութե՛ 'ի բախմանէ ինչ կամ 'ի շարժմանէ Թնդիւն առնէ , իբրև ազդակ լալոգին հառաչման յօրգէօշէօ , ընդունելի համարեցիս , կամ հաճեցիս լսել :

(10) Կէնարար գօ հէրէզ : Ընդ իս միասցեն զանազան չարչարանաց կամ անօրէնութե՛ քո մասունքն կամ զօրութի . զոր և 'ի կենդանութեանս ունիմ դեղ ընդդէմ բազմազան հնարից սատանայի . որպէս դնի կարգաւ 'ի համարն դ̃ : Օձաւք , լինիցին իմ գործի կամ հնարք անմաշելի զի- նուց , ըտըփս յօրակըյեաւ , ընդ իս միալով միշտ՝ իբրև բարձնք պարսա- տկաց առ 'ի հալածել զգունդն սատանայի : Մարթ է և ս իմանալ աստ զբազմազան նշխարս կենաց փայտին , զփշոցն , և զայլոց գործեաց չարչա- րանաց փրկչին : Կամ , իմանալ զխորհրդական նկարն , որք 'ի պատանս մեռելոց դրոշմեալ կան :

(11) Մարփն օր ատխս : Պատերազմ զոր 'ի մահուն իմ , կամ յետ մա- հու առնէ ընդ իս սատանայ , քև տ̃ր յա̃ղթեսցի . զի յորժամ յառնէ նա մարտնչել ընդ իս՝ տեսանելով զմերձեցեալս 'ի մահ կամ զմեռեալս իբրև քաղաք մի ունայն 'ի զօրաց , և ղադըղըյանայն գօրծի , զերկաթ կամ զվէմ՝ որ իբրև փող ազդ առնէ զգալուստ Թշնամեաց , ատայայն , անձայն , լռեալ , յայնժամ վասնզի զքեզ ունիմ պահապան , են : Ձա- նիր զի յայս գլուխ առ քո̃ են դէմք աղօթիցն . բայց 'ի յաջորդ համարն դ̃ . յեւրորդ դէմս խօսի՝ բաց յերկուց հատուածոց . և ապա դարձեալ առ քո̃ փոխէ 'ի համարն ե :

(12) Ջաղօթըն փէրօնըաքսը , զաղօթսն՝ զոր մատուցքս տ̃ր մեր :

(13) 'Ի մօխէր էրէրի Թաաալէլ : այլ օրին . Թաթաալէլ :

(14) Եթէ վօսփաքս ինլ : 4 օրին . ինյ : եթէ նեղութիս ցաւոց արասցէ յիս սատանայ , ֆրփանէն յաաթի , յորդահոս կամ առատ քրտունք փրկչին՝ խառնեալ արեամբ՝ խաաէօշէ , տառապեցուսցէ զսատանայ :

(15) Յընթաշէս բարէաշ : եթէ զհոգի իմ , կամ զիւրձս սրտի յընթացից բարեացյետս ձգեսցէ , կամ արգելցէ , են :

(16) Յօւրայօւթի պարգէաաշ : Եթէ բռնադատեսցէ զիս սատանայ ու- րանալ զպարգև լուսաւոր յարութե̃ն , կամ յաւխտենից կենաց , փրկ- չին համբերեն հայհոյութեցն՝ որք լինէին յաձանմսա հրէիցն , գէաախն ըէտ նօյն , զհրէայսն ընդ սատանայի պապանձեցուսցէ : Եւ եթէ դար- նի նեսա խաբէութե̃ յիս արձակեսցէ , խօրթ հնարէօ , հնարաւոր կամ ճարտարագործ կարթն , ( այսինքն չէնկել , կամ զանձայ ) ձգեալ 'ի կապարձից հօրն , կամ քո̃ւ , նմա պատահեսցէ և յետս դարձուսցէ :

(17) Վօըղոյլըաա : Եթէ պատրուակաւ բարւոյ ինչ համարձակեսցի սատանայ մտանել ընդ աչս իմ , այսինքն 'ի մխատակարս կամ յանար- ժանս խոստրեցուսցէ զաչս իմ , կռփումն ծածկեալ դլխոյ ըմանն ամենից , լսացուցչին կամ կատարողին ամենից , այսինքն քո̃ւ փրկչին , զսատանայ տանջեսցէ :

(18) Ջհփահօաթ յէաեն : Եթէ յանդգնեսցի կալել զհամարձակու- Թիւն ձեռացս յաղօթել , կամ 'ի դրել զաղօթքս , կամ 'ի գործել զբարիս :

(19) Բծծանօք ինլ : կախարդական կապանօք , կամ ծրարօք ինչ :

(20) Լինէալ : դ̃ր անամօթեալ , յանդգնեալ . այլ օրին . ընինէալ :

(21) Խածնման աղաայանս : Մեղմ կամ անուշակ խածմունս , որք են ցանկական խլյամունք :

(22) Աւաջին ձաղաչմանէ : Եթէ ընդ պատրուօք առաջին ճաշակման ա- դամայ դացէ զիս , ք̃ր 'ի նեղքոյ ախտից՝ որ 'ի մեղացն ադամայ , զօրութե̃ փայտ խաչին ընդունեսցի , են :

(23) Վշտաց դժոխականաց : Եթէ ցաւովք մահաբեր փորձութեանց զիս պաշարեցէ, և ն :

(24) Կապանաց հազարամեայ : Զհազարամեայ կապանս սատանայի՝ զոր գրեաց սբն յովհաննէս ( յայտն . ի . 2 . ) ոմանք 'ի վարդապետաց իմացան ճշգիւ, երբև թէ յետ հազար ամաց գալստեան քո՝ լուծանելոց լինէ սատանայ . որպէս իմանայ և սարգիս մեկնիչ . ( Ե . յովհ . ճառ Ե . եր . 773 : ) Բայց այլ վարդապետք իմանան զմիջոց ժամանակին՝ որ 'ի քոյ մինչև 'ի կատարած աշխարհի, յորում առ նեռին լուծանելոց է սատանայ, այսինքն թոյլ տալ ած՝ զի 'ի ձեռն նեռին մոլորեցուսցէ զմարդիկ : Այսպէս իմանայ և անդրէաս կեսարացի՝ մեկնիչ յայտնութեան : Այլ և սա ինքն որս գրիգոր . զի յարէ զկնի . դողացոյց երկնեալ վերստին խոյսն ընդ վերջին շղթայս, և ն, որ յետ լուծանելոյ 'ի հազարամեայ կապանացն՝ խոյս դարձեալ կապելոց է 'ի վերջին շղթայս յաւիտենական արգելանին . յորում ոչ ևս կարող է մոլորեցուցանել զմարդիկ . և բաղդատութիւն այսր յաւիտենական կապանաց՝ զառաջին կապանսն կոչէ փոքր :

(25) Ընդ առաջին : Եթէ դժուարեցաւ սատանայ ընդ առաջին հարուածն՝ որ քոյն եղև, ըստ որում խորտակեաց զզօրութիւն նորա, գոյժ հարուածն, որ խափան պարտաւորութեանն՝ որով 'ի կատարածի աշխարհիս բոլորովին խորտակի զօրութիւն նորա, և մնայ միայն պէհեանն, յիշեցի նմա :

(26) Իբր ապաւինելոյս 'ի տեղ : Այս բան աւարտի և կապի ընդ յետին բանին, ուր հանգստեան, փախչել, և ն :

(27) Զգաստացեալ խորհրդականք . որ զգաստութեամբ, որպէս և 'ի բանն ծթ . լծ . 2 :

(28) Երկնամանս արգանդ : Հին լուծ . զցանկական շարժմունսն իմանայ, բայց անյարմար է . այլ իմանալի է կսկիծ կամ նեղութիւն ցաւոց որ յերկնամանսն : յաւարտութ օրոյ . որ նուաղեալ շիջում որ զայս իմ կարէ . կամ, յուսահատիչ հոլմով մտածութեանց և փորձութեանց ցամաքիմ :

(29) Թախանձանաց բանիւ : որ թախծանաց կամ տրտմութեան :

(30) 'Ի լռութէ հանգստեան : 'Ի լոյս կամ 'ի լռելութէ հանգստեան :

(31) Փրկութէ մեծի : Նաև յելանել հոգւոյս իմոյ՝ կարող ես փրկութէ մեծի, այսինքն 'ի յաւիտենական փրկութիւն իմ :

---

Մերձաւորին յաւելուած երկրին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ած :

# ԲԱՆ ԿԱ.

ա. Բայց քանզի՝ յոյժ արդար է քան իրաւանցն քոյ ած առ իս՝ քան առ սկզբնահայրն չարեաց սատանայ : Զի վասն նորա յայն սակս յայտնեցաւ, զի լուծցէ զգործս նորին . և վասն իմ՝ զի զհնացեալ պատկերս նորոգեսցէ . ² առեալ զկերպարանս բոլոր էութեան կերպին խնկութե մեծին ած՝ միացոյց ին-

քեան անշուշտ խառնութք։ Նորա ոչ են շնորհեալ ՚ի բազմացն, և ինձ զբովանդակն եհեղ առատութք. վասն նորա ոչ երբէք չարչարեալ, և վասն իմ հանապազ պատարագի. Նա անհաղորդ է կենացն, և ես միշտ վայելեմ ՚ի փրկութէն. Նա վանեալ է խաչիւն, և ես զօրացեալ նշանաւն։ Նա հերքեալ ՚ի լուսոյն, և ես միացեալ ընդ փառացն. Նորա ոչ խոստացաւ համդիստ և յերկրի, և ինձ զերկինս սեպհականեաց. զնորայն [3] կտրեաց զառհաւատչեայ, և զիմն՝ առանց խզելոյ յարակայեաց. զնա յերամակս խոզիցն արգել, և յիս ինքն զօրացաւ. զնա կարճաց օրինակեաց, և զիս ճառագայթ նշանակեաց. զնա սողնոց նմանեցոյց, զիս լուսոյն անուամբ կըն-
քեաց։

Է. Իսկ ես զերախտիսն տ̃յ լքի՝ զայսքանեաց բարեաց արարողի, և չարին զկնի միտեցայ՝ հայել ընդ նմին յատակս դժոխոց՝ ահա անարժանս բարեաց, [4] անձիրս երախտեաց, անընդունակս սիրոյ, տռամբք մեղաց ձգեալս, յերկամունս խորոց խոցեալս, քանցեալ ծառս արմաւենւոյ, գինիս յեղաշրջեալ, ցորեանս հեղեղեալ, մուրհակս ջրեալ, վճիռս պատառեալ, կնիքս այլակերպեալ, նմանութիս փոխեալ, արկանելիքս կիզեալ, ըմպանակս կորուսեալ, նաւս ընկղմեալ, մարգարիտս մանրեալ, ակնս պատուական սուզեալ, տունկս ցօսացեալ, նեցուկս խորտակեալ, փայտս ամենևին փտեալ, [5] մանրագորս աղաւաղեալ, յարկս տապալեալ, խորանս խարխալեալ, բոյսս արմատաքի խլեալ, ձէթս հեղեալ [6] ՚ի գուբս աղբևաց, կաթնս հոսեալ ՚ի կոյտս մոխրոց, այրս մահու [7] ՚ի յարեանց գնդից։ Քանզի միշտ խրատեալ ընդ երուսաղէմի առակաւ բաբելոնի՝ ՚ի մարգարէիցն ձայնից՝ անձն իմ ողբալի, և ոչ ինչ խրատեցեալ. որ աստէն անգոսնեալ եմ, և անդէն խայտառակեալ. աստ դսրովեալ, և անդ կշտամբեալ. աստ ձաղեալ, և անդ նախատեալ. աստ թշնամանեալ, և անդ յանդիմանեալ. աստուստ ապշեալ, և անդանօր լքեալ։ Աստ հեծումն, և անդ հառաչանք. [8] աստ կարծիս, և անդ կատարած. աստ խէթ, և անդ հատուցումն. աստ արկածք, և անդ հանդէսք

դատաստանի, ուր ոչ է [9] բան իրաւանց, և ոչ ձայն պաղատանաց. ոչ Թիւք աւուրց, և ոչ ելք ժամանակաց. ոչ ուղք յուսոյ, և ոչ դրունք ողորմութեց. ոչ աջ պաշտպանութեան, և ոչ ձեռն այցելութե։

Դ. Այլ դու ապաւինութի. դու ինքն փրկութի. դու այցելութի, դու և քաւութի. դու երանութի. քև բժշկութի. քո ողորմութի, միայն Հզօր՝ կենդանի՝ անճառ տէր յո՛ քո՛ բարերար ած. օրհնեալ՝ օրհնեալ, և դարձեալ օրհնեալ, ընդ հոգւոյդ քո սբյ յաւէտ բարձրացեալ 'ի փառս հայրենի իսկութեան մեծիդ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) Յոյժ արդար է բան։ Քննութի արդարութեն այ առաւել պարտաւորէ զիս քան զսատանայ. զի նա թէպէտև սկզբնահայր չարեաց եղև, սակայն յետոյ ոչ տուաւ նմա տեղի թողութե. ոչ շնորհեցան նմա բազում բարիք շնորհաց. ոչ վասն նորա չարչարեցաւ քս. զուրկ մնաց 'ի կենաց. վանեցաւ խաչիւն. հերքեցաւ 'ի լուսոյ, ոչ տուաւ նմա համդիստ և յերկրի. յոյս նորա կորեցաւ. յանարգ կենդանիս արգելաւ, և նոցա նմանեցաւ։ Իսկ ինձ այսոցիկ ամենեցուն հակառակն պարգևեցաւ յայ. և 'ի վերայ այսր ամենայնի ես տակաւին լքի զերախտին այ, և զհետ չարին գնացի։ Այս առաւել է իմ պարտաւորութիս քան զսատանայն։ Այս բաղդատութի ոչ հայի բացարձակաբար յառաւելութի մեղաց և պատժոց մարդոյն քան զսատանայն. զի սատանայ գոլով գտիչ մեղաց, և գրգռիչ ամենայն մեղուցելոց, միանգամայն անյագ 'ի չարութե, մեծ են նորա մեղքն և պարտաւորութի քան զմարդոյն. այլ հայի միայն 'ի մեղս ապերախտութե. զի եթէ ըստ տեառնի վճռոյն՝ որում շատ տուաւ, շատ խնդրեսցի 'ի նմանէ, ապա և 'ի մարդոյն՝ որում բազում երախտիք շնորհաց եղեն քան սատանայի, առաւել պահանջի. ուստի մարդ 'ի մեղանչելն առաւել ապերախտի առ ած, քան զսատանայ։

(2) Անէաւվերդարանիս, զմարդկային բնութեանս բոլոր էութե, ամբողջ էականն, զհոգի՝ զմարմին, զմիտս, զկամս, համդերձ ամենայն ըզգայութիւք և անդամօք. Ներքին իսկութե, այսինքն իսկական բնութիւն մեծին այ՝ յանձն որդւոյն առեալ զմեր բնութիս, Միացոյց, միաւորեաց ընդ ինքեան անշփոթ խառնութե, իսկական կամ իրական միաւորութե։ Կամ, իսկութե, իմացեալ փոխանակ անձին, զորմէ ասացեալ եմք 'ի բացատր. շարակն. համար 257. առէլն՝ կերպ իսկութե, ունի նշանակել պատկեր անձին հօր. այսինքն որդին այ պատկերն անձին այ Հօր առեալ ծառայ զբոլոր մարդկութիս ևն։ Նմին մօք իմա և 'ի կատարածի բանիս, 'Ի ՀԱՅՐԵՆԻ ԻՍԿՈՒԹԵԱՆ ՄԵԾԻԴ. տես և 'ի հե. լծ. 20։

(3) Կորեաց պահպանեալս. զի զհաստատութի յուսոյն, կամ զխոստումն այ առ սատանայ՝ որ նախ քան զմեղանչելն, որով խոստանայր նմա զփառս՝ եթէ կացէ 'ի ճշմարտութե. և 'ի չկալն նորա քակեաց ած զխոստումն իւր։ Եւ այն, զիմ առհաւատչեայն յուսոյն, կամ խոստումն այ՝ նաև յետ մեղանչելոյս՝ առանց խզելոյ յորակայնեաց, յերկարեաց կամ միշտ պահեաց, սպասելով դարձի իմում։ Գրեալ 'ի բովանդակ բանիս՝

զխորդ յերկուց ներհակաց զծայրադոյնն կարգէ դէմ ընդ դէմ, կարի ստատկացուցանելով զլաղջատութիւն, միանդամայն և զմարդոյն ապերախտութիւն: Սատանայի սաէ՝ ասկաւ բարիք շնորհեցան, այլ ինձ բովանդակն աստապէս: Վասն նորա ոչ երբէք չարչարեալ Քս, վասն իմ միշտ. նա զուրկ 'ի կենաց, ես միշտ 'ի փրկութե վայելող. նա խաչեան հալածեալ, ես խաչիւ զօրացեալ. նա անլոյս դժոխոյն, ես 'ի բուն 'ի փառսն միացեալ. նմա և ոչ յերկրի համդիստ, և ինձ երկինք բացեալ էր հայրենիք. նա 'ի խոզս փակեալ, 'ի յիս Քս իւրքնին բնակեալ. նա՝ դարչելի սևատեսիլ կարծի նմանեալ, և զիս ճառագայթ կոչեաց, աշխարհի լոյս էք ասելով. զնա օձի հանդոյն անուանադրեաց, և ինձ զիւր զՔրիստոնեայ անուն ետ անջնջելի կնիք միրոնին: Ասէին զատամնայ օձից և կարճաց նմանեցուցեալ, հայի 'ի բանն " Ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս || և այլն:

(4) Անմիրս: ոչ տուօղ զձիր, իք անշնորհակալու երախտեաց: Անընդունակն սիրոյ. ոչ ընդունօղս, արհամարհօղս ծնողին սիրոյն, չճանաչօղս գթութեան Այ. յերկնաւորին խորոց, փոխանակ գնելոյ՝ 'ի խորս երկրաւորաց խոցոտեալ, իք 'ի բուն 'ի ներքին ախորժակս հոգւոյ վիրաւորեալ:

(5) Մանրագորս աղաւաղեալ. այսինքն եղծեալ, ապականեալ: Իսկ մանրագոր է բառ յունական. զորոյ նշանակութիւն բազումք այլ և այլ օրինակաւ մեկնեն. բայց առաւել հաւաստի է նշանակել զսունկն՝ որոյ արմատն է կերպ զդէմս մարդոյ, ոտսի և անուանի՝ մարդատակ, և այլով անուամբ լօշտակ. ունի պտուղ նման խնձորոյ՝ անուշահոտ, որպէս և ծաղիկ նորա անուշահոտ է, և միով անուամբ մանրագոր ասի սունկն, պտուղն, և ծաղիկն:

(6) 'Ի գոմս աղբեաց. 'ի փողոց աղբեաց. ( չեօփլիւկլիմանս: )

(7) 'Ի յարեանց գնդից: 'Ի գնդէ կամ 'ի ժողովոյ արիւնահեղաց՝ ես եմ այր մահու, այսինքն մահապարտ: Բայց յայլ օրինակ ասի. 'ի յարեաց գնդից. և առաւել պատշաճ թուի կարգի բանին. որպէս թէ 'ի գնդէ առաքինեաց կամ քաջաց՝ ես միայն եմ մահապարտ:

(8) Ակա հարծին. սաստ կասկած երկիւղի, կամ սաստ կարծիք յուսոյ՝ թէ գուցէ ապրեցայց 'ի տանջանաց. և անդ կատարած, կատարումն երկիւղին, կամ 'ի դերև ելանել յուսոյն:

(9) Բան բրաանց. բան ջատագովութե կամ արդարացուցանելոյ: Ոչ թիւք ատենից. ոչ գոն 'ի հանդերձեալն թիւք ատենից. և ոչ ելք ժամանակաց, վախճան ժամանակաց. ոչ ուղէ յուսոյ, ուղիք կամ ճանապարհ յուսոյ. այսինքն, անվախճան են տանջանքն, և անյուսալի՝ ազատութիւնն:

---

Մերոյին յաւելեալ հրէին հեծութե՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

## ԲԱ՛Ն. ԿԲ:

Ա. Եւ արդ՝ 'ի յիշատակ ահարկութե վերադրեցելոցդ՝ որք յածուստ են սպառնալիք ինձ ժամանեցելք, զխորդ դադարեցայց 'ի նորոգ ողբերգութեց, և կամ որպէս զցամաքումն առցէ հեղեղք

արտասուացս։ Ո՛չ եթէ զչորեքվտակեան առաջս գետոյդ յորդահոսման ծաւալմանցդ, որ զեդեմ և զերկիր առ հասարակ ոռոգանէն՝ լիապէս բաւականութիւն բաշխեալ ամենայնի, և [1] զեղխումն ելից իւրեանց՝ առ աչս իմ եդեալ, զանձինս մեղաց սաստկութեան զբոց զովացուցանել ոչ բաւականացին։ Այլ կամ [2] մարգարէին սէջ ըղձականութիւն կրկին ինձ լցցի գլուխս ջուրց բազմուն, և Ջրագարան տեսութեանց կերպիս՝ աղբերց կայլակմունք, զբեկման ողւոյս չափել զվտանգ՝ ոչ ձեռնարկեսցեն. և ոչ [3] եդերականք ջայլից համօրէն՝ բանահիւսից կանանց լալականաց՝ 'ի սիրտ և յոգի վիրաւորելոց, զաղէտ վտանկիս 'ի յերգ արկանել, և կամ 'ի նուագս ձայնից բերել։

Է. Իմ է օրն լինելութեան նզովեալ, և ոչ յոբայ՝ կամ երեմիայ. քանզի տօնելի է օրն նոցա՝ զորոց մի 'ի նոցանէ ոչ արժէ աշխարհ, և ոչ տարագրելի. ապա ուրեմն [4] զիս նկատ եղեալ զոչ արժանիս լուսոյ՝ և կամ միոյ մասնաւոր բարւոյ, զհանդիպումն աւուրն անիծիցն՝ յորում ես գտայ կորստեան որդիս և մահու դրացիս, մշակս մեղաց և արքանեակս անօրէնութեանց։ Որ ոչ կացի յուխտին կենաց՝ զոր դու սահմանեցեր՝ ա̃ծ բարերար. ոչ գնացի 'ի քո պատուիրանն կենդանական անմահացուցիչ. ոչ վաստակեցի 'ի հունձս արմտեացն, որով 'ի մուտս ձեանն՝ [5] աւուրցն խռովութեան կերակրել պատրաստեցայց. ոչ կառուցի ամրութիւն որմոց՝ և ոչ ձեղուն յարկաց ձգեցի, որով 'ի շնչմանէ մրրկաց օդոց պահեցայց. ոչ համբարեցի նշխարս պաշարաց 'ի յուղին անեզրական, որով զտագնապ սովոյն իմ բժշկեցից. ոչ հանդերձաւորեցի քեզ աղերս աղօթից, որով առաջի քո կալ համարձակեցայց. ոչ կազմեցի թօշակ փրկութեան վարուց մաքրութեան, որ [6] զնորոգութիւն ինձ երաշխաւորէ. ոչ ետու զընտրութեան հաշիւն 'ի կենցաղոյս Ճանապարհի՝ իմոյ մատենին, զի 'ի դատաւորին ձեռանէ աստէն իսկ [7] փրծայց. ոչ լրութիւն ձեւին օրհնութեան մատեայ յանդիման, որով օրէնսդրին մասնակից գտայց սրբեցեալ։ Ո՛չ դիմաց ետու ըզգուշութիւն, և ոչ թիկանց պատսպարութիւն, ոչ աջոյ

իմ զինուորութի, և ո՛չ [8] ահեկլիս պարածածկուն, որով 'ի պատերազմիս վտանգէ զերծայց. զերիվարս ո՛չ զգեցուցի զրահիւք, և ո՛չ զմարտիկս՝ սպառազինութեբ, որով զճակատն յարդարեցից: Զկանուխն ո՛չ կապտեցի պտուղ, և անագանին ո՛չ ժամանեցի, և ահա տարակուսիմ ունայն 'ի բարեաց. մաքրուէ ծաղիկ ոչ ունիմ, և ո՛չ իւղ ողորմութե, և գիշերոյն մռայլ՝ աննշոյլ. 'ի նիրհումն մահու ննջեալ եմ, և տագնապ կոչողին փողոյ ստիպէ. զզարդ հարսանեացն կրկին մերկացայ, և զձէթ վառուցն վերստին եքի, և դուռն մտին հարսանեաց աւասիկ փակի:

Դ. Եւ արդ՝ զի՞արդ առից մխիթարութի այսքանեաց վշտաց, և կամ [9] ընդ ո՞րքանեաց տարակուսանաց խաւարի՝ լուսաւորութի յուսոյ կենաց խառնեցից. և կամ ո՞ւր արդեօք զգարշապարս ոտին կառուցից. և կամ յո՞ր վստահութի զաչս իմ յառեցից. և զի՞նչ անդորրութի ծփանացս նկատեցից. և կամ յո՞ր ըղձական դիւրութի ձեռն համբարձից: Զի եթէ 'ի ձեղուն բարձրութեան երկնի, անտի անձրևեաց հուրն սոդոմայ, որպէս ասացեալ է. իսկ եթէ [10] յատակ խորուէ երկրի, սա եբաց զկոկորդն ըմբռնողական՝ և եկուլ զդադան բանակօքն աբիրանի: Եթէ յանդգնեցայց փախչել յունողէն, գուցէ կալցի զիս վիշապն ահագին: Եթէ ընդ գաղանս ինչ թափառեցայց, արագունք են խնդրել զվրէժ ստացողին առաւել առ իս՝ քան երբեմն զեղիսէին՝ առ մատաղ [11] մանկունս բեթելացիս քրմորդիս: Եթէ յամենատարած օդոյս պարզութի, այն եղև եգիպտացւոյն խաւար շօշափելի: Եթէ 'ի թռչունս բարձանց, նոքա են կոչեցեալք 'ի սպանդն զոհին [12] բոսորայ դիականցն: Եթէ 'ի տկարսն խիզախեցից, վտանիմ [13] 'ի պիծակացն, և զի՞ պիտոյ են ինձ առիւծունք: Եթէ յարջոցն պատառողաց ապրեցայց, մժիխքն արեան ծարաւիք ինձ պատահեսցեն: Եթէ յանհոգս ուրեք նստիցիմ, [14] մժղուկքն անարգագոյնք՝ իբր ցնցուղս հրոյ եռացման՝ զինև մաղեսցին: Եթէ յեղջերէ միեղջերւոյ փախնուցում զերծեալ, նկուն [15] ձիրանք աղկաղկաց մնոցն մորմաքողաց՝ զիս

կեղեքեսցեն ։ Եթէ 'ի սենեակ շտեմարանաց խոր-
շից ղօղեալ ամփոփիցիմ, տաղտկատեսակ գարշու-
թիւն գործոցն՝ [16] մեղաց օրինակքն՝ զիս զազրա-
ցուսցեն ։ Եթէ 'ի վայրս ինչ անդաստանաց կացեալ
զետեղեցայց, շարք [17] շանաճանճոյն տարմից՝ զինե
պատեսցեն ։ Թողում ասել [18] զխառնիճն և զջո-
րեակն զզօրն զօրաւոր՝ ընդ թունաւորն թրթուր,
և ընդ անկենդանական երևելն, հանդերձ ջրակարծ
կարկտիւն, և ապականագործ եղեմամբն. որ առ-
աջաց տեսիլ՝ ապաշէնք և նուաստագոյնք, բայց 'ի
յակնարկելն այ՝ յաւէտ գոռոզաբար ուժգնութ հա-
րին վանեցին զհպարտն ամբարհաւաճութի փարա-
ւոնի բռնութեն բուռն գաւազանին՝ յաղթօղ վիճա-
կաւ. որ են կերպարանք թագուցելոցն կրից ակո-
ղաց՝ անձնականացն աներևութից՝ եգիպտացւոցն
անօրէնութեց՝ [19] յոգի և 'ի մահ տանջողաց՝ գաղտ-
նի չխաստողաց ։

Գ. Այլ դու ամենազօր արարիչ բնաւից տէրդ բո-
լորից, 'ի յատեկչսն հանդիսացիր հերքել զնոսա. և
ինձ ողորմեալ կրկին գթութ ձեռն մատուցեալ փըր-
կութե տարակուսեցեալ կոչկոճեալ վարանեալ 'ի
մահ պարտելոյս ։ Ով դու միայն ճանաչիս ած փա-
ռաւորեալ միշտ ընդ հօր հոգւովդ սրբով յաւի-
տենից. ամէն ։

(1) Զէրլխանէ Էւէօ ։ Զակն՝ ուսափ եղանեն չորեքին գետքն. եթէ
ասէ՝ զչորեսին գետս եդեմայ՝ և զակն նոցա յաչս իմ եդեալ բղխեցեմ,
ոչ են բաւական զովացուցանել, էՆ ։

(2) Մարգարէէն ոէս ։ եթէ ըստ բաղձանաց երեմիայի (Թ. 1.) կրկին
ևս քան զնորայն լցցի գլուխս Ջուրս Բաղմաբէ. մի օրին. Բաղմաբէ. ա-
ռաջինն առաւել համաձայն է բնագրի մարգարէին, որ ըստ ձեռագրաց
դնի. * Ո՛տայր զգլուխ իմ ջուր. || այսինքն ո՛ տայր զգլուխ իմ իբրև
ջուր ։ Ըստ այսմ և բան սէջ վարդապետս իմանի. այսինքն լցցի գլուխս
իբրև ջուրց բազմութի, կամ իբրև աւազան ջրոյ ։ Սակայն առաւել
մեկն և ըստ կարգի տող զնմոռան, եթէ շարադրութին այսպէս զասցի.
Էս համ Մարգարէէն ոէս ըղյախանաէ հրէէն էնյ լօօէ, այ առաւելապէս յիս
կատարեսցի. Գլուխս լինելով Ջուրս Բաղմաբէ, և Մարգարան փէսաբէտնց
հէրդէս, (2 օրին. փէսաբէ.) սեաւանելիքս լինելով աղբէրս հայլահմաւ,
հոսմունք, կամ հոսինք աղբերաց ։ Եթէ այս ևս լինիցի, տակաւին
զխոանդ խորամիման հոգւոյս մեղօք՝ ոչ յէանարհէօշէն, ոչ կարասցեն
ցուցանել որչափ է ։

(3) Եղէրանաք Ջայէօ ։ ոչ եղերական ձայնք ողբոց, կամ ողբագին ե-
ղանակք լալականաց՝ կարասցեն լիով երգել զաղէտ վտանգիս ։

(4) Զիօ նիւթ էղէու։ Յորժամ յոբ և երեմիա նզովեն զօր ծննդեան իւրեանց, ոչ այնչափ զիւրեանցն դիտեն նզովել. զի օր ծննդեան այնպիսի մէջ փծնէլի է, այսինքն ուրախալի։ Այլ զնա նկատելով, կամ զնա հայելով, որ չեմ արժանի լուսոյ կամ այլ ինչ բարւոյ, այնու անիծեցին զօրն, ևն։ Բայց 4 օրին. և հին լուծ. գնեն, Ղիօ նիւթէու էղէու ղուարժանիօ, ևն. և խմնի, զնա նկատելով իբրև աղդէն եղեալ կամ ծնեալ՝ զանարժանս լուսոյ։

(5) Ատուրցի խաւղաւթէ։ 2 օրին. չիք խաւղաւթէ. և խմնի՝ 'ի սկսանել աւուրց ձեռնն։

(6) Զնորգաւթէ իւյ էրաւխաւորէ. այսինքն յապահովացուցանէ, հաւատէ։

(7) Փրծայց։ այլ օրին. պրծայց։ Ոչ վճարեցի զհաշիւ մեղաց ընդմանչլին սատանայի. որով ասաէն աղաւէի 'ի ձեռաց դատաւորին։ Ղս նրաւթէ յէաին։ Թուի հայել 'ի բանն Ելից. (ԼԲ. 29.) * Լցէք զձեռս ձեր այսօր տն խուրաքանչիւր յորդի իւր, և խուրաքանչիւր յեղբայր իւր՝ տալ 'ի վերայ ձեր այսօր օրհնութի. * այսինքն կատարեցէք զկամս տյ 'ի վերայ որդւոց և եղբարց ձերոց՝ սպանանելով զնոսա. ուստի և օրհնութի տն լիցի 'ի վերայ ձեր։ Ըստ այսմ և աք վարդապետս ասէ, ոչ լցի զձեռս իմ սպանանելով զանդամս իմ զերկրաւորս. որով օրհնեալ, մասնակից լինէի օրէնադրին մովսէսի, որբեալ և նուիրեալ տն իբրև զորդիսն ղևեայ։

(8) Ահէկիօ պաւրածածկաւթէ։ Ձախակողմանս շուրջանակի ծածկութիւն 'ի ձեռն վահանի։

(9) Ընդ որբանեաց փարակասանաց խաւարէ՝ [illegible] յաւաց կէնաց խաանեցեց։ մի օրին. Որբանեաց փարակասանաց խաւար՝ 'ի [illegible] յաւաց խաանեցեց։

(10) Յապավ խորաւթէ էրէրէ։ 2 օրին. յապավ էրէրէ խորաւթէան։

(11) Մանկաան բէթէլացեօ [illegible]։ 'Ի Դ. Թագ. Բ. 23. ոչ յիշատակի՝ թէ յորոց էին մանկունքն. բայց քանզի 'ի բեթելայ ելին նոքա, ան վարդապետս համարի լինել որդիս քրմացն՝ զորս յերոբովամ կարգեաց 'ի վերայ բարձանց երինջոցն բեթելայ. (Գ. Թագ. ԺԲ. 31. 32։) Զի և կատակել նոցա զեղիսէ՝ կարծի արարեալ 'ի խրատու ծնողացն, զորս վասն այն կոչեաց մարգարէն՝ որդիս յանցանաց և դատարկութեան։

(12) Բաւարայ դիակացն. արիւնաշաղախ դիականցն. է բանն եզեկիելի. (ԼԹ. 17։)

(13) 'Ի պէծակացն. որք են խայթիչ կենդանիքն նման մեղուի. (Եշէկ աւընս։) Մծխեան, մժեղունք. (մածակ. սկիզբն սնինէկ։)

(14) Մծղաւնկն. փոքրիկ ճանճք գինւոյ կամ խաղողոյ, [illegible] հրայ, իբրև ցայտմունք բոցոյ (այսինքն խլվլճըրմ.) [illegible], 'ի վերայ իմ մանր թօթափեցին իբրև 'ի մաղէ։

(15) Ճիրանք, ճանկքն, [illegible], անզօր մնոցն, որք են փոքրիկ մժեխք։ Բայց 2 օրին. [illegible]։

(16) Մեղաց օրհնակէն։ Այս չիք յօրինակս ինչ, և օտար իսկ թուի 'ի կարգէ բանին. զի ան վարդապետն յիշելով զզանազան պատուհասս տյ՝ որ յեգիպտոս և 'ի քանանացիս, դիտէ միայն ցուցանել, թէ զօրուն տյ նաև փոքր և անզօր իրօք պատուհասէ զմարդ առանց զերծանելոյ. և ոչ դիտէ յայտ առնել, թէ այն կենդանիք որո՞ց օրինակք են. ուստի յայլ բանան ոչինչ այդպիսի բացատրութի յաւելու։ Եւ որպէս թուի, այդ յաւելուած յայլմէ եղեալ 'ի լուսանցան իբրև լուծումն, յետոյ 'ի գրչաց 'ի բուն բանն մուծեալ է։

(17) Շանաճանճոյն փարթը : բազմութիւն կամ ժողովք շանաճանճից, որք են (կէնէ :)

(18) Զխառնիճն և զգորէտն. որք են այլ և այլ տեսակք մարախոյ : անկենդանական երեւելին . անշարժ փոքրիկ ոջիլ բուսոց, որ իբր անկենդան երեւի : Այսպիսի հայլին 'ի բանն յովելայ. (ա. 4 : բ. 25 :) Ջրախործ խորշփին . ջուր կարծեցեալ, բայց իբրև քար հարկանող և այրող : Այս բառ երբեմն կարծիք նշանակէ՝ 'ի ջրոյ կարծրացեալ և սառուցեալ. համարելով թէ բառն խործր, երբեմն կորուսանէ զկէտին ր տառն, բայց այդ ոչ ստուգեցաւ : Որ առ ալւոյ փեշխին : Այս ամենայն յիշատակեալք ըստ տեսութեան աչաց անդէն, կամ տկար գոլով և անարգ, 'ի հրամայելն Աստուծոյ սաստիկ զօրութեամբ հարին զհպարտութիւն փարաւոնի բռնա գառաղանին, հզօր Աստուծոյ, յաղթող հնձակաւ, այսինքն հարին յաղթանակ կանգնելով 'ի վերայ բռնաւորին : Եւ են սոքա օրինակք աներեւոյթ և հոգեւոր տանջանաց՝ չարչարողաց 'ի հոգի մինչև 'ի մահ, 'ի պատիժ եղկալական անօրէնութեանց :

(19) Յոգնի և 'ի մահ տանջողաց : յօրինակս ինչ՝ չէք 'ի մահ :

---

Մերոյն յաւելուած կրկին հեծութիւն՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ :

## ԲԱ՛Ն. ԿԹ.

ա. Եւ արդ՝ վասն զի 'ի ձեռն մեծիդ և ամենահնար արուեստաւորիդ իմս եղանութեան տն և տյ՝ իբր [1] 'ի քրայս ընտրութեան փութոյ քոյ սիրոյ՝ համապազ եռամ, և ոչ երբեք պարզիմ. միշտ խառնիմ զուգիլ՝ և ոչ ևս միանամ. ահա զուր՝ արծաթագործդ երկնաւոր՝ իմ Ճարտարապետ, 'ի սնոտիս վաստակեալ առ իս աշխատիս, ըստ մարգարէին յայտնի առակի, և չարութիւս իմ ոչ հալեցաւ. զոր ինձէն մոլեալ չարաչար՝ իբր զխեղագար դիւաքախ իմն ողորմելի՝ [2] յանդգնեալ անկարգս խօսիմ՝ զիմս զպարտիսս աճեցուցանել, քան հաշտութեան հնարս ինձ այսու կազմել: Եւ զի մի [3] անընդհել դիպուած, և անկիրթ պատահումն, և անհաւասար հանդիպումն՝ պատրաստութիւք հանդերձելոց տանջանարանացն ինձ երևեսցին, ամենևին անմուաց պահեաց աստստին 'ի յիմուլ մարմնի՝ նշխար մնացուածոց նախնումն անխծիցն. զոր 'ի փոքուէ տարրէ անարգէ՝ զմեծն է ուսանել:

բ. Բանգլի [4] խաղալն ինքնաբերական դիւաց որո-

վայնի՝ բոտոտք ճապուկք շարժողականք, և ազգի ազգիք, որդունք աղեաց գաղտնակուրք, [5] խաղաւարտք հրակայծակք, և բիծք բոցակիծք, և անիծք անկերպաւորք, և երամակք ոմանք քրտնածինք զազրաթորմիք կսկծեցուցիչք և մարմաջողականք։ Ասպատակք [6] այլոց վայրենեաց, ըստ նմանութեան դիւաց գիշերամարտից՝ և մեկնազէն բարբարոս գնդից խաւարասիրաց, և գազանութեամբ քանասար գայլոց արաբացւոց՝ կորակոր գնացիւքն, արջնաթոյր գունովն, կրկնապարոյր կռածագ կոցաւն, որ զօրէն ունի խայթոցաց կարճի, [7] իբր դժնիկ փշովք խոցոտեալ՝ ծծեն ձգեն զարեանն խոնաւութիւն, և յանկողինս մահճաց հանգստեանն՝ վաստակս կրից ցուցանեն։ Այլ կարկառեալ ուրուք ձեռն՝ հատուցանել զհատուցումն նոցա նոցին, վաղվաղակի զգան զխնաս վտանգին՝ [8] զոր ազդեն մարմնոյն. և անդէն իսկոյն լերկամարմին փոքր հասակաւն՝ իբր թևօք իմն թռուիչս արձակեն, և ըստ մարախի ձևոյ ոստոստեալ՝ այսր անդր տարաբերին. և ըստ բազմապատիր նենգութեան բարոյից դաւօղ աղուեսուց՝ խորամանկեալ խուսափեն [9] 'ի պատուածս բազում ելից, զի յերկիւղէ մահուն ապրեսցին։ Այլ այնքան չքոտի և անքատանձամբքն՝ ոչ միայն զռամիկսն և զխառնիճաղանճս, այլ և զթագաւորս հզօրս և ահագինս փախուցանեն հանեն տարագրեն 'ի դաստիկոն յարկի ապարանիցն բարձրութեան, և կամ 'ի բացի բնակեցուցանեն. քաջք արանց արեաց, որք իշխեցին ամբոխից, և տիրեցին ժողովրդոց, և առին զքաղաքս ազգաց, զպարտութիւն իւրեանց զօրաւոր ձեռինն՝ ինքեանք վկայեն, թէ քանզի ոչ կարացաք 'ի դիմի հարկանել վեհիցն բռնութեան, վասն այնորիկ խոյս տուեալ հասաք յայս տեղի։

Է. Այլ զի՞նչ է ինձ [10] զփոքունց և զանկածից ծաղրականաց ոմանց գոյութեանց 'ի կիր արկանել, որք զօրեղ և անհերքելի ջատագովք են աստուածութեան՝ յիշատակել ինձ զհանդերձեալսն, որք 'ի մարմնոյս անօրինելոյ՝ ընծայլին պտուղք դառնութեան։ Ընդ որս և եկամուտ սատակչականացն ախտից գիւտք, և կերչացն կոյտք անողոքելիք. յորոց չէ՛ զերծանել, քան

Թէ հարկաւ մարմնոյն վտանգի՝ զապագայիցն սոքօք իմաստասիրել. և ոչ տեղի է գտանել ապաստանի՝ փախստեամբ անկանել առ նոսա. այլ առանց կամաց քումդ ակնարկութեան՝ և մարդկային կարք և հնարք վրիպեցան: Իսկ դու բարերար՝ զամենայն ունիս բաւականապէս զկենացն հնար՝ եթէ կամեսցիս փրկել, նորոգել, քաւել, բժշկել և կենագործել. և քեզ փառք յամենայնի՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

(1) 'Ի ՏՐԱՅՍ ԸՆԹՐՈՒԹԷ: 'Ի ձեռն արարչիդ իմոյ՝ խնամով սիրոյ քո իբրև 'ի քրոյս մաքրութե միշտ եռամ, և ոչ երբեք ՊԱՐԶԻՄ, մաքրիմ, որպէս 'ի մեղաց. մի օրին. ՆԱՐԴԻՄ: Միշտ խառնիմ առ 'ի լինել միաձոյլ զուտ առանց երկպառակութե անտից. և սակայն ոչ ԴԺԱՆԱՄ ընդ իս և ընդ քեզ խաղաղութբ. վասն այսորիկ 'ի զուր աշխատիս 'ի վերայ իմ արծաթագործդ իմ երկնաւոր՝ ըստ ՆԱՐԳԱՐԷԻՆ երեմիայ. Զ. 29:

(2) ՅԱՆԴԳՆԵԱԼ ԱՆԿԱՐԳԱ ԽՕՍԻՄ: Ո՛չ զբանս աղօթիցս անկարգս ասէ, այլ զի բառս աղօթիցս ոչ ուղղեմ ասէ՝ զվարս իմ, և զխրատ. վասն այն յանդուգն և անամօթ եղեալ խօսիմ, այլ ինչ 'ի բերանի կրելով, և այլ 'ի վարս իմ. որով առաւել պարտաւորիմ աղօթիւքս, քան թէ հաշտութե գտանեմ: Այս առ 'ի զգաստացուցանել զխելապարութե իմ, զհանդերձեալ տանջանսն յառաջ առեալ՝ օրինակաւ պատուհասիցն զոր աստէն կրեմք:

(3) ԱՆԸՆՏԵԼ ԴԻՊՈՒԱԾ: Սկիզբն աղօթիցս առ Ած եղեալ, աստանօր փոխի յերրորդ դէմս: Զի մի՛ ասէ՝ հանդերձեալ պատուհասքն երևեսցին ինձ անծանօթ դիպուածք. ԱՆԿԻՐԹ, անտեղի պատահումն, ԱՆՀԱՒԱՏԱՐ, աննման հանդիպումն: Վասն որոյ 'ի յիշատակ հանդերձեալ տանջանացն՝ եթող 'ի մարմնի իմում զնմայուած ինչ ՆԱԽՆԱՒՆ ԱՆԻԾԻՑ, այսինքն անիծիցն՝ որով անէծ Ած զերկիր, բուսուցանել փուշ և տատասկ. յորում ծածկապէս իմացեալ լինէր, թէ մարմինս մեր ծնանելոց է վնասակարս կենդանիս և ախտս, որպէս զՃճի, զորդն, զանիծ, զոջիլ, զլու, զխաղաւարտս, զլիծս: ԵՒ: ՈՐ 'Ի ԾՈՑՈՒԷ ԾԱՌԻԷ, 'ի փոքր և յանարգ իրաց անտի՝ որք զմեզ չարչարեն, կարեմք ուսանել զմեծ տանջանս հանդերձելոյն: Զմերոդրեալ վնասակարսս՝ ասէ յառաջին անիծիցն թողեալ 'ի մեզ. վասն զի այսպիսիկ ծնանին 'ի մեզ յանմաքուր հիւթոց, յաղտեղութեէց, կամ յօտար ջերմութէ արեան. որք ոչ լինէին յանապական վիճակին անմեղութեան:

(4) ԽՍԱՂԱՆ ՆԵՐՆԱԲԵՐԱԿԱՆ: Ծնանելն կամ եռացումն ինքնածին դիւաց որովայնի, որպիսի են ՅՈՓԱՓՔ ՃԱՊՈՒԿՔ, այսինքն ՃՃիք որովայնի՝ փափուկք և կակուղք, որք 'ի փորի ծնանին և մեծանան. ՈՐԴՈՒՆՔ ԱՂԵԱՑ, որք կան յաղիս մարդոյն, ԳԱՂՓԱԿՈՒՐՔ. 2 օրին. ԳԱՂՓԱԿՈՒՐՔ, որք գաղտ ուտեն զնուցիչ հիւթս կերակրոյն, կամ մաշեն զաղիս: Դիտեա՛ աստանօր, զի յայսմ տեղւոջէ սկսեալ մինչև 'ի վերջ անկատար ընթանայ բանն առանց բայի. այլ յարելի է յայն որ ասէ, յորոց ՉԷ ԶԵՐԾԱՆԵԼ ԷՆ. իբր ասել. ինքնածին ՃՃիք և արածք մարմնոյ՝ լու, ոջիլ, և այլք և բնածինք և եկամուտք, յորոց չկարեմք զերծանել, զի՞նչ ծանուցանեն մեզ՝ ԹԷ ՀԱՐԿԱՒ ՄԱՐՄՆՈՅՆ ՎՏԱՆԳԻ՝ ԶԱՊԱԳԱՅԻՑՆ ՍՈՔՕՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԵԼ:

(5) Խաղաղարգէ հրաշալծալէ : Ուռոյցք մարմնոյ Թարախոտք , յառաջ եկեալք յապականութէ արեան . ( չեպան . կամ սիլլըձիկ . ) որք իբրև հուր այրեն, կամ կարմրացեալ ծայրիւն իբրև կայծակն երևին : Եւ բէծէ բօշալէծէ . մանրիկ բուշտք կարմրագոյնք , որ իբրև բոց կծանեն կամ եռացուցանեն . որպէս ծաղիկն , վարսակն : անէծէ անչէրպաարէ . յօժ մանունք , որք իբրև ձու՝ երևին անձև , որպէս 'ի գլուխս մանկանց և կանանց . Եւ Էրամաչէ ամանէ . բաղմունք ոջլոց , որք յաղտոյ քրտանց ծնանին , և զաղտութե լցեալք են , և եռացուցանեն զմարմինն :

(6) Ալօրօ վերբենեաօ : Բաղմութիւք լուոց՝ որք առաւել 'ի գիշերի տանջեն խայթելով, մէնալէն բարբարօօ . ինքնագլուխ զինուորեալ անողորմ գնդից , որպէս են սապատակիչ զօրքն . զի լուք առանց միաբանութե մարտնչին , և նմանին թաթառար գայլոց , դժնդակ գայլոց : Զքատն թաթառար , հին լուծ . մեկնէ՝ արաբացի . բայց ո՛չ վարդապետն զառ դնէ զայն բառ : Այլ Թուի լինել պարսկական՝ 'ի բառիցն թէմ , այսինքն չար , ժանտ , և ռէր , այսինքն գլուխ , յորմէ և անասար՝ նշանակել չարագլուխ : Կամ, Թերևս 'ի յոյն բառէն թանոս , և թանփօս նշանակէ պատառօղ, լափօղ են : Արջնաբոյր գոնոջ . սև կամ Թուխ գունովն . որոց կոուցն էրէնապարայր , կրկնեալ և շրջեալ 'ի բերանն կոյս : խաածագ , սովորաբար մեկնի՝ ծայրն կեռ . բայց Թուի բարդեալ 'ի խաա բառէն . այսինքն որոյ ծայրն սուր կամ հաստատուն է, կամ կռեալ և ողորկ , որ ունի զնմանութե խայթոցի կարձի :

(7) Իէր տծնէլ էուլէ : Դժնիկն կամ իբրև գոյական խմանի փոխանակ ակքանի . ( աղ. ոնքէն . ) և կամ իբր ածական , դժնեայ և դժնդակ փշովք :

(8) Զօր ալգէն մարճոյն : 2 օրին . մարտոյն :

(9) 'Ի պապուածս , 'ի խորշս կամ 'ի պտոյտս բաղամ էկօ , բաղում Ճանապարհաց փախստեան :

(10) Զֆօտանոց և պանչածէց : Յայլ ապագիր եդեալ կայր , ֆօտանոց , սակայն ուղղեցաք ըստ մեր օրինակաց . զի զպատմական հոլով պահանջէ բանն . որպէս և յաջորդն՝ պանչածէց . ի՞ըն է՞ր զփոքր և զոկար կենդանեաց Ճանեմ, որէ պօրէղ . բայց եԹէ 'ի ցուցանել՝ Թէ հզօր և անյաղԹելի պաշտպանք են խրատանցն նոյ . և սոքա այնոքիկ են , որք 'ի նոյն խակ 'ի մարմնոյ մերմէ ծնանին : Ընդ որս և էխամօսպ : Հին լուծ . եկամուտ ախտ խմանայ զլուն . զի ո՛չ 'ի մէնջ ծնանի առէ , այլ արտաքուստ գայ : Սոյնպէս էէրլաօն էօյաէ , խմանայ զոջիլն , և զայլս : Բայց երկոքին ևս անյարմար . զի ո՛չ վարդապետն՝ ընդ բնածինս կարգեաց զլուն , և զոջիլն . և ապա յաւելու , Թէ բաց 'ի սոցանէ՝ որք 'ի մերմէ մարմնոյս ծնանին , են և արտաքուստ մտեալ ախտք սատակիչք , այսինքն զանազան հիւանդութիւք , որք յապականութէ օդոյ՝ կամ 'ի Թունոյ ներգործեն 'ի մեզ : Այլև զանազան բաղմութիւք կերչաց , կամ ապականողաց , այսինքն մարախոց , մկանց , գայլոց , առիւծուց , օձից , և այլ գազանաց , որք անողորմք են , և ոչ կարեմք զերծանել . այլ 'ի վտանգ մարմնոյ անկեալ 'ի նոցանէ , բռնադատիմք ուշօք զապաղայ տանջանօն 'ի միտս բերել . և չիք տեղի ապաստանի՝ անչանէլ աանօօօ , այսինքն փախչել յայն տեղիս : Եւ եԹէ երբեմն մարդկային հնարիւք զերծանիմք յայնցանէ , այսինքն 'ի հիւանդութեց , կամ յայլ Ճնասակարաց , կամք բարերարութե քո յաջողեն այն հնարք , և ո՛չ 'ի մերմէ Ճարտարութէ :

Մշտին յաւելուած ձրչին հեծութեան՝ նորին հօրողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԲԱՆ. Դ.

Ա. Եւ քանզի համբարձեալ զընթացս բանիս 'ի փոքունց աստի երկրայնոց՝ չհամարելոց ընդ գոյս եղելոց՝ [1] 'ի մեծագունիցն տեսակս, աստցից զտօնելի հանդէս իւրաւանց ահաւորին անաչառութեան ։ [2] Որ զի թէ մերձաւորագոյնք իցեն այ՝ իբրեւ զնախածանօթ հայրապետութիւն, եւ կամ մաքրագոյնք՝ որպէս մարգարէսն, կամ անբծագոյնք՝ իբրեւ զառաքեալսն, կամ ընտրելագոյնք՝ որպէս մարտիրոսսն, եթէ ոչ դու մարդասիրեսցես աննուազ բարիդ՝ եւ անփոփոխ խնամակալութիւնդ՝ եւ անպակաս ողորմութիւնդ, ընդունայն է ինձ փրկութիւն առ 'ի նոյանէ ։

Բ. Զի եթէ առ նոյն ինքն աբրահամ ձայն արձակիցեմ, իբր ողորմագին առակ ընչեղին ինձ վարդապետէ, 'ի տապոյ անտի պապակեալ, կաթի միոյ ջրոյ ոչ բաւականանայ. քանզի եւ նա փակեալ է [3] ընդ կարեօք հասարակաց անհնարութեան ։ Իսկ եթէ առ մովսէս, եւ նա զգածեալ է տկարութբ, որ ոչ զօրեաց առնն փրկութե, որ [4] զհայթայթանաց կըրկուտն 'ի պահպանութեն աւուր ժողովէր ։ Իսկ եթէ առ ահարոն, եւ նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթողի ։ Իսկ եթէ առ դաւիթ, 'ի մէջ բարեացն առաւելութե՝ ստգտեալ է եւ նա ։ Իսկ եթէ առ նոյ եւ յոբ՝ եւ դանիէլ, զայս եզեկիէլ մարգարէ մեկնեաց՝ յանուանէ իսկ յիշատակեալ զնոսա, եւ զայն ընդ նոսին իբր 'ի դիմաց այ ազդեալ, կենդանի եմ ես՝ ասէ տէր, թէ ոչ ապրեցուսցեն զուստերս եւ զդստերս իւրեանց 'ի բարկութենէն՝ որ հասանիցէ, բայց եթէ ինքեանք միայն ապրեսցին ։ Իսկ եթէ առ պետրոս վէմն հաւատոյ, 'ի քումդ խնամոց [5] խուռն մի խիթացեալ՝ եւ նա ընդ կրիւք իմն գրաւեցաւ ։ Թողում ասել զբազմացն գումարութե [6] խոնարհեալ առ կալիս կարիս, թէ եւ յաւէտ երջանիկք ե

ցեն ։ Ընդ որս և [7] յուլասու ոմն մարգարէի 'ի մէջ ածառաքն սպասաւորութեան մարդկօրէնն գայթագղութիւն մնայ յոլովից անթարգմանելի, թէև 'ի դէմս իմն մեկնութեան ձևակերպեսցի ։

Դ. Եւ քանզի չափեալ սահմանեցաւ զօրութիւն փրրկութեան մարդկան, և ցուցան նոքա ողորմեալք բարերարիդ՝ և զօրացեալք ամենակալիդ. կոչեցեալք պաշտպանողիդ՝ և քաւեցեալք հնարաւորիդ. [8] ընորհեալք ազատեցուցչիդ՝ և բժշկեալք անախտականիդ. կենագործեալք անապականիդ և լուսաւորեալք նորոգողիդ, այսուհետև գիտացեալ զսակն որքանութեանց հողածին բնութեան, [9] որք մխիթար են օրինակաւն նմանաբար հարազատապէս մհատութեան յուսահատելոց, ահա առ քեզ դիմեցից՝ որդի այ կենդանւոյ քո օրհնեալ յամենայնի ։ Մանաւանդ [10] զառակն ազգակից այսմ մաղթանաց աստանօր յիշեալ, զվերագրելոցդ բան վերստին արդարացուցանէ. բարի է, ըստ իմաստնոյ ումեմն երջանկի, անկանել 'ի ձեռս այ, և մի 'ի ձեռս մարդկան. զի որպէս մեծութիւն նորա, և ողորմութիւն նորին ։ Եւ այս բան՝ թէև զդաւթին իմն գծագրէր, որ զերեքմասնեան հարուածն այծեան առաջի եդեալ՝ ընտրեաց ինքնին կամաւորաբար զդատակնիք մահուն սատակման՝ իբր զկենդանի քոյի հաւատոյն յաձախութիւն, քան զերկուսն ևս այլ փոքրկունս՝ որք տանջեննն և ոչ ողորմին. սակայն և իմս օրինակութիւն բանիս պատկերի [11] ձարակեցելոյ հնարս կենաց կորուսեալս անձին՝ ոչ է այլայլեալ յարմարութեան. զի ոչ եթէ զփրկեալսն նուաստացուցանեմ 'ի մատենի այսր ողբերգութեան, [12] առանց որոց ոչ է մատչել առ տէր, այլ զփրկողին անուն պսակեմ, և զշնորհ նորին՝ առ ամենեսին բարեհաչակեմ. և զընաւին բարձունսն 'ի թախիծ վարուց՝ խոստովանիմ բանիս պայմանաւ յաւէտ [13] կարօտեալ ողորմութեան դեղոյ ։

Դ. Ահա դու կեանք, դու փրկութիւն, դու բժշկութիւն, դու անմահութիւն, դու երանութիւն, դու լուսաւորութիւն. արա ինձ անդորր 'ի մեղաց աշխատութեանց, [14] զի և քեզ լիցի հանդիսատ 'ի մշտադատս հեծութեանց՝ ձանձրացուցիչս թախանձանաց. որ ոչ այլ ինչ,

քան թէ փրկութիւն մարդկան պարարիս, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

(1) 'Ի Մեծագունիցն փեսակս ։ 'Ի փոքր կենդանեաց անտի, որք չհամարին ընդ գոյս եղելոց, 'ի ստեղծեալ էակս. (իբր զի 'ի թիւս արարածոց ոչ յիշատակի անուն լուոյ, ոջլոյ, ևն.) համեմատեալ զընթացս բանիս 'ի կարգս մեծագունիցն, աստցիս զգործ անաչառ իրաւանցն այ. իբր զի ոչ միայն տկար ստեղծուածքն վեհժխնդիր են այ 'ի պատժել զյանցաւորս, այլ և դասք մեծագունից սոցա անկարօղք են 'ի մեր փրկութիւն, եթէ ոչ մարդանայիցէ ած ։ Կմ, մեծագոյն տեսակս՝ խմն սաստիկ և զօրաւոր ապացոյցս իրաւանցն ԱՅ, առ որս համեմատեալ երկրաւոր օրինակքդ, ոչ միայն փոքունք են, այլև ոչինչ համարելիք ։ Յետոյ 'ի կարգին յիշատակէ զչորս դասս Սրբոց, զհաւատապետս, զմարգարէս, զառաքեալս, զմարտիրոսս ։

(2) Թէ Մերձաւորագոյնք ։ Թէև մերձաւորք ԱՅ, և առաջինք քան զայլսն յածապաշտութեան, իբրև զնախածանօթ հայրապետութիւն, իբրև զնահապետսն՝ նախկինն ժամանակաց և դաւանօղս ճշմարտին ԱՅ ։ 2 օրին. հայրապետութեան. մի օրին. հայրապետութիւն. և նոքին մօք խմնի՝ հայրապետք, և նախադրութեամբ ԷՐՐ, վարի ընդ հոգեականի և ընդ տրականի ։

(3) Ընդ յարէօք հասարակաց ։ Նա ինքն աբրահամ ներքոյ անկեալ էր տկարութեան յայնմիկ իրա՝ որ հասարակաց անհնարին էր. ըստ որում ասէր առ մեծատունն, թէ վիհ մեծ կայ ընդ մեզ և ընդ ձեզ, չէք հնար անցանել ։ (Ղուկ. ԺԶ. 26 ։)

(4) Զհայրապետաց իշխանութեան ։ Զապրանաց կամ զվիտոյից խուսն առ 'ի այրել 'ի պահպանութեան տնօր, 'ի շաբաթու ժողովէր ։ Զայս այր ասէ՝ ոչ կարող ապրեցուցանել զմովսէս. զի համարի՝ թէ դնելն զնա 'ի պահ, և յապաղելն զպատիժ նորա՝ էր վասն ապրեցուցանելոյ զնա ։ (Թուոց. ԺԵ. 32 ։)

(5) Խոսն Պ ։ 'Ի քոց խնամոց փոքր ինչ կասկածեալ կմ դայթակղեալ, ընդ յերկ երկխուղի ըմբռնեցաւ՝ 'ի գնալն 'ի վերայ ծովուն, կամ յըմբռնման գիշերին, և յուրանալն ։

(6) Խնդրահեալ առ յարէս ։ Թողում յիշատակել զայլ բազումս յարդարոց, որք վրիպեցան յայլ և այլ սխալմունս, 'ի պէսպէս յանցմունս տկարութեան ։

(7) Յովհաննու ոճ., առն այ, որ եկն յերկրէն յուդայ առաքմամբն այ՝ յանդիմանել զկռապաշտութիւն յերոբովամայ. (Գ. Թագ. ԺԳ. 1 ։) Զսա յովհան կոչէ, առեալ որպէս կարծեմ, 'ի պատմութէ ինչ մարդարէից՝ եղիփանու կարծեցեալ. յորում յովհան անուանի այս մարգարէ ։ Իսկ յովսեպոս, և այլք ընդ նմա կոչեն ադդոն, կամ յադդոն. տերտուղիանոս կոչէ սեմեա, կղեմէս աղեքսանդրացի սամեա. բայց ամենայնն՝ անյայտ ։ Այս անուանք յիշատակին ('ի Բ. մնաց. ԺԲ. 5. 15. ԺԳ. 22.) առ ժամանակօք ռոբովամու և որդւոց նորա. յորմէ առեալ են և յարմարեալ առնն այ ։ Արդ՝ սորա հարդէօրէնն գայթակղութիւն, այսինքն խաբիլն 'ի բեթելացի մարգարէէն, հայ յուղիղ անթարգմանելի. բազմաց անիմանալի թուի, թէ զիարդ անաչառ սուտ մարգարէութեանն բեթելացւոյն, կամ թէ անսալոյն ծանր մեղաւ, թէ ներելի. եթէ ներելի, ընդէ՞ր մեծապէս պատժեցաւ մահուամբ. և եթէ ծանր, ուստի՞ նմա այն պատիւ, զի մարմին նորա անծախ պահեցաւ յառիւծոյն, և ակեղքն անկէզ թողան 'ի յովսիայ արքայէ ։ Այսոքիկ ասէ՝ բազմաց

դժուարիմանալի միտն. Թէ և 'ի դէմ իմ մեղուցէ յանցուցանէ. այսինքն թէև մեկնութ՟ ինչ դատաւորը լուծումն, ասելով թէ թող ետ ած Ճշմարիտ մարգարէին խաբել 'ի բեթելացի մարգարէէն, զի յետոյ պատուհասելով զնա՝ այլոց կատարեալ աւելորդն խրատ լիցի. զի եթէ ընդ փոքր յանցումն ծառային իւրոյ զայրացաւ ած, զիա՞րդ զմեծամեծ յանցանս այլոց անտես առնիցէ. և զի Ճշմարտելով բանիցն ան 'ի վերայ մարգարէին յանցուցելոյ, իմասցին՝ թէ նաև այլ բանք նորա 'ի վերայ յերոբովամայ՝ 'ի գլուխ ելանելոց են: Իսկ թէ զիա՞րդ մարգարէ այ գոլով, խաբեցաւ 'ի սուտ մարգարէութէ բեթելացւոյն, ասեմք՝ թէ խաբեցաւ ոչ իբրև մարգարէ, այլ իբրև մարդ. զի ոչ միշտ զամենայն ինչ յայտնէր ած մարգարէից. քանզի և նաթան մարգարէ էր, և 'ի հարցանել ցնա դաւթի՝ շինել զտուն այն, պատասխանի ետ՝ առնել որպէս և հաՃոյ է նմա. և սակայն 'ի գիշերին յայտնութի առեալ յայ, դարձոյց զբանն՝ չշինել. ևն: (Բ. Թագ. Է. 3. 4. 5:) Այսպէս և այրն այ համարեցաւ՝ թէ դուցէ բեթելացի մարգարէին յայտնեաց ած դառնալ 'ի տուն նորա, զոր ինքեան յայնժամ ոչ յայտնեաց. և թէպէտ կարող էր և պարտական՝ քննել զՃշմարտութի մարգարէութե նորա, բայց ակարացաւ և զանց արար. որով և յանցեաւ՝ թէ և ներելի՝ ըստ հասարակ կարծեաց վարդապետաց. ուստի և պատիժ նորա եղև արտաքին մահ մարմնոյն, որով 'ի հայրենի գերեզմանէն զրկեցաւ: Իսկ եթէ ծանր ևս համարեսցի յանցումն նորա, սակայն յետոյ ծանուցեալ զղջացաւ. ուստի և ած 'ի պատուհասելն զնա՝ պահեաց սակաւելն զպատիւ ծառային իւրոյ: Այսուիկ, և այլ ևս բանիւք՝ զորս թողումք վասն համառօտութե, մեկնի ըստ իւրաց ինչ մարդկօրէն դայթակղութի մարգարէին այ. զոր միայն գիտէ ատենաւոր ոք վարդապետս, առ 'ի ցուցանել՝ թէ արդարոց ևս պատահէ անկումն, որով ողորմութեն այ կարօտին: Այլ ոչ գիտէ ասել, թէ երկոցունց ևս մարգարէութի Ճշմարիտ էր, և թէ ած ետ նոցա հակառակ միմեանց մարգարէանալ. (որպէս ոմանք կարծեցին անզգուշաբար:) Այդպիսի մնաց և ոչ նշանակեաց մի կայ 'ի բանս սրբոյ վարդապետիս. նաև կարէր իսկ ոչ այդպէս կարծել, յայտնապէս ասելով գրոյն. (Գ. Թագ. ԺԳ. 18.) թէ ստեաց նմա բեթելացի մարգարէն:

(8) Շնորհէաւք ազատեցուցչիդ: Ի ներումն դառնալք յազատեցուցչէդ: Այսպէս զօրութ՟ բացառական են սոր սեռական անուանքն՝ որ յայսմ բանի:

(9) Որք մեռեալք էն ... կենդանաբէ: 2 օրին. մեռեալքէն ... կենդանաբէ: Երկոքին ևս ունին զպարզաճ միտս, այսինքն տեսանելով զի և սրբքն 'ի քէն գտին զողորմութի 'ի մեղանչելն, և այսու գիտելով զչափ կարողութե հողեղէն բնութեա 'ի սխալմունս նոցա, նոքա իբրև համակարիք մեղ՝ իւրեանց օրինակաւ մխիթարիչք լինին վհատութե յուսահատելոց, կամ մխիթարեն 'ի վստահութի յուսահատելոց կամ լքելոց. վասն որոյ և ես առ քեզ դիմեցից, ևն:

(10) Զատակն աղաւթից: Զվճիռն՝ որ նման է այսմ մաղթանաց. և է բանն սիրաքայ. (Բ. 22.) զոր և դաւիթ ասաց առ դաւ. (Բ. Թագ. ԻԴ. 14:) Այս բան սիրաքայ՝ Թէ և ըղձաբին իմ գծագրէր, թէպէտ և զդաւթի երից հարուածոց ընտրութին յայտ առնէր, որով 'ի սովոյն՝ 'ի հալածմանէն՝ և 'ի մահուանէն ընտրեաց զվերջինն՝ զմահն, որ յայ լինելոց էր, ուստի հանդերձ ողորմութբ, միանգամայն յանձնառութբ 'ի կամս այ մեռանելոյն՝ կենդանիք լինէին հաւատովն յարուն 'ի ձեռն քոյ. իսկ այլ երկուքն՝ սով և հալածումն թէպէտ և փոքունք քան զմահ, բայց անմիջաբար յերկրորդ պատճառաց լինելով, անողորմաբար

տանջէն ։ Արդ՝ թէ և դաւիթ և սիրողք զընտրութէ պատուոյն տացին, եւ զնոյն օրինակեալ առէ՝ յընտրութեն բարերարութեց, լաւ համարելով անկանել առ ա̄ծ, քան առ արդարս 'ի մարդկանէ ։ Եւ այսու ոչ եթէ նուաստացուցանել զինքն, այլ զանուն փրկողին մեծացուցանել, և շնորհաց նորա և ողորմութե̄ զամենայնին կարօտ խոստովանիլ, որով և սոյն պատիւ առաւել մեծանայ․ քանզի առաւել փառք են նոցա յա̄յ ունել զա̄մ, քան յընկերաց․ որպէս առաւել պատիւ է մարդոյ՝ 'ի ձեռանէ թագաւորի հանդերձ զգենուլ, քան թէ իւրովք դրամովք առնել զայն և ագանել ։ Ուստի (յայտն. դ. 10.) սոյն զպսակս իւրեանց դնէին առաջի աթոռոյն ա̄յ, նմա ընծայելով զա̄մ փառս և զպատիւ․ նշանակեալ թէ այս խոստովանութի՝ էր նոցա պսակ փառաց ։

(11) Ծարաւեցելոց հնարս կենաց ։ Խմն իբրև ներգործական․ այսինքն ծարաւողի կամ խնդրողի հնարս կենաց ։

(12) Աւանց որոց ունէ համբէն ա̄յ առանց միջնորդութե̄ սոյ ։ Բայց զայս խմս ոչ բացարձակապէս և առհասարակ յաղագս ա̄մ բարեաց՝ զոր յա̄յ ընդունելոց եմք․ զի այսպիսի բացարձակ և ընդհանրական միջնորդ՝ մի միայն է յս̄ ք̄ս տէր մեր ։ Այլ խմն զհամարձակ մատչելոյն առ ա̄ծ․ զի սոյն արժանաւորութի և համարձակութի՝ տայ մեզ առաւել վստահութե̄ մատչել առ ա̄ծ․ այլ և ըստ տուչութե̄ մասնաւոր բարեաց՝ զորս ա̄ծ սահմանեալ է շնորհել մեզ բարեխօսու̄ սոյ ։ Որպէս բարեկամացն յոբայ սահմանեալ էր տալ թողութիւն աղօթիւք յոբայ ։ (Յոբ. խբ. 8 ։)

(13) Կարօտեալ ողորմութեան ։ Այս ոչ հակառակի ասացելոյն 'ի բանն ծթ. 2. վասն սոցա, թէ ապէնեալ էն ողորմութե̄ ։ Զի արդարք գոլով, չեն կարօտ քաւչական ողորմութե̄, կամ ներողութե̄, այլ արժանիք պարգևաց ։ Իսկ աստանօր խօսի ըստ մարդկային սխալմանց նոցա, առ որս կարօտ գտան ա̄յ ողորմութեն 'ի ներել, և երբեմն՝ առաւել քան զայլ մեղուցեալս՝ վասն բարձրութե̄ շնորհացն ։ Տեսանեմք զի առաւել զայրացաւ Ա̄ծ ընդ տրտունջ մարիամու ընդդէմ մովսեսի, քան ընդ տրտունջ ռամիկ ժողովրդեանն, ըստ բանին իմաստ․ (զ. 8.) *Ռամիկն ներելի ողորմութե̄ է․ հզօրք հզօրագոյնս պահանջեսցին || ։ Եւ երբեք՝ զի արդարն առաւել պէտս ունի ողորմութե̄ առ 'ի ազատանալոյ 'ի մասնաւոր մեղաց իւրոց․ քանզի կեցեալն յարդարութե̄ դժուարաւ ճանաչէ զիւր յանցումն․ որպ̄ դաւիթ ամիսս բազումս ոչ ծանեաւ զմեղս շնութեանն և սպանութե̄ն․ մինչև պէտք եղեն ա̄ծառաք յանդիմանութե̄ն 'ի նաթանայ առ 'ի զգաստութի ։

(14) Զի և քեզ լիցի հանգիստ ։ Գեղեցիկ այլաբանութի է բեկեալ հոգւոյ 'ի յորդորել զգութն ա̄ծային․ ապա թէ ոչ՝ ա̄ծ ոչ նեղի 'ի զղջական հեծութեց մեղաւորին, այլ իբրև 'ի ձայն քնարաց զուարճանայ ։

Մերայն յաւելուած կրկին հեծութեն՝ նորին հանճարի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ՂԱ.

ա. Ոչ քանզի [1] երջանիկքն և փառաւորեալք սրբոց պարք, յորոց ումանք դոյզն ինչ գթե- ցին, և յաճախագոյնս հաստատեցան. փոքունս սա- սանեցան, և մեծագոյն վառմամբ նշուլից հոգւոյն մաքրութե̃ լուսաւորեցան ։ Յորոց [2] միոյն՝ զզանկուա- ծոյն յայտնէ զհասարակաստեղծն տկարութիւն, իսկ միւսոյն՝ զգերազանցն քան զբնութե̃ն օրէնս, վարս և առաքինութիւնս հրեշտակականս ։ Ոչ արդ՝ նոքա որ օրհնեալքն են յամենիշխան բերանոյ ա̃ծութե̃ հօրն քո, ընտրեալքն՝ տօնեալքն՝ խնկեալքն և բարե- բանեալքն, իբրև զանդամս քո պաշտեցեալք, և իբրև զօթևանս հոգւոյն սրբոյ յարդարեալք. [3] յորս չիք ինչ նշմարանք և կամ գիտք խաւարի, այլ ա- մենևին անկեղծութի̃ և լուսաւոր արդարութիւն, և որքան մարթ է՝ զմարդն ա̃յ՝ ա̃յ նմանեցուցանել ։ Որեաք պարզք և անպատկառելիք. կրօնք բար- ձունք և անխոնարհելիք. կեանք զգաստք և անըստա- գտանելիք. [4] պաշտօն առ ա̃ծ կարծր և անփոխար- կելի. ընթացք արիականք և անկասելիք. Ճշմար- տութի̃ միատարր և անցնդելի. դիմագրաւութի̃ զօ- րեղ և անհերքելի. տեսաւորութի̃ պայծառ և անսա- շելի. իմաստասիրութի̃ վերնական և անկոխելի. պատ- կեր մաքուր և անաղարտելի ։ [5] Որոց կերպարանս և զյիշատակս անուանցն աղաչել՝ ա̃ծ իսկ վարդա- պետեաց, և նոքօք հաճութի̃ ՚ի մէջ խռովութե̃ արար- չիդ բան լուսաւորեաց ։

( [6] Բանք պանծալիք հաղորդեցուցէք Այ ։)

բ. Այլ ես անպիտանս յամենայնի, և որքան բան զօրէ՝ պարսաւեալս. որ մինչդեռ արթունս եմ, նիրհեմ. մինչդեռ զգաստ երևիմ՝ թմբրիմ. ՚ի

բարեպաշտելս իմում՝ գայթագղիմ. մինչդեռ աղօթեմս՝ և վրիպիմ. 'ի յընթանալս իմում՝ և կասիմ. յարդարանալս իմ՝ և մեղանչեմ. 'ի խաղաղանալս իմում՝ ամբոխիմ. մինչդեռ արշաւեմս՝ առ 'ի յետոյսն հակամիտեմ. 'ի չուելն իմում՝ ընդ կրունկն դառնամ: Ընդ լուսոյն մասին՝ և խաւար յարեմ. ընդ քաղցրութեն ճաշակ՝ օշինդր խառնեմ. [7] ընդ կուղս բարեացն՝ չարիս հիւսեմ. ընդ կանգնելն՝ և կրկին գլորիմ: Ծաղկիմ, և ոչ պտղաբերիմ. ասեմ, և ոչ առնեմ. խոստանամ, և ոչ կատարեմ. ուխտեմ, և ոչ վճարեմ: Կարկառեմ, և անդրէն ամփոփեմ. ցուցանեմ, և ոչ ընծայեմ. մերձեցուցանեմ, և ոչ մատուցանեմ: [8] 'Ի ճարակել խոցուածոյս՝ անդրէն վիրաւորիմ. 'ի հաշտեցուցանելն՝ վերստին խռովեմ. [9] զուր հանդիսանամ, և իրաւամբք պարտաւորիմ. [10] գրիմ, և իսկոյն եղծանիմ. նաւեմ, և [11] 'ի գիծն թուլանամ. սկսանիմ, և 'ի հանգիստն ոչ ժամանեմ: Կարգիմ, և դարձեալ սասանիմ. լնանիմ, և կրկին հեղում. [12] շարունակիմ աստ, և անդ 'ի ստորև հոսիմ. բարդիմ, և անդէն տոչորիմ: Հիմն արկանեմ, և ոչ գլխաւորեմ. սակաւ վաստակիմ, և բիւրս վատնեմ. դոյզն գանձեմ, և անթիւս սպառեմ: Զայլս խրատեմ, և ես ինքն անփորձ եմ. միշտ ուսանիմ, և երբեք [13] 'ի ճշմարտութի գիտութե ոչ հասանեմ: Զչիջեալ չարիսն՝ նոյնչափ արծարծեմ. սուղ ինչ քաջալերիմ, և առաւելապէս լքանիմ. լարիմ, և իսկ և իսկ առ նմին մեղկիմ. զայս կարկատեմ, և զայն պատառեմ. խլեմ [14] զեղիճն, և տատասկ տնկեմ: [15] Ընդ ամբառնալն՝ և այսրէն բերիմ. մտեմ 'ի բոյնն՝ աղաւնի, և անտուստ ագռաւ ելանեմ. գամ սակաւ մի սպիտակ, և սրանամ դառնամ բնաւին սևացեալ. ասեմ զիս [16] քեզ դաւանել, և սպանողին նուիրիմ. ընդ յանդիմանն լինելն, և թիկունս դարձուցանեմ: Մաքրիմ, և այլ մրճոտիմ. լուանիմ, և նովին զազրանամ. կերպարանիմ զդաւթին, և գործք զսաւուղայն կատարեմ. շրթամբք ճշմարտեմ, և ստեմ երիկամամբք. աջովս մատակարարեմ, և ահեակ կողմամբս աւերեմ: Ընդ երկրագործութե

ցորենոյն՝ որոմն սերմանեմ. [17] 'ի բարձրագոյն իմաս-
տիցն՝ վայր իջեալ ես ինքն գտանիմ։ Հրեշտակա-
նամ յերեսս, և 'ի խորհուրդս դիւանամ. [18] 'ի յոյս
հաստատիմ, և 'ի միտս տատանիմ. սուտ ձևանամ,
և իրօք խոտորիմ. կեղծաւորիմ արդար, և ար-
դեամբք ամբարշտեմ։ Պասիմ 'ի պարս հեղոց, և
ընդ այսս կաքաւեմ. 'ի մարդկանէ գովիմ, և 'ի տե-
սողէդ պարսաւիմ. 'ի հողածնելոցս երանիմ, և
յորդւոցն լուսոյ աւաղիմ. հաճոյանամ յետին ռամ-
կին, և թագաւորիդ մեծի յաչաց ելանեմ։ Զա-
տեանն դատաւորին թողեալ, [19] խառնակրօնիցն ա-
ղերսեմ. հերքեալ 'ի վեհիցն, [20] սոսկականացն սպըր-
դիմ. մարմնովս արտաքուստ պճնիմ, և անձամբս [21]
երփնիւ ճային ճանաչիմ. հպաւորիմ դաշն հաստա-
տել, և ուխտակորոյս արտաքս մերժիմ։ Այսօր մա-
քուր հոգեկիր, և վաղիւ մոլի խելագար. զտէրու-
նի պատուէրն լքեալ, թելադրութե՟ օձին հետևիմ.
արխանամ զօրապէս, և վատթարագոյնս ընկրկիմ.
զծանրութի՟ աւուրն բառնամ, և 'ի ժամ վարձուն
անմասն ելանեմ. 'ի բացուստ ճոռոմն խօսիմ, և [22]
'ի պատասխանատուութե՟ն պահու պապանձեալ կար-
կիմ. [23] 'ի յելս արևուն հարուստ երևիմ, և ընդ ե-
րեկս ունայն դեգերիմ։ 'Ի յաթոռս ծերոց բազ-
մեալ, և խելայեղից կցորդիմ. ննջեմ խեթիւ, և
արհաւրօք զարհուրեալ զարթնում։ Զանդաս-
տանս կամացս՝ չարաչարս հերկեմ. [24] փոյթ խնամով
'ի չարիս. միշտ անառակ որդիս. անդարձ տարա-
գրեալս. անզղջական զառածեալս. անմխիթար տըրտ-
մեալս. ինքնագրաւ գերեալս. մահու և ապականու-
թե՟ ծառայեալս. անողոքելի տանջեալս. անփրկելի
մատնեցեալս. անպատուաստելի հատուածեալս. ան-
արծարծելի շիջուցեալս. անկազդուրելի խորտա-
կեալս. անհանդերձելի կործանեալս։ Եւ եթէ պարտ
է զաստիկն աստանօր ասել անօրինեալս անձին նա-
խատինս, ահա գրեմ, գրեմ և [25] ոչ անխայեմ 'ի
խուխս նիւթեալ գեհենին։ Ստացուածս [26] նախան-
ձու նորոյս ադամայ երկնայնոյ, որպէս և կայենն ա-
ռաջին՝ հնոյն և հողեղինին. որ ունիմ զբնաւն աս-
տուստ 'ի յանձին վնշանակ ամբաստանութե՟ս, ոչ

զմնչոյս տուրեառութիւն, այլ զբանիցս կշտամբու-
թիւն։
Դ. Եւ արդ՝ ո՞ւր իցեն փրկութիւնք, ուր սկզբնա-
հայրն հաւատոց՝ 'ի յուսահատութեան վայրի՝ զանդը-
թութեան իմ չարիս կրկնէ. մեծն մարգարէից՝ քա-
րամբք բանից կոչկոճէ. 27 արին բարեփառ՝ աշտէին
նիզակաւ՝ 'ի մահ սատակէ. 28 պատկեր ճշմարտին՝ ընդ
աքարու համայնիւ ջնջէ. 29 ածարեալն վեհից՝ յա-
րագողայն վրիժուց մատնէ. 30 մարգարէածին տե-
սանօղն՝ ընդ ամաղեկացւոյն առաջի տն սպանանէ.
31 նախանձաւորն այ՝ երկնատեղաց բոցովն վատնէ.
ստուերին լրումն՝ և նորոյս սկիզբն՝ հեծանոցին ըն-
տրութբ հոսէ. պետն առաքելոցն՝ ընդ սափրոյն 'ի
կենաց զրաւէ. զարմանալին քննութբ հոգւոյն՝ բու-
րումն ինձ մահու՝ ընդ կենացն քարոզ խառնէ։ Արդ՝
32 անաչառք և ինձ կաճառք երջանկացն, և ուժ-
գնութե հրամանի վերնոյն՝ արի սպառազէնք. ընդ
հրեշտակացն՝ և մարդիկ. ընդ տիեզերաց երկրի՝ և
տարերք. ընդ անզգայիցն՝ և շարժողականք. որովք
դատեալ միշտ լինիմ տուժիւք լկանաց՝ յօրինակ
և յիշատակ սոսկալեացն ապագայից. իբր հողմով
փոթորկի աւեաց յաւէտ մրրկեալ կենացս վտա-
հութիւն, մնայ անկայուն 'ի հաստատութեց։ Ո՛ր
եթէ ոք իմաստութբ 'ի քննին առեալ խուզեսցէ 33
զլուղակացն բազմատեսիլ զանազանութի, զմանունս
փոքունս ընդ մեծամեծացն դասեալ, որ առանց
թուոյ և քանակութե համարոյ՝ 34 թինդս առեալ
անբաւ երամոց եռանն զեռանն սլանան 'ի մարմնիս
ծովու, վկայեսցէ և հաստատեսցէ ճշմարիտ լինել
զասացելոցս բանագրութի։
Դ. Այլ դու ինքն օրհնաբանեալ անմահ Թագա-
ւոր՝ բարի երկնաւոր մարդասէր քս, այ կենդանւոյ
միածին որդի, հզօր բարձրեալ անքնին անճառ քա-
ւիչ ահաւոր, սաստեա 'ի ձմեռն ամբոխեալ աւեաց
ոգւոյս ծփանաց. 35 արձանացո զծարաւս մոլեգին
շարժման սրտիս խռովութե. ընդոտնեա 'ի սանձս
կապոյ երասանաց ըմբռնման՝ զցնդեալ մտացս վայ-
րագութի։ Եղիցի խաղաղութի հրամանաւ մեծիդ 36
ամենավարան բքոյս սասանման. սատակեա խափա-

նեա՛ զբազմագլխեան անդամս ուրուականս գաղտնեաց ամօթոյս՝ երկրակենցաղս հինից ։ Գրեսցես [37] աղօթս մատամատոյցս զայս նորընծայ տառ ողորմաղերս Թախծագին ձայնի ողբերգարկութե՛ այսր մատենի ։ Հա՛ն 'ի խորոց մահուս անդնդոց՝ չքնաղ ապրեցեալ ընդ մարգարէին փրկելոյ ․ ընկա՛լ զխոստովանութ̅ի անձնադատ բանիս [38] 'ի հոտ անուշից ․ շնորհեա՛ մխիթար դառնութե՛ վշտաց ուժգին հեծութե՛ յուսահատելոյս ։ Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք պատիւ և իշխանութի՛ յաւիտեանս ․ ամէն ։

---

(1) ԵՐՋԱՆԻԿՔՆ Ե ՓԱՌԱՒՈՐԵԱԼՔ ։ Ակնուած բանիս կամ զօրութ̅բ բայ ինչ պահանջէ ․ իբր ասել, երջանիկ են և փառաւորեալ սբ̅ցն պարք, են ։ Եւ կամ յարելի է ընդ այնմ, որ օրհնեալքն էն, 'ի բայ Թողլով զԹարմատար բառս ինչ, այսինքն է ասել ․ երջանիկ և փառաւորեալ սբ̅ցն պարք՝ Թէ և ոմանք գԹեցին և հաստատեցան, սակայն ամենեքին օրհնեալք են յայ հօրէ, են ։ Զայս աղօթք խորհրդով զկնի բերէ անցելոյն ․ յորում զմարդկօրէն տկարութիս արդարոց յիշատակելով, զի մի՛ անպատուել ինչ այսու զնոսա կարծիցի, յաւելու 'ի մէջ բերել զգերազանցութիս նոցա, առ որովք կարի փոքունս լինել առ՛ զնոսա վկայանս և զանկմունս ։

(2) ՅՈՐՈՑ ՄԻՆ ։ Ոչ գԹեալն սբ̅ց՝ զբնութեա մերոյ զհասարակաց տկարութին 'ի բարին՝ յայտնէ ․ ԵՒ ՄԻՆ, կանգնումն և հաստատութի նոցա 'ի բարիս՝ ցուցանէ զհրեշտակական վարս նոցա, որով գերազանց գտան քան զմարդկեղէն բնութիւ ։

(3) ՅՈՐՍ ԵՒԹ ԲՆԼ ։ Խօսի զսբ̅ց ոչ 'ի վիճակ անկատար կենաց աշխարհի, այլ 'ի վիճակ կատարեալ շնորհաց և երանութե, յորում ոչինչ նշմարանք կամ գործ խաւարային տխմից գոյ 'ի նոսա ։ ԶՄԱՐԴՆ ԱՅ՝ ԱՅ ՆՄԱՆԵՑՈՒՑԱՆԵԼ ։ զմարդն՝ որ իբր բնական պատկեր այ է, այ նմանեցուցանել 'ի գերբնականս շնորհօք և փառօք ։ Կամ, ՄԱՐԴ ԱՅ, իմա ըստ մտաց առաքելոյն ․ (ա․ տիմոթ․ զ․ 11․) այսինքն մարդ նուիրեալ այ, 'ի պաշտօն աստուածային կարգեալ ․ զայնպիսի մարդն նմանեցուցանել առ այ՝ գերազանց վարուք սրբութե ։

(4) ՊԱՀՊԱՆ ԱՌ ԱԾ ։ Ածպաշտութի նոցա հաստատուն և սերտ ․ մինչզի 'ի մէջ ալեաց կռապաշտութե ոչ ինչ տկարացաւ, որպէս աբրահամուն, յակոբայն, յովսեփայն, և այլոց ։ ՃՇՄԱՐՏՈՒԹԻ հաւատոց սբ̅ցն՝ ՄԵԾԱՐՐ, միօրինակ, և ԱՆՑՆԴԵԼԻ, անկորուստ և անվրիպելի ։ ԴԻՄԱԳՐԱՒՈՒԹԻ, դիմեցումն ․ յարձակումն նոցա ընդդէմ դիւաց, տխմից, և Թշնամեաց այ, հզօր ․ 2 օրին․ և հին լուծ ․ ԴԻՄԱԴՐԱՒՈՒԹԵԱՆ ։ ՏԵՍԱՆՈՂՈՒԹԻ ․ տեսութիւն մտաց յածային՝ պայծառ և անշփոթ ։ ԽՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՆԱԿԱՆ ․ իմաստութիւն սբ̅ցն՝ երկնային, և ԱՆՊԱՐՏԵԼԻ ․ անյաղԹելի յերկրաւոր իմաստութե, կամ անխոնարհելի յաշխարհական իմաստս ։

(5) ԶՈՐՈՑ ԿԵՐՊԱՐԱՆՍ ։ Զվաստակս առաքինութեց նոցա և զյիշատակ անուանցն աղաչէ, առնուլ 'ի միջնորդ և 'ի բարեխօս, ԱԾ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՑ, ուսոյց 'ի հին և 'ի նոր օրէնս ․ և 'ի ձեռն նոցա հաշտիլ ը խռովելոց կամ բառնալ զխռովութիւս բանն այ ԿԵՐՊԱՐԵԱՑ, ծանոյց ։ Կամ,

'ի ձեռն նոցա ողորմութի գտանել 'ի բարկութէ Այ, յայտնի ծանոյց բանն այ 'ի բազում տեղիս:

(6) Բանք պանդխտին: Այս մակագիր 'ի մեր օրինակս գնի 'ի լուսանցսն. նշանակեալ թէ ոչ է սրբոյն, այլ յայլոց եդեալ. զոր յետոյ գրիչքն 'ի ներքս մուծեալ են. և ոչ իսկ հաւանելի է՝ թէ ոք վարդապետն զխոստովանողական բանս իւր կոչիցէ՝ պանդխտին: Վասն որոյ ըստ կարգի յառաջին բանին յարելի է յաջորդն. զի յետ բարձրացուցանելոյ զկրօնս սրբոյն, առ նմին զանձին իւրոյ թերութիւնս խոստովանի ասելով: Այսպէս անդիփանս յամենայնի, ևն:

(7) Ընդ կուղս բորբոքոյն: Կուղ է ոլորուած կամ կրկնուած չուանոց, կամ խոտոց 'ի միասին. (ղաթ:) Է ոլորուածս բարի գործոց ասէ՝ չարիս խառնեմ. զոր օրինակ, 'ի պահելն, 'ի լռելն, յաղօթելն, ևն, խառնեմ զչարն հպարտութէ. 'ի յանդիմանելն զյանցաւորս՝ խառնեմ ըզբարկութի, ևն:

(8) 'Իճարակել խոցուածոյս: 'Ի դարմանիլ կամ 'ի բժշկիլ մեոյ խոցուածոյս:

(9) Զօր հանդիսանաց: Աւանց իրաւանց յատեան ելանեմ, և 'ի քննութեն՝ իրաւամբք պարտաւորեալ դառնամ:

(10) Գործն, 'ի գալրութի կենաց բարի ինչ գործով, և խոհոյն եղծանին, դառնալով 'ի չարն:

(11) 'Ի գիծն թուլանամ: 'Ի նաւելս՝ յուղիղ ընթացիցն, կամ յառաջիկայ ճանապարհէն թուլանամ. կամ անհոգանամ յուղղել զնաւն:

(12) Ճարանակիմ աստ: Ճարիմ և կարգիմ յայս ինչ առաքինութի, և անդ 'ի սպառ հատիմ, և յայն 'ի միւս առաքինութին քայքայիմ և 'ի վայր թափիմ:

(13 'Ի ճշմարտութե գիտութե ոչ հասանեմ: 'Ի բնագիր առաքելոյն. (Բ. տիմ. Գ. 7.) գնի, 'ի գիտութի ճշմարտութե, այս է՝ 'ի ծանօթութի ճշմարտութե կամ ճշմարիտ վարդապետութե: Գուցէ և ոք վարդապետս 'ի բուն գրուածս իւր եդեալ էր, 'ի ճշմարտութե գիտութե. կամ գիտէ ասել, 'ի ստուգութի հոգևոր գիտութե ոչ հասանեմ. զի այսմ նման ասի 'ի փիլոնի բանն առ լիւսիմաքոս. *Խափան լինի առ 'ի ճշմարտութին գիտութե ||:

(14) Ջնջիճն. որ է (բուղդան խոտն.) փափառ.(տեմիր տիքէնի.) զփուշք չարն, կամ զնուազ վնասակարն խլեմ ասէ, և զառաւել չարն կամ զվնասակարն անկեմ:

(15) Ընդ ամբառնալն: 'Ի վերանալն մտօք յերկրաւորացս՝ խաղս 'ի խոնարհ իջանեմ դարձեալ: Մտեմ 'ի բոյնն. 'ի սենեակ իմ մտանեմ իբրև առանձնասէր և աղօթական. և սակայն ձանձրացեալ անհանդարտութ̃, արտաքս ելանեմ յաշխարհական իրս:

(16) Վեհ դառնել: Վեհ ունել, կամ ընծայել:

(17) 'Ի բարձրագոյն իմաստիցն՝ վայր իջեալ ես յետս գնացիմ: յայլ օրին. լաւ ևս որոշ, 'ի բարձրագոյն իմաստիցն 'ի վայր իջեալ, ես յետս գնացիմ. ֆ. 'ի հոգևոր իմաստութենէն կմ 'ի խորհրդոցն զրկեալ, գնացի որպէս էի յառաջն՝ ախտասէր, երկրաւոր, ևն:

(18) 'Ի յետս հաստատիմ: մի օրին. հաստատիմ 'ի յետս. այսինքն մարմնով կամ հաստատուն 'ի մի տեղի, այլ մտօք այսր անդր տարուբերիմ:

(19) Խառնակերծիցն աղերսեմ: Թողեալ զօրինաւոր և զարդարադատ դատաւորն, զանօրէնսն՝ կամ որք ըստ հաճոյից և վասն շահու անձանց դատեն, աղաչեմ:

(20) Սոսկականացն սպրդիմ: 'Ի մէջ ռամկաց խառնիմ:

(21) Երփնիմ ճայիւն: Բնական անարգ գունով ճային երևիմ: Այսօր

ճաշուր : Այսօր կամ այժմ տեսանեմ ամենայնիւ մաքուր, անարատ, բոլորովին զհոգի ոչ զգեցեալ, իբր անմարմին եղեալ. իսկ ձողին, յետ սակաւուց ցուցանիմ մնեալ յախտս մարմնոյ, մարմնասէր, և խելագար. վասն զի այսպիսի յանկարծ և արագ փոփոխումն ծայր 'ի ծայր՝ ոչ է առողջական տկարութեն, այլ խելագարութեն գործ, որպէս յանկարծ լալ և յանկարծ ծիծաղել :

(22) 'Ի պատասխանատուութեն : 2 օրին. 'Ի պատասխանութեն : այլ. պատասխանատուութեն, կամ պատասխանատրութեն :

(23) 'Ի յելս արեւուն : Ընդ առաւօտս հարուստ երևիմ զանազան բարի, բայց անգործ յառաջադրութեք, ուստի ընդ երեկս դատարկ գտանիմ 'ի գործոցն :

(24) Փայլ խնամոց 'ի լարին : Այս չէք յերիս օրինակս :

(25) Ու անխնայեմ 'ի խաւսս : Գրեմ համարձակ զմեղադրելիսն՝ առանց խնայելոյ յիս՝ որ խաւս կամ այրելի նիւթ եմ գեհենին : Բայց 2. օրինակք գրեն, 'ի խաւսս նիւթեալ կամ նիւթել գեհենին, և մարթ է առնուլ զառ ասացեալ. այսինքն նիւթելով կամ պատրաստելով այսու զպատճառս այրման գեհենին :

(26) Սպասաւորս նախանձու : Որդիս բարկութեն նորոյս ադամայ քնի, որպէս եղև կայէն հնոյն ադամայ. որ սպասաւոր կամ ժառանգութեն ասացաւ, սակայն եղբայրասպանութեն և անզղջութեն եղև չար ասացեալ ծնողացն. ուստի և ես իբրև զնա կրեմ յանձին զնշանակս ամբաստանութեն, 'ի զղջնլոյ պատուհասութեն, ոչ զկենդանութեն կամ զպահպանութեն 'ի մահուանէ, որ տուաւ կայենի առ 'ի մշտադատ դատախազութեն անձինն, այլ զկշտամբութեն բանիցս, որք են իբրև նշանն եդեալ 'ի կայէն :

(27) Արէն բարէխօս : Փենէհէս որդի եղիազարու, որ քաջ գտաւ և փառաւոր 'ի սպանանել աշտէիւ զպոռնկեալսն :

(28) Պատկեր ճշմարտին : Յեսու՝ օրինակ ճշմարտին յսի :

(29) Անարգեալ վեհից : Դաւիթ արքայ, յարգողացն հրեշտակաց, գաբաւոնացւոցն վրէժխնդրութե մատնեաց զորդիս տանն սաւուղայ : ( Բ. Թագ. իա : )

(30) Մարգարէածին պէտանօքն այսինքն սամուէլ. ընդ ամաղէկացւոյն ագագի դն սպանանէ : Այս բան չէք յերիս օրին :

(31) Նախանձաւորն ՟Գ. Եղիա. սպառէրէն լուսոյ. Յովհաննէս մկրտիչ. պարմանաւքն քննութեան. Պօղոս :

(32) Անաչառ և բնչ : Արդ՝ լաւ օրինակի յիշատակելոցս՝ անաչառք են առ իս նաև գունդք սրբց, որք սաստիկ հրամանին ՜յ զինուորք և պաշտօնեայք են, են :

(33) Ջրալողաց : զծովու կենդանեացն, որք լուղան 'ի ջուրս :

(34) Թնդաց ալեաւ : Թնդալով, ուժգին ընթացիւք կայտառելով : Խնամս բոլոր բանիս է, թէ ամենայն արարածք հակառակ ինձ յարուցեալք, իբրև զծով ալէկոծեալ կամ յամբոխման : Իսկ ծովու նմանեցուցանել զիս, կամ զմարմինս՝ ամենայն ոք վկայեսցէ, 'ի քննելն զբազմազան ախտս մարմնականս՝ որք իբրև ձկունք մեծամեծք և փոքունք զեռան 'ի մարմնիս անբաւ թուով :

(35) Արեանարբու ծարաւոյ : Դադարեցի, խափանեմ զծարաւս : Յայտնի մաղթողական բանս գիտէ զնմանութե անցիցն յոմանս մարգարէին : ընդոտնեմ 'ի սանձս. իբր ընդ ոտիւք արգելուլ սանձիւ զտատանեալ մտաց կատաղութե, որպէս զկիշայն յոմանս :

(36) Աշնաչափան բերոյ : Յամենայն կողմն ցրող ձիւնախառն հողմոյ : Բազմագլխեան անդամս. որպէս զանդամս վիշապ ձկանն՝ որ եկուլ

զՅովնան, խափանեալ ասէ՝ զախտս մարմնոյս. որոց իւրաքանչիւրն ունին գլուխ, և ասին անդամք հոգւոյն՝ բայց ուրուական, այսինքն նմանական կամ օրինակաւ. Երկրակենդանաց հիւթոց, որք են իբր հենք (զօրսանոք) շօշափելեաց կամ բնակելեաց յերկրի մարմնոյս. կամ են հենք ցամաքային, որք շրջին 'ի ցամաք երկիր բնութեան:

(37) Աղբեր մարմնոյս: Զայս գրաւորական ոճով ձայնէ՝ համարեալ իբրև զաղօթս Յովնանու, զոր մօք մատոյց 'ի փորոյ կիտին: Եւ ասէ, Նորընծայ պատ, այսինքն նորոգ յարմարեալ, և ոչ թէ նոր զգեցուն առնելով:

(38) 'Ի հոտ անուշից: Ընկալ զայս խոստովանութիւն փոխանակ պատարագին՝ զոր խոստանայր Յովնան յաղօթսն, և մատոյց քեզ յետ ելանելոյ 'ի կիտէն:

---

Սէրատէն յաւելուած նրկէն հեծութեան՝ նորէն հոգւոյ առ նոյն ողբերգ մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ:

# ԲԱՆ. ՀԲ.

ա̃. Սա ահա ձեզ ասեմ ով եկեղեցիք միանձանց՝ և [1] աշակերտութիւնք կրօնաստանաց, որք մերկամարմին մատանցդ ձեռօք՝ առ ակնկալութի յուսոյն պարգևաց բարեացն անբաւից՝ ա̃ն զինուորեալք, որոց զայս սեղան հանդերձանաց խորտկաց բանից ընծայեցուցի, ընկալարո՛ւք զայս աւանդութի խոստովանութեան՝ 'ի շինուած փրկութե հոգւոց: Զանձնարո՛ւք սովիմբ զմարմնոյս պարտութի. յիշեցէ՛ք զմարգարէականն՝ ընդ առաքելականին առեալ մեզ 'ի խրատ, զի մի՛ պարծեսցի ամենայն մարմին առաջի ա̃յ, և զի՞նչ ոք է արդարն և ոչ մի: Զտէրունականն մի՛ մոռանայք, 'ի կատարածն իսկ պատուիրանին գոգջի՛ք զձեզ ծառայս անպիտանս. մի՛ եղիցի լինել ձեզ որպէս խաբողին. [2] զգուշացարո՛ւք և գրոյն, թէ կերակուրք նորա՝ ընտիրքն: Քանզի և ես իսկ, որ զայս նուազութի մասնաւոր պտղոյ ձեզ ջամբեցուցի, վկայեալ զանձնէ կամաւորական ստորտանք բիւր բամբասանաց՝ անբժշկական մեղանաց, [3] 'ի սկզբնահայրն սկսեալ մինչև 'ի սպառումն ծննդոց նորա՝ կամայականն յանձնառութե հաստեցի եդի զիս ամենայնիւ պարտական չարեաց:

բ̃. Լուայ [4] յումեմնէ ոչ պարտաւորէ, և ոչ հաղճեցայ, 'ի յասելն նորա անյարմարապէս առ այն, որոյ

առաջի ո՛չ է արդարանալ մարմնոյ երկրածնի, թէ ո՛չ երբէք շնացայ, ո՛չ պոռնկեցայ, և ո՛չ զաշխարհիս ինչ համբուրեցի ճաշակս մահու։ Այլ ո՛չ ընդհատ ինչ յանօրէնութենէ. թողցէ՛ նմա տէր ա՟ծ զայսոսիկ. թէև ճշմարտիւ իսկ գրեցաւ, ո՛չ ընթացաւ, որքան թէ գթեաց, 'ի յասել զանյարմարսըն 'ի դիմաց ժողովրդեանն խորայէլի բանիւ զաքարիայ, օրհնեալ տէր, և մեծացաք, որ է փարիսեցւոյն ձայնի կերպարան։ Բայց ես քանզի գիտողին ք՟ո մատնեալ եմ դատաստանի, որ զկիրս աներևութիցն մտաց 'ի կշիռս եդեալ՝ համարի դատել զիս նորօք ամենիրաւ հատուցմամբք, ո՛չ կերպարանեցայց տեսողին. ո՛չ կեղծաւորեցայց քննողին. ո՛չ ստեցից [5] զոչ գործեցեալսն նկատողին. ո՛չ խաբէութ՟բ ընդ միտ ինչ մտից մեծին. ո՛չ 'ի տեսիլ բարւոյ ցոփութե՟ն զչարս քողարկեցից. ո՛չ 'ի պատկեր ընտանի՝ զապիկարս երբէք յարդեցից. ո՛չ [6] խնեշեցայց 'ի զարդ օտարոտի. ո՛չ պճնեցայց այլով պայծառութ՟բ. ո՛չ պաճուճանս յարմարեցից տդեղութե՟ս դեղոյ։ Ո՛չ ոք մեղաւոր իբրև զիս. ո՛չ ոք անօրէն. ո՛չ ոք ամբարիշտ. ո՛չ ոք անիրաւ. ո՛չ ոք չարագործ. ո՛չ ոք վրիպեալ. ո՛չ ոք սխալեալ. ո՛չ ոք մոլեգնեալ. ո՛չ ոք խարդախեալ. ո՛չ ոք շաղախեալ. ո՛չ ոք դատապարտեալ. ես միայն եմ, և այլ ո՛չ ոք. [7] ես ամենայնն, և յիս ամենեցունն։ Ո՛չ հեթանոսք, զի ո՛չ գիտէին. ո՛չ հրեայք, քանզի կուրացան. ո՛չ տըգէտք և խառնիճաղանջք, քանզի յիմարք էին իմաստից։ Պետ վարժից կոչեցայ՝ յանձինս դատախազ. ռաբբի ռաբբի անուանեցայ, և զգովեստն առ ա՟ծ՝ եղծի. բարի ասացայ՝ առ եղկութե՟ն ժառանգութ՟ի. ս՟բ վկայեցայ 'ի մարդկանէ, որ եմ անմաքուր առաջի ք՟ո. արդար դաւանեցայ՝ ամենայն իրօք ամբարիշտս. հեշտացայ 'ի գովեստ մարդկան, զի ծաղր եղէց յատենին ք՟ո. յաւաղանէ կոչեցայ արթուն, և ես 'ի քուն մահու ննջեցի. 'ի փրկութե՟ն աւուր հսկօղ յորջորջեցայ, բայց զզգաստութե՟ն աչս կափուցի։ Ահա դատաստան. ահա յանդիմանութի. [8] ահա նոր կշտամբանք, և հին դատապարտութի. ահա ամօթ դիմաց, և տագնապ հոգւոյս. ահա [9] խնդիրք

փոքունց, և կշիռք մեծամեծաց։

Ք. ՏԷՐ դու միայն՝ տէր ած մարդասէր, անոխակալ և երկայնամիտ, համարեա՛ց մեղապարտս անձին՝ ընդ վերջին պարտաւորութե՛ աւուրն ահաւորի՝ զայս կսկծեցուցանող ինքնաբանական նախատինս։ Մի՛ լուայց 'ի քէն զայսոսիկ՝ գրթած, փոխանակ զի ես ինձէն անձինս գրեցի։ Արդ՝ բարձցես և 10 վերացուսցես զպարտաւորութե՛ կանոնիս՝ ընդ քեզ կապելոյս տենչանօք հոգւոյս։ Հա՛ն զնախատինս պատկառանաց խայտառակութե՛ս. ծածկեա՛ աջոյդ կարողութե՛ զտգեղ տեսակ մարմնոյս մերկութեան. մատո՛ հանգստեան 11 զթօթափեալս ուժգին մեղացս բեռամբք. կարգեա՛ ինձ սահման հետոյ բարութե՛ առ ելս կենացդ. պահեա՛ յիշատակ ինձ ողորմութե՛՝ և զկնի մահու՝ կեանք ամենեին, օրհնեալ յերկինս, և գովեալ յերկրի. բարեբանեալ միշտ յամենայնի՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) Աշակերտութե. : Աշակերտեալ անձինք կամ ժողովք միաբանակեցաց ։ Ուր Վերժամանդն նախանոց յետոյ, փոխանակ ասելոյ՝ մատամբք ձեռաց, այսինքն որք անդէն ձեռօք զինուորեալ էք Այ, ակնունելով անբաւ բարեաց յերկինս. որոց և զայս բանական սեղան իբրև 'ի զինուորին խորտկաց՝ ընծայեցի ըստ ձերում խնդրոյ ։ Ընկալարո՛ւք զայս իբրև աւանդ կամ տուր խոստովանութե 'ի շահ հոգւոց, և ոչ թէ 'ի գայթակղել կամ 'ի գարշել ։ Քանզի թէպէտ ըստ բազում մասին՝ դիւրական բանք են և յանդիմանութիւք՝ յայտնիչք անհամար թերութեց մարդկան, բայց խառն ընդ դեղոց առ ած յուսադրութե՝ լինին իբր խորտիկ համեմեալ առ այնոսիկ որք առողջ մտօք ճաշակիցեն ։

(2) Զգուշացարո՛ւք ի գրոյն : պահեցէք կամ յիշեցէք զբան գրոյն. ( Ամբակ. ա. 16 : ) զոր հին լուծ. սխալմամբ ընծայէ յորս ։

(3) 'Ի սկզբնահայրն սկսեալ։ Յադամայ նախահօրէ սկսեալ մինչև 'ի վերջին ծնունդ՝ զամենեցուն յանցանս և զվրիպմունս վկայեցի զանձնէս, իբրև ամենայնին պարտական ։ Մի՛ թուեսցի թէ զպատուղ սակաւ բանիցս ձեզ մատուցանելով, զձեզ պարտաւոր ցուցանել կամեցայ այսքան չարեաց. այլ մանաւանդ զանձն իմ միայն խոստովանիմ պարտական ։ Իսկ դուք հարցէք իւրաքանչիւր իւրում խղճի. բայց առանց խաբելոյ զանձինս ձեր, և մի՛ նմանիցէք միումն ենէ ։

(4) Յաւիտենից ուղղափառ : Զայս մարթ էր իմանալ 'ի վերայ հայրափարիսեցւոյն, թէ ոչ յաւելոյր զկնի Տր մարդասէր, Բողոքէ նմա Տր ած. զոր վասն փարիսեցւոյն ասել՝ ոչ յարմարի։ Ուստի իմանի զայլմէ ումեմնէ բարեկրօն անձնէ առ իւրով ժամանակաւ. յորմէ զայնպիսի պարծենողութե բանս լուեալ էր, և թերևս 'ի պատճառս աղօթական բանից սորա տասցեալ իցէ նորա զայնպիսի բանս. իբր ոչ համձելով ընդ ամենապարտ խոստովանութեանս սորա, և սուտ բանիւ ձևանալ կարծելով. որպէս թէ ասել, ես ոչ շնացայ, և ոչ պոռնկեցայ, և ոչ գողացայ, եւն.

և զնմին ասպատառ ած մատուցեալ խոստովանեցին այնպիսի մեղաց պար-տապան գոլ: Սակայն ոք վարդապետս լուծանէ զնիղձ նորա, և անի-րաւ ցուցանէ. զի խօսելն զայնպիսի բանս առաջի այ՝ ոչ է հեռի յամօ-թինութէ, յորժամ պարծանօք ոք ասիցէ. և զի խորհրդով սխալելն յայնպիսի յանցանս՝ ընդ գործով սխալելոյ պարտաւոր կացուցանէ. և ոչ կարէ ասել ոք, թէ ես և ոչ խորհրդով բնաւ յանցեայ յայսոսիկ. ապա յորժամ ամբաստանէ զանձնէ առաջի այ՝ ոչ խօսի սուտ: Վասն այսորիկ ըէ ե ճշմարտե-խոյ գրեշա. այսինքն թէ և ճշմարիտ իցէ նորա պարծանքն, սակայն ու ընթացա, 'ի գնացս առաքինութե յառաջելով, որքան ըէ գրեայ, ամբարտաւանութբն, որպէս թէ ասել զանյարմար բանն խրայելացւոց՝ զցրեալն 'ի զաքար. (ժա. 5.) օրհնեալ տր, և մե-ծացաք, այսինքն գոհութի տալով այ վասն կարծեցեալ կամ սուտ մե-ծութե առաքինութեց, որ և է նման ձայնի փարիսեցւոյն:

(5) Ջուս գործեսեալս: Ո՛չ առեցից այնմ՝ որ նաև զոչ գործեցեալսն տեսանէ. այսինքն կամ զորս արտաքին գործովն չեմ արարեալ, բայց խորհրդով հաճեալ եմ. և կամ թէպէտ այժմ չեմ գործեալ, բայց յետոյ գործելոց եմ: ըստ մեք ենւ մայց: ոչ խաբէութբ հաճոյացայց ա-ռաջի այ: Ու 'Ն պեւսիւ բարսոյ ջոփուռե՝ ուսոր. այսինքն ոչ ընդ կերպա-րանաւ բարի համարձակութե՝ զչար համարձակութիւնս ծածկեցից: Կամ, ոչ ընդ պատրուակաւ բարի քաղաքավարութե, բարեբարոյ և խոնարհ ընտանութե՝ ծածկեցից զչար քաղցրաբարութի, որպէս աւե-տաղամ 'ի ներքոյ քաղցր և ընտել բարեմարդութե առ խրայելեան ժո-ղովուրդն՝ թաքոյց զհայրանենգ ապստամբութին: (բ. թագաւ. ժե. 5. 6:) Ու 'Ն պադքէր, ոչ եբրև բնաւորական պատկերաւ կամ ձևով երևեալ, արդոյ ցուցից զոկարս, զողորմելիս, ըստ առակի եւյն՝ որ զան-ձամբ արկեալ զաւխածենին՝ եբր մորթ իւր բնական, աչարկու և հզօր ձևանայր:

(6) Ուխենեճեայս: կ օրէն. խենեճեայս: ոչ զարդարեցայց անպատկա-ռապէս օտար զարդուք առաքինութե. որպէս լինի՝ եթէ ոք 'ի գովելի գործոց ընկերացն և կամ նախնեացն՝ պարծանս յանձն ձգիցէ, ինքն ոչ գոլով այնպիսի: Յայսոսիկ բանս յառաջ անհու զառասպելն ձայնի կի ագռաւուն, որ պճնեալ զմարմինն օտարոտի փետրովք՝ առ 'ի թա-քուցանել զընաւորն տգեղութիւն:

(7) Եօ ամենայնն: այսինքն վերոգրեալ զանազան յանցաւորքն բովան-դակ ես եմ. և յեօ ամենեսեան. ամենայն մեղուցելոց յանցանքն և պա-ժապարտութի յիս գտանին: Իսկ թէ այս, և այլս անցեալ բանք՝ որ-պէս ճշմարտութբ ասին, տես 'ի կէ. լծ. 1: Քանզի յորժամ ճանա-չէ զանձն ունօղ միահամուռ յանցանացն՝ որ յայլ յանցաւորս կան ցրուեալք, հարկաւ զհետ գայ՝ զի ամենեցունցն լինիցի յանձին խո-րում:

(8) Ահանոր նշանքեալ, առեալ 'ի նշանակութէ անուանս. զի գրիգոր կոչեցայ 'ի մկրտութեն, որ թարգմանի՝ հսկօղ, արթուն. և սակայն գործովք թմրեալ և անզգայ եղէ, որով և անուանս լինի ինձ կշտամբիչ: և հին տոփագարփուեն, նոր կշտամբութի անուանս հաստատէ զառա-ջին դատապարտութիւնն՝ զոր արդէն յանձին կրեմ սակս այլ մեղացս:

(9) Խնդիրք ծոքեայ: Ահա և վասն անպատուութե անուանս լինի քննութի, հարցափորձ, որ փոքր կարծի քան զարհամարհութի այլոց պարգևաց Այ. և սակայն նշնաք մեծամեծայ. ընդ մեծամեծ յանցմունս կշռեալ է: Վասն զի անկարգութի մեծ է և ամօթալի խաբէութիւն, յորժամ գործք ոչ համեմատին անուանն. զոր օրինակ թէ ոք զանուն ունիցի մարդոյ բանականի, և գործ զանբանի. ուստի պատշաճապէս

տաէ՝ ամօք դիմաց ։ Աստուածայն ընդ սաստիկ կշտամբանս յառաջ բերէ և զայն թէ՝ հրէայ անուանեալ ես, և սակայն ոչ ըստ հրէայ վարիս (Հռովմ. Բ. 17.) և նոյն յանդիմանութի աստ (Յայտն. Գ. 9 ։ ) Եւ ուշ եդեալ տեսանեմք խակ յընթացս նախախնամութեն Այ, զի ըստ գործոց և ըստ պաշտաման կարգեալ առհմանէ խորհրդանշիւր զկոչումն անուանն, որպէս Աբրահամու, Յակոբայ, Պետրոսի, Յովհաննու մկրտչի, և այլոց. որպէս զի անուանն լիցէ նշանակ յայտնիչ գործոցն, և երբեմն ձայնաւոր պատկեր անձինն անուանելոյ ։

(10) Վերացուցես զպահ ։ բարձցես զխապ կամ զորդելանս անձնադատ բանից, զորս երբեմն կանոնական ապաշխարանս, կամ երբ բանադրանս եդի անձին իմում, թէպէտև ըստ փափագանաց հոգւոյս չեմ որոշեալ 'ի քէն, այլ կապեալ եմ ընդ քեզ ։

(11) Զբոպեալս ։ զհարուածեալս, կամ զձնշեալս ծանր բեռամբք մեղաց՝ մերձեցո 'ի հանգիստ, ըստ որում և հրաւիրեցեր զծանրաբեռնեալսն առ քեզ գիմել և գտանել հանգիստ ։

---

Սերոփէն յառեղուած երկէն հեծութ՝ նորէն հաջողէ, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

## ԲԱՆ. ԺԳ.

Ա. Թագաւոր բարձրեալ հզօր ահաւոր՝ օրհնեալդ միայն տէր յս քս, քո է փոխարկել[1] յանակնկալս կենաց յուսահատութե զստահակիս անէծս՝ առ կեցուցանող օրհնութիս. զպարսաւանս վհատութե՝ առ զուարթացուցիչ գովութի.[2] ընդ ամօթոյն՝ համարձակութի. ընդ պատկառանացն՝ պատիւ. ընդ տարագրութեն՝ յոյս բարուէ. ընդ բաժանմանն՝ ակնկալութի միուէ. ընդ սպառնականացն բանից՝ ողոքական սփոփանս. ընդ միանգամ դատապարտութեն՝[3] կրկին ազատութի ։

Բ. Ողորմեա տէր՝ մահու մեղապարտիս յաւուր արձակման շնչոյս կենդանութե, մինչ աչացս ողորմագին հայեցուածս 'ի բարձունս կողկողիցի,[4] զբազմարկածեան ուղղոյն զանգերծ ընթացիցն զանփախչելին ձանապարհ յաչս բերելով մտացս տեսմամբ ամենայնիւ վտանկեալ. և 'ի յերդ բնակութե յարկիս նկատեալ յելիցն շաւիղ, թշուառացեալ կիսամեռութբ, դիմօք այլայլութեան, տատանմամբ մատանցս, կարկամ հառաչմամբ, նուաղ հեծութբ՝ նրբական ձայնիւ, յոգի թախծութե յօքնամանեայ

տարակուսանաց՝ 'ի խորոցս աներևութից զգործեցե-
լոցս ողբալով հառաչեմ։ Կարօղ ես բա՛րեգութ՝ [5] և
անդ հրաշագործել յաւէտ զօրեղութբ ասելով, թէ
ո՛ղջ եղիջիր յօգուտ խորտակմանէ. և կամ թո-
ղեալ լիցին քեզ մեղանք քո. կամ թէ երթ 'ի խա-
ղաղութի սրբեալ 'ի մեղաց։ Եւ զոր յայնմ ժամու
ո՛չ ժամանեցից պաղատել, այսօր ընկալցիս մարդա-
սիրապէս, ո՛վ երկայնամիտ բազմաշնորհ ամենակե-
ցոյց։ Յորժամ՝ որ այժմս [6] բանապաճոյճ խրոխտա-
ձայն սիգացող բարձրապարանոց՝ անկեալ դնիմ դի
անկենդան. կարկեալ 'ի խօսից. կաշկանդեալ ձե-
ռօք. լքեալ անդամօք. խփեալ շրթամբք. կափու-
ցեալ աչօք։ Տախտակ անշարժուն. կոճղ կիսայ-
րեաց. արձան անզգայ. պատկեր անբարբառ. գոյու-
թիւն անշունչ. ողորմելի տեսիլ. աշխարելի կերպա-
րան. ողբալի օրինակ. եղկելի դէմք. արտասուելի
նմանութի. լռեցեալ լեզու. ցամաքեալ խոտ. թօ-
թափեալ ծաղիկ. ծորեալ գեղ. շիջեալ ղամբար.
դատարկ կոկորդ. խոպանացեալ սիրտ. [7] աղխեալ
աղդարան. սպառեալ աղբիւր. թալկացեալ մար-
մին. ժողխեալ որովայն. քակտեալ տաղաւար. կո-
տորեալ ոստք. բաժանեալ յօդք. հատեալ ծառ.
սղոցեալ արմատ. թողեալ տուն. հնձեալ արտ. [8]
ստորախուզեալ բոյս. օտարացեալ բարեկամ. մո-
ռացեալ պահեստ. թաղեալ գարշութի. մերժեալ
ատելի. բարձեալ խէթ. անարգեալ կմախք, և իբր
զանպիտան առ ոտն կոխեալ։ Կարօտեալ այլոց
մաղթանաց, որք զհաւատոց թշուառիս՝ ձայնիւ
նուագեալ աղերս հառաչման, ցօղով արտասուաց՝
բարերարիդ գթութեան 'ի բարձունս տարածանեն։
Առ քեզ [9] դարձն յեղանակեն յարգահատելով,
զոր օրհնեմ. զնշան խաչիդ փրկութե, զոր երկրպա-
գեմ. զյարութեն ճշմարտութի, որում հաւատամ.
զփառացդ քո յայտնութի, զոր փառաւորեմ. զդա-
տաստանիդ ահաւորութի, զոր խոստովանիմ. զբա-
նիցդ յանդիմանութիւն, յորմէ զարհուրիմ. զհո-
գւոյդ սբյ ինձ ուղեկցութի, զոր պաշտեմ. [10] զօծմանդ
տեառնագրութի, զոր և համբուրեմ. զթագաւո-
րելն ընդ քեզ՝ տէր յս, որում պաղատիմ։ Արդ [11]

լքաւ՝ մերժեցաւ՝ բարձաւ՝ տրոհեցաւ՝ փախեաւ՝ սրացաւ՝ տեղի ետ կցորդութիւն զուգութեան կենցաղոյս կենդանութեան. և [12] յուսոյդ որ 'ի քէն պարգև՝ մնացական և անջնջական յիշատակարան պահեցաւ։

Դ. Տես ողորմութեամբ 'ի տարակուսանս վտանգելոյս՝ միայն բարեգութ [13] փառաւորեալ որդի Աստուծոյ, քաւել՝ բժշկել՝ կենագործել՝ պաշտպանել՝ նորոգել՝ նկարել՝ կանգնել՝ հաստատել՝ վերստին ստեղծագործել յերջանիկն անարատութիւն. քո՛ է կարողութիւն, քո՛ է փրկութիւն, քո՛ ողորմութիւն. չիք քո անկարութիւն, այլ ամենևին զօրութիւն, բարձրութիւն, իշխանութիւն, անվախճան թագաւորութիւն, իսկութիւն, ինքնութիւն, [14] ամենատեղի բացարձակութիւն, բարերարութիւն, լուսաւորութիւն. փառաւորեալ տիրապէս, անպակաս և անյաւելուած, [15] խնկեալ խորհրդով անթարգմանելեաւ յերրորդութեանդ սրբում, գոհաբանեալ յաւէտ և ես առ սմին 'ի նոյն պաշտօն հաւասարութեան միապատիւ զուգականութեան, երէկ և այսօր՝ և յաւիտենից յաւիտեանս. ամէն։

---

(1) Յանակնկալ կենաց յուսահատութէ։ 'Ի յուսահատութեանս՝ որ անակնկալ է կենաց, փոխարկել զանէծսն յօրհնութիւն։

(2) Ընդ ամօթոյն։ Փոխանակ ամօթոյն՝ շնորհել համարձակութիւն. ընդ այսմ և յաջորդքն։ ընդ բաժանմանն, փոխանակ բաժանման 'ի քէն՝ շնորհել յոյս միութեան, միանալոյ ընդ քեզ սիրով և փառօք։

(3) Կրկին աղտեղութէ։ փոխանակ միանգամ դատապարտութեանն 'ի մահ՝ շնորհել կրկին ազատութիւն 'ի մեղաց և 'ի մահուանէ՝ յարութեամբ։

(4) Զբազմարկածեան ուղւոյն։ Ուղւոյն կամ ճանապարհի մահուն՝ յորում կան բազում արկածք և վտանգք։ Զայնր անփախչելի ճանապարհին զգնացն յուշ բերելով մտօքս, և 'ի պատուհան յարկի բնակարանիս՝ որ է շաւիղ կամ տեղի ելանելոյ արտաքս, հայելով ողորմելի կեսամեռութեամբ, ևն։

(5) Եւ անդ հրաշագործել։ յայնժամ ևս կարող ես հրաշագործել զառողջութիւն հոգւոյս, ևն։

(6) Բանապարծոյս։ որ այժմ բանիւք ճոխանամ, խրոխտալոյս, իշխանաբար սաստեմ կամ սպառնամ. ոխգայօղ. 'ի քայլելն ամբարտաւան անձամբ գնամ, յետոյ 'ի մահուանս անկեալ դնիմ դի անկենդան, ևն։

(7) Աղխեալ աղտարոյն։ Իբրև աղխիւք կամ փականօք արգելեալ գործի աղթելոյ՝ բերանն կամ լեզուն։ Հին լծ. խմանայ զաչս և զականջս։ Ծաղխեալ որոճոյն. հարեալ կամ լուծեալ 'ի գարշ հեղձս ոտնայնն։

(8) Սպառախողխեալ բոյս։ Յարմատոյն խուզեալ կամ կտրեալ բոյս։ Նորաբեալ դահեկ. մարմինն՝ որ 'ի պահ դնի 'ի գերեզմանի, լինի որդնահոր և ապականի իբրև զմոռացեալ պահեստ։ Բարձեալ խեղ. իբրև

զխոչընդական աչաց կամ ոտից բուժեալ լինի մարմինն ։ Նմանք ․ ցամաքեալ ոսկերոտին ։

(9) Դուրն յեղանակէն ։ Զգաստանալն առ քեզ զղջմամբ յիշեցուցանեն և ստէպ յառաջ բերեն ։ Զայս, և զյաջորդ բանսն առնու յաղօթից քահանայութեանն ։

(10) Զօծման փնագրութիւն ։ Իմանայ զօծմանէն, որ լինի 'ի մարմին ննջեցեալ քահանային ․ զոր և յաղօթս քահանայութեանն յիշէն ։ Այս օծումն ակնարկի և բացատրի 'ի Դիոնեսիոսեան գիրսն յաղագս եկեղեցական քահանայապետ ․ գլ ․ է ․ մասն ․ է ․ իբրև հասարակաբար նաև յաշխարհական ննջեցելոյն 'ի կիր արկեալ ․ և այսպիսի սովորութեան վկայեն յիշատակք առաջնոց, որպէս 'ի մաշտոցս հին յունաց երևի ․ և մինչև 'ի ԺԷ ․ դարն պահիւր յեկեղեցին աղեքսանդրիոյ սովորութիւնն մեռոնելոյ զմարմին ննջեցեալ քահանային, որպէս վկայէ պաղլադին յոյն ։

(11) Լուսոյ զրկեցայ ։ Թէպէտև մահուամբ թողաւ, բարձաւ, փախեաւ, հրաժարեցաւ հաղորդութեն կենաց աշխարհի, բայց յուսոյդ փրկութեն և յարութեն պարգևն՝ մնայ ինձ անջնջելի յիշատակ ։

(12) Յուսոյդ որ 'ի քէն պարգև ։ 2 օրհն ․ յոյսդ 'ի քէն պարգև ․ այսինքն յոյսդ որ է քո պարգև՝ մնաց ինձ յիշատակարան ։

(13) Փառաւորեալ որդի ։ 3 օրհն ․ քառաբանեալ ։

(14) Ամենատեղի ընդարձակութի ։ ընդարձակութեն որ ընդ ամ տեղի ․ ուստի դիւրաւ կարող ես համահաւաքել զցրուեալ մարմինս մեր և լցեն, և նորոգել զնոսա յանարատութեն փառաց ։

(15) Խնկեալ խորհրդով ։ օրհնեալ 'ի յաւիտենից անճառելի խորհրդով 'ի մջ երրորդութեդ, այլ և գոհաբանեալ միշտ միանգամայն 'ի ժամանակի՝ նովին հաւասար պաշտամամբ համապատիւ միութեն, ևն ։

---

Մերային յաւելուած հրհէն հեծութէ՝ նորին հսկողէ, առ նոյն աղերս Տաղբանայ բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

# ԲԱՆ ․ ՀԴ ․

ա ․ Արքայ երկնաւոր, տէր բոլորեցուն, [1] առ ամենայն բան՝ յամի միշտ երկայնամիտ, այ կենդանւոյ անքնին որդի ։ Նա [2] անդ է ողորմելն իսկապէս, յորում հատաւ ակնկալութի վաստակոյն ․ անդ է բարեգործելն, յորում [3] տեսութի իմաստիցն խափանեցաւ ․ յայնժամ ժամու է մարդասիրելն, յորում տկարութենն վտանգ պաշարեալ տիրեաց ներքոյ և արտաքոյ ։ Անդանօր է բժշկութի ածային քոյ ձեռինդ, յորժամ [4] բնաւ անդամոցն տեղի ետ կենդանութեն ․ այն վայր է այցելութեն, յորում ելք հնարից ոչ գոյ ։ Այն է քո մեծութի, յորժամ զյուսահատութեն վէրն [5] ողջացուցանես ․ այն է հարա-

զատ [6] քումդ ազգակցութեն, եթէ յանակնկալն ժա-
մու արուեստաւորեսցես փրկութի ։ Ա՛յն է հանդի-
սարան քում յաղթանակի, եթէ զփակեալն մուտս
կենաց 'ի սպառումն չնչոյս՝ բացցես. ա՛յն են քո շը-
նորհք վայելչականք, եթէ զչարեացս իմոց մոռա-
ցեալ՝ զբարեացդ քո յիշեսցես. Յայսմ ես անոխա-
կալ, եթէ ապախտաւորիս՝ ընդ երախտաւորացն
խնամարկեսցես. [7] 'ի նոսին ծանեալ գիտացից, եթէ
նայեցար 'ի նուէր բանիս՝ նախնի գթութեդ, եթէ
զսովորութի չարեացս բարձցես ։

Ե. Յաղագս այսորիկ [8] հիւսին բանք, և եղանակին
նուագերգութիք, յորժամ տէրն բարի՝ չարն ծա-
ռայի՝ զբարեգործացն պարգևեսցէ. որ մինչ իրա-
ւամբք մնացէ բանտի, նա յարքայական ապարանս
զնա հանգուցէ. մինչ հրաւիրեալ է 'ի գուբ տղմոյ,
նա [9] 'ի բազմականս ամենապատիկս գահուց գրգե-
ցուցանիցէ. մինչ [10] բրելոյ զաչսն գիտեսցէ, նա 'ի
բարձրութի բերկրութե հայեցուցանիցէ. մինչ ծայ-
րատութե մատանցն սպասէ, նա մատանի համարձա-
կութե մատուցանիցէ. մինչ հայի հարուածոց գա-
նից, նա գթոց գիրկս արկանիցէ. մինչ պատրաս-
տեալ յուսայ կորստեան, նա երևելի տեսողաց բազ-
մաց առնիցէ. մինչ ակն ունի սատակման մահու,
նա ընդ կենացն և փառս ընծայեցուսցէ. մինչ հատ-
ման գլխոյն նայեսցի, նա զնոյն պսակաւ պայծառա-
ցուցանիցէ ։ Ա՛յս պտուղք օրհնութե՝ գրթած, սքան-
չելարմատ քում շառաւիղաց. ա՛յս արգասիք կենաց՝
արարչականդ քո հրամանաց. ա՛յս իղձք խորհրդոց՝ [11]
խոստովանեալդ քո տենչանաց. ա՛յս նշոյլք լուսոյ՝
ամենասփիւռ ճառագայթից. ա՛յս ախորժութի ճաշա-
կաց՝ բարեբանեալդ քո քաղցրութե ։

Զ. Բա՛ց միայնոյ են այսոքիկ տէր. 'ի քէն [12] ազդե-
ցաւ գրել ինձ զսոսին. ահա զքոյդ յատուկ աղերս
աղաչեմ՝ օրհնեալ, 'ի քոյոց այտի պարգևեալ շնոր-
հեա. բայց տէր զգանձս քո բարիս, ըստ աղերսանաց
առակին ։ Մի՛ խառնեսցես [13] 'ի համբարս բարեացդ
քոց՝ 'ի չարեացն իմոց. մի՛ շտեմարանեսցես զատե-
լիսն քո՝ որ են ոխութիք և ցասմունք, ընդ սիրե-
լիսն քո՝ որ են գթութիք և ողորմութիք. մի՛ պա-

հեսցես 'ի ստացուածս քո պաշտելիս՝ զանախորժե-
լիսն քո՝ որ են մթութիք և դաժանութիք, և զիմ
փափաքելիքն՝ որ են մեղք և թշուառութիք ։ Մ՛ի դրես-
ցես աջովդ օրհնութե [14] 'ի մատենիդ կենաց՝ զմուր-
հակ պարտուց իմոց անիծից . այլ [15] զանհնարա-
ւորսն ինձ համարեալս՝ մեծացուցես կրկին առա-
ւել զանուն քո տէր՝ 'ի նոսին, ցուցանել զդոյն ինձ
դիւրինս և հեշտականագոյնս ։ Շատ են իմ պար-
տիքս և անդր քան զթիւ . այլ [16] ո՞չ այնքան հրաշա-
լիք իբրև զքո ողորմութիդ . բազում են մեղանքս,
այլ յաւէտ են նուաղեալ առաջի քոյդ ներողութե .
յաճախ են չարութիքս, այլ յաղթական են համայ-
նից՝ հզօր ամենակալ՝ քոյդ մարդասիրութի . ինձ են
անհամար՝ իմոյս անձին բիծք, այլ քեզ՝ յոյժ դրա-
ւեալ են ընդ սահմանաւ ։ Ո՛չ են այնքան զօրաւորք
առ կենդանութի [17] զէնք մեղանաց պատկառեցե-
լոյս պտղաբերութե, որքան յիշատակ մահու կեն-
դանւոյդ՝ առ վանումն կործանողին բնութեան ։
Ո՜ ինչ ազդեսցէ [18] փոքր խաւար՝ աւուրդ ոյ . զիա՞րդ
բաւեսցէ դոյզն ինչ աղջամուղջ՝ մեծիդ ճառագայ-
թից . զիա՞րդ համբարձցի կշռեսցի ընդ խաչի քո
կրից՝ [19] խակութի հեշտութե մարմնոյս տկարութե ։
Ո՜ ինչ երևեսցի յաչս ամենակալիդ քոյ առատու-
թե կոյտք մեղանաց ամենայն տիեզերաց . ահա [20]
կոշտ մի հողոյ դիւրափխրելի՝ 'ի կարծրութե բախ-
ման վանեցեալ, իբր զպղպջակ անձրևոյ բազմազեղ
հոսմամբ քո կամացդ՝ չքացեալ պայթեալ անդստին ։
Ո՜ ինչ պիտոյ են քում զօրութեանդ ամենահնարդ
կարողութե ժամանակաց առաւելութի՝ առ յանցուա-
ծոց իմոց քաւութի ։ [21] Ո՛չ քթթել միական, ո՛չ
խուն մի տեսութի ածանցական, ո՛չ սակաւ մի նայե-
ցուած փայլական, ո՛չ կիսամասնեայ յամրութի, ո՛չ
փութացելոց ոտից յեղեղումն, ո՛չ յելից բարձրու-
թե միոյ կանգնոյ կաթի անկելոյ, ո՛չ գիծ մի չափոյ՝
մտաց հետևեցելոյ, ո՛չ նշուղից արագութի, ո՛չ հնչոյ
տուրևառութի, ոչինչ յայսմ յանգոյ և յանտպա-
ւորական նմանութե անձև օրինակաց յաւէտ ան-
կայից՝ այնքան առժամայնք կամ հարևանցիկք, որ-
քան եղծմունք, ջնջմունք և հալմունք մեղացս սառ-

նամանեաց պահեստի՝ քումդ զօրութե՛ ա՛ծ ամե-
նայնի տէր յ՛ս ք՛ս, որդի՛ անքնին կենդանւոյդ ա՛յ ։
Որ տաս պարգեւս արեւ քաղցրութե՛ չարաց ընդ-
բարիս. և անձրևես երկաքանչիւրոցն անաչառա-
պէս ։ Կշռես սահմանես իրաւամբք՝ և [22] զվտանգս
կրիցն հաւասարաբար. որոց մեծ է հանդիստն առ-
ակնկալութի պարգևին, փոքր խթանաւ փորձութե՛
զսակաւութի պարտուցն աստէն վճարես. իսկ որ
զերկիր ընտրեցին, ներես ողորմութե՛, տալով և սո-
ցա դարման ընդ նոցա՝ միշտ առ քեզ դարձին սպա-
սես ։ Եւ քեզ փառք ամենազօրիդ՝ առ ամենայն
հրաշագործութի բարեխնամող երկայնմտութե՛, օրհ-
նեալ յաւիտեանս. ամէն ։

---

(1) Առ ամենայն բան ։ Առաւել քան զա՛մ բան և զմիտս՝ երկայնամիտ ես յամենայնի ։ Կամ, առ ամենայն բան, այսինքն թէ 'ի խոստանալ բարիս, թէ 'ի կատարել զնոյնս, թէ 'ի փրկել 'ի փորձութեց, թէ 'ի լսել աղօթից մերոց, թէ 'ի պատուհասել, միշտ երկայնմտութ՟ վարիս ։ Զայն միտս թուի ընդարձակել 'ի յաջորդ բանսն, յորս ասէ՝ ողորմիս յորժամ չեք ակնկալութի. մարդասիրես՝ յորժամ ներքոյ և արտաքոյ պաշարեն վտանգք. բժշկես՝ յորժամ յամենայն անդամոց պակասի առողջութի, ևն ։

(2) Անդ է ողորմիս ։ յայնմ, կամ յայնժամ կատարի տիրապէս ողորմութիւն, յորժամ չեք ակնկալութի վաստակոց բարի գործոց ։

(3) Տեսանես խնամօքն ։ Յորժամ ճարտարութի կամ հնարք մնաց խափանեցաւ, յորժամ խորհուրդ մնաց մթագնեցաւ, և ոչ կարէ ընտրել զուղիղն և զպատշաճն, յայնժամ երևի քո բարերարելդ՝ յառաջնորդել, 'ի լուսաւորել ։

(4) Բնաս անդամոցն ։ յորժամ կենդանութի կամ առողջութի ամենայն անդամոցն բարձաւ, կամ հեռացաւ ։

(5) Ողջացուցանես ։ 2 օրին . առողջացուցանես ։ մի օր . ողջացուցես ։

(6) Քումդ ողջախոհութեդ ։ այն է սովորական քո ընտանի բնութեդ, կամ զօրութեդ ։

(7) 'Ի սոյն ծանեաւ ։ Յայտնիկ ծանուցեալ գիտացից զհաճելին քո յըն-ծայ աղօթիցս ըստ առաջին գթութեանդ, եթէ զչար սովորութիւս իմ բարձցես ։

(8) Հիւսին բանք ։ Յօրինելն բանք գովեստից, և եղանակին ձայնք օրհնութեց, յորժամ բարի Տրն պարգևեսցէ չար ծառայիս զայն բարիս՝ որ բարեգործացն վայել են ։ 'Ի շնորհել տանուտեառն զպարտս բիւր քանքարոց ծառայիս, որչափ օրհնութիւնք արդեօք հնչեսցին 'ի ծառայակցաց նորա ։

(9) 'Ի բազմախուռն ամենազարդիս, այսինքն ամենայն իրօք զարդարեալս ։ Թահուոյ գեղեցկացուցանիցէ ։ մի օրին . Դահեց գեղեցկացուցանիցէ ։ այլ օր . Դահոյեց գեղեցկացուցանէ ։

(10) Բերելոյ զալուն տիրանոյէ ։ այսինքն սպասեսցէ, մնասցէ ։ ըստ այսմ և 'ի յաջորդումն՝ հայել, յուսալ, խմանելն՝ սպասել, մնալ, կասկածել ։

(11) Խոստովանեալ քո ։ Այս են իղձք սրտից մերոց՝ ազդեալք 'ի ծա-

նուցեալ կամ յօրհնաբանելն փափաքանաց քոց, որովք չկամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալն և զկեալն, ևն:

(12) Աւետիս գրել ինձ: Դու քոյով վարդապետութեամբ և սքանչելի գործովք, այլ և ներքին լուսով մտաց և յուսադրութե կամաց շարժեցեր զիս գրել զայսոսիկ: Ահա պտուղ յաւուրն աւետիս. այսինքն վասն որոյ զքո ուսուցեալ և սովորեալ աղաչանս՝ 'ի քոց շնորհաց դու կատարեա. կամ, զքո յատուկ աղերս՝ որով տես առ մեզ, դարձարուք առ իս, և այլն, դու զնոյնն շնորհեա դառնալով առ մեզ. կամ, աւետիս, մարթ է առնուլ ընդդէմ, այսպէս. խնդրեմ թէ զքո սեպհական և վայելչական պարգևս ներողութե, անխափանութե շնորհեա: Եւ բաց պտղոյ ողորմութեանց քոց, ըստ աւետարանաց առաքելոց: Հայի 'ի բանն առակաց. (Է. 21.) * Բաշխեսցես սիրելեաց իմոց զմեծութե, և զգանձս նոցա լցուցից բարութե:||

(13) 'Ի համբարս բարեաց: Այս, և յաջորդ բանքն ոչ իմանին 'ի ներքս յամծ, այլ 'ի գործս իւր՝ զոր 'ի մեզ երևեցուցանէ. որպէս թէ ասել. 'ի գործս շնորհաց և ողորմութե քո մի խառնեսցես զպատուհաս, որք արժանի են չարեացն իմոց: Մի ցուցցես զգործս ոխութե և ցասման՝ որք քեզ ատելիք են, ընդ գործս գթութեան, որ քեզ սիրելի են. 'ի պաշտելի արարուածս քո՝ մի դասցին ատելիքն քո՝ մեղք, գործք ողորմութե. և դժնդակք, գործք խստութե, և միանգամայն ի մ չարեաց, մնասակարքն՝ մեղք և թշուառութիւք:

(14) 'Ի մաքենիս կենաց: Ըստ սովորութեան գրոց՝ այլևայլ ասին մատեանք կամ դպրութիւք, յորս գրին արդարք և մեղաւորք ըստ խրաքանչիւր գործոց. որպէս 'ի յայտնութե. Ի. 12. * Եւ գրեանք բանային. և այլ գիրք բացաւ կենաց:|| Այլ քանզի այն մատեանք իրօք ոչ այլ ինչ են՝ քան թէ մի և նոյն անվրէպ գիտութի ածային մտաց՝ յորոշումն արդարոց և մեղաւորաց, նմին իրի աստանօր ասէ՝ մի վարդապետս, թէ մի գրեսցես 'ի մատենիդ կենաց զվճիռ պարտուց իմոց. այսինքն յածային միտսդ՝ որ է մատեան կենաց, մի գրեսցի վճիռ դատապարտութես:

(15) Զանհնարաւորն ինձ: Աստանօր կարգ շարադրութեն այլափոխ է, և պարզն այսպէս. այլ զանհնարին ինձ համարեալս զօրացուցանել բերեր և հեշտացուցանել. որովքս դժուարացեալ էին առ ուժ է՞ր 'ի նոյն, այսինքն 'ի նոյն անհնարինս: և էին ասէ, այսինքն իբր բարեկար յողորմելն, և իբր ամենազօր 'ի դիւրել զանհնարինս:

(16) Ո՛ւրախութեան հրաշալիք: Թէ և անթիւ են պարտիք մեղացս, այլ ոչ այնչափ զարմանալի՝ հայելով յապականութի բնութես, 'ի տկարութին, 'ի ազխոութին, 'ի զանազան փորձութիս սատանայի, և 'ի պատճառս մեղաց: Բայց քո անկարօտ բնութեդ ողորմելն և ներելն ապերախտից և թշնամեաց՝ 'ի վեր է քան զամենայն զարմանս:

(17) Զենք մեղանաց: Զէնք կամ զօրութիւնք մեղացն՝ զորս ես ամաչեցեալս պատմեցի, ոչ են այնքան կարօղք առ 'ի կենդանանալ վէրաւորն և ուրել լինձ, որչափ յիշատակ մահու քո կարօղ է վանել զդժնութի սատանայի և զմեղս: Հայի յասացեալսն Հռովմ. Ը. 12. 13. 14. Մի պատուհասն թագաւորեսցեն մեղք, ևն:

(18) Փոքր խաւար: Գործ մեղացս՝ որ առ քո զօրութիդ համեմատեալ, են իբր փոքր մթութի և խաւար առ լոյս, զի՞նչ կարեն ազդել: կամ, փոքր խաւար մեղացս՝ զի՞նչ իցէ առ ածային լոյսդ:

(19) Խափանէ հեշտութե: Խակ կամ անհամական հեշտութի տկար մարմնոյս՝ զկամս դ հաւատարեացի ընդ չարչարանաց խաչիդ:

(20) Կորուստ հոգւոյ: Հաւաքումն մեղաց ամենայն աշխարհի զի՞նչ երևեա

ցի առաջի ամենակալ տէառնութեդ, բայց եթէ կոչէ մի հողոյ՝ որ դիւրաւ փշրի ՚Ի ԽՈՐՏԱԿՈՒԹԵՆԷ ԲԱԽՄԱՆ, փոխանակ ասելոյ՝ ՚ի բախմանէ կամ ՚ի հարմանէ կարծր նիւթոյ ։ Եւ եթէ պղպջակ անձրեւոյ՝ որ պայթեալ անյայտ լինի ՚ի զեղմանէ կաթից քոց ։

(21) Ո՛Չ ՔԲԲԵԼԻ ։ Ո՛չ թարթել մի աչաց. ո՛չ փոքր տեւութեն ՕԾԱՆՑԱՆ, արագ անցանօղ. ո՛չ սակաւ ՆՈՅՆԵՑՈՒԱԾ, տեսիլ կամ երեւումն փայլական որ լինի յամպոց ։ ո՛չ ԿՇՌԱՄԱՆԵԱՅ ՅԱՄՐՈՒԹԷ, սակաւ կամ փոքր մի յամեցումն, դեգերանք. ո՛չ արագաշարժ ոտից ՅԵՂԵՂՈՒՄՆ, փոփոխումն. ո՛չ ՚ի ծայրէ կանգնաչափ բարձրութե ԿՇՌՈՅ ԱՆԿԵԼՈՅ, այսինքն ժամանումն յերկիր կաթի անկելոյ. յայլ տպագիրս եդեալ էր, ԿՇՌՈՅ ԱՆԿԱՆԵԼՈՅ, որ չէ յարմար. վասն որոյ ուղղեցաք ըստ մեր օրինակաց ։ Ո՛Չ ԳԻԾ Մ. ո՛չ գիծ մի չափու կամ ձեւոյ՝ երեւակայութ կամ մօտ ըմբռնեցելոյ՝ որ յոյժ արագ կատարի ։ Ո՛չ արագ ծագումն եւ ծաւալումն նշուլից լուսոյ. ո՛չ անդադար տուրեւառուն շնչոյ ։ ՈՒՆԻՆ ՅՈՅԺ ԱՆՓՈՅ. եւ ո՛չ մի յաւացեալ անհաստատ եւ անյարմար օրինակաց ՅԱՒԷՏ ԱՆԿԱՅԻՑ, յոյժ անկայուն եւ անտեւական եղելոց, ԱՅՆՔԱՆ ԱՌԺԱՄԵԱՅՔ, սակաւժամանակեայք են եւ դիւրանցիկք, որքան եղծմունք եւ ջնջումն դանձելոց մեղաց ։

(22) ԶԿՇՌԱՆԳՍ ԿՇՌՈՅՆ ։ Որպէս զկայելումն բարեաց աշխարհի անաչառապէս պարգեւես չարացն ընդ բարեաց, նոյնպէս զփորձանս ներումեց խրատամբք կշռես հաւասարապէս արդարոց եւ մեղաւորաց, տայս՝ զի արժանիք են. իսկ արդարոց՝ զի նոցա ակնկալութի հանդստեան պահի յերկինս. եւ ասա փոքր վշտօք զսակաւ պարտս մեղացն վճարեալ մաքրես. բայց երկրաւորացն ներես՝ տալով զդարման կենաց ընդ արդարոցն. զի միշտ դարձի նոցա սպասես ։ Կա՛մ, տաս եւ մեղաւորաց զկշռումն եթէ դարման ապաշխարութե, սպասելով դարձի նոցա ։ Եւ վասն այսր ամենայնի ՔԵՂ ՔԱՌՍ ԱՄԵՆԱՅՐԻՏ, քեզ միայն վայել են փառք՝ որ ամենակարող ես ՚ի հրաշագործել զամենայն երկայնմտութի առ յանցաւորս եւ անարժանս. տես եւ ՚ի բանն ձէ. ըծ. 14 ։

[1] ՍԷՐՈՒԹԷՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ՆԵՐՀԷՆ ՀԵԾՈՒԷ՝ ՆՈՐԷՆ ՀՈՆՈՂԷ, ԱՌ ՆՈՅՆ ԱՂԷՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ ։
՚Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ՝ ԸՆԴ ՔՅ ։

## ԳԼՈՒԽ ԺԲ ։

Ա. Եւ արդ՝ ընկղմեալ զմայլեալ եւ խպառ ծածկեալ ՚ի յանձառութէ առաւելութեան բազմամամնեայ յաձախութե մեծիդ երախտեաց, որ ամէնառատ լրմամբ աննուազելեաւ՝ յաջմէ եւ յահեկէ՝[2] ՚ի դիմաց եւ ՚ի թիկանց համբարեալ կան անբաւութիք ։

Պարզեալ առ նմին [3] նրբնապատէն երկրորդութե՛ ծծայլին հոգւոյն աղերսեալ, որ էին յառաջաբերելոցն սահմանեցաւ աւանդութե՛ առ ամենայն լուսաւորութե եկեղեցւոյ դատանութե՛ մեկնաղէս եղեալ ապաւանօր: Եւ որ առ անշնչականս նմանեղէն՝ ցուցանէ երանաւոր նկարագրութե անձառելւ:

Բ. Մատուցանեմ ընծայեմ դարձեալ աստանօր աւանդ [4] գովեստի դաւանման Ճշմարտականի: Զի որպէս երբեմն [5] հերձուածականին չարափառութե՛ ամենապատիրն խաբէութե՛ նենգողին կարթիւն հատուածեալ 'ի բաց հերքեցայ՝ ելեալ 'ի դրախտէն, արդ միաւորականաւս այսու ուղիղ ամբծութե՛ 'ի յաւանդ խնկապէս շնորհի՝ անդրէն միւսանգամ համբարձեալ սովիմբ՝ 'ի Թռիչս Թևոց լուսոյ, ահա յերկինս ժամանեցից հետևեալ:

Գ. Արդ [6] քանզի յարգանդէն՝ յորում յղացայ հոգևոր երկամբք ծնիցեալ, զմեծ և զերջանիկ դշխոյ անարատ՝ [7] ամենից կուսից խնկուհի՝ զպանծալի մայրն իմ գովելի պարտ է կանոնաւ սահմանի բանի արձանագրել յայսմ մատենի. զի ծանիցի ցուցցի՝ և այլոց ևս ապագայիցն ազգաց պատմեսցի որքանութի փառաց խնկելոյն, [8] արժանաւորապէս պաշտամամբ պատուեալ՝ իբր մաքուր մարմին [9] ընդ գլխոյ մարդեղութեան բանին այ, 'ի յիշատակ Ճառիս հաւատոյ՝ երրորդութենն դաւանութե: Եւ արդ՝ [10] 'ի յայս օրինակ հոգենկար պատկերի բանի, որ զխորանէս լուսոյ յարմարի, ընկա՛լ զիս՝ գթա՛ծ օրհնեալ, քաւեցեալ և սրբեալ 'ի սմին: Հա՛ն սովաւ 'ի հոգւոյս զնախատինս մեղաց. անմեղս և անբիծս ընդ հովանեաւ սորին բազմեցո. [11] յաւե՛լ զտկարս 'ի տունն դաւթի, և անտուստ փոխեալ 'ի տունդ այ, ըստ մարգարէին ձայնի՝ որ 'ի քեզ՝ յո ակնարկի: Մի՛ [12] սոսկ զմտիցն, և մի՛ անօգուտ զելիցն հետևութի արասցես. մի՛ զհաւատոյս ջերմութի՝ ցուրտ համարեսցիս, և մի՛ զհամբոյր ողջունիս՝ անկարգ ինչ վարկանիցիս. մի՛ զպաշտօնն՝ ապաշնորհ գրեսցես, և մի՛ զերկրպագութիւն՝ անխորհուրդ լքցես. մի՛ անպտուղ լիցի տեսականութի պատկերին, և մի՛ աննշոյլ կերպարանին սքանչե-

լութի. [13] մի՛ անհուր ողջակիզին սպանդ մեռցի, և մի՛ պատարագ ուխտի այս ճառի՝ արտաքոյ ցրեսցի. մի՛ ճաշակդ լուսոյ՝ ինձ մահու լիցի, և մի՛ բաժակ քո կողիցդ արեան՝ 'ի դատապարտութի եղիցի։

Դ. Աղաչեմ զքեզ՝ տէր յա [14] միդ յեռւէդ, որով զգիտութի հօր քո և հոգւոյդ մջ ճաշակեալ ծանեաք. քանզի [15] 'ի քէն իսկ վարդապետեալ զամենապարգև կարգս եկեղեցւոյ, [16] և 'ի սմին աղօթանուէր լուսարան կենաց փրկութե բարեաց, տարածեալ զսիրտս՝ ձեռաց համբարձմամբ՝ զայս կնդրուկ բանի ընծայողիդ 'ի սմա՝ տիրողիդ ընաւից երեքսրբենիդ մատուցեալ, յաւէժ ընծայեցուցանեմք այսու բարբառով բարեշնորհութե։

Յաւ որ 'ի Նիկիայն սահմանեցաւ բան, այլ և մի խորհրդածութե տծայեն աւանդութե։

Ե. Փառաւորեմք վերաձայնեալ նուագօք օրհնութեան երգոց՝ 'ի հաւատ պաշտաման բանի՝ զբարեհրաման պատճառն եղելոց՝ զերրորդութիւնն անսկիզբն՝ անհամեմատ բարձրութե, անհասական խորհրդոց և անըմբռնելի իմաստից, անզննելի ըղգայուէց և [17] անբերելի եղելոց. [18] քանակութի վերնականն երկնի, և անսահման ներքնային խորոց. [19] լրութի սպառմանց, և նախադրութի սկզբանց. [20] մի՝ յերից անշփոթ կերպից, և երիս՝ միոյ անհատուածելի ինկութեց. [21] 'ի վեր քան զմտաց անարգելութի՝ յարաձգեալ ամենայն ուրեք բովանդակ։ Անփոփոխ բարի. անսասանելի ուղղութի. [22] անխառն կերպարան սիրոյ. մեծութի անյաջորդ. բարձրութի անխոնարհելի. [23] անվատնելի տեսականութի. բարերարութի աննուազելի. կամք կայուն. հրաման կենդանի. ակնարկութի փրկչական. երանութի ճշմարիտ. ակնկալութի հաւատի. խոստումն անստելի. [24] աւանդ արգասաւոր. ստոյգ աւետիս. [25] վերամբարձութի անձեռնարկելի։

Զ. Մի հայր՝ միայնոյ որդւոյ՝ միական հոգւոյն պատուեալ. ամենահարուստ բարութե՝ ամենևին ունայն

'ի չարէ. օրհնաձայն գոհաբանութիւն անքնին ներբո-
ղիւ գովեալ։

Է. Մին բարձրեալ ահաւոր անուն՝ [26] համապատիւն
կցորդութեանց, անպատումն ազգականութեանց, եռա-
լուսեանն զուգակցութեանց, անյաւելուածն լրականու-
թեանց, ինքնիշխան կամաւորութիւն պատուասիրեալ
առ հայրն հանդունատիպ՝ գործակցութիւն հոգւոյն
սրբութեան խոնարհեալ իջեալ 'ի յերկնից, աննուազ
գոլով յընտանի փառացն, հաճեցաւ մտանել յար-
գանդ մայրենի աստուածածին կուսին մաքրութեան. յորում
[27] աճեցոյց զբոյսն օրհնութեան 'ի լուսասահման անդաս-
տանին անարատութեան. ընդ ամենակատարն էութեան
համանեալ յանանջրպետ միականութի, թափան-
ցական խառնութիւն յաստուածութեան ոգի բաղկացոյց ըղ-
գոյութի չնչոյս հրաշապէս։ Որով [28] անստամբակե-
լի երասանաւ սանձաց կրթութեան՝ զստահակունս իմ
հանդարտեցոյց. և կամաւ ընծայեալ խաչին՝ ամ-
բարձաւ ծաղիկն պտղոյն կենաց՝ [29] 'ի ծայրս լրութեան
անմահականն տնկոյ. 'ի մահ վիրաւորեցաւ՝ [30] աստուածու-
թեան անընդմիջելի 'ի մերասերն մարմնոյ, որով կեն-
սացոյց զգործին պարտեաց, արարչութեան իսկութեան
'ի նմին յաւէտ անբաժանօրէն ընդ նիւթական մարմ-
նոյն վշտացեալ։ Իջեալ 'ի վայրս խաւարային դժո-
խոց, եհան զկապուտն իւրաստեղծ 'ի կապանաց օձ-
տողին. և իբր 'ի նիրհմանէ քնոյ զարթուցեալ, յինքն
նահանջեալ զդիմեցումն մահու, կանգնեցաւ կենդա-
նացաւ աստուածապէս՝ ելեալ 'ի յերկրէ հացն կենաց և
հովիւն հօտից բանաւորականաց։ Հաւատարիմ եղև
յաշխարհի. և [31] երևեցեալ նոյնութիւն՝ ամենևին ան-
նուազելի, որպէս եկն համայն, և համբարձաւ բո-
վանդակ. բազմեցաւ նստաւ 'ի գերունակն գահոյս՝
[32] նախնականին պարզութեան՝ արարչական փառաւո-
րութիւն։ Ով որ խոստովանիմք աստուած բարերար և տէր
բոլորից. որ դատի զա̃մ երկիր արդար ընտրութիւն
յաւուրն մեծի. որ [33] ինքն է սկիզբն՝ և ինքն կատա-
րած. նոյն առաջին՝ և նոյն առյապայ, անպակաս
բովանդակութիւն թագաւորեալ 'ի լոյս անմատոյց։

Ը. Օրհնաբանեմք ընդ հօր և որդւոյ՝ և զանբա-

ժամելի բղխումն նոցին փառակից հոգւոյն տէրու-
թեն։ Որ ստեղծ զընաւս և կենդանածնէ զ̃մ. որ 34
անդստին իսկ 'ի բնէ համապարփակ մթուէ աշխար-
հական միգի՝ շրջէր նկարէր և կերպարանէր ամե-
նունակ ջուրբքն անբաւուէ երկրատարածն ծովու՝ 'ի
կատարումն արդեան խորհրդոյս՝ զոր աւազանն լու-
սոյ։ Նախ արար, և այժմ գործէ. գոյացոյց, և միշտ
կատարէ՝ արուեստս, սքանչելիս, նախատեսութիւս սրբա-
մնելոց, 35 աղդմունս ա̃ծօրէնս, զօրութիս զարմանա-
ւորս, մարգարէս, առաքեալս, վարդապետս՝ վար-
ժօղս կրթուէ համճարոյ։ 36 Օսրբարարն մատուց-
ման արեանն ք̃ի՝ յարդարեաց. քաւութիս անձանց՝
առողջութիս մարմնոց՝ ըստ նմանութե ք̃ի ողոր-
մութբ հրամայեաց։ Մկրտեաց և 37 գեր քան զջուր,
ինքեան միայն բաւականութբ՝ նորոգեաց լուսաւո-
րեաց. համապազ նովին բարեգործութբ զօրանայ։
Ակայեաց միածնին ա̃ծութեն՝ 'ի հոսանսն յորդա-
նանու. օրինակաւ տեսութե ամպոյ՝ ցուցաւ ձայնիւ
հօր 'ի լերինն Թափորական։ Ի նոյն տիպ նմանու-
թե՝ հովանի եղև յակոբեան տոհմին՝ 'ի յելսն եգիպ-
տոսի. յուղեգնացութիւն զօրավարութեն մովսիսի՝
հողմով սաստկութե՝ զփարաւոն ընկղմեաց։ Դրա-
հանայս կատարագործէ. իմաստունս կազմէ. թա-
գաւորս զօրացուցանէ. քաւութիս ընձեռէ. կեանս
շնորհէ մահացելոց՝ 'ի նորոգութի յարութեն։ Նոյն
ինքն է 38 օծումն մարդացելոյն ա̃յ. մշտնջենաւոր հա-
ւասարութբ ընդ հօր երկրպագեալ՝ 'ի պատիւ մե-
ծութե որդւոյ. անսահման փառաւորութբ օրհնեալ
յաւիտեանս. ամէն։

39 Նորէն տասցեալ 'ի խորհուրդ սէր եկեղեցւոյ, ընդդէմ պերճ
աղանդաւորացն Լութերականեցւոց, նոր մանիքեցւոց։

Թ. Դաւանեմք 'ի հաւատ ուղիղ և անխոտորնակ
ամբծութե՝ համբուրիւ շրթանց ողջու-
նեալ 40 զկառուցեալս խորան յանշնչական արձանաց՝
ա̃ծային բնակութ եկեղեցւոյս շինուածոյ։ Որ 41 գե-
րազանց գտաւ և երկնի ամենազարդ բարձրութբ.
որ 'ի նոցին իսկ 42 յառաքելականացն դասուց հիմնե-

ցաւ, յաշակերտաց վերնոյն խնկեցաւ, 'ի սպասաւորաց բանին պաշտեցաւ։ Սկիզբն առեալ կենացս այս գանձու՝ 'ի վերնայարկն սրահէ, խորհրդակատարն վայրէ, զոր հոգին այ ցոյց, փայլեցուցեալ 'ի նմա զօրութի՝ յաւուր մեծի պենտակոստէին. նախ զտունն բարետեսիլ՝ յօրինակ սրբութե կատարման շնորհի այսր եկեղեցւոյ [43] կանխամեծար առաւելութե, յորում ապա և 'ի նմին բնակչացն տուաւ լուսանորոգ բարեփառութի։ Ուստի արիւն հզօրին այ բաշխեալ մատուցանի՝ [44] յաւէտ քան զհաբելին մահու դուժարկու, մեծաւ բարբառով ձայնի բերկրութե կենդանութի անմահութեան 'ի սմա ազդելով։ Քանզի ոչ է կար զօրութե ուրուք ընդ երկնաւ յանդիման արեգական՝ 'ի սպասաւորութի խորհրդոյ այսր ահաւորութե ձեռնարկել, եթէ ոչ ընդ թևօք սորին պահեսցի. նա զի [45] ոչ երկնիւք բաւականանայ այս նուէր տէրունի մարմնոյ, եթէ ոչ զայս ձեղուն օրհնութե ծածկոյթ ունիցի. վասն զի մահու անիծիւք հերքի այր ըստ օրինին, որ արտաքոյ խորանի այս վկայութեան՝ զածային պատարագն մատուցանէ. մանաւանդ զի [46] պարտաւոր արեան կոչեսցի, որ ոչ [47] զանձինն օրինակ արիւն՝ յայսնուիրան ընծայեցուսցէ։ Ո՛ի՝ 'ի սմա լուացումն 'ի մահն քսի, [48] զի մի՛ յանդէտս անարգեալ ածութիւնն՝ 'ի ծանուցելումն զնախնին կրեսցէ։ [49] Ո՛ի ձեռնադրութի 'ի պատիւօծութեան լուսոյն, զի մի՛ յանբծութիւնն խաբէութիւն խառնեսցի։ [50] Ո՛ի և շնորհօք, քան թէ ապաշխարութեամբ՝ քաւութիւն, զի մի՛ ճշմարտութիւնն կերպարանօք խորամանկեսցի։ [51] Ո՛ի յընտրութին ապառնի՝ հաւատ, զի մի՛ սպառնալիք հատուցմանն՝ զրոյցս ինչ օտար համբաւոյ գրեսցի։ Ո՛ի երկաքանչիւրոց [52] գոյութեց մերոց իրաւամբք կշտամբութի, զի մի՛ կիսամասնեայ առ մարդն ներքին և առ արտաքին՝ չարի և կամ բարւոյ փոխատրութին՝ կարծիցի յանմահ զօրութի արքայական որդեգրութեն. զի ընդէլութե երկրայնոյս՝ առաւելութի վերնումն թագաւորութե յայտնապէս ճշմարտեսցի։ Ո՛ի յոյս կենդանութե [53] առ անեղծութին մեզ, զի աներկեանութի խոստացելոյն՝ 'ի միտս ունկնդրացն

ծանուցեալ հաւատացի ։

Ժ. Այս 54 դշխոյ պաշտելի՝ անշնչական եկեղեցի՝
տայ կեանս, և մահու իշխէ, ըստ օրինակի ադամեան
պտղոյն յարմարապէս ճաշակելի . գերագանց քան
զբանականս՝ յանշնչութեն հրաշագործէ . մինչ զի
կատարումն ընձեռէ և նորոգ հաստատէ , 55 վերստին
նկարեալ 'ի մեզ զկերպարանն փառաց լուսոյ ։
Գրեալ ես է 56 տեսակ մեծուէ վերնումն կամարին՝
սկզբնաւոր յառաջակառոյց քան զբնակիչս հոգեղի-
նացն 'ի նմա զօրութեց ։ Նոր իմն ընծայէ 57 թուիչս
մարմնոց՝ ընդ թեթևութիս հոգւոց, պատուականին
հարստութբ՝ զանարգն յարգաւորեալ ։ Ոչ 58 ինք-
նակիր մեղօք զազրանայ , եթէ ոչ՝ 'ի մարդոց չարաց ,
և կամ անհաւատից կոխեցի ։ 59 Տիպ իմն է զարմա-
նաւոր՝ յաղթօղ իմաստից մերս տեսութեց . անբանն
'ի բանաւորէն կառուցեալ , նմին օժանդակեալ՝ իբր
վեհագոյնն յաւէտ նուաստի ։ Մեծ է քան զմարդ, 60
որքան ընտրեցելոյն մխիթարի՝ ցուցն յաղթողական .
առաւել քան զբանաւոր , որքան զահարոնին՝ գաւա-
զանն խորհրդական ծաղկեցեալ . գերագանց քան
զմտաւոր , որչափ քան զեղիաս և զեղիսէոս՝ գետա-
հերձ մաշկեակն սքանչելահրաշ՝ փայլեալ արուես-
տիւ ։ Օգնութի պարէտ կրկին ամենակատար 61 սրբա-
սնեալ ձեռաց՝ մաքրաբար , քան թէ զինապէս . մար-
մին նիւթական՝ 62 քարի և հողոյ գոյակից , հարա-
զատ զգայականաց և սրբոց ։ Իբր զվէմն անմահ կեն-
դանի՝ 'ի կործանումն է և 'ի կանգնումն . 63 որպէս
զդատաւորն ամենից հոգւոց՝ հանդիսանայ հրաշա-
պէս ազդմամբ՝ յանէծս և յօրհնութիս . իբրև տե-
սօղ աներևութից՝ զոմն հրապարակէ , և զոմն տա-
ծէ . առ ինքն կոչէ գրեալ յանուանէ՝ իբր զտիրօղ
հրամանատար էիցս ։ Իբր զլեառն յաւիտենական՝
անհարուածելի է 'ի դիմամարտից . 64 ըմբռնէ զհօ-
գևորս՝ իբր զհնարադրուի մեծին արուեստի . 65 ան-
մեղս և անվրիպութիս՝ ըստ քնի հետոյն ընթանայ .
բարձր ձօխութբ անպատկառաբար համարձակապէս՝
զօրէն գովելոյ գլուխ ամբառնայ ։

ԺԱ. Որքան մեծ ունի սրբուհ, մինչ զի զորս ըստ
պատկերի ոյ եղէն , 66 կանոնաւ խտրէ ։ Յետ յո-

գունց ընտրութեց փորձից՝ թէ համարձակեսցի մարդ-
ոք սխալեալ՝ 'ի գաւիթս նորին մտանել՝ ոչ պղծի,
այլ ընդ անպատրաստից թերութեց դժուարի. ոչ
նզովի, այլ տեղի տայ ոչ գիտողացն զշնորհին զչափ.
ոչ լքանի ինքեամբ՝ պարտաւոր իւրոյն գտեալ, այլ
'ի մերոց գործոց խրթնանայ. ոչ թողացուցանէ [67] եր-
կիցս մատչել յըմբռնումն ոտիցն կենդանատուաց,
ըստ տիրական անձառ խորհրդոյն. [68] ոչ կրկին յա-
ւուր՝ զնոյն ցուցանէ, զի մի անընտրաբար՝ նուիրանն
խայտառակեսցի: [69] Աշտակցէ կարեաց զօրապէս՝
իբր անախտակիր ապականութեց՝ որ 'ի մեզ շարժ-
մանց. առանց բարբառոյ տիրապէս հրամանաւ
դատի:

ԺԲ. Այս զի և տապան իմն է մաքրական, [70] կրկին
երջանկական, 'ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց պա-
հապան: Ոչ բազմօք անբանիւք գազանաց դասուք՝
և սակաւ մարդկամբ, այլ ընդ երկրայնոցս և զվե-
րինսն յինքն հաւաքէ. ոչ յաղիս խռովութե բերի,
այլ 'ի բարձրութին երկնի համբառնայ: Իբր զաշա-
կերտ հրահանգեալ հոգւոյն այ՝ [71] փախչի 'ի նենգու-
թէ. [72] ոչ 'ի բողոք մահու՝ մարմնոյ հարուածոց, այլ
'ի կենացն աւետիս՝ ըմբռնեալ ածէ. ոչ նոյիւ ձեռ-
նարկեալ գործի, այլ հաստողին հրամանաւ շինի.
ոչ մովսէս ընդ բեսելիել, այլ միածնին այ՝ հոգւոյն
սրբով զսա հանդերձէ. ոչ [73] յարաշարժ հանապազա-
փոխ, այլ մշտակառոյց հիմամբ անսասանելեաւ զսա
հաստատէ: Պարձեալ իբր զտապանակն անխօս
փայտեղէն մածեալ տախտակօք առանց զգայութե
տեսողականաց մեզ առաջնորդէ. [74] որպէս կերպա-
րան անքանակ էին յառաջ հետևեալ՝ 'ի հանդեր-
ձանս լուսոյն կենաց՝ տեղի պատրաստէ: [75] Ընդ ա-
զինելի անտժուստ սատակէ, եթէ ոչ խաչապէս յոգի
բերիցի. սպանանէ վատնեալ վաղվաղակի առժա-
մայն, եթէ անասնայինն լծակցութբ երկրասիրաբար
գետնակոխ սայլիւք՝ իբր զանօթ ինչ ձեռնազննին
բարձեալ տանիցի: Ոչ [76] լեզուաւ մարդոյ, այլ բա-
նիւ հրեշտակաց խօսի. ոչ ունկան գոյականութի, և
արագապէս մտառեալ լսէ. ոչ ձայն կերպաւորական
բարբառոյ, և զպատգամս գործոցն յոի՝ համօրէն

ազանց պատմեալ հռչակէ․ ոչ խաղալեաց շարժա-
կանութ՟ի, և ա՟ծայնով իմ՟ կենդանութ՟ե հագագաւ
ազդէ։ Ո՛չ ոսկերաց և ջլաց յօդուած, և [77] երկուք
հազարօք կանգնօք լայնութ՟բ՝ իբր զգունդն անհա-
մար՝ բարձրեալն ա՟յ, զկենդանական զօրուն գումար-
տակ՝ հեբրայական վառեալ ամբոխին, և այժմ ընդ-
նոսին՝ իբր զանմաքուրս 'ի սրբութ՟է զոմանս ախտիւ-
մեղանաց ջեռեալս՝ հատուածեալ յինքենէ, հեռի
ուղեկցէ, ապրեցելոցն 'ի տաժանաւոր աղխսարկու-
թ՟եցն։ Նոյն իսկ [78] էութ՟ին ա՟յ մարմին եղելոյ՝ ա-
նուամբ այս վիմի նշանակեցաւ, պատառմամբ կողին
զբնաւս արբուցեալ։ Ո՛չ [79] արեան երակաց ընթացք,
այլ լուսոյ վերնոյն շառաւիղք՝ Թափանցանց միու՟բ
զսոյն կենդանացուցեալ նորոգ պաշտպանէ․ [80] ոչ
սողոմ՟ն կամ զօրաբաբէլ՝ մահկանացուաց ոստիկա-
նութ՟ի, այլ ամենից ունողին իմաստ զսա գծագրէ․
ոչ աննուիրական հասարակաճաշակ իւղով առ 'ի
յակոբայ պարարի, այլ ահաւորին արեամբ՝ և փա-
ռօք մեծին օծանի։ Ո՛չ [81] տուն երկրային նիւթոյ՝
քան թէ մարմին երկնային լուսոյ ա՟յ զսորին որդիս
կնքեալ ձեռնագրէ․ ոչ կենցաղոյս յերկրէ յղաց-
մունս, այլ արքայութ՟են երկնից ժառանգս կրթէ․
զ'ի ծոց իւր գրգեալսն՝ զոգոյն աբրահամու ընծայե-
ցուցանէ։ Փեսայ [82] հարսնութ՟ե սորա՝ որդին ա՟յ կեն-
դանւոյ․ օրիորդք խնձոյից սորին՝ հայրապետացն
գումարք։ Այն ինքն [83] մոռացու՟մն առնէ այսակիր
բարձանցն կռամոլութ՟ե, զի զերկնայնոյն ա՟յ ունի
զծանօթութ՟ի․ օտարութ՟ի է ամենայնիւ դիցն դրօ-
շելոց, զի 'ի համօրէն քարինս սորա՝ ք՟ս երկրպագի․
քակտու՟մն է յայտնապէս ուրուական ըղձիցն ան-
տառաց, զի 'ի բնաւից մայրից աշխարհի՝ նմանութ՟բ
կենացն փայտի՝ 'ի սմա տէրն նուիրի․ խորտակու՟մն
է համայն դիւապատիր յուռթիցն արձանաց, զի
քարն գլորեալ կարկեհան ակամբք և վիմօք կենդա-
նեօք՝ այսրէն հաստատի։

ժզ․ Այս յարկ չքնաղ և ա՟ծընկալ՝ [84] ազատ է միան-
գամայն 'ի յամենուստ ծառայութ՟է․ ոչ [85] օրինակ
վերնոյն սիոնի, քան թէ ճշմարտութ՟ի նմին ճանա-
չի․ ոչ [86] կռապաշտութ՟են կապաւ՝ բագին, և կամ

լծով օրինին՝ տեղի պարտաւորութե՟, այլ տէրունի բարերարութե՟ն պարգեւարան 'ի մէնջ համբուրի ։ Ո՛չ [87] սասանի երբէք՝ յայլ ի՟մ կերպարան ձեւոյ փոխարկեալ, այլ 'ի նոյն շուք փառաց մեծապէս ընդարձակի ․ սոյն ինքն և երկին երկնի՝ յերկրի լուսապայծառ կերպիւ հռչակի ։ Որպէս չէ՛ [88] առանց հօրն ք՟ի, և ո՛չ առանց այսր մօր արգանդի յոգի կատարիլ ։ [89] Ըստուն շրջի անբովանդակելին, եթէ ո՛չ 'ի սմին տան տաղաւարեսցի ․ ո՛չ ունի տեղի գլխոյն հանգստեան՝ տէրն բոլորից, եթէ ո՛չ 'ի յայս կայարան կենաց մտեալ ագանիցի ։ Վ՟ան [90] 'ի կամար վերնայինն երկնի՝ 'ի յայս հիւթաւոր բնակութի առաւել պարծի ․ [91] անբաւութի ա՟ծեան լուսոյն, որպէս զդէմս մարգարէին՝ և զօրինակս սորին ծածկեցին, որպէս փախեան 'ի փառաց երեսաց նորին, և նմանութե՟ սորուն՝ որ 'ի տաճարին՝ ո՛չ հանդարտեցին, 'ի տօն հանդիսի մեծի գալեստի, և 'ի բանականացս դասուց խմբեալ նուագի ։ Ըստ օրհնի կրկին բաղձանօք, քան 'ի դրախտն վայելչական ։

ԺԴ․ Այս մայր հոգևոր՝ երկնաւոր՝ լուսաւոր, քան թէ երկրաւոր՝ շնչաւոր՝ մարմնաւոր, զիս գգուեաց որդի ․ կաթն ստեանց սորա՝ արիւնն ք՟ի ։ Եթէ [92] ա՟ծածնին իսկ պատկեր զսոյն ոք գրեսցէ, ո՛չ անօրինի ։ Իբր զնշան խաչին փրկութե՟ զօրութիս զարմանազանս՝ և արուեստս բազմօրինակս կատարեալ հրաշագործէ ․ բեմ ահաւորին ատենի՝ 'ի սմա հաստատեալ տեսանի ․ սովաւ խորթաբարոյից հերձուածողաց՝ մոլեգնաճառ բերանք կարկին ։ Ունի և [93] քարինս իմն իմանալիս և բանաւորականս, որով զգաղանամիտս անմաքուրս՝ բացուստ 'ի բաց տրոհեալ տարագրէ ։ Ծնանի և [94] ա՟ծս ոմանս եղականս՝ պատկերս մաքուրս՝ միոյն ա՟յ ք՟ի ։ Ունի և [95] զդիրն իւր ընդ արեւելս՝ 'ի տեղի խոստման բնակութե՟ն մերոյ առաջնոյ ․ ձեռամբ իմն ցուցանէ յայտնապէս զգալստեանն ա՟յ շաւիղ ․ զփայլականն առակ տիրական՝ 'ի դէմս բերեալ մեզ վարդապետէ ․ զփրկութի՟ն 'ի յելից անտի ծագման արուսեկին՝ ք՟եան երեւմանն 'ի վերջնում աւուրն, արարածոց երկրի թարգմանէ ։ Ցաւս հալածէ ․ ախտաժէտս բժշկէ ․ դիւաց

բռնութեանց զօրէ ։ Արգանդ որովայնի սորին՝ աւա-
զանն կենդանարար. 'ի պար հարսանեաց սորա՝ դասք
առաքելոցն ։ Այնքան ճոխացաւ բարգաւաճեալ
երանութբ, մինչ զի նոյն ինքն [96] փրկչին անուամբ՝
վայելչապէս յորջորջեցաւ . տիրամօրն լուսոյ կոչ-
մամբ՝ 'ի մերձաւորաց միածնին ձայնեալ կնքեցաւ ։
Ծփելոց մեղաւորաց՝ նաւահանգիստ հանդարտու-
թեան . խրախճանարան վերնոցն դասուց . բժշկարան
անսխալելի՝ տարակուսեալ պարտաւորաց ։ Երրոր-
դութին անպատում 'ի սմա փառաւորի՝ օրհնեալ
յամենայնի ։

ԺԵ . Իսկ եթէ ոք [97] ձեռն չարութեան 'ի վերինն ար-
քայութի յանդգնաբար համբառնայցէ, և գիւտ ինչ
մարմնաւոր, և կամ հնարք մարդկային, և կամ
արուեստ երկրակենցաղ՝ զսահմանեալ աւանդութիս
առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի, և ոչ պարգև
առաւել կենաց, և [98] ակնկալութի ածային, և հո-
գւոյն սբյ յայտնեալ՝ լուսանորոգ նախագրութի, և
երախտեաց բարձրելոյն՝ ամենատուր լիականութի,
և կամաց արարողին՝ խնկաւորեալ խորհրդարան,
և առաքելոց ձեռինն աջոյ՝ բարեհանճար հիմնար-
կութի, և միանգամայն ասել՝ դուռն երկնից, և քա-
ղաք այ կենդանւոյ, և մայր կենդանեաց՝ ազատ 'ի
պարտեաց, և անգրիտ տեսակ կերպի երևակիս բա-
նականի, իմանալին՝ խորհուրդ հոգւոյս, և շօշափե-
լին՝ պատկեր մարմնոյս, և սրբութեցն անդանձա-
ւից՝ գերազանցեալ նոր սրբութի, և քնեանն նշա-
նաւ՝ պայծառապարծ պսակեցեալ, զայնպիսի ոչ խոս-
տովանողն՝ մերժէ յերեսաց իւրոց հայրն ամենա-
կալ՝ 'ի ձեռն բանին իւրոյ էակցի, բարձեալ 'ի նմա-
նէ և զաւանդ շնորհի հոգւոյն փառակցի . փակեսցէ
զդուռն կենացս այս առագաստի յանդիման նորին ։
Իսկ մեք զորս գրեցաք՝ սմին և վկայեմք, հաւատա-
ցեալ ուղղում կարգեցաքս . յանուն և 'ի փառս ամե-
նակալ երրորդութեն և միում ածութեն, յաւի-
տեանս յաւիտենից . ամէն ։

[99] Այն են հաւատք յԵրրորդութիւն . և այս՝ 'ի հայրն են լուսա-
ճառ՝ խոստովանեալ դաւանութիւն ։

(1) [illegible] : 'Ի լաւ օրինակս, և 'ի հին լուծ. և յոմանս նախնի տպագիրս չէք այս մակագիր, այլ փոխան սորա գնի յաջորդն. [illegible] : Եւ առաւել հարազատ թուի այս. վասն զի սկիզբն գլխոյս իբրև նախաշաւիղ է հետևեալ բանին՝ [illegible]. ուստի ոչ ունին պէտս այլ և այլ մակագրի : Եւ ինձ թուի թէ այս առօթք ըստ կարգի տպաբեալ իցէ յետ ԼԳ բանին, յորում զգուշութիւն հաւատոյ արտայայտեաց ԺԵ նիկիական հանգանակին : Եւ քանզի յայնմ հանգանակի ըստ ժողովն Նիկիոյ զմասն 'ի վերայ Ս Եկեղեցւոյ՝ որ կայ 'ի հանգանակն առաքելոց և կոստանդնուպօլսի ժողովոյն, նմին իրի և Ս փարգապետս ոչ արար անդ բացատրութի 'ի վերայ եկեղեցւոյ, զոր աստ առնէ ընդարձակ : Այսմ կարծեաց առաւելապէս հիմն տայ մակագիր բանիս յառէլն. [illegible] : Այսպիսի կրկնական բանք ունին յորմարումն ունին ընդ ՀԳ բանին՝ որ նախ՝ քան զայս. բայց կարի քաջ յարմարին Ը ԼԳ բանին՝ ոչ միայն ԹԵ նիւթոյն, այլ և ըստ սկսուածին. զի աստ առէն. [illegible], [illegible], ցուցանէ յայտնապէս թէ նախ քան զայս՝ գրախնացն էր ձատ արկեալ իցէ ընդարձակաբար. որ ոչ այնչափ հայի 'ի բանն ՀԳ, քան թէ 'ի բանն ԼԳ, յորում 'ի վերջին համարն կուսակութ յառաջբերէ զգրախտին էր, ուստի կարի յարմարութ զհետ գայ առէլն, [illegible]:

(2) [illegible]. այսինքն յառաջոյ և զկնի : Զչորեսին գիրս մարմնոյ յիշելով, առել կամի, յամենայն կողմանց պաշարեալ են զմեզ անբաւ երախաւք չնորհաց քոց :

(3) [illegible] : Վերասին երկրորդումն ամնդութեանն ազգելոյ ածայնին հողումն՝ որ ինչ յառաքելոյն սահմանեցաւ 'ի պայծառութի գաւառութե եկեղեցւոյ, [illegible], բացայայտաբար եղեալ առանոր : Ընդ նմին խորհրդածութի՝ որ ինչ 'ի նիւթական եկեղեցին կի 'ի տաճարն ցուցանի [illegible], հոգևոր նշանակութիւն՝ որով զկերպարան երկնից յինքեան բերէ :

(4) [illegible] : 2 օրին. [illegible] :

(5) [illegible] : Ըստ չարագրութեն՝ հերձուածականն՝ է ածական եղեալ 'ի սեռական հոլով ըստ չըջուն ձևոյ. և պարզ՝ հերձուածականաւ չարափառութբ, որպէս ներհակեալն առ՝ [illegible] : Ըստ իմաստիցն, [illegible], մանաւանդ տաեալ, է կամաւոր բաժանումն 'ի հոգևոր միութէ : Իսկ չարափառութի՝ յանմա մոլորութե 'ի հաւատոյն. թէպէտ 'ի մեր գիրս հերձուածն անխտիր փոխանակ երկոցն ես դնի : Արդ՝ զերկոսին ես հնարեցաւ սատանայ առ նախատեղծան, թիւր մեկնելով զբան պատուիրանին էր, և այնու բաժանելով զնոսա 'ի հպատակութէ օրէնսդրին : Եւ այնպէս յազգս հերձուածական չարափառութ, որ է կարթ սատանայի, որոչեցաւ առէ՝ յէր, և մերժեցաւ 'ի դրախտէն : Իսկ այժմ այսու միաւորական ուղիղ [illegible], այսինքն ուղիղ առիթ դաւանութ հաւատոյ՝ որ է խկապէս ասանդ պարգևեալ յէր, դարձեալ վերացայց յերկինս, [illegible], այսինքն լուսաւոր թևովք հաւատոյ թռչելով : Հին լուծ. [illegible]՝ իմանոյ դաւանութ Երրորդութեանն, որ միական է : Բայց առաջինն է յարմար բանիս, այսինքն միաւորէ՝ իբր հակառակ հերձուածականին :

(6) [illegible] : Առատանոր [illegible] թարմատար է, և իմաստ պարբերութեն այսպէս պարզի : Պարտ և արժան է 'ի յիշատակ ձա_

ուխ Երրորդութեն՝ նաև զխոնարհելն մայրն իմ եկեղեցի ըստ կանոնի հա-ւատոց արձանացուցանել 'ի մասունս, [illegible], այսինքն յաւազա-նէն, կամ 'ի նիւթական տաճարէ անտի՝ յորում հոգևորապէս ծնայ 'ի մկրտութեն։ Որպէս զի ծանիցի յետոյ եկեղոյ ազգաց մեծութեն փա-ռաց [illegible], այսինքն զովելոյն՝ որ է եկեղեցին, արժանաւոր պաշտ-աման բանի և մեծարանաց պատուեալ յամենեցունց՝ իբրև մարմին մա-քուր ընդ գլխոյն քնի։ Իսկ եթէ [illegible] ոչ համարիցի Թարմատար, մարթ է կապել զկարգումն բանին ընդ առելոյն զկնի։ Եւ [illegible] 'ի [illegible]են, իբր առել. և որովհետև յարգանդէ աւազանին մկրտութեն արժան է գոլով յիշատակել առաւօր և զմայրն իմ դշխոյ զեկեղեցի, վասն այն յայամ աղօթական բանի՝ յորում յարմարեալ խօսիմ զնորանէս լուսոյ, ընկալ զիս են։

(7) [illegible] [illegible]։ Ամ կուսակրօնիցն 'ի մարդկանէ Տէմարիս մայր է եկեղեցի. կամ, Թագուհի ամ կուսից։

(8) [illegible]։ 3 օրին. [illegible]։

(9) [illegible] [illegible] [illegible]։ Եկեղեցին իբրև մաքուր մարմին՝ պատուեա-ցի ընդ գլխոյն, որ է մարդացեալ բանն ած։

(10) 'Ի [illegible] [illegible]։ այսու հոգևոր պատկերաւ աղօթիցս, որ զեկեղեց-ւոյ [illegible], յօրինի կամ խորհրդածի յինէն՝ որքան զիս յաղօթելս 'ի սմին։

(11) [illegible] [illegible]։ ընկալ կամ յօգնեա զանդխտանս 'ի [illegible] [illegible], յեկեղեցի քնի, և անտի փոխեա 'ի [illegible] [illegible], յարքայութենդ երկնից, (Ի զոպար. ժբ. 8։)

(12) [illegible] [illegible]։ Զմտանելն յեկեղեցին, և զելանելն անտի՝ մի ու-նայն կամ անօգուտ [illegible], այսինքն Թողցես լինել։ 'Ի հետևեալն կարգաւ յիշելով զբարեպաշտութեն գործան՝ որք լինին յեկեղեցւոջ, ա-ղաչէ՝ զի մի վայրապար և անպտուղ անցցեն։ Եւ նախ՝ զհաւատոյ դա-ւանութեն՝ որ լինի 'ի սկզբան ժամերգութեն, կամ 'ի պատարագի հան-գամանսն, աղաչէ չլինել ցուրտ։ Եւ համբոյր ողջունին՝ որ 'ի պա-տարագի՝ մի լիցի անկարգ, խառնիխուռն, իբրև զմարմնական ողջոյնս, այլ պարկեշտութեամբ 'ի նշան հոգևոր միութե և սիրոյ. կամ, խմանի համբոյրն արարեալ յորմունս և 'ի սեամս եկեղեցւոյ։ Եւ [illegible] ժա-մերգութե, կամ խնկարկութենն մի լիցի [illegible], խառան, անընդու-նելի։ Եւ [illegible], կմ ծնրադրութենն՝ որ լինի 'ի ժամերգութե, 'ի պատարագի, կամ առաջին խաչի, պատկերաց, նշխարաց սրբց են, մի լիցի [illegible], անբանաբար արարեալ արտաքին ձևով միայն։ Եւ [illegible] [illegible], հայեցուած ձեռց եկեղեցւոյն, կամ տե-սութեն քահանայից, որ պատկեր է քնի, և խորհրդաբար զգեցեալ, մի լիցի անպտուղ առանց քննելոյ զխորհուրդն։ Հին ըծ. պատկերաւ խնա-նայ զհաց և զգինի պատարագին, իբրև թէ ոչքա պատկեր են քնի։ Մարթ է առել զայս ըստ մասաց ինչ. այսինքն կամ 'ի վերայ հացին և գինւոյն նախ քան զքահանայագործութեն, կամ յետ այնր՝ ըստ խոր-հրդական տեսակացն միայն. և կմ զի երևեցուցիչ է արիւնաւոր պա-տարագի խաչին։ Եւ [illegible] [illegible], զբանելն խորհուրդ և նշանակութեն տեսակի տաճարին և զարդուց նորա մի լիցի [illegible], աղօտ և անծանօթ 'ի միտս իմ։ Եւ [illegible] [illegible], հոգևոր կամ բանա-ւոր պատարագ աղօթիցս, կամ նուէր ընծայից՝ զորս ընդ քնի պատա-րագին մատուցանեմ, մի մերժեսցի արտաքս իբրև անընդունելի։ Եւ Տաչակումն մարմնոյ և արեան քո մի 'ի դատապարտութիւն ինձ գացցէ։

(13) [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։ 3 օրին. [illegible]։ կրկնակի

խմանի անհուրն , կամ իբրև մանկոյ , այսինքն առանց հրոյ սիրոյդ՝ մի՛ զենումն ողջակիզի մարմնոյ քո՝ Տէրդ , այսինքն կատարեցի ։ Եւ կամ իբր անուն ածական՝ ողջակէզն , այսինքն առանց հրոյ մատուցեալ ող- ջակիզլն զենումն մի՛ մեւցի 'ի միտս իմ ։ Եւ ըստ երկրորդ մտացս՝ ա- ռաւել յարմար է առել հոտոյն ։

(14) Մէտ ջեռուցէտ ․ այսինքն մի յածուցէք ․ ըստ այսմ խմմ յորժամ ասի ․ Մն ջեռուցէնէ , ևն ․ զոր այլ բազում ուրեք ասէ մր վարդա- պետս ։

(15) 'Ի ձեռն ծով հարտապնդեալ ։ Ուսաք քև , և 'ի ձեռն առաքելոց՝ զմե- նապարտն ծառս , ամենեցուն և հասարակաց պարգևեալ կարգս , կամ ամենայն բարեաց պարգևօղ կարգս եկեղեցւոյ ։ Այս կարգ է , առնել նախ քան զամենայն՝ դաւանութիւն ուղիղ հաւատոյ , զոր քո առաջին պաշտօնեայք յամենեցունց՝ որք մատչէին առ նա ․ և ինքնին ուսոյց թէ զխորդ պարտ է դաւանել զհայր և զորդի և զհոգի ոբ ․ և 'ի ձեռն առա- քելոց բացայայտ աւանդեաց զկարգ հաւատալեաց 'ի հանգանակին ․ զոր և եկեղեցւոյ ընկալեալ , նախ քան զամենայն զհաւատոյ դաւանութիւն պաշտօնեայ և մատուցանէ ։ Հին լուծ ․ խմմոյ զկարգ աստուծանու- թեան եկեղեցւոյ ․ իբր թէ քո զանազան գործովք եցոյց զաստուծոյ ըն- թերցողի , կիսասարկաւագի , և այլն ։ Բայց առաջինն յարմար է տեղ- ւոյս ։

(16) Եւ 'ի մէն ազօթանուէր ․ ըստ այսմ կարգի ասէ յեկեղեցւոջս , որ է տեղի նուիրման աղօթից , և լուսարան փրկաւէտ բարեաց , մատուցա- նեմք զայս կնդրուկ դաւանութեան , քեզ՝ Երէտուրբէնիտ , այսինքն փառա- ւորեալդ երկիցս ոբ երգով , այսու Բարբառով Բարէձնօրհնուբէ ․ այսու բա- նիւ օրհնութեան կամ գովաբանութեան ։

(17) Անբէրէլի էղէլոյ ։ անասանելի կամ անպարագրելի յարարածոց ։

(18) Բանակութէ Հէրնակնն ։ քանակից , բովանդակից համայն երկնից , որ տաս չափ կամ սահման ընդարձակութեան երկնից ։ և անսահման , ան- սահմանելի կամ անպարփակելի անդնդային խորոց ։ Ո՛չ միայնք պար- փակեն զքեզ , և ոչ ներքինք , այլ ամենայնի նոցա դու ես բովանդա- կիչ ։ փոխանակ բառին Ներէնայէն՝ մի օրին ․ զնէ Երէնայէն , վերպակաւ ։

(19) Լրուութէ ստսամանց ։ լուացուցիչ , կամ վերջին վախճան ամ մա- նաւոր վախճանաց ․ կամ , սպառեալ և եղծեալ իրաց լուացուցիչ , ըստ որում 'ի բնութիւն իրաց՝ յապականիլ միոյն՝ զայլ փոխանակ նորա յա- րուցանէ ած ։ Կամ , լրութիւն և կատարելութիւն ծայրից իրաց ․ այսինքն գերազանցութեանց յիւրաքանչիւր սեռի ․ իբր զի ած է լրութիւն գերակա- տար իմաստութեան , գերակատար զօրութեան , գերակատար սիրոյ , և այլն ։ Եւ Նախադրութէ սկզբանց ․ այլ օրին ․ Նախագրութէ , այսինքն նախկին ամ սկզբանց , և է նախկին գոյութբ , ըստ որում առաջին քան զամենայն սկզբունս՝ ած գոյ ․ նախկին արարչութբ , ըստ որում ինքն գոյացոյց զայլ սկզբունս ․ նախկին շարժողութբ , ըստ որում ինքն զնոսա շարժէ և մերձեցուցանէ 'ի գործ ։ Կմ , զերկու զայս դիմադրեալ խմմ այսպէս , դու միշտ լի ես , ուր այլք ամ սպառին ․ և միշտ նախագիր դու ես՝ յորժամ այլք սկիզբն լինին ։

(20) Մի ջերէց ․ մի էութիւն յերից անշփոթ անձանց ․ Ի Էրէս , երեք անձինք միոյ անբաժանելի Խոյուրէց , այսինքն խկութեան կամ էութեան , յոքնականն փոխանակ եզականի եդեալ ։ յերիս օրին ․ Էրէս՝ 'Ի մըս ան- հաղուածէլի Խոյուրէց , զոր մարթ է այսպէս ևս պարզել , երից անձնա- ւորական խկութեանց կամ անձանց , որք անհատուածելի են 'ի միոյն , այսինքն յէութենէն ։ Խոյութէ փոխանակ անձին ասի և այլուր ։ ( Յա- ճախապատում ․ դլ․ Ն․ եր․ 39) ուր Հայր ած՝ կոչի Պատճառ նոցունց

խկութենցն || . այսինքն անձանց որդւոյ և հոգւոյն :

(21) 'Ի վեր քան զմտաց ամբարձելութիւն՝ յարաձգեալ ամենայն ուրեք բովանդակ . 'ի մի օրին . յարաձգեալն կեանս զատանի 'ի հետևեալ բառիցն : Իմաստն է, առաւել քան զերկրութիւն կամ զանօրութիւն մտաց՝ որով անտրգել մնանէ և ընթանայ յամ տեղիս, ած անդր և ձգի անչափութեանն, որով բովանդակ ած ուրեք լինի :

(22) Անխառն կերպարան : Խկութի սիրոյ՝ որ անխառն է յակնաւութէ, 'ի շահասիրութէ, 'ի մթայուցիչ խորհրդոց :

(23) Անվրդովելի տեսութիւն : անսխալանալի տեսողութի, կամ անդրդուելի տեսիլ, և գեղեցկութի :

(24) Առատ արգասաւոր : տուրք կամ պարգև բազմարդիւն . կամ, սպահեստ՝ որ 'ի մնալն աճեցուցանէ արգասիս բարեաց :

(25) Վերամբարձութիւն : գերազանց բարձրութի, յոր չհասանէ ձեռն մտաց, կամ զօրութե և իշխանութե :

(26) Համապատիւն կցորդութիւնք : Զայս, և զյաջորդսն խմա 'ի թանձրացեալն . այսինքն համապատիւ կցորդելոցն, անպատում ազգակցացն, երեքլուսեան զուգակցացն, անյաեղուած լծակցելոց, այսինքն կատարելոց : Արդ առէ, Որդին Աճ, մի բարձրեալ . ( մի օր . բարձրացեալ . ) յերից համապատուացն՝ Բնութեան կամաւ՝ առ 'ի պատիւ Հօրն, գործակցութբ Հոգւոյն սբյ խոնարհեցաւ յարգանդ կուսին եւն : աննուաղ գո-ւոյն ընդունի տառաջն : 3 օրին . ընդունի :

(27) Անձեռացայ ութեան : Կազմեաց զմարմինն՝ որ էր տաճարն օրհնութեան՝ 'ի լուսաւոր և յանապատ անդամանի արգանդի կուսին : Զոր ընդ ամենակատար էութե ածութեն համանեալ, այսինքն գոյակից արարեալ զմարմինն յանանջրակի միակութբ, անբաժանելի միաւորութբ, բաժանական խառնութբ, նեղքն և սերտ կապակցութբ, յածութեն ոգի, յանմարմին ածութեն բաղադրեաց զգոյութի բանական հոգւոյն : Որովք ասել կամի, անձն որդւոյն ած յիւր ածութեն միաւորեաց անբաժանաբար զմարմինն, և զհոգին բանական :

(28) Անփոփոխելի էութեան : Միաւորելով անբաժանելի զմեր բնութեա ընդ իւրում ածութեն, այսու էբր անզերծանելի սանձիւ զիմ ապստամբութեա կամ անհնազանդութեա հանդարտեցոյց :

(29) 'Ի ծայրս սրբութե : Ծագելին կենսատու վերացաւ 'ի բարձրութիւն անձնաւորական փոխանակին խաչին, որ եղև գործի անմահութե : մի օրին . անմահանական, այսինքն որ անսահման եղև ըստ զօրութե և ըստ տեղւոյ . զի զօրութի խաչին յերկինս և յերկրի ներգործէ, և պատուի ոչ միայն յերուսաղէմ, այլ մինչև 'ի ծագս տիեզերաց :

(30) Աստուածութեան անընդմիջելի : Որդին ած մարմնացեալ՝ 'ի մահ վերաբերեցաւ, ածութեանն անբաժանելի գոլով 'ի մեր նմանակից մարմնոյն, որով կենսատու արար զխաչն՝ զգործին մահու : Աստուածութեան խաչեցեալ, խմա 'ի թանձրացեալն, այսինքն աշակիչն ած 'ի խաչի անդ միշտ առանց բաժանման կրելով ընդ նիւթական մարմնոյն :

(31) Երևեցեալնոյնութիւն : մի օրին . նոյնաբնութիւն :

(32) Նախնական պարգևս : այսինքն նստաւ հանդերձ առեցելով մարդկութեամբն 'ի գերակայ փառսն՝ զոր նախ ունէր ըստ պարզ ածութեանն :

(33) Ալֆա և օմեգա : Անուն զբան յայտն . իբ . 13 : * Ես եմ ալփայ և ով, սկիզբն և կատարած, առաջին և վերջին || : Եւ այս պատշաճի քրիստոսի ոչ միայն ըստ ածութեանն, այլև ըստ մարդկութե, որով 'ի կարգի շնորհաց և փառաց ինքն է սկիզբն և վախճան ամենայնի : օմեգայ

(34) Անտարին խոյ 'ի ենէ : այսինքն 'ի սկզբանէ համատարած խաւարին՝

որ կալեալ ունէր զաշխարհս, ամենածին ջուրք ծովու երևեցուցանէր զՔ֊ աւազանն մկրտութե֊, 'ի կատարումն աշխարհի, այժմեան խոր֊հրդոյս :

(35) Աշտճանս, այսինքն 'ներգործութիւս, գործս, ճգօրէնս. մի օրէն. ճգայինս :

(36) Զուգաբարեւ մաքրացման, այսինքն զեկեղեցի, կամ զՔ֊ սեղանն սրբարար, յորում մատուցանի արիւնն Քի֊, յարգարեաց, ևն : Բա֊նաւորս անձանց : Հոգին Ս֊ 'ի մէջ եկեղեցւոյ հրամայեաց առնել քաւու֊թիւս հոգւոց՝ սրբելով 'ի մեղաց, այլև ատաղձաւորս մարմնոց. որպէս և

Տր֊ Քս֊ 'ի բժշկել զմարմինն սրբէր բազում անգամ և զհոգիս :

(37) Գեր քան զջուր : Գերագոյն քան զջրոյ մկրտութիւնն՝ ներգոր֊ծեաց յառաքելսն. յորս բաց 'ի ներքին սրբութե֊ շնորհաց՝ որ լինի մկրտութբ֊, ազդեաց և զայլ արտաքս՝ լեզուագիտութե֊, սքանչելա֊գործութե֊, մարգարէութե֊ ևն : Այլև զկուռնելեանս մկրտեաց ա֊ռանց ջրոյ՝ իջանելով առ նոսա լեզուացն այլատարաղութբ֊ : ( գործոց.

Ժ. 44 : )

(38) Օծումն մարդայնոյն : Զհոգին Ս֊՝ օծումն կամ օծանող ասել Քի֊, պէսպէս խմանի : Ըստ գոյացական օծմանն՝ որով մարդկութիւնն 'ի Քս֊ աւի օծեալ անձնաւորական միաւորութբ֊ Ըն֊ բանին, հոգին Ս֊ աւի օծանող՝ ոչ 'ի ներքուստ, ( զի Ըն֊ այսմ բանն Ած֊ է օծանողն.) այլ ար֊տաքուստ, Ըն֊ որում գործ մարդեղութե֊ն արարողապէս յառաջ եկեալ 'ի բարութե֊ և 'ի սիրոյն Այ֊, առանձին իմն օրինակաւ ընծայի հոգւոյն սբ֊յ, որպէս և աւի յղանալ 'ի հոգւոյն սբ֊յ, ևն : Ըստ պատահական օծմանն՝ որ 'ի ձեռն հաճոյարար շնորհաց, հոգին Ս֊ է օծանող մարդ֊կութեան կամ բանական հոգւոյն Քի֊, ըստ որում գերագոյն լրութբ֊ շնորհաց 'ի ներքուստ միաւորեալ էր ընդ նմա 'ի սկզբանէ յղութեանն : Դարձեալ, ըստ իշխանական օծմանն՝ հոգւոյն սբ֊յ ընծայի օծանելն կմ֊ կացուցանելն զՔս֊ Ըն֊ մարդկութե֊ թագաւոր, քահանայ, և մարգարէ : Այս կոչումն հոգւոյն սբ֊յ, և խմսաք նորա հաստատեալ են 'ի բանն եսայ. ( կա֊. 1. ) * Հոգի Տն֊ 'ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս : || Որպէս և 'ի սաղմ. ( խդ֊. 8. ) * Վասն այսորիկ օծ զքեզ Ած֊ Ած֊ քո իւ֊ղով ուրախութեան, || ևն. զորմէ մարթ է տեսանել և 'ի մեկն. եբրայ.

Ա. 9 :

(39) Նորին տաճարաւ : Յետ ընդարձակելոյ զդաւանութե֊ երից Ածային անձանց, անցանէ 'ի դաւանութիւն եկեղեցւոյ ըստ կարգի հանգանա֊կին, որ ասէ : Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և առաքելա֊կան եկեղեցի. զոր Ս֊ վարդապետս ասածէ առ կենդանի եկեղեցին, որ են հաւատացեալք, և առ անշունչ եկեղեցիս, որ են տաճարք : Օ֊րինակ.ք պէսպէս գրեն զմակագիրս. ոմն զմանկեցիս միայն յիշելով, ոմն նաև զպոլիկեանս. և թուի եղեալ ոչ 'ի սբ֊յ վարդապետէն, այլ յայլոց՝ առ 'ի ցուցանել զխոտորութիւն յաջորդ բանից դաւանու֊թեաս. իբր զի գրեաց ընդդէմ թոնդրակեցւոց, որք սակս խառնակութե֊ զանազան աղանդոց՝ զանազան անուամբ ընկալան, այսինքն մանկեցիք, պօլիկեանք, կամ պաւլիկեանք, ևն. որք զեկեղեցի արհամարհէին, և զամ֊ որ յեկեղեցւոջ կատարի, ծաղր առնէին : Եւ զի սոքա 'ի տասնե֊րորդ դարուն միաւանգամ բազմացան 'ի հայս, նմին իրի վարդապետք ժամանակին ըստ բերելոյ պատեհութե֊ն գրէին ընդդէմ նոցա գովեստս եկեղեցւոյ, խաչի, մեռոնի, և այլ սրբազան անօթոց կամ արարողու֊թեց : Յորս և Անանիա վարդապետ նարեկացի գրեաց զպատմութիւն և զմերժումն պիղծ թոնդրակեցւոյն, զոր և յիշէ շնորհալին 'ի թուղ֊թըն 'ի միջագետս : Գոյ և այլ ճառ ներբողական 'ի շողակաթին, զոր

կիրակոս պատմիչ ասէ՝ արարեալ Անանիայի սանահնեցւոյ՝ յաւուրս կաթողիկոսացն Խաչկայ, կա՛մ Դէոսկորոսի, կա՛մ Պետրոսի։ 'Ի սոյն պատճառէ և սա՛ գրիգոր զյաջորդ ճառդ յօրինեաց. որպէս և զբանն՝ յաղագս փոյթի ժամանակին, և վասն սրբալոյս Մեսրոպին։ Զկատարեալ տեղեկութիւն Թոնդրակեցւոց տես 'ի պատմութեան։

(40) Զիջանողական խորան։ Գտանեմք ասէ՝ զտաճարս եկեղեցւոյ շինեալ յանշունչ քարանց, եթէ ոչ եթէ լոկ զմարմնական շինուածն գնելով նիւթ հաւատոյ, այլ ըստ որում նուիրեալ է 'ի բնակութիւն այ, և 'ի կատարումն սրբազան մատակարարութեանց, և եթէ այսպիսի պատուելի, և օրինադրեալ յառաքելոց անուն 'ի նորումս, որպէս և յին իսկ 'ի մովսիսական օրէնս. վասն այսորիկ յամենայն դարս և յազգս՝ ուրացողք և արհամարհօղք պատւոյ և պաշտամութեան եկեղեցեաց՝ ընդ հերետիկոսս դասեցան. որպէս և պետրոբրուսեանքն 'ի գաղղիա՝ յերկոտասաներորդ դարուն. որոց առաջնորդն հրով ընկալաւ զատապարտութիւն։

(41) Գերազանց գթա։ Ո՛չ է բաղդատութիւն ընդ երկնի երանելեաց կամ ընդ արքայութեան, որում երկրաւոր եկեղեցիքս՝ օրինակք են և իբր գաւիթ, այլ ընդ երկնի աստեղաց. որ թէպէտ և բարձր է դիւք և աստեղազարդ, բայց երկրաւոր եկեղեցիս ասէ՝ ամենայնիւ զարդարեալ է հոգևոր շնորհօք, և բարձր ըստ խորհրդոյն. և մանաւանդ երկրաւոր նիւթական տաճարն գերագոյն համարի քան զաստեղեայն, այնու զի քս որ գերիվերոյ ամենայն կայ քան զամ երկինս, աստ 'ի տաճարի կայ 'ի ներքոյ մր խորհրդոյն։

(42) Յառաքելականաց։ Վկայեն բազում պատմութիւնք, թէ 'ի ժամանակս առաքելոց շինեցան եկեղեցիք և մատրունք ը̄ ներքոյ տեղեացն. և զնոյն իսկ բան առաքելոյն. (ա. կորն. ժա. 22.) * Եթէ զեկեղեցեաւն այ արհամարհեցէք. || յաղագս նիւթական եկեղեցւոյ ևս իմանան բարսեղ, ոսկեբերան, հերոնիմոս, օգոստինոս, և այլք։ Կայ և հաստատուն աւանդութիւն, թէ զվերնատունն սիոնի առաքեալքն եկեղեցի արարին. զոր և կիւրեղ երուսաղէմ. կոչէ եկեղեցի առաքելոց։ (Կոչ. ընծայ. ժզ. 37:) Եւ մր վարդապետս ասէ զնմին, թէ 'ի վերնատանէն սկիզբն եղև հիմնարկութեան եկեղեցեաց. և յօրինակ սրբութեան սորա՝ հոգին մր նախ զտունն ելից հողմով, և ապա 'ի բնակեալսն 'ի նմա հանգեաւ հրեղէն լեզուօքն։

(43) Կանխաձեռն առաքելովն։ մի օրին. առաքելովք. Հոգին այ նախ զվերնատունն զարդարեալ լուսոյ հողմով, յօրինակ սրբութեան եկեղեցւոյ՝ ցուցանել թէ նախամեծար առաւելութիւն ունի եկեղեցի քան զբնակեալսն 'ի նմա։ Յետ լման եկեղեցւոյ՝ տուաւ բնակչացն [illegible]. մի օրին. [illegible]. այսինքն հրակերպ լեզուօքն նշանակեցաւ զանազան շնորհացն պատիւ։

(44) Յաւէտ քան։ Արիւնն քո մատուցեալ յեկեղեցւոջ՝ առաւել է քան զհաբելին. զի սա եղև ձայն գանգատոյ. զմահն և զվրէժխնդրութիւն բողոքէր. իսկ քո արիւնն առաւել ևս աղաղակօղն զկենդանութիւն մեր հայցէ։ (եբրա. ժբ. 24:)

(45) Ո՛չ երկնիւք։ պատարագն քո ոչ շառանայ 'ի բացի 'ի ներքոյ երկնից մատչել, եթէ ոչ ծածկոյթ 'ի վերայ ունիցի զձեղուն եկեղեցւոյն։

(46) Պարտաւոր արժան։ 2 օրին. պարտական։

(47) Զարեանն օրինաց։ Զարիւնն՝ որ էր օրինակ հոգւոյ, արտաքոյ խորանին մատուցանել՝ արգելեալ էր յօրինաց։ Զօրինչ ցայսվայր ասաց մր վարդապետս՝ յաղագս ոչ մատուցանելոյ զմծյին պատարագն արտաքոյ եկեղեցւոյ, հայի 'ի մերժումն պիղծ աղանդոյն Թոնդրակեցեաց. որք զմր խորհուրդն անգոսնէին իբրև զանխտիր սեղանս, ուստի և ոչ

պարտ համարէին խորել զսեղանի մատուցմանն ։ Այլա թէ ոչ՝ հարկն որ ոչ գխտէ զօրէնս, բազում անգամ ստիպէր արտաքոյ եկեղեցւոյ՝ յայլ պատշաճաւոր տեղւոջ ևս մատուցանել հանդերձ կարևոր յարգութեամբ . որպէս 'ի ժամանակս հալածանաց, 'ի բազմօրեայ պատերազմունս 'ի մէջ բանակին, և յայլ գիպուածս կարևորս ։ Զի և ո՞ր գրիգոր լուսաւորիչն զսեղան շարժական ընդ իւր շրջեցուցանէր, որպէս յիշէ յովհան իմաստասէր 'ի կանոնսն . ժբ ։

(48) Զի մ՛ յանգէտս անարգէլ ։ 2 օրէն . Հի մ՛ անարգէլ յանգէտս ։ Յեկեղեցւոջ մի է լուացումն կամ մկրտութիւն 'ի նոյն ջուր, ( ըստ առաք . հռովմ . զ . 3 . ) որ 'ի զօրութիւն մահուանն քսի, կամ յօրինակ մահու-նորա թաղմանն 'ի ջուրս ։ Այլա որպէս միանգամ էր մահն քսի, նոյնպէս միանգամ և մկրտութիւն . Հի մ՛ յանգէտս անարգէլ, զի մի՛ տծն բան՝ որ յանգէտ հրէից, կամ անգիտութեամբ անարգեցաւ 'ի խաչին, վերստին 'ի ծանուցելոյն ընտանեաց կրկնեսցէ . այսինքն 'ի ճանաչօղն կամ 'ի հաւատացօղն զառաջին մահն կրեսցէ ։ Անհնար է 'ի բանն ( եբրայ . է . 4 . ) ուր ասէ առաքեալն, անհնար է միանգամ մկրտելոյն՝ եթէ կործանեսցին 'ի հաւատոց անտի, միւսանգամ նորոգել մկրտութեամբ . իբր զի հարկ էր վերստին 'ի խաչ հանել զորդին այ, և դարձեալ խայտառակել, որ ոչ կարէ լինել ։

(49) Մի յեռնադրութիւն ։ Իմանի ձեռնադրութիւն, թէ դրոշմին, ( որ առվորաբար 'ի նոր գիրս գրութեամբ ձեռաց բացայայտի . տես գործոց . ը . 17 . ժթ . 6 ։ ) և թէ քահանայութեան, որք զինիք տպաւորելով անջնջելի են, ուստի և անկրկնելի ։ Եւ երկոքին լինին 'ի պատիւ օծութեան լուսոյն, պատուով օծման ձեռամբ . զի օծումն՝ պատուական և սրբազան իրաց է անկաւոր . միանգամայն զլուսաւորութիւն նշանակէ, և շնորհէ օծելոյն ։ Հի մ՛ յանբծութիւն . այս ձեռնադրութիւն և օծումն 'ի գործ ածի յեկեղեցւոջ, և այն միանգամ ևեթ, որպէս զի 'ի կողմանէ դրոշմին՝ յանբծութիւն հաւատոյն՝ զոր ընկալաք մկրտութեամբն, մի՛ խաբէութիւն ուրացութեան կամ մոլորութեան խառնեսցի . և 'ի կողմանէ քահանայութեան, զի մի՛ յանարգ կարգ քահանայութեան սպրդեսցի խաբէութիւն անարժան մարդոյ, կամ ոչ քահանայից ։ Վասն զի ընծայեալքն 'ի ձեռնադրութեան դրոշմին և քահանայութեան՝ հաւաստեաց վկայութեամբ և տեսութ նախլին, և անուանք նոցա 'ի գիր անկանին ըստ կանոնական սովորութեան եկեղեցեաց . որով խաբէութիւն ուրացողաց, կամ կարգաթողաց, կամ ոչ քահանայից 'ի յայտ եկեալ յանդիմանի ։

(50) Մի և հրաժեշտ ։ Զայս ոմանք ըստ հին լծ . իմացան զքաւութենէ՝ որ 'ի շնորհաց մկրտութեան . սակայն զմկրտութիւն յառաջագոյն եդ ո՞ր վարդապետն ։ Այլ ըստ կարգի՝ յետ մկրտութեան, և ձեռնադրութեան դրոշմին և քահանայութեան՝ իմանալի է զեկեղեցական ապաշխարութիւն ։ Եւ նախ՝ զխորհրդականն . որ քանզի իւրով զօրութեամբն բերէ զքաւութիւն, և որպէս ասի՝ 'ի գործոյ գործեցելոյ, վասն այսորիկ ասէ . հրաժեշտ, և ոչ ապաշխարութիւն, այսինքն քան թէ զօրութեամբ ապաշխարողական գործոց բերէ զթողութիւն ։ Իսկ զայս մ՛ ասէ, իբր ոչ եթէ միանգամ ևեթ արձակելոյ իշխանութիւն ունիցի եկեղեցին՝ ըստ չարափառութեան նովատիանոսաց, այլ թէ ճշմարիտ զղջացելոյն՝ միով բանիւ ևեթ և միանգամայն քաւէին տմ մեղք ։ Զի մ՛ ճշմարտութիւն, որ բայց միայն՝ զի ճշմարտութիւն զղջմանն և ուղղութեան՝ արտաքին կերպարանօք մի՛ ձևասցի . կամ զի մի՛ ճշմարտութիւն նոր օրինացս արտաքուստ միայն կործեսցի ուրել և քաւել իբրև զհին օրէնսն ։ Երկրորդ, իմանամք զկանոնական ապաշխարութեան, որ լինէր հրապարակաւ վն երևելի մեղաց՝ կռապաշտութեան, մարդասպանութեան, շնութեան, ևն . յորում քաւութիւն

պատժոյն առաւել 'ի շնորհաց քո՞ի կամ եկեղեցւոյ լինէր, քան 'ի զօրութէ ապաշխարութեան: Այսպիսի յայտնի ապաշխարութեն միանգամ եւեթ լինէր ըստ կանոնաց, որպ վկայէ տերտուղիանոս ('ի գիրս յաղագս Ապաշխար. գլ. Է:) Այլ և սրբն ամբրոսիոս. (գիրք Բ. յաղագս ապաշխ. գլ. Ժ.) ուր ասէ: * Որպէս մի է մկրտութիւն, նոյնպէս մի ապաշխարութիւն, որ հրապարակաւ կատարի: || Սոյնպէս և սրբն օգոստինոս. ('ի թղթ. ՃԾԳ. կամ ԾԳ:) Զի [illegible]. ըստ զի մի յանձնութէ այսպիսի ապաշխարութեան՝ ճշմարտութի քրիստոնէական կրօնի և ածպաշտութեան՝ կեղծաւորութեամբ ընկալցի 'ի կրկնամեղ քրիստոնէից, կամ իբր կերպարանօք յանձն առեալ կարծեսցի յանհաւատից:

(51) Մի [illegible]: Մի հաւատք քարոզի յեկեղեցւոջ 'ի համդերձեալ յարութիւն, որով համդիմանոյ ընտրութի արդարոց և մեղաւորաց. [illegible], մեղաւորաց իբրև լոկ բան ինչ նորաձայն վարդապետութե կարծեսցի. որպէս 'ի քարոզել պօղոսի առ աթենացիսն զյարութի մեռելոց, ասէին՝ զինչ է նոր վարդապետութիւդ, եւն: (գործ. ԺԷ. 19. 20:)

(52) [illegible]. 2 օրին. [illegible]: Երկուց գոյուեց որ 'ի մեզ, այսինքն հոգւոյն և մարմնոյն, մի իրաւացի դատաստան 'ի վերջնումն աւուր՝ քարոզի յեկեղեցւոջ. [illegible]. զի մի հոգւոյն միայն լինելով հատուցումն, թերի փոխարութի կարծեսցի [illegible]. յանմահ յարութեն՝ որով արդարքն որդեգրաբար պսակին յաւիտենն ած. զի յարութե որդիքն՝ ած որդիք են. (ղուկ. Ի. 36:) Այլ [illegible], այսինքն հաղորդութե կամ մանակցութե երկրային մարմնոյս թէ 'ի փառսն, և թէ 'ի տանջանս, կատարեալ տէրութի վերին թագաւորութեն ած յայտնապէս ծանիցի, թէ տէր է հոգւոց և մարմնոց, և զերկաքանչիւրսն իրաւամբք դատի:

(53) [illegible]: յայլ օրին. և 'ի հին լծ. [illegible]: Այս վեցեքին բանք, սխաւալ անուի. Մի [illegible], են ընդարձակ բացատրութիք յետին մասանց Հանգանակին, որ ասէ, [illegible], եւն. զմին առեալ 'ի վերայ այլոյն զկնի եդելոց, այսինքն մի մկրտութի, մի ապաշխարութի, մի յարութի, մի դատաստան, մի կեանք յաւիտենական:

(54) [illegible]: Թագուհի յարգէլի: Եկեղեցի անուն՝ առ յոյժ իգական է, վասն այն իգական անուամբ՝ թագուհւոյ նմանեցուցանէ. ըստ որում իբր թագաւորական իշխանութե [illegible] հոգևոր՝ խորհրդով հաղորդուէ. [illegible], մերժելով զմահ մեղաց 'ի ձեռն մկրտութե և ապաշխարութե. այլև 'ի մարմնաւոր մահուանէ սպրեցուցանելով զփոխուցեալսն 'ի նա, [illegible], ծառոյն կենաց, որ անկենդան գոլով՝ ճաշակողին կեանս տայր, և 'ի մահաբեր ախտից պահէր:

(55) [illegible]: Ջրանական պատկերն ած զմարդն՝ զոր բանական ծնօղքն ծնան, եկեղեցին անշուէշ՝ կատարէ և կրկին նկարէ 'ի ձեռն շնորհաց:

(56) [illegible]: Եկեղեցին ձևովն և ներգործութեն նմանութի համարեալ է կամարին երկնից, [illegible]: Այս՝ եթէ զերկնից իմասցի, իբրև թէ յառաջ քան զհրեշտակս կառուցեալ իցէ յած, էր կարծեք սակաւուց նախնեաց՝ ակակիոսի, և գեննադիոսի, զոր և սբ վարդապետս թուի ակնարկել 'ի գանձն եկեղեցւոյ, յասելն: * Որ յրսկզբնաձեւն յառաջակառոյց զայս կերպարան հրաշազարդ իբր հաձեցար լինել. նախ՝ զընակն, ապա զբազմեալն: Զգեցեր զերկինս, և

անդ զերկնայինսն, ևն ||: Բայց այս չէ ընդունելի ըստ հասարակ կարծեաց: Սակայն ըստ կարգի բանին՝ յորում երկու ածականքն [illegible] [illegible], են ուղղական հոլով համաձայն գոյականին [illegible], պարտ է իմանալ զեկեղեցւոյ, այսինքն եկեղեցի գոլով նմանութիւն երկնից, յառաջակառոյց է քան զբնակեալսն յինքեան հրեշտակական զօրութիւնս: Զի եկեղեցին նախ կառուցանի, և ապա օրհնի տուն ԱՅ, որով լինի բնակարան հրեշտակաց: Եւ այսու գիմագրական առաւելութիւն ինչ ընծայէ եկեղեցւոյ, քան երկնից. իբր զի երկինք ոչ կառուցան յառաջ քան զհրեշտակսն բնակեալս. իսկ եկեղեցի յառաջ քան զբնակիլ հրեշտակացն կառուցանի:

(57) [illegible] [illegible]: Նորօրինակ թռչունս կամ թևս տայ մարմնոց մերոց՝ կարի զանազանեալ 'ի բնական թռչնոց. ընդ [illegible] հոգւոյ, թեթևութք կամ թեթևացուցանելով զհոգիսն 'ի մեղաց. և զի զհոգիսն երկնային պարգևօք յերկինս թռուցանելով, ընդ նմին և մարմինքն թևակից լինին. որով [illegible]՝ հոգւոյն հարստութն, [illegible] մարմինն մեծարէ: Արթ է և իմանալ զպարութիւն մարմնոց այնոցիկ՝ որ ընդ հովանեաւ ՏՐ եկեղեցւոյ թաղին. իբր զի սրբութք տեղւոյն գոյ յոյս՝ թէ մարմինքն թաղեալք ընդ նորա հովանեաւ՝ յարիցեն 'ի կեանս փառաւոր:

(58) [illegible] [illegible]: Եկեղեցին ոչ պղծի յուրոց մեղաց կամ աղտեղութեց. այլ միայն յորժամ կոխի 'ի մարդոց չարաց՝ ոյց մուտն արգելեալ է 'ի կանոնաց, և կամ [illegible]:

(59) [illegible] [illegible] է: Է կնիք ինչ զարմանալի՝ յորում գաղտնի խորհուրդք փակին 'ի վեր քան զմիտս. և որպէս անկենդան կնիքն յարհեստաւորէն շինեալ, օգնէ բանականաց 'ի վճիռս և 'ի մուրհակս, այսպէս և եկեղեցին:

(60) [illegible] [illegible]: Ըստ շարագրութեն՝ [illegible] իմանի խնդիր մեծ բաւին, որ զօրութք կրկնելի է. այսինքն եկեղեցին մեծ է քան ըզմարդ, որքան մեծ է ընտրեցելոյն մովսեսի, այսինքն քան զընտրեալն մովսէս ցուցն նորա յաղթողական: Նոյնպէս 'ի յաջորդն, [illegible] [illegible], կրկնելի է, որքան քան զահարոնն: Ըստ այսոցիկ և յաջորդն, [illegible] [illegible] [illegible], յերկս օրինակս գրի առանց [illegible]: Այսու օրինակօք բացայայտէ զյառաջասացեալն, թէ եկեղեցի անշունչ 'ի բանականէն շինեալ օգնուն տայ նմա. որպէս և գաւազանք մովսեսի և ահարոնի, այլև մաշկեակն եղիայի՝ 'ի մարդկանէ արարեալք, առաւել զօրացան քան զմարդիկ 'ի նշանագործութիւն. և մարդիկ նոցա նպաստիւք առնէին մեծամեծս:

(61) [illegible] [illegible]: Թուի ակնարկել 'ի վէմն՝ որք ընդ բազկօքն մովսէսի եդեալ, զօրացուցանէին զձեռս նորա ընդդէմ ամաղեկայ. (Ելից ԺԷ. 12:) Այսպէս եկեղեցի թէև 'ի վիմաց շինեալ, օգնութն պարգևէ ձեռաց քահանայից՝ կրկին կատարելութք, քան զոր տայր վէմն մովսեսեան, [illegible], մերձելով զձեռս քահանայից, քան թէ [illegible], իբր զէն լինելով: Կամ, [illegible], օգնութն տայ ձեռաց քահանայից առ 'ի մերձել զայլս խորհրդովք եկեղեցւոյ, և ոչ թէ զէն տալով 'ի ձեռս նոցա առ 'ի սպանանել զյանցաւորս, որպէս լինէր 'ի հին քահանայութեն քարկոծմամբ, ևն:

(62) [illegible] [illegible] [illegible]: Յերկուս օրէն. այսպէս զատանի. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]: Թ նկաթ գոլով 'ի քարէ և 'ի հողոյ՝ բնութիւնակից և հաղազատ երևի զգայնոց և սրբոց:

(63) [illegible] [illegible]: Զհաստատելուչ ներգործութիւն հակառակս

միմեանց՝ ընծայէ եկեղեցւոյ. զի որպէս զկէտն քո՛ 'ի կործանումն է ան-հաւատից, որք նախանձին ընդ պայծառութի նորա. և 'ի կանգնումն հաւատացելոց, որք խնդան և մեծացուցանեն զփառս նորա։ Իբր դա-տօղ հոգւոյ՝ անիծանէ զանհնազանդսն, և օրհնէ զհնազանդեալս։ Իբր քննօղ դատաւորաց՝ ըստ հրապարակէ, զդատապարտելին հրատարակէ. և ըստ փածէ, զզղջացեալն դարմանէ, կամ մնուցանէ։ Առ ինքն կոչէ յա-նուանէ զերախոյս մկրտելս, և զձեռնադրելս, որոց կոչումն լինի յե-կեղեցւոջ. և այսու եկեղեցին լինի իբրև հրամանատար էկզս արարածոց՝ նման Ա.Յ, որ զամենեսին յանուանէ կոչէ՝ ըստ բանի սաղմոսին։

(64) Ըմբռնէ զհոգևորս։ Որպէս զհոգևոր մարդիկ, Իբր զնախարարութիւն, իբր ուռկան՝ արուեստին իւր կալեալ. կամ, խնամոց և որոշէ զհոգևոր մարդիկն 'ի չնչաւորաց՝ իբրև հնարիւք կամ ճարտարութեամբ գիտու-թեան իւր։ 2 օրին. դնի. զհիմնադրութիւն, այսինքն իբրև հիմնարկեալ ձե-ռամբն իւր։

(65) Անմեղ. անմեղութբ և առանց սխալանաց կամ խոտորելոյ, ըստ օրինակի անուոյն եզեկիէլի ընթանայ զկնի հետոյն քո՛ի։ Այս՝ բանա-կան եկեղեցւոյն յաւէտ պատշաճի ըստ առաքելոյ. (եփես. Ե. 24. 27)։

(66) Կանոնաւ խորէ։ Այնչափ մեծ սրբութի ունի յինքեան նիւթա-կան եկեղեցին, մինչ զի զբանականն եղեալ 'ի պատկեր իւր, խորհելով առ ինքն ընդունի. զի ոչ կարգաւ՝ և կանոնաւ ընդունի զերախայսն, այլով զհորսկնութիւն, այլով զիւրաքանչիւր դաս աշակերտաց. այլ կանոնաւ զաշխարհականս, և այլով զեկեղեցականս։ Իսկ եթէ յեռ այնպիսի ընտրութենէ՝ բանադրեալ ոք, կամ երախայ, կամ աշակերտող, կամ այլ ոք անարժան մտանիցէ, ինքն ոչ պղծի, և ոչ նշովի, այլ փե-ղի փայ. այսինքն ներէ անդխտողացն զչափ սրբութե նորա. կամ թէպէտ յինքեան ոչ պղծի, սակայն յանձն առնու արտաքուստ համարիլ պղծ-ծեալ վասն ոչ գիտողացն զսրբութի նորա. զի յետոյ օրհնութբն ցուցցէ թէ որչափ սրբութիւն պահանջէ եկեղեցին։ Ուշանի, փակմամբ կամ աւերմամբ՝ վասն իւրոց յանցանաց, այլ վասն մերոցն։

(67) Երկիցս մատչիլ։ Ո՛չ թոյլ տայ հաւատացելոց երկիցս յաւուրն մատչել յընդունելութի քրի հաղորդութե, որ է իբր ըմբռնել զկենդա-նարար տօս քո՛ի, ըստ պիտական անձանց խորհրդոյն. որպէս տէրն ոչ թոյլ ետ մոգդաղենացւոյն երկիցս ըմբռնել զոտս նորա. (Յովհան. Ի. 17։) այլ միանգամ միայն ընդ այլոց կանանց. (մատթ. ԻԸ. 9։) Եւ այս նմանութի փրկչին ունի զմեծ խորհուրդս. որոց մին այս էր, այսինքն ոչ երկիցս յաւուր ընդունել զքս խորհուրդն։ Կամ, տէրական խոր-հուրդ խմա զնոյն իսկ խորհուրդ հաղորդութե. և միւս բանին ձևանց այսպէս. ոչ թոյլ տայ երկիցս յաւուր մատչել յոտս քո՛ի ըստ ընդու-նելութե խորհրդոյ մարմնոյ և արեան նորա։

(68) Ո՛չ երկիցս յաւուր։ Ո՛չ երկիցս յաւուրն պատարագէ 'ի վերայ նոյն սեղանոյ. որպէս էր հին սովորութիւն, մանաւանդ արևելեայց, զոր և ցայժմ պահեն յոյնք։ Կամ, ո՛չ երկու անգամ յաւուրն, այսինքն յա-ռաւօտու և յերեկոյի թոյլ տայ պատարագել. որպէս 'ի հին օրէնս սո-վորութի էր առնել պատարագս առաւօտինս և երեկորինս. (թուոց. ԻԸ. 4։) Իսկ եթէ 'ի վերայ նոյն քահանայի խնդրի՝ ոչ պատարագել յաւուրն երկիցս, այս հայի 'ի սովորութի արևելեան եկեղեցեաց. զի յարևմտեան եկեղեցին գոյ յիշատակ յեօթներորդ դարէ անտի, թէ չէր արգելեալ քահանայից նոցա կրկին պատարագել յաւուրն։ Զի Ք. անընդհատաբար. զի մի՛ յաճախ պատարագելովն՝ սովորութի եղեալ, ան-մտածութբ և առանց յարգութե՝ նուաստանն, նուէր պատարագին սր-

համարձեցի ։ Ոմանք ըստ հին լծ · խմման 'ի վերայ սեղանոյ պատարագին ։

(69) Վշտակցէ ճարէտը ։ Իբր բժիշկ առողջ վշտակից և դարմանիչ լինի ամենայն ախտից հոգւոյ և մարմնոյ, Տէր անախտակիր, ինքն ազատ գոլով յամենայն ապականութենէ ախտից · զի եթէ տաճարն սողոմոնի լինէր դարման ամենայն ախտից հոգեկանաց և մարմնականաց, ըստ աղօթելոյն Նորա · (Գ · Թագ · Ը · 29 ։) որչափ ևս առաւել եկեղեցիք քրիստոնէից, յորս ապաստանին մեղաւորք, հիւանդք, դիւահարք, փորձանաւորք, և այլք ։

(70) Կրկին Երջանկական ։ Կրկին ևս երջանիկ քան զնոյեան տապանն · զի ոչ միայն զօժանդակեալսն 'ի Նմա՝ պահէ 'ի հեղձմանէ մարմնոյ և հոգւոյ, այլ և ծնանի և բազմացուցանէ մկրտութեն, սնուցանէ հաղորդութեն, և զարդարէ այլովք խորհրդովք · Թող զայլ առաւելութիւնն՝ զոր 'ի կարգին յիշէ մինչև 'ի բանն Պարգեւաւ Տէր պատարագաւն ։

(71) Փոխել 'ի նենգութենէ ։ Եկեղեցին իբրև հետևող հոգւոյն, (Իմաստ · Ա · 5 ·) ընդունի յինքն զանիրաւն առ 'ի սրբել, բայց ոչ զնենգաւորս · որպէս և տապանն Նոյի ոչ ընկալաւ առեն զօձն ։

(72) Ու 'ի Բողոք ։ Տապանն Նոյի շինութ լուրով զմահ բողոքէր ամենայն մարդկան · իսկ եկեղեցին կեանս աւետարանէ 'ի շինել լսրուամ ։

(73) Յարատեւած ։ Ո՛չ իբրև զտապանն Նոյի, կամ զխորանն վկայութեն՝ անդադար շարժի և փոխի տեղւոջէ 'ի տեղի · այլ հաստատուն կայուցանի 'ի տեղւոջն · զի չէ օրէն փոխել զտեղի եկեղեցեաց, կամ զտեղի ուր եկեղեցի հիմնեալ է, փոխել յաշխարհական շինուած ։ հաստատէ ։ մի օրին · հաստատեալ է ։

(74) Որդեօ Ճերդարան ։ Նիւթական եկեղեցին իբրև նմանութիւն անտանջ էին, աննիւթ կամ անսահմանելի էին այ, որք և տապանակն մովսեսեան՝ որ զած երևեցուցանէր, առաջնորդ լինելով տեղի պատրաստէ յերկինս ։

(75) Ընդ ուխտին · ի ողջ ։ (Ե · Թագ · Զ · 7 ·) անփոփոփ, անդէն վաղվաղակի սատակէ, Եթէ ոչ խոնարհէ, իբր զնաչ՝ 'ի չորից կողմանց ընդակօքն, յոգի Բէբէբէ, յանձին կամ յուս բարձցի, կամ 'ի հոգւոջ կրեցի · քանզի և ոզա յայն սակս պատուհասեցաւ՝ առեն ոմանք, զի ոչ ետ հրամանին այ ընդակօք տանելոյն զտապանակն, այլ 'ի սայլի եդեալ երինջովք ձգելոյ ։ Այսպէս և եկեղեցի պատուհասէ զայնոսիկ, որք ոչ մերձին առ Նա հաւատովք և երկիւղածութ, այլ անասնական երկրպագութ հոգւով մատչին իբրև յանօթ ինչ անոք և ձեռամբ շօշափելի ։

(76) Ընդամենայն Հարդոյ · այլ օրին · Հարճոյ կամ Հարճոյ ։ Ո՛չ մարմնեղէն լեզուաւ խօսի նիւթական եկեղեցին, այլ Բանիւ հրեշտակաց, այսինքն հոգևորապէս · կամ միջնորդութ հրեշտակաց · որպէս 'ի մովսիսեան խորանին և 'ի սողոմոնեան տաճարին բազում անգամ պատգամք լսելի լինէին 'ի ձեռն հրեշտակաց · կամ դարձեալ, հրեշտակ իմն պառաջնորդս և զքահանայս ըստ պօղոսի · (Ա · կորն · ԺԱ · 10 ։ ) որոց լեզուաւն խօսի եկեղեցին ։ Ու անձայն փառաբանութենէ · չունի կազմած ականջաց, և սակայն արդարապէս լսէ զաղաչանս, զուխտս, զարհամարհանս, և զանէծս մարդկան ։ Ու ձայն, չունի ձայն յօդաւորիչ, և սակայն զհրամանս և զգործս յոյժ ամենեցուն ծանուցանէ 'ի ձեռն պատկերաց, և քարոզութ պաշտօնէից ։ Ու խաղաղութեան, չունի զշարժումն խաղաղեաց շնչաւորացն · և սակայն իբր անծայրին կենդանի հաղաղաւ ազդ առնէ ։

(77) Երկնաւոր հաւատօք ։ Որպէս վասն տապանակին հրամայեաց յեսու, զի երկու հազար կանգնաւ հեռի տարցի 'ի ժողովրդենէն, (Յեսու, Գ · 4 ։) և այնպէս ժողովուրդն թէպէտ և էր գունդ այ, և կենդանի տա-

ցեալք 'ի հարուածոց անապատին, սակայն վասն անորոշութեան հեռի 'ի տապանակէն գնային ։ Այսպէս և այժմ եկեղեցին ԸՆԴ ՆՈՒՆ, ընդ հրէիցն՝ հեռացուցանէ յինքենէ իբրև անսուրբ զայն քրիստոնեայս՝ որք ջեռեալ են մեղաց ախտիւ. և հետ 'ի ձեռն քահանայից և կանոնական ապաշխարութեան ՈՒՂԷՆՉԷ, առաջնորդէ ապրեցելոցն յեգիպտական աղխատագործութեանց, որք են անհաւատութիւն և այլ մեղք ։

(78) ԼՈՒՍԵՂԷՆ ԱՅ ։ Աստուածոր էութիւն ոչ 'ի պարզ աստուածութեան մնացի, այլ 'ի Քն մարդացեալ, որպէս և բացայայտէ՝ այ ՃԱՌԱԳԱՅԹ ԷՂՋԵՐՈՅ, ուստի և խմանի՝ նոյն ինքն ԱԾ մարմնացեալ Քն, ըստ անուան եկեղեցւոյ ՎԷՄ կոչեցաւ յառաքելոյն. (ա. կոր. Ժ. 4.) այլև 'ի մարգարէից տեսլեամբ և բանիւք գուշակեցաւ ։ (Եսայ. ԻԸ. 16 ։ Դանիէլ. Բ. 44. 45 ։ Զաքար. Գ. 9 ։) Եւ ըստ նմանութեան վիմին որ զխարայեալանն արբոյց յանապատին, ինքն ևս արբոյց զհաւատացեալս յաղբերէ կողին իւրոյ ։

(79) ԱՐԵԱՆ ԵՐԱԽՏՈՅ ։ Ո՛չ եթէ արեան շարժմունք յերակս կենդանացուցանէ և պահպանէ զեկեղեցին, որպէս յայլ կենդանիս, այլ շնորհօք ածային լուսոյն 'ի ներքս թափանցեալ ։

(80) Ո՛Չ ԽՈՂՈՎԱՆ ։ Ո՛չ սողմնի կամ զօրաբարելի ԱՒԵՏԱՐԱՆԻ, վերակացութիւն կամ գործակալութիւն, որք մաշկանացուք էին, այլ ամենակալին այ ճշմարտութիւն գծագրէ զեկեղեցին ըստ խորհրդական նշանակութեացն ։ Եւ թէպէտ զգծագրութիւն տաճարին ևս յայ առաջնորդութեան 'ի ձեռն գաւթի ընկալաւ սողոմոն, սակայն այժմու եկեղեցեացս շինութիւն խորհրդական և յոյժ բարձրագոյն է, ևն ։

(81) ՏԱՆ ԵՐԿՐԱՅԻՆ ։ Յակոբ անօթ և հասարակ իւղով օծանելով զվէմն, տուն այ կոչեաց զտեղին. (ծննդ. ԻԸ. 19 ։) Իսկ ած արեամբ միածնին օծանելով զեկեղեցին՝ 'ի ձեռն պատարագին, ոչ եթէ տուն նիւթական կնքէ զորգիս եկեղեցւոյ, այլ մարմին երկնային և լուսաւոր, իբրև զհրեշտակսն՝ որք եղանէին և իջանէին Ը սանդուղին ։ Ո՛Չ ԿԷՆՍԱՂԱՅ ։ ոչ ծնունդս յղացեալս յերկրէ կենցաղոյս, այսինքն 'ի մարմնոյ և յարենէ մնուցանէ, այլ երկնից ժառանգս ևն, ՎԻԾԱԿ ԻՐ, զգրգեալս 'ի ծոցի խաբուլ խորհրդովք և ուսմամբք, 'ի գոգն աբրահամու յերկինս մատուցանէ ։

(82) ՀԱՐԱՆՈՒԹԷ ԱՈՐՍ ։ Նիւթական եկեղեցին՝ անուամբ բարոյական եկեղեցւոյ սոսի հարսն. զի որպէս այն՝ քնի նուիրի հաւատով, այսպէս և շինեալ եկեղեցիք օծմամբն ընծային քնի ։ ՕՐՀՆԱԲԵՐ ԱՐԻՆ, կառուցանօղք օրհնիչք՝ և սպասաւորութեցինք եկեղեցեաց՝ եղեն ոչ հայրապետքն ։

(83) ՄԱՏԱՂԱՑԱՆ ԱՆՁՆ ։ Այսու զհայհոյիչ սուտ թմնգրակեցեացն 'ի գլուխ նոցին շրջէ, որք զեկեղեցիս արհամարհէին իբրև հեթանոսական շինուածս, կամ 'ի նոցին սովորութեն առեալ ։ Ո՛չ այդպէս սաէ, այլ մանաւանդ մատուցանէ զփրկարան բարձունս կատարչաց. զի զՃշմարիտն ած ամենեցուն ծանուցանէ. սաարայացուցանէ զսուտ դիւաշնչեալս, զի քն 'ի սմա երկրպագի. քակտիչ է կեղծեալ անտառաց հեթանոսաց, զի քն ըստ նմանութեան կենաց փայտի դրախտին՝ 'ի սմա պատարագի. խորտակիչ է ամ ՅՈՒՇԱՐԱՐՆ ԱՐՁԱՆԱՑ, կախարդական քարանց, զի վէմն քն գովեալ 'ի մարգարէից, այլովք քարամբք՝ առաքելովքն և սրբովք հաստատի 'ի սմա ։

(84) ԱՂԱՒ Է ։ Ո՛չ միայն բարոյական եկեղեցին ազատ է 'ի լծոյ հին օրինաց, այլ և նիւթական եկեղեցին ազատ է 'ի հարկաց իշխանաց, և յայլ քաղաքական պարտուց. Ը որովք անկանին անօթ ռուլեք ։ Ակնարկէ 'ի բանն. գաղատ. (Դ. 26.) Վերինն երուսաղէմ ազատ է ||. և այլն ։

(85) ՕՐՀՆԱՒ ։ Նիւթական եկեղեցին ոչ այնպէս օրինակ է վերին սիոնի

արքայութեն, որպիսի էր երկրաւորն Երուսաղէմ. զի սա իբրև ստուեր՝ մարմնաւորապէս միայն երևեցուցանէր զերկնաւորն Երուսաղէմ. իսկ եկեղեցին մանաւանդ Ճշմարտութեն նմին ճանաչի. այսինքն իբրև բուն իսկ վերինն սիոն համարի՝ որպէս մասն նորա և նախադուռն. զի ՚ի սմա սկսանին տմ ճոխութիւնք արքայութեն, և անդ կատարին. և զի ՚ի սմա իրօք բնակէ քս ած ՚ի խորհուրդ սբ սեղանոյն:

(86) Կռապաշտութեն կարգաւ: Ո՛չ ըստ կարգի, կամ ըստ բնադատութեն կռապաշտական օրինացն՝ Բագինն, տեղի պատկերաց սուտ ածոցն, յորոց սպառնալիք պատժոց լսելի լինէին. և բազում անգամ դիւական զօրութբ պատասխանէին զմարդիկ: Ի հին տաճ օրէնսն. ըստ պարտաւորութեն հին օրինացն՝ տեղի պատասխանաց օրինազանցիցն. զի յանցաւորք հին օրինացն՝ յառաջ կոչէին ՚ի խորանն վկայութեն, և անդ յանդիմանեալք յայ՝ պատժէին. որպէս ահարոն և մարիամ, կորխ, դադան, ևն: Իսկ եկեղեցին ըստ հակառակին՝ է տեղի պարգևաց բարերարութեն ած, և տեղի հաշտութեն յանցաւորաց:

(87) Սրբանի երբէք: այսպէս դնի յընտիր օրինակս. ուր այլ տպագիրք ասեն, ու ոչանի. բայց առաջինն առաւել յարմար է. այսինքն ոչ խախտի կամ այլայլի յերկրէ ձևոյն. այս ոչ միայն ըստ տևողութեանն իմանի, իբր զի մինչև ՚ի կատարած աշխարհի լինելոց են կառուցմունք եկեղեցեաց, այլ և ըստ արտաքին ձևոյն. զի ընհանրական ձև կամ արարուած եկեղեցւոյ միօրինակ պահի յամենայն ազգս. այսինքն որոշումն խորանին և բեմին, և դասին, և տաճարին, և գաւթին. և եթէ յայտնի մանր փոփոխմունք եղեալ իցեն, կամ լինիցին, միշտ յառաւել փառաւորութի եկեղեցւոյն լինին. զի ոչ միայն սրբազան կատարողութիւքն է Երկին Երկնի, այլ և նմանութբ կամարայարկ ձևոյն, և որոշմամբ կայանիցն, յորում զանազան դասք աստիճանաւորաց՝ և ոչ աստիճանաւորաց՝ որոշեալք տեղեօք և պաշտամամբք՝ երևեցուցանեն զզանազանութի դասուց հրեշտակաց յերկինս:

(88) Առանց հօրն: Որպէս չէ հնար կատարիլ հոգւով, կամ վերածնանել առանց հօր ած, նոյնպէս և ոչ առանց արգանդի մօրս եկեղեցւոյ, այսինքն առանց աւազանին մկրտութեն:

(89) Անտուն շրջէր: 2 օրին. յանտուն, իբր մակրայ, առանց տան, կամ բացօթեայ շրջի անբովանդակելին ած, եթէ ոչ կայցէ եկեղեցի. որպէս զտապանակէն ասէր ած. (Բ. Թագ. Է. 6:)

(90) ՚Ի կամար երկնայինն: Առաւել պարծի ած ՚ի նիւթական եկեղեցիս՝ քան յերկինս. յորում եթէ երկինքն առցի ըստ բնական վայելչութեն, ահա յայտնի է բաղդատութին. զի սա յեկեղեցւոջ անբաւ վայելչութիւնք շնորհաց գտանին: Իսկ եթէ երկնիւք իմասցի արքայութին, ճշմարտի բաղդատութին, ըստ որում յարքայութեն՝ ած երանացուցանէ զարժանաւորսն՝ որ է գործ արդարութե. իսկ սա յեկեղեցւոջ՝ արժանի երանութե առնէ զանարժանսն, որ է գործ անբաւ ողորմութեն ած, որով առաւել մեծարի ած՝ քան առաջինովն. որպէս ասաց և ՚ի բանն ժզ. 1: Սոսա ըստ այսմ մասին, (և ըստ այլ ևս բաղդատութեց, զոր թողումք վասն համառօտութե,) եկեղեցին առաւել պարծելի է ած, քան արքայութին երկնից. թէպէտ և ըստ գերազանցութեն՝ առաւել է արքայութին քան զեկեղեցին: Սակայն մանր ևս հայելով ՚ի կապակցութի անցելոյ բանին, յարմարագոյն թուի կամար երկնային անուանել զբուն երկինս՝ իբր աթոռ փառացն Այ, այսպիսի ունելով միտս: Քանզի ասաց նախ, թէ ոչ ունիցի տրն բոլորից հանգստարան խոնարհումն գլխոյ՝ եթէ ոչ յեկեղեցւոջ մտեալ իջևանեսցի. մարթ էր տարակոյս ընդդէմ բերել, զիա՞րդ երբէք անտուն և անհանգիստ լինիցի Ած առանց

եկեղեցւոյ , այն որոյ աթոռ և բնակութիւն՝ երկնից երկինք են ։ Այլ ա-
սէ , չէք յայդմ հակառակութիւն . վասն զի առաւել պարծի Ած , ա-
ռաւել զուարճանայ և հանգչի 'ի նիւթական եկեղեցի մարդկանս հան-
դերձ՝ քան ընդ վերին երկինս . քանզի զայն անաշխատաբար արար Ած՝
ասելով եւեթ , իսկ զեկեղեցի ստացաւ արեամբ . երկնից՝ արարիչ միայն
է , իսկ եկեղեցւոյ՝ փրկիչ . երկինք 'ի պէտս եկեղեցւոյ արարեալ , իսկ
եկեղեցի 'ի փառս Այ . այն՝ ճեմարան ծյ , և այս՝ հարսնարան . և
վասն այսորիկ կարէ Քս մեկնիլ յերկնից , բայց յեկեղեցւոյ ոչ երբէք ։
(91) ԱՆԵՐԵՒՈՒԹԻ ՓԾԷԱՆ ։ Աներեւոյթ փառքն ածայինն՝ որ լուսափայլ
երեւեցաւ 'ի դէմս Մովսէսի , և յօրինակն եկեղեցւոյ՝ որք են խորանն
վկայութեան , և տաճարն սողոմոնի , անհանդուրժելի եղև հնոյ ժողովր-
դեանն , մինչ զի փախեան յերեսաց Մովսէսի , և 'ի տաճարէն խոյս
ետուն քահանայքն ։ Եւ սակայն նոյն փառք այժմ 'ի ՏՕՆ ՀԱՆԴԻՍԻ ,
հանդիսաւոր առնախմբութբ եկեղեցւոյ , 'ի հաւատացելոցս աներկիւղ
համարձակութբ ԽՄԲԵՑԱՒ ՆԱՒԱԳԻ , միահամուռ բարբառոյ ընտանեբար ։
Անդ 'ի զգալի լուսոյն զարհուրեալք տեղի տային , աստ յեկեղեցւոջ
'ի բունն էական լուսոյն համարձակին մարդիկ ։ Աւ. օրհնի ։ Նոյն ինքն Ած
և մեծութիւն նորա կրկնապատիկ բաղձանօք օրհնի յեկեղեցւոջ , քան յե-
դեմական դրախտին . վասն զի անդ տուաւ անմեղութիւն պարգև միայն ,
այլ ոչ թողութիւն . յետ արտաքսելոյն անտի ադամայ՝ ոչ ևս այլ թողու
նմա մտանել անդր յետ ապաշխարելոյն ։ Իսկ յեկեղեցւոջ առատանան
պարգևք և՛ անմեղութիւն և՛ թողութիւն . եթէ վասն մեղաց արտաքսեսցի
ոք աստի , գոյ անդրէն յոյս մտից 'ի զղջանալն ։ Եւ դարձեալ , 'ի դրախ-
տին փափկութիւն լինէր օրհնութիւն Այ ըստ երկրաւոր գեղեցկութեան .
իսկ յեկեղեցւոջ՝ երկնաւոր բարեաց ճաշակումն է ։

(92) ԱՇԱԾՆԻՆ ԵԿԻ ։ Եթէ ծածանին պատկեր և նմանութիւն համարեսցի
ոք զեկեղեցի , ոչ ԱՆՕՐԻՆԻ , ոչ արտաքոյ ճշմարտութեան խորհի , ոչ սխալէ .
ոչ անպատիւ առնէ զխորանն . ըստ որում և եկեղեցին կուսութբ 'ի
ձեռն աւազանին ծնանի որդիս ծյ , որպէս և աստ զնի . այլ և զնոյն
ինքն զՔս օր ըստ օրէ ծնանի խորհրդաբար 'ի պատարագին ։

(13) ԲԱՐԵՆԻ ԵՍ ։ Ըստ օրինակի Լերինն սինայ , յորմէ քարինք արձա-
կէին 'ի մերձենալ գազանաց , ունի և եկեղեցին քարինս խմանալիս՝ վար-
դապետութիւն , կմ բանադրանաց , որովք զգազանամիտ հերձուածօղս ,
կամ զամբարիշտ քրիստոնեայս չթողու մերձենալ առ ինքն , կամ 'ի
ներքս մտանել ։ Թէպէտ ակնարկէ յանցման անօրէնաց և հեղինակաց ,
որք 'ի տաճարին քարամբք և այլ գանիւք հարուածեցան . ( Բ . մակ .
Ժ . 16 . Փ . 26 ։ ) Այս զօրութիւն առաւել պատշաճի բարոյական ե-
կեղեցւոյ . սակայն երբեմն երևի և 'ի նիւթական եկեղեցիս . որպէս
զմարխամ եգիպտացին ոչ թողոյր 'ի ներքս մտանել ։ ( Վարք հարանց .
երես . 506 ։ ) 'Ի ԵԱՅ ՔՐՈՀԷԱՒ ։ 2 օրին . 'Ի ԵԱՅ ՀԱՒԱԾԷԱՒ ։

(94) ԱՅԺՄ ՈՐԴԻ ։ Եկեղեցին մկրտութբն ծնանի որդիս ծյ շնորհօք ,
որք են սանըծեալ ծծք՝ պատկերակիցք ճշմարիտ և բնական որդւոյն ծյ ,
որ է Յս Քս ։

(95) ԶՏԷՐՆ ԻՒՐ ԸՆԴ ԱՌՆԵԼ ։ Նախնի սովորութիւն էր յնմ քրիստո-
նէայս , զի յաղօթելն՝ յարևելեան կողմն հայէին , որում վկայեն բա-
զումք յառաջնոցն . որպէս սբն բարսեղ . ( 'ի գիրս յաղագս Հոգւոյն
սբյ . գլ . իէ . ) ասէ՝ յաւանդութէ ունիմք յարևելս աղօթել ։ Սոյն-
պէս գիրքն խնդրոց առ ուղղափառս , յուստինոսի ասացեալ , խնդ .
ճժը . յառաքելոց անտի ունիմք ասէ ։ Յիշէ և տերտուղիանոս , 'ի ջա-
տագովութեան գիրքն . այլև 'ի գիրս ծ . յաղագս Ազգաց ։ Եւ սբն Օգոս-
տինոս . գիրք Բ . յաղագս բանից տն 'ի լերինն . գլ . Թ ։ Այլև գա-

մանկացն յերկար խօսի, 'ի գիրք Ե. յաղագս ուղղափառ հաւատոյ. գլ. ժդ: Այլ սովորութեան զայն խորհրդական պատճառս տան վերոյիշեալ վարդապետքն, զոր և սոս տայ սրբ̃ Գրիգոր, և վասն որոյ միջո Նախապատիւ համօրէն արևելեան կողմն յեկեղեցական պաշտամանս: Արդ՝ յայտնանէ նաև զգլուխ եկեղեցեաց՝ կամ զսեղանոյն կողմն յարևելս հայեցուցանէին սովորաբար, որպէս վկայեն տաճարքն կառուցեալք 'ի հին ժամանակս. որ և աւանդի յառաքելական առացեալ սահմանադրութիւն. գիրք Բ. գլ. ծէ: Բայց ոչ անխախտելի էր այս սովորութիւն. և պատմէ Սոկրատ. (գիրք Ե. գլ. իա.) թէ տաճարն Անտիոքայ հակառակ այլոց եկեղեցեաց ունէր զդիրսն, զի սեղան նորա ոչ հայէր յարևելս, այլ յարևմուտս: Եւ յետ ժամանակաց այլայլեցաւ այս սովորութիւն 'ի կողմանս ինչ Եւրոպիոյ՝ սակս բազմութեան քահանայից պատարագողաց, թէպէտ յարևելեան ազգս պահի մինչև ցայսօր:

(96) Φρήκιον [illegible]: Զեկեղեցի՝ փրկչին անուամբ կոչէ՝ ոմանք իմացան, թէ վասն զի օծեալ կոչի եկեղեցին, այլ և տուն և տաճար այ, և վէմ, որք են անուանք քրի: Սակայն երեքին անուանքդ՝ յառկայար եկեղեցւոյ պատշաճին. և 'ի նմանէ փոխաբերին առ քրս. տես 'ի վեր. լուծ. 78: Իսկ օծեալ կոչի յիւրմէ օծմանէն 'ի ձեռն մեռոնի, և ոչ յանուանէն քրի: Վասն որոյ իմաստ բանիս այն է՝ զի բազում եկեղեցիք նուիրեալք քրի՝ նորին իսկ անուամբն կոչին Φρήκιν, կամ Ἀναφρήκιν, որպէս և մինչև ցայսօր ասեմք: Ադոլիկ պատմիչ (Գ. 14.) յիշէ զեկեղեցի 'ի [illegible] Φρήκιν անուանեալ: Սոյնպէս ասէ, [illegible], ոչ իմանի թէ վասն զի եկեղեցին [illegible] կոչի 'ի դաւթոյ. այլ զի նովին անուամբ Ἀνάκτορον կոչին բազում եկեղեցիք շինեալք 'ի պատիւ նորա, և այս՝ 'ի [illegible]. այսինքն յառաքելոց անտի. որպէս սբն բարդուղիմէոս զեկեղեցին՝ յոր եդ զհրաշալի պատկեր տիրամօրն, կոչեաց Ἀνάկτορον, ըստ գրելոյ խորենացւոյն, 'ի թուղթն առ սահակ արծրունի. և Յայսմաւ. օգոստ. 15. 20: Սոյնպէս եկեղեցին շինեալ յեդեսիա 'ի սբյն թադէոսէ՝ կոչեցաւ Ἀνάκτορον: Ըստ այսմ եկեղեցիք յայլ քրիստոնէից ևս կոչին Φρήκιν, Ἀνάκτορον, ևն: Եւ ոք վարդապետս կամի նաև յայսմ կողմանէ ցուցանել զփառաւորութիւն և զպարտ եկեղեցեաց:

(97) [illegible], որպէս նիկանովր, որ սպառնայր զտաճարն այ այրել. (Բ. մակ. ԺԴ. 32. 33:) Այսպէս որ զօրինադրեալ կառուցմանս եկեղեցեաց արհամարհիցէ, համարելով մարդկային ինչ գիւտ, կամ երկրաւոր շինուած, այնպէս է՝ իբրև ընդդէմ երկնից արքային զձեռն համբառնալ:

(98) [illegible]: Եթէ չհամարիցի զեկեղեցին՝ տեղի ածային յուսոյ, կամ ակնունելոյ ածային պարգևաց: 2. օրին. [illegible]. այսինքն յայ ակնարկութէն կամ 'ի հրամանէն սահմանեալ: Եւ 'ի հոգւոյն սբյ յայտնեալ լուսաւոր [illegible], յառաջադոյն գուշակութի 'ի հին օրէնս՝ խորանաւն վկայութեան, տապանակաւն, և տաճարաւն: Եւ երախտեացն այ [illegible], ամենապարգև առատութեն տեղի: Եւ [illegible], շնորհօք 'ի ձեռն աւազանին՝ [illegible] 'ի [illegible] ցաւոց և անիծից՝ հակառակ եւայի: Եւ յառուկ նմանութի [illegible], երևելի բանական բնութեա, ըստ որում [illegible]՝ զօրութեն շնորհաց, բժշկութե, ևն. է նշանակ հոգւոյս մերոյ. և [illegible]՝ ձեն և կալմութին՝ յօրինակ մարմնոյս: Եւ [illegible], նոր սրբութի՝ գերազանց քան զսրբազան կարմածմն՝ որ 'ի հին օրէնս անդ գաղմիք էին, զորոց գրէ առաքեալն. (եբր. Թ. 5.)

ոչ է այժմ առել մի ըստ միոջէ ։ Արդ՝ եթէ ոչ այսպիսի խոստովանիցի զեկեղեցին, զայնպիսին մերժէ յերեսաց իւրոց ած հայր. փակելով ընդդէմ նմա զդուռն այսր առագաստի կենաց ։

(99) Այն ինձ հասակ ։ Յայլ օրինակս, Այս ինձ հասակ. բայց ըստ ես համարեցաք գտնել զի մեր օրին. զի բովանդակ դաւանական ճառս ունի երկու մասն. առաջինն ՚ի վր Երրորդութեն, և երկրորդն՝ ՚ի վր եկեղեցին. ուստի ասէ, Այն ինձ հասակ, իմանի՝ առաջինն այն է իմ դաւանութեն ՚ի վր Երրորդութեն. և այս երկրորդս կամ վերջինս է խոստովանութեն ՚ի մայրն իմ վր եկեղեցին ։ Եւ զայս բան դնէ ՚ի կատարածի իբր իւր ձեռնագիր և կնիք ՚ի հաստատութեն դաւանութենցն ։

---

Սրբոյն յաւելուած երկրին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ՂԶ.

Ա. Ո՛վ ողորմած, բազմագութ՝ հզօր՝ ահաւոր՝ մարդասէր՝ օրհնեալ՝ կենդանի՝ անճառ.[1] որ ո՛չ ելանէ երբէք ըստ բանի քո՝ իր անձեռնարկելի, որ և մնաց է անհնարաւոր ։ Ո՞ է հատուցանել պտուղ քաղցրութե[2] ընդ փշոյ խստութե, սկզբնահայրդ այսմ նորոգ և զարմանաւոր կանոնաց կենաց. քանզի բարի առնել ատելեացն, և աղօթս ՚ի վերայ հալածչացն, և փրկութի հայցել խոցողացն, և սպանողացն ներումն խնդրել՝ ՚ի քէն ընծայեցաւ պտուղս այս հրաշից. որոյ քաղցրութիւն անճառ է քան զօրինակ, և բարեբանեալ կամաց քոց ախորժելիք, և գովեալ շրթանց քոց ճաշակելիք, հոգի երեսաց՝ և զօրութի գեղոյ մերոյ տէր քս օրհնեալ ՚ի բարձունս ։ Այլ մարդք երկրածինք և ամենավրէպք, և բարեմատոյց ձեռաց՝ չարիս դարձուցին. իսկ դու լոյս՝ և տուիչ լուսոյ՝ ոչ[3] լսես անէծս. ո՛չ ախորժես չար. ո՛չ կամիս կորուստ. ո՛չ ըղձանաս մահ. ո՛չ յուզիս ՚ի խռովութե. ո՛չ տիրիս ՚ի ցասմանէ. ո՛չ հարկիս ՚ի բարկութե. ո՛չ մթանաս ՚ի սիրոյ. ո՛չ այլայլիս ՚ի գթութե. ո՛չ փոփոխիս ՚ի բարութե.[4] ո՛չ թիկանց շրջումն, և ո՛չ երեսաց անդրադարձութի, այլ ամենևին լուսաւորութիւն՝ և նկատումն փրկութեան ։

Բ. Եթէ քաւեսցես, կարող ես. եթէ բժշկես, զօ-

րաւո՛ր ես. եթէ կենդանացուցանես, բաւական ես. եթէ շնորհես, առատ ես. եթէ ողջացուցանես, հնարաւո՛ր ես. եթէ պարգեւես, ամենալի ես. եթէ արդարացուցանես, ամենարուեստ ես. եթէ մխիթարես, ամենիշխան ես. եթէ նորոգես, ամենակալ ես. եթէ հրաշագործեսցես, ամենաթագաւո՛ր ես. [5] եթէ վերստին հաստատես, արարիչ ես. եթէ կրկին գոյացուցանես, ա̃ծ ես. եթէ հոգաս ընդ մեր, ամենատէր ես. եթէ կորզես 'ի մեղաց, այցելու ես. եթէ չարժանեացս ընծեռես, օրհնեալ ես. եթէ յորստղէն զերծուսցես, փրկիչ ես. եթէ զեղցես 'ի քոյոց 'ի մեզ, հարուստ ես. եթէ նախ քան 'ի մէնջ խընդրելն՝ դու կարկառեսցես, անկարօտ ես. եթէ լայնես նեղութենս, անդորրիչ ես. եթէ զվերջացեալս կոչես, խնամակալ ես. եթէ զսասանեալս հաստատես, վէմ ես: [6] Եթէ պասքելոյս արբուցանիցես, աղբիւր ես. Թէ զծածկեալսն երեւեցուցանես, լոյս ես. Թէ զօգտակարսն իմ ծանուցանես, բարի ես. Թէ զխիծսն անտես առնիցես, երկայնամիտ ես. Թէ ընդ փոքուս 'ի դատ ոչ մտանիցես, բարձրեալ ես. Թէ ծառայիս ձեռն մատուսցես, ստացօղ ես. Թէ աջովդ քո պաշտպանեսցես, յանձանձիչ ես. Թէ վհատելոյս դարման մատուսցես, կերակրիչ ես. Թէ զանդէտս պարարեսցես, վարդապետ ես. Թէ զդիմեալս առ քեզ ընկալցիս, ապաւէն ես:

Գ. Եւ արդ՝ քո են այսոքիկ՝ տէր ողորմութեան [7] ոչ միայն գրեալ, այլ կատարեալ եւ գլխաւորեալ՝ նախնի նահատակդ համբերութեան վկայից. որ վասն իմոյ փրկութեան հանդիսացար զօրապէս յասպարիսի Ճակատուն, զի կակղեսցես զկարծր բռնութիւն մարմնոյս գոռոզութեան վարժմամբ կրթութեան չարչարանացն վտանգի. եւ յանպարտակիրդ մարմին չափեալ ըղբնութենս մերում զտաժանականն տագնապ տուժի, զի զգթութիւնդ որ առ մեզ՝ արդեամբք ցուցցես 'ի քեզ օրինակեալ. օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) Որ ու էլանէ: 'Ի բանէ հրամանի քո ոչ մի ինչ անձեռնարկելի կամ անհնարին կարէ ելանել կամ վրիպել, այլ ինքն առ քո հրամանդ չէք ինչ անկարելի. որ և նորոց, թէ և մնաց անհնարաւոր իցէ կէս թուիցի:

(2) **Ընդ ծնր:** Փոխանակ խոտ փշոց մեղացս՝ հատուցանել քաղցր պտուղս՝ քեզ է սեպհական, որ առաջին հայր կամ վարդապետ եղեր սքանչելի կանոնացս՝ թէ բարի առնել առելոյն, ևն: Այս հրաշալի պտուղք 'ի քէն ընծայեցան, որոց քաղցրութիւն 'ի վեր է քան զօրինակ, և ախորժելիք են օրհնեալ կամաց քոց, ևն:

(3) **Ու լսես:** Յորժամ ոք անիծանէ զընկերն, ոչ կամիս լսել զայնպիսի անէծս. արգելուս անիծանել նաև զանիծիչս մեր, (ըստ մատթ. Ե. 44.) ու յօտլիս. ոչ գոյ 'ի քեզ խռովութիւն, ո՛չ ցասումն, ո՛չ բարկութիւն: ու մէտուս, ոչ աղօտանաս, ոչ նուաղիս 'ի սիրոյ. կամ 'ի սիրելդ՝ ոչ խառնի այն, որպէս լինի առ մարդիկ, մթութիւն ակնառութեան կամ շահու, կամ ոչ սպասելով զօրէն սիրոյ: Այնչափ անխառն է սէրն Այ, մինչ զի նաև յատելն զմեղս և զմեղաւորս, և 'ի պատուհասելն զյանցաւորս, միշտ սէր մնայ, 'ի սիրոյ շարժի և գործէ, այսինքն 'ի սիրոյ անբաւ բարութեան իւրոյ: Նման այսմ տաղ Գ. 1. Օտար մեռանելոյ ...:

(4) **Ո՛ւ ընկանց:** Ած յիւրմէ կողմանէ ոչ անտես առնէ զմարդն 'ի խնամոց, որ նշանակի շրջմամբ թիկանցն. կամ երեսաց ..., այլ մարդն դառնալով 'ի ստեղծուածս, թիկունս դարձուցանէ առ Ած, և մերժէ զխնամս նորա. որով և Ած առ դարձուցեալ զերեսս. ըստ սաղմոսին. (ԺԷ. 27.) * Ընդ թիւրսն թիւրեսցիս ||:

(5) **Եռէ ...:** Եթէ դարձեալ հաստատես զմեզ 'ի բնական կամ 'ի գերբնական բարիսն. կամ, եթէ կրկին ... յարութեամբ 'ի մեռելոց, յայնժամ ամենայնի ցուցանիս լինել արարիչ և Ած. քանզի նովին արարչական զօրութեամբ որով եղեն առաջինքն, լինին և յետինքս. և նոյն իրաւունք Ածութեան են յառաջնումն և յերկրորդումն: Եթէ ..., եթէ անարժանիցս պարգևես բարիս, օրհնութիւն ընդունիս՝ և ո՛չ մեղադրութիւն. ուր ընդհակառակն առ մարդիկ մեղադրելի է երբեմն բարերարել անարժանին՝ յորժամ այնու լինի նմա զեղծանել:

(6) **Թէ ...:** Ծարաւելոյս: ըստ այլ օրինին. առ և 'ի հեռաւեալն գնի, ևն:

(7) **Ո՛ւ ...:** Վերոգրեալ բանիւս քեզ պատշաճին՝ ո՛չ միայն իբր ճշմարտապէս գրեալք, այլ զի կանխաւ արդեամբք կատարեալ և վճարեալ են 'ի քէն տէր քս, նախնի նախատիպ, յառաջընթացդ ամենայն վկայից, որ նախ հանդիսացար յասպարէզ նեղութեց, առ 'ի ճնշել զապստամբութիւն մարմնոյս. և 'ի քո անպարտական մարմինդ ընդունելով զտաժանելի կիրս բնութեան մերոյ, արդեամբք օրինակեալ ցուցեր զանճառ գթութիւնդ՝ զոր անվշտանալի բնութեամբ Ածութեանդ անմարթ էր ցուցանել. զի մերկ Ածութեանդ գութք անտեսաբար ներգործեն, զոր մարդանալովդ արարեր յայտնատեսիլ:

Մերոյն յաւելուած երկին հեծութեան՝ նորին հանգոյն, առ նոյն տէրս հաղորդութեան բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա՟յ։

## ԲԱՆ. ՂԵ.

ա. Եւ քանզի օր է օրհնաբանել և [1] լուսանորոգ կշռութեան երկուց ընտրութեանց՝ արարածոցս սասանութեանց՝ յեղանակելոյ յայլ իմն էութիւն երկնակենցաղ անփոփոխադրելի, ամբարձելոցն խոնարհութեան, և կործանելոցս վերբերութեան, սարսափելի ուրբաթու մեծի պասեքիս, յորում եկն եհաս ժամ բարեպատեհ գրել ինձ զայս նուագ ձայնի հեծութեան [2] զուարճախառն երկիւղիւ, ահա ըղձալի համարիմ ասել աստանօր 'ի քոյոց այտի՝ զոր ընդ իմ կրեցեր՝ Ա՟ծ բոլորից։

բ. Կացեր յատենի քում ստեղծուածոյն իմոյս կերպիւ [3]. ոչ խօսեցար՝ տուիչդ բանի. ոչ բարբառեցար՝ հաստիչդ լեզուի. ոչ ձայն արձակեցեր՝ սասանիչդ երկրի. ոչ մռնչեցեր՝ ամենազդեցիկ փողդ մեծութեան. ոչ երախտեօքն քո յանդիմանեցեր, և ոչ չարեօք նոցին ըմբերանեցեր. ոչ մատնեցեր ամօթոյ՝ զմատնիչսն զքեզ տանջանաց մահու. ոչ 'ի կապելն զքեզ դիմադարձեցեր, և ոչ յապտակելն դժուարեցար. ոչ 'ի թքնուլն թշնամանեցեր, և ոչ ընդ կռփելն երբէք խռովեցար. ոչ ընդ կատակելն սրտմտեցար, և ոչ ընդ խաղ արկանելն երեսս փոխեցեր։ Մերկացուցին զզգեստ պատմուճանին [4] իբրև 'ի տկարէ, և դարձեալ ագուցին իբր անփրկանաւոր ըմբռնեցելոյ։ Եթէ ոչ էր [5] արբեալ կրկնակի քացախ՝ զանգեալ ընդ լեղւոյ, ոչ էր հեղեալ մաղձն իմ մթերեալ նախնի դառնութեան. ճաշակեաց վհատութք, և արգել անդէն տարակուսանօք. առին մոլեգնաբար, և դարձեալ մատուցին անպատկառապէս։ Գանիւ հարուածոց յետին անարգուէ 'ի մէջ խառնիճաղանճն ամբոխի դատապարտեցին. ծունր կրկնեցին նախատանաց, և պսակ եդին արհամարհութեան։

Գ. Ո՛չ ետուն [6] հանգիստ կենդանարարիդ, եթէ ոչ՝ զգործի մահուն կրել քեզ պատրաստեցին. ընկալար իբր երկայնամիտ. առեր իբրև զհեղ. բարձեր որպէս համբերող, [7] ըստանձնեալ իբր զպարտական՝ զփայտն վշտաց։ Որպէս զծաղիկ շուշանաց հովտաց՝ ուստի բերեալ զզենն կենաց, զի յարհաւրաց գիշերայնոց՝ [8] զիւրակերտս դահաւորակս մարմնեղէն գոյութեան՝ պահպանեսցէ 'ի դատապարտութենէն վայրի՝ իբր 'ի խորախճան խնձոյից։ Հանին արտաքս իբր զողջակէզ. կախեցին իբր զխոյն սաբեկայ՝ ձգեալ զեղջերացն. տարածեցին 'ի սեղան խաչին իբր զպատարագ. բևեռեցին որպէս չարագործ. պնդեցին իբր զապստամբ, զխաղաղութիւնդ երկնաւոր՝ իբր զաւազակ, զանկապուտ մեծութիւնդ՝ իբր զտառապեալ, զառ 'ի քրովբէից պաշտեցեալդ՝ իբր զքամահեալ, զսահմանդ կենաց՝ իբր զարժանաւոր սատակման մահու. զաւետարանիս նկարիչ՝ իբր զհայհոյիչ օրինին. զտէր և զկատարումն մարգարէից՝ [9] իբր զհամառօտիչ գրեցելոցն. զճառագայթդ փառաց՝ և [10] զկնիք անքնին խորհրդոյդ հօր՝ իբր զներհակ ծնողիդ կամաց. զօրհնեալդ խնկապէս՝ իբր զտարագրեալ. [11] զկապոյ օրինին լուծիչդ՝ իբր զայր 'ի նզովս գրեալ. զհուրդ ծախիչ՝ իբր զհերքեալ իմն կալանաւոր. զահաւորդ երկնի և երկրի՝ իբր զհաւաստի պատժաւոր. զի լոյս անմատոյց ծածկեալդ՝ իբր զհողածին ըմբռնեալ։

Դ. Ո՛վ քաղցրութիւնդ և երկայնամիտ բարերարութիւնդ ողորմածիդ գթութեան, որ վասն ապախտաւոր և անօրինեալ ծառայիս՝ տէրդ բոլորից՝ զայս ամենայն կամաւորապէս և հաւանողական [12] հաճութեամբ տարեալ՝ մարմնոյդ միութեամբ 'ի քեզ ընկալար. և մինչև 'ի քնարան շիրմին տապանի՝ անպակաս 'ի լրութենէ ամբողջ նոյնութեան Աստուծոյ անքնին՝ զնոյն կրեալ նախատինս անճառ համբերութեամբ, յարեար կենդանի ինքնիշխան բարձրութեամբ լուսոյ՝ ամենուաղ մարմնով, և անթերի աստուածութեամբ։ Օրհնեալ փառօք, գովեալ գթութեամբ, բարեբանեալ միշտ ողորմութեամբ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

(1) Լուսանորոգ : Օր ուրբաթուն չարչարանաց, յորում լոյս արեգա-
կան՝ որ 'ի վեց ժամուն խաւարեցաւ, կրկին նորոգեցաւ յիններորդ ժա-
մուն. կամ նորոգեցաւ լոյս ածգիտութե : Կշռութեամբ երկուց ընտրութեամբ.
որ կշռութե կամ բաժանման երկուց մասանց աւուր, այսինքն տուըն-
ջեան և գիշերոյ. զի 'ի միում ցերեկի եղև միանգամայն տիւ և գիշեր :
կամ, որոշման ընտրութե արդարոց և մեղաւորաց, որ ցուցաւ յերկու
աւազակսն : Արարածոց սասանութեամբ, յորում արարածք իւրաքանչիւր
ըստ իւրեանց պայմանի սասանեցան. արեգակն և լուսին՝ խաւարմամբ.
երկիր՝ շարժմամբն. վէմք՝ պատառմամբն. գերեզմանք՝ բացմամբն. որ է
օրինակ յեղանակելոյ յայլ իմն էութե, փոփոխելոյ յայլ որպիսութի ոչ միայն
մարդկան, այլ և ամենայն արարածոց, որոց նորոգութի եղև քո̄ չար-
չարանօքն : Ամբարշտելոյն դիւացկործանման, և մեզ կործանելոյս՝ կանգ-
նման և բարձրութե :

(2) Զուարճախառն երկիւղիւ : 2 օրին . Երկիւղի : Գրեմ աստ՝ զայս ա-
ղօթս երկիւղիւ խառնեալ ընդ ուրախութե : Երկիւղ, զի չարչարանք
փրկչին՝ վրէժխնդրութի և դատաստան են խնոց մեղաց, և ես նոր մե-
ղօք անպատուղ տանեմ զնոյն, և ապերախտութե դատաստանաւ պար-
տաւորիմ : Եւ խնդութի, զի այն չարչարանք՝ վճարումն են մեղացս, և
փրկանք հոգւոյս, և յուսադրութի քաւութե նոր պարտեացս. որով
իմանամ զանբաւ սէրն ա̄յ, և զմեծութի շնորհաց նորա, և զպատուա-
կանութի հոգւոյս : Եւ այսպէս նոյն չարչարանք տ̄ն ըստ այլ և այլ բա-
նի լինին պատճառք խնդութե և երկիւղի, որք միանգամայն լինին 'ի
սրտի բարոյապէս միայն՝ մին յաջորդելով միւսումն, և ոչ ֆիզիքապէս :
Եւ այս կրկին ներգործութիք լինելոց են 'ի սրտի՝ ըստ իւրաքանչիւր
մտածութե : Եթէ փորձութիք մեղաց յարձակին 'ի մեզ, երկիւղ տա-
ցուք շնորհել զչարչարանս փրկչին . եթէ լքումն կամ յուսահատութի
գայցէ 'ի վերայ, զխնդալին ածցուք զմտաւ :

(3) Ու խօսեցար : Զանճառելի համբերութի և զխոնարհութի փրկչին
բացատրելով, զիւրաքանչիւր հանդամանս չարչարանաց նորա սաստկա-
ցուցանէ իւրեանց ներհակաւն : Լաւ կայցէր աստ՝ որ տուիչդ ես խօսից.
ոչ ձայն հանէր՝ որ զերկիր դղրդես ձ̄ն : Զայսուհետ աւ. Քս̄ յերրորդ
դէմն խօսի. բայց 'ի բանէն՝ Պերեկոյեան ըմպէտք, մինչև 'ի համար Է.
թուի յերրորդ դէմն դարձուցանել, որ և յայտնի է յասելն, ճաշա-
կեաց, արգել :

(4) Իբրև 'ի տկարէ : Զհանդերձս փրկչին 'ի բաց հանելն համարելով զնա
տկար, անզօր 'ի պաշտպանել զանձն. իսկ տեսեալ զի անդիմադարձ
մնայր, դարձեալ ազդեցին նմա, համարելով թէ անփրկելի ըմբռնեալ
է, փախչել ոչ կարէ առ ապրելոյ զանձն :

(5) Արբեալ կրկին : Մխանգամ նախ քան զխաչելն՝ մատուցաւ գինի
ընդ լեղի խառնեալ. (ըստ մատթ. իէ. 34.) կամ զմռսեալ (ըստ
մարկ. ժե. 23 :) Երկրորդ անգամ 'ի խաչին՝ քացախ ընդ լեղւոյ. և
զերկոսին ևս քացախ կոչէ սբ̄ մարգարէս : Յառաջնումն ճաշակեաց չհա-
ւանութէ, լքեալ և թուլացեալ գոլով 'ի զօրութէ. բայց արգել անդէն,
իսկոյն փարշկանօք. զի մի երևեցուցէ՝ թէ առ չզգալոյ ցաւոյն ճա-
շակէ. ուր ինքն յայն սակս ճաշակեաց, զի զգայցէ զդառնութին, ա-
ռանց խափանելոյ զցաւսն : Եւ աստ, եթէ ոչ այնչ̄ կրկնակի արբեալ
էր փրկիչն զդառն ըմպելիս, ոչ 'ի բաց փոխէր զմաղձ առաջին դառն
մեղացն ադամայ, զապականութին՝ որ 'ի մեղաց ադամայ մթերեալ էր 'ի
հոգիս :

(6) Հանգիստ կենդանարարիդ. ( մի օրին . Կենարարիդ :) Յետ առնելոյ
զքեղ ընդ գիշերին ողջոյն, պէսպէս դառն հարուածովք և նախատանօք

հրէից և հեթանոսաց, ոչ ետուն կենդանատարիդ և ոչ փոքր մի համ-գիստ, այլ անդէն զգործի մահուն զծանրակիր խաչափայտն հանգու-ցին 'ի Թիկունս քո. Նախ քեզ ետուն բառնալ զծանրութեն խաչին, և ապա խաչին բառնալ զքեզ, իբր առաւել 'ի խաչն՝ քան 'ի քեզ խնայե-լով: Իսկ դու ով երկայնամիտ, ընկալեր յուս քո զխաչն՝ որպէս ար-դարև հանգիստ քո, իբր Թեթև ինչ դիւրատար և ախորժելի, որպէս Թէ ծաղիկ շուշանաց էր նա:

(7) Տէր: Յանձն բարձեալ զխաչն իբր պարտական փոխա-նակ մեր, կամ ըստ կարծեաց հրէից: Յայսոսիկ տեղիս՝ բառքն Տէր, եղանակի խմանին ըստ յարմարութե իւրաքանչիւր բանին. այսինքն մի՝ յայտնողական՝ ըստ Ճշմարտութե. որպէս ասէն, Տէր, Տէր հեղ. են: Երկրորդ՝ յայտնողական առ կարծիս հրէից. որպէս ա-սէն. Տէր, Տէր, են: Երրորդ՝ Նմանական, որպէս ասէն. Տէր:

(8): Զառ յինքենէ կազմեալ աԹոռս կամ բազմոցս հո-գւոյս՝ զմարմինն, որ խաչն 'ի գիշերային երկիւղալեաց, 'ի, 'ի ժամ քնոյն՝ որ է պատիժ մեղաց, և Թ որում պատկեր մահու՝ նշանակէ զպարտաւորիլ մեր 'ի մահ. ուստի այնպէս աներկիւղ պահեսցէ զիս 'ի ժամ քնոյն, որ զի անկողինքն լինիցին ընու-Թեն սփոփումն հանգստեան իբրև 'ի խրախճանի:

(9) Տէր: Իբրև զկործանիչ կամ լուծիչ գուշակուեց մար-գարէիցն: Ըստ այլ մտաց՝ Ճշմարտութբ ասի քո համառօտիչ օրինաց, այսինքն բառնալով զաւելորդսն, և 'ի համառօտութեն աւետարանին վե-րածելով, ըստ բանին հռովմ. (Թ. 28:) * Զբանն հակիրճ արասցէ տէր, || են:

(10): Զբուն նշանակ և զհաստատութեն խորհրդոց Թղ հօր՝ իբրև զհակառակ կամաց Նորա:

(11): Զլուծիչդ պարտաւորութե հին օրինաց՝ խաչեցին իբր զնզովեալ 'ի Նոյն օրինաց: 2 օրին., այսինքն զլու-ծիչդ պարտաւորող կամ բռնադատող օրինաց:

(12) Համ: 2 օրին.: Զայս ամենայն ախորժական կամօք կրելով, 'ի ձեռն միաւորութե մարմնոյդ՝ 'ի յածայլն անձնդ ընկալար. և մինչև 'ի գերեզման անպակաս և Նոյն ած գոլով, կրեցեր զնոյն նախատինս անպատում համբերութբ: Ո՛չ Թշնամիք քո յագեցան Նախատանօք խաչին, և ոչ անհատանելի սէր քո շատացաւ կենդանւոյն չարչարիլ վասն մեր. այլ յետ մահուան և 'ի խաչէն եւ իջանելոյ՝ տա-կաւին առ գերեզմանին նախատէին զքեզ զինուորօքն և կնքելովն, և դու զայն յանձն առեր. մինչև ապա յարեար, ոչինչ 'ի բաց Թողլով 'ի մարմնոյդ՝ բայց զանարգութեն և եԹ, զգեցեալ փոխան այնր զլուսապայ-ծառ բարձրութեն փառաց: Եւ արդ, զինչ տացուք արխառր քեզ ընդ այսր ամենայնի անկշիռ երախտեաց. եԹէ օրհնութեն, եԹէ գովութեն, եԹէ բարեբանութեն, այսոքիկ Թէ և յաւիտեան մատուցեն, այլ փո-քունք են: Ահա դու Յս փրկիչ, դու միայն քեզ փոխարէն:

Մերոյն յուսացեալ հրէին հեծութիւն՝ նորին հաւաստի առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ ։

## ԲԱՆ. ՀԲ։

ա̅. Եւ արդ՝ անկեալ յերեսս [1] հողանիւթ կերպիւս, 'ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագութ̅բ, զբարեգործիդ ողորմածութ̅ զկենդանարար ոտս համբուրեմ, զայս օրինակ մաղթանաց մեծիդ ընծայեցուցեալ։

բ̅. Աղաչեմ զքեզ միայն խնամակալ, մարդասէր, գթած, կեցուցիչ, հզօր, այցելու, պաշտպան. [2] Մի՛ ունայնասցի վաստակն աշխատութ̅ փրկականդ կրից մարդացելոյդ վասն իմ ա̅յ. [3] Մի՛ սուտ եղիցի քրտանցն կաթուած խառնեցեալ արեամբ՝ 'ի մատնութեանն աւուր գիշերի. Մի՛ լիցի ստուերացեալ լուսոյդ երախտիս, զոր ձրի և առանց փրկանաց թշուառացելումս ինձ պարգևեցեր. Մի՛ ջնջեսցին շնորհացդ աւետիս, զոր կողից քոց կայլակք նորոգեցին. Մի՛ անշահ եղիցին կրիցդ պտուղք, զոր կարօտութ̅ես իմում մատուցեր։ Մի՛ պարծեսցի բանսարկուն վանեալ՝ զքո ստացեալս խուրացուցանել. աւհա յաղթեացես կամօք քո՝ ըղձից չարին. վերստին ապշեսցի միանգամ զարհուրեալն. կրկին պարտեսցի խապադատեցեալն։ Մի՛ անխայեր [4] զաղատարարդ քո բան, որ զստեղծեալս քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզ դարձուցանէ. զանձառն արարեր բարերարութ̅ի [5] յանակնկալ ժամուն յուսահատութ̅, յորժամ բնաւ իսկ կտրեալ և օտարացեալ էր կենդանութ̅ն շարժողութ̅ի. մեռար անմահդ՝ և զմահացեալս նորոգեցեր. [6] Եթէ զկանոն համաձևութ̅ օրինին փոխեցեր, արդ զխուրինն և զհեշտականն և զևս հնարաւորն մի՛ արգելցես՝ սկզբնաձիր ողորմածութ̅ բարեգութ օրհնեալ և երկայնամիտ թագաւոր։ Ազդեա՛ բանիւդ ամենազօրաւ, որ զգոյութ̅ի լուսոյն ստեղծեր 'ի նախնումն աւուր, և վաղվաղակի փոփոխեալ զըստայց 'ի լաւ անդր. և փոխանակ զի ես ոչ խնդրեցի

հետևել լուսոյդ, դու ելցես ինձ յայց՝ Ճառագայթ ծագման հայրենի կերպիդ, և կոչեցայց առաջի քո ծառայս փնտասապարտ՝ ողորմեալ շնորհեալ առ 'ի քէն. [7] ոչ է ժամանակ յերկարաձգութեան առ 'ի ըղպարտմն հատուցանել, ահա շնորհեա ինձ տառապելոյս զերեսս քո՝ լոյսդ 'ի խաւարի սրտից մհատելոց : Արգէլ և կնքեա [8] զընթացմունս ելից, որ միշտ զեղուն բարիքն հոսեալ 'ի յուշոյս իմ տեսութէ. պահեա ինձ զշնորհ ամենապայծառ գանձուցդ մնացականաց. որով պատուական գտեալ՝ քո անուանեցայց, պաշտպանեալ 'ի քէն՝ անսահման բարի :

Դ. Ահա ողորմեա ինձ գթած, աղաչեմ զքեզ ողորմեա ինձ՝ հեզօր, կրկին ողորմեա : Մի՛ փոխարկեր երկունս ցաւոց՝ ընդ չարեաց իմոց բարիդ ամենաեին. մի՛ բառնար 'ի վտանգելոյս՝ զառ 'ի քէն պարգևեալդ շնորհ. մի՛ կապտեր զփչումն ամենօրհնեալդ հոգւոյ. մի՛ լուծաներ զինկեալ [9] զկնիք արքունական պատկերիդ : Մի՛ յայտնեսցին [10] փուշք մեղանացս՝ 'ի սրբութիւն մտայս. մի՛ խզեր զկապ միութեան՝ զընդ քեզ սիրոյն պնդութեան. մի՛ մերժեսցես [11] զարուեստ զօրութեան՝ լեզուոյս յարմարութե. մի՛ պակասեցուցաներ զաջողուած աջոյս՝ առ 'ի զլուսոյդ մասունս բաշխել : Մի՛ գրեր [12] 'ի դպրութեան կենաց մատենիդ՝ զմահուն պարտիս. մի՛ պահեր. մի՛ ինձ համարիր. մի՛ յիշեցուցաներ. մի՛ ամաչեցուցաներ. մի՛ նախատեր. մի՛ ատն հարկաներ. [13] մի՛ արձանացուցաներ զմեղկութեցն. մի՛ ամբարեր զկորստեանցն. [14] մի՛ իբր ստգտեալ ինն ամբաստաներ : Մի՛ յարուսցես ընդ իս [15] զծառն անիծից. մի՛ արձակեր 'ի յիս զսաղարթ փնասուցն. մի՛ ընծիւղեր զծաղիկ մեղացս. մի՛ բերցես ընդ առաջ զնամակ պարտուցս. մի՛ արտաբերեր զէութեն պտղոյն : Մի՛ թուեսցես [16] 'ի Ճիւղս երկրաստեղծ մատանցդ՝ զգիւտս գործոցս. մի՛ մատուսցես բան ընդդէմ ահեղ՝ զանօրէնութիւս իմ յիշատակել. մի՛ մատնեսցես իմոցս կամաց զաւանդս հոգւոյս՝ վարել 'ի գերութեան. մի՛ աստէն զիս փառաւորեր՝ զի անտանօր դատապարտեսցես. [17] մի՛ նուազութեան այսր անցաւորի՝ զյաւիտենական բարիս տուժեր. մի՛ 'ի

սակաւում այսմ ժամանակի՝ զանվախճանելի զփառսըն չափէր. մի՛ ընդ հովտիս վշտաց հեծութե՟ զանախտական զկեանսդ գրաւեր. մի՛ ընդ ստուերի այսր մթութե՟՝ զանձառելիդ լոյս փոխանակեր. մի՛ զերասանակ մտացս լքցես՝ ըստ արտաքի հետս հետեւել. մի՛ [18] զկամուրջ կենցաղոյս գրեսցես ինձ հանդստեան բաւականութի՟. մի՛ [19] զհովիտ հանճարոյս ստուերական պահեր՝ 'ի հանդերձեալսն ինձ հրապարակել: Եթէ ամբարես զաւանց համարոյ գործոցս իմ չարիս, մեռայց կենդանւոյս. եթէ չտեմարանես 'ի սըրտի, աստանին կիզեալ անբոց այրեցայց. եթէ քննեսցես զանօրէնութիս, առանց յանդիման քեզ լինելոյ՝ իսպառ հալեցայց. [20] եթէ տնկակից ինձ թողցես ըզմեղսն, 'ի նոսին վատնեալ մաշեցայց:

Դ. Սկնարկեամ միշտ զօրեղ ամենակարօղ՝ փախնուլ չարութեցս որ յիս, զի բարիդ քո եկեալ փոխանորդեսցէ. հրամայեա գթած, խնամակալ, գովեալ, լոյս անշիջանելի, զօրութբ անսահմանելեաւ, զի [21] նոր հաստատեսցի գոյուի բնութեես մարմնեղէն յարկի անդամոյս. յորում հանդուցեալ անլքանելի՝ բնակեսցես բազմեալ ախորժ տենչանօք՝ միութբ հոգւոյս իմ ընդ քեզ. զապականութի մեղացս մերժեալ իսպառ՝ յանարատութի զիս պատրաստեսցես՝ ամենակեցո՛յց թագաւոր անմահ տէր յի՟ք՟ս, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) Հողանիոբ կէրպիոս: մի օրին. կէրպիս:

(2) Մէ ուանայնաոյի վաոփակն: 2 օրին. վաոփակէ:

(3) Մէ սոսկ էղէօյի: Մի անգործ և անզօր եղիցի կաթուած քրտանց քոց, խաոնէօյէաւ արեանս: Այսպէս ասաց և 'ի բանն կզ. կ. որ հաստատէ զհասարակ կարծիս մեկնչաց՝ թէ քրտունք խառն ընդ արեան հոսէին 'ի մարմնոյ փրկչին 'ի գիշերի մատնութե: Իսկ կայետանոս համարի՝ թէ յետ ստրաւելոյ քրտանցն բովանդակ արիւն անխառն հոսէր:

(4) Զօղաբարարք ու բան: Մի խնայեր զքաւութե քո բանդ, որով աւծէիր. թողեալ լիցին քեզ մեղք քո. կամ, Արձակեալ ես 'ի հիւանդութէ քումմէ, եւն:

(5) Յանափիկալ ժամուն: Որպէս առ անդամալուծն՝ որ երեսուն և ութ ամ անօգնական մնացեալ, կայր 'ի յուսահատութե, անակնկալ ցուցեր զբարերարութիդ, նմանապէս և առ մեռեալ միամօրն՝ որ 'ի Նային, այսպէս և առ մեղուցեալ բնութիս՝ որ անչափ մնացեալ 'ի բնական օրինաց, և անօգնական 'ի գրաւոր օրինաց, կայր յուսահատեալ 'ի բժշկու-

թէ, և ստոր 'ի հոգևոր կենաց, դու 'ի վերջնում դարու յանկարծ երևեցար, և զանձառ բարերարութիւնդ ցուցեր, մեռանելով վս մեր։

(6) Եթէ զկանոն։ Եթէ զկանոն օրինացն՝ որ հաւասար յանցանացն չափէր զպատիժն, ասելով. Ակն ընդ ական. կամ հրամայէր, Անձն որ մեղիցէ՝ նոյն և մեռցի, դու փոխեցեր. զի ոչ միայն 'ի մէնջ զն յան֊ցանաց ոչ պահանջեցեր զհատուցումն, այլ և մեր փոխանակ անպարտդ մեռար։ Կամ, եթէ զայս կանոն օրինաց բնութեա, զի 'ի մեռանիլ մար֊դոյ՝ հարկ է եղծանիլ անձինն, դու փոխեցեր՝ մեռանելով մարդկութբդ, և անմահ մնալով անձամբդ, եթէ զայսոսիկ՝ որ ըստ ինքեան մեծ էին և դժուարին, արարեր ողորմութբդ, ապա մի՛ արգելուր զդիւրինն և զհեշտագին, թէպէտ և առ քո զօրութիւնդ՝ ամենայն ինչ միօրինակ դիւ֊րին է։ Իսկ առ ողորմելն քո՝ նաև անկարելին կարելի է. զի անհնարին, առաջին պարգևօք ողորմութե ես. Նախկին գործ զոր առնել կամեցար՝ ողորմութիւն է. մինչ զի նաև 'ի պատուհասելդ ոչ յեմնիս յողորմու֊թենէ։

(7) Ո՛չ է ժամանակ։ Ո՛չ պիտոյ է քեզ երկար ժամանակ առ 'ի զպարտս իմ հատուցանել, այլ բաւական է երևեցուցանել զերեսս քո։ կամ, մի՛ յերկարաձգեսցես զհատուցումն պարտուցս. այլ վաղվաղակի շնորհեա՛, և այլն։

(8) Զընթացմունս ելիցն։ Խափանեա՛ զմոռացութիւն, որով արագապէս ընթացեալ ելանեն և հոսին յուշոյ իմմէ բարիքն քո. այլ դարձո՛ 'ի միտս իմ զշնորհ գանձուց երախտեացդ։

(9) Զբիւր, շնորհացդ, որ է նմանութիւն ածութեդ։

(10) Փոխաջ մեղանաց։ Մի՛ վերստին ծնանիցին մեղք իմ 'ի որբեւոբիանս մաշոյ, 'ի հոգիս իմ, որ սրբեցաւ ապաշխարութբ։ Թուի ակնարկել 'ի բանն եսայեայ. (Ե. 6.) ուր զայգւոյ ասէ՝ որ զհողին նշանակէ, ասէ. * Բուսցի 'ի նմա փուշ իբրև 'ի խոպանի։ || Կամ առակէ զանցս առա֊ծարին առ մակաբէացւոցն, յորում 'ի սրահն սրբութե թուփք բուսեալ էին. (ա. մակ. դ. 38։)

(11) Զարուեստ։ Մի՛ բարձցես զյաջողութե կամ զճարտարութիւն լեզուի և բանի 'ի քարոզելն. կամ, մի՛ արհամարհեսցես զյօրինուած ձայնաւոր աղօթիցս։ կամ, մի՛ արգելցես զքո շնորհեալ արուեստս պատ֊շաճաւոր աղօթից։ Առաջին խմաստն առաւել յարմար է յաջորդ բա֊նին. Մի պատշաճապատեր զաջողուած աջոյս, ևն, այսինքն մի՛ իբրև յան֊արժանէ բարձցես յինէն զշնորհ քարոզութե, և մի՛ զարժանաւորու֊թիւն ձեռնիս՝ 'ի բաշխել ժողովրդեան զխորհուրդ մարմնոյ քո։

(12) 'Ի դարձոբէ կենաց։ Տես զնման այսմ բանի 'ի հն. լուծ. 14։

(13) Մի՛ արհամարհեր։ 'Ի մատենից կենաց մի՛ հատանեալ նշա֊նակեսցես զկենդանեաց, զյանցանս հեղգութեց իմոց։ Եւ մի՛ ամբարեր զիմարաբեանս, զգործս արժանի կորստեան։

(14) Մի՛ իբր արգահատ։ 3. օրին. իբր գահեալ։ Ըստ առաջնոյն իմանի. մի՛ ամբառնաներ զինէն իբրև զյանցաւորէ, իբրև զմեղապարտէ։ Զեր֊կրորդն մարթ է բացատրել. ես մեղօք փախուցեալ յերկիւղէ պատժոց, մի՛ իբրև 'ի ձեռս անկեալ համարիցիս, և ամբաստան լինիցիս։

(15) Զծանր անձին։ Մի՛ թողլ տայցես՝ զի ը խ յարիցէ ապականու֊թեան, որոյ նշանակ ստոյրն կամ ահրև են չար մտածութիւնք. և ծաղիկ՝ անկարգ յօժարութիւնք. իսկ պտուղ՝ գործք մեղաց։ Կամ մի՛ արհամարհեր, մի՛ 'ի յայտ բերեր, մի՛ երևեցուցաներ, կամ մի՛ արգե֊նացուցաներ զերեւոբէ դադոյն, զկատարումն գործոց մեղաց։ Այլապէս երևելին 'ի մեղաւոր յարուցեալսն. ուստի խնդրէ՝ զի մի՛ ըստ նոցա վճա֊կին լինիցի և իւր յարութիւնն։

(16) 'Ի ՏԻՒՂՍ ԵՐԿՐԱՍՊԵՂԻՆ : Նմանութիւն աղաչէ՝ չթուել ճշգիւ և մի ը՟ միոջէ զգործս մեղաց . զի որք կամին որոշապէս թուել իրս ինչ, 'ի վերայ մատանցն համարեն մի, երկու, եւն:

(17) ՄԻ ՆՈՒԱՂԱԲԻՐ : Մի՛ նուաղ կամ սակաւ վայելմամբ անցաւոր կենացս՝ զյաւիտենական բարիսն տար ինձ կորուսանել . մի՛ զանվախճան փառսն 'ի սակաւ ժամանակիս տացես ինձ վճարել . մի՛ զանախտ կեանս ընդ հոլովս սրտմութեան փոխել:

(18) ԶԿԱՄՈՒՐՃ ԿԵՆԴԱՂՈՅ : Զնեղ և զտաժանելի անցս կենաց աշխարհի՝ մի՛ համարիցիս ինձ բաւական հանգիստ : Կամ, մի՛ թողուր թէ զանցաւոր զայս կենցաղ՝ որ իբր կամուրջ է անցարան 'ի հանդերձեալ կեանս, համարիցիմ ինձ տեղի հանգստեան :

(19) ԶՀՈՎԻՒ ՀԱՆԳՃԱՐՈՅ : Զյիշատակացն մոռացս մի՛ թողցես 'ի խաւարի, որովանձանօթ մնացեալ իմոց մեղաց՝ 'ի հանդերձեալն հրապարակեսցի ինձ :

(20) ԵԹԷ ՓՆՋԱԿԻՑ : Եթէ անդակից ինձ թողցես զմեղսն, մինչև ընդ իս աճել, և ընդ իս յաւնել, նոքին բաւական են 'ի մաշել զհոգիս . որպէս պատաղիճ կամ բաղեղն բոյսքն՝ անկակից այլ ծառոց գոլով, պատին զնոքօք և անպիտան առնեն :

(21) ՆՈՐ ՀԱՍՏԱՏԵԱՑ : Զի նորոգեսցի բարոյապէս կազմուած բնութեան մարմնոյ անդամոց . որ լինի հպատակութ՟բ մարմնոյն առ հոգին, և զգայութեանցն առ միտսն, և մտացն առ ա՟ծ, և հաստատի նոր մարդ 'ի ք՟ն :

---

Սրբոյն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հօնողի, առ նոյն աղերս ճառընտրայ բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ :

## ԲԱՆ. ՂԹ.

Ա՟. Յիշեա՛ տէ՛ր, տէ՛ր գթութեանց, սիրող իրաւանց՝ ա՟ծ ճշմարիտ . նայեա՛ վերստին 'ի բնութեանս կերպարան միշտ սխալական . զննեա՛ ինձ դարձեալ[1] զամենընթաց տարածմունս ելից արեանս շարժողութեան . բժշկապէս մատի՛ր տեսանել, զի մարդ եմ հաստատեալ մտօք խակութեան թերի խորհրդոց՝ յայն ինչ, զոր դու իսկ վկայեցեր տեսող ոչէից՝ միայն դու անմահն սուրբ խաւարի : Ապա իրաւունս է գրել՝ ինձ ընդ մեղուցեալսն մարդկօրէն վրիպանաց սխալմամբ՝ պարտեալ կրկին իբր զերկրածին մահացու մարմին, քան բանիւ քում սուտ երևել . քանզի արդարև[2] գիտակ իսկ ես, թէ չար է արարն՝ և ընդաբոյս չարութիւն մեր, և ոչ փոփոխին խորհուրդք մեր յաւիտեան, ըստ հոգեհանճար իմաստնոյն կանխազեկոյց առակի :

Է. Թեթեւացո՛ ³ զսաստկու՟ տանջանացն , որ պատ-
րաստեալ և մնայ ինձ՝ արկանել զորդիս գեհենին՝ ⁴
զորդ մահուն յաւիտենականի · բա՛րձ զամօթոյս
պարտիս , որ պահեալ է յայտնել թշուառականիս
յետին ատենին յանդիմանութե՟ ։ ⁵ Խրատ խաղա-
ղութե՟՝ յառաջապարգեւ ողորմութե՟ք քո ընծայեա՛ ·
զի մի անտանելիքն ահաւորութեան ՚ի ցոյց ինձ ե-
կեալ կերպարանեսցին, անյոյս ապշութի ընդ կենաց
զղջման առաջի կարգեալ, դատաստանն ահաւոր ,
անկաշառ և անխաբելի դատաւորն, ամօթն սոսկա-
լի , կշտամբանքն սարսափելի, յանդիմանութին ան-
փախչելի , տագնապն անձողոպրելի , պակուցումն
անխրախուսելի , դողումն անվճարելի , լալումն
անսփոփելի, կրճումն ատամանցն անբժշկելի , ապա-
կանութին անողջանալի, անէծքն սարսափելի՝ ձայնին
քո բանիդ , փակումն գթոյն, և արգելումն ողորմու-
թեանն ։ Որ ⁶ ընդ գալարելն երկնի՝ և ընդ երկրի
դղրդելն ընդ կարծրութի յատակիս , ըստ կուտա-
կելոյ կոհակաց խռովութե ծովու իբր փախստեան
կերպ ցուցանելով, մի զմիոյ հետս խափանեն կասեալ
յերկոցունց · և ⁷ տատանեալ սասանեալ լայնատա-
րած գետնոյս թանձրութե ՚ի հիմանց անտի , ընդ
ուժգնակի բախման թնդելոյ ներքնային խորոց՝ հար-
թէ զլերինս , և հալեալ հրդեհին բնութիք վիմաց
և ամենայն տարերաց գոյից · այլայլն երկինք՝ յա-
նեղծ փոփոխութի, և յեղանակին արարածք տարե-
րօք իւրովք ՚ի նորոգ նմանութի ։ Ծածկուին գոր-
ծոցս հրապարակին, և աներեւոյթք կրից մեր յայտ-
նին · վարք կրօնից ներգործեցելոց՝ ⁸ ՚ի մարմինս մեր
նկարին ։ Թագաւորն երկնից՝ յատենի նստի , վճիռ
հատուցմանն ՚ի ձեռին իւրում ։ Վա՜հ ⁹ վա՛յ ինձ եօթ-
նիցս անգամ կրկին եղկութե՟, ըստ չափոյ կշռութե
այսր համարու, որ զամբաւութիս թուոց պարագրէ ։
Օ՜ ի՞նչ գործեցից ողբալիս հոգի՝ յայնմ մեծի աւուր
վտանգի · քանզի սաստիկ է յիշատակն իսկ յառա-
ջեալ քան զհանդիպումն · զոր ¹⁰ ոմն մարգարէ՝ զօ-
րինակին նմանութի ՚ի դէմս բերելով, զձեպ տագ-
նապի անզերծ փախստեանն նշանակէ ասելովն · զօ՛ր-
օրինակ եթէ փախնուցու ոք ՚ի ձեռաց առիւծու ,

և պատահեսցէ նմա արջ. և փախնուցու յերեսաց
արջոյն, և մտանիցէ 'ի տուն, և յեցուսցէ զձեռն
իւր 'ի յորմ, և խածանիցէ զնա օձ. և դարձեալ
կրկին սաստկացուցանէ առ նոյն կերպարան իրի՝
զտեսիլն քստմնելի, ո՜չ ապաքէն՝ ասէ, խաւար է օր
տեառն, օր խաւարոյ և մթոյ, օր ամպոյ և մա-
ռախղոյ:

Գ. Յորժամ հրեշտակն պահպանողական [11] կենա-
կից, հզօր ոստիկան՝ իրաւամբք ամբաստանեսցէ, և
հատուցանօղն ահաւոր՝ արդարութբ յանդիմանես-
ցէ: Սպասաւորք թագաւորին առանց խնայելոյ խու-
ճապէն, զոմանս 'ի կեանս հրաւիրեն, և զոմանս յա-
մօթն դատապարտեն. կիսոց՝ դէմս լցեալս ծաղու-
ցուցանեն, և ինձ՝ ահարկուս և քստմնելիս երևեցու-
ցանեն. ոմանց՝ պսակս լուսապաճոյճս մատուցանեն,
և այլոց՝ կորուստ մահու բողոքեն. արդարոցն ձայն
աւետեաց, և ինձ գոյժ անվախճան վշտաց: [12] Յոր-
ժամ առ բարիսն՝ մահու յաղթութի իսպառ մեռա-
նի, և ինձ չարագործիս կրկին յարակայի. ուր դը-
րանն բաղխել՝ ո՜չ ինչ ազդիցէ, վճար եղեալ գթու-
թեն առ իս: Յորժամ [13] դպրութիք հրաշիցն զար-
մանալեաց, որ են ծածկեալքն յայժմուցս հասա-
րակաց վարուցն տեսակք՝ մարդկային բնութես գոր-
ծոց, յաղագս որոյ եղեն գոյութիք ամ էից՝ յիւրա-
քանչիւր մարմինս անպակաս գրութբ իսկոյն երևին.
և խորութիք անճառին կնքեցելոց յիմաստից աս-
տեացս՝ առաջի աչաց մերոց կերպարանին: Ուր
այժմ [14] շահավաճառութիք ողբոց և արտասուաց
զերկինս գրաւեն, և անդ իբր զապաժամմն ընդու-
նայնութիք՝ արհամարհեալք լքանին. հառաչմունք
հեծութե՝ ո՜չ կամնիսաւ աստի առաքեալ, չէ երբէք
գտանել անդէն. ողորմութիք ճշդով սերմանեալ,
ո՜չ պայծառ վառմամբ գնան առաջի: Ուր [15] տա-
պանն նախայանցիցն, և կտակարանն տիրանարդիցն,
և նշանն ահաւոր այժմուցս՝ յանդիման եղեալ մե-
ծաձայնս դատախաղեն. յորում սոսկալի վայրի՝ ոմն
զուխտն կցորդուե հայրենի, և ոմն զխորանն վկայու-
թե անտեսիցն, և ոմն զարիւն մեծին ոյ՝ ամբաստան
իմն իրաւացի [16] առաջի իմ տարածանեն: Ոտան-

Ջանարանսն բազմապատիկս՝ անձամբ անձին աստէն իսկ պատրաստեցի, զիա՞րդ մխիթարեցայց [17] համառօտեալս յուսոյ. զի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք արդարոցն, որ փառաւորեալքն են երանութբ, [18] սարսեն թողալով, ո՛չ բաւեն բերել զահաւոր տեսիլ երեսաց մեծ դատաստանին, ես եղկելիս՝ աւանդակորոյս սատակման որդիս՝ ո՞ւր երևեցայց. որ ո՛չ միայն չեմ պսակելոց, այլ և պատուհասն իմ անտանելի,
և կորուստն անսպառելի:

Դ. ԱՅԼ [19] արագեա ամենապարգև՝ զօրութի անճառ՝ ձեռն փրկութե ՚ի կորուստ գերելոյս. զի օգնեալ ՚ի քէն՝ դարձայց միւսանգամ ՚ի դրանց դժոխոց, ամենապատրաստ հանդերձեալ ամենևին անվտանգելի՝ պրծեալ ՚ի պատժոց. աստանօր տեսեալ մտացս իմաստիւ զապագայիցն դիպուածս, բաւականացեալ ՚ի լուր երկիւղին ՚ի տագնապէ տանջանաց՝ ահին համբաւոյ, կամօք քո բարեաց զերծեալ ապրեցայց. և մի մատնեցայց կորեանցն առիւծուց, որք խնդրեն ՚ի քէն զիս ՚ի կերակուր՝ ծախել ատամամբքն գազանութե. զի զօրովայն մահուն լցուցեալ՝ զաստուստ պարարեալս՝ անդ ձգեալ հալէն, ուր անսպառ պահի մնացուած մթերիցն՝ ՚ի ծախումն յաւիտենից: Զի դու միայն բաւես կորզել ՚ի ժանեաց սատակմանն՝ ՚ի կեանս և յերանութի, բնաւից ապաւէն թագաւոր լուսոյ՝ տէր յս քս, օրհնեալ յաւիտեանս.
ամէն:

---

(1) Զամբնբնբաց փարաժմանա: Զննեա՛ ինքն բժիշկ՝ զտարածումն արեանս, որ ընթանայ յամենայն մասունս մարմնոյս Է ճանապարհ երակացն. և խմանին խիղճք և յօժարութիւնք մարմնոյ. և ՚ի քննելդ այսպէս, տեսանես՝ զի մարդ եմ հաաաաաաաւ, այսինքն յօժարեալ, կամ ընտարեալ յաօօ խաիաւեէ, անմտութե և թիւր խորհրդով յայն ինչ, ՚ի չարն, որպէս և դու անսուտ Ճշմարտութիւդ վկայեցեր. (Ծննդ. Է. 21:) Վասն որոյ խրատեցի է համարիլ, թէ ես Է մարդկօրէն սխալեալսն կրկին յաղթեալ եմ և պարտաւոր ինքն զերկրածին ախտաւոր մարմնի, քան զքո բանիդ սուտ երևել: Զայս զմեր բնածին ախտաւորութի վկայելով քո, ինք խրատամիք ցուցանես զօրումել քո առ մարդն մեղուցեալ, քան առ դևս: ՚ի սոյն միտս ՚ի սկզբան աղօթիցս յետ սակայն, Փր Գբաաբէց, յարէ ՚ի նոյն, աերօղէ երաաանց. որպէս թէ յայն սախ գթաս ՚ի մեզ, վասն զի սխրօղ խրատանից ես:

(2) Գնէաաէ էաէ էա: 2 օրին. Գէաէա էաէ: գիտես՝ թէ լար է արար, ապականեալ կամ անկարդ է արարուածն մեր, այսինքն ծնունդն վս սկզբնա-

կան մեղաց , և ընդարձակս չարութեան Տէր , բնական կամ 'ի ծննդենէ յօժարութենն առ չարն . և ոչ ծածկին խորհուրդք Տէր . խորհուրդքն աղդեալք 'ի մարմնոյ և յարենէ՝ ոչ փոփոխին 'ի չարէն , այսինքն միշտ 'ի չարն հակամիտեն : Զայս բան ասաց իմաստունն ( Իմաստ . ժբ . 10 . ) զքանանացւոց՝ վասն մասնաւոր պատճառի անխծլյն , ընդ որով անկեալ էին . որպէս և յարէ զկնի . ( համար . 11 . ) * Զի զաւակ անիծեալ էր 'ի սկզբանէ . || ( ըստ ծննդոց . թ . 25 : ) Եւ ոբ վարդապետս յարմարէ զայն առ ամենայն մարդիկ՝ սակս ընդհանուր պատճառի սկզբնական մեղաց :

(3) Զտարափոյն տանջանացն : Զծանրութե յաւիտենական տանջանացն՝ բեբեռացն , այսինքն բարձ լինէն քաւութե մեղացս . կամ , նուաղեցն փոխարկելով 'ի ժամանակաւոր տանջանս :

(4) Զարդ ձեռանն : Ես որդիս գեհենի , որ վասն մեղացս եմ իբր զարդ , այսինքն պատշաճաւոր նիւթ յաւիտենից պարտաւորութեն , որպէս գոյն է զարդ կախաղանի :

(5) Խռովք խաղաղութե : Պատուհաս հաշտութե ընդ քեզ՝ այժմէն քո ողորմութեդ ած 'ի վերայ իմ . զի մի անպատեհինն ահաւորութե , երկիւղալիքն ահաւոր մեծութե քո կամ դատաստանիդ . կամ , զի մի ահաւոր անտանելիքն յանդիման աչացս եկեալ երևեսցին . անյուսալի պարտութի ընդ կենաց ցցման , փոխանակ կենսաբեր զզման առաջի դնելով : Այն անտանելիքն են տապատանն ահաւոր , են :

(6) Ընդ գալարեալ երկնի : Գալարումն երկնից՝ խորհրդեամբ յայլ և այլ միտս առեալ է 'ի վարդապետաց . ( 'ի մեկն . յայսմ . գ . 14 : ) ոմանց զերկրորդ գալստեան քն իմանալով , և այլոց՝ զհրեշտակաց վերակացելն ը կործանումն երկրի . և կիսոց՝ զեկեղեցւոյ անյայտիլն յաւուրս նեռին : Բայց ըստ ձայնին որպէս իմանան մեկնիչք զհաւաքումն և զպատել թարձր և մթագին ամպոց զերեսօք երկնից . որովք խաւար ծածկի իբրև զմագաղաթ փաթութեալ . և լուսաւորքն՝ որք իբր գրուածք են 'ի տարածութե երկնից , աներևակ լինին : Կամ , գալարումն խմ զպատեանս խիտ ամպոց , որք 'ի միմեանս շրջանակելով երևեցուցանեն զերկինս գալարիլ : Ընդ որս և երկիրս գլորդեալ , շարժի ընդ հարծեան յապակին , 'ի պնդութե իւրում իբրև 'ի խռովեալ ծովու , յորում կոհակք կամ ալիք դիզացեալք իբրև փախչել ցուցանեն , բայց դիպեալք միմեանց՝ կային :

(7) Տապանեալ աստանեալ լայնատարած գեհենոյս Բանջրութէ : 2 օրին . տապանեալ աստանի լայնատարած գեհենոյս Բանջրութե : Այն շարժումն երկրի՝ ոչ իբրև զբնական գետնաշարժս՝ լինի 'ի մասնաւոր տեղիս , կամ առ երեսօք գետնոյս . այլ բովանդակ հողագունտս ամենայն թանձրութեն գլորդի , 'ի ներքին խորոց անտի գոլորշեացն հողմ ուժգին յարուցանելով . որով լերինք տապալին , և հալին բնութե վիմաց , 'ի ծծմբախառն հրոյ . կամ հալիլ ասէ զմնր փշրիլն . և այրեալ եղծանին բնութիւնք տարերաց գոյից . այսինքն գոյացելոցն 'ի տարերաց , որք են բաղադրեալքն 'ի նոյանց . զի բուն տարերքն մաքրին միայն 'ի հրոյն , և ոչ ապականին : Այսպիսի Երկինս , երեւք երկնից կամ օդքս մաքրին յօտար խառնութեց . և մնան այնուհետև յստակ և անեղծ . և յեղանակեն արարածս , փոփոխին նիւթական արարածքս՝ տարերօք երկրի , բաղադրիչ սկզբամբք իւրեանց , 'ի նորոգ նմանութե , 'ի նոր կերպարան . որով իմանի՝ թէ մարմնաւորքս ամենայն կերպարանափոխ լինին :

(8) 'Ի ձորձոյ Տէր : Գործք արդարոց և մեղաւորաց երևին 'ի մարմինս իւրաքանչիւր արտաքին նշանօք ուրախութե և տրտմութե , գուցէ այլովք ևս նշանօք՝ որպէս 'ի կայլն ցուցաւ : Այսպէս վարք կամ վար-

մունք իւրաքանչիւր կրօնից կամ կարգաց՝ ըստ որում գործովք ցուցեալ տեսանին, յանդիման լինին բովանդակ երկնի և երկրի. և իւրաքանչիւր այր թէ ըստ իւրում անկելոյն գործեալ իցէ՝ և կամ հակառակն՝ դատի ակներև: Ընդ երկնից արքայն Նստեալ դատաւոր, և վճիռ հատուցմանն 'ի ձեռին Իւրում, այսինքն պատրաստական, ըստ հրամանի Նորա ինքնին զօրաւոր, վճռատու և գործադիր միանգամայն, անկարօտ այլում ձեռին:

(9) Վա՜յ ինձ եօթնիցս: Յայտն. Ը. 13. երիցս վայ տուաւ երկրի. իսկ ինձ աստ՝ եօթն անգամ վայել է. և այն՝ ինձ եղկելւոյս, թէ վասն հատարակաց աւերածոյ երկրի, և թէ վասն իմոյ առանձին կորստեանս: կամ, եօթն վայ վասն հոգւոյս, և եօթն ևս վասն մարմնոյս: Այս եօթն թիւ զանբաւութիւն թշուառութեանս նշանակէ. զորմէ տես 'ի բանն լա. լծ. 6:

(10) Որ հարկանէ: Այսինքն Ամովսի. (Ե. 19. 20.) բայց վերջին բանն՝ օր խաւարոյ, ևն, է Սոփոնիայ. (Ա. 15:)

(11) Կենակից: Այսու յայտ առնէ՝ թէ հրեշտակն պահապան 'ի ծննդենէ կարգեալ 'ի խնամս մեր, ընդ մեզ մնայ մինչ 'ի մահ. ուստի որպէս քաջ տեղեակ ամենայն գործոց պաշտպանեցելոյն՝ կարող է մի ըստ միոջէ վասն ամենայնի վկայել:

(12) Յարձակման բառնին: Յայնժամ 'ի վերջնումն դատաստանի՝ մահն որ յաղթեալ էր բարեգործաց բառնալով զկեանս մարմնոյն, դադարէ իսպառ անմահ յարութեամբ նոցա, որով ոչ ևս կարէ յարձակիլ 'ի վերայ նոցա: Իսկ ինձ չարագործիս, այսինքն չարագործացն իբրև զիս՝ կրկին ևս յարձակի, յոր կայ մնայ յաղթութի մահու. զի թէպէտ չարագործք ևս յառնեն առանց այլևս մեռանելոյ, բայց ժանտութի մահու անփարատելի կայ 'ի նոցանէ, անշարժելիք զօրէն անկենդան դիոյ, զազրահոտք, զարշատեսիլք իբր դէշ, միշտ 'ի տագնապս իբր օրհասական հոգեվար. միով բանիւ, գոյ 'ի նոսա ամենայն դառնութի մահու, բաց 'ի միակ դիւրութենէն՝ որ է անզգայութի:

(13) Դարանք հրաշից: Մատեանք հրաշալի գործոց մարդկան՝ որք այժմ ծածկեալք են՝ թէ յայլոց, և թէ յիւրաքանչիւր անձինէ. զի ոչ միայն զայլոց զբարին կամ զչարին ոչ ճանաչեմք այժմ հաւաստի, այլ և զպարունս 'ի մէնջ գործեցեալս: Այս մատեանք՝ են խիղճ մտաց իւրաքանչիւրոցն, այլ և յայտնութին ածային, որ իբրև 'ի գրի ծանուցանէ ամենեցուն զգործս իւրաքանչիւրոց: Եւ ասին հրաշք, կամ հրաշալիք զարմանալեաց. զի անկարծելի իրք յայտնին յայնժամ. բազում բարի կարծեցեալ գործք՝ ցուցանին լինել չար, և չար կարծեցեալքն՝ բարի. փոքր չար կամ անփոյթ համարեալն՝ տեսանի լինել մեծ. տեսանին յայնժամ անբաւ սեռք և տեսակք և պարագայք չարութեց, որք առնեցուցանեն զմիտս. տեսանի և անհասանելի ապերախտութիւն մարդկան առ անհամար երախտիս այ: Այս ամենայն տեսութիւնք յիւրաքանչիւր ճակատու, այսինքն 'ի կիրս դիմաց իւրաքանչիւրոց, այլ և 'ի խոստովանութե բերանոյ նոցա Անդանօր գրեալք, ճիշդ և անվրէպ ծանօթութեամբ երևելն, զի կիրք դիմաց՝ և բանք բերանոյ՝ են իբր գիր 'ի մարմնի: Որ յաւելուածն՝ թէ վասն մարդոյ եղեն գոյութիւնք ամենայն էից, զայն ակնարկէ թէ քննութի լինիցի՝ զիարդ վարեցաւ մարդ իւրաքանչիւր արարածովք, և թէ նոքին իսկ լինելոցք են դատախազք և տեսօղք հատուցմանն՝ որ չափեսցի մարդկան ըստ գործոց 'ի լաւն կամ 'ի վատթարն: Եւ խորհուրդք անձանց, գաղտնի խորհք անձանց խնամոցն այ, նախախնամութեն, փրկագործութեն, երկայնմտութեն, ներքին ազդեցութեցն, պահպանութե հրեշտակաց, փառաց արդարոց, և

տանջանաց մեղաւորաց, Ա՛ն, որք անծանօթք են յայժմու մեր գիտութեա՛ս, անդ 'ի դատաստանին յայտնապէս ծանիցեն : Եւ այնպէս գործք մարդոյն՝ և գործք ա՛յ երևեսցին իբրև երկու լերինք, յորոց վերայ կացեալ ա՛յ դատեսցէ զմարդիկ : ( ղեքար. Է. 1. և ԺԴ. 4 : ) Յոյս խմմ և զաղմտն. ( լէ. 7 : ) * Արդարութիւնք քո որպէս լերինք ա՛ծ, իրաւունք քո՝ որպէս խորս բազում : ||

(14) Շահաշխարհութիւն ուշեայ : 2 օրին. և 'ի հին լուծ. Աշխարհաշահութիւն : Ուր այժմ շահեկանութիւն ողըոց զղջման զերկինս կարէն առանալ, անդ յետ աստի կենացս իբր պատժական ընդունայնութիւն, իբրև զանդան հասեալ, կամ ոչ 'ի պատշաճ ժամու ապաշխարել անպիտան՝ գործս՝ արհամարհեն :

(15) Տապանն Նախայանցէցն : Տապանն Նոյի երևեսցի 'ի յանդիմանութիւն առաջին յանցաւորացն 'ի բնական օրէնսն : Եւ Խորանն՝ Վկայարանն. տախտակք օրինացն մովսեսի երևեսցին հրէիցն անարգողաց զքն. որպէս և խաչն քի երևեսցի Քրիստոնէից, քրիստոնէից՝ որք 'ի նոր օրէնս : Ձևացուցանէ զսեսիլ առենին քի իբր բանաստեղծ՝ ըստ օրինակի նկարչաց, որք զնոյ երևեցուցանեն տապանաւն, և զմովսէս՝ տախտակօքն : Այսպէս թէ ոչ՝ նիւթական տապանն՝ և տախտակքն ոչ մնան մինչ յօր դատաստանին, բաց 'ի խաչափայտէն քի. զոր յաւետարանէ գիտեմք մնալ և երևել 'ի դատաստանին : Եղնիան 'ի վարս մովսէսի ասէ ըստ ոմանց կարծեաց՝ և վասն տախտակաց մովսեսի երևել յայնժամ. սոյնպէս և վասն նոյեան տապանին ասի 'ի գիրս ինչ՝ կարապետ լինել հանդերձեալ աւուրն : Բայց այսոքիկ յանընդունելեաց կարգի են : Այսպէս մտօք ոչ վարդապետելս է, թէ նոյ բնական օրինօքն՝ ( զոր կոչէ՝ Ուխտ Հայրենի, ) յանդիմանէ զառաջին մեղուցեալսն. և մովսէս՝ նաև գրաւորական օրինօքն կշտամբէ զհրէայսն. և Քն նաև աւետարանական օրինօքն՝ զքրիստոնեայս : Իսկ ինձ ասէ՝ երեքին ևս դատախազ լինին. զի երիւքն ևս իրատեցայ, և յերիցն երախտիս վայելեցի, և ոչ ուղղեցայ :

(16) Աստղի Խմ փարածանէն : Զփանջանարանան բաղմապտինի՝ անյամբ, Ա՛ն : 2 օրին. այսպէս զնեն. աստղի Խմ փարածանէն, զփանջանարանան բաղմապտինի, զոր անյամբ անյին ասպէն Խոյ պատրաստէցի : Զեմրդ մեխթարեցայց, Ա՛ն. որ այսպէս խմանի. զերեսին օրէնսն առաջի իմ տարածանեն՝ իբրև բազմապատիկ տանջիչս, զորս անձամբ խմով ասա ինձ պատրաստեցի : Վասն որոյ զկարդ մխիթարեցայց, Ա՛ն :

(17) Համաօրէնաւ յուսայ : պակասեալս 'ի յուսոյ : տես 'ի բանն Ձ. Լծ. 1 :

(18) Սարսէն Դողալով : Դողալն հրեշտակաց և սրց՝ խմանի պատկառիլ որդիապէս յահաւոր մեծութէ դատաւորին, և ոչ յերկիւղէ դատաստանին իբր յանցաւոր կամ դատելի : Այսու օրինակաւ խօսի և ոսկեբերան ( Ճառ Ա. առ Թէոդորոս մեղուցեալ. ) վասն ընդհանուր դատաստանին. * Երկիւղ անհնարին պաշարեսցէ զնոյն իսկ հրեշտակս, և ոչ միայն զհրեշտակս, այլ և զհրեշտակապետս, զաթոռս, զտէրութիւնս, զիշխանութիւնս, և զզօրութիւնս. զի ասէ՝ զօրութիւնք երկնից շարժեսցին. վասն զի ծառայակիցք նոցա պատիժս ընդունելոց են վասն անցեալ կենաց իւրեանց : || Նա ինքն ոսկեբերան. Թղթ. Է. առ Ողիմպիադա ասէ վասն հրեշտակաց. * Զի թէպէտև միոյ իրիք յանցանաց խիղճ ոչ ունին, և ոչ 'ի դատաստան մտանելոց են, սակայն տեսեալք 'ի հարցափորձի զընդհանուր ազգ մարդկան և զաղինս անհամարս, ոչ աւանց երկեղի կան անտանոր : ||

(19) Արագէմ : Կանխեցի յառաջ քան զօր դատաստանին՝ յետոյ ծերունոյն, զօգնութիւն փրկութէ. որով դարձայց մեղանչող, որպէս յայլ

անդամս ապաշխարութեան, 'ի դրանց դժոխոց, 'ի պարտաւորութեն դժոխոց. և բարի գործովք ամենայնիւ պատրաստ եղէց՝ անվտանգ ազատիլ 'ի պատժոց անտի. և այժմ մտօքս տեսանելով զապառնին ահաւոր դիպուածն, բաւական լիցի ինձ լուր երկիւղի տանջանացն. և կամօք քո Տէրէաց, այսինքն բարերար քո կամօքդ զերծայց. և մի մատնեցայց նեղեանցն աւերածոց, դիւացն՝ որք կամին որսալ զիս 'ի քէն, 'ի չնորհաց քոց հանել. որպէս զի զօրաւորին նախանձ, զմահացուցիչ ոտնձգութիւն բերանացն ցանելով, ղաւթառաց պարարեալք, զի՛ զոր ատն պարարեցին մեղօք, անդ 'ի դժոխս հալեսցեն, և առանց սպառելոյ ծախեսցեն:

[1] Մերոպէն յաւելուած նըշէն հեծութէ՝ Նորէն հոհողէ, առ Նոյն աղերս Ածածնայ բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

## ԲԱՆ. Չ.

ա. Եւ արդ 'ի վերայ այսքանեաց[1] յուսահատութեանց և աճարկու սրտաբեկութեանց, պակուցանողական սաստկութեանց ա̃ծային բարկութեանց, տագնապեալ ոգւով թախծութեան խպառ, աղաչեմ ըզքեզ որ ա̃ծածին: Հրեշտակ 'ի մարդկանէ. մարմնատեսիլ քերովբէ. երկնաւոր արքայուհի. անխառն իբրև զօդ. մաքուր որպէս լոյս. [2] անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան. գերազանց քան զընակութի[3] անկոխելին սրբութեանց. երանաւոր խոստմանն տեղի. եդեմ շնչական. ծառ կենացն անմահից[4] բոցեղէն սրոյն պարունակեալ. 'ի բարձրելոյն հօրէ զօրացեալ և հովանացեալ, հանգստեամբ հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ, բնակութեամբ որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ: Միածնին հօր՝ և քեզ անդրանիկ. որդի քո ծննդեամբ՝ և տէր արարչութեամբ: Ընդ անաղտ[5] մաքրութեանդ՝ և անբիծ բարի. ընդ անարատ սրբութեանդ՝ և խնամակալ բարեխօս. ընկալ զմաղթանս այսր աղերսանաց՝[6] քում դաւանողիս, և մատո ընծայեա ընդ սմին խառնեալ[7] զբանն իմ նախնի՝ մեծիդ ներբողի՝ 'ի քոյդ պաղատանս: Խուսեա միացո զմեղուցելոյս դառն հեծութի ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ հայցուածոյ՝ տունկդ կենաց պտղոյն օրհնութեան. զի 'ի քէն միշտ օգնեալ և բարեգործեալ, և 'ի մաքրական քո ծնելութեանդ ապաւինեալ և լուսաւորեալ,

կեցից ք՜ի որդւոյ քոյ և տ՜ն ։
Բ․ Օժանդակեա՛ թեւոց աղօթիւք՝ խոստովա-
նեալ [8] մայրդ կենդանեաց՝ և ելիցն իմ յերկրէս հով-
տէ, առանց լլկանաց հետեւել ՚ի կեանս օթեւանացդ
պատրաստուե՜․ զի թեթեւասցի կատարածն իմ ինձ՝
ծանրացելոյս անօրէնութե՜․ Արասցես տօն ինձ բեր-
կրութե՜ զօրն իմ տագնապի՝ ողջացուցիչ երկանցն
եւայի․ բարեխօսեա՛ խնդրեա՛ աղաչեա՛, զի ըստ ան-
ճառելի մաքրութեանդ և ահա զբանիդ հաւատամ
զընդունելութի՜ ։ [9] Արտասուօք օգնեա վտանգեցե-
լոյս՝ գովեա՛լդ ՚ի կանայս․ ծունր խոնարհեցո առ իմ
հաշտութի՜ ծնօղդ տ՜յ․ ընդ իմում թշուառիս հոգա՛
խորա՛ն բարձրելոյն․ ձեռն տուր անկելոյս տաճա՛ր
երկնային․ փառաւորեա՛ զորդիդ քո ՚ի քեզ՝ [10] ա՜ծօ-
րէն ինձ հրաշագործել քաւութի՜ և ողորմութի՜ աղա-
խնի՛ն տ՜յ և մայր․ բարձրասցի՛ պատիւ քո ինև, և
յուցցի՛ փրկութի՜ իմ քև ։
Գ․ Եթէ զիս գտցես տիրամայր․ [11] թէ ինձ ողոր-
մեսցիս՝ սրբուհի․ թէ զկորուսեալս շահեսցիս՝ ա՛-
նարատ․ թէ [12] զհարթուցեալս յանձանձեսցես՝ եր-
ջանիկ․ թէ զամաչեցեալս յառաջ մատուսցես՝ բա՛-
րեշնորհ․ թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես՝
միշտ ս՜բ կոյս․ թէ զմերժեալս ընտանեցուսցես՝ մե-
ծարեա՛լդ տ՜յ․ թէ յիս ցուցցես զգթածութիւն՝
լուծիչդ անիծից․ թէ զծփեալս հաստատեսցես՝
հա՛նգիստ․ թէ ՚ի խռովութեանցս յուզմանց փո-
խեսցես զիս՝ խաղաղարար․ թէ վրիպելոյս ինձ հնա-
րաւորեսցես՝ գովեալ․ թէ վասն իմ [13] մտցես ՚ի հան-
դէս՝ մահու նահանջիչ․ թէ զդառնութիս իմ անու-
շեսցես քաղցրութի՜․ թէ զբաժանմանն իմ խտրոց
քակտեսցես՝ հաշտութիւն․ թէ զանմաքրութիս իմ
բարձցես՝ եղծմա՛ն ընդոտնիչ․ թէ զմատնեալս մահու
փրկեսցես՝ կենդանի՛ լոյս․ թէ զլալեացս ձայն հատ-
ցես՝ բերկրութի՜․ թէ զխորտակեալս կազդուրես-
ցես՝ դե՛ղ կենաց․ թէ ՚ի կործանեալս յիս ակնար-
կեսցես՝ հոգելից․ թէ ողորմութե՜ ինձ պատահեսցես՝
[14] կտա՛կ նուիրեալ, օրհնեալդ միայն ՚ի շրթունս ան-
բիծս լեզուաց երջանկաց․ ահա՛ [15] կաթիլ մի կաթին
քումդ կուսութե՜ յանձն իմ անձրեւեալ՝ կենաց ինձ

զօրէ, մայրդ բարձրելոյ ա̃ն յ̃ի արարչին երկնի և
ընաւրին երկրի: Ո որ անճառապէս ծնար [16] բովան-
դակ մարմնովն և համայն ա̃ծութբ̃ն, որ փառաւո-
րեալն է ընդ հօր և հոգւոյն սբ̃յ էութբ̃, և անքննու-
թբ̃ մերոյին բնութբ̃ս միացելով, [17] ամենայն՝ և յա-
մենայնում, մի յերրորդութենն. Նմա փառք յաւի-
տենից յաւիտեանս. ամէն:

---

(1) Յուսահատութիւն: 'Ի վերայ այսքան յուսահատիչ իրաց և դիպուա-
ծոց, և զարհուրելի որոգայթիցս, լքմանց սրտի, և սարսափեցուցիչ
տագնապաց, սպառնալեաց, որք մեան լինէ յանձայն բարկութեն յա-
հեղ դատաստանին, այժմէն ըմբռնեալ ախտութբ̃, թէպէտև պարտաւ-
ցի առ գթութին Այ̃ ապաւէլ զիս յանզերծ կորստենէն, բայց երկն-
չիմ գուցէ վասն անարժանութեան չլինիցիմ լսելի. վասն այսորիկ ա-
պաւինեալ 'ի քո միջնորդութիւն, աղաչեմ զեղ ա̃ն: Յաղագս բառիցս՝
յուսահատել, յուսահատութիւն, կամ անյոյս լինել, անյուսութիւն, և նմանեաց
սոցին, գիտելի է, զի պէսպէս օրինակաւ վարին 'ի գիրս. երբեմն նշա-
նակեն զյուսահատեցուցիչ իրս. երբեմն զմեծ դժուարութիւն իրաց.
երբեմն զմեծ և զսաստիկ տրտմութի: Բայց յատկապէս նշանակեն զշար-
ժումն բաղձողական մասին մարդոյ 'ի բարւոյն՝ զոր չէ հնար ստանալ.
և ըստ զանազանութե բարեացն՝ և անհնարութեց նոցա, յուսահատու-
թիւն ևս լինի բարի և օրինաւոր, կամ անբարի և անպատշաճ: Եթէ
հայի 'ի գերբնական բարիս փրկութե՝ իբր անհնարինս առ ստանալ նաև
զօրութբ̃ն այ̃, միշտ է չար, և մեղք ընդդէմ հոգւոյն սբ̃յ: Եւ սակայն
յայտ է թէ ոչ ըստ այսմ մնաց 'ի կիր առնու ո̃ք վարդապետս, որ ամե-
նայն ուրեք խոստովանի զա̃ծ՝ կարող ամենայն անհնարից, և միշտ հայցէ
զշնորհս և զփրկութի: (տե՛ս 'ի բանն ժա̃:) Իսկ եթէ յուսահատու-
թիւն հայի 'ի բնական բարիս՝ իբր անհնարինս բնական զօրութբ̃, կամ 'ի
գերբնական բարիս՝ իբր անհնարինս մարդկային զօրութբ̃. կամ նաև ը̃
կարգի հասարակ նախախնամութեն այ̃, ըստ այսմ յուսահատութիւնն
բարի է և օրինաւոր՝ յորժամ անհնարութիւնն ճշմարիտ է: Եւ յայս միտս
իմանալի է՝ ուր ուրեք ո̃ք վարդապետս զնքենէ, կամ զայլոց կենդանի
մեղաւորաց գնէ յուսահատեալ կամ պակասեալ 'ի յուսոյ. որպէս 'ի
բանն հա̃. 4. 'ի վերջն. Հեծութէ յուսահատելոյ: և հը̃. 2. յանձնեալ
ծանօթ յուսահատութեան: և հթ̃. 3. համառօտեալ յուսոյ: և ատո.
3. թէ յուսահատելոյ ինչ մխիթարութեան: ըստ այսմ և լա̃. 3: ժը̃. 1: իը̃.
2: Վասն զի ծանրութե մեղացն՝ զոր խոստովանի, յաճախութե փոր-
ձութեց և որոգայթից սատանայի, դիւրասահութիւն 'ի մեղս, ապե-
րախտութե մարդոյն, արդարութիւն այ̃, ևն. այս ա̃մ անհնար առնեն
զազատութե մեր յայնցանէ՝ ոչ միայն մարդկային զօրութբ̃, այլ և բա-
զում անգամ ըստ հասարակ օրինաց նախախնամութեն այ̃. ուստի յայսմ
կողմանէ յուսահատութե ներգործի 'ի մարդն. բայց քանզի ապաւէլ
կարող է ա̃ծ բացարձակապէս, և անբաւ ողորմութբ̃ն կամի և խոստա-
նայ տալ ճշմարիտ հայցողացն, վասն այսորիկ մնայ տեղի յուսոյ խառն
ընդ երկիւղի: Թող զի սովորաբար ընդ կիրս յուսահատութե կից գո-
լով տրտմութիւն, և ըստ մեծութե յուսահատութե՝ մեծ տրտմութիւն,
նմին իրի բազում անգամ յուսահատութի նշանակէ սաստիկ տրտմութի,
և յուսահատեալ նշանակէ՝ կարի տրտմեալ, լքեալ, և այլն: Զայս հա-

մաւօտիւ ծանուցաք , ոչ միայն վասն բանից սըդ վարդապետիս , այլ և վասն այլ գրոյ՝ յորս գտանին այսպիսի բանք . որպէս և այն՝ որ 'ի շարականն յարութեն ասի : * Մայր խաչեցելոյն , զի՞ լաս յուսահատեալ , || ուր յայտնապէս զմնական յուսոյն խօսի՝ որով անշնորհն էր բնական ձանապարհաւ կենդանի տեսանել զորդի իւր . յորմէ և անշնորհն թափ-ծեալ կայր . և ոչ եթէ զերկնական կամ զաստուածաբանական յուսոյն , որոյ պակասութիւն միայն է մեզ ընդդէմ հոգւոյն սըյ : Իսկ զայս այլազգ ի-մանալն՝ այնպէս խոտորնակ է , որպէս եթէ ոք զասելն առաքելոյն . ( բ . կոր . ա . 8 . ) * Մինչև անյոյս լինելոյ մեզ և 'ի կենաց , || իմա-նայցէ՝ անյոյս լինել 'ի զօրութենէն այ , կամ 'ի յաւիտենական կենաց , ուր բանն է զաղատանէ 'ի նեղութեանց բնական ձանապարհաւ : Վասն որոյ զգուշալի է՝ զի մի՛ ոք ախտաբար այլ ը այլ իմանայցէ զուղիղ գրեալսն , կամ ստգտանիցէ զգրօղսն , որով զանձն ագէտ ցուցանիցէ :

(2) Անաղարտ : Մաքուր , յստակ՝ իբրև զնեռիկ առաքինի բարերարութե . այսինքն ատեղն առաւօտու , յորժամ բարձր է , և յառաջընթաց լինի արեգական :

(3) Անկոխելին սրբութեանց : Քան զսեղն սրբութեան սրբութեանց , ուր ոչ կոխէին քահանայքն և ժողովուրդքն : ( եբրայ . թ . 7 . ) և սբ կոյսն գերազանց առաւել քան զայն , զի անդր միանգամ յամին մտանէր քահա-նայապետն՝ մատուցանել զարիւն անբանից . իսկ 'ի սբ կոյսն ոչ երբեք եմուտ մարդ , այլ միայն ածն բան՝ առնուլ 'ի նմանէ մարմին :

(4) Բողբոջն որոյ : Հրեշտակաց պաշտպանութբ պատեալ էր սբ կոյսն՝ ոչ զի 'ի խնամոց նորա անձաչափ հիացեալ մարդիկ իբրև զծառն դրախ-տին , այլ զի կուսութի նորա անմերձենալի 'ի մարդկանէ լինիցի , և զաղտնիք մեծութե նորա թաքուն պահեսցին 'ի դիւաց :

(5) Մաքրութեդ : 2 օրին . Նաքրութեդ : ընդ անախտ մաքրութե կուսու-թեդ՝ միանգամայն բարի ես՝ ոչ միայն այլովք առաքինութեբք , այլ և հաւրդութեբ քոց բարեացդ 'ի մեզ : Այնպէս զանարատ սրբութի ու-նելով , ոչ գարշիս յանառակ մեղաւորացս , այլ լինիս խնամակալ բարերարս :

(6) Քում դաւանողիս : Որ դաւանեմ զքեզ Մայր այ , և միշտ Կոյս , և ամենայն ախտոյից խնդ զօրեղ բարեխօս :

(7) Զբանն իմ նախնի : զԳումարք իմեքեն ասէ , զոր ամօք յառաջ յօ-րինեալ էր ըստ խնդրոյ Ստեփաննոսի մեկաց Եպիսկոպոսի , յորժամ գրեաց զպատմութի խաչին Ապարանից : Եւ զի այն փոխադրութի և շինութի գիւղաւ 'ի ՆԼԲ թուականին , որպէս ասի անտանօր 'ի յիշատա-կարանին , եթէ միով կամ երկու ամաւ զկնի յօրինեցաւ ներբողեանն , չէտ գայ իբր 18 կամ 20 ամօք յառաջ ասարեալ քան զաղօթսն , որ կատարեցան 'ի թուին ՆԾԱ կամ ՆԾԲ :

(8) Մայր կենդանեաց : 2 օրին . կենդանաբեր . այլ օր . կենաց : Օգնեա՛ , հաս 'ի թիկունս բնաւոր աղօթից , բազկատարած աղօթիւք , կամ փո-խադրութեամբ հոլովոյ՝ թեւովք աղօթից , խնամ ելանելոյս յաշխար-հէ՝ ով տիրածին , զոր խոստովանիմք ճշմարիտ մայր կենդանեաց կամ կենդանութե՝ փոխանակ Եւայի , որ եղև առաւել մայր մեռելոց : Որ-պէս զի եղիցի ինձ առանց վշտաց և տագնապի ելանել գնալ 'ի կենաց օթեւանաց դարձադարձութե . իմն փոխադրութբ հոլովոյ , այսինքն գնալ 'ի պատրաստեալ օթեւանս կենացն . որով գոնէ կատարած կենացս մահն՝ թեթեւանայցէ ինձ , դիւրանայցէ , որ 'ի կենդանութեն ծանրացոյ մե-ղօք : Այնպէս զի օր մահուն՝ որ տագնապեցուցիչն է , լիցի վասն իմ տօն ցնծութե . և այս չէ՛ քեզ դժուարին կամ անտոր . քանզի դու ող-ջացուցիչ կամ բարձօղ գոլով երկանց՝ ցաւոյն Եւայի , ըստ նմին և զտագնապ մահու՝ որ եղև 'ի մեզ յանիծից նորա՝ կարող ես 'ի ցնծութե

փոխարկել: Այլ քում բարեխօսութեն ոչինչ անկարանայ․ քանզի հաւատամ թէ որպէս անճառելի է մաքրութիւդ, նոյնպէս ամենընդունող է աղաչանքդ․ որպէս որդութին քո է ածամայրական, նոյնպէս խընդրուածքդ՝ ածամայրական, այսինքն այնպիսի խնդրուածք՝ զի է միանգամայն իբր հրաման առ որդի:

(9) Արտասուօք օգնէմ: Բանաստեղծօրէն գգթալից աղաչանան կոչէ արտասուս, իբր նշան փոխանակ նշանակելոյ: Կամ, զարտասուսն զոր 'ի չարչարանս փրկչին եհեղ, աղաչէ ընծայել Ած: Ցօղոյ խառնահեղս, ոչ զնմանական ծնրադրութիւն ասէ, այլ զխոնարհական պաղատանսն: Զի ով այսպիսեաց բանից այնպէս իմն հեղու զկիրս իւր առաջի Տիրամօրն, որպէս եթէ զյաւաղին զեւր կիրս զարթուցանել 'ի նմա կամիցի․ իբրեւ ասել․ ես արտասուելով պաղատիմ, արտասուեա՛ եւ դու ընդ իս ով ամենագութ․ ես ծնրադրութեամբ հայցեմ, խոնարհեցո՛ եւ դու ծունր առ իմ հաշտութիւն․ 'ի հոգս վշտագնիմ ես, ընդ իմ թշուառութիս հոգա՛ եւ դու: Այնչափ հաւատամ զգթոյ մայրենի գթոյդ առ մեղուցեալս, մինչ զի եթէ հնար էր՝ դու ինքն ընդ իս լայիր, ծունր դնէիր, հոգած լինէիր:

(10) Անօրէն իմ հրաշագործել: Որպէս 'ի կանայ գալիլեացւոց քով միջնորդութեամբ հրաշագործեաց Քս, զջուր 'ի գինի փոխելով, ոչ զի դու փառաւորեսցիս, այլ 'ի քեզ Որդին․ նոյնպէս ընկա՛լ և այժմ, զի ածարար ներգործեսցէ յանձն իմ զպարգեւս թողութեան և երանութեան․ որով որդիդ քո փառաւորեսցի իբրեւ ակզբնաւոր ողորմութեան․ բայց նաեւ պատիւ քո բարձրասցի 'ի պատճառս իմ․ ցուցանելով թէ փրկութիւն իմ քեւ յաջողեսցի․ զի որչափ առաւել մեղապարտ եմ ես և անարժան, նոյնչափ մեծանայ պատիւ քո յերկինս և յերկրի, եթէ քոյով պաշտպանութեամբ ապրեցայց:

(11) Թէ իմ ողորմեսցես: Բովանդակ բանքս՝ որք էին շաղկապաւ կապմեալ էն, կրկնակի նկատին: Մի՝ յարելով ընդ նախընթաց բանին, ցուցէ երկոսին իմ քեւ․ այսպէս: Ցուցցի փրկութիւն իմ քեւ, եթէ զիս գթասցես ով Տիրամայր, եւն․ և ըստ այսմ ամենայն պատուոյ անուանքն ընծայեալք ածածնին, իմանին իբր կոչականք․ այսինքն ով սրբուհի, ով անարատ, ով երջանիկ, եւն: Երկրորդ, նկատին իբր նոր գլուխ բանի․ և ըստ այսմ պատուոյ անուանքն ոչ են կոչականք, այլ ուղղական, այսպէս, եթէ զիս գթասցես, Տիրամայր ես, եւն: Այսմ մտաց նպաստեն 2․ օրինակք, որ զասացեալ անուանդ չեշտեն 'ի վերջն, դնելով, Տերամայր, սրբուհի, անարատ, եւն:

(12) Զհարբուցեալս: զխրատուցեալս, կամ զակնկորեալս:

(13) Մօտէս 'ի հանդէս․ զինեսցիս, կամ մատիցես ընդդէմ թշնամեաց հոգւոյս:

(14) Կտակ նախընծայեալ: Կտակ ես սրբազան, որով ած թողու մեզ զժառանգութիւն արքայութեան: Կամ, իբրեւ կտակ հոգեւոր գրեցար 'ի ժամ խաչելութեան, թողլով մեզ յորդեգրութ մայր հասարակաց․ ուստի ողորմութեամբ խնդրեմ պատահել ինձ: Այսպէս ըմբռնեալ իմ յամօթ երեւոյց, ոչ համարձակիմ օրհնութիւս երգել առ քեզ, այլ ողբս՝ զի անբիծ շրթանց միայն վայել է օրհնել: Ասելն 'ի շրթանց անբիծ հոգւոյ, իմանալի է փոխադրութեամբ հոգւոյ, այսինքն յերջանիկ լեզուս անբիծ շրթանց:

(15) Կաթիլ մի կաթին: Այլաբանութիւն է, առ որ համարձակի զզջական աղօթաւորն՝ ոչ եւս իբրեւ մեղապարտ, այլ զորդիական ապաւինութիւն ընկալեալ իբրեւ առ մայր խօսելով: Մի միայն կաթիլ կուսական ստեանցդ ցօղեալ 'ի վերայ իմ, բաւական է ասէ՝ կեանս տալ ինձ նուա

զեցելոյս · խնդրուած մի և եթ կուսական գթութեանդ զօրէ առնուլ յԱյ կենաց վասն իմ . կամ, կուսական փարուցդ մի միայն առաքինութիւն յանձն իմ կերպարանեալ՝ բաւական առ 'ի կենաց է ինձ ։

(16) Բովանդակ Նարեկն ։ Զարարիչն ամենայնի ծնար ամբողջ մարդկային բնութբն, և համայն ածութբն, ունելով և զկատարեալ ածութիւն . որ և փառաւորեալ է ընդ հօր և հոգւոյն սբյ՝ ոչ միայն ածային էութեամբն, այլև մարդկայնով բնութեամբս միացելով յանձն նորա . զի որպէս 'ի կուսէդ մարմնովն Այ ծնեալ, նոյնպէս ածութբն 'ի հօրէ՝ մարդ փառաւորակից հօր ։

(17) Ակնարկ և յաճախ ։ տես 'ի բանն ղդ . ըծ . 6 ։

Մերոյին յաւելուած նրկէն հեծութ՝ նորէն հոմոլէ, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ՁԱ։

Ա. Ընդ ածածնին մաղթանաց՝ ահա և զմերնոցն անմահ հրեշտակացն լուսակերպից զաղերս հայցուածոց, որ վասն իմ գոչեն առանց լռելոյ հանապազորդեան արդահատութբ[1] մաքուր բերանոց՝ ընկա՛լ բարեգութ ։ Որք են բարիք բարեգործեալք 'ի բարերարէդ՝[2] անկիրթք չարեաց, հաստեալք յամենիշխան հրամանաց քոդ . զօրութիք հզօրք՝ անհարկութե բարձրելոյդ . սէրք, մաքուրք, անարատք, օրհնեալք, վայելչականք, յաղթօղք և անպարտելիք . և ըստ ընթացից տեսութե մտաց՝ արագունք ։

Բ. Որք և պտղակորոյս տնկոյ թզենւոյն[3] եռամեանն դատարկութբ, որ զենաւ յաւիտեանս պարունակէ ժամանակն՝ զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնւոյն, յամայր յամրութբն յերկարաձգելոյ՝ յայգի աշխարհիս արմատացելոյ, սին սաղարթիւն պաճուճելոյ՝ զրկեալ 'ի պտղոց, որ է ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութես, սոքա բարեխօսք՝ հանդերձիչք՝ այլ և խնամակալք . որ դեգերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում[4] կրիցս կարեկցելով, բարեմասնութեն մեր սպասեն . և[5] յաւիտենականն կենդանութբ փրկութեն մեր աղօթեն՝ զայս բան ասելով, զգործս ձեռաց քոց մի անտես առներ ։ Քանզի արդարև[6] մեր են այս աղաչանք 'ի բարերարէդ Այ վասն մեր կարգեալ առ նոսա . զի[7] նոքա բանիւ են ստեղ-

ծեալ, և մեք ձեռօք ներգործեալ։ Որք և գալոց են
ընդ միածնիդ՝ վկայք սոսկալի դատաստանին հա-
տուցման, Ճշմարտաբան դատախազք յանցաւորու-
թե՟ երկրայնոցս, յահաւորին ատենի՝ յայտնիչք իրա-
ւամբք զմատակարարութ՟ին՝ որ առ մեզ. 8 որ և ան-
տանօր կարեկցեն ազդեալ հառաչմամբ զմշտանուէրն
նուագ ձայնի, ողորմեա՝ դու ստեղծեր, մի՛ կորու-
սաներ ։

Գ. Արդ՝ ընդ գոհաբանութե՟ ձայնիցն խնդրուա-
ծոց՝ անմահականացն վեհից՝ և 'ի մե՛ր հեծութ՟իս հա-
տոտեսցիս՝ բնաւի՛ց արարիչ, որ 9 յաղթես գթութե՟դ
քո վերնոցն և ստորնայնոցս. քանզի քո՛ է բարերա-
րելդ առ մեզ և առ նոսին ։ Արդ՝ վասն 10 բարե-
զարդութե՟ անախտականացն, հրաշատեսիլ հրակեր-
պիցն, անշաղախ մաքրոյն, անմեղիցն, բոցանիւ-
թիցն, հոգեղինայն, և անվանելեացն. 11 ամենաձե-
ցուն առաւելութ՟բ 'ի բարձրն ընտրականութ՟ի գե-
րափայլ յաճախ գիտութ՟բ՝ անցուրտ ջերմութ՟բ ջե-
ռուցանօղք՝ ինքնաբուն տապո՟վն ա՟ծսիրութե՟ ըստ
ինքեանց զմերս սառնասեր սրտիցս անբորբոք չի-
ջուցի՟ն, այրիլ անաղօտ 'ի մեծախորհուրդ սրբում սե-
ղանիս՝ որ 'ի խորանիս, առանց նիրհելոյ և դանդա-
ղանաց սպասել հրամանաց երանականաց կեցուցիչ
կամաց ամենաստեղծիդ. քրովբէօրէն առաքինութ՟բ
յա՟ծ միացեալք անբաժանելի ։ Որք երկնաւոր պե-
տութ՟իք են մեծք, և զինուորու՟իք անբիծք ահաւորք,
երկնաւորիդ ա՟յ՝ 12 ազատազնեայ պաշտօնեայք, 'ի
յամպոյդ լուսոյ՝ ցոլք նշուլից ։

Դ. Որովք և ինձ մեղաւորիս հողեղինի մարդասի-
րեսցես ողորմել՝ յի՛սուս 13 աղաչանօք իմոյն հրեշտա-
կի, դարձուցանելով զիս տէր՝ 'ի բարիդ քո հետս
լուսոյ. զի զաւանդ հոգւոյս իմ պաշտպանուե՟, զոր
հաւատացեր նմին տեսչութե՟, զընկալեալն 'ի քէն 'ի
կենցաղ աստեացս՝ ուրախութ՟բ սրտիւ յիս բերկրեալ,
անմեղադրելի առ 'ի քէն օրհնեալ՝ խնդալից դիմաց
զուարձութ՟բ՝ քեզ արքայ բարձրութե՟ փառաց ան-
հասից՝ 'ի խրախճանս կենդանախումբս բերկրեցե-
լոցն պարուց մատուցեալ ընծայեցուսցէ՝ գովեալ
ողորմած ։ Եւ քեզ անքնին ընդ հօր անհասի՝ թուա-

կցութբ հոգւոյդ անճառի՝ վայելէ փառք պատիւ և երկրպագութի, յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

(1) Մաքուր բերանով ։ Բերանք հրեշտակաց՝ են միտք նոցա, որք մաքուր կոչին հակառակ պղծաշրթութեն բերանոյ մարդկան ։ Արդ ընկալ առ՝ զխնդրուածս այսպիսի մաքուր միջնորդաց, բայց ընդ Ածածնին մաղթանաց, այսինքն յետ բարեխօսութե սբյ Ածածնին. զի նա է միշտ առաջին բարեխօս մեր ։ Կամ, զաղաչանս հրեշտակաց ընկալ զոյգ ընդ աղաչանաց Ածամօրն. որով զօրանայցեն խնդրուածք նոցա ։ Բարեխօսութի Տիրամօրն ինքնին միայնակ ընդունել կարող է զամենայն բարիս, բայց հրեշտակացն՝ ոչ առանց նորա ։

(2) Անբիծ սրտով ։ Այսինքն անփորձ. զի զբարին շնորհաց՝ զոր յարարչութենն ընկալան, ոչ կորուսին իբրև զչար հրեշտակն. և յետ այնր եղեն անընդունակք մեղաց ։ Վայելչական, լցեալք վայելչութբ, գեղեցիկք, կամ վայելուչք բարեաց ։ Լաւ ընթացիւ, ըստ շարժման ան-ուէ մտաց՝ յոյժ արագ են հրեշտակք. զի միով հայեցուածով ըմբռնեն զէութիս իրաց, և զկատարս նոցա. նովին ճանաչմամբ իմանան զպատճառս և զգործս ։ Կամ, արագաշարժք են ըստ ընթացման մտաց, այսինքն մտաց ներգործութբ շարժին տեղւոջէ 'ի տեղի. զի անմարմնութի մտօք միայն կարէ տեղափոխ լինել ։ Կամ դարձեալ, արագ են հրեշտակք ըստ օրինակի շարժման մտաց. զի որպէս արագ և 'ի վայրկենի բերին միտք 'ի միոյ ճանաչմանէ յայլ, նոյնպէս հրեշտակք 'ի միոյ տեղւոյ յայլ տեղի ։

(3) Եռամեանն դատարկութբ ։ Թզենւոյն երեքամեայ անպտղութեամբ, ուստի և յամայր յամրութեն, երկարաժամանակեայ հեղգութեամբ կամ արգելմամբն յերկարաձգելոյ ։ որ, 'ի այն ժամանակ երից ամաց՝ զյաւիտեանս, զբովանդակ դարս աշխարհի պարունակէ, այսինքն զանցեալ դարս, զներկայս, և զգալոցն ։ Այսմ Թզենւոյ անկելոյ յաշխարհիս, և ունայն տերևովքն զարդարելոյ առանց պտղոց, ( որ է օրինակ ողորմելի մարդոյս, ) հրեշտակքն են բարեխօսք ևն ։

(4) Կրիցս կարեկցելով ։ Դարման տանելով մերոց հոգեկան և մարմնական կրից, և ոչ եթէ յինքեանս զգալով զմեր կիրս. և մեզ խնամ տանելով, սպասեն, մնան միշտ բարեմանութեն մեր, մասնակից լինելոյ մեզ 'ի բարիս իւրեանց. կամ, սպաս տանին, ծառայեն բարերջանկութեան մերոյ ։

(5) Յաւիտենականն կենդանութբ ։ Մշտնջենաւոր և անլռելի հոգւով աղօթեն վասն մերոյ փրկութե ։ Կմ, խնդրեմք ունելով զյաւիտենականն կենդանութի, աննախանձաբար խնդրեն զփրկութի մեր. կամ, այնր փրկութե վասն հայցեն՝ որ 'ի յաւիտենական կեանսն տանի, և ոչ լոկ 'ի ժամանակաւորն ։

(6) Մեր են այս ։ 'Ի դիմաց մերոց, կմ վասն մեր են այս աղաչանք, 'ի բարերարէդ կարօտեալ առ նոսա ։ Աւանդութեամբ ասի զհրեշտակապետաց աղօթել առ Ած, * Ողորմեա՛ դու ստեղծեր, մի՛ կորուսաներ. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ ։ || որպէս երգեմք 'ի Թագաւորքն հրեշտակաց ։

(7) Նոքա բանիւ ։ Այս որոշումն՝ թէ հրեշտակք բանիւ ստեղծան, և մարդն ձեռօք, առեալ է յեղանակէ խօսից սր գրոց, և մանաւանդ ծննդոց, որ զերկնից և զայլ արարածոց ասէ բանիւ եղեալ, իսկ զմարդոյն լինելութի ձևացուցանէ իբրև արհեստաւորի ինչ արարեալ յայ. ( Ծննդ. Բ. 6. 21. 22 ։ ) Ապաթէ ոչ՝ ախրապէս խօսելով, ամենայն

արարածք մարմնաւորք և հոգևորք ստեղծան բանիւ հրամանին իւր : Եւ Է հակառակն՝ ամենեքին են սոյն գործք ձեռացն իւր , և ձեռակերտք , ձեռամբ այլաբանելով զզօրութիւն արարչական :

(8) Որ ն անփանոր : Այսինքն 'ի դատաստանի անդ հոգան , խնամ տանին , աղբէալ հաստալմամբ . եթէ զհրեշտակաց առցի հառաչումն , խմանի այլաբանութեամբ՝ կարի գութ և փափաք նոցա առ մեր փրկութիւն : Բայց մարթ է խմանալ զհառաչումն մարդկան , զոր 'ի կենդանութեան արարին զղջմամբ , և զոր հրեշտակք 'ի դատաստանի անդ յիշեցուցանեն առաջի իւր : Զայս խնամս հրեշտակաց և զողորմութիւն հայցելն՝ ոչ է պարտ խմանալ վասն ամենայն դատելեաց առ հասարակ , այլ միայն վասն զղջացեալ հաւատացելոց , և զայն ևս իբր մեկնողաբար , այսինքն առաջի առնելով իւր զգործս զղջման նոցա , կամ զայլ բարիս , որպէս երևի 'ի պատմութեանն պարապղևեայ , պետրոսի մաքսաւորին , և այլոց . ( վարք հրջ . երես . 113 . և 291 : ) Արդ թէ ոչ՝ պարզապէս ողորմութիւն հայցել վասն ամենեցուն՝ ես և անզեղջից , հակառակի ոչ միայն այլոց բանից սբյ վարդապետիս , որովք անողորմ խոստովանի զդատաստանն իւր , որպէս 'ի բանն Է . 1 . * Անողորմ են հրեշտակքն . . . . և անողորմ հատուցմունքն : * և հա . 3 . || Արդ՝ անաչառք և խիստ կաձառք երջանկացն . . . ընդ հրեշտակացն՝ և մարդիկ . || տես և ւԹ . 2 : հԹ . 2 . 3 : Այլ ընդդիմանայ և առաջիկայ բանիցս , որով զհրեշտակս 'ի դատաստանին առէ՝ ձղձարփաբան տփախալ . խոկ դատախազ՝ և բարեխօս՝ հակառակ են միմեանց : Արդ խմանի բառ այլ և այլ անձանց , առ անհաւատս և առ անզեղջս՝ դատախազք են , խոկ առ զղջացեալ հաւատացեալս՝ բարեխօսք :

(9) Յուղբեօ գբուբէր : Գերազանցես գԹութբ քան զհրեշտակս և զմարդիկ . քանզի դու բարերարես ար քւղն ար նոոխն . առ մեզ շնորհաբաշխութեամբ և ներողութեամբ , խոկ առ հրեշտակս՝ շնորհաբաշխութեամբ միայն . վասն որոյ եթէ հրեշտակք գԹան 'ի մեզ , առաւել ևս դու : Արդ՝ Թէպէտև յաղԹօղ գԹութեամբդ միշտ կայմ ես 'ի բարերարել , բայց կամիս և 'ի մէնջ հայցուած խոնարհական . վասն որոյ ոչ բաւականացեալ մատուցանել զբարեխօսութի հրեշտակաց , 'ի նոյն լծորդեմ և զմեր հեծութիս : Այսպէս և 'ի բանն ձբ . յես գնելոյ զաղաչանս առաքելոց , զմարտիրոսաց և զճգնաւորաց , առէ 'ի համարն Ե . խառնել և զմեր անմաքուր բանս ևն :

(10) Վան բարէղարդուբեան : Վասն վայելչութեան բնական և գերբնական հրեշտակացն՝ որովք զնոսա ճոխացուցեր : կամ վասն բարեյարմարութեան հրեշտակացն՝ շնորհեա և մեզ ջերմանալ սիրովքս 'ի ժամ սբ խորհրդոյն . զի յայնժամ պարակից են մեզ հրեշտակք բորբոքեալք սիրով ածութեան . և եթէ մեք մերով ցրտութեամբ մնայցեմք , անմիաբանութիւն մեծ է : Հին լուծ . առտ օէղան խմանայ զմիտս 'ի խորանի մարմնոյ : Բայց զայն չէ մարթ կոչել Լեծախորհուրդ , ն ուրէ . այլ խմանալի է սեղան սբյ պատարագին , որպէս ասացաք :

(11) Աձնաձէյուն տառնէլուբէամ : յոյժ գերագոյն ստճմամբ կամ կատարելութեամբ , 'ի բարյրն ընփրաֆանուբէ , 'ի բարձր վիճակ կամ աստիճան , յաձախ գիփուբէ , առաւ գիտութեամբ բնականաւ և գերբնականաւ : կամ , զայս գործիական խմա իբր սեռական յատկացուցիչ , այսինքն 'ի բարձր աստիճան առաւ կամ բազմազան գիտութե . յորս բնական գիտութե կամ ճանաչմանն իւր՝ զհետ գայ բնական սէր ածային , որ անշիջանելի է 'ի հրեշտակս : Խոկ գերբնական գիտութե կամ ճանաչմանն իւր հաւատով մինչդեռ 'ի ճանապարհի էին , զհետ գայր սէրն հեզական , զոր և անշէջ պահեցին հրեշտակքն . յորմէ ապա անցեալք 'ի

գիտութիւն երանական, լցան երանական սիրովն անշիջանելեաւ : Եւ այսպէս տիպուրք ջերմութեամբ անմեղկելի սիրոյն խորեանց ջեռուցանեն ընդբուն փոփոխ ծերութեան, այսինքն բնածին տապովն. որ յատկապէս խմանի զինական սիրոյն հրեշտակաց. կամ եթէ ընդունակ խմացի՝ ոչ իբրև 'ի զօրութէ կամ յարդեանց բնութե ծագեալ, այլ իբր համեմատ բնութե բանականի, ըստ այսմ ասի նաև զհեզական և զերանական սիրոյ հրեշտակաց՝ և մեր. զի թէպէտ և այս երկու սէր՝ գերբնականք են ըստ սկզբանց և Ա արդեանց, բայց և կարի վայելուչք բանական բնութե : Այսու տապով ասէ ջերմացուցանեն զմեր սառնասիրտ, սառնակերպ, կամ սառուցեալ սրտից անբարբառ շիջուցմն, դժուարաւ վառելի շիջուցմի. այսինքն զպակասութի սիրոյ : 'Ի կապակցութի շարադրութե տեղւոյս՝ զբառն ջեռուցանող պարտ է իմանալ սեռական՝ իբրև զայլ անցեալսն. այսինքն, անմեղկելի, հեզեղինացն, ջեռուցանողացն ընդունակ փոփոխ, են : Այլև 'ի սկզբնէ անտի, Արդ վասն բարեզարդութեանն, են, մինչև յայն, այրելանաղօտ, անկատար է բանն. և զօրութի այլ բայ պահանջէ յարել Է նմա, այսպէս : Արդ՝ վասն բարեզարդութե անախտականացն, են, շնորհեալ կամ պարգևեալ այրել անաղօտ 'ի Այ սեղանէս, և այլն :

(12) Աղաւաղեալ պաշտօնեայք. ըստ որում թէպէտ և ծառայք են, բայց և որդիք և ժառանգք Այ. և զի ազատ յօժարութբ ծառայեն Այ. այլ և բնութեամբ աղնուական գոլով, 'ի սպասաւորութի անարգացս յօժարին :

(13) Աղաւնօք խնդալ : Ողորմեա ինձ աղաչանօք իմոյ պահապան հրեշտակին, դարձուցանելով զիս 'ի բարի և 'ի լուսաւոր ճանապարհս քո. որպէս զի զհոգի իմ զաւանդեալն 'ի պաշտպանութի և 'ի խնամս իւր, զոր ընկալաւ 'ի քէն 'ի ծննդեան ապաւէնս, 'ի կեանս աշխարհիս, (զի յետ մահու դադարէ մասնաւոր պահպանութի հրեշտակին,) մատուցեալ ընծայեսցէ քեզ փառաց արքայիդ 'ի խրախճանս դասուցն արդարոց, ուրախ սրտիւ խնդալով 'ի վերայ իմ. և վն հաւատարիմ պահպանութեան՝ անմեղադրելի, այսինքն գովութեամբ օրհնութի Է ունելով 'ի քէն. վասն զի յաւելուն 'ի հրեշտակս պատահական փառք՝ փրկութեամբ պահպանելոյն 'ի նոցանէ : Կամ, անմեղադրելի, այսինքն ես առանց մեղադրութե օրհնեալ լինելով. ըստ այնմ, || Եկայք օրհնեալք հօր իմոյ ||. Է որ և խնդայ, բերկրի պահապանն իմ. տեսանելով զի պահպանեալն իւր օրհնութի առնու, և ոչ անէծս ընդ ձախակողմեանս :

---

Մերոյին յաւելուած նորին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն ողբոց մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

## ԲԱՆ. ՁԲ.

Ա. Տէր Ած բարերար բազմապարգև Թագաւոր, կենաց պատսպարան, լուսոյ կերպարան, լայնատարր հանդստարան. որ յաղագս մեղուցելոյս եկեալ մարմնացար. գործեցեր զանպատումն, և հանդերձեցեր զհրաշալիսն,[1] մինչև կատարեցեր զա-

ուեցեալն ընդ ամենալիր ա՟ծութե՟ն ։
Ե · Որդ՝ վասն առաքելոցն մէջ յերկնաստեղծ քո ձեռացդ ձեռնադրելոց , և հոգւովդ սրբով օծելոց , · 2 զորոց զգովեստն արժանաւորութե՟ն ըստ իմում կարի՝ առ 'ի փառս քո տէր ամենայնի՝ յայլում բանի պաշտեցի , և ինձ ողորմեսցիս 3 յիշատակաւ սիրոյ նոցին ընտրութե՟ ։ 4 Տաւիղ ինձ եղիցի նոքօք՝ և համդերձեսցեն յերանութ՟ին փափաքելի · ձայն բարի հովուութե՟ նոցին՝ 'ի յողջոյն ինձ կենաց քաղցր լսեցի ։ Վասն կալայց 5 'ի յանեղծութե՟ փրկութե՟ տօնեցեալ յուսոյն՝ ընդ առաջնորդացն կենաց , սկըզբնաշնորհիցն պատուոյս , փառաւորեալն դասուց , գետոցն բանականաց , աւետարանչացն բարձանց , իշխանացն պանծալեաց , լուսապայծառ Թագիւ պճնելոցն , 'ի զարդ անկապուտ զօրութե՟ շնորհին պայծառացելոց , իւղով՟ զուարթութե՟ տիրական լուսոյն կատարելոց ։

Դ · Ընդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ-ա՟յ ք՟ոի՝ և 6 մարտիրոսացն ընտրելոց նահատակութ՟բ , որք մահացու և վշտաչարչարն մարմնով , վտանգաւոր և ամենակիրն անդամօք , երկրաւորական և հողաղանդուածն բնութ՟բ՝ մարտուցեալ 7 ընդ տարրգոյից ամենայն նիւթից՝ պսակեցան բարձրացան և կենդանացան հոգեպէս · արիաբար ելեալք 'ի յերկրէ , 8 ըստ մարգարէին , վկայք ճշմարիտք 9 ամենափորձն մահու · իմանալեացն անտեսիցն և ծածկելոց՝ աներկբայ բարեացն՝ յուսով տեսելոցն աստէննկատիչք · աշակերտք առաքելոցն և չարչարակիցք նոցին · որ 10 հաւասարեալ գործովք ընդ նոսին , կատարեալ լրմամբ անպակասելեաւ՝ պարեն 'ի խրախճանս անկէտն երանութե՟ · որոց հաճոյական և ընդունական մաղթանօք , արիւնընծայ վաստականուէր 11 քրտնակնդրուկ աղերսիցն յարգմամբ՝ ընկալ զիս նորոգ 12 ըստ նոյին մասին անեղծ փրկութ՟բ 'ի քեզ արձանացեալ ։

Դ · Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ՝ արեամբ ներկելոցն , և 13 ճգնաւորացն մէջ հարցն միանձանց՝ և 14 քեզ հետևելոցն որդի ա՟յ , անպարտելի քաջութ՟բ և անպատիր զգաստութ՟բ , ընդ դժնեայ գոռողի

մարմնոյ բանութեան՝ արխապէս մարտուցեալ, սովլիմէ
վանեցին զանմարմինն բելիար. և մշտամարտ հան-
դիսիւ՝ յասպարիսի կենցաղոյս՝ առանց զղջմանաց
ծանրաբեռնութեան 'ի լայնածաւալ ծփանաց աշխար-
հիս ծովու՝ փապանակաւ մարմնոյ թանձրութեան ըղ-
թեթևութի հոգւոցն թռուցեալ՝ 'ի նաւահանգիստն
կենաց հասին. և իբր սիրողք [15] վերնում վիճակին՝
առանց յետնոցն մտածութեան, զթագն յաղթութեան
համարձակապէս՝ պայծառ ճոխութբ պճնեալ խսկա-
պէս՝ 'ի գլուխ կապեցին. վասն նոցին արժանաւոր
մաղթանաց և նուիրական հայցուածոց՝ և զիս զմե-
ղաւորս 'ի պատժականաց՝ ընկալ ընդ նոսին:

Է. Եւ ահա խառնեալ զանմաքուրս բան՝ [16] ընդ
նախագրեալ երջանկացն փառաւորական աղերսար-
կութի, որ վասն իմ գոչեն քեզ 'ի հաճութի, և ես
ընդ նոսին՝ իբր դառնութի եղեալ ընդ քաղցու,
կամ [17] տատասկ ընդ ողորկութե, տգեղութի ընդ
վայելչութե, և տիղմ ընդ գեղեցկութե մարգար-
տի, կամ հող ընդ յստակութե ոսկւոյ, և կամ քա-
րինս անարգս ընդ պայծառութե արծաթոյ, [18] բա-
ցասութի ընդ ճշմարտութե, [19] կամ աւազ ինչ ա-
տամնառու ընդ կակղութե զանգուածոյ հացի. արդ-
լուր՝ հզօր հնարաւոր գովեալ, [20] զնոցայն վասն իմ,
և զիմս ընդ նոսին 'ի նոյին գովեստ, 'ի փրկութիւն
իմ և 'ի փառս քո՝ ամենագութ, բարերար, օրհ-
նեալ, երկայնամիտ, կարող, անքնին, անճառ,
անեղծ և անստեղծ: Դո՛ւ ես պարգևք, քո՛ են շնորհք.
դու սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի: Ո՛չ ես
դատապարտիչ, այլ աղատիչ. ոչ ես կորուսիչ, այլ
գտիչ. ոչ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ոչ ես
տարագրիչ, այլ ժողովիչ. ոչ ես մատնիչ, այլ ա-
պրեցուցիչ. ոչ ես ընկլմիչ, այլ վերածիչ. ոչ ես
գլորիչ, այլ կանգնիչ. ոչ ես անիծիչ, այլ օրհնիչ.
ոչ ես վրիժառու, այլ շնորհիչ. ոչ ես թշուառացու-
ցիչ, այլ մխիթարիչ: Ո՛չ եղծանես, այլ գրես.
ոչ սասանես, այլ հաստատես. ոչ ոտն հարկանես,
այլ սփոփես. [21] ոչ պատճառս յօդես մահու, այլ
հնարս խնդրես կենաց. ոչ ես 'ի կամս շարժեալ սա-
տակման, այլ 'ի փրկութի ողորմութե: Ո՛չ մռա-

նաս զայցելութն. ոչ լքանես զլարի. ոչ արգելուս
զգթութն. ոչ բերես վճիռ կորստեան, այլ կոչես
ապաշխարութն: 22 Ո՛չ թշնամանիս յառատութենէ. ոչ
բամբասիս ՚ի շնորհաց. ոչ հայհոյիս ՚ի պարգեւաց.
ոչ նախատիս ՚ի ձրի ձրից. ոչ անգոսնիս յերկայն-
մտութենէ. ոչ եպերիս ՚ի ներութենէ. ոչ բանսարկիս
՚ի բարութենէ. ոչ անպատուիս ՚ի քաղցրութենէ. ոչ
քամահիս ՚ի հեզութենէ. ոչ առաքին այսոցիկ տրտունջ-
մունք, այլ անլռելի գոհաբանութիւնք: Նո՛րձ զմեղս
իմ հզօր. լո՛յծ զանէծս իմ օրհնեալ. քաւեա ըզ-
պարտիս իմ ողորմած. ջնջեա զյանցանս իմ գը-
թած. 23 մատո՛ մասն այցելութե, եւ անդստին իսկ
կատարեցայց. զինչ քեզ տէր՝ քան զսոսին դիւրա-
գոյն, եւ կամ զինչ ինձ պարտաւորիս կարեւորա-
գոյն: Իսկ կենդանագրեա՛ բարեխնամ քոյինա-
ստեղծ պատկերիս՝ փչումն կրկին ՚ի շունչ նորոգման
լուսաւորութե մաքրական շնորհի՝ զամենամեղս ոգի
պաշտպանեալ:

Զ. Մի՛ ածեր ողորմած՝ ինձ 24 օր տարաժամ ՚ի հա-
մառօտս երբէ՝ անթոշակ ապաճեռնութբ՝ ընդ ան-
կատար ուղին հետեւել. մի՛ մատուցաներ բաժակ
դառնութե՝ ՚ի ժամ ծարաւոյ. 25 մի՛ փակեր գը՛թած՝
իմ հանդէպ՝ զյաջողուած հոգեւոր օգտիս, եւ մի՛ իբր
յանկարծադէպ հինից ապատակ՝ գիշեր մահուն
ինձ պատահեսցէ. 26 մի՛ տապ տօթոյն յանպատրաստ
պահուն՝ զարմատս հատեալ ցամաքեցուսցէ, եւ մի՛
լուսնական դիպուածք հասեալ գաղտնեօք վնասես-
ցեն. մի՛ պահեսցի ինձ սառն մեղացս, եւ մի՛ հոսանք
ուղխից կենցաղոյս զիս ողողեսցեն: Մի՛ 27 հանդիստն
մահ բերիցէ, եւ մի՛ ննջումն ՚ի սատակումն յառա-
ջեսցէ. մի՛ քունն ինձ կորուստ լիցի, եւ մի՛ նիրհումն
ապականութբ գործեսցէ. մի՛ վախճանն անյարմար՝
՚ի վերայ իմ արշաւեսցէ, եւ մի՛ չնչոյս վերարձակու-
թիւն ըմբռնեալ՝ ՚ի խոնարհ լքցի:

Է. Դո՛ւ ես տէր. դո՛ւ գթած. դո՛ւ բարերար. դո՛ւ
երկայնամիտ. դո՛ւ ամենակարող. 28 առ ամենայն
բան անհասութե անճառ զօրաւոր, քաւել՝ փրկել՝
կենագործել, լուսաւորել, վերստին հաստատել, ՚ի
ժանեաց կերչաց գազանաց՝ եւ կամ յատամանց վի-

շապաց 'ի կեանս կոչել, 'ի խորոց անդնդոց 'ի լոյս բերկրութեան ածել, և 'ի հեղձմանէ ծփանաց մեղաց,
29 ընդ արդարս երջանկաց՝ փառօք բազմեցուցանել:
30 Ամենայն ոգի քեզ ակնկալեալ յուսով սպասէ, կարօտեալ քում շնորհաց. եթէ երկնայինք, և եթէ երկրաւորք. եթէ անկածն մեղօք, և եթէ ամբարձեալն արդարութք. եթէ տէր, և եթէ ծառայ. եթէ տիկին, և եթէ աղախին. և 'ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորեցուն: Եւ քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

(1) ՄԻՆՉԵՒ ՆՈՐՈԳԵՍՑԵՍ փառօք՝ ԶԱՆԵՂԾԱԿԱՆ մարդկութի, ԸՆԴ ԱՄԵՆԱՒԻՐ ԱԾՈՒԹԵԴ, ընդ ամենակատար ածութեդ՝ ընդ աջմէ հօր բազմեցուցանելով 'ի միութի անձինդ: Կմ լաւ, մինչև կատարեսցես զընկալեալ մարդկութիւնդ նախագործութբ 'ի խաչին, ըստ բանին. *Եւ լրիւ կատարեցաւ, եղև ամենայն հնազանդելոց նորա || են. * Հայեցարուք 'ի կատարիչն Յն || (եբր. ե. 9. ժբ. 2:) Զայս կատարումն որպ Քն ամենակատար ածութբն: Հին լուծ. խմանայ զկատարելութի երեսնամեայ հասակին Քի. բայց անուղղս ոչ 'ի դէպ գայ:

(2) ԶՈՐՈՑ ԶԳՕՆՈՒԹԻՆ: Զընդարձակ ճառն ասէ՝ զոր յօրինեաց 'ի նբ առաքելոյն և յեօթանասնիցն: Բայց չէ յայտ թէ քանի ժամանակաւ յառաջ քան զաղօթքս արարեալ իցէ: Ոմանց թուեցաւ՝ ընդ այլ երկուց ճառից Խաչին և Աճածնի արարեալ 'ի նմին ժամանակի: Սակայն 'ի յիշատակագրի այնց ճառից ոչինչ այդպիսի նշանակի. և ոչ մակագիր ճառին առաքելոց ցուցանէ զկապակցութի ինչ ընդ նոսա, որպէս այլոց երկուց ճառիցն մակագիրք ցուցանեն յայտնապէս: Մանաւանդ կարծիս առնումք՝ յետոյ քան զայն ճառսն արարեալ զառաքելոցն, յաւելն սրբյ վարդապետին 'ի սկզբան անդ. * Քանզի առ ձեռ և յաղագս ձեր 'ի ԴԱԴԱՐՄԱՆԷ ԼՌՈՒԹԵ շարժեալ կարգ բանիս, || են:

(3) ՅԻՇԱՏԱԿԱՒ ՍՐԲՈՑ: Յիշատակաւ սրբոց քո՝ որով զնոսա ընտրեցեր. կամ, յիշատակաւ ընտիր և գերազանց սրբոց նոցա առ քեզ:

(4) ԸՆԴԵՐ ԲԻՒՐ ԵՂԻՑԻ ՆՈՑԱ Ի ՀԱՆԴԵՐՁԵԱԼՍԷՆ: Կ օրին. ԸՆԴԵՐ ԲԻՒՐ ԵՂԻՑԻՆ ՆՈՑԱ ՀԱՆԴԵՐՁԵԱԼՍԷՆ. որ ըստ կարգի եւս է, այսինքն նոցա բարեխօսութբ և վարդապետութբ պատրաստեսցես ինձ ճանապարհ ուղիղ առ քեզ գալոյ: ԶԱՅՆ ԲԱՐԻ, ձայն առաջնորդութե նոցա, որ իւրեանց գրովքն 'ի մեզ հասանէ, լուիցի ինձ իբրև ողջոյն կենաց, զոր աւանդէին աշակերտելոցն ըստ հրամանին Քի: (մատթ. Ժ. 12:)

(5) 'Ի ՅԱՆԵՂԾՈՒԹԵ ՓՐԿՈՒԹԵ: Մասն կամ բաժին ընդունիցիմ, հաղորդ եղիցիմ ընդ առաքելոցն. որք քարոզութբ եղեն առաջնորդք կենաց, 'ի յանեղծ փրկութին յոր յուսամք. կամ 'ի տօնելի յայսմ անեղծ փրկութե: ԱՂԲԻՒՐՔ ՇՆՈՐՀԻՑՆ, որք եղեն առաջին տուիչք առաջնորդական պատուոյս: Այսէն հաղորդ լինել առաքելոց 'ի յուսացեալ փրկութիւնն, հայի յայն բանս նոցա՝ որովք զհաւատացեալսն կոչէին նոքա հաղորդակիցս, վիճակակիցս, համազնապատիւս են: ԽԱՂՈՒՆ ԶՈՒԱՐԹՈՒԹԵ. որք խմանալի զուարթարար խաղով ՏԷՐԵԱՆ ԼՈՒՍՈՅՆ, այսինքն տէրունի, քնական օծմանն եղեն կատարեալք. որք սկրապէս օծելոյն Քի եղեն ըն-

կերք կամ փոխանորդք յերկրի. որ և է գերաղանց վսեմութիւն առաքելոցն :

(6) Եւ Մարտիրոսացն Ընտրելոց : Խմացք բանիս զկատարումն առնուն յաւարտ անդր ուր առի. Որոց համեմատ և ընդունակ Տաղաչափ, ուստի կարմէլի է այսպէս : Ընդ աշակերտաց մեծից՝ նաև մարտիրոսացն նահատակութե և հաճոյական մաղթանօք ընկալ զիս միասնգամ, ևն. և ըստ այսմ որոյն՝ յարաբերելով զբառն՝ Մարտիրոսացն, կրկնի միայն 'ի բացայայտութեն, և 'ի կապակցութեն բանին :

(7) Ըստ Չորս Գոյից : Մարտիրոսքն սուրբք մարմին ունելով վշտալի, և անգամս ներքոյ անկեալս բազում վտանգաց, մարտեան, պատերազմեցան քաջութե ընդ ամենայն ազգ տարերաց, ընդ հրոյ՝ այրեցմամբ, ընդ ջրոյ՝ ընկղմամբ կամ տառուցմամբ, ընդ օդոյ՝ կախմամբ, 'ի բարձանց ընկեցմամբ, խեղդմամբ շնչոյ. ընդ հողոյ՝ տոկմարնակութե, թաղմամբ ևն : Նոյնպէս ընդ գազանաց, ընդ զանազան տանջանարանաց :

(8) Ըստ Մարգարէին : Երանելի յերկրէ ըստ մարգարէին, եթէ իմասցի՝ ըստ նմանութե մարգարէին, կամ նշանակի սամուէլ, զոր կլնն վհուկ ետես ելեալ յերկրէ իբրև ած. (ա. թագ. իը. 13. 14.) և կամ ցուցանէ զեղիա, որ հրեղէն կառօք ամբարձաւ յերկրէ. (դ. թագ. բ. 11 :) Իսկ եթէ իմասցի՝ ըստ բանի մարգարէին, ակնարկէ զբան սաղմ. (ձզ. 7.) " Ելա եդ 'ի մահ իւրում 'ի հովտես տրտմութե || :

(9) Ամենափրկչին Մահու : Զամենայն փորձանս կամ զլլիշս կրող մահուամբ՝ վկայք եղեն Ճշմարտութեն. կամ, ամենայլլիշս մահուամն քրի վկայք :

(10) Հաստատարեաւ Գործովք : Ընդ առաքելոցն հաւատարեցան, գործովք վկայելով և հաստատելով զՃշմարտութեն քարոզեալ 'ի նոցանէ. ուստի ոչ իւեք պակասեալք 'ի նոցա նմանութեն, ընդ նոսա վայելեն յերանութեն :

(11) Բուրվառաւ Աղօթիցն : Աղօթիցն՝ զոր 'ի կնդրկահոտ բուրուառս տանջանացն մատուցանէին նահատակքն :

(12) Ըստ Նոյին Տօնին : Այսպէս է ընթեռնուլ ըստ լաւ օրինակաց, և ոչ ըստ Նոցին : Աղաչանօք մարտիրոսացն՝ զոր քրտամբք և արեամբ ընծայեցին քեզ, ընկալ առէ՝ զիս վերստին 'ի շնորհս քո. իբրև մասնակից վաստակոց նոցա, 'ի քեզ ապաւինելով զիս անկորուստ փրկութե : Այսու բանիւ ոչ ընդ այսօ իմն ակնարկէ սրբն Գրիգոր զնախնի սովորութիւն յեկեղեցւոյ, որով որբ մարտիրոսք բարեխօս լինէին առ Աստուածորդս եկեղեցեաց՝ արձակել 'ի բանադրանաց զզղջացեալսն, կամ թողացուցանել նոցա 'ի կանոնական ապաշխարութեանց :

(13) Եւ Ճգնաւորացն Սրբոց : Այս սեռական՝ է տէր բայլին, Մարտիրոսեալ. ցն. ընդ արեամբ նահատակելոցն՝ նաև Ճգնաւորացն սրբոց ընդ մարմինս իւրեանց արխայէս մարտուցեալ, վանեցին, ևն : Ուստի վասն նոցին մաղթանաց՝ և զիս ընկալ, ևն : Կարգ Ճգնաւորացն թէև ոչ ընդ երևելի թշնամիս պատերազմեցան՝ որպէս մարտիրոսք, բայց նոցին հանդերձ անպարտելի քաջութ մարտեան ընդ գաղտնի մարմնոյս Բանսարկուէ. այսինքն բռնաւոր կամ անհնազանդ մարմնոյս : մի օրին. Բնաւէ. և մարթ է իմանալ, բնական կարեօք մարտեան. որով և յաղթահարեցին զատանայ : Իբրև մենամարտիկք յասպարիզի աշխարհիս միշտ հանդիսացան 'ի կռիւ առանց պղնձեայ ծանրաբեռնութե. ոչ կրելով զլլիշս ծանրութե նիւթոց աշխարհիս, զորս 'ի բաց թօթափեցին Ճգնաւորք և ամենանուէր աղքատութեամբ :

(14) Բէղ Հեթանելոյն : այլ օրին. թե Հեթանելոյն :

(15) Վերջնոյն Հինգշաբթի : 3 օրին. Վերջնոյն. իբր սկզբունք երկնային վկայեն.

կամ գերագոյն աստիճանի սրբութե. առանց յետնոյն մասնութէ, առանց
խորհելոյ զմարմնաւորս, կամ առանց հայելոյ յանցեալ ճգնութիւն՝ օր
ըստ օրէ յառաջադիմին ջանային :

(16) Ընդ նախագրեալ երջանկաց քառասարական : այլ օրին. ընդ նախագրե-
ցեալ երջանկաց քառասարական : Ընդ գովասանական աղերսանս նախայի-
շատակեալ երանելեացն՝ Առաքելոց, մարտիրոսաց և ճգնաւորաց՝ խառ-
նելով նաև զիմ անարժան աղօթս, և ես ըզ նոսին պաղատիմ, գոչեմ,
թէպէտ յոյժ օտարացեալ 'ի նոցա նմանութենէն. որպէս գառն ինչ ընդ
քաղցր նիւթոց են :

(17) Տապանէ ընդ ողորմութէ : Փշալից բոյս ընդ ողորկ շուշանի, կամ
ընդ յղկեալ գաւազանի :

(18) Բազմաթիւ : Ուրացումն ճշմարտին, կամ ստախօսութի, կի՛ սուտ
ինչ ընդ ճշմարիտ իրի :

(19) Կամ ապա, որ 'ի հաց խառնեալ, ապականեալ լինի. ըստ օրգելու
զատամունս 'ի ծամելն, և չանչեան առնէ :

(20) Զնոյսյն վասն իմ : Լո՛ւր զաղաչանս նոցա որ վասն իմ. և զիմս ընդ
նոսին, և զիմ աղաչանս ընդ աղաչանաց նոցա, որ եղիցի նոցա 'ի գովու-
թի, և ինձ 'ի փրկութի 'ի փառս քո : Եթէ նոցա լսիցես, և եթէ ինձ,
եթէ նոցա գովեստ լինիցի, և եթէ ինձ փրկութի, ամենայնն կատարի
'ի փառս քո. վասն զի քո են պարգևք և շնորհք. գո՛ւ պատճառ բա-
րեաց ամենայնի : Եւ դարձեալ, 'ի քէն գովով ամենայն պարգև, ոչ
կարօտիս միջնորդութե այլոց. և 'ի քումն բարութէ ո՛չ դատապարտիչ
լինիս, այլ աղաւիչ են :

(21) Ու պատճառս : Թէև մեք արժանի մահու մեղանչեմք, բայց դու
գլ՛թած՝ ոչ պատճառս իրաւանց կամ դատաստանի պարտաւորութե
կցկցես, այլ մանաւանդ խնդրես գտանել փառս, հնարս կենաց : Ու
ետ 'ի կամս. ըստ ոչ յօժարիս 'ի կամս սպանանելոյ, կորուսանելոյ, այլ 'ի
փրկութէ ողորմութէ, ըստ 'ի փրկել ողորմութբ, ձրիապէս, առանց վաստա-
կոց արժանեաց :

(22) Ու բնաւանի : Յառաջաձեռնելդ քո՝ թէպէտ և կարի մեծ իցէ,
ոչ թշնամանիս երբե շռայլ. այնպէս 'ի շնորհելդ, յերկայնամտելդ, 'ի
ներելդ, 'ի հեզութբ գնալդ, են, ոչ պարսաւիս երբե անխոհեմ, կի՛
ռեկար. և ո՛չ տրտունջ 'ի մարդկանէ առնուս, այլ գոհութի. զի 'ի գոր-
ծել քո զայս ամենայն՝ ցուցանես զբարութիդ, զիմաստութիդ, և զօրէ-
րութիդ. և ո՛չ ումեք զրկանս առնես : Այս եթէ ոգէտ ոք կամ նա-
խանձոտ այլազգ խորհելով, տրտնջեսցէ, կամ մեղադիր լինիցի, իրա-
ւամբք յանդիմանի. որպէս առաջին կոչեցեալ մշակքն՝ 'ի տրտնջելն ըդ-
տանուտեառնէն լուան, եթէ չունիցիմ՞ յիմն իշխանութի առնել զինչ
և կամիմ. (մատթ. ի. 11. են :) Այնպէս երէց որդին դժուարեալ ըզ
ընդունելութի անառակին, լուաւ պատասխանի. ո՛չ էր արժան խնդալ
ընդ կենդանութի և ըզ գիւտ եղբօր քո. (ղուկ. ժե. 28. են :) Թերևս
ասիցես՝ և երեմիայի գանգատեալ զայս վասն երկայնմտութեն առ ամ-
բարիշտս. (ժբ. 1 :) Բայց ո՛չ էր գանգատ, այլ մարդկօրէն զարմանք
ընդ անոխակալութիւն այս. զորոյ զպատճառն գիտելով՝ ինքնին բացայայ-
տէ զինի (համար. 3.) * Ժողովեա՛ զնոսա իբրև զոչխարս 'ի սպանումն || :
այսինքն յաջողէ նոցա տր՝ զի յանդարձ մնալն գտանիցի զնոսա իբրև
ոչխարս պարարեալս : Այս անպարսաւ է տր յամենայն 'ի գործս իւր.
և մարդիկ միայն լինին պարսաւելի, յորժամ անչափ առաջաձեռնեն,
կամ ներեն յանցաւորաց. զի ո՛չ են ինքնատերք ընչից իւրեանց, կամ
իրաւանց արդարութե :

(23) Մասն մասն : Մերձեցո առ իս զմասն օգնութե, և անդաստն, իս-

կոյն կատարեալ գտայց յողջութե, 'ի քաւութե եւն: ԱՇԽԷՆՏԱՆԱԳՐԵԱ՛, 'ի քո սահղծեալ պատկերս տպաւորեամ կրկին կամ վերստին փչումն, իբրև զաւաջինն, նորոգելով լուսաւոր հնչումն որ զմաքրութի շնորհաց յինքեան ունի:

(24) ՕՐ ՓԱՌԱՑԱՒ. ի՛ անպատշաճ, կամ անագան, 'ի համառօտս ԷՐԷԻ, 'ի կարճ ժամանակիս, ԱՆԲՈՂՈՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԷ, անպաշար դատարկութե բարի գործոց, ԸՆԴ ԱՆՀԱՓԱՐ ՈՂԲԻՆ, ընդ անվախճան ձանապարհս մահուն գնալ: Այսու, և յաջորդ բանիւքն աղաչէ՝ մի՛ յանկարծ օրհասաւ մեռանիլ 'ի կենաց՝ անպատրաստ և ունայն 'ի բարի գործոց:

(25) ՄԷ ԺԱԿԷՐ: Մի՛ թող տար խափանիլ ինձ 'ի յաջողուածոյ հոգևոր օգտին՝ ապաշխարութե և այլ բարեգործութեց, որք խափանին արագահաս մահուամբ. զի ըստ նմանութե յանկարծահաս հինից բառնայ զամ բարիս:

(26) ՄԷ ՓԱՊ ՓՕԲՈՅՆ: Աստանօր ակնարկէ 'ի բան սաղմոսին. * Արեգակն 'ի տուէ քեզ մի՛ մեղիցէ, և մի՛ լուսինն 'ի գիշերի ||: Իսկ ՓԱՊ կի՛ խմանոյ զընական ջերմն մաձարեր, որ արագ ցամաքեցուցանէ զարմատ կենաց, և կամ զհոգեկան տագնապ դիւական փորձութեց 'ի ժամ մահուն: Եւ մի՛ ԼՈՒՆԱԽԱՆ, պատահալք որ 'ի լուսնոյ՝ մի՛ յանկարծ կամ գաղտնապէս մտանեցեն. և զայս ևս իմա կրկնակի, այսինքն կամ զընականն, որպէս ախտաժետութիւնք 'ի լուսնոյ ներգործեալք, կաթուածք մաձարայք, ևն. և կամ զհոգեկանն, որպէս են փորձութիւնք 'ի մարմնոյ ծնեալք:

(27) ՀԱՆԳԽԱՊԻ ՄԱՀ: Այսպիսի ևս ըստ կարգի իմանալի են ըստ մարմնականին, այսինքն մի՛ հանդիստ մարմնոյ 'ի մահիձս՝ մահ բերիցէ, ևն: Եւ մի՛ ՀԱԽՃԱՆՆ ԱՆՅԱՐՄԱՐ, այսինքն մի՛ վաղեսցէ 'ի վերայ իմ յանկարծ մահն բռնական՝ որ պատահէ անկմամբ, ընկղմամբ, այրմամբ, և այլով օտար ձանապարհաւ, որք չեն ըստ բնական կարգի եղծման մարմնոյ: Կամ ԱՆՅԱՐՄԱՐ առ մահն համեալ 'ի ժամ քնոյ, որով 'ի վտանգաւոր յայնմ ժամանակի ամենևին անզգաստաբար եղանէ մարդ յաշխարհէ: Եւ մի՛ ԸՆՂՅԱ ՎԷՐԱՐՅԱԿՈՒԹԷ, եղուին կամ տուրեւս շնչոյս մի՛ 'ի ներքս արգելցի խեղդմամբ. կի՛, արձակումն հոգւոյս 'ի մարմնոյ մի՛ 'ի դիւաց արգելեալ 'ի սոորև խափանեսցի. կամ, տագնապ հոգեվարութե մի՛ տանջեսցէ:

(28) ԱՌ ԱՄ ԲԱՆ: Առ ամ իրս անհաստատելիս կամ անհնարինս՝ անձառապէս զօրաւոր:

(29) ԸՆԴ ԱՐԴԱՐՈՅ ԵՐՋԱՆԿԱՑ: այսինքն ընդ արդարոց երջանկաց կի՛ երանելեաց. կամ, ընդ արդարս երջանիկս. բայց ըստ շարադրութե՛ մի բառդնի նախդրիւ տրական, և միւսն վերջահոլով, վասն զի ԸՆԴ նախադրութ յարմարին երկոքեան ևս: Սոյն ոՃ է և յառաջասացեալն, ԸՆԴ ԽԱՂԱՅԷԱԼՆ ՀԱՒՐԲ՝ ԱՐԷԱՄԲ ՆԷՐՆԷԼՈՅՆ:

(30) ԱՄԷՆԱՅՆ ՈԳԻ: Ամենայն բանաւոր քեզ անկեալ, ՅԱՌԱՋ ԱԴԱՒԷ, ոչ ամենայնն միօրինակ՝ այլ զանազանաբար. այլազգ ԷՐԷՆԱՅԷԱ+, հրեշտակքն, և այլազգ ԷՐԷՐԱՒԱՐԷ. ոռ այլազգ՝ մեղաւորն, և այլազգ՝ արդարն, այլազգ տէրն. և այլազգ ծառայն, ևն: Արդ՝ հրեշտակաց յուսով սպասեն և կարօտին շնորհաց՝ եթէ խնայի Տր բնութե նոցա, և յառաջ քան զերանութիւն, աՀա յայտնի է բանն. զի յուսովն առ ա՛ծ՝ և նորին շնորհօքն կային յանմեղութե, և երանեցան: Բայց քանզի բանս 'ի ներկայումս խօսի, իբրև այժմ ևս յուսացօղս և կարօտեալս շնորհաց, ըստ այսմ ոչ իմանի զնորոգ ստացմանէ շնորհաց, այլ զհանապազորդութե՛ ստացեալ շնորհաց և երանութեն. զի որպէս զինի ասէ, 'ի ձեռին ա՛յ է շունչ կենդանական ամենեցուն՝ թէ ըստ բնական, և թէ ըստ գերբնա-

կան գոլոյն ։ Այսմ բանի համեմատ խօսի սբն Ամբրոսիոս ('ի մեկն. սաղմ. ՃԺԸ. Թիւ 29.) * Այլազգ կարօտի արդարութեանն Այ հրեշտակն, և այլազգ մարդն. այլազգ պէտս ունի ողորմութե հրեշտակապետն, և այլազգ մարդն . . . Նա պէտս ունի ողորմութեն Այ, զի մի կարասցէ մոլորիլ, և մի անկեալ 'ի շնորհացն Այ, յախտ գլորեսցի||։

---

Սերտին յաւելուած հրէին հեծութե՝ նորին հոգւոյ, առ նոյն ողջերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## Բ. Ա. Ն. ՁԳ.։

ա. Բարձրեալ անքնին. զօրութիւն ահեղ. Տէր արարածոց. թագաւոր երկնի. ստեղծիչ հրեշտակաց.[1] գոյարան մտաց. հաստիչ հրեղինաց. պետ բարի հոգւոց. աջ ապաւինութե. անդորրութե հանգստեան.[2] տեսարան լուսաւորութե. պայծառութե բերկրութե. ճանապարհ երանութեան. պատճառ կենդանութե. առիթ բանաւորութեան. փրկութե[3] առանց չարութե. առաջնորդ խաղաղութե. պարիսպ ամրութե. պատուար պահպանութե.[4] ցանկ բոցոյ մեծի օրհնութե. սահման անոխակալութե,[5] յիշեա յայսմ ողբերգութե մատենի բանիս խոստովանութե և զոր 'ի մարդկային ազգէ թշնամիս մեր՝ 'ի բարի, և արա կատարեա նոցին քաւութի և ողորմութի ։ Մի՛ բարկասցիս նոցա վասն իմ՝ Տէր, իբրև վրէժս բամբասողաց՝ առ յաճախ սիրոյդ որ յիս, այլ որպէս զչարս կշտամբողաց և իրաւամբք նախատողաց՝ ներեա յանցանաց նոցա ։ Իսկ արդ մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի քո՝ արդարադատ,[6] ոմանք առ մեզ վնասակարագոյնք սակաւուք թերևս և յիրաւի բամբասելոցս, և ես առ քեզ՝ ամենապարգև, անթիւս և անկշռելիս բազմօրինակ ուխտազանցութիս ։

բ. Արդ՝ յիշեա զքո մեծութիդ՝ Տէր, նայեցեալ 'ի յիմս անարգութի. և ընդ խնդրելս իմ 'ի քէն բարի իմոցն ատելեաց,[7] և դու առ քոյս՝ ըստ քում մեծութեդ՝ անճառելիս հրաշագործեսցես ։ Մի՛ սատակեսցես[8] զիմն խածանողսն, այլ փոփոխեսցես.

խլեալ զխոտանս բարս երկրաւորս՝ զբարիսն արմա-
տացուցես, և յիս և 'ի նոսին։ Մանաւանդ զի դու
լոյս ես և յոյս, և ես խաւար և յիմար. [9] դու խնկու-
թի՛ բարի գովելի, և ես համայնիւն չար ապիկար.
դու տէր ստորնիցս և երկնից, և ես անիշխան շնչոյս
և հոգւոյս. դու բարձրեալ 'ի կարեաց զատեալ, և
ես տաժանաւոր և վտանգաւոր. դու 'ի վեր քան
զկիրս երկրիս, և ես կաւ անարգութե՛ դարշութե՛.
դու՝ ըստ մարգարէին, մնաս յաւիտեան յանբաւ
բարձրութե՛, և ես միշտ կործանիմ՝ ըստ նորին բանին.
'ի քեզ ո՛չ է մթութի՛ կամ նենգութի՛, և ես [10] բո-
վանդակն ենկ եմ՝ որ զաւանդն իմ ո՛չ պահեցի։ [11]
Հա՛ն զիս 'ի բանտէս. արձակեա՛ 'ի կապանացս.
զերծո՛ 'ի շղթայիցս. փրկեա՛ 'ի խեղդմանէս. ազա-
տեա՛ 'ի տագնապէս. քակտեա՛ 'ի յերկաթիցս. լո՛յծ
'ի պաշարմանցս. [12] արտաքսեա՛ յերկմտութեցս. սփո-
փեա՛ 'ի տխրութեցս. հանգո՛ 'ի նեղութեցս. փարա-
տեա՛ 'ի վշտացս. հանդարտեա՛ 'ի խռովութեցս. ա-
պաքինեա՛ 'ի լալոյս. մերժեա՛ 'ի հեծութեցս. հեռա-
ցո՛ 'ի յողբոցս. կազդուրեա՛ 'ի կսկծմանցս։ Ա՛ծ ո-
ղորմութե՛ և պարգևատու քաղցրութե՛, մի՛ զդրա-
ւեալս արեամբ հզօրիդ՝ անտես արարեալ ընդվայր
կորուսանել. կանգնեա՛ զհասեալս յափն մահու՝ 'ի
բազմավտանգ հիւանդութե՛ս։

Գ. Ահա՛ [13] բարդեցան կուտեցան շրջանակք ամացս
ընդունայնութե՛, յորմէ հետէ յայտնեցեալ ցուցայ
յօչպէտս երևեալ, 'ի յանդաստանէ մօրն իմոյ սե-
նեկի՝ փուշս դժնիկի՝ մեղաց շառաւիղի. մի՛ լինիր ինձ
խայթոց խոցոտիչ՝ որպէս անդ [14] տոհմին յուդայի,
և կամ զաւակին եփրեմի։ Եւ քանզի բուսուցեալ
տնկեցի յոգիս՝ փոխանակ ցորենոյն բարեսերմութե՛ [15]
խոտս խայթողականս ինքնաթոյնս ընդարմացուցիչս,
ըստ գրոյն բանի՝ որ երէցն է քան զաւետիսն, զիա՛րդ
ո՛չ կոչեցից զանձն իմ՝ դարշելի անդաստան անիծա-
բեր փշովք մեղաց հեղձեալ։ Ո՛չ սերմանեցի արդա-
րութի՛, ըստ բանին յովսեայ, և զիա՛րդ հնձեցից և
ժողովեցից զկենաց պտուղն։ Ընկաւ սաւինք կուսու-
թե՛ անձինս մաքրութե՛, ըստ մարգարէին բանի՝ որ
առ իսրայէլ, կարօղ ես տէր՝ 'ի նոյնն հաստատել։

Լայնեցի ընդարձակեցի, ըստ մոլեկան բարուցն յու-
դայի, զանկողինն կամացս՝ դիւացն հոմանեաց, 'ի
ձեռս քո է ամփոփել դարձեալ 'ի նոյն զգաստութի։
Եթէ [16] մարմնապէսն կցորդութի ընդ տեսանողին՝
անարատ գործեաց զպոռնիկն, իսկ դու փրկութի՝
հոգեպէս միացեալ 'ի յիս՝ կրկին մաքրեսցես. եթէ
արեգակնս այս անկենդան՝ ստեղծեալ առ 'ի քէն
երկրիս մատակարար, և [17] զկարակումն մորից ցա-
մաքէ, և զտհաս պտուղս հասուցանէ, իսկ ստացօղդ
ամենից՝ հոգիդ ամ՟յ՝ որքան զօրեսցես զտիղմ չարեաց
աղտոյ՝ և զթարախ պղծու՟ մեղաց մթերից՝ իսկոյն
սպառել։ Վասն այսր կանխաւ իսկ ժամանեցի հայ-
ցել առ 'ի քէն բարի՝ ատելեացն իմոց 'ի կարգ այս
բանի, զի զհերքեալ մնասակարս պարտուց մահու՝
յամենախնամ աչաց հզօրիդ մի՛ մերժեսցես՝ որհ-
նեա՛լ գթութիւն. արդ՝ կենագործեա՛ զիս զամենա-
մեղս անդամօք մարմնոյս՝ [18] ընդ բնու՟ հոգւոյս խոր-
հել միշտ զքոյդ։ Իսկ բարեգործացն խնդրել բա-
րիս, բնութ՟ են օրէնք՝ [19] անբռնադատ կրիցն յա-
րակցապէս առ սոյն բերումն։ Քանզի արդ՚որև առ
միդ այդ պատուէր՝ ամենայն հասակ զօրանայ. իսկ
միւսոյդ երկրորդի՝ առաջնովդ խնամօղ հանդիպել,
՟ծածկամնիդ է նմանութի. յաղագս այսր իրի՝ նախ-
նի դասեցի զթշնամեացն իմոց աղերսանս, քան զե-
րախտաւորացն բարիս։

Է. Եւ արդ՝ յիշեա՛ զնոսա [20] կրկին ընդ միոյ, որ 'ի
քո անուն բարձրացեալ՝ զանարժանս զիս ընկալան.
և տո՛ւր նոցա տէր ամենառատ բարերար և անոխա-
կալ, վարձս արդարոյ և մարգարէի, թէև ես յա-
ւէտ թափուր իցեմ յարժանեաց, ըստ հաւատոց նո-
ցա և առ յոյս նոցին ակնկալութեան, որ առ պար-
տաւոր գերիս՝ ողջամիտ կամօք ակնարկեն, որպէս
թէ [21] 'ի մասանցդ քո կեցուցչաց՝ 'ի պահպանարան
հոգւոյս ծածկութի՝ լիով ունիցիմ։ Եւ զպատժա-
ւորս՝ [22] անամփոփելի 'ի քոց տեսութեց, և յանխա-
բելի 'ի յուղիղ կշռութեց՝ քաղցր գթութե՟դ ան-
սահմանելեաւ մերձեցեալ առ իս՝ մաքո՛ւր արասցես,
անխայտառակելի պահելով 'ի տիեզերական յանդի-
մանութեն։ Եւ որպէս շուք իմն վայելչական դնել

ախորժելն ինձ անարժանիս՝ սիրելիքն քո՝ վասն քո , նայեցեալ 'ի կրօնս զգեստուս բարեկերպութեան , չգիտելով զախծս գաղտնեացն՝ երջանիկ կարգան եղկելոյս , և դու հնոմրաւոր ամենապարգև օրհնեալ մարդասէր՝ առ ընաւս ողորմած , վասն ամենաթշուառիս հեծութեան՝ հաշտեայց ընդ նոսա ըստ հաւատոց նոցա . ընծայեալ նոյին մատո՛ պարգևեա զանեղծ մեծութիւդ՝ և զանթառամելի զպսակդ՝ յահաւոր աւուրն յետնում հատուցմանն ամենափորձ ընտրութեանն ։

Է . Ով դու ես գրաւ փրկութեան մեծութեան անվատնելի և [23] անծախ գանձուց սորկիս և սովեցելոյս , 'ի վաճառ վերնային շահու օգտութեան՝ բանիւդ որ 'ի քեն՝ յորդեալ ձոխանամք ։ Կաւծ ինձ սահման՝ ջրոյ հանգստեան . [24] արձանացո անփոփոխ՝ պատրաստական վստահութի . կարգեա օրհնաբանեալ՝ անկեղակարծ յուսոյ ամրութի . տուր ամենախնամ դու՝ անաչառ պաշտպանութի . սասանեցելոյս՝ բարեաց անդորրութի . տարակուսելոյս լուսոյ ապաւինութի . աշխարելոյս՝ մեծ երջանկութի . վհատելոյս՝ կենաց օգնութի . լքելոյս՝ անգայթագղելի օժանդակութի . նահանջելոյս՝ անսայթաք վերընթացութի ։ Ով [25] քո է ընաւդ , և 'ի քէն է ամենայնդ , և 'ի ձեռն քո բաշխին հաստատութիւք պիտանացուաց համայնից կենաց . և քեզ վայելէ փառք՝ յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

---

(1) Գոյարան Նոսաց . այսինքն գոյացուցիչ մտաց և ուղղիչ խորհրդոց . կամ . միտք առէ՝ փոխանակ իմանալի և հոգեղէն գոյացութե ։

(2) Տեսարան լուսաւորութեան ։ Երևեցուցիչ լուսոյ . կամ , պատճառ ամ լուսաւորութե հոգևոր և մարմնաւոր . կամ , դու ինքն առաջատ և կայան լուսոյ . Ը այնմ , ընակեալ 'ի լոյս անմատոյց ։

(3) Առանց չարութեան . այսինքն փրկութի ազատ 'ի վնասակարաց , կամ 'ի վտանգաց , որ է ասել , անվտանգ փրկութի . կամ , փրկուի 'ի պատժոց՝ առանց տուգանաց կամ գանից . կամ , փրկիչ միայն՝ առանց կորուսանելոյ ։

(4) Ցանկ Բոցոյ ։ Ցանկ կամ պարիսպ հրեղէն . ( ըստ Զաքար . Բ . 5 . ) որ ունի զբոց մեծ՝ ոչ այրելոյ իբրև զբոցեղէն սուրն շրջապատող ծառոյն կենաց , այլ օրհնութեան , զի է բոց սիրոյ ։

(5) Յինչ յայնմ ։ 'Ի կարգի աղօթական բանիցս զխնութե յիշեա և զթշնամիս մեր որ 'ի մարդկանէ , բայց առնել նոցա թողութի և ողորմութի , և ոչ 'ի պատուհասել . մի՛ բարկասցիս ՆՏ 'ի պատճառս իմ , վա

առաւել սիրոյդ առ ի լինելով վրէժխնդիր · որպէս թէ զուրբ զգք բամբասիցեն · այլ իբր զայլոտ ոք յիրաւի կշտամբիցեն, ո՛րպէս ներողամի՞տ լէր առ նոսա : Տարակուսանս գուցէ ոք խորհիցի, եթէ իրաւամբք կշտամբեն նոքա կամ թշնամանեն · զիա՞րդ այնուհետև յանցանս համարիցի : Բացատրելի է, զի կա՛մ զայլ յանցանս թշնամեացն հայցէ ներել, և ոչ զկշտամբելն զինքն կոչէ յանցանս, և կամ նոյն իսկ կշտամբանք թէ և իրաւամբք արարեալ, նոցա 'ի յանցանս լինի, զի առ թշնամութէ առնեն զայն, և ոչ յուղղութի, նախանձն՝ այլ ոչ սիրեն, ոչ ունին իշխանութի խրատելոյ, յանդիմանելոյ, և է ևս՝ զի զիւրեանց զգերանն թողեալ, զշիւղս առաջնորդաց յածեցուցանեն 'ի բերան :

(6) [illegible] : Այսպէս կիտագրեալ զատանեն լաւ օրինակք · միայն զբառն [illegible] տալով 'ի յաջորդն · թերևս և յիրաւի [illegible] : Իմաստքն են · մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի քո 'ի խնդրուածս, ոմանք որք մեզ թշնամիք են, և քանի՛ ևս չնատակարք, չարախօսք և չարարարք, միշտ առաւել քան զարժանն իմ · կամ, միշտ պակաս քան զոր ես չնատակար եմ առ քեզ · և թերևս նաև յիրաւի բամբասեն զմեզ վասն անկարգ գնացից մերոց : Ըստ շարադրութեն պարզելի է · ոմանք չնատակարք առ մեզ, թերևս առ յիրաւի բամբասեալքս : [illegible], և ես ընդ նոսա մատուցեալ առ քեզ՝ գործօղս, ունօղս անթիւ ուխտազանցութեց : Այսպէս լաւլէսյն իմանի բառս՝ գործօղ, կամ պարտաւոր : Կամ, հայցականն [illegible], առեալ է գործիական նշանակութեամբ, այսինքն թշնամիք իմ առաւուք չնատակարք, իսկ ես անհամար զանազան ուխտազանցութեամբք, ուստի առաւել ներելի ողորմութեան են թշնամիք իմ, քան թէ ես և այլն :

(7) [illegible] : 'Ի խնդրելս զբարի վասն իմոց ատելեաց՝ և դու առ քո ատելիս՝ անճառելի բարիս պարգևեսցես ըստ քում մեծութեան :

(8) [illegible] : Որք լեզուաւ խածանեն զիս բամբասանօք կամ զրպարտութե : Յայտնիկ բանս թերևս ակնարկէ յայն չարախօսս՝ որք զՏէր վարդապետն մոլորեալ համբաւէին՝ ըստ պատմութեն :

(9) [illegible] : 1 · օրին · [illegible] :

(10) [illegible] : 3 · օրին · [illegible] : 'Ի քեզ ոչ գոյ բնաւ ոչ տգիտութի, և ոչ նենգութի, իսկ ես բովանդակն իսկ եմ կամ եղեմ · այսինքն թէ տգիտութի եմ, թէ նենգութի, մինչ զի և ոչ զաւանդն իմ պահեմ, կամ պահել կարեմ :

(11) [illegible] : 2 օրին · [illegible], 'ի զերծումն բայէն :

(12) [illegible] : արտաքս հան 'ի կասկածանացս :

(13) [illegible] : Ահաւասիկ բարդեցան ամք ընդունայնութե կենացս · ըստ որում 'ի ծննդենէ անտի՝ որով ցուցայ յաշխարհի, անպիտան մնացի · մանաւանդ թէ յարգանդէ մօր իմոյ յառաջ եկի իբրև փուշ գժնիկ և շառաւիղ 'ի սկզբնական մեղաց :

(14) [illegible] : Ի բանն ովսեայ · (Ե · 12 ·) * Եւ ես իբրև զխռովութիւն եղէց եփրեմի, և իբրև զխայթոց տանն յուդայի : || Բայց աղաչեմ ասէ՝ մի ըստ արժանեաց իմոց դու ինձ լինիր խայթոց, առ ի թիւրեալս և խոտորեալս գնալով խոտորնակի :

(15) [illegible] : Փոխանակ բարի սերմանն ցորենոյն՝ անկեցի 'ի յորդորս խոտս խայթիչս, որպէս եղինձն և այլ փշալից բոյսք : [illegible], բնութեամբ թունաւորս · որպէս մոլախինդն և այլք, որք սաստիկ ցուրտ գոլով կամ ջերմ, թոյն լինին : [illegible], թմրեցու-

ցեալ․ Ըստ Գրոյն Բանի, Յոբայ․ (լա․ 40․) * Փոխանակ ցորենոյ բուսցի եղինճ, և փոխանակ գարւոյ՝ մորենի ։ || Որ Էրէոյն է բան Հաւէթեան․ որ նախկին է քան զաւետարանի առակ որոմանցն ։

(16) Մորճաղեան կուրտաւուրէ ։ Ամուսնանալն Ովսեայ․ (ա․ 3․) եթէ այն ամուսնութե մարմնական ջնջեաց զանուն պոռնկութեանն 'ի կնոջէ անտի, և՛ս առաւել դու փրկութե ամենայնի՝ հոգևորապէս 'ի ներքս յիս միանալով, կրկնապատիկ ես մաքրել կարող ես, ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ։

(17) Զհարակնան ձորից ։ Զգարշ խոնաւութիւն տղմոյ ցամաքեցուցանէ ։

(18) Ըստ Բնութե հոգւոյս ։ Առողջացո զմեղուցեալս ամենայն անդամօք մարմնոյս․ զի և մարմինս միաբանեալ ընդ բնական յօժարութե հոգւոյս, զքոյն խորհեցի․ կամ, կենդանացո զմեռեալ մեղօք անդամս մարմնոյս, համդերձ ապականեալ բնութե հոգւոյս, որ է ասել՝ զմարմինս և զհոգիս ։ Կամ պարզելի է, զիս զամենամեղս, այսինքն որ բովանդակ մեղուցեալ եմ թէ՛ անդամօք մարմնոյս, և թէ բնութե հոգւոյս, որ է ասել մարմնով և հոգւով, կենդանացո զի խորհեցայց զքո կամս և զպատուիրանս ։

(19) Անբանադատ կերպն ։ Վասն երախտաւորաց բարիս խնդրել՝ օրէնք են բնութե, ոչ միայն բանականիս՝ այլև ընդհանուր ամենայն կենդանեաց, ունելով 'ի սոյն զգերումն կամ զհակումն ինքնայօժար կրիցն կամ ախորժակաց, յարակցաբար, իբր ընդածոյս և անբաժանելի ։ Վասն զի առ մէն այդ, առ 'ի բարերարել երախտաւորաց՝ որ հրամայեալ իսկ է, ամենայն մարդ ըստ իւրաքանչիւր հասակի, կամ ամենայն կենդանի կարօղ է և յօժարեալ․ զի ըստ տն բանի, սիրել զսիրելիս, բարի առնել նոցա և ողջոյն տալ, և՛ մեղաւորք և՛ մաքսաւորք յորդորամիտք են, (մատթ․ ե․ 46․ 47։) Իսկ Քաջայդ, երկրորդին՝ որ է բարիս կամել թշնամեաց, համբերել, սատարօղ լինել, առաջնորդ խնամող, համդերձ բարիս առնելով երախտաւորաց, այս է նմանութե Այ, ըստ որում և ասէ՝ լինել որդիք հօրն երկնաւորի՝ որ ածէ արև և անձրև 'ի վերայ չարաց ևս ։

(20) Կրկին ըստ Քոյ ։ Կրկնապատիկ փոխանակ միոյ երախտեաց նոցա շնորհեսցես․ և տուր նոցա վարձս ըստ արդարոյ և մարգարէի․ զի թէպէտ ես յոյժ պակասեալ եմ յարժանաւորութե արդարոյ և մարգարէի, բայց նոքա այսու հաւատով և յուսով հային յիս, և բարերարեն ։

(21) 'Ի Յանուանդ քո ։ Բարերարօղք իմ համարին, թէ յառաքինական գործոց՝ որք են մասունք քոյոյ սրբութեանդ, լիով ունիցիմ 'ի յոգւոջս ։

(22) Անամփոփելի 'ի քոյ ։ Անթափչելի, անծածկելի ։ Զիս զպատժապարտս՝ որ անծածկելի եմ 'ի տեսութե քումմէ, և չկարեմ զերծանել 'ի քո անսխալ դատողութե, մաքրեա՛ աղաչեմ անառաջնանելի գթութբ, զի մի՛ խայտառակեցայց 'ի ահեղերական աւուրին ։ Եւ զի քո սիրելի ծառայքն կամին պատիւ ինձ գնել վասն քո, հայելով յարտաքին կերպարանս կրօնաւորութե, և ինձ երանի կարդան՝ առանց գիտելոյ զգաղտնի արատս իմ․ վասն այսորիկ աղաչեմ․ ըստ հաւատոց նոցա հայեա՛ց 'ի նոսա, և պարգևեա՛ զանթառամ պսակն և այլն ։

(23) Անծախ գանձուդ․ անսպառելի գանձուդ ։ Այս հատուած բանի՝ սկսեալ անտի, Զի դու ես Տէր, կապակցի ընդ նախընթաց բանին, որպէս թէ ասել․ վասն խնոց երախտաւորաց 'ի քեն հայցեմ զհատուցումն բարեաց․ վասն զի ինձ անանկիս դու ես դրաւ կամ առհաւատչեայ մեծութե անսպառ գանձուց, 'ի հաճառ, 'ի բաշխումն երկնային

օգտից ։ Բանֆատ որ 'ի ֆէն , բանիւ իշխանութեան քաղցրութեան և վարդապետութեան , որով 'ի քէն յորդեալ ձոխանանք · իբրև թէ՝ այսպիսի իշխանութբ գոլով կարգեալ մատակարար շնորհաց քոց՝ իշխեմ 'ի նոյն գանձուցդ առնուլ մասն վասն իմոց բարերարաց ։

(24) Արջանացն անֆոֆոխ ։ Հաստատեա , տէր սիրդութբ զպատուհաս և զգլխող վստահութեն 'ի բարի գործս կի՛ 'ի մէջ վտանգաց ։ Կարգեա՛ ինձ անֆէղաֆարծ , աներկբայելի յուսոյ ամրութեն ։ 2 օրին · անֆաղաֆարծ ։

(25) Քի՛ է Բնաւտ ։ Այդ ամենայն զոր հայցեմ , քո՛ է առանց նուազելոյ · և 'ի ֆէն է ։ 'Ի քէն ունիմ զամ , և մեզ 'ի քէն միայն պարգևի՝ և ո՛չ յայլմէ , և 'ի ձեռն քո բաշխին հաֆաֆաւթնֆ ղիֆանաշաւաշ , դարմանք կի՛ զօրութեանք սխոյից ամենեցուն կենաց ։ 2 օրին · հաւաաֆաւթնանֆ , թ չափն կամ որոշմունք իւրաքանչիւր բաւականին ։ 1 օրին · հաւաաաբաւթնանֆ , համեմատ չափք ։

---

Միբրաֆին յաւեղաւած հրհէն հեծաւե՝ նորին հոֆողի , աա նոյն աղէրս ճաղԲանայ Բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ԱՅ ։

# ԲԱՆ. ՁԴ.

ա. Սրբոյ երկնաւոր. Թագաւոր բարձրեալ. տէր բոլորից. ամենից ակնկալութի. ստեղծող տեսականաց. հաստիչ իմանալեաց. [1] պատճառ եղանութեց. կազմիչ հանդերձելոց. տուիչ լուսոյ. աւիթ առաւօտու. պատրաստիչ վաղորդայնի. երևեցուցիչ երեկորի. տարրիչ խաւարի. [2] արուեստաւոր բարեհնար. իմաստուն գործօնեայ. [3] քաւարան օրհնեալ. հալիչ մեղանաց. հալածիչ ցաւոց. քակտիչ դառնութեց. պահպանարան հանգստեան. [4] հնարք նիրհման. յարմարիչ քնոյ. պարգևիչ ննջման. չնչոյ յարակարգութի. զգայութե տևողութիւն. ցրիչ ցնորից. յեղանակիչ անրջոց. փոխարկութի զարհուրմանց. այլայլութի տխրութեց. խափանիչ խիթմանց. ընդարձակիչ կարծեաց. [5] համադրութի ծրփմանց. ահագնութի խարդախմանց. հարուածիչ դիւաց. փախուցիչ ախտից. ընկղմիչ գայթագղութեց։

բ. Պաշտպանեա երկնաստեղծ ձեռամբդ. զօրացն բարձրացեալ քո աջովդ. ամփոփեա ամենակալդ Թևօք. ծածկեա ծծեան խնամօքդ. ամրացն վերակացութբ վերնայնոցդ. շուրջանակի պարսպեա գումարտակօքդ անմահից. 'ի յամենայսատ պարփակեա

կցորդութե հրեշտակացդ . վանեմ զընդդիմամարտն իմ՝ զինուորութե զուարթնոցդ . պատսպարեմ զսասանեալս՝ ա̃ծածնիդ մաղթանօք . զբանակս անդրանկացդ՝ [6] բարեկարգեմ ինձ պահապան ։ Նայց [7] ընդ աչացս դիմացդ՝ և զմտացս իմ տեսանելիս . զգաստ ալրա ընդ ոգւոցս՝ և զծանրաբեռն կրիցս դանդաղութի . վերացո տէր 'ի զգայութեցս՝ զմածեալս յիմարութի . բարձ միայն բարեգործ՝ զպատրուակիս թանձրութի ։ Ընդ սկզբան [8] բերմանս լուսոյ՝ զողորմութի քո ծագեա . ընդ ելից արեւուն՝ արդարութե արեգակնդ 'ի յանձկութի սրտիս մացէ . Ճառագայթ քո փառացդ՝ 'ի յիմաստիցս խորհրդանոց ջահեսցի . խայծիդ տեառնագրութի՝ ընդ շունչս և ընդ մարմինս համասփիւռ տարածեսցի ։ Յանձն առնեմ քեզ յաւուրս՝ զքո յարմարեալ տաղաւարս պահպանաւ ոգւոյս՝ որ 'ի սմին ։ Օ՜ի դու ես ա̃ծ անքնին, առ ամենեսին բաւական, և յամենայնում բովանդակ, օրհնեալ յաւիտեանս . ամէն ։

---

(1) Պափճառ էղանուբէյ ։ Պատճառ կամ ներգործօղ եղեալ նոցա, որ գոյացեալքն են ։ Կաւմէլ հանդերձէլոց . յօրինօղ ապագայ նոցա, որք լինելոցն են ։ Առէի առաւօտու, պատճառ առաւօտեան ժամուն, յորում ծագէ արեգակն ։ Պօգրաջիէւ ..., ժամուն յորում բարձրանայ արեգակն ։ Փօրրէլ խուարէ . գոյացուցիչ գիշերային ժամանակին՝ յորում ծածկի արեգակն ։ Աւյոցիկ ժամուց պատճառ առ Ած, իբրև զի նա ստեղծ զարեգակն և զլուսին, և զնոցա զել և զմուտ այնպէս կարգեաց, զի անվրէպ կանոնաւ յաջորդեսցեն միմեանց տացեալ ժամքդ, և որպէս սահմանեացն, նոյնպէս պահէ միշտ . ըստ այնմ . * Եթէ խափանիցէք զուխտ իմ զառաւօտեան, և զուխտ իմ զգիշերոյ || ևն . (Երեմ. լգ . 20 ։)

(2) Աւրուէփառոր բարէհնար ։ Ըստ որում Ած հնարեաց՝ թէ զուղիղ բան բնութե իւրաքանչիւր նոցա, և թէ զմարդկային արհեստս, լուսաւորելով զմիտս մարդկան 'ի գիւտ այնց, և 'ի բարւոք կիրառութի նոցա, ըստ յոյլոյ . ( Հգ . 36 . ) * Ո՞վ ետ կանանց իմաստութի ոստայնանկութե . * ևն ։ Խմոփուբէ գործօնէայ, Ած գիտութեց առաջնորդ, կամ յաջողիչ առ մարդիկ ։ Գիւտ մարդկային հմտութեց լինի աղաքէն խուզիւ մարդկային հանճարոյ . բայց ներքոյ՝ Ած է որ զմիտսն լուսաւորէ . այլ և բուն նախկին գիտութեցն որ յադամ, Ած ինքնին է տուիչ ։

(3) Բաառրան օրհնէալ ։ քաւիչ մեղաց և պատժոց, որ վասն ամենայն օրհնութե արժանի ես ։

(4) Հնարք նէրհման ։ Ըստ որում Ած կարգեաց 'ի բնութե կենդանեաց զհաւաքումն գոլորշեացն 'ի խեղապատակն, որով ծանրանան և թմրին զգայութքն, այս է՝ նիրհումն . որում զհետ գայ ..., այն է՝ կապումն զգայութեց . և քնոյն զհետ գայ ..., այն է՝ յիրկար հանգիստ

զգայութեցն , և բոլոր մարմնոյն ։ Եւ յայսմ անզգայ հանգամանս մարմնոյն՝ տախտակին պարգևէ ած ձեռս ՅԱՐԱԿԱՐԳՈՒԹԵ , զհանապազոր- դութի տուրևառի շնչոյն . կամ, ինքն ած է շնչոյ յարակարգիչ ։ Ցրուէ զգլխական երևմունս յերազի . զմտաւոր երազս փոխարկէ 'ի բարին ։ ՃՈԽԱՐՀՈՒԹԻ ԶԱՐՀՈՒՐԱՆՑ . փոփոխէ կամ բառնայ զարհաւրանս՝ որք լի- նին յերազի կամ յարթնութե ։ ՏԱՂՏԱԿՈՒԹԻ ՏԽՐՈՒԹԵՑ . փոխէ 'ի խնդու- թի զտրտմութիս կամ զտրտմալի իրս , որ յերազի կամ յարթնութե ։ ԽՈՏՈՐԻԼ ԽԻԹԱՆՑ , խափանէ զխթիչ ցաւս , կամ զանձկութիս սրտի , որ ներգործին 'ի հաւաքմանէ արեանն ։ ԸՆԴԱՐՁԱԿԻԼ ԿԱՐԾԵԱՑ . փարատիչ վտանական խորհրդոց երևակայութե՝ որ լինին 'ի քուն կամ յարթնու-
թեան ։

(5) ՀԱՄԱՏԱՐՈՒԹԻ ԾՓԱՆՑ ։ Հանդարտութի կամ խաղաղեցուցիչ խռո- վութեց սրտի ։ ԱՀԱԳՆՈՒԹԻ ԽՈՐՏԱԽՄԱՆՑ . աճեցուցիչ խայդախութեց դիւաց կամ մարդկան , որք 'ի քուն կամ յարթնութեան կամին չա-
սել մեզ ։

(6) ԲԱՐԵԿԱՐԳԷՄ ։ մի օրին . ԲԱՐԵԳՈՐԾԷՄ ։ Ցես խնդրելոյ զպաշտպա- նութի հրեշտակական դասուցն , և զբարեխնամութի սրբոյ Աձածնին , յաւելուն թէ զբանակս անդրանկաց կարգեա 'ի պահպանութի , յայտ-
նապէս զՍուրբս 'ի մարդկանէ ցուցանէ անդրանկացն անուամբ ։

(7) ԸՆԴ ԱՐԵԱՄԲ ՏԻՄԱՑ ։ Բայց , լուսաւորեա ընդ զգալի աչացս՝ որք 'ի դէմս իմ հաստատեալ են , նաև զհայեցուածս մտացս ։ ԱԶԳԱԿ ԱՐԱ , թեթևացո , զօրացո ը մարմնոյ շնչոյս՝ նաև զծանր կրիցս ԴԱՆԴԱՂՈՒԹԻ . ՃՇ զծուլութիւն , զվրդովմութիւն՝ որ 'ի կրից քնոյ ծանրանայ ։ ՎՏԱՐԵԱ , փարատեա 'ի զգայարանաց ԱՄԲԾԵԱԼ ՅԻՄԱՐՈՒԹԻ , զթմրութիւն , զան- զգայութի հոգևոր իմաստից . այլ և բարձ ԱՊԱԿԱՐՈՒԱԾՍ ԲԱՆՋԱՐՈՒԹԵԱՆ , զթուլութի մարմնոյս , և զշրջադումն 'ի թանձր սխործակս զգալիս ։

(8) ԲԵՐՄԱՆ ԼՈՅՍ ։ Ցայտ է 'ի բանէ աստի և յայլոցն ևս , զի այս ա- ղօթք արարեալ է վասն առաւօտեան ժամուն . վասն որոյ հայցէ ընդ ծագման լուսոյ՝ լուսաւորել և զմիտսն ։ 'Ի ՅԻՄԱՍՏԻՑ ԽՈՐՀՐԴԱՆՑ . զի Ճառագայթ երևասցն Այ , այսինքն իմաստութի , խոհականութիւն փայլեցէ 'ի գլուխն , որ է տեղի և գործարան խորհրդոց՝ իմաստից . զի նշան խաչին , և յիշատակ տէրունական չարչարանաց տպաւորեալ կայ-
ցէ 'ի հոգի և 'ի մարմին ։

---

ՍԵՐՈՓԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ՀՐԿԻՆ ՀԵՏՈՒԹԵ՝ ՆՈՐԻՆ ՀՈԳՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՏԵԱՆՈՑ ԲԱՆԻ ։

'Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ՝ ԸՆԴ ԱՅ ։

## ԲԱՆ. ՁԵ.

Ա. Իսկ արդ՝ վասն զի [1] արթնականն մեր զուարթութի՝ քեզ ննջումն իմն է համարեալ, իսկ 'ի խոր թմբրութի լռելն՝ վասն ուղիղ հաւատոյն 'ի քեզ՝ անթարթափ բացութի աչաց, ուղղեա հոգւոյդ- քո իմաստութեբ [2] զյաջողուած ձեռինս գործոյ՝ ընդ հեծութե ձայնիս մաղթանաց ։ Օրացո տէր՝ 'ի հանդէս բարի ձգնաւորական [3] արի վաստակոյ . կցորդ-

լեր կարեացս տկարութե՟. 4 Թեթեւս կացո զաշխա-
տութե՟ս այս սկիզբն. արագեա՛ միշտ կարօղ՝ զյա-
ռաջադրեալ ձեռակերտս. դիւրաւո՛րս ընթացո 'ի
յաւարտումն լրմանն։ 'Ի վախճան իրին՝ բերկրու-
թե՟ զիս հասո՛. ժամա՛ն կայուսցես՝ 'ի հանդիպումն
յուսոյն. կցո՛րդ լեր ուղղոյն՝ 5 Ճանապարհիս ընթա-
ցից. 'ի թռիչս ամբարձման՝ փութացուսցես յօդ-
տակարն. ընդ աջմէ իմ լցիս՝ 'ի վտանգի ծանրու-
թե՟ն. զձայն քո լո՛ւր՝ 'ի յանձկութե՟ն պահու. ձե-
ռամբ քո կեցո՛ 6 'ի կորստեանն ժամու. մատամբ քո
ազդեա՛՝ 'ի սահմանին անձկութե՟. հարթեա՛ զխորոց՝
ամենաչար խափանմանն. հոգեղինին առաքմամբ,
ըստ ամբակումայ, ինձ հնարեա՛. բան ինձ շնորհեա՛
'ի յատենի բազմութե՟ն. իմաստութի՟ յիս տնկեա՛ 'ի
հանդիպման քննութե՟։ 7 Ըմպով կամաց քոց հոլա-
նացի՛ր հրաշապէս. հանդարտեցո՛ փայտիւդ կենաց՝
զծովուս մրրիկ. սանձեա՛ զաստեաց կենցաղոյս պատ-
կեր՝ քոյին հրամանաւդ. քանզի թէ աստ ողորմութի
քո տէր՝ կամեսցի, այս լուծութի կոհակաց կարծր
է քան զվէմ. և թէ 'ի ցամաքի անտես առնիցես,
իբր զանկայուն՝ պնդութի յատակիս 'ի ներքոյ աստի
հոսեալ սասանի։

Է. Արդ ընկա՛լ յի՟ զպաղատանացս ձեռնարկութի՟՝
քեզ 'ի հաճութի՟, և արա՛ ինձ 8 զամենակարծն դայ-
թագղութի՟ մեծ վստահութի՟։ Որպէս 'ի ջրահեղ-
ձոյց ամենակործանն դարու, որք 'ի հարթ տարած-
ման գետնի առանց երկիւղի յանհոգս կէին, յողոր-
մութէդ ամայի մնացեալ՝ կորուսան. իսկ ընդ հովա-
նաւոր 9 մածուածով լաստիւն յօդնատատան հիմանն
հայթայթանօք՝ յանուն գթածիդ յեցեալ պահե-
ցան. ընդ որս՝ և զաղաչօղս մշտատատան՝ 'ի նաւա-
հանգիստն խաղաղութե՟ մարդասիրապէս պրծեալ
ապրեցո՛. 10 վարձս 'ի քոյոցդ ընդ իս բերելով հոգևոր
շահից, զստորաբերս այս ստուարութի պարտուցս
լքեալ բանիդ առակաւ, 'ի քեզ տէր անկայց միա-
ցեալ իսպառ անբաժանելի՝ օրհնեա՛լ յամենայնի։
Եւ կցորդելով այսմ մաղթանաց հոգեղէնքն ամե-
նամաքուրք՝ ընդ հողեղինայն մարտիրոսաց, որք
ջրով և հրով փորձեցան, և 11 յելից զերծմանն ընդ

մեր խնդրեցին, և մեզ յիշատակ թողին օգնութե՟ն, աստուծե՟ն ընդ մեզ համաբանաբար զուգամասնութբ՟՝ եղիցի եղիցի ։

---

(1) Արթնաջանն մեր ։ Մարմնով միայն արթուն լինելն մեր՝ առանց հոգևոր զգաստութե՟ն, առաջի քո իբր քուն համարեալ է. ըստ այնմ (Եփես. Ե. 14.) * Արի որ ննջեսդ ։ || և ընդ հակառակն՝ 'ի խոր քուն կալն մարմնով քեզ իբրև անփակ բացումն աչաց համարեալ է վս տեսութե՟ ուղիղ հաւատոյն առ քեզ, որով աչք մտացն միշտ արթուն են. ըստ այնմ (սաղմ. խդ. 15 ։) * Աչք իմ յամ ժամ առ Տր ։ || Սկսեալ աղօթիցս յայն հայի, թէ ոչ զի զգաստացեալք 'ի քնոյ՝ կարօղ եմք ձեռնարկել 'ի գործ իւրաքանչիւր, այսպիսի աղագաւ անկարօտ ինչ իցեմք ԱՅ յաջողելոյն ։ Վասն զի այս մեր արթնութիւն իբրև զքուն թմբիր համարեալ է առ Ած, ինքնին անգործ և անբաւական. ուր ընդհակառակն՝ հաւատով փառաւորել յԱծ զօրաւոր է իբրև զքուն արթնութիւն, թէ և ոք խոր 'ի քուն կայցէ ։ Վասն այսպիսի պիտոյ է և վասն ցերեկի գործոց պաղատել առ Ած ։

(2) Զյաջողուած Յէտինն գործոյ ։ Ոմանք կոչեցան զյաջողութիւն աղօթական գրոցս ։ Բայց 'ի կարգէ բանիցն յայտնի է, զի և այս աղօթք վասն առաւօտեան ժամուն ասացեալ է. ուստի հայցէ զյաջողութիւն ամենայն գործոց՝ զոր յաւուրն առնելոց է իւրաքանչիւր ոք ըստ իւրում վիճակի և պաշտաման. խնդրելով զի յաւարտ հասուցէ Ած զիւրաքանչիւր գործս ըստ իւրոց հաճոյից. և զխափանարարն կամ զարգելն խափանեսցէ ։

(3) Արէ Հօտաջոյ ։ 'Ի գործ պահոց, ընթե՟, սաղմոսերգութե՟, աղօթութեց, ևն ։ Զօրացո առէ՝ յորժամ առաջի կայցէ ինձ ձեռն արկանել 'ի գործ առժամանելի և բազմավաստակ, թէ առանձնաւոր գործ իցէ, և թէ հասարակաց ։ Եւ եթէ ոչ ինքնին ծանր իցէ, այլ առ խնում տկարութե՟, դու լեր կցորդ ։

(4) Թեթևա ։ Օգնելով տկարութեսն՝ թեթև արա ինձ զվիճակն այսր աշխատութե՟. կամ, փոխադրութբ հոլովոյ, թեթևացո զաշխատութիւն սկզբանս. որովհետև յամենայն գործս՝ սկիզբն առժանելի է միշտ. և արագէա, յառաջեցո զառաջինկոյ ձեռագործս ։ Դիւրաւոր, դիւրաւ յաջողեա 'ի վճարումն գործոյս. և այնպէս խնդութբ հասո 'ի կատարած նոցին, և 'ի հանդիպումն յուսոյն, 'ի սասցումն յուսացեալ ելին, կամ օգտին՝ զոր ակնունիմ 'ի գործոյ աստի ։

(5) Ճանապարհի ընթացից ։ Ընթացից սկսեալ գործոյն, կամ, ուղևորութե՟, զոր վասն հոգևոր կամ մարմնաւոր գործոյ առնէ ոք ։

(6) 'Ի յորամեանն ժամու ։ Յորժամ վտանգ ինչ լինիցի ։ 'Ի սահմանին անկ-կոտէ. 'ի ժամու դժուարութե՟ գործոյն՝ մատամբք օգնեա ։ Անձանց խաղանման. բարձ զարգելս չխատակաց խափանմանն, հոգեղինին տառապանք. առաքմամբ հրեշտակին ինձ ճարակ շնորհես 'ի սովու, կամ յայլ անհնարին դիպուածս, որպէս զԴանիէլի արարեր 'ի ձեռն Ամբակումայ ։ 'Ի հանդիպման կռուոյ. խնամունայց զիս 'ի քննելն զբանս Ար գրոց, կամ զճշմարտութիս հաւատոյ, և զմոլար վարդապետութիս ։

(7) Ամգողխամոյ ։ Զանցս Իսրայելացւոց ընդ ծովն կարմիր՝ յարմարէ 'ի բանս. 'ի նաւարկելն իմ առէ՝ առնկ խնամոցքոց հովանի լեր. և զօրութեամբ Ար խաչին հանդարտեցո զմրրիկս. սանձեա զխռովեալ ծովն, որ է պատկեր վրդովեալ կենցաղոյս ։ Վասն զի յորդմունքս՝ լցծ ալեք

ծովու կարծր լինելն քան զվէմ. իսկ եթէ ՚ի ցամաքի անուս առնիցես, անդութեն գետնոյս իբրև զանկայուն ինչ ՚ի խորոց անտի թուլացեալ տատանի ։

(8) Զամենաշարժն ։ Զայժ երկնաւորի գայթակղութենն կամ վտանգն՝ փոխեա՛ ՚ի մեծ վստահութե. մի օրէն. զամենաշարժն. զի զայժ կարծր կամ դժուարին արգելու գործոյս ։ Եւ որ ասի, զդաշտապանացս յեռանդնու-թե, զի կարգեալ բան. մի օրէն. գնէ՝ յայնարհնութե ։

(9) Մածուածաշխարհին ։ Տախտակամած շինուածով տապանին, յոգ-նապատան հիմանն հայրապետանօք, նաւաստիւք շարժական հիման տապանին՝ որ տատանէր ՚ի վերայ ջուրցն ։

(10) Վարձս ՚ի փոյոյդ ։ Արժանաւոր գործս բարեաց ընդ իս բերելով ՚ի քո հոգևոր շնորհացդ. որպէս նոյեանքն զնը կենդանեաց հանեն ՚ի տապանէն քեզ ՚ի պատարագ, զօտուրաբերս այս, զնեւզրահակ ծանրութեան պարտուցս՝ առաէն թողլով, բանիւ առաջնա, ըստ նմանութե մշտաս-կեալ բանիդ փրկութենն նոյի. որ զատուար կազմութե տապանին եթող, և միայն նը պատարագօքն ելեալ, քեզ յանդիման եղև ։ Հին լուծ. ՚ի յաջորդն յարէ զայս, որպէս թէ առ հայր ասել. ըստ օրինակի բանիդ ՚ի քեզ միացա՛ հա՛յր, որպէս և նա. զի ասաց. հա՛յր դու յիս, և ես ՚ի նա. զի և նոքա ՚ի մեզ եղիցին ։ Այսպէս մեկնէ, ոչ հայեցեալ թէ առ քնը է աղօթքս. որպէս և տեսանի ՚ի համարն ը. Արդ՝ ընդ ձեռն զի զդա-ղափանացս, են ։ Վասն որոյ ըստ այդմ մտաց առեալ ես, և առ քն ուղ-ղեալ, այսպէս իմանալի է. ըստ բանիդ քո քն որով ասացեր, եղիցին ՚ի մեզ, միացայց և ես անբաժանելի ։

(11) Յեսլից դերծանն ։ Մարտիրոսք՝ որք ՚ի մահուն իւրեանց վասն մեր խնդրեցին, և յիշատակ օգնութե թողին զկարս և զնշխարս իւրեանց, համահաւատար զօրավարանաւորե, միաձայն կցորդութեամբ աստացէն ընդ մեզ. Ամէն ։

---

Սերտին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աշխարհ մաղթանաց բանի ։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

## ԲԱՆ. ՁՕ.

ա̃. Ընդ այսր հառաչանաց թախծութե ողբոց՝ ՚ի բազմաց կերպից շարակարգելոց, և ամենից հոգւոց ողորմեա՛, գովեա՛լ և երկայնամիտ թագաւոր ։ Նաև այնոցիկ առաւել՝ [1] որոց հատեալ է ակնկալութե փրկութե կենաց. որք ննջեցին անպատրաստաբար՝ շիջեալ լապտերօք իւղոյն պակասութեան ։ Նա յիշեա՛ տէր իմ գթութե, և [2] ՚ի յայս ևս պատճառ իրաւունս ինձ գրեա՛ ։ [3] Ընկալ թէ և ՚ի փառս ահաւորութե սքանչելեաց մեծիդ՝ հակառակօքն համարձեցեր զկազմած մարդոյս, [4] զոմն ծանր՝ և զոմն թեթև. զմին զոր՝ և զմիւսն հրային. զի դիմադրու-

թեան 'ի հակառակացն հարթ պահեցեալ՝ արդ ամր կուչեսցուք հաւատարիմ հաւասարութեան. [5] Եւ 'ի յայսմ դարման առաքինութեան վերաբերեալ ընդ ամբարձելոյն, զխոնարհութիւն առ կաւն դիտման աննմուաց պահեալ՝ պսակ ընկալցուք ծննդաւորական : Այլ քանզի յայսմ կանոնէ ուխտի վրիպեցաք, եւ անասնաբար սահեցմամբ ըստ հողոյն զիջման՝ ընդ երկիր մածաք, [6] այլ ոմն ախտիւ, եւ այլ ոմն անդթութեամբ, միւս մասն մոլութեամբ ամենաբաղձ կերակրոց՝ իբր գազան մշտաբոյծ՝ յարակայ կապեալ ընդ բնութեան : Իսկ 'ի քաւիցս՝ [7] ոմն անըմբռնելի եւ անողոքելի սլացմամբ 'ի բաց ոստուցեալ՝ վայրենապէս ամբարտաւանէ. եթէ ջեռնումք տապով սիրոյն որ 'ի քեզ՝ նշխարաւբոցոյն որ 'ի մեզ, ցուրտն առընթեր կենակից նմին՝ զնոյն կասեցուցեալ, բարւոյն ընդ միջէ. եթէ օգտականաւն հրեշտակայնոցն յաւիցիմք 'ի քեզ, ծանրութեան թանձրու անդրանիկ նիւթոյս այս հողոյ՝ 'ի ստորև քարշեալ խափանէ :

ե̄. Եւ արդ՝ [8] յամենուստ պարտեալ եւ խպառլքեալ՝ իբր զապիկար հաշմեալ հերքեցայ կորեայ վանեցայ. վատնեալ 'ի բազմաց՝ 'ի մահ դրաւեցայ. վասն որոյ 'ի պարդեւականէն զրկեցեալ՝ յողորմութեան կողմ նայիմ. եւ պատկառեալ դիմօք համայնից ունօղս՝ զընաւից աղերսաբանեմ զմեռելոցն՝ քեզ կենդանեաց. քանզի կարող ես յաւէտ հնարիւք եւ կորստականացն ըստ իս մեռելոցն. ամենայն ինչ քեզ զօրելի է. նա զի՝ եւ ընդ անտկար կարելոյդ՝ եւ կամելդ է ախորժելի :

զ̄. Արդ՝ այսց [9] երկուց բարգաւաճ շնորհաց նորոգչաց՝ առ միմեանս եկեալ՝ կարելն ընդ կամելն, բարձեալ եղիցի եւ յուսահատութեան վհատութիւն ազգաց մեղաւորաց. եւ ժամանեալ հասցէ աւետեացդլոյս՝ հոգւոց բժշկութեան քումդ հրամանի՝ տէր ամենայնի, օրհնեալ յաւիտեանս. ամէն :

---

(1) Որոշ հատուած է : Ընտեղի է կարծել, թէ այսու բանիւ խնդրիցէ նա վարդապետս զողորմութիւն վասն յուսահատ եւ անզեղջ մեռելոցն. զի այդ ոչ միայն օտար է 'ի ճշմարտութենէ, այլ եւ հակառակ բազում բանից՝ որովք նա վարդապետն յաղօթս իւր ցուցանէ, թէ անզեղջ մեռելոցն չիք ողորմութիւն 'ի հանդերձեալն. որպէս 'ի բանն հե. 2.

* փակումն գթոյն, և արգելումն ողորմութեանն ։ ‖ և զկնի ․ 3 ․ * Ուր դրանն բաղխել ոչինչ օգտիցէ, վճար եղեալ գթութեանն առ խս ։ ‖ և զկնի ․ Հառաչմունք հեծութե, են ։ ( տես և 'ի բանն ձա ․ լծ ․ 8 ։ ) Այս հարկաւ զայլ միտս ակնարկէ ասացեալդ ։ Ոմանք իմացան՝ ոչ զմեռեալ մարդոց, այլ զկենդանեացն՝ որք 'ի քուն ծուլութե ննջեն ։ Բայց զայդպիսեաց ոչ ճշմարտի ասել, թէ հատեալ է ակնկալութիւն փրկութե ․ և նոյն իսկ մուտ բանին ցուցանէ՝ թէ վասն մարմնով մեռելոց է աղօթքս ․ զի ասէ, Է այլ խնդրուածս՝ զոր զանազան օրինակա կարդեցի, և ամենից հոգւոց ողորմեա ․ որպէս թէ ասել, վասն կենդանեացն բազմօրինակ պաղատեցի, այժմ և վասն մեռելոցն աղերսեմ ողորմել, մանաւանդ վասն այնոցիկ հոգւոց՝ որոց ակնկալութի փրկութե պակասեալ է ։ Վասն որոյ իմանալի է բանս վասն այնոցիկ, որք 'ի մեղաց դարձեալք, ծուլութե կամ արտաքահաս մահուամբ փոխեցան յաշխարհէ՝ առանց ապաշխարութե ․ որոց ոչ ևս մնայ յոյս՝ իւրեանց արժանաւոր գործովք փրկել 'ի պատուհասից արդարութեանն այ, այլ կրկնք պատժոցն վճարել ․ և 'ի սոյն միտս յարէ, որք ննջեցին անպատրաստք, այսինքն առանց պատրաստութեան բարի գործոց ․ զի թէպէտ զպատուէր հաւատոյն ունէին, և զսէր առ փեսայն քս նորոգեցին՝ յառանելովն Է առաջ նորա, այլ չունէին զիւղ բարեգործութեն ։ Այսպիսիքս ասէ՝ առաւել պէտս ունին ողորմութե ․ զի որպէս ասէ 'ի բանն ․ հզ ․ 1 ․ * Անդ է ողորմելն խիստ պէտս, յորում հատաւ ակնկալութի վաստակոյն ։ ‖ Արդ յիշեա զնոսա տր իմ, են ։

(2) 'Ի յայս նոր պատճառ ։ Ոմանք մեկնեն, այսու պատճառաւ՝ զի վն այնպիսի հեղգացելոց ողորմութի հայցեմ, դու ևս խրախուսս համարեա ինձ ողորմիլ ։ Մարթ էր և այսպէս իմանալ ․ այսու պատճառաւ, քո ողորմելովդ այնպիսեաց, 'ի վերայ իմ նոր խրախուսս բարերարութեան դրեա ․ կմ, զիս համարեա քեզ պարտական ։ Սակայն առաւել համաձայն կարգի բանին այսպէս իմանալի է ․ թէպէտ և յիշատակեալ անապաշխար մեռեալքն անկեալ են 'ի ձեռս արդարութե քո, և վասն հեղգ կենացն չեն արժանի ողորմութե, բայց դու յայս խնդիր իմ տուր ինձ խրախուսս, կամ խրախուսի համարեա, հայեցեալ 'ի գթութիւն քո, որում բաւական է և փոքր խրախունք ։ Զպատճառ խրախանցն 'ի յաջորդն ցուցանէ ։

(3) Քանզի թեթեւ 'ի ծանր ։ Համառօտ իմաստք բովանդակ բանիս այսպէս պարզին ։ Թէպէտ և 'ի ցոյց սքանչելի զօրութե քո՝ հակառակ տարերօք յարմարեցեր զմարմին մեր, զի հակառակութի միոյն միւս ներհակաւն չափաւորեալ, պահեսցի 'ի մեզ արդար հաւասարութի՝ թէ 'ի բնական առողջութե, և թէ 'ի բարոյական ուղղութե ։ Բայց քանզի անսանձաբար վարեցաք, նոյն իսկ հակառակութի տարերացս խափան եղև մեզ առ բարին ․ զի յորժամ հրով սիրոյ ջեռնմանք, ցրտութի ջրոյն շիջուցանէ, են ։ Վասն այսորիկ 'ի կազմութե մերում մեղօքն ապականելոյ՝ կան արգելք բարւոյն, և հակումն 'ի չարն ։ Եւ յայսպիսի դիմամարտութէ տկարացեալ մեղանչեմք ․ և հեղգանամք 'ի գործս ապաշխարութե ․ և յայսմ պատճառէ լինիմք ներելի ողորմութե ։ Ահա այս է խրախունքն՝ որոյ վասն համարձակիմ խնդրել ողորմութի վասն անապաշխար մեռելոցն ․ զի ցուրտ և թանձր բնութիս մեր կասեցոյց զնոսա 'ի փութոյ ապաշխարութե ։

(4) Զմին ծանր ։ Աստանօր մին և մին ոչ զմարդոց ասի, այլ զտարերաց ․ զմին 'ի հակառակացդ ասէ՝ եղեր ծանր, այսինքն զհողն, և զմիւսն թեթեւ, զօդն ։ Զմին՝ ցուղ ․ ցուրտ, այսինքն զջուրն, և զմիւսն հրային, ջերմ, այսինքն զհուրն ։

(5) Եւ 'ի յայսմ դարման : Եւ այսու դարմանաւ առաքինութեան, ի հաւասարութեանն, վերաբերեալ ընդ ամբարշտելոյն, 'ի վերանալն կամ 'ի բարձրանալն ընդ հոգւոյն որ վսեմականն է. կամ, ընդ ամբարշտելոյն, այսինքն ընդ հրոյն՝ որ 'ի բարձրն գլխէ, զխոնարհութիւն առ հող, զխոնարհութիւն և զնուաստութիւն մեր հայեցմամբ առ հող մարմնոյ՝ անմոռաց պահեսցուք. որով ընկալցուք զյաղթանակ ճգնութեան : 3. օրին. և հին լուծ. Եւ 'ի յայսմ 'ի դարման. և մարթ է մեկնել. այսու որոշմամբ կամ ընտրութեամբ առաքինութեան :

(6) Այլ ոճ ախտի : Իբրև զմնացուածս 'ի հողեղէնս յարեցաք, այն ախտս գիջութեան մարմնոյ, որ յառաւելութենէ ջերմոյն և խոնաւին լինի : Եւ այլ ոճ անգիտութե. միւսն՝ բարկութիւն, որ 'ի հողային մաղձէ լինի, և 'ի գոլորշեաց՝ որք օդոյ նման խառնեն զսեւսն. և այլ միւսն՝ որկորամոլութիւն, որ 'ի ցամաքութենէ կամ 'ի ցրտութենէ հողոյ լինի, կամ յանչափութենէ ջերմոյն՝ որ ապառէ զկերակուրսն : Սոցա խորաքանչիւրն կապեալ կայ ընդ բնութեան, ընդ բնական խառնուածոյս՝ իբրև զաղանս մշտաբոյծ, միշտ մնացեալ յիւր ախորժական կերակրոց : Այսու բանիւ ոչ եթէ ստգտանէ զբնական խառնուածսն, կամ զնոսա ասէ պատճառ խորաքանչիւր մոլութեանց. այլ զի մարդն անսանձաբար վարելով, ըստ բերման խառնուածոցն գործէ, և ստանայ զմոլութիւնսն :

(7) Ոճ անըմբռնելի : Պատահէ՝ զի 'ի չորից տարերացս՝ կիր 'ի խառնուածոց՝ մին անսանձ լինելով թոյլտուութիւն բանականին, 'ի բաց վարէ 'ի միաբանութենէ այլոցն. և իբր վայրենի՝ ամբարտաւանէ 'ի վերայ հակառակին : Որպէս եթէ երբեմն ջերմանալք 'ի սէր քո բնական կամ գերբնական 'ի ձեռն շնորհաց քոց, Նշխարաւ բոցոյն՝ որ 'ի մէջ, մնացուածով ջերմութեան՝ որ 'ի բնութեան մերում, ցրտութիւն որ առ նմա է միշտ, մեղկացուցանելով զնոյն, բարւոյն ընդ միջէ, արգել կամ խարոյ լինի բարւոյն : Եւ թէ օրհնաբար հրեշտակայնոյն, օդային թեթեւութիւն կամ նրբութիւն՝ որ է նմանութեան հրեշտակի, կամ հրեշտակային վարուց, յախտից 'ի մէջ, մոգք առ քեզ թռչիցիմք, ծանրութիւն թանձր հողոյս 'ի վայր քարշեալ խափանէ : Իսկ անդրանիկ նիւթ առեալ զհողն, այն է՝ զի յառաջին արարչութեան նախկին յիշատակի ընդ անուամբ երկրի. և զի 'ի կազմութեան մարդոյ՝ հողն առի առաջին հիմն և նիւթ մարմնոյ : ( Ծնն. բ. 7 : գ. 19 : ) Բայց վասն ամենայն ասացելոցդ ծանիր, զի ոչ վարդապետն ոչ եթէ զօրաւութիւն տարերացն համարի ըստ ինքեան պատճառս բարւոյն կամ չարին 'ի մարդն, այլ 'ի բնական զխմամբարութենէ նոցա բարոյապէս խորհրդածէ զզխմամբարութիւն ըղձից և յօժարութեանց հոգւոյն և մարմնոյն. քանզի այսմ բարոյական զխմամբարութե՝ բաղում անգամ ըստ պատահման պատճառ լինի զխմամբարութիւն տարրական, յորժամ բանականն կամ հակէ, և կիր անհոգանայ 'ի կանոնել զնոսա :

(8) Յամենայն պարգեւս : Յամենայն կողմանէ, կամ յամենայն գործս յաղթեալ վասն հակառակամարտ յօժարութեանցս, Տէր պարգեւաց հաւատաւ, իբր զանկար ոք կծկեալ անդամօքն, հերքեցայ և վատնեցայ 'ի բաղմոյ, այս 'ի բազում բարեաց, կամ բազում փորձութիւնք և մեղօք : Վասն որոյ 'ի դարձմանէն, յառաքինական վարուցն զրկեցեալ, որով արժանի լինէի պարգեւաց վարձուն, ապաստանիմ 'ի կողմն ողորմութեան : Եւ ու, նօղս ամենեցուն մեղաց՝ աղերսաբանեմ զմեռելոյն քեզ կենդանեաց, վասն ամենայն մեռելոցն՝ որք քեզ կենդանի են. ( ըստ ղուկ. ի. 38 : ) Յայլ տպագիր եղեալ էր որոշումն, զմեռելոյն քեզ կենդանեաց. որպէս թէ և մնալով մեղաւոր կենդանեաց՝ որք առ ած մեռեալ են : Բայց մե նմջեցելոց լինել աղօթիցս՝ ցուցաք 'ի սկզբանն : Քանզի կարող ես և հնարաւոր՝ Եւ զորութեանց քու ես մեռելոյն. իբրև զի արժանի կոչու-

տեան եղեալ մեռելոցն , այսինքն որք իբրև զիս առանց բարի գործոց ննջեցին :

(գ) Երկրորդ բարեգործած շնորհաց : Յորժամ մարմնեացն կարեւ է և կամեւ , ( որք են երկու առատ և անպակաս շնորհք տրտաքինք , ըստ որում պատճառաբար ներգործեն 'ի մեզ զամենայն շնորհս , ) այնուհետև բարձցի յառաջնորդութենէն ձեռնտուութէ , լքումն յուսոյն՝ որով ըստ գործոց խորհեանց իբրև անյոյսք 'ի փրկութէ մնացեն մեղաւորքն՝ թէ կենդանիք , և թէ մեռեալք . զի ոչ կարեն անձամբ արդարանալ 'ի մեղաց , կամ ազատիլ 'ի պարտեաց մեղաց : Վասն որոյ յարդարացուցանել քո զմեղաւորն յառաջ կեանս , և 'ի թողացուցանելն զպարտս մեղաց 'ի հանդերձեալսն , այսոքիւք ցուցանես զզօրութիւն քո , և զկամս բարերարութեան :

---

Սերովբէն յաւելուած հրկէն հեծութէ՝ Նորին հօնոզի , առ Նոյն աղերս Մաղթանաց Բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

# ԲԱՆ. ՁԸ.

Ա. Եւ արդ՝ քանզի 'ի գլուխ կատարման հասեալ սակաւամամնեայ կտակի այսր ողբերգութե , արա տէր՝ վախճան դադարման առնուլ [1] ընդ այսց բանից մաղթանաց՝ խնքնանախատս կշտամբութե և որ յիս կրին չար սովորութիւք : Որ քեզէն կարգեցեր սահման աւետեաց անկակալութե դատապարտելոյս՝ ասելով , ոչ են կամք առաջի հօր իմոյ՝ եթէ կորնչիցի մի ոք 'ի փոքրկանցս . և դարձեալ , այս են կամք հօր իմոյ՝ զի զամենեսին խնձ յանձնարարեալսն ոչ կորուսից :

Բ. Ահա օրհնեալ ես 'ի գթութե . բարեբանեալ միշտ 'ի քաղցրութե . խոստովանեալ յերկայնմտութե . ծանուցեալ 'ի յայցելութե . քարոզեալ տէր 'ի փրկութե . ներբողեալ դու յառատութե . պատուեցեալ 'ի պաշտպանութե . [2] փառաւորեալ ես 'ի փրկութե . երկրպագեալ յանբաւ բարձրութե . պաշտեցեալ 'ի յանքննութե . գովեցեալ միայն 'ի յաղթութե . վերաձայնեալ 'ի մեծ զօրութե . խնկաւորեալ յողորմածութե . համբուրեցեալ յանձառ հեզութե . [3] ճաշակեցեալ 'ի խոնարհութե : Ընդ քեզ և ծնօղդ քո երկնաւոր Այդ [4] բոլորից մխիթարութե . ըստ որում հոգիդ քո Որ բարութե , որ զանկեալ [5] զկրաստ թշնամւոյն՝ և զգայթագղեալ մարդն

անբանութե՟՝ կանոնեցեր ո՛չ անտես առնել։ Որոյ [6] երախտիս հզօրիդ 'ի յիս, և առաքինութի՟ մեծիդ 'ի բարձունս տօնեալ անդադար յանվախճան փառաբանողաց. որովք զայս ձայն աղերսական յարգեալ ընկալցի՛ս՝ մարտիրոսացն պաղատանօք 'ի հոտ հաճութե՟ բուրման անուշից։ Եւ այսու [7] փրկանօք հաշտարար բանի՝ զնախնեացն պարտս և զաներևոյթ վէրս՝ միջնովքն և վերջնովքն մահացուցանողօքն զանձն և զմարմին բժշկեա՛ ամենակարող, զներքինս և զարտաքինս, [8] զտիպքն և զգիծքն, և զխարանս հարուածոյն. բարձեալ և մաքրեալ դեղովք ողորմութեա՟դ զկտեալ խածուածս բազմադունիս, որք գարշելիս ընդ ախորժելեացն քեզ ցուցանեն զհուլթի՟ բնութեանս։

Գ. Եւ եթէ [9] հասից յամս ծերութե՟ քև առաջնորդեալ՝ արժանիս մահու, մի՛ թողցես զտկարութիւնս. մի՛ անարգեր զալիմն. մի՛ կորացուսցես ըղկործանեալսն. մի՛ զխջուսցես [10] զկքեալսն. մի՛ վայրաբերեր զխոնարհեալսն. մի՛ չնչման հողմոյ մատներ զառկայծեալսն. մի՛ ընդպահկեսցես զդեդևեալսն. մի՛ անվերարկու առներ զպառուցեալսն. մի՛ անդարման լիցի տագնապեալսն։ Ո՛չ առանց տածելոյ՝ [11] յարկն խարխալեալ. մի՛ անպատիւ՝ պատկերն հնացեալ. մի՛ պարարտութի՟ն անհամեալ. մի՛ շուք շնորհին անարգեալ. մի՛ հնութի՟ն քամահեալ. մի՛ նաւ հողւոյս ալեկոծեալ. մի՛ երկարութի՟ յուսոյն կտրեցեալ. մի՛ լար շաւիղին խզեալ. մի՛ ուշ իմաստին բարձեալ. [12] մի՛ գոյին կազմած զեղծեալ. մի՛ ամբարձմանն թևք փետտեալ. մի՛ զուարթութի՟ դեղոյն տգեղեալ. մի՛ ճաճանչ նշուլին քաղեալ. մի՛ պատուհանք աչացս փակեալ. մի՛ լուսաւորութի՟ նորին խափանեալ. մի՛ պատկերն խօսուն անկեալ։ Ահա աղաչեմ զքեզ՝ բարեգութ, ամենայն սրբովք պաղատիմ, [13] լո՛ւր սոցին ինձ կանխաւ, զի զանագանն մի՛ մոռասցիս։ Դու առաջնորդեցեր ինձ, ըստ սաղմոսողին, և ապրեցուցեր, հա՛ն տէր ընդ երգողին՝ և 'ի կարծեացն կակածանաց, յորմէ երկնչիմ։ Իսկ ես չե՛մ արժանի 'ի քէն՝ և ո՛չ [14] հասարակական կերակրոյն վարձու, այլ դու կարող ես սովորաբար՝ և առ զըլացօղս բա-

բեգործել ։ Ո՛րն են զարմանալիք անձառելից բարեաց՝ միայն հրաշագործ առ ամենայն երկայնմտուն, ընդ հօր և հոգւոյդ մէջ օրհնեալ համապատ՝ յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

---

(1) **Ընդ այսոց բանից** ։ 'Ի կատարման աղօթական գրոցս՝ զոր և իբրև կտակ զղջման գրեաց և թողեալ յետ իւր, շնորհեա տր, զի և չար սովորութիւք իմ վերջասցին ։

(2) **Փառաւորեալ ես** ։ մի օրին ․ **ճառաւորեալ ես** ։

(3) **Ծաղկեցեալ 'ի խոնարհութե** ։ Ա՛ռ քո սուէ, որում իբրև մարդ՝ պատշաճի խոնարհութիւն, և ոչ իբրև Ած, որ և 'ի խորհուրդ հաղորդութե ճաշակի 'ի մէնջ անձառ խոնարհութեամբ ։

(4) **Բուրեա մխիթարութե** ․ ընդ քեզ օրհնեալ է սուէ՝ և Հայրդ երկնաւոր՝ Ած ամենեցուն մխիթարութե ։ 2 օրին ․ **մխիթարութի** ․ իբրև թէ, որ բղխեց է մխիթարութի ։ **ըստ որում հոգիդ** ․ որպէս և հոգիդ քո նը օրհնեալ է ընդ քեզ ։

(5) **Զփրկութ ընծայեայ** ։ Ելից իդ ․ 5 ․ 'ի մեր բնագրի գնի՝ զփրկութ ընծայեր ․ բայց այլ թարգմանութիւք, եբրայականն, քաղդէացին, յոյնն, և լատինն գնեն՝ ընծայեայ ․ որպէս անդ ( համար 4 ․ ) նաև մերս՝ համեմատ այլ թարգմանութեց դնէ խնամ տանել եղին ընծայեայ ։ **Եւ զգայթակղեալ ծառդ** ։ 'Ի կանոնեալդ՝ չառնել անտես զանկեալ գրաստն, օրինակաւ ծանուցեր՝ չառնել անտես զմարդն գայթակղեալ տգիտութեամբ 'ի մեղս, կից 'ի մոլորութի ։ կամ, այլ բանիւք նը գրոց տղդեցեր զգայթակղեալ եղբարս յարուցանել, կամ չտալ պատճառս գայթակղութեան ։

(6) **Երախտիս հոգւոյ** ։ Բարերարութիւնք հոգւոյդ 'ի յիս ներգործին ․ իսկ **առատութեան Հոգւոյ**, զօրութիւնքն կից առատութեամբ 'ի յերկինս փառաւորի 'ի հրեշտակաց ․ **որոնք**, այսինքն հրեշտակօք, կամ ընդ փառաբանութե նոցա ընկալ և զայս մաղթանս՝ խնդրուածովք մարտիրոսացն ։

(7) **Փրկանօք հաշտարար** ։ Այսու հատուցմամբ հաշտեցուցիչ բանից՝ մաքրեա **զխոնարհեալ պարտս** ․ եթէ իմացի վասն իւր մեղացն, նշանակէ՝ զառաջին ամացն կից զմանկութէ մեղսն, և զդաղանի վէրս հոգւոյն ․ **Զհնոյն**, հանդերձ մեղօք պատանութեան, կամ երիտասարդութե ․ և **զնորոյն**, մեղօք կատարեալ հասակին և ծերութե, որք սպանանեն զհոգի և զմարմին ։ Բայց եթէ զայլոց մեղաց իմացուք զայս բան, հայցէ՝ զի աղօթական բանիւքս քաւեսցէ Ած զպարտս առաջնոց մեղուցելոց, այլև զներկայից և զապագայից զմեղսն ։ **Զներքինս**, զհոգևոր մեղս խորհրդոց, և **զարտաքինս**, զմարմնական մեղս գործոց ։

(8) **Զփրկեա** ։ Զմնացորդս մեղացն, այսինքն զչար ունակութիւն, զսովորութիւն առ բարին, զխայթ խղճին, ևն ․ որք իբրև հետք են անցեալ մեղացն ։ **և զերկարն** ․ զերկարութիւն, կամ զվերստին անկումն 'ի նոյն մեղս, որով մեղքն իբրև գիծ ինչ շարունակի, և տարածի առ այլս չար օրինակաւ ։ **և զխարանս հարուածոյն**, զխարանեալ տեղին կամ զվէրսն՝ որ 'ի հարուածոց հրացեալ նետից սատանայի ․ որով խմխին չար յօժարութիւնքն՝ գրգռեալ 'ի փորձութեց դիւաց ։ **Զխոցեալ խածուածս** ․ զհարումն եղեալ խածուածս բազմազանս, որք գարշելի առնեն Այ զհոգին մեր, **ընդ ախորժելեացն**, զի փոխանակ ախորժելի լինելոյ շնորհաց և առաքինութե ։ կամ խառն ընդ ախորժելեան Այ երևին ի մեզ, զի ընդ բարիքն քինութե, որք հաճելի են Այ ։

(9) Հաւէտ յաւէ · Իմանամք բանիւս՝ չև ևս 'ի խոր ծերութեն հասեալ մեզ վարդապետիս 'ի յօրինել աղօթիցս, թէպէտ և ըստ հաւանական հաշուի՝ ունէր յայնժամ գոնէ ամս վաթսուն. տես Յիշատակարանն : Եւ ոչ կենաց, այլ մահու ասէ՝ արժանի եմ. բայց եթէ քո կամօք հասից յամս խորին ծերութեն, այժմէն աղաչեմ, մի անխնամ թողուր զտկարութիւն իմ. զի յայնժամ առաւել կարօտ եմ քոց խնամոց, յորժամ ցիս յաւէտ տկարացեալ՝ սակաւագոյն 'ի մարդկանէ գտանեմ հոգացուն : Եւ ապա այլ և այլ բանիւք 'ի կարգ արկանէ զվտանգս և զվիշտս որոց ներքոյ անկեալ է հասակն ծերութե, է որ 'ի բնութէ, և է որ 'ի մարդկանէ. զորս ինքնին երջանիկ աղօթաւորս տեսեալ խակ էր յայլ ծերս. և այնու իմանայր որչափ առանձին տեսչութե պէտս ունիցի այլ հինաւուրց, զի մի 'ի ծերութեն կորուսանիցէ զոր յերիտասարդութեն վաստակեաց, նմանեալ Ճանապարհորդի՝ որ անվտանգ հասեալ զերկայն ուղի, առ դրան անդ կործանիցի : Այս աղօթք են կարևոր ամենեցուն, կանխագոյն ևս ազդեալ 'ի սաղմոսերգու մարգարէէն. * Մի ընկենուր զիս ՚ի ժամանակի ծերութե, 'ի պակասել զօրութե իմոյ մի թողուր զիս : || (Սաղմ. Հ. 9 :)

(10) Զնէտան : Զթխրեալն մորթով, զկծկեալն, որոյ քամակն կորացեալ է : Ընդման հողմոյ · զկեանս ծերութե՝ որ իբր Ճրագ առկայծեալ մերձ է 'ի շիջանիլ, մի տար յանկարծ պակասիլ: Մի ընդդամհէկսյէս պէտտնէան · սովորաբար մեկնի, մի հեղքեր, մի մղեր, մի անտես առնէր զգողգոջեալն · բայց ըստ այլում՝ ելանէ աս 'ի բառէն՝ պահակ · (այսինքն անկարիւր բռնեալ ·) յորմէ նշանակէ՝ մի բռնադատեր 'ի գնալ, կամ մի ծանրաբեռնէր զգողգոջեալն 'ի ծերութենէ, կամ յայլ ցաւոց :

(11) Յարէն խորխաչեալ : Զծերութեն նմանեցուցանէ զանազան նրաց ապականելոց · և 'ի խնդրելն՝ չառնել անպատիւ կամ չանարգել, զծայրին խնամն ասէ չպակասեցուցանել, և ոչ եթէ զառ 'ի մարդկանէ պատիւն խնդրէ : Մի պարարտաբեն, մի իբրև զկծուեալ իւղ անպիտան թողցի : Մի լոյս ձորհին · մի յարգ գեղեցկութեն անարգեսցի : Մի երկարութեն յաւոյն · երկարութե յաւուց վարձուցն՝ որով 'ի ծերութեան յերկար ապասեմ, մի կորեսցի անվարձ մնալովս · կամ, մի վասն երկարութեն թուլասցի յոյս իմ : Մի լոր զանէզին · լալն՝ կամ չուանն, որով առաջնորդիմ 'ի Ճանապարհ քո, մի խզեսցի, այսինքն հաւատքն, լուսաւորութի մտաց, և այլն :

(12) Մէ գոյին հաղճած : այլ օրին · հաղճաւած · այսինքն կաղմած մարմնոյս, կամ զգայութեցս մի խանգարեսցի : Ամէարձանն բնոյ · բազուկք և ձեռքն մի լիցին անպիտան իբրև զփետեալ թևս թռչնոց : Ճաճանչ նշուլէն · մի լոյս աչացն նուազեալ : Եւ պարահանդ ալցօ, արտևանունքն թուլանալով մի փակեսցին · և մի լուսաւորութի աչաց խաւարեալ, ընժօք ինչ ողք արտաքուստ խափանեն զտեսութիւն : Եւ մի պարչերն խօսուն, կենդանի մարմինս անկեալ դնիցի անդամալուծութե, կամ անկարութե 'ի շարժիլ :

(13) Լսոր աօյին ինչ : Լսոր լինձ յայժմու աղաչանս՝ նախ քան զծերանալն · Դի զանագանն, զխնամսքո որ 'ի ծերութեն՝ մի մոռասցիս · կամ, այսու աղաչանօք՝ զոր կանխաւ մատուցանեմ, յիշեա և զանազան աղօթսն զոր ցանկամ առնել 'ի ծերութեանն, բայց գուցէ չկարիցեմ յայնժամ :

(14) Հառաչանաց հեծեծոյն : Թէպէտ ես չեմ արժանի նաև վարձու հասարակ կերակրոյ իբրև զվարձկան, բայց դու կարօղ ես անդաստանր · ըստ քում սովորութե նաև առ վերջօղն՝ առ ավերախոսն բարիս առնել · վասն զի դու ես ... դու առնես բարիս անձաւս, և առնես

զքանչելի օրինակաւ 'ի զարմացումն ամենայն մտաց • և առանձինն 'ի գործ որ և իցէ երկայնմտութեան առ մարդիկ՝ դու միայն ես կարող հրաշագործ : Ո՛չ մարդիկ, և ոչ հրեշտակք կարացին այնչափ ժուժկալել 'ի վրէժխնդրութենէ անարգանացն Այ, որչափ ինքն ԱԾ ոչ միայն ժուժկալէ, այլ խնամս ևս յաւելու՝ փոխան պատուհասից • և ինքնին իսկ արգելեալ ցածուցանէր զսաստիկ սրտմտութիւն Եղիայի, և զհրեշտակին առ Դաւթաւ : Յայլ բարերարութիւնս ընկալաւ իւր գործակիցս ԱԾ 'ի հրաշագործել • պարգևեաց և՛ մարդկան, և՛ հրեշտակաց գործել մեծամեծս 'ի վեր քան զկար բնութեան • բայց յերկայնմտութեան առ յանցաւորս՝ միայն ԱԾ է հրաշագործօղ : Վասն զի ԱԾ միայն է որ յանչափս առէ զմեղս, և յանչափս պահէ զփառս իւր • նա միայն կարող է և՛ զարժանի պատուհասն՝ և զարդարահասն 'ի վերայ ածել անարգելաբար յումմէ և իցէ : Այլ 'ի վերայ այսր ամենայնի ներել յանցաւորին, տալ ժամանակ, դարմանս նորս մատուցանել, ո՞չ ապաքէն 'ի վեր է քան զամենայն հրաշս, և միայն ամենազօր բարւոյն սեպհական : Այսորիկ աղագաւ ընդ ածական անուանս դասեալ է 'ի գիրս և Երկայնամիտ կոչումն • և նոյն ձայն որ խօսեցաւն առ Մովսէս, յայտնելով նմա զիւրական անունն Որէն, զուգապէս կոչեաց առ նա՝ ողորմած, Երկայնամիտ : ( Ելք • լդ • 6 : ) Յիրաւի ապա կատարած աղօթիցս՝ միայն հրաշագործ զԱԾ առէ առ երկայնմտութիւն • և այս ոչ 'ի միում կամ յերկուս, այլ առ ամենայն երկայնմտութիւն • զի չէք խտիր մեծի և փոքու • այնպէս հրաշալի է երկայնամտելն Այ առ Դաւիթ, որպէս և առ Նաբուգոդոնոսոր • մի՛ ոք չկարիցէ զարմանալ ընդ երկոսին, կամ ոչ օրհնել զերկայնամտօղն յաւիտեան : Տե՛ս և բան լդ • լծ • 37 • 38 : Սովին խնամովք աւարտէ և զբանն հզ • Քեզ փառք ամենազօրիդ՝ առ ամենայն հրաշագործութիւն բարեխնամող Երկայնմտութեան :

---

Մերոյին յաւելեալ հրէին հեծութեան՝ նորին հանդէպ, առ նոյն աղերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ԱԾ :

# ԲԱՆ • ՉԲ :

ա • Եւ արդ՝ [1] Ջուր կամաց և կաթ արտասուաց՝ բեկութեան հոգւոյս՝ մտացս լքմամբ՝ խորտակմամբ սրտիս հեղեալ առաջի՝ զմարգարէին յիշեցուցանեմ զարամաթացւոյն սամուէլի, զոր առեալ եհեղ 'ի սկաւառակէ յանդիման քո՝ ամենատես, առ ժողովրդեանն օրինակութեան՝ զանձն արկանելոյ խոստովանութեան և հնազանդութեան կենդանաբարդ զարշապարաց :

բ • Եւ արդ՝ ընկա՛լ զայս հիւսուած բանի աղիողորմ հեծեծմանց, և հոտոտեսցիս յայս նուէր բանի՝ անարիւն զոհի՝ Թագաւո՛ր երկնի • և օրհնեալ սրբեա՛ զտառ մատենի այսր ողբերգութեան • և գրեալ դրոշ-

մեսցես յարձան յաւիտեան՝ [2] ընդ հաճոյականացն
սպասաւորութիս ։ Կացցէ առաջի քո մշտնջենաւոր,
և յիշատակեսցի 'ի լսելիսդ քո հանապազ ․ բարբա֊
ռեսցի [3] շրթամբք ընտրելոց քոց, և խօսեսցի բերա֊
նովք հրեշտակաց քոց ․ տարածեսցի հանդէպ աթո֊
ռոյ քոյ, և ընծայեսցի 'ի սրահ սրբութե̃ քոյ ․ խնկես֊
ցի 'ի տաճար անուան քոյ, և բուրեսցի 'ի սեղան
փառաց քոց ․ պահեսցի [4] 'ի գանձարանի քում, և
համբարեսցի 'ի ստացուածս քո ։ Պատմեսցի 'ի յա֊
կանջս ազգաց, և քարոզեսցի 'ի լուր ժողովրդոց ․
նկարեսցի [5] 'ի դրունս իմաստից, և տպաւորեսցի 'ի
սեամս զգայութե̃ց ․ իբր կենդանեօք՝ զիմս պատ֊
մեսցէ խոստովանեալ զանօրէնութիւն ․ և թէպէտ
վախճան ընկալայց իբր զմահացու, այլ յարակայու֊
թեամբ բանի այսր սփիւռի՝ գրեցայց կենդանի ։
Մնասցէ սա անեղծ 'ի կամս քո տէր՝ [6] ինձ պատժա֊
պարտիս համբարձեալ միշտ՝ անդուլ դատիչ ․ ան֊
աչառ կշտամբիչ ․ անպատկառ յանդիմանիչ ․ անան֊
խայելի դսրովիչ ․ անողոքելի պարսաւիչ ․ անհամբոյր
ծանակիչ ․ անմարդասիրելի մատնիչ ․ անփրկելի տան֊
ջիչ ․ անկաշառ կառափիչ ․ անխնամելի յայտնիչ ․ ա֊
պառում հրապարակիչ ․ աշխարհալուր բողոքիչ ։
Փողով մեծութե̃ ազդման առանց լռութե̃ և կամ
դադարման՝ զիմոցս պարտեացս խոստովանեսցի ։

Դ ․ Այն գիր՝ իմոյս ձայնիւ՝ [7] իբր զիս ընդ իմ ա֊
ղաղակեսցէ, տարածեսցէ զծածկեալսն ․ հռչակես֊
ցէ զգաղտնիսն ․ կականեսցէ զկատարածն ․ հնչեսցէ
զմոռացեալսն ․ յայտնեսցէ զաներևոյթսն ․ բարբա֊
ռեսցէ զբարուրսն ․ քարոզեսցէ զխորոցն ․ պատ֊
մեսցէ զմեղացն ․ մերկացուսցէ զանտեսիցն ․ ցուց֊
ցէ զկերպարանս թաքուցելոցն ։ Շօշափեսցին [8] սո֊
վաւ որսքն ․ գտցին գայթագղութիքն ․ յանդիմա֊
նեսցին անճառք ․ քամեսցին չարեացն մնացուածքն ։
Նու թագաւորեսցեն կեանքդ շնորհաց ողորմութե̃
քո ք̃ս՝ 'ի գանձս [9] պահեստի ոսկերացն ցամաքելոց ․
որով 'ի ժամանակս կենդանականս սկզբնաւոր լուսոյ
մտի գարնայնոյն՝ նորոգման աւուրն պայծառութե̃՝
քոյովդ ցօղով յոգի աճեցեալ այսու փրկութե̃ ան֊

մահականաւ, և անցամաքելի վերամբարձութեամբ շա-ռաւիղս ձգեալ իմանալեացն բարեաց՝ դարձեալ դա-լարացայց և կրկին ծաղկեցայց, ըստ քոյինաշունչ գրոյն յուսադրութե ։ Եւ քեզ միայնոյ փրկողի՝ և հոգւոյդ քում հօր խնակցի՝ միասնական տէրութեամբ և անճառ երրորդութեանդ՝ խորհրդական գովեստիւ փառք և երկրպագութի յաւիտեանս . ամէն ։

---

(1) Ջուր կամաց ։ այսինքն ջուր կամաւ բղխեալ, որ այն ինքն է կոյս ապ-պառաժոյ, 'ի բեկմանէ հոգւոյս հեղլով, զմարգարէին յիշեցուցանեմ, զի զջուրն սառուցելի, զոր առեալ սկաւառակաւ, եհեղ առաջի Տն ։ (Ա. Թագ. Է. 6 ։) Ուր ոչ վարդապետս զհեղումն ջրոյն՝ ոչ իմանայ 'ի վե-րայ հեղման արտասուաց, որպէս ոմանք համարին ըն յայսմաւուրաց և ըն հին լուծ. այլ 'ի վերայ հասարակ և բնական ջրոյ . առ ժողողովրդեանն օրհնութեան, օրինակելով այնու զխոնարհումն, և զխոստովանութեամբ դարձն ժողովրդեանն առ Ած ։ կամ, յօրինակ և 'ի յորդոր ժողովրդեանն, զի այնպէս խոնարհեսցին առաջի Տն ։

(2) Ընդ հաճոյականացն ։ Ըստ կարգի ընթանան աղօթքս . զի յանցե-լումն մաղթեաց վասն ժամանակի ծերութե, և յայսմ որ վասն յետ մա-հուն ։ Զայս մատեան զղջական հայցուածոց գրեսցես առէ՝ վասեր ա-րասցես իբրև արձան, այսինքն մատեան, գիր հաստատուն, անփոփոխելի, 'ի համար կամ 'ի թիւ ծառայութեց հաճոյականացն, հաճոյացելոցն քեզ արդարոց ։ կամ, խնմ զայս սեռական՝ փոխադրութբ հոլովոյ, փոխա-նակ առելոյ՝ ընդ հաճոյական կամ ընդունելի սպասաւորութիւս արդա-րոց . զի որպէս հաճելի վաստակք արդարոց անկորուստ են առաջի քո, նոյնպէս անկորնչելի կացցէ այս մատեան ։

(3) Ողջակէզ ընտրելոց ։ Ընտրեալս իմանայք զմիանձունս և զանապա-տաւորս . խնկ հրեշտակս, կամ զբուն զանմարմինսն՝ որոց միջնորդութբ մատչին աղօթք մարդկան առ Ած, և կամ առանձինն՝ զպաշտօնեայս եկեղեցւոյ, ըստ առաքել. (Ա. կոր. Ժա. 10 ։) Արդ՝ այս մատեան խօսեսցի առէ՝ բերանով միանձանց և պաշտօնէից եկեղեցւոյ, թէ յա-ռանձնական աղօթս, և թէ հրապարակաւ 'ի վերայ հիւանդաց ։

(4) 'Ի գանձարանի տեառն ։ յընդունելութե քում իբրև հաճելի ընծայք ։ կամ, պահեսցի յեկեղեցւոջ քում ։ և համբարեսցի 'ի սպասուածս տն . Ժո-ղովեսցի 'ի համբարս քոց սպասուածոց՝ իբրև քոյով զօրութբ սերմանեալ, բուսեալ, և պտղաբերեալ ։ Տեառնին արդիւնք այսր խնդրուածոյ, զի գիրք Նարեկի գանձեալ պահին այժմ ընդ այլ եկեղեցական գիրս 'ի պահարանս եկեղեցեաց ։

(5) 'Ի տրոհս խմարեց ։ Տպաւորեսցի 'ի յիշողականն, կամ 'ի լսելիս՝ ընդ որս մտանեն բանք իմաստութե ։ 'ի սեաւ զգայութեանց, 'ի շրթունս . որպէս զի իբր կենդանի, իբր կենդանի գոլով իմ, կամ մեռեալս իբր կենդանի ոք՝ պատմեսցէ զանօրէնութիս իմ ։ Զի թէպէտ մեռանիցիմ ես, բայց միշտ մնալով այսր աղօթական գրոցս՝ համարեսցայց կենդանի ։ Այսու բանիւք հայցէ ոչ վարդապետս՝ զի անպակաս լիցին այս աղօթք 'ի մտաց և 'ի բերանոյ ժողովրդեան . և տեսանեմք՝ զի կամօքն այ կատա-րեցան խնդրուածք երանելւոյս . զի գիրք աղօթից նորա յածին 'ի ձեռս ամենեցուն . և բազումք 'ի բերանոյ ուսանին, և անյագ փափագմամբ զնոյնս աղօթեն ։ Եւ թէպէտ 'ի միում կողման վասպուրական աշխար-

Հին յօրինեցան աղօթքս , բայց ըստ խնդրոյ երանելւոյն սփռեցան 'ի լուր բոլոր ազգաց հայաստանեայց . մանաւանդ և նորուն արժանահայց աղօթից պտուղս լինձ համարիմ, զի աշխատեալ միանգամ 'ի բացայայտութի բանից նորա , դարձեալ յետ իբր երեսուն ամաց՝ յաջողեաց յաւելուածովք և ևս պարզել զմթութիւն, թէ և ոչ բովանդակ տակաւին :

(6) **Ինչ պատճառաւ** : Ինձ մեղապարտիս ասէ՝ եղիցի սա անտուն տառէն, անդադար դատօղ, ևն : Զայս 'ի սատակութէ զղջմանն ասէ . և թէպէտ այսպէս փափաքէր և խնդրէր երանելին , բայց յարդեանցն անսանելք՝ զի այս մասեան ոչ ևս է նմա անաչառ կշտամբիչ, այլ գովեստ յաւերժական . իսկ մեզ անդադար յանդիմանիչ , զի բիւրապատիկ առաւել մեղուցեալք , չունիմք գոնէ մասն ինչ 'ի նորա զղջմանցն :

(7) **Իբր ձիւ ընդ իմ** : Որպէս թէ ես կենդանի լիցիմ, փոխանակ իմ աղաղակեսցէ : **Խոխանեայ ղևապարաճն** . ողբալով յայտնեսցէ զկատարած մեղացն , և զկենաց , կամ զխաչման պատուհասիցն : **Բարբառեսցէ ղբարառըն** , մեծաձայն ծանուցէ կամ մերկանայցէ զուտ պատճառանսն : քարոզեսցէ **ղևորոյն** , զարմանս կամ զներքին սկզբունս մեղաց :

(8) **Սոճա օրոգն** : Այսու գրով 'ի ձեռս եկեսցեն գաղտնի պատրանք բնութեան , կամ սատանայի , որովք որսայ զմարդ 'ի մեղս : **Գաղջն գանգդովութեան** , յայտնեսցին նենգք կամ պատճառքն գայթակղելոյ 'ի մեղս : **յանդիմանեացն անձանն** : յերևան եկեսցեն անասելի կամ թաքուցեալ մեղքն : **Խաշիւոյն** , խառնե թափեսցին կամ սպառեսցին մնացորդք մեղացս : որպէս զի **Բազմաւորեալն** յոսկերս իմ կեանքդ շնորհաց , ևն :

(9) **Պահեստն ոսկերացն** : 'Ի գանձս պահեստի ոսկերացս , այսինքն 'ի գերեզմանի, **Բազմաւորեալն** , ձկեսցեն **կեանս շնորհաց** , կենդանացուցիչ զօրութի քո , որ է շնորհք մարմնոյ . և ոչ ըստ բնական սկզբանց նորա պատշաճեալ ինչ : Այլ յորժամ մարդ 'ի մեղաց մկրտութբ և ապաշխարութբ , և գործովք ածպաշտութե սրբէ մարմինն 'ի մնացուածոց մեղացն , և ոք խորհրդոյն Ճաշակմանն սնանի , յայնժամ պահի 'ի նմա զօրութիւն ածային իբրև սերմն կենդանութե : Որով 'ի **ժամանակի կենդանանալոյ** , 'ի ժամանակի կենդանանալոյ , գարնանային սկսմանն նորոգ լուսաւորութե , որ այն ինքն է գարունն յարութեան , որ պայծառութե արդարոց , **հոյակապ յօրով** , ազդարար հրամանաւ փողոյն , կամ 'ի զօրութէ արեանդ քո , **յոգի առնեցեալ** , կենդանական շնչովն առնեցեալ անմահ յարութբ , անթառամ **կերպարանեալք** , Եւ ընծիւղմամբ շաւաւիղս արձակեալ **նմանաչափ բարեաց** . Եւ հոգևոր բարիք շնորհաց և փառաց հոգւոյն իբրև շաւաւիղս արձակելով զփառս մարմնոյն , որ են պայծառութիւն , անօրութիւն , թեթևութիւն , և անչարչարութիւն , այսու օրինակաւ կրկին դալարիմ և ծաղկիմ մարմնովս՝ գերազանց քան զառաջին կենդանութիւն : **ընդ հոյնաշոռնչ գրոյն** , ըստ յուսացուցանելոյ 'ի քէն աղդեցեալ գրոյն , որ 'ի բազում տեղիս աւանդէ զայս յարուէ , որպէս ( Եսայ . իզ . 19 . ) * Յարիցեն մեռեալք , և կանգնեսցին որք իցեն 'ի գերեզմանս . զի ցօղն՝ որ 'ի քէն է , բժշկութի է նոցա || : Այլև եզեկիէլի . լէ : բայց թուի և զյոբայն իմանալ . ( ժդ . 7 . ) * Զի գոյ յոյս ծառոյ , զի թէպէտ և կոտեսցի , միւսանգամ ծաղկեսցի . || և (12.) * Եւ մարդ ննջեաց , և ոչ յարիցէ : ||

Մերոյին յաւելուած նրբին հեծուէ՝ նորին հանգոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ ։

## ԲԱՆ· ՂԹ․

Ա̃· Մ̃ծ և տէր· կեանք և արարիչ· ողորմած· գթած· լոյս· երկայնամիտ· անոխակալ· մարդասէր· ամենագութ· պարգևատու· փրկիչ· օրհնեալ· գովեալ· բարեբանեալ։ [1] Դարան ամրութեան· պատսպարան վստահութեան· առանց նենգութեան բարի· առանց խաւարի ճառագայթ· քաւիչ մեղաց· ողջացուցիչ վիրաց· անհասանելեաց հնարք· [2] անմատչելեաց հպաւոր· անյուսութեան ելք· անուն քո խոստովանեալ՝ ա̃յ որդի· և հօր քո ընդ քեզ հզօրի և աչաւորի, և հոգւոյդ ամենակալի՝ և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք և պաշտօն գոհաբանութեան յաւիտեանս· ամէն ։

(1) Դարան ամրութեան ։ Անքոյթ տեղի ամրանալոյ 'ի ձեռաց դիւաց ։ առանց նենգութեան· այսինքն աննենգելի բարի· կամ, այնպիսի բարի և անկեղծ, յոր ոչ կարէ խառնիլ նենգութիւն· որպէս և առանց խաւարի, անմթանալի ճառագայթ, կամ, լոյս՝ որում ոչ յաջորդէ խաւար ։

(2) Անմատչելեաց հպաւոր ։ Անմատչելի տեղեաց մերձ· զի յերկինս է, և 'ի խորս անդնդոց· ըստ սաղմոս· (ՃԼԸ· 8·) * Թէ ելանեմ յերկինս || և ն̃ ։ անյուսութեան ելք· յանյուսալի իրս՝ հնարք և դարման ։

Մերոյին յաւելուած նրբին հեծուէ՝ նորին հանգոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ ։

## ԲԱՆ· Ճ․

Ա̃· Բարեբանեալ ա̃ծ երկնաւոր, միայն արարիչ, տէր ամենակալ· մեծութիւն ահեղ· գթութիւն օրհնաբանելի· ողորմութիւն խոստովանելի· բարերարութիւն երկրպագելի· խնամակալութիւն պաշտելի· մարդասիրութիւն տօնելի· պահպանութիւն խնկելի· բարձրեալ անքնին· մերձաւոր կամարար· ապա

ուէն անկասկածելի. մխիթար սրտից. փարատիչ վշտաց. ապաքինիչ ցաւոց. սպառումն վհատութե՟ց. բարձումն պարտեաց.[1] փոխարկիչ կարեաց. կարգաւորիչ կրից. յարմարիչ բանից. սանձարկու լեզուի.[2] շրջադրու՟ն չնչոյ. կացուցիչ հագագի.[3] ամփոփիչ խորհրդոց. կրթարան կամաց. արձանացուցիչ յուշմանց. հանդարտութ՟ի մրրկաց. խաղաղութ՟ի ծփանաց, որ ունիս զթևոց ամենընթաց իշխանականիս, և իմաստութ՟բ նուաճեալ առ քեզ դարձուցանես:

Է. Պարզաբանեալ միշտ երախտաւոր, որ հեզութ՟բ անհպարտու՟ե երկայնամտեալ[4] հանդչիս տենչանօք անձաւ հրաշիւք՝ յանձինս սրբոց: Թագաւոր էից համայնից, ամենայնիւ ծանուցեալ գթած. սկզբնահայր և[5] նախաշաւիղ սիրոյն ընթացից. Ճանապարհ կենաց, որ առաջնորդես քաղցրութ՟բ դիմելոյս 'ի լոյս վերին: Ձեռնկալու մեծ վստահութե՟, որ ոչ թողացուցանես գայթագղելոյս 'ի վայր կործանել. յուսոյ կերպարան,[6] Ճշմարիտ առհաւատչէիւ աղաչողաց մատանց յայտնի երևեալ. ապաւինութ՟ի հանգըստեան, որ ոչ երբէք մատնես վտանգի դատապարտութե՟: Ազատութ՟ի շնորհաձիր, որ տաս լիապէս առանց փոխատրութե՟ փրկանաց. առատութ՟ի աննախանձելի, որ քոյին փառաւորութ՟բ զանարգնիւթ հողոյս Ճոխացուցանես: Պայծառութ՟ի անըստուեր, որ Ճառագայթիւք ահեղ բարձրութե՟ պարածածկեալ զթշուառս՝ կրկին բարգաւաճ առնես: Բուժիչ մեղանաց բազմաց, որ զհերքեալս 'ի փրկութէ առաջնոյն պայծառութ՟բ նորոգեալ՝ վերստին վայելչացուցանես: Հնարաւոր դիւրահաս՝[7] առ ամենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալ. ելք վստահութե՟ առ խոստացելոցն վայելս. երանութ՟ի անձկալի,[8] յոր զկենդանութի՟ շնչոյս լքանելն է ախորժելի, զի զքեզ գտից՝ կենդանի: Կամք անփոխադրելի՝ առ 'ի քաւութ՟ի գերոյս զօրացեալ ամենազօրելի. անսխալելի դեղ կենաց, որ և մեռելոց՝ բնաւին եղծելոց առնես զսքանչելիս: Ամենաստեղծ աներկբայելի, որ զհուրբ կիզեալն, և զհողմով հոսեալն, և զժանեօք գաղանաց ծախեալն, 'ի

քթթել ական 9 Նովին հիւթականութբ՟ անպակաս
յարուցանես ։ 10 Ընհաւասար համարձակութի՟, յու-
րում ա՟ծօրէն պանծանօք պարծելն է իրաւացի ։

Է. Նայեաց տէր՝ յերկնից զուարթ քաղցրութբ՟
յամենակործան վտանգ նեղելոյս, և արա անդորր
հանգստական դիւրաւոր՝ 'ի բազմատագնապս հեծու-
թե՟ ։ Ու զյարուցեալ գումարս սատակչացն, եթէ
սպառազէնք այսական դժնեայ հնարաւորութեան 11
բուռն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ մե-
ղաց տգեղ և քո աւելի կերպարանք, եթէ ցաւոց և
ախտից վատնիչ և կորստական նշմարանք, մերժեա-
ցես հանցես հատցես խափանեսցես և հալածեսցես՝
հեռի սահմանաւ իսպառ տարագրեալ անդարձ որոշ-
մամբ վերստին կորստեանն. և կառուսցես կացու-
ցես նպատակ կենաց և ամուր մահարձան՝ զնշան խա-
չիդ՝ ապաւինելոյս 'ի քեզ՝ փրկութի՟ ։ Ու յայսմ 12
անպարտ և անպատիր և անվանելի արուեստից ա-
հաւորիդ մեծութե՟՝ լուծցին որոգայթքն գաղտնա-
ծածուկ սատանայականք. կապտեսցին մեքենայքն.
վատնեսցին գայթակղութիք. խայտառակեսցին հաղ-
բիցն դրութիք. յայտնեսցին երևոյթք որսոյն. գտցին
նենգողին ծուղակք. վերասցին վարմին վերարկուք.
տուչորեսցին որոմանցն բոյսք. նզովեսցին բռնաւորին
չարաբանութիք. կորեսցի լար խաբէութե՟ 'ի մահ
որսողին. պարսեսցին պատրողին բանսարկութիւնք.
պակասեսցին զէնք զրպարտողին. անկցին սուսերք
մահաբերին. սուզեսցին սադրողին պատրաստութիք.
արձակեսցին տուռունք տագնապողին ։ 13 Այլայլես-
ցին սուտ կերպարանք կեղծաւորին. սատակեսցին
խորոխտականացն խիստ յարձակմունք. ցրուեսցին
կցորդութիք կերչացն. բաժանեսցին ազինք աւազա-
կացն. քայքայեսցին բոյլք բարբարոսացն. քանդեա-
ցին ամրոցք ապստամբողացն. արգելցին ամպրոպք
յանդգնելոցն. փարատեսցին փորձողին անձրևք.
հալեսցի և ցամաքեսցի եղեամն աղանդաւորին ։ Խոր-
տակեսցի եղջիւր գոռոզին. մանրեսցին 14 ամբառ-
նալիք դրօշիցն կերպարանաց. փշրեսցին ամբարհա-
ւաճութիք հպարտացելոցն. նահանջեսցին դիմեց-

մունք ճակատելոյն. քակտեսցին միաբանութիւնք զօրացն բելիարայ, թէ անմարմինք, և եթէ մարմնաւորք. փախիցեն ընդ նոյն ճանապարհ 'ի մի շաւղաց հետոց՝ [15] յեօթն տարակոյս. 'ի դուքն ինձ փորեալ՝ ինքեանք ընկճեսցին: Յեղանակեսցին [16] ձմեռունք ձանձրացուցչին. հատցի կապն կցորդութեան մշտաջան աւաղակին. նողկասցի մոտացս կայից՝ համբոյր շողոքորթին. ընդմիջեալ մեկնեսցին՝ նետաձգութիւնք նեղչին. կասցէ 'ի սասանման՝ նաւ խարդախողին. խլեսցին յարմատոց անտի՝ ատամունք խածանողին:

Դ. Սամն փայտիդ օրհնութեան կենաց, յորում պրկեցար ա͞ծդ անըմբռնելի. յիշատակաւ բևեռացդ, որով 'ի գործի մահուն մածուցար՝ արարիչդ երկնի և երկրի. արեամբդ տէրունականաւ, որով [17] զվիշապն մեծ կարթիւ ածեալ որսացար. լեղւոյն դառնութեամբ՝ զոր արբեալ, [18] զդեղատուուն կորուսչին արտաքս հեղեր. [19] պատմաբանութեամբ ըղձական ձառիւք կրկին սարսափելեաց, որով զլրբութիւն հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր. անուամբդ անհասականաւ ամենայնիւ անթարգմանելւոյդ, յորմէ դողան և դատապարտին սոսկացեալ սաստիկ սարսափմամբ՝ բնութիւնք ամենայն [20] երևութից և աներևութից, եղիցին [21] այս ամենայն պարգևք շնորհաց՝ խոստովանելոյս 'ի պաշտպանութիւն, 'ի բժշկութիւն և 'ի քաւութիւն: Նաև մահաբեր [22] դառնաթոյն օձին, և որ 'ի նմա ազդեաց տիեզերադաւ չարութեան, 'ի սատակումն եղիցի նորին. նոյն ինքն 'ի կորուստ և յանբժշկական հարուած տանջանացն՝ սովաւ մատնեսցի, կապեսցի և ըմբռնեսցի: Եղիցի ողորմութիւն ստեղծողիդ ընդ իս, և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կապաւ միացեալ 'ի մի:

Ե. Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի՝ մաղթանաց գոչման՝ աղօթից հայցման [23] ծերոյ և տղայոյ, կուսի և երիտասարդի, և եթէ յաղախնաց ոք պաղատեսցի ա͞ծսիրաբար, հաւասարապէս անաչառութեամբ ընկալցին 'ի քէն մասն երանութեան պարտուց ազատութեան, հաստեալ վերստին յանարատութիւն նորոգ մաքրութեան, [24] նկարեալ դարձեալ զքոյդ կեր-

պարան անփոփոխելի ։ Ահա տիրապէս հնարաւոր՝ զօրեղ՝ անպատում անհաս՝ անիմանալի, 25 տեսցես աստանօր 'ի հառաչանս կողկողանաց այսր հեծուէ, որ 'ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի, վասն հօր քո երկնաւորի և բարերարի, և հոգւոյդ ս̃բյ փառակցի և կենդանատուի, ա̃ծածնիդ բարեխօսութ̃, և խնդրուածովք ամենայն ս̃բց ։ Ով դու ստեղծեր զամենայն. և 'ի քէն եղեն ամենայնք. և դու տիրես ամենայնի. և քեզ փառք յամենեցունց՝ միդ յիսկութէ̃ անժամանակ երրորդութ̃եդ, զուգակցապէս փառաւորեալ յանբաւս, և յաւիտենից յաւիտեանս. ամէն ։

---

(1) Փոխարկիչ կարեաց ։ Բնական կարեաց մարմնոյ՝ այսինքն քաղցու, ծարաւոյ, քնոյ, խոնջման, ևն, փոխարկիչ, կամ դարմանիչ. վասն զի կամ արգելու զայնս, որպէս արար առ բազումս 'ի ս̃բց, որք անկերակուր և անջուր կացին, անքուն պահեցան, անխոնջ աշխատեցան. ևն ։ և կամ բնական դարմանօքն բառնայ զայնս. զի զկերակուր կարգեաց 'ի դեղ քաղցու, սոյնպէս և յայլսն ։ Կարգաւորիչ կրից. այսինքն բնական կրից հոգւոյն, սիրոյ և ատելութ̃ե, ցանկութ̃ե և փախստեան, յուսոյ և յուսահատութ̃ե, ևն. զորս ա̃ծ կարգեաց 'ի բնութ̃ենս, և ինքն ուղղէ 'ի բարւոքն կիրառութ̃ի ։ Սանձարկու լեզուի. զպօղ լեզուի, ոչ միայն պատուիրանօքն արգելլով զանարժան խօսս, այլ և բնական կազմուածն, փակելով զլեզուն ատամամբք և շրթամբք ։

(2) Շրջապարուրիչ շնչոյ ։ Շուրջ ըմբռնող կամ արգելիչ շնչոյ. զի 'ի ձեռին նորա է շունչ ամենայն կենդանեաց ։ Կամ, յարմարող և ամրափակող շնչոյ. զի յամենայն կողմանց շուրջ փակեաց զթոքսն, որպէս զի զի՛ ներքս առեալ օդն՝ անդրէն արտաքս շնչեսցէ ։ Խօսեցուցիչ հագագի. լսեցուցիչ հագագի կամ ձայնի. կամ, արարող հագագին, այսինքն ծայրի շնչափողոյն. զոր աճառօքն և փոքր լեզուաւն յարմարեաց 'ի յօդել զձայնս և զեղանակս ։ Առաջին իմաստք երկուց բանիցս՝ առաւել համեմատ են այլոց նախընթաց և հետեւորդ բանիցն ։

(3) Ամփոփիչ խորհրդոց ։ Ըմբռնող և սանձող խորհրդոց մտաց. կամ ա̃ որում յարմարեաց զխելապատակն, յոր մտածութիւնքն ժողովին ։ Կրթարան կամաց, հրահանգիչ կամ վարժիչ կամաց յուղիղ ախորժմունս ։ Արգելացուցիչ յուզմանց. խափանիչ խռովութ̃եց օդոյ, կամ հոգւոյ ։ Որ ունիս զթեւս ամենեցուն. թեւովքն իմանի զեկն, այլև թեւ թռչնոց. և այլաբանութ̃՝ երագութի մտաց և տէրութիւն կամաց, որովք անձնիշխանականն մեր յամենայն կրս ձգի ։ Զայսոսիկ սաէ՝ ունիս և ըմբռնես, և առ քեզ դարձուցանես ։

(4) Հանգիստ տենչանաց ։ Հանգչել ա̃յ յանձինս արդարոց է̃ բանի գրոյն, * Ես յո՞ հանգեայց՝ եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս ||։ (Եսայ. կզ̃. 2.) լի է արդարև անճառ հրաշիւք. քանզի որպէս որ ինքն ծայրագոյն երանութ̃ին է՝ յայլ ինչ հանգչելոյ ախորժաբար. և եթէ յանձինս արդարս հանգչի սակս արդարութ̃են որ 'ի նոսա, զիա՞րդ ոչ առաւել յինքեան հանգչելոյ՝ քան թէ 'ի նոսա. իւր և յիւրմէ գոլով նոցայն արդարութ̃ե ։

Այսպէս ահա հրաշալի է արդարև հանգչել ԱՃ յայլս : Նոյնպէս ըմբռնելի և այն, զի Թագաւոր գոլով էից համայնից, բոլոր արարածոց, տիրող ամենիշխան, տակաւին է ծանուցեալ, որդեամբք վկայեալ Ամենայնիւ գթած, որպէս եթէ հայր միայն է՝ լի գթովք, առ ամենեսին ողորմած :

(5) Նախաշաւիղ սիրոյն : Առաջին ծնող և առաջնորդ սիրոյ ըստ ներգործութեան՝ եղև Ած, ըստ որում յանբաւ սիրոյ բարութեան իւրոյ շարժեալ, նախ ինքն սիրեաց զամենայն արարածս, հաղորդեալ նոցա զբնական բարիս . և նախ ինքն սիրեաց զբանական արարածս, հաղորդեալ նց զգերբնական բարիս : Այլև ըստ պատուիրանին՝ առաջին օրէնսդիր սիրոյ եղև Ած, աւանդեալ զայն 'ի բնական օրէնսն, 'ի գրաւորականն, և յաւետարանականն, յորում Հայր և Որդի պատուիրան կոչեաց զն : (Յովհան. ԺԳ. 34. ԺԵ. 12 :) Դարձեալ, ըստ վախճանին և ըստ առարկային՝ առաջին եզերիչ սիրոյ՝ Ած է . զի ամենայն ինչ սիրելի է իբրև բարի . և բարութիւն նոցա է հաղորդութիւն ինչ բարութեանն այ . ուստի յամենայն իրս՝ գլխաւոր սիրեցեալն է բարութիւն Ածային, յայտնի՝ կամ լռելեայն, որպէս իմաստասիրէ սբն Թովմաս Ագուինացի . (Ա. Մ. խնդ. Ի. սր. Ա : և խնդ. ԻԲ. յաղագս Ճշմարտ. սր. Բ :) 'Ի վերայ ամենայնի այսոցիկ՝ Նախաշաւիղ է Ած սիրոյն ընթացից, առաջնորդ և նախօրինակ թէ որպէս պարտ է սիրել զԱծ և զընկերս, Ճշմարիտ, սէրս, հաստատուն, ոչ 'ի շահ անձին, ոչ առժամանակ մի, ոչ ըստ ժամանակս . որով Ած ոչ միայն է օրինադիր և վախճան սիրոյ, այլև գաղափար : Զայն ինքնին ասէր Քս, եթէ սիրեսջիք զմիմեանս, որպէս և ես զձեզ սիրեցի : (Յովհ. ԺԵ. 12.) և սիրոյն աշակերտն երկրորդէ յառաջին կաթուղիկէն . (Դ. 11.) *Եթէ Ած այնպ սիրեաց զմեզ, ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրել|| :

(6) Ճշմարիտ աստուածայինն : Դու ես պատկեր կենդ ցուցք յուսոյ՝ ստոյգ խոստմանց, կամ փորձիւ զանազան ողորմութեանց, աղաւաղաց ճառանց, (մի օրին. աղաւաղ ճառանց.) աղաչող անձանց յայտնի երևեալ : Աստանօր՝ ճառն խելամտութեան ձևով փոխանակ բոլոր մարդոյ դնի :

(7) Առ ած անբառ : Դու հնարող ես դիւրաւ կամ անաշխատ՝ առ Ած անկարելի կամ անչափ բարձրութեան ժամանող :

(8) Յոր ըղձանալն ուրախութեան : այլ օրին. որ. և մարթ է իմանալ որով . կամ իբր շաղկապ՝ մինչ զի . այսինքն այնչափ ցանկալի երանութիւն ես, մինչ զի ախորժելի է թողուլ զկենդանութիւն՝ բնական մահուամբ, կամ բարոյական մահուամբ, սպանանելով զմարմնոյ ախորժակս :

(9) Նովին հրաշակերտութեամբ : Նովին կազմուածով մարմնոյ : Այնու ևս վկայեալ ես և խոստովանեալ առանց երկբայելոյ՝ թէ դու ինքն ես ամենայնի առեղծիչ, զի զմարմինս մարդկան զծախեալսն հրով, զմնրեալս 'ի փոշի և հոսեալս հողմով, կամ զկերեալսն 'ի գազանաց, դու զայնպիսի մարմինս 'ի միում վայրկենի կենդանացուցանես ամբողջ զիւրաքանչիւր ըստ առաջին ձևոյ՝ նովին բաղադրութեամբ : Այսպիսի կենդանագործութիւն ոչինչ պակաս է յարարչագործութենէ :

(10) Անհատաւոր համարձակութեան : Դու անհնարին արարչն ես՝ համարձակելի ամենեցուն, յոր ապաւէն պանծանօք, այսինքն յոր իբրև յԱծ պարծելն՝ իրաւացի կամ արդար է : Անիրաւ է պարծել 'ի մարդ կամ յայլ արարած . այլ որ պարծելն կամի, 'ի տէր պարծեսցի՝ ըստ գրոց :

(11) Բարձրն մարտակցաց : Զօրեղ պատերազմողաց, պարգևանդեալ պսակաց, պատերազմելոց զինուք : Զժողովս սատակիչ մարտակարգացն՝ որք յառնիցեն 'ի վերայ իմ, թէ իցեն դիւական գունդք զօրեղ պատերազմողաց՝ ամբարտաւանից զինուք չարութեան, թէ իցեն զանազան տեսակք դարշելի մե-

ղաց, և թէ լցեն կորուսիչ ցաւք և հարուածք մարմնականք, զամենայն մերժեսցես, և հեռացուսցես անդարձ որոշմամբ, առանց վերստին դառնալոյ նոցա 'ի կորուսանել զիս. կամ, զդևսն տարագրեսցես անդարձ հեռացմամբ յերկրորդ կորուստ խրևանց. որպէս միանգամ կորուսեր զնոսա յարդարացուցանելն զիս: Եւ ընդդէմ նոցա կացուսցես ինձ զնշան խաչիդ իբրև սմուր մահաբերն, մարտկոց կամ աշտարակ պատերազմի:

(12) Անպարտ: Անյաղթելի, կամ անպարտական, և անպարտելի, անմենգելի կամ Ճշմարիտ, արարածոց, կրից չարչարանաց, կամ զօրութեց: Զվրկագործ անօրէնութիւն Քո՞ի կոչէ արարածս, իբրև հնարս անճառ իմաստութեան ոյ, թէ որպէս հակառակօք զհակառակսն ներգործեաց. իբրև պարտաւոր երևեալ, բայց ամենայնիւ անպարտ. իբրև տկար, այլ անպարտելի. իբրև մեռեալ, այլ անպարտելի: Այս յայսմ անյաղթ կամ յանպարտական և 'ի Ճշմարիտ չարչարանաց աչաւորիդ քո՞ լուծցին գաղտնի որոգայթք սատանայի, ևն: Յայտնեսցին երևոյթ որոյն, հանդամանք որոմնացն, կամ կազմութեն թակարդին. բարձցին հուրք հրաշէջք, ծածկոյթք վարմին:

(13) Այլայլութին: Յայտնեսցին, երևեսցին ըստ բուն կերպարանին սուտ դէմքն կեղծաւորին սատանայի. ցրուեսցին խորհրդութիւնք խելայն. միաբանութիւնք կերչաց կամ յափշտակողաց: աղիւք ասղախայն. ժողովք աւազակաց:

(14) Ամբառնալիք դրօշիցն: Զողք նշանաց դրօշակացն սատանայի՝ մանրեսցին, խորտակեսցին:

(15) Յեօթն փախիցեն: Ընդ նոյն Ճանապարհ՝ ընդ որ յարձակեցան 'ի վերայ իմ, փախիցեն 'ի մի հետոց յեօթն կամ 'ի բազում բաժանեալ Ճանապարհս. որով խմանի, ցիր և ցան փախիցեն:

(16) Զերծանիք ձանձրացուցին: Փոխեսցին 'ի չքմութիւն ցրտացուցիչ փորձութիւնք դևին, որովք ջանայ ձանձրացուցանել զմեզ. խաղն խորհրդութէ. կապն՝ որով ընդ նիւթեան կի՞ առ նիւթն արգելեալ ունի զիս, կորեսցի: Նողկալի, գարշելի և զզուելի լիցի մեղաց խայթ, Ճակատու՝ յորում կայ ուղեղն՝ տեղի խորհրդոց, համբոյր խաբէութ դևին: Ընդդիմամբ արգելեալ կամ նահանջեալ հեռասցին վշտացուցիչ փորձութիւնք նորա:

(17) Զենեալն Գէծ: Զատածոյ արեամբդ իբրև կարթիւ ընբռնեալ արասցար, ըստ բանին Յոբայ. (Գ. 8: Խ. 20:)

(18) Զդեղափոխութիւն: (4 օրին. դեղափոխութիւն): Զմահաբեր, կի՞ զկախարդական դեղ սատանայի արտաքս հաներ:

(19) Պատմաբանութիւն: Քաղցրութի՞ և լուսութի՞ ըղձալի Ճաշից սարսափելի չարչարանաց քոց:

(20) Երևութից և աներևութից: Երևելեաց և աներևութից բնութեանց զօրան յանուանէ քումմէ. ըստ բանին * Յանուն Յի՞ քո՞ ամենայն ծունր կրկնեսցի || ևն: (փիլիպ. Բ. 10:) 'Ի վերայ հրեշտակաց՝ գոլով լինել միտս իմանալի է, տասցուք 'ի բանն հՁ. լուծ. 17. իսկ դժոխապարքն ասելն՝ իմանի 'ի վերայ չար հրեշտակացն դևաց:

(21) Այս ամ պարգև: Վասն ո՞յ խաչիդ ասէ՝ և յիշատակաւ ո՞ք բևեռացդ, և այլովք մասամբք չարչարանացդ, այն ամ շնորհք՝ զոր հայցեցի վասն կործանման սատանայի և պարտանաց ո՞ր, ևդիցեն ինձ 'ի պաշտպանութի, ևն: Այսպէս ձևանայ կազմութի բանիս՝ եթէ պարգևք բառին իմասցուք զհայցեալ պատուութիւն 'ի բնութեց սատանայի. բայց եթէ պարգևք իմանամք զնատունս չարչարանաց փրկչին՝ զորս նախ կարգէ, ըստ այսմ ոչ պատշաճ լինի յարմարումն բանին ասել, թէ վասն ո՞յ խաչիդ և յիշատակաւ բևեռացդ, և այլն, ևդիցեն այս ամ պարգևք

լինի 'ի պաշտպանութիւն, եւն ։ Այլ պարտ էր զսկիզբն բանին՝ ի՛ ծոցոյ օրհնութեան մինչեւ 'ի բայն՝ Եղիցին՝ յարել յանցեալ բանսն, իբր սաեւ. խորտակեսցին, մաշեսցին, քակտեսցին, փախիցեն, յեղանակեսցին, եւն, վասն փայլից օրհնութեան, եւ յիշատակաց բանիցդ, եւն ։ Իսկ բայն Եղիցին՝ լինի առանձին պարբերութիւն սկսանելի զատ տանգլխով, որպէս դնէ եւ օրինակ ինչ ։

(22) Դառնաթոյն օձին ։ Պարգեւք շնորհաց չարչարանացդ՝ որք լինին 'ի բժշկութիւն լինելոյ, եղիցին 'ի սատակումն դառնաթոյն օձին. այլ նորին, ԶՔ սատանայի՝ որ 'ի նմա 'ի նոյն օձն ազդեաց զոխեզերագաւ կին զաշխարհաւեր չարութիւն ։ Նոյն նենգն սատանայ 'ի կորուստ մատնեսցի ահագին, զօրութեամբ չարչարանացդ ։

(23) Ծերոյ եւ տղայոյ ։ Այս սեռական անուանք հայցեն 'ի մասնական անուանն որ ոք. զի երբեմն 'ի սեռական հոլով դնի բացառական խնդիր այսպիսի մասնական անուանց, եւ իմանի սաեւ, որ ոք 'ի ծերոց եւ 'ի տղայոց, 'ի կուսից եւ յերիտասարդաց ընթերցցի զայս աղերս, եւն. բայց այլ օրինակ այսպէս զատանէ կխռեւ, հայցման ծերոյ եւ տղայոյ, իբրեւ թէ որ ոք ընթեռնուցու զաղերսական գիրս աղօթից՝ պատուաճնելով ծերոյ եւ տղայոյ, ընկալցին 'ի քէն մասն պարգեւաց աղաւթութէն ։ 2 օրին. աղաւթութէն ։

(24) Նկարեալ դարձեալ։ Վերստին նկարելով 'ի հոգիս իւրեանց զբոյդ կերպարան շնորհաց՝ որ 'ի քեզ անփոփոխելի է. կամ, անփոփոխելի իբր մակբայ իմացեալ, նկարեալ առանց փոփոխութեան՝ հաստատապէս զբոյդ նմանութիւն ։

(25) Տեղեօ ապաւոր ։ Հայեսցիս 'ի հառաչանս զղջման բանիս՝ որ 'ի բերանոյ ամենեցուն ընծայի քեզ, Ճառ հոր ??, վասն սիրոյդ առ հայրդ երկնաւոր ։ Դու ողջերեր ։ Այսու իսկ թախանձեմ զքո գթութիւնդ՝ ողորմել ամենեցուն կատարողաց զաղօթքս զայսոսիկ, վասն զի զամենայսին դու արարեր յոչնչէ. եւ ամենայն, ամենայն ինչ որ 'ի մարդումս եւ կամ յայլս՝ 'ի քէն եղեն՝ բնականք եւ գերբնականք. եթէ գործիցեն ինչ այլքն եւս արարածոց, տակաւին 'ի քէն ներգործեն՝ եւ ոչ առանց քո. այսորիկ աղագաւ դու տիրես ամենայնի իբրեւ քում ստացուածոյ. դու պահպանես զամենայն. եւ առ քեզ դարձուցանես զամենայն. եւ բոլոր խրատամբք քեզ վայել են փառք յամենեցունց, ընդ Որդի քո եւ Սբ Հոգւոյդ, յէական ածութէ սբ երրորդութեանդ ։

---

Մերձաւորին յաւելուած ներքին հեծութէ՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ԱԾ ։

## ԲԱՆ. ՂԳ։

Ա. Տէր տէր գթութեանց եւ ած ողորմութեանց. անուն մեծութեան. ձայն ահաւորութեան. կոչումն սաստկութեան. լուր անհասութեան. բարբառ դողութեան. հնչումն հիացման. յուսադրութիւն բարերարութեան ամենողորմ քաղցրութեան ։ Յորմէ երկուցեալ սասանին ամենայն բնութիւնք եղելոց. [1] 'ի քո սպառնալեաց ահիդ պակուցման՝ սաւառնին սերոբէք. ամ

փոփին քերոբէք. պարուրին պաքք լուսակերպիցն. երկնչին հիացմամբ բոլոր պետութիք վերնոցն. նոյնք ցնծան դողութբ մեծաւ 'ի մի նաւակատիս բերկրութե. զարհուրին դեւք. ընկրկին չարութեցն գունդք. պակասին խաւարասիրացն հոգիք. անդնդոց մատնին [2] հրեշտակք օտարին: Ապին նշանաւ խաչին՝ յարձակմունք դիմամարտին. փակին 'ի ստորին բանտի՝ [3] քինաւոր ամաղեկացիքն. անխզելի հանդուցիւք պաշարին խումբք հակառակորդին. [4] արդելին անզերծ զընդանաւ՝ մահազինացն կաճառք. սնդին 'ի մետաղս ահեղ հրամանիդ՝ [5] այսականացն գումարք. պապանձին կարկեալ՝ ընդդիմաբանիցն դասակցութիք. պարաւանդին հիւծմամբ կորստեան աներեւութիցն ժողովք. անլոյծ շղթայիւք նեղին՝ [6] առաքելութիք դերաքրիստոսին:

Է. Ահա կարկառեմ մատամբք ձեռին՝ զտեառնագրութիւն նշանիդ 'ի ժամ գիշերիս, որ ոչ մթանաս խաւարաւ անդիտութե՝ ամենեւին տեսականութի, քան թէ 'ի լոյս անմատոյց հանգուցեալ բնակես: Ընկալ զաղաչօղս վտանգաւոր գոհաբան՝ ընդ պահպանութբ թեւոց հզօրիդ. փրկեա 'ի ցնորից՝ եկամուտ պղտորութեց. սուրբ արա զզգայարան հայելեաց՝ սրտիս նկատմանց. ամրացո փայտիւդ կենաց 'ի տխրական անրջոց. արեամբ քո սրսկեա [7] զշրջարկուխս կայիցս. զհետս ելումտիցն՝ կաթուածով կենարար կողիդ գծագրեա. [8] երդոյն պահպանարան՝ քառակերպիդ ձեւակերպութի եղիցի. հանդէպ տեսութե աչացս ամբարձման՝ փրկականդ քո կրից խորհուրդ առդիցի. [9] ընդ բարաւոր յարկիս՝ չարչարանաց քոց գործի հաստիցի. զծառոյդ օրհնութե՝ հաւատք յուսոյ իմոյ կախեսցի: Արգել տէր սովաւ զսատակիչն հոգւոց. մոյէ անխափան՝ պաշտպանն լուսոյ. և [10] ընդ սաստիկ ծանրութե ցաւոցս՝ և զբեռն պարտեացս թեթեւացո, զոր 'ի լռարանի մտացս ամփոփման մահճացս անկողնի՝ ուշաբերեալ զյուսահատութեցն դառն պտղոցն՝ խոստովանիմ ամենագիտիդ զանհամար մասունս գործոց չարաչար անօրէնութեանցս:

Ը. Հանգո զվաստակեալս [11] 'ի բազմածուփս աշխա-

ութեամբ․ բարձ զտագնապ տարակուսանաց ոգւոյս
կործանման, [12] զդառնութիւն ընդ վշտացն․ զհեծու-
թիւն ընդ կարեացն․ զանձկութիւն ընդ թշուառու-
թեացն․ զհառաչմունսն ընդ խորտակմանցն․ զբեկու-
թիւնս ընդ ապշութեացն․ զթմբրութիւնս ընդ շրտմանցն․
զարբեցութիւն ընդ յիմարութեացն․ զթերամտութիւն
ընդ խելագարութեացն․ զսառուցեալ սիրոյն, և զհրային
ջերմութիւն աղուական ախտին։ Օժանդակ լեր տկա-
րութեան բազմատխուրս տարտամութեան, բարեգործ ա-
ջովդ շնորհի․ [13] Ձեռամբդ նորոգողի․ մատամբդ կեն-
սաբաշխի․ փառօքդ մշտափայլի․ յարակայութեամբ ան-
եղծի․ երեսօքդ զուարթականի․ խնկովք էիդ պաշ-
տելի․ բարձրութեամբդ երկրպագելի։ [14] Հատ՛ զչարա-
չար հեծութիւն կորստականս խեղդման․ զնոր գիւտ
չարին, զհին խարդախութիւն բանսարկուին, զօտար
ազդեցմունսն՝ ՚ի մահ կրթողին, զանյարմարական ե-
րեւոյթս՝ հանապազորդեան եղեռնագործին, զառ-
աջս հնարադրութեան դժնդակ դիւին, զողոքական բո-
ցանշուլն ձգօղ կախարդին։ Պահեա՛ ՚ի տեղւոջ հան-
գրստեան մեռօրինակ այսր դադարման, [15] յաներե-
ւոյթ մտածութեանց, ՚ի մասնաւոր սխալութեանց, ՚ի մե-
ծագոյն գայթագղութեանց, ՚ի փոքրագոյն ոտնառու-
թեանց, ՚ի խաբեբայ չար ձանձրութեանց։ Հեռացո՛ [16] զան-
հանդէպ մտածութիւն ՚ի զգայութեանց ծառայիս յան-
ցաւորի, [17] զկիրս բասրելիս, զմարս թշնամանելիս,
զդիպուածս պատկառելիս, զհետս վրիպելիս, զպա-
տիրս ձաղելիս, զխորհուրդս անգոսնելիս, զաւելաբա-
նութիւնս նշկահելիս։ Անխալ հոգւով և անշաղախ
մարմնով զապաւինեալս ՚ի քեզ հանդերձեա՛, ՚ի
ննջմանէ հոգւոյ, [18] ՚ի զարկմանէ բռնութեանց, ՚ի բախ-
մանէ փոթորկաց, ՚ի յոստմանէ մրրկաց, ՚ի յար-
ձակմանէ գազանաց։ ՚Ի կափման աչացս՝ հայեցուած
սրտիս մի՛ ստուերասցի, այլ զուարթասցի պայծա-
ռասցի վայելչասցի՝ ընդ քեզ փայլեսցի՝ տէ՛ր Յիսուս Քրիստոս,
լուսաւոր վառմամբ անշիջանելեաւ։ Անիւ քո սըր-
բեա՛ [19] զպատսպարանս բազմականիս՝ ՚ի խորաման-
կութեանց, ՚ի զբաղմանց, ՚ի քո ատելի յիշատակաց,
՚ի վերնամարտ մտածմանց, ՚ի քրէական մրրսութեանց,
՚ի տիրանենգ անշնորհութեանց, յաստուածընդդէմ

հերձուածութեանց ։ Գնդիւք վերնայնոցդ՝ վերակա-
ցուս ինձ լիցիս, պետութեամբք, իշխանութեամբք. [20] զօրա-
ւորօքն անյաղթականաց՝ մաքուր մատակարարաց՝ սուրբ
Աստուածութեանդ. [21] առաքելքն՝ աւետեաց աւետարա-
նաւն. մարգարէքն՝ կտակարանօքն. մաղթանք եր-
ջանկացն՝ 'ի կատարածի աւուրն ընծայեալ ։ Սրովբ
նիրհեցից [22] երկիւղիւ ըստ քեզ՝ տրտմութեամբ, և զար-
թեայց շնորհօք քո՝ կրկին ուրախութեամբ. [23] եթէ վհա-
տութեամբ ննջեցից, յարեայց դարձեալ հոգևորական
բերկրութեամբ. եթէ ընկողմնեցայց մեղանօք, կանգ-
նեցայց վերստին զատեալ 'ի խղճէ անաղտ անբծու-
թեամբ ։

Է. Լուր խնդրուածոց ամենահառաչ ձայնիս հե-
ծութեան՝ միայն բազմագութ, բարեխօսութեամբ սրբոյ Աստուածած-
նիդ, և ամենայն արդարոց, և նահատակաց ընտրե-
լոց ։ Եւ քեզ փառք յամենեցունց՝ իմովս գոչմամբ վե-
րառաքեցեալ [24] սրբովք զուարթնոցն անմահականաց
դասուց՝ 'ի գովեստ հօր քոյ Աստուծոյ մերոյ, և հոգւոյդ
սրբոյ ընաւից հաստողի և նորոգողի, յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն ։

---

(1) 'Ի ՔՈ ՍՊԱՍԱՒՈՐԱՑ ։ 'Ի քո ահաւոր սպասաւորացդ 'ի վերոյ յանցա-ւորաց՝ ՍԱՍԱՆԻՆ, զթևս յածեցուցանեն սերովբէք 'ի նշանակ երկիւղի և պատկառանաց ։ ԵՒ ՆՈՅՆՔ որք յահաւորութենէ քումմէ երկնչին, ցնծան պատկառանօք 'Ի ՄԻ ՆՈՒԱԳԱԽՄԲԻ, 'ի մի տօնախմբութիւն դասուց իւրեանց ընդ արդարոցն 'ի մարդկանէ ։ Յետ ասելոյն 'ի սկզբան աղօթիցս թէ ա-նուն և կոչումն Այ է ահաւոր, սարսափելի, և միանգամայն քաղցր 'ի յոյս բարեաց, իբրև զի ընդ անհաս մեծութեան յայտ առնէ և զնա-խախնամականն զօրութի, 'ի կարգ արկանէ ապա զներգործութիւնն որ յարարածս ազդի 'ի մեծութենէ նորա. զի ընդհանուր ամենայն բնութիւնք սասանին առ յահէ նորա. հոգեղէնքն գերամաքուրք՝ և սարսափին պատ-կառանօք, և ցնծան ընդ փառս նորա ամենապատրաստ հպատակութեամբ ։ Իսկ ոգիքն չարք՝ ապստամբք, զորս այլ և այլ անուամբք շարեշար կար-գէ զինի, սարսափեն միայն յանուանէն Այ, տանջին և անդուլ պա-տուհասին ։

(2) ՀՐԵՇՏԱԿՔ ՕԴԱՅԻՆ ։ Դևքն՝ որք են հրեշտակք սատանայի՝ տարածե-լոյն յօդս ։

(3) ԲԻՒՐԱՒՈՐ ԱՄԲԱՍՏԱՆՈՂԱՑՆ ։ Ոխակալ ամբաստանողքն, կամ որք քինուն և վրէժխնդրութեան Այ պահեալ էին ։ (Եկլց. ԺԷ. 14 ։)

(4) ԱՐԳԵԼԻՉՆ ։ Այ արգելանին. 2 օրին. ԱՐԳԵԼԻՉԻՆ ։ ըմբռնելին յանդերձ բանս [illegible], խումբք ումնողային զմահաբեր զէնս, կամ զի-նելոյն 'ի մեռուցանել ։

(5) Ա[illegible] ։ Այ այսոցն կամ դևաց գումարք՝ կապին 'Ի ՄԻ ՏԵՂԻ, յարգելանս ահեղ հրամանիդ ։

(6) Աստեղնեանց տէրատէրութեան : Հրեշտակք սատանայի, որ է սուտ քս՟ :

(7) Զշրջաբերութեան հայեցս : Զամենայն կողմանս կամ զօրմունս կայարանիս :

(8) Երգոյն : Տանեաց սենեկիս՝ պահպանիչ լիցի ձև խաչիդ :

(9) Ըստ Եբրայեր : 'Ի սեամս սենեկիս գործեք չարչարանացդ հաստատեսցին : Դժնդակ օրհնուէ . զխաչէդ կախեսցի յուսալից հաւատք իմ : Այսպիսի հայցմամբ աղդ առնէ երանելիս, թէ 'ի մուտս գիշերոյն պէտոյ է քրիստոնէին յիշատակաւ չարչարանաց փրկչին ամրանալ և մտանել յանկողին . քանզի այս ոչ միայն 'ի պահպանութեան լինիցի ընդդէմ գիշերային արկածից, այլև 'ի ցերեկի տայցէ զաւարթուն ունել զմիտս 'ի յիշատակ փրկագործ խորհրդոյն փրկչին :

(10) Ըստ սաղմէ : Գուցէ ցաւս ինչ մարմնոյ կրէր երանելիս, զոր աղաչէ թեթևացուցանել հանդերձ բժշկամբ մեղացն . զի կարասցէ զաւարտոր քնոյն պէտս վճարել : Իսկ 'ի նորայն . զոր յանկողինս՝ որ է անպաշտ տեղի հանգստութեան մտացս, ասելով . յիշատակելով զդառն պողոյն յուսահատութեանց, ևն :

(11) 'Ի եռանդնատես աղախինս : Մ՛չ հայցէ հանդչել յաշխատութէ աշխարհական բանիցս, զի այն անարժելի էր նմա . այլ յաշխատութենէ խումբութեանց հոգւոյն, կամ 'ի տունջեանյին զբաղմանց :

(12) Զդառնութիւն մաղձին, ըստ հշտոյ հոգւոյն : Զհեծութիւն 'ի վերայ անցելոց մեղացն . ըստ նարեկայն ցանկութեանց՝ որք դարձեալ 'ի մեղս գրգռեն : Զանյիշութին, զնեղութեն սրտին, ըստ Բարսեղեան, ձախող պատահարացն, որք առաւել նեղեն զսիրտն : Զհառաչմանն բերանոյն՝ ըստ Խորհրդոյ մանցն, սաստիկ սխրութեանց և լքմանց սրտին : Զքեէն թեան, զթուլութեան մարմնոյն, ըստ աղբեան հոգւոյն : Զմխիթարութեան զգայութեց, ըստ Շնորհ մանցն, ընդ յանկարծ երկիւղական ըմբռնմանց աչաց կամ սրտի, որ լինի 'ի քուն՝ կամ յարթնութե : Զարթեցութին, զանզգաստութեան 'ի գործս, ըստ ոսկեբերանեան, ընդ թեւր դատողութեանց : Զեռանդութին, զանխոհեմութեան, ըստ Նեռոպատրիանեան, է խելագար գործոյն կամ բանից : Զտառապանս, զպաղումն ծածկեալ սիրոյն, և զհակառակ ջերմութեան առողջական ախտին, հեշտալի ախտին ցանկութե, որ չեռնու 'ի քուն :

(13) Զհեծեծ նորոգող : այսինքն նորոգօղ ձեռամբդ . այսպէս իմն և զհեռաւեալս, այսինքն կենսաբաշխ մատամբդ, մշտափայլ փառօքդ, ևն . յորս զածականն յետադաս դնէ 'ի սեռական հոլով իբրև յատկացուցիչ, որպէս և տորև լծ . 20 . և կամ ուղղական դնէ առանց ինչ համաձայնութե, կամելով պահել զնման յանգ 'ի գրոյն :

(14) Հայր գութոյ : Հսօտ կամ բարձ զսաստիկ հեծութեան Ծորբաղանս Խեղդման, խեղդիչ սրտմտութեան՝ որ 'ի կորուստ յուսահատութե կարէ արկանել զիս : Ըստ Գիրս յոբեն . զայս 'ի վերայ խեղդմանն մարթ է իմանալ, զոր 'ի կիր առ սատանայ 'ի մատնիչն յուդաս, և յայլս ևս . և նոյնն՝ հին խորամանգութ Բահապաշտին, 'ի կային, յաքիտոփէլ, և յայլս : Բայց զայսպիսի մարթ է և յայլ իմաստ առնուլ . այսինքն նոր Գիրս իմանալով զնորագործ մեղսն, և հին խորամանգութ՝ զսովորական մեղս : Զօրութ աղբերական, զհրապոյրս օտարս 'ի քնութէ կամ յօրինաց, 'ի նահ ներգործն, 'ի մահ ձգողին, որպէս ոմանց աղդէր սատանայ՝ 'ի ծով կամ 'ի խորս ընկենուլ զանձն, սովամահ կամ ծարաւամահ լինել, ևն : Զանյարմարական երևոյթ . զխառնիխուռն երևակայմունս երկիւղալիս կամ աղտեղիս, զոր յարթնութե կամ 'ի քուն ձևացուցանէ, զառ ալս անառողջութեան, զառաջօք խաբէական տեսիլսն, որպէս պատկերս կանանց, գազանաց, հրեշտակի . ևն : Զգիտական բորբոքումն . զմեղկացուցիչ հրեղէն

շունչն, զոր յայտնի կամ ծածուկ խորդախութ փչէ սատանայ 'ի մըր- դկանս սիրդ :

(15) Ցանէրեայի նշածուութեց : Ցանդործ կամ 'ի մտաւոր մտածութեանց՝ որք չերևին 'ի գործ. կամ յանդայս մտածութեանց՝ որոց ոչ երևի կատա- րածն՝ բայց եթէ արդեօք, կամ չար, 'ի նշանաւոր սխալութեց, յամառելոյ սխալմանց : 'ի մեծագոյն գայթագղութեց. 'ի մեծ և 'ի ծանր մեղաց գըր- ման է : 'ի փոքրագոյն սպառութեց : 'ի փոքր կամ յական յանցանաց, և պատահմանց բնութեան՝ որք լինին 'ի քուն, և արդելուն զհամարձա- կութիւն սրտին առ Ած յաղօթս, և յայլ սրբազան պաշտամունս : 'ի խա- բէբայ լոյս յանկարծութեց, զորս երբեմն բերէ սատանայ 'ի զարթնուլն և յառ- նել 'ի պաշտօն աղօթից :

(16) Զանհանդէգ նշածուութեն : 2 օրին. զանդէգ :

(17) Զկիրս բարէլիս, այսինքն պարտաւելիս : զգաթիրս յաղէլիս, զպատ- րանս ծիծաղելիս : զաւէլաբանաւոր նշխահէլիս, զաւելորդ բանս, կամ զան- հաւատալի խօսս արհամարհելիս :

(18) 'ի զորկման բանսութեց : Անձնաս հոգւով և մարմնով պահեմ զխս 'ի բաղխմանէ ջուրց հեղեղաց : ծոթորկայ, յանկարծական սատակ հող- մոց. ( խայ : ) 'ի յաթամանէ մրրկաց. 'ի յառնելոյ պտտուտակ հողմոց :

(19) Զպաթպարանս բաղմակներս : զառագաստ կամ զծածկոյթ անկող- նոյս. կամ լաւ ևս, զանձնակս իւր բազմիմ, որպէս 'ի կերաժարթ, յածա- մայս նշածմանց հպարտութե, արանջման, դատողութե, են : 'ի թրէա- կան մրրաութեց, ընդդէմ ածային մեծվայելչութեն եղեալ յիմարութեց, որպէս հայհոյութի, յանդգնութի, են :

(20) Զօրաւորօքն անյաղթակաց : Անդայլթելի զօրաւորքն, կամ զօ- րութիք, մաթոր մաթակարարաց, մաքուր մտաւորութիք կամ պաշտօ- նէից ածուեդ : Զայս ոճ ոյլոր ևս վարէ ծը վարդապետս, 'ի գործա- կան անուն դոյականն՝ յարելով զածականն 'ի սեռական հոլով, և կամ ընդ հակառակն. տես 'ի բանն Բ. լուծ. 14. և սաղ. ծ. 13 :

(21) Աւաթէաւչն : Աստանօր կրկնելի է զօրութիւ բայն, կիրակոսա լիցին առաքեալքն աւետարանաւն, մարգարէքն՝ հին կտակարանօքն, աղօթք երջանկացն արդարոց՝ 'ի կարաբածի աասրն, զոր յերեկոյին, կամ 'ի կա- տարած կենաց նորեանց ընծայեցին քեզ, կամ աղօթք մարտիրոսացն մատուցեալք վասն հաւատացելոց 'ի ժամ նահատակութեն : Իսկ ասելն, թէ առաքեալք աւետարանաւն պահապան լիցին, և մարգարէք կտա- կարանօքն, նշանակէ թէ կամ զսրբազան գիրսն դնէր առ մահիճն, և կամ զբանս ինչ նոցա խորհելով մտանէր 'ի քուն :

(22) Երկիւղիւ րաթ թէդ : Ննջեցից հոգևոր երկիւղիւ, և ոչ մարմնակա- նաւ, թրթմութէ 'ի վերայ մեղացս : Զբանն րաթ թէդ մարթ է առնուլ 'ի վերայ յաջորդին, այսինքն Ք քեզ կամ լաւ Ած պտտմութիւ, որպէս առէ առաքեալն. ( Բ. կորն. Է. 9. 10 : )

(23) Երէ ճհաթութէ : Եթէ ննջեցից տխրութիւ սրտի կամ տարակուսա- նօք, թէ մի՞ արդեօք անդէպ ինչ անցցէ ընդ իս 'ի ժամ քնոյ, յարեայց հոգևոր ուրախութիւ՝ տեսանելով թէ ոչինչ 'ի կասկածելոցն պատա- հեաց : Եթէ ննջեցից մեղօք կամ ունելով զխեղս, առ զղջումն յանկողնի՝ որով կանգնեցայց անտի ազատ 'ի խղճէ մեղացն :

(24) Սրբովք զուարթնոցն դասուց : այսինքն հանդերձ սրբովք դասուք զաւարթնոցն : Առ ընդ հակառակն վերադրեալ ոճոյն 'ի ծ. 20. զա- ծականն դնէ 'ի գործիական հոլով, և զգոյականն 'ի սեռական հոլով :

¹ 'Ի ձայն երջանիկ ճարճատութե՝ ժամահարին խորհրդածութե. աղաղանս ետեալ ընդ կերպարանս թարգմանութեն։

# ԲԱՆ. ԴՃԲ.

ա. Գոհանամ զքէն բարեգութ, միայն մարդասէր, արարիչ երկնի և երկրի, որդի այ կենդանւոյ, ² այն ինչ զարթուցեալ անձկութեամբ սիրոյ քո յիշատակի՝ 'ի լռութիւն հնչման փայտից հրաւիրման։ Որով բախեալ ³ զձայնարձակութեանցն զազդողարան, սթափեցաք կանգնեցաք, 'ի վեր յարուցեալ 'ի մեռօրինակս թմբրմանէ. ուստի իբր կոչմամբ սփոփանաց բանի՝ բերեալ ձգեցաք 'ի ժամ պաշտաման օրհնաբանութե, յանդիման լինել քեզ ուրախութբ՝ հանդէպ հատուցմանս բեմի։

բ. Ահա փառք քեզ՝ անսահման անուն՝ և անբովանդակելի զօրութի, որ այսքանեօք հնարաւորութբք՝ ⁴ ընդ փրկութե իմում հոգացար. գոհաբանեալ՛ անեղծ իսկութի, որ կերպարանեցեր ⁵ հրաշիւք աստստին զհանդերձելոցն նմանութիւն, հանդարտ գործեաւ վայելչականաւ փայտի անօթոյ՝ առ քունս անյարիր՝ սաստիկս որոտացեր։ Որպէս թէ ընդ ծուլութես դանդաղութի զյանդիմանութիւն խրատուդ խառնեցեր. 'ի հայրենի սիրոյդ հեզութի՝ զուժգնութի ձայթմանն յարեցեր. ⁶ յընդոստ զարկուած երկուց միջնորդաց՝ մարդասիրապէս քաղցր անձրևեցեր. ոչ մեղմութբ ⁷ մեղմական վանդիւ նիրհմամբ ընկղմեցեր, և ոչ անխնամաբար ահաւորութբ զտառապեալ հոգիս զարհուրեցուցեր։ Ներադրական երկրպագութի ստեղծչիդ բոլորից, որ այժմէն ցուցեր համայն յայտնապէս՝ զօրինակ ահեղ բարբառոյն՝ մեծի աւուրն յարութե. կենդանացուցեր 'ի դադարմանէ ⁸ դժոխական անբանութէ. 'ի խնդիր ելեալ կոչեցեր զպակասամիտս՝ 'ի գինիդ ուրախութե. արարեր զոյն՝ լինել ⁹ հանդերձիչ անարատ հարսինն՝ առ սէր փեսայիդ. երկուցեր փոքր այս խթա-

նաւ՝ [10] զապարասանին զլիթխարուն․ լուծ ստուար
կրթութե՟ ստամբակին ուսոյ զայս իր գործեցեր․ վա֊
րապան վանից՝ չարախօսին կզակաց եդեալ կաղմե֊
ցեր։ Փառաւորեալ յաւէտ անբաւ բարձրութե՟ մե֊
ծիդ ա՟յ, որ փոխարկեցեր [11] զփայտին պարտիս՝ յա֊
զատու՟ն շնորհիդ կենաց․ իմաստնացուցեր վերստին
դարձեալ՝ զյիմարս ցնդեալ՝ հոգեւորական հանճա֊
րոյդ․ կարկառ կուճմամբ՝ զանբժշկութե՟ հարուա֊
ծոց օձին՝ առանց մուայման միշտ Թարգմանեցեր․
[12] ընդ երրորդութե՟դ գծագրութե՟՝ զկապն երեքկին՝
իմ ՟խասակարին 'ի կատարածին սուլմբ կրկնեցեր։

Գ․ Գովեստներբողից՝ բուրմամբ խնկոց վերառա֊
քեմ քեզ՝ ամենախնամ, զի 'ի ստապատիր կռոցն
բազմաստուածութե՟՝ [13] առաւել յաճախագունիւք
որսացար զանձն իմ պարտաւոր 'ի քո երկրպագու֊
թե՟․ խրոխտ և ահարկու նուիրեալ փայտիւս՝ զճշ֊
մարտութե՟ն քարոզեցեր․ մեծացուցեր այսր պատ֊
ճառաւ պատշաճականաւ՝ զնոր աւետարանութե՟դ
պատիւ։ Այն ինքն աղաղակ բարձրութե՟ գոչման
սպառազինութե՟դ քո՝ արքայ պետութե՟ց կայսերաց
երկրի տէր ք՟ս․ նշան խրախութե՟ աւարտման հան֊
դիսի մարտի քո՝ յ՟ս, յորում իմանալին փարաւոն
կապեալ ըմբռնեցաւ․ կափիչ հանապազորդեան՝ գլ֊
խոյ գագաթան հպարտացեալ չարագործին՝ շերտս
այս տաշեցեալ։ Աուլաւ գումարին 'ի պատերազմի
որդիք սիոնի ընդդէմ աշխարհակալին խաւարի․ [14]
տօն իմ ա՟ծաւանդ կրթութե՟ կարգեալ 'ի հեռուստ՝
այս դրօշուած իւղեալ՝ առանց հնանալոյ և կամ
խափանման․ նշանակիչ ժամանակի ապագայիցն հա֊
տուցման 'ի բացուստ անդր ծանուցմամբն․ [15] ազգա֊
կից համգունամման կենացն փայտի՝ որ 'ի դրախտիդ
ա՟յ․ կոչարան բարւոք հաւաքման փոյթ ընթացիւք՝ 'ի
յարկն օրհնութե՟․ պատկեր տեսակի [16] տնկոյն գի֊
տութե՟՝ 'ի կարգ ընտրութե՟ բարւոյն և չարի․ յիշա֊
տակ մեծ [17] տեառնագրութե՟ յերեսս կերպիս հոգւոյդ
սրբոյ՟ զնշան խաչիդ․ [18] նախաղեկոյց աւետամատոյց
փառաց գալստեան՝ 'ի դշխոյն պահեալ ՟որ Թագա֊
ւորիդ․ յորդորիչ քաջալերական՝ մաքրապարիցն

խրախճանութե՛. 19 անախտական սիրարկու՝ անձնա-
համբոյրն կցորդութե՛ շքեղաշուք քողընծայ ամե-
նածին կուսին Թագուհւոյ. յորդորիչ ծածուկ
պճնութե՛, որ 'ի հոգին է վայելչութի. 20 Նմանու-
թի պատգամին սինայ, որ 'ի տէրունեացն արտաքս
առաքիւր. միշտ օրհորդ պանծալի անշաղախ որդւոյ
մայր անարատից՝ սովաւ փառաշարդէր:

Դ. Գերագոյն քան զերկբոլլին 21 փողն եղջերեայ՝
զռնութին բեկխարայ սովաւ հարթեալ տապալե-
ցեր. քարինս արձակեցեր պարսիւս այսու փայտեայ՝
ընդդէմ գողիադու. 22 գայլսոն նորոգ կառուցեր՝
վկայ ահարկու կործանմանն սատանայի. զ'ի խոր ա-
ձեցեալ արմատս մեղացն՝ մեքենայիւս այսու խլե-
ցեր. զմռւացեալ գործոցս իմ պարտիս՝ այսր երախ-
տեօք ընդ իս կապեցեր: Ո՜ր եթէ այլ իմն ձայն
բանիդ ո՞յ անուանեմ նախապատուում եկաւորութե՛ն՝
ո՛չ սխալեմ, քան թէ ճշմարտեմ. 'ի տկար ամանս
այսնիւթոյ հոգեկրի՝ մեծութի գործոցդ յոյի՝ առա-
ւելապէս պատմեալ հռչակի. բիւրաւոր օգնակա-
նութիւս վերնապարգեւս և քոյնատուրս՝ 'ի յայսմ
անպատսպար ապաւինութէ՝ երկրականաց զարմա-
նագրեցեր:

Ե. Խոստովանեալ անունդ անքնին՝ մարդասիրիդ
բարեխնամութե՛, խնկեալ 23 խորհրդով սրբամաս-
նութե՛ անդծագրելի կերպարան լուսոյ. որ կրկնա-
ձիր նշանաւս այսու՝ նետս արձակեցեր հեռաձիգս
ձայնատրականս՝ օդաչուս և յարմարաթռիչս՝ ու-
նօղս յինքեան հոգի կենդանի. որով անսխալ հան-
դիպմամբ զնպատակն խաւարային աղեղնաւորին
գաղտնութե՛ յաւէտ կործանմամբ 'ի յետս ընկճե-
ցեր: Իբր 24 զպատնէշս ամրաբերձ բերդամարտու-
թե՛ կանգնաւորս անվայրարկելիս՝ աստուստ անտա-
նօր զկտեալ դիպուածս այս փայտի զարկման՝ հրեշ-
տակ կամարար՝ Թշնամւոյն ներհակ վերյուղարկե-
ցեր: Բանիւ հրամանի մեծիդ ակնարկութե՛ 25 օծու-
թե՛ շնորհիդ արեամբ քո խառնեալ՝ զայս եղջիւր
խեթկիչ՝ մոլի գոռոզին, իբր զխաչիդ փրկանակ յե-
սանեալ սրեցեր: 'Ի մեծ ազդմանէ այսր աղաղակի 26
դեր քան 'ի վերնոյն՝ քանդեալ վերացաւ դղանդն

ամլութե կամաց՝ անվայելուչ և ամեներկչոտ խենեշութե կարճամտին, ընդ հրեական սրտին իմաստից՝ և ստուերական տանն կործանութե։

Զ. Փառաբանութի քեզ վերընծայեմ՝ անմա՛հ Թագաւոր, զոր արարեր և հաստատեցեր աջովդ քո հզօր՝ աղաչեմ զքեզ՝ կրկի՛ն ներգործեա։ Ցնցուցեր սովաւ հերքեալ առ 'ի մէնջ [27] զխէթ դժնդակ խորամանկութե բանսարկուին, զտաժանական տապ մեղաց, զհողմն դառնութե չնչման խաբողին, զտարր արկածից մահու երկիւղի, զառ 'ի յօդից ցնդմանէ վնասակար բերմունս տխրեցուցիչս, զպյսախառն հեծեծութիւնս թալկացուցիչս։ Ցրուեա՛ վերստին քոյինազէն հեծանաւս՝ օժանդակեալ Թեօք նշանիդ՝ զամպս հրածինս, զորոտմունս կարկտաբերս, [28] զցաւագին ցոլմունս հրախաւար կեղծաւորութեան փչման՝ բազմոտանի վիշապին, զսուր սատակման, զճակատամարտ դիմեցման, [29] զյարուցելոյն 'ի վերայ վայրենական խորհրդոց զդիւացն կաքաւս։ Յորմէ զարհուրին յայսմ իրէ փոքուէ՝ տեղի տուեալ մեծաւ դողութբ, կիրթ իմն ծանօթութբ յայտնի գիտացեալ, թէ [30] յայս ազգ ձայնի՝ յաւնէ տէր 'ի դատաստան։ Իսկ խրախուսին յոգի արութբ՝ զրահեալ պնտապէս սուսերաւ հոգւոյն՝ [31] տծարեալ մարտիկք ամենայն՝ 'ի ձև կանոնի այսր յիշատակի, որ զամենափորձ հրոյն ընտրութենէ գոչմամբ անկերպագրելեաւ՝ համօրէն ազանց քարոզէ 'ի յօրինաւոր ասպարէզ երջանկաբար նահատակութեան։

Է. Տարաւ ահա՛ [32] փող աւագափող, համբարձաւ սովաւ տծ օրհնութբ. պատմեցաւ սովիմբ տմ երկրի. հնչեաց 'ի լսելիս բաժանման հեթանոսաց. ձայն պահապանաց մեծին զօրացաւ, ըստ բանին եսայեայ, և 'ի նոյն բարբառ առհասարակ ցնծացուք։ Ցնդեցան ջրոյն առակաւ՝ 'ի ձեռն սորին՝ թշնամիք խաչին. անպատուեցաւ ճաշակն պտղոյ [33] առաջին փայտին. տօնեցաւ նիւթս այս խորհրդական՝ կենաց անուանեալ. [34] անարգեցաւ երկաթ՝ առ 'ի պէտս պատերազմի. իբր զօրութի տն՝ [35] 'ի սանձս երիվարին մեծին նշանի՝ այս փայտ կենաձայն յարմարագրե-

ցաւ. ամփոփեցաւ օծեալս ցպով հովուին երկնայ-
նոյ՝ [36] սուր իշխանութեան մարդկային ձեռին: Ո՛չ
գծեաց 'ի քար տաճարին [37] մուրճ ինչ գործողի. իսկ
յա՟ծակերտս խորան՝ փայտս այս նուիրեալ ընդ խա-
չին թեւոց սլացեալ զօրէ: Ո՛չ 'ի գլուխս ամոցն, և
կամ յեօթնիցս եօթներորդս յոբելինիցն՝ յանկեան
ուրեք խափանմամբ փողէ, այլ ընդ ծագս տիեզե-
րաց՝ և ընդ ծիրս եզերաց՝ 'ի ծոցս ջուրց բազմութե՟
ծովուց և կղզեաց նոցա՝ յաճախ սաստկութ՟բ՝ անար-
գել ճայթմամբ իմն ա՟ծայնով հնչեցեալ աւետարա-
նէ: Կոտորեցան [38] սուսերք սատակողին՝ այս փայտի
ցուցմամբ, յանօգտակարէ անտի մեզ փոխաձևեալ
'ի խոփս և 'ի մանկաղս:

Ը. Ո՛չ [39] արձագանք արձանաց 'ի խորոց ինչ գան-
չութէ՝ խիստս առաքեցեալ, և ո՛չ դժնդակապէս,
ըստ իմաստակի ումեմն օտարի, զօդ վիրաւորեալ.
ո՛չ անախորժ սրութ՟բ ընդ ունկն մտեալ, և ո՛չ զա-
ման ուղղոյն անկամակութ՟բ չար թնդեցուցեալ, ո՛չ
ոսկերցն փուշ խրտուցման՝ յանձն բուսուցեալ, և
ո՛չ մտացն այլայլ ապշութ՟ի առաջի արկեալ. ո՛չ զան-
դակ նիւթոյ պղնձոյ դանդաչեցուցեալ, և ո՛չ քար
ընդ վիրգս սալի՝ առանց քաղցրութե՟ առ նոյն զար-
կուցեալ: Պարփակարան անխորտակելի նորոյս սիոն-
նի. մի սա՛ 'ի սպասուցն կազմուածոց արարչաւան-
դիցն գլխաւորաց, զոր եկեղեցականքս քրիստոնէից՝
ընդ ղևտականացն՝ զգուշաւորապէս [40] բարձէ՟ յան-
ձանձէն. օրինակ [41] ձայնի հրեշտակին, զոր առակօ-
ղին բան՝ հաւուն կոչմամբ այսու տեսակաւ զայն
տպաւորեաց. նո՛ր գործի շնորհի նուագարանաց ա-
ւետարանին՝ զարթուցիչ [42] հոգւոյն ա՟յ առ մեզ, քան
առ օրհնաբանութ՟ի սաղմոսարանին՝ 'ի վերայ եղի-
սէին: [43] Սկզբնապար նախընթացութե՟ աղէյարմար
ջութակաց՝ բարետաւիղ ողբերգարկութեանց՝ բա-
րացուցական բամբռան բառացի բարառնութե՟ց.
օրինակ նորոգ այլ իմն տեսակաւ առեալ մեզ՝ ընդ
հնոյն փոխանորդութ՟բ. ո՛չ հեթանոսօրէն [44] ուրուա-
ձայն հնչման, և կամ հրեաբար խակախորհութե՟,
զոր մարգարէն տերամբ ազդեցոյց՝ 'ի բա՛ց արա յի-
նէն, այլ զսա սիրեաց և կրկին պատուեաց մաքրա-

կան տաժանմամբ՝ ահարկու դիւաց և ամենայն չար պա-
տահարաց։

Թ. Եւ արդ՝ [45] ընկա՛լ օրհնութբ յարդեալ գովես-
տիւ զայս տուր սրբութեան իմ պահպանութեան և քո
փառաւորութեան. քո պաշտօն՝ և իմ գոհութի. [46] անա-
ղանդ արուեստ բարձրութեան արարչական փառաւո-
րութեանդ։ Մտցէ [47] ձայնդ այդ տարածեալ՝ ընդ պա-
տուաստ յօդիցս շաղկապութե, հանել՝ ՚ի հոգւոյս զպա-
տիրս դիւաց՝ և զմուտս անխծից՝ և մեղաց ապակա-
նութեան։ Երասցես լինել [48] զայս իր՝ նշանակիչ ջնար
ջահաւորական՝ անջրելի նամակ՝ ջատագով անխափա-
նական տնօրինականացդ։ Եհա պարգևեա՛ սմա՝ բա՛-
րեգութ, աղաչեմ հզօր՝ կրկին մեզ շնորհեա՛ պահ-
պանութեան ՚ի դիմամարտից՝ յաներևոյթ և յերևե-
լի։ Ընձեռեա՛ մեզ [49] ձեռն ամենալի, որ բանաս և
մատուցանես պատրաստաբար բաշխմամբ ՚ի մասունս
բազմապիսիս, օդոց քաղցրութեան, անձրևաց շահեկա-
նութեան։ Պակասեսցին քոյով հրամանաւ այսու բար-
բառով հողմ տապախառն, շնչումն ցաւաբեր, յար-
ձակմունք հինից չար խարդախութեանց. սովաւ խա-
փանեսցին ամենայն դիմամարտութիւնք զինուորութեանց
դժնեայ մատնչին. հալեսցին հատցին և մեռցին յեր-
ջանիկ ձայնէ՝ օծեալս այս փայտէ՝ որդն և ուտիչ, և
ամենայն նմանք սոցին, որ ՚ի մերոց մեղաց զօրացեալ՝
ընդ մեզ պատերազմին։ Երմատացո՛ մեզ [50] սովա-
տունկ երանութեան զյուսոյդ ՚ի քեզ մեծ պաշտպա-
նութի՝ ստեղծի՛չ բոլորից, տէր արարածոց, զայս ծառ-
սաբեկայ, որ ունի կախեալ ՚ի դիտակ ոստոյն՝ զա-
ւանդ ՚նբ նորոգ՝ այժմու փրկութեան ծաղկեալ քե՝
քո, ՚ի պտուղ կենաց անմահականաց։ Փախիցեն
յանհուն հեռաստան խորին խաւարի՝ այսր փայտի
փառաւորելոյ բարեգեկոյց ձայնարձակութբ [51] նե-
սաբք ներհակք ստապատիրն ստորնականաց՝ բազմա-
ձեռնեան խարդաւանողաց։ Մերժեսցին սովաւ ՚ի
յանդոց՝ [52] պտղատոհմական արօրադրութեանց մերոց
սահմանաց՝ և ՚ի քո մշակեալ կենդանի երկրէ՝ վէրք
վատնիչք, և հոյլք մորմոքեցուցիչք. կորեսցին սո-
վաւ՝ [53] յաւելուածք կրկնատդեղ և անվայելուչ պա-
տահմանց՝ ՚ի հնարից չարին ՚ի մեզ յայտնելոյ. խ-

կապէս վանեցի սովաւ, որք [54] յերկաքանչիւրոց ընութեցս մերոց վերերևին ինքնաստեղծութիք մերձաւոր դաւաճանողաց։ Փրկեա՛ տէր յո՛ աղաչեմ զքեզ, փրկեա՛ բարերար. կարկառեա՛ առ իս զաջդ ամենազօրդ, և օգնեալ ինձ սովաւ՝ զերծո՛ զիս յամենեցունց ընդդիմացողաց։

Ժ. Խառնեսցի միասցի հրաման քո 'ի սոյն՝ առ 'ի փոխարկել [55] զանդամանդեայ սիրտս յիմարեալ՝ 'ի քոյին բանիդ արդիւնաւորութի. հարցես մխեսցես [56] զայս նեցուկ հրաշից քումդ սքանչելեաց՝ 'ի սիրտս ծորեալս և յոդիս լքեալս, և հաստատեսցես կազմեալ պնդապէս՝ 'ի կայումն ուղիղ անսասանելի. իսկ [57] զանընդոստն կակղացուսցես զարթնուլ և զգաստ լինել յոգի հեզութե՝ ածաւանդ քո պատուիրանիդ, որպէս զպօղոսն և զմատթէոսն։ Յիշեցո՛ մարդասէր պատուեալս այս փայտիւ՝ զերախտիս խաչիդ, որով զանճառումն ներգործեցեր. բարձ յինէն՝ կեցուցիչ, զվտանգ պարտեացս՝ [58] պանծալի լծակօք ամբառնալեաց նոր տապանակիդ։ Բացցին կամօք քո հզօր՝ 'ի յայս ձայն կենաց՝ լսելիք սրտից յամառեցելոց. լուիցեն յայս մեծի բարութե քումդ ակնարկութե՝ ականջք խլից. պարզեսցին 'ի ձեռն սորին՝ լեզուք համրացելոց. լուսաւորեսցին 'ի սոյն՝ տեսարանք աչաց, հայել մաքրապէս 'ի քեզ պշուցեալ անայլայլաբար. զղջասցին դարձցին կազդուրեալ [59] կամք յափրացելոց. ընձեռեալ տացես տէր՝ տագնապելոյս անձրև արտասուաց։ Եղիցի քև սա՛ մեզ՝ լուր ցնծութե, ձայն ուրախութե, բարբառ բերկրութե, [60] նուագ հանգստեան, նիւթ երանութե, պատճառ փրկութե, առիթ քաւութեան, մերժումն վշտաց [61] խզումն խեղդմանց, ընդարձակութի նեղուեց, համառօտումն խեթմանց, հալածումն հեծութեց, թեթևութի թառաչմանց, յապահովութի կարեաց, կարգադրութի կրից, սփոփութի վհատմանց, բժըշկութի ցաւոց, տևականութի հեղգութեց, ուշադրութի անտեսից։

ԺԱ. 'Ի յայս [62] կամուրջ ցանկալի անխոտոր և անխոտորնակ, և 'ի վերնաշաւիղ բարձրաբերձ սրբահետ սանդուղ երկնաչու, առ հայր քո օրհնաբան

աՀաւոր անուն՝ ձգեալ մատուցեմ՝ բարերար, Հոգւոյդ առաջնորդութեամբ միանալ 'ի քեզ անընդմիջելի. ուր և սէր միոյ՝ միայնոյ և միասնական էութեանդ՝ և անեղծ արարչութեանդ 'ի կենդանեաց և յանշնչականաց Հաստեղոց՝ վայելչական գոՀութիւն փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն :

---

(1) 'Ի ԺՈՅՓՆ ԷՐՉՄՆԷԻ : Յաղագս օրՀնեալ փայտին՝ որ գործի լինի Հոգևոր բարեբաստութեան՝ Հակառակ փայտին անիծից : ԾԱՃԱՀԱՐԻՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԷ, խորՀրդաւոր ժամաՀարին, այսինքն կոչնակին, որ ունի զխորՀուրդ յետին փողոյն. կամ ժամաՀարին՝ որ Հրաւիրէ 'ի սրբազան պաշտամունս : ԱՂԱՂԱՆՈ ԷԴԷԱՆ, աղօթքս կարգեցաւ ընդ ՀԷՐԴՈՒՐԱՆ ԲՈՒՐԳՄԱՆՈՒԹԷՆ, Հանդերձ տեսութիւ մեկնութեան, կամ ըստ օրինակի բացայայտութեան : Այս մակագիր թուի եդեալ 'ի սէր վարդապետէն, որպէս և ոճն ցուցանէ : Իսկ թէ արդեօք լինքն եդ զայս ճառ 'ի կարգ աղօթիցս, թէ յայլոց եդաւ, չէ յայտնի. զի մեր ընտիր օրինակն 'ի յիշատակարանի անդ՝ թուէ ղդ աղօթս, և ընդ թիւ նոցա առէ՝ յաւելան բանքն որ վասն ժամաՀարին, և վասն սրբարար Մեռոնին : Այս ինչ յայտնի երևի, զի զերկուսին զայսոսիկ բանս արար նը վարդապետն ընդդէմ բարբանջմանցն թոնդրակեցւոց. (զորոց տես 'ի բանն Հե. լծ. 39 :) Եւ զի աղօթական ձևով արար զայնս, նմին իրի այլք թերևս 'ի կարգ աղօթիցն գրեցին, յարմար դատելով զնոյն երեկոյեան աղօթիցն դնել զայս՝ իբրև առաւօտեան : Եւ չեն ինչ զարմանք՝ թէ թոնդրակեցիք արՀամարՀէին զամբոխութիւ ժամաՀարին. քանզի և յարևմուտս երևեցան աղանդաւորք, որք զՆշխարՀս զանգակաց արՀամարՀէին, փողս սատանայի կոչելով :

(2) ԱՅՆ ԲՆՈՒԶՈՒՐԼՈՒՉԷԱՆ : Նորոգ զարթուցեալք փափաքանօք սիրոյ քո, 'ի ՆՐՈՒԹԷ ՀՆՈՒՄԱՆ, 'ի լուր, կամ լսելով զՆշխարՀ փայտիդ Հրաւիրման 'ի պաշտօն քո :

(3) ՉՅԱՅՆՈՒՐՑԱԿՈՒԼԷՑՆ ՂՈՒՂՈՒՂՈՒՐԱՆ : Զանելիքս՝ որ է տեղի աղդման, կամ զգացող ձայնից՝ բաղխեցեր ժամաՀարաւն, որով զգաստացաք և յարեաք 'ի մեռելակերպ թմրութենէ քնոյն. յանդիման լինել քեզ առաջի ՀԱՓՈՒՉՄԱՆ ԲԷՄԻ, արքունական բեմիս, կամ աթենիս՝ ուր մեք զնորՀակալութիւնս և զայլ պաշտօն ծառայութեանս մերոյ Հատուցանեմք քեզ, և դու ըստ քում առատութեան՝ զվարձս աշխատութեան մեր Հատուցանես :

(4) ԸՆՏ ՖԸՖՈՒԼԷ : Այսքան զարմանալի միջնորդօք Հոգացար վն փրկութեան իմոյ :

(5) ՀՐԱՉԻՒՏ ԱՈՓՈՓԻՆ : Զարմանալի օրինակաւ աստէն կամ այժմէն ձևացուցեր ՂՀԱՆՏԷՐՉԷԼՈՅՆ, զաղագայլիցն նմանութիւ. զի Հանդարտ գործեաւ ժամաՀարին՝ ԱՌ ՏԱՆՈ ԱՆՅԱՐԻՐ, առ անկանգնելի խոր քունս իմ ուժգին որոտացեր, որպէս առ մեռեալսն 'ի կատարածի աշխարՀիս որոտալոյ ես գալըրիելեան փողոյն. ուստի ճայթմամբ ձայնին՝ զծուլութիւնս իմ յանդիմանեցեր. իսկ փայտեայ՝ և ոչ երկաթի գործեաւն՝ զՀեզութիւ քո ցուցեր : Հին լծ. ասա զբառն ԱՆՅԱՐԻՐ մեկնէ՝ անյարմար. զի առէ՝ քունն անյարմար է բանականի : Սակայն աղդեցաք 'ի բանն Ժդ. լծ. 3. թէ այս բառ նշանակէ՝ անկանգնելի. վասն որոյ ոչ միայն մեւս նշանա-

կութիւն անյարմար է բանին, այլ և տուեալ պատճառն․ զի մարդս ոչ է լոկ բանական, այլև կենդանի, որում յարմարի քունն․ ուստի և նբ վարդապետս 'ի վերադրին (բան ծր․ 1․) կոչեաց զնծ․ հնարէ Նէրհման, յարմարէն էնոյ, պարգևէն ննջման ։

(6) Յետ սուրբ զարթուած ։ Ընդդատուցիչ զարկուածով Երեկոյ Միջօրէ, այսինքն տախտակին և Թակաղին, այն է՝ փայտեայ կոչնին․ կմ, եր կուց կռանաց ընդդատ հարմանքին անձրևեցեր առ ի զղղորմութին քո, որպէս բաղխմամբ ամպոյն զքնական անձրևն շնորհես ։ Ոմանք զասեն, Երեկոյ Միջօրէ, մեկնեցին՝ զմիջինն երկուց ծայրից՝ ոչ խիստ, և ոչ մեղմ․ բայց այս օտար է 'ի գրոյն ։

(7) Մեղմական Հանգիս ։ Ո՛չ փաղաքշական բանիւ կամ ձայնիւ 'ի քուն ընկղմեցեր, որպէս աղայոց առնեն յորոցին․ և ոչ խառութբ ահաւոր ձայնիւ զարհուրեցուցեր, որպէս գերեաց առնեն ։ Մարթ է դարձեալ զերկուսին ևս իմանալ 'ի վերայ ձայնի ժամահարին, իբր զի հնչումն նորա ոչ այնչափ մեղմ է, որով առաւել ընկղմէր 'ի քուն՝ քան թէ զարթու ցանէր․ և ոչ այնչափ սաստիկ՝ որով 'ի զարթուցանելն զարհուրեցուցա նէր ևս ։

(8) Դժողական անէանութենէ ։ Յարուցեր զմեզ 'ի դադարմանէ գերեզ մանական անզգայութեն, այսինքն Թմրութեն որ յանկողնի, որ գերեզ մանի նման է ։ Եւ կոչեցեր զԹմբեալսն քնով 'ի գէնէտ աւրախաւթէ, 'ի ժամերգութի, 'ի սաղմոսերգութի, որ գնի է ուրախացուցիչ ածա պաշտից ։ Յարմարէ զբանն առակաց․ Թ․ 4․ 5 ։

(9) Հանդէրձէն անարար ։ Զարթացուցիչ ժամահարն արարեր պատրաս տող եկեղեցւոյ 'ի պաշտօն փեսային ։

(10) Զադարդանէն ըլլելանութէ ։ Փայտիւ կոչնակիս՝ իբրև փոքր խԹա նաւ (մահմուզով) սարսեցուցեր զանսանձ գիւլին զահագին մեծութին ։ Եւ արարեր զսա իբրև Թանձր լուծ նուաճելոյ զուս ապստամբն սատա նայի․ և իբրև Հարուած Հանէ, օղ զամէջ կզակաց սատանայի ։ Բայց զերեսին զայս բան մարթ է 'ի վերայ մարդկան իմանալ․ որպէս Թէ կոչնակաւս իբր խԹանաւ շարժեցեր զանհաւանան 'ի պաշտօն ած, և իբրև լծով կրթութբ զուս հեղգացելոյն ծանրացուցեր․ և իբրև կապ բերանոյ արարեր չարախօս Թոնդրակեցւոյն, որք արհամարհեն զժա մահարս ։

(11) Զքայրէն պարտէն ։ Զպարախն՝ որով եղև գործի խաբէութե եւայի, փոխարկեցեր յաղԹութի քո շնորհիդ, առնելով զայն՝ գործի ածպաշ տութե․ և որ առաջին փայտիւն յիմարեցաք, սովաւ իմաստնացուցեր զմեզ հոգևոր հանճարով ։ Խարխաւ խաձմաճ, այսինքն կարկառմամբ կռա նին հնչեցուցանելովն, կամ բաղխելով զտախտակն՝ զանբժշկելի հա րուածս օձին անմուաց մեզ ծանուցեր․ իբրև Թէ՝ օձն փայտիւ խա բելով զմեզ, դու ևս հարմամբ կոչնակիս միշտ զգլուխ նորա հար կանես ։

(12) Ընդ Երրորդութէ ։ 'Ի գծագրեն զանուն նբ Երրորդութեանդ 'ի դէմս իմ՝ յորժամ զարԹնում ձայնիւ ժամահարին, դու զերեքկին կմ զանլոյծ կապանս սատանայի՝ որով 'ի խափարածէն կապեալ է, այսու Խրխէշէր, կմ հաստատեցեր ։ Ոմանք Խաղ Երէ+կէն իմացան զերիս շուանան՝ որովք կախի կոչնակն, և համարին զայն 'ի նմանութի կապից սատա նայի ։ Բայց լաւ ևս լոտ գրոյն այլ իմաստ ունի․ զի սովորուե է 'ի հար կանել զժամահարն՝ Թէ 'ի սկզբան և Թէ 'ի կատարածին՝ միով կռա նաւ երիցս կոփել, 'ի նշանակ նբ Երրորդութե․ ուստի 'ի կատարածին ևս կրկնելով զերիցս կոփումն, այսու կրկնեցեր առ է՝ զերեքկին կամ զանլուծանելի կապն սատանայի ։ Այս սովորութի կոփելոյ երիցս 'ի

սկզբան և 'ի կատարածին՝ պահի մինչև ցայժմ նաև 'ի մէջ յունաց :

(13) Աստուէլ յաճախագոյնիւ : 'ի խաբէական պաշտամանէ կռոց՝ ա_ռնուել բազմագոյն կամ զօրագոյն գործեօք և պտուղաստականօք որսա_ցոյ զնա 'ի քո երկրպագութի. զի որպէս նաբուգոդոնոսոր ձայնիւ փո_ղոյ և այլոց պտուղաստականաց ազդ առնէր ամենայն ազգաց երկիր պա_գանել խորագործ արձանին, նոյնպ դու բաց յայլոց հոգևոր կամ մարմ_նաւոր գործեաց ետուր մեզ զժամանակս՝ հրաւիրակ 'ի քո երկրպագու_թի : Եւ նաւիրեալ ճայփնս. այսինքն օրհնեալ փայտիւս, (ըստ որում գոյ 'ի մաշտոցն կանոն օրհնութեան ժամանակին.) 'ի հարկանել նորա՝ ձայնարտութի քրիստոնէական կրօնից հնչակի. և սպասիւ նորոյ աւետա_րանիս հնչէ 'ի լսելիս ամենեցուն : Եւ է իբրև աղաղակ բարձրացեալ, բարձ_րաձայն բարբառ փողոյ, 'ի նշան սպառազինելոյ արքային քո, և խմբե_լոյ զօրաց նորա պաշտօնէից եկեղեցւոյ ընդդէմ սատանայի. և նշան խրա_խուսանաց, ուրախութե 'ի վերայ յաղթութե մարտին քո ընդդէմ ան_մարմին փարաւոնի, ուպ թմբուկն մարիամու՝ յետ յաղթութեն ընդէմ մարմնաւոր փարաւոնին : Եւ է իբր հանապազորդ ծեծօղ գլխոյն սատա_նայի՝ ընդդէմ նորա, սախտակս. կամ փայտեայ կոչնն :

(14) Տօն Տն : 3 օրին. տօն Տն, որ առնուել յարմար է. զի անհարկէ յարձանն՝ զոր եօծ յակոբ 'ի տեղւոջ տեսլեանն, և զտեղին կոչեաց՝ բե_թէլ, այսինքն տուն այ : (Ծննդ. իը. 18. 19. և լե. 7 :) Այսպէս և ժամանակն՝ ուրագաւ գրօշեալ, և օծեալ մեռոնաւ 'ի չորս ծակսն, եղև իբրև տուն Աստուծոյ նիւթական, ամբայլին պաշտաման. որոյ հնչմամբն անդր ժողովլին աղօթաւորք, որպէս խորայէլայիքն 'ի բեթէլ. նորանոր 'ի հեռաստ, օրինակեալ կանխաւ յարձանն յակոբայ. տաճար հնուոյ. զի փայտն օծեալ անփոխելի մնայ, և նշանակէ զանխափան տևողութի պաշտամանն այ : Նշանակեալ ժամանակի, զձայնն 'ի հեռաւորս ծանուցա_նելովն՝ նշանակէ զժամանակ ապագայ հաստուցմանն, կամ դատաստա_նին : Օծութի ժամանակին է հին արարողութի, որպէս աւանդէն հին և ձեռագիր մաշտոցք. (զոր 'ի տպագրեալսն կրճատելով 'ի բաց թո_ղեալ են.) քանզի և առ լատինս մինչև ցայժմ սովորութի է օծանել զզանգակն, զոր 'ի ներքոյ կողմանէն 'ի չորս տեղիս մեռոնեն խաչաձև. և արտաքուստ յեօթն տեղիս օծանեն այլ օրհնեալ իւղով. և զայս ա_րարողութի կոչեն Մկրտութի զանգակի :

(15) Աւգակեա : Նմանակից կենաց ծառոյն՝ թէ բնութե, փայտ գոլով և ինքն. և թէ գործովք, զի կոչէ հաւաքել յեկեղեցին, որպէս կենաց ծառն հրաւիրէր 'ի դրախտն :

(16) Տնկոյն գիտութե : Նմանութի ծառոյն գիտութե, որով լինէր ընտ_րութիւն բարւոյն և չարին. այսպէս ժամանակաւն ճանաչին փոյթքն և ծոյլքն 'ի պաշտօն այ :

(17) Տէառնագրութե : Յիշատակիչ տեառնագրելոյ 'ի դէմս իմ շնչեան խա_չիւ. զի ձայն ժամանակին յիշեցուցանէ խաչակնքել զդէմս. մանաւանդ զի և հարկանօղն 'ի սկսանելն՝ Յանուն հօր ասէ, և երից կոփէ միով կռանաւն :

(18) Նախագէտեալ : Ժամանակն է յառաջագոյն ծանուցանօղ և իբր նախընթաց փառաւոր գալստեան քո՝ 'ի դատաստանի, առ եկեղեցին, որ սպա_հեալ է ընդ թագաւորին, իբր զի ազդ առնէ ժողովել 'ի ժամերգութի, որում յաջորդէ գալուստ քո 'ի ընդ պատարագին՝ յարժանաւոր հաղոր_դութի հաւատացելոց :

(19) Անտիփոնա մերակոս : Որպէս յորդորիչ է նախերգացեալ, մի օրին. նախերգեցողի. եկեղեցականաց և կրօնաւորաց 'ի պաշտօն այ, սոյնպէս անախտ սիրարկու է անխնամ ժողովրդեան, հոգևոր համբուրիւ միա_

նալոյ ընդ քնի, ընեղագուտ տողընթայ վայելուչ քողարկեալ կուսանացն կամ հաւատաւորաց · որք 'ի սաղմոսերգութիւն ժողովին՝ զատ յարանց · և կոչին անծանօթն, հոգևոր ծննդեամբ և աղօթիւք բազում որդիս ծնանելով նոյ · և Բագրատունի, իբրև Թագաւորին քնի հարսնացեալք · որոց ձայն ժամահարին լինի յարուցիչ ծածուկ պատուիրէ, հոգևոր զարդարանաց սպատրաստելոյ յաղօթս, և ոչ մարմնական զարդուք, որպէս աշխարհականաց է սովորութիւն: Այսպէս խմանալ՝ առաւել յարմար թուի կարգի բանին, քան թէ իբրև զատ հատուած բանի առնուլ զասելն, ընեղագուտ տողընթայ անծանօթն կոչի · որպէս թէ՝ ընծայօղ կամ

քողարկու կուսին եկեղեցւոյ:

(20) Նմանութիւն պատկերին: Բաղձանօղ ձայն ժամահարին է պատգամ հրաւիրման առ նա, իբրև զմնեական պատգամս տուեալս ձայնիւ փողոյն, որ 'ի Թուականս, 'ի տեղւոյն՝ ուր նա կայր, արտաքս հնչէր, ( Եփս · ԺԹ · 16 · ևն: ) Որմանք 'ի Թուականս խմացան՝ 'ի միջոյնէ հրեշտակապետն · իբր զի հրեշտակքն՝ տէրունի զօրութիւնք ասին: Բայց օտար է · այլ խմանի աստ ըստ յաճախ կիրառութեան յունաց և լատինացւոց, որք զտաճարին կամ զուեղխ սրբեալս նոյ կոչեն Թուական, կամ փէրոնակոնտ · որպէս նովին մօտք կայ 'ի Պլատոնից գիրք ա · 5 · 'ի բնաբանին · * 'Ի քանիս՞ ասուրս արժան է մտանել 'ի տէրունիսն: || Այլ և նոյն անուն 'ի կիր առեալ է 'ի ժողովն Անկիւրիայ · կան · ԺԵ · 'ի Նէոկեսարիայն · կան · Ե · 'ի Լաւոդիկեայն · կան · ԽԷ: Եւ զպատճառ այսպիսում կոչման յայտ առնէ Եւսեբի, 'ի ներբող Կոստանդիանու · գլ · ԺԷ, ասելով թէ յանմնեցունց տեառնէն ընկալան զանուանակոչութիւն: Արդ՝ որպէս 'ի պատրաստութիւն սմնեական պատգամացն լուացաւ ժողովուրդն, (անդ · 14 ·) այսպէս 'ի ձայն ժամահարին՝ մինչ օրհներ, մինչ պանծալի եկեղեցին՝ անարատ որդւոց մայր՝ տաճարեցէր, զարդարիւր հոգևորապէս · մի օրին · տաճարեցէր նման այլոց յաջորդ բանիցն,

պատարագեցէր, արդարացէր, կատարեցէր ևն:

(21) Փոքր Եղջերեայ · 2 օրին · Մեծ Եղջերեայ · և մարթ է բացատրել · առաւել ստուգապէս քան թէ զերկրորդ անուն եղջերեայ փողոյն՝ զբանութիւն բեխարայ տապալեցեր ժամահարաւս:

(22) Գոյնոյն: Այսինքն նկզակ, որով ազդ արար յեսու դարանակալացն՝ յարձակիլ 'ի կործանումն գայեաց: ( յեսու · Ը · 18: ) Այսպէս և ժամահարն ազդ առնէ ժողովրդեան յառնել 'ի կործանումն սատանայի · զի զարմասս մեղացն՝ որ են հեղգութիւն յնծայլին պաշտամանս, և մոռացութիւն գործոց մերոց, խլէ սոխալեղոյն 'ի ժամերգութիւն · ուր նծայլին գրոց բանիւքն ամենայն գործոյ իմ պարտիս, զմեղս իմ, կամ զպարտս բարի գործոց՝ զորս մոռացեալ եմ, յիշեցուցանէ: Վասն որոյ եթէ զժամահարս՝ այլ ինքն յոյն բանիւ կոչիցեմ իբրև զկարապետն յաղթանակս, ոչ սխալեմ · զի այս տկար առանովս նորոյ հոգեւոր, նշանական իրի՝ որ օրհնութեամբն կրէ զզօրութիւն հոգևոր, առաւելապէս պատմի մեծութեան գործոց քոց · հրաւիրելով զժողովուրդն 'ի լուր աւետարանին, յորում առաւելապէս ծանուցանին գործք քո, քան յոլհաննու քարոզութեան: Եւ զի յոլհաննէս նշան ինչ ոչ արար, բայց դու 'ի յայտ անպատմելի արարեալ, այսու տկար ապաստանաւ՝ երկրաւորացս բազում օգնականութիւն զարմանալիս գործեցեր · զի հարմամբ կոչնակին, որպէս և հնչմամբ զանգակաց՝ պահպանիւք 'ի մրրկաց, 'ի կայծակաց, 'ի կարկտէ, 'ի ժանտախտէ · ևն · զորս և յիշէ զննի · համար Ը · Թ · Ժ · այլ և աղօթք օրհնութեան ժամահարին զնոյնս հայցեն, որպէս տեսանի 'ի

մաշտոցն:

(23) Խորհրդահրեմանութէ: Անուանդ քո քո օրհնեալ է խորհրդական

բանիւ սրբերգութե՛, որում մասնակից են երեք անձինքն եւս ։ անգծա-գրէմ, աննկարելի, կամ իմանալի կերպարան լուսոյ ։ Որ իրխայիր նշա-նաւոր, յետ խաչին երկրորդ անգամ շնորհեալ փայտիւս, կամ փայ-տիւս՝ որ կրկին ձիրս հոգւոյ և մարմնոյ ներգործէ, հնչէցեր ձայնս, որք լիր նեաս շառաչօղս՝ օգտնոցս յարմարապէս թռուցեալ հոգւով զօրութե՛ քո, հարկանեն զնպատակն սատանայի՝ զծուլութի, զանկրօ-նութի, զոգխոութի մծայնոց, եւն ։

(24) Զգաֆնէւ ։ Զայս 'ի բացառական հոլով սպառ է իմանալ․ քս իբրև յամրակառոյց կանգնեալ, անշայրարհէւէ, անկործանելի պատնի-շաց, (պէտէն, մեթերիզ․) աափաափ, 'ի տախտակէ ժամահարին, կմ 'ի տեղւոյն՝ ուր հարկանի, գյաէաւ ֆէգաւածա, զբախեալ հարուածն այս փայտի՝ իբրև պատգամաւոր քո առաքեցեր ընդդէմ թշնամւոյն սատա-նայի ։

(25) Օծաւթէ ձարհէֆ ։ 'Ի ձեռն մեռոնի օծանելոյն, կամ թէ հոգևոր շնորհդ իբրև օծումն լինելով այսմ փայտի, արէաժէ ֆա խաանէաւ, ոչ եթէ խորհրդական արեամբն քո խառնեալ առէ զմեռոնն, կամ օծեալ զփայտն, այլ թէ զօրութի արեանն քո խառնեալ 'ի յօծումն և 'ի փայտն, իբրև եղջիւր խէթկէւ, հարկանօղ սատանայի՝ ըստ նմանութեան խաչափայտին, չէաանէաւ, օծմամբն իբրև 'ի յեսանի սրեցեր ։ Այսու բա-նիւ 'ի ժամահարն յարմարէ զասացեալն յաղագս սեղանոյ օրինացն, և եղջերաց նորա, զոր ըստ հրամանին այ պարտ էր օծանել իւղով, և սրբել արեամբ ։ (Ելից իթ․ 21 ։ ղևտ․ թ․ 9 ։ եբրայ․ թ․ 19․ 21․ 22։)

(26) Գւէր ֆան 'ի վէրնօյն ։ Առաւել 'ի ձայնէ ժամահարին վերացա-գրանդն, քան 'ի ձայնէ սերովբէիցն ըստ տեսլեանն եսայեայ․ (զ․ 4․) զի անդ վերացումն դրանդւոյն, այսինքն վերին սեմոցն՝ նշանակէր սաէ՝ զկործանումն հրէական իմաստիցն, և ստուերական տան հին օրինաց․ իսկ 'ի ձայն ժամահարին բառնի դրանդն ամբաէ ֆամաց, այսինքն պնդու-թի կամաց՝ անարժան և ամենիրիչոա խէնէչաւթէ, քս դանդաղութեան կմ վասուն կարճամիտ ծուլին ։ Բառս խէնէչաւթէ, 'ի գիրս Պլատոյից բաղում անգամ դնի փոխանակ վասութե, հեղգութե, եւն ։ Իսկ բառն՝ անշայէչաւ, 'ի լաւ օրինակ ինչ դնի՝ անշայէչաւրչ․ իբրև թէ՝ անվայել լուրջ․ քս զուրկ 'ի լրջութէ, կամ 'ի զուարթութէ, անյօժար ։

(27) Զխէթ ֆծնֆաֆ ։ Զցժնդակ ցաւս, կամ զորոգայթ, կամ զթըշ-նամութի, եւն ։ Զայս՝ և զհետևեալն մարթ է իմանալ 'ի վերայ մարմ-նաւոր և հոգևոր փորձանաց․ յորոց զերծանիմք կամ նոյն իսկ հարմամբ ժամահարին, և կամ ձայնիւ նորա յաղօթս և 'ի պաշտօն այ յորդորե-լովս ։ ղաաշր արհածէօ, զպատճառ մահաբեր փորձանաց ։ ղաա 'ի յօֆէօ․ 'ի ցնդմանէ կամ 'ի թուլուէ յօդուածոյ եղեալ մխասակար գխուածս։ ղաշաախաան, ննդութե կամ գործակցութե գիւլին եղեալ հառաչմունս նուաղեցուցիչս․ որպէս յորժամ լինի 'ի սուգ մեռելոց, կմ 'ի կորստեան այլ իրաց ։ Զայսպիսի արկածս սաէ՝ ձայնիւ ժամահարին բազում ան-գամ անցուցեր 'ի մէնջ․ արդ՝ զոր նախ արարեր, աղաչեմ զքեզ՝ դար-ձեալ ներգործեա․ ցրուեա վերստին ֆօյէնաջէն հէծանաաա, քո զօրութե՛ զինուորեալ փայտիւս ժամահարին՝ համդերձ օգնականութեամբ նշանի խաչի ։

(28) Զօաաֆէն օղմաան ։ Զցաւեցուցիչ աչաց, կամ զերկիւղալի ցու-մունս գիշերայինս, որք առէպ առէպ փայլատակեն 'ի խաւարային ամ-պոց, և են օրինակք հրախաաար կէղծաարաթէ սատանայի․ որ խաւա-րով ձևանայ 'ի լոյս հրեղէն իբրև հրեշտակ՝ պատրողական փչմամբ խորհրդոյ ։

(29) Զյարաօէլօյ ։ 2 օրին․ ղյարաօէլօյ ։ եթէ այսպէս եղական առ-

ցի, հայի առ բառն՝ դիճեյան. ըստ զճակատամարտ դիմեցմանն 'ի վերայ յարուցելոյն. բայց յոյնական եղեալ. հայի առ բառն խորհրդոյ. այսինքն դիմեցման վայրենի խորհրդոյն ի վերայ յարուցելոց, կամ յարձակելոց. իսկ յաջորդն՝ ուդիւայն ջոխաւ, զոր հատուած է. ըստ ցրուեա զկայթմունս դիւացն, որք խնդան ընդ վնաս մեր՝ հոգւոյ և մարմնոյ. կամ յորդորամիտս առնելով զմեզ 'ի պաշտօն քո՝ ցրուեա զուրախութեն դիւացն, որք խնդան ընդ հեղգութեն մեր:

(30) Յոյս ուղղ յոյնի: Քաջ փորձիւ գիտեն դևք, թէ ձայնիւ ժամահարին յառնէ տր 'ի դատաստան, զդևսն սանձելով, զաղերգսն 'ի դրկաց նոցա հանելով, և զպաշտօնեայսն պսակելով, ևն. կամ, այսու ձայնիւ ըստ որում օրինակ է յետին փողոյն, 'ի միտ առնուն դևք զգալուստ տն 'ի դատաստան:

(31) Աճարեալ մարթիք: Պաշտօնեայք եկեղեցւոյ ըստ իւրաքանչիւր կարգի՝ հոգևորապէս զինուորին: 'Ի յի ճանանի, ըստ ծանուցանելոյ ժամահարին. որ զինուորութենէ հրոյ դատաստանին քարոզէ ամենեցուն՝ գոչմամբ անէերդատրէնմաո, անյօգուոր ձայնիւ, 'ի յօրինաւոր աղադրէն, յեկեղեցւոջ՝ որ է օրինաւոր տեղի պատերազմելոյ ընդ դիւաց, և երջանկաբար նահատակելոյ յաղթապաշտութե:

(32) Փող ուսգանող: Փող մեծաձայն: Աստանօր զձայնս սաղմոսին, (խղ. 6.) և եսայեայ (ծը. 8.) յարմարէ հարման ժամահարին, և հաւաքման 'ի պաշտօն նոյ: Այսու ցնծան պաշտօնեայք նոյ 'ի բարբառ ժամահարին: Իսկ թշնամիք խաչին դևք կամ անհաւանք՝ ցրուեցան Հրոյն օրինակաւ, որպէս դաւաղանաւ մովսեսի 'ի ջուրս ծովու եգիպտացւոցն:

(33) Աուջին ֆայթն: Ցաւոյն գիտութե ճաշակումն անարգեցաւ 'ի ճաշակելն զպտուղ փայտի ժամահարին, զի սա ձայնիւն լինի առիթ ճշմարիտ գիտութե. իսկ այն եղև առիթ յիմարութե: Փռնեյա, մեծարեցաւ խորհրդական փայտս ժամահարին՝ ձեռնոց անուանեալ. ըստ բանին առակ. զի իբրև զծառն կենաց եղև գործի հոգևոր կենաց. տես 'ի վեր. լծ. 11. 15. 16:

(34) Անարգելայու Երեաթ: 'Ի գալ ժամահարին ոչ ևս մխոյ եղև երկաթ պատերազմի. տես զինի. լու. 38:

(35) 'Ի սոնյա Երեվարեն: Յարմարէ զձայնն զաքար. (ժգ. 20.) որպէս թէ փայտ ժամահարին եղև սրբութի, կամ նուիրեալ տն, 'ի սանձ երիվարին քի, այսինքն պաշտօնէից եկեղեցւոյ, նուաճելով զաղերգութիւն նոցա:

(36) Սուր Իշխանուն: Օծեալ փայտս՝ իբր գաւազան հովուին քի, հեռացոյց զսուր թշնամեաց. որպէս ցուպն յակոբայ՝ զսուր եսաւայ, կամ ցուպն դաւթի առ զէնս գողիաթու:

(37) Մուրճ ինչ գործող: 'Ի քարինս տաճարին՝ 'ի կոփելն անդ ոչ գծեաց կամ կոփեաց մուրճ (ըստ չէքին) քարակոփի. զի յառաջագոյն կոփեալ էին. (գ. թագ. Ե. 18:) իսկ յեկեղեցւոջ օրհնեալ ժամահարս՝ իբրև զթևս ոք խաչին համարձակ իշխէ: Այսու կրկին առաւելութիւ ակնարկէ. մի՝ զի մուրճն երկաթի ոչ կարաց ազդել 'ի սիրտ հրէից, իսկ փայտակերտ ժամահարս զօրեղապէս ազդէ 'ի քրիստոնեայս. երկրորդ, զի մուրճն չեղև արժանի հնչել 'ի տաւերական տաճարին, իսկ ժամահարս իբրև զփայտ խաչին համարձակ հնչէ 'ի ճշմարիտ եկեղեցւոջ: Եւ հնչէ՝ ոչ յամսագլուխս միայն, որպէս առ հրէայս փողն ազդեցութե. և կամ յեօբնիյո եօբներորդ յոբելինին, այսինքն յեօթն եօթներորդ ամս, որ լինի 49. որում յաջորդ յիսներորդ ամն՝ յոբելեան էր՝ ամ թողութեան. զոր փողով ազդ առնէին. (Ղևտաց. իե. 8. 9:) և

ոչ յանկէան սուրէտ 'ի հրեշտակին միայն , այլ ընդ ամենայն տեղիս քրիստոնէից՝ յաձախ սոսփիւռք , որ ըստ օրէ սաստիկ հնչմամբ՝ անխափան ձայնթմամբ թծայնող , որ զնծայլն ձայնն նշանակէ , հնչեցեալ քարոզէ : Նոյս , անարգել ձայնթմամբ՝ խմնի անհատական ձայնիւ , յորոշումն հնչման փողոց՝ որ զկայ առնու 'ի նորոգել շնչոյն : Կիրառութիւն ժամահարի կայր յայլ ազգս արևելից . որպէս յիշէ մետափրաստէս 'ի վարս ոսկեբերանին , և սուրիոս 'ի վարս թէոդորոսի աբբային , և նիկողայ սինակեցի : Յիշէ և երկրորդ ժողովն նիկիոյ՝ որ ընդդէմ պատկերամարտից , 'ի չորրորդ արձանագրութեան , պատմելով զփոխադրութիւն նշխարաց անաստասայ մկայլին : Յոյնք զայս փայտ կոչեն՝ սեմանդրոն : Պատասխան յոյն մատենագիր համառօտիւ ընծայէ ժամահարին զայն նշանակութիւն , զոր մեր վարդապետս մեր ընդարձակ խորհրդածէ . այսինքն լինել նշանակիչ հին մարգարէութեանց , հրաւիրակիչ առաքելոյն , և օրինակ յետին փողոյն :

(38) Սաստէրն սոփանողէն : Սուրբ թշնամւոյն սատանայի , այսինքն հեղգութի , տգխոութի ծծայնոց , ևն , կատարեցան ձայնիւ ժամահարին . յանծափարէ անփէ , 'ի մնասակարաց անուն փոխարկեալք յօգտակարս , 'ի խափա՝ բերելոյ զկայծրութի սրտից , և 'ի մանկաւն , հնձելոյ զարդիւնս ծծայշաութեն . իբրև թէ զծուլութին և զագխոութին փոխեցաք 'ի փոյթ և 'ի ծանօթութի ծծայնոց : Բայց ըստ մարմնաւորին եւս իմանի . զի օգնութք ժամահարին խորտակելով արտաքին թշնամեաց , խաղաղութի գտանեմք , և փոխանակ կայմելոյ սուսերս՝ շինեմք խոփս և մանգաղս 'ի գործ մշակութե : ( եսայ . բ . 4 : միքիա . դ . 3 : )

(39) Աւրհագանէ արջանոց : Զայն ժամահարին ոչ է իբրև զանդրադարձ հնչմանս քարանց՝ 'ի խորոց ինւգանւոք , 'ի գոչմանէ խոր և փապարաւոր տեղեաց խստութք արձակեալ . որ ըստ իմաստակի ասէն , ըստ համերոնի՝ զօգ միրաւորէ : Ո՛չ անախորժ արանց յականջս , իբրև զսուր ձայնս միձոյ , նեաից , ևն : Ո՛չ զաման ոսղզոյն , զխելապատակն կամ զգլուխն թնդեցուցանէ՝ իբրև զթնդիւն ռումբաքարաց : Ո՛չ զականջն քամնեցուցանէ ( այսինքն փշաքաղէ ) իբրև զկաչիւն երկաթոյ կամ պղնձոյ 'ի քերելն : Ո՛չ մնաց կամ զգաստութե ոյւոյւ ոպլոսէն , շուարումն բերէ իբրև զյանկարծալուր ձայնս ահաւորս . մի օրին . ոյւոյւ ոպլոսէնաց . և ըստ այսմ ոյւոյն իցի գոյական՝ նշանակէ այլայլութի : Ո՛չ զանգակ . ոչ իբրև զպղնձի զանգակ գանգաչէ զձայնն կամ զաեղիս . և ոչ իբրև քարի ուժգին զարկումն ընդ հիրգս ոսկի , ընդ ոլորկեալ քարինս յատակաց՝ որ չունի ինչ քաղցրութիւն :

(40) Բարձեալ յանձանցէն : մի օրին . բարձեալ յանձին : Ընդ այլ գլխաւոր կազմածս եկեղեցւոյ դասի և այս , զոր սարկաւագունք զգուշութեամբ բարձեալ խնամեն . զի և կանոնն օրհնութե աւանդէ հանել զայն 'ի բեմն ձեռամբ սարկաւագին . որպէս և զևտացկըն բանոյին զայսա տաճարին : Եւ առեալին՝ պարէսձարան անխարփակեալ , թուի զայն ակնարկել թէ 'ի ժամանակի պատերազմի յորժամ և ուխտ եկեղեցւոյ գնայր ընդ բանակին , տանէին ընդ այլ սպաս եկեղեցւոյ նաև զժամահարն . և զայն առէ մի 'ի կազմուածոց արարչագործից , յոյն աւանդելոյն՝ թէ 'ի հին օրէնսն , և թէ 'ի նորումս՝ միջնորդութք առաջնորդաց , հակառակ ալանդաւորաց՝ որք համարէին զայս լոկ գիւտ մարդկային :

(41) Զայնի հրեշտակէն : Ժամահարս է նմանութի ձայնի հրեշտակին , որ յառաւօտ յարութեն ազդ առնէ ամենայն ննջեցելոց : Զայս ձայն հրեշտակին՝ աղամն ( ժողով . ժբ . 4 . ) անուամբ հաւուն նշանակեաց , որ ըստ գրոյն նշանակէ զվաղայարոյցն լինել ծերոց 'ի ձայն աքաղաղին . և ըստ այլաբանութե՝ զհասարակաց յարութեն 'ի փողել հրեշտակին :

(42) Հոգւոյն այս տա մեզ: 3 օրին . և հին ըծ . չէք այ : Ժամահարն երբեւ նոր գործի փրկարար 'ի մէջ նուագարանացն՝ որ առ.քրիստոնեայս 'ի կիր արկանին, առաւել զարթուցանէ 'ի մեզ զներգործութիւն կամ զշարժմունս հոգւոյն սրբոյ, քան թէ 'ի վերայ Եղնակի առ օրհնաբանութեան սաղմոսարանին. այսինքն հնչմամբ կամ 'ի նուագել սաղմոսարանին: Իսկ առաւելութիւն տեսանի այնու նախ, զի անդ հնչումն նուագարանին առաջ ազդումն յեղնակ միայն, և ոչ յայլ մերձակայս. իսկ ժամահարին հնչումն զարթուցանէ զբոլոր ժողովուրդն 'ի պաշտօներգութիւն: Երկրորդ, անդ առ եղնակն տուեալ մարգարէութիւն 'ի նպաստ մարմնական ծառայութեան եւեթ. իսկ ժամահարին ձայնիւ տուեալ կատարին նպաստք պէսպէս շնորհաց հոգւոյ և մարմնոյ: Այլ զի՞ ասէ՝ նոր գործի, որ 'ի հնումն օրինադրեալ և նախանկարեալ էր, որպէս և յառաջն ասաց: Ըստ հանգամանացն և ըստ զօրութեան ասի նոր, և առաւել բացայայտելով խօսի, որինչ նորոգ այս ի՞ն փեսայա առաւել մեզ ընդ հնոյն ծոխանորդութեամբ:

(43) Սկզբնապատ նախընթացութեան : Պարագլուխ յառաջընթաց այլոց նուագարանաց, որք յեկեղեցւոջ կամ արտաքոյ հարկանին. ըստ որում ձայնիւ ժամահարին հաւաքեալք յեկեղեցին, 'ի պաշտամանն հնչեցուցանեն զայլ նուագարանս, կամ կատարեալ զպաշտօնն՝ ապա դառնան 'ի մարմնական ուրախութիւն այլոց նուագարանաց. որք են՝ աղխարհաջութակ, այսինքն աղեօք կազմեալ երգարանք, (ամեթուռ, կամ քեմանի.) բերնափողք ապերեգորդութեանց, քաղցրանուագ ողբական երգոց: Բերաձայնականք, զլալս երգողին կամ լողին ցուցանող և շարժող, թմբ- բուկ, զոր ոմանք մեկնեն (չալփարայ, զիլ.) և այլք՝ (Թամպուռա.) թմբկահարութեանց. բանիւք խօսից յարմարեալ ցուցումն բարուց մարդոյ, և այլ կենդանի կամ անկենդան իրաց, և ոչ ձևակերպութեամբ զգեստուց և շարժման մարմնոյ. կամ, գեղեցիկ յօրինեալ բանաստեղծութեամբ: Զերկոսին իմաստս եւս նշանակեն այս երկու անուանք. և բանին եւս յարմարի. զի հարկանողք չալփարայի կամ Թամպուռայի՝ յերգել իւրեանց երբեմն յառաջ բերեն զձևս այլոց՝ բանիւք, և ոչ կերպարանաւ, և երբեմն միայն վայելուչ բանաստեղծական բանս ասեն: Է՛ դարձեալ որինգ նորոգ, նոր որինգ՝ ոչ փչմամբ, այլ հարմամբ, տուեալ մեզ փոխանակ որնգի հին օրինաց:

(44) Որոտաձայն հնչման : Ահեղ կամ անհնչան հնչման. զի հեթանոսաց նուագարանք ոչ ունէին խորհուրդ ինչ, և բանք նուագացն՝ սուտ և առասպելք էին: Եւ ո՛չ հրէաբար խաչախորհուրդ, ըստ հրէական թանձր մտածութեան, որով համարէին զարտաքին հնչմունս լինել հաճելի այ, և փառաւորիչ, և հաշտեցուցիչ. վասն որոյ և բերանով ամովսայ (Ե. 23.) արգելաւ. այլ զժամահարն ոգերգայ, ընկալաք, և առաւել պատուեաց մաքրական փափմամբ օրհնութեան և օծմանն երբեւ աշխարհու գիւղից:

(45) Ընծայ օրհնութեան: յօրինակս ինչ, ընծայս, որ առաւել յարմար է. զի արդէն վկայեաց՝ թէ ժամահարս ընդունելի է այ. ուստի ո՛չ մնայ խնդրել՝ թէ ընկալ, այլ թէ՝ ես ընկալայ օրհնութե և գովասանութե զայս փառք որբութեան, պարգև արբաղան՝ ինձ 'ի պահպանութիւն. և այլն: Վասն որոյ մաքրէ քայնդ, ևն. մի այլ օրին. ընծայս:

(46) Աննենգ արուեստ: Անխարդախ, և անխարդախելի հնարք կամ գիւտ գերազանց. զի ժամահարն ո՛չ յաղանդաւորաց հնարեալ է, և ո՛չ կախարդանօք ինչ խափանիլ կարէ:

(47) Ձայնդ այդ : Ձայն ժամահարին երբեւ ձայն ամպային մնայ ընդ կապս յօդուածոց մարմնոյս. և հանգէ 'ի հոգւոյս զպատրանս գիւաց, և զմնեալ ախտս անիծից. որպէս.քս ամպային ձայնդ հասեալ 'ի մարմինս

անտոացելոց՝ բժշկէր զնոսա յամենայն ցաւոց ։ Ասէն զձայն ժամանա-րին Ծրորէու, կամ Ծծայլին, խմոհի՝ հոգւոյ, 'ի պաշտօն ձը կարգեալ, զարթուցիչ յԾծայլին ազգմունս ․ յորոշումն այլոց նուագարանաց՝ որք 'ի գործ ածլին նաև յաշխարհական հանդէսս, բայց ժամանակին յեկե-ղեցականս միայն ։

(48) Ջայս Իր ։ Ջայս նիւթեղէն էրս արտացէս Նշանաչիւշնար, խորհըր-դաւոր քնար Չահառորոյն, պայծառացեալ զօրութիւն և հնչմամբն էրրև զայսահալած քնար դաւթի ։ Ջբառն Նշանաչիւ մարթ է և առ յարել 'ի բառն Իր ․ ձը էր կոչ նիւթ նշանակիչ ժամերգութե, և այլ եկեղեցա-կան պաշտամանց ․ զի և յոյնք 'ի նշանակելոյն կոչեցին զաա ռԾմանդրօն, ձը նշան ։ անքրէնէ նամոյ, անեղծանելի կամ անհրաժարելի գիր հրաւիր-ման յեկեղեցի քո ․ Չաաանովանխանոյն, պաշտպան կամ վրէժխնդիր անխափան՝ ուղղանական անօրէնութեցն ․ զի սանալէ կանխել 'ի հան-դէսս տօնից ։

(49) Ձէան անհալի ։ Շնորհեա մեզ ով ամենազօր ձեռն՝ զօգոց քաղ-ցրութիւն ․ որ մատուցանես զքեզ պատրաստ կամ յօժարական բաշխմամբ 'ի բազմապատիկ տեսակս բարեաց ․ 'ի ցանկալի ձայնէ օծէալ Թայոէ, ձը փայտիս որ օծեալ է մեռոնաւ, մեղցին որդն և այլ ճճիք, որոց մա-հաբեր է իւղն ։

(50) Սոհա փոանյ Էրանոութէ ։ Ժամանակաւ, կամ հնչմամբ և ներգոր-ծութե նորա անկեա 'ի մեզ զտունկ երանութե, որ է պաշտպանութեն յուսոյն մերոյ առ քեզ ։ Դայս Ծար աոբէլայ, խնա գործիական, այսու ծառովս՝ ձը ժամանակաւ, որ էրրև զծառն սաբեկայ ունի 'ի Տէրոյ ոորոյն, 'ի ծայրին իւրում զոր խաչն փորագրեալ կամ հաստատեալ, որ է նոր ուանդն այժմու փրկութեան, ծաղկեալ քիւ 'ի բերել զպտուղ կենաց ։ Ասէլ կամի ․ հնչմամբ ժամանակին յիշելով զոր խաչն՝ զգործի փրկութե մերոյ, անկեա յայնժամ 'ի սիրտ մեր զպտուղ կենաց ։

(51) Նէաոբէ ։ Ձայնիւ փայտիս փախիցեն յանհուն հեռաւորութիւն խաւարի դժոխոց՝ դեքն, չար ոգիքն, որք ըստորինականք են, այսինքն դժոխականք, և Բոդմոյէանէան, յոյժ զօրաւոր կամ բազմազան օրի-նակաւ խաբօղք ։

(52) Պօղոփոհմոյան ոբօրոբրոութէօ ։ 'Ի մեր պողաբեր հերկագործեալ առհմանաց, այլ և 'ի Քռ Ծշոյէու, 'ի մարմնոյ մերմէ, որ է քո մշակեալ երկիր կենդանի, մերժեսցին հոյն ծործոքեյոոյիւն, բազմութիւք կսկծե-ցուցիչ կենդանեաց ․ որպէս օձիլ, մժեխ, որդն, թրթուր, լու, ևն ։

(53) Յոոէլոոծք Իրճոփդէղ ։ Եկամուտ պակասութիւք պատահարաց, որք 'ի վերայ բնական ազդեցութեն՝ կրկին ազդագործութեան զմարմինս մեր, որպէս կուրութի, կաղութի, ձեռնատութի, կարկամութի, ևն ․ կմ, բորոտութի, գոնջութի, և այլ ախտք մնացականք ․ կամ ցուցանքաւոր այլանդակութիւք ․ որպէս երկգլխանի լինել, ծամածռու, թզուկ, ևն ․ որք 'ի հնարից սատանայի բազում անգամ գործին 'ի մարդիկ, թոյլ տա-լովն ձը 'ի պատիժ մեղաց, կամ 'ի ցոյց գեղեցկութեան այլոց կատա-րելոցն ։

(54) Յերֆոտանւնորոց Բնոոթէօ, 'ի հոգւոց և 'ի մարմնոց մերոց երևին Ֆնքնոոփէղծոոթէք, անդատին 'ի ներքուստ ծնեալ էրք, որք էրր ընտանի թշնամիք նենգեն ․ ըստ որում յոռդն 'ի հոգւոջ ծնանին օտար մտած-մունք մեղանչականք ․ և յայլոռն 'ի մարմնի՝ անմաքուր զեռունք ապա-կանիչք ։

(55) Ջանդամանդէայ օերփո ․ այսինքն յոյժ կարծր և խիստ ․ Ադամաս բառն յունական՝ որ նշանակէ զգոհար պատուական, (էլմաս ․) 'ի մեր մատենագրաց դնի 'ի նշանակել նաև զմագնիսն, թէ վասն կարծրութե

երկոցունցն , և թէ զի հնդկային գոհարն ունի սուէն՝ զքարշէ զզօրութ իւրև զմագնիս . և ըստ երկուց նշանակութեանցս փոխաբերի 'ի նշանակել զկարծր և զպինդ նիւթս :

(56) **Ջայս նէցաւկ հրաշիօ** : Ջայս հրաշալի նեցուկ ( տայախ , ) գտնիցես 'ի սիրտս ծորեալս , թուլացեալս , և հաստատեսցես 'ի կայան , 'ի կանգնումն ուղիղ :

(57) **Զանընդտատն** : մի օրին . **զանընդտատն** , զանշարժն սրտիւ կակղացուցես քո հեզ ձայնիւդ , զգաստ լինել ածային պատուիրանիդ , որպէս զպօղոս և զտիմոթէոս :

(58) **Պանծալի ծափօք** . երկուք կռանօք ժամանակիս իբրև լծակօք տապանակին՝ բարձցես զծանրութիւն պարտուցս :

(59) **Կամք յաղթողէլոց** , տաղտկացելոց 'ի հոգևոր սիրոյ :

(60) **Նուագ համբերէան** : Երգ հանդուցիչ հոգւոյս . զայս՝ և զյաջորդան իմն 'ի վերայ հոգևոր գործոյն , ըստ որում ժամանակն է գործի ածային պաշտաման , որով յաջողի 'ի մեզ հանդիստ հոգւոյ , երանութի , քաղցրութի , ևն : Իսկ ըստ մարմնաւոր գործոյն՝ կարէ ժամանակն ներգործել նպաստս , ըստ որում օրհնութեամբն նուիրեալ է , և ունի յինքեան զզօրութիւն եկեղեցական աղօթիցն , որպէս զանգակն , օրհնեալ ջուրն , և այլն :

(61) **Խաչան խէղդման** : Խզէչ կապոց խեղդմանց հոգևորաց կմ մարմնականաց : **համաօփան խէթման** : բարձումն ներքին ցաւոց , թէ հոգւոյ , և թէ մարմնոյ . կամ երկիւղալի կասկածանաց , թշնամութեանց : **Նարգաշրաւթէ նրէօ** : չափաւորութի կրից հոգւոյ , ուրախութե , տրտմութե , բարկութե , ևն : **փեանբանաւթէ հէղգաւթէց** . երկայնմտութ հեղգբարուց կամ հեղգացելոց : **ռաշատրաւթէ անփէսէօ** , հայեցումն իմանալի իրաց , կամ հանդերձելոց :

(62) **Կամարք ցանկալի** : Ժամանակս լիցի իբրև ուղիղ և անխոտորելի կամուրջ . և իբրև **օրբահէփ ամբողջ** . մի օրին . **ամբողջն** . իբրև սանդուղք ընդ որ մաքրեալք միայն անցանեն , և ոչ պիղծք : Եւ տոհմատաշնորդեալ հաստացես զիս ասէ՝ առ հայր քո **օրհնաբան** , այսինքն օրհնաբանեալ , կամ օրհնող զմեզ . միացեալ հոգւովդ սբվ . և եղիցի այս պատճառ փառաւորելոյ զամենայն Երրորդութիդ համօրէն արարածոց՝ վայելչական **գոհաբանաց** . մի օրին . **գոհաբանաբէ** : Յարմարապէս 'ի կատարած աղօթիցս օրինակեաց զժամանակն 'ի **կամարք** և 'ի **ամբողջ** , ուր յանցեալն առակեաց 'ի փող , 'ի սրինգ , 'ի գաւազան , 'ի զէն , 'ի սուսեր ևն : Վասն զի յառաջն խորհրդածէր զհոգևոր նպաստն՝ որ ժամանակին ազդեցութբ յաջողէին 'ի կենդանութե մարդոյ . իսկ 'ի կատարածիս կամեցեալ յայտ առնել և զոր 'ի վախճանի մարդոյն կատարէ , առակաւ կամրջի և սանդղոց ընտրեաց բացատրել . իբր զի մահն՝ անցումն է սատի յայլ կեանս , և վերացումն յերկրէ յերկինս . և 'ի մահուան հաւատացելոց՝ սովորութի է հարկանել ժամանակին , որպէս և զանգակաց , ազդ առնել ժողովրդեան՝ զի աղօթեսցեն վասն ննջեցելոյն :

[1] Սչերատին յաւելուած երկին հեծութ՝ Նորին հոգւոյն, առ Նոյն աղերս մաղթանաց բանի ։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԲԱՆ. ՂԳ.

[2] Աղօթք Թարգմանօրէն վասն օրհնելոյ եկեղեցւոյն Սեւանի ։

ա. Սուրբ ահաւոր անուն բարձրեալ անպատում.
անձկութ [3] փափաք յարախորժելի. [4] ՚ի սըր-
բերգենից փառատրողաց միշտ սրբաբանեալ՝ բնա-
կեալդ ՚ի սրբում. լի և ամենազեղուն բարութ առա-
տաձեռն աննուազելի. լոյս բարի, և ծագումն գովե-
լի. [5] երկրպագեալ փառաւորելի, ահեղ և անզննե-
լի. [6] ամէն և յամենայնում ։ Այսու բանիւ [7] գա-
շամբք յուսոյ՝ ուխտ ընդ քեզ միութ հզօր, [8] այո,
ամէն, ալէլուիայ. գովեալ Թագաւոր հանուրց, ած
բոլորից, ստեղծիչ գոյից, և տէր կամարար, [9] միայն
առիթ պատճառաւորաց, փրկիչ և [10] օծեալ մշտա-
պաշտելի ։

բ. Սոսկալի [11] մեկնապէս Թարգմանեալ ՚ի մեզ զայս
գանձ անվաճառ՝ և հարստութի անփոխադրելի՝ յո
քո արքայ երկնաւոր. որում դողութ մեծաւ [12] սպա-
սեն անմահականացն ահեղից լուսաբերան բոցաշըն-
չութիք, կրկնեալ քեզ յօժարութբ ՚ի հաճութենէ
անխոտոր մտաց՝ ծունր գոհութե. [13] ստեղծօղ էու-
թեց, որ են ՚ի տեսման և ՚ի ծածկութե ։ Որ եսդ
և էիր միայն բովանդակ՝ ամենեին անպակասելի, ա-
ռեր զմերս իսկապէս համայն, զի ՚ի լրութե քումմէ
լցուսցես. օրհնեալ և բարեբանեալ՝ ծանուցեալ յա-
ւէտ միշտ անքննութեամբ ողորմութբ մեզ ՚ի փըր-
կութի, ՚ի փառս և ՚ի գովեստ անճառ բարձրութե
ահաւորիդ բարերարութեան ։ Սկզբնածին [14] օծմանս
շնորհի՝ մեծախորհուրդ հրաշազարդութե. [15] քան-
զի լոյս քո մեզ ծանուցեալ՝ ճառագայթ անհաս.
ծագումն անսահման. արեգակն անաշառափիւ. [16]
մտոց սահմանիչ՝ երկակշիռ տարրութեց. [17] ճրագ-
ոտից՝ և լոյս հետեւմանց, [18] որով ՚ի ցոյցս իմաստից

եկեալ տեսութե՟՝ բանիս այս յարմարունէ, տօնեմք պարերգութե՟ հրեշտակօրէն յստակամտաբար՝ փրրկչավայելուչ կնդրկաւ խնկեալ զպարգևաբաշխ առատատրութեւն ամենիմաստիդ՝ յիւղ զուարթ անբիծ դաւանման ։ Քանզի 'ի սկզբան անդ՝ [19] կապտեցելոյ ողորմելի տխրականութե՟ 'ի փչմանէ բարձրագոյն շնորհին՝ հայրն իմ սկզբնաստեղծ՝ և հնացեալ յաւէտ մեղացն գերմամբ 'ի մահ գրաւեցաւ. կապեալ ընդ եղծման ապականութե՟ անզերծ հանգուցիւ, 'ի ծառոյն պատճառաւորեալ յանկումն անյարիր ամենակործան գլորման, հերքեալ 'ի լուսոյ՝ այսր խաւարին վայրի մատնեցաւ. իսկ դու գթած տէր ողորմութե՟, քանզի յաւէտ քան զնոյն ծանեար զոր ստեղծեր, [20] և զի չէիցն ակնկալութեամբ չեկաց յոր ինչ էրն, որում անկարողանայր իսկապէս տեսանել 'ի լոյսն վերին անմատոյց գերակայութե՟ անսահմանելւոյդ, ոչ մշտափայլ յարակայ վառմամբ անաղօտելի տարածանեցեր, այլ գիշերայնոյն ստնալպիրծ մթին արհաւրաց՝ ձեռնկալուի ձիթոյ՝ շարամանութեամբ նիւթոյ պատրուկի ընդ նոյն զանգելոյ՝ յօրինակ քո անախտ միութեամբ ընդ մեզ խառնելոյ՝ մարդասիրապէս հիւսեալ կազմեցեր. զի որ 'ի ըստուերս մահու տարագրեալ գտաք՝ կանխակորուստ տնկոյն պարտեաց, 'ի պատճառ իրին՝ աղգակցաւ պտղոյն ջահաւորեցեալ հաւատոյն վառմամբ՝ 'ի նոյնն դարձցուք խնկաւորութե՟. որպէս և փայտիւն մահու՝ մածմամբ քո 'ի նա՝ ածեալ մածուցեր զմեզ, առակաւ մեծի խորհրդոյն՝ միաւորեալ 'ի փայտն կենաց ։

Է. Եւ արդ՝ [21] որպէս ոչ է օր լրմամբ՝ առանց գիշերոյ, և ոչ տնօրէնութե՟ յարկի՝ առանց ձիթոյ պիտոյից խնդրոյ. քանզի իբր օրինակն հասարակային ոչ նուիրաւոր՝ զմարմնաւոր աչաց տեսութե՟ լուսաւոր առնէ, նոյնպէս և մաքրեալն քոյինաշուինչ շնորհին ընտրութե՟ անխմանալեաւ զաներևոյթ հոգւոյ միութե՟ 'ի մեզ անտեսիդ՝ հրաշափառապէս պայծառացուցանէ ։ Զի որպէս [22] յիջումն լուսարանի 'ըլաւազանին՝ լուացմամբ մարմնոյն՝ զանձինն հաւատամք առնուլ սրբութե՟, սոյնպէս 'ի յօծումն իւղոյն

պարարեալ յուսով՝ զհոգւոյն զօրութի՟ սովիմք. և 'ի սոյն՝ համարիմք ունել ամենայնիւ աներկմտելի: Եւ որպէս հրամանդ տէրունական օրհնաբանելի՝ զքաւութի՟ մեղաց ախտացելոցն [23] նախավճռէիր. իսկ ոչ հաւատ ունողայն առ այն՝ բժշկութի՟ հրաշալի՝ յանդիմանակաց անտուստ առ նմին մարմնոյն տեսակի՝ հաւատարիմ վկայ անդարձիցն հաստատէիր, սոյնպէս իւղս այս փրկութե՟ լուսով կատարեալ՝ հեղեալ 'ի մեզ օծանէ զարտաքին խորանս. իսկ զներքին մարդս աներևակ՝ ծածկապէս մտեալ նոր կենդանածնէ:

Դ. Պատկեր պանծալի [24] այս զանգուած նիւթոյ՝ արարչիդ երկնի. քանզի որք զիւղոյն կրեցին օգտութի՟ որ յողորմութե՟ն շահընծայութի՟, և դու 'ի գովեստ քեզ զայս բան սահմանեալ, թէ ողորմած եմ ես տէր. քանզի որպէս սիրոյն [25] անուան կցորդիս ա՟ծ, նոյնպէս 'ի մասնէ և այսու զիջեալ գծագրիս՝ ըստ տնտեսութե՟ն որ առ մեզ: Մեծագոյն մեծութե՟ խորհրդոյ յարմարաւոր [26] դիմակերպութի՟ այս ճարպ պարարտութե՟ երկրի թանձրութե՟ հողանիւթ գոյականութե՟. զի որպէս սոյն մասն 'ի կենդանւոյն՝ ոչ 'ի կերակուր հրամայիւր անդ՝ ըստ օրինին, այլ արարչութե՟դ բոլորովին [27] պտուղ որոշիւր, նոյն նմանու՟ եւս և աստանօր [28] իբր զզօրութի՟ ա՟ն մատչելի յայս աւանդ հաճութե՟ էիդ ա՟յ վայելչապէս տուեալ նուիրի, հոգւոյս հարազատ զուգաճանապարհ, արարողիդ պահեալ և ուխտեալ. քանզի ոչ շունչ արեան՝ և ոչ ճենճեր ինչ զուարթութե՟ [29] օրինակ հոգւոյս իմոյ և կարոյս՝ ընդ անդամաթիւս մսոյն ծախի, այլ արքայութե՟դ վերնում վիճակի՝ տէրունական բազմականին ձօնեցեալ ճաշակ՝ այս նիւթ ջահաւորական մշտաբորբոք անաղօտելի:

Ե. Ոչ էր մատչելի 'ի նախագահութի՟ արու անդրանիկ [30] դատիչ քննողաց, եթէ ոչ օծմամբ ինչ նշանակէր. ոչ քահանայութի՟ 'ի յանկոխելին տեղի ձեռնարկէր, եթէ ոչ այսու կատարեալ լինէր: Յակոբ զքարն [31] պատկեր վիմին՝ 'ի խորհուրդ երկար՝ խորանին ընտրութե՟ օծմամբն տպաւորեալ կերպացոյց. առ որ զիջումն անճառ բարձրելոյդ՝ տեսութե՟ սանդ-

ղոյն յարմարութե՟, և զիս 'ի վեր տանելոյն անդու-
ղեկցութե՟ն, զարձանն իւղեալ կառոյց նպատակ՝ 'ի
ցոյց ապառնեացն յիշատակի։ Ահարոնեան քահա-
նայութե՟ն պայծառութի հրամանաւ մեծիդ ա՟յ՝ օծ-
մամբն ճոխանայր. որով 'ի գլխոյ անտի 'ի մօրուսն
զեղեալ [32] գերափառ իւղոյն՝ զարմանազան կենդա-
նագրութի, ըստ սաղմոսողին, զփառաց նախնւոյն
առակեր զանդրադարձութիւն, և զշնորհիդ կենաց
սրբութե՟ ընդ մեզ խառնութի։ Թագաւորութիւն
ոչ էր սանձալի անդանօր [33] պատկերաւն ստեղծա-
գործիդ, եթէ ոչ եղջերբ իւղոյն օրհնութե՟ ձեռնա-
դրեալ՝ պսակաւ պճնութե՟ թագին՝ յանուն քո քս՟
գլուխ ամբառնայր։ Եւ զիմրդ զնախնին վեհից մա-
ռացայ՝ զծառայն մեծիդ՝ և զկերպարանն անպարա-
գրելոյդ. ոչ ահա մելքիսեդեկ՝ յօրինակ ճշմար-
տիդ ահաւորութե՟ 'ի ձիթաստանեաց լերինն, ուր
յետոյ ոտք մարմնացելոյդ ա՟յ զետեղեալ կացին, [34]
'ի վերնոց անտի հրեշտակաց՝ [35] 'ի պտղոց տեղւոյն
իւղեցաւ. ուստի [36] շիրմի սկզբնահօրն պաշտպան՝ ե-
պիսկոպոսական արքայապատիւ ճոխութե՟՝ 'ի քէն
հանդերձեալ նստաւ, մինչև յայտնեցար երևեալ
լոմամբ՝ համայն իսկութի ադամային կենդանագոր-
ծութեդ։

Է. Եւ արդ՝ քանզի քո են շնորհք, և քեզ վայե-
լեն գոհաբանութիք՝ օրհնաբանեալ որդի ա՟յ, դու
ինքն յարմարեա [37] բարենշմար տպաւորութբ զաղա-
չանս իւղաւորականս՝ խնկապատարս՝ զմռսալիրս՝
պատճառ քեզ փառաց, և ինձ մեղապարտիս աւիթ
բժշկութե. մատո տէր յա՟, վերացս աներևութից՝ [38]
զայս ձէթ լուսանիւթ. և արկ 'ի սոյն խարանս խո-
ցոյ մահացուի՝ զկաթուած օրհնութե իւղոյդ փրկու-
թե՟ անապակ գինեաւ սիրոյդ, միութբ արարչակա-
նաւ պատսպարեալ պատանօք խնամոց. զի յիշատա-
կարանս թարգմանօրէնս բանիս մաղթանաց՝ վայել-
չական իմն յարմարութբ՝ 'ի թևս հոգւոյդ զկարգ
իւր գտցէ։ 'Ի վերայ դաւթի հոգի քո բարձրեալ՝
յայնմ օրէ խաղաց, յորմէ օծութբն նուիրեցաւ։
Սաւուղ յայր յայլ՝ և 'ի մարգարէս ոմանս անտուստ
իսկ գրեցաւ, յորժամ օծումն ժամանեցաւ գագա-

թան նորին ։ [39] Արքայութիւն ասորեստանեայց՝ օծմամբն գրաւեալ՝ մատուցաւ 'ի կցորդութիւն տանն խորայելի ։ [40] Կայսերս ոմանս նշանաւորս մեծս և երևելիս 'ի խժականաց բարբարոս ազգաց՝ իւղս այս կենսացնցուղ ցօղով անձրևեալ՝ իբր կարթիւ որսացաւ 'ի յընտանութիւն հպատակութեան մեծիդ Ա՟յ ։ Սանն որ առ կիւրոս [41] երկնաւորին պատուասիրութեան զօծեալն ձայն՝ նմին մեծ վարկաւ ։ Զայն սաղմոսողին՝ [42] գեր քան զմարգարէութիւն՝ զօծեալն անուն նախայարմարեաց, կանոնափակ ընդմիջարկութեամբ պատուէր աւանդեալ, մի մերձենայք, և մի մեղանչէք ։ Որ հեղիսս առաքելութիւն ա՟ծային հրամանատրութեան, [43] նշանակ իմն հանելոյ 'ի պաշտամանէ անտի բահաղու, զօծելութիւն 'ի քորեբ ազգեաց յէուայ և աղայելի ։ Իսկ թափեալ անուն փեսայիդ՝ 'ի հոգելից բանից իմաստնոյն վերավկայեալ՝ կանխաւ իսկ գրեցաւ . [44] որպէս զի հոգին՝ Ա՟յ յաւէտ պատկեր և նշանակիչ, զ'ի փոքուս զմեծդ կերպագրութիւն քև նկարագրեալ՝ ընդ քեզ միասցուք առմամբ քո շնորհիդ ։

Է. Ու զի և երկարս՝ [45] պատուածօրէնս՝ բացականագոյնս գծագրականս և առակաւորս շարադրեցից առաջի վերնոյդ և ահաւորիդ մաղթողական բանաստեղծութիւս . տէրդ և կենդանարարդ՝ արարիչդ երկնի և երկրի՝ [46] 'ի յօծմանէ անտի սկսար քարոզել զաւետարանն արքայութեան . վկայեալ անտուստ 'ի յոհաննէ՝ օծեալ և գառն Ա՟յ՝ բարձող մեղաց աշխարհի ։ Օ՛ի թէպէտ ընդ օծմանն օրհնութեան հոգին էր քեզ իսկաբար լրմամբ, և ա՟ծութեան խառնութիւն բովանդակապէս, այլ անունն պաշտի խորհրդեամբ շնորհին հրաշափառապէս ազդելոյ 'ի մեզն . զի զստրկութիւն ադամեան մարմնոյն՝ մեծանալ յաւէտ այսու յորջորջմամբ պատրաստ արասցես ։ Սացեալ զառածս մարգարէութեանն եսայեայ՝ դու ինքն [47] ա՟ծութիդ մարդացեալ՝ ընթերցար, հաւատարիմ առնել զբան ծառայից քոց տէր . և իբրև ծանուցեալ եղէր օծութեամբ 'ի կարգ անդ բանին, թէ հոգի տ՟ն 'ի վերայ իմ՝ որով և օծ իսկ զիս, ապա [48] փակեցեր 'ի համդխտափառն օծելութեան՝ զոքանու-

թի երկաքանչիւրոցն յայտ արարեալ խառնոյաւ սահմանի՝ ընդարձակ հեռաւորութբ մեծաւ կնքեցեր, զմերս՝ կաթուածով ինչ շնորհազարդեալ, և զքոյդ՝ խնկութբ ընդ հօր՝ և ընդ հոգւոյդ հաւասարութբ թարգմանեալ: [49] Ի նախածանօթ մերակերպութեն՝ պանծալի իմն գովեստիւ օծեալն կոչմամբ 'ի հրեշտակացդ փառաւորողաց՝ արարածոց երկրի ծանուցար: Ո՛ որ մարգարէն կանխաւ գուշակեաց զ'ի յորդանան, և յընտրեալն լեառն Թաբօրական՝ հայրենի ձայնիդ եկաւորութի, թէ [50] որ պատմէ 'ի մէջ մարդկան զօծեալ իւր: Ո՛ որ սաղմոսին ձայն կանխաւ պատմէ՝ հզօրիդ փառաց զայս պատիւ [51] առ 'ի զառեալդ ձեռնադրելոյ, օծ զքեզ ած՝ ած քո իւղով ուրախութե:

Ը. Հոգի երեւաց մերոց տէր քս. որ է [52] օծեալ անունդ իւղոյն, որով զփչումն կենդանութե 'ի դէմս մեր լոյս՝ բարերարութդ քո ազդեցեր. [53] իմաստութբ ումեմն երջանկի՝ մարդասիրութի խոստովանելի, ասելով առ ոմն, թէ եդ վկայութի առաջի մն օծելոյն. զնոր աւետեացս վկայելով, թէ կօշիկս անդամ ոչ առի յամենայն մեղեաց: Երգոյն երգ՝ [54] իւղեփեցական գինի՝ զաստուածով ծանուցեալ զխորհուրդն՝ 'ի գովեստ հարսին սբ եկեղեցւոյս՝ զմուռս առաքինութեան հանդերձ ամենայն առաջին իւղովն. և ես զմուռս և կնդրուկ մաքրութե վարուց ամենայն փոխեաց անուշից՝ իւղովքն զանգեալ՝ անդըստին և այսր յառաջաբերեաց: Դանիէլ զկենսատու մահու քո՝ քս թագաւոր երկնի, 'ի վեր քան զօրինակ կոչումն ձայնի՝ զայս անուանադրեալ վկայեաց յայտնի, թէ զկնի վաթսուն և ինն եօթներորդացն՝ սպանցի օծեալն, և օծեալ առաջնորդ զքեզ յորջորջեաց: Ճրագակիր աշտանակն [55] զաքարիայ ադդովայ՝ որ 'ի բարեքեայ՝ [56] իւղոյն բարեբաշխ բացատրութբ 'ի մասունս եօթանց առաջադրութեանց գնդիցն վառելոց՝ 'ի ջահէ անտի զօրութբ անեկամտաբար վիճակաւորեալ, զ'ի քոյդ լրութէ 'ի մեզ փրկութի և օծելութի գերաբնապէս նախազեկուցեր: [57] Ո՛ որ ըստ օրինին անտուստ գուշակմամբ 'ի խորանին որ 'ի տաճարին՝ ամէնընդել իմն կրթու-

թեան սովորաբար մատուցեալ լինէր, պանք բաղարջըն-ծայք, և նաշխինք իւղովք խառնեցեալք, և զուարակք եղանց իւղարկեալք, և տիրական անուամբ ձայնեցեալք, և հաւուց ոմանց թաթաւմամբ յաղգակից ձարպին 'ի յարիւն, ա՛յսր խորհրդոյ՝ առձեռն տեսակք և նշանակիչք յարմարականք քեզ՝ միածնին ծնունդ օրհնաբանեալ մեծիդ Աստուծոյ. միայն դու օծեալ նորոգ և զարմանալի՝ ինքնութեամբ համայն էութեան՝ խնկապէս լրմամբ ամենայնիւ անպականելի։

Թ. Ո՞ւ զի՞ ես իցէ բազմապատիկս նշանակել առ այս մեծ խորհուրդ անհասանելի, [58] և ո՛չ ճաշակել զքեզ՝ քա՛ղցրութիւն. իմանալ քև զայս՝ թէ զի՞նչ իցէ իւղն, եթէ ո՛չ՝ զտխրութիւն 'ի փայտն պարտեաց՝ սովիմբ բժշկեալ, ըստ սաղմոսողին, զուա՛րթ գործեսցես։ Ո՞ւ զի՞նչ պարարտութիւն, եթէ ոչ՝ զկերակուրն մահու սովու մոռացուք լցեալ 'ի սմանէ։ Ո՞ւ զի՞նչ օծութիւն, եթէ ո՛չ՝ զմոխրոյն թշուառ տեսութիւն՝ 'ի ձեռն սորին փոխարկեսցուք 'ի պայծառութիւն յաւէժ ուրախութեան. անուամբ քո փրկեալ յոգի զօրութեան՝ հօր անուանեսցուք։ Ո՞ւ զի՞նչ արդեօք մարգարէին հոգևոր ըղձականութիւն ամենատենչ բաղձանացն իցէ իմանալ, [59] որոյ ծերութիւն առակի 'ի ձէթ պարարտութեան, և կամ օծանելն իւղով զգլխոյն վերամբարձութիւն, եթէ ոչ՝ զհին խարդախուին սգոյն սաստկութեան 'ի մահ կործանմանն՝ կենագործեալ դեղովս այս կենաց՝ պատսպարեալ օժանդակեսցես։ Ո՞ւ զի՞նչ [60] ճրագին լուսաւորելոյ շնորհակալութիւն, եթէ ոչ՝ 'ի մէջ իմն անյուսութեան մեղայն միգի և կռապաշտութեան խաւարի՝ կերպակցապէս միութեամբ 'ի յիս եմմանուէլ։ Ո՞ւ կամ զի՞նչ մարգարէն Աստուածաբանեալ 'ի սփոփանս զուարթարարս օրհնութեան՝ նշանակ յայտնի վայելչապէս ոմանց աւետէ, օծցին իւղով 'ի մրրոյ պարզելոյ. և կամ իմաստունն 'ի դիմաց հարսինն՝ ասէ օրիորդացն, հաստատեցէք զիս իւղով, և գեղեցկազարդ խնծորով յարկեալ ծածկեցէք, և [61] 'ի պարտէզ իւղենեաց տածեալ գրգեցէք, եթէ ոչ՝ այսր ահա [62] ընտրական նիւթիւ՝ հոգեւոյդ քո լցեալ՝ 'ի սոյն լոյս տեսցուք զանիմանալիդ

'ի մեզ բարձրութիւն գովեալ։ Դու արդ քեզ միայն՝ խնամակալ, պատճառ բարի [63] ընաւից եղելոց, ձեռն համբառնամ տարածմամբ բազկացս՝ երիկամանցս գործակցութեամբ՝ սրտիս հեծութեամբ՝ լեզուիս և շրթանցս ձայնարկութեամբ. լո՛ւր ողորմութեամբ տէ՛ր, պաղատանացս խնդրուածոց առ քեզ կարդալոյս. շնորհաւորեալ այսու պարգևօք՝ գոհաբանութիւն քեզ վերընծայեմ հզօ՛ր ահաւոր բարձրեալ անքննին, անփակ փափաքմամբ միշտ համբուրեցեալ, սո՛ւրբ սո՛ւրբ և միայն մի՛շտ սուրբ, օրհնեալ հանապազ յաւէժ անդադար երգաձայնութեամբ։ Ընձեռեա՛ առաւել բարերարութիւն իսպառ վրիպելոյս. տո՛ւր յոյս քաղցրութեան՝ [64] ո՛չ մասին միոյ մատուցման լուսոյ՝ արժանաւոր լինել հանդիպելոյս, լայնել քև բա՛րի զնրբութն ծածուկ խորհրդոյս, գրգութիւն խառնեալ ընդ աղերս՝ առեալ ընդ դաւթի, ընկալա՛ք ա՛ծ ողորմութիւն քո, և զծածուկս գաղտնեացդ անտեսից՝ իմաստութեամբ քով յայտնի արարեր։

Ժ. Դու արդ՝ մեծութիւն քեզ՝ ամենակալ առատաձեռն աննուազելի՝ ամենափոյթ առ 'ի գթութիւն՝ մշտայօժար 'ի բժշկութիւն, զի միացուցեր խառնեցեր ընդ մերձաւոր դիւրագիւտ [65] ընտանի նիւթոյս՝ ըղհրաշս անճառս քումդ սքանչելեաց ահաւորութեան։ Քանզի զոր երկին ամենայն բարձանց՝ երկրիս լայնութեամբ՝ և անդնդոց ներքնոց խորութեամբ ծովուց բազմութեամբ ոչ զօրէ տանել, այլ իբր զդոյզն 'ի մեծէ բերի, 'ի փոքր գոյս տեսականեցեր զօրութեամբ սահմանեալ ճշմարտապէս անհրապուրելի. զի մի՛ նորոգիմն երևելով յայլ էութէ՝ առ այս հարևանցի [66] երևականութիւն լինչ վարկանիցի, վիրաւորել՝ քան թէ բժշկել անընտրաբար զկարծիս մտաց։ Քանզի [67] որպէս մարմին՝ քեզ հաւաստապէս՝ օրհնաբանեա՛լ որդի ա՛յ, խնկութիւն և ոչ օրինակ՝ 'ի յարդեանցն ցորենոյ արարչապէս միշտ հանդերձեցեր, և կայլակ կողիդ՝ զարիւն խաղողոյ, և արգանդ կենաց հոգևոր ծննդեանն՝ զառատութիւն ջուրց յոլովութեան, նոյնպէս և զհոգի անմահից փչման՝ սուլաւ և 'ի սոյն արդիւնաւորեցեր. [68] երկուք կենաց՝ որոց կերպարան յառաջ եկելոյն՝ և ոչ հեթանոսութեան է փոխարկութիւն, ո՛չ

ո՛չ տեառնագրութեան խաչական փայտի ինչ երկրոր-
դութիւն, նստելոյս յերկրի խաւարի՝ ըստ նմանութեան
քո տէր՝ ծագեցեր։ Քանզի[69] յայս կերպարան շը-
նորհի՝ զանպակաս լրութիւն անհասից յայտնեալ աշ-
խարհի լուսաւորեցեր, զի մի՛ տնանկն կարօտասցի՝ և
մի՛ ընչեղն բարձրամտեսցէ, ըստ օդոյ հաւասար
բաշխման, և լուսոյ արեգական տարածման, և ջրա-
կան վտակաց զեղման. զի հաւասարապէս բաշխիւր
երկրածնաց մանանայն զուգամասնութեամբ՝ փոքունցն
առաւել, քան մեծամեծացն։

ժա. Իսկ այս նիւթոյ[70] տեսաւորութիւն խորին խոր-
հրդոյ՝ և 'ի բնուստ անտուստ հրաշապէս ունի ըղ-
թարգմանութիւն. որպէս զի ոչ երկմիտ ինչ շուրթա-
փութեամբ անհաստատապէս զտեղի փոխէ, և ոչ նենգու-
ղաբար զընակութ ինքեան լքանէ. քանզի ոչ վերջ-
նականօք աճառովք հերքի, և ոչ յընդդիմակցէ
ումեքէ ողողեալ արտաքս ելանէ։ Նման զի որպէս
[71] պատահումն դունոյ յեութիւն մարմնոյ՝ անփոփոխ
իմն և անհրաժեշտ, որ գոլովն գոյացուցանէ՝ և ոչ
գոլովն ապականէ, այսպիսեաւ իմն յարմարութեամբ
իւղոյս զօրութիւն անդստին 'ի յիւրոց անտի կերպա-
րան զառեալն ունողի՝ միասնական զուգութեամբ ընդ
մեզ իսկ կցորդեցեր՝ տէր յս քս, ընդ իւրն գոյի՝ և
զօրինակն լծակցելով. քանզի զանիմանալին տեսու-
թեան աչաց և մտաց ըղձից՝ 'ի դէմս բերեալ կերպա-
ւորեցեր. 'ի պտղոյ երկրի ձնշեալ մզելով զարմա-
նալեօք հրաշագործութեամբ մատակարարիլ մեզ պատ-
րաստեցեր։ Նմանաւանդ զի[72] ոչ յոլովից խառնից
'ի մի եկելոց խմբակցութ զանազան ծաղկանց, ըստ
հնոյն և ստուերին բազմաբուրեան պլպլուէ, զայս
իւղ օծութեան հրամանատրեցեր, այլ իբր զօրինակ
փոխեալ զայն առ այս՝ դու ինքն խառնեցար 'ի սոյն
մաքրութիւն վերնալոյս ձիթոյ։ Որ թէպէտ անճառ-
են համեղութիւք քումդ անուշութեան, և[73] ընդ օրի-
նակաց իւրեք ոչ համեմատի, այլ ծաղիկ դաշտի՝ և
շուշան հովտաց՝ և նարդոս ընտիր՝ և եղեգնախունկ
խառնեալ հալուէիւ, յարմարութեամբ հոտոյ քրքմոյ՝
փթթեալ ողկուզոյ և ազնիւ գինւոյ, ոչ սոսկ՝ քան
թէ իւղոյ միութեամբ պատշաճապէս օրինակեցար փա-

ռաւորեալ անունդ անքնին , որ զամենայն լնուս , և
յիրի իմեք ամենևին ոչ կարօտանաս ։ Աստի 74 ոչ
շփոթելովք 'ի հակառակաց բռնադատութեց՝ բա-
ժանեալ կամաց՝ մեկին առակի , այլ 'ի սիրոյ հաւա-
նութէ̃ ա̃ծապէս 'ի մէնջ պարարիս , վասն մեր ըստ
մեզ՝ առ ամենայն վայելչական նմանութի̃ օրինակե-
ցեալ ․ առ որս լոյս բարի՝ և հուր ջեռուցիչ , տապ
սիրոյ առանց մասին ինչ չնչման անգթական սառ-
նացրտութե̃՝ այս զանգուած նիւթոյ՝ կաթուածոյ
ձիթոյ՝ մաքուր մոմաց տեսեալ իմանի , որով յիրա-
ւի սովաւ 'ի յա̃ծ է միանալի ։ Ընդ սողոմոնի օծե-
լոյ որդեգրեցելո̃յ՝ երգեմ բերանով հարսինն՝ երկ-
նաւոր փեսայիդ բարեբան գոհաբանութի̃ , համբու-
րեալ 'ի յիղձս մտաց՝ զհոտ իւղոց քոց քան զամե-
նայն խունկս , և իբր զբանս կենաց յաւիտենակա-
նաց ունողի , ըստ հոգելից բանի իմաստնոյն՝ և 75
ա̃ծաբան աւետարանչին , զհետ քո 'ի հոտ իւղոց քոց
ընթացուք ․ 76 լուացեալ զերեսս ջուրբք կենաց , որ
'ի վեր է քան զերկին օդոյս այսորիկ , և օծեալ ըզ-
գլուխս անախտական իւղովդ երկնայնով՝ յանդի-
ման եղէց քեզ ուրախութե̃ , զուարթապէս և ոչ
տխրաբար ։

ԺԵ̃ ․ Այս իւղ խնկելի՝ 77 պաշտելի և երանելի , ոչ
սոսկ օծումն ուղղոյս սենեկի , և կամ հերաց վար-
սից գագաթան նպաստ ինչ մատուցանի , եթէ ոչ
տէրունական կենսատու խաչիդ ա̃նադրեցի ։ Այն
իւղ զարմանահրաշ օրհնութե̃ լուսոյ՝ զհրէայն և 78
զխուժն՝ զհնդիկն և զբարբարոսն՝ զսկիւթացին և
զելլենացին՝ զգուժն դժնէաբար՝ և զարհաւրատե-
սակ շանագլուխն սոսկալիթխար , զտէրն ազատ՝ և
զստրուկն ծառայածին՝ քրիստոսեան արարեալ՝ ա-
նուամբ քո կնքէ ․ և հոգւոյդ մէջ ընծայէ , և հօրդ
երկնաւորի՝ հարազատ որդի հաստատէ ։ Բազմօրի-
նակ են սովաւ արուեստից տեսմունք յարմարե-
ցեալք , 79 նախ նիւթոյն՝ ապա զօրութե̃ն ։ Քանզի
իբր անօթ փայտեղէն մինչև օծեալ իցէ՝ դիւրա-
բար հերձի , և անօգուտ եղեալ անպատուի , նոյն-
պէս և մարդ ոչ իւղեալ սովաւ՝ հեշտեաւ խորտա-
կի , և մեկուսի եղեալ առ 'ի քէն՝ ոչ լուսաւորի ։ 80

Մատն սա քո՝ յո՟, որով զՀրաշալիսն զարմանագրես. քանզի իբր անգծելի կազմութի կարծր պահպանակաւ՝ ամենապատրաստն շրջարկութի պաշտպանեալ՝ ծածկէ յայլագունակ խրթնի եկամտից. մինչ զի այսու մաքրութի թաթաւեալն 'ի սմա՝ ոչ ներկի արեամբ, և ոչ տխրատեսակ երփնիւ այլայլի: Նա զի և թափանցանց իմն խառնութի Հոգեպէս՝ ընդ թանձրութի[81] մերոյս գոյութեան մտեալ անցանէ. զի թէ անէծք սաղմոսողին՝ ձիթոյ առակաւ՝ ընդ ոսկերս չարին Համայնիւ բաշխի, որչափ ևս Հոգիդ սոյն ձարպով լուսոյ՝ զաներևոյթ ներքնոյն տեսակս կենագործեալ ողջացուցանէ. աղդուամն տուեալ 'ի խորոց անտի չնչման Հագագին՝ մինչև 'ի սպառուած ծայրիցն եղերաց՝ զընաւն ընկղմէ զյիշատակ մարմնոյ մաՀուն արկածից. քանզի կենդանական զօրութի քո միշտ աՀաւոր՝ տէր յո՟ ք՟ն 'ի ամին խառնեցեալ՝ ընդ սոյն իսկ բնակէ:

ԺԳ. Այս օծումն բարետեսիլ՝ և[82] առ բունամարտիկ մերկամրցանակ ըմբիշս՝ իբր զօրաւոր Հնարից կերպարան ձգնաւորական՝ անըմբռնելի ձեռացներՀակին օրինօք պաշտի, դիւաց և ախտից Հզօր աՀարկու: Քանզի յոքնապաճոյճ պճնութի բանին եզեկիէլի առ իմանալին փարաւոն, Հենդնաւոր առակագրութի ողբականօք շարայարմարեալ, յորժամ եզեր՝ ասէ, և Համդերձեցար ընդ օծելոյ քերովբէին, ուր արձանքն Հրեղէնք Հաստատեալ կառուցան: ՕրՀնաբանեալ աՀաւորութի[83] ամենավայր ձեռնկալութե, որ միշտ անճառ ես բանից՝ և գերազանցեալ քննութեց. որ աւետարանաւն կենաց խնկես յարակայ՝ իբր նորածին օծեալ 'ի քաղաքի դաւթի. և 'ի քաՀանայապետին Հարցմանէ, դու ես օծեալն որդի օրՀնելոյն. և յերանաւորն դաւանութե պետրոսի՝ օծեալ միայն որդի ա՟յ կենդանւոյ. և յապաՀաւատ քննողայն, եթէ դու ես օծեալն՝ ասեն, ասա մեզ Համարձակ. և 'ի կանոնականացն քոց՝ Հաւատամք յօծեալդ ուսուցիչ և տէր ամենայնի. և Հերովդես յառաջ քան զսոյն՝ զօծեալդ անուն յայտնապէս Հարցեալ. և զկարգ գրեն՝ դու իսկ ասացեր, զօծեալն ա՟յ զտէրն դաւթի՝ զանսկիզբն որ-

դի՛ ժամանակաւ որդի ։ Քանզի այսպէս ընկալաք
վայելչաբար զայս Թարգմանեցեալ, որ 'ի մեզ բերի
ծայրն կատարման խորհրդական կոչմանն՝ վիճակ
քրիստոնէից նախապատուութեն ։

ժդ. Ո՛րքան ունի ահաւորութի՛ միանգամայն և
որբութի [84] իւղաւորական խնկաւորութի սոսկալի
անուանս օծումն, մինչ զի որպէս ոչ է համարձակել
ուրուք յերկրայնոց [85] ած անուանիլ՝ այլ ածային,
նոյնպէս ոչ բերէ մարմին՝ զքրիստոսդ անուն անձին
համարել, այլ զքրիստոնեայն. անուանելի [86] նախ-
նոյն մեծութն մկրտչին՝ ջուրբ զհոգին հրաւիրողին.
քանզի չեմ ես սաէ՝ օծեալն, այլ առաքեալ առա-
ջի նորա ։ Սովաւ շրջելին՝ որպէս բանն ազդէ աւե-
տարանչին մարկոսի, [87] առաքելականացն ըծակցու-
թիւք, իբր ազգակից հարազատ ձեռինդ այ՝ այսու
վարեցեալք. քանզի իւղով օծանէին՝ և առանց
մարդկային հնարից՝ անուամբ քո բժշկէին ։ Սան
զի որպէս խաւար 'ի լուսոյ՝ և [88] ցաւ յառողջութէ,
գիշեր 'ի տունջենէ՝ և մահ 'ի կենաց, այսպէս և 'ի
սոյն իւղ տիրապարգևէ՝ ամենայն չարին երևոյթք
մերժին խափանին և ընաւին ամփափին ։ Քանզի որ-
պէս ճանճք զազիրք՝ և փոքր զեռունք սարդից և [89]
ունկնամողից՝ իբր 'ի դեղոց մահու՝ յայս նիւթոյ
սպառեալ պակասին, սոյնպէս լրութե շնորհի օրհ-
նութե սոյն իւղ զօրացեալ՝ և զայսս վանէ, և զմուր-
հակս չարեաց ջրէ, և զվճիռ մահու պատառէ ։ [90]
Ո՛չ է աւազան կատարեալ՝ առանց օծման օժանդա-
կութե ։ [91] Եթէ աւազականցն մահու խոցման զմարդն
առաջին, [92] այս դեղ փրկութե մատուցեալ տուաւ.
եթէ անճարակ վիրացն յակոբայ և խորայելի՝ սոյն
իր պատուական յիշատակեցաւ. այս իւղոյ փափա-
քեալ դաւիթ՝ իբր ձիթենի պտղալից 'ի տանն այ՝ [93]
յուսով յարակայի, լքեալ զթլփատութին անդստին,
զմկրտութեն շնորհ գուշակէ ։ Նա զի է ինձ զայս-
մանէ ճառել, և համայնին կարծել հասանել, որ [94]
և ոչ վերինքն զօրեն ձեռնարկութբ ինչ բանի՝ [95]
զսոյն խորհուրդ 'ի մասնաւորէ ինչ ճառելով նշանա-
կել, Թողում ասել՝ թէ յիսկութէ ։

ժե. Փա՛ռք քեզ միշտ և յամենայնի անմա՛հ Թա-

դաւոր՝ 'ի յայժմու երգեցեալ [96] օրհնաբանութեանս, զոր արարեր և կատարեցեր առ իս՝ բարերխնամ գթած և երկայնամիտ, հարուստ և առատ ամենայաղթող. անդստին 'ի հարցն գծագրելով զօրինակն՝ մինչև 'ի լրումն ածեր զխոկութիւն Ճշմարտապէս : Դու լոյս իսկ բնութեամբ և արեգակն մշտապայծառ՝ և զաշակերտացն դաս՝ լոյս անուանեցեր, որով զարարածս ամենայն երկրի՝ Ճառագայթիւք երջանիկ շնորհի նոցին լցուցեր : Ընկալար զխուղն անուշութեան [97] յումեմնէ՝ 'ի յոտս, յօրինակ ընդունելութեան մաղթանաց առ քեզ. և 'ի միւսմէ պոռնկէ՝ 'ի գլուխ, նշանակ սիրոյ գթութեանդ առ մեզ. մշտափափաք բաղձանօք անսահմանելիդ 'ի սոյն հաստատեալ, [98] մինչ զի ուխտիւ անփոխադրելեաւ՝ օրէնս յարակայս օրհնաբանելիս՝ քոյինահրաման պատուէրս կենաց՝ ընդ համօրէն աշխարհ քարոզել զաւկաւաձեռն իւղոյն յարգաւորութի, զարմանս հրաշից լեզուացն՝ առ ապառնեացն յուսադրութի : Դուք օծութի ունիք զմեր՝ ասաց [99] երջանիկն առաքելութեց, մեկնեալ զխորհուրդն որ 'ի մեզ զեղեալ՝ յառաւելութէ կենդանարարիդ անպակաս բովանդակութեան : Աստի յաւէտ իմն յարմարաւոր և համգունատիպ՝ [100] առ 'ի մասնաւորն նմանութի լուսոյդ և հոգւոյդ մեր՝ այս կաթուած օրհնութէ 'ի վերնոյդ բարեբաստութեց՝ անսպառաբար սրսկեցեալ 'ի մեզ, և ասի լոյս, իբր զնախաթիւ գոլ ստեղծուածոց՝ և արարչութեդ պատկերակից, որով զխաւար մթութե մեղաց հալածես. [101] իսկ հուր, զի յամենայն տարր արարածոց հաւասարապէս ունի զուգութի՝ ըստ էականին կշիռ բաշխումն, ծածուկ և յայտնի, լռեալ և ծանուցեալ. և եթէ ոչ ընդհարցի 'ի հակառակէն, ոչ յինքնաստատ յօժարմտութէ բաղձայ բորբոքիլ : Դարձեալ [102] և օծումն, զի արքայաբար որդեգրեալ ընդ քեզ 'ի ժառանգութի հօրդ մատուցես. ողորմութեդ ազգակցաւ նկարեալ 'ի մեզ անեղծանելի՝ 'ի հանդերձեալ փառսն փայլեսցուք. դարձեալ և հոգի, զի մաքրեալ զարկածս խաբէութեն՝ որ 'ի բանսարկուէն ներգործուէ, նորոգ փոփոխմամբ հոգւով և Ճշմարտութբ՝ հօրդ երկնաւորի երկրպագեսցուք,

բեւեռեալ ընդ քեզ յուսոյն հաւատովք՝ ամենա-
պարգեւ ։

ժԳ. Ահա արդարեւ յաւէտ խնկաւէտ՝ իւղս այս լու-
սապատառ [103] խնկալիր՝ վերնականիդ սիրոյ տեսու-
թեան ։ Վասն որոյ եւ պօղոս իսկ պատշաճ վարկաւ 'ի
Ճառ գոհաբանութեան՝ ասելով յայտնի, [104] որ օծ զմեզ
ձեօք հանդերձ 'ի քս յս՝ ած է, որ եւ կնքեաց զմեզ՝
եւ ետ զառհաւատչեայ հոգւոյն 'ի սիրտս մեր․ եւ
դարձեալ, մի ասէ, տրտմեցուցանէք զհոգին սբ այ,
որով կնքեցարուք յաւուրն փրկութեան ։ Պատկառե-
լի եւ անվանելի [105] օծութեան յորջորջումն իբր 'ի նո-
րումս յաւէտ քան 'ի հնումն․ քանզի բանն դաւ-
թեան սաղմոսին՝ զտիրական տնօրինականացդ սկըզ-
բնաւոր կրից խորհուրդ՝ Ճշմարտաբար վերաստահմա-
նէ, ժողովեցան կուտեցան իշխանք ժողովրդոց՝ վասն
տն եւ վասն օծելոյ նորա ։ Արդարեւ մեծ տպա-
ւորեալ զանսրբելի արեանդ պարտիս՝ հրեախումբ
չար մոլեգնութեան՝ որ 'ի տէրդ յանդգնութի, ով է
[106] որ ձգիցէ զձեռն իւր յօծեալն տն՝ եւ քաւեսցի․
քանզի թէեւ յաղգայնոյն սպանաւ սաւուղ, այլ ոչ
իսպառ մերժեցան յամօթ եւ 'ի նախատինս ազգաց
օտարաց, մինչեւ արեանդ այ հեղորդեալ դատան ։
Գրաւական մեծ յիշատակի աստուածային ժառան-
գութեան [107] աղօթանուէր աղերսարկութի ասել սաղ-
մոսին, վասն դաւթի սիրելոյ քոյ՝ մի դարձուցանէր
զերեսս քո յօծելոյ քումմէ․ եւ դարձեալ, նայեա՛ եւ
տես յերեսս օծելոյ քոյ, եւ արա ողորմութիւն ընդ
օծելոյ քոյ ։

ժԴ. Զեռանդ քո քս, երկրպագեալ պարգեւատրու-
թիւն՝ այս հիւթ լուսալիր․ քանզի [108] ոչ այլ մեծ
բարձրութի յարքայութեան Ճոխութե՝ ասէ մարգա-
րէն 'ի դիմաց քո տէր, քան թէ՝ գտի զդաւիթ ծա-
ռայ իմ, եւ իւղով սրբով իմով օծի զնա ։ Աստի
կիրթ իմն յիշատակաւ՝ զքոյդ համբուրեալ լուսոյ
օծութիւն՝ տէր յս քս, ծանիցուք զքեզ անփոփոխ
մշտնջենաւորութի, թէ դու ես ամենայն՝ եւ յամե-
նայնի միայն թագաւոր թագաւորութեց, եւ Ճշմա-
րիտ օծեալ իւղելոյ, փառաբանեալ երկրպագութ,
երէկ եւ այսօր ։ Քանզի զոր օրինակ պատրոյկ թա-

ցեալ 'ի ճարպուռ՝ ոչ երևեցուցանէ ինչ նշոյլ՝ մինչև
հուրբ լուցեալ վառիցի, սոյնպէս և այս օծութիւն լու-
սոյ առ 'ի մեզ հեղեալ՝ 'ի հանդերձեալն ջահաւորի։
109 Այս է կերպարանին մեկնաւոր բացերևութիւն, 'ի
նախնեացն և այսր բերեալ բարենշան իմն յարմա-
րութբ՝ հրաշապայծառ երանգաւ գունեալ։

ԺԲ. Արդ՝ այսօրինակ պատճառ 110 վերագոյն մասանց
կեցուցչաց ածականաց՝ արարչութեդ հարազատոյ,
111 առանց որոյ ոչ է գրիլ քնեան, և ոչ նազովրեցի
անուանիլ, և ոչ յիշատակիլ յորդիս յուդայի, և
կամ խրախոյս բառնալ յանուն տն յակոբայ, այս 112
հիւթականութի օրհնութե ձիթոյս, յորում որբ եր-
րորդունդ խառնեցեալ միաւորի. Ճառագայթ շնոր-
հաց. 113 շուք մերոց դիմաց. նկարագրութի երեսաց.
բարեձևութի պատահմանց. լուսաւորութի աչաց.
տնազրութի բբաց. վայելչութի այտից. զարդ կեր-
պարանաց. սպահպանարան շրթանց. 114 համդերձիչ
կրօնից. յարմարիչ վարուց. շաղկապ հաւաքմանց.
զօրութի անձանց. ուժգնութի դիմեցմանց. խափա-
նիչ 115 յուռթից. քակտիչ հմայեկաց. նահանջիչ
ձեռնածուաց. խայտառակիչ կախարդաց. գտիչ
աղանդից. բռնախոյեան դիւաց. փարատիչ ցաւոց.
116 կատարիչ կնքեցելոց. տենչանք երախայից. 117
անզնին արտաքնոց. հիացումն հեթանոսաց. նա-
խանձաբեկու անհաւատից. մերկացուցիչ գաղտնեաց.
118 յարդանք յետնոց. փառք սորկաց. պճնումն կա-
նանց. աճեցումն տղայոց. հրճուանք ծերոց. ձեռնա-
դրիչ նուիրելոց. զգուշութի մաքրոց. պսակ թա-
գաւորաց. ճոխութի արքայից. յառաջադրութիւն
կայսերաց։ Քանզի զոր օրինակ աման ինչ կնքեալ՝
նշանակիչ իմն է 119 ներքնայնոցն մեծագնութե, նոյն-
պէս բարձրութի շնորհին 'ի մեզ սոսկաւ ծածկեցեալ
յանուն քո՝ ած տէր յս քս, վայելչական իմն տեսա-
կաւ ծանուցեալ նշանակի։ 120 Իսկ անունն իսկոյն
անդստին 'ի նոյն յորջորջեալ կոչմամբ, ըստ հոգելից
արանց իմաստնոց՝ որ յեգիպտացւոց անտի սկսեալ,
'ի դէմս ածելով զիւրեն կերպարան՝ ահաւոր խորհր-
դոյ պատկեր։

[121] Սաղմոս օրհնելոյ խաչին մեծի ։

ժԹ. Քանզի մեռոնս այս օրհնաբանեալ, [122] զոր մարգարէն կանխաւ լոյս աչաց՝ գրեթէ զայն աղերսեալ խնդրէր, ըստ քերթութեան բանի՝ որ ըստ խորութեան հոմերոսի՝ թարգմանեալ [123] իմանի, լինձ մայր. այսինքն է՝ առ 'ի յինքն ձգօղ զմերս բնութիւն զօրապէս, և կայուն հաստատել չքնաղ փոփոխմամբ զջուրց լուծականութիւն առ աւազանին լուսաւորութի. և իբրև զգեղ մածուցիչ կաթին՝ 'ի նոյն ինքն յեղանակել զցնդեալս իմ՛ վայրագութիւն, և զաղբերց հեղեղեալ մշտահոսութիւն։ [124] Իսկ մառնամուռ՝ որ և այս միւռոն, ըստ այլում բանի ցուցանի. այսինքն է՝ մթին, որ և խաւարչուտ գոլ և ծածկեցեալ՝ կամ անտեսական. որ և սոյն կոչումն դիմառութեն չէ օտարացեալ. քանզի արդարև յիրէ անտի անունն նշանակի. վասն զի անքնին է այս խորութիւն յաւէտ՝ քան զամենայն սրբութիւն սէգ։ Ոի ոչ եթէ ջրոյ օրինակաւ զաղտ ինչ լուանայ, և կամ հացի բնութեան զսիրտն հաստատէ, այլ նորոգ իմն յարմարութեան 'ի մասունս աղդողականացն տնօրինապէս տնապրի. սակայն անհասութեան վերնականաւ՝ և զանունն ունի անքնին։ Քանզի որպէս ած [125] իսկ և իսկ 'ի լոյս անմատոյց ասի, իսկ անսահման փառաւորութեան՝ յեղանակաւ իմն անքաւութեան 'ի խաւար անզննին ծածկեալ իմանի, փակեալ արտաքուստ 'ի ձեռնարկութեանց մերոց իմաստից, նոյնպէս և այս ծարութիւն լուսոյ՝ 'ի լեզուաց ոմանց Ճարտարաց 'ի Ճահ Ճեմութեանց՝ դրականապէս անունադրութեան՝ մեւայլ առձայնի, վասն ոչ զօրելոյ երկրածին բնութե զիսկն գիտելոյ։ Իսկ զերկաքանչիւրս [126] ածականացն՝ անդստին յինքեան հարստաբար տիրապէս ունի. քանզի 'ի կոչումն անուան բարձրելոյն նմանակերպեալ՝ կրկին մեծանայ իւղս այս նուիրեալ ամենաբուրեան ալնիւ կնդրկաւ. վասն զի ած մեր՝ հուր ծախիչ է, ըստ մովսէսի. և դարձեալ լոյս է, ըստ յովհաննու. ուստի և եսայի Ճշմարտապէս զայն ակնարկէ, եղիցի՝ ասէ, լոյսն իսրայէլի 'ի հուր։

Ի. Դարձեալ՝ այլ ինչ կերպացուցանելով զբանս՝ առ 'ի նոյն պատկեր յայտնութեն իւր. վասն զի ոչ մոռանամ[127] զինչ նողկութեն՝ որ 'ի գթութեն մեծիդ քաղցրացաւ՝ վերստին փոխեստիւ օրհնել. քանզի՝[128] մեռայ, որ է դառնութեն, այսինքն՝ նշանակ ինչ յար-մարական չարչարանօր կրից տաժանմանց, որ և մի-ւոյն սուգաբանեալ մեկնապէս ըստ մեզ՝ մեռելուն ազգականութե : Քանզի այսու օծմամբ հոգևորա-կանաւ՝ լուծեալ կամ հատեալ 'ի մնոտիասէր մահա-կերպարան տաղտկազազրական հեշտութեանց հակա-ռակողին, որ օգախոնաւ մեղկութբ զքնարս ձայնա-տրական՝ և կամ զարկուած վերածածկուե մինար-հեստ ուժգնաբարբառ խրոխտահնչական կազմուա-ծոյ թմբկիս գործականութե՝ ջրացիր ինչ գինջուք՝ ան-վայելուչ թուլադաշնակեալ՝ 'ի սորա կորստեան քարշէ զօրինակ մերս գոյութե, կապիմք յուսով վերըս-տին դարձեալ ընդ անձառ խորհրդոյ խաչի քո Քս. մկրտեալք 'ի մահ կենդանւոյդ՝ անվախճան կենացդ սովաւ հաղորդիմք, 'ի քեզ իսկ ա̃ծ համայնիւ խրա-խուսեալ՝ խայտառ ամենևին անհատուածելի :

ԻԱ. Այս իւղ՝[129] զգրօշեալն քառակուսեան յա-նուն քո յ̃մ՝ նշանի բարձրելոյդ հաւասար հաստէ. շնորհ ընձեռեալ զուգափառ և[130] նմանատիպ արեան կեցուցչիդ՝ նոյն անվանելի փառօք պսակեալ մեծա-ցուցանէ :[131] Փայտ անուանի իւղոյ օրհնութե, ըստ մարգարէին կանխաձայնութե, զ'ի հասարակաց կազ-մեցեալ բուսոց անտառաց զօրապէս ուղղեալ՝ 'ի խա-կութե չարին արկածից և օտար կարծեաց՝ 'ի ստեղ-ծողդ վերաբերեալ առ նոյն նիւթս կենաց հաստուն ներգործէ :[132] Ով և որ 'ի մեզ մուծն պատուհա-նաց մշտաբացիկ թափանցանցուք՝ յանուն մեծու-թե ահաւորիդ զօրութե՝ 'ի խոհական ինչ համեստու-թե քև ա̃նագրեցեալ առ 'ի յըղձակերտ օթեւան հոգ-ւոյդ՝ անազդելի պատրանաց չարին՝ խաւարահողմ խարդախողին,[133] այսու լուսով զգեցեալ ամփոփիմք 'ի նաւադ գոհուե երեկորեան պաշտաման՝ ընդ երկ-նայնոցն զամբարաց՝ առ օրինակ վառման շնորհիդ

որ 'ի մեզ. [134] 'ի սոյն յիշատակ փրկութե՟ն բարեացն՝ սուրբ տնկեցեալ ծառի, և ծաղկաւէտ եղեալ պտղաբերի. 'ի սպաս ընթրեացն պատրաստութեան յետնում գիշերի՝ 'ի մեծի գալստեան: [135] Ահա զայս լոյս ճրագի համարեալ 'ի կիր արկանեմք:

իը. Դարձեալ՝ [136] ըստ գծագրացն զուգմարութեան քսանեւչորիցն շարագրութե՟ որ յալփափետաց անտի վերաթուի մինչև 'ի քսաներորդ երկրորդն կարգի, յորում զայծ խորհուրդ խորութեան անտուստ թարգմանեալ՝ ճաշակ հեշտալի որոց հաղորդին՝ ջամբեալ պատրաստեմք ամենակազմ յարմարութբ. քանզի յութներորդէ անտի գրոյ՝ 'ի չորեքհարիւրն փոխաբերեալ՝ ստուգաբանօրէն քննութբ ընդ ձիթոյն անուան՝ նիւթ ճշմարտագրի. որ է կերպարան արդեան խմորոյ՝ յինքն բերողի զզանգուածն զօրեղապէս. որ ո՛չ սակաւն 'ի յոլովէն պարագայի, քան թէ 'ի նոյն իրն դարձուցեալ, ըստ անէտարմնակին առակին, զամենայն առ ինքն վերաբերեալ անձեցուն առնէ:

իթ. Սոյն իսկ հեղութե՟ն միշտ համեմարձման և խոնարհութե՟ն օրինակ և նմանութե՟, [137] առ ո՛ն կակուղ պատառաւ մատուցեալ ջամբի, հաղթակչիւ և բարեյարմար բանի կերպարան. իսկ համայնից լուծականաց՝ հրամնուստ և սորածորելի նիւթից՝ դերափառ վերաշրջական հրաշափառ խորհրդոյ պատկեր. քանզի և [138] յաման ինչ մորթոյ արկեալ՝ ո՛չ ըստ գինւոյ ձևոյ և կամ ջրոյ թացութե՟ մեղկէ, այլ 'ի սահման պատշաճին պահէ: Այպէս ընկալեալ զքնքոյշ բարեաց [139] անհաւասար առաւելութի՝ որդի ա՟յ կենդանւոյ, զորբանուէր այս օծելութի՝ 'ի ճակատ դիմացս [140] արեամբ քո գրեմք. և 'ի բնութի չնչոյս՝ հոգւով քո տպաւորեմք, հաւատացեալ խորհրդով մտացս, եթէ յաւէտ յայտնեցի նորոգ փայլեցեալ բազմաճաճանչ [141] ծայրարձակութբ՝ 'ի տարածումն յօգնատեսիլ զարմանահրաշ ընդարձակութե՟՝ պտուղ խնդոյ ընծայեալ զլոյս՝ 'ի փառս ապառնեացն հանդերձելոցն: Այս ճարպ հոգևոր երջանիկ և վերնանշոյլ՝ 'ի դէմս երեսաց իմս պատկերի՝ քումդ նշա-

Նաւ Ջահաւորեցի ։

Իէ. Եւ քանզի իբր անհաս [142] ոչ ըմբռնական այս մեծ զօրութե՛ արարչ. սլացմամբ 'ի թեւս թեթեւս մտաց պայմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից՝ անհունն հետեւման անհետ փախստեան՝ լայն իմն միջոցաւ խոյառ որոշեալ, փակեցաւ յինէն. ոչ օրինակեցաւ կցորդաւ. ոչ նմանեցաւ զուգամասնութբ. ոչ սահմանեցաւ ձեւակերպութբ. ոչ կշռեցաւ ընկերին չափով, այլ ահա ընդ ծ̃ծեան խաչիդ նշանի՝ հաւասարութբ արեան կեցուցչիդ՝ հոգիապէս դերազանցեցաւ։ Եւ արդ՝ օրհնեա՛ զմեզ տէր սուրբ եւ 'ի սոյն. եւ եւ [143] անուն քո ահաւոր, լուսաւոր, երկնաւոր եւ զարմանաւոր, 'ի գովեստ փառաց անճառից՝ մաքրակրօնից բուրվառաւ խնկեալ, սուրբ՝ սբ, անքնին, անպատում, [144] բարձրեալ, ողորմած, վերերգեալ, ճշմարիտ, բարերար եւ սբ, արա՛ սուրբ փրկութի. տուր եւ քաւութի. պարգեւեա՛ բժշկութի. [145] համերձաւորեա՛ շնորհ. առատաձեռնեա՛ երանութի։ Օծումն այս ձիթոյ՝ երկնանձրեւ լուսոյ՝ անարատ գտայց. յիւղեալս այս [146] թեղան բանաւորական՝ մի՛ մնացէ, եւ մի՛ գրաւեսցէ տխրականութի աղտոց մեղանաց՝ շաղախել երբէք զոգւոյս կերպարան։ Եղիցի սոյն ինքն որոց մատչին օծանիլ սուրբ [147] հարմնապահճոյճ պանծանօք պճնել դեղայօրէն սբ վայելչութբ՝ երջանկապէս յոգի զարդարեալ։ Եղիցի հուրս այս լուսափառ եւ ծ̃ծածիր՝ մերձեցելոցն 'ի սոյն ընտրութի [148] մուխ կրկնեռաց եւ բարեփափաք ջերմութե՛ այլ յօրինուածոյ, որով ամենայնիւ ամենապատրաստ սնդութբ՝ 'ի կարծրականումդ անսասան վիմիդ յարակայեցեալ միշտ արձանացայց՝ 'ի քեզ հաստատեալ աներկմտելի։ Լիցի նշանակ [149] վերնամրցանակ այսր պարգեւի սուրբ վառելոցն, ոչ ողողիլ ջուրբ. ոչ այրիլ հուրբ. ոչ ցրտանալ 'ի սառնութէ. ոչ վնասակար հողմով շիջանիլ. ոչ աղտեղիլ յուրուական ինչ պղծութէ. ոչ զպահեալսն՝ չարին մատնել, եւ ոչ 'ի ստորեւ ելիցն՝ զմթերս գանձուն կենաց՝ յիմարաբար արտաքս հանել. ոչ անպատսպար մնալ 'ի թեւոց քոց օգնականութէ, եւ ոչ զեղջեալն 'ի մեզ օծութիւն՝ անմաքրապէս 'ի բաց մերկանալ։

Որ եղիցուք քեւ 'ի սոյն հրացեալ. սովիմբ պարարեալ. սովաւ լուսաւորեալ. այսու արդարացեալ՝ ազատացեալ՝ պսակեալ և թագաւորեալ: Եւ 15
քեզ միայնոյ միայն օծելոյ՝ յամենեցունց օրհնութիւք երգոց, ալէլուք լեզուաց, հնչմունք ձայնից, յաղթանակութիւք գովեստից, բարեբաստութիւք շրթանց, սրբաբանութիւք սաղմոսաց, ընդ հօր և հոգւոյդ սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

151 Սա եմ ձեռնարկութիւն 'ի սրբութիւն, և այս արքայագրութիւն 'ի սրբութեանցն սրբութիւն:

---

(1) Վերջին յաւելուած: Այս մակագիր չէր 'ի մի օրինակ, այլ միայն յայլում, Աղօթք Բարեխօսութեան, ևն: Եւ թերևս յօրինակողաց մուծեալ իցէ. քանզի և օրինակք ոչ սակաւք չունին 'ի կարգի աղօթիցս զբանն որ վասն Մեռոնի:

(2) Աղօթք Բարեխօսութեան: (մի օրին. աղօթք բարեխօսութեան, իբր մեկնաբանականք:) աղօթական բացայայտութ 'ի վերայ սրբալուսոյ, որ կէտ հոգւոր լուսոյ տուիչ իւղոյն Մեռոնի: Վասն այսր բանի թէ առ ինչ յօրինեաց ոք վարդապետս, և կամ ինքն արդեօք եդ 'ի կարգ աղօթիցս, թէ այլ՝ տես 'ի բանն ղբ. ըծ. 1: Այսանոր ծանիր, զի սուրբն Կիւրեղ Երուսաղէմացի ունի ճառ 'ի վերայ Մեռոնի, կամ դրօշմի, մակագրեալ Խորհրդաբանութիւն երրորդ, որ թէպէտ ոչ գոյ 'ի հայումս 'ի տպագրեալ կոչումն ընծայութեան, բայց խոստանայ ('ի գլ. ժզ. երես. 373.) ասացանել: * Որպէս դրոշմն ձեզ տուաւ 'ի հաղորդութի հոգւոյն սրբոյ: || Արդ՝ սրբն գրիգոր բազում ինչ համաձայն այսմ ճառի խօսի յառաջին կայս. որպէս առորև 'ի տեղիս ինչ յիշեցուք:

(3) Փափագ յարախորժելի: Տենչանաց փափագ միշտ ախորժելի, այսինքն անյագ փափագմամբ ախորժելի. որչափ ուտակ ես, և բաղձրեալ և անպատում, նոյնչափ և անձկալի միշտ փափագանօք:

(4) 'Ի սրբերգեանցն: 'Ի որ որ երգօղ փառաբանողացն, իբր 'ի սրովբէից միշտ օրհնաբանեալ, բնակեալդ 'ի սրբում, 'ի սրբութե երկնից:

(5) Երկրպագեալ փառաւորեալ: 2 օրին. փառաւորութիւն:

(6) Ամէն. այսինքն դու ես Ամենայն՝ գոյութբ, զամենայն անխառն կատարելութիւ ունելով ծայրագոյն օրինակաւ: պատճառաւ՝ իբրև գոյացուցիչ ամենայնի: գաղափարաւ՝ զամենայն իրաց իսկութիւն 'ի քում էութեան երևեցուցանելով: և յամենայնում, յամենայն իրս գոյօղ էութբն՝ իբրև ամենատեղծ, ներկայութբն՝ իբրև ամենատես, և կարողութբն՝ իբրև ամենիշխան: Զայս ասաց և 'ի բանն ձ. 3. և առեալ է 'ի բանէն ա. կորնթ. ժե. 28:

(7) Դաշամբ յաւէտ: Այսու բանիւ խոստովանու իբրև յուսադրիչ դաշամբ եղիցի ինձ ուխտ միութեան ընդ քեզ: Դաշն յաւէտ ասէ ընդ հակառակն մարդկային դաշանց, որք 'ի վերայ ածեն զպայման արդարութե, և իւրաքանչիւր դաշնաւորի պարտ առնեն առ ինչ և առնուլ յօգուտ միմեանց: Բայց դաշն առ ած՝ զմարդն միայն պարտական առնէ ճշգիւ. իսկ ած 'ի պարտ գոյ միայն յիւրմէ առատութէն, և ոչ առնու 'ի մարդոյ զինչ յօգուտ իւր. այլ մարդն առնու բովանդակ

յայ՝ թէ զպաշտպանութիւն դաշինն, և թէ զհաստատութիւնն. վասն որոյ դաշն մարդոյ առ ած՝ է դաշն ակնկալութեան բարեաց յայ:

(8) Ալյօ ամէն: Ձայնք օրհնութեանց են՝ առեալ 'ի յայսմ. (ա. 7:)

(9) Մէտայն ատէնր: դու միայն պատճառ ամենայն պատճառաւորաց, առեղծելոց, եղելոց: Հին լուծ. խմանայ ես զհայր պատճառ որդւոյ և հոգւոյն: բայց անյարմար. զի առ քն են դէմք բանիս:

(10) Օծէալ ...: այսինքն քն միշտ պաշտաման արժանի: Զայս բան գնէ իւր հին յաջորդ մեկնաբանութեցն 'ի վերայ մեռոնի. զի յօծմանէն քնի ածութիւն դաւանեցուցանէ զբանն յօծումն մեր շնորհօք, և յայսմ օծմանէ՝ 'ի մեռոնն, որ է նիւթ օծմանն շնորհօք: Վասն այսորիկ առնու զյաջորդն:

(11) Ո... ...: այսինքն վասն որոյ, կամ յորմէ, թ 'ի քէն քն, կամ 'ի քումմէ օծմանէ բացայայտեալ 'ի մեզ ... օծմանս մեր շնորհօք, որ է անվաճառելի, և հարատութիւն ... անբաւանալի, անկորուստ յեկեղեցւոջ:

(12) Սդաւէն: Ապաստանին, ծառայէն հրեշտակաց ..., այսինքն բնութիւնքն՝ որք զլոյս օրհնութե և զբոց սիրոյ ընկալեն, որք և յօժարակամ հաճութեամբ հոգւով ծունր դնեն քեզ:

(13) Ս... ..., որ էն 'ի ... և 'ի ...: այսինքն առեղծիչ ամենայն բնութեանց կամ գոյից՝ որք անտեսանելի են, և որք ծածկեալք են, այսինքն երևելեաց և աներևութից: Բայց յընտիր օրինակ ինչ չիք այս բան: Իսկ յաջորդն, որ էսդ և էէր, խմանի: Դու որ այժմ ես բովանդակ կատարեալ, և 'ի սկզբանէ նոյնպէս էիր միայն կատարեալ, ընկալար տակաւին զմեր բնութիւն խակապէս և լիակատար՝ ոչ 'ի քո պէտս ինչ, այլ զի քոյով լնութե զմերս թերութիւն լցուցես. վասն որոյ զունայնն առեր, և զլցեալն ետուր. և այսմ 'ի մէնջ տրիտուր ոչ այլ ինչ՝ բայց օրհնութիւն և բարեբանութիւն, խոստովանելով թէ որպէս յէութեդ անքննելի ես, նոյնպէս յողորմութե 'ի փրկել զմեզ. և քո ողորմեցդ՝ է քեզ 'ի փառս և 'ի գովեստ անձառ բարձրութե. քանզի անհնար է ցայսվայր լինել ողորմած՝ բայց միայն այնմ որ յանչափս բարձր իցէ:

(14) Օծմանս շնորհի: Զմեր բնութիւն առնլով, և լնութե քո լցուցանելով, օծեր զնա. և այսու եղեր ... առաջին պարգևիչ օծմանս մեր շնորհօք. որ ունի զմեծ խորհուրդ հրաշալի. զի այնու օծմամբ լինիմք և մեք ածացեալք: կմ, առաջին պարգևիչ օծմանս. ըստ որում 'ի ձեռն առաքելոց կարգեաց զեւղն 'ի նիւթ օծմանս:

(15) ... ...: Լոյս ածութե քո, և լոյս օրհնացդ ... 'ի ձեռն օծման մեռոնի. ըստ այնմ. (ա. յովհան. բ. 27.) * Որպէս զի նորա օծութիւն ուսուցանիցէ զձեզ: || Իսկ հետևեալքն կոչականք են, այսինքն ով ... 'ի մասսոր աչաց: ..., որ ոչ սահմանիս տեղեաւ, կամ ժամանակաւ: .... որ անխտրաբար սփռես զլոյս յարդարս և 'ի մեղաւորս:

(16) Ա... ...: Ոմանք ըստ հին լծ. զարեգակնէ խմանան՝ ըստ որում կշռէ զջերմ և զցուրտ, զտիւ և զգիշեր: Բայց զարեգակն նախ եդ. այլ խմանալի է՝ արուսեակ որոշիչ կամ ցուցանող ..., երկուց համեմատ կամ ընդդեմ գոյութեց, այսինքն առընջեան և գիշերոյ, որք իբրև զթաթս կշռոյ ըծեալք ը̄ միմեանս, 'ի խոնարհիլ միոյն՝ ամբառնայ միւսն: Եւ սոցա որոշիչ կամ գուշակ է արուսեակն. զի երբեմն յառաջընթաց լինելով արեգական՝ առաւօտ գործէ. և երբեմն հետևակ լինելով նմա, գիշերոյ է գուշակ: Արդ՝ և քն ասի արուսեակ, (յայտն. իբ. 16:) զի տուիչ է առաւօտական հին օրինացն, և աւետարանիչ նորոյս. այլ և 'ի տնօրէնութե իւրում՝ մերթ

ըստ հրէականին զատուերանկերպ գործս օրինացն առնէր, և մերթ գե-
րազանց օրինացն՝ զլուսաւոր աւետարանին շաւիղս աւանդէր։ Գալ-
ձեալ, զի միաւորութիւն ունէր յինքն զաստուածութեան իբրև լոյս, և զմարդ-
կութեան իբրև գիշեր և խաւար առ ածութեան. ըստ այնմ՝ (յովհ. ա.
5.) «Լոյսն ՚ի խաւարի անդ լուսաւորէ, ‖ և՛ն։

(17) [illegible]։ Այն՝ որ յինքեան տրեզանին է հանապազածաւ, չա-
փով լուսաւորելով օրինօքն զնատեալքս ՚ի խաւարի անգիտութեան, առ
ձրագ ոտից հոգւոյն, այսինքն կարողութեանցն. և [illegible], գնա-
ցիցն կամ ընթանալոյն ՚ի ճանապարհ աստուածպաշտութեան։

(18) [illegible]։ Լուսովքս տեսեալ զցայլման խնամս [illegible], յարմարութեան խորհրդոյ մեռանելն ընդ լուսոյ ածու-
թեանդ, կամ ընդ խորհրդոյ մարդեղութեանդ։ Բայց յօրէն. [illegible]. և խմանի, յօրինմանե այսր ճառի, հաշտակեալ [illegible], հրեշտակային՝ հոգևոր պայծառութիւն, կամ պատրելով ընդ
հրեշտակս. [illegible], յատակ և ուղիղ մտօք. [illegible], քեզ փրկչիդ վայելչական կնդրկաւ օրհնութեան, [illegible], ան-
բիծ գաւանութիւն իբրև զուարթ լեզով, խնկելով զաստուածութեան պար-
գևաց։ կամ [illegible] զաստուածութեն պարգևաց [illegible], որ ըստ ոճ-
ոյից և ըստ պատշաճին գամնես հնարս լուսաւորելոյ զմեզ։ [illegible]։ մի օրէն. [illegible]։

(19) [illegible]։ Խմա կապեալ գոլով, այսինքն զըկեալ հայրն ա-
դամ՚ի բարձր շնորհաց անմեղութեան և իմաստութեան, և կապեալ ընդ
ապականութեան անզերծանելի [illegible], կապով, ՚ի ծառայն գերութեան
[illegible], այսինքն բերեալ յանկումն [illegible], անկանգնելի ՚ի
նոյն վիճակ անմեղութեան, [illegible], որով ամենայն բնութիւս
գլորեցաւ. և այնպէս մերժեալ ՚ի լուսաւոր կենաց դրախտին, խաւա-
րային կենացս մատնեցաւ՝ տգիտութեան և վլիպանաց։ Զոր դու [illegible], առաւել քան զադամ ծանեար [illegible], ՚ի զխասն և
զանմեղութիւն նորա, որով առեղծեր զբնութիւն նորա և զմեղանչականու-
թիւն, և թէ յոր բարձրութէ յոր անարգութիւն անկաւ, և թէ ո՛ր են նո-
րա պատշաճաւոր դարմանքն։

(20) [illegible]։ Եւ որովհետև յուսով ածանալցոյ՝ որ չէր
հնարաւոր, ոչ եկաց յանախատութեան և ՚ի փառսն՝ յորում էր, որով
և չէր կարող [illegible], այսինքն յայտնապէս առանց օրինակաց և առա-
կաց հայել մտօք ՚ի լոյս ածութեանդ, վասն այսորիկ [illegible], զգխսու-
թեան ածայնոցն ոչ պայծառ յայտնութիւն աւանդեցեր, այլ նարատիպ
և նմանութիւն զգալի խորհրդոց. ուստի և խաւարային [illegible], ոտից
առհեցուցիչ [illegible], վառանդաց կամ երկլեղալի սեղեաց՝ [illegible].
կամ եատւր զձեռնկալութիւն ձրագի, զձէթն խառնեալ ընդ պատրուգի,
որ է օրինակ միաւորութեան քո ընդ մեզ, ձէթ՝ զածութիւնդ նշանակելով,
և պատրոյգ՝ զմարդկութիւնդ։ Առել կամի. որպէս ՚ի դարման գիշերային
վառանդաց կարգեցեր զձրագն, սոյնպէս ՚ի դարման տգիտութեան և գխ-
րատհութեանն՝ որ ՚ի մեղացն ադամայ, եատւր զլեղ մեռանելն. որպէս զի
ոլք ՚ի խաւար մեղաց անկեալք արգելեալ պաղուին, ՚ի [illegible], ՚ի
դարման այնր իրի, կամ վասն այնորիկ՝ [illegible], նմանակից
պողով ձիթոյն լուսաւորեալք հաւատով, յառաջին [illegible]՝ ՚ի
փառս անմեղութեան դարձցուք։ Յայտ բանէ սոյ վարդապետս երևի
թէ առ ժամանակօք նորա զմեռանն առնէին ՚ի պողոց ձիթենեաց, և
ոչ ՚ի սերմանց շուշմայի. որպէս էր սովորութիւն առ ժամանակօք Շնոր-
հալւոյն. զոր և նշանակեալ էին յոյնք ՚ի հնդերորդ խնդիր իւրեանց.
և յիշէ նա ինքն Շնորհալին ՚ի Թուղթն առ աղէքս։

(21) Ո՛ւէ օր [illegible] ։ Որպէս ոչ է կատարեալ օր բնական՝ առանց գիշերոյ, այսպէս ոչ է կատարեալ լուսաւորութիւն հոգւոյ՝ և փրկութիւն յաւիտենական՝ որ նմանի առաւօտեան, առանց զգալի խորհրդոց, որք իբր գիշեր են վասն գաղտնութեան՝ այլ և բաղդատութիւ առ հանդերձելոյն ։ Եւ որպէս ոչ լինի [illegible], գործառնութիւն տան առանց ձիթոյ ճրագի, այսպէս և ոչ կարգաւորութիւնք եկեղեցւոյ առանց ձիթոյ մեռոնին. քանզի որպէս հասարակ ձէթն [illegible], ոչ օրհնեալ, լուսաւորէ զմարմնոյ աչս, նոյնպէս օրհնեալն անխափանելի բնորութեամբ [illegible], քահանայապետական օրհնութեամբն կամ իշխանութեամբ, որ իբր 'ի բերանոյ քո օրհնէ. կամ, ընտրութիւն հոգւոյն սրբոյ, որ է շնորհ շնչեալ 'ի քէն, զաներևոյթ հոգիս մեր պայծառացուցանէ, միանալով քո ընդ մեզ անտեսաբար ։

(22) Յիշատ[illegible] ։ Յիշատակն 'ի լուսարան. մի օրին. [illegible], և մարթ է իմանալ, զյիշատակն 'ի [illegible] հաւատովք՝ մարմնոյն լուսաւորեալ [illegible], զհոգւոյն սրբութ 'ի մեղաց ։ Նոյնպէս 'ի յօծումն դրոշմին մեռոնաւն՝ որով պարարի մարմինն յուսով, զհոգւոյն զօրութիւն համարիմք ընդունել ։

(23) [illegible] ։ 'Ի բժշկել քո զախտաժէտս՝ նախ կամէիր քաւել զմեղս նոցա՝ զպատճառս ախտիցն ։ Իսկ ոչ հաւատացողացն [illegible], զի առ քաւութեան մեղացն, զհրաշալի բժշկութիւն մարմնոյն վաղվաղակի յանդիման [illegible], մարմնոյ աչացն՝ հաւատարիմ վկայ հաստատէիր անզեղջ թերահաւատիցն ։ Որպէս առ անդամալուծաւն՝ նախ զթողութիւն մեղացն առեալ, և յանհաւատանալ դպրացն՝ ետ մարմնոյն բժշկութիւն, առ 'ի գիտելոյ նոցա թէ կարող է և զմեղս թողուլ ։ ( Մարկ. Բ. 5. 10. 11 ։ ) Նոյնպէս և առ մեզ փրկաւէտ իւղ մեռոնին՝ ածայինն օրհնութեամբն իբր լուսով կատարեալ, [illegible], զմարմինս. և զհոգին՝ [illegible], գաղտնի ածային զօրութեամբն ներգործեալ, [illegible], զի զծնեալն մկրտութեամբն՝ նոր օրինակաւ կենդանացուցանէ, ամբութիւն տալով շնորհացն և հաւատոյն զոր մկրտութեամբն ընկալաւ ։

(24) Աս[illegible] ։ Իւղն պէսպէս օրինակաւ պատկեր առի ած և քահ ։ Բայց աստանօր միայն ըստ ողորմութեան նմանեցուցանէ. քանզի իմաստուն կուսանաց օգտիլն իւղով իմանի օգտիլ ողորմութեամբն. ուստի իւղն է օրինակ ողորմութեան. և որպէս ինքն մի վարդապետս ասէ ( 'ի մեկն. Երգոց. Եր. 43. ) * Իւղ՝ ողորմութի կոչի ։ Զի և 'ի յոյնն նմանանունս ունին, [illegible], ողորմութի. [illegible], իւղ. և զի ողորմութիւն է ինքն ած, այսու իւղն լինի պատկեր ած ։ Եւ որպէս սէր կոչի ած, նոյնպէս 'ի [illegible]. ըստ իմիք՝ [illegible], իւղոյ անուամբ զեղջեալ ձեանայ, [illegible], ըստ մարդեղութեան՝ որով իբրև իւղ զուարթացուցիչ թափեցաւ 'ի մեզ. կամ, ըստ բարեխնամութեանն որ առ մեզ ։

(25) [illegible] ։ 2 օրին. [illegible] ։

(26) [illegible]՝ [illegible] ։ Մեծի խորհրդոյ յարմար նմանութիւն կամ նկարագիր է իւղս կամ ձէթս, ճարպ ասացեալ, ըստ որում որպէս 'ի կենդանիս ճարպն, այսպէս ձէթն 'ի ձիթենին՝ է պարարտութիւն թանձր և հոլովին մասանց նորա ։ Արդ՝ որպէս ըստ օրինացն՝ ճարպ զոհին ոչ էր ուտելի, այլ ած նուիրելի, ( Ղևտ. Է. 23. 25 ։ ) այսպէս [illegible], այժմ իւղս օրհնեալ, [illegible], իբրև զհնգքին պարարտութեան և այժ իրաց՝ [illegible], ած նուիրելի, և ոչ մարդկան, [illegible], 'ի նոր օրէնս, հաճութեան քո մատուցեալ նուէրի. [illegible], հոգւոյս կարի նման, [illegible], հաւասար կամ նման ընթա-

ցող . զի որպէս հոգին Թափանցիկ է 'ի մարմին , այսպէս Հէլթն ընդմատա_նող : Ուստի որպէս հոգին՝ քեզ արարողին միայն պաշտել , նոյնպէս և Հէլթն օրհնել : Բայց յերկու օրինակ այսպէս ղատանի բանս . Նոյնպէս 'ի ձեռնէ և այսոս վերջէ առ գծագրիս բան փոփոխութեան որ առ մեզ վերհագոյն մե_ծութեան խորհրդոյ յարմարաւոր դիմակերպութիւն : Այս ճարպ պարարտութեան , ևն : Իբր թէ . Սա է ճարպ պարարտութե , ևն :

(27) Պտուղ որոշիար : մի օրին . որոշի :

(28) Իբր ղշօրութիւն՝ փն ձատվելի : մի օրին . Իբր ղշօրութիւն փն՝ անձատվելի : որպէս թէ անմատչելի կամ անուտելի 'ի մարդկանէ :

(29) Օրինակ հոգւոյս : Արիւնն և ճարպն , կամ Հէլթն որք են օրինակք հոգւոյս իմոյ , և չարոյս , կարողութեամբ , ոչ են այրելի ընդ անդամս կեն_դանւոյն , այլ վերին արքայութեան հրճուիք , բաժին հանել լինին , իբրև աէրուտակսն ... . նեղանոյն ընծայեալ կերակուր , այսինքն օրհ_նել հիմթոյս , որ միշտ բորբոքի և պայծառ վառի զօրութեամբն 'ի մէջ եկեղեցւոյ :

(30) Դրախտ տնկոլայ : Դաստաւոր և գլուխ տանն : Անդրանիկ որդին առէ՝ բայց 'ի նախածնութեէն պարտ էր ունել և զօծումն առ 'ի լինել նախադաս տանն . զի առի՝ թէ 'ի հնման անդրանիկն վարէր 'ի տանն զպաշտօն քահանայի : Հին ըծ . առէ առտ , յերկուց տարրակայն՝ ըղ_մին զենոյր քահանայն , և յարենէն օծանէր զմանուկն : Բայց 'ի գիրս չիք այդպիսի օծումն : ( տես ղևտացւոց . ժբ . 7 . 8 : ) Ուստի քահանայքն : Քահանայն հրէական չունէր իշխանութի մտանել 'ի սրբութի սրբոց , որ անկոխելի էր նաև հասարակ քահանայից , եթէ չէր օծեալ գերագոյն իւղովն , թէ և սերեալ էր 'ի քահանայական ցեղէ :

(31) Պատկեր վիմին : Օրինակ հոգևոր վիմին քի . 'Ի խորհուրդ երկար , 'ի հեռաւոր կամ 'ի համդերձեալ խորհուրդ ընդորութե մխիթարեան խա_ռանին՝ զքարն օծեալ կացոյց յակոբ : Առ որ , այսինքն առ որով , կամ բաց յայնմանէ տպաւորեաց նաև ղիջման անձառ բարձրելոյդ , զմարդե_ղութե իջանելը 'ի մեր բնութի տեսլեամբ սանդղոցն , և զնա 'ի վեր տա_նելոյն , ը 'ի վեր տանելն , անդրադարձութեան , անդր ընդ խ ուղեկից լինե_լովն , կամ առաջնորդելովն ինձ յերկինս : Պարզ իմաստքն են . Նահա_պետն յակոբ 'ի ճանապարհի միջագետաց օծանելով զքարն , և արձան կանգնելով , երկու ինչ նախանկարեաց : Մի , զքարն զայն՝ յօրինակ հոգևոր վիմին՝ կանխազեկոյց խորհրդով եդ իբր հիմնարկութի մխիթա_կան խորանին : Միւս ևս բարձրագոյն , զի տեսլեամբ իմանալի սան_դղոցն՝ ընդ որ յերկինս ելանելոյ մեզ տայր յոյս , զնոյն զօծեալ արձանն եդ կացոյց վկայ իջման բարձրելոյն առ մեզ : Աստանօր զշարադրութին՝ առ որ ղիջման , մարթ է պարզել և այսպէս . առ որ , այսինքն առ վիջումն բարձրելոյն՝ զարձանն իւղեալ կառոյց նպատակ ևն :

(32) Գերագոյն իւղոյն : փառաւոր կամ մեծագին իւղոյն՝ կազմելոյ խառնութե ազնիւ իրաց . ( ելից . Լ . 23 . ևն : ) իջեալ 'ի գլխոյն ահա_րոնի 'ի մօրուսն՝ զարմանազան կենդանագրութիւն , զարմանալի ձևակերպութ առակէր զանդրադարձութիւն , նշանակէր զանդրէն զարձումն կամ առաջումն փառացն ադամայ , և զխառնութի շնորհացն ըդ Է մեզ : Զի օծումն գլխոյն նշանակէր զօծումն քի մծութեամբ . յորմէ շնորհք և փառք 'ի նախահայրն իջանէին , որ վասն հնութեն՝ մօրուօքն նշանակի : Ամբողջ իմաստքն են . Քահանայութեին ահարոնեան ըստ հրամանին քո օծմամբն միայն առնոյր զեւր յարգ և զօրութի . որով յիջանել ազնուագին իւ_ղոյն 'ի գլխոյ անտի ընդ մօրուսն . և անդուստ ընդ բոլանդակ հան_դերձն , որ և է հրաշալի գեղեցիկ նկարագրութի ըստ սաղմոսին , յայտ առնէր խորհրդաբար զվերստին փառաւորութի նախաստեղծին՝

սրբարար քոյ շնորհացդ 'ի մեզ խառնելով։

(33) Պափքէրան ափեղծափործիթ։ Անդամօր յինչեան աղջի և յօրէնան ոչ էր պանծալի, արդօ, ընդունելի, օրինաւոր՝ թագաւորական իշխանութիւն՝ իբրև պատկեր հաղորդ իշխանութե արարչին 'ի վերայ երկրի, եթէ ոչ օրհնեալ իւղովն ձեռնադրեալ՝ յանուն ... , իբրև օծեալ ՏՆ զարդարեալ թագին ամբառնայր զգլուխ 'ի վերայ ժողովրդեան։ Թէպէտ և յաջդէ թագաւորաց ոք էր, և 'ի ծիրանիս ծնեալ, ոչ թագաւորէր օրինօք առանց օծման։

(34) 'Ի վերնոյ անդի։ Աւետալ է այս յերկար պատմութէ ինչ յոհնոց, որ կայ թարգմանեալ յայսմաւուրսն. մարտի 25. ուր 'ի վերջն ասի, թէ մելքիսեդեկ կայր առանձնացեալ 'ի լեառն ձիթենեաց, (և Է յոհնականին՝ 'ի թաբոր.) առ որ երթեալ աբրահամ՝ օծաւ իւղով 'ի մելքիսեդեկայ. և լուաւ ձայն յերկնից՝ թէ մելքիսեդեկ մնասցէ քահանայ յաւիտեան. ևն։ Եւ թէպէտ 'ի պատմութե անդ Է այժմու օրինակաց ոչ գրի յայտնապէս, թէ 'ի հրեշտակաց օծեալ էր մելքիսեդեկ, սակայն կամ յայլ օրինակս կայր գրեալ, և կամ յայնմանէ իբրև հետևեցուցանելով ասէ ՏՐ վարդապետս, թէ անդ 'ի հրեշտակաց օծեալ էր մելքիսեդեկ։ Այս պատմութի՝ յանուն սբյն Աթանասի հրատարակեալ առ յոյնս, ընդունելի եղև ոմանց. բայց ապա քննեալ ստուգեցաւ՝ ոչ աթանասիւդոլ, և ոչ ընդունելի։ Աւլ ընդ հակառակն՝ ոսկեբերան. ('ի մեկն. ծննդ. ճառ. լԸ.) գրէ այսպիսի ինչ, * Քահանայ էր, թերևս անձամբ ձեռնադրեալ, զի այնպէս էին յայնմ ժամանակի քահանայք. կմ զի հինաւուրց էր հասակաւ, յիւրոց անտի ընկալաւ զայն պատիւ։ ||

(35) 'Ի դպրոց փեղուոյն Բուղէյան։ մի օրին. 'Ի դպրոցէ Եուղոյն Եուղէյան։ այսինքն յիւղոյ պտղոց ձիթենեացդ։

(36) Շիրմ օկղբնահօրն։ Աւանդութի է առաջնոցն՝ առեալ 'ի հրէից, թէ նոյ զոսկերս ադամայ ընդ իւր ունելով 'ի տապանին, յետոյ ամփոփեաց 'ի լեառն գողգոթա. որով տեղի գագաթան անուանեցաւ. ուստի և գերեզմանին ադամայ պահապան կարգեցաւ ասէ՝ մելքիսեդեկ, իբրև եպիսկոպոս և թագաւոր։ Բայց ոչ կարաց քաւել վասն ադամայ. մինչև յայտնեցար դու Տէր, բովանդակապէս, համայն Բոլորիր, բուն Ճշմարիտ քահանայդ կենագործութեն ադամայ։ Բայց լաւ օրինակն գնէ. մինչև յայտնեցար և եղեալ Տէր. որպէս թէ, մինչև յայտնեցար, և եղեր կատարելապէս Ճշմարիտ քահանայ։

(37) Բարէնշմար փղասրաբէ։ Բարեխօսիլ կամ հաճելի կացմութբ յարմարեալ զայս աղօթս Բուղասրակաւն, օծեալս եռանդիւ սիրոյ. Խնկապաշտր, առատացեալս նուիրմամբ ՏԾ պաշտաւն. Հմաստնիր, լցեալս գառնութբ զղջման։

(38) Զայս յէր։ Զզօրութի մեռոնին՝ որով օծայ, մատոյ 'ի վերս հոգւոյս. և զներգործութի օրհնութե նորա հանդերձ գինեաւ սիրոյդ տուր 'ի խոցուածս հոգւոյս, փոխանակ ամբասնիդ պատանիաց՝ զմիութիւնն ընդ արարչիդ շնորհելով. որպէս արարեր անկելոյն 'ի ձեռս աւազակաց. Ել ընչապակարան Բարգմանօրէնս. որպէս զի այս մեկնողական Ճառս մաղթանաց՝ վայելչաբար 'ի Բնա հոգւոյդ՝ առաջնորդութբ հոգւոյդ սբյ կարգաւորեսցի։

(39) Արտայուբէն առաջնափանէայց։ Զայս խմացան ոմանք Է հին լուծ. 'ի վերայ ազայելի արքայի ասորւոց. զորմէ ասացաւ առ եղիա՝ օծանել 'ի թագաւոր ասորոց. (Գ. թագ. ԺԹ. 15։) Բայց ոչ յարմարի. զի ՏՐ վարդապետս ասէ՝ թէ օծմամբն մատուցաւ 'ի կցորդութի տանն իսրայելի. իսկ թագաւորութի ազայելի եղև 'ի կործանումն նոցա. և զի զբան օծմանն ազայելի՝ յետոյ զատ յիշէ ՏՐ վարդապետս։ Աւլ թուի

իմանալ զճոխութիւն տէրութեանց՝ ընդունելովն 'ի կիւրոսէ . վասն զի կիւրոս կոչեցաւ օծեալ տն 'ի ձեռն եսայեայ . ( խե . 1 : ) և նա եղև առաջին հրամանատար և ձեռնտու գերեդարձին հրէից , և շինութե տաճարին : Եւ յետ նորա դարեհ առ զօրաբաբելիւ , և արտաշէս առ նեէմեաւ և առ եզրասաւ բազում նպաստս և պարգևս արարին հրէից՝ իբրև զսեպհական թագաւորս իսրայէլացւոց : ( տես . ա . եզր . բ . գ . 43 . 47 : ը . 4 . 10 . ևն . ) Վասն որոյ ըստ այսմ յարմարի ասելն , թէ օծմամբն՝ որ 'ի կիւրոս , արքայութիւն տէրութեանց դրոշմեցաւ և մատուցաւ 'ի միաբանութիւն տանն իսրայէլի :

(40) Կայսերս ամառն : Ոմանք ըստ հին լուծ . իմացան 'ի վերայ կայսերաց կամ թագաւորաց 'ի ժամանակս հեթանոսութե . որպէս կիւրոսի , դարեհի , ևն . և զօծումն նոցա ոչ իրական , այլ նմանութբ իբրև մեղմացուցանելով զնոսա տն 'ի գազանութենէն , և 'ի հնազանդութիւն իւր ածելով : Բայց լաւ ևս իմանալի է վասն ժամանակի քրիստոնէութեան . յորում յայլ և յայլ ազգաց զերևելի թագաւորս՝ ծաղս այս կենդանածնող ցօղով , հոգևոր կենաց առեալ ցօղով մկրտութե հեղեալ 'ի նոսա , որսացաւ 'ի հպատակութիւն տն քրիստոնէական օրինաց . որպէս զկոստանդիանոս 'ի լատինացւոց , զտրդատ 'ի հայոց , զխոսրովն նուշիրուան 'ի պարսից , զաբեններ հայր յովասափայ 'ի հնդկաց , և զայլս յաղուանից , 'ի բուլղարաց , 'ի թաթարաց , ևն :

(41) Երկնաւորին պատուատէրութե : Բանն պատուոյն կամ մեծարանացն , որով կամէր տն յարգելի ցուցանել զկիւրոս , առաւել մեծ համարեցաւ նմա զօծեալ անունն , ( եսայ . խե . 1 : ) քան թէ կոչել զնա՝ թագաւոր , ծառայ , ևն . զի թէպէտ և չէր նա օծեալ օրինական իւղովն , այլ զի ընտրեալ էր յտն իբրև յատուկ թագաւոր իսրայէլի՝ խնամ տանել գերեդարձի նոցա , և շինուե քաղաքացն և տաճարին , վասն այն օծեալ ասացաւ : Եւ ոչ է վրէպս յայսմանէ ձեռնարկէ զառաւելուն օծմանն :

(42) Գեր քան զմարգարէութե : Առաւել քան զմարգարէի պատիւ զօծեալ անունն նախադասեաց , ասելովն . ( սաղմ . ճդ . 15 : ) * Մի մերձենայք յօծեալս իմ . || և ապա դնելով . * և 'ի մարգարէս իմ մի մեղանչէք : || Յանուանական ընդ մեղաւորութե , արգելողական որոշմամբ զատանելով 'ի միմեանց . իբր զի առ մարգարէսն՝ զմեղանչելն կամ զչարասելն արգելու . իսկ առ օծեալսն՝ նաև զմերձենալն :

(43) Նշանակ էր : Ապաքէն որ 'ի հրամանէն տն , առ 'ի նշան թէ հանելոց է զհեթանոսս և զիսրայէլ 'ի պաշտամանէն բահաղու , եղիայի ազդեաց օծանել զյէու 'ի թագաւոր իսրայէլի , և զազայէլ 'ի թագաւոր ասորւոց :

(44) Որպէս զի հոգին՝ տն յաւէտ պատկեր և նշանակէր , զի քօղով զմեծդ հրաշագործութե քո նկարագրեալ , ընդ քեզ միաւորեալ ասամբ քո ընծայեր : Անորոշ է իմաստ բանիս 'ի սակս կարգի շարադրութեն , որով նոյն բառ կամ հատուած կարէ վերաբերիլ առ այլ և այլս , և որով բառքս՝ որպէս զի , զի քօղով , հոգին տն , կարեն պէսպէս իմանիլ : Մեք մանր քննեալ ըստ մեր օրինի . որոշեցաք կէտիւքդ . և ըստ եդելումս՝ այսպէս իմանալի է : Անուն փեսայիդ 'ի սողոմոնէ գրեցաւ իւղ թափեալ , այսինքն 'ի մեզ թափեալ , որպէս զի հոգին մեր՝ որ տն պատկեր և նշանակիչ է առաւել քան զայլ բնականս , զի քօղով զմեծդ հրաշագործութե , 'ի փոքր բնական նմանութեան՝ զմեծդ նմանութիւն գերբնական՝ քո , քո թախմամբդ նկարագրեալ , ընդ քեզ ընդ սկզբնատպիդ միացուք օծմամբ շնորհիդ : Կամ , զի քօղով , մարթ է իմանալ՝ 'ի փոքր իւղս կմ 'ի փոքր օրինակս իւղոյ . իբր ասել . որպէս զի հոգին մեր 'ի փոքր իւղս զմեծիդ տն կերպարանիլն կամ օրինակիլն՝ յինքեան նկարագրեալ խոնարհութբ , ընդ քեզ միացուք , ևն : Իսկ եթէ այլազգ առցին բառքդ , այսինքն որ-

[illegible] առնուլ իբր նախդիր, [illegible]. և զհետևեալ [illegible] առ-
նուլ իբր շաղկապ, յայնժամ այսպէս իմանի. իւղ Թափեալ գրեցաւ
անունդ, [illegible], որպէս զթափեալ 'ի հոգին մեր. [illegible],
որպէս զի փոքր հոգւոյս՝ զմեծ քո կերպարանդ նկարագրեալ, և այլն։
Եւ եթէ [illegible], իմասցուք զհոգին սբ, յայնժամ մեկնի. որպէս զի
հոգին սբ՝ Թափմամբ իւղոյն՝ առաւել պատկեր և նշանակիչ զի փոքր
բնութե զմեծ նմանութիդ ձևացուցեալ, են։ Հին լուծ. յայլ ինչ օտա-
րացուցանէ զբանս, 'ի դէմս հոգւոյն սբյ առել։ Ո՛վ հոգի սբ, որ այս
եզս՝ առաւել պատկեր և նշանակիչ քո է, արասցես՝ զի ընդ փոքունս
զմեծդ ընդ քեզ կերպաւորեսցուք։ Անյարմարութին ինքնին յայտնի
է. զի բովանդակ ընթացք բանիս առ քս խօսին։

(45) [illegible]։ Մանուածոյ, կամ խրթնածածուկ բանաստեղ-
ծութիւն. [illegible], հեռաւորս, կմ մեկնողականս. [illegible],
օրինակականս, նմանականս։ Զինչ և յաղագս մեծութե իւղոյս ա-
ռեալ գոլոյ բանս 'ի հեռաւոր և յօրինակական և 'ի մՁին ապացուցից,
ուր ահա դու ինքն ահաւորդ են։

(46) 'Ի [illegible]։ Յետ քարոզելոյդ՝ օծեալ, այս սկսար քարոզել
զաւետարանն, վկայեալ 'ի միրոնէն. ( յովհ. ա. 36։ ) * Ահաւասիկ
քս գառն սբ։ || Կամ յօրինակական օծմանէ անտի՝ որով 'ի միրոնէն
զհոգին սբ մարմնաւոր տեսլեամբ ընկալար 'ի քեզ, սկսար քարոզել։
Զի թէպէտ [illegible], փոխանակ օրհնութենական կամ շնոր-
հական օծմանն 'ի սկզբանէ յղութե հոգին սբ էր քեզ օծումն [illegible]
[illegible], էութբն կատարելապէս ընդ քեզ լինելով, և [illegible]
[illegible], և միաւորութե աստուածութեն բովանդակ էր օծումն մարդկութեանդ,
[illegible], սակայն անուն օծմանն կամ օծելոյ հռչակի 'ի
միրոնէդ, կամ յետ միրոնութեդ, [illegible], 'ի խորհուրդ
կամ 'ի նշանակութի շնորհական օծմանն, որ 'ի մերն գործի. որով ա-
նուամբ զնուաստութի ադամեան բնութեն մեծացուցես։ Այսինքն,
[illegible], յերկու օրինակ դնի, [illegible]. և այս զայս միտս.
թէպէտ և քեզ առաւելութբ հոգին սբ էր օծումն, և չէին պէտք ա-
նուանակոչութե օծելոյ, սակայն տակաւին անուանն պաշտելի էր, յար-
գոյ և հռչակելի առ 'ի նշանակ օծման արդարոյ են։

(47) [illegible]։ այսինքն Ած մարդացեալ, որպէս և
յայլ բանս ասացեալ եմք թէ վարդապետք 'ի խօսելն զԱծայնոց՝ բա-
զում անգամ զվերացեալ անուանս 'ի կիր առնուն փոխանակ Թանձրա-
ցելոյ. դու ինքն Ած 'ի մարդեղութեդ անձամբ ընթերցար զբան եսայ-
եայ. Հոգի տն 'ի վերայ իմ և այլն. և ծանուցեր 'ի կարգի բանին թէ
զքումդ օծութե մարգարէութի է. վասն որոյ փակեցեր են։

(48) [illegible]։ Եթէ փակել իմանամք ըզ-
գիրսն՝ զոր ինքնին երաց քն, և կատարեալ զընթերցուածն՝ խփեաց,
ըստ այսմ բառքն 'ի [illegible]՝ յարելի են 'ի յաջորդն։
Իսկ եթէ զփակումն ոչ առ գիրսն առնումք, յայնժամ նշանակէ՝ խա-
փանել, 'ի բաց տանել, որոշել, և իմանի՝ այնու մարգարէական բանիւ
զայլ օծեալսն 'ի հասարակական օծմանէ՝ որոշեցեր, զատեր. [illegible]
[illegible], որ երկաքանչիւր օծմանցն նախայիշատակելոց՝
քո և մեր՝ ցուցեր բազում խտրոյաւ տարբերեալ. զմերս իբր կաթիլ
մի շնորհաց, և զքոյդ՝ բովանդակ լնութբ աստուածութեն։

(49) 'Ի [illegible]։ 'Ի նախկին ծանօթանալդ մերձա-
կերպն 'ի ծննդեան գիշերին, հրեշտակք [illegible] անուամբ քարոզեցին
հովուաց։ ( Ղուկ. բ. 11։ )

(50) [illegible]։ է բանն անմոլ. ( բ. 13։ )

(51) [illegible]։ Առ 'ի զաւեալ մարդկութիւնդ

ձեռնադրելոյ օծմամբն ։ Զայս պատիւ օծման ասէ՝ պատմեաց Դաւիթ ․ ( Սաղմ ․ ԽԴ ․ 8 ։ ) զոր իմացեալ զանձնաւորական օծմանէն , պատիւ ասի՝ ոչ իբր վարձք արդարութեանն քո ․ զի ըստ այդմ հետևէր՝ թէ քո իբրև լոկ մարդ գործեալ իցէ զարդարութիւն , և այնպէս արժանացեալ անձնաւորական միաւորութեանն , որ նեստորական է ․ ուստի յաւել սաղմոսին ․ * Վասն այսորիկ օծ զքեզ Ած || ևն , Վասն այսորիկն ոչ յայտ առնէ զարդիւնական պատճառն , իբրև թէ վասն սիրելոյդ զարդարութիւն , և վասն ատելոյդ զանօրէնութիւն էօծ զքեզ անձնաւորական միաւորութեամբ ․ այլ յայտ առնէ զվախճանական պատճառն , իբրև թէ վասն այնորիկ էօծ զքեզ , որպէս զի սիրեսցես զարդարութիւն , ևն ։ Իսկ եթէ Վասն իմասցի վասն մարմնոյն քո , մեծութիւն անուանն , դատողական իշխանութիւն , ևն ․ որովք ևս առ օծեալ պատահական և արտաքին օծմամբ , ըստ այսմ ասելն Վասն այսորիկ , նշանակէ զարդիւնական պատճառն ․ իբրև թէ վասն սիրելոյդ զարդարութիւն , օծ զքեզ Ած իւղով փառաց առաւել քան զընկերս քո , ո՛վ քան զամենայն երանեալս և փառաւորեալս , որք հաղորդութեամբ փառացն առին ընկերք քո ։ Զայս տեղի սաղմոսին այսպէս որոշեն և մեկնեն վարդապետք և ածաբանք , և զգուշութեամբ է քննելի ։ զորմէ տես 'ի մեկն ․ Սաղմ ․ և մեք իսկ խօսեցեալ եմք 'ի մեկն ․ եբրայ ․ Ա ․ 9 ։

(52) Օծեալ անուանդ քոյոյ ։ Ասէ՛ն երեմիայ ( Ողբ ․ Դ ․ 20 ․ ) Հոգի երեսաց մերոց տէր քս , յայտ առնէ զբուն զխակական անունդ Օծեալ , կամ զանունն իւկութեան և ճշմարտութեան ․ որով ծանուցեր մեզ՝ թէ կենդանական շունչ ես 'ի հոգիս մեր ըստ առաջին փչմանն ․ ( Ծննդ ․ Բ ․ 7 ․ ) և միանգամայն լոյս վառեալ յօծմանէդ , որ սաղմ ․ Դ ․ 7 ․ Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց , ուրախութիւն պարգևեալ սրտից մերոց 'ի պաղոյ ձիթոյ ։

(53) Իմաստութեամբ ամենայն երգչանիի ․ ո՛վ սիրելիքդ , ( ԽԷ ․ 22 ․ ) Մարգարէութեան նախաժամանելի ։ կամ առ նախատեսեալ բանն յարելի է այսպէս ․ բարերարութեամբ քո ազդեցեր՝ իմաստութեանն սիրելեաց ․ ո՛վ մարդասիրութիւն խոստովանելի ․ առ ելանողաց առ ոմն , վասն ումեմն , այսինքն վասն ստմուելի , թէ եդ վկայութիւն առաջի Քն օծելոյն , այսինքն սաւուղայ , զոր ոք վարդապետս այլաբանէ 'ի քն ․ Տէր առնէկեցայ վկայելով բանիւն , թէ և ոչ կոչիկս առի յամենայն մարդոյ ։ Ասել կամի , սամուէլ յօծեալն սաւուղ զքն տեսանելով , զնոր աւետարանի կանոնն պահեալ խոստովանէր զայն՝ զոր քն աւանդեաց առաքելոց՝ մի՛ բառնալ կօշիկս ։ Զկենդանութեան ճահո ։ Դանիէլ մարգարէ զկենդանատու մահուանէ քո Հայեաց յայտնապէս , զայս կոչումն ձայնի , այսինքն զօծեալն անուանադրելով 'ի Հէր տան զօրինաց , այսինքն արտաքոյ քան զսովորական կոչմունս պատուոյ ․ և վկայեաց ասելովն թէ զկնի Հաբաւոն և ինն եօթներորդացն սպանցի օծեալն ։ 'Ի տեսլեան դանիէլի ( Թ ․ 26 ․ ) ասի՝ յետ վաթսուն և երկուց եւթներորդաց ․ իսկ ոք վարդապետս դնէ՝ վաթսուն և ինն , 'ի մի գումարելով զամենայն ժամանակն ասհմանեալ մինչև 'ի Քն , ըստ յառաջընթաց բանի տեսլեանն , համար 25 , մինչև ցօծեալն առաջնորդ՝ եւթներորդք եւթն , և եւթներորդ վաթսուն և երկու ․ որով ընդ ամենայն՝ վաթսուն և ինն կատարի ։

(54) Իւղ քրիստոնէական գինի ։ գինի կազմեալ ըստ արհեստի իւղագործաց խառնութեամբ ազնիւ իւղոց , որ ծանուցեալ զխորհուրդն մարդեղութեան , այլ և զամենայն վարս առաքինութեան և մաքրութեան , անդ ամենայն , 'ի սկզբանէ անտի , կամ 'ի սկզբնէ գրոցն մինչև 'ի վերջն՝ անուամբ զմռոյ , կնդրկի , և ամենայն փոշեաց անուշից՝ իւղովք կազմելոց յատաջաբերեալ , արտայայտեաց , ծանոյց ։ ( տես երգոց ․ Ա ․ 3 ։ Բ ։ 4 ․ 5 ։ Դ ․

6 ։ դ․ 10 ․ 11 ․ 14 ։ ը․ 2 ։ )

(55) Զաքարեայ ադդովեայ՝ որ 'ի Բարէքէայ ։ Աստանօր փոխադրութիւն կայ անուանց․ զի ըստ գրոյն ( Զաքար․ ա․ 1․ 7․ ) Զաքարիա մարգարէ որդի էր Բարաքեայ, և թոռն Ադդովայ․ իսկ աստ եդեալս երևի ցուցանել՝ որդի Ադդովայ, և թոռն Բարաքեայ ։ Բայց իմանալի է այսպէս․ Զաքարիաս 'ի տանէն Ադդովայ՝ միջնորդութեամբ Բարաքեայ․ և ըստ այսմ յարաբերականն՝ որ 'ի Բարաքեայ՝ ոչ ցուցանէ զԱդդով, այլ զԶաքարիա ։ Օրինակ ինչ նշանակեալ 'ի լուսանցսն գծիւ ⊤, փոխանակ աւելոյ՝ որ 'ի Բարէքէայ, ակնարկէ ընթեռնուլ որդի Բարէքէայ ։ Իսկ 'ի Բարէքէայ առելն փոխանակ 'ի Բարաքեայ, վասն ըմբռնողութե̃ տառիցն է․ զի և եբրայականն գրէ՝ պերեխիա․ և տառին՝ պերախիա ։

(56) Խուղոյն Բարէբաղի Բոյաքրոութէ ։ Մի օրին․ Խուղն, և նոյն է իմաստն․ այսինքն․ հաւասար որոշմամբ կամ բաշխմամբ խողոյն 'ի մասունս եօթն առաջադրոււէյ, այսինքն ճրագաց կամ բերանոց, գնդէոյ ղաուէլոյ, ճրագացն վառելոց 'ի գնդին, 'ի ջահէ անքէ ղորոութէ անէխասխաբէար, զօրութե̃ 'ի ներքուստ, կամ բնածին զօրութեամբն բաշխեալ, այսու զփրկութի̃ մեր և զծնունդ 'ի քուրմէ լուծե̃ գէրաբնադէս, շնորհօք կամ գերապայծ օրինակաւ նախադէխոյէր, նախածանուցեր ։ Ըստ այսմ իմացեալ, աւագին ուղղական անուանն՝ ձրագաւէր ադաանաւն, լինի որ բային հիճախարէալ ։ Սակայն կասկածելի է վրիպակ ինչ մնեալ 'ի գրչաց 'ի բայն նախադէխոյէր, փոխանակ գրելոյ նախադէխոյանէր․ այսինքն աշտանակն զաքարեայ եօթնաջահեան խողոյն բաշխմամբ յառաջադոյն ծանուցանէր զմեր ծնունդն ։

(57) Զոր ։ Զորս միանգամ ըստ օրինացն՝ ադնընդէլ Բհ նրթոութէ, յորժ ծանուցեալ սովորութեամբ, նաքոյեալ ընէր հրէից․ այսինքն զորս միանգամ սովորաբար ընծայէին հրէայքն 'ի տաճարին․ որք են պանք բաղարջըեծայք, բնիթք հացի 'ի բաղարջոյ արարեալք կի̃ անխմորք ։ ( այսպէս առանց կիտի դնին 'ի մեր օրինակս, համեմատ բանին Ելից․ ԻԹ․ 2․ ուր ասի՝ Պանս բաղարջս․ և այլն ամենայն հրամայի լինել բաղարջ ։ ) Եւ նաւէհք, այսինքն մանրամաղ ալեւր ցորենոյ՝ և այլ կազմեալքն 'ի նմանէ՝ զանգեալք իւղով․ ( տես և ղևտ․ Բ․ և Է․ 12 ։ ) Եւ զուարակք եզանց խողաբէաւ․ ոմանք մեկնեն՝ ուղղակիցք, պարարտք․ բայց իմանալի է՝ օծեալք․ Ը̃ որում քահանայն դնէր 'ի գլուխ նոցա զծեռն ձեռս իւր ։ ( տես Ելից ԻԹ․ 10 ։ ղևտ․ Գ․ Դ․ ԺԴ ։ ) Եւ ջիբաշխն անոււմբ, այսինքն Որոտն, կամ Ոնական ձայնեցեալք․ ըստ որում նուիրէինք էին Ոն․ ( ղևտ․ ԺԴ․ 8 ։ ) Այլ և պատարագք հաւուց՝ թաթաւմամբ միոյն յարեան միւսոյն, որ է աղգախիծ ձարպին, նմանակից ձարպին կի̃ իւղոյն․ ( ղևտ․ ԺԴ․ 6 ։ ) Այս ամենայն աստ՝ կամ իւղով զանգեալք, և կամ օծեալք, են այսր խորհրդոյ մեռոնին՝ առաջեան գէնակք, առաջինկայ կամ յայտանդիման օրինակք, և նշանք յարմարեալք քեզ Քն̃, որ աքանչելի նոր օծմամբ Ան̃ծութեդ եղեր պատարագ և զոհ ։

(58) Եւ ուծաղաջէէլեդէն ։ Զինչ ես յերկար զօրինական հնոյն նկատեցից, և ոչ ճաշակեցից մօք զօրինակեալդ 'ի նոսա քաղցրութի̃․ իմանալով թէ ըէնէբոէ Խուն, զինչ նշանակիցէ իւղն արկեալ 'ի պատարագն, բայց եթէ զարդարութիւն՝ որ 'ի ճաշակմանէն ադամայ, ոււջբմէ, իւղով մեռոնին բժշկել․ ըստ որում իւղ զուարթ առնէ ։ Եւ ըէնէ դա բարքոութէն, ճարպն, բայց եթէ զի զմահաբեր կերակուրն՝ մեռոնաւս մաքրեսցուք, լցեալք 'ի սմանէ ։ Եւ ըէնէ օծոութէն ձեռաց, գլխոյ, ականջաց, են, բայց եթէ ըստ բանին եսայեայ․ ( կա․ 3․ ) զմիտրատեսակ տրամութիւն այսու իւղով ուրախութե̃ փոխարկեսցուք ։ և անոււմբ քո, քնական անուամբդ փրկեալք, աղգ և զաւակք Այ անուանեսցուք ( Ը̃

եսայ. կա. 3. 9:)

(59) Որոյ ծներութէն առաջի. ՟ի օրինակի՝ կամ այլաբանի 'ի ձէթ պա-րարտ, (սաղմ. ղա. 11:) Բաղձանքն գաւթի՝ զի ծերութեն իւր լինիցի օծեալ ձիթով, և օծանիլն գլխոյ նորա (իբ. 5.) զի՞նչ այլ ասյ իմա-նալ տայ՝ բայց եթէ զհին օձապատիր սուղն մահու կենդարծել կամ բժշկել դեղով մեռոնին:

(60) Ծրագին լուսաւորելոյ շնորհակալութէ: Շնորհս մատուցանելն գաւ-թի վասն լուսաւոր առնելոյն զՃրագն. (սաղմ. ժէ. 29:) Արժան է զբանն լուսաւորելոյ ընթեռնուլ զատ. լուսաւոր եղէւոյ. քանզի և 'ի մի օրի-նակ գնի՝ լուսաւոր եղէւոյ: Այս շնորհակալուն ասէ՝ զի՞նչ յայտ առնէր խորհրդաբար, բայց եթէ զի 'ի մէջ խաւարի անդիտութե և կռապաշ-տութե՝ կէրգաելօգաէս մոռութէ, ընդ մերում կերպի բնութեամբ միանալովդ՝ 'ի յիս լինելոց ես էմմանուէլդ:

(61) 'Ի պարտէլէալէնէաց: 'Ի բնագրին երգոց. ՟ը. 1. գնի. * 'ի պար-տէզ իւր 'ի գաշտս խնկոց, || և 10. գնի, * 'ի պարտէզս ընկուզաց: || Իսկ ՟ո՟ք վարդապետս գնէ էաշէնէաց. զի խնկենին և ընկուզին՝ իւ-ղայինք են:

(62) Ընփրանի նիւթիւ: Բանն եսայեայ. (իե. 6.) օծցին իւղով, և այլ բանք երգոյն զի՞նչ այլ ցուցանեն, բայց եթէ՝ զի այսու նուիրեալ նիւթով մեռոնին՝ յորում գոյ զօրութիւն հոգւոյդ այդ, լուսաւորեալ տեսցուք զանխափանալի բարձրութիւնդ:

(63) Բնաւեց էղէւոյ: մի օրին. Բնաւին էղէւոյ: Աւ. քեզ որ պատճառդ ես ամենայն եղելոց, ձեռն համբառնամ հառաչանօք երկրպագնդս, ըստ ողորմութեան պաղատանաց առ քեզ կարդալոյս, ՟ի կարդացողիս, աղաղակողիս. կամ, ըստ կարդալոյ պաղատանաց: շնորհաւորեալ, շնոր-հաղարդեալ պարգևօք օծմանս, գոհուն քեզ մատուցանեմ, որ բարձ-րեալդ ես, և անփոփ փոփոխման, անյաղելի, անսպառ փափաքանօք միշտ օրհնեալ, են:

(64) Ո՛ւ ճառին մոյ: և ո՛չ փոքր ինչ լուսոյ մատուցման արժանի եղելոյս՝ առ յոյս քաղցրութե, ըսնէլ շու, պարզել, բացայայտել քո լուսովդ՝ զգաղտնիս մեռոնին. որպէս զի գրգռութէ, զախորժական և զհեշտացու-ցիչ իմաստս խառնեալ ընդ աղերսական բանիւս, տայցէ՝ թէ ողորմեցար ինձ, և զանյայտս իմաստութեամբ քո յայտնեցեր ինձ: (սաղմ. խէ. 10. ծ. 8:)

(65) Ընփանի նիւթոյս: Ընդ սովորական կամ հասարակ նիւթոյ ձիթոյս միացուցեր շնորհաց անձառ, զզօրութիւն հրաշալի գործոց քոց: Էրկիրս լայ-նութե. մի օրին. Էրկիրս լայնութե: Աստանօր բաղդատութիւն երկրի և երկնի առ ան՝ ո՛չ է ըստ էակութե, այլ ըստ բնական զօրութե նոցա առ-շնորհատու և սքանչելագործ զօրութիւն ան: Զոր բնապէս ոչ զօրէ ասէ՝ առնել երկինք և երկիր, այլ էէր ղէոյէ 'ի մէծէ բէրէ, որպէս զփոքր 'ի մեծէ պարունակի կամ յաղթահարի - զի բնական զօրութիւք նոցա յաղթահարին 'ի սքանչելագործ զօրութէն ան: Արդ՝ զպայծառ զօրութիւն ասէ, 'ի փոփ փոյս, 'ի նուաստ էակս ձիթոյ փէտախանէշէր ղօ-րութէ, էացուցեր կամ երևեցուցեր հաստատութեամբ, սահմանելով ճշմարտապէս անհրաղարէլի, առանց պարագայից. ղէ մինորգ էռ. զի մի՛ յորժամ նորահրաշ գործ ինչ երևեսցի եղեալ մեռոնաւն, (որպէս 'ի դրօշմելն՝ այլ լեզու խօսել, կամ մարգարէանալ,) յայսէութէ, յստակ էութէ ձիթոյն, որ բնապէս չունի յինքեան զայնպիսի զօրութիւն, առ-աչօք անցաւոր տեսիլ ինչ կարծեսցի. որով մեզ տեսողացն վիպասա-նին առաւել թերահաւատութեամբ, կամ ծաղր առնելով զկրօնս մեր, քան թէ բժշկլին հաւատալով, և լուսաւորելին: Ասել կամի. զլինել

այնպիսի մեծ զօրութեան 'ի ձեռն նուիրական՝ յոյժ հաստատութեամբ հաւատարմացուցեր յայտնի նշանօք, զի յորժամ սքանչելի գործ ինչ երևեսցի լեալ յայնպիսի ուխտի իւղ, մի կարծեսցի պատրանք ինչ դիւական, այլ աստուածային ներգործութիւն : Այս են ներքին իմաստք ամբողջ բանիս, բայց ըստ շարագրութեան՝ յարաբերականաւն զոր, լաւ ևս է իմանալ զհոգին սուրբ, համեմատ յաջորդ բանիցն, և իմաստքն պարզին : Զի այն հոգի՝ զոր տանել ոչ կարէ երկնից բարձրութիւն, և երկրի լայնութիւն, և անդնդոց խորութիւն, այլ մանաւանդ այս ամ իր փոքր ինչ ամփոփեալ լինի առ 'ի հոգւոյն, ահա զայս զմեծ 'ի տկար նիւթս տալաւորեցեր, ըստ օրինակի հացին և գինւոյ 'ի հաղորդութեան, և ջրոյն 'ի մկրտութեան նն :

(66) Երևութականութիւն ինչ վարկանեալ : մի օրէն . Երևութականութիւն ինչ վարկանեալոյ . այ երկրայելի իր ինչ, կամ կեղծիք :

(67) Ուղղէս մարմին : Որպէս զհացն ցորենոյ ճշմարտապէս քո մարմին արարեր արարչական զօրութբ, և զգինին խաղողոյ զգինին՝ յայլ յուժ, ըստ քո արարեր . ուր զիւղոյն միայն յիշէ, զի երևելի մասն էր տրունական արեանն : Եւ որպէս զջուրն ճշմարտապէս արարեր արգանդ հոգևոր ծննդեան, նոյնպէս և զհոգի անմահ ճշմար . ( այսպէս 'ի լատին օրինակն . իսկ հոգի անմահ տալոյն ոչ յարմարի . ) նոյնպէս և զհոգիդ՝ զոր փչեցեր յառաքեալսն, առնա և 'ի նոյն, մեռոնաւ և ներքին զօրութեամբ նորա 'ի յօծեալսն արդիւնաբերեցէր, արդեամբք կամ իսկապէս շնորհեցեր : Ուր տեսանի յայտնապէս, զի համեմատութիւն ոչ է ըստ փոխարկմանն, այլ ըստ ճշմարտութեան և ըստ ներգործութեան . իբր ասել . որպէս 'ի խորհուրդ հաղորդութեան՝ քահանայագործեալ հացն և գինին են իսկապէս մարմին և արիւն Քրիստոսի, և ներգործեն զշնորհս նոցա . և որպէս 'ի խորհուրդ մկրտութեան՝ ջուրն իսկապէս ծնանի զմեզ 'ի հոգևոր կեանս, այսպէս 'ի խորհուրդ դրոշմին՝ մեռոնն իսկապէս տայ օծելոյն զհոգին սուրբ : Այսու օրինակաւ խօսի և սուրբն Կիւրեղ յերրորդ խորհրդած. զոր յիշեցաք 'ի լծ . 1 . ասէ . * Զգոյշ լեր, մի իւղ մերկ և սոսկ համարիցիս լինել . զի որպէս հացն հաղորդութեան յետ կոչման հոգւոյն սրբոյ ոչ է հաց հասարակ, այլ մարմին Քրիստոսի, նոյնպէս և սուրբ իւղս ոչ ևս է լոկ իւղ յետ կոչմանն, այլ Քրիստոսի պարգևարան, և հոգւոյն սրբոյ ներգործօղ հուպ գոլով աստուածութեան նորա : * Սոյնպէս և 'ի դիոնեսիոսեան գիրս յաղագս եկեղեց . քահանայապ . ( գլ . դ . բնաբ . դ . ) խորհրդոյ հաղորդութեան համեմատելով, ասի . Զայս՝ աստուածային առաջնորդքն մեր՝ որպէս համակարգ և նոյնագործ ժողովոյն նուիրագործութեան, ( այ հաղորդութեան, ) նոքաւմբք պատկերօք ըստ բազում իրիք, և խորհրդականօք բարեզարդութեամբք և սրբազնաքանութեամբք գծագրեցին մեզ :

(68) Երկուսն չենայ : Ըստ օրինակք վերջակնիւ զատանեն զայս 'ի նախընթացէն, և լաւ ևս է : Ասել կամի . զերկուսս կամ զծնունդ կենաց ծածկեցեր, յայտնեցեր 'ի մեզ, որոյ կերպարան յառաջեկելոյն, այսինքն դէմք կամ կնիք ծնելոյն հոգևորապէս՝ և ոչ հեթանոսութբ կամ ուրացութբ կարէ փոխարկիլ . զի անջնջելի է կնիք դրոշմին, որպէս և մկրտութեան, որով և անկրկնելի . ըստ բացատրութեան՝ փոխարկութիւն իբր ածական իմանի՝ փոխարկելի . այսինքն կերպարան յառաջ եկելոյն ոչ է փոխարկելի : Իսկ եթէ առցի իբր գոյական, բառն կերպարան 'ի սեռական հոլով իմանալի է . այսինքն որոյ յառաջ եկելոյ կերպարանին ոչ է փոխարկութիւն և ոչ հեթանոսութբ . որպէս ոչ փոխարկութիւն, որպէս և ոչ օրհնութեան կամ օծման խաչի լինի երկրորդութիւն, կրկնումն . զի միանգամ օրհնութիւն ունէ 'ի նմա՝ ցորչափ անխորտակելի մնայ . Զայսպիսի անկրկնելի ծնունդ օծման ասէ՝ մեզ նստելոյս 'ի խաւարի ծագեցեր ըստ նմանու-

Ռէան քօ, որպէս և քո օծումն մարդկութեան միանգամ է, և անփոփոխելի ։

(69) Ցայս կերպարան ճորհի ։ ՚Ի շնորհ մեռոնին զանպակաս լնութիւն քո ծանուցեր. որով ոչ աղքատն կարօտասցի, և ոչ մեծատունն բարձրամտեսցէ. որպէս և զօդն՝ և զլոյս արևուն, և զջուրս հաւասար ամենեցուն բաշխեցեր ։ Այսպէս կամեցար և զշնորհ մեռոնին՝ ըն հաւասարապէս բաշխիւր, բաշխեալ լինիցի երկրաւորաց ըստ նմանութեան մանանային. թէպէտ աստանօր քօքանցն, խոնարհացն հոգւով առաւել հաղորդի շնորհն, քան մեծամեծացն, հպարտաց ։ կմ, փոքունցն առաւել, այսինքն աղքատաց կամ նուաստից առաւել ամ բաշխել, այնու զի թէպէտ հաւասար են պարգևքն առ մեծամեծս, և առ աղքատս, բայց առաւել աղքատն և նուաստն բարձրանայ ՚ի հաւասարութիւն մեծատանն, որով առաւել լինի քան զոր էրն ։

(70) Տեառնորդութէ ։ Այսր նիւթոյ յայտնութիւն կամ ներգործութիւն խորին խորհրդոյ՝ ն ՚ի բնեայփ, նաև ՚ի բնական հանգամանացն կամ ՚ի յատկութեց իւրոց ունի զարմանալի օրինակս ըՐարգմանէ, զմեկնութիւն կամ զբացայայտութիւն իւր ։ Մի օրինակ դնէ ։ Այս նիւթ՝ փէսառրութէ խորին խորհրդոյ ։ Իսկ թէ ո՞յք են այն հանգամանք, իբր զի առէ՝ ձէթն ոչ էրկիմփ իւն ըսՐաքութէ, ոչ երկչոտ շտապմամբ ինչ փոխէ ըղձանքն, որպէս մանիկն անհաստատ. և ոչ նէնգողաբար, ծածկապէս կմ առ սակաւ սակաւ թողու զանօթն, կամ զայլ ինչ՝ յոր միանգամ շաղախեալ է, որպէս թողու ջուրն՝ ցամաքելով մեղմաբար ։ և ոչ կէրըեախօք ամառուէք, յոյժ զօրաւոր մաքրողական նիւթովք հերքի. և ոչ ոշնդդիմակցէ ուՐէքէ, ՚ի հակառակէ իմեքէ, ՚ի ջրոյ՝ կամ ՚ի գինւոյ՝ կամ յայլ իրէ լուացեալ ելանէ. և զայսոսիկ իմն յոյժ դժուարաւ ելանել առնառովք կամ այլ իրօք ։ Արդ առէ՝ այս բնական թափանցումն ձիթոյն, և դժուարաւ ջնջումն՝ յայտ առնէ զանջնջելի ներգործութն նորա ՚ի դրոշմին և յայլ եկեղեցական օծմունս. որպէս յօծանելն զեկեղեցի, զսկի, զխաչ, զզանգակ, ևն, որոց օծումն ոչ կրկնի՝ ցորչափ անեղծ և ամբողջ կան ։

(71) Պաբահսաճ գաննոյ ։ Որպէս բնական գոյնն ՚ի գոյացութե մարմնոյ անփոփոխ է և անհրաժէշտ, անեղանելի. մինչ զի ՚ի գոլ իւր՝ գոյ և մարմինն, և յեղծանիլ իւր՝ եղծանի և մարմինն. (իմա զայս ըստ բոլորովին եղծման բնական գունոյն, և ոչ ըստ պատահական այլայլութե ինչ ։) Այսպէս և խղայս զօրութէ, իմա հայցական, այսինքն զգերբնական զօրութիւն կմ զազդեցութիւն իւղոյս, որ անդստին ՚ի յիւրոց անփի կերպարան, յիւրոց կերպարանաց կամ ՚ի հանգամանաց անտի զարէսն սանոզի, ունի կամ ըմբռնէ զառեալն այսինքն զտեղին կամ զանօթն՝ զոր միանգամ կալեալ է, մտանխան զօգոսութէ, իբրև համարումն կցորդութե ընդ մեզ կալեցեր ։ ընդ իրին գոյի, ընդ շնորհացն կամ գերբնական ներգործութեանն՝ որ է իւրն նշանակեալ ՚ի ձիթոյ անտի, ն զօրինակն ըմակցելով, զընութիւն ձիթոյն՝ որ օրինակ և նշան է անեղծ ներգործութե նորա, յարմարելով ։ Որով և զներգործութն մեռոնին՝ որ անեղանելի է առաջ և մնայ, իբրև երևելի ձևացուցեր բնական հանգամանօք ձիթոյն ։ Այլև զի ՚ի պատոց էրէր, ՚ի ձիթոյ կամ ՚ի շուշմայէ ճնշմամբ հանելով զիւղն՝ զարմանալի օրինակս մեզ ՚ի կերակուր և յօծումն պատրաստեցեր ։ Որ և այս յարմարի հոգևոր ներգործութե մեռոնին. զի որպէս իւղն ծածկեալ թաքուն է ՚ի մարմնի պտղոյն, և միայն ճնշմամբն երևի, այսպէս ներգործութիւն մեռոնին անտես գոլով առաջ՝ ՚ի հալածանս և ՚ի նեղութիւնս որ վն հաւատոյ՝ երևի գործովքն ։ Բովանդակ բանիւս զայն յայտ առնէ, որ և ամբարանքն ծանուցանեն, թէ նիւթք խորհրդոց թէպէտ

և ոչ բնական զօրութբ ներգործեն զհոգևոր գործս, սակայն ունին բնա֊կան նմանութի ինչ ընդ այնց գործոց. որպէս 'ի մկրտութե՝ ջուրն բնու֊թբ լուացօղ է աղտից. և 'ի հաղորդութե՝ հացն բնութբ է յագեցու֊ցիչ, և գինին բնութբ զուարթացուցիչ, համեմատ հոգևոր գործոց խո֊րհրդոց: Այսպէս և 'ի դրոշմին՝ մեռոնն բնութբ դժուարելանելի է՝ համեմատ անջնջելի ներգործութե իւրոյ: Վերոգրեալ բանն, 'ի [illegible] կարէ իմանիլ և այսպէս. իւղոյս յե֊րոց հանդամանաց անտի՝ իբրև բնուի զառեալն ենթակայ ունողի. իբրև թէ, զենթակայն՝ զոր առնու, իբր բնական ինքեան ըմբռնէ, կամ 'ի նորա բնութիւն կերպանայ:

(72) Ո՛չ [illegible] խառնեալ: Ո՛չ հրամայեցեր զայս իւղ կազմել 'ի բաղա֊դրութէ բազում խառնեալ ծաղկանց և յայլ և այլ անուշահոտ իրաց, որպէս հրամայեցեր մովսեսի 'ի հին օրէնսն. (Ելից. Լ. 23.) այլ փոխա֊նակ այնպիսի իրաց զօրինակն 'ի ճշմարտութե փոխելով, դու ինքն խառ֊նեցար, ոչ բնութբ, այլ զօրութբն 'ի սոյն անխառն ձէթ [illegible], առօղ երկնային լուսոյ: Այսու ոչ եթէ աւելորդ կամ անպատշաճ ասէ ըզ֊խառնութիւն անուշահոտ իրաց 'ի մեռոնն, որ հին սովորութի է նաև առ մեզ, որպէս յիշէ յուստինոս վկայն, որ էր յերկրորդ դարուն, 'ի բանն ընդդէմ տրիփոնի. այլ և յիշատակի 'ի դիոնեսիոսեան գիրս, յա֊ղագս եկեղեց. քահանայապ. գլ. դ: Այլ ասէ եթէ, թէ ոչ հրա֊մայեաց քս 'ի նորումս, որպէս հրամայեցաւ 'ի հնումն. յայտ առարեալ թէ այս խառնութի ոչ է 'ի հարկէ խորհրդոյն, և ոչ յածային հրամա֊նէ, այլ միայն եկեղեցական արարողութի և հրաման ըստ իւրաքանչիւր ազգի: Զի և վասն խառնութե բալասանի, որ սովորուի է առ լատինս և առ յոյնս, պնդեն բաղում ածաբանք՝ արարողութեց քննիչք, թէ հարկաւոր է առ նոսա յեկեղեցական հրամանէ միայն, իբր զի նախ քան զվեցերորդ դարն չէք ասեն՝ յիշատակ խառնութե բալասանի: Այլ զայսմանէ յերկարել՝ ոչ է տեղւոյս:

(73) Ըստ օրինակաց երկնից: Թէպէտ և քաղցրութի քո մեով օրինակաւ ոչ համեմատի, այլ զանազան իրաց նմանիս, այսինքն ծաղկի դաշտաց, շուշանի, նարդոսի, եղեգնախնկոյ, քրքմոյ, ողկուզոյ, ևն. սակայն ոչ [illegible], ոչ վայրապար, այլ ըստ պատշաճագոյն օրինակեցար [illegible], միայն պարզ իւղոյն օրինակեցար փառաւորեալ անուամբ, որ իւղ թա֊փեալ աստցար յերգսն. իբր զի դու զնմ ընուս, և ոչ իմիք կարօտիս. և այսու առաւել նմանիս 'ի յիւղն. զի յնմ աստցեալ ծաղիկս և յա֊նուշահոտ իրս՝ փակել զամենայն իւղային մասունս, և նովաւ է ազնուու֊թի նոցա:

(74) Ո՛չ շփոթելով: Պարզ և անխառն իւղոյն օրինակելով, և 'ի նա միանալով՝ պարարիս. որով ցուցեր՝ թէ ոչ խառնեցելովք 'ի հա[illegible] [illegible], յայլ և այլ հակառակ և աննման իրաց, որ է մեկին [illegible], յայտնի օրինակ բաժանեալ կամաց և անմիաբանութե, այլ 'ի միաբանական սիրոյ մերմէ ածոյդ՝ իբրև պարփչ մեր պարարիս և զուար֊ճանաս. ուստի և վասն մեր ըստ մեզ, ըստ մեր տկարութե կամ իմացո֊ղութե՝ ամ յարմար նմանութեբ օրինակիս. [illegible]. ընդ որ նմանութեց՝ նաև նիւթ ձիթոյս մաքուր մնաց տեսանի իբրև լոյս բարի, և հուր սէ֊րոյ անխառն 'ի շնչմանէ [illegible]. (մի օրին. [illegible],) այսինքն սառեցուցիչ հոգւոյ անգթութե:

(75) Աստուածաբան աւետարանչին: Յովհաննու. (Գ. 69:) որում միաբան ասէ իմաստունն, (առակաց. Դ. 10.) * Ընկալ զբանս իմ, զի բազմա֊ցին ամք կենաց քոց ||:

(76) [illegible] [illegible]: 'Ի կեր արկանէ զբան տն (մատթ. Է. 17.)

* Օ՛ծ զգլուխ քո, և լուա զերեսս քո || . ըստ որում և ես ասէ՝ լուա-ցեալ զերեսս կենդանատու ջրովն աւազանաց, որ է ջուրն գեր 'ի վերոյ քան զհաստատութեն երկնից. (Ծննդ. Ա. 7.) և օծեալ զգլուխս մտաց երկնային խնդրդ լուսաւորութեն, յանդիման եղէց քեզ յաղօթս ուրա-խութե, և ոչ տրտմութե:

(77) Պատուելի: Յարգելի հոգևոր մեծարանօք. և Երկրպագելի. գովե-լի. Հ՛ւ ոսկի օծեալ. յարգելի և գովելի է ոչ միայն ըստ օծմանց և կակ-ղացուցիչ ...: խելապատակիս, կամ գագաթանս, որ է ա-նօթ ուղղոյ, և կամ ըստ որում հերաց գլխոյն նպաստ լինի մատուցանե-նոյաս կակղացուցանելովն. այլ ըստ որում տէրունական խաչին տնա-գրի յօրհնելն. 'ի մի օրին. ... ..., եւղ եդեալ փոխանակ ուղղոյ. ըստ որում այս է իւր իւղ և պարարտութե գլխոյն:

(78) Զի...ն, զխուժադժանի մարդն. ..., զեթովպացին. ..., զպարսիկն. ..., զթաթարն. ..., զհոռոմն. ... ..., զվայրենի գաղանաբարոյն. և ..., զարհուրելի կերպարանօք ..., յայն վայրենի ազգէն՝ որ շան նման գլուխ ունի, ..., ահագին մեծութե. որպէս էր քրիստափոր վկայն: Զայս ամենայն ասէ՝ իւղն օրհնութեն՝ քնեան անուանքն մի առնէ. և իբրև մի ազգ՝ երկնաւոր հօրն որդի հաստատէ, հաստատելով զհնորհ միութեան: Ա-յսու 'ի կիր արկանէ զբան առաքելոյն. (կողս. Գ. 11:)

(79) ...: Բաղում զարմանալի ներգործուեր տեսանեն նախ՝ 'ի բնական հանգամանս ձիթոյն. և ..., ուք և խորհրդական զօրութե նորա յարմարին: Որպէս անօթ փայտեղէն ոչ օծեալ՝ գիւրաւ բեկանի, այսպէս մարդ ոչ դրոշմեալ, ... ... 'ի հաւատոց՝ և 'ի շնորհայն, զոր միրոնութեն ընկալաւ:

(80) Մ... ...: Ա-յս իւղ օրհնեալ՝ է իբր հրաշագործ մանն քո, կրելով յինքեան զզօրութե հոգւոյն սբյ՝ որ մանն ոչ ասի: Վասն զի սա իբր ... .... որպէս 'ի փայտ կամ յանօթ օծեալ, իւղն լինի իբր պահապան ընդդէմ ջրոյ կամ գոլնոյ, այսպէս մեռոնն իբրև ան-մատնելի կաղմած զրահի և ամուր պահպանակ, ..., յամենայն կողմանց հաստատուն կամ զգուշաւոր պարփակմամբ պահպանէ զօծեալն յայլանդակ ... ..., 'ի նաեմացուցիչ օտար յաւելուածոց. ուստի (թաթաւեալն սովա՝ ոչ ներկի ... անգթու-թե, մարդասպանութեան, եւն. և ոչ մթագին ..., գունով ապի-տութե, կամ այլ մեղաց ախտի:

(81) Մ... ...: Որպէս ասէ՝ ձէթն տարածական և թափանցող զօրութե ունի, մինչ զի անկեալ 'ի հանդերձ կամ 'ի փայտ՝ յամենայն մասունս նորա տարածի և ընդմանանէ. ուստի և սաղմոսն՝ զանէծս ըստ նմանութե ձիթոյ ասաց բաշխիլ յուկերս ամբարշտին: Ա-յսպէս մեռո-նաւն հոգևորապէս ընդ բնութիս մեր թափանցէ հոգին սբ. և առող-ջացուցանէ ... ..., զկերպարան հոգւոյն, կամ զա-ներևոյթ վէրս նորա. և օծանելով զամենայն անդամս մարմնոյն, որպէս առնեմք 'ի դրոշմելն, աղդուածս տայ կիր ներգործէ 'ի ... ..., 'ի ներքին շնչափողէ անտի մինչև 'ի ծայրս մատանց ոտիցն. և մասնաւո-րանէ զվիշտսակ մահու. զի օծումն՝ անապականութե է նշանակ. և զի յայս խորհրդական օծումն միշտ միացեալ է կենդանարար զօրու-թիւն քո:

(82) Ա... ...: Ա-յս վայելչական օծումն՝ նաև առ ընփիշ՝ ուք բուռնք ձեռաց կամ ուժով բազկի մարմնչին, և ..., մերկ մարմնով կռուելն, ... .... առաւելագոյն իբրև օրենք 'ի գործ ածի.

իբրև զօրաւոր հնարից ներպարան ճգնաւորական, հանգամանք կամ տեսակ պատերազմական, որպէս զի անընդմէջ լիցի ձեռաց հակառակորդին: Այսպէս խորհրդական օծումն 'ի մեզ՝ աջակիւ է ընդդէմ դիւաց և այլ մոլորաց: Քանզի գեղեցկազարդ բանն եզեկիէլի սակ առ իմանալին փարաւոն սատանայ, ևն: Աստանօր յարմարէ զբանն եզեկիէլի (գլ. իթ.) որ ըստ գրոյն խօսի զվիշապէն ծովոյ, և առ 'ի միտս զսատանայէ. յորում զկործանումն նորա հեգնաւոր առակագրութբ, ընդ ծաղր նմա_ նուաստութբ և ողբական խօսիւք յարմարեալ սակ (համար 13. 14:) Յորժամ հաստատեցար. և հանդերձեցար 'ի պատերազմ ընդ օձելոյ թշ_ նամւոյն, այսինքն ընդ օծեալ քրիստոնէին՝ որ իբր հրեշտակացեալ է. որ արքայն հրեղէն, յորում պարգևք և շնորհք հոգւոյն իբրև հրեղէն քարինք պատրաստեալ կային առ 'ի ջախջախել զգլուխ քո: Յայս միտս բերէ զայս ո̄բ վարդապետն՝ յարմարելով անցելոյ բանին. Թէպէտ ըստ Ճառին սովորաբար յայլ միտս իմանան մեկնիչք:

(83) Ամենաշայր յեանկուութբ: Ահաւոր տէրութն, որ յամենայն տեղիս օգնական ես և կարող, անճառելի բանիւք, և գերազանց քան զքննու_ թիւն մտաց: Որ աւետարանաւն խնդա, օրհնիս, օրհնութբ պատուեալ յիշատակիս իբրև օծեալ տէր, որպէս առ հովուսն 'ի գիշերի ծննդեանն. (ղուկ. բ. 11.) և 'ի քահանայապետէն հարցեալ 'ի մատնութն գիշե_ րին. (մատթ. իզ. 63.) և պետրոս նոյնպէս դաւանեաց զքեզ. (մատ. ժզ. 16.) և 'ի թերահաւատ խնդրողացն նոյնպէս հարցար. (յովհ. ժ. 24:) Եւ 'ի կանոնականացն քոյ, 'ի կանոնական խրատուց կամ հրամանաց քոց, յորս ասացեր (մատթ. իգ. 10.) ուսուցիչ ձեր քս̄ է, այնպէս հաւատամք և մեք: Եւ յառաջ քան զայսոսիկ՝ հերովդէս օծեալ ա_ նուամբն հարցանէր զքեզն առ վարդապետս հրէից, (մատ. բ. 4:) Եւ նոքին աւետարանիչք գրեն, թէ դու իսկ ասացեր, զիա՞րդ դաւիթ զօ_ ծեալն տծ՝ զտէր իւր և զանսկիզբն որդի այ̄՝ կոչէ որդի իւր ժամանակա_ ւոր: Այսմ հարցման հրէայք չկարացին տալ պատասխանի. բայց հա_ ւատացեալքս այսպէս ընկալաք զմեկնութի բանիդ, թէ կատարումն այնր խորհրդական կոչման օծելոյ՝ 'ի մեզ հայի: Այն է գերազանց վիճակ քրիստոնէից, իբր զի ժամանակաւոր ծնեալ որդիքս ադամայ՝ օծմամբ մեռոնին հաստատիմք որդիք այ̄: Գիտելի է, զի աստանօր յայտնագոյն լինին իմաստքն, եթէ զլայն գրեն ընթեռնումք եղական՝ գրեն, իբր ա_ սել. Դու իսկ ասացեր, զիա՞րդ գրէ դաւիթ զանսկիզբն որդին՝ լինքեան ժամանակաւ որդի ևն:

(84) Խաղաղարական խնկաւորութբ: Գերազանց անուն օծութն զայնքան աջաւորութիւն ունի և զօրութի, և զամենաւատ յարգութի, կամ օրհնութի, մինչ զի ևն:

(85) Աշ անուանիւ: Ո՛չ ոք 'ի սուեղծուածոցս լինի տծ կոչիլ բնութբ, (թէպէտ և հաղորդութբ կոչին երբեմն.) այլ ածայինն կոչին պատահա_ բար, այսինքն վերաբերեալ առ տծ իբր բնակարան, իբր պաշտօնատար, իբր հաղորդեալ իմաստութեն այ̄, կարողութեն, մեծութեն, ևն. ըստ որում ասեմք, Ածային տեղի, Ածային առաքեալ. ևն: Իսկ էականա̄պ իմացեալ զածայինն, ո՛չ ասի սուեղծուածոց. զի ըստ այսմ բնութբ այ̄ պատշաճի, որպէս ասեմք՝ տծային անձն, բանն տծային, ևն: Սոյնպէս ոչ բերէ մարդն, ոչ տանի մարդն՝ զքս̄ անունն իսկապէս կրել. (Թէպէտ և պխտակաբար ասի. որպէս կկուրեղ. 'ի խորհրդած. մեռոն. * Դրոշ_ մուն քս̄ եղայք ||.) այլ և լինքն ո̄բ վարդապետս բերէ յածարանէն ('ի մեկն. երգ. երես. 94.) * Քրիստոս զխնեմ զկեցեալսն ըստ քս̄ի ||. այս է 'ի գովեստ աճանաս. բան իմ. այլ ըստ Ճշմարիտ օծութեն՝ միայն Քրիստոնեայ կոչիմք:

(86) Նախնեայն Քրիստոսէ: Օծեալն անուն անուանելի եղեւ մեծութե յովհաննու մկրտչի, յասել նորա, չեմ ես Քնն. (յովհ. ա. 20:) Նախնեայն օծանք ըստ հին լուծ. իմանան ըստ հասակի, իբր վեց ամսովք յառաջ ծնեալ քան զՔս. բայց լաւ եւս իմանի ըստ գերազանցութե սրբութե. այսինքն գերազանց սրբութե յովհաննու՝ որով մեծ կոչեցաւ եւ առաւելաւ քան զամ մարգարէս, չեղեւ համարձակելի քնդ անուն: Չորբ ւնոգին, որ մկրտութբ լոկ ջրոյն զհոգեւոր մկրտութին պատրաստեաց. (մատ. գ. 11.) կամ, 'ի ջուրն յորդանանու հրաւիրեաց զհոգին սբ 'ի վերայ Քնի:

(87) Առաքելականայն լծակցութեն: Առաքելոյն երկու երկու միաբանութին (մարկ. զ. 7. 13.) Իբր ազգակից, իւղովն իբրեւ քո ձեռամբդ վարելով, բժշկելին զհիւանդս:

(88) Ցաւ յառողջութե: Յայտնի օրինակս՝ զանմիաբանութի իւրաքանչիւր հակառակացդ պարտ է իմանալ, եւ ոչ զմերժումն միայն 'ի միմեանց. այսինքն որպէս ցաւ չկարէ կալ ընդ առողջութե, եւ ոչ մահ ը կենաց, նոյնպէս ընդ ածապարգեւ իւղոյս չկարեն կալ զինչեւիցէ գործք չարին:

(89) Ունկնամտից. (ականջմատուկ. մաքսս ալէօՃէկի:) բայց 'ի մի օրին. եւ հին լուծ. գնի, ունկնամտից: որպէս Ճանճք ասէ՝ եւ սողք (մամուկ,) եւ ունկնամուտք ձիթով մեռանին, այսպէս սոյն ձէթ շնորհօք օրհնութեն զդեւս հալածէ, եւ զպարտս չարեաց՝ ներելի մեղաց ջնջէ: կմ, զպարտս չարեաց հերետիկոսութե սրբէ. զի առ հինսն սովորութի էր՝ զդարձեալսն 'ի հերձուածոց մաքրական օծմամբ մեռոնել. զոր եւ յիշէ առաջին սբ ժողովն կոստանդն. 'ի կանոնն. է: որպէս եւ զպղծեալ սեղան, կամ եկեղեցի, կամ այլ՝ սովորութի է օծմամբ սրբել: Եւ պղծամահու, զպարտաւորութե մահու բանից նշանակէ յարուծ. զի օծումն՝ կենդանութե նշանակ է:

(90) Ո՛չ է աւազան կատարեալ: Եթէ աւազանաւ իմացուք զանօթն կմ զլուացարանն մկրտութե, ասի ոչ լինել կատարեալ առանց օծման, զի յօրհնելն զաւազանն՝ եպիսկոպոսն մեռոնէ 'ի ներքուստ զչորս անկիւնսն, եւ քահանայքն ընդ նմին արտաքոյ կողմանէն օծանեն. որպէս գտնեն գրեալ մաշտոցք. (զոր տպագրողքն զանց արարեալ են.) եւ յետ այսպէս օծանելոյ՝ ապա կատարեն 'ի նմա զմկրտութին: Իսկ եթէ աւազան իմացուք զնոյն իսկ մկրտութին, անկատար ասէ զայն առանց օծման, ոչ ըստ բանի խորհրդոյ. զի առ խորհուրդ մկրտութեան բաւական է ջուրն բնական՝ կոչմամբ ամենասբ երրորդութեն. այլ խօսի ըստ կարգաւորութե մկրտութեան. յորում օրէն է 'ի գործ ածել զմեռոնն, կամ 'ի ջուրն հեղլով, որպէս մերս է սովորութի, եւ կամ զմարմին մկրտելոյն օծանելով. որպէս առ լատինս քահանայն յետ մկրտելոյ զերախայն՝ մեռոնաւ օծանէ զգագաթն, որ ոչ է խորհուրդ դրոշմի, այլ լոկ արարողութի: Դարձեալ, մարթ է իմանալ ըստ գործոյ մկրտութե. զի թէպէտ գործ մկրտութե՝ ըստ որում շնորհք հոգեւոր ծննդեան՝ կատարեալ է ըստ ինքեան, բայց հաստատութե պէտս ունի առ 'ի պահպանութի, զոր տայ օծումն դրոշմին:

(91) Եթէ աւազակացն: զօրութբ իմա, եթէ աւազակացն ասես՝ մահաբեր խոցելոյն զադամ, որոյ օրինակ էր իջեալն յերիքովէ. (ղուկ. ժ. 30.) օծումն տուաւ դեղ. (համար. 34:) Նոյնպէս եթէ անդարմանելի վիրացն յակոբայ ասես, սոյն դեղ յիշատակեցաւ: (եսայ. ա. 6:)

(92) Այս տեղ ծնունդէ: մի օրին. այս տեղ՝ ծնունդն մարդացեալ, եւն:

(93) Յուսով յարակայէ: Յուսով սեւ կամ մշտնջենաւորէ. զի փափա

քեր լինել 'ի տանն Այ՝ պտղալից ձիթենի, որ մշտատեւ է. (սաղմ. ծա. 10:) Որով իբրեւ թողեալ զթլփատութիւն, զշնորհ մկրտութեան գուշակէ, ըստ որում կից է ընդ նմա օծումն: (տե՛ս ըծ. 90:)

(94) Եւ ոչ վերինն: Եւ ոչ գերազանց վարդապետքն, կամ, եւ ոչ հրեշտակք բնաւոր ճանաչմամբ իւրեանց կարող են բացայայտել զգերբնական ներգործութիւն օծման՝ գոնէ ըստ մասին, թող թէ կատարելապէս եւ ըստ խորութեան: կամ, առ մեր ըմբռնումն ասէ, թէ՝ եւ ոչ հրեշտակք կարեն կարողութեամբ բանից մեզ իմանալի առնել գոնէ անկատարապէս: Ապա ես զիա՞րդ կարիցեմ ճառել, կարծելով հասու լինել բովանդակապէս:

(95) Զայն խորհուրդ 'ի ծառայսդ քո ճառելով նշանակել: մի օրին. զայն խորհուրդ ծառայսդ քո ճառել նշանել:

(96) Օրհնաբանութիւն: մի օրին. օրհնաբանութիւն: այսու գովասանական օրհնաբանութեամբ փառս տամ քեզ, Տէր արարիչ, վասն այնր՝ զոր արարեր առ իս. իբր զի 'ի հարց անտի գծագրելով զօրինակս այսր օծման, զճշմարտութիւն 'ի մեզ կատարեցեր:

(97) Յումեմնէ 'ի յոտս: 'ի միոյ կնոջէ ընկալար 'ի յոտս, ըստ գրելոյն յովհաննու. (ժբ. 3.) ուր իմանի մարիամ քոյրն ղազարու. յօրինակ ընդունելութեան. զի յաղաչելն զոք՝ յոտս նորա անկանիմք. ուստի ընդունելով զօծումն յոտիցդ՝ նշանակեցեր ընդունել զմաղթանս մեր: Եւ 'ի միւսմէ պոռնկէ. եւ յայլմէ պոռնիկ կնոջէ զօծումն ընկալար 'ի գլուխդ, ըստ գրելոյն ղուկայ, (է. 38.) ուր ինքն Տէրն վկայէ (համար. 46:) * իւղով զգլուխ իմ ոչ օծեր. սա իւղով անուշիւ օծ ||: Եւ զայս օծումն 'ի գլուխդ ընկալար 'ի ցոյց քոյոյ սիրոյդ առ մեզ, որպէս թէ միշտ ցանկալով հատանել յայս իւղ ընծայեալ: Արդ՝ յայսոսիկ բանս Տր. վարդապետն՝ այլ եւ այլ լինել ցուցանէ զերկոսին օծանօղ կանայսն, ըստ կարծեաց բազում հարց, թէպէտ այլք մի ասեն: Տեղւոյս ոչ է անկ 'ի խնդիր մտանել, եւ ոչ հարկ ինչ կամ պիտանութիւն յորդորէ: Մանաւանդ զի բազմաքննին մեկնիչքն՝ եստիոս եւ կալմէթ՝ 'ի մասնաւոր ճառսի յաղագս այսր խնդրոյ, յառաջ բերեալ զպատճառս այլ եւ այլ կարծեաց, կնքեն զբանն՝ թէ անլուծանելի է այս խնդիր եւ ընդ տարակուսանօք:

(98) Մինչ զի ուխտիւ: Այնչափ հաճելի եղեւ քեզ օծումն կնոջն 'ի տան սիմոնի բորոտի, մինչ զի ուխտիւն առաքելոցն իբրեւ երդմամբ, օրէնս յարակայս, զօրութեամբ բայ իմանի, այսինքն հաստատեցեր կամ աւանդեցեր հրաման մշտնջենաւոր՝ ընդ ամ աշխարհս քարոզել զսակաւ իւղոյն պատիւն. (մատթ. իզ. 13.) 'ի զարմացումն բազմաց, եւ 'ի յոյս ապագայից: կամ առանց այլ բայի յարմարելի է. այնչափ ախորժեցեր, մինչ զի ընդ յարակայ օրէնս եւ պատուէրս աւետարանին քարոզել ընդ աշխարհս զընծայս սակաւ իւղոյն:

(99) Երջանիկն առաքելոցն: այսինքն առաքելոց երջանիկն՝ կամ երանելին Յովհաննէս ասելովն 'ի ա. թղթ. բ. 20. Եւ դուք օծութիւն ունիք յՍրբոյն, պարզաբանեաց զխորհուրդ շնորհաց օծմանն՝ որ 'ի քումմէ անպակաս լրութենէ զեղեալ 'ի մեզ:

(100) Այն 'ի ծառայսն: Իբրեւ առաւել յարմար առ յատուկ նմանութիւն քեզ իմանալի լուսոյդ, եւ հոգւոյդ սրբոյ, այս իւղ՝ որ է օրհնեալ կաթուած փառաց կամ մեծութեան վերնոյդ, առանց պակասելոյ՝ հեղանի 'ի մեզ. եւ կոչի լոյս՝ Իւր փառաւորութիւն, նախագոյն գոլով լոյսն քան զայլ տեսակս առեղծուածոց, զի լոյսն յառաջնում աւուր արարաւ, որ է արարչութեան պատկերացն, նմանութիւն եւ օրինակ արարչին՝ յատկութեան, բարձրութեանն, ազդեցութեանցն, թափանցութեան, եւն: Ապա սոյն-

պէս և իւղս կոչի լոյս, երբ նախաթիւ 'ի կարգս խորհրդոց, կից գոլով ընդ մկրտութե, և 'ի նմա 'ի գործ ածելոյն. և զի առաւել զխաւար մեղաց հալածեա:

(101) Իւղ հոգւր: Հուր կոչի իւղն ս̃ր. զի որպէս հուրն՝ նոյնպէս իւղս յա̃մ մարմնաւորքս հաւասարապէս կցորդի. և ոչ եթէ մեծացն առաւել, և փոքունցն սակաւ: Ըստ էականին կելու, ըստ հաւասար բաշխման էականին ա̃յ, որ թէ ըստ էութեն, և թէ ըստ ընդհանուր նախախնամութեն յամենեսին գոյանի անխտրաբար. կամ, ըստ որում էականն ա̃ծ բաշխեալ է զհուրն չափով յիւրաքանչիւր մարմինս: Սմանք ըստ հինն ըծ. էական իմանալով էակ, եր, բացատրեն թէ հուրն ըստ քանակութե և ըստ չափոյ իւրաքանչիւր էակի մտանէ: Բայց զայս իմանալ յարմար ևս է. վասն զի բառն էական բազում ուրեք նշանակէ ինքնագոյ կա̃մ ինքնակայ, որ այ միայն պատշաճի: Որպէս (սաղմ. 117.) ասի. * Զայր յերկրէ գխաէ, և զերկիր յոչնչէ, և զա̃ծ՝ էական ||: Եւ (եզնիկ. գւ. բ:) * Որ շարժին և փոփոխին, չէ էական ||: և (գւ. դ.) * Մի է պատճառ ամենեցուն՝ և նոյն էական և մշտնջենաւոր. || Ա̃ն: Եւ ըստ այսմ առումք, էական ա̃ծ, էական լոյս, էական բարի, Ա̃ն: Սատի որպէս բառն ա̃ծական՝ երբեմն եբրև գոյական նշանակէ՝ ա̃ծունի, (տե՛ս 'ի բանն, ձդ. 3: և գործոց. ժէ. 29.) նոյնպէս էական սառ նշանակէ ա̃ծունի կա̃ ա̃ծ: Եւ որպէս հուրն յամենայն յայտնի վառի, և յամենայն ծածուկ և լռեալ կայ. մինչև հարեալ երկաթով կամ քարիւ յայնժամ երևի, այսպէս իւղոյս բնութի 'ի զանազան պտուղս և 'ի սերմանիս ամփոփեալ կայ. յամենայն յայտնի թորմամբ երևի, և յամենայն ճնշմամբ մզեալ ելանէ. կամ, երբեմն 'ի նիւթս ինչ ինքնին վառեալ ցոլանայ, և երբեմն ոչ վառի՝ թէ ոչ յայլ հրոյ դրդուեալ վարթիցէ: Ըստ նմին օրինակի և ներգործութի օծման օրհնեալ իւղոյն՝ յամենայն յայտնի երևի լեզուախօսութեամբ, կամ այլովք նշանօք. և յայլս ծածուկ կայ, և երևի 'ի յառանել փորձութեց և հալածանաց հաւատոյ: Արդ՝ որպէս յայտնի հուրն նմանի այ, նոյնպէս և առաւել ևս իւղն ս̃ր:

(102) Եւ օծումն: Կոչի դարձեալ օծումն, երբ արքայական նշանակ՝ որով զօծեալսն որդեգրելով հօր քում, քեզ ժառանգակիցս առնիցես. և ողորմութեանդ արժանիս, իւղովս՝ որ անուամբ և ներգործութեամբ նմանակից է քո ողորմութեդ (տե՛ս ըռծ. 24) նկարելով 'ի մեզ անեղծաբար զարքայական որդեգրութեդ, 'ի հանդերձեալ փառսն պայծառացուք եբրև ա̃ծորդիք: Դարձեալ և հոգի: Կոչի դարձեալ հոգի անուամբ իւղս օրհնեալ, երբ նիւթ և գործի շնորհաց հոգւոյն ս̃րյ. որով մաքրեալք 'ի գեղապատիր ախտից մարմնականաց և փափկեալք, հոգւով և ճշմարտութեամբ երկրպագեսցուք, հաւատովք և յուսով պնդեալք 'ի քեզ Ա̃ն:

(103) Խնկաւէտ: Ըստ նախագրելոցս՝ ահա խնկաւէտ ցուցաւ, թէ լուսապատար այս իւղ խնկալիր, այսինքն յոյժ արդոյ և պատուական, է վերնականին սերոյ, քոյ երկնաւոր սիրոյդ պերառութ, ցոյցք և նշանակ:

(104) Որ օծ զմեզ: է բանն բ. կորն. ա. 21. 22: Իսկ հետևեալն, Դ̃ դրոշմեցարուք, է 'ի կողոս. դ. 30: Եւ թէպէտ ոմանք 'ի վարդապետաց զայսոսիկ բանս իմանան 'ի վերայ օծման շնորհաց, սակայն բազումք ևս իմանան զօծմանէ մեռոնին, ընդ որս և կոռնելիոս մեկնիչ: Այնչափ ա̃ծայնոյ քո սիրոյդ առէ՝ նշանակ և տուրք է օծմանս պարգև, մինչ զի և պօղոս առաքեալ՝ 'ի գոհացողական բանս իւր պատշաճ վարկաւ զայս առանձինն յիշատակել՝ երբ գերագոյն 'ի բարերարութիս քո:

(105) Օծութեամբ յորդորութն: Կոչումն կամ անուն օծման և օծելոյ՝ առաւել պատկանելի և զօրաւոր է 'ի նոր օրէնս, քան 'ի հինն. քանզի

անդ տուեալական քահանայի՝ և երկրաւոր Թագաւորի էր պատիւ, իսկ աստ՝ որդւոյն այ, և երկնաւոր քահանայութեն, և որդեգրելոց այ: Բայց այլ օրինակ գնէ, ԷԷՐ 'Ի ՆՕՐԱՄ՝ ՅԱՒԷՏ 'Ի ՀՆՈՒՄ, և խմանի, որոց 'ի նորումն՝ առաւել ևս 'ի հնումն պատկառելի էր՝ ոչ նկատմամբ մարմնաւոր ծնելոց, այլ նկատմամբ երկնաւոր ծնելոյն քի. իբր զի պարզապէս ծծեալ առելով զմեսիայն խմանայի: Այլ մասոց նպաստէ յաջորդ բան սաղմոսին (Բ. 2.) ժողովեցան իշխանք վասն տն և վասն օծելոյ նորա: Վասն զի այստ ճշմարտեալ նշանակէ դաւիթ զխորհուրդ իշխանացն՝ ԻՆՔԵՆՔՆԱՐ ԿՐԷՏ, այսինքն որ նախ քան զկիրս կամ զչարչարանս տէրական անօրէնութեց քոյ. կամ, յայտ առնէ զխորհուրդ նախանձու կրեցի տէրունեաց և անօրինականաց. այսինքն կամաւոր կրեցի յանձն առնելոց վասն փրկութեն և այլն:

(106) ՈՐ ՅԹԷՈՋԷ ՈՒՂԷՈՆ: (ա. Թագ. Ժշ. 9:) Այսու բանիւ մեծ մարգարէութի ծանոյց, թէ անքաւելի են պարտք յանդգնութե հրէից առ քն. զի եթէ վասն սաւուղայ միայն ասացեալ էր զայն, ահա նա սպանաւ յամաղեկացի պատանւոյն. (Բ. Թագ. ա. 13:) զոր ԱՂԳԱՅԻՆ կոչէ. համարելով հրէայ գոլ. և սակայն վա այնր սպանութե ոչ պատուհասեցաւ ազգն հրէից, այլ՝ յորժամ արեան որդւոյն այ պարտական գտան: Շարագրութի տեղւոյս պարզելի է. ծանոյց դաւիթ զանպրելի պարտիս առ քս արեանդ՝ հրէական կատարութենն, որ էր յանդգնութի ընդդէմ տնդ:

(107) ԱԴՕՆԱՈՒԷՐ ԱՂԷՐԱԱՐԿՈՒՆԷ: Այն աղօթամատոյց աղաչանքն՝ զոր մատուցանէր դաւիթ և սողոմոն, և զոր մեք առեմք 'ի սաղմոսին, մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ, է ԳՐԱՒԱԿԱՆ ՂԷԾ, մեծ առ հաւատչեայ 'ի յիշատակ ժառանգութե ապագայիցս օծելոց քրիստոնէից. կամ 'ի յիշատակ ժառանգութե ապագայ փառացն յողորմութեն այ: Վասն զի եթէ մարմնաւորն այն օծումն թագաւորական դաւթի և այլոց՝ շարժէր զած յողորմութի և 'ի պաշտպանութի, որչափ ևս առաւել հոգևոր օծումն քրիստոնէական:

(108) ՈՒ ԱՅՆ ՂԷԾ ԲԱՐՅԸՆԷ: 'Ի բովանդակ արքայական ճոխութեն դաւթի՝ ոչ զայլ մեծ պատիւ յիշէ, քան թէ իւղով սրբով խմով օծի զնա. (սաղմ. ձը. 21:) ՈՒՆՔԻ ԿԷՐԲ ԻՍ. յորմէ հասուն իմն տեղեկութբ դքս օծութենդ խմացեալ, ծանիցուք՝ թէ դու ես թագաւոր թագաւորաց, և ճշմարիտ օծեալ ԽՈՒՂԷԼԻՍ, քան զայլ օծեալս, որք էին միայն օրինակ. առժամանակ մի օծեալք 'ի թագաւոր կամ 'ի քահանայ, իսկ դու 'ի մշտնջենաւորս անփոփոխ օծեալ թագաւոր և քահանայ միանգամայն. և այսպիսի երկրպագիս ԷՐԷՔ Ն ԱՅՕՐ, 'ի սկզբանէ մինչև ցայժմ, և յաւիտենի նոյնպէս: Բայց զայս, այսինքն թէ դքս ճշմարիտ օծութենդ, և թէ զմեր հաղորդեալ օծութենն՝ ծանիցուք մանաւանդ 'ի հանդերձեալն: Ջի որպէս ԱՊԱՐԱՅՔ ԲԱՅԷԱՆ, տոգորեալ 'ի ճարպոյ, 'ի ճարպ կամ 'ի ձէթ, ոչ տայ լոյս՝ մինչև վառիցի հրով, սոյնպէս օծութն եղեալ 'ի մեզ՝ պայծառ երևի 'ի մերձենալ հրոյ աստուածութեդ 'ի հանդերձեալն:

(109) ԱՅՍ Է ԿԷՐԳԱՐԱՆԷՆ: Այս, և այսչափ է հանդամանաց կամ մեծութե մեռոնին պարզ բացայայտութենն, 'ի հնոց անտի մինչև 'ի մեզ աւանդեալ պատշաճ օրինակօք և նմանութբք, որովք իբրև պայծառ գունովք նկարագրի մեծութի և զօրութի նորա:

(110) ՎԷՐԱԳՈՅՆ ՄԱՍԱՆՑ: Այսոցիկ գերագոյն աձային գործոց կամ պարգևաց՝ ԱՊԱՃԱՌ է իւղն սբ: ԱՐԱՐԸՆԱԲԷՏ ՀԱՐԱՂԱՔԱՑ, այսինքն գործոց կամ պարգևաց՝ որք ընտանի և սեպհական են սրբոցն: Կապակցութի բանիս պահանջէ զէական բայ. և տեր բային ըստ կարգի խմանալի է ԱՅՍ ՀԷԱԲԱԿԱՆԱԲԷ. որով բանն կազմի այսպէս. ԱՐՏ՝ ԱՊԱՃԱՌ

[illegible] վերագոյն մասանց ... է այս [illegible] օրհնութեան [illegible] ։ Ի այս մարմնական նիւթ օրհնեալ ձիթոյս, և այլն ։ Իսկ այլ բանքն միջանկեալք են ։

(111) Առանց որոյ ։ Առանց օծման մեռոնին ոչ լինի գրիլ քրիստոնեայ. և իմանի այս՝ կամ զի յօծմանէն առեալ լինի անունն քրիստոնեայ, և կամ զի մկրտութիւն կից է ընդ օծման ։ Զայս և կիւրեղ ասէ 'ի խորհրդած. *Սրբոյ մեռոնիս արժանացեալք, քրիստոնեայ կոչիցիք, զճշմարտութեն անուանս՝ վերստին ծննդեանքն ստացեալք. զի մինչև էր պարգևեալ ձեզ այս շնորհ, այնմ անուան ստուգապէս չէիք արժանի. այլ յայն նկրտէիք՝ զի լինիցիք քրիստոնեայք || ։ Եւ ոչ Նազովրեցի. և ոչ կրօնաւոր կոչիլ, կամ 'ի կրօնաւորութիւն մտանել առանց օծման դրոշմին. զի Նազովրեցի յեբրայականն նշանակէ զատեալ, որոշեալ. և հրեայք իմանային այսու զհրաժարեալն 'ի մարմնոյ հեշտութեց. որպէս են կրօնաւորքն առ քրիստոնեայս ։ Եւ ոչ [illegible] յորդւոց յուդայի. և ոչ անուանիլ յեկեղեցական աստիճան կամ իշխանութիւն առանց դրոշմի. կամ ասէն յորդւոց յուդայի, իմանի՝ 'ի թիւ խոստովանողաց, կամ 'ի խորհուրդ խոստովանութե. զի յուդա՝ խոստովանող լսի. և չէ օրէն զսև եւ դրոշմեալն մեռոնաւ՝ ընդունել 'ի խոստովանութիւն ։ Եւ ոչ [illegible], յորդորիլ կամ գիտել 'ի նահատակութիւն վասն ճշմարիտ հաւատոյ՝ առանց դրոշմի. զի այս է նորա ներգործութիւն՝ զօրացուցանել զմկրտեալն 'ի պահպանութիւն հաւատոյ ։

(112) [illegible] ։ Այս մարմնաւոր նիւթ օրհնեալ ձիթոյս՝ յոբուամ՝ ի՛ր երրորդութեն միաւորի զօրութիւն և շնորհօք, և ոչ թէ անձնաւորապէս, է մասնակցութիւն շնորհաց, թէ 'ի հոգին, ներգործելով 'ի նմա զշնորհ հաստատութե, և թէ 'ի մարմինն, բարեկարգութիւն տալով անդամոցն ։ Սոյնպէս զյաջորդսն իմա յերկուս միտս, այսինքն հոգևորապէս և մարմնաւորապէս. զի երևելի մասունք գլխոյն՝ զօրս յիշէ, օծանին 'ի դրոշմին ։

(113) Շուք, զարդ կամ վայելչութիւն [illegible], ճակատուն. Նկարագրութե, գեղեցկագունութիւն երեսաց ։ [illegible], այսինքն բնական գունոյ երեսացն. զի իւղ զուարթ առնէ. բայց ստամոր կամ կածխմ վրիպակ մնել փոխանակ գրելոյ [illegible], զի դրոշմեալքն անօթախածութե ծիծաղելով, բարեձև ցուցանեն զաստամունսն ։

(114) Հանդերձիւ կրօնից ։ Կարգաւորիչ կամ պատրաստիչ արտաքին գործոյ ծնպաշտութե. այսինքն հասարակաց աղօթից, սպասաւորութե եկեղեցւոյ, ևն. յարմարիւ կարգաց, բարեկարգող առանձին վարուց բարեպաշտութե. [illegible], ժողովոյ հաւատացելոց. [illegible], զօրութիւն, կամ արիութիւն գիմելոյ ընդդէմ թշնամեաց հաւատոյ ։

(115) Յուռութից ։ Կախարդական կամ հեթանոսական ծրարից և նշանաց. [illegible], մի օրին. [illegible], այսինքն բարձող հմայէից, մոռնապաշտ կապոց. (համայնք.) Նահանջիւ [illegible]. արգելող կամ կապող սոյնոցին՝ որք ձեռամբ գիւթեն. (փալծի, կեօզպաղլծի.) [illegible]. 'ի յայտ բերող կախարդական ծածուկ կապից, կամ ծածուկ հերձուածոց. [illegible], զօրաւոր ախոյեան ընդդէմ գիւաց ։

(116) Կատարէիւ կնքեցելոց. այսինքն մկրտելոց, նոր կնիք և շնորհս ստացեալ 'ի նմ. [illegible] երախայից, նորահաւատից, որք բաղձան երախայական օծմանն, այլ և բաց 'ի մկրտութենէն՝ ցանկան եւ օծման դրոշմին ։

(117) [illegible] արտաքնոց ։ Անզխտելի անհաւատից, և աննկունք մարդոց, յորոց ծածկեալ լինէր խորհուրդ դրոշմին. և ոչ 'ի նոցանէ միայն,

ալ և 'ի հասարակ ժողովրդենէն. որպէս գրի 'ի գիրս յաղագս եկեղե-ցակ. քահանայ. դշ. Գ. բնալ. Գ. կամ, անմերձենալի յանհաւատից. զի մեռոնն յեկեղեցական օծմունս միայն 'ի գործ ածի, և ոչ յաշխար-հական. հիացումն հեթանոսաց, 'ի տեսանելն զպարգևս հոգւոյն սբյ 'ի վերայ դրոշմելոյն, որպէս 'ի լեզուս խօսել, մարգարէանալ, ևն: Այս-պիսի հիացմամբ ըմբռնեալ սիմոն մոգն, խնդրեաց զայն իշխանութիւն. (գործոց. Ը. 18:) Եւ յայսմանէ լինի նախանձաւորքն անհաւատից. զի ան-հաւատք 'ի հրաշալի գործոց օծմանս՝ կամ 'ի բարի նախանձ քրիստո-նէութեն շարժին, և կամ 'ի հակառակութն գրգռին. Երկրպագութիւն Գաղտ-նեաց, յայտնիչ գաղտնի խորհրդոցն սրտ, կամ մարդկան. զի հոգին որ բազում անգամ տայր դրոշմելոյն զպարգև մարգարէութեան և հո-գետեսութեան. որպէս ծանուցանէ առաքեալն. (Ա. կորնթ. ԺԴ. 24. 25:)

(118) Յարգանք չքնոց: Պատիւ աղքատաց կամ անարգաց. որպէս և ստրկաց, գնածոց ծառայից. զի ամենեցունց հասարակ է օծումն դրոշ-մին. ուստի և կանանց զարդ է, և փղձկանց անձումն 'ի շնորհս, որպէս և ուրախութն ծերոց, որք կամ 'ի ծերութե մկրտեալ դրոշմին, և կամ զառաջին դրոշմն յիշելով խնդան. Յեռանդրեւ նախրելոց, 'ի քահանայու-թե և յեպիսկոպոսութե. որք մեռոնաւն կնքին 'ի ճակատն և 'ի ձեռս. Վճարումն մարդոց, այսինքն մաքուր անձանց կամ անօթոց՝ որք 'ի նշանակ սրբութե օծեալ լինին. Պատկ Թագաւորաց, որք 'ի պսակիլն թագաւոր՝ օծանին մեռոնաւ. Ճոխութիւն արքայից, այնոցիկ՝ որք 'ի գերագոյն աթոռ կին իշխանութե ամբարձեալ, նորոգապէս օծանին. Յառաջարդութիւն կայ-սերաց. գերազանցութե կամ մեծ ատուձան կայսերաց, ունելով զա-ռանձին օծումն կայսերական:

(119) Ներքնայնոյն մեծագնութե: Կնքեալ ամանն նշանակէ զպատուա-կանութե 'ի ներքս եղեալ իրացն. սոյնպէս մեծութե շնորհաց հոգւոյն՝ ածկա, մեռոնաւ իբր կնքով ծածկեալ 'ի մեզ յանաւանդ ք, զօրութե քո. կամ զի մեռոնն յունարէն կոչի ևս քրիզմա, որ իբր կնիք է նշանակիչ անուանս Քրիստոսի:

(120) Իւղ անուանն Իւղոյն: Այս 'ի մեր օրինակս, որպէս և յայլս՝ վեր-ջակէտիւ զատանի 'ի նախընթաց բանէն. և իմաստն ևս այնպէս պահան-ջէ. իբր ասել. օծմամբ մեռոնին իբրև կնքով ծանուցեալ նշանակի պա-տուականութե շնորհին: Բայց և անուանն իւղոյն, այսինքն բուն յատ-կութեն, կամ ինքն յատուկ անուանս Քրիստոսի, նովին իսկ կոչմամբն ըստ գնելոյ արանց իմաստնոցն, որ չեմքըպարանց անօթ օծանել, իբրև թէ՝ զոր և եգիպտացիք 'ի գործ ածեն զմեռոն անուանն, 'ի դէմս Բերբերոյ. յայտ առնէ զօրպխութե իւրն՝ լինել ապակէր, նշանակ աչաւոր խորհրդոյ: Իսկ թէ զինչ է այն խորհուրդ, 'ի յաջորդն մեկնաբանէ, ստուգաբանելով զանունս՝ Քրիստոսի ոչ միայն 'ի յունականն, այլև 'ի հայն, և յեբրայա-կանն:

(121) Սակս որբացելոյս: Այս մակագիր յայլոց եդեալ թուի, և ոչ 'ի սբյ վարդապետէն. զի յաջորդ բանն պահանջէ անմիջաբար յարել յան-ցեալն:

(122) Զոր մարգարէն. դաւիթ 'ի խնդրելն լոյս աչաց՝ (սաղ. ԺԸ. 4.) գրեթէ զայսր մեռոնի օծումն խնդրէր:

(123) Իմանի՝ ինչ մայր: Յունական բառս մուռն, իբրև պարզ անուն Ը սովորական նշանակութեն և կիրառութե՝ նշանակէ իւղ անոյշ, օծանե-լիք: Իսկ ստուգաբանութեն՝ զոր ասա դնէ սրբ վարդապետս, հայի յայն իբրև 'ի բարդեալ յերկուցս՝ մ, առն. ուստի և ասէ, ըստ քերթողին Բա-ռի, այսինքն ըստ քերականական կազմութեն, հայելով յարմատն՝ յոր-

մէ եղանէ • որ բոփ ԽփրոռԲէն ՀոՃէրոնէ • այսինքն ըստ որոշմանն , կամ ը̅ նշանակութենն՝ զոր ունի յատակման անուանս օՃռօռ • որ 'ի նոյն արմատոյ եղանէ՝ յորմէ և բառն Ճռօն • կամ, ՀոՃէրոն խմացեալ փոխանակ յատկի, առել կամի • զայս որոշումն բառիս առնուլ ոչ ըստ հայումս , այլ ըստ յատակմանին • կամ դարձեալ, ՀոՃէրոն փոխանակ բանաստեղծի խմանի , իբրև թէ ըստ բանաստեղծական որոշման առեալ, և ոչ ըստ սովորական նշանակութեան բառին : Եւ ըստ այսմ քննելով, մարթ է առնուլ զՃռօն բառն՝ 'ի յոյն դերանուանէս Ճ, այսինքն ինձ , և 'ի բայէն ռօ , հոսեմ • որոյ ընդունելութիւն ներկայ՝ ռօն, այսինքն հոսօղ • յորմէ ածանցին բայքն ռէօ , բղխեմ, հոսեմ • ռօօ, հաստատեմ • ռխօ , ձգեմ, սլաց_ ուցանեմ, բուռն հարկանեմ: Ուստի առեալ Ճ ռօն , նշանակէ՝ ինձ բղխօղ , կամ հոսօղ • զոր ոք վարդապետս ըստ ծննդութեան խմանա_ լով դնէ ԽնՋ նայր : Այլ մեկնութեան նպաստն յաջորդ բանքն • զի մեկնէ , յինքն Ջփօղ զմեր բնութիւս զօրացէս • և կայունն հասփաբէն զլու_ ծութիւն ջուրց , ետ • ուր 'ի կիր արկանէ զնշանակութիւն բայիցն ածանցե_ լոյ 'ի ռօ բայէն : 'Ի աստուածաբանութէ աստի խորհրդածէ զյատուկ գործ մեռոնին • եթէ զի սոյ սրբութին և արիութիւն 'ի պահել զքրիստոնէութիւն՝ ընկալեալ մկրտութեամբ • ուստի զմեր դիւրասաց բնութիւս առէ՝ յինքն ձգեալ սնդէ , և 'ի ջուր աւազանին հեղեալ, հաստատուն առնէ զբնու_ թին ջրոյն ըստ լուսաւոր ծննդեանն • և Ջբրե ղտեղ նածոռոյեւ, իբրև զմա_ կարդ արկեալ 'ի կաթն՝ որով թանձրանայ և մածնու • այսպէս մեռոնն խառնեալ 'ի մեզ , յետ հաստատութին փոխարկէ զդիւրայեղծելի Ջայրա_ ԳոռԲէ , անհաստատութիւն 'ի բարին , կամ զտարանալն 'ի բարւոք կե_ նաց , այլ և ղաղԲէրծ՝ զջուրց բնական մշտահաստութիւն :

(124) Խոյ նառնանոփ , ըստ խաւարագգեաց , կամ մթագին եւ ցուցանի այս Ճռոն՝ ըստ այլում բառի , որ թուի լինել յատակմանս նառոօ, այս_ ինքն սեաւ, մթին , որպէս և ինքն դնէ • որ և այս Խոլոփ ԳխնառոռԲէ, փոխաբերեալ կամ այլաբանական անուանս չէ օփարայեղ, անմանն, ան_ յարմար • զի ըստ իւրն կամ գործոյն՝ անունն յարմարի նմա • որոյ խո_ րութին կամ գաղանութիւն առաւել է քան զամենայն ուրԲոռԲէ ոԲծ հին օրինաց , այլ և օրինակաւ ինչ քան զնոր օրինացս, այսինքն քան զմկր_ տութիւն և զհաղորդութին, ոչ ըստ գերազանցութե խորհրդոյն կամ գործոյն , այլ ըստ եղանակի ներգործելոյն ունի գաղանութիւն ինչ քան զնոսա : Զի ոչ ԷԲէ Ջրոյ օրԷնոխոռ , ոչ իբրև զջուրն լուացման մարմնոյ տալոյն՝ յայտ առնէ զլուացումն հոգւոյն • և Խոյ հոյԲ ԲնոռԲէ, ըստ բնու_ թէ հայլին՝ Ճաշակմամբն յայտ առնէ զհաստատուն սրտին կիր հոգւոյն • այլ նոր յարմարութբ 'ի նառոռնս ողՏողոխնոյն , 'ի զգայարանն խորհր_ դարար Փնոգրի , 'ի ձև խաչի մատուցանի • և այս եղանակ մերձեցուց_ ման 'ի զգայարանն՝ գաղանապէս ցուցանէ զներգործութին նորա , ըստ զհաստատութին հոգւոյն և զարիութիւն 'ի հաւատս • թէպէտ բնական հանդամանօք իւղոյն երևեցուցանի այն, որպէս ասաց վերագոյն • ըծ • 70 • 71 • զի անհառոռԲԷն Ջէրնոխնոռ, հոգևոր կամ ծածկեալ ներգործու_ թեան գաղանի է, վասն այսորիկ և զանունն ունի անքնին կամ մթին :

(125) Խոյ և Բոյ 'ի Լոյս : Խնկապէս 'ի լոյս անմատոյց աւի ծծ , վասն ծայրագոյն պայծառութեան • սակայն վասն անհասանելի գոլոյն 'ի մերոց մտաց՝ 'ի խաւար ծածկեալ ասի • (սաղմ • Ժէ • 12 •) * Եդ զխաւար 'ի ծածկոյթ իւր || : Սոյնպէս և այս ծծումն թէպէտ և լուսաւոր՝ սակայն 'ի լեզուագիտաց ոմանց 'ի Ճոհ ՃԷնոռԲԷց , յարմարական բանաստեղծու_ թեց կամ խօսից , ՏրոխնողԷս անոռնոտրոռԲէ, մակադրական անուամբ՝ նառայլ, մութն կոչի , ըստ վերադրեալ յատակման բառին , (ըծ • 124 :) այլ օրին • անոռնոփԳրոռԲէ , կամ անոռնոփԳրոռԲէ :

(126) Աճախանայն: Զերկուսն յածային անուանց յինքեան ունի լծով. և այսու ածակերպ կոչմամբ կրկին մեծանայ խաղս այս նուիրեալ, որ միշտ պատուի բուրմամբ խնկոց. զի ըստ անուանն ոչ կոչի հուր՝ վառմամբն, և լոյս՝ լուսաւորելովն. և այժմ 'ի դէպ յարմարի բանն եսայեայ, (Ժ. 17:)

(127) Զիճ նաշխարհէ: ոչ մոռանամ զիմ դառնալեաց դարձութեն, որ 'ի քո գթութէդ քաղցրացաւ. վասն այն այլազգ ևս ձևացուցից զբանս, յարմար 'ի յայտնել զնոյն Ճշմարտութիւն.

(128) Մ[illegible]. կամ [illegible], յերրորդականն դառնութեն նշանակէ, և 'ի հայումս՝ զմեռելոց. և երկոքին հուպ են յունական անուանս՝ Թեատ, որ և է յարմար նշանակ մեռուցանող կրից. զի զդառնութիւն մեղացն բառնայ, և սպանանէ զհին մարդն մեղաց: Վասն զի հոգևոր օծմամբս հասանիմք 'ի մահահանգոյն և 'ի փողփողդանդաղ, 'ի զզուելի և 'ի դարշ հեշտութեանց սատանայի. որովք խրկն օդախառն մեղկութե, խոնարհեցուցիչ թուլութե, զմեղս մեր, և զեղեգնա, զկերածածկող արկանելն հնարհեալ, մաշկաձև յօրինեալ, և սատակ հնչող կազմուածոյ Թմբկի, Ժմիկի ականջացս, Բողբոջանաւէտ, թուլացուցանելով 'ի կարգաւոր ձայնարձակութէ: Ասել կամի. որպէս լարք քնարին, և մորթ Ժմիկի խոնաւութե օդոյ, կամ ցանմամբ ջրոյ թուլացեալք, խանգարին 'ի հնչմանն ձայնի, այսպէս սատանայ զավիր հեշտութիւն թուլացուցեալ զմեղս մեր և զայլ զգայարանս, 'ի կորուստ մահու քարշէ զմեզ մեր: Իսկ մք մեռոնաւն օծեալք 'ի մկրտութե և 'ի դրոշմին, վերստին կապիմք և ամրանամք զօրութե չարչարանաց փրկչին, և 'ի մահ նորա մկրտեալք, կենաց նորա հաղորդիմք, գլխովին յած զօրացեալք ասանց այլ ևս հեռանալոյ:

(129) Զորօշխաղ տաղախաղն: Զկարմեալ խաչն յանուն քո օրհնելով և օծանելով, նշանի նորոգողայ, բուն խաչափայտիդ՝ յորում բևեռեցար, հաւասար հատէ, ըստ զօրութե ազանչելեաց, կամ ըստ յարգութեն. զի որպէս խաչափայտն քն՝ նոյնպէս օծեալ խաչք երկրպագութ առնուն, և ազանչելիս գործեն: Օրհնութի և օծումն խաչի՝ է հին աւանդութի, ոչ միայն առ հայս, այլ և առ յոյնս, զորմէ գրեաց Շնորհալին 'ի թուղթն առ ալէքս. և յառաջին թղթին առ կիռ մանուէլ կայսր:

(130) Նմանաբերդ արեան: Նման արեան փրկչիդ՝ զօրութի ազանչելեաց ընձեռէ օծեալ խաչին, որ զարիւնաներկ զխաչդ երևեցուցանէ:

(131) Փայփ անուանի խաղոյ: Այսու զձևթենին խմնան մարգարէք, (եսայ. խա. 19: անգեայ. ժբ. 20:) իսկ ըստ փոխանակ մեռոնի խմասցան ոմանք: Բայց ըստ ևս ըստ կարգի բանին՝ խմնի խաչն, որ մեռոնաւն օծեալ, փայտ իւղոյ անուանի առէ. այսինքն իւղեալ փայտ օրհնութե. զոր մեռոնն զի հաստատող կազմեալ, զկազմեցեալն 'ի հատարակ անկոց անտառաց՝ տղղէալ, արեալ և մաքրեալ 'ի խաղաբէ չարի արխածիս, 'ի մոլորութե դիւական աղդեցմանց, և 'ի պաշտօն սուեղծողիդ վերաբերեալ, առ նոյն նիշու կենաց, առ փայտդ կենաց հասուն ներգործէ. հաւուցանէ, հաւասարէ: Այսու ոչ կամի ասել, թէ ոչ օծեալ խաչի երկրպագելն՝ կռապաշտութի է, այլ թէ աւանդութի օրհնութե և օծման եղեալ է 'ի զգուշութի ատաքնոցն. զի մի կարծիցեն՝ թէ փայտին երկրպագեմք, այլ այնմ խաչի՝ յորում բևեռեցաւ տէրն, յորոյ անուն օրհնեմք զայն և օծանեմք:

(132) Զի ն որ 'ի [illegible]: Որպէս խաչն առէ՝ յանուն քո օծեալ տնադրի, այսպէս և որ 'ի մեզ են պատուհանաց զգայութեց հայաբաժին Բաժանումն, միշտ բաց դրունքն կամ անցքն, ընդ որս անցանեն առարկայք

և մտածութիւնք նոցա, յանուն քո, և [illegible] 'ի ձեռն մեռոնին տէառնագրին 'ի զգուշաւոր համեստութիւն, առ 'ի լինել հաճելի օծեան հոգւոյդ, և [illegible]. (մի օրին. [illegible],) աններգործելի 'ի պատրանաց խաւարաշունչ նենգողին սատանայի ։

(133) Ա[illegible] [illegible]: 'Ի մի օրինակ վերջակէտի զատանի այս 'ի Նախընթաց բանէն, և աւել կամի ։ Այսու լուսով մեռոնին զպահել ըզգայութիւնս ընդ երեկս, հաւաքեմք 'ի պաշտօն երեկոյին [illegible] [illegible], ընդ աստեղացն՝ որք են օրինակ փայլման շնորհին 'ի մեզ 'ի ձեռն մեռոնին ։

(134) 'Ի [illegible]՝ [illegible] [illegible]: Ա[illegible] սմին՝ նաև յիշատակ համբերձեալ բարեացն փրկութե՝ [illegible], լուսով մեռոնին անկի 'ի սիրտ մեր. և ըղձիւք զղջման և սիրոյ ծաղկեալ, պտղաբերէ զանազան ներգործութիւս ածպաշտութե, 'ի պատրաստութե ընթրեաց յետին գիշերի գալստեանդ ։

(135) Ա[illegible] [illegible]: Այսպէս տանդիլով սկսանի 'ի մեր լաւ օրինակն, վերջակէտի զատեալ յառաջնոյն. և աւել կամի ։ Ահա զլոյս ճրագին՝ զոր 'ի գիշերապաշտմանն լուցանեմք, համարեմք յօրինակ լուսաւորութե մեռոնի ։

(136) Ըստ գծագրաց. մի օրին. և 'ի հին ըծ. ըստ գրածոյն: Ոմանք ըստ հին լուծմանց ջանան յարմարել զայս բան՝ յոյն ալփաբետացն. առկայն վայրապար և օտարս խօսին. զի ասացեալս ոչ կարգի յունական գրոցն յարմարի, և ոչ թուական նշանակութե նոցա ։ Այլ խմանի միայն 'ի վերայ հայկական գրոցն, որպէս և ինքնին որ վարդապետն բացայայտէ զնին ։ Արդ՝ աստ, ըստ հաշուի կամ ըստ գումարման նշանագրացն՝ [illegible], այսու կամ զթիւ ալփաբետացն յայս առնէ, որ [illegible] յունաց և ըստ այլ բազում ազգաց՝ 24 թուի, թէպէտ և մեր 36 է ըստ նախնեաց. և կամ առաւել զ20, և զ4 թուոյ բաղադրութիւն առէ. զորս բազմապատկութբ ընդ միմեանս չորապատկելով՝ ելանէ թիւն 80. զի չորից քսան՝ առնէ 80. ուստի և յաւելու. [illegible]. [illegible] յայտութենէն 'ի վերուստ թուելով զգլուխ նշանակօղ 80 թուոյ, որ է Ձ. և համարելով մինչև 'ի [illegible], մինչև 'ի 22 գլուխ կարգի այբուբենին, որ է Ն. այսու օրինակաւ առէ՝ զխորհուրդ մեռոնին բացայայտելով, ախորժելի ճաշակ պատրաստեմք ընթերցողաց ։ Քանզի 'ի 80 նշանակօղ գրոյն՝ որ է Ձ, փոխեալ 'ի 400, որ է Ն, անվրէպ ընդ ձիթոյն անուան, փոխանակ ձէթ բառին ելանէ նէթ ։ Ուր տեսանի, զի որ վարդապետս զձէթն ընթեռնու ձէթ, իբրև 'ի նոյն արմատոյ ելեալ, և նշանակութբ մերձաւոր. որով միոյ ձայնի փոփոխմամբ ձէթն լինի նէթ ։ Յորմէ և խորհրդածէ, թէ նիւթն գոլով առաջին յիւր, և իբրև պարունակիչ նիւթեղինաց, է օրինակ և նշանակիչ [illegible] խմորոյ, իրի կամ ներգործութե խմորոյն, որ ինքն սակաւ գոլով՝ զբովանդակ զանգուած ալերն յինքն փոխարկեալ անձնացուցանէ ։ Այսպէս և մեռոնն խառնեալ 'ի բնութե մեր, հոգւոյն սրբ զմեզ հոգևացուցանէ ։

(137) Ա[illegible] [illegible]: Իւղն կամ պտուղ, և կամ խառնեալ յայլ ուտելիս՝ կակղութբ մտանէ 'ի բերան. որով է օրինակ խոնարհութեան և հեզութե. միանգամայն [illegible], համեմատ և յարմար օրինակ [illegible], թէ ածային բանին, որ հեզութբ և քաղցրութբ առ մեզ քարոզի, և թէ մարդկային խօսից, որք անդիմադարձ մտանեն 'ի լսելիս ։ Իսկ համայնիցս, այլ ամենայն լոյծ և հեղուկ նիւթոց գեր 'ի վերոյ կացեալ, 'ի վերայ կամ յերեսս նոցա շրջի. որով է օրինակ բարձրութե, և անխառն լինելոյ 'ի մարմնական անցաւոր հեշտալիս ։

(138) Յաման ինչ: 'Ի տիկն արկեալ իւղ, ոչ թուլացուցանէ զայն եւ եղ-ծանէ, որպէս առնեն գինին եւ ջուրն. այլ 'ի պատշաճ կակղութե պա-հէ զտիկն. այսպէս եւ մեռոնն զօծեալս իւր:

(139) Անհատատար առաւելութե: Անհամեմատ կամ անզուգական առա-տութե, կամ գերազանցութե:

(140) Արեամբ քո: Զօրութե արեան քո գրեալք 'ի ճակատ մարմնոյս, կամ հոգւոյս զայս օծումն. զի ներգործութիւք քո սրբազան իւրոյ՝ 'ի զօրութէ չարչարանաց քոց յաջողին:

(141) Ծայրարշախտութե. շառափոխմանք: Հաստատ, թէ նորոգ յայտ-նեսցի բազմաձաձանչ շառափոխմանք այս պատուական մեռոնս, ընծայե-լով զլոյս 'ի հանդերձեալ փառսն՝ թէ հոգւոյն, եւ թէ մարմնոյն: Յո-րում ժամանակի Այս ձայր, իւղս հոգեւոր ըստ ներգործութեն՝ հան-դերձ նշանաւ խաչիդ 'ի դէմս իմ փայլեսցէ:

(142) Ուրբնաղան: Զօրութե մեռոնիս իբրեւ անըմբռնելի ինչ՝ թռու-ցեալ մտաւոր թեւօք, 'ի վեր քան զհասումն մեր մտաց՝ անհուն ձանա-պարհաւ, եւ անհետ փախստեամբ հեռացեալ, ծածկեցաւ յինէն. ո-րում 'ի հին օրինաց՝ կամ յայլ բնական իրաց ոչ գտաւ հաւասար օրի-նակ, կամ մանաւանդ, կամ ձեւակերպութե, եւ ոչ այլ ինչ՝ ըստ որում կշռեալ չափեսցի, բայց միայն ծածկեալ խաչդ եւ արեանդ. ընդ որս հա-գեալ, հոգեւոր զօրութեն գերազանցեալ երեւեցաւ:

(143) Անհատ քո անհաւար: Յօրհնեալդ քո զմեզ մեռոնաս, եղիցի եւ անուն քո ահաւոր՝ զօրեաւորիւ անձառ փառաց, նախապատիւս բարձրեալ, արդարոց կամ հրեշտակաց ըղձիւքն՝ օրհնեալ:

(144) Բարձրեալ: 2 օրին. Բարձրացեալ:

(145) Հանդերձեալ: 2 օրին. հանդերձեալ:

(146) Թեղան: Ըստ բառին նշանակէ զերկայն թելսն՝ որք կկոցաւ ան-ցուցանեն ընդ ասեղն կաւուցն. նմանութե դնի փոխանակ զգայութեց կամ կարողութեց հոգւոյն, եւ կամ փոխանակ բոլոր մարմնոյն, որ իբր կաւս գործեալ է յոյ: Յայս օծեալ թեզանս ասէ՝ մի մնացէ. եւ մի ախտեսցէ աղտեղանութեան աղտոյ, ապականութեան կամ մեղութեան ազդեց մեղաց:

(147) Հարմանապաշտպան: Իբրեւ հարսն զարդարեալ, կամ հարսին պատ-շաճեալ փառօք, գեղադոյր, գեղեցիկ յօրինեալ հոգեւոր գեղեցկու-թեամբ:

(148) Մաքուր խորհրդոյ: Այս ծածկապարգեւ հուրս եղիցի մերձեցելոցն յընտրութե կամ 'ի մաքրութե քրիստոնէութե մասամբ կրկին եռաց-մամբ արարեալ, բարեփափագ հոգեւոր ջերմութե, այլ յօրինուածոյ. ո-րով 'ի կակղութեն փոխեալ 'ի կարծրութե, լինի այլ յօրինուած կամ գործած: Ասել կամի, որպէս 'ի հուր իւղաւոր կիր 'ի յեռացեալ ձեթ մխեալ երկաթն՝ առաւել կարծր լինի, այսպէս զօրութե մեռոնիս եղի-ցի օծելոցն տկար՝ մասամբ կրկին կիր սաստիկ եռացման. որով պնդեալ հոգեւորապէս, 'ի կարծր եւ յանսասան վէմդ հաստատուն մնասցէ:

(149) Վերնամըրջանոյ այսր պարգեւ: Վերին յաղթութե պարգեւս, կիր վերնայաղթ պարգեւս՝ այս լիցի նշանակ տկար զնելոցն, զի մի ողողես-ցին ջուրբ մարմնական հեշտութեց. մի այրեսցին հուրբ, բարկութե, նա-խանձու եւն. մի ցրտասցին 'ի սառնամանեաց սիրոյ. մի չխջանիցին հողմով փոր-ձութեց. մի աղտեղասցին յորդորակաւ, 'ի գիշերային կամ յերազական պղծութե: Մի ողջակէզ, զանձինսն՝ որք քնի պահեալք են (Ա յա-գայ. Թղթոյն. 1.) կամ զհոգի եւ զմարմին եւ զնոյն զօրութիւն՝ որք քո պահեալք են, մանաւանդ սատանայի: Եւ մի 'ի սարսուռ եղիցի, 'ի վախ-ճան ելիցն յաշխարհէ, կամ 'ի մահուանն զմթերեալ գանձս գործոցն

առաքինութեան յամարաբար կորուսանել: Եւ մի՛ ղէաջէան, զընկալեալն 'ի մեզ օծութիւն անմաքրութեամբ 'ի բաց մերկանալ ըստ գործոյն և ըստ պատուոյն, թէպէտ և ըստ կնքոյ դրոշմին միշտ մնայ:

(150) Քեզ Տայնոյ Տայն օծելոյ: մի օրին. Քեզ Տոյ Տայն օծելոյ: Քեզ՝ որ միայն և մի ճշմարիտ օծեալ ես, տացեն ալէլուք, ուրախալից կարդացմունք լեզուաց, հնչմունք ձայնից նուագարանաց. յաղթանակութիւնք, յայլ օրին. յաղթականութիւնք գովեստից, այսինքն յաղթողական գովասանութիւնք. բարեբանութիւնք, երանական բարբառք շրթանց. օրհնաբանութիւնք, սրբազան երգեցմունք սաղմոսաց:

(151) Այն իմ ձեռնարկութիւն: Այսպէս կայ 'ի մերում լաւ օրինակի որ առաւել յարմար թուի. (տե՛ս և այլուր ասացաք 'ի բանն հէ. ծ. 99:) Քանզի ձայնքս՝ որ վասն ժամանակին՝ և վասն մեռոնին, ունին առ միմեանս կապակցութիւն իբրև ընդդէմ թոնդրակեցեաց ասացեալք. ուստի այս յետին բան իբրև ստորագրութիւն ինչ հայի առ երկոսին ևս. վա՞յն ասէ: Այն առաջին բանն՝ որ վասն ժամանակին, է իմ ձեռնարկ կամ խոստովանութիւն 'ի օրհնութիւն, 'ի ժամանակն, որ է լոկ սրբազան գործի եկեղեցական. և այս՝ երկրորդ բանս որ վասն մեռոնին, է իմ արձանագրութիւն, հաստատուն գրութիւն դաւանական՝ 'ի օրհնութեանցն օրհնութիւն, 'ի մեռոնն՝ որ կրկին ո՛չ է քան զժամանակն, իբր նիւթ խորհրդոց, և սրբացուցիչ եկեղեցեաց, և ամենայն սրբազան անօթոց:

---

Սէրտէն յաւելուած կրկին հեծուէ՝ նորին հօկողի, առ նոյն աղէրս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ած:

# ԲԱՆ. ՂԳ:

ա. Ած յաւիտենական, բարերար և ամենակալ. ստեղծիչ լուսոյ, և յօրինիչ գիշերոյ. կեանք 'ի մահու և լոյս 'ի խաւարի. յոյս ակնունողաց և երկայնմտութիւն տարակուսելոց. որ ամենարուեստ իմաստութեամբ քո [1] դարձուցանես յայգ զստուերս մահու, աննուաղ ծագումն և անմուտ արեգակն. քանզի ո՛չ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ: Որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. որ լսես զհեծութիւն կապելոց, և հայիս յաղօթս խոնարհաց, և ընդունիս զխնդրուածս նոցա, Ա՛ծ իմ և թագաւոր իմ, կեանք իմ և ապաւէն իմ. յո՛յս իմ և վստահութիւն իմ. յս քս Ածդ ամենայնի. սուրբդ հանգուցեալ 'ի հոգիս սրբոց. մխիթարութիւն վշտաց՝ և քաւարան մեղուցելոց, որ գիտես զամենայն յառաջ

քան զլինել նոցա․ առաքեա՛ զպահպանողական զօրութի աջոյ քո, և փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի և 'ի դիւէ չարէ ։ Որպէս զի զյիշատակ սոսկալի և սբ քո անուանդ միշտ համբուրեալ [2] շրթամբք հոգւոյ ըղձութե՛ ընչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ ։

Է․ Եւ [3] 'ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ, զոր ածային արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և 'ի նոյն շնորհ որդեգրութե՛ զմեզ մկրտեցեր, և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր այսու պարգևօք ածականօք, ամաչեսցէ սատանայ, քակտեսցին մեքենայքն, բարձցին որոգայթքն, պարտեսցին մարտուցեալքն, պակասեսցին զէնքն սայրասուրք, մերժեսցի մէգն, փարատեսցի խաւարն, մեկնեսցի մառախուղն ։ Բազուկ քո հովանացի, և աջ քո կնքեսցէ․ վասն զի գթած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է 'ի վերայ ծառայից քոց ։ Եւ քեզ ընդ հօր հոգւոյդ սրբոյ փառք և իշխանութի յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

---

(1) Դարձուցանես յայգ ։ Քո հնարաւոր խնամութեամբ յառաւօտ դարձուցանես զգիշերն, որ է խեր հեռք և նմանութիւն մահու․ կամ, զվտանգս մահու փոխարկես 'ի բարեյաջողութի ։ Անմուտ արեգակն․ արեգակնես ինքնալոյս, ամենապայծառ, բոլորից լուսաւորող․ բայց ոչ իբրև զարեգակնս զգալի՝ մտանես, ծածկիս, տեղի տաս 'ի միջէ կողմանէ երկրիս, կամ 'ի մարդկանէ․ երկինք և երկիր հանդերձ բնակելովքն 'ի նոսա՝ քեզ ներկայ են․ ոչ մի ինչ յայնցանէ կարէ մտանել առ քեզ, այսինքն ծածկիլ, անտես լինել ։

(2) Շրթամբք հոգւոյ ։ Զյիշատակ սբ անուանդ միշտ համբուրելով ըմբռնմամբ հոգւոյս, և փափաքանօք սրտիս․ որ է ասել, զանունդ քո միշտ 'ի բերանի ունելով ջերմեռանդն հոգւով, և այլն ։

(3) 'Ի դրոշմէ խաչի ։ 'Ի տնօրինութենէ խաչիդ՝ որ է նշանն քո, զոր ածային արեամբդ ներկեալ նորոգեցեր, այսինքն 'ի փայտէ մահու՝ փայտ կենաց արարեր․ և նովաւ 'ի շնորհ որդեգրութեան վերածեր զմեզ մկրտութեամբն, և ըստ պատկերի քո յօրինեցեր զմեզ․ Այսու պարգևօք, զոյս 'ի յաջորդն յարէ լաւ օրինակին․ այսինքն․ այս պարգևօք խաչիդ քո, և արեանդ, և շնորհաց մկրտութեան՝ ամաչեսցէ սատանայ, և այլն ։ Բազուկ քո․ բազուկ քո զոր 'ի խաչին տարածեցեր, հովանի պաշտպանութեան եղիցի․ և աջ քո, զոր բևեռեցեր 'ի թևս խաչին, կնքեսցէ, իբր կնքով պահպանեսցէ զիս 'ի յարձակմանց թշնամեաց․ իբր իւր սեպհական հաստատեսցէ զիս ։

Մերստին յաւելուած նորին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն ողբոյ մաղթանաց բանի ։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ ։

# ԲԱՆ. ՂԵ.

Ա. Արեգակն արդար, [1] ճառագայթ օրհնեալ, լուսոյ կերպարան, փափաք անձկութե՟, բարձրեալ անքնին, զօրեղ անպատում, բարւոյ բերկրութի՟, յուսոյ տեսութի՟, գովեալ երկնաւոր, Թագաւոր փառաց, ք՟ս արարիչ, խոստովանեալ կեանք։ Եւ արդ զթերութիւն վրիպանաց բազմախառն ձայնի եղկելոյս՝ ամենազօրդ բանիւ լցեալ, մատուցես յաղերս հաճութե՟ հօր քում բարձրելոյ ։ Որ վասն իմ [2] ՚ի փորձ եկիր անիծից, կերպարանեալ զիմ նմանութի՟ ամենեւին կենաց օրհնութի՟, վերնոց և ներքնոց բարեխնամօղ տեսուչ համայնից ։ Օ՜ի թէ յանձն առեր մեռանիլ վասն իմ, ա՟ծ և տ՟րդ բոլորեցուն, որչափ հաճեսցիս առաւել և այժմ վտանգաւորս կրից կարեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթելով [3] ազգակցաւ մարմնոյդ առելոյ ՚ի մէնջ՝ առ համապատիւդ քո հայր ։

Բ. Եւ վասն արեանդ պատուականի [4] միշտ մատուցելոյ ՚ի հաճութի՟ կամաց առաքչիդ՝ բարձցին վտանգք մեղուցեալ դատապարտելոյս, թողցին պարտիքն, ապաքինեսցին ամօթն, մոռասցին պատկառանքն, [5] բարեգործեսցին դատակնիքն, սատակեսցին որդունքն, վերասցին լալն, հանդարտեսցէ կրճտումն ատամանցն, սպառեսցին ողբքն, հատցին արտասուքն, մերժեսցի սուգն, հալածեսցի խաւարն, վատնեսցի հուրն սաստկութե՟, հերքեսցին տանջանարանքն բազմօրինակք ։

Գ. Եկեսցեն գթութիւնք կամօղիդ և պարգևաւորիդ կենաց ամենից, ծագեսցի լոյսդ, արագեսցէ փրկութիւնդ, հասցէ օգնութիւնդ, ժամանեսցէ այցելութիւնդ, կանխեսցէ ցօղդ ողորմութե՟, յառաջեսցէ

արբուսցէ զանդաստանս պասքեալ՝ անկեալ ոսկերացս Թշուառութ՟բ 'ի վիհն մահու. ծաղկեցուսցէ պտղաբերեսցէ [6] բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ զերկիրս խնամեալ աւուրն լուսոյ, որ անծախապէս միշտ [7] պատարագի յիշատակ կենաց փրկութեան հոգւոց ննջեցելոց։ [8] Ո՜վ ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝ շնորհօք քո, գթած, 'ի քեզ զօրացեալ քև նորոգեցայց, զատեալ 'ի մեղաց անմահ կենդանութ՟բ 'ի յարութեն արդարոց, հօր քում օրհնեցեալ։ Ընդ որում քեզ փառք, և հոգւոյդ Ս՟բյ բարեբանութին վայելչական գոհութ՟բ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## ՎԱԽՃԱՆ

---

(1) Ճառագայթ օրհնեալ: Դու որդի ես, որ ըստ լուսաւորելոյ զաշխարհ արեգակն ես, երբ ծագեալ 'ի հօրէ՝ ճառագայթ ես, ոչ որպէս պատահումն ինչ անցաւոր, այլ գոյակ անձնաւոր, որով և օրհնեալ ես միշտ ընդ հօր։ Լուսոյ ներգործան. բուն խնկութի լուսոյ, կամ կերպարանիչ և գոյացուցիչ լուսոյ. Փափագ անձկութէ, փափաքելի յոյժ կարօտանօք սրտի. Բարւոյ բերկրութէ, բարի կամ առաքինի մարդոյ զուարճութիւն. կամ, բարի և ախորժելի իրաց պատճառ բերկրեցուցանելոյ, կմ զուարճացուցանելոյ զմեզ. Յուսոյ փրկութէ, յուսոյ նպատակ կամ հաստատութիւն։

(2) 'Ի փորձ էիր: 'Ի պատճառս իմ զփորձ անխծից կրեցեր մահուամբ խաչի, առնլով զիմ նմանութի։ Վասն որոյ եթէ այսու օրինակաւ մեռանել յանձն առեր վասն իմ, ես առաւել հաճեսցիս զթերութի աղօթական բանիցս ընուլ. և ընդ իմ աղօթելով կարեկից լինել գթանգաւոր էիր, ցաւոց զղջմանս, կամ վտանգաւոր ախտիցս։

(3) Ազգակցաւ մարմնոյդ: Փոխադրութի հոլովոյ է և ասա, եդեալ ըղ գոյականին իբր յատկացուցիչ. և պարզելի է. ազգակից կամ բնութիւն կից մարմնովդ՝ զոր 'ի մէնջ առեր, որ է ասել. ըստ մարդկութենդ աղօթելով առ հայր. որում ըստ աստուածութեդ համապատիւ ես։

(4) Միշտ մատուցելոյ: Որ միշտ ընծայի յընդունելութեն ես, կամ 'ի խորհուրդ պատարագին։

(5) Բարեգործելոյն դատավճիռքն: 'Ի բարին փոխեցին վճիռք պարտաւորութեն։ Սատակելոյն որդանն: Տրն յաւէտ արանի անմահ ասաց զորդն գեհենոյն. իսկ աստանօր սատակիլ ասի ըստ զերծանելոյն 'ի խածուածոյ նորա, իբր ասել. մի եղէց կերակուր որդանցն։ Ըստ այսմ իմանալի է և վասն յաւերդացն, այսինքն մի պարտաւորեցայց 'ի լալն, 'ի կրճտումն, յողբսն։

(6) Բաժակդ երկնաւոր: Բաժակ արեանդ՝ թէ այն, որում 'ի կենդանութեն հաղորդեցայ, և թէ այն՝ որ 'ի մահուանս մատուցանի ոք պատարագաւն, պտղաբեր արասցէ զերկիրս մարմնոյս, զարմանեալ աւուրն լուսոյ, վասն աւուրն յարութե։

(7) Միշտ պատարագի, այսինքն. բայց մի օրին. Միշտ պատարագիս, դու։

(8) Զի ամենայնի ։ Որպէս զի հոգիս որ գլխովին մեռեալն է մարմնով մեղաց, գործովք մեղանչական ախտաւոր մարմնոյս, շնորհօք քո զօրացեալ նորոգեսցի, անմահ կենդանութե սրբեալ 'ի մեղաց 'ի յարութեն արդարոց, հօր ձայն օրհնեցեալ, այսինքն 'ի հօրէ քումմէ ընդ այլոց ընտրելոց ընդունելով զօրհնութիւն ։

## Յիշատակարան ՝ Մատենիս Գրոցս ։

Ըստ հոլովման ընթացից ամանակաց յառաջ շարժութե, որ ըստ [2] լրապատարն նշուլագեղն արփիաճաճանչ՝ լուսակիրն օրակշիռն մղտափարատն ակնապարար ականն արեւու՝ ստեղծականն արուսեկի, [3] որ համբարէ հոլովէ կուտէ ամաց յոլովութի 'ի չափս դարուց՝ ընչապատ և կենդանանորոգ առուղեկան յաւիտենից, [4] 'ի յաւարտումն կատարման իններեակ յոբելինին, 'ի սկիզբն պսակելոյ մոի տասնեկին՝ յաբեթական տոհմիս տումարի ։ յետ երից ամաց անցելոյ՝ որ զկնի գալստեան 'ի կայս և 'ի կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արևելից՝ յաղթօղ և մեծ կայսերն հոռոմոց բասլի, յորժամ ընդարձակ և մակագաւիթ կանոնաւ սփիւռ տարածէր՝ լիասահման և անխոտրոց 'ի ստուարակարկատ կոթողս կարծր արձանաց՝ 'ի ձգումն ձեռին՝ և յանխզելի լարս պարանաց երկարագունից՝ անթարթափ 'ի նոյն վերասլացեալ 'ի յաջ և յահեակ՝ սեպհականել յաւելուլ բաժինս մասանց վիճակաց՝ խմբից աշխարհաց 'ի ծոց իւր ։

Արդ 'ի յայնմ անդորրութե միջոցի, յորում եղերեալ ընդոտնեցաւ [5] թշնամիք եկեղեցւոյ, ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, [6] դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով 'ի հրաշակերտութի միագոյ իրի՝ զբազմաստեղնեան դրուագս դրութե այսմ սոփերի արգասաւորի, ես Գրիգոր [7] կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսաց, և կրտսեր վարժապետաց, գործակցութե եղբօր իմոյ ընտրելոյ՝ Յովհաննէս կոչեցելոյ՝ Նարեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի վանականի․ որք իբր զմի մարմին բանական [8] 'ի յերկուց առ մի

կերպարան չինելոյ դիմաց կենցաղավարելով, ոչ միայն հարազատք, այլ և միաշունչք միակրօնք համապատիւք զուգահաւանք, 'ի քառից աչաց առ մի և նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք:

Արդ հայցեմք 'ի Ճաշակողացդ յայսմ սեղանոյ յոգնորէն և ախորժահամ հանդերձելոյ՝ [9] յիշատակել զմեզ 'ի մաղթանս ուղիղս և 'ի պատկանաւոր խընդրուածս, սեռն սիրով 'ի միտս բարիս. որով և դուք եղիջիք գրեալ 'ի մատեանս կենաց վերին դպրութեան:

---

(1) Մաբէնիօ դրոութէ: Այսինքն կարգեալ յօրինուածոյ, կամ կազմութեան մասինին. յայս մտս դնէ և զնին, դրոտգօ դրոութէ. Նոյնպէս 'ի Ճակատ մասենին, դրոութէ յօգնաթախանջ բանից, ևն:

(2) Լըպաղապըն: Միշտ լցեալ առատ լուսով հակառակ լուսնին՝ որ լինին և պակասի. Նըււլագէղէ, գեղեցիկ նշուլիւք կէս Ճառագայթիւք. արթիսաճաճանչ, լուսափիւռ, կամ հրափայլ. օրանչէռն. չափով զօրն. ճշգաճարաբն, փարատող խաւարի. անապարար, պարարող կամ զուարճացուցիչ աչաց. աէղծախանն արռաէնի, տեղծեալ արևուն, յորոշումն վճռի որ նմանութիւ կոչի արեգակն և արուսեակ:

(3) Որ համբարէ: Արեգակն իւրով սարեալ շրջագայութիւ հեռ պնեակ ժողովէ զըազմութիւն ամաց, որով չափին դարք, ընդապառ յաւիտենից կամ ժամանակի աշխարհիս, յորում ամաց շունչն պակասի մահուամբ, և հէնդանաւորդ, և ամաց կենդանութիւն նորոգի ծննդեամբ. առաւղէնան, անցաւոր, անկայուն: մի օրին. առխաւղէնան:

(4) 'ի յաաարպաււն: 'ի կատարել ինն յոբելինից, այսինքն յամից, որ լինի 450 ամ 'ի ակէրէն, մտանելոյ 'ի տասներորդ յիսունն. յետ երից ամաց գալստեան կայսերն հռոմայ բասլի երկրորդի 'ի կողմանս Հեռաեռոյ, յաշխարհ տայոց՝ որ 'ի հիւսիսոյ կայ վասպուրական աշխարհին, յորում գրեաց Ոբ վարդապետս. դեմաց արևէլից, և յարևելակողմն յանտառնի. յորում ժամանակի բասիլ կայսր զաշխարհն տայոց, որպէս և զայլ բազում սահմանս սեպհականեալ յաւելոյր 'ի ծոց իւր. (զորմէ տես 'ի պատմ. հայ. Բ. եր. 881:) Յախադառթ խանռա, լայնատարած սահմանաւ. Ըէաաահմաւ և անխարոյ, ամբողջ սահմանօք, և առանց ընդ մէջ մտանելոյ օտար սահմանաց. կամ, անխափան և անարգել 'ի Թշնամեաց. 'ի աբաաարախարհաա հռթաղա, մեծամեծ հատորովք կարկատեալ կոթողովք քարանց, զորս կանգնեաց վասն յիշատակի, կամ յորոշումն սահմանաց և վիճակաց. 'ի մեր լաւ օրին. աբաաարախարհաա, այսինքն Թանձր կուտեալ, դիզեալ: Այսպիսի արձանք յիշատակաց պատմին և 'ի Պատմութեան խաչին ապարանից՝ յասելն. " Յիշատակս քարոզելիս . . . 'ի դէմս երեսաց պատկերաց անզգայականաց վիմաց մատուցին, ||| ևն: Յիշէ զայս և գլխկաս յոյն պատմիչ՝ կանգնեալ 'ի սահմանս բուլղարաց: Յանխաղէնէ լարա, երկայն պարանօք չափելով զմիջոց սահմանացն. կամ նմանութիւ խմանի, այսինքն ընդարձակ զօրութիւ և բազմութեամբ զօրաց անյաղթելեաց պատելով զսահմանսն:

Յաղագս վերոգրեալ Թուականին՝ յորում գրեցան աղօթքս, գիտելի է. զի գալստեան վասլի կայսեր՝ զոր յիշատակէ Ոբ վարդապետն, ոչ խնանի զգալոյ նորա 'ի փոքր հայս՝ յաշխարհն կիւլիկեցւոց, որ ըստ առող-

կայ (Դ. 42.) եղև 'ի Թուին Նխը. զի կնքլեկէ ոչ է 'ի հնախօսականի վաստակութեանն կամ յոճաստանի : Այլ խմանի զգալոյն յաշխարհն տայոց 'ի ժամանակին՝ յորում մեռաւ դաւիթ կուրապաղատ տայոց . որ անորդի գոլով, 'ի կայսր վախճանեցող կտակաւ զերութի իւր : Եւ թէպէտ կեդրենոս յոյն պատմիչ զմահ դաւթի դնէ յետ 989 ամին, այսինքն ՆԼԸ, սակայն մեր պատմիչք յետոյ ևս դնեն զմահ դաւթի, ընդ նմին և զգալուստ վասլի. զի ասողիկ (Դ. 43:) դնէ 'ի նխթ թուին : Լաստիվերացին (գլ. ա.) 'ի ՆԾ : Սամուէլ երէց՝ 'ի Նխը : Եւ այս առաւել հաւանական է. ոչ միայն զի երկուք 'ի սոցանէ՝ Ասողիկ և Լաստիվերացի մերձաւորք են ժամանակաւ և տեղեաւ, այլ համաձայն ևս է բանի սոյ վարդապետիս. զի յետ այնր գալստեան ասէ՝ երեք ամք անցեալ էին՝ յորժամ սպար զաղօթսն. իսկ եթէ Ծ կեդր''. գալուստ վասլի լեալ էր 'ի Թուին ՆԼԸ, կամ ՆԼԹ, երեք ամք ևս յաւելեալք, լինէր թուականն Նխա. կամ Նխբ. և այնպէս աղօթքն ոչ լինէին 'ի սկիզբն տասներորդ յոբելինին, այլ 'ի վախճան իններորդին : Արդ ըստ մեր պատմագրաց ասելի է, թէ աղօթքս վճարեցան 'ի Թուին Նծա, կամ Նծբ, կամ Նծգ :

(5) ԹՈՒԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ : Պարսիկք, արաբացիք, և բուլղարք, ընդ որս պատերազմեցաւ բասիլ գործակցութբ հայոց :

(6) ԴԻՐՔ : 'Ի դիզանել բայէն, այսինքն դիզեցի. 'Ի ՀՐԱՇԱԼԻՔԵՐԳԱՐԱՆԻՆ ԾԱԳՄԱՆ ԻՐԻ, 'ի կազմութե միարուն կրի, այսինքն միոյ մատենի, ՂԵՂԱՆԱ ՓԵՂԵԱՆ ՏՐԱՄԱԳԱ, զբազմաձիւղ կարգեալ յօրինուածս այսր արգասաւոր մատենի աղօթից :

Շինուածոյ օրինակաւ ձևացուցանէ զկազմութի մատենիս, և ըստ զանազան գործոց շինութե յաձախէ զբայսն. և որպէս քաղաքական շինութիւք 'ի ժամանակի խաղաղութե յաջողին, այսպէս և ես ասէ՝ յայսմ միջոցի անդորրութե երկրիս՝ զնիւթս հոգևոր շինուածոյ ստացեալ և հաւաքեալ յոծայլին գրոց, հիմնեցի՝ սկսանելով զաղօթքս՝ ուստի արժան էր նախ սկիզբն առնել. և 'ի վերայ նորա կառուցի զայլ և այլ իրն գրուածս՝ իբրև որմունս շինուածոյն. կարգեցի ըստ զանազան ախտոյից՝ իբրև սենեակս. կազմեցի 'ի նոսա բազմայլախ զարդս և կարասիս հոգևորս, ոչ հարևանցի և անհաստատ, այլ հաստատութբ արձանացուցանելով. և ըստ այլ և այլ ախորժակաց աղօթողացն՝ դիզեցի և բարդեցի զյօժնապատիկ խնդրուածս նմանս միմեանց. որովք և ցուցի խրախքանչիւրոց՝ թէ որով սրտիւ և բանիւ կարեն աղօթել առ ած. և զայս ամենայն բազմաձիւղ յօրինուած օգտակար մատենիս՝ հաստատեցի իբրև մի շինուած հրաշակերտ. յորում անձինք ջերմեռանդն աղօթաւորաց ախորժանօք հանգիցեն : 'Ի հաստուցման այսպիսի աշխատութեսս ոչ այլ ինչ խնդրեմք, բայց սեռն սիրով յիշել զմեզ յաղօթս, ասէ :

Եթէ խնդիր ոք թերևս առնիցէ գիտել, որդեօք աղօթքս հետ զհետէ գրեցան անընդհատ, թէ պարապով ընդ ժամանակս ժամանակս : Ապաքէն 'ի կարգի աղօթիցն չեք նշանակ պարապով գրութե. զոր օրինակ 'ի գովեստ Առաքելոցն կայ նշանակ այնպիսի, յասել անդ. " 'Ի դադարմանէ լռութե շարժեալ կարգ բանիս || ասէ : Մանաւանդ ընդ հակառակն՝ յայտարարուե Յիշատակարանիս ցուցանէ՝ առանց դադարելոյ սկսեալ և աւարտեալ զմատեանս. քանզի ասէ՝ յայնմ անդորրութե միջոցի ՄԽԱՅԵԱԼ ՀԻՒՍՈՅ, ԵՒԱՆՈՅ ԱՍ. որով 'ի մի ժամանակ սահմանեալ դնէ՝ թէ զհիմնելն, այսինքն զսկսանելն, և թէ զկատարելն : Եւ այն դարձեալ, զի տեսանեմք 'ի բանն հէ. 'ի մեծի ուրբաթուն գրեալ զայն աղօթս. եթէ յայնպիսում 'ի բազմապաշտօն աւուր ոչ դադարեաց 'ի գրելոյ, ևս առաւել յայլ աւուրս անդադար լինէր : Զայն և

պատճառ գրելոյ աղօթիցն հաւանեցուցանէ, իբրև զի ոչ եթէ անձին առանձին ըղձմամբ յօժարեցաւ յայն, այլ 'ի թախանձելոյ մեծարոյ հարց վանականաց, և անմարթ էր զխնդիր նոցա յապաղանօք տանել 'ի գլուխ :

(7) Կրօնաւոր տաճարայ : մի օրին . կրօնաւոր 'ի տաճարայս : Յիւր դէմս առնու երանելին զկարգաւորութիւն աղօթական մատենիս . ուստի ոչ միայն յաւանդութենէ բովանդակ մերոյ ազգիս՝ աներկբայելի գիտեմք զնա լինել յօրինօղ Նարեկեան աղօթիցս, այլ և յայտնի վկայէ յիշատակարան մատենիս . որպէս և 'ի կարգի աղօթիցն ( հբ. 2. ) 'ի Գրիգոր անուանէն առնու զյանդիմանողական պարաւանս անձինն : Իսկ զոր յաւելու՝ գործակցութեամբ եղբօր իմոյ յովհաննու, իմանալի է ըստ օգնականութեան ինչ 'ի քննել զանեղծս սր̃ գրոց, կամ ըստ խորհրդակցութեան, կամ ըստ գաղափարելոյ զգրեալսն : Այսպիսի փոքր գործակցութիւն նորա բաւական էր առ խոնարհութիւն երանելւոյս՝ անուանել զնա վաստակակից իւր՝ յիշելոյ արժանի :

(8) 'Ի յերկուց առ մի : 'ի յերկուց՝ իբրև մի մարմին հոգևոր եղեալ կամօք, և միով կերպարանաւ գիտնալ կենդանաղաճարեալ : 2 օրին . և հին լուծ . կենդանաղախեալ : Այն որ ասէ, առ մի կերպարան շինելոյ տեսոյ, 'ի մի օրինակ գնի, առ մի կերպարան 'ի շինելոյ տեսոյ : Եւ ոչ միայն ըստ մարմնոյ համարեալ, այլ և հոգւով միաշունչք, եմ : 'ի տառից ասոյ, չորիւք աչօք՝ իմն և եղբօրս 'ի մի և նոյն գիտաւորութիւն մտաց յեռեալ, հայեցօղք :

(9) Յիշատակել զմեզ : յայլ օրին . ձեք զմեզ : Բայց սակայն աղաչեմք զբարեպաշտ ընթերցօղդ՝ խառնել և զմեզ 'ի յիշատակ մաքուր աղօթից ձերոց, զյօժարամիտ աշխատեալքս 'ի բացայայտութիւն դժուարիմաց բանից սրբոյ վարդապետիս . կնիք դնելով մեկնողական գրութեանս զսրբոյ Լամբրօնացւոյն զառաջեալն յաւարտ մեկնութեան աղօթից՝ որ 'ի պատարագի . * Այսքան է զօրութիւն բանից խորհրդական աղօթիցս համառօտեալ, բայց ոչ և ըղձականութիւնն . այլ աշխատիմք տեղեկութեամբ բանիցս՝ ըղձիցն և փափագմանն, հառաչմանն և արտասուացն ձայնակարկ հորդել 'ի յանձինս . զի մի լիցի լեզուաւ կալ 'ի յաղօթս, և մտաց անպտուղ առ 'ի նմանէ լինել : ||.

---

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

'Ի կատարած լուծմանցս պատեհ վարկանիմ հարցափորձել զխնդիրն զայն զպիտանի, և լուծանել կարգաւորաբար, թէ յորում չափու հասակի գրեաց երանելին Գրիգոր զաղօթական Մատեանս : Ապաքէն տեսաք առաջն 'ի Յիշատակարանիս, զի աւարտումն եղև աղօթիցն 'ի հայկազնեան թուականին ՆԾԱ կամ ՆԾԲ : Յայլ պատմութիւն վարուց նորա, և Յայսմաւուրս ասի ծնեալ 'ի Ն թուականի, և կատարեալ զկեանսն 'ի ՆԾԲ . իբր այն թէ անդէն 'ի կնքել աղօթիցն՝ կնքեալ իցէ և զցանկալի կեանսն ամաց յիսուն և երկուց : Իսկ յայլ յիշատակարանս ինչ Նարեկեան աղօթից եդեալ կայ զրոյց՝ թէ յերիտասարդական չափու հասակի զկեանսն վախճանեալ իցէ և սոյն համբաւեցաւ 'ի բան և 'ի գիր՝ իբր աւանդութիւն 'ի կարծիս այնոցիկ՝ որք առանց քննելոյ ընթեռնուն : Սակայն յետ ժամանակաց 'ի հարցաքննութենէ յիշատակարանաց նորին իսկ սրբոյ վարդապետի յայտնեցաւ՝ ոչ միայն երկբայելի գոլ այնմ աւանդութեան, այլև անհաւանելի : Վասն զի մեկնութիւն

առաքեալ Նորին վարդապետի յԵրգս երգոց 'ի հարկեցուցիչ խնդրոյ Գուրգենայ արքայի, ասէ 'ի յիշատակարանին լինել հայկազնեան թուականին ՆԻԶ. այս է՝ իբր 26 ամօք յառաջ քան զաղօթսն, և յայտ է թէ ոչ մատաղօրեայ վաղահասուկ ոք էր նա 'ի մեկնել զայնպիսի խորհրդաւոր գիրս, այլ վարդապետական աստիճանաւ գերապատուեալ, և անուանի նաև առ թագաւորս 'ի մէջ գիտնաւորաց ժամանակին. ուստի երեսնամեայ գէթ ունէր յայնժամ զաստիս հասակին. յոր յաւելեալ և ամս 26, լինէր իբր յիսուն և վեցից ամաց 'ի յօրինել Աղօթիցն :

Այլ ահա յաջողեաց մեզ միւս ևս ճշգրիտ ապացոյց 'ի ձեռս բերել 'ի Մեկնութեց Պատարագի առաքեալ մեծին Խոսրովայ եպիսկոպոսի՝ հօր սորին Գրիգորի. քանզի յիշատակարան դնէ 'ի նմա սոյն մերս Գրիգոր, և ասէ թէ Սահակ որդի Խոսրովու արար զառաջին գծագրութին կամ զգաղափարել մեկնութեն 'ի թուականին յղթ : Եւ զի որքա ծնեալ էին յառաջ քան զեպիսկոպոսանալ Խոսրովու, և առ յետ եպիսկոպոսութեն գրեաց զմեկնութի ժամակարգութեն և զպատարագին, յայտ է ապա՝ զի ամօք յառաջ քան զն թուականն ծնեալ էր Գրիգոր, ունելով մատաղ ամս գէթ վեց կամ եօթն. և յաւելեալ 'ի յիսուն և վեց ամսն, լինէր Գրիգոր աւելի քան զվաթսնամեայ 'ի յօրինել Աղօթիցն : Իսկ թէ յետ այնր փութացեալ եղև նորայն կատարումն 'ի յաւիտենիցն հանգիստ, զայդ 'ի սոցդ յիշատակարանաց դեռ ոչ ընկալաք :

Այս ըստ ասացելոցս՝ յերից ինքնագիր Յիշատակարանաց մերոյս Գրիգորի հաւաստեալ ցուցանի, Առաջին՝ թէ ամօք յառաջ ծնեալ էր նա քան զորեքհարիւր թուականն, ըստ յիշատակարանին որ 'ի մեկնութե Պատարագի Խոսրովու : Երկրորդ, 'ի նիզ թուականին՝ յորում մեկնեաց ինքն զԵրգս երգոց, լինէր նա երեսնամեայ՝ և աւելի ևս : Երրորդ զհետ գայ այսոցիկ՝ լինել նմա անցեալ զվաթսնամենիւք 'ի թուականին նծա, կամ նծբ, յորժամ զաղօթամատոյց գիրսն կատարեաց : Այլ թէ յոր միւս խմանի ասացեալն 'ի բանն ձէ. 3. եթէ հասից յամս ծերութեան, բացատրեսցուք անդ. ծ. 9. խօսել զնորին ծերութէ : Յայսցանէ ամենայնէ մերկանայ զլխովին անհիմն թուաբերութիւնն՝ որ եդեալ կայ 'ի մեկնութե խաչին Ասպարանից Յակոբայ Պատրիարգին. թղթահամար չխէ. յաղագս ժամանակի կենաց և գործոց երանելւոյ Նարեկացւոյն :

# ՑՈՒՑԱԿ

## ՄԹԻՆ ԲԱՌԻՑ ԵՒ ՆՈՐԵՆՑ:

Ագանիլ: կենալ տեղ մը: օթուրադ էթմէք: հե. 13.
ագին: եդեմ, դրախտին տեղը: խդ. 3:
ադոնայի: տեարք, կամ տէր. իբ անուն է եբրայեցերէն: ճթ. 8:
ազատագնեալ: ազատ գատէ: ձա. 3:
ազգականութիւն: մէկ բնութիւն ունող: հե. 7:
ազգակից: նման, ույղուն: կ. 4. ղբ. 3:
ազդարան: խապար տալու, կամ բան իմացնելու տեղ: խապէրկեահ: կամ, խապար տուող. իմացնող, խօսող, ինչպէս բերանը կամ լեզուն: ծթ. 2: հդ. 2:
ազդել: ընել. ֆայտա ընել: քեար էթմէք: բ. 2: կամ. իմացնել, խապար տալ: տույուրմաք: ա. 1:
ազդողարան: խապար կամ ձան տուող: խապէրտար: ղբ. 1:
ազդումն: ձայն, խօսք: փ. 1: կամ, գործք, հաւիէթ: ղ. 3:
ազդր: սրուն. պալըյը: ծը. 3:
ազն: ազգ. միլլէթ: ձփ. 1: կամ, ժողով: ճիմահիր: ղ. 3:
ալէլու: ալէլուիային կորածը. օրհնութի. մէահ: ղփ. 24:
ալէտանջ: տալքա ընող: մութէմէվվիճ: ծփ. 3:
ալիք: տալղա: ըե. 3: կամ, ճերմակ մօրուք: ձէ. 3:
ալփափեալք: ույքուն: հէճէ, էպճէտ: ղփ. 22:
ախոյեան: դէմ ելող ճէնքճի: հասիմ: Է. 1:
ախորժ: հաղ ընելու: խօշ: հը. 4:
ախտ: ցաւ. հիւանդութի մարմնաւոր կամ հոգևոր, մարազ, խույ. տէրտ, ևն:
ախտանալ: հիւանդանալ: խասթա օլմաք: ծա. 2:
ախտարծարծ: ախտ կամ գէշ խույը վառող: կ. 4:
ածանցական: շուտ անցնող: հփ. 3:
ակատ: խայէխ: կփ. 2:
ակն: աչք: կէօզ: լփ. 2:
ակնայայտ: աչքը մտնող: խը. 4:
ակնապարար: աչքը լեցնող կամ զուարճացնող: (քէշտակարան:)
ակնառու: խաթըր նայող: ծփ. 2:
ակնարկել: նայել: պագմաք: ն. 3: կամ, իմացնել, ցցնել: պէյան էթմէք: ղփ. 19: կամ, աչք ընելով հրամել: էմր էթմէք: հը. 4:
ակնարկութի: կամք, հրաման: էմր: ձա. 1:
ակումբ: ժողով: ճիմահիր, մէճլիս: խդ. 1:
ահագնութի: զարհուրելի ըլլալը: հէյպէթլիւլիք: ձփ. 1:
ահեակ: սոլ: ծե. 4: կամ, սոլ դին: կը. 2:
ահեկան: ձախ դին: սոլ թարաֆըն: ն. 2:
աղանդ: կախարդական գրուածք, կամ կապ: ղփ. 18:
աղանդաշնար: խաբէական: ըէ. 2:
աղանդաւոր: մոլորցնող, խաբեբայ: ղ. 3:
աղարտել: աւրել ձեռքով, կամ խօսքով: պօզմաք: ն, 1:
աղաւաղել: աւրել, փճացնել: եօղ էթմէք: բ. 2:
աղերս. ա. 1:
աղերսարկութի. ձբ. 5. } աղաչանք: եալվար, նիազ:

աղէյարմար : աղեղով շինած : քիրիշլի : ղբ . 8 :
աղէտ : սրտի ցաւ, կսկիծ : իւրէք էզիլմէսի : իա . 2 :
աղխողորմ : խիստ ողորմուկ : ժը . 2 :
աղիւսարկութի : թօղլա կամ քէրփիճ շինելը : հե . 12 :
աղխ : փակ, գոց, կղպաք : քիլիթ : ժբ . 2 :
աղխել : կղպել, գոցել : քիլիթլէմէք : ժդ . 1 :
աղկաղկ : տկար, խեղճ : սէֆիլ : կը . 3 :
աղճատանք : սարուռճուպուռ խօսք : խե . 2 :
աղօրիք : տէկիրմէն : և նմանութեամբ՝ ակռա : տիշ : կդ . 2 :
աղու : կակուղ : մուլայիմ : բ . 1 :
աղուական, կակուղ, հաճ ընելու : խօշ : կդ . 4 . ղա . 3 :
աղուէս : թիլքի : ծա . 4 .
աղջամուղջ : հդ : 3 . } մթութիւն : գարանլըք, փուս :
աղջութիւն : դ . 3 :
աղտաղտին : աղի, չօռ : աճը զէհիր : լթ . 2 :
աղօթկեր : աղօթք ընօղ : տուաճի : ծա . 5 :
աղօտական : մթնչաղ : ծբ . 1 :
աղօտանալ : մթննալ, մարիլ : սէօնմէք : է . 3 :
աճառ : աղտ հանելու շինած բան, ինչպէս սապօնը . են : ղդ . 11 :
աճիւն : մոխիր : քիւլ : ի . 1 :
ամայաբնակ : անապատը կեցօղ : խդ . 1 :
ամայի : պարապ, երեսի վրայ ձգած : եապան, վէրան : դ . 3 : ծբ . 1 :
ամանակ : ժամանակ, առեն : վագըթ : (յիշատակարան :)
ամբառնալիք դրօշից : պայրախներուն կօթերը : ղ . 3 :
ամբարել : ժողվել, պահել : տէվշիրմէք . սագլամաք : դ . 1 :
ամբարձուղէշ : բարձր ճուղով : սալլը : թ . 2 :
ամբոխ : խալապալըխ, հալխ : հե . 12 : կամ, խռովութիւն, վէլվէլէ : ա . 2 :
ամբոխութի : նոյն է : լդ . 9 :
ամենաբաղձ : փէք հաճ ընելու : ձդ . 1 :
ամենաբոլոր : ողջութիւն, եէքփարէ : ժե . 2 :
ամենաբուժ : ամէն ցաւ բժշկօղ . խիստ օգտակար : փէք հասիէթլի : իդ . 1 :
ամենաբուրեան : խիստ հոտով : փէք գօգուլու : ղդ . 19 :
ամենագորով : խիստ խղճացօղ . փէք րահմէթլի : կ . 5 :
ամենագրաւ : ամէնը առնօղ, զաւթ ընօղ : բ : 2 . ը . 1 :
ամենազգեցիկ : ամենուն լսելու : փէք քէսկին : հէ . 2 :
ամենախնկաւոր : խիստ անուշ : ծբ . 1 :
ամենածախ : խիստ երօղ մրկօղ : թէլէֆ էտէն : իը . 1 :
ամենակարծ : խիստ վախնալու, կամ վտանգաւոր : փէք գօրգուլու : ձե . 2 :
ամենակիր : ամէն թիւրլիւ ունօղ : ե . 3 : կամ, խիստ չարչարուած : փէք էօրսէլէնմիշ : ձբ . 3 :
ամենապատաղ : ամէն բանի սալմիշ ընօղ : ծէ . 2 :
ամենապատիկ : ամէն թիւրլիւ : խե . 1 :
ամենապատիր : փէք խաբուած : ծա . 1 :
ամենապատկառ : ամօթով լեցուած : իւզիւ գարա : թ . 1 :
ամենապարտ : խիստ պարտական, փէք սուչլու : իդ . 3 :
ամենասպառ : պիւթիւն զայ եղած : լդ . 2 :
ամենասփիւռ : ամէն տեղ եայըլմիշ եղած : խե . 2 :
ամենավայր : ամէն տեղ հասնօղ : ղդ . 13 :

ամենավայրան : փէք ֆէսֆէսէլի : ա. 2 : կամ, տարմատաղըն ընող : հա. 4 :
ամենավրէպ : ամմէն բանի՝ կամ միշտ եաղըլմիշ եղող : հզ. 1 :
ամենատեղաց : ամենուն վրա անձրևած : դ. 1 :
ամենատեղի : ամմէն տեղ ման՚ող կամ տարածող : հդ. 3 :
ամենատենչ : խիստ փափագող : ղդ. 9 :
ամենատխուր : խիստ տրտում : փէք մահզուն : իե. 3 :
ամենափորձ : փէք վուգուֆ : խդ. 1 : կամ, ամմէն բան քաշող : ձդ. 3.
ամենափկար : խիստ տկար՝ կամ վատուժ : լբ. 2 :
ամենընդարձակ : խիստ առատ : փէք պօլ : լե. 1 :
ամենարուեստ : խիստ վարպետ : փէք ուստատ : հզ. 2 :
ամենէրկչոտ : խիստ վախկոտ : փէք գօրգաք : ղբ. 5 :
ամենըմբռնել : սովորական : փէք աշինա : ղդ. 8 :
ամենընթաց : ամմէն դի վազող : հթ. 1 : դ. 1 :
ամուլք : նաւին դլխու դիուն երկու տիրեկը : կէմինին պաշթարաֆըն եքի տիրեկի : իե. 2 :
ամպարհաւաճիլ, կմ ամբարհաւաճիլ : սիրտը ուռեցուրիլ : պէպլեւլէնմէք : ն. 2 :
ամպրոպ : հալայի խառնակուն : անա պապա կիւնիւ, աֆան թուֆան : դ. 3 : ղ. 3 :
ամրաբերձ : ամուր ու բարձր : ղբ. 5 :
ամրոց : բերդ : գալա : ղ. 3 :
ամփոփել : եա առնել : կէրի ալմաք : ժթ. 2. կամ, ժողվել, պահել, ծածկել : տէվշիրմէք, էօրթմէք : խէ. 3 : Իւ կրաւորականն, ամփոփիւ, քաշուիլ, պահուիլ, քիշնալ, պղտիկնալ, են :
այգ : առաւօտ : սապահ վագթի : ժզ. 1 :
այլաբանել : օրինակով խօսիլ : մէճիազէն սէօյլէմէք : լբ. 1 :
այլադունակ : օտար ըռէնկ, այլանդակ : ղդ : 12 :
այլազնեայ : այլանդակ : պէդ : խբ. 3 :
այլամուսթն : կեղծաւորութն : իքի իւզլիւլիք : լա. 3 :
այլայլ : թիւրլիւ թիւրլիւ : ղբ. 8 :
այս : դև : ճին : հա. 2 :
այսախառն : սատանայի խառնուելովը կամ ձեռքովը եղած : ղբ. 6 :
այսական : դև, սատանայ : ճին : իա. 2 : ղա. 1 :
այսակիր : մէջը դև ունող : ճինլի : ժբ. 2 : հե. 12 :
այտ : թուշ, երես : եանագ : կդ. 2 :
այտուցումն : ուռէցք : շիշմէ : ժբ. 2 :
անագան : ուշ : կէճ : լթ. 3 : կամ, սօնղ քալըը, սօնղ թուրֆանտա : կբ. 2 : ձէ. 3 :
անազդելի : չիլսուելու : կզ. 1 : կամ, չիկրելու : ղդ : 21 :
անախտակիր : ախտ կամ կիրք չունող, ոխ չիպահող : բ. 2 : կամ, ցաւակից չեղող չիկսկծացող : ծ. 1. ծզ. 2 :
անաղանդ : հիլլէսիզ : ղբ. 9 :
անաղարտելի : չաւրելու : հա. 1 :
անաղելի : չաղած, հոտած : դուզլանմամըշ : ծդ. 2 :
անաղերսալի : չաղաչող : եալվար օլմայան : իթ. 2 :
անաղօտ : ձա. 3 : } չիմըթննալու, չմարելու : սէօնմէզ :
անաղօտելի : ղդ. 2 :
անամփոփելի : չիններնալու, չիժողվուելու : ժզ. 1 : կմ, չիծածկուելու : ձդ. 4 :
անանջրպետ : չիզատուելու : պէօլինմէզ : հե. 7 :

անաչառ ։ խաթըր կէօնիւլ չինայօղ ։ ը. 1 ։
անաչառատիպ ։ առանց յոյըր սէչիլի, կմ պօլ պօլ եայմիշ ընօղ ։ ղդ ։ 2 ։
անապակ ։ զուտ ։ սաֆի ։ իթ. 1 ։
անապշելի ։ շաշմիշ չըլլալու ։ հա, 1 ։
անառակ ։ էտէպսիզ ։ իդ. 2 ։
անարգելութիւն ։ զապտ չըլլալը ։ լդ. 1 ։ հէ. 5 ։
անարի ։ սիրտ չունօղ ։ իւրէքսիզ ։ կմ, վայրենի. բիրտ ։ եապանի ։ ը. 1 ։
անարծարծելի, չհրահրելու, չխլառուելու ։ է, 3 ։
անարտաքերելի ։ դուրս չելլելու ։ իդ. 3 ։
անբաժին ։ իը. 6 ։ } անբաժանելի. չզատուելու ։
անբաժ ։ լդ. 5 ։ } պայըրըլմազ, թաքսիմ օլունմազ ։
անբարդելի ։ չժողվելու ։ ճէմ օլունմազ ։ իէ. 3 ։
անբերելի ։ չի տարուելու ։ չէքիլմէզ ։ ժը. 3 ։
անբերրի ։ անպտուղ. գըսըր ։ ը. 2 ։
անբոյժ ։ չբժշկուելու. չբուժնուելու ։ օնըլըլմազ. ծը. 2 ։
անբորբոք ։ չխլառուելու ։ ադէշլէնմէզ ։ ձա, 3 ։
անբուժելի ։ տես անբոյժ. ը. 2.
անբռնադատ ։ առանց զօռի՝ կամ ստիպելով եղած ։ ձդ. 3.
անգծելի ։ չգծուելու, երկաթ չբանելու ։ ղդ. 12 ։
անգոմնել ։ վար զարնել, բանի տեղ չխեսպել ։ ղէյմ էթմէք ։ ծը, 2 ։
Անգոմնելի ։ զզուելու, գանելու, լէ. 3 ։
անգ ։ արտ. թառլայ ։ ղը. 9 ։
անգաձմունք ։ մանմուք ։ գուրունթու, էնոլիշէ ։ իէ. 3 ։
անգամաթիւ ։ բաժնած անգամները ։ ղդ. 4 ։
անգամանդեայ ։ խիստ կարծր ։ փէք սէրթ ։ ղը. 10 ։
անգանձառք ։ հին օրէնքին ծածկուած բաները ։ հէ. 15 ։
անգասելի ։ կարգի մէջ չիմնօղ ։ սըրայէ կիրմէզ ։ լը. 7 ։
անգատ ։ անխոհեմ, անխրատ ։ նէհազ ։ խէ. 2 ։ կամ, չճանչցած ։ եապանճի ։ խղ. 2 ։ կմ, չփորձած ։ թէրճիւմէսիզ ։ կա. 2 ։
անգարման ։ պէտ չեղած ։ թիմարսըզ ։ ձէ. 3 ։
անգոր ։ ընդարձակ, լայն ։ էնլի ։ կէ ։ 2 ։
անգորիչ ։ հանգչեցընօղ, խաղաղեցընօղ ։ լը. 2 ։
անգորրութիւն ։ հանգստութիւն ։ րահաթլըք ։ լդ. 2 ։
անդուլ ։ չդադրօղ ։ թէք տուրմազ ։ ձը. 2 ։
անդուղեկցուն ։ հոն մէկուել երթալը, կամ տանիլը ։ ղդ. 4 ։
անդրադարձութիւն ։ ետ դառնալը, կամ դարձընելը, թէքրար ընելը, կամ ըսելը ։ կէրի տէօնիւշ, թէքրարլամալը ։ իէ. 1. հղ. 1 ։
անել ։ չելլելու, չխալըսելու ։ չըքմազ ։ ը. 1 ։
անեկամտաբար ։ դրսէն չիգալով. ներսէն ։ տըշ գէնտինտէն ։ ղդ ։ 8 ։
աներասան ։ կէմսիզ, իւլարըզ ։ ծղ. 2 ։
աներևակի ։ ծէ. 3 ։ } աներևոյթ, չերևցօղ ։ կէօրիւնմէզ ։
աներևակ ։ ղդ. 3 ։ }
աներևութերակ ։ ծածուկ տամարներէն քալօղ ։ ժը. 2 ։
աներկեան ։ ստոյգ, հաստատուն ։ սահիհ, գավի ։ դ, 1 ։
աներկմիտ ։ չիւպհէսիզ ։ Ժ. 2 ։
անզերծ ։ չազատուելու ։ խ. 3 ։
անզղուելի ։ առանց նեղելու ։ ճէֆասըզ ։ ժդ. 3 ։
անզննին, չքննելու, չիմանալու ։ խա. 2 ։
անզովանալի ։ չիպարըշկէլու ։ ժթ. 3 ։
անզուգական ։ նմանը չունօղ ։ մէնէնտի եօք ։ դ. 1 ։
անզօրելի ։ ճար չըլլալու ։ չարէսիզ ։ իղ. 3 ։

անըմբերելի : չհամբերելու : սապր օլունմազ : ՃԸ . 1 :
անընդել : ալըշմիշ չեղօղ , եապանի : Թ . 3 :
անընդմիջելի : արալըխ չունեցօղ , չըբաժնուելու : ԽԴ . 1 :
անընդոստ : չըշարժօղ : գըմըլտանմազ : ՂԶ : 10 :
անընտիր : անպիտան , նետելու : Բ . 2 :
անընտրաբար : Թէվէքէլլի : ՀՆ . 11 :
անթառամելի : չըթռամելու : սօլմազ : ՃԴ . 4 :
անթարթափ : առանց գոցելու բանալու : ՃԵ . 1 :
անթափելի : չըխալըսելու : գուրթուլմազ : ԽԸ : 2 :
անթերի : լման : Թէքմիլ : ԼԴ . 5 :
անթոշակ : զաՀիրէսիզ : ԽԸ . 2 :
անթոշակութիւն : Ճամբու զաՀիրէ չունենալը : ԽԴ . 3 :
անժաման : տեղը չըՀասնօղ : կէրի գալան : ԾԸ . 2 :
անիշխան : չիշխօղ : գատըր օլմայան : ՃԴ . 2 :
անլքանելի : առանց երեսէ ձգելու : ՀԶ . 4 :
անխայել : խըղՃալ , խըլըմիշ չընել : ԽԶ . 4 :
անխարդախ : չըխառնուելու . անփորձ : զարարըղ : ԺԶ . 3 :
անխրախոյս : չըզօրանալու , սիրտ չառնելու : Ճէսարէթսիզ : ԾԸ . 2 :
անծագելի : չըլուսնալու : ԽԸ . 2 :
անծախ : ԼԴ . 10 :
անծախելի : ԼԶ . 2 : } չըմաշուելու , չըՀատնելու : Թէլէֆ օլմազ :
անկազդուրելի : չուժովնալու : ՀԾ . 2 :
անկած : անշաՀ , ցած : աշաք : ԿԹ . 3 : կամ , ընկած , կործանած : տիւշ-միւշ : ՃԶ . 6 :
անկամակութիւն : Հաղ չընելը : ալըղըլըք : ՂԶ . 8 :
անկայ : ՀԴ : 3 :
անկայուն : ՃԵ . 1 : } չըմնացօղ , անՀաստատ : գարարըզ , Թէմէլսիզ :
անկանել : Հուսել , Թէզկեաւ բանիլ : տօգումլը : ԿԴ . 2 :
անկաշառ : ըուշվէթ չառնօղ : Է . 1 :
անկապուտ : չըյափշտակելու : գափըլմազ : Գ . 1 :
անկասելի : առանց դադրելու , առանց վազ գալու : Ն . 2 :
անկատար : վերջ կամ ծայր չունեցօղ : սօնսուզ : ՃԶ . 6 :
անկեղակարծ : շիւպՀէսիզ : ՃԴ . 5 :
անկերպադրելի . չըձեւանալու : եօռուտամա կէլմէզ : ՂԶ . 6 :
անկէտ : չըվերջանալու : սօնսուզ : ԼԹ . 2 :
անկնդրուկ : պուՀուր չունօղ : ԾԴ . 2 :
անկշիռ : աննման . Հաւասար չունօղ : պիմէնէնտ : Ծ . 2 :
անկշռութիւն : չըկշռելը , չըսեպելը : սայմամաք : ԽԵ . 2 :
անկողին : տէօշէկ : ՃԴ . 3 :
անկռինչ : ձայն չըՀանօղ : սէսի քէսիք : ԺԴ . 2 :
անկրելի : չունենալու , օղըաթմիշ չընելու : ԽԹ . 2 :
անկցելի : չըմնալու , չըկարկտուելու : պիթիշմէզ : ԽԶ . 3 :
անՀագագ : անշունչ : նէֆէսսիզ , սօլուղու քէսիք : ԼԴ . 7 :
անՀամաշօտ : երկար , չըկտրելու : Դ . 1 :
անՀամբոյր : Նախս , սէրթ : ԽԶ . 2 : կամ , պինծ . մուրտար : ԽԴ . 2 :
անՀամբուրելի : չըկակղնալու : ԾԶ . 2 :
անՀամոզելի : չըՀաշտուելու : բըՃաղըղ : Է . 2 : ԾԴ . 2 :
անՀանդերձելի : չըպործելու , չըբանելու : իշլէնմէզ : ԼԾ . 1 :
անՀանդէպ : պէթ , ույկունսուզ : ՂԾ . 3 :
անՀաստ , չըՀասնօղ , անպակաս : Թիւքէնմէզ : ԽԶ . 4 :
անՀաստուածելի : չըբաժնուելու : այըըլմազ : ՀԵ . 5 :

անհարթութիւն : անկարգութիւն : եօլսուզլըք : խե . 2 :
անհարուածելի : չիզարնըլուելու : վուրուլմազ : հե . 10 :
անհետ : իզ չունօղ : ղգ . 24 :
անհետազօտելի : չիփնտռուելու : արաշըրըլմազ : իթ . 2 :
անհերքելի : դէմ չիկենալու : գարշըլանմազ : իէ . 2 :
անհուն : չանցնելու : կեչիլմեզ : լգ . 2 : կմ՛, չափ չունօղ : ղգ . 24 :
անհրաժեշտ : ետ չիդառնալու , չիվերնալու : կա . 2 :
անհրապուրելի : առանց խաբէութեան . ըղըրգանէ : ղգ . 10 :
անձաւ : մաղարայ : ծ . 2 :
անձեռնարկելի : ձեռք չըզարնելու , անկարելի : գապիլսիզ : հզ . 1 :
անձիր : շնորհակալ չեղօղ : նանքեօռ : կէ . 2 :
անձկալ : բաղձալ : արզուլանմաք : իը . 2 :
անձկական : նեղ : սըգը : գ . 1 :
անձկութիւն : կարօտ : հասրէթ : ժբ . 1 : կամ, քիչութիւն , պակասութիւն : եօքսուզլըք : ժգ . 2 : կամ, նեղութիւն : սըգլէթ , իե . 3 :
անձնական : բանական : բ . 1 : կամ, հոգևոր : գ : 3 :
անձնահամբոյր : հոգևորապէս պագտըռուելու : ղբ . 3 :
անձնամատն : ինք զինք մատնօղ : կենտինէ խային : իը . 2 :
անձուկ : նեղ , պզտիկ : տառաձըք , աղաձըք : ա . 2 : ժէ . 2 :
անճարակ : ճար չունօղ : ջարէսիզ : բ . 1 :
անճողոպրելի : չազատելու : գ . 1 : ծ . 3 :
անճոռնի : պէթ , եադըշըրդըղ : ծգ . 2 :
անմահարձան : խուլէ՝ կամ պուրճ չունօղ : լթ . 2 :
անմինչելի : կզ . 2 :
անմռունչ : լգ . 5 : } տուսիկ , առանց ձայնի : սէսսիզ :
անյատակելի : խիստ խորունկ : փէք տէրին : իը . 4 :
անյարիր : չիկանգնելու , վեր ելել չիկըցօղ : ժգ . 2 : ղբ . 2 .
անյարմարագիր : պէթ գրած , եօլով չըռած : ծգ . 4 :
անյեղլի : չիփոխուելու : տէկիշիլմեզ : գ . 1 :
աննիրհելի : չիմրափօղ : իը . 1 :
աննշոյլ : մութ : ըշըքսըզ : իզ . 2 :
աննուաղ : չիհատնելու : թիւքէնմեզ : թ . 3 :
անշաղախ : փաք , թէմիզ : ձ . 1 :
անշամանդաղ : տումանըզ : գ . 1 :
անշաւիղ : ճամբա կամ ճամբա չունօղ : չըգմազ : կզ . 4 :
անշնորհութիւն : ապերախտութիւն : նանքեօռլըք : ղա . 3 :
անշուշտ : ստոյգ , հաստատ : սահիհ : կէ . 1 :
անշքեալ : անշնորքցած : չիրքինլէնմիշ . իթ . 2 :
անոխութիւն : ոխ չիպահելը : լա . 3 :
անողոքելի : չիկակղնալու : ձբ . 2 :
անոպայ : եապանի . խօրեատ : իը . 4 :
անոստ : տեղէն չիշարժօղ , դըմըլտանմազ : կգ . 2 :
անորակ : գոյն չունօղ : ըրէնկսիզ : լգ . 10 :
անունակ : չունեցօղ , զուրկ : մահրում : լզ . 2 :
անորոնելի : չիփնտռուելու . իզ չունօղ : գ . 1 :
անուր : հալխայ : ժէ . 1 :
անուրէք : տեղի մէջ չիպըղմելու : իգ . 1 :
անուրջք : երազ , քնոյ մէջ խէյալ : ձգ . 1 :
անչափագիր : գծով կամ չըղըյով չիչափուելու : ըէսմի եօք : գ . 1 :
անպանծալի : չիրքին , նուխուսէթ : իը . 3 :
անպատիր : չիխաբօղ , կմ՛ չիխաբուելու : ալտաթմազ , ալտանմայան : գ . 1 :

անպատուաստելի : չիկցուելու : էրլէնմէզ : Ի . 3 :
անպատուար : պատ չունող : տուվարսըզ : ԼԹ . 2 :
անպատսպար : տեղ մը՝ կամ մարդ մը չունող : պիչարէ : ԺԷ . 1 :
անպարագիր : չէվրէի մէջ չիսըղմէլու : ԺԴ . 1 .
անպարապ : բանի հետ չեղող , չիկըցօղ : դամիրսիզ : ԾԶ . 3 :
անպարուրելի : չիփաթթելու , չիգոցուելու : գափանմազ : ԻԴ . 3 :
անպարսաւ : չիմեղադրելու : ԽԶ . 6 :
անպարտ : չիյաղթուելու : եէնիլմէզ : Դ . 3 :
անպարտակիր : կրելու կամ չարչարուելու պարտք չունող , սուչսուզ
տեղը չարչարուած : ՀԴ . 3 :
անպարտութիւն : չյաղթուիլը : ԽԹ . 2 :
անջատել : բաժնել : այըրմաք : ԼԴ . 5 :
անջնջելի : չիջնջուելու , չիսրբուելու : ԺԱ . 1 :
անջրպետ : բաժնող բան : արալըխ մանող : պէօլմէ : ԻԵ . 2 :
անջրպետել : բաժնել , հեռացնել : այըրմաք : ԺԶ . 2 :
անսալ : մտիկ ընել , մտել : տինկնէմէք : ԻԵ . 4 :
անսայթաք : չիսողկլթելու , չխտալ : սիւրչմէզ : ԺԶ . 2 :
անսաստութիւն : չինմելը . գլուխ քաշելը : ԽԱ . 2 :
անսպուժելի : ետ չիդառնալու : ԼԹ . 2 : կամ անյապաղ , արագ հար :
անստամբակելի : գլուխ չիվերցընելու : ՀԵ . 7 :
անստգիւտ : պակասութիւն չունող , կամ չիկորսուելու . ԻԶ . 3 :
անսփոփելի : չիմխիթարուելու : թէսէլլի օլմազ : ՀԹ . 2 :
անվայրապրկելի : չիձգելու , չիկործանելու : եըգըլմազ . ՂԵ . 5 :
անվայրափակ : տեղ չիսաղմելու , սինոր չունող : ԻԶ . 1 :
անվանական : ԾԱ . 3 : } դէմ չիդնելու : դարշըլանմազ :
անվանելի : ԽԶ . 1 :
անվասնելի : զայ չըլլալու : ՃԶ . 5 :
անվերարկելի : չիպարտկուելու : էօրթիւլմէզ : ԻԶ . 3 :
անվթար : Ժ . 2 : } չաւրուելու , չիպակսելու , համառ : պիր-
անվթարելի : ԻԴ . 3 : } գարար , գայիմ :
անվրէպ : չիծռելու , չխտալ : եանըլըշսըզ : ԼԶ . 2 :
անտարամ : չիխախտուելու : Զ . 1 :
անտարրափակ : տարերքի մէջ չիսաղմելու : ԺԴ . 1 :
անտիրելի : ազատ : ԼԵ . 1 .
անտխուր : տրտմութիւն չունող : ղամսըզ : ԼԶ . 2 :
անտպաւորական : տեղ կամ նշան չընող , շուտ անցնող : ՀԴ . 3 :
անրջական : քունի մէջ եղած . ԾԶ . 3 :
անցք : հանդիպած փորձանք : պէլա : ԻԵ . 1 :
անփոփոխագիր : ԺԱ . 2 : } չիփոխուելու , չիվերընալու , տէկիշիլ-
անփոփոխագրելի : ՂԶ . 2 : } մէզ :
անքանակ : չափ չունող : էօլչիսիզ : ՀԵ . 12 :
անքատ : ակար , խեղճ , զայիֆ : ԿԹ . 2 :
անքոյթ : ապահով : էմին , սաքին : ԻԵ . 2 :
անքօղ : չիծածկած , բաց : փէրտէսիզ , այան : ԺԱ . 2 :
անօթ : աման : գապ : ԺԸ . 2 :
աշխար : ողբ , լաց : աղլայիշ , ֆիղան : ԼԸ . 4 :
աշխարհակալ : աշխարհք բռնող , բոլոր աշխարհք գոցող : տիւնեայը թու-
թան : ՀԵ . 8 :
աշտանակ : շամդան , կամ մաշալայ : ՂԶ . 8 :
աշուէ : խըշտ : ՀԱ . 3 :
աչառել : խաթրը նայիլ : ԿԵ . 1 :

աչացաւ : աչքը սախատ : ալիլ, քեօռ : ԺԷ . 2 :
ապաբան : բերանը գոցուած : աղըը Թուլթուղ : ԽԷ . 3 :
ապագործ : անպիտան : պօշ, իշէ եարամազ : ԻԷ : 2 :
ապաղէն : սիլահսըզ : Է . 1 :
ապաթոյն : զէհիրսիզ : ԻԴ . 2 :
ապաժաման : ուշ համնօղ : կէճիքմիշ : ՀԹ . 3 : կամ պէվախտ : Թ . 2 :
ապախտ առնել : անարգել, պօշ ընել : ԻԵ . 3 :
ապախտաւոր : ապերախտ : էյլիք պիլմէզ : Վ . 2 :
ապականարար : աւրօղ, մնտօղ : ԻԹ . 2 :
ապահար, կամ ապարահ : հայըը բռնած կնիկ : Ն . 2 :
ապահաւատ : անհաւատ : տինսիզ : ՂԴ . 13 :
ապաձեռն : ձեռքը պարապ : էլի պօշ, Փագըր : ԻԴ . 3 :
ապաձեռնութիւն : ձեռքը բան չունենալը : ՁԶ . 6 :
ապաշաւ : Դ . 2 : } զղջում : փիշմանլըք :
ապաշաւանք : Ժ . 2 :
ապաշխարան : ապաշխարելու տեղ : ԺԴ . 3 :
ապաշնորհ : ապեկութիւն չիճանչցօղ : էյլիք պիլմէզ : Է . 2 :
ապաշուք : ցած, խեղճ : բաղպէԹսիզ : ԼԴ . 7 :
ապաջան : փուճ աշխատօղ, կամ Թէմպել : Բ . 2 :
ապառնի : ետքի գալիքը, ըլլալիքը : սօնըրաքի, կէլէճէք : Լ . 2 :
ԼԹ . 3 :
ապառում : խօսքէ կմ աղաչանքէ չառնօղ : նադս, ոէնդսիզ : ԺՃ . 3 :
կամ զըԹուԹենով : ԿԴ . 2 :
ապաստան : մէկի մը ընկած, կամ կիւվէնմիշ եղած : ԺՃ . 3 :
ապաստանել : յանձնել, ապաւրել : սփարիշ, կամ Թէսլիմ էԹմէք :
ԿԵ . 1 :
ապաստուածութիւն, անածութիւն : միւլհըտըլըք : ԽՆ . 1 :
ապարանջան : պիլէզիկ : ԼԴ . 1 :
ապարանք : սէրայ : ԽԸ . 6 :
ապարասան, կամ ապերասան : նախս, ինատճի : ԿԲ . 2 :
ապաւանդակ : նաւի, կամ չարըրի չուվան : խփ : ԻԵ . 2 :
ապաքինել : բուընացընել : սաղլամԹմաք : ԼԴ . 2 :
ապէնխազ : անկարօտ : էհտամճըզ : ԾԹ . 2 :
ապիկար : տկար, չիկրցօղ : գուտրէԹսիզ : Ժ . 1 :
ապիրատ : չար, գէշ : ԾԴ . 2 :
ապշիլ : խելքը զայ ըլլալ : շաշմաք, մաԹ գալմաք : ԺԷ . 1 :
ապուտ : սիլէ, շամառ : ԿԴ . 4 :
աջակամ : աջ գլուխը : սաղ Թարաֆըն : Ն . 2 :
առ : առնելը, յափշտակելը : գափըշ : ԽԸ . 4 :
առագաստ : փէրտէ : ԽԸ . 1 :
առած : խելացի խօսք : միսալ : Ծ . 1 :
առակայք : առջևը կամ մօտը եղածները, ըլլալիք : ԺԴ . 3 :
առականք : ամօԹ տեղուանքը : ԺԹ . 4 :
առակել : օրինակել, ցըցնել : ՂԴ . 5 :
առանցեալ : առնելը անցած : վագԹի կէչմիշ : ԼՃ . 1 :
առաջադրուԹիւն : առջևը կամ դուրս ցըցուած բան . ինչպէս մաշալային
Թևերը : ՂԴ . 8 :
առաջք : ճամբու կամ ջրի ճուղը, ծայրը, Թև : գօլ : ԿԸ . 1 :
առասան : չուվան : սիճիմ : Ժ . 1 :
առաստաղ : Թաւան : ԺԲ . 3 :
առաքելուԹիւն : ղըրկելը : կէօնտէրիշ : ՂԴ . 6 : կամ, առաքեալ, բառ

րողէչ ։ ղդ․ 15 ։
առընթեր ։ քովը , մօտը ։ եանընտա ։ ձլ․ 1 ։
առժամայն ։ կարճ գիմացող , շուտ անցնող ։ հդ․ 3 ։
առիգած ։ գոգնոց ։ կամ փէշտըմալ , չարշաֆ ։ ն․ 2 ։
առիթ ։ պատճառ ։ սէպէպ ։ ա․ 2 ։
առկայծեալ ։ մարմրելու եղած ։ ձէ․ 3 ։
առհաւատչեայ ։ չէշնի , փէյ ։ լե․ 4 ։
առձեռն ։ պատրաստ ։ հազըր էլտէ ։ ղդ․ 8 ։
առուղեկան ։ անցուոր , անցնող գացող ։ ( յիշատակարան ։ )
ասուի ։ բրդէ լաթ ։ իա․ 3 ։
ասուն ։ խօսօղ , բանական ։ կ․ 2 ։
ասպականապատ ։ շան պէս ապասօղ , կամ ձիանց պահապան ։ ըն․ 17։
ասպատակ ։ չէթէջի , քէլէփիրչի ։ կթ․ 2 ։
ասպարէզ ։ բաց տեղ ։ մէյտան ։ ա ։ 2 ․ թ․ 1 ։
աստարուէս ։ կուռքին՝ կնկան քիպլէթով ։ կ․ դ ։
աստէնք ։ աս տեղինները , աշխարքիս ։ ձա․ 4 ։
աստղ ռեփանայ ։ եգիպտացւոց կուռքը՝ աստղի պէս ։ ն․ 2 ։
ածախառն ։ այ հետ միաւորած ։ ծդ․ 4 ։
ածական ։ ածային բնութեն․ ածութեն ։ ձդ․ 3 ։
ատամն ։ ակռայ ։ տիշ ։ ն․ 2 ։
ատամնատու ։ ակռայի խլիշմիշ եղող ։ տիշէ տօղանան ։ ձր․ 5 ։
ատեան ։ տիվան , մէճլիս ։ լը․ 4 ։
ատտիկեցի ։ աթէնք քաղքեն ։ կե․ 1 ։
արագ ։ շուտ ։ չափուք ։ կը․ 3 ։
արահետ ։ ամմէն տեղ ճամբա ընօղ , եայըլմիշ եղօղ ։ ժը․ 2 ։
արահետ վստահութեն․ ճատաշ ճամբա ։ խղ․ 3 ։
արբանեակ ։ խըզմէթքեար ։ կը․ 2 ։
արբշիռ ։ գինով ։ սէրխօշ ։ ը․ 2 ։
արբունս ։ խմելը ։ իչմէք ։ լթ․ 2 ։
արբուն ։ հասակ , արենք ։ եաշ ։ չափու արբունն ։ չափաւոր հասակ․
  քեամիլ եաշ․ արբըլպալիլէք ։ դ․ 2 ։
արգահատել ։ աղաչել․ եալվար օլմաք․ ժբ․ 1․ ժե․ 1 ։
արգանդ ։ փոր ։ գաւըն․ ռահմ ։ լա․ 1 ։
արգասաւոր ։ շահաւոր ։ ֆայտէլի․ հե․ 5․ ( յիշատակարան ։ )
արգասիք ։ գործ․ իշ , հարէքէթ ։ դ․ 4 ։
արգելան ։ փակելու տեղ ։ հափիս եէրի ։ ը․ 2 ։
արգարալուկ ։ հախ տեղը չարչարած ։ իթ․ 2 ։
արգեան ։ ժը․ 1 ։ } հիմիկվան․ շիմտիքի ։
արգի ։ ժե․ 2 ։ }
արգիւն ։ բերք , գործ ։ հասիէթ , լա․ 1 ։ ղդ․ 22 ։ կամ , հասըլ ընե-
  լը ։ ղբ․ 10 ։
արգիւնական ։ հասըլ եղած ։ պաշաչըգմըշ , թէքմիլ ։ խե․ 1 ։
արգվառնական ։ հիմա ցրուած , կամ զայ եղած ։ իբ․ 2 ։
արժանիք ։ արժանաւորութեն , արգիւնք ։ սէվապ ։ ձդ․ 4 ։
արի ։ սրտոտ , կորիճ ։ իկիտ , գուվվէթլի ։ ձե․ 1 ։
արծարծել ։ հրահրել ։ ալէֆլէթմէք ։ ը․ 2 ։ հա․ 2 ։ կամ , նորոգել ։
  թազէլէմէք , ազտըրմաք ։ իդ․ 2 ։
արկածք ։ փորձանք ։ պէլա , խէթա ։ դ․ 3 ։
արկանելիք ։ վրայի լաթ , հագուստ ։ կէյինէճէք ։ իթ․ 2 ։
արկուած ։ վրան ձգելու բան ։ էօրթիւ ։ ղդ․ 20 ։
արհաւիրք ։ մեծ վախ , վախնալու բան․ զայէթ գօրգուլու չէյ ։ իա , 3։

արձագանք : Եռ դարձօղ ձայն : Եանքօ , ուէտոլի սէտա : ղբ . 8 :
արձակերտան : ախկլինը կամ խուլարը Թողած . խը . 2 :
արձակուրդ : արձակումն, արձկուլը : դ . 3 :
արձան : քար . դաշ : դ . 3 : կմ, ակբլլի դաշ : խդ . 1 :
արձանագրել : հաստատ գրել : գայտ էԹմէք : հէ . 3 :
արձանանալ : խաղի դրուիլ, կամ դրուիլ : խդ . 2 :
արձանացուցանել : բռնել, արգիլել : մէն էԹմէք : հա . 4 : կամ, հաս-
տատուն գրել : հը . 3 :
արձանացուցիչ : բռնօղ, դադրեցընօղ : ղ . 1 :
արմատակտուր : քեօքը՝ կամ քեօքէն կտրօղ : ժդ . 3 :
արմատաքի : քէօքէն, կամ քեօքով : կէ . 2 :
արմաւենի : խուրմա աղաճը : կէ : 2 :
արմուկն, ( արմկունք : ) ախրսէկ : դ . 3 :
արմունք : ընդեղէնք : Թէրէքէ, էքին . ղախիրէ : կը . 2 :
արշաւել : վազել . գօշմաք : հա . 2 :
արուարձան : երիկ մարդու քիավէԹ : կ . 4 :
արուեստ : զէնահաԹ , մարիֆէԹ : Թ . 3 :
արուԹի : զօրուԹի , ուժ . գուվվէԹ : խԹ . 3 :
արուսեակ : սապահ եըլտըզը : ծ . 1 . կամ, արև : լդ . 2 :
արջնաԹոյր : կԹ . 2 : } սև, մուԹ ըռէնկ : գարա :
արջնատես : լա . 3 :
արտաբերել : դուրս հանել : տըշարը չըգարմաք : խե . 2 :
արտաբերուԹի : դուրս հանած բան : լէ . 2 :
արտագրել : հասըլ ընել : Ժ . 1 :
արտալած : քշած , սուրկիւն , կամ այլ եղած : ծդ . 2 :
արտաձգեալ : դուրս ձգած , զօռով տարած : ծդ . 3 :
արտաշնչացեալ : հոգին ելած , մեռած : կդ . 2 :
արտաքնայարդար : դրսըռւանց մաքրած : տըշարըը ախուզլին : խէ . 3 :
արտուղի : Ճամբէ դուրս , ծուած : եօլտան շաշմըշ : հը . 3 :
արփիացնցուղ : արևէն , կամ արեւծաԹին առէնը ցօղուած : կմ, լոյս
ցրցնօղ : դ . 1 :
արօտ : չայիր , օԹլուգ : խե . 3 :
արօր : հարօր : սապան : ծդ . 2 :
արօրադրել : գետինը հերկել . սապան սուրմէք : ժը . 2 :
աւագափող : մեծ պօռու , կամ զուռնա : ղբ . 7 :
աւազափուլ : զումով փլած : խը . 4 :
աւաղական : լալու , խղճալի : խդ . 1 :
աւաղ : խղճուկ ձայն : խդ . 3 :
աւաղել : խղճալով ցաւիլ, վայ տալ : խԹ : 2 . խը . 4 :
աւանդ : էմանէԹ : դ . 1 . կամ, ընծայ : փիշքէշ : բ . 2 :
աւանդք արգասեաց : ցանած հունտերը՝ բան հասըլ ընելու : Թ . 2 :
աւանդական : աւետարան գրօղ , կամ քարոզօղ : լդ . 6 :
աւարել : Թալլէլ . եաղմա էԹմէք : ժբ . 3 :
աւարտել : լըմնցընել : պիԹիրմէք : լդ . 5 :
աւաղական : ախուվախ ընօղ : տըքացօղ : խնլէյէն : խբ . 2 :
ափն : ( ափունք . ) ծովու կմ գետի քէնար : դըշը : դ . 3 :
ափշիլ : պապշիլ մնալ : շաշմաք : լդ . 2 :
Բաբելոն : պաղդատ : ա . 1 :
բագին : կուռքի պատկերք : փուԹ : խէ . 3 :
բազմաբեղուն : շատ պօղ, պերէքէԹլի : խը . 3 :
բազմարիծ : շատ կեղտոտ : չօք լէքէլի : ը . 1 :

բազմաբոյլ : խիստ շատւոր : չօքլուք : է . 1 :
բազմաբուրեան : շատ թիւրլիւ հոտով : ղդ . 11 :
բազմակ : նստելու , կամ կենալու տեղ : օթուրաք : կ . 3 :
բազմական : նստելու տեղ , ինչպէս սէտիր , մինտէր , եւն : կամ նստող-
ներ : խբ . 1 . ծ . 2 :
բազմակոհակ : շատ տալղալը : ժե . 3 :
բազմաձեռնեան : շատ ուժով . կամ զօրլու : ղբ . 9 :
բազմամամնեայ : կերպ կերպ , շատ թարզ : խե . 2 :
բազմայածեան : շատ բանի պլրտող : չօքչէյէ տօլաշան . կ . 3 :
բազմաստեղնեան : շատ ճուղով , տալը : խե . 2 :
բազմարժանի : խիստ արժանաւոր : փէք լայըգ : ն . 1 :
բազմարկածեան : խիստ փորձանքոտ : պէլալը : խէթալը : հդ . 2 :
բազմիլ : նստիլ : օթուրմաք : լբ . 2 :
բազուկ : թեւ մարդու : գօլ : լա . 2 :
բախումն : զարնելը , զարնուածք : վուրըշ , տօգանըշ : կդ . 4 :
բախտք : կուռք : փութ : ծա . 4 :
բահաղ : կուռքի անուն է : կդ . 2 :
բաղկացուցանել : միաւորել : պիրլէթմէք : հե . 7 :
բամբիռն , ( բամբռան : ) չալղըարայ . զիլ : ղբ . 8 :
բանագէր : ճարտասան , կամ բանաստեղծ : շայըր : ծդ . 2 :
բանակ : օրտու : կբ . 3 :
բանապաճոյճ : ճառթճութ խօսող : հդ . 2 :
բանդագուշեալ : խելառած , կատղած : չըլկըն : ժբ . 2 :
բանսարկիլ : բամբասուիլ : պըրփըլանմաք , տիլլէնմէք : ձե . 5 :
բառաչ : ոչխարի , կամ կովու ձայն : ժե . 2 :
բառացի : վարպետ , սիրուն շինած : ուստաա : ղբ . 8 :
բասիր : ն . 1 : } քամահրելու , մեղադրելու : այըփլը :
բասրել : ղա . 3 . }
բարանութիւն : բարք կամ թապիէթ ցըցնող խօսք : թախլիթ : ղբ . 8 :
բարացուցական : բարք կամ էշխ ցըցնող : ղբ . 8 :
բարաւոր : դրան վերի շէմը : սօյա : ղա : 2 :
բարբանջումն : խենթումենթ խօսք : խբ . 4 :
բարբառ : խօսք , ձայն : սէօզ : սէս : ղբ . 8 :
բարգաւաճ : առատ : պօլ : խբ . 5 : ձդ . 3 :
բարգաւաճութիւն : մեծնալը , առաջ գալը : խբ . 2 :
բարդութիւն : գիզուիլը . էօլըմթը : ա . 1 :
բարեբաստութիւն : յաջողութիւն : բախտ : լդ . 10 :
բարեհրաւէր : 'ի բարին յորդորող : ծա . 3 :
բարենշմար : աղւոր , սիրուն . չիրքին : ղդ . 6 :
բարեպատեհ : խիստ յարմար : փէք ույկուն : հէ . 1 :
բարեսէրութիւն : աղէկ հունտ տալը : ձդ . 3 :
բարետաւիղ : անուշ ձանով : տիւղէնլի : ղբ . 8 :
բարձունք : կուռք պաշտելու բարձր տեղեր : հե . 12 :
բարձրաբերձ : խիստ բարձր : փէք եւքսէք : իւճէ : ղբ . 11 :
բարձրայօն : ընքվիլով հպարտացող : դ . 2 :
բարձք , ( բարձից : ) թօփուխ : ժբ . 3 :
բարոյք : բարք , թապիէթ , սովորութիւն , ադէթ : ծա . 3 :
բարունակ : ճուղ : դալ : է . 2 :
բարուրք : մեղադրանք : պէհանէ : ձբ . 3 :
բարօրութիւն : աղէկութիւն : էյիլիք : լա . 3 :
բացական : հեռու կեցող : ուզաքտաքի : թ . 2 :

բացականադոյն ։ հեռուանց առած ։ ղէ․ 7 ։
բացասութիւն ․ ինքեար ընելը ։ սուտ խօսք ։ ձբ․ 5 ։
բացատրութիւն ։ բաժնուիլը ․ զատուիլը ․ Թեկլլի ։ ղէ․ 8 ։
բացարձակութիւն ։ ընդարձակութիւն ․ հեռաւորութիւն ։ ուզաքլըք , մէյտան ։
  հէ․ 3 ։
բացերևութիւն ։ յայտնի երևնալը , մէկնութիւն ։ մանա ։ ղէ․ 17 ։
բաւանդակապէս ։ լման ։ պիւթիւնլիւքլէ ։ ղ․ 4 ։
բաւել ։ կրնալ ։ գատիր օլմաք ։ իը․ 3 ։
բաւիղ ։ սաչախ , դուրս ելած ծածք ։ խ․ 2 ։
բելիար ։ սատանայ ։ ծա․ 4 ։
բեկանել ։ կոտրել ։ գըրըլմաք ։ իհ․ 2 ։
բեկութիւն ։ կոտրտուիլը ․ ջարդուիլը ։ ը․ 2 ։
բեհեղզեբուղ ։ ճանճերու ածը ․ կուռք մի է ։ ծա․ 4 ։
բեմ ։ ատեան , բարձր տեղ ։ թախթան ։ իղ․ 2 ։
բեմական ։ բեմը կեցող ․ քա սարկաւագ ։ ծղ․ 2 ։
բերդամարտութիւն ։ խալէի ճէնկ ։ ղբ․ 5 ։
բերել ։ վրան ունենալ , կամ դիմանալ ․ կեօթիւրմէք , տայանմաք ։
  է․ 2 ։
բերումն ։ պատահմունք ։ կէլիշ ։ իե․ 2 ։ կամ , բանի մը ետևէ ընկնի-
  լը ։ լէ․ 2 ։
բերք ։ հասըլ եղած բան ։ ժը․ 2 ։
բժժանք ։ կախարդական ծրար ։ չըդըմ ․ Թըլըսըմ ։ կղ․ 4 ։
բիբ ․ ( բբի ։ ) աչից պէպէք ․ կե․ 2 ։
բիծ ։ լէքէ , զէրրէ ․ ղ․ 3 ։ կամ , կածիծ ։ սիվրիճիկ ։ կթ․ 2 ։
բլուր ։ թեփէ եէր , պայիր ։ խ․ 2 ։
բնաւ ։ բոլոր ․ ամենն ։ պիւթիւն ․ ճիւմլէ ։ լէ․ 1 ։
բոլորապատուղ ։ բոլոր ընծայուած ։ եէքիւնըէ փիշքեշ օլմուշ ։ ա․ 1 ։
բողբոջ ։ ֆիտան , ֆիլիզ ։ լէ․ 3 ։
բողոք ։ մեծ ձայն ․ կամ ֆիրեատ ։ ե․ 2 ։ իա․ 2 ։
բոյլ ։ ժողով ։ ճիւմհիւր ։ լա․ 2 ։
բոսոր ։ կը․ 3 ։ } կարմրած , արիւնոտ ․ կասկարմիր ․ գըր-
բոսորային ։ կֆ․ 1 ։ } մըզը ։
բոտոտ ։ փորու սոլուճան ։ կթ․ 2 ։
բոցակիծ ։ կրակի պէս կծող , կիզացընող ։ կթ․ 2 ։
բոցաշնչութիւն ։ ալէֆլի նէֆէս ։ ղա․ 3 ․ ղէ․ 2 ։
բուժեալ ։ բժշկուած , բուժուած ։ ծէ․ 3 ։
բուծեալ ։ սնած , պէսլէնմիշ եղած ։ ծէ․ 3 ։
բուռն ։ ամուր , ուժով ։ զօռլու ։ ժը․ 2 ։
բուռն հարկանել ։ ձեռք զարնել ։ էլ վուռմաք ։ լա․ 2 ։
բուրանոց ։ պուհուրտան ։ լ․ 2 ։
բուք ։ ձիւնով քամի ։ գըյամէթ ։ հա․ 4 ։
բռեալ ։ ճերմըկցուցած ։ պատանալը ։ իէ․ 3 ։
բռնալիր ։ ավուճը լեցընող , փէք մենծ ։ ժֆ․ 3 ։
բռնախոյեան ։ ուժով ճէնկճի ։ կիւլէշճի ։ ղէ․ 18 ։
բռնամարտիկ ։ կիւլէշճի , փեհլիվան ։ ղէ․ 13 ։
բրել ։ գետինը փորել ․ եէր գազըմաք ։ հէ․ 2 ։
բքաբեր ։ բուք կամ թուֆան բերող ։ իե․ 3 ։
բքացեալ ։ բուքով կամ թուֆանով ծեծուած ։ ժե․ 1 ։
Գագաթն ։ թեփէ ․ գաֆա ։ լէ․ 2 ։
գալարել ։ ոլորել ։ պիւզիւլմէք , տիւրիւլմէք ։ հթ․ 2 ։
գահ , կամ գահոյք ։ մեծ աթոռ ․ թախտ ։ լը․ 2 ։ իթ․ 2 ։

գաւառորակ : Թաշրալան : ՀԷ. 3 :
գաղձնաւոր : զարդը խոտով գայլ խոտով : լցուած : ԾԴ. 2 :
գաղտնակուր : ծածուկ՝ կամ քիչ քիչ ուտող. ինչպէս որդը, ցեցը, ևն. ԿԹ. 2 :
գայխան : մըղլախ : ՂԲ. 4 :
գան : ծեծ : քեօթէկ, տայագ : ԸԷ. 3 :
գանչութիւն : կանչելը, սուր ձայն : էօթմէք : ՂԲ. 8 :
գարնանազոյր : գարնան կատղած, ազմիշ եղած . ԾԴ. 3 :
գարշապար : ոտից տակը : տապան : ԺԴ. 2 :
գարշունակ : մուրտառ բանով լեցուած : ԽԷ. 3 :
գաւիթ : տան փակ : ավլը : ԸԴ. 7 :
գգուել : սիրով պէս ընել : եօգշամաք : ՀԵ. 14 :
գեհեան : խոր տեղ, դժոխք : ճէհէննէմ : Է. 2 :
գեղ : տեսք : կէօստէրիշ . սիֆաթ : ԾԴ. 2 :
գեղայօրէն : գեղեցիկ յօրինած : տիլպէր : ՂԴ. 24 :
գեղմն : բուրդ : եափաղը : ԾԲ. 1 :
գետահերձ : գետը պատռօղ . ճղքօղ : ՀԵ. 10 :
գետնաքարշութիւն : գետինը սիւրիւլմիշ ըլլալը . այսինքն, աշխրքի բանե֊
րուն համար՝ սէվտա ունենալը : ԸԲ. 2 :
գեր : մենծ : փայելի, իւստիւն : Դ. 2 :
գերաբնապէս : անծայրն զօրութբ, կամ զարմանալի կերպով : հըքմէթլի֊
լէ : ՂԴ. 8 :
գերանակիր : տիրէկ ունօղ : տիրէկլի : ԽԷ. 3 :
գերաշխարհան : խիստ լուսօղ : իֆրաթ պարլայան : ԽԸ. 5 :
գերաշխարհիկ : մենծ փայելի, փէք իթիպարլը : Դ. 2 :
գերափառ : խիստ աղնիւ : նէվզուհուր : ՂԴ. 5 :
գթել : սիրտիլ ընկնիլ : աճըմաք : ԾԷ. 3 :
գժգմնութիւն : երես կախել : սուրաթըն ասմաք : ԽԵ. 2 :
գժտութիւն . կռիւ : ղավղայ, չէքիշ . ԽԵ. 2 :
գինդ, ( գնդի : ) օղ . քիւփէ : ԸԴ. 1 :
գիշատել : փըղըքել : փառալամաք : ԺԷ. 1 :
գիշերավար : իրիկվան կամ գիշերվան ատող, կամ սատանայ . ԸԵ. 1 :
գիջութիւն : Թացութիւն : ըսլաքլըք, նէմլիք : ՂԴ. 20 :
գխախուխ : մազերը չալըլիպէս չորցած մնկրուած : ԺԸ. 2 :
գլխաշուք : գլուխը ծածկօղ : պաշ էօրթէն : ԸԴ. 1 :
գլխաւորել : լմնցընել . գլուխ հանել : պաշա չըգարմաք : ԽԹ. 1 : գլխա֊
ւորեալ յանդաւորութիւն : լմնցած թէքմիլ ըլլալը : Թ. 3 :
գծագիրք : այբենին գրերը : ՂԴ. 22 :
գծագրել : գիծով նշան ընել : չիզիլմաք : ԺԸ. 3 : կամ, խմացընել, ցը֊
ցընել : նիշան վէրմէք, տույուրմաք : Ն. 3 :
գձուձ : խեղճ : սէֆիլ : Ե. 2 :
գոգջիք : տասցէք, լաւէք : տէյլին : ՀԲ. 1 :
գոլորշի : պուղու ջրի կամ կրակի : պուխար : Դ. 3 :
գողտրական : կակուղիկ, փափուկ : նազիկ : ԽԴ. 2 :
գոյ, ( գոյի : ) եղած բան մը : Բ. 2 : կամ բանի մը շէնքը . ձևը : պիչիմ :
Ե. 1 : անկայուն գոյիւ . խախուտ շէնքով :
գոյականութիւն : ըլլըլուածը, շէնքը : ՀԵ. 12 :
գոյարան : հասըլ ըլլօղ : վար էտիճի : ՃԴ. 1 :
գոյժ, ( գուժի : ) բօթ ձայն : միւսիւպէթլի խապէր : Ե. 3 :
գոռոզ : իշխան : զապիտ : Դ. 3 :
գործականութիւն : շէնք . ըլլըլուածքը : եափը : ՂԴ. 20 :

գործարան ։ բանելու տեղ ։ քէրխանէ ։ լգ. 2 ։
գործօնեայ ։ բանին տէրը կամ գլուխը. վարպետ կամ ղալֆայ ։ կամ ընող, բանող ։ էտիճի ։ ձգ. 1 ։
գորով ։ սրտի գութ, թաւկրոտիլը. խթ. 2 ։
գումար ։ ժողով ։ ճիւմճիւռ. հե ։ 12 ։
գումարտակ ։ սիւրիւ, պէօլիւկ. դ. 3 ։
գունակութիւն ։ գոյն առնելը ։ պօյանմաք ։ կգ. 2 ։
գունդ ։ ժողով ։ պէօլիւք ։ դ. 1 ։ կամ, գունտ, կլոր չէնքը ։ ղգ. 8 ։
գունել ։ ներկել, ռուէնկ տալ ։ պօյալամաք ։ լգ. 2 ։ ղգ. 17 ։
գուշակ ։ իմացընող ։ խապար տուօղ ։ ժգ. 2 ։
գուպար ։ ճիւմճիւռ, պէօլիւկ ։ կ. 4 ։
գուիճ ։ Ճամբա ։ սօգագ ։ կե. 2 ։
գրաբանական ։ գրով ըրուած ։ լգ. 1 ։
գրաստ ։ տավար, հայվան ։ ժգ. 3 ։
գրաւ ։ փէյ, ռէհին ։ ժա. 1 ։
գրաւական ։ ռէհին, կամ չէշնի ։ Ժ. 2 ։ կամ փէյ ։ ղգ. 16 ։
գրաւականել ։ փէյ, կամ ռէհին տալ ։ լբ. 3 ։ կմ, ղապդ ընել ։ լգ. 1 ։
գրաւել ։ բանի մը տակ դնել, սղմեցընել, ղապդ ընել ։ թ. 1 ։ խթ. 1 ։
գրաւի. կըվաստըկուի ։ բ. 1 ։
գրգել ։ նազիք պահել, փափուկ մեծցընել ։ ժգ. 3 ։ խը. 2 ։
գրգութիւն ։ բարակ միտք ։ նազիք մէնա, կամ մանա ։ ղգ. 9 ։
գրել ։ սեպել ։ սայմաք ։ Ծ. 1 ։
գրկանք ։ գրկելը ։ գուճագլայըշ ։ իէ. 2 ։
գրուան ։ ցորենի էօլչէկ, շինիկ ։ լե. 3 ։
գօշել ։ խածխծել, ծակծըկել ։ ժէ. 1 ։
գօսանալ ։ չորնալ ։ գուռուսմաք ։ իգ. 1 ։
Դադար ։ դադրելու, կամ հանգչելու տեղ. տուրագ. ի. 3 ։ Լուսոյն
դադարք ։ իլիման կամ իսկէլէ ։ իգ. 2 ։
դաժանական ։ դարչէլի, դանելու ։ մէքրուհ ։ խն. 2 ։
դաժանահոտ ։ դարշահոտ ։ փէք գօգմուշ ։ ծգ. 3 ։
դաժանութիւն ։ դառնութիւն, լեղիութիւն ։ աճըլըք. ծգ. 4 ։
դալար ։ կանանչեղէն, խոտ օթլուգ, եէշիլ ։ կ. 2 ։
դահիճ ։ ճէլլատ ։ իա. 2 ։
դանդաղ ։ էհմալճի ։ է. 2 ։
դանդաղութիւն ։ թմբլութիւն, անճրկիլը ։ ձգ. 2 ։
դանդաչել ։ երկրաշկել, ծուռմուռ քալել ։ ժթ. 3 ։
դանդաչեցուցանել ։ թանկ թանկ չալել ։ ղբ. 8 ։
դաշն ։ ղավլ ։ շարթ. իգ ։ 1 ։
դաշնաւորել ։ ղավլ դնել ։ շարթլաշմաք ։ գ. 3 ։ ժգ. 2 ։
դասակ ։ սիւրիւ, պէօլիւկ ։ կգ. 2 ։
դաստակ ։ պիլէկ ։ բ. 2 ։
դաստիարակել, կամ իլ ։ սորվիլ ։ էօկրէնմէք ։ լե. 3 ։
դատախազ ։ տավաճի, հասըմ ։ բ. 1 ։
դատակնիք ։ վճիռ ։ սիճիլ, իլամ ։ դ. 1 ։
դար ։ աշխարքի թարեխները ։ տէվրի զէման ։ լգ. 5 ։
դարան ։ պահուելու տեղ ։ սըղընաճաք եէր ։ ձթ ։
դարանակալ ։ փուսույէ կիրիճի, քէմինտար ։ խը. 4 ։
դարաստան ։ գրախտ ։ պաղչէ, պաղչէլիք ։ խղ. 3 ։
դարբին ։ չիլինկիր ։ կգ. 2 ։
դարման ։ պէտ. թիմար, տէրման ։ կ. 5 ։
դաւաճան ։ խաբեբայ ։ ալտատըճի ։ ծա. 5 ։

դաւօղ : խաբօղ : հիլէպազ : կթ . 2 :
դդմենի : դըդմի խոտ : գապագ աղաճը : կ . 5 :
դեգերիլ : ցյալանմիշ ըլլալ, տեխիրկին մնալ : փ . 3 :
դեգեւեալ : դողդղացօղ , երերալկօղ : ձէ . 3 :
դեղ : մուրհէքեպ : թ . 1 :
դեղատուութն : զէհիր : ղ . 4 :
դենար : դահեկան : ղուռուշ արծաթէ՝ կամ ոսկիէ : ժէ . 3 :
դերաքն : նեռն : տէճճալ : ղա . 1 :
դէմք : կերպ : թարզ : փ . 2 : Ըստ դէմս աղօթից : աղօթքի թարզով :
դժնեայ : չար : եավուզ, զալըմ : է . 3 :
դժնէաբար : պէթ թալիէթլի : ղփ . 12 :
դժնիկ : փուշ է . ադ տիքէն : կթ . 2 :
դժոխայնեայ : գերեզմանի մութալլի : ծը . 3 :
դժոխարմատ : դժոխային կամ խառըշպուռըշ քեօք ունօղ, կամ քեօքը զէհիրլի : ծղ . 1 :
դժոխորովայն : փորը դժոխքի պէս կըլլօղ : ճ . 1 :
դժուարամարտելի : դժուար անուշնալու , լեղի : խը . 3 :
դժուարք : ապառաժ կամ քարոտ տեղուանք : սառփ եէր, դաշ լըգ : խ . 2 :
դժրել : խօսքի կամ մարդու խաբէութն ընել : սէօզտէն շաշմաք, նէքշ էթմէք : ծե . 4 :
դի : մեռած մարմին : լէշ : ժը . 2 :
դիմադրութիւն : սրտանց բանի մէջ մտնելը, սալմիշ ընելը : կ . 4 : հա . 1 :
դիմադրութն : ներհակութն : զըթլըք , թէրսլիք : է . 1 : ձղ . 1 : կամ, դէմ դնելը : դարշը դօմաք : կե . 1 :
դիմակ : երեսի ծածք : սուրէթ : փ . 1 : Դիմակս դիմակս : օօյ սօյ, թիւրլիւ թիւրլիւ : լթ . 3 :
դիմակերպութն : օրինակ : նումունէ : ղփ . 4 :
դիմաւութն : փէրտէով խօսք : միխլլի սէօզ : ղփ . 19 :
դիմել : վրա վազել : սիւրսալ էթմէք : ղ . 2 :
դիպուած : դիպչիլը : տօգանըշ : ղը . 5 : կամ, պատահմունք , դըլուդալիք , փորձանք : գազա : ա . 2 :
դիտակ : երես : սըֆաթ : կե . 2 : կամ, ծայր : ուճ . թէփէ : ղը . 9 :
դիւաճնաճեր : սատանայի ղուրպան ընելու : ծա . 4 :
դիւան : տիվան , կամ տէֆթէր , քիւթիւկ : խփ . 2 :
դիւանապետ : տէֆթէրտար : ծղ . 2 :
դիւրափոխելի : խօլայ փըշըրելու : հփ . 3 :
դղեակ : բերդ : գալա : կե . 1 :
դշխոյ : թագուհի : սուլթան : հե . 3 :
դոյզն : քիչ : ճիզլի : է . 1 :
դուժ : խօրեալթ : կոպիտ : եապանի : ղփ . 12 :
դստիկոն : տան խաթ : կթ . 2 :
դարով : քամահրանք : զէմմ : ծղ . 2 :
դարովել : քամահրել, վար զարնել, գէշ խօսիլ : աշաղա վուրմաք, զէմմ էթմէք : ը . 2 : խթ . 2 :
դրակմանակէս անունագրուն : վրան գրած՝ կամ թախմիշ ըրած անունն : ղփ . 19 :
դրանդ : դրան չէմ : ղը . 5 :
դրօշմ : տպուածք , նշան : կե . 2 :
դրուակ , կամ դրուագ : շինած բան , կամ խօսք : լփ . 8 :

դրուԹն : դիրք , շէնք : եօռտամ, պինչիմ : իդ . 2 :
դրօշ : պայրագ , սանճագ , Թուղ , ալէմ : ըէ . 1 : դ . 3 :
դրօշեալ : կուռք : իբ . 1 : կամ, ինչևիցէ տաշած և փորած բան , ինչպէս
որ խաչը : ղդ . 21 :
դրօշուած : քարէ կամ փայտէ փորուածք : ղբ . 3 :
Եդեմ : դրախտին երկիրը : ըէ . 2 :
եզօղ : միաւորօղ , կապօղ : ծդ . 2 :
եզր : ծայր : քէնար , ուճ : խ . 2 :
ել . (բայ :) ըլլալ : օլմաք : ըդ . 7 . ելով : ըլլալով : օլմաղըլէ , օլուփ :
իդ . 2 :
ել . (անուն .) ելք . ելլելը չըգմալը : դ . 1 : է . 3 : կամ, ճար . Ջարէ :
եօլ : իբ . 1 :
ել և ել առնել : մէկմէկու վրա ելլել , կամ անցնիլ : աշմաք , խաս օլ-
մաք : իե . 1 :
ելլենալի : Հոռոմ : ղդ . 12 :
եկամուտ : դրսէն եկած , եապանճի : խե . 1 : ղդ . 12 :
եղեամն : ղըրաղը : կը . 3 :
եղեգնախունկ : պուհուր գամըշը : ղդ . 11 :
եղելուԹն : եղած բան : վար օլմուշ շէյ : խԹ . 1 :
եղեռնագործ : խիստ չարագործ : սալլաճագ : դ . 2 :
եղեռնալուր : չար բաներ մտիկ ընօղ : իբ . 3 :
եղերական : լալու՝ կամ ողորմուկ խօսք : կը . 1 :
եղերերգուԹն : ողորմուկ երգ : խէ . 1 :
եղևին : սէրվի , կամ չամ աղաճը : կա . 3 :
եղէգնախուխ : չորցած ղամիշէ շինած , կամ ժողված : է . 3 :
եղիճ : ըսըրղան խոտ : հա . 2 :
եզծական : փճանալու : եօղ օլաճաք : ծա . 1 :
եզծանել : աւրել , փճացընել : եօղ էԹմէք : ըդ . 8 :
եզկուԹն : խեղճուԹն , կամ վայ տալը : իդ . 2 : ծ . 1 :
եղջիւր : պօյնուզ : հէ . 3 :
եմակ : տէրէին ցած , կամ սիփէր կողմը : խ . 2 :
ենԹադրել : ընել : էԹմէք : ժա . 2 :
եպերանք : մեղադրանք : սիԹէմ : խը . 4 :
եպերել : մեղադրել : սիԹէմ էԹմէք : ձբ . 5 :
եռալ : գըփուռալ , վըխռալ : գայնամաք : կԹ . 1 :
եռալուսեան : իրեք լոյս կամ ճառագայԹ ունօղ : հն . 7 :
եռանդն : եփ ելլելը . գայնայըշ : խե . 5 :
եռօրեայ : իրեք օրուան : իւչ կիւնլիւք : ըդ . 5 :
երախայ : մկրտելու մարդ : ղդ . 18 :
երախայրի : առջի պտուղ : Թուրֆանտա : ըա . 2 :
երախան : սըրա . պէօլիւկ : իզ . 1 :
երակ : տամար : իզ . 3 :
երամ, կամ երամակ : սիւրիւ : ըա . 3 : խզ . 1 :
երանգ : գոյն : ըրէնկ : ըզ . 2 : ղդ . 17 :
երաշխաւորել : հաստատել : Թահգըգլամաք : կը . 2 :
երասան , կամ երասանակ . կէմ , ակզկին , իւլար : ն . 2 : հը . 2 :
երբ . (երբի :) } տանէն : վագըԹ , զաման : ձբ . 6 : ըդ . 3 :
երբէք . (երբէքի :) }
երգիծանել : սիԹէմ տալ : կդ . 2 :
երգուԹն : երգելը . կանչելը : խուլայիշ : ն . 1 :
երդ : երդիք , տանիք : տամ : ժբ . 3 : ղա . 2 :

երեւակ : տեսք : կէօստէրիշ : կզ . 2 :
երեւականութիւն : սուտ երեւմունք : խէյալ : ղզ . 10 :
երեւիլ : խոշոր ոջիլ , կամ կիւալէ . կը . 3 :
երեւոյթ : տեսք . բանին Թարզը կամ ինչ ըլլալը . իզ . 3 : ծ . 3 : կամ , տեսիլ . աչքի երեւցածը : խը . 4 : կամ , երեւելի , տեսնելու , աչքի տակ ընկած : ըզ . 4 : զ . 4 :
երեքպատեան դիմակցութիւն : իւչէրլամէ սալմիշ ընելը : իէ . 2 :
երիզափնդեայ : երկան լաթով պատած : ծը . 3 :
երիԹացեալ : չորցած , ցամքած : գուրումուշ : իթ . 2 :
երիկամունք : պէօվրէկ : ժզ . 1 :
երինջ : կէնճ կով : տանա : խէ . 2 :
երիցութիւն : մեծութիւն . պէօյիւքլըք : ժզ . 1 :
երկակշիռ տարրութիւնք : երկու մէկմէկու կապուած բան . ղզ . 2 :
երկգլխի : երկու կերպ : իքի Թարզ : իզ . 2 :
երկեւանութիւն : շիւպհէ : ժա . 1 :
երկմիտ : վախկոտ : գօրգաք : ղզ . 11 : կամ , անհաւատարիմ : խային : ծզ . 2 :
երկմտութիւն : շիւպհէ : ժէ . 2 : կամ , վախ : գօրգու : ձզ . 2 :
երկն , ( երկունք : ) ծնանելու ցաւ : ժը . 1 : կամ , ինչ և իցէ ցաւ , աշխատանք , զահմէԹ . իզ . 1 :
երկնել : ծնանելու ցաւ քաշել : ե . 2 : կամ , ցաւով փէյտահ ընել : ա . 2 : զ . 3 :
երկուորեակ : ջուխտ եղներու , կամ մարդու : ծզ . 2 :
երկրաքարշունի : երկրաւոր բաներու հաւան ընելը : ն . 3 :
երկրորդութիւն : կրկնելը . Թէքրարլըմըշ : ղզ . 10 :
երկք : մեծ աշխատանք : չալըշմայ , զահմէԹ : է . 1 :
երփն : մէվչ կամ մուԹ գոյն . հա . 2 : ղզ . 12 :
եւղընծիւղ : եղ տուօղ , ինչպէս զէյԹինի ծառը : ըթ . 2 :
Զաղիր : գարշելի . մուրտար : նէֆրաք : ժթ . 3 :
զաղրաԹորմի : խիստ գարշելի . փիէք մուրտար : կթ . 2 :
զաղրանալ : աղտոտիլ : մուրտարլանմաք : իթ . 3 :
զակատիլ : բանի մը սէր կապել , կամ խենԹենալ . աշիք օլմաք : ծ . 2 : խը . 3 :
զայրանալ : սրդողիլ : տարըլմաք : իզ . 2 :
զանդուած , կամ զանկուած : մէկ տեղ խառնած բան : քիւլչէ : իզ . 2 : հա . 1 :
զառածեալ : ը . 1 : տե՛ս զառտուղի :
զարմանութիւն : զարմանալի բան : հըքմէԹ : խթ . 1 :
զարտուղի : ճամբէ ծռած : եօլտան շաշմըշ : ն . 1 :
զգածիլ : սըըլկիլ : պուլաշմաք : հ . 2 :
զգայազիրկ : զգայութիւնը սախտած : իը . 3 :
զեղծանիլ : աւրիլ , գէշ ելլել . եօխ ըլլալ : պօզուլմաք , ֆէնայէ կիԹմէք : ծ . 4 : ծե . 1 : ձէ . 3 :
զեղուլ : Թափել : պօլ լեցընել : լէ . 1 :
զեղուն : լեցուն : տօփտօլու , դաշկըն : խզ . 3 :
զենանիլ : մորԹըուիլ : պօղազլանմաք : լզ . 3 :
զեռուն : պէօճէկ , սօլուճան : ժզ . 3 :
զետեղիլ : տեղ մը կենալ : տուրմաք , եէրլէշմէք : կը . 3 :
զերծանիլ : ազատիլ , խալըսիլ : գուրԹուլմաք : ծ . 2 : կամ , բացուիլ , չըլպախնալ : իը . 2 :
զերծումն : բանալը , վերցընելը : աչմաք : լզ . 1 :

զզուանք : գանիլը Թիթսինմէ . Է . 1 :
զէն , ( զէնու : ) սիլահ փուսաթ . ԻԷ . 2 :
զըլացող : աղէկութեան չիմացող՝ կամ ինքեար ընող . ՃԷ . 3 :
զընգալ : տառապիլ, չարչարուիլ . էզիլէթ չէքմէք . ԺԶ . 1 :
զընդան : զինտան . ԺԶ . 1 . ԶԹ . 1 :
զիստ , ( զըստի : ) խալչաներուն տակի կողմը : և նմանութբ , նաւին տակի կողմը . ԻԵ . 2 :
զիւրովին երթալ : ինք զինք մոռցընել : կէնտինի էօլտիւրմէք : Լ . 3 :
զկծեցուցիչ : սիրտ կսկծցընող : իւրէք աէլէն : ԼԹ . 3 :
զկծիլ : սրտին քեար ընել, կիւձէնմիշ ըլլալ : ԻԹ . 2 :
զմբաղք : ուրախութիւն , վայելմունք : զէֆք : ԾՆ . 3 :
զմուռս : սըրլըէնտ , մուրր : ՂԳ . 8 :
զմռսալից : սըրլըէնով լեցուած : ՂԳ . 6 :
զննել : ձեռքով նայիլ, թէֆթիշ ընել : ՀԹ . 1 :
զոյգ : ջուխտ : չիֆթ : Լ . 2 . կամ, պարապար : ԾԲ . 1 :
զոլ, կամ զոլական : սպառուկ : ֆէրրահ : ՃԳ . 1 . ԾԳ . 1 :
զովացուցանել : պաղըշուցընել : ֆէրրահլանտըրմաք : ԿԸ . 1 :
զուարակ : կէնճ եզ : թօսուն : ԼԾ . 2 :
զուգագործ : նման գործող : ԺԵ . 2 :
զուգակցութիւն : հաղորդ , մասնակից : իշհաք : ՀԵ . 7 :
զուգաճանապարհ : ՂԳ . 4 : } մէկ ճամբա գացող, մէկ կերպ քալող :
զուգաշաւիղ : ԽԸ . 2 : } պիր եօլտա կիտէն :
զուգափառ : մէկ փառք ունող : պիր փայէլի : ԼԳ . 3 :
զուգիլ : մէկ ըլլալ : պիրլէշմէք : ԿԹ . 1 :
զուգութիւն : միաբանութիւն , մասնակցութիւն : իշտիրաք : ՂԳ . 15 :
զուր : փուճ : պօշ : ԻԸ . 2 :
զոփալ : սարսուիլ, դողալ : թիթրէմէք : ԻԹ . 2 :
զրահ : զըրխ : ԿԸ . 2 :
զրահեալ : զըրխ հագած : ՂԲ . 6 :
զրահետական : փուճ, անպտուղ : ԽԵ . 1 :
զրաւել : վերջացընել : պիթիրմէք : ՀԱ . 3 :
զօդել : կպցընել, կամ միաւորել : եէրլէշտիրմէք : Թ . 1 :
զօրել : կրնալ : գաւի օլմաք : Թ . 1 :
զօրէն : նման , պէս : կիպի : որպէս : Ջօրէն գովելոյ : ձեռնակերտուի պէս : աթ իւզլիւ կիպի : ՀԵ . 10 :
Է : եղած բան մը : զաթ : ԻԳ . 2 : կամ, ԱԾ , անստեղծ էակը : ԺԶ . 2 :
էական : բուն էակը , կամ ածային բնութիւն : ՂԳ . 15 :
էականութիւն : էութիւն, առըլ բնութիւնը : զաթը : ԾԶ . 1 : կամ, եղած բան : ԾԶ . 1 :
էութիւն , եղածը , կամ ըլլուածքը : իրրև զէուն գործոյ : սանքի գործքով եղածը : Է . 4 :
էրէց : առջինը : էվվէլքի : ՃԳ . 3 :
Ըղձական : փափագելու : բաղըէթլի : ԿԸ . 3 :
ըղձակերտ : ախորժելու : հաղղ էտէճէք : ՂԳ . 21 :
ըղձուն : ՂԳ . 1 : } բաղձանք : արդիւ :
ըղձումն : Լ . 3 :
ըմբերանել : բերանը գոցել , պապանձեցնել : աղըզը գափաթմաք , սուսեթմէք : ՀԵ . 2 : ԻԹ . 3 : Բ . 1 :
ըմբիշ : փէհլիվան : ՂԳ . 13 :
ըմբոշխնել : ծամել : չիյնէմէք : Ն . 2 : ըմբոշխնելի : ծամող : չիյնէյէն : ՃԳ . 3 :

ըմբոստանալ: երես վաղել, գլուխ քաշել: պաշ չէքմէք: ծդ: 2:
ըմպահկանք: արհամարհանք: րէզալէթ, նէզաքէթ: խը. 4:
ըմպանակ: գաւաթ, կամ բաժակ: գուփա, մէշրէպէ: ը. 2:
ընդլուզանիլ, կամ ընկլուզանիլ: պաթմիշ ըլլալ: գ. 3: խը. 3:
ընդակից: բնական եղած, սովորական: զաթի: կա. 1:
ընդարմացուցիչ: Թմրեցընող: սէրսէմ էտէն: ճդ. 3:
ընդգոգել: գոգը` կամ մէջը ունենալ: ծա. 4:
ընդերք: փորուն միջինները, աղիք: գառընի իչի, պաղըրսագ: լդ. 2:
ընդ կրունկն: ետևուանց, ետ ետ: կէրի կէրի: հա. 2:
ընդհատ: հեռու: պաշխա, ֆարկլը: հը. 2:
ընդհարկանիլ: զարնըուիլ, դպչիլ: տօգունմագ: իդ. 2:
ընդմիջարկութիւն: զատելը: սէչմիշ ընելը: ղդ. 6:
ընդմիջել: արալըխ տալ: լե. 3: կամ էնկէլ ըլլալ: ճզ. 1: կամ, ար-
գելուիլ: ղ. 3:
ընդոստ: վեր ցաթկող, կամ ցաթկեցնող: ղը. 2:
ընդոստիլ, կամ ընդոստնուլ: վեր ցաթկել: սըչրամագ: ե. 3: իդ. 3:
ընդոտնել, ոտքի տակ առնել: չիղնամագ: իե. 4: իը. 3:
ընդունայնաթօղ: փուճ տեղը չարչարօղ: նաֆիլէ զահմէդ վէրէն:
խը. 4:
ընդպահկել: հրել, կամ անկարկայի բռնել, քշել տանիլ: ճե. 3:
ընդվայր: փուճ: նաֆիլէ: խը. 4:
ընդվզել: գլուխ քաշել: պաշ գալտըրմագ: կզ. 4:
ընթադրութիւն: տակ առնելը, կամ ընկնիլը: խե. 2:
ընթացք: գնալը, ճամբա, վարմունք: կիտիշ, եօլ, դըմբըլամըշ: դ. 1:
ժդ. 2:
ընթերակաց: մօտը կեցած: եագընտա տուրան: ժե. 1:
ընթրիք: իրիկուան կերակուր: ագշամ թահըմը: ղդ. 21:
ընծխուղել: փըշխումիշ ընել, կամ ըլլալ. լը. 2: հը. 3:
ընկենուլ: վար ձգել: աշաղա պըրագմագ: լե. 3:
ընկողին: տէօշէկ: ժը. 2:
ընկողմնիլ: ընկնիլ պառկիլ: եաթմագ: ղա. 3:
ընկճիլ: ամբիլ: չէքիլմէք: իե. 4: կամ, խաստաթի ըլլալ: ղ. 3:
ընկրկել: ետ ետ քաշուիլ: կէրի չէքիլմէք: հա. 2:
ընձեռել: ձեռքով տալ: վէրմէք: ն. 4: ժ. 2:
ընչեղ: հարուստ: զէնկին: է. 2:
ըսթափիլ, կամ սթափիլ. խելքը գլուխը գալ: այըլդլանմագ: ժը. 3:
ըստանձնել: շալկել: սըրթլամագ: ծե. 3: հե. 3:
ըստգտանել, կամ ըստգտանիլ: տես ստգտանել:
Թաթաւիլ: Թաթխուիլ: պուլաշմագ: ղդ. 12:
Թալկանալ: Թուլնալ, ուժը Թափիլ: մէհման օլմագ: բ. 2:
Թախանձ: խիստ աղաչելը: նիազ: խե. 3:
Թախծիլ: կամ, Թախձիլ: տրտմիլ: Թասսալանմագ: ժա. 1:
Թաւամիլ: Թոռմիլ: սօլմագ: իթ. 2:
Թաւանչ: հառաչանք. ինլէյիշ: իդ. 2: խը. 2:
Թատերք: խաղի տեղ, կամ մէյտան: լա. 2:
Թարահատ: տես 'ի լուծն: կ. 20:
Թարգմանել: մեկնել, իմացընել: Թէֆսիր էթմէք: իթ. 2:
Թարթափումն: աչք բանալ գոցելը: լե. 3:
Թարմատար: փուճ, անշահ: ծզ. 2:
Թափանցական, կամ Թափանցանց: ներս անցնօղ, կամ մտնօղ: հե.
7: 12:

Թափանցանցութիւն : անցնելու կամ մտնելու տեղ, ծակ . ինչպէս աչքը, կամ անկաճը : ղդ . 21 :
Թափառիլ : տեսիլքին ըլլալ : ժէ . 2 :
Թափուր : պարապ : պօշ : ծդ . 3 :
Թաքչել : պահուըտիլ : սագլանմաք : ը . 1 :
Թեզան : մնած 'Թել : պէզ արշը : ղդ : 24 :
Թելադիր : խրատ տուօղ, յորդորօղ : էօկիւթ վէրէն : խը . 2 :
Թերամտութիւն : խելքի պակասութիւն : ադըլ ղըսալը : ղա . 3 :
Թերափ : կուապաշտից գործիք . համայիլ : խէ . 3 :
Թերի . պակաս : գուսուր : լէ . 2 :
Թերութիւն : պակասութիւն, անկատարութիւն . գուսուրլըք, էքսիկլիք : ղ . 2 . լա . 2 :
Թեւ . ղանատ : ժդ . 3 : կամ, տիւմէն : դ . 3 :
Թեւապարփակ : Թեւով գոցած, Թեւին տակը առած : լդ . 4 :
Թիկն . ( Թիկունք : ) կռնակ : սըրթ, արգա : ժէ . 1 :
Թինդս առնուլ : Թնդալով քալել, վազել : հա . 3 :
Թիւր : ծուռ : էկրի, եանլըշ : խ . 3 :
Թխատիպ : մութ տեսքով, սեւցած : ղըֆիրլը : խ . 3 :
Թմբուկ : Թէֆ : կամ անկաճի ներսի մաշկը : ղդ . 20 :
Թշնամանք : անարգանք : րէզալէթ, տիւշնամ : լէ . 3 :
Թշուառաքիրան : Թշուառ քրանքով վաստըկած : խե . 3 :
Թոշակ : Ճամբու զահրէ : ժ . 2 : կամ, հախ, էօլէֆէ : խդ . 3 :
Թոփեալ : ծեծքած, էօրսէլէնմիշ եղած : հը . 3 :
Թուլադաշնակեալ : տիւզէնը Թուլցած կամ աւրած : ղդ . 20 :
Թռիչք : Թռչիլը : ուչուշ : ն . 2 :
Թռչարան : Թռչելու գործիք . ինչպէս նաւին էէլքէնը : ին . 2 :
Թրծեալ : փուռը եփած : փիշմիշ : ն . 2 :
Թքնուլ : Թքնել : Թիւքիւրմէք : հէ . 2 :
Թօթափել : Թափթփել, Թօթվել : սիլքմէք : ժթ . 4 :
Ժաման կացուցանել : հասցընել : եէթիշտիրմէք : ձե . 1 :
Ժամանել : հասնիլ : եէթիշմէք : լը . 2 :
Ժայթքել : փսխել : գուսմաք : կե . 1 :
Ժանգ : աղու : զէհր : դ . 1 : կամ, կանանչեղինաց օքիլ : խա . 2 :
Ժանիք : գազանի կեռիք . Ճանավար տիշլէրի : դ . 1 : ժթ . 2 :
Ժիր : տինճ, չուստ, համարաթ : է . 2 :
Ժլատ : նէքէս, խըսխըս : ծղ . 2 :
Ժխտել : ինքեար ընել : ը . 1 : իղ . 2 :
Ժողխեալ : տորուած, նեխած, ջըջըկած : հդ . 2 :
Ժպտիլ : քթին տակը ծիծաղիլ : սըրըթմաք : ին . 3 :
Ժպրհիլ : յանդգնիլ : քիւսթախլըք էթմէք : կ . 4 :
Իժ : էնկէրէք եըլանը : ծ . 4 :
Իղձ : բաղձանք : հավէս, արզու : ա . 1 :
'Ի մանէ : կտոր մը : պիր միգթար : ին . 1 :
Ինքնաբուն : ատըլ բուն, ատըլ ինքը : դ . 1 : կամ, ղաթը : ձա . 3 :
Ինքնագործ : ինքնիրեն ըրած : խ . 2 : կամ, ինք իր գլխուն գացօղ : քէնտի պաշընա կիտէն : ծղ . 2 :
Ինքնադաւ : ինք զինք մատնօղ : խա . 1 :
Ինքնադատով : ինք զինք մեղադրօղ : իը . 2 :
Ինքնաթոյն : ինք իրեն զէհիրլը : ձդ . 3 :
Ինքնակշտամբելի : ինք զինք յանդիմանօղ : իթ . 2 :
Ինքնասաստ : ինք իրմէն բռնկօղ : ղդ . 15 :

ինքնայշաւ : ինք իրեն վազօղ : կզ . 1 :
ինքնարգոյ : ինք զինք մեծցընօղ : քէնտինէ պէյէնէն : Է . 2 :
ինքնագոր : ինք իրեն ծեծկըռւօղ : ծԹ . 1 :
ինքնօրէն : ինք իրմէն իմաստ ըրած : կա . 1 :
իշխանգամ : իշու պէս ամօթ ունօղ : կ . 4 :
խակ . (անուն :) տըղայ բունը : զաթ : ժէ . 2 : խը . 4 : խակոյն : այսինքն
 խակութենէն, տըղայ ըլլալն : ղդ . 18 :
խակ և խակ : խաւցնէ : կէրչէքուէն . խէ . 3 : ղդ . 19 :
խակակից : մէկ էութեն ունօղ : հէմզամաթ : լդ . 4 :
խակութեն : էութեն : տըղայ ըլլալն ինչ ըլլալը : զաթը : ժա . 3 :
խապառ : բոլորովին, խիստ, փէք : ժա . 1 :
խրատակշիռ : շիտակ կշռօղ : հագ Թարթան : Ծ . 4 :
խրատամերժ : հախ տեղը վարնտած : խԹ . 2 :
խուղաւորական : պարտը, եաղլը, այսինքն Ջերմեռանդութեամբ խառ-
 նըրւած : ղդ . 6 :
խուղել : օծել : եաղլամաք : ղդ . 5 :
խուղենի : եղտ ծառ : ղդ . 9 :
խուղեփեցական : էզանծիի կամ միսկծիի զէնահաթով եփած : ղդ . 8 :
խուրակերտ : իրեն շինածը : հէ . 3 :
Լայնատարր : լանուարձակ : մէյտանը : ճը . 1 :
լանջք : կուրծք : կէօկիւս : լդ . 1 :
լատ : սաղ, կամ նաւուն տակը : խե . 2 : կամ, նաւ : կէմի : խդ . 2 :
 ճե . 2 :
լար : չուվան : իփ : ճէ . 3 :
լափլիզօղ : լափելով լըզօղ, չորցընօղ : Ժ . 1 :
լեարդ : ճիյէրի սևուց : խզ . 3 :
լեռնակարկառ : լեռան պէս դիզուած : ժե . 3 :
լերկամարմին : բարակ կամ չըլլախ մազինով : կԹ . 2 :
լիճ : կէօլ : Թ . 1 :
լկանք : ճ . 2 : }
լկութի : լա . 3 : } չարչարանք : սէֆահէթ, էզիէթ :
լծակ : սըրըխ : ղբ . 10 :
լկնիլ : աներեսութի ընել : էտէպսիզ օլմաք : կզ . 4 :
լկտութի : աներեսութի : էտէպսիզ լիք : լա . 3 :
լոյծ : ջըլի, կակուղ : սուլու : լդ . 4 :
լուծ : պօյունտուրուգ : լդ . 1 : լուծ կշռոց : Թէրազիին Թեւը : Թ . 1 :
լուղակ : ծովու կամ ջըի կենդանի : հա . 3 :
լուսաբանել : յայանել, մեկնել : պէյյան էթմէք : Է . 1 :
լուսակիր : լոյս ունօղ : նուրլու : (յիշատակարան :)
լուսանցոյց : լոյս անցնօղ կամ տուօղ : ժբ . 3 :
լուսապաճոյճ : լուսով զարդարուած : շէօհլէլի : կե . 2 :
լուսնական : լուսընկայէն եղած : այտան զիւհըր օլուշ : ճբ . 6 :
լուտայօղ : չար խօսօղ : քէմ սէօյլի : ժա . 3 :
լուցումն : վառելը : եագմաք : լա . 2 :
լպրշեալ : աներես : առըզ : ծզ . 2 :
լսարան : սուս կենալու տեղ, ինչպէս տէօշէկը : ղա . 2 :
լսելափակ : անկանջ գոցած : գուլաղը գափալը : Ծ . 4 :
լնացեալ : ճերմըկած . ինչպէս բուսնացած եարայլին տեղը : խդ . 12 :
լրականութի : կատարեալ . ամէն բանով լեցուն : Թէմամ : հե . 7 :
լրատար : լեփլեցուն : տօփտօլու : (յիշատակարան :)
լրբութի : էտէպսիզլիք : ղ . 4 :

լըթագոյն : մթագոյն : մութ մու : Ը. 2 :
լուլթի : լըման ըլլալը : թէմամլըք : ԼԴ. 2. կմ, լսելը : իշիթմէք : ԺԹ. 2 : ԿԴ. 5 : ՂԲ. 1 :
լքանել : թողուլ, երեսէ ձգել : պրագմագ : ԻԵ. 2 : կամ, վերցնել, ջնջել : եօղ էթմէք : ԼԴ. 1 :
Խայք : խաբէութիւն : հիլէ, ֆէնա : Գ. 3 :
խաթարեալ : աւրած, փճացած : պօզուլմուշ : ԻԵ. 3 :
խակախորհութիւն : խայա միտք : ՂԲ. 8 :
խակակութ : խամ : ԾԴ. 2 :
խակութիւն : անկարգութիւն : գապալըք, եապանիլըք : Ը. 4 .
խաղալիք : անդամներուն խաղը : օյնագ : ՀԵ. 12 : կամ. խաղալու բա-
ներ : օյունճագ : ՁԵ. 3 :
խաղաւարտ : եարայի ուռէյք : չլպան : ԿԹ. 2 :
խայթք : տուղախ : ԼԲ. 3 :
խայրիք : պտուղք : մէյվէ : ԼԳ. 1 :
խանդաղատական : ողորմուկ, թալկըրտելու : ԼԳ. 8 :
խառնախուխ : չալը չըրփըյով խառնած : ԾԴ. 3 :
խառնիճ : սօյմի մարախ : գանատըղ չէքիրկէ : ԿԸ. 3 :
խառնիճաղանճ : խառնմխառըշ, ալուաճուալուա : ԼԾ. 2 :
խառնք : խառնած բաներ : ՂԴ. 11 :
խարան : եարա տաղելու երկաթ : Ղ. 1 : կամ, տաղած եարա :
ԺԸ. 3 :
խարդաւանք : խաբէութիւն : ֆէնա : Կ. 2 :
խարխախ : Նաւու երկաթ : չէնկէլ, կէմի տէմիրի : ԻԵ. 2 : խարխախք
բարձից : տաքը, կամ թօփուխը : ԺԸ. 3 :
խարխալեալ : գըլըգըլած : ՁԷ. 3 :
խարխափանք : գուրգուրալը : քեօռ կիպի եօգըլըյըշ : ԺԷ. 2 :
խարխուլ : գըլըգըլած, խախուտ : ԽԸ. 4 :
խարուկն : եարա տաղելը : ԽԴ. 2 :
խափուցանել : խափանել, արգիլել : մէն էթմէք : ԿԴ. 2 :
խեթանալ : թշնամի ըլլալ, մէկի մը հետ աւրիլ : պօզուշմագ :
ԺԴ. 1 :
խեթկիչ : պօյնուզ զարնօղ : ՂԲ. 5 :
խեթումն, կամ խիթումն : սրտի խօսուկ : եւրէք սանճըսի : ՂԲ. 10 :
ԻԾ. 3 :
խելյեղ : խելքը կորած, կամ թռած : ախլանէ : ՀԾ. 2 :
խելք : Նաւու խռչ : ԻԵ. 2 :
խեղդ : խեղդուիլը : պօղուլմա : ԻԵ. 4 : կամ, խեղդելու կապ : քէմէնտ :
ԼԵ. 3 :
խենեշենալ, կամ խենեշանալ : էտէպսիզ տալուիլ : ՀԲ. 2 :
խենեշութիւն : անճրկածութիւն, թէմիզէլութիւն : ՂԲ. 5 :
խէթ : թշնամութիւն, ոխ : ԻԵ. 4 : ՀԾ. 2 : կամ, արգելք : էնկէլ :
ԿԴ. 2 :
խթան : մտուլ : ՀԴ. 3 :
խժական : պէտանի, եապանի : ՂԴ. 6 :
խիղախել : աթմիշ թութմիշ ընել : ԿԲ. 3 :
խիթ : ցաւ, խօսուկ : սանճի : ԻԴ. 3 : Դ. 1 :
խիթալ : վախ ունենալ : գօրգմագ : ԺԷ. 1 :
խլրտումն : կեցած տեղը շարժիլը : գըմըլտանըշ, թէփրէնիշ : Դ. 3 :
կամ, կեցած տեղը շարժօղ բան, ինչպէս թրթրուր : Է. 1 :
խխայթ : հողէն հանըլ եղած թրթուր, կամ պէօճէկ : Է. 1 :

խծբիծ ։ վնասուածը ։ արաշտըրըշ ։ խէ . 4 ։
խնծլղք ։ խնդում ։ շաղըըք , աշէնք ։ դ . 1 ։
խնկաւորել ։ Ձ . 1 ։ ՁԷ . 2 ։
խնկել . կամ խլ ։ ղզ . 13 ։ } խունկով պատուել, օրհնել, փառաւորել ։ Այս բառս ելած անուններին ալ կընշանակէն՝ օրհնենք , օրհնելու , ևն ։
խնձոյք ։ ուտել խմելը ։ զիաֆէթ ։ ժբ . 1 ։
խշտի ։ տէօշէկ ։ ժը . 3 ։
խոհեմք ։ դարշութին ։ մուրտառըք ։ խե . 2 ։
խողխողել ։ մորթած ։ պօղազլամըշ ։ ժզ . 2 ։ խե . 2 ։
խոյ ։ արու ոչխար չիկատած ։ խօչ ։ հէ . 3 ։
խոյզ ։ փընտըռուելը ։ թէֆթիշ , արաշտըրմա ։ իզ . 2 ։
խոշորս ։ խաշմախառըշ ։ իզ . 3 ։
խոպանացուին . չորնալը , խըռաճ ըլլալը ։ լէ . 2 ։
խոտել ։ երեսէ ձգել ։ կէօզտէն պըրագմագ ։ իթ . 1 ։
խորամանկել ։ ֆէնտով խաբել ։ ալ էթմէք ։ լէ . 2 ։
խորխորատ ։ խորունկ փոս ։ տէրին չուգուր ։ ե . 3 ։
խորհրդակիր ։ մտածմունք ունեցող ։ տիւշիւնիկէն ։ ա . 1 ։
խորշ ։ ուճ պուճախ ։ խ . 2 ։
խորշակ ։ տաք հով ։ սամ եէլի . կզ . 4 ։
խորտակել ։ ջարդփշուրդ ընել ։ հուրտահաշ էթմէք ։ ն . 2 ։ լզ . 8 ։
խորտիկ ։ թէրպիյէով կերակուր ։ թահըմ ։ ծզ . 2 ։
խուել ։ նեղել , չարչրկել ։ էզիէթ վէրմէք ։ կզ . 4 ։
խուզել ։ փնտռել ։ արամագ , արաշտըրմագ ։ Թ . 2 ։ ծն ։ 4 ։ կամ , խըռափմիշ ընել ։ լէ . 3 ։
խուժ ։ խուժաստանցի ։ ղզ . 12 ։
խուճապել ։ արտորցնել ։ էվէլթէլէթմէք ։ հթ . 3 ։
խուն ։ քիչ ։ աղճըք , ճիւղի ։ կզ . 2 ։
խուսափել ։ սիվիշմիշ ըլլալ՝ փախչիլ ։ կթ . 2 ։
խուփ ։ սապան տէմիրի , կամ գըլըճի ։ ղբ . 7 ։
խախ ։ չալը չըափը ։ ժզ . 2 ։
խտրոց ։ երկու բան մէկմէկէ բաժնող ։ պէօլմէ ։ ժզ . 3 ։ կամ , հեռաւորութին , արալըգ ։ բ . 1 ։
խտրութին ։ այրը , սէչի ։ ղզ . 19 ։
խրախոյս ։ յորդորանք , սիրտ տալը ։ ղայրէթ ։ ժ . 2 ։
խրթնանալ . շէնք շնորքը կորսնցընել , աւրիլ ։ խըթիֆի , կամ , տիւզէնի գայպ էթմէք ։ հը . 11 ։
խրթնի ։ տգեղ , մխտատած ։ չիրքին ։ ղզ . 12 ։
խրձունք ։ կապոց ։ տէմէթ ։ լթ . 2 ։
խրոխտ ։ եավուզ , քէսկին ։ ղբ . 3 ։
խրոխտանալ ։ խօրօզլանմիշ ըլլալ ։ ծզ . 2 ։
խրտուիլ ։ խունչակ ։ գօրգուլուգ ։ իզ . 3 ։
խրտուցուին ։ ուրքմիշ ըլլալը ։ ղբ . 8 ։
խցանել ։ գոցել , գափամագ , թըգամագ ։ է . 3 ։
խօլական ։ խելագըրնող ։ խէնթումէնթ ։ ժբ . 3 ։
խօսնական ։ խօսելու , խօսօղ ։ լե . 3 ։
ծախել ։ ղայ ընել , հատցընել ։ թէլէֆ էթմէք ։ հթ . 4 ։
ծայրակատր ։ ծայրը՝ կամ վերջը կատարող ։ իը . 1 ։
ծայրատութին ։ ծայրը կտրելը ։ հզ . 2 ։
ծանակել ։ խախք ընել ։ ըռըսվայ էթմէք ։ ծզ . 2 ։ կ . 1 ։
ծերպ ։ խօվուխ , կամ արալըխ ։ խ . 2 ։
ծիր ։ չէվրէ ։ ղբ . 7 ։

ծծումբ : քիւքիւրթ : Լ. 2 :
ծնգեցեալ : հալածումաշած , ճռղած : ծը. 2 :
ծնօտ : չէնկէ : խե. 2 : լդ. 2 :
ծորել : վաղել , Թափիլ , կաթել : ագմաք : ծդ. 2 : կե. 2 :
ծործոր : լեռներու մէջ դարուփոս տեղ : էնիշ եօգուշ : խ. 2 :
ծուէնք : կտաւի կտոր : փարչա : լե. 2 :
ծուղակ : տուզախ : խղ. 3 : ղ. 3 :
ծուփք , կամ ծփանք : չալգանթը : ծդ. 3 : լե. 2 :
ծրդեալ : տոգորուած , պըլըշկած : գարկ օլմուշ , պուլաշըգ : բ. 1 :
Կազդուրել : ամրցընել , զօրացընել : գավիլէմէք , գուվվէթլէթմէք : բ. 1 : ժ. 2 : ձ. 3 :
կազմ : հազըր : խդ. 3 :
կազմած : շէնք : պինայ , եափը : ձդ. 1 :
կաթսայ : խալկին : գազան : կդ. 2 :
կալանաւոր : զընտանի մարդ : հափիս : հէ. 3 :
կական : հեկեկալով լաց : էօքիւր էօքիւր աղլայըշ : խէ. 1 :
կաղակարծ կամ կեղակարծ . շիւպհէլի : խը. 2 : Լ. 2 :
կաղկանձողական : վընկվընկացող : լե. 17 :
կաճառ : ժողով : ճիւմհիւր , մէճլիս : Ե. 3 : ղա. 2 :
կայթ : ցաթկռտելով խաղալը : սըչրայըշ : խա. 2 :
կայլակ : կաթ : տամլայ : դ. 3 :
կայմ : եէլքէն բանալու փայտ : սէրէն տիրէկի : օրթա տիրէք . խե : 2 .
կայունն : հաստատ կենալը : գավիլիք : ղբ. 10 :
կայտառ : վխտացող կենդանի . ինչպէս պէօճէկը : խե. 3 :
կայք : կենալու տեղ : տուրաճագ եէր : ժա. 1 : կամ , կողմ : Թարաֆ : ժը. 2 :
կանխել : առաջ տալանմիշ ըլլալ : կբ. 1 :
կանոնափակ : արգելօղ : եասագ էտէն : ղդ. 6 .
կանուխ : առջի բերքը , կամ պտուղ : Թուրֆանտա : կը. 2 :
կաշառել : ըրըշվաթ առնել , մէկ բանով մը շահուիլ : ալտաշըլմաք : բ : 1 :
կաշառաձգութիւն : կաշառի տեղ տալը : լդ. 2 :
կաշկանդեալ : խըսխըվլըմըշ եղած : ժը. 2 :
կապարան : կապելու բան կամ գործիք , ինչպէս շուվանը , կամ քինէ-տը , եւն : խե. 2 : խէ. 2. 3 :
կապարճք : օգլըգ , Թիրքէշ : կդ. 4 :
կապուտ : Թալան , եաղմա : ժդ. 1 : հե. 7 :
կապտել , Թալլել : եաղմա էթմէք : դ. 1 : ը. 2 :
կառավարել : առաջայով ճամբա ընել : լդ. 5 :
կառափինչ : գլուխ զարնօղ կամ կտրօղ : ճէլլատ : ձը. 2 :
կառուցանել : շինել : եափմաք , գուրմաք : ը. 2 :
կասել : դադրեցընել : մէն էթմէք : խը. 5 : և կասիլ : դադրիլ կենալ : տուրմաք , ֆէրահաթ էթմէք , վազ կէչմէք : է. 2 :
կատակել : տնազ ընել : մասխարայ էթմէք : հէ : 2 :
կատակերգութիւն , մասխարայի կամ խնդալու երգ , ծաղր ըլլալու խաղ : լթ. 3 :
կար : ուժ : գուվվէթ : լը. 2 : ղդ. 4 :
կարկումն : մռնտառ Թացութեն : չամուռլըք : ձդ. 3 :
կարեկցել : ցաւակցիլ , կարօտութենը դողդուիլ : լդ. 10 :
կարթ : օլթայ . չէնկէլ : դ. 3 : խղ. 3 : կղ. 4 :

կարիք : պիտանաւորութիւն : իգթիզա, Նաչարլըք : Է. 2 : ԺԹ. 3 : ԽԹ. 1 :

կարծրերախ : բերանը կամ չէնկէն սէրթ . ինչպէս պազի ձիանք : կէմ ալմազ : ԼԸ. 2 :

կարկամ : ձեռքը քաշուած, խըսխըս : ԾԴ. 2 :

կարկառ : դէզ : եըղըն : ԿԴ. 1 : Կարկառ կուճիմամբ : երկընցընելով զոռ-նելով, կամ վերցուցած գոփեցընելով : ՂԲ. 2 :

կարկառել : երկընցընել, մօտեցընել : ուզանմաք : ԺԲ. 2 :

կարկել : պապանձեցընել : աղզընը գափաթմաք : ԺԳ. 2 :

կարկեհան : կայծքար . ճեվահիր՝ որ գիշերը կըփայլէ : շէփչերաղ, ֆը, չամճրադ : ՀԵ. 12 :

կարութի : կարողութի : գուվվէթ . թագաթ : ԺԹ. 4 :

կափուցի : գոցելը : գափայըշ : ՂԱ. 3 :

կափուցանել : գոցել : խփել : գափամաք : Ե. 3 :

կաքաւ : խօրօս թէփմիշ ընելը : ռասդ : ԽԱ. 2 :

կեղեքել : պատառել, ծիւ ծիւ ընել . կամ չարչրկել, եօրսէլէմիշ ընել : ԿԲ. 3 :

կեղծիք : սուտ բան, շինծու կերպարանք : եալան՝ կամ ճիխմիխ չէյ : ԽԵ. 2 :

կենաղէն : կեանք տալու սիլահլանմիշ եղած : Խ. 3 :

կենդանախարոյկ : ողջ ողջ երօղ : տիրի տիրի եաքան : ԼԳ. 5 :

կենդանախումբ : կենդանիք ժողվելու : ՁԱ. 4 :

կենսախրախոյս : կենաց յորդորանք տուօղ : հէյաթ ղայրէթի վէրէն : ԽԳ. 2 :

կենսացնցուղ : կեանք ցըցընօղ : ՂԳ. 6 :

կենցաղ : աշխըրքիս կացքը : ՁԱ. 4 :

կերպագրութի : շէնք, ձև : պիչիմ, տիւզէն : ԻԴ. 1 :

կերպակցապէս : մէկ թարզ ըլլալով : ՂԳ. 9 :

կերպարութի : օրինակ տալը : ԿԳ. 1 :

կերպացուցանել : ձևացընել : եօռատմա գօմաք, ույտուրմաք : ԺԲ. 3 : ԽԹ. 2 :

կէտ : վճիռ : սինճիլ : ԻԵ. 3 : կամ, մեծ ձուկ : տոտ պալըղը : ԽԳ. 1 : Կէտ կցորդի : միանալու ծայր : ԼԱ. 1 :

կիզանել, կամ կիզել : երել : եագմաք : Ե. 2 :

կիսայր : կէս մարմինը կանգնած՝ կեցած : եարը պէլլէ գալդըմըշ, տուրմուշ : ԼԲ :

կիրթ : վարժ, հասուն : վուգուֆ : ՂԳ. 17 :

կծծի : խըսխըս : ԾԴ. 2 :

կկել : թեզկեալ բանիլ, կռաւ գործել : տօգումաք : Է. 3 :

կմախք : մեռելի ոսկորներ : եօլիւ կէմիքլէրի : ՀԳ. 2 :

կնդրուկ : պուխուր, ապըլըքէնա : Ն. 2 :

կնիւն : սազ, ջրոտ տեղ բուսած խոտ : հասիր օթի . հասիր սաղի : ԼԹ. 2 :

կշիռ : շխտակ : տօղրու : ԾԴ. 2 : կամ, հաւասար, պիր գարար : ՂԴ. 15 : կամ, թէրազի :

կշտամբանք : չեխ, չախ : աղառ, սիթեմ, թաղիր : ԻԵ. 1 :

կոթող : ակքիլիթաշ : ԼԵ. 3 :

կոծ : ծեծկուիլը մարդու, ծոլու . ԵՆ : տեօկիւշմէ : ԿԴ. 5 :

կոկորդ : կենդանւոյ պօղազ : ԻԴ. 3 :

կոհակ : տալքայ : ԻԵ. 2 :

կողահերձ : կողը պատռօղ բացօղ : ԻԵ. 6 :

կողկողանք : ողնկ ողնկ գալը : խզ . 1 :
կոչկոճել : սէամէզ ընել : Թեփիէլէմէք . խզ . 2 : խը . 6 :
կոշտ : գունտ հող : եումրու Թօփրագ : հզ . 3 :
կոչարան : կանչելու գործիք , կանչօղ : ղբ . 3 :
կորակոր : վար ծռած , գլուխը կախած : կթ . 2 :
կորզել : քաշելով փրցընել , խափշիշ ընել : չէքիփ ալմաք , գօփարմաք : հթ . 4 :
կորին : գազանի ձագ , լակոտ : ճանավար եավրըսի : ը . 1 : կամ , պըղտիկ ձուկ : պալըգճըք : խե . 1 :
կուղ : ոլոր , խաթ : հա . 2 :
կուտել : դիզել : Թօփ էԹմէք , եըղմաք : խե . 1 :
կուր : կերակուր , ուտելիք : եէյէճէք : կ . 4 :
կռածագ : ծայրը ամուր , կամ կոկած : կթ . 2 :
կռփել : գլուխը ծեծել , կամ վայ վրան բերել : հէ . 2 :
կտեալ : ջախջախուած , ջախջելով եղած : ձէ . 2 : ղբ . 5 :
կտտել : ծակ ծակ ընելով չարչարել : է . 3 :
կրթել : վարժել , սովորեցընել : Թէրպիյէ վէրմէք : հե . 12 :
կրկնադատ : խաթխաթ դատապարտած : խզ . 2 :
կրկնակական : Թէքրար լալու : խէ . 1 :
կրկնակապէն : երկու հեղ չար վարձք տըւած : լզ . 2 :
կրկնապարոյր : երկու խաթ եղած՝ կամ ծռած : կթ . 2 :
կրկնեփայց : երկու խաթ տաքցուցած : ղզ . 24 :
կրկուտ : չալը : ձ . 2 :
կցորդ : կպած , միացած : իլհագ : լա . 1 :
կքեալ : կծկըռած : ձէ . 3 : կքումն . կծկըռելը : ժը . 2 :
Հագագ : խուչակ . պօղազ : իզ . 2 : ղ . 1 : կամ , շունչ : սոլուգ , նէֆէս : հե . 12 :
հալոցական : օճախով կամ փօԹայով բան հալօղ : ը . 2 :
հալուէ : էօտ ալաճըի եղը : սէպըր : ղզ . 11 :
հակամիտութիւն : անկարգ յօժարութիւն : խզ . 2 :
հակիրճ : կարճ : գըսաէ : ժե . 3 :
հալբ : որոգայթ : տուզագ : զ . 1 :
համարան : խօսքը մէկ , ույղուն : ալիր ալըզ : կա . 2 :
համաբարուոյ , կամ համաբարոյ : մէկ սիրտ ունօղ . խզ . 3 :
համագրութիւն : համդարտութիւն : մայնա : ձզ . 1 :
համազուգակցել : հաւասարիլ : պէրապէր օլմաք : թ . 1 :
համաձևութիւն : մէկ չափով ընելը : հը . 2 :
համաճարակ . բոլոր կերած , կամ եայըլմիշ եղած : ժե . 2 :
համայն : բոլոր , ամէնը : պիւթիւն : լզ . 4 :
համառօտ : կարճ : ձը . 6 : կամ . չիտակ , արդար : տօղրու , հաղ : կա . 2 :
համատիփ : ամէն դի եայըլմիշ եղօղ : լզ . 1 :
համայեղութիւն : նմանութիւն : խզ . 2 :
համբար : տան զահիրէ : լա . 1 :
համբարտակ : բարձր տեղ , աշտարակ : գուլէ : զ . 3 :
համբոյր : հեղուկ , անուշիկ թապիէթով : լէ . 1 :
հայթայթել : ճարել , փէյտահ ընել : գօռումաք : լզ . 8 :
հայթայթումն : գուլթ շարժելը : մէրհամէթէ կէթիրմէք : ժզ . 3 :
հանդխառախտ : մէկ կամ նման փառք ունօղ : ղզ . 1 :
հանդոյց : հանկուրց , կապ : տիւկիւմ , իլմէկ , գայտուպէնտ : ժը . 1 : ծը . 3 : ղա . 1 :

հանդունակից : ժե . 1 : } նման, մէկ թարզ : պէնզէր, մէ-
հանդունաւոր : ղզ . 15 : } նէնտ :
հանդարտաբարք : հանդարտ թապիէթով, եավաշ : լա . 3 :
հանդերձանք : բանի մը շէնք : տիւզէն : ժա . 1 : իբ . 4 :
հանդերձաւորել : դ . 2 : } պատրաստել, սազել : հազըրլամաք, տիւ-
հանդերձել : ժբ . 1 : . . . } զէթմէք :
հանդիմանալ : մէյտան ելլել, բանի ձեռք զարնել : իզ . 1 :
հանդիսարան : ժողվելու, կամ ալայի տեղ : մէյտան : ա . 2 : լզ . 1 :
հան : մամ, մեծ նինէ : պէօյիւք վալիտէ : լզ . 2 :
հանճար : խելք : ագըլ : ը . 4 :
հանճարազրաւ : խելքը կորսուած : ագլը ուչմուշ : իբ . 3 :
հանուրք : ամմէնը : հէր . հէփի . ճիւմլէ : լզ . 4 :
հաշիւ : հիսապ : կը . 2 :
հաշմեալ : ձեռքը ոտքը քաշուած, խասթալը եղած : ձղ . 2 :
հաշտարան : հաշտեցընող : պարըշտըրըճը : լէ . 2 :
հասակ : տարիք, կամ պօյ : լը . 4 :
հաստարան : հաստատուելու կամ կեցնելու տեղ : տայանաճագ եէր : դ . 3 : կամ . հաստատութեան տուող : իե . 2 :
հաստուած : բանին շէնքը : եապը : զ . 3 : կամ : ստեղծուած : եարա- տըլմըշ շէյ :
հաստումն, հաստատութիւն : պէրգիւք : ը . 4 :
հատու : սուր : քէսկին : ժզ . 1 :
հատուած : կտրուած կամ զատուած բան : ժ . 2 : խդ : 1 :
հատուցանել : հատցընել, պակսեցընել : թիւքէթմէք : ղա . 3 :
հարազատ : նման : ագրան : թ . 2 : կամ, մէկին մը հետ սիրտ : ժէ . 2 : կամ, ազգական . խըսըմ . ծզ . 1 : կամ էօզ զաւակ : խը . 1 :
հարեւանցիկ . թէզով անցնող, էյրէթի . հզ . 3 :
հարթ : դուր, շիտակ : տիւզ : ծզ . 2 :
հարթակշիռ : լըռըման : թէմամ : ղզ . 23 :
հարթուցեալ : խրտած, ամըշնալով վախցած : ժէ . 1 : ձ . 3 :
հարուածն : զարնելը, զարնըռւածք : վուրուշ : իը . 6 :
հաւաստութեան : մանր քննելը : ինճէ թէֆթիշ . ժզ . 2 :
հեծան : հաստ փայտ . սօփա : ժ . 2 : ժբ . 1 : Այսպէս կոչնակը . կմ կոչնակին փայտը՝ հէծան կըսուի : ղբ . 6 :
հեծանոց : հովիչ, հարմանձիներուն քիւրէկը : եափա : հա . 3 :
հեծեծել, կամ հեծեծել : հառաչել : ահ էթմէք : ժա . 1 : իթ . 3 :
հեղեղավայր : ջրոտ տեղ : լթ . 2 :
հեղեղատ : պղտոր գետ : չայճըք : ա . 2 :
հեղեղել : սէլ ընել, կամ հանել : խը . 6 : հեղեղիլ : սէլէն քշուիլ տարուիլ : ծզ . 3 :
հեղձումն : խեղդըւիլը : պօղուլմաք : հե . 12 :
հեղոյս : գամ : էքսէր, մըխ : իե . 2 : իը . 6 :
հենդնել : ծաղր կամ մասխարա ընել : մէզագ էթմէք : դ . 1 : կ . 4 :
հենուլ, կատու գործել : պէզ տօգումաք : կզ . 2 :
հեստեալ : գլուխ քաշած : սախ : լզ . 4 :
հետազօտել : քննել, թէֆթիշ ընել : իզ . 2 :
հետք : գնալը, քալուածք, կամ ճամբա : ժբ . 3 : ժը . 2 :
հերապանծ : մազերով պարծենցող կամ զարդարուած : սաչլը : թ . 2 :
հերձել, կամ հերձուլ : ճղքել : եարմաք : լզ . 2 :
հերք : երկան մազ : սաչ : լբ . 3 :
հերքել : վռնտել . կորսնցընել : գօվմաք : լզ . 2 :

Հէն : չէթէճի : իա . 2 : իե . 2 :
Հէք . ( հիքյա : ) խեղճ , թշուառ : իա . 2 :
Հիացումն : մաթ մնալը : թաաճճուպ : իէ . 3 :
Հիմ : ինչու : նիչին : իդ . 2 :
Հիւթ : նիւթ : մարմնաւոր բան : իթ . 2 : ղդ . 17 :
Հիւծումն : հալիլ մաշիլը . ճուզիլը : իը . 1 :
Հիւղ : մանր թօղ : զէրրէ : իէ . 2 :
Հմայեակ : կախարդական համայիլ : ղդ . 18 :
Հմայք : ֆալ : ֆալճիութիւն : պադըճիլըք : իը . 3 : ծա . 4 :
Հնարագիր : տուզախ դնօղ : ծե . 3 :
Հնդիկ : սև մարդ . հապէշ : արապ : ղդ . 12 :
Հոլով : տէվր : իը . 4 :
Հողապատեան : հողով ծածկած : կղ . 1 :
Հողմահոս : հովով քշած : իէ . 2 :
Հոմանի : սիրահար : աշգլըա , զէնդարէ : ձդ . 3 :
Հոմիշխան : մէկ իշխանութիւն ունեցօղ : հիւքմի պիր : լդ . 6 :
Հոյլ : բազմութիւն : սիւրիւ : ա . 2 : լա . 2 :
Հոսանուտ . ջրլի , ջըջըկտօ : սուլու : ծդ . 1 : ղդ . 23 :
Հոսել, կամ հոսիլ : թափիլ : թափուիլ : տէօքմէք : տէօքիւլմէք : ժթ . 2 : իդ . 1 :
Հոսումն : դուրս բխելը , կամ բխած բանը : ղ . 3 : ժդ . 2 :
Հովիտ : եայլա . տէրէ : ա . 2 :
Հուպ : մօտ , քովը : եագըն : իդ . 1 :
Հպիլ : մօտենալ : եագլաշմաք : եանաշմաք : իթ . 2 :
Հրահանգել, կամ իլ : սորվեցընել, սորվիլ . թէրպիյէ վէրմէք , կամ ալմաք : հե . 12 :
Հրաշակերտուոն : զարմանալի շէնք կամ գործք , եօղէնմիշ եղած բան : ծդ . 4 :
Հրաշէկ : կրակի գոյն դեղին : աթէշլի : է . 2 :
Հրապոյր : զէհիրլու խմէլիք : կղ . 4 :
Հրատ : կրակի դէզ . աթէշ եըղընը : ղ . 3 :
Հրատապ : կրակի պէս տաք : խ . 3 :
Հրացան : կրակ ձգօղ բան : բուընկըընէլիք : ը . 2 :
Հրճուանք : ճխալը : շաղըք . շէնլիք : ղդ . 18 :
Հօրան : այծի սիւրիւ : իղ . 1 :
Ձաղանք : խայտառակութիւն : մասխարա : ե . 1 : իէ . 3 :
Ձաղել, կամ իլ : խախք ու ճաւխ ընել կամ ըլալ : ըռէզիլ էթմէք , կամ օլմաք : իթ . 2 : կբ . 1 :
Ձաղկիլ : ծեծ ուտել : տայագ եէմէք : ժբ . 1 :
Ձայնատրական : ձան հանօղ : ղդ . 20 :
Ձայնարկու : ձան ձգօղ խապար տալու : ծդ . 4 :
Ձգական : ձգելու կամ քաշելու գործիք . ինչպէս չուանը : չէքէճէք : դ . 3 :
Ձգտիլ : եաւէ ընկնիլ : պիր չէյէ չալըշմաք : ծե . 4 :
Ձեղուն : օտայի ծածք : թավան : ծա . 4 : կբ . 2 :
Ձեռնաղնին : ձեռքով բռնելու : էլէ կելէն : հե . 12 :
Ձեռնածու : կէօզպաղըճի : ղդ . 18 :
Ձեռնարկութիւն : ձեռք ձգելը կամ երկընցընելը : էլ ուզատմաք : լդ . 1 : կամ, կորած խօսք : մէքալ : լա . 3 :
Ձեռներէց : առաջ նետուօղ : էլ պաշի օլան : ծբ . 2 :
Ձիավարժ : աթլը , պինիճի . սիւվարի : դ . 2 :

ձիր : պախշիշ : ժդ. 1 : ժէ. 3 :
ձորձ : լաթ , հագուստ : էսպապ : ժգ. 2 :
ձու : հաւկիթ : եումիրթա : ը. 1 :
ձուլածոյ : թափծու կուռք : տէօքմէ փութ : խը. 3 :
ձուլել : հալած բան մը թափել : գալըպլամագ : ժթ. 1 :
ձօնել : ընծայել : փիշքեշ էթմէք : ե. 2 : ղգ. 4 :
Ղամբար : մեծ կանթեղ : մաշալա : ըա. 1 :
ղեկ : տիւմէն : դ. 3 :
ղօղել : ծածկըուիլ : պահուըտիլ : կիզլէնմէք : դ. 1 :
Ճակատ : ասկերի երեսը : էսքէր էօնը : կը. 2 :
ճակատամարտ : դիմադէմ ճէնկ : ղը. 6 :
'ի ճահ : յարմար . ույկուն, եագըշըգլը : ծգ. 2 :
ճայթել : չաթ ձան հանել : ը. 3 :
ճաշակ : ուտելու բան : եէյէճէք : ղգ. 4 :
ճապուկ : կակուղ : եումշագ : կթ. 2 :
ճառ : երկընկեկ խօսած՝ կամ գրած բան : քէլամ : դ. 1 :
ճառել : զրուցել, ըսել : նագլ էթմէք , տէմէք : իը. 1 :
ճարակիլ : եայըլմիշ ըլլալ, ադմիշ ըլլալ : թ. 3 : կամ, ուտել : եէմէք : ծղ. 2 :
ճարպ : փորու եղ, ճրագու : իչ եաղը : ա. 2 : ղ. 3 : կամ, եղ : եաղ : ղգ. 4 : 17 :
ճեմել : օլթա զարնել, քալել : կէզինմէք : ծգ. 2 :
ճեմութիւն : քալելը , կամ վարպետ զրուցք , վարժելի խօսք : սէլաղէթ : ղգ. 19 :
ճենճեր : մխի քէֆ : ա. 1 :
ճենճերել : քէֆ ելլել : ը. 2 : կամ. մխոը ելլել : ժը. 1 :
ճեպ : արտորանք : աճէլէ , սըգլէթ : է. 3 :
ճիպոն : փէնջէ : ղ. 3 : կը. 3 :
ճչգրիտ : ըղորդ : սահիհ : իը. 3 :
ճչգել : խլախլա ըլլալ : խմատ էթմէք : լա. 1 :
ճշմարտախօս : բուն նման : չինշիք : լգ. 1 :
ճոխ : ձեռքը պօլ , մխոը մենծ : խդ. 3 :
ճոխութիւն : մենծ փառք : սալթանաթ : լգ. 5 :
ճոռոմ : լեզուանի : ճոռոմ : փաֆ փուֆ , ճառթճոռութ : հա. 2 :
ճրագակիր : գանտիլլի : ղգ. 8 :
Մագնիսաքար : մըխլաադ : խե. 1 :
մածանիլ : կպչիլ : եափըշմագ : լը. 2 :
մածուած : թանձրցուցած բան : լգ. 4 : կամ. կպցուցած շէնք : պի- թիշմիշ : ձե. 2 :
մակագրութիւն : մէյտանը : ( յիշատակարան : )
մակարդել : պանիր կամ մածունի պէս թանձրնալ : ժա. 1 : իը. 3 :
մահագուշակ : մահ ցըցընօղ : խը. 4 :
մահաղէն : մեռցընելու սխալանմիշ եղած : ղա. 1 :
մահամատոյց : մահ բերօղ , մահուան պատճառ : խը. 3 :
մահարձան : խուլէ , պուրճ : ղ. 3 :
մահիճ : տէօշէկ : ժը. 2 :
մահոլկուղեան : զէհիրլի սալըմը : է. 2 :
մաղձ : սաֆրա : ի. 1 :
մաճ : սապան աղաճը : իգ. 2 :
մաճկալ : սապանի փայտը կամ բուռը բռնօղ : ծգ. 2 :
մամռապատ : գորտնբուրդի քէջավ լեցուած , կամ խառնած :

ԾԴ. 3։
մայրք, մեծ ծառեր չամի, կամ ուրիշ սոյ ։ Թ. 1 ։
մանկաղ, կամ մանգաղ ։ օրագ, Թուփան ։ ԼԵ. 3 ։
մանկավարժ ։ վարպետ ։ Թերպիյէ տուօղ ։ խօճա ։ ԾԱ. 4 ։
մանուկք ։ պզտիկներ, քիչեր ։ քիւչիւքլեր. աղլար ։ ՀԱ. 3 ։
մանրադոր ։ բոյս մի է. գանդուրուտան ։ ԿԷ. 2 ։
մաշկեակ ։ կաշիէ լաթ ։ ՀԷ. 10 ։
մառախուղ ։ փուս, տուման ։ Ե. 2 ։ Ը. 1 ։
մառնամուտ ։ սև մութ ։ գարանթը ։ ՂԴ. 19 ։
մասնաւորել ։ կոտր մը տալ ։ պիր աղ վերմէք ։ ԼԵ. 3 ։ կամ, բաժնել,
բաշխել ։ Թէվզի էթմէք ։ ԼԴ. 2 ։
մատակարարութիւն ։ պաշտօն, խըզմէթ ։ մանսուպ ։ ԼԵ. 1 ։
մատեան ։ գիրք ։ քիթապ ։ Դ. 2 ։
մատենագետ ։ քեաթիպ, որ՝ կամ տիվան քեաթիպի ։ ԽԴ. 3 ։
մատն եղանիլ ։ մատնել, ելէ վերմէք ։ ԽԸ. 2 ։
մարդելոյզ ։ մարդ սպանիչ ընող ։ Կ. 4 ։
մարմանջմունք ։ եռք, կեռալը ։ ԽԵ. 2 ։
մարմաջողական, կեռայընող ։ ԿԹ. 2 ։
մարտիկ ։ կռուօղ. ճէնքճի ։ Է. 1 ։
մեծագրել ։ մեծ բան սեպել ։ պէօյիւք սայմաք ։ ԺԷ. 3 ։
մեծգլխակական ։ փէք վուգուֆ ։ Դ. 2 ։
մեկին ։ յայտնի ։ աշիքեարէ ։ ՂԴ. 11 ։
մեկնազէն ։ մինակ՝ կամ ինք իր գլխուն ճէնկ ընող ։ ԿԹ. 2 ։
մեկնաւոր ։ յայտնի ։ այան. աշիքեարէ ։ ՂԴ. 17 ։
մեկուսանալ ։ զատուիլ, հեռանալ ։ չէքիլմէք ։ ԽԴ. 2 ։
մեհեան ։ կուռքի տուն. փութխանէ ։ ԽԱ. 2 ։
մեղկել ։ թուլցընել ։ կէվշէթմէք. ՂԴ. 23 ։
մեղսամակարդ ։ մեղքով մալակոնած ։ կիւնահտան գարկ օլմուշ ։
ԾԵ. 3 ։
մետաղք. սիւրկիւնի տեղ, հափս ։ ՂԱ. 1 ։
մերձակերպութիւն ։ մեղ՝ նման ըլլալը ։ ՂԴ. 7 ։
մերասեր ։ մեր սոյէն եղածը ։ ԼԴ. 9 ։
մերկամարտիկ ։ ԼԱ. 2 ։ } չըլլալի ճէնկ ընող. ինչպէս փէհլիվան-
մերկամրցանակ ։ ՂԴ. 13 ։ } ները ։
մերկանալ ։ բացուիլ, երևալ ։ աչըլմաք ։ ԽԵ. 4 ։
մեքենայ ։ գործիք մեռցընելու, բռնելու ։ ԼԵ ։ ԾԵ. 2 ։ Ղ. 3 ։
մզել ։ քամել. սիւղմէք ։ ՂԴ. 11 ։
մզնարհեստ ։ բարակ զարի պէս շինած ։ ՂԴ. 20 ։
մէգ ։ փուս, տուման, գարանլըք ։ ԽԱ. 1 ։
մթեր ։ ամպար ։ խազնա ։ Դ. 1 ։ կամ պահած բան ։ ԺԴ. 1 ։
մժիխ ։ մոծակ ։ սիվրի սինէք ։ ԿԸ. 3 ։
մժղուկ ։ գինիի կամ խաղողի ճանճ. ԿԸ. 3 ։
միագոյ ։ մէկ կոտր ։ եէքփարէ ։ ( յիշատակարան ։ )
միականութիւն ։ միաւորուիլը ։ ՀԵ. 7 ։
միայնակողմն ։ մէկ դին սախտա ։ սադըլար ։ ԺԸ. 2 ։
միատարր ։ մէկ խալիպ ։ ՀԱ. 1 ։
միեղջերու ։ կերկերտան ։ ԿԸ. 3 ։
միտել ։ բանի մը ետևէն ընկնիլ ։ տալիպ օլմաք ։ ԿԷ. 2 ։
մխել ։ խօթել ։ սօգմաք ։ ԽԹ. 3 ։
մղձկիլ ։ խեղդըդիլ ցաւէն, կամ սրդողելէն ։ Խ. 3 ։
մգափարատ ։ փուս փարատող. ( յիշատակարան ։ )

մոլեգնաճառ : խենթումենթ խօսօղ : ճե . 14 :
մողոք : կուռք ամմոնացւոց : ի . 2 :
մոմոքել : կակծցընել : խըշխըշցընել : խդ . 1 : կը . 3 :
մորոսութիւն : խենթութիւն : ահմըքլըք : խե . 2 : ղա . 3 :
մուխ : երկաթի ջուր տալը : ղդ . 24 :
մուն . ( մնոյ : ) մանր ճանճ : ուֆաճըք սինեք : կը . 3 :
մուր : թանաք : միւրէքքէպ : լդ . 8 :
մուրհակ : պարտքի թուղթ : թէմէսսիւք : դ . 1 : կամ, վճիռ : իլամ : իդ . 5 : խը . 2 :
մուրճ : թաշճիլի չէքիճ : ղբ . 7 :
մսայլ : մութ : գարանլըք : իղ . 2 :
մնչել : մամռալ : պօռալ : սումուրտանմաք : պողըրմաք : կղ . 2 :
մրճառիլ : մրոտիլ . աղտոտիլ : խալէնմէք : խա . 2 : հա . 2 :
մրմնջել : քթին տակէն երգել կամ կանչել : մըրըլտամաք : լթ . 5 :
մրուր : դիրտ : թօրթը : ժթ . 1 :
մրցանակ : յաղթութիւն, կամ յաղթութեան պախշիշ . եօտիւլ : ժ . 2 :
մրցութիւն : ճէնկ : լա . 2 :
մօր : ցեխ : չամուր : ձդ . 3 :
Յաճախել : շատցընել . մեծցընել : չօղալթմաք : ժդ . 1 :
յամօյր : շատ տանելի : ձա . 2 :
յամառ : ինատչի, սերթ : ծդ . 2 :
յամրայնի : ուշացօղ, ծանրացօղ : էհմալչի : խը . 2 :
յայրատ : աներես : էտէպսիզ : լդ . 1 :
յանդիլ : վերջանալ, լըմընալ : պիթմէք : կա . 1 :
յանդիմանիլ : առջևը ելլել : հուզուրինէ չըգմաք : է . 3 :
յանկաւոր : ույղուն , մինասիպ : ծդ . 2 :
յանձանձել : պէտ ընել : կէօզէթլէմէք : ժդ . 3 : ղդ . 14 :
յանցք : մեղք : սուչ : իղ . 3 :
յառաջադրութիւն : մեծ պատիւ : պէօյիւք փայէ : ղդ . 18 :
յարադօղ : արևու դէմը կախօղ : հա . 3 :
յարաթաթառ : միշտ կամ բոլոր մոլակնած : խե . 2 :
յարախորժելի : միշտ՝ կամ խիստ հաղ ընելու : ղդ . 1 :
յարակայել : միշտ՝ կամ հաստատ պահել : դաիմ թութմաք : կե . 1 :
յարակայիլ : միշտ կենալ : տայիմ տուրմաք : կա . 1 : ղդ . 14 :
յարակցապէս : միաբանելով, ույմիշ ըլլալով : ձդ . 3 :
յարգանք : պատիւ , մեծարանք : րայէթ : լդ . 1 :
յարգարել : շինել, կարգ դնել : տիւզէթմէք : ձ . 1 :
յարկ : տուն . էվ : բ . 1 :
յարկել : վրան ծածքով գոցել : եօրթիւ չաթմաք : ղդ . 9 :
յարմարատեան : տալի պէս սիրուն շինած : իղ . 2 :
յաւակնիլ : յանդգնիլ : աներեսութենով առաջ նետուիլ : լդ . 7 :
յաւետահրաշ : խիստ զարմանալու : փէք շաշըլաճաք : լդ . 1 :
յաւնական : կամ, յաւմնական : տես 'ի կ . լուծ . 17 :
յափրացեալ : պըխմիշ եղած , պէզար : ղբ . 10 :
յելուզակ : աւազակ : հարամի , գաբուսուզ : դ . 3 :
յեղանակել : փոփոխել : տէկիշտիրմէք : բ . 3 : կամ, երգել : գայաէ պրադմաք : իղ . 1 :
յեղեղել : փոփոխել : թէպտիլ էթմէք : կմ, որս որս ընել : թէքրարլամաք, էքիաէ պիրաէ սէօյլէմէք : կա . 2 :
յեռուլ . ( յեռեալ . ) կէյսիրմիշ ընել : կդ . 2 :
յեսանել : երկաթը քարին զարնել : պիլէմէք : ղբ . 5 :

յերկրունն : ույղուն չէնք : տխուղէն, եադրշրդ : Խ̄ . 3 :
յառել : աչքը տնկելով նայիլ : կէօզ տիքմէք : ԽԷ . 4 : ԿԸ . 3 :
յղփացեալ : խիստ լեցուած, պօլ պօլ ունեցօղ : ԽԸ . 2 :
յոբելեան : յիսներորդ տարին ազատութեան : ՂԸ . 7 :
յոլով : շատ : չօք : ԽԵ . 1 :
յոլովամեղծ : Թանձր կոլած : փէք խալի : ԽԸ . 4 :
յոյզք : խռովութիւն, իրար անցնիլը : ալավէրա : Թ̄ . 3 :
յաւանակ : իշու քուռակ : դուռուդ, սըփա : ԽԸ . 2 :
յորդ : պօլ, դաշկըն : ԽԴ . 3 :
յորձանք : ծովու կամ գետի պտոյտ : պուռուռնթու, կիրտապ . Խ̄ . 2 :
յորջորջումն : կանչելը : անուն տալը : ԽԹ . 2 :
յօրանջել : զէրզէպիլ ձգել : ԼԴ . 2 :
յուռթի : առատ, պօլ : ԿԴ . 4 :
յուռութք . ( յուռթից : ) կռապաշտական, կամ կախարդական հա֊ մայիլ : ԿԴ . 4 : ՀԵ . 12 :
յոգնաթախիծ : խիստ տրտում : փէք մէլուլ : ԽԵ . 3 :
յոգնախաբան : խիստ խաբօղ կամ կակծցընօղ . Ճանաքեար էտէն : Ճիյէր տէլէն : ԽԵ . 2 :
յոգնահաւաք : շատ կերպ : չօք Թիւրլիւ : ԼԴ . 1 :
յոգունք : շատոնք, շատեր : չօքլար : Ը . 1 :
յոգնօրէն : կերպ կերպ : Թիւրլիւ Թիւրլիւ . ( յիշատակարան : )
յօդ : անդամներուն խաղը : օյնադ : ԼԴ . 2 : ԽԴ . 2 :
յօդաւորաբար : մարմին ունենալով : ԼԴ . 5 :
յօդաւորական : խօսք կամ լախըրտը կապօղ : Բ . 1 :
յօդել : միացընել : պիրթիշտիրմէք : Կ . 3 : կամ, խօսք տխուզմիշ ընել : Ե . 4 :
յօդուած : կապ : ԽԴ . 3 : կամ . խօսքին կապը, տխուզէնը : Ա . 1 : Դ . 1 .
յօնք : ընքվի : գաշ : ԽԵ . 2 :
յօշատել : պատառ պատառ ընել : փառչա փառչա օլմաք : ԽԵ . 2 :
յօրինել : շինել, սազել : տխուզմէք . տօնաթմաք : ԼԴ . 4 :
Նախադուռն : տան փակը : նախադուռն կոկորդի : պօղազին փակը, և բերանը, կամ բերնին մէջը, կամ տամախը : ԽԴ . 3 :
Նախազեկուցանել : առաջուց իմացընել : էվվէլտէն պիլտիրմէք : ՂԴ . 8 :
Նախակապուտ : առաջուց Թալած : ԽԷ . 3 .
Նախայանցք : առջի մեղաւորները : էվվէլքի կիւնահքեարլէր : ՀԹ . 3 :
Նախայլք : մէկալ առջինները : զայրը էվվէլքիլէր : Դ . 3 :
Նախընթացութիւն : առաջնորդ կամ գլուխ ըլլալը : ՂԸ . 8 :
Նահանգ : գաւառ : այալէթ : ԼԷ :
Նաման : Թուղթ : բարևագիր : մէքթուպ, նամէ : ՀԸ . 3 :
Նանիր : փուճ : ֆանի : ԾԱ . 1 :
Նաշիհ : շարմաղուն ալուր : սիմիտ ունու : ՂԴ . 8 :
Նաւակատիք : ուրախութեան օր : տօնանմա : ՂԱ . 1 :
Նաւուղիղ : խաքուտան, կամ տիւմէնճի : ԽԵ . 2 :
Նարդոս : ծաղիկ է . Նարտին կամ Նէրտին : ՂԴ . 11 :
Ներբող : գովասանք : մէտհ : ՀԵ . 6 :
Ներգեւեալ : ուժէ ընկած, անճար կամ խեղճ դարձած : ԽԱ . 2 :
Ներգործել : բան մը ընել : պիր իշ էթմէք : ԼԵ . 1 :
Ներութի : Ներում, Թողութի : աֆֆ : ԺԸ . 1 :

Նեցուկ : տայախ : կէ . 2 :
Նէսար : չար գէ : մէլուն չէյթան : ղբ : 9 :
Նժար : Թէրազինին Թասը : Թ . 1 :
Նիւթել : գործել : փէյտահ ընել : Ե . 3 :
Նկատ եղանիլ : տեսնել : կէօրմէք . պագմաք : կը . 2 :
Նկարել : Նախշել, Նէրկիմ քաշել : պօյամաք : Ղ . 5 : Նկարիլ յորովայ-
Նի : տղային մարմինը ձեւանալ : Դ . 2 :
Նկուն : ալքած, անճրկոտ, սիրտ չունող : Դ . 2 :
Նհանջել, կամ Նահանջել : արգիլել, ետ քաշել : կէրի չէքմէք : Բ . 3 :
Նշաւակել : խալք ու ձառխ ընել : խալքէթ էթմէք : Գ . 2 :
Նչ կահեալ : անարգըւած, մէկ դի ձգած : խբ . 1 :
Նշմար, կամ Նշմարանք : շօշորդ, մհացորդ . իզ : Բ . 1 : ԻՆ . 2 : Ղ . 3 :
Նշոյլ : շաւղ : շէօհլէ : Ե . 2 : Ժա . 1 :
Նողկալ : գանելի ըլլալ : իգրահ, կամ մէհրահ օլմաք : Ղ . 3 :
Նողկութիւն : գանելիութիւն, անհամութիւն : ղգ . 20 :
Նուագ : ախուզէնլի խօսք, կամ խայտէ : ԺԵ . 1 :
Նուազ : քիչ : ձիւզի : ԼԲ . 1 :
Նուաճութիւն : տակը ընկած : Թապի, միւթը : Ղ . 4 :
Նուիրան : պատարագ : ՀԵ . 11 :
Նպաստ : օգնութիւն : եարտըմ : Ծ . 2 :
Նպաստել : փէրտէ ձգել : խղ . 3 :
Նպատակ : Նետի Նշան : Նիշան, Նիշանկեահ : Թ . 3 :
Նրբութիւն : բարակութիւն, բարակ բան : ինձէլիք : ղգ : 9 :
Շաղակրատ : լաֆազան, շաթաֆձի : ԾՂ . 2 :
շաղկապ : մէկ տեղ կապ : ղգ . 18 :
շաղկապութիւն : միանալը, կապուիլը : պիթիշմէ : ՂԲ . 9 :
շամբ : եղեգնոց : գամըշլըք : Թ . 1 :
շանագլուխ : եապանի ազգ մի է : ղգ . 12 :
շանաձանձ : կէնէ : կը . 3 :
շանթ : կայծակ : եըլտըրըմ : Ղ . 3 :
շառաւեղ : ծիլ : ֆիտան : Ժը . 2 :
շարամանութիւն : մէկ տեղ դնելը : ղգ . 2 :
շարաւ : Թարախ : իրին : Ղ . 1 : ԻԳ . 3 :
շարունակ : կարգ : սըրայ : ԻԲ . 1 : ԽՂ . 2 :
շաւիղ . ճամբու իզ : ԻԴ . 2 :
շերտ : փայտի կամ տախտակի կտոր : ՂԲ . 3 :
շիղջ : դէզ : եըղըն : Ը . 2 :
շիրիմ : գերեզման : Թիւրպէ : ԼՂ . 2 :
շնչասպառ : շունչը հատցընօղ, հոգին հանօղ : (յիշատակարան :)
շշուկ : վէլվէլէ, վայնասուն : Խ . 3 :
շոգի : գոլորշի : սուխար : ԽԲ . 4 :
շուայտութիւն : ուտել խմելը : մէսթի միւտամըլըք : ԽԲ . 3 :
շութափութիւն : արտօրանք : աճէլէ : ղգ . 11 :
շունչ : սօլուխ, Նէֆէս : կամ, քամի, հով : րուզկեար : Խ . 2 :
շուք : շէնք շնորք : եօւտամ : ԻԵ . 2 : կամ, պատիւ : իզզէթ : ՁԳ . 4 :
շտեմարան : ծածուկ տեղ : կիզլի եէր : Խ . 2 :
շրջագրութիւն ընչոյ : չորս դիէն Նէֆէսը բռնօղ : Ղ . 1 :
շրջանակ : տէվր : ՁԳ . 3 :
շրջարկութիւն : չորս դիւր կամ էթրաֆի եղած բան, ինչպէս պատը,
կամ զըրիլը : ղա . 2 : ղգ . 12 :
շքոտում : խուըքմիշ ըլլալը, շաշըմիշ ընելը : ղա . 3 :

շքեղաշուք : սիրուն զարդարուած : փէք չէօհրէթլի : ղբ . 3 :
Ոգեպահ : ապրելու կեր : կէչինէճէք : իէ . 4 :
ոգեպահանջ : հոգին հանող : ճան ալըճը : իը . 6 :
ոգեսպառ : շունչը հատած կամ կորած : նութգու քէսիլմիշ : ծդ . 3 :
ոգորել : կռուըռիլ : չէքիշմէք : թ . 3 :
յոգւոց ելանել : ախ ընել : էյինէմէք : իթ . 3 :
ոխութիւն : ոխ պահելը : գարէզ : հդ . 3 :
ողկոյզ : կուզ : սալգըմ : ժէ . 1 :
ողողակ : ջրի տակը քալող, ինչպէս ձուկը, կամ տալղըճը : ծե . 2 :
ողողել : խըխուալ ընել, կամ սէլի տակ առնել : ձբ . 6 : ողողիլ : լուա-
ցուիլ : կամ սէլով տարուիլ, ծածկըուիլ : ղդ . 11 . 24 :
ողորկութիւն : գուր կամ ախուղ ըլլալը, ախուղ բան մը : ձբ . 5 :
ողորմաղէրս : ողորմուկ եալվար ըլլալու : հա . 4 :
ողոք : խնդրուածք : նիազ . տիլէկ : ժբ . 1 :
ողոքական : կակուղ : եավաշ : բ . 1 :
ողոքաւոր : աղօթք ընող : տուաճի : ծդ . 4 :
ոճ : ցորենի և այլ նմանեաց վեր ելած բոյսը, կամ խալէմը . և նմանու-
թբ, կարգ, սրայ : ե . 3 : յոճ՛ն առաջին . այսինքն առջի ջուրը, առ-
ջի ճամբան :
ոսխ : հասիմ, տալաճի : կզ . 2 :
ոստայն : կտաւի թելը, կամ, էօրիւմճէք : է . 3 :
ոստիկան : քէհեայ, միւպաշիր : ծզ . 2 :
ոստիկանութիւն : վըակեցու ըլլալը : միւպաշիրէթ : հե . 12 :
ոստումն : ցաթկելը : սըչրայըշ : ղա . 3 :
ոտնալալիրծ : ոտքը սըկրթօղ : ղդ . 2 :
ոտնատուութիւն : ոտքի արգելք : ղա . 3 :
որակութիւն : գոյն : րէնգ : թ . 1 :
որայ : ցորենի կամ գարիի կապոց . թութամ, տէմէթ : բ . 2 :
որոջ : էգ ոչխար կէնճ : լա . 3 :
ուլ : այծու ձագ : քէչի եավրուսու : խզ . 1 :
ուղեկցել : մէկ տեղ երթալ, ճամբա ըլըլնել : հդ . 12 :
ուղեղ : ըղեղ : պէյին : ղբ . 8 :
ուղերձեալ : ծլած : բուսած, մեծցած : ժե . 4 : խթ . 2 :
ուղէշ : ֆլտան, կամ երկընցած ճուղ : տալ : իդ . 2 :
ուղի, կամ ուղք : ճամբա : եօլ : խա . 1 : կէ . 2 :
ուղխ : սէլ : ծդ . 3 :
ունելիք : մաշայ : լդ . 5 :
ունկի : օնձա, 8 կամ 12 տրէմ : իզ . 2 :
ունկնախից : անկաճը թըխամիշ ընող կամ ըրած : ծ . 4 :
ունկնամուտ, անկաճմտուկ : մադաս պէօճէկի . ղդ . 14 :
ուշ : քիշողութիւն, քիշելը հըփղ, խաթըր : իդ . 2 : կամ, միտք : ապլ,
ֆիքր : ծթ . 1 .
ուռ : սամիյի տալ : իդ : 1 :
ուս : կռնակ : օմուզ : հէ . 3 :
ուտիչ : ցեց : կիւվէ : ղբ . 9 :
ուտճահալ : ցեցէ կամ պէօճէկէ կերած : ծզ . 2 :
ուրոյն : զատ, հեռու : պաշկաճա : զ . 3 .
ուրոյնութիւն : պաշխա ըլլալը : ֆարղ : լդ . 7 :
ուրուական : թախլիթ : հա . 4 : կամ, ստուտուամուտ : հե . 12 :
ուրուաձայն : անշահ ձայն հանող : պէթ սէսլի : ղբ . 8 :
Չարաշուք : խիստ չար, կամ ցած : նուխուսէթ : ծե . 2 :

չուառալի : չհուառալու , սուտ , կուռք : ծդ . 4 :
չորեքվտակեան : չորս ճուղ վազող , չորս ակով : կը . 1 :
չու : քալելով առաջ երթալը , ճամբա ընելը : կեօչ : բ . 2 :
չքնաղ : աղւոր : չիրին , տիլպէր : ժա . 1 :
չքոտի : ցած , խեղճ : սէֆիլ : կթ . 2 :
Պալար : եարայի ուռէցք : գապառճըք : ից . 2 : կն . 1 :
պախարակիլ : Նախատուիլ : տիլլէնմէք : խը . 5 :
պակուցումն : մեծ վախ : իֆրաթ գօրգու : Է . 3 :
պաշնակ : անկարկայի բռնած , ինչպէս սխմին կնւրենալին : ծը . 3 :
պաշպանակ : պաշօղ , կամ պաշուելու տեղ : դ . 3 : կէ . 2 : կմ , ղըլըխ ,
սինեպէնտ : ղդ . 12 :
պաղատանք : աղաչանք : տիլէկ : Ըդ . 9 :
պաղպաջունք : քէօշկի պէս շինած տեղ : իէ . 2 :
պաճար : ծն : 2 :
պաճարեղէն : Ժ . 1 . } անասուն : հայվան , տավար :
պաճուճիլ : զարդարուիլ : տօնանմաք : Թ . 2 .
պայազատ : քիշիզատէ : դ . 2 :
պայթիլ : ճաթիլ : փաթլամաք : Հդ . 3 :
պայման : չափ . կանոն : քաւլ : բ . 3 : դ . 1 : ծդ . 5 :
պան : հացի գնտակ : սօմուն : Ըդ . 8 : ղդ . 8 :
պաշտօնատեղ : պաշտելու տեղ : կուռքի տուն : ծա . 4 :
պապակիլ : խիստ ծարուիլ : հէրարէթլէնմէք : իԹ . 2 :
պապքիլ : ծարաւէն ցամքիլ : սուսամաք : Ն . 3 :
պատանդել : խլխլովլուխ կապել , բռնել : ղապդ էթմէք : կղ . 4 : պա-
տանդիլ : ռէհին դրուիլ : խը . 3 :
պատանի : կէնճ տղայ : օղլան , տէլի գանլը . Ժը : 2 :
պատարուն : լեցուն : դաշկըն : խը . 3 :
պատգամաւոր : խապէրտար : իդ : 3 :
պատիր : խաբէութի : ֆէնա : ղ . 3 : կէ . 2 :
պատկանել : յարմարել : ույղուրմաք . տիւզէն վէրմէք : իղ . 3 : կամ ,
հաստատել , տեղաւորել : եէրլէշտիրմէք : դ . 3 :
պատճառաւոր : առեղծուած : ղդ . 1 :
պատնէշ : մէթէրիզ , թապիյէ : կ . 2 : ղբ . 5 :
պատշաճագաս : հախով կամ ճայիղ տեղը դատապարտած : իԹ . 2 :
պատուածօրէն : պռճուկ , մութ : տօլաւըլը : ղդ . 7 :
պատուաստ : կցուածք : կէյմիրմէ : ղբ . 9 :
պատուաստել : կցուիլ , միանալ : գայնաշմաք : իէ . 4 :
պատրիլ : խաբուիլ : ալտանմաք : իԹ . 3 :
պատրոյգ , կամ պատրոյկ : մոմի կամ ճրագի ֆիթիլ : ղդ . 2 :
պար : շարք , սըրա : Ն . 2 :
պարարիլ : գիրնալ : սէմիրմէք , Թավլանմաք : Ժ . 1 :
պարուրել : ծալելով գոցել : պիւրմէք : Ժբ . 3 : ղա . 1 :
պարս : քար նետելու գործիք : սափան : Ըդ . 7 : ղբ . 4 :
պարսաւ : քամահրանք : ըխտալըք , Մէլամէթ : խը . 2 :
պարսել : սափան նետել , քարոտել : Է . 2 : ղ . 3 :
պարտիլ : յաղթուիլ : եէնիլմէք : իԹ . 3 :
պերճանալ : փառաւորուիլ , կամ աղալանմիշ ըլլալ : Ժդ . 2 :
պիծակ : էշէկ առըսը : կը . 3 :
պղպջակ : ջրի կամ սապոնի բուշտը : սու գապառճըղը : Հդ . 3 :
պճնիլ : սազուիլ : պէզէնմէք : բ . 2 :
պնդել : ամուր կապել , ամրցնել : խն . 1 : պնդիլ : եաւէն վազել : ար-

տըրըրա ախուշմէք : խը . 2 :
պուետիկոս : բանաստեղծ : շայըր : խը . 6 :
պուրակ : կաղոց : անմէթ : թ . 1 :
պչրութիւք : անհամեստ զարդարանք : նազըլըղ եռատամ : խը . 4 :
պսակ : վերջ : սօնղ : խդ . 2 :
պսակապաճոյճ : պսակով զարդարուած : լէ . 1 :
պտղածնիլ : պտուղ բերել : ղդ . 21 :
պտղատոհմական : ապրելու պտուղ տուօղ : ղը . 9 :
պտուտկիլ : պտըտիլ : տօլաշմաք : դ . 4 :
պրկիլ : խըսխըլմաք կապուիլ : ղ . 4 :
Ջահ : մաշալայ : ղդ . 8 :
ջահիլ : ծաթիլ, փայլիլ : չէօհլէլէնմէք, եըլտըրրամաք : ձդ . 2 :
ջամբել : կերցընել : եէտիրմէք : ե . 2 :
ջայլ : ողբուլաց : աղլայըշ : կը . 1 :
ջատուկ : ճատը, կամ ցաւագար : մարաղլը : ծը . 2 :
ջեռնուլ : տաքնալ : գըզըմաք : հե . 12 :
ջերմն : տենդ : սըթմա : դ . 3 :
ջերմնական : սըթմալը : խ . 3 :
ջնար : սանթուռ : ղը . 9 :
ջնեալ : ծեծուած : կ . 2 :
ջորեակ : սօյ մը չէքիրկէ մանր : կը . 3 :
ջութակ : սանթուռ, կամ քէման : ղը . 8 :
ջրակարծ : ջուր երեւցած, ջրի պէս : կը . 3 :
ջրել, ջրիլ : ջնջել, ջնջըուիլ : պօզմաք, պօզուլմաք : լը . 3 : կը . 1 :
ջրողող : ջրով ծածկըուած կամ խեղդըուած : կ . 5 :
Ռետին : ծառէ վազած խէժ : ինչպէս զամխ, չամսախըզը, են : կը . 1 :
Սադրել : յանձնել : սիփարիշ էթմէք : կամ, գրգռել : տիւրթմէք : կե .
1 : սադրօղ : գրգռօղ : ղ . 3 :
սալ : եօրս : կդ . 2 : կամ, ղայղան քար : ղը . 8 :
սակ : չափ : միգթար, ժդ . 2 : ժէ . 3 : խէ . 2 : հ . 3 :
սակաւաձեռն : ակար . զայըֆ : դ . 2 : կամ, քիչ : ճիւղի : ղդ . 15 :
սակաւամանեայ . քիչ, կարճ մը : պիր ազ : ա . 1 :
սահանք : ջրին խզով վազելը : խ . 2 : կդ . 1 :
սահման : չափ, սինօռ . կամ, չափաւոր և կտրած խօսք : ե . 3 . 4 :
սաղարթ : տերև : եափրագ : թ . 2 .
սայրասուր : բերանը սուր : աղզը քէսկին : ղդ . 2 :
սանդարամետական : գետնին տակը եղած, կամ դժոխային, դև : լդ . 5 :
խը . 3 :
սանձ : կէմ, տիզկին : դ : 2 :
սանձակալ : կէմը բռնօղ : դ . 2 :
սանձակոտոր : կէմը կոտրօղ : զապդլի չեկօղ : կէմ ալմաղ : իը . 2 :
սառնամանիք : սառույց : պուզ : դ . 3 : է . 1 :
սառնասէր : սառի պէս, պուզ կտրած : ձա . 3 :
սառնացրտութիւն : պաղ պուզ ըլլալը : ղդ . 11 : .
սաստ : չեխ, չըգըշ, թազիր, խըշմ, գադէպ : լ . 2 :
սատեր : զօլաթայի չափ ըստակ : խե . 1 :
սարգ : մամուկ : էօրիւմճէք : ղդ : 14 :
սարսուռ : դող : թիթրեմէ : դ . 3 :
սարտուցեալ : գլուխ քաշելով փախած : խը . 2 :
սաւառնիլ : խանատները սալլիշ ընել : ղա . 1 :
սգալ : տրտմիլ : գայղը կամ էլէմ չէքմէք : խե . 1 :

սեամք : դրան էշիկ : ժբ. 3 :
սեղանանենդ : գուղ էքմէք խայընը : խը. 2 :
սեպհական : առըլ լրէնը : ղաթը : լդ. 5 :
սեպուհ : ակէկզատէ : դ. 2 :
սեռն : սպածառ, յիսակ : զեւլալ, փաք : ժ. 2 :
սեւեռ : գամ. մըխ, էքսէր : կզ. 4 :
սթափ : զգաստ, չուստ : ղայրէթլի : խդ. 3 :
սթափիլ. խեւքը գլուխը գալ : այըդլանմաք : դ. 3 :
սիգացօղ : ապաշանմիշ եղօղ : ֆօտուլ : հդ. 2 :
սիկ : բարակ հով : խօշ րուզկեար : լաթըֆ եէլ : լբ. 3 :
սին : փուճ. անշահ : իէ. 3 :
սիրալիր : սէր ձգօղ : ղբ. 3 :
սլանալ : վազելով թռչիլ : ն. 2 :
սլաք : նետին ծայրի երկաթը : օգ. աէմրի : ժզ. 1 : իզ. 3 :
սխրալի : զարմանալի : աճայըպ : ծբ. 2 :
սկախառն : կաւով կամ չամուռով խառնած : չամուռլու, պուլանըգ : ծդ. 3 :
սկաւառակ : թապախ, կամ սահան : ղ. 2 :
սկզբնալոյս : առաջին լուսաւորօղ : ծդ. 1 :
սկզբնածին : առջինեկ : իլք տօղմուշ : լդ. 5 :
սկզբնաձիր : հբ. 2 : } առջի տուօղը, կամ պարգեւօղը :
սկզբնաշնորհ : ձե. 2 : }
սկզբնապար : պարի կամ չալղըլի գլուխ : ղբ. 8 :
սկիւթացի : թաթար : ղդ. 12 :
սղոցել : տէստէրէլէմէք : ծա. 4 :
սնոտիապաշտուաստ : փուճ կամ անշահ շինուած : եօւտամըղ : դ. 1 :
սողուն : սօլուճան : լբ. 2 : կէ. 1 :
սոսկ : փուճ, անշահ : ֆայխտէսիզ, նաֆիլէ : հբ. 2 :
սոսկական : եայան, կամ ցած, կամ պայաղը մարդ : դ. 2 : հա. 2 :
սոսկալիթխար : սոսկալի մեծ, ահագին : պալապան, տիղման : ղդ. 12 :
սոսկումն : մեծ վախ : իֆրաթ գօրգու : լէ. 3 :
սոր : փոս տեղ՝ ակէէն փորած : խ. 2 :
սուգ : արամութի : ղամ, թասսա : ծ. 1 :
սուզել : խորը իջեցընել : պաթըրմաք : լզ. 2 :
սուրհանդակ : շաթըր, փէյիկ : ծզ. 2 :
սուփեր : խմատուն խօսք, կամ շէնք : ձը. 2 :
սպանդ : մորթած անասուն, կամ մորթըուիլը : լդ. 5 : խդ. 2 :
սպանդարան : մորթելու տեղ : խէ. 3 :
սպառաղէն : սիլահը, կամ սիլահտար : զ. 3 : ծզ. 2 :
սպառիլ : հատնիլ : թիւքէնմէք, եօղ օլմաք : բ. 2 :
սպառուած : լըննալը, ծայր : թէքմիլ, ուճ : լա. 1 :
սպաս : սեղան : ղիաֆէթ : ղդ. 21 :
սպեղանի : մէհլէմ : ժբ. 3 :
սպրդիլ : ներս սփլըշմիշ ըլլալ : իբ. 5 :
ստամբակ : գլուխ քաշօղ, ղապդըըղ : լա. 2 : ինչպէս սատանայ : խը. 3 :
ստգտանել : մեղադրել, սուչը երեսը զարնել : այըպլամաք, սիթէմ էթ-
մէք. իթ : 3 :
ստինք : ծիծ : մէմէ : բ. 2 :
ստորաբեր : վար քաշօղ : ձե : 2 :
ստորախուզեալ : տակէն խըռփմիշ եղած . հդ. 2 :
ստորածածկիլ : տակը ծածկըուիլ : լե. 3 :

ստորնաքարշ : ցած կամ փուճ բաներու ընկած : ծզ . 2 :
ստորք : վարինները · աշակերտներ : ձզ . 2 :
ստուար : հաստ, խոշոր : գալըն, գապա : խզ . 2 :
ստուարակարկառ : խոշոր քարերով կարկառած, կամ էքլէնմիշ եղած :
(յիշատակարան :)
ստուարաստեղն : հաստ կամ խոշոր աղերով : Թ . 2 :
ստուգաբանել : բառով կամ անունովը խաղալ ընել : ղզ . 20 :
ստուեր · շուք : քէօլկէ : ժզ . 1 :
ստրկամեծար : ծառան կամ ցած մարդը մեծարող : զ . 1 :
ստրկութիւն : ցածութիւն : ալչագլըք, էտնալըք : ղզ . 7 :
ստրուկ : րայէ : զ . 2 :
ստրջանալ : փիւշման ըլլալ, վազ գալ : խթ . 3 :
սրբագործութիւն : սուրբ բան շինելը, կամ երկաթ սրելը : խզ . 2 :
սրահ : սօֆա, մէյտան : ծա . 4 :
սրանալ : վըզ ընելով փախչիլ : ժա . 3 : ի . 2 : խը . 3 : սրացեալ, մերթ՝
սուրցած, ցցուած : սիվրիլէնմիշ : իը . 3 :
սրբահետ : սբ կամ թէմիզ ճամբա ունող : ղբ . 11 :
սրբերգեան : սբ սբ երգօղ : ղզ . 1 :
սրինկ : տիւտիւկ : չըղըրթմա, կամ նէյ : ղբ . 8 :
սրսկել, կամ սրսկիլ : ցըցնքել, ցանել, ցանուիլ : սէրփմէք, սէրփիլմէք :
իը . 5 : ղա . 2 :
սփիւռ : պօլ, ընդարձակ, կամ չորս դին : ( յիշատակարան : )
սփոփանք : մխիթարանք : թէսէլլի : իը . 3 :
սքանչելութիւն : զարմանալի ըլլալը, զարմանալի կերպ : աճայըպ թարզ,
հըքմէթ : ժէ . 2 : հէ . 3 :
Վաղորդայն · առաւօտ : սապահ վագթի : կէ . 3 :
վայր : տեղ : եէր : իզ . 1 :
վայրագութիւն : եապանիլիք, եավուզլուք : Լ . 4 : Լզ . 1 :
վանդակապատ : պարմախլըխով կամ խաֆէսով շինած տեղ : գաֆէս
լիք : իէ . 2 :
վանել : հրելով ձգել, վռնտել : իթիլէրմէք, գօվալամաք : իը . 3 :
վաստակ : աշխատանք : զահմէթ, ըրգէթ : ձէ . 1 :
վատնել : ցրուել, զայ ընել : տաղըթմաք : իը . 3 :
վարակել : տոգորուիլ, չորս դին կամ բոլոր եայըլմիշ ըլլալ : Լա . 3 :
վարանիլ : վախէն կամ տէրտէն անձրկիլ, կամ տէտիրկին ըլլալ : ժա .
3 : իզ . 3 : իը . 2 :
վարապան : բերնի կապ, կամ քթի չէնկէլ, կամ հալգայ : ղբ . 2 :
վարատական : բարբարական, տէտիրկին : ժա . 3 : իբ . 2 :
վարատիլ : ցրուիլ : տարտղնիլ, տէտիրկին ըլլալ : իէ . 3 :
վարկածք · մտքի գրածը, մտածմունք : թահմին, գըյաս : խը . 4 :
վարկանել : միտքը դնել, սեպել : սանմաք : ժթ . 3 :
վարմ : թօռ, կամ տուզախ : ի . 3 : ղ . 3 :
վարսք : փէրչէմ : կզ . 3 : կամ, ծառին փէրչէմը : Թ . 2 :
վեհ : խիստ մեծ : ալա, մէշհուր : ը . 2 :
վերագլութիւն : վրա ընկնիլը, կամ մէկ մէկու վրա գլուիլը : ի . 2 :
վերակացումն : վրա կենալը կամ հանիլը : ա . 2 :
վերակենցաղել : ողջննալ : տիրիլմէք : Լզ . 5 :
վերամբարձութիւն : վեր բարձրանալը կամ ելլելը : ձբ . 3 : ղզ . 9 :
վերընթացութիւն : վեր ելլելը : ձզ . 5 :
վերծանել : կարդալ : օգումաք : իը . 4 :
վերնակենցաղ : երկինքը ապրող կամ ապրելու : ծա . 4 :

վերնամարտ : մի դէմ ճէնկ ընող : ղա . 3 :
վերնամրցանակ : երկնային յաղթութեան մեթալիս : ղգ . 24 :
վերնաշաւիղ : վեր ելլելու : ղբ . 11 :
վերջնական աճառ : աղտ հանելու զօրաւոր դեղ , ինչպէս պաշ սապօ-
նը . Են : ղգ . 11 :
վէս : քիթը մեծ . հպարտ : մաղրուր : Ծ . 2 :
վիթխարութիւն : խիստ մեծութիւն . հանթալըք : ղբ . 2 :
վիժած : անցուցած տղայ : վագթինտէն էվվէլ տօղմուշ : Ի . 2 :
վիժակ : վար վազելը : կգ . 1 :
վիհ : խորունկ փոս : ժա . 1 :
վիճակաւորիլ : բաժնուիլ : թէվզի օլմագ : ղգ . 8 :
վիմակամ : քար դարձած , քարի պէս պինդ : ծզ . 2 :
վիրդ : նետելու մեծկակ քար . կ . 2 : վիրդ սալի : աքօշէմէյի քար :
ղբ . 8 :
վհատիլ : սիրտը թուլնալ կամ կոտրիլ : իւրէկի քըրըլմագ : գ . 4 :
վտակ . բարակ վազուկ ջուր : ադար սու : Ե . 2 : ԽԵ : 4 :
վտարանդի : եապան տեղ ընկած , կամ վըռնուած . ԺԵ : 2 . ծա . 4 :
վտարել : քշել : գօվմագ : ԽԹ . 3 :
վատել : ըսպառցնել : զայուֆլանմագ : Ի . 2 :
վրան : չատըր : Ի . 2 :
վրիժառու : էօճ կամ հայֆ առնող . ձբ . 5 :
վրիպակ : ղալատ , կամ զրկում : Իզ . 2 : կամ , ծուռ : եանլըշ : ժբ . 8 :
ղբ . 9 :
վրիպիլ : ճամբէն դուրս ելլել . եօլտան շաշմագ . Ե . 2 : կամ , զրկուիլ .
մահրում գալմագ : ԼԲ . 2 :
վրնջողական : ձիու պէս ցանկութիւն , կամ աղմիշ ըլլալը : ԽԵ . 2 :
Տագնապ : սըխլէթ : Է . 3 :
տաժանիք : ԽԵ . 3 : } մեծ աշխատանք : իֆրաթ զահմէթ :
տաժանումն : Բ . 2 : }
տածել : պէտ ընել . պէսլէմէք , թիմար էթմէք : Ե . 2 : Թ . 2 :
տակաւ տակաւ : կամաց կամաց : աղար աղար : ծԸ . 3 .
տաղանդ : օխայով ըստակ : Իգ . 2 :
տաղաւար : խուղիկ : կամ չատըր , գօնագ : Բ . 1 :
տաղաւարիլ : բնակիլ : գօնագ էթմէք : ՀԵ . 13 : կամ , բնակուիլ .
բնակարան ըլլալ : գօնագ օլմագ : Յ . 1 :
տաղտկաղաղական : իգրահ ընելու : փէք մուրտառ : ղգ . 20 :
տաղտկալի : գանելու : իգրահ էտէճէք : Ա . 1 : Կ . 5 :
տաշտ : թաս , քեասէ : Լ . 2 :
տապ : տօթ , տաքութիւն : սըճաքլըք : Զ . 3 :
տապախառն , տաք գոլով խառնած , ինչպէս սամ եէլին : ղբ . 9 :
տապանալ : տաքնալ : գըզըլմագ , ըսըթըմա օլմագ : ԻԹ . 2 :
տապար : կացին : պալթա : Ժգ . 3 :
տառ : գիր : եազը : կիր , գրուածք , գրած խօսք : ԼԳ . 2 :
տառապանելի : տրտմելու , հոգալու : գասավէթլի : ԼԱ . 2 :
տառատակցան : խոշոր փուշ , կամ տէմիր տիքէնլի ցանօղ : ԾԶ . 2 :
տարագրել : վռնտել , հեռացընել . գօվմագ : Ե . 2 : Ը . 1 :
տարազ : կերպ : թարզ , սօյ : ԺԸ . 2 : ԾԳ . 5 :
տարաժամ : պէվախտ : ձԲ . 6 :
տարակոյս : մերթ՝ բաժնուած ճամբա : Գ . 3 :
տարակորզել : փրցընել : չէքիփ գօփարմագ : ԺԵ . 2 :
տարացոյց : օրինակ : էօրնէք , նումունէ : ԺԵ . 2 :

տարմ : սիւրիւ : կը : 3 :
տարաամ : անձրկածութին : լթ . 2 :
տարտարոս : դժոխքի անդունդը : Ճհէննէմ : ը . 1 :
տարր : մարմնաւոր բաներուն թէմէլը . այսինքն, կրակ, օդ, ջուր, և հող : խմսիւր, անսէր : ծը . 3 : կամ, անոնցմէ հաւըլ եղած բան : ը . 2 :
'ի տարր գոյի : եղած բաներուն տարըլ մէջը : խա . 2 :
տարր արկածից : պատճառ փորձանքներու : ղը . 6 :
տարր ժամանակաց : սկիզբն կամ վերջկեանը աշխարքիս ժամանակին : ծէ . 3 :
տարրից : հաւըլ ընօղ : ծդ . 1 :
տարփանք : մեծ բաղձանք : տրփիւ : ժը . 1 :
տաւիղ : ղանուն : չալըղը մի է : կա . 1 :
տեղալ : անձրևի պէս թափել : եաղմաք . ժթ . 2 :
տենչանք : տես տարփանք : ժը . 1 :
տեսական . երևելի, աչքի եկօղ : կէօրիւնէճէք : իդ . 2 : կամ, տեսնօղ : կէօրէն : լդ . 5 :
տեսականել : երևելի ընել, ցըցընել : ղդ . 10 :
տէգ : մըղրախ : խե . 3 :
տիեզերադաւ : աշխարք խաբօղ : ալէմի ալտատան : ղ . 4 :
տիղմ : ցեխ : չամուռ : ժէ . 1 :
տիպ : կերպ, կերպարան, քիպլէթ : դ . 1 :
տիրադաւ : ծղ . 2 :
տիրադրուժ : է . 2 : } տէրը խաբօղ, անհաւատարիմ : աղաընա խային :
տիք : արէնք, տարիք . եաշ : ժա . 2 :
տխուր : տրտում : մելուլ, մահզուն : իթ . 2 :
տխրատեսակ : սև մութ գուն ունօղ : լդ . 8 : ղդ . 12 :
տղմաւէտ : թանձր չամուռով լցուած : պալըգլը : ժղ . 1 :
տնկակից : բնական : տալընտան, զաթը : ծէ . 3 :
տնտեսել . հոգալ . տալ : գայըրմաք : ժէ . 2 : կամ, ցըցնել : պէյան էթմէք : իը . 6 :
տնօրէնութին : տան գործք, կամ թիմար : ղդ . 3 :
տոկոսիք : ըստակի շահ : ֆայըզ : ա . 2 :
տոհմ : ազգ : սոյ, սիւսիլէ : ծա . 5 :
տոհմական : սոյըլու, սոյզատէ : դ . 2 :
տոյժ : զարար, Ճէրիմէ, Ճուքամ : ը . 2 : իղ . 2 :
տոչորել : երել մրկել : եանմաք : է . 5 : կամ, ցամքիլ . գուրումաք : իդ . 2 :
տուն : չուվալնէ կապ : քէնտիր : իը . 1 : կէ . 2 :
տուայտիլ : հալիլ, մաշիլ : կղ . 5 :
տուժիլ : Ճէրիմէ կմ Ճուքամ քաշել : է . 3 :
տումար : տէֆթէր : լթ . 2 :
տպաւորագոյն : շատ նման : փէք ույկուն, թըպկը : ժթ . 3 :
տտուն : պոչ : գույրուգ : խե . 3 :
տրոհել : բաժնել . զատել : այըրմաք, սէչմէք : ժդ . 1 :
տրուպ : ցած, անարգ : ալչագ, էտնա : ժէ . 2 :
Ցայգ : գիշեր : կէճէ : Է . 2 :
ցանգ : միշտ : տայիմ : լէ . 1 :
ցանց : խ . 3 .
ցանցարկ : ծէ . 2 : } աղ, ձուկ կամ ղուշ բռնելու թօռ :
ցասումն : բարկութին : էօֆքէ : ժէ . 3 :

ցեղ : սոյ : ԺԸ. 2 :
ցիռ : վայրի էշ : եապան էշէկի : ԽԼ. 2 :
ցնորք : խենթութեան մտմտուքներ կամ երազներ : խէյալ : ԺԲ. 3 : ՃԴ. 1 :
ցնցուղք : ցաթկտուք ջրի կամ կրակի : սէրփինթի, փուսկուրմէ : Ղ. 3 : ԿԸ. 3 :
ցոլանալ : փայլիլ : շաւքլանմագ, շէօհլէլէնմէք : Ն. 2 :
ցոլք : փայլումք : շաւքլանըշ : ՃԱ. 3 :
ցոփուն : համարձակուն : աշըքըրք, սէրպէսթլիք : ՀԸ. 2 :
ցուպ : գաւազան : տէկնէկ : Կ. 4 :
Փաղանգ : սիւրիւ, գաւթար : ԿԵ. 1 :
փաղաքշել : շոյել : խօշքէչի կէչլնմէք : Ժ. 1 :
փապար : խօվուխ տեղ : Խ. 2 :
փարաքումն : չափն աշխ էտէպսիզութեն : ԽՆ. 2 :
փթթեալ : ֆիլիզլէնմիշ եղած : ՂԴ. 11 :
փոխաբերել : համառուցանել : մուգաալէէ էթմէք : Ն. 3 :
փոխատրութիւն : համառուցումն : մուգաալէէ : ՀՆ. 9 :
փոկ : կաշիէ կապ : ԽՆ. 2 :
փող, ( փողի : ) պօղազ : ԽԼ. 3 :
փող. ( փողոյ : ) զուռնա : ԿԸ. 2 :
փողել : զուռնա կամ պօռու չալէլ : ԿԴ. 2 : ՂԲ. 7 : կամ, ամուր կանչել, պօռալ : պաղըրմագ : ԿԲ. 2 :
փրկանակ : փրկուելու գործիք, կամ միջնորդ, ազատօղ : գուրթարըճը : ԽԼ. 2 : ԾԱ. 4 :
փրկանք : ազատելու գին : պէհա : ՃԷ : 2 : Ղ. 2 :
փքանալ : ուռիլ : պէսլիւլէնմէք : Ն : 2 :
Քաղեալ : քաղուած, սոփքած, քէչքըրցած : ԽԹ. 2 : ՃԷ. 3 :
քաղցկեղ : կերցաւ : չիկիփէնչէ : ԺԸ. 3 :
քաղցրաւէնի : անուշեղէն : թաթլը, շէքէրլամէ : ԽԱ. 2 :
քամահել : անարգելու : այըպլանմագ, ղէմ օլմագ : ՀԷ. 3 : ՃԲ. 5 :
քայլ, կամ քառ : կեռտանըլըխ, լէօֆ : ԼԴ. 1 :
քամակել : չափի մէջ մանել, պղտիկնալ : էօլչիէ կիրմէք, քիւչիւլմէք : ԼԴ. 10 :
քանտար : ժանտ : զալըմ, եավուզ : ԿԹ. 2 :
քանդակուած : փորուածք քարի՝ կամ փայտի վրայ օյմա : ԺԱ. 2 :
քանիք : նիշղըտար ըլտը : Լ. 1 :
քանցել : փրցուիլ. կտրուիլ : գօփարըլմագ. գըռըլմագ : ԽԴ. 1 : ԿԷ. 2 :
քանքար : օխայով կամ քէսէյով բատակ : ԺԸ. 1 :
քառադիմակ : չորս աչքով կամ չորս գլխէն տեսնօղ : ԾԱ. 4 : տես 'ի լուծմունքն :
քառակերպ : չորս կողմ ունօղ, ինչպէս որ խաչը : ՂԱ. 2 :
քառակուսեան : տէօրթ թարաֆլը : ՂԴ. 21 :
քառք : չորս : տէօրթ : ՃԼ. 1 :
քարակոշկոճ : քարով ծեծկըռուող : ԺԸ. 2 :
քարայէժ : խայայէ վար ինկած : ԾԼ. 2 :
քարբ : թաճ եըլանը : Բ. 1 : Ճ. 4 :
քարտէն : թուղթ : քեաղըտ : Թ, 1 :
քաւարան : քաւող : աֆֆ էտէն : ՂԴ. 1 :
քեղիք. մաճկուռ : կամ, մաճին կամ ուռմնին կոթը : ԼԲ. 3 :
քերթութիւն : քերականական շէնք : ՂԴ. 19 :

քթթելական ։ ակնթարթ, աչք բանալ գոցելը․ և նմանութիւն, քչիկ մը ։ ակր աղըճըք ։ ժգ․ 1 ։
քիմք ։ տամախ ։ իգ․ 2 ։
քինաւոր ։ ղարեզլը ։ ղա․ 1 ։
քղանցք ։ փէշ, էթէկ ։ ժը․ 2 ։
քնարան ։ քնանալու տեղ, գերեզման ։ հէ․ 4 ։
քննին ։ թէֆթիշ ։ 'ի քննին առնուլ ։ քննել ։ թէֆթիշ էթմէք, արա֊ մաք ։ հա․ 3 ։
քողարկել ։ ծածկել ։ էօրթմէք ։ հբ․ 2 ։
քողընծայ ։ քողքով ծածկած ։ ղբ․ 3 ։
քսենակրօն ։ քու կրօնքին կամ կանոնին ։ լթ․ 1 ։
քսենամիտ ։ քէզմէ չինած, կամ հասըլ ըրած ։ ծգ․ 4 ։
քսենաշունչ ։ քու ձնչով կամ բերնով խօսած ։ լգ․ 2 ։
քստմնափուշ ։ իը․ 6 ։ } փուշ փուշ ընող, կամ ըլլալու ։ խխտ գո֊
քստմնելի ։ . . . ը․ 1 ։ } ղալու ։
քրայ ։ ղույումճիի կամ խալըճիի օճախ ։ ժթ․ 1 ։ իղ․ 3 ։
քրէական ։ թագաւորի կամ տէօվլէթի դէմ ըրած ։ ծա․ 4 ։ ղա․ 3 ։
քրձազգած ։ չուլ կամ խարար հագած ։ իթ․ 2 ։
քրմորդի ։ քուրմի՝ կամ կուռքի քահանայի զաւակ ։ կը․ 3 ։
քրտնակնդրուկ ։ անուշահոտ քրտինքով եղած ։ ձբ․ 3 ։
քրքում ։ զաֆրան ։ ղգ․ 11 ։
ք․քուանք ։ ծեծկըռուելով լալը ։ ժը․ 2 ։

Օդ ։ հավա ։ խէ․ 2 ։
օդախոնաւ ։ հավան թըջող ։ ղգ․ 20 ։
օդաչու ։ հավային մէջը թռչող ։ ղբ․ 5 ։
օդուած ։ տես յօդուած ։
օդք, ( օդից ։ ) ոտից աման ։ փապուճ ։ խէ․ 3 ։
օթևան ։ իջնելու տեղ, տուն ։ օթադ, գօնագ ։ ը․ 1 ։
օթոց ։ զգեստ, հագուստ ։ էսվապ ։ գ․ 1 ։
օժանդակ ։ օգնական ։ եարտըմճի ։ իթ․ 1 ։
օժանդակել ։ օգնել ։ եարտըմ էթմէք ։ կե․ 2 ։ կամ, զօրացընել, մեծ բանի հասցընել ։ ե․ 1 ։
օճառք ։ գործիք ։ ալաթանըըք, փուսաթ ։ կղ․ 3 ։
օն և օն գրել ։ իրար սեպել ։ հադ սայմաք ։ իթ․ 3 ։
օշինդր ։ փէլին․ գ․ 3 ։ հա․ 2 ։
օրակշիռ ։ օր չափող ։ ( յիշատակարան ։ )
օրհներգ ։ օրհնութեան երգող, օրհնող ։ կա․ 2 ։
օցտող ։ բաժնող, ցրուող ։ տաղըտան ։ ժգ․ 4 ։ կամ, բաժնուած, գլուխ քաշած ։ այրըլմըշ, պաշ չէքմիշ ։ խը․ 2 ։

ՀՍՍՌ ԳԱ

*Tip. ed Edit. li RR. PP. Armeni di S. Lazzaro in Venezia.*